Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
√651

1999

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԵՒ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

ԵՒ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ԱԲԲԱՑԻՑ

ԳՐԵԱԼ ԴԻՄԱԹՆԱՐԱՐ

ԻՍ. ՎԱՐԴԱՊԵՏԷ ԹԷՈԴՈՐԵԱՆ

ՏՊԱԳՐԵԱԼ

ՕԺԱՆԵՂԱԿՈՒԹԵԱՄԲ

Պ. Ռ. ՆԱՏԻՐԵԱՆԻ

Ի ՓԱՐԻԶ

1866=Ռ·ՅԺԵ

1447

ՄԵՏՍԱԿԱՆ ԳՐՍԳԱՐԱՆ

28. 651 46 59. 60

ՆԱԽԱԾԱԻԻՂ

Յետ բանամեայ պատմութեան կենաց հեղինակիս որ ի տխմանկութեան և յերիտասարդութեան, և յետ յինամեայ պատմութեան որ ի վիճակի Մխիթարեան միաբանութեան, և ի գործ պաշտաման Մուրատեան և Ռափայէլեան վարժարանաց, յաւելումք յայն և զհնգամեայ պատմութիւն որ ի գործ Հայկազեան վարժարանին, և զայս եւս իբրեւ զառաջինեան յանդիման կացուցուք հանդերձ հաւատեօք և քննութեամբ։

Թէպէտ և չորեքտասանամեայ ոգւով շատ աշխատութիւնն որ ի գործ Մուրատեան վարժարանին ոչ ի զուր եղեւ արդարութեամբն Աստուծոյ, ապայն ակնկալութիւնն որ ի բարեաց անտի դերեւ ել անիրաւութեամբն մարդոյ։

Ոչ դադարի սա ի նորոգ աշխատութենէ, հիմնադրէ զՀայկազեան վարժարան ի Փարիզ գործակցութեամբ երկուց ընկերաց իւրոց, բաժանելոց ի Մխիթարեան միաբանութենէն, և քաջալերութեամբ ի Պօլսեցի ազգայնոցս հանդերձ խոստմամբ նպաստից։

Թէպէտ և յակնկալութենէ և ատի բարեաց վրխպեցաւ սա, ըստ բախտին իւրոյ, պակասելով միոյ յընկերացն ի պարտս իւր, և նպաստիցն ազգայնոցս, հանդերձ անիրաւութեամբ, զլանալով ոմանց ատի հատուցանել զիշոչափ մանկանց իւրեանց, ապայն յանձն առնու սա զաշխատութիւն ճանապարհի, յեօթանասուն և հինգամեայ հասակի. զնայ ի Պոլիս ի հրաւիրանաց Գերագոյն Ժողովոյ, և ի թախանձանաց ընկերաց իւրոց, սա ի դարման տանել կարօտութեան

վարժարանին, միանգամայն և ի ընուլ զցանկութիւն ազգայնոց անդ ընդ տեսութիւն իւր եւս, և կալ անդ ամիս երկու. եւեթ։

Կայ սա ի Պոլիս զամիս տասն, երթեւեկելով յաճախ առ Նորոգ ընտրեալսն, Մատթէոս Կաթողիկոս, և առ Գէորգ Պատրիարք, և առ գլխաւորս ազգին, և խնդրելով ի նոցանէ դարման տանել կարօտութեան վարժարանին։ Ցողովին նոքա երկիցս և երիցս ի Պատրիարքարան և յայլ տեղիս, և խօսին զայնմանէ, այլ ոչինչ վճարեն։ Սին խոստմամբ յուսացուցանեն զսա։

Ի յորդորելոյ ոմանց յազգայնոցս, յօրինել տայ Կաթողիկոս գիր հանգանակութեան ի նպաստ վարժարանին, և ստորագրել ինքն յայն 10,000 դահեկան. թէպէտ և ստորագրեն յայն և այլ ոմանք ի գլխաւորաց անտի, այլ զլանան հաստուցանել զայն։

Ցուսահատեալ Կաթողիկոսին յօժանդակութենէ Պոլսեցի ազգայնոցս, դնէ զյոյս իւր ի Ռուսիոյ ազգային. վասն այնորիկ կամի ածել ընդ իւր զսա ի Թիֆխիս առ ի հոգալ անդ զկարօտութենէ վարժարանին, և յէջմիածին ի ձեռնադրել եպիսկոպոս, և այնպէս դարձուցանել ի Փարիզ։

Ցուսացեալ սորա ի կամս կաթողիկոսին պատրաստի եղանել ի ճանապարհ գնալ ի Տիֆխիս և յէջմիածին, ակնկարութեամբ միայն դարմանոյ կարօտութեան վարժարանին, և ոչ ցանկութեամբ եպիսկոպոսութեան։

Երիք աւուրքք յառաջ քան զմեկնիլ Կաթողիկոսին ի Պոլսոյ գնալ յէջմիածին, ոմանք յազգայնոցս յորդորեն զնա շրջաբերական կոնդակ մի գրել առ Հայս Օսմանեան պետութեան օժանդակել հանգանակութեամբ կարօտութեան վարժարանին։ Թէպէտ և առնէ նա զայն, սակայն ոչինչ արդիւնք ունի տեսանին ապա. թէպէտ և խնամակալք վարժարանին խոստանան նմա յոտին պահել զվարժարանն զամս երկուս, այլ ոչ պահեն զխոստումն իւրեանց և ոչ զամիս երկու։

Ունելով սորա գումար ինչ գրամոյ ի թուղթ Օսմանեան, և սակս մեծի կորստեան ի գրամափոխութեան, առանդէ զայն ի ձեռս կաբեկից բարեկամին իւրոյ, Մկրտիչ Առմենեանի,

պայմանաւ, ի զինչանել գնոյ գրամաթղթոյ Օսմանեան, փոխել զայն յոսկեղրամ Եւրոպացւոց, և դարձուցանել սմա ի դարձի խրոմ յէջմիածնէ։ Այսպիսի յուսով և վստահութեամբ եկանէ սա ի ճանապարհ ընդ Կաթողիկոսին գնալ յէջմիածին։

Հասեալ սորա ի Տփխիս և զաւուրս քանի կացեալ անդ՝ չտեսանէ ի Կաթողիկոսն նշան ինչ հոգոյ զկարօտութենէ վարժարանին ի Փարիզ, զորմէ եթէ կալեալ էր ի սկզբան անդ, յորում ժողովուրդն վարկ ունէր զնմանէ, 50,000 ֆր. ժողովէր հանգանակութեամբ, ըստ վկայելոյ բազմաց անտի։

Աւուրբ միով յառաջքան զմեկնիլ Կաթողիկոսին ի Տփխիսէ գնալ յէջմիածին, ասիպեալ ի թախանձանաց սորա յանձնէ նա ուրուն ի կարծեցեալ ազգասիրաց անտի, Հախվէրտեան անուն, հոգալ զկարօտութենէ վարժարանին հանգանակութեամբ նպաստից ազգայնոցս անտի. թէպէտ և խոստանայ նա առնել զայն, բայց ոչ կատարէ զխոստումն իւր սնոտի պատճառանաւք։

Հասեալ սորա յէջմիածին, և կացեալ անդ աւուրս ինչ, նեղի յոյժ ի սաստիկ սօթոյ և ի պալարաց մարմնոյ, վասն այնորիկ ինդրէ հրաման ի Կաթողիկոսէն գնալ ի Տփխիս յօդափոխութիւն, միանգամայն և ի խնդիր նպաստից։ Տայ սմա Կաթողիկոս հրաման գնալ անդ հանդերձ կոնդակաւ ի գտանել նպաստ յազգայնոցս անտի յօժանդակութիւն կարօտութեան վարժարանին ի Փարիզ։

Առեալ սորա անտի հրաման և կոնդակ գնայ ի Տփխիս, և կացեալ անդ զամիս ոմն, գտանէ յազգայնոցս անտի նպաստ 10,000 ֆրանք, և առաքէ զայն ամենայն ի Փարիզ առ ընկերս իւր, Գալֆայեանս, որք հատուցանեն այնուզառանձին պարտս իւրեանց։

Յայսմ ժամանակի ունէք յերևելի անձանց ի Ղարաբաղու ազգայնոցս գնացեալ յուխտ յէջմիածին, և դարձեալ անտի ընդ Տփխիս, առաջարկեն սմա ըստ հաճութեան Կաթողիկոսին, յանձն առնուլ զառաջնորդութիւն թեմի իւրեանց։ Հրաժարի սա անտի իրաւացի պատճառաւ, զոր իմացեալ նոցա լուեն ցաւաք սրտի՝ և դառնան ի քաղաք իւրեանց։

Լուսաբ Տփխիսեցի ազգայնոցս զփակիլ Հայկազեան վարժարանին ի Փարիզ՝ ցաւին ընդ այն, և գլխաւորքն անտի տան աղերսագիր առ Կաթողիկոսն յԷջմիածին, հայցելով ի նմանէ դարման տանել այնմ՝, օժանդակութեամբ նպաստից ի վեց թեմից որ ի Ռուսաց տէրութեան։

Զլանայ Կաթողիկոսն կատարել զհայցուած նոցա անտի պատճառանաք։ . . . Դժուարեալ նոցա ընդ այն՝ խորհին դարման տանել այնմ կամաւորնուիրաք իւրեանց, բայց իբրեւ լսեն զդործակցութիւն Գալֆայեան վարդապետաց ընդ Այվազեան վարդապետին ի Թէոդոսիա, կասին ի խորհրդոյ անտի իւրեանց։

Գրէ սա թուղթ ազդարարութեան և մեղադրութեան առ Այվազեան և առ Գալֆայեան վարդապետս, և ընդունի ինոցանէ պատասխանի կարծեցեալ արդարացուցման։

Այց առնէ սա վանացն որ ի Սանահին և որ ի Հաղբատ գիւղս, ուրախանայ և տրտմի ընդ ուրախալի և ընդ ցաւալի տեսիլ նոցին։

Դառնայ սա ի Փարիզ առաջնորդութեամբ և ծախիւք ճանապարհի կարեկից բարեկամին իւրոյ, Պարոն Ռոմանոս Դատիրեանի, և անցանէ ընդ Պօլիս, առ ի գտանել զաւանդեալ արծաթ իւր, որ առ կարծեցեալ հաւատարիմ բարեկամին, Պարոն Մկրտիչ Մոմճեանի, վրիպի ի կարծեաց իւրոց անտի. զի բարեկամն այն մոռանայ զորբարան պարտս իւր։ Ահա հատուցումն աշխատութեան ճանապարհի սորա յեօթանասուն և եօթն ամեայ հասակի, հրաւիրեալ ի Պօլիս դարման տանել կարօտութեան Հայկազեան վարժարանին ի Փարիզ, և ինքեալ զցանկութիւն ազգայնոցս տեսութեամբ իւրով եւս։ . . .

Այսպիսի հանդամանաք մեկնի սա ի Պօլսոյ դառնայ ի Փարիզ ակնկալութեամբ գտանել վիճակաւորութիւն ինչ յընկերէ իւրմէ, յԱմբրոսիոս Գալֆայեան վարդապետէ, վասն որոյ աշխատեալ էր ի Տփխիս զամիս տասն մնահացուցիչ մուրոդութեամբ ի ներել զկարօտութիւն նորա 10,000 ֆրանքով. թէպէտ զ8,000 ֆրանքս, զոր առեալ էր վասն նորա ի Փարիզ

և ի Պօլիս ։ . . . Ոչ միայն յանկարծութենէ ասոի եւս միխիթարութեան վրիպի սա, քան բախտին իւրոյ, այլ և անհնարին ցաւոք ինանի, սակս յեսին ապերախտութեան և ժպրհութեան նորա ։ Սակայն ի վերոյ այսր ամենայնի ներողամիտ էինի նմա, հանդերձ առատամտութեամբ ։

Ի վախճան գրոյս արարաք բովանդակութիւն բոլոր պատմութեանս, նկարագրեցաք զցաւալից հանգամանս ազգին մերոյ այժմիկ, և ցուցաք զդարման չարեացն այնոցիկ, յաւելով անդ և զպատմութիւն վարուց Մխիթարայ Սրբայի, և յաջորդաց նորին, յօրինակ հոգեւոր առաջնորդայ, և ի գիտութիւն հասարակաց ազգիս, թէ զինչ էր վարդապետութիւն հաւատոյ Մխիթարայ Սրբայի, և գիտաւորութիւն կամաց նորա, և թէ ո՞յք ի յաջորդացն հետեւողք եղեն նմա, և ո՞յք ոչ . վասն այնորիկ և անշահ եղեն արդիւնք վաստակոց նորա ։

Սրարաք անդ ապա և յիշատակարան մի կենաց և վարուց հեղինակի պատմութեանս, յորում համառօտիւ յիշատակին ամենայն անցք որք անցին ընդ նա, և կիրք զոր կրեաց զամս վաթսուն ։

Յընթեռնուլ ազգայնոցս զպատմութիւն Մուրատեան և Հայկազեան վարժարանաց, և ի տեսանել անդ զբազբս և զմեղադրանս հեղինակին՝ որ զթերութենէ և զանիրաւութենէ այլոց ։ ընդ որոց բան և գործ կալեալ է սա երբեմն, ասիցեն արդեաք, մի թէ սա ինքն միայն լցեալ անթերի և արդար յամենայն բանս և ի գործս իւր ։

Սա այս ասեմք նախ՝ թէ ոչ որ ի մարդկանէ անթերի և արդար է յամենայնի . զի ամենայն որ իրրեւ մարդ՝ ունի թերութիւն և անիրաւութիւն յամենայն բանս և ի գործս իւր։ Ապա հարցանեմք, թէ զորոց միանգամ բողոքէ և մեղադրի, սա ի պատմութեանս, չիցէ՞ վաւերական հաւատեաք ցուցեալ և հաստատեալ զայն ։ . . . Եթէ կայցէ որ որ զհաւատս սորա չհամարիցի բաւական, ցուցցէ նա զհակառակն հաւատեաք իւրովք, և մի զիմադրիցէ այսմ երդիծանաք ։ . . . Եւ զլուսս ամենայնի , եթէ կայցէ որ յազգիս Հայոց յայսմ դարու յեկեղեցական և յաշխարհիկ վիճակէ, որ ի քաւանամոյ

հասակէն մինչեւ ցութսուն ամ հասակի իւրոյ, նուիրեալ լցէ զանձն այլոյ, աշխատեալ ոգւով չարի, կրեալ զամենայն կիրս, և զոհեալ մինչեւ զոգեպահն անգամ, վասն բուռուբութեան ազգին իւրոյ, և վրիպեալ ապա ոչ միայն յանկնկալութենէ անտի իւրոյ, ի միայնակ մխիթարութենէն, այլ և արտաքսի բռնութեամբ զինու ի վարժարանէն իւրոյ, հանդերձ անդթութեամբ, նա միայն և ոչ այլ ոք կարիցէ ասել, թէ սա ինքն միայն լցէ անթերի և արդար յամենայն բանս և ի գործս իւր, հայեցեալ ի խնդիրս Մ. և Հ. վարժարանաց։

Դարձեալ՝ կարիցէ՞ ոք տանել այնպիսի աշխատութեան, և այնչափ յերկար, եթէ չէր նա քաջալերեալ յիսկ հոգւոյ և ի ճշմարիտ ազգասիրութենէ։

Կրիցէ՞ ոք այնչափ անցս և կիրս զամս վաթսուն, եթէ չունէր նա ակնկալութիւն բարեաց ազգին իւրոյ յարդեանց վաստակոց իւրոց, և եթէ վրիպիցի նա յանկնկալութենէ անտի իւրոյ, չունիցի՞ իրաւունս ըստդտանելոյ զայնոսիկ որք խափան եղեն բարեաց ազգին, միայնակ մխիթարութեան իւրոյ։ . . . Ահա այսմ դիմադրական բանից նոցա, այսպիսի հաւատեաք է մեր պատասխանին։

Եւ յընթեռնուլ նոցա ապա զպատմութիւն վարուց Մելգոմեան, և Հիւրմիւզեան Աբրայից, և ի տեսանել անդ զիսիստ գրութիւնս որ զգնացից նոցա, ասիցեն արդեաք, թէ ապաշը նարհ և անգութ ոք զհեղինակս, որ զամս յիսուն զչնարհս միաբանութեան միոյ վայելեալ՝ աղաղակ արդ զհամբաւ նորին, հրատարակելով զթերութիւն և զանիրաւութիւն մատնաւորաց ոմանց յառաջնորդաց նորին, զորոց ցարդ վարկ մեծ ունէր ազգս Հայոց. և թէ՝ զինչ օգուտ և շահ լցէ յայսպիսի խիստ դրչութենէ։ . . . Ո՞չ ապաքէն վնաս միաբանութեան, և դայթագղութիւն ժողովրդեան։

Եւ առ այս ասեմք նախ՝ թէ ճշմարտութիւն և արդարութիւն նախադասելի են միշտ ամենայնի։ Երկրորդ՝ թէ ոչ յաղագս զհամբաւ Մխիթարեան միաբանութեան, այլ ի զգաստացուցանել զմիտս նորա ի թմբրութենէ անտի իւրոյ, և ի բռնադատել զնա ճանաչել զպարտս իւր, և լնուլ

զայն, զի վայելիցէ ի խաղաղութեան և յերանութեան։ Ապա չէ սա ապաշնորհ և անգութ ոք, այլ շնորհակալու և կարեկից միաբանութեան, որպէս և տեսանի յիղձս իւր որ վասն նորա, ի վերջ հատորոյս. և ապա չէ խիստ դրչութիւն սորա ի գայթաղղութիւն ժողովրդեան, այլ ի գիտութիւն և ի խրատ նմին, որպէս և տեսանի յաղերս իւր որ առ Ատուած վասն նորին, ի վերջ հատորոյս։

Իսկ յընթեռնուլ Մխիթարեանց զպատմութիւնս վարուց Արբայից իւրեանց, ասիցեն, թէ ըստգտանիցէ հեղինակն զՄելգոնեան, և զՀիւրմիւզեան Արբայս, որպէս, և որչափ կամիցի, մեղ չէ փոյթ, և ոչ արժանի պատասխանոյ համարիմք, այլ այսչափ միայն ասեմք, թէ Մելգոնեան կալաւ զառաջնորդութիւն միաբանութեանս զամս յիսուն, վախճանեցաւ խաղաղութեամբ, և թաղեցաւ փառաւք։ . . . Եւ թէ՝ Հիւրմիւզեան ունի զառաջնորդութիւն միաբանութեանս զամս քսան, և պատուեցաւ ի Գաղղիացւոց տէրութենէն պատուանշանաւ . . .

Առ այս մեապարծ և անիրաւ բանս նոցա ասեմք մեք և իրաւամբք, թէ Մելգոնեան արբայն օժանդակութեամբ Պատրիարքին Վ.էնէտկոյ նուաճեաց զմիաբանս իւր, և ձեռամբ տէրութեան նորին աքսորեաց զոմանս անտի ի Թրեաս, որով ճեղքեաց յերկուս զմիաբանութիւնն, և որով յարոյց սատան տանն Մխիթարայ, և արար մեաս ազգին Թորգոմեան։ . . .

Զայսպիսի Արբայէ արժան իցէ ասել, թէ վախճանեցաւ խաղաղութեամբ, և թաղեցաւ փառաւք։ . . . Եւ թէ Հիւրմիւզեան արբայն ազգով չափ աշխատութեամբ հեղինակի պատմութեանս ստացաւ դրացարձակ իշխանութիւն մատակարարութեան Մուրատեան վարժարանին, և օժանդակութեամբ Արքեպիսկոպոսի Փարիզու արտաքսեաց ի վարժարանէ անտի զհատուտոզ նորին. այսպիսի արբայ արժանի՞ իցէ պատուանշանի ի Գաղղիացւոց տէրութենէն։ . . . Ահա մեապարծ և անիրաւ բանից նոցին, այսպիսի հաւատեաք և իրաւամբք է մեր պատասխանին։

Ասիցեն նոքա եւս և իրաւամբք արդեաք, հայեցեալ յան-

հաւանութիւն ճշմարտութեան և արդարութեան ազգիս Հայոց, և յանձանաչողութիւն պարտուց և իրաւանց իւրոց, թէ ընդունայն և ի զուր է բողոք հեղինակին առ ազգս Հայոց, որ ընդ իրաւունս ազգաւոց իւրոց, և որ ի ձեռս է մխիթարեան միաբանութեան, և ի կամս նորին մատակարարութիւնն։

Եւ առ այս ասեմք մեք յուսով, թէ բողոք հեղինակին ոչ ընդունայն և ի զուր լիցի, հայեցեալ յանկեալութիւն ազերսին իւրոյ առ Ամենայն միան ազգին Թարգմանեան։ . . . Իսկ եթէ յայտնանէ եւս վրիպիցի սա ըստ բաղձին իւրոյ, համարիցի բողոքն լրումն վերջին պարտուց իւրոց։ . . . Եւ ահա առ այս իրաւամբք կարծեցեալ բանք նոցին, այսպիսի յուսով և դիտաւորութեամբ է մեր պատասխանին։

ՍԱՐԳԻՍ ՎԱՐԱՊԵՏ ԹԷՈՂՈՐԵԱՆ,
երբեմն Արտակաղ Մխիթարեան միաբանի, Վենետիկեան Մոխիթարեան, և Հայկազեան վարժարանաց ի Վենետիկ, ի Պատուզիոն, և ի Փարիզ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԹԷՈԴՈՐԵԱՆ,

ԵՒ ՆՈՐՈԳ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ ՆՈՐԱ

ԳԼՈՒԽ Ա.

Մխաբանոցքիւն երից վարդապետաց ի հիմնարկոցքիւն Հայկազեան վարժարանին ի Փարիզ. — Հաղորդութիւն ի վերայ երից վարդապետաց. — Հարցուցեալ Այրեպիսկոպոսի Փարիզոյ ի Պօղոս Պէյէ զդաստանութեանց Հայաստանեաց նկեղեցոյ. — Բնութիւն ընդ հարցուցեալ այնմ ի Հռովմայ, և խիստ հաղորդութիւն ի վերայ երից վարդապետաց. — Խորհուրդ և ձեռնարկ իւրաքանչիւրոցն իրաւանց պաշտպանաց հանրութեան ազգին Հայոց. — Թուղթ ազգային ժողովոյն գայութեան առ Ս. վարդապետս. — Թուղթ Պարոն Մէշիրի իբր գործակալի վասն բանի դրութեանցն առ Յակոբ Էֆենտի Էրգիկ.

Երբեմն արտաքսի Սարգիս վարդապետս Թէոդորեանն ի Մուրատեանն վարժարանէն և բաժանի ի Մխիթարեանս ուխտէն, միաբանի նա ընդ Գաբրիէլ վարդապետի Ասլանեանն, որ ամս միով յառաջ բաժանեալ էր արդէն կամաւ ի Մխիթա-

բնան ուխտէն, և ի խնդիր էր այլ ինն վարժարանի հաստատելոյ ի Փարիզ, և որ արդէն հանեալ էր ի Մ. վարժարանէն զքանի մի յաշակերտաց անտի ըստ հրամանի ծնողաց նոցա, և զետեղեալ էր զնոսա առ ժամայն ի դպրոցի ուրեք Գաղղիացւոց, ուր և բնակին ապա Սարգիս և Ամբրոսիոս վարդապետք աւուրս ինչ։

Յայսմ ժամանակի Գաբրիէլ վարդապետ ի խնդիր լինի տեղւոյ Հայկազեան վարժարանի, և գտանէ զայն ի Գրէնէլ անուանեալ արուարձանի, զվերջին պալատ մի ազնուականի ուրումն Գաղղիացւոյ, հանդերձ զեղեցիկ պարտիզաւ զարդարեալ հովանաւոր և պտղաբեր ծառովք, ընդ որ յոյժ հաճեալ հաւանին նա և հաւանեցուցանէ զՍարգիս և զԱմբրոսիոս վարդապետս։

Կալնուն նոքա միաբան հաւանութեամբ և երաշխաւորութեամբ զպալատն այն ի վարձու վեցամեայ ժամանակաւ և եօթն հազար ֆրանքով ի տարեւոջէ, հանդերձ պայմանաւ առնելոյ տանուտեառն ծախիւք իւրովք ինչ ինչ շինուածս ի նմին, և զայն ի միջոցի երկու ամեայ ժամանակի։

Իրրեւ պատրաստի այն, գնան նոքա բնակին անդ հանդերձ երկուսեան աշակերտաւք, յամենան օգոստ. 1855։ Զկերեքամեայ վարձս տանն և զդին կարեւոր կահուց նորին յատուցանէ Հ. Սարգիս, փոխ առեալ արծաթով, որպէս և զօրբատորէական ծախս վարժարանին, յուսալով գտանել զայն ի ծնողաց աշակերտաց նորին ըստ պարտուց նոցին, և ի բարերարաց ազգիս ըստ բանից խոստմանն Պօղոս Պէյի Տատեան, որ յայնմ ժամանակի ի Փարիզ գըտանի, և քաջալերէ զնա բանիւք և արդեամբք, 5,000 ֆրանք օժանդակելով վարժարանին, և խոստանալով 50,000 ֆր. հաւաքել հանդանակութեամբ ի կարող և յազգասէր անձանց որ ի Պոլիս, և զորոց անուանս խորհրդով Պարոն Յակոբայ Կրճիկեան նշանակէ ի թղթի յանդիման Սարգսի վարդապետի ի քաջալերութիւն նմին. թէպէտ և ըստ բաղդի նորին 20,000 ֆրանք յազգայնոցս անտի հապիւ հաւաքին . . . թէպէտ և ի յուսոյ որ ի ծնողաց աշակերտաց

վրիպի, զլացութեամբ և հնարիմացութեամբ ոմանց անոի ի նոցանէ։

Սակայն ի վերայ այսր ամենայնի Սարգիս վարդապետ ոչ լքանի, այլ Ջանայ փոխ արծաթ գտանել ասոի և անոի և զվարժարանն յառաջ տանի, յուսալով յարդեանց անոի զկարեւորութիւն նորին ցուցանել ազգին իւրում. թէպէտ և անոի եւս վրիպի, վասն զի ոգիտութիւն և անձնասիրութիւն ոչ թողուն նմա ճանաչել զօգուտս իւր և զվնաս։

Թէպէտ և արտաքսի Սարգիս վարդապետ ի Մուրատեան վարժարանէն, տակս անարդ նախանձու, թէպէտ և բաժանի նա կամաւ ի Մխիթարեան ուխտէն, տակս անիրաւ զրպարտութեան որ զՀայաստանեայց եկեղեցւոյ, տակայն Վերապայծառ Հիւրմիւզ տակաւին ոչ դադարի ի հալածելոյ զնա և զընկերս նորա ի Փարիզէ, համբաւելով զնոսա իբրեւ զխորագոյն արծաթոյ Մ. վարժարանին, և իբրեւ զապստամբս յեկեղեցական և ի քաղաքական իշխանութենէն, և ծանուցանելով Պապին Հռովմայ, թէ ցորչափ ունին նոքա ի Փարիզ ազգային դպրոց, ի զուր լիցի փոխադրութիւն Մ. վարժարանին ի Հռովմ. քանզի ոչ որ ի Հայոց զորդին իւր տուքեսցէ անդ, այլ՝ ի դպրոց նորա որ ի Փարիզ, վարկ մեծ ունելով ազգին զՓարիզէ, զհամբաւոյ գիտութեանց և արուեստից որք անդ։

Վասն այնորիկ Եւրիպակ Պապին որ ի Փարիզ Ջանայ ամենայն հնարիւք փակել տալ զՀայկազեան վարժարանն, զօրէնս համալսարանին զէնք իւր առեալ, որք ոչ թոյլ տան ընդվզեալ առնի անկեղոց վերատեսուչ դպրոցի լինել, իբր արատաւոր ոմանս ի քաղաքի անդ. թէպէտ և զայս օրէնս համալսարանին գիտելով նոցա զգուշանան ի չարութենէ թշնամեաց, ոչ զանուն վերատեսչի վարժարանին և ոչ զանուն դասախօսակի մանկանց նորին տանին, տալով զայն ամենայն Գաղղիացւոյ ուրումն, որ ունէր երբեմն փոքրիկ ինչ դպրոց ի Փարիզ, և զիրաւունսն զայնոսիկ, ինքեանք անդ իբրեւ բնակիչ և իբրեւ վարժապետ հայերէն լեզուի լինին։

Սակայն և այնպէս՝ թշնամիք նոցա Մխիթարեանք ի ձեռն Նուիրակին, և փաստաբանի իւրեանց ոչ դադարին դարձեալ ի փակելոյ զհայկազեան վարժարանն, ընդ հարցափորձիւ և ընդ խիստ քննութեամբ ստուգելոյ ուսմանց արկանելով զանուանեալ վերատեսուչ նորին. և այս հետամտութիւն նոցա տեւէ իրրեւ տարի մի և աւելի եւս, և հատանէին նոքա նոպատակի իւրեանց, եթէ ազգայինքս որք ի Պօլիս չէին հաստատեալ զինդիր իւրեանց ի ձեռն դրան առ Գաղղիացւոց Տէրութիւն, ունել ազգին Հայոց դպրոց մի ի Փարիզ, և վերատեսուչ նորին Սարգիս վարդապետ Թէոդորեան։

Եւ սակայն տակաւին ոչ դադարի Գեր. Հիւրմիւզ ի շարչարելոյ և ի հալածելոյ զնոսա, ձեռամբ Արքեպիսկոպոսին Փարիզու. զի գրէէ նա զՍարգիս վարդապետ և զԱմբրոսիոս վարդապետ և յեկեղեցական իրաւանց, ի պատարագելոյ և ի մատակարարելոյ զիւրհուրդ եկեղեցւոյ, մինչեւ խոնարհեալ հնազանդեցին նոքա բռնաւոր կամաց և անիրաւ դրծոյ իւրոյ, արդար համարեցին և նոքա զՅայտարարութիւն իւր, որ առ Պապն Հռովմայ, թէ Եկեղեցին Հայոց արտաքոյ է ճշմարիտ եկեղեցւոյն Քրիստոսի։ . . . Եւ թէ՝ Զէ պարտ ընդունել զմանկունս լուսաւորչեան Հայոց ի Մուրատեան վարժարան, մինչեւ չուրացին նոքա զհաւատս իւրեանց և դաւանեցին զՀռովմայն։ . . .

Հաւատիք բանից այսոցիկ, պատասխանին Արքեպիսկոպոսին Փարիզու, զոր առնէ նա բանիւք և գրով. բանիւք առ Սարգիս վարդապետ ի խնդրել սորա ի նմանէ հրաման կատարելոյ զպաշտօն քահանայութեան ի թեմի նորա, պահանջէ նա ի սմանէ զհնազանդութիւն առաջնորդին իւրոյ Գերապայծառ Հիւրմիւզի. և ի ցուցանել սորա զանհնարութիւն ընդ այն, հանդերձ պատճառաւք, թէպէտ և նա իրաւունս տայ սմա, այլ ասէ, թէ պահանջումն իւր են կամք Հռովմայ Պապին, և թէ ինքն չկարէ ընդդէմ կամաց նորին առնել ինչ, հրաման տալ սմա կատարել զպաշտօն քահանայութեան ի թեմի իւրում. ահա բանիւք պատասխանի նորա առ սա։

Իրրեւ այսպիսի պատասխանի ստէ Սարգիս վարդապետ

ի բերանոյ Արքեպիսկոպոսին Փարիզու իմանայ զի վճարեալ էր ամենայն անիրաւութիւն որ ի Պապէն Հռովմայ, վասն որոյ համբերէ ի ժամուն, բաւականացեալ ընդ ազատութիւն Գարբրիէլ վարդապետի, քանզի ազատ լինի նա ի բռնութենէ անտի, բաժանելով նորա յառաջագոյն ի Մխիթարեան ուխտէն առանց ինչ հակառակութեան, և պաշտէ զպաշտօն քահանայութեան, մատուցանելով պատարագ յեկեղեցին Գաղղիացւոց ի Վենետիկ, և մատակարարելով զխորհուրդ եկեղեցւոյն ի հոգեւոր պէտս աշակերտաց Հայկազեան վարժարանին. քանզի նոքա երեքին վարդապետք որոշեալ և հաստատեալ էին ի մտի իւրեանց չառնել բնաւ փոփոխութիւն ինչ վիճակի կալով մնալով ի նոյն ծառայեցեն ազգին առհասարակ մատենագրութեամբ և դաստիարակութեամբ մանկանց նորին։

Այսու խորհրդով և գործով ընթանան նոքա ամ մի, հանդերձ կարօտութեամբ արծաթոյ ի կարեւոր պէտս վարժարանին, և նեղութեամբ յարտաքոյ, ի հակառակորդաց իւրեանց, որք անդադար նեղեն և հալածեն զնոսա, և այն այնչափ, մինչեւ բռնադատին նոքա փոխել զվիճակ իւրեանց, և զայն այսու պատեհաւ.

Որպէս վերագոյն յիշատակեցաք, թէ ի 1855 ամի դատնի ի Փարիզ Պօղոս Պէյ Տատեան, գնայ նա յայց Արքեպիսկոպոսին Փարիզու, և ածէ ընդ իւր զԳարբրիէլ վարդապետ իբրեւ թարգման. ի խօսակցութեան անդ հարցանէ ցնա Արքեպիսկոպոսն թէ զի՞նչ զանազանութիւն է այցէ ի դաւանութիւն հաւատոյ Լատին և Հայ եկեղեցւոյ. և իբրեւ իմանայ նա զայն, ասէ. «Ահա և դուք իբրեւ զմեզ կաթոլիկ էք։ » և խնդրէ՝ զի զբերանով ասացեալն գրով ասցեն նմա։ Խոստանայ Պօղոս Պէյ կատարել զխնդիր նորա, և յանձնէ զայն Գարբրիէլ վարդապետի, յօրինել ինչ ըստ կարգի և տալ տալ ծախիւք իւրովք, յորմէ քանի մի օրինակ տայ նա Արքեպիսկոպոսին, որոյ ընթերցեալ զայն՝ առաւել եւս տեղեկանայ բերանով ասացելոյն, և ուրախանայ ընդ այն։

Բայց հակառակորդք ճշմարտութեան, աշակերտք Ծաւալ-

ցին որք ի Պոլիս, ընթերցեալ զայն՝ գայթագղին ընդ գնացս Արքեպիսկոպոսին Փարիզու, հաւանելով նորա այնմ, և գրին ի Հռոմ առ Կարդինալ Ծաւալոցին ամբաստանութիւն զգնացից Արքեպիսկոպոսին։ Գրէ Կարդինալ ի բերանոյ Պապին առ Արքեպիսկոպոս Փարիզու մեղադրութիւն ընդ այն։

Զանոյ սա արդարացուցանել զինքն զլացութեամբ և մարդահաճութեամբ, ակնարկելով առաջանի կարդինալութեան. զանոյ զբերանով ասացեալն իւր, թէ «Ահա և դուք իրրեւ զմեզ կաթոլիկ էք։» Եւ մարդահաճէ, «Զի ոչ ասց, գրէ, «Սարգսի և Ամբրոսիոսի վարդապետաց հրաման կատարել «զքահանայական պաշտօն ի թեմի իմում, մինչեւ չհնազան-«դեցին Մեծաւորի իւրեանց։» Եւ թէ՝ «Այսուհետեւ ո՛ և «իցէ հայ քահանայի ոչ ասց հրաման պատարագել ի թեմի «իմում, մինչեւ չխոստանայցէ երդմամբ չառնել բնաւ հաղոր-«դակցութիւն ընդ հերձուածողս ի հոգեւորան։» Եւ ահա գրով պատասխանին նորա առ մեղադրական թուղթն Կարդինալի Ծաւալոցին։

Յետ հրատարակելոյ երից վարդապետաց զՅայտարարութիւն անցից Մ. վարժարանին, գրէ Սարգիս վարդապետ թուղթ մի ազգարարութեան առ Սրբազան Յակոբ Պատրիարք և առ ժողովն ազգային ի Պոլիս, որով յորդորէ զնոսա ի խընդիր լինել և ի պահանջել զիրաւունս ազգաւոց ազգին Հայոց առհասարակ, զոր անիրաւութեամբ սեպհականեալ է Մխիթարեան Միաբանութիւն Վենետկոյ, և որով ցուցանէ նա զլրումն վերջին պարտուց իւրոց։

Առնեն նոքա պատասխանի թղթոյ նորա, որ ունի օրինակ դայս.

«Վերապատուելոյ Հայր.

«Յունիս 16 ամսաթուով առ ժողովս Ազգային գրած ար-«դարութիւններդ՝ անկարելի էր, որ մեծ ազդեցութիւն չը-«նէր ժողովոյս՝ թէ՛ խնդրոյն ազգայնութեամբը, և թէ՛ Ձեր «ի վարուց հաչակաւոր անուան համբաւովը։

“ Ազգիս որբ և աղքատ մանկանց Սրբոցն իրաւունքը
“ պաշտպանելու համար Ձեր բազմամեայ փոյթն ու աշխա-
“ տութիւնը՝ հաւատար ընդ պանծալի Ազգասիրութեան Մեծին
“ Սամուէլի Մուրատոյ արդարեւ յաւերժական երախտագի-
“ տութեան էր արժանի, և ոչ թէ նախատանաց և զինուո-
“ րական բռնաբարութեանց։

“ Մխիթարեանք՝ Ազգիս ընդհանրութեան որբ և աղքատ
“ զաւակները զրկելով իրենց Բարերարին շնորհէն՝ անոնց
“ իրաւունքը իրենց սեփականելու չափ ժպրհեցան. իբր զի
“ իրենց Վանական ուխտադրութեան հետեւմամբ իրենց վան-
“ քէն զատ ոչ հայր՝ ոչ մայր՝ ոչ ազգական՝ և ոչ իսկ ազգ
“ ունենալով՝ ինքզինքնին թերեւս որբ համարած են, և թէ և
“ աղքատ չեն, սակայն Վանական ուխտիս՝ գոնէ անուամբ
“ զիրենք աղքատ կարծելով՝ միաբանական նենգաւորու-
“ թեամբ որբք և աղքատք ձեւացած են. այլ և Սուրբ Հնա-
“ գանդեան պատուիրանաւ իրենց խիղճը Աբրայ Հօր ծա-
“ խելով՝ Ազգային որբոց և կարօտելոց բերնին հացը խլե-
“ լու ուտելու համարձակած են, և այդ արտասուաց հացը
“ անխիղճ ուտելու չի համարձակողները՝ որոց մէկն էք
“ դուք, այսպէս կըհալածեն կըհաբատահարեն, և իրենց
“ միաբանութենէն ալ կը արտաքսեն՝ ոչ Ձեր անփոխարինելի
“ երախտիքներէն, և ոչ ալ Ձեր պատկառելի ծերութենէն
“ ակնածելով։

“ Մենք Ազգովին ի սրտէ ցաւակից եմք այդ ձեզի դէմ
“ եղած անվայել վարմունքին համար. բայց թէ որ ըստ ձեր
“ բանի և վկայութեան, ինչպէս որ հաւկըցեր են “ Ամէն
“ ժամանակ Ազայ Սամուէլի Մուրատոյ ժառանգները՝ կը-
“ տակակատարները՝ օրէնդէտք և փաստաբանք Անգղիոյ
“ և Գաղղիոյ ոչ այնպէս՝ թէ որ Հայոց Ազգս վայելած ըլլար
“ քառասուն տարիէ ի վեր իրեն եղած այս շնորհը՝ այժմ
“ դուք մեզմէ ոչ թէ կարեկցութիւն պիտի ընդունէիք, այլ
“ անմահ երախտագիտութիւն՝ աղօթք և օրհնութիւն պիտի
“ գրաւէիք, եթէ՛ Բարերարին վրայ, և եթէ՛ Ձեր վրայ։

“ Լուսաւորչական կրօնքէ աշակերտներ ընդունելու կամ

“ չընդունելու վրայօք Մխիթարեանց անիրաւութիւնը յայտ-
“ նելէդ եարքը՝ ըսած է թէ՝ “ Այս անիրաւ պահանջանաց
“ “ ալ դէմ կեցայ ես՝ ինչպէս պարտքս էր ։ ” Եւ յետոյ
“ կանցնիք ըսելու, թէ “ Անպարտ եմ ես այսուհետեւ Աղայ
“ “ Սամուէլի Մուրատայ կամացը առ բանի մէջ ալ չի կա-
“ “ տարուելուն վտանգէն ։ ”

“ Ձեր այս վկայութիւններէն յայտնի կերեւի Հայր՝ որ
“ դեռ ուրիշ շատ անիրաւ պահանջմունքներ ալ եղած պիտի
“ ըլլան ի կողմանէ Մխիթարեանց՝ նկատմամբ խնդրոյս՝ ան-
“ շուշտ ի զրկանս որոց և կարօտելոց Հայ Ազգիս, որոց
“ դուք տեղեակ էք, և մենք ենթադրողք ։

“ Արդ խնդրեմք, որ դեռեւս կարեւոր եղածներ մեզի իմա-
“ ցունելու բարեհաճիք, մանաւանդ մեզի խիստ կարեւոր եղած
“ առ հետեւալ դիտելիքները. այսինքն Ձեր Գրութիւնը կը-
“ վկայէ թէ՝ “ Մխիթարեանք որ այս Մուրատեան վարժա-
“ “ բանին մատակարարք են միայն, ոչ երբէք տէր կամ ժա-
“ “ ռանգորդ ճանչցուած են ։ ”

“ Արդ եթէ Մխիթարեանք մատակարարք են միայն՝ ու-
“ բեմն որոնք են կատակարարք, և քանի՞ հոգի են. ինչպէս
“ կըլլայ՝ որ մատակարարը կատակարարներուն իշխէ ընդ-
“ դէմ իրաւանց, և այլն ։

“ Երկրորդ՝ յօժարեցէք իմացնելու մեզ, թէ Արդեօք Աղայ
“ Սամուէլի Մուրատայ նման ուրիշ Բարերարներ ալ եղե՞ր
“ են ասկէց առաջ, որ Մխիթարեան Միաբանութեան հա-
“ ստատութեանը վստահանալով՝ Ազգիս ընդհանրութեանը
“ բարերարած ըլլան. և յայտմ մասին կը խնդրեմք որ մեզի
“ ծանուցանելու շնորհ ընէք, թէ ի՞նչ գրութեան վրայ հիմ-
“ նեալ է Վենետկի Բասիլիկան անուն ազգային միւս վար-
“ ժարանն ալ, ուր՝ (ըսած եմք թէ) հոգաբարձութեան պաշ-
“ տօն եւս վարէրէք ժամանակ մը ։

“ Այս ծանօթութիւնները՝ և ուրիշ առանց նման՝ խնդրոյս
“ վերաբերեալ տեղեկութիւնները իրաւամբ կը պահանջեմք
“ Ձեր Հայրութենէն՝ ըստ խոստմանդ և ըստ խոստովանու-
“ թեանդ. վասն զի ո՞չ ապաքէն դուք ի սկզբանէ հետէ,

“ այսինքն քառասուն տարուընէ ի վեր այս վարժարանին
“ վերաբերեալ գործոց մէջ գտնուելով՝ պարտական է.ք
“ քան զամէնքը աւելի տեղեակ ըլլալու, թէ՛ մինչեւ
“ հիմայ վարժարանին գլխէն անցածներուն, և թէ՛ մանա-
“ ւանդ բուն սկզբանց և նպատակի Մուրատեան բարերարու-
“ թեան։

“ Եւ որովհետեւ քառասուն տարուընէ ի վեր այս առաջին
“ անգամն է, որ վաւերական գրութեամբ Ձերով կիմացունէք
“ մեզի մեր իրաւունքը, ուստի թնչպէս գոհ կրնաք ըլլալ
“ ըսելու, թէ “Անպարտ եմ ես այսուհետեւ։” . . .

“ Նա և առանկ արքազան պարտաւորութեան մը ներքեւ
“ գտնուած ըլլալովնիդ՝ կարելի՞ է որ, ի խղճէ մտաց առիսկեալ
“ բաւական համարիք Ազգս հրաւիրել ի պաշտպանութիւն
“ իւր իրաւանցը՝ առանց խոստանալու Ձեր ձեռնտուութիւնը
“ այս բանիս մէջ, կամ առանց խորհրդակցելու մեզի հետ,
“ որ քան զամէնքը առաւել տեղեակ է.ք իրացս։ Ոչ՝ Հայր,
“ մենք չենք կրնար գոհ ըլլալ, որ դուք այսչափով միայն
“ արդարութեան և ազգասիրութեան պարտքերնիդ կատա-
“ րած ըլլաք։

“ Ազգս Հայոց ի հարկէ իւր կողմանէ Երեւելոյն մի կընտ-
“ րէ, և այս պաշտօնով կը յուղարկէ ի Փարիզ. բայց դուք
“ ևս՝ կը յուսամք որ պարտաւոր կը համարիք զձեզ՝ բոլոր
“ անցքերը և դաղտնիքները նոյն մեր Պաշտօնակալին հա-
“ ղորդելու, և դէմ ելլալիք դժուարութեանց յաղթելու մի-
“ ջոցներուն վրայօք՝ խնամուն խորհուրդներ տալու, և ամեն
“ պարագաներու մէջ այսուհետեւ միշտ իրեն հետ խորհրդ-
“ ակցելու, մինչեւ որ անյաղթելի ճշմարտութիւնը երեւան
“ ելլէ ի յաւերժական յիշատակ անմահական Բարերարին՝
“ մեծին Սամուէլի Մուրատայ՝ ի պարծանս Արիասիրտ Ծե-
“ ր ունեցող Հօրդ մերոյ Հայրենասիրի և Ազգասիրի, և յո-
“ գուտ ընդհանրութեան Ազգիս Հայոց, որուն որբ և աղքատ
“ մանկանց խնամածու ըլլալու պաշտօնը վարեցիք ցարդ Հայր,
“ ի խղճէ մտացդ պարտաւորեալ։

“ Ոչ՝ սիրոյ և յարգանաց մատուցանելով Ձեզ՝ և Ձեր

„ Ոգիներանելոյ Ազգաւէր Վերապատուելեաց, և մաղթելով
„ Ձեզ առուրս բարերջանիկս՝

„ Բարեացակամս Վերապատուելեացդ

„ Մնամք

„ Խ. Ծառայք և բարեկամք

„ Պ. Կ. ՅԱԿՈԲ „ ԻՇԽԱՆԻՑ
„ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ. „ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ.

„ Գրեցաւ ի Պատրիարքանի Հայոց յամի Տեառն 1855 Յուլիս 5։ „

Առեալ Սարգսի վարդապետի զպատասխանին թղթոյ իւրոյ և իմացեալ անոր զորամադրութիւն կամաց արքային Պարսից և ազգային ժողովոյ ի Պոլիս, ընդ պահանջումն իրաւանց որբ և աղքատ մանկանց ազգին Հայոց առհասարակ, խօսի ընդ Պօղոս Պէյի Տատեան, և ընդ Պարոն Յակոբայ Կրճիկեան, որք յայնժամ ի Փարիզ գտանին, գրել նոցա առ դլխաւորս ազգին ի Պոլիս, և յորդորել զնոսա ձեռնամուխ լինել ի պահանջումն յայն։

Գրեն սոքա առ նոսա վասն խնդրոյն այնորիկ, և նոցա հաւանեալ ընդ այն՝ ասեն իշխանութիւն գործակալութեան Պարոն Յակոբայ ի խնդիր լինել այնմ, թէ զիարդ հարկ և պարտ էր, հարցանել զկարծիս օրէնագիտաց, և պահանջել զիրաւունս աղքատաց ազգին իւրեանց։

„ Ակնածեալ Պարոն Յակոբայ ի Վրանէն՝ չկամի խառնիլ ուղղակի ի գործն յայն, այլ կարգէ ի տեղի իւր զՊարոն Մելիք Հարութիւնեան, զայր հմուտ և ազգաւէր յոյժ, և առաքէ զնա ի Լոնդոն առ ի հարցանել զկարծիս փաստաբանից և ի յառաջ վարել զխնդիրն։

Հանդերձ Սարգիս վարդապետ զՊարոն Մելիք կարեւոր խորհրդով և բազում հաւատեօք, վասն բանի խնդրոյն այնորիկ, և տայ նմա օգնական զԽուրալցի ոմն բարեկամ իւր, որ

գնայը ի Լոնտոն վասն գործոյ իւրոյ, և որ ծանօթ էր երեւելի արանց անդ և տեղեակ խնդրոյն։

Հանդերձէ և Պօղոս Պէյ Տատեան զՊարոն Մելիք և զոդնական նորա կարեւոր արծաթով, 2,000 ֆրանքով, ի ծախս ճանապարհի նոցա, և այլ պիտոյից Պարոն Մելիքի առանձինն, և զայն յուսով գտանել ապա յազգայնոցս ի Պոլիս։

Գնան նոքա երկոքեան ի Լոնտոն և հարցանեն զկարծիս երեւելի փաստաբանից անդ. տան նոքա զկարծիս իւրեանց ի նպաստ ազգասաց ազգիս առհասարակ, ըստ բանից կոտակին. և ոչ այսչափ միայն, այլ և գտանի Պարոն Յովհաննէս Մուրատ, որդի և կոտակատար Բարերարին տրամադրեալ ի նպաստել ազգին Հայոց առհասարակ ի խնդիրն յայն և ի պահանջս. քանզի ի ժամանակի անդ ցասուցեալ լինի նա յոյժ Մխիթարեան միաբանութեան, սակս յանդուգն և անմիտ յայտարարութեան ինչ Գեր. Հիւրմիւզի ընդդէմ նմա, և այն տպագրութեամբ։

Բայց գլխաւորքն ազգիս կասին յընթացից անտի, զանազով զկարեւոր ծախսն որ ընդ այն, քանզի ոչ զծախսն գործակցին հոգան, և ոչ զիր գործակցութեան նմա տան, զորմէ զրէ նա առ Պարոն Յակոբ Կրճիկեան, օրինակ զայս.

„ Լոնտոն. 3 Նոյեմբ. 1855.

„ Առ Կրճիկեան Յակոբ Աղայ որ ի Բարէզ,

„ Ազգասէր Բարեկամ,

„ Ամսոյս 1 թուականով նամակիդ այսօր ընկալայ մեծաւ
„ ուրախութեամբ, յոժար կամաք կընդունիմ Ձեր առաջարկութիւնները Ազգային գործքի մասին. բայց յառաջ քան
„ զգաշինքս իմ, այս քանի մը օրուն մէջ եղածները Ձեզի
„ պատմեմ.

„ Տատեան Պօղոս Ամիրան Լոնտոն ձգելէն ետեւ, փորձել
„ կամեցի զգխաւորութիւնս Մուրատեան Յովհաննէս Աղա-

“ յի, և հաստատ լինել եթէ իր որդւոյն բերնով մեզի տուած
“ խոստմունքներուն կարող են վստահանալ.

“ Այսու համար Ազանուրեան Ազան երէկ իրեն յուղարկե-
“ ցի որ բերան բնտռէ, և մեր գալը ինչ տպաւորութիւն է
“ ըրեր իմանայ, Մուրատեանը գոէր է յայտարարութիւն մը
“ կդրէ եղեր, բոլոր ընդդէմ Մխիթարեանց յայտարարու-
“ թեան, զորն խոստացեր է իրեն յանձներու յառաջ քան
“ զտպելն, որ զինքն խրատէ.

“ Քաջ իմանաք որ ուղղտպէս մեզի պիտի բերէ այն մա-
“ տեանը, որ խորհրդակցինք անոր վերայ.

“ Հայոց Ազգի կոչմանէ գալատնիս վրայ շատ գոհ է, ու
“ մեզի հետ ընելու Հայոց Ազգի հաճելի և օգուտ գրեանք-
“ ներուն և իրեն Հօր կոտակին յարութեանը պատճառ պիտի
“ ըլլանք ըսեր է, ինքը կըկամի ինչպէս կըտակի մէջ Հայրը
“ գրեր է, թէ “ վասն ի գործ ածելոյ զնոյնսն ի կատար հասու-
“ “ցանելոյ զկտակ իմ, յաւելեալն պարագայս, բոլորովին հպա-
“ “տակ շինիցին օրինաց, կերպի և սովորութեան Ազգդիաց-
“ “զոց, և ոչ այլ ո՛ և իցէ ազգաց։ ” Ինքն ալ ատոր ապաւինե-
“ լով, յետ գրութեանս ընելոյ մեզի հետ, որ գատաւորնե-
“ բուն առջեւը գացած ժամանակ ազգն ալ, իրեն ուժգոհու-
“ թիւնը և թէ քաշած անիրաւութիւնը ի գործ ածելոյ մասին
“ Մուրատեան կտակին, որ Մխիթարեանք որպէս մինչեւ
“ յայժմ, այս անգամ ալ, Ազգին երեսփոխան չցըրնեն զի-
“ րենքը, ու այսու բաստիւ նորէն գատ շահին.

“ Մուրատեանին ըսածին նայելով, Մխիթարեանք միշտ
“ իրենց բաստերը քալեցուցերեն ըսելով, թէ Ազգը տրտունջ
“ չէ իրենց մատակատարութենէ, ու իրաւասիրութեամբ
“ վարվելնուն վկայ է ազգին լուռը կենալ Հայոց Ազգն իրենց
“ է յանձներ իրեն իրաւունք պահել.

“ Դիւրաւ կիմանաք այս խօսակցութենէս, թէ Մուրա-
“ տեանին բոլոր ոյժը և ապաւէն առ այժմ մեր բողոքնը պիտի
“ ըլլայ. որպէս և ինքը կըխոստովանի Ազգանուրեան Ազային,
“ ու երկրայութիւն չունի վէճը տանելու, որչափ որ Ազգն
“ իրեն հետ ըլլայ.

«Իրեն որդւոյ հետ ունեցած խօսակցութիւնս Ազայեան
«բեանի պատմելէ, ու կըզարմանայ թէ Ազգը լեզուագէտ և
«օրէնագէտ մարդիկ որ ունի այսպէս ինչպէս որ կը տեսնայ
«այժմ, ինչուհամար զինքը մինակ է ձգեր մինչեւ ցայժմ,
«ու իրեն իրաւունքը պաշտպանելու չէ հոգացեր, կասկած
«ունէի, ըսեր է, գաղը ոկսելու, բայց այժմ կամաւոր կը
«դիմեմ առ դատաւորանը, Ազգին կողմանէ եկող մի և նոյն
«ոգի ունի որպէս և ես, և նոյն բանը յայտ է ըրեր որդ-
«ւոյս զորն ես ալ կամէի հաստատել, որ են Նախ և յա-
«ռաջ երկու միլիոն ֆրանքով առնուած գեղինքը դպրատան
«անունը ելլան և ոչ Վենետիկի վանքին Միսիթարեանց, ու
«հաստատ կերպիւ Անդղիոյ, Գաղղիոյ և Աւստրիոյ Տէրու-
«թեանց հովանաւորութեան տակը.

«Հաշիւ խնդրեն ի Վենետիկցոց թէ ինչ շահ բերեր է դրա-
«մագլուխն, ու անկանոն և կոտակի դէմը եղած ծախքերը
«չընդունի, քան զի կոտակին ոչ մէկ կէտը պահերեն, միտք
«ունի վայելացնելու միայն այնչափ ծախք, որչափ որը և
«աղքատ մանկունք կրթերեն և ոչ իրենց ազգականները.

«Երկրորդ՝ հաստատ կերպիւ դպրատան կառավարութիւն
«հաստատել, առանց խորութեան կրօնի և ըստ մասին ընդու-
«նին աշակերտ, և եթէ կարելի վենետիկցիները բոլորովին հան-
«ուին իրմէ որուած պաշտօնէն, զրկուին, իբրեւ անհաւա-
«տարիմ աւանդապահ, զորն որ չյիշէր իր հօրը կոտակն,
«բայց ինքը հաւատալով իրենց խոստմանց թէ գրիւ և թէ
«այլու կերպով զի հաւատարմութեամբ պիտի կառուցանեն
«զդպրատունը. քան զի կոտակն չկացուցանէ զՄիսիթա-
«թիւնը իբրեւ կոտակատարք այլ զիւր որդիս.

«Այս խնդիրքը որ Պարոն Մէլիք, ըսերէ Ազգիս կողմանէ
«որդւոյս իմաց տուաւ ինձ պատրաստ եմ հաստատել, որ-
«պէս հանելու յայտարարութեանս պատասխանիս մէջ ալ
«գրեցեմ, բայց կամիմ եւս վստահ ելլալու համար Նոթարիէ
«եղած գրով ընենք, ու մէջը որոշենք թէ Ազգին պահանջ-
«մունք և թէ իմ.

«Ինչպէս որ կարողէք տեսնալ ժամանակ անցցնելու չի-

“ գար, ինքը տաղնապած ու զայրացած ըլլալու Մխիթա-
“ բեանց յայտարարութեան, մինչեւ ժամանակը պատեհ է և
“ ինքն յօժարութիւն կցցնէ մեզի հետեւել գրութիւններ
“ ընենք, թէ որ փրքիւրացիոն մը ունեցած ըլլայի, մինչեւ
“ ցայժմ զինքը տեսած կլլայի ու գրութիւններ ալ պատ-
“ բաստ կըլլային, թէ և ինքը զիս տեսնալ կամի կարծելով
“ որ կանոնաւոր էս եկեր հոս, աս ալ Տաճեան Ամիրան
“ ըսերէ իրեն յառաջուց. փոխուստ տուի ապասելով Ձեր պա-
“ տասխանի.

“ Ձեր գրի մէջը ըսերէք թէ չեք գիտեր Ձեր վրայ, եղած
“ փրոքիւրացիոն կարող էք իմ անուանս դարձուցնել, այս
“ բանը սաանկ խնդրելուս պատճառ մէյ մը որ դուք Ձեր
“ անունը չյիշի ըսիք ինձի, երկրորդ Տաճեան Ամիրայն հոս
“ անանկ տարածերէ թէ Պոլիսէն լայն ընդարձակ արտօնու-
“ թիւնը տուեր են ինձի, որ աս բանիս հետեւիմ, ու շիտակ
“ Պոլիսէն կուգամ, ի սկիզբէն անպատշաճ թուեցի ան-
“ կանոն երեւալ, ու սուտ հանել ըսածներ.

“ Փրոքիւրացիոն ճէնէռալ եղած ժամանակ կարեւորութիւն
“ չունի նորէն Ազգին գրել և Պատրիարգին հարցնել, Դուք
“ զիս փոխանորդ կացուցանելու էք այն Փրոքիւրացիոնի ու-
“ ժով Նօթէրի ձեռօք, ու Գեսպանին լէկալիզէ ընել տալու
“ է, Ձեր փրոքիւրացիոնի ալ մէկը օրինակը նոյն ձեւով լէ-
“ կալիզէ եղած թէ բուն փրոքիւրացիոնի օրինակն է ըսելով
“ ինծի յղրկէք բաւական են առնք գործը յառաջ տանե-
“ լու.

“ Բայց թէ որ կամիք Ձեր անունը մէջ չըլլայ, որ ժամանա-
“ կաւ չատիպեն զձեր փրոքիւրացիոնիդ յետ առնել, գրեցէք
“ Ազգային ժողովոյ և Պատրիարգին, իմ անուանս փրոքիւ-
“ բացիոն մը նորէն յղրկեն ու այն փրոքիւրացիոն ճէնէռալին
“ օրինակն ալ Նօթէրէն առնէք խրկէք լաւագոյն կըլլայ
“ կարծեօք.

“ Իմ միտքս սա է որ անանկ կանոնով մը բռնենք գործքեր-
“ նիս, որ յետքը մեր թշնամեաց առջին պզտիկ չընկնանք,
“ ու փրանիս չմնդացնենք. անէր որ այս բանիս ձեռնամուխ

„ եղանք, եւ քաշուիլը գէշ առջի լուութենէ, ու պատճառ
„ կըլլանք մեր թշնամիները ժամանակ կըտանան ազգին ժա-
„ ռանգութիւնը ձեւով մը օտարացնել, որ յետոյ ոչ եր-
„ բէք ազգը կարող ըլլայ բանը գտնալու իրենց անուանը.

„ Առ այժմ ձեր կողմէն փրօքիւրացիոն խրկելնիդ պէտք է,
„ եւ գիտէի որ Պօղոս Աղայի քոմէն է, ապա թէ ոչ բարիզէն
„ չելած կարգի կդնէինք. Գանք հիմա ինչ գաշինքով այս Ազ-
„ գային գործոյն ձեռնամուխ պիտի ըլլաք նախ Ազգէն
„ պարտք մը չեմ ընդունիր իմ աշխատանցս համար, բայց
„ հարուստ չըլլալուս կինդրեմ որ ամիսը 750 ֆրանք տան
„ ինձի ամէն ամիս, առանձին ծախքերուս համար որչափ որ
„ այս գործս տեւէ, եւ թէ Ազգէս ատակ մը աւելցնելու ըլլամ
„ երդմամբ կը հաստատեմ թէ աւելորդ այս ազգային գոր-
„ ծոյն ուրիշ ծախքերուն համար վճարելու.

„ Երկրորդ ամէն ամիս վէճին համար, աւօքային, աւուէ,
„ նօթէրի, յիւսիսի ծախքերը վճարուին ազգէն.

„ Երրորդ Անգղիայէն եւ Գաղղիայէն ուրիշ երկիր երթա-
„ լուս կը պարտաւորիմ այս գործոյս համար ճամբուս ծախքե-
„ րուն համար Ազգը վճարէ ինձ այն 750 ֆրանքէն ի զատ
„ 500 ֆրանք ամիսը.

„ Չորրորդ մի միայն պահանջմունքս ատ պիտի ըլլայ, թէ
„ Ազգին իրաւունքը ատանամ, և Մուրատեան վարժարանը
„ կտակին համար հաստատենք ու ազգային վարժարանը
„ ընենք Մուրատեան փարիզի վարժարան. Ազգը յանձն առ-
„ նէ մինչեւ յիսուն հազար ֆրանք իմ մատակարարութեանս
„ ու ուզածիս պէս մենիման մը շնել տամ դպրատան արա-
„ հին մէջ, որոյ վրայ քանդել տամ զանուն այն արդիւնա-
„ ւոր արանց, որք աշխատեցան ազգին այս օգտին համար
„ և ի վէճ հանեցին.

„ Ահա իմ գաշինք, եթէ ունիցիք այլ ինչ պահանջել յի-
„ նէն, պատրաստ եմ մեր խեղճ ազգին համար մինչեւ ցմահ
„ զոհել զոր ինչ կարեցիս.

„ Թէ որ այս գաշինքը կըհաւնիք ազգի կողմանէ ալ մէկ
„ օրինակը գրեցէք և ստորագրել տուէք որ ես ալ հաստատ

“ ելլամ, ու ընելիքս գիտնամ, կարաշնամ շուտով պատասխան “ տար, ու փրօքիւրացիոն մը խրկէք ինձ։

“ Ձեր անկեղծ բարեկամ

“ Յ. ՄԷԼԻՔ
“ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ։ ”

Կասին իշխանք Ազգային ժողովոյ ի հաստատելոյ զպարտս իւրեանց, զանալով զկարեւոր ծախս, և զդիր գործակալութեան Պարոն Մելիքի, ի պահանջել զիրաւունս աղքատաց ազգին, ապա չունին նոքա տեղի ասելոյ Սարգսի վարդապետի, թէ “ Մենք չենք կրնար գոհ ելլալ, որ դուք այսչափ “ միայն արդարութեան և ազգասիրութեան պարտքերնիդ “ կատարած ելլաք, ” տալով նորա կարեւոր խորհուրդ Պարոն Մելիքի և յանձնելով ի ձեռս նորա բազում հաւատիս, ի պահանջել զիրաւունս աղքատաց ազգիս։ . . .

Եթէ կասեցին նոքա եւս անտի յետ ընթեռնլոյ և զերկրորդ մասն պատմութեան Մուրատեան վարժարանին, ինքեանք լիցին մեղադրանաց արժանի ի յետեոց իւրեանց, . . . հաստատելով Սարգսի վարդապետի զպարտս իւր առ արդարութիւն և ազգասիրութիւն։

ԳԼՈՒԽ Բ.

Կարօտութիւն ի ներքոյ և վիշտ արտաքոյ վարդապետաց Հայ-կազեան վարժարանին. — Երբ Ամերոսեայ վարդապետի ի Պոլիս ի խնդիր օժանդակութեան և պատուպարութեան. — Թողութիւն հիպատակութեան վարդապետաց առ Պատրիարգ Կոստանդնուպօլսոյ. — Պատասխանի Պատրիարգին առ վարդապետս հանդերձ վկայագրով. — Թողութիւն հիպատակութեան վարդապետաց առ Կարոզիկոս Էջմիածնի. — Ողբախօսութիւն և գոհութիւն Կարոզիկոսին ընդ այն, և կամք. — Թողութիւն խնդակցութեան և աշխատեաց Ամերոսեայ վարդապետի առ Պարգիս վարդապետ. — Պատճառ փոփոխութեան վիճակի երից վարդապետաց Հայկազեան վարժարանին և պատասխանի նոցա առ Պարտաշատիտ.

Որպէս վերագոյն ծանուցաք, նեղեալ յոյժ երից վարդապետաց Հայկազեան վարժարանին արտաքոյ և ի ներքոյ՝ խորհին դարման դտանել այնմ. առաքեն սոքա ի Պոլիս յամեան ապրիլի 1856 ամի, զԱմերոսիա վարդապետ առ ազգային խնդրել անտի օժանդակութիւն Հայկազեան վարժարանին, և պատուպարութիւն ինքեանց յերեսաց բռնութեան Հռոմայ Պապին։

Թէպէտ և հանդիպին սոքա խնդրոյ իւրեանց, սակայն ոչ առանց դժուարութեան, սակս զանազան կարծեաց և հակառակութեան ոմանց ի գլխաւոր ազգայնոցս անտի. քանզի Յովհաննէս Պէյ Տատեան իբրեւ ազգապետ, և Կարապետ Ամիրայ Պալեան իբրեւ համախոհ նորին, ոչ կամին ընդ հաստատութիւն Հայկազեան վարժարանին ի Փարիզ, այլ կամին զի երեքին վարդապետք երթիցեն ի Մոսկվայ ի վարժարան Լազարեանց, և անդ աշխատիցին յօգուտ ազգայնոցս, որ ընդ ոէրութեամբ Ռուսաց . . . Այլ թէ ընդէ՞ր այս կարծիք նոցա

և կամք. թէ և բաղումք յաղգայնոցս ի Պոլիս և յայլուր գաւառսն և ցաւալից մեկնութիւն ասեն, այլ մեք երաշխաւոր այնմ ոչ կամիմք լինել... թողեալ զայն քննութեան և դատաստանի հասարակաց։...

Թողումք և զայն ասել, զի թէ և երեքին վարդապետքն յօժար լինէին գնալ ի Մոսկվա ի վարժարան Լազարեանց, ընդունելի լինէին նոքա. և ոչ խառնութիւն ծագէր վասն նոցա ի մէջ վարժապետաց և տեսչութեան վարժարանին։

Իսկ այլք ոմանք, որոց գլուխք լինին Պարոն Պետրոս խորասանճեան, և կարապետ Աղայ Երամեան, հաճեալ հաւանին ընդ խնդիր վարդապետաց, և խոստանան օժանդակել Հայկազեան վարժարանին և պահել զայն ի հաստատութեան, թէպէտ և պակասին նոքա ի խոստմունս իւրեանց և լինին պատճառ քանդման վարժարանին, զրանալով ծնողաց մանկանց զթոչակս որդւոց իւրեանց։

Նոյնպէս և պատապարութիւն սոցա յերեսաց բռնութեան Հռոմայ ոչ առանց դժուարութեան լինի, դարձեալ սակս զանազանութեան կարծեաց ոմանց, որոց գլուխ Մատթէոս նախկին Պատրիարգ, որ կարծէ թէ չէր պարտ ընդունել զսոսա նախ քան զհաւանութիւն կաթուղիկոսին։

Իսկ Յակոբոս Պատրիարգ և այլ եպիսկոպոսք և վարդապետք կարծեն թէ պարտ էր ընդունել զսոսա նախ՝ և ապա գրեալ ծանուցանել զայն Կաթուղիկոսին յԷջմիածին։

Իբրեւ կարծիքս այս հաստատութիւն առնու յաղգային և ի հոգեւորական ժողովի, և իբրեւ իմանայ զայն Ամբրոսիոս վարդապետ, գրեալ ծանուցանէ ընկերաց իւրոց ի Փարիզ, որոց իմացեալ զայն՝ գրեն զիր հպատակութեան առ Յակոբ սրբազան Պատրիարգ ի Պոլիս, օրինակ զայս.

„ Ամենապատիւ Սրբազան Տէր.

„ Ի հերուն հետէ իսկ քաջածանօթ է Սրբութեանդ անձ-
„ նանուէր նահատակութիւն երեցունցս ներքոյ գրեալ վար-

„ դապետաց, երբեմն Մխիթարեանց՝ և զարգիս կամեսարա-
„ պէս անչատելոց ի միաբանութենէ անտի, ի պաշտպանու-
„ թիւն իրեանց Ազգիս մերոյ և ի Ջատագովութիւն ուղղա-
„ փառ վարդապետութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ։
„ Տեսեալ արդ յայտնապէս ի միոյ կողմանէ զանապատ և
„ զանիրաւ հալածանսն յարուցեալս ի վերայ մեր յօտարա-
„ խորթ առաջնորդաց, և լուեալ ի միւսմէն հաւատեալ եթէ
„ Ազգն մեր մոռացիւր յօժարութեամբ կամիցի օգնական լի-
„ նել մեզ բանիւք և արդեամբք յուսումնական և ի բարո-
„ յական զարգացումն մերազնեայց, և թէ առ այս կարօտի
„ միայն երաշխաւորութեան Ամենապատիւ Տէրութեանդ Ձե-
„ րոյ՝ որպէս զի աներկմիտ վստահութեամբ յանձնեացէ ի մեզ
„ զմնաման դատարակութեան որդւոց իւրոց, յայտ առնեմք
„ ահա սովին գրութեամբ, զի եթէ արդարեւ հաւանեալ իցէ
„ և Ձերդ Սրբութիւն օգտակարարդոյն եւս գործել ազգակ-
„ ցացն մերոց զվաստակս մեր դուզնաքեայս՝ յորժամ ընդ
„ Ձերումդ պատապարիցիմք հոգեւորական իշխանութեամբ,
„ մեք մերոմանն պատրաստ եմք ի տոյն, հրաժարելով ի ըս-
„ պառ ի հպատակութենէս մերմէ առ Պապն Հռովմայ և առ
„ առաջնորդս կարգեալս ի նմանէ։

„ Ոչ ինչ երկրայիմք, ամենապատիւ Տէր, եթէ Ձերդ
„ խոհական իմաստութիւն շատ գրեսցէ զյայտարարութիւնս
„ մեր զայս՝ առ ի կալոյ երաշխաւոր ոգեմտութեանս մերում
„ առաջի ոյր ուրուք և իցէ, որպէս և հաստատելոյ զմեզ
„ յիշխանութեանս զոր ունիմք օրինաւոր ձեռնադրութեամբ
„ ի կատարումն քահանայական և վարդապետական պաշ-
„ տամանց։ Եւ զի և խոստանամք եւս կատարել զնոսին
„ այսուհետեւ ըստ անխառն արարողութեան և ըստ հարա-
„ զատ աւանդութեանց Հայաստանեայց առաքելական սուրբ
„ Եկեղեցւոյ, զորոյ զվարդապետութիւնն և զպաշտամունս
„ առ հասարակ ուղղափառական ծանուցեալ եմք միշտ և
„ ճանաչեմք, և Ջատագով կամք նոցին և կացցուք Տերամբ
„ մինչեւ ի վախճան բանիւ և գրով։

„ Ակն ունելով օրհնաւաք պատասխանւոյ Ձերումդ Սբբ-

„ բութեան, խոնարհիմք ի համբոյր սատուածարեալ աջոյդ,
„ և մնամք

„ Ամենապատիւ Տէրութեանդ

„ Փարիզ. 5 մայիսի 1856.

„ Խոնարհ ծառայք և որդիք
„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՒՈՒԵԱՆ.
„ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶՈՎՍԿԻ.
„ ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. ԳԱԼՖԱՅԵԱՆ. „

Առնէ Պատրիարգ պատասխանի գրոյ սոցա, հանդերձ վկայագրով, օրինակ զայս.

„ Արժանապատիւ Հոգեհարազատ Սիրելեացդ մերոց խնդալ։

„ Զմիաբանական թուղթ յայտարարութեանն սորագրեալ
„ յերեցունց Արժանապատիւ Վարդապետացդ՝ ընկալաք ա-
„ մենայն հոգեւոր բերկրանօք և հաճութեամբ սրտի միան-
„ գամայն, տեսանելով զանկեղծ և զյօժարակամ փոյթ ձեր
„ պատսպարելոյ ի խնամս մեր հայրական հոգեւոր հովուու-
„ թեան, և բոլորանուէր հպատակութեամբ ընծայելոյ զան-
„ ձինս յորդեգրութիւն ծնողին զձեզ հարազատի՝ Հայաս-
„ տանեայց սուրբ Եկեղեցւոյ։

„ Վասահ եմ ի Տէր, զի ամենայն ջան և բարի վաստակ
„ ի ճշմարտաբար սրտիցդ նուիրեալ յօգուտ և ի բարգաւա-
„ ճութիւն Ազգիս և ի պաշտպանութիւն հայրենի ուղղափառ
„ սուրբ Եկեղեցւոյս մերոյ պտակեցի՛ անշուշտ երկնային և
„ երկրաւոր պարգեւաք, և այն լինիցի ձեզ ի փառս և ի մշ-
„ տընջենաւոր վայելս գովութեան։

„ Եւ արդ համառօտութեամբս այսու յայտ առնեմ ձերոց

„ Արժանապատուութեանց, զի զուղղեալն ձեր զիր հպա-
„ տակութեան առ Վեհափառ Հայրապետ ամենայն Հայոց
„ Սրբազան Կաթողիկոսն Էջմիածնի, յղեցաք մերով յանձնա-
„ բարական գրով՝ շնորհել ձեզ զՀովուապետական բարձր
„ օրհնաձիր Կոնդակն. իսկ առ ի հաստատ առնելոյ զապա-
„ հովութիւն սրտից ձերոց փութացաք առ այժմ տալ զերիս
„ վաւերական կնքունակ վկայագիրս մեր ի ձեռս իւրաքան-
„ չիւրոցդ. յորոց զմին ընկալաւ առ Արժանապատիւ
„ Երիցակից ձեր Ամբրոսիոս բարեշնորհ վարդապետ, և զեր-
„ կրորդն առաքեցաք այդր առ մեծաշուք Յակոբ Էֆէնտի
„ Կրճիկեան, որ ունի տալ մատուցանել ձեզ զայնոսիկ։

„ Ողջունիւ արժանի մեծարանաց և սիրոյ մնամ

„ Ձերդ Գերապատուելեաց

„ Բերանալիր օրհնաբան և բարեմաղթու միշտ

„ Պ. Կ. ՅԱԿՈԲ
„ Արքեպիսկոպոս.

„ 10 յունիս 1856. ի Պատրիարքարանս Հայոց
„ Կոստանդնուպօլսոյ։ „

(„ Առ Գերյարգոյ Մերուն Աղաբդ Տ. Սարգիս Վարդապետ Թէոդորեան և Տ. Գաբ-
„ րիէլ Արժանապատիւ Մեծիմաստ Վարդապետ Այվազովսքի ի Փարիզ։ „)

Գրեն առքա երեքին վարդապետք զիր և առ Ներսէս Վեհա-
փառ կաթուղիկոս Յէջմիածին, օրինակ զայս.

„ Առուածապատիւ Հոգեւոր Վեհապետիդ մերում Տեառն
„ Ներսեսի ամենայն Հայոց Սրբազան Կաթողիկոսի, խո-
„ նարհական ողջունիւ մեծարանաց և համբուրիւ առա-
„ ուածարեալ աջոյդ ի Տէր խնդալ։

„ Ոչ ինչ զանխուլ են արդեօք ի Ձերմէ Սրբութենէդ, Ա-
„ ստուածապատիւ Տէր, վէպք անցիցն անցելոց ի Հայկազունս
„ Տաճկաստանի՝ յանջատեալն յամաց հետէ ի բնիկ և ի սեպ-

«հարան Հռոմայեցոյ իւրեանց, և մեծաւոր ընդ անընդմէջ
«հրամանաւք Աթոռոյն Հռոմայեցւոց։ Վասն որոյ և յու-
«սամք թէ Զերդ Սրբութիւն ներեսցէ ներքոյ գրելոցս վար-
«դապետաց առաջի առնել Տեառնդ կարճ ի կարճոյ եւեթ
«զմեր ընդունելոցս երիկցակցաց գիրս և զգործս յայն ամե-
«նայն յեղափոխութիւնս աղետալիս որ պատահեցին ի Կոս-
«տանդնուպոլիս և ասա ի Փարիզ քաղաքի։

«Յառաջ քան զամս տասն յերկուս պատակոեալ անուա-
«նեալն կաթոլիկ կամ հռոմէական ժողովուրդ Հայոց որ
«ի Կոստանդնուպոլիս, գամ քան զգամ ազգակցաւ անհնա-
«րին զայրացմամբ մինչեւ ցոկիզբն արեւելեան պարտերազ-
«մին։ Մխոռմն կողման պարագրուխ անցեալ կայր Գերապա-
«տիւ Անտոն Վարդապետ Հասունեան՝ Նախագահ եպիս-
«կոպոս հռոմէականացն Հայոց, աշակերտ Ալբանեան
«զպրոցին Հռոմայ, և ամենայն հրամանաց այնր Աթոռոյ
«հաւատարիմ պաշտօնեայ. և որ ընդ նմա միաբանեալ էին
«երիցունք և աշխարհիկք՝ լատինատէրք մանաւանդ գոլով
«քան թէ ազգատէրք՝ արհամարհէին և անարգէին զամենայն
«ինչ զՀայոց։

«Իսկ միւսոյ կողմանն Ղասագով և ձեռնտու էր զատա-
«ջինն Մխիթարեանցն միաբանութիւն որ ի Վենետիկ, ընդ
«իւր ունելով զմեծ կէս հռոմէականացն Հայոց, որ յազ-
«գասիրութեան խնամոյց իմն բերեալք՝ ջանահնար լինէին
«անկորուստ պահել զէթ զնշխարեալն իրաւունս ազգայ-
«նոյ Եկեղեցւոյն։ Ոչ է հարկ ասել Զերումդ խնամաս-
«թեան՝ զի առաջինքն զօրացեալք թեւարկութեամբ հռոմ-
«էականին Աթոռոյ՝ յաղթեցին ի վերջն հակառակորդաց
«իւրեանց. և եթէ ընկճեցին ոչ զոգւոցն աշխոյժս, ապայն
«զբերանս նոցա կարկեալ լռեցուցին։ Մինչդամայն և
«պարտանձանց վարկուցեալ զգլխաւորս յոտից նկուն
«առնել, զՄխիթարեան միաբանեան ասեմ, զորս և բամբա-
«սէին կատաղելիս գոլ ի հաւատոյս՝ իբրու հայկականացն
«առանձին տարապոյման Ղասագոյս, որոյ վասն և ոչ բան
«բաւականին կաթոլիկս և պապականս, ի կարծանումն և

„ ի ցրուումն նոցա վատաւելեցին ։ Նմին իրի և Պապն Հռով-
„ մայ պահանջեաց ի Մխիթարեանց ազգ իմն նորոյ դաւա-
„ նութեան և յայտարարութեան հաւատարիմ հպատակու-
„ թեան իւրեանց առ ամենայն հրամանս և ակնարկութիւնս
„ Աթոռոյն Հռովմայ և պաշտօնէից ինքեանք կարգելոց, եւս
„ և ի խնդիրս որ արտաքոյ էին մասանց հաւատոյ ։

„ Երկուցեալ այժմու առաջնորդին Մխիթարեանց, Տ. Գէ-
„ որգայ արքայի Հիւրմիւզեան, ի սպառնալեաց ոտիցն,
„ յանձին կալաւ առնել զյայտարարութիւնն զայն անարժան,
„ և զբաղումս յիւրոցն միաբանից բռնադատեաց ձեռնադրել
„ ի նոյն. որով և Մխիթարեանն միաբանութիւն իրաւամբ
„ համարեցաւ իմն մատնուս իրաւանց ազգիս և միանգամայն
„ նախատիչ ուղղափառութեան վարդապետութեան Հայաս-
„ տանեայց սուրբ Եկեղեցւոյ ։ Քանզի ասէր Հիւրմիւզեանն
„ ի միաբանական գրին իւրում որ առ Պապն, եթէ Հայքն
„ չմիաբանեալք ընդ Հռովմէականին Եկեղեցւոյ՝ հերձուա-
„ ծողք են և հերետիկոսք, որով և արտաքոյ գտանին կաթո-
„ ղիկէ Եկեղեցւոյն Քրիստոսի ։ Եւ զայս վկայութիւն Մխի-
„ թարեանց հրատարակեաց Պապն Պիոս Թ. ի կոնդակին
„ իւրում տուելոյ յամին 1854, յ2 աւուր փետրուարի ։

„ Այնմ անիրաւ և անպատեհ յայտարարութեան ոչ եղաք
„ ձեռս երեքին վարդապետքս որ գտեաչութիւն Մուրատեան
„ վարժարանին ունէաք յայնժամ ի Փարիզ, և յերկուց և
„ յերից ամաց հետէ հակառակէաք օրինաւոր բողոքով խոր-
„ հրդոց և գնացից առաջնորդին Մխիթարեանց և համախոհից
„ նորա. որով և առելիք եղաք յաչս նոցին, և կատաղելիք
„ առաջի հռովմէական Աթոռոյն ։ — Դարձեալ և այնմ
„ անարդար հրամանին ընդդէմ կքրեցաք որով նոյն առաջ-
„ նորդ՝ դրդեալ ի Հռովմայ պաշտօնէիցն՝ կամէր նախ զվար-
„ ժարանն զայն ի Հռոմ փոխադրել, և ապա դէթ զայն
„ պահանջէր զի զկաթոլիկաց եւեթ մանկունս ընդունիցիմք
„ ի վարժարանն յայն ազգային յաշակերտութիւն, կամ թէ
„ զՀայոց մանկտին եւս ընկալեալ՝ ի կաթոլիկութիւն զնոսա
„ շրջեսցուք, որ ընդդէմ էր խղճի մերում, և նորին խոկ

“ բարերար հիմնադրին՝ այս ինքն է Աղա Համուէլի բանից և
“ դիտաւորութեան հակառակ ։

“ Յաղագս այսր ամենայնի մի ոմն ի մէնջ, Գաբրիէլ վարդապետ Այվազովսքի, անդէն իսկ ի վերջ կոյս 1854 ամին
“ ի բաց հանեալ ի Մուրատեան վարժարանէն, յետ եօթնամեայ ուժանակաւոր վաստակոցն ի դատարակութիւն
“ հայկազն մանկտւոյն, իբրեւ կասկածելի ի վարդապետութիւնս իւր և ի հայութիւն հակամէտ ։ Ապա յետ վեցից
“ ամաց ինքն իսկ առաջնորդն Մխիթարեանց եկեալ ի Վենետիկ ի Փարիզ, եհան մերժեաց ի վարժարանէ անտի
“ բուռն զօրութեամբ և անհնարին գայթակղութեամբ ազգայնոց և օտարաց զՍարգիս Վարդապետ Թէոդորեան զՎերատեսուչ վարժարանին, որ ի յինանից ամաց հետէ միսրան
“ վանիցն էր, և զամս քառասուն վաստակեալ ի կանոնաւոր և ի տեսչութիւն ազգայնոյ վարժարանին, և յետոյ ամաց հետէ աթոռակալ իսկ առաջնորդին Մխիթարեանց.
“ ընդ նմին և զԱմբրոսիոս Վարդապետ Գալֆայեան զդատաւոր և զուսումնապետ վարժարանին ։

“ Եւ իբրեւ տեսաք երեքին վարդապետաքս եթէ այսպէս
“ ոտնակոխ եղեն յառաջնորդէն Մխիթարեանց իրաւունք ազգին և ամենայն արդարութիւն, կամաւորապէս հրաժարեալ ի բաց ելաք ի միաբանութենէ անտի նոցա, յազգս
“ Հայոց և յառաջնորդս նորին առնելով ապաւան՝ հոգ յանձին ունել և կորզել ի ձեռաց Մխիթարեանց գէթ զմասն հրիտակին սահմանելոյ ի դատարակութիւն ազգաս և որ մանկտւոյ Հայկազնեայցս առ հասարակ ։ Այս անցք անցին ընդ մեզ ի հերուն, այսինքն է ի մայիսի 1855 ամին, և մեք անարտունջ տարաք ամենայնի Տեառն շնորհիւ առ սէր ճշմարտութեան և արդարութեան և ազգիս մերոյ ։ Այլ քանզի ընդ մեզ ելին ի վարժարանէ անտի և քանիւ չափ աշակերտք ի յինանից, և յոլովք ի նոցանէ յանձն եղեն դարձեալ ի ծնողացն իւրեանց ի խնամս մեր և օրըստ քան զօր առնեն ի բազմութիւն, ոչ դադարեն Մխիթարեանք ի խուսելոյ զմեզ և ի գրպարտելոյ առաջի մեծի և փոքու՝ միտրա-

«Նեալք ընդ հռոմէականացն պաշտօնէից կամեցարարս։
«Սակայն և ի հակառակէն՝ ողջամիտ մասն ազգիս Հայոց
«ականատես գոլով և ականջալուր առ ի մէնջ կրելոցն վըշ-
«տաց և նեղութեանց ի սէր և ի պաշտպանութիւն իրաւանց
«իւրոց, գաջալերէ զմեզ և խրախուսէ բանիւք և արդեամբք՝
«հաստատուն կալ ի խորհուրդս մեր, և մի՛ անձանց գիւրի
«միտ դնելով ձեռնթափ լինել յազգաւորութեան վասակաց
«և Ջանից. խրախոյս արդարեւ քաղցր յոյժ և պատուական
«յաչս լքելոցս և տառապելոցս՝ յետ ասուածատուրն պար-
«գեւաց անդորրութեան խղճի և ոգւոյ։

«Իսկ յաւուրս յայսոսիկ կամեցեալ մեծամեծացն և իշխա-
«նաւորաց Հայոց որ ի Կոստանդնուպօլիս՝ օգտակարագոյն
«եւս գործել զվասուակս մեր գուշնաքեայս ազգին և հայրե-
«նեաց, առաջի արարին մեզ խորհուրդ կարեւոր՝ ի մեզ
«յանձնառնելոյ աներկմիտ վստահութեամբ զդասաւորակու-
«թիւն և զմնեալս հոգեւոր և մարմնաւոր հրահանգաց որդ-
«ոցն իւրեանց, եթէ ի բաց կացեալ բոլորովին յիշխանու-
«թենէ Պապին և առաջնորդաց առ ի նմանէ կարգելոց,
«անդրէն ընդ հովուապետական իշխանութեամբ Ձերոյ Սըր-
«բութեանդ մոտանիցեմք, հպատակելով ի հոգեւորականն
«հրամանաց Սրբազան Պատրիարքին Հայոց որ ի Կոստանդ-
«նուպօլիս։ Եւ մեք որ անդատին ի մանկութենէ նուիրեալս
«եմք ի սպաս պաշտաման Տեառն և ի նպաստ բարգաւաճա-
«նաց հայկազեանս գրոհի, ոչ ինչ դանդաղեցաք յանձին
«ունել զառաջարկն, և գրեցաք առանիկ առ նա ինքն Սրբա-
«զան Պատրիարքն միաբանական գիր հպատակութեան,
«զորոյ պատճէնն գացէ Սրբութիւնդ Ձեր յարակից սը-
«մին։

«Միանգամայն պարտ և պատշաճ համարեցաք և առ Ձերդ
«գերագահ Սրբութիւն յայտ առնել սովիմբ զպատրաստա-
«կանն մեր յօժարամտութիւն մոտնելոյ ընդ եկեղեցական
«իրաւասութեամբ մեծի Աթոռակալիդ և յաջորդի սրբոյ
«Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, որոյ բարեխօսութեամբն
«և Ձերոյդ հայրապետական հաճութեամբ և օրհնութեամբ

„ ակն ունիմք պողոքերս լինել Ջանիցս մերոց յօգուտ և
„ ի պայծառութիւն Ազգիս ։

„ Պարտս անհրաժեշտս գրեալ եմք անձանց՝ պաշտպանս
„ լինել մերովքանն , եւս առաւել յայսմ հետէ , և համարձա-
„ կաձայն Ջատագովս ուղղափառ վարդապետութեան որոյ
„ առաքելական Եկեղեցւոյս Հայաստանեայց գրով և բանիւ
„ և արդեամբք , և զմեռացուած կենաց մերոց ի սոյն նուիրել
„ այսուհետեւ կամակար յօժարութեամբ ։ Եթէ հաճոյական
„ իցէ սրտագիտին Աստուծոյ մերս այս անձնանուէր նահա-
„ տակութիւն , նա ինքն զօրացուցէ անշուշտ զոկարութիւնս
„ մեր և քաջալերեսցէ զմեզ ի սիրս և ի հոգի ։ Եւ այսմ քա-
„ ջալերութեան ակնկալեալ ապատեմք յօրհնութիւնսարեր պա-
„ տասխանւոյ Սրբազան Տէրութեանդ ։

„ Սովին անուերկրայ յուսով խոնարհեալք վերսին ի համ-
„ բոյր աստուածարեալ աջոյ Վեհապետիդ , ողջ լինել ըղ-
„ ձանեամք յամենայր ամօք բարեկենդանութեան ,

„ Աստուածապատիւ Սրբազան Տէր ,

„ Ձերումդ Վեհափառութեան

„ Ի Փարիզ . 18 մայիսի 1856 .

„ Ամենախոնարհ ծառայք և որդիք
„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՄՐԻՈՐԵԱՆ .
„ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՑՎԱՑՈՎՍԿԻ .
„ ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. ԳԱԼՖԱՑԵԱՆ . „

Առեալ վեհափառ կաթուղիկոսին զգիր հպատակութեան երից վարդապետաց ի Փարիզ , ուրախ լինի յոյժ , և գոհանայ զՏեառնէ յոյժ յոյժ . քանզի ասէ ահա այց արար Տէր ազգի մերում , „ Մինչեւ ցարդ կարծէաք , ասէ , թէ ի քուն էր
„ Աստուած վասն մեր , այժմ զարթեաւ ի քնոյ , հայեցաւ
„ ի մեզ զթութեան ակամբ ։ „

Ընթեռնու նա զգիր սոցա կրկին և կրկին, և ասայ զայն ընթեռնուլ այլոց։

Կամի նա առնել զրոյ սոցա պատասխանի հանդերձ պատուոյ նշանօք, ոսկի խաչօք ընդելուզեալ անդամանդիւք, և յանձնել զայն Սարգսի եպիսկոպոսի Զալալեան, որ յայնմ ժամանակի ի Մոսկվայ լինի, զի գնեալ նորա զայն անտի բերցէ ի Տփխիս, զոր ընդ պատասխանւոյ իւրոյ առաքեսցէ առ վարդապետս ի Փարիզ։

Սակայն յանձնարարութիւն նորա չառնու կատարումն, որպէս թէ չգտանէ նա զայն անդ պատրաստ, և կերտել տալ պիտոյ էր ժամանակ, զոր չունէր ինքն, հասեալ գոլով գարձին իւրոյ ի Տփխիս։

Զայս այսպէս լսէ Սարգիս վարդապետ ի Տփխիս ի բերանոյ ազգականաց և մտերիմ բարեկամաց հանգուցեալ կաթուղիկոսին, այլ և ունէր ինքն զպատճառ չառնլոյ կատարումն յայլ ինչ հանեն, յանարգ նախանձ, չունելով Զալալեանի, ասեն, այնպիսի պատուոյ նշան, չկամի կատարել զայն. ապա թէ ոչ ի Մոսկվայ հազարաւոր այնպիսի խաչք գտանին պատրաստ, ասեն։

Բարեացակամն Ներսէս կաթուղիկոս ոչ միայն կամի պատուոյ նշանօք զսոսա քաջալերել, այլ և խորհի ազրիւր ինչ օժանդակութեան ի հաստատութիւն վարժարանի նոցա անդ գտանել. քանզի նախատես և քաջատեսակ գոլով նորա խելամուտ լինի թէ անտի միայն կայր յոյս յառաջադիմութեան ազգին իւրոյ, վասն այնորիկ խորհի զհաստատութենէ նորին, և գրատանէր նա զայն անշուշտ, եթէ ամ մի ևս կացեալ էր ի կենդանութեան իւրում։

Աւա՜ղ բազդին մերում, կորուսանելով զնա, և չգտանելով զնման նմա... հաստատութիւն այսմ, ահա վկայութիւն հաստատիմ առն և մտերիմ բարեկամի նորա, Պարոն Ռոմանոս Նատիրեանի, որոյ գարձեալ ի Փարիզէ ի Տփխիս և գնացեալ յայց յարգութեան նորա՝ հարցանէ ցնա զվարդապետաց իւրոյ որք ի Փարիզ. յետ տալոյ նորա տեղեկութիւն զնոցանէ, յաւելու ասել, թէ բարուք լինէր վարդապետքն այնոքիկ

ի Տփխիս գնային և յուսումնարանի նորա անդ աշխատէին։ Հայեցեալ կաթուղիկոսի յերես նորա իբրեւ զարմացմամբ՝ ասէ ցնա, «Զինչ հասկանաս դու, և զինչ գիտես դու որ «զայդ ասես... ո՛չ, ո՛չ, պարտ է նոցա անդ ի Փարիզ կալ, «և անդ յօգուտ ազգին մերոյ աշխատիլ։»

Ահա ճանաչումն մտաց և որոշումն կամաց նախատես և քաջափորձ առն... և ահա իրաւամբք աւաղեմք մեք զկորուստ նորին և զանգիւտ կորուստն։...

Ի բանից ասոի հանգուցեալ Ներսէս կաթուղիկոսին կարեն վերծանողք բազում ինչ իմաստասիրել։

Երանի՛ թէ և գրուածքն, նամականին, և ընթացք կենաց նորա ի տիպ արձանացուցեալ հրատարակէր յազգի մերում, յօրինակ Առաքելոցդ ասոց։...

Իբրեւ ընդունի Սրբազան Յակոբ Պատրիարգ Կոստանդնուպօլսոյ զերեսին վարդապետս Հայկազեան վարժարանին ի ծոց Հայաստանեայց տուրբ եկեղեցւոյ, ակսանին առաւելուլ սէր և յարգանք ազգայնոցս առ Ամբրոսիոս վարդապետ, հանդերձ առատաձեռն պարգեւօք, 20,000 ֆրանքօք, ըստ բանից բերանոյ նորին, ընդ որ միխիթարեալ և ուրախացեալ նորա՝ գրէ թուղթս առ Սարգիս վարդապետ, որք ունին օրինակ զայս.

«Յարգոյապատիւ և Ամենապրելի Հայր իմ

«Աւետիք ապաքինելոյ բազմարդիւն կենացդ բերկրեցայ «յո՛յժ յո՛յժ զսիրտ իմ կարօտալիր. տացին Քեզ Երկինք, «Հայր, շրջանս բազմահոլով ամաց, որպէս զի ոչ միայն «որդիք Քեր երկոքին անձնանուէր և երախտագէտք վայե- «լեսցուք ի Քեզ, այլ շնորհապարտ ազգս Հայոց Հաճրէն։ «Թէպէտ և խելամուտ լեալ ցարդ ամենայն յաջողու- «թեանց մերոց որ աստ և ուրախ լեալ է.ք, սակայն զայս «միայն նոր ծանուցանեմ ի հրճուանս քրոնալասուակ ան- «ձինդ, զի յերէկն ճաշեցի ի Հասգիւղ ի տան Կէլկէլեանց «ընդ Սրբազան Պատրիարգին. ճաշակից էին մեզ Գրիգորիոս

“ եպիսկոպոսն առաջնորդ Կարնոյ, յոլով վարդապետաց,
“ քահանայք և մեծատունք. բազում բանք եղեն գովեստից
“ զՁէնչ, խնդրեցին յինէն տեղեկութիւն, յանդիման արարի
“ նոցա զամենայն արդիւնս վաստակոց Ձերոց ի յիսուն ամաց
“ հետէ, զանձնման ազգասիրութիւն և զանընկճելի արիու-
“ թիւն սրտի Հօրդ, ընդ որ ամենեցուն զարմացեալ գովեցին
“ բարեբանեցին միաբերան և յապուշ հարան ընդ անօրինակ
“ ապաշնորհութիւն Հիւրմիւզեանց, և վկայեցին եթէ այնու
“ զանմահութիւն Ձեր հաստահիմն գործեաց նա։

“ Վերապատուեալ Հայր, ամենայն ուրեք բանք լինին
“ զՁէնչ և զբազմազիմի արդեանց Ձերոց. ամենեքին գովեն
“ զբուռատն զՁեզ, և ցանկանալով ցանկան տեսութեան
“ Ձերում. վերատին անուանեցին զՁեզ վերատեսուչ վարժա-
“ բանին, և այս հաստատեցի ազգային և Պատրիարքական
“ կնքօք. յառաջիկայ եօթնեկին գրեցից զայսմ ամենայնէ
“ մի ըստ միոջէ։

“ Սիրելոյ և Պատուական Հայրութեանդ

“ Պոլիս. 12 մայիս. 1856.

“ Անձնանուէր որդի

“ Հ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ԳԱԼՖԱՅԵԱՆ.”

“ Վերատուեալ Տէր իմ և վարդապետ.

“ Ցցանկալի և զուրախարար գիր սրբութեանդ, զշնորհ-
“ եալն ի 24 անցելոյն, ընկալայ յ7 սորին և փառս ետու
“ Տեառն յաղագս անթերի ապաքինութեան և քաջառողջ
“ կենդանութեան սիրելոյ Հօրդ։

“ Զպատասխանին յապաղեցի ցարդ կամեցեալ խրախա-
“ կանացն աւետեաք բերկրեցուցանել զսիրտ Ձեր ազգասէր։
“ արդ աւետի՛ս Ձեզ, Հայր Մեծայարգոյ, յաղթող գտաւ
“ արդարութիւն, ի գլուխ ելեալ աւարտեցաւ ամենայն, յա-
“ մօթ եղեն թշնամիք, և որոգայթք նոցա կարթակոտորք,

«Ի մեզ ակնկալութիւն կայ ազգն Հայոց, ի մէնջ ակնունի ընդունել զլուսաւորութիւն իւր. հապա, քաջալերեցարուք, Հայր իմ Պատուական, եհաս վախճան բազմամեայ վշտաց Ձերոց. կիսադարեան վաստակոցդ, արդ մեայ Ձեզ ընդունել զրբարիոն փառաց և զոսկեթեան ի շնորհապարտ և յերախտագէտ ազգէն։

«Թող խայտացեն զՀարրդ Հայրենեաց մատաղերամ որդիք Հայկայ, յիսուն և վեթասուն և ութի, տեսցէ թշնամին ամրչացեալ և կարծանեացի ի կոր։

«Յուշ Ձեզ, Սիրելեալ Հայր, զի ի բազմադիմի վիշտս իւր և ի տառապանս, վեշտասանամեայ վշտաց Ձերոց յիշատակ զանձն ոսկէր Գաբրիէլ վարդապետ և զօրացուցանէր։...

«Այսպէս մեծ է ահա առաքինեայ Հօրդ լինել որդի։...

«Մեծափառաք տենչմամբ ապառէ ազգն ընթեռնուլ զպատմութիւն Մուրատեան վարժարանին, զյօրինեալն առ ի ձէնջ. որք միանգամ տեսութեան Ձերում լեալ են արժանի, երանելիս զանձինս վարկանին և համարին յայլոց։

«Անպէս սիրելի և պատուական են ցանկալին Ձեր անուն և յիշատակ ի սիրտ և ի հոգի ազգայնոց։

«Ծնողք իմ և եղբարք երախտագէտ մտօք ոչ դադարին ի յիշելոյ զՀայրդ հատարակաց, և կարօտագին սիրով մատչին ընդ իս ի համբոյր աստուածարեալ Անջոյդ։

«Վերապատուեալ և Սիրելոյ Հօրդ

«Ի Պոլիս. 22 Յունիս. 1856

«Անձնանուէր որդի

«Հ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ԳԱԼՖԱՅԵԱՆ.»

Ահա ակնկալութիւն բարեաց զոր ունէր ազգն յերից վարդապետաց... այլ երանի՛ թէ մեայր նա ի նոյն ճանապարհն և ի միտս կամաց իւրոց հաստատուն... և ահա քաջալեր և միխիթար բանք Ամբրոսիոսի վարդապետի առ Սարգիս վարդա-

պետ. այլ երանի՛ թէ արդեամբք ցուցանէր նա զայն երբէք... թողումք յիշատակել ասա և զայլ արտաքուչ բանս նորա որ առ նա ապա։...

Ով անհաստատութեան մտաց և անզգայութեան սրտի որ ի մէջ ընկերաց։...

Զպատճառ փոփոխութեան վիճակի երից վարդապետաց թէպէտ և ծանուցաք մեք վերագոյն. թէպէտ և ծանուցեալ են նոքա զայն ի պատմութեան վերադարձի իւրեանց, հանդերձ պատասխանեաւ ընդ տարապարտ կարծիս պարտաւադիտաց ոմանց, որոց առիթ առեալ զայս բանս նոցա որ ի յայտարարութեան անցից Մուրատեան վարժարանին, թէ՝ «Ուղղափառ հայ վարդապետներ եմք, Հռովմայ Սուրբ «ընդհանրական և առաքելական եկեղեցւոյն վարդապետու- «թեան հետեւողք ի հաւատոյս, և նոյնպէս պիտի ըլլանք «մինչեւ ցմահ Աստուծոյ շնորհիւք։» հաւատափոխ կոչեցին և կոչեն զնոսա։...

Առ այս տարապարտ կարծիս պարտաւադիտաց զայս առնեմք և ի սմին պատասխանի, թէ՝ Մեք հետեւող եմք Սրբոց հարցն մերոց Գրիգորի Լուսաւորչին, որ սուրբ, ընդհանրական և առաքելական հաւատայր զեկեղեցին Հռովմայ, և որդւոց և թոռանց նորա, Արիստակէսի, Վրդանէսի, Մեծին Ներսէսի, Սահակայ և Մեսրոպայ, որք զեկեղեցիս Լուսաւորչացւոց և Յունաց նոյնպէս հաւատային. և Ներսէսի Շնորհալւոյ որ սոքրք և առաջին ամենայն Եպիսկոպոսապետաց զՊապն Հռովմայ ճանաչէր. և զՊատրիարքն Յունաց սուրբ և ընդհանրական Կաթուղիկէ եկեղեցւոյ կոչէր ի թղթի իւրում. և Ներսէսի Լամբրոնացւոյ, որ թէպէտ զեկեղեցիս Յունաց և Լատինացւոց սուրբ, ընդհանրական և առաքելական ճանաչէր, սակայն ընդ իշխանութեամբ Պատրիարքին Յունաց, և Պապին Հռովմայ ոչ էր, այլ ընդ իշխանութեամբ կաթուղիկոսին Հայոց էր նա։

Ահա սոցա եմք մեք աշակերտք և հետեւողք ի դաւանութիւն հաւատոյ, և ահա իբրեւ զՆերսէս Լամբրոնացին որ արհամարհէր զկարծիս յաշակերտաց, որք հաւատափոխ զնա

կոչէին, արհամարհեմք և մեք նոյնպէս զկարծիս պարտաւորիտաց, որք հաւատարիոմ և զմեզ կոչեն ։ . . .

Թողումք ասել զուղիղ և զանպատրուակ վարդապետութիւնէն Մխիթարեանց հին և առաքինի Հարց, որով հրահանգեալ կացաք և կամք մեք միշտ անփոփոխ ի նոյն հաւատս Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ. որպէս և տեսանի ի 13 էջ Ա. հատորոյ ։

Ասացուք զայսմանէ և այլսուր առանձին, հանդերձ հաւատեօք ։

ԳԼՈՒԽ Գ.

Անցգոյն երբ Ամբրոսեայ վարդապետի ի Պօլիս, և դարձ նորա ի Փարիզ հանդերձ քառասուն մանկարանքբ. — Անկարգութիւն աշակերտաց վարժարանին և վնասն որ ասնոյ. — Կարգաւորութիւն արծաթոյ ի ծախս վարժարանին և զլացուցեալն թոշակաց աշակերտաց նորին. — Լքուցեալ սրտի և փոփոխութիւն մտաց Գաբրիէլի վարդապետի. — Խնդիր նորա ի Ռուսաց տերութենէն, և հանդիպիլ այնմ. — Պատրաստութիւն մեկնելոյ նորա ի Փարիզէ, և քննութիւն ընդ այն.

Նպատակ երթալոյ Ամբրոսեայ վարդապետի ի Պօլիս երեք էնչ էին. առաջին՝ գտանել զխոստացեալ և զհանգանակեալ արծաթն որ ի Պօղոս Պէյէ Տատեան. երկրորդ՝ խնդրել պաշտպանութիւն յազգայնոց անտի ընդդէմ հալածչաց իւրեանց, և երրորդ՝ ածել թոշակաւոր մանկունս յաշակերտութիւն վարժարանին. տակայն պակասի նա յայս ամենայն, պատուասիրեալ նորա յոյժ յազգայնոցս անտի և մխիթարեալ ի նոցանէ առատաձեռն պարգեւաք անհոգ և անփոյթ լինի զպարտուց վարժարանին և զնեղութենէ վերատեսչի նորին. քանզի պարտք վարժարանին որք իբրեւ 46,000 ֆրանք լինին, 16,000 ֆրանք միայն ի ձեռս բերէ, իսկ զմնացեալն թողու

ի կամս նախագահի խնամակալաց ժողովոյն Խորասանեան Պետրոս Ազայի, որ խոստանայ առաքել զայն զկնի նորա, և որ պակասի ի խոստումն իւր յայն, այլովքն հանդերձ. և զի զընտրութենէ մանկանց, և զյապահովութենէ թոշակաց նոցին անվտանգ լինի... վասն այնորիկ անկարգութիւն աշակերտաց վարժարանին, կարօտութիւն արծաթոյ նորին... որպէս և զպաշտպանութենէ իւրեանց, որ յետ ամի մեր ինքնին լինի. ահա անօգուտ երթ նորին ի Պոլիս, չասեմք թէ վնասակար, որպէս և յարդեանց տեսանի։

Արդ իրրեւ ամիս չորս կացեալ Ամիրտեայ վարդապետի ի Պոլիս՝ դառնայ ի Փարիզ հանդերձ բառատուն մանկամբք յաշակերտութիւն վարժարանին, որք լինին ընդ ամենայն վաթսուն։ Թէպէտ և ուրախանայ ընդ այն Գաբրիէլ վարդապետ, այլ ոչ բնաւ Սարգիս վարդապետ, տեսանելով ի նոսին զքանի մի հասակաւոր անձինս, կասկածի նա ընդ պահպանութիւն բարեկարգութեան վարժարանին, և ընդ հաստատութիւն նորին։ Կասկած նորա այն զժբաղդութեամբ ոչ ընդունայն լինի. քանզի հասակաւոր պատանեակք, մանաւանդ Պոլսեցիք, որք առաւել զբօսանս սիրեն քան զուսումն, կամին անդադար առ և անդ շրջել առանց առաջնորդի, և իրրեւ արդելեալ լինին՝ սկսանին այնուհետեւ դանդաղ առ ծնողս իւրեանց գրել զկերակրոյ, զընակութենէ և զվարժապետաց, որպէս թէ չէին նոքա բաւական յուսացանել զինքեանս. վասն որոյ խնդրին հրաման եկանել անտի և յայլ դպրոց Դաղղիացւոց մտանել. և ծնողք նոցա առանց քննութեան զկամս որդւոց իւրեանց կատարեն։

Խմացեալ զայն ոմանց յազգայնոցս Պոլսոյ, որք ի ծածուկ հակառակ էին հաստատութեան վարժարանին, սկսանին այնուհետեւ յայտնապէս ցուցանել զհակառակութիւն իւրեանց ընդ այն. յորդորին նոքա զաղգականս և զբարեկամս իւրեանց հանել և նոցա անտի զորդիս իւրեանց և յայլ դպրոց դնել զնոսա. և ոչ այսչափ միայն, այլ և ոմանք ի ծնողաց մանկանց եկելոց ի վարժարանէն, զլանան հաստուցանել զմնացեալ թոշակս մանկանց իւրեանց. նոյնպէս զլանան և ոմանք

որք ընդդիս իւրեանց անդ թողուն, վասն որոյ և վարժարանն ի ներքոյ պարտուց անկանի, և պարտք նորին օր ըստ օրէ ծանրանան։

Տեսեալ զայն Գաբրիէլի վարդապետի Այվազեան՝ սկսանի լքանիլ և հատանել զյոյս իւր ի Պօլսեցի ազգայնոցս, և ի Ռուսաստանի ազգայինս դնել զայն, մանաւանդ իբրեւ գնայ ի Փարիզ եղբայր նորա Պարոն Յովհաննէս Այվազեան, և ասէպ ասէպ ասէ ցնա, թէ «Պարսպ մարդիկ են Պօլսեցիք, «ի զուր յուսաս ի նոսա, և ընդունայն աշխատիս վասն նոցա. «Եկ ի Թէոդոսիա և աշխատեաց վասն ազգայնոցս որք «ի Պէսարաբիայ, և լիցիս Առաջնորդ և Արքեպիսկոպոս «թէմի անդ անշուշտ։»

Զայս խրատս և հրաւէր գրութեամբ եւս առեալ էր նա սմա և բազում անգամ մինչդեռ սա ի Վենետիկ էր միաբան, Մխիթարեան, զոլով նորա անհնարին հակառակ Կաթոլիկութեան, ըստ օրինակի Ռուսաց տէրութեան, և իբրեւ հաւատարիմ հպատակ նորին։...

Եւ ի տարակուսել սորա ընդ այնպիսի ընդունելութիւն և ազատութիւն իւր որ ի Ռուսաց տէրութենէն՝ գրով խնդրէ զայն անտի ձեռամբ դեսպանի նորին որ ի Փարիզ։

Ընթերցեալ Դեսպանին զգիր խնդրոյ սորա՝ վատահ առնէ զսա հանդիպել խնդրոյն և առաւելագունի եւս, յորժամ հատուցանէ զդպրոցն այն ի Խրիմ. և առաքէ նա վաղվաղակի զգրով խնդիր սորա ի Փէտէրսբուրգ առ ոստիկան արտաքին գործոց. և նա ցուցանէ զայն Ոստիկանի ուսմանց։

Հաւանին նոքա և ուրախ լինին ընդ այն, զոլով այնր կամք տէրութեան իւրեանց, խոփանումն Հայկազեան վարժարանին ի Փարիզ, որպէս զի մի՛ մանկունք Հայոց որ ի Տաճկաստան գնացեալ անդ դասատիրակեցին ըստ սկզբանց Գաղղիացւոց և հաղորդեսցեն զայն ազգայնոց իւրեանց որ ի Ռուսաստան. և որպէս զի ի Խրիմ երթիցեն և ըստ սկզբանց Ռուսաց դասատիրակեցին, վասն այսորիկ փութան Ոստիկանք տալ զհաւանութիւն իւրեանց խնդրոյ սորին, զոր ծանուցանէ սմա Դեսպան հանդերձ ուրախակցութեան բանիւք։

Իբրեւ հանդիպի Գաբրիէլ վարդապետ խնդրոյ իւրոյ ի Ռուսաց Տէրութենէն որոշէ այնուհետեւ թաղուել իսպառ զՀայկազեան վարժարանն և գնալ ի Թէոդոսիա հաստատել անդ նոր իմն վարժարան, և զայս որոշումն իւր ծանուցանէ ամենեցուն։

Ամենայնայն զայս ծնողաց աշակերտաց Հայկազեան վարժարանին՝ առաւել եւս կորուսանեն զվարկ իւրեանց զվարժարանէն, և պատճառ իմն առեալ զայն ոմանց՝ հանեն զորդիս իւրեանց ի վարժարանէ անտի, և գնեն զնոսա ի դպրոցս Գաղղիացւոց. և ոմանք զլանան հատուցանել զաստիկան թաշակ որդւոց իւրեանց, և այնպէս առաւել եւս ծանրանան պարտիք վարժարանին, և տառապի տեսուչ նորին։

Տեսեալ զայն Սարգսի վարդապետի, զվնասակար հետեւանսն սեմբ որ ի ծանուցմանէ անտի, զդուշացուցանէ զԳաբրիէլ վարդապետ չհրատարակել զայն ի ժամուն, այլ թէ զնայր ի Թէոդոսիա ի տեսանել զմայր իւր որ փափաքէր այնմ, զոր և ամենայն յառաջ ծանուցեալ էր այլոց. սակայն ի զուր. կարծէք իմն թէ հարկաւորեալ էր նա հրատարակել զայն, իբրեւ զլրումն պայմանաց որ ընդ տէրութեան Ռուսաց, դադարեցուցանել զՀայկազեան վարժարանն և ի տեղի նորին հաստատել ի Թէոդոսիա զուսումնարան մի։

Եւ իբրեւ պատրաստի Գաբրիէլ վարդապետ եղանել ի ճանապարհ ընդ եղբօր իւրոյ գնալ ի Թէոդոսիա, խնդրէ ինքեանէ Սարգիս վարդապետ զի յանցանել նորա ընդ Պօլիս հոգայցէ զպարտուց վարժարանին։ Խոստանայ նա առնել զայն, և առաւել ինչ, պահանջել վարձս աշխատութեան նորա, և Ամիրտուեայ վարդապետի։ Ասէ ցնա Սարգիս վարդապետ թէ ինքն վարձս աշխատութեան իւրոյ ոչ պահանջէ յաղագէն, այլ զպարտս վարժարանին, զմնացեալ թաշակս աշակերտաց նորին։

Թէպէտ և առ միամտութեան և անհոգութեան իւրոյ պահէ նա, Գաբրիէլ վարդապետ զամս երիս զհնգեսին որդիս Յակոբայ Պըյդլեանի Մոլտաւիացւոյ ի Հայկազեան վարժարանի փոխ առեալ արծաթով բան իւրոյ Պըյդլեանի, թէ անհնա-

բին ծանր է վաշխ արծաթոյ յերկրի իւրում՝, վասն որոյ խնդրէ իսմանել զի 6 առ հարիւր վաշխիւ արծաթ առեալ ի Փարիզ հոգայցէ զծախս վարժարանի որդւոց իւրոց, մինչեւ եկեալ իւր ի Փարիզ, հատուցցէ զայն. կատարէ Գարրիէլ վարդապետ զխնդիր նորա։

Թէպէտ և գնայ Պլայդլեան ի Փարիզ, այլ ոչ հատուցանէ զպարտս իւր, խնդրելով այլ եւս ժամանակ, մինչեւ հնարիմաց խորամանգութեամբ և միջնորդութեամբ ուրուք ի Պոլիս ի ձեռս բերէ զիր թոյլտուութեան ի նախագահէն ժողովոյ, ի խորհրդեան Պետրոս Աղայէն, թողլոյ զայն պարտս նորա ի վերայ խնամակալաց ժողովոյն, որում խոստացեալ էր նա հատուցանել ապա. և այնպէս առանց ինչ հատուցանելոյ հանէ զորդիս իւր ի Հայկազեան վարժարանէն, զերկուսն ի նոցանէ ընդ իւր տանի ի Մարսելիայ, և զերկուսն դնէ ի դպրոցս Գաղղիացւոց, մատուցանելով զծախս նոցին կանխիկ. իսկ զերրորդն ի նոցանէ, զկրտսեր որդին իւր, թողու ի Հայկազեան վարժարանի, խոստանալով հատուցանել ըզծախս նորա 1,000 ֆրանք ի տարւոջն. թէպէտ և զայն եւս ոչ հատուցանէ ապա, պատճառելով զանկարողութիւն իւր։ . . .

Ահա արդիւնք միամտութեան և անհոգութեան Գարրիէլ վարդապետի Այվազեան։ . . .

Ի հարցանել ցնա եղբօր նորա, Պարոն Յովհաննու Այվազեան՝ թէ ունէ՞ր նա պարտիք ինչ վասն Հայկազեան վարժարանին, զի հատուցեալ իւր զայն՝ ազատ կացուցցէ զնա անտի իսպառ։ Ասէ ցնա Գարրիէլ վարդապետ թէ չունի ինքն բնաւ պարտիք ինչ ընդ այն ի կողմանէ իւրմէ։

Թէպէտ և առ անզգուշութեան իւրոյ գողացեալ էր ոմն ի սպասաւորաց վարժարանին ի գզրոցէ նորին 3,000 ֆրանք, մասն առ մասն, թէպէտ և ստամբակ պատանւոյ միոյ վարեցելոյ ի Ռաֆայէլեան վարժարանէն, որում տայ նա բնակութիւն ի Հայկազեան վարժարանի, գողանայ ի գզրոցէ նորա 2,000 ֆրանք միանգամայն, զորս Մարգիս վարդապետ բազում նեղութեամբ հայթայթեալ էր ատի և անտի հանդերձ վաշխիւք ի կարեւոր ծախս վարժարանին. թէպէտ զաւելորդ

ծախսն զոր արարեալ էր նա ըստ ցանկութեան իւրում ի շինուածս վարժարանին. թո՛ղ զ1,000 ֆրանքս զոր ծախեալ էր նա վասն ինքնագիւտ հայկական տառից, և զայս ի սեպհական արծաթոյ Սարգսի վարդապետի, որպէս և զծախս տպագրութեան վարուց Քրիստոսի, 12,000 ֆրանք. և զծախս տըպագրութեան անցից Մ. վարժարանին 3,000 ֆրանք, և թո՛ղ զ10,000 ֆրանքս, զոր խնդրեալ ընկալեալ էր Սարգիս վարդապետ ի Պարոն Եդուարդ Ռաֆայէլէ իբրեւ դրամագլուխ վասն տպագրութեան Մատեաց աղաւնւոյ, հանդերձ խոստմամբ յիշատակելոյ անդ միշտ զանուն Բարերարին. յորմէ 8,000 ֆրանք յառաջնում ամի ծախէ նա ի տպագրութիւն նորին, և 2,000 ֆրանք հազիւ ի ձեռս բերէ ի վաճառէ անտի, հաւատալով նորա զայն անհաւատարիմ առն միոյ որ ի Պոլիս, և զանալով յիշատակել անդ եւս զանուն Բարերարին։ Սակայն յայս ամենայն պարտուց ճանաչմանէ և ի խոստման կատարմանէ ազատ և զերծ կարծէ նա զինքն բոլորովին. և զ1,000 ֆրանքս զոր ընկալեալ էր նա ուստեք իբրեւ վարձ մասնաւոր աշխատութեան իւրոյ, և զոր ծախեալ էր ի պէտս վարժարանին, առնու, հանդերձ շահիւք և կարեւոր մատենիւք և մեկնի ի Հայկազեան վարժարանէն, թողլով զամենայն ծանրութիւն նորին ի վերայ Սարգսի վարդապետի։

Եւ ահա արդիւնք գործոց Գաբրիէլի վարդապետի որ զամս երկու ի Հայկազեան վարժարանի։ . . .

ԳԼՈՒԽ Դ.

Թողութիւն Սարգսի և Գարբիէլի վարդապետաց ելից վիճակաւն, և քլնոշրհեն ելից այլն. — Թուղթք Գնարալիի Գաղղիացոց ի Պոլիս առ Գնարալ Տաճկաց ի Փարիզ, վասն բանի խնդրոյ ազգային վարժարանի ի Փարիզ և Տեսչի և ուսուցչի հորին.

Գրէ Գարբիէլ վարդապետն ի Տաճարաքարէ թուղթս կարեկցութեան առ ընկերս իւր ի Փարիզ, որոց առնէ պատասխանի Սարգիս վարդապետն որք ունին օրինակ զայս.

„ Յարգոյապատիւ Հայր և սիրելեալ Եղբայր.

„ Զյաջող ճանապարհորդութիւն և զողջամբ ժամանել Քեր
„ ի Մոնիք ծանեայ ի ցանկալի թղթոցդ ուստիոց մեզ անտի
„ հետ զհետէ։ Շնորհ յոյժ ունիմ պահապան Սէրդ բարձրե-
„ լոյն և աղաչեմ զնա զի յաջողեսցէ և պահեսցէ զՔեզ միշտ
„ ի նոյն, հանդերձ Սիրելիօք։

„ Ծանեայ և զհանգամանս որոյ Քերոյ, հայեցեալ ի հան-
„ գամանս մեր առաս, և լինդ այս եւս դարձեալ աղաչեմ
„ զԱստուած զի միխիթարեսցէ զՔեզ և զմեզ առհասարակ,
„ յաջողութեամբ գործոցդ որ ի փառս անուան իւրում և
„ յօգուտ ազգիս։

„ Այո՝ սիրելեալդ իմ Եղբայր, այսու միայն յուսով միխ-
„ թարիմք մեք առաս, զրկեալքս ի տեսութենէ ձերմէ, և մաս-
„ նաւորաբար ես ինքս հայեցեալ ի հասակս։...

„ Ա՜հ, ծանիցէ՞ արդեօք ազգս զզոհն զոր արարաք և զոր
„ առնեմք միշտ... և օգտիցի՞ անտի... այսչափ ինչ շատ

„ Լցի ասել ի ժամուս, զի առաւելն ոչ ի միթիթարութիւն
„ ցաւագին սրտի ձերոյ գիտեմ։

„ Ողջ լինել մաղթեմ

„ Սիրելիդդ

„ Ի Փարիզ. 19 մայիս. 1857.

„ Սրտակցորդ եղբայր
„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՒՈՒՐԵԱՆ.“

Գրէ դարձեալ Սարգիս վարդապետ Թուղթ առ Գարրիէլ վարդապետ ի Պոլիս, յորում ծանուցանէ զցաւալից հանգամանս իւրեանց, և զանպատեհ դնացս խնամակալի վարժարանին, և խնդրէ հոգալ զպարտուց նորին, և որ ունի օրինակ դայր.

„ Յարգոյապատիւ Հայր և Սիրելի Եղբայր.

„ Յուսամ զի խնամոք Տեառն ողջ և անվնաս ժամանեալ
„ իցէք ցարդ ի մայրաքաղաքդ և ընկալեալ յաղգայնոցս այդր,
„ թէ ոչ յամենեցունց, զոնէ յոմանց, ի ճշմարիտ ազգասի-
„ րաց զարժանի ընդունելութիւն, ի միխիթարութիւն վատա-
„ կոցդ և ի քաջալերութիւն առաւելութեան նոցին։

„ Այո՝ սիրելի եղբայր, այսու միայն յուսով միխիթարիմք
„ զրկեալքս ի քաղցր ընկերութենէդ, և վհատեալքս յան-
„ հատատութենէ մոաց ոմանց այսր, և մանաւանդ ի կար-
„ ծեցեալ խնամակալէ վարժարանիս, ի Պարոն Ն. Մ. զորի-
„ նակ թղթոյ նորա առ մեզ առաքեմ Ձեզ ի գիտութիւն և
„ նմա ի յանդիմանութիւն, որպէս զի ըստ այնմ խօսեսջիք
„ ընդ որոց պարտ է խօսել և առնել զարժան այդր և այլուր,
„ հայեցեալ ի հանգամանս մեր և ի վախճան իրացն։

„ Տեսեալ իմ զոկարութիւն մարմնոյ Հ. Ամբրոսեայ որ
„ ի ծանրութենէ աշխատութեան և ի տրտմութենէ բաժան-

“ մեն ի Զէնջ, սոխպեցի գնա գնալ ի Վէրսայլ հանդչել անդ
“ աւուրս ինչ ի կազդուրու�մարմնոյ. դարձ արար նա ան-
“ տի այսօր չափաւորապէս կազդուրեալ. շատ է թէ չյաւել-
“ ցին նորոյդ առիթք. ծանուցէ նա ձեզ և զայլ կարեւոր
“ գիտելիս և զհանդամանս վարժարանիս. ապա չմնայ ինձ
“ այլ ինչ բաց ի սիրոյ ողջունէ զամ. սիրելի հարազատդ Պա-
“ ռն Յովհաննէս, և յաղաչանաց, համբերել նորա այդր
“ աւուրս ինչ աւելի մինչեւ հոգաջիք զկարեւոր հոգս մեր
“ գիարդ և իցէ եղանակաւ։

“ Ողջ լինել մաղթեմ

“ Սիրեցեալդ

“ Ի Փարիզ. 30 մայիսի 1856.

“ Արտակցորդ եղբայր

“ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՒՈՐԵԱՆ. ”

Գրէ դարձեալ Սարգիս վարդապետ Թուղթ առ Գաբրիէլ վարդապետ ի Պոլիս, յորում ծանուցանէ զհոգս և զցաւս որք ի ծնողաց աշակերտաց վարժարանին, և յիշատակէ զքաջ-բան բարեկամի մերոյ, հանգերձ գրութեամբ, օրինակ զոյս.

“ Յարգոյապատիւ Հայր և Սիրեցեալ Եղբայր.

“ Զցանկալի լուր ժամանելոյ Ձեր ի Պոլիս և զարժանաւոր
“ ընդունելութիւնդ յաղգայնոցս այսր լուեալ՝ զոհացաք
“ յոյժ զՏեառնէ և վիճարեցաք ոչ սակաւ ընդ տարապարտ
“ հոգս, որ ի կարծեցեալ ազգասիրաց ոմանց այդր։...

“ Աւելորդ համարիմ ծանուցանել Ձեզ զհանդամանս մեր
“ առ, գիտելով ձեր զայն արդէն, և իմանալով ապա ի թղ-
“ թոց Հ. Ամբրոսիոսի մերոյ հետ զհետէ։ Այլ յիշատակեմ
“ ձեզ միայն զկարեւոր խրատն Սոնիսան Պէյի զոր նա մեզ
“ և պատուիրեաց գրել ձեզ անյապաղ, ի զգուշութիւն ար-
“ դեաք. այս է,

„ Զխարիլ ձեր բնաւ ի քաղաքավար բանից սրանցդ այդո-
„ ցիկ, և ի մեծամեծ խոտոմանց դոցա, զի հակառակ են,
„ ասաց, բանք բերանոյ և խորհուրդ սրտի նոցա ընդ մի-
„ մեանս ի նմին իսկ ժամու յորում խօսին և խոտանան
„ նոքա։ . . .

„ Ահա զայս և առաւել քան զսոյն բանս խրատու խօսե-
„ ցաւ նա և քաջալերեաց զմեզ, շլքանիլ երբէք ընդ ա-
„ պաշնորհ գնացս ոմանց որք ի տգիտութենէ յառաջ գան,
„ ասաց։

„ Թէպէտ և զայս եւս աւելորդ էր արդեաք յիշատակել
„ ձեզ, ճանաչելով ձեր քաջ և փորձ իսկ գոլով բնաւո-
„ րութեան դոցա, այլ ի հաստատութիւն ճանաչման ձերոյ
„ և յապահութիւն վիճակի մերոյ ասա յիշատակեցի զասա-
„ ցեալն նորա։ . . .

„ Ողջունեալ զհարազատդ Պ. Յովհաննէս՝

„ Մնամ միշտ

„ Սիրելութեանդ

„ Ի Պօլիս. 13 Յունիս. 1857.

„ Հոգեկցորդ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՂՈՐԵԱՆ. "

Գնացեալ Գաբրիէլ վարդապետի ի Պոլիս և դաւուրս 10 անդ կացեալ և զատուսաիրեալ յապգայնոցս անտի, հանդերձ յիշելեօք և զարդեւօք, փութայ մեկնիլ անտի գնալ ի Թէոդոսիա առ ընտանիս իւր, ոչ ինչ բնաւ հոգայ զպարտուց վարժարանին. Թէպէտ և խնամակալք նորին ազաչեն զնա կալ անդ աւուրս քանի մի եւս առ ի խօսել ընդ նմա և ի հոգալ զայնմանէ, սակայն ոչ լսէ նոցա, և իբրեւ շատ թախանձեն զնա՝ խոստանայ նոցա վերստին դառնալ անդ, յետ սակաւ ժամանակի. Թէպէտ և զիտասումն իւր զայն ոչ կատարէ ապա. Թէպէտ և Սարգիս վարդապետ թէ բանիւք և թէ

գրովք խնդրէ ի նմանէ հոգ տանել այնմ, այլ նա անտես արարեալ զայն ամենայն՝ փութոյ ժամ մի յառաջ ի Թէոդոսիա անցանել, և անտի առնէ պատասխանի տեսոյ բանիւք իրաւացի բանից Սարգսի վարդապետի օրինակ գայս.

„ Գերապատիւ Հայր սիրելեալ

„ Ժամանեալ ուր ուրեմն ի դէմ եղեալ տեղի փութամ ի պա-
„ տասխանի գրելոցդ յ30 մայիսի ցաւագին սրտիւ և իրաւացի
„ բանիւք։ Ի գրելոցս ցայս վայր առ սիրելի Հ. Ամբրոսիոս,
„ խնացայք անշուշտ զանազ, զակնկալութիւն և զխոստմունս
„ Ազգին վասն իրաց վարժարանիդ. ինձ այսպէս թուի, թէ
„ ոչ ունիմք իրաւունս կասկածելոյ զանկեղծութենէ նորին,
„ մանաւանդ թէ պարտիմք մեծաւ յուսով և քաջութեամբ
„ վաստակիլ յոր ինչ ձեռնհաս իցեմք։

„ Զարծաթոյն իրս հոգացեն նոքա յառաջ քան զամենայն
„ ինչ, ընդ այս չիք երկբայութիւն. թերեւս և յղեալ իսկ են
„ ցարդ, որպէս խոստացաւն Պետրոս Ազայ Խորասանճեան։

„ Իսկ զելից ոմանց ի մանկուոյն ի վարժարանէդ մի՛ ինչ
„ փոյթ լիցի ձեզ ամենեւին ազաչեմ. քանզի ազգային ժողովն
„ հաստատութեամբ եղեալ է ի մտի թէ առ անքոյթ պահ-
„ պանութիւն և ի զարգացումն վարժարանիդ հարկ է առ-
„ նուլ աշակերտս յաղքատաց Ազգիս, որպէս զի մի՛ ի հաճոյից
„ և յախորժակէ մեծատանցն լիցի մեզ ակնուանել զյաջողու-
„ թիւն կամ զձախողութիւն իրաց ազգայնոյ վարժարանին։

„ Բարւոք կոչէք զՆիկ. Միսաքեան կարծեցեալ խնամակալ,
„ զի ակամայ առեալ էր նորա զանուն խնամակալի, և յերիս
„ ժողովն որ գումարեցան առաջի իմ, նա ոչ գտաւ։ Բայց
„ վկայեաց և ինքն թէ անդէպ և անվայել բանիւք գրեալ էր
„ թուղթն իւր, ընդ որ և ցաւէր յոյժ յոյժ, և յինէն խնդրեաց
„ երկիցս և երիցս գրել և ծանուցանել ձեզ թէ ինքն ոչ երբէք
„ հոգացեալ է ի փութոյ յառաջադիմութեան վարժարանիդ,
„ և զոր ինչ կարողն իցէ արասցէ ինչպատա և ի զարգացումն
„ նորին, և միայն առ կարօտոյ որդւոցն և ի տախտմանէ մօր

„ նոցա բանադատեալ է հանել զնոսին այսր և այլն։ Իսկ
„ այլք առհասարակ պատարակեցին զգնացս նորա, որպէս
„ և զՆուբեան Կարապետ աղայի։ Զօրս Պէյ Տատեան Հաս-
„ տատութեամբ եդեալ է ի մոր կոչել յԱյտեփանոս զԳեր-
„ Հայրութիւնդ յառաջ քան զհասանել ձմերայնոյն։...

„ Աղջ լինել ընձանամ

„ Գեր. Հայրութեանդ

„ Ի Բէֆէ. 28 յունիսի 1857.

„ Հոգեկցորդ աղօթարար

„ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՃՎԱՁՈՎՍԿԻ.“

Մ՞ի ապաքէն մեռոյ բանք են այսոքիկ, և հակառակութիւն խորհրդոյ և գործոյ գրողի սորին. և ո՞չ ապաքէն արդասիք են այսոքիկ անձնասիրութեան և փառասիրութեան։...

Յառաջ քան զընդունելութիւն վերոյիշեալ թղթոյ Գաբրիէլի վարդապետի առնէ պատասխանի Սարգիս վարդապետ այլ թղթոց նորին առելոց ի Պօլսոյ, օրինակ զայս.

„ Յարգոյապատիւ Հայր և Սիրելեալ Եղբայր.

„ Յանկարծի նամականին Ձեր առեալ մեզ առ ի Պօլսոյ
„ մխիթարեցին և ուրախացուցին զմեզ շատ, նախ ընդ լուր
„ պատուական առողջութեան Սիրելւոյդ, և ապա արժա-
„ նաւոր ընդունելութեանդ յաղդայնոցս անոր. գոհութիւն
„ և շնորհ յոյժ յոյժ Աստուծոյ։

„ Յուսամ զի ժամանեալ իցէք ցարդ յերկրորդ հայրենիդ,
„ և գտեալ զհանօրէն Սիրելիսդ ի քաջողջութեան և ի խնդու-
„ թեան, որոց խնդակից եմ և ես հանդերձ ողջունիւ սիրոյ և
„ յարգութեան։

„ Յուսամ նաև զի ընկալեալ իցէք այդր զնախընթաց թուղթն
„ իմ, զգրեալն ի 13 ամսոյս, և զյղեալն ի Պոլիս, յորում
„ էր կարեւոր ազդարարութիւն որ ի Սահիսան Պէյէ, և որում

“ թէպէտ չկայր ձեզ կարօտութիւն, ճանաչելով և փորձ զո-
“ յով բնաւորութեան ազգայնոց անտի, սակայն ծանուցի
“ ձեզ զայն ի խնդրոյ և ի սոխպելոյ Պէյին. յիշեցուցանեմ
“ ձեզ արդ վերստին, սոխպեալ ի հանդամանաց մերոց սատ,
“ վրիպեալ սահմ ցարդ ոչ միայն յայնչափ խոստմանց նոցա,
“ այլ և յանհրաժեշտ պարտուցն ի հատուցանելի թոշա-
“ կացն։

“ Թէպէտ և ի խնդրոյ նոցա և ի հաւանութենէ հարազա-
“ տիդ յանձն առեալ էք դուք յետ երկուց ամաց վերստին
“ գնալ ի Պօլիս առ ի կարգի գնել զիրս վարժարանիս, սա-
“ կայն թշուառ հանգամանք մեր սատ սոխպեն զմեզ ազատել
“ զհարազատդ յառաջ քան զպայմանեալ ժամանակն գնալ
“ ձեր ի Պօլիս և ազատել զմեզ ի հոգոյ և ի նեղութեանց սա-
“ տի, զորոց տեղեկանայք մանր ի թղթոց խեղճ Հ. Ամբրոսիոսի
“ հանդերձ կարեւոր լրով վարժարանիս։

“ Վերստին և կրկին ազաչեմ զհարազատդ թողուլ զձեզ
“ նախ գնալ անդ ի հոգալ զհոգս մեր, և ապա դառնալ
“ այդր ի հաճել և ի լնուլ զցանկութիւն սիրելեացդ, որոց ա-
“ մենեցուն ողջոյն սիրոյ և օրհնութեան մատուցեալ՝

“ Մնամ

“ Յարգոյապատիւ Հայրութեանդ

“ Ի Փարիզ. 26 յունիս 1857.

“ Հոգեկցորդ եղբայր

“ ՍԱՄՊԻՍ Վ. ԹԷՄՐԻՈՐԵԱՆ.”

Առնէ պատասխանի Գարրիէլ վարդապետ վերոյիշեալ թղ-
թոյ Սարգսի վարդապետի օրինակ զայս.

“ Վերապատիւ և բազմարդիւն Տէր իմ և Հ. սիրելեալ.

“ Առ սիրալիր ապրդ պատուական որ ի 26 անցելոյն ըս-
“ տիպիմ՝ համառօտիւ առնել պատասխանի, զի անդադար է,
“ ժամ փոն թղթատարին։

„ Իրաւացի են բանք Գեր. Տեառնդ զբնաւորութենէ Պոլ-
„ սեցեացն . . . բայց զոր ինչ գրեալ ասէք թելադրութեամբ
„ Սուրբեան Պէյի ընդ Պոլիս՝ ոչ եւս ընկալայ , այլ յաւուրս
„ յայսոսիկ առեալ անշուշտ և զայն ։

„ Երթն իմ ի Պոլիս յուսամ թէ գիւրին յոյժ եղիցի , բայց
„ ոչ յառաջքան զ15 օգոստոսի . անշուշտ և Պոլսեցիք գրեա-
„ ցեն զայնմանէ առ իս և առ եղբայրն իմ , որպէս և խոս-
„ տացանն , եթէ արժան իցէ խոստմանց նոցա հաւատալ ,
„ զէթ յայսպիսի խնդիրս ծանուցս ։

„ Յաւէ էինձ յոյժ ընդ տարգնապս սիրելւոյ Հ. Ամբրոսիոսի
„ մերոյ . անելիքայ եմ թէ ձեզք միսիթարի նա և քաջալերի
„ ոչ սակաւ . բայց և ըղձամ իսրտէ զի ժամ մի յառաջ թե-
„ թեւացի ի հոգոցն ծանրութենէ , առատութեամբ արծա-
„ թոյ և հատատութեամբ իրաց վարժարանիդ ։

„ Ողջունիս ընտանեաց մերոց առ Գեր. Հայրդ

„ Ողջ լինել մաղթեմ

„ Փէֆէ . 18 Յուլիս 1857 .

„ Ձերդ հոգեկցորդ

„ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶՈՎՍԿԻ . „

Ահա արդիւնք այնչափ աղաչանաց Սարգսի վարդապետի պայմանաւոր խոստումն միայն Գաբրիէլ վարդապետի ազատելոյ զնա և զընկեր նորա ի հոգոց և ի նեղութենէ անտի վարժարանին, այս է , եթէ Պոլսեցիք գրեսցեն զայնմանէ առ նա և առ եղբայր նորա , որպէս խոստացանն , ընդ որ եւս տարակուսի պսելով , եթէ արժան իցէ խոստմանց նոցա հաւատալ ։

Յայսմ ժամանակի հատանեն կրկին հրովարտակք Մասիսկանէն արտաքին իրաց Օսմանեան տէրութեան առ Գեորգեան Նորին ի Փարիզ , ծանուցանելով նմա զինդիր ազգին Հայոց

որ ի Պոլիս, ունել դպրոց մի ի Փարիզ. Վերառնուչ Նորին Սարգիս վարդապետ և ուսուցիչ և դասախօսակ Գաբրիէլ և Ամբրոսիոս վարդապետք։

Պատճէնք հրովարտակաց յԶէյց յԱտիկանէն արտաքին իրաց Օսմանեան տէրութեան ի Պոլիս առ. Գեորգեան Նորին ի Փարիզ, որք ունին օրինակ զայս.

„ Պատրիարքք Հայոց և ժողովք ազգային առաքին առ մեզ
„ գիր մի, որով խնդրեն հրաման ունել ի Փարիզ դպրոց մի
„ կարգեալ ի կրթութիւն հայ աշակերտաց Օսմանեան հպա-
„ տակաց բնակելոց ի քաղաքի յայն։
„ Պատրիարքն և ժողովք ազգային յանձն առնուն զկա-
„ բեւոր ծախսն որք ի պահպանութիւն դպրոցին այնորիկ։
„ Գիր խնդրոյն էր հանդերձ գրով խորհրդարանի հասա-
„ բակաց կրթութեան որ ի Պոլիս. գիրն այն մատուցաւ
„ առաջի Վեհափառ Արքային։
„ Հրամանն այն տուաւ հանդերձ գրով որ ինչ պարտի ու-
„ սանիլ ի դպրոցն յայն, և դրեանց որք ընթերցանին անդ.
„ հրաւիրեալ է.ք դուք օգնական և պաշտպան լինել աշակեր-
„ տաց և անձանց որք ունիցին վերաբերութիւն ընդ նոսին,
„ ըստ պատուիրանի կայսերական հրամանին որ ի 1273 ծա-
„ նօթութեան. 1857.

„ ՁԷՑՄԱՑԻԼ ՊԷՑ.

„ Պատրիարքն Հայոց և ժողովք ազգային առաքին առ
„ մեզ գիր մի, որով ցանկան զի կայսերական Օսմանեան
„ Գեսպան ի Փարիզ հաճեսցի ունել զկարեւոր ընթացս ծա-
„ նուցանելոց Գաղղիացւոց պետութեան զանուանելն Հայոց
„ դպրոցին (որոյ բացումն լինի հրամանաւ կայսեր) ի Վ. Վ.
„ Հարց Սարգէ, Գաբրիէլէ, և յԱմբրոսիոսէ, յանձնեալք
„ ի Պատրիարքէն Հայոց ուսուցանել զլեզուն և զկրօն ազ-
„ գային։

„ Պատրիարքն Հայոց և ժողովն ազգային ցանկան եւս զի
„ կայսերական Դեսպան մնասուցէ օգնութիւն և պաշտպա-
„ նութիւն Տեարցս այսոցիկ. վասն այսորիկ հրաւիրեմ զձեզ
„ առնել զպարտս ու պատշաճն։

„ 1273-1857.

„ ՃԷՅՄԱՅԻԼ ՊԷՅ.”

Պատճէն վճռոյ Ռասիկանի ուսմանց, և պաշտամանց Գաղղիացւոյ պետութեան,

Վճռէ,

„ Հայր Սարգիս Թէոդորեան հայ, ունի իշխանութիւն վա-
„ րելոյ ի Գաղղիա ազատ դպրոց մի երկրորդական ուսման,
„ ահմանեալ մանաւորապէս Հայոց հպատակելոց Բարձրա-
„ գոյն Դրանն։

„ Հարք Գաբրիէլ Այվազեան և Ամբրոսիոս Գալֆայեան
„ ունին հրաման վարելոյ ի Գաղղիա զպաշտօնս ուսման և
„ վերակացութեան։

„ Արարեալ ի Փարիզ. 18 Յուլիսի 1857.

„ ՌՈՒԼԱՆ.”

Պատճէն թղթոյ Մէհմէտ Ճէմայիլ Պէյի Դեսպանի Բարձրագոյն Դրան առ Վ. Հ. Սարգիս։

„ Վերապատուշ Տէր.

„ Ընկալայ ես ի փեսմոփայլ Կոմս Վալէվսքիայ յՌասիկանէն
„ արտաքին իրաց թուղթ մի որով հաղորդէ ինձ զհաստա-
„ տութիւն իշխանութեան որ տուաւ ձեզ ունել դպրոց մի
„ ազատ երկրորդական ուսման, ըստ վճռոյ Ռասիկանի հա-
„ տարակաց ուսման։

“ Գերապատիւ Հ. Սարգիս, ի տեսրինել զանձն քան օրինի
“ յամենայնի պարտիք առաքել Ձեմարանի Փարիզու զյայ-
“ տարարութիւնն պատուիրեալ ի 27 և ի 60 երրորդ յօղ-
“ ուածոց օրինաց, ի 15 Մարտի 1850։

“ Հրաւիրելով զձեզ Վերատեսուչ Տէր հանձայնել զձեզ
“ վճռոյ Վանականալ Ռուբանի Ռոտիկանի հասարակաց ուս-
“ մանն, ապաշեմ զձեզ ընդունել զհաւատս մեծի վարկման
“ իմոյ։

“ Ի Գնդանատուն Տաճկաց

“ Ի Փարիզ. 31 հոկտ. 1857։

ՄԷՀՄԷՏ ՁԷՄԱՑԻ, ՊԷՅ. ”

Պատասխանի Գարրիէլ վարդապետի տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի, յորում խոստովանի նա զճշմարտութիւն կարծեաց Սուլթան Պէյի, այլ անազան և անօգուտ. ապա խոհեմութեան և երկայնմտութեան թագու գյանդութիւն իբաց վարժարանին, և որ ունի օրինակ զայս.

“ Գերապատիւ Հայր իմ Սիրելեալ.

“ Երկու աւուրքք յառաջ ընկալայ զգրեալն առ ի Զէնջ
“ յ13 անցելոյն ընդ Պօլիս. և ընթերցայ ախորժանօք զիսոր-
“ հուրդ և զիմաստուն բանս Սուլթան Պէյի, զորոց յիշատա-
“ կեալ էր Ձեր ի վերջնում թղթիդ։ Արդարեւ ի մեծոյ իսկ
“ տեսի զճշմարտութիւն բանից նորա, այլ զի՞ գործեցուք,
“ հարկ է խելօք գնալ ընդ այնպիսս, երկայնմտութեամբ
“ շահել զսիրտ նոցա մինչեւ բազմացի թիւ գիտոց և բա-
“ րեկիրթ արանց որք սակաւաթիւք են տակաւին ի Պօլիս։

“ Ցնծութեամբ սրտի ընթերցայ զաւետաւոր բանս Հօր
“ Ամբրոսիոսի զմօտալուտ հրամարտակէ Կայսերն վասն Վե-
“ րատեսութեան Բազմարդիւն Հօրդ ի Հայկազեան վարժա-
“ բանիդ ի պարծանս մեզ և ազգիս, և յամենի և ի քարինկէց
“ յերեսս բանասիրաց։ . . .

„ Իմ կենցաղավարութիւն առ ժամս Հանգստեամբ է տա-
„ տանար, թէպէտ և անպարապ եմ ի գրաւոր աշխատու-
„ թեանց։ Մայրն իմ քաջառողջ է և զգաստ ամենեւին և
„ ուրախ։ Քոյրն իմ և քեռորդեակք խնամեն զիս արտի
„ մօք։...

„ Փոխադարձ ողջունիս մեծարանաց մերոց առ Հասարակ
„ առ Միրեցեալ Հայրդ բազմարդիւն՝

„ Մնամ

„ Գերապատիւ Տէրութեանդ

„ Ի Փէֆէ. 31 յուլիս 1857.

„ Հոգեկցորդ աղօթարար

„ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶՈՎՍԿԻ. „

Ա՞չ ապաքէն և յայս պատասխանի Նորին հակառակութիւն բանից և գործոց տեսանի, քանզի ասէ թէ „ Հարկ է խելօք „ գնալ ընդ այնպիսիս և երկայնմտութեամբ չահել զսիրտս „ նոցա, մինչեւ բազմացի թիւ գիտնոց և բարեկիրթ արանց „ որք ակաւաթիւք են տակաւին ի Պոլիս։ „ տակայն ինքն անհամբերութեամբ ոչ յամէ ի Պոլիս աւուրս ինչ աւելի քան խնդրոյ ազգայնոցս, առ ի հոգալ զիրաց վարժարանին, և անխոհեմութեամբ մնայ գրով հրաւիրանաց ի նոցանէ գնալ անդ, ի հոգալ զայնմանէ, գիտելով քաջ՝ թէ քիչ գիտնոց և բարեկիրթ արանց ակաւաթիւք են ի Պոլիս։...

Ուրախանայ նա ընդ լուր վերատեսչութեան Սարգսի վարդապետի ի Հայկազեան վարժարանին, և ի պարծանս ինքեանց և ազգին, և ի նախատինս բանսարկուաց Համարի զայն. առ կայն վասն հաստատութեան վարժարանին ոչինչ փոյթ ունի, որ ի նախատինս ինքեանց և ազգին լինի, և յուրախութիւն բանսարկուաց... թողումք ասել զանձնասիրութենէ Նորին. զհանգստեամբ կենցաղավարութիւն իւր անդ գտանէ, իսկ զանձ կութենէ ընկերաց իւրոց ի Փարիզ՝ ոչ ինչ փոյթ առնէ։...

ԳԼՈՒԽ Ե.

Բաժանումն և. Հ. Յոսեփեանց Գրաշրջանաց ի Մխիթարեանս վերադարձուցանելն Վենետիկ, և երթ նորա ի Փարիզ առ եղբայր իւր Ամիրոսիոս և առ Սարգիս վարդապետս. — Հրամանաւորելն և. Հ. Յոհաննայ Պատրիարքին Գօրոյ, և ընդունելութիւն նորա անտի. — Խնդակցութիւն Ազգայնոցս ընդ դարձ Հ. Յոսեփեանց, և ընդունելութիւն ազգի. — Քաջալերութեան և գովեստեան նամակաւոր յազգայնոցս ուղեցեալ առ Սարգիս վարդապետս և ընդունելի ազգի.

Երբեմն արտաքսի Հ. Ամիրոսիոս ի Մ. վարժարանէն, և զառանձի կամաւ ի Մխիթարեան միաբանութենէն, թէպէտ և բազում զիրս գրէ նա առ հարազատն իւր, առ Հ. Խորէն ի Վենետիկ, ծանուցանելով նմա զվիճակ իւր, և զցանկութիւն կամաց, այլ ոչ առնու ի նմանէ պատասխանի թղթոց իւրոց, պահելով Գեր. Հիւրմիւզի զթուղթս նորա զի մի իմացի զայն Հ. Խորէն և կարելիոց միջի եղբօր իւրում, կամիցի գնալ յարիլ ի նա։ Գրէ դարձեալ Ամիրոսիոս վարդապետ, և այլ թուղթ մի առ նա և առաքէ ձեռամբ Խոտլացի բարեկամի իւրոյ և ծանօթի Հ. Խորենայ, հանդերձ յայտարարութեամբ անցից Մ. վարժարանին։

Առեալ Հ. Խորենայ զթուղթն և ընթերցեալ զյայտարարութիւն, շարժի յեղբայրական կարեկցութիւն, որոշէ ի միտս զառանձիլ և իւր ի Մխիթարեան միաբանութենէն կամաւ։

Իմացեալ զայն Գեր. Հիւրմիւզի՝ զայրանայ յոյժ, և արձակէ զնա ի վանաց խակոյն. այլ թէ ո՛րպիսի բռնաւորութեամբ, ահա նկարագրեալ է այն ի յաւելուած պատմութեան վերադարձի երից վարդապետաց, և հրատարակեալ ի 1858 ամի։

Ելեալ Հ. Խորենայ ի վանաց Վենետկոյ գնայ ի Փարիզ առ եղբայր իւր և առ Սարգիս վարդապետս ի 18 օգոստոսի 1857 ամի։

Գրէ և Հ. Խորէն զիր հպատակութեան առ Արքեպան Յակոբ Պատրիարքն ի Պոլիս, և առնու անտի պատասխանի բարեաց ընդունելութեան և կոնդակ օրհնութեան։

Գրէ նա թուղթ և առ ժողով խնամակալաց, և ընդունի քաղաքաց պատասխանի, ի նախագահէ նորին ի Խորասանեան Պետրոս Աղայէ, և յայլոց ամենց առանձին առանձին։

Յայն ամենայն խնդակցութեան թղթոց ազգայնոցս Պոլսոյ ակնունի Սարգիս վարդապետ յառաջադիմութեան վարժարանին, ապայն և անտի ետս ի դերեւ եկանէ յոյս նորա... սովորական բանք գոլով այն ամենայն, և Պոլսեցի ազգայնոցս սեպհական... ապա արդարանայ ասացեալն Սոնիման Պէյի, զոր վերագոյն յիշատակեցաք։

Ի դէպ համարիմք յիշատակել ասա քաջալերական նամակ մի յազգասիրէ միոյ ի Պոլիս առ Սարգիս վարդապետ ի Փարիզ, որ ունի օրինակ զայս.

„ Արժանապատիւ Հայր,

„ Յերչանիկ օրէ անտի յորում զոմիկի սէր առ ազգն զարձուցեալ զՁեզ (զոյգ ընդ Տեառն Գաբրիէլի և Տեառն Ամբրոսեայ վարդապետաց) ի ծոց Հայրենի Եկեղեցւոյ, յառաւել մերձեցուցեալ զարժանապատուութիւնդ առ միծագոյն կամ բուն մասն Հայրենակցաց՝ զպատուական անձինս Ձեր ի ծառայութիւն ամին նուիրեաց, կամք էին ինձ և պարտք իսկ դրութեամբ ետս (որպէս արդի) շնորհաւորել զդարուստ Ձեր և շնորհ ունել Ձեզ երեցունցդ՝ վասն անցին ի ծառայութեանդ որ միծամեծ բարիս ունի ծնանել յօգուտ ազգիս։ Բայց բազմութիւն ազգասիրաց որք ի թղթակցութիւն առնարկեցին (որպէս և արժանն էր) ընդ Գերապատիւ Տեարդ, երկիւղ երեւելոյ ցանկացող ի ձեռս բերելոյ անարժանարար զանուն ազգասիրի, և միանգամայն

„ երկիւղ գրաւելոյ թերեւս զփոքրիկ անկիւն մի ի գանձարա-
„ նի մտացդ, և հեռեւարար յաւիշտակելոյ զքանի ինչ ի թան-
„ գաղին վայրկենիցդ և խաչընդոտն լինելոյ օգտակարագոյն
„ գրազմանցդ, յետս կացուցին զգրիչ իմ ցայսօր յառպա-
„ րիպէ քարտիզի։

„ Իսկ արդ փութ ք էին, տեսեալ զՁեզ զերծ ի մտաման-
„ ջութեանց որք ի շնորհս նեղքին և արտաքին թշնամեաց
„ յուզէին զձեզ, ազատ միանգամայն՝ թէ և մատամբ ի ւէք
„ եւեթ, ի գժուարութեանց որք սովորաբար անբաժանելի
„ են ի սկզբնաւորութենէ ամենայն մեծ ձեռնարկութեանց,
„ նա մանաւանդ՝ ուրախս զՁեզ՝ ոչ նուազ քան զմեզ՝
„ այնմ երեւակայեալ ընդ փրկութիւն Տեառն Յորենոյ փար-
„ գապետի ի Պապական աթոռութենէ, և ընդ աշխատակցու-
„ թիւն նորա ի ուրում հարազատի ի կրթութիւն հայրենակից
„ մանկուոյն, ոչ եւս կարեմ երկարել զգրութիւն իմ։

„ Ըստ ինքեան գովելի և մեծի շնորհակալեաց արժանի է
„ անձնանուէր ազգասիրութիւնդ, որով զամենայն ինչ զոհե-
„ լով և զինչ ոչ խնայելով զօգուտ հայրենեաց վերազատե-
„ ցիք ամենայնի։

„ Գուցէ ոչ սակաւ գժուարացեալ իցէք ընդ ոչ ժամա-
„ նուն առ Ձեզ անյապաղ բոլորից նպաստիցն, որոց իրա-
„ ւամբ ակն ունել էր ձեզ բնական յաղգէս մեծէ, և յիրաւի՝
„ միոյն և եթ ի մեծատանց մերոց մարթ էր միայնակ տանել
„ ամենայն ծախուց ազգօգուտ ձեռնարկութեանդ, բայց առ-
„ ի գրաւել յայն զսիրտս իւրաքանչիւրոց ազգայնոց և զա-
„ մենեսին մանակից առնել արդասեացն յուսացելոց, լաւ
„ եւս համարեցաւ առժամակեայ նեղութիւն և անձկու-
„ թիւնդ, գիտելով միանգամայն զի քաջութեամբ ունիք
„ համբերել այնմ, նա՝ զի ոչ մեծ ինչ կարէր համարիլ յաղ-
„ թանակդ, եթէ ամենայն դիւրութեամբ և հեշտութեամբ
„ ի ձեռս բերէիք զայն, առանց գժուարութեանց և նեղու-
„ թեանց որոց տարաբերդ ցարդ և տանիլ ունիք թերեւս փոքր
„ մի եւս։

„ Ժողով խնամակալաց արդէն հասոյց առ Ձեզ գումար մի

“ գրանոյ արտաքոյ կարգի ։ Մարդասիրական ընկերութիւն
“ մի եւս կազմի այժմ վասն առաքելոյ ի վարժարանդ տաս-
“ նեակ մի աղքատիկ աշակերտաց ։ Ա. երեւելի վիճակս
“ Հայաբնակս գրեցաւ ի գիմաց գլխոյ ազգիս զի իւրաքանչիւր
“ ըստ կարեացն զմի կամ զերկուս աշակերտս տացեն թո-
“ շակաւորս ։ — Այսոքիկ անսրէնութիւնք տան մեզ յուսալ
“ թէ նախ քան զլրանալ վեցից ամաց ամենայն նեղու-
“ թիւնք ձեր փարատեցին, և զպտուղ աշխատանացդ քա-
“ ղել սկսիջիք ։

“ Են նաեւ ի պատրաստի քանի մի աշակերտք որք յետ
“ քանի մի եօթնեկաց ուղեւորեցին այդր ։

“ Ի վերոյ գրելոցս յայտնի տեսանիք թէ ոչ ննջեն ատ,
“ ուստի և քաջալերեցարո՛ւք . “ Որ ծանրաքայլ գնայ անվր-
“ “ տանգ գնայ, և որ անվտանգ գնայ՝ հեռի գնայ ։ ” ասէ
“ առակն ։

“ Մեծաւ ուրախութեամբ լսեմք յամենայն եկելոց այսր
“ այսր զբարեկարգ ընթացս վարժարանիդ. զնոցին յարա-
“ տեւութիւն յուսամք լսել միշտ ։

“ Զմասնաց Ազգաւոյն պատուականութիւն յորդեմք .
“ զյորդորանս սիրոյ և միաբանութեան մի՛ դադարեցուցանիք
“ ի նմա, և զօգուտս կրթութեան և լուսաւորութեան քա-
“ րոզեցէք միշտ. այսոցիկ յոյժ պէտս ունին մերայինք ։ Ա.
“ ի ընդարձակել զընթերցանութիւն ամսաթերթիս յազգի
“ մերում, առաջարկեցէք խնամակալաց ժողովոյն զի զմի մի
“ օրինակս ընդունել տացեն ամենայն ուսումնարանաց մերոց
“ որ ի Կ.Պոլիս, և եթէ գտանիցին ի նոսա անկարողս վճարե-
“ լոյ զդիսն, կամ քանի մի աղգասիրաց վճարել տացեն զայն,
“ և կամ ձրի առաքեցէք կարօտելոց դպրատանց, զի աշա-
“ կերտք օգտեսցին անտի ։

“ Ժամ է արդ վախճան դնել երկարաբանութեանս, զոր
“ կնքեմ յայտնելով զյոյս իմ և զսաստիկ փափաք տեսանելոյ
“ զԳերապատիւ Հայրդ ի Կոստանդնուպօլիս և բերանացի
“ յայտնելոյ զյարգանս իմ, և ոչ սխալիմ եթէ ասիցեմ թէ
“ այս յոյս և փափաք ոչ են սահմանեալ յիս միայն ։

„ Վայելեցաք ի սէր Տեառն Ամբրոսեայ, և յաւէտ յայն
„ Տեառն Գաբրիէլի, Զերոյդ մեամբ կարօտեալ։ Հուսկ ապա
„ եկեալէ շրջան Տեառն Խորենայ, որ թէպէտ նորագոյն
„ վասն մեր և երիտասարդագոյն քան զերեսեանդ էր, ըզ-
„ հնոյն անուանակցին նորոգէ դիշատակ՝ դրշին համբաւեալ
„ ազնուութեամբն։ —, Զառեառն Գաբրիէլի ի Փէտերբուրգ
„ հրաւիրեալս լուաք ուրախալի տրտմութեամբ կամ տրտմալի
„ ուրախութեամբ, (եթէ ներելի իցեն հակասիս բանքս.)
„ ուրախանամք զի ճանապարհորդութիւնն մեծամեծ ազգօ-
„ գուտ ակնկալութիւնս տայ. և տրտմիմք զի զնոյն ինքն
„ ի մէնջ հեռացուցանէ տա. ժամանակ մի։

„ Մաղթեմ ի Տեառնէ նմա և Զեզ ամենեցուն բարեբաստիկ
„ յաջողութիւնս և քաջառողջ կեանս երկարս, և

„ Մնամ խորին յարգանաբ և յաւէտ ակնածութեամբ

„ Գերապատուութեան Ձերում

„ Պոլիս. 30 օգոստոսի 1857.

„ Խոնարհ ծառայ

„ ԳՐԻԳՈՐ ՄԱՐԿՈՍԵԱՆ.“

Դարձեալ ի դէպ համարիմք յիշատակել ի սմին և զայլ երկու նամակք որք յայլ երկու ազգասիրաց գրեալք առ Սարգիս վարդապետ և որք ունին օրինակ զայս.

„ Սրբակրօն Հայր Պատուասիրեալ.

„ Ձկերպարան սքանչելի տեսլեանն Զաքարեայ համարե-
„ լով նկարագիր քաջալիսութեանն Քրիստոսի և ի ձեռն, Հայր
„ ընտրեալն, առ մեզ Աղգիս պատահելոյ, ի դէպ զայ գա-
„ չել. Ահա տեսանեմք աշտանակ ոսկեձոյլ, և երկու ձիթե-
„ նիք մի ընդ աջմէ նորա և մի ընդ ահեկէ,

«Ապաքէն առ ի փառս Աստուծոյ և յօգուտ Ազգիդ սի-
«րելւոյ նահատակօրէն խիզախեալ Քեզ ի փորձ հանդիպի
«վշտաց և բանտի իակ. զի գործադիր լիցիս աստուածազ-
«գեցիկ բաղձանացն Աղա Մուրատայ անմահացելոյն յիւ-
«բում՝ բարերարութեան։ Ակի գտար ընտրելագոյն, և
«ձուլեցար արժանապէս յաշտանակ, Քեզ ի շնորհաց մեծի
«Ազգասիրին այնորիկ որդեգրելոցն անենախանձ լուսատու,
«ոչ ինչ խոսիր համարելով ընդ այս մանուկ և ընդ այն, որ
«միայն թէ Հայն լցէ։

«Իսկ եթէ գժպհի արկածք անզաւակեցին զՀայրդ բարեա-
«ցապարտ, բայց առատաձիր Երկնից հաճոյ եղեն զծաղ-
«կեալ ալիոդ առնել զարմանալեօք բազմաբեղուն եւս, փա-
«խանակ սակաւաւորաց ընդ հուպ պարգեւելով զողջոյն
«ազգ մի երախտագէտ ի զգուել հայրենի շրթամբ։ զ և խնա-
«մածել։

«Մխիթարեան միաբանութիւնն երբեմն երբեմն յաւար եւ
«զոմանս յիւրոց անտի, այլ զի հետս բարւոյ իրիք չթողին
«նոքա, ոչ յիշեցան անուանքն յաղագիս. սակայն զի Հոգի
«Երանելւոյ Հիմնադրի այնր ուխտի հանգուցեալ էր ի միրայ
«Քեր, բան ողջախոհ գիտմանցդ բացաւ առաջի Քեր ա-
«պարէզ փառաց ընդ վշտաբեր հեզութեանցդ, բարձրանալ
«անդրէն յաշտանակ Ջահափայլ՝ ։կրկին ձիթենիոդ յաջմէ
«և յահեկէ ունելով։

«Վասն որոյ և գրաւեալն ի սէր Քեր սիրտ Ազգիս իրա-
«ւամբ շարժի յանկեղծ շնորհակալս զՔէնջ, և լեզուն ի հայցա-
«ուածս առ Տէր, զի ամբ արդիւնաբար կենացդ՝ որչափ
«մարմն լցէ բնութեան, երկարաձիգ եղիցին, և աշխարժդ՝
«յաղգօգուտ Ջանս միշտ քաջառոյդ, և վայելչագեղ ձիթե-
«նիքդ միշտ պտղալք ակաղձուն։

«Ներեսցի ծառայի քում՝ Արժանապատիւ Տէր, թէ սիրոյ
«հաղորդութեամբ համարձակիմ ազաչել, զի գիտելով գրա-
«բեղէպ խորհուրդ Ազգին առ մշանջենաւորութիւն փարժա-
«բանիդ, խոպան մուտցութեամբ անցելոյն արտաքնոցիս
«առաջակայիւդ, որպէս զի ունիցի զմանկտին քեր, զոր իրՀ

„ է իւր հետ զհետէ յղել այդր յաշակերտութիւն, այնպէս
„ քաջիկ հրահանգեալս, զի լիցին Հայրենեացս պիտանացուք
„ և օգտակարք արժանի ըստ առ ի Զէնջ դաստիարակու-
„ թեանցն և իւրուն ակնկալութեան։

„ Անկ էր որդեգութ Հօր իմոյմ Աստ Միսաքայ Տեառն
„ Նիկողայոսեան, որ զսէր Ձեր կրել կրէ, գրել զայս թուղթ,
„ բայց զի իբրեւ ի քանի ինչ ամսոց հետէ դիմեալ է յուխտ
„ ի սուրբ Երուսաղէմ, և անտի ի հայրենիս իւր, և իմոյմ
„ նուաստութեան տեսեալ ի Մատնոց Աստուծոյ յիշատակու-
„ թեան արժանի դատեալ զգոյզն նուէր նորա որպէս մեծ
„ ինչ, և նուիրատուն իսկ գրուատիւք ամաչեցուցեալ, չժու-
„ ժելով դարձի նորուն, համարձակեցայ յայս թուղթ մատու-
„ ցանել առ այժմ զշնորհակալիս ի դիմաց իւրոց։

„ Ընկալցիս, ո՛ Տէր, զշնորհակալութիւնս իմ, և զանկեղ-
„ ծիկ յարգանս, և հաճեսջիք յայտնել Պատուական Հարց
„ իմոց Տեառն Գաբրիէլի և Տեառն ամբրոսեայ արժանամե-
„ ծար վարդապետաց, զի որդիապարտ փութով մատչիմ
„ ի համբոյր Աջոյ նոցին, և զարժանահայց օրհնութիւնս Ձեր
„ մաղթելով ի վերայ իմ և տանս՝

„ Մնամ

„ Վենետիկի սուրբ Հայրութեանդ

„ Ի Կոստանդնուպօլիս. 12 սեպտ. 1857.

„ Նուաստ ծառայ

„ Գ. ՃԻՎԱՆ ՄԻՍԱՔԵԱՆ

„ Բենիկեանցի.՝՝

„ Գերապատիւ և Աստուածարեալ Սրբազան Հայր.

„ Քաղցր է ինձ այսօր սրտաբուղխ անձկանաք սիրոյ համ-
„ բոյր սրբոյ Աջոյդ մատուցանելով յատկապէս շնորհաւորել
„ Տեառն Խորենայ շնորհազարդ վարդապետի Անձկալի ա-

“ Նոյդ բարենշան գալուստը, գիտելով անտարակոյս ձեր
“ սրտին տարապայման ցնծութիւնը զոր ունեցաք նոյն կէ-
“ տին, երբ գրկախառն ողջունիւ փարեցաք զպարանոցաւ
“ Սիրելի որդեկիդ, և իբրեւ գորովագութ Հայր ընդունեցիք
“ նորին անսադիւտ սիրոյն քաղցր համբոյները զոր ցնծու-
“ թեան արտասուօք կը մատուցանէր Անջոյդ սրրոյ։

“ Անշուշտ, նոյն երջանիկ ժամուն, նոր Փաշաց քաղաք
“ կամ Գեսեմ մը ներկայացուցած էր վարժարանին սրահը,
“ ուր Պատկառելի ծերունի տուրբ Նահապետ մը կը համբու-
“ բէր կարօտակէզ անձկանօք իւր ողջախոհ ու գեղեցիկ որ-
“ դեակը, և “ անկանէր ի վերայ պարանոցի նորա. ” և կը
“ կարծէ՞ք ուրեմն՝ որ մենք ալ երբ այսքան հեռաւոր ան-
“ ջրպետութեամբ բացական վայրէն այս օրինակ սրտառուչ
“ հանդիսարանի դիտող ըլլալով, մեր սրտին արծարծմունքը
“ և ցնծութիւնը պակաս եղած ըլլայ։

“ Եա՛ մանաւանդ հարկ է նշանակել երբ շատ ժամանակէ
“ ի վեր գիտենք և կը լսենք, որ ի սէր Ազգային փառաց,
“ զանազան վշտաց և նեղութեանց սիրով ու համբերութեամբ
“ կը տանիք, և ներքին ու արտաքին հակառակնորդներէն
“ շատ նախատինք ու անարգանքներ կրեցիք, և ի վերայ այսր
“ ամենայնի երբ ձեր սիրելի Պաշտօնակից Գերապատիւ Գար-
“ բիէլ վարդապետ Հօր բաժանումն եւս ի վերայ գալով, բո-
“ լոր հոգերը՝ Արժանապատիւ Տեառն Ամբրոսիոս վարդա-
“ պետի Հօր և ձեր սրբութեան վրայ ծանրացած էր։ Այժ-
“ միկ նորին Արժանապատիւ Տեառն Խորենայ բարենշան
“ գալուստը մեծ մխիթարութիւն է ձեզ. և թերեւս վշտա-
“ կից ու կարեկից ըլլալով փոքր մը թեթեւութիւն ըլլայ վշտա-
“ կիր Անձներուդ, մինչեւ որ Աստուածային այցելութիւնը
“ օրհնէ Ա. դասիրաց անգուլ ճիգը ու ջանքը, և վարժարա-
“ նին օրինաւոր տնօրինմունքը և տնտեսութիւնը կարգի
“ դրելով Դուք ալ հանգիստ ու ապահով ըլլաք, և մեր
“ սրտին բաղձանքն ալ պատկելով միխիթարվինք հոգեւոր
“ ցնծութեամբ։

“ Այս անգամ Ճ. Արամեան Արժանամեծար Տպագրիչ

„ տեղւոյդ որ ժամանակէ մը ի վեր Պոլիս եկած էր, և պատիւ
„ ունեցանք նորին տեսութիւնը և մտերմութիւնը վայելելու,
„ այսօր Փարիզ վերադառնալու առիթ ունենալով նորին ձե-
„ ռօք համարձակեցայ այս առաջին անգամ իրեւ մէկ դոյզն
„ նուէր յիշատակի տասնըհինգ հատ քսան ֆրանքնոց ոսկի,
„ փոքրիկ քսակի մը մէջ զմեռած ձեր սրբութեանը նուիրել.
„ բարեհաճեցէք ընդունիլ մեր նուաստութեան յիշելիքը, և
„ ի սրբանուէր յաղօթս ձեր յիշեցէք զմեզ և մենք ալ պար-
„ տաւոր ենք միշտ շնորհակալ ըլլալ Աստուածային ողորմու-
„ թենէն և մաղթել վասն ձեր կեանս յաւէժս ի մխիթարու-
„ թիւն Ազգաւէր սրտից։

„ Մնամ Գերապատիւ Սրբութեանդ

„ Պոլիս. 29 Հոկտ. 1857.

„ Խոնարհ ծառայ

„ ՄԿՐՏԻՉ ՆԻԿ. ՄՈՄՃԵԱՆ. „

Ահա նոմականին երից Ազգաւէրաց որք առ Սարգիս վարդապետ, և զոր յիշատակեցաք ի սմին, ոչ ի պարծանանմին, այլ ի հաստատութիւն ասացելոցս, թէ „ Արդարութիւնն „ բռնադատէ, միշտ խօսել զճշմարտութիւն։ „ Եւ թէ „ Բանք „ են միայն և ոչ արդիւնք յազգայնոցս որք ի Պոլիս։ „ որպէս տեսաւ ցարդ, և տեսանի եւս ապա... և երանի թէ բանք միայն էին անտի և ոչ տուգանք... և ահա արդիւնք որ ի կարծեցեալ ազգաւէրաց անտի. եթէ տարակուսիցի որ ընդ ասացեալս, ցուցցուք մեք զայս հաստատեալ ի կարգի պատմութեան։

ԳԼՈՒԽ Զ.

Երբ Գաբրիել վարդապետի ի Փէտրբուրգ առ Կայսրն Ռուսաց, և պատուհասիրութիւն նորա սնուի, հանդերձ Աստուածնորդական իշխանութեամբ. — Դարձ նորա ի Թէոդոսիա. — Կարծիք և կասկած ազգայնոցս սնուի ընդ պատիւ և ընդ իշխանութիւն նորին. — Թղթակցութիւն Սարգսի վարդապետի ընդ նմա՝ և ընդ այն. — Հիւանդութիւն Խաչատրեան Ռուսուանապետի. — Լքումն սրտի Պօղոսեցի ազգայնոցս ընդ հաստատութիւն Հայկազեան վարժարանին որ ի Փարիզ.

Յետ երկուց ամսոց կալոյ Գաբրիէլի վարդապետի ի Թէոդոսիա առ ընտանիս իւր անդ, դնայ ապա ընդ եղբօր իւրոյ Պ. Յովհաննու ի Փէտէրբուրգ յանդիման լինել Աղեքսանդր կայսեր Ռուսաց և ծանօթանալ առագանուոյ նորին, յորոց ընկալեալ սիրով և պատուեալ առաջնորդական իշխանութեամբ, թէմին Պեսարաբիոյ, դառնայ ի Թէոդոսիա առ ընտանիս իւր։

Ընդ այս ամենայն պատիւ պաշտաման նորա, առանց հարցման և հաւանութեան Սինոդոսին Էջմիածնի, ոմանք յազգայնոցս անտի ի ձախողակի կարծիս անկանին, և ի նոյն օրըստօրէ հաստատին, զոր և յիշատակեացուք ապա հանդերձ հաւատեօք։

Թուղթ Սարգսի վարդապետի առ Գաբրիէլ վարդապետ ի Փէթէրբուրգ, որով յիշեցուցանէ նմա զրնաւորութիւն ազգայնոցս Պօղոսի, և յորդորէ զնա չանալ գտանել օժանդակութիւն Հայկազեան վարժարանին ի Ռուսաստանի ազգայնոցս անտի։ Բարեմտութեամբն իւրով տակաւին ակնուն ի նմանէ զայն, օրինակ զայս.

«Գերապատիւ Հայր և Սիրելեալ եղբայր։

«Ի ցանկալի և յանդուգն գրութենէ Ձերմէ առ մեզ առ
«ի Փարիզ տեղեկացեալ զողջութենէ պատուական կենացդ,
«և զարժանաւոր ընդունելութենէդ այդր ուրախանամք յոյժ
«յոյժ, և աղաչեմք զԱստուած ունել ձեր միշտ զնոյն, և
«յաւելուլ օրըստօրէ յայն։

«Կամ՝ էր ինձ արդեօք և քաղցր յոյժ գրել յաճախ առ
«Ձեզ, այլ հաւանարար Հ. Ամբրոսիոս մեր չեթող ինձ բնաւ
«ենութ ինչ գրութեան, տալով ձեզ զայն ամենայն տոնա-
«ւոր տառիւք, և չկամելով իմ երկրորդել զնոյն, առ ի չը-
«յաւելուլ ձեզ կրկին աշխատութիւն, առնել պատուխանի
«երկուց գրութեանց, դանդաղեցայ յայն ցարդ։ — Բայց
«իրրեւ լուայ զուղեւորութիւն ձեր ի մոյրտաղաքն Ռուսաց,
«կարեւոր և հարկ համարեցայ բերել յայս գրութիւնս։

«Ճանաչէիք զուք արդէն և ծանեայք ապա ի փորձոյ
«զբնաւորութիւն Պօլսեցի ազգայնոցս. թէպէտ և խոստա-
«ցան նոքա և խոստանան միշտ հաստատեալ զհին և զնոր
«պարտս վարժարանիս, այլ բանիւք միայն և ոչ արդեամբք,
«վասն որոյ տարակուսիմ ես ընդ հանապազորդութիւն վար-
«ժարանիս, տեսեալ զի պակասի օրըստօրէ թիւ աշակերտաց
«տրին, և աճելով աճին պարտքն. քանզի տակաւին ոչ
«ծանեան նոքա զօգուտն հասարակաց ազգին, և ոչ զպա-
«տիւ իւրեանց առանձինն, այսու ևս պատեհութեամբ։

«Իսկ որ ծանեաւ զայս, հանգուցեալ Ներսէս Կաթուղի-
«կոս, աւաղ. զի ոչ յերկարեաց նա ի կեանս իւր զէթ և
«ամիս ինչ ևս... քանզի ըստ պատմելոյ մեզ առ ակն-
«ջալուր ունեաց յազգայնոցս անտի, այցելութիւն ինչ ի մե-
«ջտեղս համարի նա զդարձն մեր ի ծոց լուսաւորչեան եկե-
«ղեցւոյ, և զհաստատութիւն վարժարանիս ի Փարիզ ազգիս
«ինչ լուսաւորութեան ազգիս. վասն որոյ զոհութիւն և
«փառս մատուցանեմ Աստուծոյ երանելի ծերունին խնդագին

“ սրտիս, և նշանս պատուոյ պատրաստել տայ մեզ երեցունցս,
“ հանդերձ օժանդակութեամբ զուտար ինչ արծաթոյ ի կա-
“ բուսար պէտս վարժարանիս. և ոչ այսչափ միայն, այլ և նա-
“ խահայեաց տեսութեամբ խորհի մշանջենաւոր եկամուտ
“ կարգել վարժարանիս, հանել զայն յեկամտից վանօրէից
“ անտի հաւանութեամբ պետութեանդ։ — Եթէ խորհուրդս
“ այս և ցանկութիւն հանդուցելոյն ի գլուխ եւանէր, ապա-
“ քէն չմնային մեզ այժմ հոգք զմշանջենաւոր հաստատութե-
“ նէ վարժարանիս։

“ Թէպէտ և վրիպեցաք մեք յօժանդակութենէ և ի մխիթա-
“ բութենէ անտի, այլ յուսացուցանեն զմեզ տակաւին նո-
“ քին իսկ Ռուսաստանեաց պատմիչք, թէ լիցի անշուշտ
“ օժանդակութիւն վարժարանիս յաղդայնոյս այսոր, եթէ
“ շրջիցի եղբայրութիւն Ձեր ի կողմանդ և ծանօթասցի աղ-
“ գայնոցս այդր։

“ Հաւանեալ եմ ես այսմ, յուսալով յողորմութիւն Աս-
“ տուծոյ, և վստահանալով ի Ձանս Ձեր։

“ Եթէ կամիցին աղգայինքս այդր առաքել այսր ի վար-
“ ժարանս մանկունք քանիս չափ, ի մարզս կարեւոր արուես-
“ տից, չընդդիմանայ այնմ պետութիւնդ, չգոլով այնր հակա-
“ ռակ օրինաց նորա, և վասն տարեկան թոշակի նոցին,
“ դնել այդր յեկամուտս զուտար ինչ արծաթոյ, ընդ պահ-
“ պանութեամբ Կաթուղիկոսին։ — Յայնժամ խրախուսեալ
“ և պատկառեալ արդեաք Պօլսեցի աղգայնոցս յօրինակէ
“ դոցին առաքեսցեն նոյնչափ մանկունս յիւրեանց անտի, և
“ նոյնպիսի եկամտիւք ի թոշակս նոցին. և յայնժամ առցէ
“ վարժարանս մշանջենաւոր հաստատութիւն. և եթէ յաջո-
“ ղեսցի գործս այս, քանի քանի՛ բարեաց ոչ ակնկալցուք
“ անտի, թուել ասա մի առ մի աւելորդ համարիմ, առաւել
“ քան զիս գիտելով Ձեր. ապա մնայ ինձ միայն սատարել
“ այնմ տկար ազօթիւքս, մաղթել Ձեզ ի Տեառնէ երկար և
“ քաջառողջ կենդանութիւն։

“ Զայլ մանաւոր հանգամանաց մերոց և վարժարանիս
“ տեղեկանայք յառանձին առանձին նամակաց եղբարցս,

„ երկոցուն հարազատաց, որպէս և զայլ լրոց արտաքնոց,
„ և իմ վերսին յուշ արարեալ խնամս մատցի զիարտաս-
„ թիւն վարժարանիս, զհնարս և զդարման ասեմ մշանջենա-
„ ւոր հաստատութեան և յառաջադիմութեան տրա՝

„ Մնամ միշտ

„ Գերապատիւ Հայրութեանդ

„ Ի Փարիզ. 15 Հոկտ. 1857.

„ Խ. Ծ. և հոգեհարազատ եղբայր
„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՊՈՒՐԵԱՆ. „

Պատասխանի Գաբրիէլ վարդապետի առեալ թղթոյ Սարգսի վարդապետի, յորում թէպէտ ազդ առնէ թէ չունի պարապ ընդարձակագոյն բանիւ առնել այնմ պատասխանի, սակայն ընտ երկու էջս թղթոյ աւելորդ բանիւ, և զանց առնէ զհարկաւորէն, որով յայտնէ զկամս Ռուսաց տէրութեան և զիւրն միանգամայն, զդարման ասեմ վարիզեան վարժարանին, և զհաստատութիւն թէոդոսեան ուսումնարանին, օրինակ զայս.

„ Գերապատիւ Հայր իմ սիրելեալ.

„ Որչափ ցանկալի էր ինձ գրութիւնդ ձեր, այնչափ և
„ ցաւալի զի ոչ ունիմ պարապ այժմն ընդարձակագոյն
„ բանիւ առնել այնմ պատասխանի. ապաշխեմ ընդունել ըն-
„ սակաւս իրրեւ զրագրում։

„ Տնաւոր տառք Հ. Ամբրոսիոսի արդարեւ մեծապէս սի-
„ րելի են ինձ, Հայր, բայց այն չէ շատ. փափաքեմ և
„ զձերդ տեսանել զմարգարտաշարս առէպ առէպ։

„ Զկարծիս իմ զանպատեհ գնացից խնամակալացն զորոց
„ ամենայն իրաւամբ գանգատ ունիք, գրեցէք առ Հ. Ամբրո-
„ սիոս. և զԳեր. Հայրդ ապաշխեմ երկայնամտել փոքր միւս

„ եւս ժամանակ մինչեւ տեսցուք թէ զինչ պատրաստեալ
„ իցէ մեզ Տէր ։

„ Առաւնոր չրաւեմ ի գրի հարկանել թէ քանի սիրով և
„ մեծարանօք ընկալաւ զիս աւագանի պետութեանս . արդ
„ իսկ զարձայ ընդ հարազատիս յՕսլով Իշխանէ , որ Գա-
„ հերէց է կայսերական խորհրդարանին , և գրեա թէ Թա-
„ գաւորահայր և փոխարքայ . և հիացայ ընդ մարդասէր և
„ ընդ ընտանի ընդունելութիւնն զոր արար մեզ , ասելով ցիս՝
„ բաց ցայլոց իրաց թէ „ Գործն ձեր ի յոյժ բարւոք ըն-
„ „ թացս է , այնպէս զի և ոչ իմումն պաշտպանութեանս
„ „ ունի ինչ պէտս ։ „ — . . . . . .

. . . . . .

. . . . . .

„ Դրամական կարօտութեան վարժարանիդ զարման մեծ
„ լոյսն անշուշտ հաստատութիւն ընկերութեանն ի Պոլիս , որ-
„ պէս յայտ է և ի թղթոյ Երիւնեանին . յուսամ թէ և խնա-
„ մակալքն զգուշացին զէթ այսուհետեւ ի գնալոյ ընդ ձեզ
„ այդպիսի ամարդի գնացիւք ։ . . . . . .

. . . . . .

. . . . . , ...

„ Փոխադարձ ողջունիս սիրոյ եղբօր իմոյ Յովհաննու յանձն
„ եղեալ յարժանահայց աղօթս ձեր ,

„ Մնամ

„ Ձերապատիւ հայրութեանդ

„ Փետրուարի . 30 հոկտ . 1857 .

„ Աղօթարար եղբայր

„ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ . „

Ահա վասն կարեւոր խնդրոյ և ազաչմանաց թղթոյ Սարգսի վարդապետի այսչափ միայն առնէ պատասխանի Գաբրիէլ վարդապետ ։ Թէպէտ և այսոցիկ կեղակարծ բանից Նարին

կարէր Սարգիս վարդապետ առնել զարժան պատասխանին, սակայն երկայնամտէ, տակաւին համբերութեամբ և ակնկալութեամբ, առնելով թղթոյ նորա պատասխանի քաղաքավար բանիւք, օրինակ գայս.

„ Գերապատիւ Հօր և սիրելւոյ եղբօր ողջոյն բազում
„ կամ ողջին սիրոյ։

„ Զաւետարեր զիր սիրելւոյդ, գրեալ յ30 անցեալին, ընկալայ յ7 ամսոյս, և խնդացի ոչ սակաւ ընդ արժանաւոր
„ ընդունելութիւն ձեր այդր յաղագանոցս և յառաջանաւոր
„ պետութեանդ։

„ Շնորհ յոյժ ունիմ Աստուծոյ որ յաջողեաց ձեզ ի գործդ,
„ և աղաչեմ զնա յաջողել Ձեզ միշտ, ի փառս անուան իւ-
„ րում և յօգուտ կարօտելոյ ազգիս։

„ Այն ինչ գրէի զթուղթս, ահա եհաս ցանկալին առ
„ ի Ձէնջ զիր և այլ առեստաց, հաստատութեան ձերոյ յա-
„ թոռ Առաջնորդութեան երից նահանգաց որք ի տէրու-
„ թեանդ, Պէտրապիոյ . . . ընդ այս, գոհութիւն և փառս
„ մատուցի Տեառն, որ փառաւորէ միշտ զփառաւորիչս իւր,
„ նա և յայսմ աշխարհի, և առաջի օտար ազգաց, և իւրոցն
„ իսկ, սիրելեաց և ատելեաց առհասարակ, այլ և առաւելու
„ նա զայն ապա, տեսանելով զառաւելութիւն արդեանց և
„ արժանաւորութեան ծառայից իւրոց, զոր և ի Ձեզ տեսանել
„ չկաք ինչ տարակոյս։

„ Հայպա զօրացարուք սիրելեալդ իմ, զի զուռն մեծ բա-
„ ցեալ էր Տէր կարօտելոյ ազգիս, և յոր ձեռամբ Ձերով կա-
„ մի մուծանել զնա։ . . .

„ Իցէ թէ տեսից և ես զայն ընդ հուպ և այնուհետև մե-
„ ռայց միխիթար։ . . .

„ Զհանդամանաց մերոց ասա տեղեկանայք միշտ ի յառաջ
„ յերկար գրութեանց Հ. Ամիրտեայ, և զորոց տեղեակ էք
„ ինքնին. այլ և զամենայն ինչ ի խնամս Աստուծոյ ապրա-
„ պարեալ եմ։ Կարծեմ միայն թէ բարւոք լիցի ունել ազ-

„ գիս տեղի ինչ ի Փարիզ, ի պէտս բարձրագոյն գիտու-
„ թեանց և կարեւոր արուեստից, որոց կարօտի ազգն մեր,
„ և զայս կարօտութիւն ճանաչէր հանդուցեալ Ներսէս Կա-
„ թուղիկոս, և այս կարօտի ձերում սատարութեան, համո-
„ զելով զազգայինս որ ի կողմանդ և որ ի Պոլիս, բերանացի
„ խօսելով ընդ նոսա, և բառնալով զերկպառակութիւնն
„ ի միջոյ նոցա, ըստ ակնկալութեան բազմաց անտի։ . . .

„ Կնքեմ զթուղթս, շնորհաւորելով սիրելւոյդ զոհն անուա-
„ նակցիդ հրեշտակապետին Գաբրիէլի, որոյ բարեխօսու-
„ թեամբ մաղթեմ Ձեզ ի Տեառնէ երկար և քաջառողջ կեն-
„ դանութիւն և յաջողութիւն ամենայն գործոցդ, և ողջունե-
„ լով զհարազատդ Պ. Յովհաննէս,

„ Մնամ միշտ

„ Գերապատիւ Հայրութեանդ

„ Ի Փարիզ. 14 Նոյեմբ. 1857.

„ Խ. Ծ. և Հոգեկցորդ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՂՈՐԵԱՆ. „

Պատասխանի Գաբրիէլ վարդապետի տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի, յորում դարձեալ աղաչէ զնա չվհատիլ, այլ պահել տակաւին զյոյս իւր ի Ֆօլսեցի յազգայինս յօժանդակութիւն Հայկազեան վարժարանին ի Փարիզ, հանդերձ քաղաքավար և հակառակ բանիւք, օրինակ զայս.

„ Գերյարգոյ և Սիրելեալ Հայր բազմարգիւն.

„ Մեծաւ բերկրութեամբ սրտի ընկալայ զպատուական և
„ զցանկալի նամակ Գեր. Հայրութեանդ, զգրեալն ի Ա՛Կ ան-
„ ցելոյն, և շնորհ յոյժ ունիմ յաղագս խրախուսական բա-
„ նիցն հայրական որովք քաջալերէք զիս տկարութիւն

«Ի վաստակել իմովանն արիարար յայդուոլս Տեառն, զոր՝
«աւուրս յոյժ խոպանացեալ տեսանեմ և ի կողմանս յայսոսիկ,
«և տաժանական աշխատութեանց կարօտի ի մշակել ըստ
«արժանւոյն և պտղաբերս գործել։

«Եւ որ խրախուսէն զիս յուսով այն է՝ զի գորովագութ
«Հայրութիւնդ ոչ մոռացի զիս երբէք յարժանահայց ա-
«ղօթս իւր, և եթէ ոչ առ այժմ զգործնականն ձեռնտուու-
«թիւն, գէթ զխորհրդոցն իւրոց խոհականաց ոչ զլացի
«զօգնականութիւն։

«Սոյնպէս ահա ի քաջալերութիւն ինձ համարեցայ և զա-
«մենայն մեծարանս և զսէր և զպատիւ յորս վայելեցի
«ի Մոսքուայ և ի Փեթրպուրկ յազգայնոց և յօտարաց և
«ի Պետութենէս զլխովին։ . . .

«Եւ քանզի մերձ ի մուտս նորոյ տարւոյն հասցէ զիրս
«այս ի ձեռս Հայրութեանդ, սմին ապաստարեմ մատուցա-
«նել Զեզ և զարտառուչ մաղթանս իմ վասն յերկարութեան
«անգին կենաց բազմավաստակ Հօրդ Հայրենեաց մերոց։
«Տացէ մեզ Տէր զառաջիկայ ամս 1858 առաւելագոյն միխ-
«թարութեամբ անցուցանել, ոչ անպտուղս տեսանելով ըզ-
«վաստակս ձեռաց մերոց յօգուտ և ի պայծառութիւն Հա-
«յաստանեայց տուքր եկեղեցւոյ զորոյ ժամ է արքել զարտա-
«տաուան մերովքս քրտամբք և արտասուաց յորդահոս
«բղխմամբ։

«Գիտեմ զի Գեր. Հայրութիւնդ առաւել քան զամենայն
«ոք իմանայ զվիճս իմ և զխորհուրդ իրրեւ գործակից և
«փորձակից և խորհրդակից, վասն որոյ և զայսոսիկ ասեմ.
«այլ դուք մի՛ դադարիք ի քաջալերելոյ զոկարութիւնս իմ
«որպէս և զիարդ կարող իցէք։

«Իմ ազգս առ ի Զէնջ, որպէս և ի Պատուական Գոր-
«ծակցացդ Զերոց՝ Հոգեկցորդ Հարազատաց այն է, զի
«մի՛ վհատիցիք ի կաղ իկաղ և կասկածոտ գնացից ասդան-
«ոյն Պօղոսի. եկեսցէ ժամանակ, և անշուշտ ոչ յամեսցէ,
«զի ծանիցեն և նոքա զարժանիս վաստակաւորաց, և զադա-
«րեսցեն ի տատանելոյ յամենայն հոգմոց։

„ Վասն ընտրութեան նորոյ Կաթուղիկոսի գրեցի առ Հ.
„ Ամբրոսիոս զկարծիս Հայկազանց կողմանցս։

„ Առաւնոր ի Ռուսիս ամենայն ոք յորդորէ զիս մի՛ խոր-
„ շիլ ի գնալոյ յԷջմիածին ի ժամանակի ընտրութեանն, և
„ ես տակաւ հաւանիմ բանից նոցա։ Եթէ անդ գտանիցիմ
„ յ18 մայիսի, անցուցից և ամսօրեայ մի ժամանակ ի շրջել
„ ի կողմանս յայց վանօրէից և գիւղից և քաղաքաց, և ապա
„ յետ օծման Կաթուղիկոսին ընկալեալ զձեռնադրութիւն
„ եպիսկոպոսութեան, և անցեալ ընդ Կ. Պոլիս՝ դարձայց
„ այսրէն։ Իսկ՝ թէ զէթ ի Պոլիս հանդիպէի յոյժեամ ցան-
„ կալի տեսութեան Գեր. Հօրդ։ . . .

„ Ողջ լինել ըղձանամ

„ Գերապատիւ Հայրութեանդ

„ Սերիսոսով. 13 դեկտ. 1857.

„ Ազօթարար և նուաստ եղբայր հոգեկցորդ

„ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ.“

Ո՞չ ապաքէն և յայս պատասխանիս Գաբրիէլ վարդապետի հակառակութիւն բանից տեսանի. վհատեալ իբր ի կաղ ի կաղ և ի կասկածոտ գնացից աշագանչոյն Պօղոսոյ, թողու զՓարիզս զոր վարժարանն գնայ ի Թէոդոսիա հաստատել անդ այլ ինչ վարժարան. և աղերսէ զընկերս իւր չվհատիլ անտի, առանց օժանդակելոյ նոցա ոչ արդեամբք և ոչ բանիւք անգամ . . . և ո՞չ ապաքէն արդարանայ առաւնոր առացեալն թէ,

„ Անձնասիրութիւն հզօրագոյն է քան զամենայն իրա-
„ ւունս ընկերութեան։“

Սակայն ի վերայ այսր ամենայնի Սարգիս վարդապետ տա-

կաւին քաղաքավարութեամբ և միամտութեամբ առնէ պատասխանի թղթոյ Գաբրիէլ վարդապետի, օրինակ զայս.

“ Յարգոյապատիւ Հօր և Սիրելոյ Եղբօր ողջոյն բա-
“ զում կարօտագին սիրոյ։

“ Ցանկալի և զխրախոյս նամակ Սիրելւոյդ, գրեալ յ13
“ դեկտեմբերի տարւոյս, ընկալայ ի 27 տրին ամսոյս և մխի-
“ թարեցայ և խնդացի յոյժ, լսելով զպատուական ողջութե-
“ նէ ձերոյ և զարժանաւոր ընդունելութենէդ յազգայնոցս
“ և յօտարաց այսր։ Շնորհ յոյժ ունիմ խնամոց Բարձրե-
“ լոյն, և շնորհաց նորին որ առ Ձեզ. և աղաչեմ զնա ունել
“ Ձեր միշտ զնոյն ի մխիթարութիւն և ի խնդութիւն մեր
“ ամենեցուն։

“ Ունել ունիք իրաւունս, Եղբայր, հրաժարելոյ ի հեռաբ-
“ թենէ կաթուղիկոսական պաշտօնէ, հայեցեալ յանբաւ նե-
“ զութիւնս և յանհնարին ծանրութիւնս նորին, և մանա-
“ ւանդ յայժմու հանգամանս ազգին մերոյ, յանարդ նա-
“ խանձն և յանմիտ փառասիրութիւնն եկեղեցականաց անտի,
“ որպէս և լսեմք։ . . . Այլ աւա՜ղ, զի ակնկալութիւն մեր
“ ի բարեաց անտի ի դերեւ ելանէ, յաջորդելով դարձեալ
“ զաթոռ Եպիսկոպոսապետութեանն անբաւականի . . . որ-
“ դեաք, ըստ սովորական բաղդին ազգիս, վասն որոյ և ցաւ
“ է ինձ անհնարին։ . . .

“ Կարծեմ և ես թէ բարւոք լիցի գտանել ձեզ յիշեալին
“ ի ժամանակի օծման Կաթուղիկոսին, զի ծանօթանայք ընդ
“ երեւելի անձինս որք յեկեղեցականաց և յաշխարհականաց
“ ազգիս, և գտանէք տեղի առաջարկութեան իրաց կարեւո-
“ ցաց ի յառաջադիմութիւն ազգիս ամենայն ուրեք և ամենայն
“ եղանակաւ, վարժարանաց և մատենից տպագրութեամբ,
“ այլովքն հանդերձ։

“ Յաղագս հանգամանաց մերոց գոհանամ զինամոց Տեա-
“ ռէն որով ողջ եմք, և շնորհ ունիմք այցելութեան նորի։“

„ որով այս արար մեզ առաքելով սուտ զՀ. Խորէն սան ձեր ,
„ ի մխիթարութիւն բացակայութեան ձերում ի մէնջ մարմ-
„ ին։

„ Իսկ յաղագս հանդամանաց վարժարանիս խնդամուտ էք
„ գուք արդէն, ի յաճախ գրութենէ Հ. Ամբրոսեայ, և դար-
„ մանոյ նորին ի համառօտ գրութենէ իմոյ որ ի նախընթաց
„ թուղթս առ ձեզ։

„ Փոխադարձ մաղթանաք վասն յերկար և քաջառողջ կե-
„ նացդ և յաջողութեան ամենայն գործոցդ

„ Մնամ միշտ

„ Յարգոյապատիւ Հայրութեանդ

„ Ի Փարիզ. 28 դեկտ. 1857.

„ Խ. Ծ. և հոգեհարազատ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՒՄՐԵԱՆ. „

Տեսեալ Պարոն Յ. Խալիպեանի Նախիջեւանցւոյ զպատիւ զոր տայ Ռուսաց տէրութիւն Գաբրիէլ վարդապետի Այվազեան, և անձամբ եւս ծանօթացեալ նմա վարկ մեծ կալնու զնմանէ և իրաւամբք, համեմատելով զնա ընդ այժմեան վարդապետաց որք յազգի իւրում... և յայտնէ նմա զցանկութիւն կամաց իւրոց, զհիմնարկութիւն ազգային ուսումնարանի միոյ ի Թէոդոսիա, ընդ Տեսչութեամբ նորին, մասամբ ինչ արծաթոյ զոր ունէր առ իւր իբրեւ աւանդ եկեղեցական՝ թողեալ ի հանգուցեալ Ներսէս Կաթուղիկոսէն, և մասամբ ինչ յարծաթոյ իւրոյ։

Խնացեալ զայն Գաբրիէլ վարդապետի ուրախ լինի յոյժ յոյժ, գովէ զցանկութիւն նորա և անուանէ զայն Խալիպեան ուսումնարան։ Ահա յայլ ինչ ձախողակի կարծիս զնմանէ անկանին ամենք յազգայնոցս անտի. քանզի աշառութիւն և անիրաւութիւն համարին զիրաւունս հասարակաց ազգին

անդ, մանաւորի անտի սեպհականել տալ նորա, և ահա արդարեալ անձնասիրութեան և փառասիրութեան ատամնօր միանգամայն յայտնապէս տեսանին, վասն որոյ և ցաւոց արժանի։ . . .

Լուեալ ազգայնոցս որ ի Պօլիս զհիմնարկութիւն Թալիպեան ուսումնարանին ի Թէոդոսիա ընդ տեսչութեամբ Գաբրիէլ վարդապետի, լքանին խապառ ի յուսոյ հաստատութեան Հայկազեան վարժարանին ի Փարիզ. վասն որոյ Խորասանճեան Պետրոս Աղայն որ զլուսի լինի կողման հաստատութեան վարժարանին ի Փարիզ, և ախոյեան հակառակ կողման նորին, հրաժարի խպաշուանէ իւրմէ, ինքնագահութենէ խնամակալաց ժողովոյն, պատճառելով զհիւանդութիւն իւր և հրատակելով զայն յանկարծ ի Մասիս լրագրին, առանց յառաջագոյն ծանուցանելոյ զայն զլիաւոր անդամոց ժողովոյն, և ոչ իսկ մտերիմ բարեկամին իւրոյ և աջակցին ի գործն յայն, Երամեան Կարապետ Աղային, որ խոստացեալ էր օժանդակել վարժարանին 50,000 ֆրանք, և որ տեսեալ զյետամիտ խորհուրդ և զմեղմեխ գնացս Խորասանճեանին գայթագղի և լքանի խապառ խառնիլ ի գործն յայն վարժարանին Փարիզու, այլ և յամենայն ազգային իրաց . . . թէպէտ և չունէր նա բնաւ իրաւունս արդարանալոյ յայնմ, գնելով զազգասիրութիւն իւր ի վերայ մտերմութեան բարեկամին իւրոյ . . . ահա արդարեալ ազիւութեան, չասից առաւել ինչ։ . . .

Տեսեալ զայս պակասութիւն այլ անդամոց խնամակալաց ժողովոյն՝ լքանին և նոքա ի յուսոյ հաստատութեան վարժարանին, հրաժարելով զլիաւորաց, և զլանալով ծնողաց մանկանց զտարեկան թոշակն. թէպէտ և մնան երկու ոմանք ի խնամակալաց ժողովոյն, Պարոն Մկրտիչ Մոմճեան և Պարոն Մկրտիչ Ազանդոն, բայց զինչ կարէին նոքա առնել, առ ի պահել զվարժարանն, պարտ էր նախ զպարտս նորին իբրև 50,000 ֆրանք հատուցանել, և ապա 4,000 ֆրանք ամոյ ամոյ անխափան հատուցանել ի ձեռս գործակալի նորին ի Փարիզ։ Թէպէտ և խոստանան նոքա զայն, այլ ոչ կարեն կատարել, վասն որոյ տագնապի անդնորին Սարգիս վարդա-

պետ մինչեւ հարկաւորի առաքել ի Պոլիս զգործակալն զՊարոն Նշան Քալֆայեան, առ ի պահանջել զմնացեալ տարեկան թոշակս ի ծնողաց մանկանց, և ի հոգալ զամսական 4,000 ֆրանք ծախուց վարժարանին, սակայն ի զուր, զի զամ մի կացեալ նորա անդ՝ չկարէ և ոչ զմին անտի կատարել։ . . .

ԳԼՈՒԽ Է.

Ողջոյն և հրաւէր ի Պօղոս Պէյէ Տատեան առ Սարգիս վարդապետ և պատասխանի նորա. — Նշանաւոր թուղթք վարդապետաց Գաբրիէլի և Սարգսի վասն բանի հաստատութեան Հայկազեան վարժարանին. — Թուղթ երախտագիտութեան աշակերտի մի՝ առ Սարգիս վարդապետ. — Թուղթ խրախուսակցութեան Մատթէոս Պատրիարքի առ Սարգիս վարդապետ և առ ընկերս նորա. — Նշանաւոր բանք թղթոյ Յովհաննու Պէյի Տատեան առ Սարգիս վարդապետ և առ ընկերս նորա. — Այցելութիւն Խաչատուր Կոմսի Լազարեան ի Հայկազեան վարժարան և բանք և թուղթք նորա. — Խնդիր Աղա Մկրտիչ Ճէզայրլեանի յԱմիրոսիոս վարդապետէ.

Ի սկիզբն 1858 ամի առաքէ Պօղոս Պէյ Տատեան զորդի իւր զՄկրտիչ Էֆէնտի ի Փարիզ յօգափոխութիւն, և ի ձեռն նորին ողջոյն առ Սարգիս վարդապետ միանգամայն և հրաւէր ի Պոլիս ի տուն իւր, զուշակելով զմօտալուտ փակումն Հայկազեան վարժարանին որում առնէ պատասխանի Սարգիս վարդապետ օրինակ զայս.

„ Մեծապատիւ Պօղոս Պէյի Տատեան ողջոյն սիրոյ և
„ Աստուածային օրհնութիւն։

„ Մեծաւ ուրախութեամբ ընդունեցայ աս անգամ ալ Ձեր

“ մեծութեան սիրալիր ողջոյնը զոր ազնիւ որդւոյդ ձեռքովն
“ էիք գրկած, և որչափ մեծ է երախտագիտութիւնս Ձեր
“ ըրած ինքնայորդոր և խնամալից հրաւիրանաց համար,
“ բայց կը ցաւիմ մեծապէս որ ժամանակիս պարագայներուն
“ ծանրութիւնը չեն ներեր որ կարենամ ընդունել։

“ Եւ իրաւցընէ, ինչպէս կրնամ թողուլ հեռանալ վար-
“ ժարանէ մը զոր այնչափ աշխատանօք և վշտօք կանգ-
“ նեցին, երբ կը խնամ Ձեր թղթէն թէ մօտ է կործանե-
“ լու։ Ա՞չ ապաքէն այն թշուառ ժամանակն առաւել հարկ
“ է ինձ ու պարտք, որ չթողում զայն ու չհեռանամ,
“ քան թէ իմ անձինս հանգստութիւնը նայելով, չնայեմ
“ չմոռանամ թէ իմ երիցուկից ընկերներ, ինչ ծանր նե-
“ զութեանց և վշտաց տակ կը հեծեն. և իմ Սիրելի ազգս
“ ինչպիսի յոյսերէ և բարիքէ մը, կուզեմ ըսել դպրոցա-
“ կան դատարակութենէ պիտի զրկուի, վարժարանիս
“ գոցուելովը։

“ Այս տխուր ու արտասուալից օրերը չեն կրնար ինձի
“ մոռացնել տալ. հապա մանաւանդ թէ աւելի եռանդեամբ
“ ու աւաղելով յիշել կուտան այն ցանկալի օրերը, յորս
“ Դուք ինքնին, Մեծապատիւ Ամիրայ, ճանչնալով մեր անձ-
“ նանուէր փոյթն և ազգասիրութիւնը, քաջալերէիք զմեզ
“ մեծամեծ խոստմամբք, որ ձեռն դարնենք անվեհեր վար-
“ ժարանին հիմնարկութեանը։ Մենք Ձեր Մեծութեանը
“ խոստմանց և ազգասիրութեան վրայ վստահացած, ամէն
“ արգելքներու, ամէն հակառակութեան թշնամեաց դէմ
“ եղանք, յաղթեցինք Աստուծով, և ամէն զոհ, ամէն ջանք
“ ընելով երբ թղթերով, բարեկամներով ու մեր օրագրին
“ ձեռքով բոլոր Ազգիս կաւելէինք վարժարանիս հիմնար-
“ կութիւնը, յուսալով որ ամէն ազգասէրք ձեռք կերկնցնէին
“ ու կրցած օգնութիւնին ընեն, և այս յուսով անսանելի
“ նեղութեանց մէջ կը տագնապինք, ահաւասիկ Ձեր Մե-
“ ծութիւնը, որուն կրկին և կրկին թէ բերնով թէ թղթե-
“ րով, և թէ ազնիւ որդւոյդ Մկրտիչ Էֆէնտիին ձեռ-
“ քով բրած խոստմունքներուն վրայ էր իմ առաջին ու մե-

„ ծագոյն յոյս յազգասիրաց և յիշխանաց ազգիս, Ձեր Մե-
„ ծութիւնը կըսեմ ինձի վարժարանիս գոցուելուն լեղի գործ-
„ կոայ։ . . .

„ Ա՛հ, Մեծապատիւ Ամիրայ, թէ որ գիտնայիք թէ ինչ-
„ պէս սիրտս վիրաւորուած է, և ինչպիսի՛ դառն արցունք-
„ ներ կը թափեմ Ազգիս խեղճութեանը ու իրեն իշխա-
„ նացը անմխիթարութեանը վրայ, գիտեմ որ այսպէս ան-
„ խնամ չէիք թողուլ զվարժարանս, և ձեռքերնէդ եկած
„ օգնութիւնը իրեն կընէիք։ Եւ ինչո՞ւ չեն իդար Ձեր Մե-
„ ծութեանը ձեռքէն. ինչ բարիքներ չկրնար յուսալ և ըն-
„ դունել վարժարանս. Ձեր անուանը ամէն տեղ հռչակե-
„ լով իբր գլխաւոր բարերարաց մէկը, մանաւանդ թէ առա-
„ ջինը։

„ Ա՛հ, այս պարծանքը փափաքեցէք ունենալ, վասն զի ողոր-
„ մութիւնը Աստուծոյ դիմաց՝ գիտէք որ ո՞րչափ մեծ վար-
„ ձուց արժանի է. ինչ աւելի գեղեցիկ ողորմութիւն քան իբր
„ ազգին խեղճ ու անկիրթ տղայոցը ապագայ երջանկութեանը
„ պատճառ ըլլալ, ու անոնց ու մեր բիւր օրհնութիւնները
„ լսել և ընդունել արժանապէս։

„ Զէ՞ Մեծապատիւ Ամիրայ, մի՞ թողուք այս խեղճ վար-
„ ժարանը, մի՞ թողուք որ ազգիս մէջ ծագած աւաղելի ու
„ անբաւ թշուառութեանց պատճառ եղող կուսակցութեանց
„ և վէճերու զոհ ըլլայ այսչափ ցաւօք ու վշտօք հիմնուած
„ տուն մը։ Մեր ազգասէր խնամակալաց ժողովը պէտք ունի
„ քաջալերութեան, քաջալերեցէք զայն, ո՛վ Մեծապատիւ
„ Ազգասէր Իշխան, ձեր խնամատուն խորհուրդներով ու ձեր
„ զօրաւոր օգնակցութեամբը։

„ Ընդունեցէք Մեծապատիւ Ամիրայ իմ բոլոր սէրս ու հոգս
„ զոր սիրութեամբս ունիմ Ձեր ազնիւ որդւոյն վրայ, և
„ փոխարէն Դուք ալ Ձեր Մեծութեամբը Ազգին խեղճ տը-
„ զայոցը օգնական եղէք ու գթացէք վրանին, և ըրէք, վասն
„ զի կրնաք, ըրէք որ քանի որ այն ծերացեալ ու արցունք
„ թափելէ յոգնած աչուներս չեն գոցուած, տեսանեն վար-
„ ժարանիս տիրանալն ու պայծառանալը, և օրհնեն զՁեզ և

„ Ձեր բարձր մեծաշուք ընտանիքը յաւիտենական երջանկու-
„ թեամբն փառաւորելու ։

„ Այս յուսով ու այս փափաքանօք կը մնամ

„ Ձեր Մեծութեանը

„ Ի Փարիզ. 7 յունվար. 1858.

„ Աղօթարար ծառայ

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՐԻՈՐԵԱՆ. „

Այսմ թղթոյ չառնէ Պօղոս Պէյ Տատեան զրով պատասխանէ, այլ բերանով, յորժամ Սարգիս վարդապետ ի Պոլիս գնայ ի հրաւիրանաց խնամակալայ ժողովոյն, զոր և յիշատակեցուք ապա ի տեղւոջ իւրում ըստ կարգի պատմութեանն ։

Պատասխանի Գաբրիէլ վարդապետի առեալ թղթոյ Սարգսի վարդապետի, յորում հաստատէ ինքնին զհակառակութիւն բանից որ ի նախընթաց թուղթ իւր, հայեցեալ յանհաստատութիւն վարժարանին ի Փարիզ, և ի գայթ ի գայթ գնացս Պոլսեցի ազգայնոցս, և խոստմանի տկամոյ զնպատակ Ռուսաց տէրութեան և զհաւանութիւն իւր ընդ այն, հայեցեալ ի հաստատութիւն ուսումնարանին ի Թէոդոսիա միայն. օրինակ զայս ։

„ Գերապատիւ և սիրելեալ Հայր.

„ Անագան ուրեմն ի 20 ամսոյս ընկալայ զյանկարին պա-
„ տասխանի Գեր. Հօրդ, զորոյ զառաքումն վաղ իսկ աւետա-
„ ւորեալ էր ինձ Հ. Ամբրոսիոս, ոչ գիտեմ ասոյդ տեղեկու-
„ թեամբ, եթէ ազիկամի և վարկպարագի գուշակութեամբ՝
„ ըստ հին սովորութեան իւրում ։ . .

„ Զյաւելումն ինչ ի խոհական խորհրդածութիւնս Ձեր յա-
„ զագս Կաթուղիկոսական բարձին, բայց ասեմ և եթէ զի և

„ յուղեւորութենէս յԷջմիածին յայսմ ամի հարկ է ինձ յեռս
„ կալ, որպէս զի կարող եղէց միտ դնել անհնարին բազմու-
„ թեան գործոց վիճակիս և պատրաստութեանց բացման ու-
„ սումնարանի և Դպրեվանից և տպարանի, և այլն, և այլն։
„ Իսկ ի գարնան 1859 տարւոյ, եթէ Տեառն կամք իցեն,
„ գնացից յԷջմիածին, ընդ իս թերեւս և Հարազատն իմ
„ Յովհաննէս, և դէթ մի ոք յերեցունցդ իմոց Հարց. իսկ
„ զԳեր. Հայրութիւնդ ցանկամ և ակնուսիմ առաջն տեսա-
„ նել և ի ամին իսկ տարւոջ ի վերջ կոյս ամարայնոյն, որպէս
„ զրեցից դարձեալ յիւրում ժամու և խնդրեցից։

„ Ընդ անվկանդ հաստատութիւն վարժարանիդ չեմ եւ
„ վստահ է սիրտ իմ, տեսանելով զդայթ ի դայթ գնացս
„ Պոլսեցի եղբարց. սակայն զամենայն փոյթ ի մէջ առնուլ
„ արժան է, որպէս ինձ թուի, զի մի՛ հանիցեմք ի ձեռաց
„ զանգինդ մեր զայդ Դուռան ոտից ի մեծի մայրաքաղաքիդ
„ զիտութեանց և արուեստից և առհասարակ ամենայն մարդ-
„ կեղէն կրթութեան և քաղաքականութեան. ըստ այսմ
„ գրեմ միշտ և ի Պոլիս։...

„ Աւետաւոր լուր հրամանի բացման Հայկազեան ուսում-
„ նարանի ի քաղաքիս եղից խնդութեամբ զսիրտս ամենայն հա-
„ մազգեացն մերոց, և ակն ունիմ զի առատին յառաջիկ իսկ
„ տարւոյ հաստատութեան հաւաքեցին ի սմա աշակերտք ոչ-
„ ինչ պակաս քան զ60 լիութ-ոշակք, և 40ու չափ կիսութ-ոշակք։

„ Առի կարէ՛ք ի միտ առնուլ թէ ո՛րքան պէտս ունիմ
„ քաջագործ օգնականաց ի վիճակի առս խնամ։ Այլ զոյս-
„ մանէ և զայլոց այսպիսի պիտոյից մերոց գրեցից դարձեալ
„ բազում ինչ։...

„ Ողջ լինել ըղձանամ

„ Գերապատիւ Հայրութեանդ

„ Թէոդոսիա. 27 փետր. 1858.

„ Ն. և Հոգեկցորդ ապօթ-աղաչ

„ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶՈՎՍԿԻ.“

Ոչ ապաքէն հակառակութիւն բանից և գործոց զոյ ի թուղթըս Գարրիէլ վարդապետի. քանզի ի նախընթաց թղթի իւրում ասէ. «զԵր. Հայրդ աղաչեմ երկայնամտել փոքր միւս «եւս ժամանակ, մինչեւ տեսցուք թէ զինչ պատրաստեալ «իցէ մեզ Տէր։» և թէ «Մի՛ վհատիք ի կաղ և ի կասկածոտ «գնացից աւագանւոյն Պօլսոյ։» իսկ ի վերջին յայս թղթի իւրում ասէ նախ՝ թէ, «Ընդ անվկանդ հաստատութիւն «վարժարանիդ չեւ եւս վտահ է սիրտ իմ, տեսանելով «զգայթ ի գայթ գնացս Պօլսեցի եղբարց. զամենայն փոյթ «ի մէջ առնուլ արժան է, որպէս ինձ թուի, զի մի՛ հանի-«ցեմք ի ձեռաց զանդինդ մեր զայդ կռուան ոտից ի մեծի «մայրաքաղաքիդ գիտութեանց և արուեստից, և առհաստ-«ատակ ամենայն մարդկեղէն կրթութեան և քաղաքականու-«թեան, ըստ որում գրեմ միշտ և ի Պօլիս։» Այսպա յետ ծանուցանելոյ զաւետաւոր լուր հրամանի բացման ուսումնարանին որ ի Թէոդոսիա, ասէ. «Ատոր կարէք ի միտ առնուլ «թէ ո՛րքան պէտս ունիմ քաջագոտի օգնականաց ի վիճակի «սատ իմում։»

Այլ թէ ուստի՛ լցէ այս հակառակութիւն բանից և գործոց նորա... ո՞չ ապաքէն յանձնասիրութենէ և ի փառասիրութենէ... զոր և ցուցցուք հաւաստեօք ի սմին ապա։

Թէպէտ և այս այսպէս, ըստ բախտին ազգիս, սակայն Սարգիս վարդապետ տակաւին բարեմտութեամբ և քաղաքավարութեամբ վարի ընդ նմա, տալով պատասխանի թղթոց նորին, օրինակ զայս.

«Յարգոյապատիւ Հօր և սիրելւոյ եղբօր ողջոյն կա-«ցուցանիս։

«Ընկալեալ զցանկալի պատասխանին Սիրելւոյդ, զոր-«ւեալն ի 27 անցելոյն, մխիթարեցայ և խնդացի յոյժ, նախ «ընդ լուր պատուական ողջութեանդ խնամօք Տարձրելոյն, «ապա ընդ լուր յաջողութեան գործոյդ օգնականութեամբ

“ Նորին, զոր և աղաչեմ ունել զնոյն միշտ առ Ձեզ ի խնդու-
“ թիւն մեզ և յօգուտ կարօտելոյ ազգիս ։

“ Արդարեւ դուռն մեծ բացեալ է Ձեզ սիրելի, վասն որոյ
“ և կարօտ է դուք օգնականի, և արդարեւ ի դէպ գոյ
“ Ձեզ ասացեալն փրկչին մերոյ, թէ “ Հունձք բազում են
“ “ և մշակք սակաւ, արդ աղաչեցէք զՏէր հնձոց զի հանցէ
“ “ մշակս ի հունձս իւր ։ ”

“ Ապաքէն ցանկալի էր և ինձ և քաղցր յոյժ տեսութիւն
“ ընդ Սիրելւոյդ այդր, բայց ըստ բախտին իմոյ սակաւին ոչ
“ հանդեաւ սիրտ իմ ի հոգոց ասի, ընդ հաստատութիւն
“ վարժարանին, զորոյ կարեւորութիւն դուք ինքնին և քաջ
“ ճանաչէք, այլ Ջանայք խելամուտ առնել զազգս որ ի Պոլիս
“ դրութեամբդ միշտ ։

“ Երանի՛ թէ մարթ էր Ձեզ զնոյն առնել և ազգայնոցս
“ որք ի Ռուսիոյ տէրութեան, յղել նոցա ի վարժարան
“ զքանի մի ի մանկանց իւրեանց, իբրեւ յուսումն կարեւոր
“ արուեստից, ընդ այս ոչ կարծեմ հակառակիլ տէրու-
“ թեանդ ։

“ Եթէ յաջողեցի այս ցանկութիւն իմ, ոչ միայն քաջա-
“ լերութիւն լիցի Պոլսեցւոց, այլ և յանդիմանութիւն ապի-
“ տութեան նոցա, չճանաչելով ցարդ զյարդ վարժարանիս,
“ և մեզ ոչ սակաւ համարձակութիւն առ նոսա յայնմ հե-
“ տէ, վասն որոյ աղաչեմ զՁեզ Ջանացարուք փորձել զայն
“ որչափ մարթ իցէ և հնար ։

“ Ոչ կամիմ յաւելուլ Ձեզ և այլ հոգս, այլ տամ տեղե-
“ կութիւն միայն, և է այս .

“ Տպագրեալ մատեանք իմ որք յԸշտեմարանի ուրեք ա-
“ ռանդեալք ի Փարիզ, տպակոնեցան և կորեան անտի բա-
“ զում օրինակք. ի Վարուց Ցիսուսի պակասին 500 օրինակք.
“ ի Պատմութենէ Մուրատեան վարժարանին պակասին 55 օ-
“ րինակք ի 500 օրինակաց անտի ։ Պատմութիւնս այս, որ-
“ պէս լուայ, յածի ի ձեռս բազմաց ի Պոլիս . այլ թէ զիարդ
“ տարեալ և հրատարակեալ իցէ այնր անդ, ոչ կարացի ես
“ գիտել ցարդ . . . վասն որոյ խորհուրդ եռուն ինձ ոմանք

„ ի բարեկամացս, թէ ի զուր է պահել իմ զայն այսուհետ-
„ սեւ, այլ առաքել անդ և այլուր ի վաճառս, և վասն որոյ
„ հրատարակեցի ես զայն։

„ Այս ամենայն վեսա եկն ինձ ի վարժարանէս, տարսդ
„ տեղի անենկարնակ աշակերտաց. թողից ասել զկորսանել,
„ այնչափ գումար արծաթոյ գողացելոյ ի սենեկէդ։

„ Մնամ

„ Յարգոյապատիւ Հայրութեանդ

„ Ի Փարիզ. 24 մարտի 1858.

„ Հոգեկցորդ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՄՐԻՈՐԵԱՆ. ”

Պատասխանի Գարրիէլ վարդապետի տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի, յորում ցուցանէ դարձեալ զնոյն հակառակ միտս և զգործ իւր որ ի խնդիրն յայն վարժարանին, և խոստմանի զճշմարտութիւն, զնպատակն Ռուսաց տէրութեան, և զհաւանութիւն իւր ընդ այն։... Թէպէտ և ցաւի նա ընդ կորուստ տպագրեալ մատենից, այլ ոչ դարման տանի այնմ արդարութեամբ, յուսով միայն վերին զնա, և անոտի յուսով, օրինակ զայս.

„ Գերապատիւ Տեառն և սիրելոյ Հօր Սարգսի վարդապետի ողջոյն սիրալիր կարօտանաց։

„ Սղութիւն ժամուս բուռն առնէ ինձ կարճ ի կարճոյ տալ
„ պատասխանի գրելոցն ի Գեր. Հայրութենէդ ի 24 անցելոյն։

„ Սիրաք Ձեր որպէս և իմս ոչ եւս հանգիցեն այսուհետեւ
„ մինչեւ տեսանիցէք զվարժարանդ և զՁեզ անկախս ի յա-
„ բարեմոխ բարուց և ի գնացից ազգայնոց Պօլսոյ. ապա
„ սրեմն այսմ անկախութեան պարտիմք լինել հետամուտ,
„ եթէ գուցէ հնար, որպէս և Գեր. Հայրդ բազում անգամ
„ ասէր ի կանխատես խորհրդածութիւնս իւր։

„ Աստուծմէ պատանեաց ոմանց ի կողմանցս յայսցանէ
„ այդր առ ժամս դժուարին է յոյժ, և զանազան կասկածա-
„ նաց տայ առագանուոյն պատճառս, բայց յետ շրջից կամ
„ հնգից ամաց բարձցի դժուարութիւնն այն, ընդ այս չիք
„ ինչ երկբայութիւն ։

„ Յաւեաց ինձ յոյժ յոյժ ընդ ապականութիւն և ընդ
„ կորուստ տպագիր մատենիցն. և չիցէ՞ արդեօք հնար կամ
„ ակնկալութիւն ի ձեռս բերելոյ զկորուստն ձեր և զփոխա-
„ րէն վնասուն. ուր մնայ ապա գործունէութիւն Հ. Ամբրո-
„ սիոսի մերոյ, մանաւանդ թէ հարազատացն երկոցունց ։

„ Ընդ սիրելի օրինակաց պատմութեան Մ. վարժապետին
„ ուրախ եմ, քանզի տարաւ. տեսցուք թէ իշխեսցէ՞ ճիկ
„ հանել Յովհաննէս Մուրատ ։ . . .

„ Մնամ

„ Գերապատիւ Հայրութեանդ

„ Թէոդոսիա. 15 ապրիլ. 1858.

„ Հոգեկցորդ և Նուաստ եղբայր

„ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ. „

Գատասխանի աշակերտի մերոյ Հայկազեան վարժապետին տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի զոր արժան համարիմք յիշատակել ի սմին իբրեւ զնուէր յերախտագէտ մտաց և որ ունի օրինակ զայս.

„ Ամենապատիւ և Ազգասէր Հայր իմ.

„ Մարտի 7ին գրած վանմազրիչ սիրոյ Նամակդ երէկ ընդ-
„ դունելոսս՝ չեմ կարող գրոսս նկարագրել զգալի ուրա-
„ խութիւնս Ձեր Հայրութեանը ։

„ Բարեխնամ Վերատեսուչ իմ, Նամակդ ձեռքս առի ու

„ կարդալու առեն այնպիսի արտասունք թափեցի որ մինչեւ
„ անգամ ընտանեացս ալ ցաւ եղաւ ու ստիպեցան ինձի
„ հարցընել թէ ինչ է մոռածմունքդ, ես ալ պատմեցի Ձեր
„ Ամենապատուութեան ինձի ունեցած խնամքն ու գութը
„ որ անկարելի է ինձ մոռանալ մինչեւ ի մահս. և այն կտորը
„ զիս աւելի լացուց որ գրուած էր չորրորդ տողին մէջ,
„ քո յիշատակդ մեծ է ինձի, ու քո գրած խօսքերդ մէյ
„ մէկ միջեր անոյշ կաթիլներուն պէս ծաւալեցան արտիս
„ վրայ: Ահ արդեօք ինչ էի գրած որ ձեր քաղցր սիրտը կը
„ ծաւալեցներ, ես կը ճանչնամ իմ ատիճանս, կը ճանչնամ
„ տկար գրիչս նոյն անպիտան անձս. բայց Ձեր սրտին վեհ-
„ մութիւնը, քաղցրութիւնը, զգայի մաքրութիւնը, Ձեզի գրել
„ տուած է այս խօսքերը ինձի պէս չնչին ու տկար անձին մը
„ արժանի տեսնելով: Ահ փառք կուտամ միշտ ու կը խնդրեմ
„ Ամենակարողէն որ զիս ողջ պահելով արժանի ընէ մէյ մալ
„ գոնէ Ձեր սրբութեան աչ առնելու ու Ձեր հայրական խօս-
„ քերը վայելելու. շատ անգամ ըսած եմ, և նորէն կը կրկ-
„ նեմ խօսքս առանց կեղծաւորութեան որ ունեցեր եմ պա-
„ տիւ Ձեր հրամանոց պէս արժանայարդ անձանց աշակերտ
„ ըլլալ, և երանի կտամ ընկերներուս որոյ ուրախութիւն
„ կը վայելեն Ձեր երից փառքը ու պատիւը:

„ Ուրուն Ամենաշուք Վերատեսուչս իմ ներեցէք նա-
„ մակի տկար գրուածքին և մխիթարեցէք Ձեր վեհմ գրչին
„ առթիւ անարժան աշակերտիդ որ միշտ կրապատէ Ձեր
„ Հայրութենէն:

„ Մնամ Ամենապատիւ և Ազգասիրամ Վերատեսուչ
„ Բարեխնամ վարդապետ

„ Ի Պոլիս. 9 ապրիլ. 1858.

„ Անձնանուէր և երախտագէտ
„ Աշակերտ
„ ԳՐԻԳՈՐ ԽՕՆԶԿԵԼԵԱՆ. „

„ Թուղթ խնդակցութեան Մատթէոս նախկին Պատրիարքի
Կոստանդնուպօլսոյ առ Սարգիս, և Խորէն վարդապետս
ի Փարիզ, հանդերձ ընծայիւ, երկու օրինակ Բարի մարդ և
և Բարի Քրիստոնեայ անուանեալ մատենիւ, օրինակ զայս.

„ Արժանապատիւ և Հոգեհարազատ Եղբարք մեր սիրե-
„ լիք ի Տէր.

„ Ոչ սակաւ բերկրութիւն սրտի և հոգւոյ նուիրել փու-
„ թացայք առ լրութիւն ողջամիտ Ազգայնոց մերոց, այն ինչ
„ յայտ յանդիման ամենեցուն ի ճշմարտութեան լուսաշաւիղ
„ ճանապարհ արիաբար ընթանալ ցուցիք ի բարեկրօն յան-
„ ձինս ձեր պատուականութեան. եւս զնոյն փայլեցուցանել
„ ճգնիք սրտի մտօք ըստ ամենայնի յուսացեալ յամենա-
„ զօր շնորհս սուրբ Հոգւոյն.

„ Եւ ոչ այսչափ միայն, այլ և քաջաւէտ ոքնութեամբ
„ Ձանայք զանշինջանելին ճրագ ճշմարտութեան և ուղղափա-
„ ռութեան Կաթուղիկէ և առաքելական սուրբ եկեղեցւոյն
„ մեր ոչ բնաւ երբէք ծածկել կամ թաքուցանել ընդ գրուա-
„ նաւ աշառութեան և կողմնակցութեան, շահասիրութեան,
„ և անհոգութեան, այլ յաւէտ փութայք դնել յերեսան
„ և անպատրուակ կացուցանել յաշտարակի բարձրաձայն և
„ և անվեհեր յայտնաբարբառ քարոզութեամբ, որպէս իս-
„ կական քարոզիչ բանին ճշմարտութեան, որով յիրաւի
„ զերանութեանն ընդունիք զամենացանկալին Պատկ.

„ Նա մանաւանդ համբերատար ոգւով յաղթող հանդիսա-
„ նայք հակառակասիրացն անխիղճ յարձակմանց, համանը-
„ մանեալ Սրբազան Անօթոյն ընտրութեան գիտէք այնպի-
„ սեաց տալ խրատ պատասխանին, եթէ „Զցաւութեան
„ և ճշմարտութեան բանս Բարբառիմք.„ —

„ Տինա շնորհիւ սուրբ Հոգւոյն ճշմարտութեան քաջ իսկ
„ խրախուսեալք այս՝ կարողանայք զամենայն խոչընդոտն և
„ զարգելիչս բարենպաստակ դիտաւորութեան Ձեր վանել,
„ մերժել ի սպառ, առ ի բեղմնաւորս արդիւնաւորել զբարի

„ բարի սերմանս զանազան խնամոց և գիտութեանց ի բանա-
„ էր յանդս մոաց Հայկազեանցս ուսումնասենչ մանկանց։
„ Ապա յաւելի ցնծացել յուրախութիւն մեծ ազգին մեր
„ բարեսէր լրութիւն, զոր ապացուցի Նոյեան որոի և Հոգ-
„ էոյ մխիթարութեան և ցնծութեան զոր ստացաւ բարենշան
„ շիւղիւ ձիթենւոյ ի բերան աղաւնւոյն վերադարձ թռուցեալ
„ հասանելոյ ի տապան անդր, որ կայր անխոտանգ ի Մա-
„ սեաց լերին բարձրացեալ։

„ Ահա զոյն ճշգրտեալ ցուցանէք հրատարակելով զանձկա-
„ լին խմբագիր յանուն Մասեաց Աղաւնւոյ, յորում յաւէտ
„ ճգնիք աւետել, ոչ միոյ անձին և ութ, այլ ամենեցուն, որ
„ զՆոյեան ունին զարդարութիւն և զողջմտութիւն, Փերօ-
„ բինակ տեսութեամբ շիւղոյ ձիթենւոյ, զմշտադալարն ասեմ
„ զճշմարտութիւն և զհաստատուն ուղղափառութիւն առաք-
„ ելեղեցւոյն մեր։

„ Արդ առ այսչափ Հոգեւորական և Ազգաշէրտակ բարգա-
„ ւաճ բարեմասնութեանս Ձերդ Հոգեհարազատ Եղբարց Մի-
„ բեղեաց յարգանօք նուիրի ինչան ներքին սիրակցութեան
„ մեր երկու օրինակ Բարի մարդ և բարի Քրիստոնեայ անուա-
„ նեալ մեր նուաստս զրչի իբր արդիւնք։ Նա զի միայէ սիրա-
„ իմ, ութ է անշուշտ պատուասիրի ի Ձէնջ։

„ Որով մնամ միշտ բարեմիտակ կեցութեան և անդորրիչ
„ բարօրութեան Ձեր մեծարութեան յաւէտ ցանկացող ի սիր-
„ տէ,

„ Յարթագիւղ Կ. Պոլսոյ. 20 մայիս. 1858.

„ Նուաստս ծառայ Տեառն

„ ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

„ Նախկին Պատրիարք Կ. Պոլսոյ։ „

Յայսմ ժամանակի ի Փարիզ լինի Սարգէլ Էֆէնտին, որդին Յովհաննէս Պէյի Տատեան, որ ամուսնի միով յառաջ գնայ անդ վասն գործառնութեան խրոյ, և որոյ ձեռամբ եղանեն ի Հայ-

կաղեան վարժարանէն որդիք Մխաքեան Նիկողայոս ազգի, և գնին ի դպրոց Գաղղիացւոց ի Փարիզ։ Թէպէտ և նա հաճեալ ցուցանէ զինքն ընդ բարեկարգութիւն Հայկազեան վարժարանին, և մտերիմ բարեկամ վարչաց նորին, թէպէտ և խոստանայ հանդերձ երաշխաւորութեամբ հաստատանել զմնացեալ թոշակս Մխաքեան պատանեացն, այլ ոչ հաստատանէ ինչ, պատճառելով զզլացումն կամաց հօր նոցա, վասն որոյ և յաւելուն պարտք վարժարանին։

Հետեւելով նմա և այլոց ոմանց ի ծնողաց աշակերտաց Հայկազեան վարժարանին հանեն զորդիս իւրեանց ամսոյ և գնեն ի դպրոցս Գաղղիացւոց ի Փարիզ, և կամ դարձուցանեն ի Պոլիս, առանց հաստատանելոյ զմնացեալ թոշակսն։

Իրրեւ պատրաստի Սաքէլ Էֆէնտին դառնալ ի Պոլիս՝ ուստր միով յառաջ հրաւիրէ զվարդապետս հաշել ընդ իւր ի պանդոկի բնակութեան իւրոյ, և իրրեւ եկանէ նա ի ճանապարհ՝ յուզարկաւորին զնա երեքին վարդապետք, և ասեն նմա զհրաժարական ողջոյն ոսանաւոր բանիւք գրութեան, և այնպիսի պատուոյ բանիւք՝ մինչեւ յարտասուս հարկանի։

Յանձնեն նմա վարդապետք նամակ մի ի դիմաց իւրեանց առ Յովհաննէս Պէյ հայր նորա, յորում յայտ առնեն զշնորհակալութիւն իւրեանց որ ընդ մտերիմ բարեկամութիւն Սաքէլ Էֆէնտիի և զցաւս զրկելոյ ամսոյ, հանդերձ այլ քաղաքավայել բանիւք։

Թէպէտ և այսպէս բաժանի նա ի վարդապետաց դառնայ ի Պոլիս, այլ ոչ գիտեմք թէ զինչ ինչ խօսեցեալ էր ամսոյ հօր իւրում զնացեալ, ընդունին նոքա ամսոյ յանդիմանական և նախատական պատասխանի թղթոյ իւրեանց, ընդ որ ապշեալ հիանան։ . . .

Ոչ արժան համարիմք յիշատակել ի սմին զօրինակ պատասխանւոյն, զի երկայնաբան և ձանձրալի է յոյժ այն, և մեզ և վերծանողաց կրթեսա ժամանակի, այլ միայն զիմաստս նշանաւոր բանից նորին, որոց առաջին է, թէ Մարդիս վարդապետս Զիրաւանց և զպարտուոց ձառէ, այլ պատուի ինքն ի պարտս իւր,

չգնելով ի ճակատ գրոց անդ զանուն Պատրիարքին։ Երկրորդ՝ թէ չմատուցանէ նա անդ շնորհակալութիւն տէրութեանն որ վասն պահպանութեան ազգին իւրոյ. զի եթէ չլինէր, ասէ, տէրութիւնն այն, չմնայր այսօր անուն անգամ ազգին Հայոց. թողու զընդհատակ կարծիս իւր զոր ունէր երբեմն ի Փարիզ և առաջի վկայից։... Երրորդ՝ թէ ընդէր Սարգիս վարդապետ յիշէ միայն զմին ի պարգևաց իւրոց, զոսկեռուփն քթախոտի, և լռէ զայլ մնացեալս, (զոսկի գրիչ մի և զմոքրիկ խաչ մի ոսկի, որոց արժէք 300 Ֆրանք։) Չորրորդ՝ Խորէն վարդապետ անվայել ոտանաւոր ինչ յօրինէ։... Հինգերորդ՝ թէ երիքին վարդապետք ապստամբք են ի Մխիթարեան միաբանութենէն։ Ահա այսոքիկ են իմաստք բանից պատասխանւոյ նորին։...

Յետ երկուց աւուրց անտի ընդունի Սարգիս վարդապետ և այլ թուղթ մի ի Յովհաննէս Պէյէ Տատ, յղեալ նորա զոյն այլ ճանապարհաւ, ընդ Վենետա, Թէպէտ և ձանձրալի գրութեամբ, այլ ոչ նոյնպէս նախատական բանիւք իբրեւ զառաջին. ընդ որ և խնդրէ թողութիւն, իբրեւ ընդ բարեկամական ազդարարութիւն։...

Սարգիս վարդապետ և ոչ ոքեմ արժանի համարի առնել պատասխանի, այլ ցաւի միայն ընդ բախտն ազգիս զի այսպի՛սի Ազգապետ ունի նա ի Պոլիս։...

Եւ յայսմ ժամանակի գնայ ի Փարիզ Խաչատուր կոմս Լազարեան, հանդերձ ընտանեօք, և գնայ յայց Հայկազեան վարժարանին. հաճի նա յոյժ ընդ տեղին այն, և քննեալ զաշակերտան գովէ գյառաջադիմութիւն նոցին, և նախադասէ զայն վարժարանին որ ի Մոսքուայ, բայց ցաւի ընդ տակաւութիւն թուոյ աշակերտացն, և իբրեւ հարցեալ իմանայ զպատճառն՝ զպակասութիւն արծաթոյ, ասէ, պարտ է դարման տանել այնմ. և հրաւիրէ զՍարգիս վարդապետ գնալ ի վաղիւ անդր առ նա խորհել ընդ նմա վասն այնր։

Ի վաղիւ անդր գնայ առ նա Սարգիս վարդապետ և ժամս երկուս խօսի ընդ նմա. և նախ լինին բանք զծախուց տպագրութեան Հայ և Գաղղ. բառարանին յօրինելոյ ի Հ. Ամբրոսիոս վարդապետէ, և ի խնդրոյ Սարգսի վարդապետի խոստա-

նայ նա երբեմն հատուցանել զծախս տպագրութեան նորին. ապա զլանայ զայն զանազան պատճառանօք, այլ կամի վասն 50 և եթ օրինակաց նորին և իբրեւ հանդգնանութեամբ ստորագրել, և առ ի հաճել զկամս Սարգսի վարդապետի յանձն առնու ստորագրել վասն 200 օրինակաց նորին, 5,000 ֆրանք զոր և հատուցանէ ապա Ամբրոսիոս վարդապետի։

Ապա լինին բանք զլիճակէ Հայկազեան վարժարանին, թէ քանի՛ օգտակար էր այն համօրէն ազգիս, և թէ պարտ էր առնել ստորագրութիւն հանգանակութեան յամենայն տեղիս ուր գտանին հայք, առ ի նպաստել վարժարանին և ի մշակելենաւորել զայն։

Եւ յասել Սարգսի վարդապետի թէ կարօտի այն գործ հզօր արանց որք յամենայն կողմանս, ասէ Խաչատուր Կոմս, թէ վասն ազգայնոցս որք ի տէրութեան Ռուսաց ինքն յանձն առնու զհոգն այն, գրել առ ամենայն Առաջնորդս, օժանդակել Հայկազեան վարժարանին ի Փարիզ։ «Մանաւանդ «Գաբրիէլ վարդապետ ձեր, Ասէ, որ Առաջնորդ է երից «նահանգաց հարկաւ օժանդակեցէ այնմ։ Իսկ վասն ազ- «գայնոց որք ի տէրութեան Տաճկաց, անկանի, ասէ, Պատ- «րիարքաց Պոլսոյ և Երուսաղեմի, հաւաքել նոցա բաւական «արծաթ և առաքել յօժանդակութիւն Հայկազեան վարժա- «բանին։»

Իբրեւ խօսին նոքա զայնմանէ, գնայ անդ Յակոբ Էֆէնդի Կրճիկեան, որում և երկրորդէ զնոյն վերայիշեալ բանն։ Գոմէ նա զկարծիս նորա, և ասէ, եթէ լինիցի օգնութիւն ի Ռուսաստանի հայոց վասն 30 մանկանց, և նոյնչափ ի Տաճկաստանի հայոց, յայնժամ հանապազորդեսցէ Հայկազեան վարժարան ի Փարիզ և օգուտ մեծ լիցի ազգիս։

Ի վաղիւ անդր դարձեալ գնայ Սարգիս վարդապետ առ Խաչատուր Կոմս Լազարեան, և խնդրէ ի նմանէ գրով տալ զկարծիս իւր առ նոսա յորոց ակնուն էր գտանել օգնութիւն վարժարանին։ Հաւանի նա խնդրոյ նորա յօժարութեամբ, և ասէ յօրինել նորա զթուղթն ի դիմաց իւրոց, և ինքն հաս-

տառեալ զայն տապեցէ առ նոսա ի Պոլիս և յԵրուսաղէմ, առ Պատրիարքս, և յԷջմիածին առ Կաթուղիկոս, և առ Առաջնորդս ի Ռուսաստան։

Յօրինի թուղթն ի Սարգսէ վարդապետէ և յընկերաց նորա բան կարծեաց Խաչատուր Կոմսին և ի գլխաց նորին և հաստատի այն անուն, և տարի առ վերոյիշեալ անձինս։

Ապա գնայ Սարգիս վարդապետ հանդերձ ընկերօք իւրով առ Կոմս Լազարեան ի շնորհակալութիւն ընդ այն ազգասիրական հոգ և փոյթ նորա։ Որպէսզի նա յոյժ և խրախուսէ զնոսա վիճիթար և քաջալեր բանիւք։

Թէպէտ և հաստատէ թուղթն այն Կոմսին ի ձեռս իւրաքանչիւր նոցա անխախտան, և հաւատին նոքա ընդ այն, ասելոյն արդիւնք ոչ տեսանին երբէք . . . և ոչ իսկ Կոմս ինքն բան ճանաչման իւրում և բան բանից խոստմանն առնէ ինչ, թէպէտ և ճոխ և անժառանգ, բայց միայն ի դառնալոյ։ . . .

Ոչ աւելորդ ինչ համարիմք յիշատակել ի սմին և զանցս մի անակնկալ ոչք յոյսմ ժամանակի անցանեն, յառաւել քան հոգս և ի ծանրութիւն բնաւանց Սարգսի վարդապետի։

Ճէզարեանն Մկրտիչ Ամիրայն յետ երանելոյ ի բանտէն և թափառելոյ ի Մալթա և ի Լոնդրա, ուր վասնէ նա խնդեչութեամբ արծաթ բազում, և ի դարձին իւրում ի Պոլիս հասեալ ի Գերմանիա զակտոր նմա արծաթ վասն ծախուց ճանապարհին. և ի տագնապել նորա ընդ այն ազգ առնէ հեռագրութեամբ Ամիրային վարդապետի ի Փարիզ հասուցանել նմա 3,000 ֆրանք, խոստանալով հասուցանել զայն հանդերձ վաշխիւն ընդ հասանել իւր ի Պոլիս։ Եւ ի չկարել Ամիրային վարդապետի կատարել զխնդիր նորա՝ կամի առնել նմա զլացութեան պատասխանի։ Ասէ ցնա Սարգիս վարդապետ. այրս այս երբեմն երեւելի յազգի մերում, և ձեռնաւ կարօտելոց ազգին իւրոյ, և քեզ նպաստաւոր, շահելով ի յանձնարարեալ իրաց անտի նորին, բան բանից քոց, պարտ է քեզ արդարանալ նմա ի կարօտութեան իւրում, հայթայթել ուստեք փոխ արծաթ և հասուցանել առ նա

փութով, ոչ կարծեմ, ասէ, թէ զլացի նա հաստատանել զայն ըստ խոստման իւրում։

Հաւանի Ամբրոսիոս վարդապետ բանից նորա, կատարէ զինդիր Մկրտիչ Ամիրայի, գտանելով ուստեք փոխ արծաթ 3,000 ֆրանք, և հատուցանելով զայն առ նա վաղվաղակի։

Ընկալեալ Մկրտիչ Ամիրայի զարծաթն զայն՝ առնէ պատսխանի Ամբրոսիոս վարդապետի այսպէս. «Թէպէտ և «յառաջ քան զհատանել յղեալ արծաթոյդ, հոգացեալ «էի ես զայնմանէ այլուստ, և չունէի ոչնմ պէտս, այլ ընկալայ և զայն, զի մի ի զուր լիցի աշխատութիւնդ, որում «շնորհ ունիմ յոյժ։»

Ի պատասխանւոյ նորին ասէ տեսանէ Սարգիս վարդապետ հանդերձ ցաւոք սրտի, զի ի թշուառ վիճակի իւրում անդ՝ տակաւին ոչ էր զգաստացեալ նա յանմիտ ամբարտաւանութենէ իւրմէ անտի։ . . . Արդասիք տգիտութեան։

Այլ թէ ելրք և զիարդ հատուցանէ նա զպարտս իւր զայն, և թէ զի՞նչ վիճակութիւն անտի Սարգսի վարդապետի յիշատակեցուք ապա ի տեղւոջ իւրում ըստ կարգի պատմութեանս։

ԳԼՈՒԽ Ը.

Թուղթ հրաւիրական խնամակալաց ժողովոյն առ Սարգիս վարդապետ ի Փարիզ. — Թուղթ Պարոն Մկրտիչ Մոնձեանի առ Սարգիս վարդապետ վասն բանի հրաւիրական. — Թուղթ Սարգսի վարդապետի առ Գաբրիէլ վարդապետ վասն բանի հրաւիրական իւրոյ ի Պոլիս. — Կարեւոր գործ Սարգսի վարդապետի ի Փարիզ, և երթ նորա ի Պոլիս. — Ճանապարհորդութիւն և ժամանումն Սարգսի վարդապետի ի Պոլիս, և այցելութիւն նորա առ ազգայինս. — Լքուցիչ բանք Պօղոս և Յովհաննէս Պէյից Տատեան առ Սարգիս վարդապետ. — Խրախուսական բանք Մատթէոս Կարողիկոսին առ Սարգիս վարդապետ. — Բարեբարութիւն Եպիսկոպոս Տիկնոջ Երուանդեան առ Սարգիս վարդապետ.

Յուսահատեալ խնամակալաց ժողովոյ զդարմանոյ կարօտութեան վարժարանին ի Փարիզ, խորհի հրաւիրել զՍարգիս վարդապետ ի Պոլիս, զի թերեւս պատկառեալ ազգայնոցս ի ծերութենէ նորին չարժեսցին օժանդակել այնմ. վասն որոյ գրէ առ նա թուղթ հրաւիրանաց, օրինակ զայս.

“ Գերապատիւ և բազմերախտ Տէր.

“ Զեր սրբութեան բազմարդիւն կենաց պատմութիւնը, որ “ զգոն մանկութեան հասակէ ի վեր մինչեւ յայսեւոյթ ծերու- “ թիւն պատկառելի, իբրեւ ազգային սիրոյ միակ յատկա- “ ցեալ անձնանուէր պաշտօնեայ՝ ընդհանուր Ազգիս ու հա- “ տարակաց՝ արդիւնաւոր ծառայութիւններ յըստաստհար- “ կելոյ երբէք դադարած չըլլալը՝ արդէն ճանչցըված ու “ աշխարհաբար գոմութեամբ հռչակված է ոչ միայն ի մեր

“ Ազգայնոց այլ և շատ յօտարազգի մարդկանէ . և քարո՛զ
“ ճշմարտութեան եղած կըլլամք եթէ կընքե՛մք , թէ արգարեւ
“ ձեր արքութեան բազմաքիրտն կենաց շրջանը իրրեւ նկարա-
“ գիր անաւգիւտ ու առաքինի կենաց և իբրեւ հանդիսարան
“ ճշմարիտ Ազգասիրութեան վկայելի է յամենայն դարս և
“ պարծանաք հռչակելի . որովհետեւ ամենայն ճիգն և փոյթ
“ և նպատակ՝ բոլոր Ազգային ապագայ բարեաց և նորին
“ բարեբաստութեան նուիրեալ է , և տակաւին այդ փառաւոր
“ ծերութեան ալեզարդ հասակի՝ ձեր անխոնջ իղձը վառ և
“ արթուն , փութա՛յք փարեցա՛ք յորդորեցք զամենեսին չը
“ թուլանալ բնաւ յաշխատութենէ և գուն գործել ամենայն
“ յօժարութեամբ երախտելոյ Ազգիս , ի դաստիարակելոյ
“ զազգային մանկունս , և այլն և այլն , և համառօտ ասել
“ զամենայն ճիգն ի գործ դրած է՛ք Ազգային փառքը յայն
“ աստիճան բարձրացուցանել որ կը պանծան արդեան Եւրո-
“ պիոյ բարգաւաճ ազինք ։

“ Արդէն մեր Ազգայինք ալ յատկապէս երկու երեք տարի է
“ ի վեր մեծ ցնծութեամբ սրտի տեսան ու վայելեցին ձեր
“ Սրբութեան բազմարդիւն վառակը , թէ ի մասին հասաս-
“ տութեան Ազգային Մատրանն և վարժարանին որ ի Փարիզ
“ ի Մայրն աշխարհաց , և թէ՛ ի փոյթ առաքինի դաստիա-
“ բակութեան Ազգային մանկուցն՝ որդեկաց մերոց սիրայ-
“ նաց , և թէ՛ ի մասին փառաց Ազգիս , որ կենցաղագէտ
“ զգօնութեամբ ձերով ներկայացուցիչ հանդիսացեալքդ է՛ք
“ այդր առ Արեւմտեայս , ոչչափ ապա իղձ և բաղձանք է մեզ
“ որ վայելեալ յայսչափ արդիւնս Հօրդ մերոյ սրբանելոյ
“ պատիւ ունենանք գոնէ մէկ երկու ամիս միջոցի մը համար
“ հիւրասիրութեամբ պատուելով զՍրբութիւնդ վայելել ձեր
“ քաղցր ներկայութիւնը , ընդունել ձեր սուրբ օրհնութիւնը
“ և մխիթարիլ համբուրիւ սուրբ Աջոյդ , և մինչեւ ցարդ այս
“ մեր հրաւիրանաց անագանելը անգամ թէ և վայելուչ չէր
“ ալ նէ , բայց և այնպէս ներողամիտ ըլլալով բարեհաճե-
“ ցէ՛ք սրբազան Հայր ամենայն փութով առանց պատճառս
“ ի մէջ ածելոյ ընդունել այս մեր հրաւէրը և փութալ առա-

„ Ջիկայ շոգենաւաւ ի Պօլիս , որուամ անձկանաք ապասեն Կա-
„ ճառք բազում Ազգասիրաց ։

„ Այս մեր հրաւէրը ի դիմաց երեւելեաց Ազգիս և յորդո-
„ բանաք անգամաց Գերապոյն Ժողովոյն է . և կը յուսամք
„ անշուշտ որ աշխատութիւն յանձն առնուք փութով կատա-
„ րել այս մեր խնդիրը և միխիթարել զազգայինս . և այս ձեր
„ ուղեւորութիւնը անտարակոյս շատ արդիւնաւոր ու փա-
„ ռաւոր պիտի ըլլայ մանաւանդ վարժարանին համար . որով-
„ հետև աշակերտներէն շատերը այլ և այլ պատճառներով
„ ցրիելով , նոյն հրաժարելոց տեղը լեցուցանելու և նորընտիր
„ աշակերտներ պատրաստելու թէ և տնօրինմունքներ եղած
„ են նէ , բայց և այնպէս ձեր սրբութեան անգամ մը ի Պօլիս
„ գալ և մէկ նուազ Ազգայնոց մէջ այցելութիւն ընելնիդ
„ անշուշտ մեծ ազդեցութիւն և խրախոյս կուտայ հասարա-
„ կաց սրտերուն ։

„ Ուստի ամէն աւելի դրելը աւելորդ համարելով , և ձեր
„ Սրբութեան բնաւ աշխատութենէ ու ծանրութենէ չի փախ-
„ չելով և այս մեր խնդրանաց կատարումն ձեր բարեսէր խո-
„ հեմութեան և Ազգասէր ըղձին յանձնելով ,

„ Մնամք

„ Գերապատիւ Սրբութեանդ խոնարհ ծառայք ,

„ Ի դիմաց խնամակալաց և անդամաց ժողովոյ կենդանի ,

„ Կոստանդնուպօլիս . 1858 մայիս 28. 8 յունիս .

„ ՄԿՐՏԻՉ ՆԻԿ. ՄՈՄՃԵԱՆ .

„ Խնամակալք Հայկ. փաշ. Փարիզու . „

Ընդ վերոյիշեալ թղթոյ և առանձին թուղթ մի ի Պարոն Մկրտիչ Մոմճեանէ առ Սարգիս Վ. հանդերձ 1,200 ֆրանքով ի ծախս ճանապարհի նորին . օրինակ զայս .

„ Գերապատիւ և Սրբազան Հայր իմ Պատուական.

„ Միւս հրաւիրանաց նամակաւս արդէն ըստ բաւականին „ ծանուցած եմ որ ձեր Սրբութեան Պօլիս գալը շատ մեծ ազ- „ դեցութիւն պիտի ունենայ և արդիւնաւոր պիտի ըլլայ. „ ուստի այսր ձեր Սրբութեան իբրեւ համրու ծախք 1,200 ֆր- „ բանք, այն է վաթսուն շուխլ ոսկի զբրկլվեցաւ, զոր ընդ- „ դունելով բոստայնն անմիջապէս կը յուսամ որ կը բարե- „ հաճիք գէպ ի Պօլիս ուղեւորելու։ . . .

„ Մնամ

„ Պօլիս. 1858 մայիս. 28 յունիս 8.

„ Սրբութեանդ խոնարհ ծառայ

„ ՄԿՐՏԻՉ ՆԻԿ. ՄՈՄՃԵԱՆ. „

Ընկալեալ Սարգսի վարդապետի զվերոյիշեալ նամականին հրաւիրանաց որք ի դիմաց երեւելեաց Ազգին ի Պօլիս, և յորդորեալ և ստիպեալ յընկերաց իւրոց ի Գալֆայեան հարազատաց, իբրեւ յոգիս ապատան եղելոց յերեսաց խառնութեան պարտատէրց վարժարանին, յորոց վերայ թողեալ էր Գարծակալն զծանրութիւն նորին, և ինքն ի Պօլիս դեգերէր զամ մի և աւելի։ . . .

Համարիցին արդեօք համոզիլ և շարժիլ Սարգսի վարդապետի ի բանից զովութեան և խոստման նոցա. ոչ բնաւ. ճանաչելով նորա քաջ դրնաւորութիւն ազգայնոց իւրոց ի Պօլիս, և լսելով բազում անգամ ի նոցանէ զայնպիսի բանս անարդիւնս։ . . .

Սակայն առ ի շուտ նոցա ուղի պատճառանաց, և ի լնուլ զվերջին պարտս իւր, և զիրաւունս արդեօք, ի խօսել և ի գրել զնոցանէ զարժանն, յանձն առնու գնալ անդ, որպէս յայտ առնէ ի թուղթն իւր առ Գաբրիէլ վարդապետ, օրինակ զայս.

„ Յարգոյապատիւ Հօր և Սիրեցելոյ Եղբօր ողջոյն կա-
„ բօտագին սիրոյ։

„ Կարծէի ես, թէ յետ այնչափ հոգոց և տառապանաց
„ Ձեայր ինձ արդեօք սակաւիկ մի հանգչել ի սուղ ինչ
„ Ձեացեալ աւուրս կենաց իմոց, և ի Հայեցողական պարապել
„ կարգաւորութիւն. ահա յաւելան ինձ դարձեալ հոգք և
„ տառապանք, և այն՝ յայսմ հատակիս։ . . . Արդ զինչ
„ ասացից և զորո՞ց գանգատեցայց, եթէ ոչ զքախտէն իմոյ,
„ թէպէտ և ոչ հաւատամ ես ճակատագրին, սակայն տե-
„ սանեմ յիս զազդեցութիւն նորին . . . ապա Ձեայ ինձ համ-
„ բերութեամբ տանել և այցելութեան Տեառն ակնուանել։

„ Եւ ահա ի 1 յուլիսի տարւոյս հանդերձեալ եմ ելանել
„ ի ճանապարհ գնալ ի Պոլիս, ըստ ցանկութեան և հրաւի-
„ բանաց ազգայնոցս անդ, խնամակալաց ժողովոյն. այլ թէ
„ զինչ ելք իրաց անտի, Տեառն է միայն գիտելի. . . ցկից ես
„ և այսու զգարուս իմ վերջին և զիրաւունս արդեօք, խոստ-
„ լով նոցա զարժանն, և ցուցանելով զգարուս իւրեանց, եթէ
„ ունիցին ականջս լսելոյ, և կամս կատարելոյ զայն. . . ապա
„ կարօտի այս աղօթից ձերոց և օժանդակութեան, և ազգոյ
„ գրութեանդ առ նոսա, որպէս և առ իս կարեւոր խորհրդ-
„ դոյդ. ճանաչելով և ձեր գրեաւորութիւն նոցա։

„ Փանուայիք ինձ անդ գրով զյաջողութիւն գործոյդ այդր,
„ և զկարօտութիւնդ օգնական անձանց, զի թերեւս արդեօք
„ ի նախանձ շարժեալ այսր, և երկուցեալ ի կորստենէ ա-
„ սի՝ արասցեն զարժանն. քանզի ոգեաք են չճանաչելով
„ զօգուտն իւրեանց։ . . .

„ Մնամ

„ Յարգոյապատիւ Հայրութեանդ

„ Ի Փարիզ. 30 յունիս. 1858.

„ Հոգեհարազատ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՂՈՐԵԱՆ.“

Ի հրաւիրանաց խնամակալաց ժողովոյն որ ի Պօլիս վասն Հայկազեան վարժարանին ի Փարիզ, և ի թախանձանաց ընկերաց իւրոց, յանձն առնու Սարգիս վարդապետ գնալ ի Պօլիս, վասն հոգալոյ զպարտուց վարժարանին և զհաստատութենէ նորին, և այս պայմանաւ՝ երկու և եթ ամիս ժամանակ անցուցանել անդ, ապա դառնալ ի Փարիզ անյապաղ։

Ի 1 յուլիսի 1858 ամի, առնէ Սարգիս վարդապետ նախ զկըտակ իւր, և ընթեռնու զայն առաջի ընկերաց իւրոց, Ամբրոսիոսի և Խորենայ վարդապետաց, զորս կոտակատարս կարգեալ էր, և որոց թողեալ էր զոր ինչ և ունէր առանձին և սեպհական. լուեալ նոցա զայն յարտաքուս հարկանին, և կնքէ նա զայն առաջի և ձեռամբ նոցա, ծրարելով ի պատրուակի նորին և զայլ կարեւոր ինչ գրուածս, և ցուցանելով նոցա զբանի մի ինչս զոր ունէր, և զոր փակէ ի գրոցի իւրում ընդ կրկին փականօք, և զրանալիս նորին յանձնէ Խորէնայ վարդապետի որպէս և զսենեակն, զգեստս, և զմատեանս իւր թողու ի ձեռս նորա. թող զ2,500 ֆրանքս զոր Ամբրոսիոս վարդապետ ունէր, առեալ նմա փոխ յառաջագոյն, ի ծախս տպագրութեան մատենից նորա, և զոր յապաղէ նա հատուցանել, և թող զ200 ֆրանքս զոր տայ Խորենայ վարդապետի ի գին ոսկի շղթայի վասն ժամացուցի նորա, և թող զ300 ֆրանքի զարդն զոր ընծայէ նա քեռն նոցա, Գալֆայեան օրիորդին որ ի Փարիզ։ Ապա ընդ երեկս յ8 ժամու մեկնի նա ի Փարիզէ, և ժամս 20 ճանապարհորդեալ շոգեկառօք հասանէ ի Մարսիլիա, և անտի մտեալ ի շոգենաւն և զաւուրս 7 նաւարկեալ ժամանէ ի Պօլիս, ուր ընդ առաջ գնան նմա Աղեքսանդր վարդապետ Արեղայ Յակոբ Պատրիարքին, Պարոն Պետրոս որդի Մկրտիչ Մոմճեանի, և Պարոն Նշան Գալֆայեան, գործակալ վարժարանին։

Ելեալ Սարգսի վարդապետի ի շոգենաւէն գնայ յայց յարգութեան Սրբազան Յակոբ Պատրիարքին որ բնակի յայնժամ Յիւսկիւտար, և որ բազում սիրով ընդունի զնա, և յուսացուցանէ ընդ յաջողութիւն իրաց վարժարանին ի Փարիզ։ Կացեալ նորա առ նմա օր մի, և տեսութիւն արարեալ ազգայ-

նոցա անդ, Եպիսկոպոսն Պօղոս Ալպայի, որ բազում հիւրասիրութեամբ ընդունի զնա, և Ղանայ օժանդակութիւն դատնել փարիզեան վարժարանին, թէպէտ և կոչեցեալ էր ինքն զորդիս իւր անտի տարաժամ։

Զնոյ ապա Սարգիս վարդապետ յԱյտեխանոս տեսանել զՊօղոս Պէյ Տատեան, որ թէպէտ ընդունի զնա սիրով և մեծաւորս իմն խնամով, բայց լքուցանէ զնա խոպոտ, ի յուսոյ օժանդակութեան վարժարանին, պատճառս առեալ զաղքատութիւն ազգիս, և չափեալ զոյն ըստ չափու կարողութեան իւրոյ, «Կարօտիմ ես, ասէ, արծաթոյ ի կարեւոր պէտս» տան իմոյ։ «Փոխէ նա բոլորովին զկեղս իւր զոր ունէր ի Փարիզ, զքաջալերս բանս իւր առեմ, որով խրախուսէր զՍարգիս վարդապետ հաստատել ի Փարիզ զՀայկազեան վարժարանն, և թողուլ նմա զհոգ ծախուց նորին։

Ահա բերանով պատասխանի Պօղոս Պէյի զոր տայ վերոյշեալ թղթոյ Սարգսի վարդապետի։

Թէպէտ և որդիք նորա քաջալերեն զՍարգիս վարդապետ ասելով թէ Հայր իւրեանց միայն բաւական է պահել զվարժարանն այն, եթէ կամիցի նա ընդ այն, միարանիցի՞ այս բանից հօր նոցա, թէ «Կարօտ ինքն արծաթոյ ի կարեւոր պէտս ծախուց տան իւրոյ։» Տէրն ինքն հոգայցէ զկարեւոր պէտս կարօտելոց ազգին մերոյ։

Ելեալ նորա անտի դնայ տեսանել զՅովհաննէս Պէյ Տատեան զԱզգապետն... որ ընդունի զնա քաղաքավարութեամբ և խօսի ընդ նմա ժամս երկար, լքուցանելով զնա ի յուսոյ նպաստից որ յազգայնոց Պօլսոյ վասն հաստատութեան վարժարանին ի Փարիզ, և խրատ տալով նմա իբրեւ ճշմարիտ բարեկամ նմանիլ Գաբրիէլ վարդապետի Ամիրեան, թողուլ զփարիզեան վարժարանն և գնալ ընկերաբար իւրովք ի Թէոդոսիա աշխատիլ անդ ի Թալիանեան ուսումնարանի ի լուսաւորութիւն ազգայնոցս որք ի Թուրքիա... ահա հաստատութիւն և յաճառութիւն կարծեաց նորա տուելոյ երբեմն Ամիրեանս վարդապետի։

Զնոյ նա ապա յայցելութիւն յարգութեան արարեալն Տատ-

թէոս նախկին Պատրիարքին, որ ընդունի զնա յոյժ սիրով, հանդերձ բազում քաջալերութեամբ և խոստմամբ օժանդակութեան վարիզեան վարժարանին, թէպէտ և նա դեռ չէր ընկալեալ զհաստատութիւն Կաթուղիկոսութեան ի կայսերէն Ռուսաց, այլ հաւատի էր ընդ այն։

Ելեալ նորա անտի գնայ ի տեսութիւն Գէորգ Պէյի Երամեան, զոր թէպէտ չդտանէ ի տանն, այլ Տիկին նորա Եպրու ընդունի զնա բազում յարգութեամբ, և խնդրէ վերատին և փութով տեսանել զնա, զնելով ի մոի ի տան իւրում օթևանել զնա։

Գնայ նա ապա տեսանել զՎարդանեան Պետրոս Աղայն, զերբեմն նախադահ խնամակալաց ժողովոյն, և զլուխ կողմանն հաստատութեան Հայկազեան վարժարանին ի Փարիզ, որ թէպէտ քաղաքավարութեամբ ընդունի զնա, և զնոյն կամս ցուցանէ, այլ բերանով միայն, լքեալ գոլով ի յուսոյ հաստատութեան վարժարանին ի Փարիզ զանազան պատճառանաք։ . . .

Գնայ նա ապա տեսանել զՊարոն Նիկողայոս Մխաքեան, որ ընդունի զնա քաղաքավարութեամբ և որ թէպէտ հանեալ էր զորդիս իւր ի Հայկազեան վարժարանէն, և զլացեալ հաստատացանել զմնացեալ թոշակս նոցին անտի պատճառանաք, սակայն ցուցանէ բազում ցանկութիւն ընդ յառաջադիմութիւն և ընդ հաստատութիւն Հայկազեան վարժարանին ի Փարիզ, և խոստանայ օժանդակել նմին ամենայն յօժարութեամբ, միայն ոչ կամի հաստատացանել զմնացեալ թոշակսն . . . ահա նոր իմն տեսակ օժանդակ, և հետևող նմին ոչ սակաւ . . . վասն որոյ անկանի վարժարան ընդ պարտիւք և փակի այն հրամանաւ և հաճութեամբ այս տեսակ օժանդակաց նմին, և ահա հաստատութիւն բնաւորութեան ազգայնոց Պօլսոյ։ . . .

Գնայ Սարգիս վարդապետ տեսանել զԲաղճպանեան Աւետիս Աղայն, որ ընդունի զնա սովորական քաղաքավարութեամբ, և որ զյառաջադիմութենէ որդւոյ իւրոյ միայն հարցանէ, և ոչ զհանգամանաց վարժարանին, թէպէտ և մի ի գլխաւոր անդամաց խնամակալաց ժողովոյն լինի . . .

Գնայ նա ապա տեսանել զՄուրատեան Կարապետ Աղայն, որ յետ ողջունելոյ զնա, ըստ սովորական քաղաքավարութեան իւրում, ասէ ցնա, թէ կոչեցեալ էր ինքն զորդիս իւր ի փարիզեան վարժարանէն, առ ի տեսանել զծնողս իւրեանց, և ապա դարձուցանել անդ. թէպէտ և հաստատեալ էր ի մտի չդարձուցանել զնոսա անդ վերստին, աւելորդ ինչ համարելով զդիտութիւն, այլ կարեւոր միայն զվաճառականութիւն, զոր և բերանով ասէ Սարգիս վարդապետի բազում անգամ, և առնէ զայն, հանդերձ զլացութեամբ հաստուցանելոյ զմնացեալ թոշակս նոցին որպէս տեսանի ի հաշուեմատեանի։...

Գնայ նա տեսանել զՊարոն Աւետիս Միսաքեան. որ թէպէտ քաղաքավարութեամբ ընդունի զնա, և լուեալ զյառաջադիմութենէ որդեգրին իւրոյ ի Հայկազեան վարժարանի ուրախանայ, սակայն և նա հաստատեալ էր ի մտի յետս կոչել զնա անտի, առ ի զերծանիլ ի ծախուց նորին։

Գնայ նա տեսանել զՊարոն Գալուստ Փիլիաճեան որ բազում քաղաքավարութեամբ ընդունի զնա, և ցուցանէ զինքն հաստատուն ի կամս իւր որ ընդ յառաջադիմութիւն վարժարանին ի Փարիզ, անխափան հաստուցանելով զթոշակս որդւոց իւրոց անդ։

Գնայ նա յաճախ տեսանել զՊարոն Մկրտիչ Մոմճեան, որ բազում յարգութեամբ և մտերիմ սիրով ընդունի զնա, և աշխատի ամենայն ջանիւք դարման տանել կարօտութեան վարժարանին ի Փարիզ։ Նոյնպէս և Պարոն Մկրտիչ Աղաղոն, երկոքին ազգասէր անձինք, հանդերձ զոհիւք արծաթոյ, ի զլանալ ոմանց հաստուցանել զթոշակս որդւոց իւրեանց։

Երանի՛ թէ ի նոյն գովելի հանգամանս կացեալ էր միշտ Պարոն Մկրտիչ Մոմճեան, և ոչ աղաւաղեալ էր զայն անխոհեմութեամբ և անիրաւութեամբ զոր գ՚ննեցուք ապա։

Գնայ Սարգիս վարդապետ տեսանել և զայլ ոմանս յանդամոց խնամակալաց ժողովոյն, և ի ծնողաց մանկանց վարժարանին, զոր թէպէտ հանեալ էին զորդիս իւրեանց ի վարժարանէն զանազան պատճառանօք, սակայն ցանկան հաստատութեան նորին և աշխատին ընդ այն ամենայն ջանիւք,

յորոց մի լինի Պօղոս աղա Եաղիճեան, որդւով իւրով Գրի-գոր էֆէնտիւ, և Յակոբ աղա Նորատունկեան, հանդերձ եղբարբ իւրով Սիմոն աղայիւ։

Գնայ նա տեսանել և զայլ ազգատէր ոմանս, և առ որս յաճախ երթեւեկէ, յորոց մի լինի Պարոն Տիգրան Իւսուֆեան, և Գրիգոր էֆէնտի Մարկոսեան Զմիւռնացի։

Թէպէտ և զառաջինն օթեւանի Սարգիս վարդապետ ի Պատրիարքարանի անդ աւուրս ինչ, բայց ապա Բարեպաշտ Եպրու Տիկին Երամեան հրաւիրէ և ստիպէ զնա օթեւանել ի տան իւրում, ցորչափ ի Պոլիս կայցէ, ի միխիթարութիւն ազատութեան իւրոյ։ Ընդունի նա զհրաւէր Բարեպաշտ Տիկնոջ, և իբրեւ տարի մի ի շնորհս խնամոց նորա վայելէ, հանդերձ առատ յիշելեօք և կարեւոր պիտոյիւք, զոր ոչ մոռանայ Սարգիս վարդապետ յաւիտեան, զի յիշատակ բարեպաշտ անձանց օրհնութեամբ և անմոռաց է երախտաւոր մտաց։

Այսչափ ինչ զայցելութենէ Սարգսի վարդապետի և զմխիթարութենէ նորին որ անտի խօսեցեալ՝ եկեսցուք այժմ զկարօտութենէ վարժարանին ի Փարիզ և զդարմանոյ նորին։

ԳԼՈՒԽ Թ.

Կարգ և չափ Ս. Մատթէոս Կաթողիկոսին ընդ հաստատութեան վարժարանին ի Փարիզ. — Թուղթ կաթեղիկոսական Գաբրիէլ վարդապետի առ Սարգիս վարդապետ և ընդունելութեան ընդ այն. — Թուղթ Սարգսի վարդապետի առ Գաբրիէլ վարդապետ գիւանագիտաւնուց գործոյ իւրոյ և գանկեալ առութիւն անտի. — Ուղերձ յաշակերտաց Սանաթոյ առ Սարգիս Վ. — Թղթակցութեան Սարգսի վարդապետի ընդ Գաբրիէլի վարդապետի գիւանագիտաւնուց վարժարանին ի Փարիզ, և ընդունելութեան ընդ այն. — Թուղթ բողոքական Ամերիկեայ վարդապետի առ Սարգիս վարդապետ ի Պոլիս. — Թուղթ ցաւակցական Ս. Կարողիկոսին առ Սարգիս վարդապետ զմահուանէ վարժարանին ի Փարիզ. — Փոյթ Ս. Կարողիկոսին յօժանակութեան վարժարանին ի Փարիզ. — Փոյթ Ս. Կարողիկոսին զանազան ազգայնոց ընդունելոյ զանազան դասս. — Գնացք Ճէզայէրլեան Ամիրայի ընդ Սարգսի վարդապետի.

Ի տեսութենէ և ի խօսակցութենէ Սարգսի վարդապետի ընդ ազգայնոցս ի Պոլիս՝ յուսահատի նա զհաստատութենէ վարժարանին ի Փարիզ. մեայ նմա ակնկալութիւն ի Կաթողիկոսէն միայն, որ փոյթ մեծ ցուցանէ զհաստատութենէ նորին, իբրեւ կարեւոր ինչ ի լուսաւորութիւն ազգին, զոր և կամի անպհակաւն ստացուած էջմիածնի առնել և զմտաւոն որ ի նմին յանուն Գրիգորի Լուսաւորչի կոչել, և որ տայ յօրինել գրուած հանգանակութեան յօժանդակութիւն վարժարանին ի Փարիզ, յոր և առաջին ինքն ստորագրէ 10,000 դահեկան. և այնչափ նախանձայոյզ լինի նա՝ մինչեւ ասել թէ,

“ որ ոչ կամիցի օժանդակել վարժարանին որ ի Փարիզ, ինքն
“ ոչ ճանաչէ զնա որդի Լուսաւորչին։ ”

Ահա ի բանից և ի գործոց նորին ասի ակնուն Սարգիս վարդապետ հաստատութեան վարժարանին, և ասի քաջալերեալ՝ խնդրէ ի նմանէ շրջաբերական կոնդակ մի առ համօրէն ազգս Հայոց որ յամենայն տեղիս յօժանդակութիւն վարժարանին որ ի Փարիզ։

Ընդունի Կաթողիկոս զխնդիր Սարգսի վարդապետի և յանձնէ նմա յօրինել զայն ըստ պատշաճի։

Թուղթ ցաւակցութեան Գարրիէլ վարդապետի առ Սարգիս վարդապետ ի Պոլիս. օրինակ զայս.

“ Գերապատիւ և Սիրելեալ Հայր.

“ Թէպէտ և մինչեւ ցայժմ ի դերեւ էլ ակնկալութիւնս իմ
“ ընդունելոյ ի Սիրելոյդ Հօրէդ գիր ինչ մխիթարութեան և
“ քաջալերութեան մանաւանդ զփարիզեան վարժարանէն,
“ որ յոգիս ապատանեալ թուի յերեսաց չքաւորութեան
“ արծաթոյ, սակայն ի դրոց Իմաստասիրութեանն իմացեալ զհաս-
“ տատութիւն ընտրութեան Տեառն Մատթէոսի Արքեպիսկո-
“ պոսի ի Կաթողիկոսութիւն Ազգիս, որպէս և զգեղեցիկ
“ գիտաւորութիւնս նորին զՁէնՂ և զվարժարանէն, ահա
“ փութացայ գրել առ նա ինքն գիր մխիթարութեան, և
“ առ Հայրդ անձկալի զհամառօտագիծս զայս։ Ակնուանիմ
“ զի նորընտիր Հայրապետն ընդ Խրիմ անցցէ ի գնալն յԷՀ-
“ միածին, և զԳեր. Հայրդ ընդ իւր բերցէ այսր, յայնժամ
“ խօսեցուք զամենայնի, բերան ի բերան և զկարօտութիւն
“ տեսութեան մերոյ լցցուք Տէրամբ։

“ Դարձեալ ասեմ, Գեր. Հայր, ցաւէ ինձ յոյժ յոյժ ընդ
“ ողորմ վիճակ փարիզեան վարժարանին և անհնարին տա-
“ ռապանս մերոցն անդ, և տարչացեալ եմ մեծապէս ընդ
“ վատահութիւնն որով վստահացաք բարեմիտքս ի խոստումն
“ Պոլսեցւոց և ի մեծարանութիւնս նոցա։

„ Այլ զինչ շահ, եղիւ որ ինչ եղիւն, զոնեա յառաջի-
„ կայսն մի՛ եւս խաբիցիմք ի լոկ և յապարդիւն խոսմանց
„ ոյր ուրուք իցէ։

„ Ողջ լինել ըղձանամ

„ Գերապատիւ Հօրդ

„ Թէոդոսիա. 13 սեպտ. 1858.

„ Անձկալից

„ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ. „

Թէպէտ և ցաւի Գաբրիէլ վարդապետ յոյժ յոյժ (եթէ պարտ իցէ հաւատալ բանից նորա) ընդ ողորմ վիճակ փորձիղեան վարժարանին, և ընդ անհնարին տառապանս իւրոցն անդ, այլ օգնել նմին բնաւ ոչ, և ոչ արդահատէ անհնարին տառապանաց իւրոցն անդ, հնարաւոր ժանդակութեամբ, տալով տակաւին ինչ յիւրմէ անտի։ . . .

Թէպէտ և տարչայեալ է նա մեծապէս ընդ վատահութիւնն, որով վատահանայ բարեմիտն ի խոսաւմն Պօլսեցւաց և ի մեծարանութիւնս նոցա, այլ ոչ տարչայեալ է նա բնաւ ընդ պակասութիւն պարտուց իւրոց և խոսմանն, չհամբերելով աւուրս ինչ ի Պոլիս առ ի հոգալ զպարտուց վարժարանին, և չդառնալով անդ վերստին ըստ խնդրոյ խնամակալաց ժողովոյն և ըստ խոսման իւրում առ ի ինուլ զայն։ . . .

Եթէ զանձինս քննէաք ապա ոչ դատարտէաք։

„ Այլ զինչ շահ, ասէ, եղիւ որ ինչ եղիւն, զոնեա յառա-
„ ջակայսն մի՛ եւս խաբիցիմք ի լոկ և յապարդիւն խոսմանց
„ ոյր ուրուք իցէ։ „

Գեղեցիկ խրատ խաբեցեալոյն յեղբօրէ, և քա՛զցր մխիթարութիւն զրկեցեալոյն յամենայնէ։ . . .

Ասոմ՞ այս հակառակութիւն բանից և գործոց մարդոյ։ . . .

Ոչ ապաքէն յանձնասիրութենէ և ի փառասիրութենէ։ . . .
Ո՛վ ողբալի մարդկութիւն։ . . .

Թուղթ Սարգսի վարդապետի առ Գաբրիէլ վարդապետ, որով ծանուցանէ զհանգամանս գործոյ իւրոյ ի Պոլիս, և զանկրնկալութիւնն որ անտի, օրինակ զայս.

„ Գերապատիւ Հօր և Սիրելւոյ Եղբօր ողջոյն բա-
„ զում կարօտագին սիրոյ։

„ Ահա ամիսս երեք են զի ասա ի Պոլիս եմ, և ապասեմ
„ օրըստօրէ յաջողութեան գործոյս, առ ի տալ Ձեզ լուր ինչ
„ մխիթար, այլ ըստ բախտին իմոյ յապազեալ այն մինչև
„ ցարդ։

„ Բայց արդ ողորմութեամբն Աստուծոյ սկսաւ յաջողել
„ գործս. քանզի խելամուտ արարեալ իմ զՍ. Կաթողի-
„ կոսն օգտակարութեան վարժարանին ի Փարիզ, և պիտա-
„ նութեան եղբարցս անդր և այդր, և յորդորեալ զնա օժան-
„ դակել այնմ ինքնին իրրև առաջնորդ գործոյն։

„ Շարժեցաւ նա գործունեայ կամաք, յօրինեաց գրուած
„ մի հանգանակութեան յոր և ստորագրեաց ինքն նախ
„ 10,000 դահեկան, և ապա ժողովեաց զքանի մի ոմանս
„ յերեւելեաց ազգիս, զկնի հանդիսաւոր և կաթողիկոսական
„ պատարագին որ ի Սուրբ Խաչ եկեղեցին յԻսկիւտար. և
„ ի ժողովել ի տան Պօղոս աղայի Եաղիճեան յորդորեաց
„ զնոսա հանգանակել անդ իւրաքանչիւր ըստ կարի իւրում,
„ ի հաստատումն հին և նոր պարտուց վարժարանին և յա-
„ ռաջադիմութեան նորին։

„ Թէպէտ և յօժարեցան յայն ամենեքեան, այլ ասացին
„ ոմանք, որոց գլուխ Ենշան աղա Փիշմիշեան, թէ բարւոք
„ լիցի այն և հաստատուն զկնի ընտրութեան Նորոգ Պատրի-
„ արքին և կազմութեան Գերագոյն ժողովոյ, թէպէտ և ընդ
„ այս պատճառ նոցա Ս. Կաթողիկոսն ոչ հաճեցաւ, այլ

«լուեալ թուղթեամբ. և ի ծանուցանել իմ նոցա զանհնա-
«րին կարօտութիւն վարժարանիս և զնեղութիւն մերոցն
«անդ, որոշեցին նոքա միջնորդութեամբ Խորասանեան
«Պետրոս աղայի յղել յամենայն եօթնեկի 3,000 ֆրանք
«ի Փարիզ ի կարեւոր պէտս վարժարանին, մինչեւ հաւա-
«քեցի դումար ինչ արծաթոյ ի հատուցումն բոլոր պարտուց
«վարժարանին և ի հատատութիւն նորին։

«Եւ ահա ի 14 ամսոյս եկ ի դրանէն հրաման ընդունելու-
«թեան հրաժարման Յակոբ Պատրիարքին, և ի 19 տրին
«ամսոյս եղեւ ժողով ի Պատրիարքարանի նախագահութեամբ
«Ս. Կաթողիկոսին, որ ճարտար իմն առնախօսութեամբ
«և համոզակեր բանիւք առաջարկեաց ժողովոյն ընտրել նո-
«րոգ Պատրիարգ զԴէորդ եպիսկոպոսն զառաջնորդ Պերա-
«յի, հանդերձ ազատութեամբ կարծեաց հատարակաց յընտ-
«րութիւնն յայն։

«Հաւանեալ արդէն Ամիրայից ընդ ընտրութիւնն այն.
«իսկ ի դիմաց հատարակաց ժողովրդեան խնդրէ Խորասան-
«ճեան Պետրոս աղա ի Կաթողիկոսէն զպահպանիչն ի նշան
«հաւանութեան, առանց ինչ ընդդիմութեան, որով և
«հատատի ընտրութիւն խաղաղութեամբ և սիրով, հանդերձ
«բազում ակնկալութեամբ բարեաց հատարակաց յընտրու-
«թենէ անտի նորին։

«Ի նմին իսկ առուր գրեալ ծանուցաւ Դրանն ընտրու-
«թիւնն այն և խնդրեցաւ անտի հաճութիւն և հրաման հրա-
«էրման առ Դէորդ եպիսկոպոս գալոյ ի Պոլիս, և ընդունե-
«լոյ զիշխանութիւն Պատրիարքութեան։

«Կարծեմ բարւոք լիցի գրել Ձեր այսր թուղթ խնդակ-
«ցութեան առ Կաթողիկոսն ընդ այս խաղաղութեամբ ընտ-
«րութիւն նախագահութեամբ նորին և ակնկալութեամբ բա-
«զում բարեաց հատարակաց միջնորդութեամբ և ազդեցու-
«թեամբ իւրով, և շնորհակալութեամբ ընդ օժանդակութիւն
«վարժարանիս, զորմէ փոյթ մեծ է նմա և չատ բազում
«յանդգնարար յորդորելոյս։

«Վասէք արդէն և խնամեայք միշտ ի թղթոյ Հ. Ամիրոսեայ

„ զկարօտութիւն արծաթոյ որ ի կարեւոր պէտս վարժարա-
„ նիս, և զանհնարին նեղութիւն նորա անդ ընդ այն ի զուր,
„ և ընդ որ ցաւ է ինձ յոյժ յոյժ, հանդերձ նեղութեամբ
„ ի պանդխտութեանս ասա։ . . .

„ Մնամ

„ Գերապատիւ Հայրութեանդ

„ Ի Ֆօլիա. 11 Հոկտ. 1858.

„ Հոգեկցորդ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՒՈՐԵԱՆ. „

Սրբազան Կաթողիկոս այց առնէ և սուրբ Գէորգ եկեղեցւոյ որ ի Սամաթիայ, և մատուցանէ անդ պատարագ մեծաւ հանդիսիւ, և անդ պատուասիրի նա ուղերձիւք նուիրեալ յաշակերտաց Սուրբ Սահակեան վարժարանին Սամաթիոյ։

Պատուասիրի ապա ի նմին աւուր և Սարգիս վարդապետ ի վարժարանի անդ և յաշակերտաց անտի ուղերձիւ, որ ունի օրինակ զայս.

ՈՒՂԵՐՁ

Ի ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՆՁԿԱԼԻ ԳԱԼՍՏԵԱՆ

ՎԵՄԱՓԱՌ ԵՒ ԳԵՐԱՊԱՏԻՒ

ՏԵԱՌՆ ՍԱՐԳՍԻ ԹԷՈԴՈՐԵԱՆ

ՀՈԳԵՇՆՈՐՀ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՆՈՒԻՐՒ

Յայդուն այդուն ոսկեգոյն արծարածամն Արեւակ
Սրակապանէն վարդածիր ի գեղ ժըպիտ առնու մանն .
Մեզ սա փութայ յատուածուստ անխոս բանքեր երկնառաք
Զմեծն աւետել նոր Սահակ ։

Համաշխարհիկ Անձկալուոյդ՝ կըթոտ դասուն մեզմ յառաջ
Մատաղորեարն պարզէ զիրկ թեւաբացի , ընդ նոցայն
Երամ անձկոտ ոսնընծայ մեք ձիթենուվս ընդ առաջ
Զքոյդ համբուրիւ պաշտել զԱՆՁ ։

Սահակայս մեր խնդաց տուն՝ ի թեւթռուցիկ Հայրենեոյն
Գրկապարիկ ողջունել զրացի տանէն զնոր Պարթեւ .
Դառն յորբութեան յամուլ ծոց ծնանին ատաղունք զնախնեոյն
Զոսկեդարուն պճնել տուն ։

Զինչ հեշտնկալ քեզ զօրեն յաղիս տկար մեր տաւիղք
Հիւսել , որոց չբաւէն ոսկեռատիկք ձեռադրոշ .
Մինչ ի հուշակ պերճանան անմահ անուանդ վեհ անդրկք
Ճոխ Դաղղիա ճոխ Հնդիկ ։

Զնոյն յայեւոյթ պատմէ զփառս բազմադարեան մեր Մասեաց։
Զանշուք աւերս արգասու ընդ զոյգ ամոլս յորդեալ վայր
Ի քիրան իրրու զքարավաղ Երասխ, Եփրատ և Տիգրիս
Ալիս յալիս արծաթիս։

Երկիր՝ ուր հարցս ծանրանան ոսկերոտիք ընդ դիւր խշտիս
Հազարամեայ առ մխիթարիչ որպէս յեռեան շառաւիղ
Վերընձիւղէ անուշել զշուրթն կարմիր հեշտ զքիմն
Զերփնեայ ծաղիկս և զծիլս։

Հեշտ երգեցիկք օդաշու Ոսկեքնարիս թէ զարժան
Երգեն նուագս սիրանոյշ օրհնել իմ Հայր, քոյդ զարեւ,
Եւ իմ շրթունք մշտամուն տրկար յօրհնիս շատանան
Գիտեմ, Հայր չեն բաւական։

Թուիր թըղթիկս իմ յողջոյն Կապուտողնեայ ծովափանց
Թուիր հագուոյս նուիրակ ի թեւս սիրոյս և ըղձիցս,
Ընդ իմս նուէր քեզ զադաղ իգիրկս ու ի ծոց սիրազգած
Երգել զփառս պարծանաց։

Ի գիմաց Ս. Սահակայ սանից ընկերութեան

12 հոկտեմբեր. 1858.

ՀԵԹՈՒՄ Ս. Ե.

Թուղթ շնորհաւորութեան Սարգսի վարդապետի առ Գաբրիէլ վարդապետ հանդերձ բարեմաղթութեամբ վասն ուսումնարանի նորին, և տեղեկութեամբ զնորոգ Պատրիարքէն, և զՀայկազեան վարժարանէն ի Փարիզ, օրինակ զայս.

„ Գերապատիւ Հօր և սիրելւոյ Եղբօր ողջոյն սիրոյ
„ ի Քրիստոս։

„ Ապաքէն փափաքելի էր ինձ և քաղցր յոյժ կենդանի
„ ձայնիւ և գրկախառն համբուրիւ շնորհաւորել Զեզ զցան-
„ կալի տօն Հրեշտակապետին Գաբրիէլի, անուանակցին և
„ պահապանին Սիրելւոյդ, մանաւանդ յայսմ ամի և զկնի
„ մեծի հանդիսի, բացման Ուսումնարանիդ, և խրախուսել
„ զՁեզ ի ձեռնարկդ յայդ մեծ և կարեւոր և օգտակար աղ-
„ գայնոցս այդր և այլուր. այլ ըստ բախտին իմոյ վրիպե-
„ ցայ ի ցանկութենէ առտի, բաժին իմ գոլով հոգք և ցաւք
„ յամենայն տեղիս։ . . .

„ Թէպէտ և այսպէս, այլ խրախանամ ի միտս ոչ սակաւ
„ ընդ արժանաւոր գովութիւնս և պատիւս առեալք այդր
„ սիրելւոյդ ի բազմաց և հրատարակեալք առ ի մէջ հաստ-
„ բակաց. և մաղթեմ Զեզ ի Տեառնէ ուրուս երկայնս հան-
„ դերձ քաջառողջ կենաց և յաջողութեամբ ամենայն գոր-
„ ծոցդ, որ ի փառս Աստուծոյ և ի մխիթարութիւն հոգեհա-
„ բազատ եղբարցս։

„ Ահա նորոգ Պատրիարք մեր Գէորգ Արքեպիսկոպոս եհաս
„ այսր ի Պրուսայէ յ8 ամսոյս, և ի 10 տրին յանդիման եղեւ
„ Դրան հանդիսիւ ըստ սովորութեան. ապա ընդհանուր ժո-
„ ղով լիցի, և ապա գերագոյն և հոգեւորական ժողով
„ կազմիցի. զկնի այնորիկ յառաջ գայցէ խնդիր վարժարա-
„ նիս, որ ըստ ցանկութեան և առաջարկութեան Սրբազան
„ Կաթուղիկոսին ընկերութիւն մի կարգել յօժանդակութիւն
„ և իմաստնեանաւոր հատատութիւն վարժարանիս, և փո-
„ խել զՀայկազեան անուն տրին՝ Լուսաւորչեան կոչել, և
„ ընդ հովանաւորութեամբ Էջմիածնի դնել։ Արդարեւ եռանդ

„ և Չան արքային Կաթուղիկոսին մեծ են յոյժ ընդ այս ,
„ խելամուտ եղեալ յինէն օգուտակարութեան նորին , առա-
„ ւելցին այնք արդեաք , խելամուտ առնելով զնա և Ձեր օգ-
„ տակարութեան նորին զրութեամբ այսր . . .

„ Մնամ միշտ

„ Գերապատիւ Հայրութեանդ

„ Ի Պոլիս 13 Նոյեմբ. 1858.

„ Հոգեհարազատ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՄՐԻՄԵԱՆ . "

Պատասխանի Գաբրիէլ վարդապետի տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի օրինակ զայս .

„ Գերապատիւ Հայր Սիրելեալ .

„ Քան զամենայն բարեմաղթութիւնան մատուցեալս ինձ յա-
„ ւուր ծննի սրբոց հրեշտակապետաց ի յոգնախուռն բազ-
„ մութենէ ժողովրդոց և աշակերտաց , եւս և ազգականաց
„ ըստ մարմնոյ՝ քաղցր հնչեցին ի լսելիս իմ սրտաբուխ բանք
„ Հօրդ Սիրայնոյ , և սրտառուս գորովանաց քսմեցին յա-
„ շացս , յուշ ինձ առնելով զաւուրսն զառաջինս յորս այն-
„ քանեաւ սիրով և մտերմութեամբ կցորդք եղաք ի մատոյ
„ ուրախութեանց և տառապանաց իրերաց . . .

„ Լուցէ Աստուած սրտառուչ մաղթանաց բաղմաւոտակ
„ Հայրութեանդ , և շնորհեսցէ ինձ զաւարթերես կալ առաջի
„ աթոռոյ զգօնութեան իւրոյ , և պաշտպանութեամբ իմոյն
„ հրեշտակի , յեւ կատարելոյ ասէն զպարտս ծառայու-
„ թեան իմոյ ի փառս իւր և յօգուտ Աղգիս մերոյ Սիրելւոյ .

„ Ահա նորընտիր Պատրիարքն եթէ չժամանիցեմ այսօր
„ գրել գիր , յաջորդաւն գրեցից անպատճառ . Իսկ այսօր
„ փութամ համառօտ ինչ առնել պատասխանի առ Սրբազն

„ Կաթուղիկոսն, և առ վեհափայլ Գէորգ Պէյ գրել զթուղթն
„ խոստացեալ ։

„ Ասուն՝ մեր յառաջէ օրըստօրէ յաճողութեամբն
„ Աստուծոյ, և ունի այժմէն աշակերտս 50, առհասարակ բա-
„ բերարոյս և ուշիմս . փութամ ճեպիմ և գտպարանն բանալ ,
„ և սկիզբն առնել տպագրութեան օրագրի , և այլ գրենոյ ,
„ այլ ասմդ զի անագանէ առաքումն մամլոցն և տառից
„ ի Փարիզէ ։

„ Ողջ լինել մաղթեմ

„ Գերապատիւ Հօր

„ Ի Թէոդոսիա . 11/23 Նոյեմբ . 1858 .

„ Անձնանուէր և երախտագէտ

„ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ . ”

Թուղթ Սարգսի վարդապետի առ Գաբրիէլ վարդապետ, յորում վերատին երկրորդէ զեռանդ և զՀան Սրբազան Կաթուղիկոսին յօժանդակութիւն և ի մշանջենաւոր հաստատութիւն վարժարանին ի Փարիզ, և խնդրէ ի նմանէ զօրինակ շրջաբերական թղթոյ նորին , հանդերձ տեղեկութեամբ զայնմանէ , օրինակ զայս .

„ Գերապատիւ Հօր և Սիրելւոյ Եղբօր ողջոյն սիրոյ
„ ի Քրիստոս ։

„ Որպէս ի նախընթաց թուղթս իմ ծանուցի Ձեզ , թէ
„ եռանդ և Հան Սրբազան Կաթուղիկոսին մերոյ մեծապէս
„ են յօժանդակութիւն վարժարանիս և ի մշանջենաւոր հաս-
„ տատութիւն տրին ի Փարիզ , և թէ կամեցաւ նա փոխել
„ զանուն վարժարանիս , Լուսաւորչեան կոչելով և ընդ հա-
„ վանաւորութեամբ Սրբոյ Էջմիածնի դնելով զսա . և թէ

“ կամի ընկերութիւն մի կարդել վասն տարին, և շրջաբերա-
“ կան գիր մի յօրինել և հրատարակել զայն առ համօրէն
“ ազգս որ ընդ ամենայն աշխարհ, առ ի հաւաքել դրամագլ-
“ ուխ ինչ յեկամուտս վասն տարեկան ծախուց յինանիւ չափ
“ աղքատ մանկանց ազգիս։

“ Արդ՝ խմացեալ մերոցն ի Փարիզ զայս բարի կամս Սրբ-
“ բազան Կաթուղիկոսին առ՝ քաջալերին և ուրախանան
“ յոյժ. և ծանուցեալ զայս Յոհաննեան Աղայի Մոսկուացոյ
“ գտելոյ անդ և կապելոյ սիրով ընդ մերսն, խրատ տայ նոցա
“ գրել ինձ առ ի փութացուցանել զՍրբազանն զի ժամ մի
“ յառաջ ի գործ դիցէ զբարի դիտաւորութիւն իւր մինչդեռ
“ առ ի տէրութեանս է, մի՛ գուցէ խափան ինչ լիցի այնմ
“ յորժամ ի Տէրութեանդ անցանիցէ առն։ Թէպէտ և ես
“ զայս ոչ կարծեմ, հայելով յայժմեան ազատ վարչութիւն
“ տէրութեանդ, բայց լուեալ Սրբազանին զայս և յառանձին
“ թղթոյ Յոհաննեանի որ առ նա, կասկածի խմն ընդ այն և
“ ցանկայ փարատիլ անտի, տեղեկութեամբն որ ի Ձէնջ այսր
“ և ի հարազատէդ, որ կարող է խմանալ զայն ի ներքին խոր-
“ հրդականաց կայսեր և ի մտերիմ բարեկամաց իւրոց, թէ
“ հակառակ ինչ իցէ արդեօք կամաց տէրութեանդ տարա-
“ ծումն շրջաբերականին ի կողմանդ այդոցիկ։

“ Ահա զայս ցանկայ Սրբազան Կաթուղիկոսն տեղեկանալ
“ ի ձէնջ, հանդերձ այլ կարեւոր խորհրդով և տեղեկու-
“ թեամբ. քանզի վարկ մեծ ունի զձէնջ, և ակնկալութիւն
“ բազում բարեաց ազգիս աջակցութեամբ ձերով, և այսմ
“ խելամուտ արարի ես զնա յօրէ անտի ճանաչելոյ իմ զնա
“ դիմաք։ Եւ զի կամի նա ես կարդել զձեզ զլուխ ընկերու-
“ թեանն ազգայնոցս որ ի տէրութեանդ, ի ձեռս ձեր առան-
“ դել զհաւաքեալ արծաթն և հասուցանել զայն նպատակի
“ իւրում. քանզի մի հոգի ճանաչէ նա ի շորեսին անձինս
“ մեր, և զերկոսին վարժարանս մի մարմին գիտէ, և զայս
“ ինքնին խելամուտ լեալ է, և յայտնեալ ակնուն նա բազում
“ բարեաց հասարակաց ազգիս։ Ապա չմնայ ինձ այլ ինչ ձեզ
“ գրել, բաց ի խնդրելոյ առնել Ձեր ընդ այս արոշ և փութով

„ պատասխանի, հանդերձ թելադրութեամբ շրջաբերական
„ թղթոյ զոր կամի նա հրատարակել, և որ կարօտի հարատար
„ ձեր գրչին, թէ օրպէսի պատշաճ բառիւք և ազգոյ բանիւք
„ պարտ էցէ զայն յօրինել ի գլխոյ նորա։

„ Ի վախճանի խնդրեմ ես գիտել, թէ օրպէս յաջողակ և
„ օգտակար Ձեզ թուի հաւաքումն արծաթոյ, մի անգամ և
„ եթէ լիցի, թէ բազում անգամ հանապազորդեցի այն, տա-
„ ՀԼՔ ինձ ընդ այս զկարծիս ձեր գրով և թելադրութեամբ
„ յօրինելով և զայն նոյնպէս։ . . .

„ Եւ որպէս ի նախընթաց իմ ծանուցի Ձեզ, զգալուստն
„ նորոգ Պատրիարքին ազգիս, ահա զկնի ութ աւուրց անտի
„ արար նա ընդհանուր ժողով ի Պատրիարքարանի ի 16 ամ-
„ սոյս, և որոշեաց կարգել Գերագոյն ժողով, ընտրեալ
„ յիւրաքանչիւր արուեստաւորաց, և հոգեւորական ժողով
„ ի քանի մի երեւելի եկեղեցականաց, որք և հաստատեցին
„ ի նմանէ։

„ Եւ զկնի արձակելոյ նորա զընդհանուր ժողովն եկն ի Մի-
„ ՀԱՐԻՆ յառաջին այցելութիւն Սրբազան Կաթուղիկոսին,
„ առ որում գոյց և ես, և յանդիման եղէ նմա զառաջինն,
„ քաղաքավարութեամբ իմն ողջունեաց զիս նա, և ասաց թէ
„ ցանկալի է նմա տեսութիւն իմ։

„ Գնացից ես ապա ընդ Սրբազանին յայց նմա, և խօսե-
„ ցայց զկարեւորացն, հայեցեալ ի գործս։

„ Մնամք և ցանկամք տեսանել զբարեկարգութիւն ազ-
„ գային գործոց յիշխանութեան սորա . . . նոյնպէս և զյա-
„ ՀՈՂՈՒԹԻՒՆ գործոյ վարժարանիս, ըստ բանից և գրով
„ խոստման սորա որ առ բարեկամս մեր տատ և կուսակիցս իւր։

„ Մնամ միշտ

„ Գերապատիւ Հայրութեանդ

„ Ի Պոլիս. 20/8 Նոյեմբ. 1858.

„ Հոգեկցորդ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՐԵԱՆՑ. „

Պատասխանի Գարբրիել վարդապետի, տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի, օրինակ զայս.

“ Գերապատիւ Հայր անձկալի.

*“ Արդ իսկ ընկալեալ զցանկալի նամակ Ձեր որ ի 20 ամ-
“ սոյս՝ փութամ ի պատասխանին և նախ զայս ասեմ, զի
“ արդարեւ նշանակ մեծի ողորմութեանն Աստուծոյ ի վերայ
“ ազգիս արժան է համարել զամբառնալ Սրբազան Տեառն
“ Մատթէոսի յաթոռ Կաթողիկոսութեան յայսպիսում ժա-
“ մանակի՝ յորում ազգս մեր առաւել քան յայլ ամենայն
“ ժամանակս թուի զգալ զցաւս վերացս իւրոց և ի գարման
“ նոցին ակնապարել։*

*“ Եւ չիք երկբայութիւն, զի և մի ի հզօրագունից անտի
“ գարմանոցն է բարեպաշտ և ազգային դասախարակութիւն
“ մանկտուոյն մերոյ ի Փարիզ, ձեռամբ ազգասէր և աշխա-
“ տասէր, անձնանուէր և բարեկրօն և հմուտ անձանց։*

*“ Սակայն գործ մի դժուարին է յոյժ, որպէս և գիտէք,
“ միաբանել յամենայնի զխորհուրդս և զգործս մեր ընդ խոր-
“ հրդոց և գիտմանց այլ և այլ քաղաքական պետութեանց,
“ յորս բաշխեալ և տրոհեալ է ազգս մեր։ Սմին իրի ի պա-
“ տասխանի հարցմանն Սրբազանին և Ձեր հարկիմ ասել ան-
“ պատրուակ բանիւ զկարծիս իմ, խնդրելով զի բաց ի Ձէնջ
“ մի՛ ոք գիտասցէ, զի մի՛ անուղիղ իմացամբ իմասցուս շփո-
“ թութիւն ի միտս և ի խօսս ամբոխին ծնանիցի։*

*“ Արդ Ռուսաց պետութիւն չախորժէ բնաւ ընդ դասախա-
“ բակել հպատակացն իւրոց ի Վաղղիա, թէպէտ և յայտ-
“ նապէս չասէ զայն . . . և չկարէ իսկ ախորժել՝ ցորչափ
“ իւրն քաղաքականութիւն հեռի է ի Վաղղիականէն . . . սմին
“ իրի և պատճառք այսչափ փութոյն և երագութեանն որով
“ շնորհեաց մեզ հրամանս և ազատութիւնս բանալոյ և յա-
“ ռաջ վարելոյ ասասէն ընդ իւրով ձեռամբ և հսկողութեամբ
“ ուսումնարան այսպիսի՝ այն է գլխաւորապէս, զի ոչ միայն*

“ Ռուսաբնակ պատանիք, այլ և ոչ Օսմանեան հպատակքն
“ կարօտացին դիմել ի Փարիզ յուսումն և ի դատխարակու-
“ թիւն, այլ այսր եկեսցեն։

“ Ճշմարիտ է ըստ մեզ, և յոյժ իսկ ճշմարիտ, և ի Ռուսացն
“ իսկ իմաստնոց և յաւագաց խոստովանեալ, զի յառաջա-
“ դիմութիւն ուսմանց և արուեստից ի Ռուսիա, եւս և ի բուն
“ նոցին ի Պեթերպուրկ և ի Մոսքուա, ի կէս չէ տակաւին
“ յառաջադիմութեան Գաղղիոյ, այլ քաղաքականութիւն
“ պետութեանս այլով աչօք հայի յայս ամենայն, և այլազգ
“ առնէ զդատաստան. և եթէ յոյժ ստիպիցի՝ ասէ իսկ հա-
“ մարձակ, և իրաւամբ արդեօք, ըստ արեւելեան առակին,
“ թէ Մորուաք գլխոյ զոհեսցին. և թէ, շատ իսկ է Հայ ման-
“ կըտուոյն այնքան առնուլ լուսաւորութիւն որքան տանն նո-
“ ցա ճեմարանք, համալսարանք, Լիկէոնք, վարժարանք,
“ ուսումնարանք, և բիւրաւոր դպրոցք Ռուսիոյ, եւայլն
“ եւայլն։

“ Այս խորհուրդ քաղաքականութեան Ռուսաց ուրշափ և
“ իրաւացի իցէ կամ թուիցի, ապաքէն ոչ վասն Օսմանեան
“ հպատակաց ունի զօրութիւն, այլ վասն Ռուսահայոց եւեթ.
“ քանզի զիտէ և պետութիւնն զի Հայկազունք Տաճկաստանի
“ լոկ և թափուր գոլով յամենայն ուսումնական նպաստից
“ ի խնդիր եղանեն նոցին ուր և դտանիցեն։ Այսու ամենայ-
“ նիւ հանդերձ՝ ոչ ախորժ հաճութեամբ տեսանէ զյառաջել
“ նոցին եւս խուռն բազմութեամբ յԱնգղիա, յԱմերիկա
“ և ի Գաղղիա, մանաւանդ զի զիտէ և զայն՝ զի երիտա-
“ սարդք ոմանք ի մերոցն ի Փարիզ դեղերեալք կամ այլուր,
“ (զորօրինակ և Ոսկանեանն և այլք,) ի դարձին իւրեանց
“ յարեւելս ոչ սակաւ զրգռեն զազգակիցս իւրեանց յախուռն
“ բանիւք և անխոհեմ զրուածովք ընդդեմ Ռուսաց և քա-
“ ղաքականութեան սոցա։

“ Զայս ամենայն աչք բացօք և ի մօտոյ նկատեալ ասեմ,
“ թէ Վեհափառ Տէրն դժուարաւ յոյժ կարողացի նպաստ
“ լինել ուղղակի հաստատութեան փարիզեան վարժարանին՝
“ յետ մուտանելոյն ի սահմանս Ռուսիոյ։ Վասն որոյ պարտ

«և արժան է նմա առնապարել և փութալ ժամ մի յառաջ
«ի հաստատութիւն այնր վարժարանի՝ մինչդեռ տակաւին
«ի Կոստանդնուպօլիս գտանիցի։ Եւ այս եթէ ախորժիցէք
«լսել զիմ կարծիս, ասեմ.

«Ա. Զէ արժան վատահիլ ի կազմութիւն, ի գործունէու-
«թիւն և ի հաստատութիւն որպիսւոյ և իցէ ընկերութեան
«յարեւելս, որպէս վկայեն բազմամեայ փորձն և առողջ միտք
«հեռատեաց։

«Բ. Զէ արժան և յուսալ տարեկան դրամաժողովոյ յու-
«սալ յառին ունել զվարժարանն։

«Գ. Հարկ է ընդ հակառակն փութալ պատրաստել դրա-
«մագլուխ մի՝ գէթ միլիոն մի ֆրանքաց, և գնեղել զայն
«ոչ յարեւելս, այլ ի Փարիզ՝ յանքոյթ ինչ տեղւոջ ի շահե-
«ցողութիւն, և շահուքն պահել ի վարժարանի անդ որպիս
«ազգաւոյց 20 կամ 25, որ ի Պոլիս և այլուր արդէն ուսեալք
«իցեն զհարկաւորագոյնս ի գիտութեանց և յարուեստից և
«ի լեզուաց, և ի Փարիզ կատարելագործել և եթ զնոսին
«առաքիցեն։

«Իսկ զհաւաքումն այնր դրամագլխոյ ոչ ոք այնպէս դիւ-
«բաւ և փութոյ յաջողեսցի առնել անշուշտ, որպէս Վեհա-
«փառ Տէրն, և այն մինչդեռ տակաւին այդր իցէ, միաբան
«խորհրդով ընդ նորընտիր Ս. բազան Պատրիարքին, ընդ
«ազգային ժողովոյն, և ընդ Սրբազան Պատրիարքին Երու-
«սաղէմի։ — Կոնդակ մի Սրբազանին գրեալ առ ամենայն
«Հայկազունս արեւելից զայսմ խնդրոյ, յորդորելով զամե-
«նեսեան ի հանդանակել յայս դրամաժողով ըստ իւրաքան-
«չիւր կարի, անտարակոյս պղտաէս լիցի, եթէ վարդապետք
«ոմանք կամ երիցունք շրջեսցին անձամբ ամենայն ուրեք և
«հաւաքիցեն զդրամն։

«Ըստ այսց խմաստից շարադրեցից ինչ մտադիր սիրով
«և յղեցից յաջորդաւ։

«Պարտ է և մարմ իսկ պահանջել ազգասիրն և Յերուսա-
«զեմի վանիցն զուսմար մեծ առ մի հոգաց և եթ։...

«Վերոյիշեալ շնորհ ունելով յաղագս արտաքուստ բարեմաղ-

„ Թուքեանց բաղմարդիւն Հօրդ Միրելոյ, և զիոխադարձ
„ ողջոյն մերոցն մատուցանելով.

„ Մնամ

„ Գերապատիւ Հայրութեանդ

„ Թէոդոսիա. 30. Նոյեմբ. 1858.

„ Հոգեկցորդ եղբայր

„ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ. „

Ի բանից պատասխանւոյ ասոի բազում ինչ կարեն վերծանողք խմաստասիրել և գտանել ։ . . .

Յօրինեալ առաքէ Գաբրիէլ վարդապետ զշրջաբերական թուղթն այն, ընդ որ թէպէտ և հաճի Արքազան Կաթուղիկոսն, բայց յապաղէ և չկամի հրատարակել զայն, կասկածելով զհաճութենէ Ռուսաց տէրութեան ընդ այն, բատաղդարարութեան Գաբրիէլ վարդապետի Անյվազեան, և Աղայ Յովհաննեանի Մոսկուեցւոյ զոր վերագոյն յիշատակեցաք ։

Սնոտի կասկած և հաւատիք անձնասիրութեան և փառասիրութեան ։ . . .

Ընդ յապաղումն և չկամութիւն Կաթուղիկոսին հրատարակելով զշրջաբերական թուղթն այն, թէպէտ և տրտմի և ցաւի Սարգիս վարդապետ, սակայն տակաւին ակնուն բարեմտութեամբ իւրով յօժանդակութենէ նորին . . . զուր ակնկալութիւն որ յանձնասիրութենէ և ի փառասիրութենէ ։ . . .

Թուղթ Սարգսի վարդապետի առ Գաբրիէլ վարդապետ, յորում տայ տեղեկութիւն զնորընտիր Պատրիարքէն, և զկամաց նորին, հայեցեալ յօժանդակութիւն վարժարանին ի Փարիզ, զդնացից և զբնաւորութենէ ազգայնոցս որ ի Պոլիս. օրինակ զայս.

« Գերապատիւ Հայր և Սիրելեալ Եղբայր ·

« Յետ մի անգամ և երկիցս հանդիպելոյ իմ Պատրիարքին
« և գնալոյ յայց նմին ընդ Կաթուղիկոսին, և քաղաքավա-
« րութեամբ ընդունելոյ նորա զիս, ապա զկնի եօթնեկի միոյ
« անտի եհաս ի ձեռս իմ ի մերոցն թուղթ մի խնդակցու-
« թեան և յանձնարարութեան առ Պատրիարքն, գրեալ
« ի գիմաց մեր երեցունցս, յոր ստորագրեալ և իմ մատուցի
« նմա, ընդ որ հաճեալ նորա խոստացաւ մեզ զպաշտպանու-
« թիւն իւր և զօժանդակութիւն վարժարանիս, ընդ լրումն
« կազմութեան Գերագոյն Ժողովոյն։ Այն ինչ խօսէր նա
« ընդ իս, ահա եհաս յանկարծ Սրբազան Կաթուղիկոսն, և
« նորոգեաց զիսօս մեր և հաստատեաց զայն խոստմամբ,
« օժանդակութեան իւրոյ, ժողովել ի գալոյ եօթնեկի զերեւե-
« լիսն ի Գերագոյն Ժողովոյն, յորոշել և ի կազմել խնամա-
« կալաց ժողով մի յօժանդակութիւն վարժարանիս, և ապա
« հրատարակել զշրջաբերական թուղթ իւր յամենայն տե-
« ղիս . . .

« Յուսամ թէ գրեալ իցէք և դուք ցարդ առ Պատրի-
« արքն թուղթ խնդակցութեան և յանձնարարութեան նը-
« պաստելոյ վարժարանիս, հանդերձ քաղաքական տեսու-
« թեամբ . . .

« Մի՛ պակաս առնէք, ըստ ներելոյ ժամանակիդ, գրել
« մերթ ընդ մերթ սատ առ ոմանս յերեւելեաց ազգիս՝ որ-
« պէս առ Գէորգ Պէյ Երամեան, առ որում յիշատակ ձեր
« մեծ է, և առ Պօղոս Պէյ Տատեան։ . . . . . .

. . . . . .

. . . . . .

. . . . . .

. . . . . .

« Ո՛չ կարեմ պատմել ձեզ, Ե՛ղբայր, զսրտմտութիւն և
« զցաւս սրտիս որ ընդ հանգամանս ազգայնոց մերոց այսր,
« զանձնասիրութենէ և զանգթութենէ ոմանց ասեմ, և ըստ-

„ վերջին կարօտութենէ այլոց ամենց : . . . Իսկ գարման
„ այսոցիկ չարեաց , թէպէտ և զկրթութիւն սրտի և մտաց
„ գիտեմք , և զայն անդատին ի մանկութենէ , այլ որպէս
„ տեսիք երբեմն և տեսանէք այժմ զդժուարութիւն նորին
„ ասա . . .

„ Ապա այցելութեան վերին կարօտի . . .

„ Մեամ

„ Գերապատիւ Հայրութեանդ

„ Ի Պօլիս . 5 գեկտ . 1858 .

„ Հոգեկցորդ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ . ԹԷՄՐԻՈՐԵԱՆ . „

Զցաւալից թուղթն զոր ընդունի Սարգիս վարդապետ յընկերաց իւրոց որք ի Փարիզ , ընթեռնու յունկն Սրբազան Կաթուղիկոսին , առ ի շարժել զնա արդեօք ի կարեկցութիւն , յորոց զմին յիշատակեացուք աստ , և զարդիւնս որ անտի , օրինակ զայս .

„ Ամենապատիւ Հայր մեր և վարդապետ .

„ Լուեալ ի նախընթաց թղթոյ հարազատիս զանձնահալ
„ ծիւրութիւն իմ և զիսթութիւն ոչինչ զարմացիք տեսեալ
„ և լուեալ զի յայս նուագ ստիպիմք բռնադատիմք խորհրդով
„ և պատուիրանաւ բժշկաց տալ զհրաժեշտ մեր ի վերատես-
„ չութենէ վարժարանին որ այսպէս ի դրուն մահու առեալ
„ էած զիս , որպէս քաջայայտ տեսջիք յարդարադատ բանից
„ երկոցուն բժշկաց . . .

„ Այս քանի ամիսք են , չատացեալ թէ ամք , զի գրեալ
„ ծանուցաք զողորմ պայման մեր , և վարժարանիս առ մեծն
„ և առ փոքրն , և ամենեքին համբերութիւն քարոզեցին մեզ ,
„ և մեռոյ խառնմամբ ծայրայր զնամականին արարին ,

„ Համբերել այս՝ համբերեցաք և անմուն իրրեւ զորոշ
„ առաջի կորչի այնպէս կացաք մեացաք առաջի սոսկալի և
„ անօրինակ կարօտութեան արծաթոյ ի սէր Աստուծոյ և
„ Աղգիս, այլ ընութիւն մարմնոյ մերոյ տկարացեալ և ան-
„ կեալ յուժոյ օր քան զօր և ծիւրեալ ծնգեալ՝ եհաս ժամա-
„ նեցաւ արդ յակն տապանի, և եթէ ըստ պատուիրանի
„ բժշկաց չփութայցեմ՝ ձեռնթափ ելանել թողուլ զամենայն՝
„ ոչ եւս իցէ ժամանակ խրամակարկաս առնելոյ զխրամա-
„ տեալ և զխանգարեալ առողջութիւնս։

„ Զինչ ասացից և զարտասուաց և զգառնադառն գանգա-
„ տանաց և ողբոց Խորենայ և Անենիկի ի մեռելատիպ տեսիլ
„ դիմացս և ուրուականաց մարմնոյս և մահագոյժ սպառնա-
„ լեաց բժշկաց։ . . .

„ Յորմէ հետէ ելէք մեկնեցայք ասել անուն յուսով զար-
„ մանոյ աղեսից՝ այնպէս եղծաւ խանգարեցաւ առողջութիւն
„ իմ և վատեալ ծնգեցայ, զի ոչ եւս ճանաչին զիս տեսողք։
„ Եւ ո՞ այն իցէ որ այսպիսի բազմախառն նեղութեանց և
„ վշտաց և տառապանաց և հոգոյ, և ի վեր քան զամենեսին՝
„ այս գժոխքիս չքաւորութեան արծաթոյ և որ անուն յա-
„ ռաջ եկեալ ծանրանախատ նշաւակութեանց տեւել տակալ
„ բաւիցէ զօրիցէ։

„ Ահ ոչ, չէր և չէր պարտ մեզ այսպէս դիւրալուր լեալ
„ խոտաբանութեանց՝ յայս վտանգ կորստեան հասուցանել
„ զկեանս մեր, և իրրեւ անձնասպան տատակոսոծ կշտամբիլ
„ ի հարտարաց։

„ Ահա ի հնգեատասան աւուրց հետէ ոչ ուտեմ, ոչ ննջեմ
„ ոչ հալեմ և զդոյզն ինչ զօր առնուս ի կերակուր և ի սը-
„ նունդ. Ջերմ տատիկ տոչորէ զմարմին իմ. զի՞ մի մի թուլ-
„ ցեմ, ոչ եւս կեամ։ . . . Ցեռանէք, Հայր, զի այսպէս յա-
„ զիս ապատան՝ հարկ անհրաժեշտ էր մեզ անեալ խորհուրդ
„ դոց բժշկաց և փութալ ելանել յանխնամ յանօգնական,
„ յանպաշտպան վարժարանէս, որ այլ եւս ամիսք երկու՝ և
„ գերեզման մեր եղիցի։ . . .

„ Նմին իրի իսկ ընդ ամին գրեալ ծանուցաք առ Սրբազան

«Կաթուղիկոս, առ Պատրիարքն, առ Մոմճեան Տ. Մկրտիչ,
«առ Աղաթոնեան Տ. Մկրտիչ, և առ Պ. Նշան, զի խորհուրդ
«անդարձական և անյեղլի կալեալ է մեր թողուլ եկանել
«ի բաց ի վարժարանէս, յանձնելով զմանկտին և զրանալիս
«և զամենայն որ ի նմա առ Յակոբ Էֆէնտի, առ որ ծանու-
«ցաք իսկ զառաջադրութիւն մեր, և խոստացաւ զեկուցանել
«զայն Պատրիարքին, եթէ զէթ ցվերջ կոյս յունուարի չփու-
«թայցեն հատուցանել մեզ տան և հինգ հազար ֆրանքս
«ի հատուցումն պարտուց, և հրաման առ սեղանաւոր որ
«քաղաքիս տալոյ մեզ ամիս յամսոյ ֆրանքս չորս հազար
«անխափան։

«Եթէ չիցէ ազգին կամք ցրուելոյ զվարժարան, թող
«յղեսցէ փոխանակ մեր վերատեսուչ, որպէս զի յանձն
«որարեալ նոցա զամենայն ելցուք մեք ի բաց չեւ մահացեալ
«իսպառ։...

«Գիտասջիք և դուք, Հայր, զի ի սէր Աստուծոյ և Ազգին
«զոգի ի բոին կալեալ ժուժկալեացուք մինչեւ ց30 յունուա-
«ր, և ի վաղիւ անդր կատարեացուք զխորհուրդ մեր, առ
«ոչինչ գրեացուք զամենայն օգնութիւն և զնպաստ մատեա-
«կան եթէ ց30 յունուարի չատաքեացին մեզ ողջ հիգեստական
«հազար ֆրանք և հրաման և իշխանութիւն ընդունելոյ յայն
«անուն սեղանաւորի քաղաքիս ամսոյ ամսոյ ֆրանք չորս հա-
«զար, այսու միտկ պայմանաւ և եթէ կարող եմք յանձն առ-
«նուլ դարձեալ վերատեսուչ կալ վարժարանիս, զի այնու
«և եթէ փոքր մի դիւր գտցուք նեղութեանց մերոց և ծան-
«բարեան վատակոց։

«Գրեցի առ մայրն իմ փութով գալ այսր, յորդորեցէք
«և փութացուցէք և Դուք ապաշեմ, որպէս զի խնամ կալ-
«ցի մայրապար խօթացեալ մարմնոյս. փութացէք և դուք
«Հայր, ի գերկս վշտահար և ի դրուն մահու հասեալ որ-
«դեկացդ, որք մեծապէս կարօտին խնամացդ և զթոյն հայ-
«բենի։...

«Ա՛ սայր զի ոչ վերջին իմ լինէր առ Հայրդ անձկալի
«գրութիւնս։...

„ Ո՛հ, որպէս տանջիմ կոչկոճիմ և հալիմ մաշիմ առ ցա-
„ ւոցս սատակութեան։...

„ Ա՛յս լինելոց էր ուրեմն արիտուր անձնանուէր և անձն-
„ ուրաց ազգասիրութեան։....

„ Փարիզ. 24 դեկտ. 1858.

„ Ձերդ Անձկաւէտ որդի

„ ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. ԳԱԼՖԱՅԵԱՆ.”

„ Յաւելից և ես բանս ինչ համառօտ առ ցուցանել Ձեզ
„ զհամակամ և զհամախոհ միութիւն իմ ընդ հարազատիս։
„ Մի՛ ինչ յուսացեն և յինէն, զի ընդ եղբօր իմոյ, և ո՛չ
„ զմի օր յանձն առնում և ես կալ ի վարժարանիս, եթէ ցՅՕ
„ յունուարի չընդունիցեմք զլրումն երկուց պայմանաց մե-
„ րոց։

„ Ընթերցէք զթուղթս զոյս յականջս Սրբազնակատար
„ Հօր մերում և Տեառն, առ նա և գրեցաւ առանձին, որպէս
„ և առ Պատրիարքն, ցուցանելով զանդարձ և հաստատուն
„ կամս հրաժարելոյ մեր ի պաշտամանէս։

„ Ցուսամ զի ի բանից անտի բժշկացն երկոցուն հաւա-
„ տացեն այսուհետեւ եթէ ոչ մեռայ և սուտ էին զոր ցարդ
„ գրեացն և գոչեացն թէ հալիմք և տառապիմք ի դժոխքիմ-
„ բեր հոգոց աստի։ Զարմացայ յոյժ զի հարազատն իմ
„ բաւեաց տողել զդիրս զոյս և զայլն երիս առ կարեւոր
„ բարեկամն, այլ քանի՛ աւուրս և քանի՛ նեղութեամբ.
„ և արդ անկեալ կայ ի ժամուս տապացեալ Ջերմամբ։...

„ Իսկ ես ողորմելի և անոք մնացեալ ոչ այլ ինչ ունիմ
„ միխիթարութիւն բայց զարտասուս... և խորհիմ յուսահա-
„ տաբար թէ զի՞նչ եղիցի որբացեալ տան մերում եթէ ի սի-
„ բելոյ հարազատիս զրկիցիմք։... Գրեցաք դարձեալ առ
„ մայրն մեր. յորդորեցէք ազգս բանիւք մի՛ հայիլ ի ձմեռն
„ այլ նախ քան զգարուն փութալ գալ։ Այնչափ այլք

„ ի կանանց քաջացան, քաջասցի փոքր մի և ինքն ի սէր
„ որդւոյն . . .

Ահա յաւելից նամակ Գալֆայեան հարազատաց առ Սարգիս վարդապետ, զոր և ընթեռնու նա յանկանչս Արքապան Կաթուղիկոսին, և նորա առեալ զայն յղէ առ Պատրիարքն ընթեռնուլ, և գրէ առ Հ. Սարգիս վարդապետ օրինակ զայս.

„ Արժանապատիւ և բազմարգիւն Սիրելի իմ ի Տէր.

„ Զայն յաւելի նամակն, որ յաւէտ ճմլէր և վշտացուցա-
„ նէր զսիրտ և զոգի ճշմարիտ ազգասիրաց, առաքեցի առ
„ Արքապան Պատրիարքն, ասելով թէ այս օրինակ տատա-
„ պանս ո՞ կարէ տակալ, որպէս և տքա անմխիթար տքնին
„ և տոկան. մի թէ՛ սալ գարբնաց իցէ՞ սիրտ տցին, որ տատ-
„ և անտի կռանեալ վշտաց և նեղութեանց հարկանին, և խա-
„ պառ համբերատար ոգւով անշարժ մնան.

„ Տեսցուք Սիրելի իմ զի՞նչ ունի առնել ժողով նոցին որ
„ ոչ հաճեցաւ ընդ ներկայ նոցին գտանիլ մեր.

„ Յօրթապիւղ. 22 դեկտ. 1858.

„ Նուաստ ծառայ Ասուծոյ

„ ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ. „

Եւ ահա կարեկցութեան նամակ Արքապան Կաթողիկոսին առ Սարգիս վարդապետ ի Պոլիս ի Բերայ, և գտանին շարեալ տարեալ անտի, և մխիթարութիւն տուեալ նոցա, եղելոցն ի Փարիզ և ի Պոլիս . . .

Խէր ճշմարտութեան ամենայն բանից վերս խչեալ թղթոյ Գալֆայեան հարազատաց վկայեսցեն զնաց նոցա ապա, զոր տեսեալ վերծանողաց պատմութեանս՝ արասցեն զարժան դատաստան . . .

Թուղթ ազդարարութեան Պատրիարքին առ Սարգիս վարդապետ վասն բանի օժանդակութեան Հայկազեան վարժարանին ի Փարիզ, օրինակ զայս.

„ Շնորհափայլ Սիրելի.

„ Ի կարգադրութիւն գործոց Ազգային վարժարանին Փա-
„ րիզու յերեկեան գումարման Գերագոյն ժողովոյ կազմե-
„ ցաք յանձնարարական ժողով, որչափ մարթ է փութով ու-
„ նի բան պահանջանաց պարագայիցն գումարել ի տեսչութի-
„ թիւն կարեւորաց. վասն որոյ յայտ առնեմ ձեր սիրելու-
„ թեան այսօր կամ վաղիւ անյապաղ տեսանել զՊարտիզ-
„ պանեան Աւետիս Աղայ առնուլ ի նմանէ զպարտուպատ-
„ շաճ տեղեկութիւնս.

„ Ողջ լերուք

„ 27 դեկտ. 1858.

„ Պատրիարքարան Հայոց ի Կոստանդնուպոլիս.

„ ԳԷՈՐԳ ՊԱՏՐԻԱՐՔ. Կ. Պ. „

(Առ Գերապատիւ և Շնորհափայլ Սարգիս վարդապետ Թէոդորեան ի Բերա.)

Ի վաղիւ անդր բան վերայիշեալ բանից թղթոյ Արքազան Պատրիարքին, գնոյ Սարգիս վարդապետ առ Պարտիզպանեան Աւետիս Աղայ տեղեկանալ զայնմանէ, և այսչափ միայն տեղեկանալ անտի, թէ յանձնարարական ժողովն ունի հոգալ զայնմանէ ձեռամբ Պարոն Մկրտիչ Մոմճեանի, հատուցանել ի Փարիզ գումար ինչ արծաթոյ ի կարեւոր պէտս վարժարանին.

Եւ իբրեւ գնացեալ հարցանէ նա ի Պ. Մոմճեանէ, ասէ նա թէ այո՝ յանձնարարական ժողովն խնդրեալ ի նմանէ հայթայթել ուստեր 5,000 ֆրանք և առաքել զայն ի Փարիզ,

մինչեւ հաւաքեցէ նա զայն ատի և անտի հանգանակութեամբ։

Եւ ահա արդիւնք որ ի ցաւալից թղթոյ Գալֆայեան հարազատաց որ ի Փարիզ, և ի կարեկցութենէ Վեհափառ Կաթողիկոսին, և ի հոգացողութենէ Սրբազան Պատրիարքին։

Կայցէ այսուհետեւ յոյս օժանդակութեան և հաստատութեան ազգային վարժարանին ի Փարիզ... ոչ բնաւ, հայեցեալ յանհաստատութիւն մտաց և յանզգայութիւն սրտի ազգայնոցս ի Պոլիս... ապա կարի իրաւամբք ասացաք թէ «Վա՛յ այնոցիկ որք յուսան ի նոսին։»

Թողումք ասել զհակառակութենէն որ ի ներքուստ. որպէս յայտնապէս տեսանի ի բանս թղթոց Խորենայ և Ամբրոսիոսի Գալֆայեան հարազատաց, առ Սարգիս վարդապետ Թէոդորեան, զոր և ի դէպ համարիմք յիշատակել ատ ի գիտութիւն և ի գատաստան ընթերցողաց և որ ունի օրինակ զայս.

«Ամենաերելի Հայր մեր և վարդապետ.

«Ոչ սակաւ խնդացաք յընդունել անդ զՁերդ որ ի 28 ան-
«ցելոյն, իմացեալ անտի զքաջառողջ բարեկենդանութիւն
«Սիրելւոյ Հօրդ, ընդ որ և աղօթող իսկ եմք հարազատքս
«երկոքին, և մանաւանդ թէ երեքին, ընդ բարեկրօն աշա-
«կերտս մեր. և յուսամք զի Ձեռն Հզօրին հանապազորդեսցէ
«հեղուլ զխնամս իւր յաստուածարեալ գլուխ Պատուական
«Հօրդ մերում։

«Առ անբաւ նեղութեամբք մերով զիւրդ նախանձելի է
«յաջողութիւն Տեր. Գաբրիէլ վարդապետին ի վիճակի անդ
«իւրում. ընթերցմամբք ընդ հուպ յամենաթերթի անդ յուլիսի
«զմեծափառ և զարքայական ընդունելութիւն նորա ի նոր
«Նախիջեւան։

«Յաւելից համառօտիւ ասել, զի Տ. Յարութիւն ումն Խա-
«լիպեան խոստացեալ է գրով տալ դրամագլուխ բաւական
«30 մանկանց, և 200,000 Ֆրանքս առաջի վկայից, յանձ-

„ Նեալ է անդէն ի ձեռս վարդապետին, միայն ի կառուցումն
„ վարժարանին։

„ Զինչ ունիցին ասել առ այս Պօլսեցիք։...

„ Այլ և ոչ այսու շատացեալ այրն այն ազնուախոհ և
„ ազգասէր, ազաչէ զվարդապետն բանալ փութով տպարան
„ յանուն նորա, զորոյ և զամենայն ծախս յինքն վերայ առ-
„ նու, վասն որոյ և ահա վարդապետն խնդրէ արդ զամենայն
„ ազգ տառից Արևելոյ, մեռեալ և այլն. համառօտ ասել՝
„ զամենայն զոր ինչ կարեւոր գիտէք ի կառուցումն տպա-
„ բանին։ Տեսանէք զի ոչ խոստանալ միայն գիտեն,
„ այլ և յարդիւնս զիսոստմունս իւրեանց ածել։ Իսկ մերքն։
„ Աւաղ։...

„ Գիտէք իսկ զի Գաբրիէլ վարդապետն ստէպ ստէպ գրէր
„ ազաչէր զմեզ հայել տեսանել եթէ չիք յոյս հաստատու-
„ թեան վարժարանիս՝ մի և մի իւիք յապաղել, օր մի յա-
„ ռաջ թօթափել զփոշին ոտից ի վերայ սոցա, և փութալ
„ ուր մշակքն սակաւ և հունձքն են առատ։... Արդ և հետ
„ զհետէ ի Ռուսահայոց անտի սոսկականաց ընդունիմք
„ թուղթս, յորս ազաչեն պաղատին մի՛ եւս յապաղել և
„ տուայտել զանձինս մեր վասն արանց որ զյարդ ձեր և
„ զպէտս ոչ ճանաչեն, ասեն, և այլ բազմաք թախանձանաք
„ յորդոր լինին մեզ թողուլ զվարժարանս մեր, և խոստա-
„ նան ընդ միոյ հաստատանել անդ հարիւր։

„ Եւ Գաբրիէլ վարդապետ յաւելու. „ Փութացուցէք
„ զծերունազարդ Գերապատիւ վարդապետն մեր քննել խմա-
„ նալ որոշակի ինչ զձէնչ, զթոշակէդ և զվարժարանէդ,
„ եթէ տակաւին սնոտիաբան խոստմունք են, եթէ դեռ
„ ի բանս և եթ ապատատն են Պօլսեցիք, և ի գործս կար-
„ կամք լցեն, և չնոդայցեն ինչ վասն ձեր և վասն վարժա-
„ բանին, երդմնեցուցեալ զձեզ ի սէր հայրենեաց և ի սէր
„ մերս եղբայրութեան՝ մի՛ այլ եւս յապաղիցէք, մի՛ եւս
„ մեռուցանէք զանձինս վասն արանց որ զձեր պէտս ոչ
„ ճանաչեն, այլ պահեցէք զթանկագին աւուրս ձեր վասն
„ նոցա, որ ազաչեն և որ զառկոսիս աշխատութեան ձերոյ

„ տացեն հարիւրապատիկ առաջի ձեր բացեալ ասպարէզ
„ լայն և ընդարձակ ի սերմանել և ի հնձել ։ . . .

„ Աղէ՝ փութացէք աղաչեմք խօսել որոց պէտք իցեն
„ զիրացս մերոց, առաջի դնել նոցա զխոստմունս Հայոց
„ Պեսարապիոյ, և եթէ դեռ եւս անխլիրտ և անվոյթս կան,
„ եթէ դեռ չկամին տալ մեզ զայն կամ զոչ, զի է մեզ
„ այլ եւս վասն արանց այնպիսեաց վատակել, որ զմահ
„ մեր առ ոչինչ համարին, նա մոնաւանդ գուցէ և այնմ
„ իսկ մեռան աւետեաց ։ . . .

„ Ցուշ լիցի ձեզ զի որոշակի ինչ մեամբք ընդունել ի ձէնջ
„ պատասխանի, այո՝ կամ ոչ ։ Ցուցէ՛ք նոցա՝ թէ պատշաճ
„ դատիցիք զայս թուղթ որոց անկ իցէ, կամ զէթ զբանս
„ որ ի սմա, յիշեցուցէք ԱՄԵՆԵՅՈՒՆ . . . Ողջունիւ առ
„ ի մէջ ։

„ Եթէ իցէ արժանի ողջունին հանդիցէ ի վերայ նորա,
„ ապա թէ ոչ ի ձեզ դարձի ըստ Քրիստոսի ։

„ Ի Փարիզ. 5 օգոստ. 1858.

„ ԽՈՐԷՆ ԵՒ ԱՄԲՈՍԻՍ Վ. ԳԱԼՖԱՅԵԱՆ. „

Ահա հակառակութիւն հաստատութեան վարժարանին որ ի Փարիզ ի ներքուստ անտի . . . զդատաստանն որ ընդ այս թուղեալ այրոց՝ մեք այսչափ միայն ասացուք, թէ ահա և յայտնի բանս թղթոյ Գարրիէլ վարդապետի հակառակութիւն բանից տեսանի. „ Փութացուցէք, ասէ զծերունազարդ „ Գերապատիւ վարդապետն մեր քննել իմանալ որոշակի ինչ „ զձէնջ, զթուշակէդ և զվարժարանէդ ։ „

Ընդէր յորժամ ինքն վասն այսորիկ ի Պոլիս գնաց ոչ բնաւ զայցանէ հոգաց . . . ապա յայտ ուրեմն է, զի չկամէր նա ընդ հաստատութիւն վարժարանին ի Փարիզ, և ապա կարի յոյժ իրաւամբք ասացաք թէ „ Հզօրագոյն է անձնասիրութիւն „ մոնաւորաց քան զամենայն իրաւունս հասարակաց ։ „

Եւ վասն այսորիկ կորուսին գերի ազինք զազատութիւն իւրեանց։ . . .

Սակայն ի վերայ այսր ամենայնի համբերէ Սարգիս վարդապետ և զհամբերութիւն խնդրէ ընկերաց իւրոց յամենայն թուղթս իւր որ առ նոսա ի Փարիզ, յուսալով տակաւին յոգնականութիւն Սրբազան Կաթողիկոսին որ փոյթ մեծ ցուցանէ զհատուցումն վարժարանին, օժանդակելով նմին ստորագրութեամբ 10,000 դահեկան, և յորդորելով զայս հանդերձ թախանձանօք և հնարիւք, որպէս զՅովհաննէս և զՊօղոս Պէյս Տատեան, և զԿարապետ Ամիրա Պալեան. և իզարնալ նոցա՝ ինքն ձեռամբ իւրով ստորագրէ զանուն նոցա ի գրի յայն հանդուռնակութեան 5,000 դահեկան իւրաքանչիւր կողմանէ, և զայն իրրև ողորմութիւն վասն հոգւոյ ծնողաց իւրեանց։ . . . Սակայն և այնպէս զլանան նոքա տալ զայն զուսար արծաթոյ. ընդ որ զժուարեալ նորա՝ և ի յանդիմանութիւն նոցա, ասէ ի հանդիպի ուրեք, ուր գտանին վերոյիշեալ Պէյք և ամիրայն, թէ զմատանին իւր, (զընծայեալն ի Կարապետ Ամիրայէ Պալեան և զոր ունէր ի ձեռին) վաճառեսցէ յօժանդակութիւն Հայկազեան վարժարանին ի Փարիզ։

Սակայն և ի յանդիմանութենէ անտի եւս ոչ շարժին նոքա բնաւ, և մանաւանդ Յովհաննէս Պէյ, իրրև երդուեալ թշնամի վարժարանին ի Փարիզ, վասն չանալոյ վարդապետաց խրատու իւրոյ, գնալոյ ի Ռուսաստան և անդ աշխատիլ. ի նոյն կամս լինի և Կարապետ Ամիրա Պալեան, որոյ և առնէ Սարգիս վարդապետ պատասխանի, հարցանելով ցնոսա, թէ քանի միլիոն Հայք համարիցին նոքա յաշխարհի. ասեն նոքա իրրև չորս միլիոն։ Ասէ Սարգիս վարդապետ թէ ի տէրութեան Ռուսաց 200,000 Հայք հազիւ գտանին. ընդէր այդչափ հոգ և փոյթ է ձեզ վասն նոցա, և ոչինչ վասն մնացելոցն որք յայլ և այլ տէրութեան։ Լռեն նոքա և ոչ կարեն տալ պատասխանի . . . և նոքա են կարծեցեալ սիւնք ազգին Հայոց ի Պոլիս։ . . .

Թողումք ասել զկարծեցեալ պաշտպանեալսն հատատութեան վարժարանին ի Փարիզ, և գատատանեն օժանդակաց

նմին, որոց զղջացեալ ցաւին ընդ այն, ասելով, թէ ի զուր եառուն զարծաթն իւրեանց իւրաքանչիւր 5,000 ֆրանք, որպէս թէ ի ծով ամացին զայն... թէպէտ և որդիք իւրեանց ի Փարիզ և այլուր վատնեցին և վատնեն խենեշութեամբ 50,000 ֆր. ի տարեաջն, սակայն նոքա ոչ բնաւ զղջացեալ ցաւին ընդ այն, երիտասարդական հասակի տալով զայն, և ի հրահանգ նոցին կարեւոր արդեաք... ահա այսպիսի ճանաչմամբ հարուստ անձինք ունի ազգս Հայոց ի Պոլիս։...

Վա՛յ և եղո՛ւկ գիտնոց նորին, առ դրուն նոցին գեղերելոց։...

Իսկ կազմեալ ի Սրբազան Պատրիարքէն յանձնարարական ժողովն ոչինչ վճարէ ի կարգադրութիւն գործոյ Ազգային վարժարանին Փարիզու, և ոչ ինքն Սրբազան Պատրիարքն հատուցանէ զ5,000 դահեկանն, զոր խոստացեալ էր տարբերութեամբ իւրով ասելով թէ ի տիպերոյ Սրբազան Կաթողիկոսին տարբերեալ էր ինքն անդ յոչ կամաց։...

Ահա կարգադրութեան գործոց Ազգային վարժարանին Փարիզու, որ ի յանձնարարական ժողովոյ, և ահա օժանդակութիւն նմին, որ ի կազմողէն Ս. Պատրիարքէ Կոստանդնուպօլսոյ։...

Տեսեալ Սրբազան Կաթողիկոսին թէ ոչ զոյր եւս յոյս օժանդակութեան Փարիզեան վարժարանին յազգայնոց Պոլսոյ, զնէ զյոյս իւր յազգայինս Ռուսաստանի, և ասէ ածել ընդ իւր զՍարգիս վարդապետ ի Տիխիս առ ի հոգալ անդ զայնմանէ, և յէջմիածին ի ձեռնադրել զնա եպիսկոպոս, զոր և ասացեալ էր նմա բազում անգամ և առաջի բազմաց՝ թէ առաջին ձեռնադրեալն իւր լիցի Հ. Սարգիս վարդապետ Թէոդորեան։

Յանձն առնու Սարգիս վարդապետ գնալ ընդ Սրբազան Կաթողիկոսին յէջմիածին ոչ ցանկութեամբ եպիսկոպոսութեան, որպէս և տեսանի ապա, այլ ակնկալութեամբ օժանդակութեան վարժարանին։

Եւ վարդապետքն ոչք ի Փարիզ, Գալֆայեանք, ոչ միայն կարծեին արծաթոյ ի կարեւոր պէտս վարժարանին, այլ և նեղին ի պարտաւորց անտի նորին, այլոմքն հանդերձ...

այն էր պահանջումն 3,000 ֆրանք պարտուց ձէզայէրլեան Մկրտիչ Ամիրայի, զոր և վերագոյն յիշատակեցաք. քանզի պակասեալ նորա ի խոստումն իւր հատուցանել զայն ըստ պայմանեալ ժամանակին՝ նեղի Ամիրոսիս վարդապետ իրրև երաշխաւոր այնմ ի պարտատեառնէ անտի. վասն որոյ գրեն երկոքին Գալֆայեան եղբարք առ Սարգիս վարդապետ ի Պոլիս, և ազաչեն զնա ազատել զնոսա ի նեղութեանց անտի. օրինակ զայս.

„ Անձկալի Հայր մեր և վարդապետ Հոգեշնորհ.

„ Մեծաւ ցաւով ակնկալեալ մնայեաք թղթաբերիս, զի
„ ընդունիցիմք ինչ ի Զէնջ, այլ ամենայն յոյս և ակնկա-
„ լութինք ի դերեւ ելին, և մեք դարձեալ մնացուք լքեալ և
„ յուսակտուր։

„ Ահա յամաց հետէ չընդունիմք ի Զէնջ արծաթ. ուր
„ է որոշումն ժողովոյդ առաքելոյ մեզ յամենայն եօթնեկի
„ 3,000 ֆրանք։ Նեղութիւն մեծ յոյժ ունի զմեզ յամենայն
„ կողմանց։

„ Իսկ զինչ ասել իցէ մեզ զարծաթոյ 3,000 ֆրանք պարտուց ձէզայիրլեանի, զորմէ խոստանայիք յանցելումն եօթ-
„ նեկի՝ թէ ի գալ եօթնեկի առաքեցից առ Մանուելեանն Հրա-
„ ման զի տացէ ձեզ ֆրանքս 3,000 ի հաշիւ իմ, եթէ չկարա-
„ ցայց հանել ի ձէզայէրլեանէ։

„ Եւ մեք նոքին յուսով խարեալ համարէաք թէ այսօր
„ ընդունել ունիմք կամ զարծաթն կամ զհամեստագիրդ։
„ Զինչ ասացուք զԱրամայ որ յանհնարին յոգիս առնէ
„ զմեզ ապատան. Քամպեալս երից հազար ֆրանքաց ի վե-
„ րայ մեր արարեալ է, զոր թէ ոչ գացուք յայսմ ամենան,
„ գիտէք եթէ զորպիսի կորուստս ունիմք առնել . . . և դուք
„ անհոգ լինիք զանհնարին վշտաց մերոց։ . . . Շարագասն
„ իմ յանձուկ ստաղնապի մտեալ է և չգիտէ զորմէ իրաց
„ բուռն հարկանել . . . հեծեմք և հառաչեմք հարատարաբ
„ երկոքին անմխիթար։ Եթէ և անձկալի Հայրն մեր զմեզ ոչ

„ խնամէ, ոչ հոգայ, ոչ օգնէ, ո՛չ այլ խնամիցէ, ո՛չ հոգ ան-
„ ձին ունիցի, ո՛չ խնամիցէ։ . . .

„ Եթէ և ի սիրելի Հօրդ մերում խոստմունս չկարիցեմք
„ վստահիլ, ապա յո՞յր խոստմունս իցէ մեզ այսուհետեւ
„ վստահիլ։ . . .

„ Հա՛պա Հայր մեր և վարդապետ զերծուցէք զմեզ ի ձե-
„ ռաց պարտապանաց մերոց . . . գրեցէք փութով անյապաղ
„ երկտող գիր առ Մանանեան զի կարող լիցուք փոքր մի
„ ոգի առնուլ։

„ Ողորմեցարո՛ւք մեզ։ . . .

„ Մնամք Անձկալի Հօրդ մերում կարօտանաք սիրոյ,

„ Ի Փարիզ. 3 գեկտ. 1858.

„ ԱՄԲՐՈՍԻՈՍ, ԽՈՐԷՆ ԳԱԼՖԱՅԵԱՆ. „

Գրէ թուղթ գործեալ Ամբրոսիոս վարդապետ առանձին առ Սարգիս վարդապետ օրինակ զայս.

„ Ամենասիրելի և Գորովագութ Հայր մեր և վարդապետ.

„ Յարդ չեհաս թղթարերն որում մեամբ անձկայրեաց սըր-
„ տիւ և տաղնապեալ մտաք, զի ակնունիմ թէ ցանկալին
„ գիր ընդ իւր բերցէ մեզ և արծաթ, որում անհնարին
„ պէտս ունիմք և վասն անհրաժեշտ ծախուց վարժարանիս
„ և վասն ծախուց տպագրութեանց և ի հաստատումն փո-
„ խանակարգաց զորս հետ զհետէ յիմ վերայ արար Պ. Աբամ.
„ յետ հնգից աւուրց պարտիմ հատուցանել 1,500 ֆրանք.
„ և ի վերջ ամսոյս 2,000 ֆրանք, և ուստի Հայր իմ և վար-
„ դապետ՝ թէ դուք ողորմելով չհատուցանէք ինձ արծաթ...
„ և եթէ դուք չողորմիցէք, ո՛չ ապա ողորմեսցի մեզ և
„ ի գութ խանդաղատեսցի յաղէտս մեր և ի թշուառութիւն։

„ Երբ յղիցէք զարծաթն ձեզայէրլեանի, զոր այնչափ

„ խստացայք . . . զինչ արար պատասխանի յետին թղթոյն
„ իմոյ գրելոյ առ նա , յորում ասպառնայի նմա ի դիմաց
„ Գաղղիացւոցն , դիմել առ Դեսպան Գաղղիոյ որ ի Պոլիս ։
„ Եւ Դուք ո՞րպէս անպայման բարեխրութեամբն Ձերով և
„ գթութիւն հայրենի հրամայեցէք ինձ զգործոյդ կատարումն ։
„ Ցերծուցէք ազէ զիս ի տագնապէս , շատ են ինձ այլ . . .
„ Ցեռանէն բռնադատեալ ի ծառայից , ի վարժապետաց , և
„ յանեղբայր պարտատերից չոքաք հարազատքս երկոքին առ
„ Ռ. (Տիկին Քարավաղ) և պաղատասխան խնդրեցաք ի նմա-
„ նէ շնորհել մեզ դարձեալ 1,000 ֆրանք . եւ մեզ բարեսէր
„ անձն , այլ որպիսի՞ մեղադրանաք , դանդատանաք . . . և մեք
„ զի՞ գործեացուք Հայր . Ձեզ անկ է հոգալ զորդեակդ զի
„ մեռանիմք յանտանելի նեղութեանց ։ . . .

„ Ա՛հ Հայր , ի յիշատակ կատարածի տարւոյն դողան ա-
„ կերք իմ , քանզի գիտէք իսկ թէ յայն եղանակ տարւոյն
„ ո՞րպէս անգթանան պարտատերքն և ամենեքին ի պահանջ-
„ մունն ։

„ Մնամ գորովագութ Հօրդ

„ Փարիզ . 10 դեկտ . 1858 .

„ Վշտալից որդի Ձեր

„ ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. ԳԱՆՁԱՑԵԱՆ . „

Եւ Դուք ո՞րպէս անպայման բարեխրութեամբն Ձերով և գթութիւն հայրենի հրամայեցէք ինձ զգործոյդ կատարումն , ասէ , և ոչ զխրատս նորա յիշէ , որ ընդ պարտս իւր , թէ պարտ էր նմա օգնել ճէզայէրլեանի՝ վասն պատուոյ և պարդեւի ընդունելոյ ի նմանէ , և վասն շահուն որ ի յանձնարարեալ իրաց նորին , ըստ բանից իւրոց ։ . . .

Առնէ Սարգիս վարդապետ պատասխանի վերոյիշեալ թղթոյ Ամբրոսեայ վարդապետի Հայեցեալ ի պարտս ճէզայէրլեան Մկրտիչ Ամիրայի , օրինակ զայս .

«Ճէզայէրլեան տակաւին պահէ զիս մեռոի յուսով, թէ-
«պէտ և ազաչի բազում թախանձանօք, բանիւք և գրովք,
«նկարագրելով զտագնապ ձեր այդր որ ընդ խառութիւն
«պարտաւորեալցդ, այլ ոչինչ ազդեաց նմա ցարդ, վարժեալ
«գոլով ակամնջաց նորա։

«Պատմի և հաւատօք հաստատի, թէ յելանել նորա
«ի բանտէն ունէր ի ձեռին իւրում տակաւին միլիոն մի
«Ֆրանքի հարստութիւն ընդ դրամս և ընդ ակուն, զոր
«վաճառէ մի առ մի և ծախէ զդին նոցին ի Մալթայ և
«ի Լոնդրայ խնեղչութեամբ. եթէ ճանաչէիր ես յառաջագոյն
«զքնաւորութիւն բարուց նորա խափանէի զքեզ անշուշտ
«տալ նմա փոխ արծաթ. այլ եղիր որ ինչ եղիցն, ի լրումն
«արդեօք ութերորդ մեհեանս մեզաց, բարերարութեանս
«արարելոյ յինէն ցարդ։...

Յառաջ քան զվերոյիշեալ ցաւալից թուղթս Գալֆայեան հարազատաց՝ գնայ Սարգիս վարդապետ բազում անգամ առ Ճէզայէրլեան Մկրտիչ Ամիրայն ի Փալկեդոն գիւղ և խնդրէ ի նմանէ հատուցանել զպարտս իւր զ3,000 Ֆրանք, և նա յապաղէ զայն յօրէ ի յօր արկեալ. և այնչափ մինչեւ հարկաւորի Սարգիս վարդապետ հրաման տալ Պարոն Մ. Մանանեանի ի Փարիզ հատուցանել զայն ի հաշիւ իւր առ որում ունէր փոքրիկ ինչ գումար արծաթոյ։

Այլ թէ ելր և զիարդ գտանէ նա զայն ապա. յետ տասն ամաց անտի, և զայն ոչ բովանդակ, այլ պակաս 200 Ֆր. ահա արդիւնք ի բարերարութենէ անտի, և ի մեծամեծ խոստմանց նորին, որ ոչ միայն զպարտս իւր զայն խոստանայ հատուցանել, այլ և պարգեւ ինչ Սարգսի վարդապետի տալ, և որ ոչ միայն զերեքամեայ թոշակս որդւոյ քնեայ իւրոյ ունէր հատուցանել, այլ գումար ինչ մեծ արծաթոյ, երկու միլիոն Ֆրանք դրամագլուխ Հայկազեան վարժարանին հատատել, և զվարժարանն զայն յանուն իւր կոչել, յամօթ և ի նախատինս հարուստ ազգայնոցս որք ի Պոլիս։

Եւ ահա սեպհական կնիք բնաւորութեան ձէզայէրլեանի. թէպէտ և միւս որդւոյ քենեոյ իւրոյ հաստատանէ նա ամ ըստ ամէ զծախս խեղճութեան նորա ի Փարիզ և ի Լոնտոն. թէպէտ և տայ նա պարգեւս, ոչ Սարգսի վարդապետի այլ Ս. Մատթէոս Կաթողիկոսի մուշտակս երկու, 2,000 ֆրանքի, յորժամ մեկնէր նա ի Պօլսոյ գնալ յԷջմիածին. և ահա բնաւորութիւն հարուստ ազգայնոյս առհասարակ որք ի Պոլիս։ Աւա՜ղ համարէն ազգիս Հայոց... որոյ եղեալ է գլոյա յառաջադիմութեան իւրոյ ի նոսա։...

ԳԼՈՒԽ Ժ.

Հրաւիրակք յԷջմիածնէ և ի տեղւոջէնէ Ռուսաց առ Կարողիկոս հասանելն ի Պոլիս. — Ծախք և ընծայք վասն հրաւիրակացն այնոցիկ, և ընկերաբիւն ընդ այն. — Ռուզդ բարեւանդրուբեան և կարեկցութեան Գաբրիէլ վարդապետի առ Սարգիս վարդապետ և ընկերաբիւն ընդ այն. — Լուր վահառուսի Հ. Ռափայէլի Թրենց. — Ղեկրդող և ընկերաբիւն ընդ այն. — Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ ընդդէմ Գաբրիէլ վարդապետի. — Ռուզդ բարեւանդրուբեան աշակերտաց Հ. վարժարանին առ Ս. վարդապետ և պատասխանին. — Հակառակութիւն որ ի մէջ Կարողիկոսին և ի մէջ Պատրիարքին, և գայթագղութիւն ժողովրդեան. — Նշանաւոր նամակ Գաբրիէլ վարդապետի առ Ամբրոսիոս վարդապետ և ընկերաբիւն ընդ այն.

Յայսմ ժամանակի հասանեն ի Պոլիս՝ հրաւիրակք յԷջմիածնէ ի դիմաց Սիւնհոդոսի նորին, Մակար եպիսկոպոս, և Մկրտիչ վարդապետ, և Գալուստ վարդապետ, հանդերձ երկու սպասաւորաք, շարքիր անուանեալք. Նա և ի կողմանէ Ռուսաց տէրութեան ի փոխարքայէն Կովկասու զօրավար Լորիս Մելիքով և թիկնապահ նորա Միքայէլ Մենասար։

Գնան նոքա նախ ի Պատրիարքարան Հայոց, ապա ի վանս անդր ի տուն Ս. Կաթողիկոսին ի միջոցիւղ, և հրաւիրեն զնա յԷջմիածին զրով Սիւնհոդոսի նորին։

Ընդունի զնոսա Ս. Կաթողիկոս ըստ սովորական քաղաքավարութեան խրատմ . . . ընդ որ ոչ հաճին ոմանք յիշխանաց ազգիս, և սոգասանին զնա ընդ այն զնացս։

Կամի Կաթողիկոսն զի հրաւիրակքն յԷջմիածնայ օթևանս

կալցին յեկեղեցւոջ Լուսաւորչին, իսկ գլխաւոր իշխանքն ոչ պատիւ ազգիս համարին զայն տեղին ի բնակութիւն նոցա, այլ առանձին տուն մի մեծ ի Բերա վարձու կալնուն վասն նոցա, յոր և ծախեն 12,000 ֆրանք, հաւաքեալ զայն հանգանակութեամբ, և բնակութիւնն այն վասն քանի մի աւուրց միայն. զանգի խմացեալ հրաւիրակաց թէ Կաթողիկոսն չունի կամս եկանել ի հանապարհ յառաջ քան զմայիս ամիս գալոյ տարուան, կամին նոքա գնալ յուխտ ի Սուրբ Երուսաղէմ, և անտի դառնալ ի Պոլիս՝ յամենան ապրիլի 1859 ամի, որպէս և արարին։

Իշխանքն այնոքիկ՝ նոքա լինին որք ոչ նախատինս համարին ազգին ի փակել տալ զՀայկազեան վարժարանն ի Փարիզ, զանալով օժանդակել նմին հանգանակութեամբ խրատանշիւր 500 ֆրանք միայն... ահա սեպհական բնաւորութիւն իշխանացն ի Պոլիս։...

Իսկ զօրավարին Լորիս Մելիքովի մեծարեալ ի նոցունց բազում պատուասիրութեամբ հրաւիրելով զնա ատէպ ատէպ ի տուն խրևանց և ի խնճայս ուրախութեան, և պարգևելով նմա գեղեցիկ և թանկագին ընծայս, զի պարգևէ նմա Յովհաննէս Պէյ Տատեան արկղիկ մի անգղիացի գործեաց, որք արժէ, ասեն, 3,000 ֆրանք, որ զլանոյ տալ 5,000 դահեկան Հայկազեան վարժարանին, և այն ի խնդրոյ և ի բազում թախանձանաց Սրբազան Կաթողիկոսին, և վասն հոգւոց ծնողաց խրոց։ Ըստ օրինակի նորին պարգևէ նմա ինչ և Կարապետ Ամիրա Պալեան, որ յիշելիք մի անգամ ոչ տայ Սարգսի վարդապետի, թէպէտ և հրաւիրէ զնա ի տուն իւր միշտ։...

Պարգևէ նմա առատապէս և Կարապետ Աղա Երամեան թուր մի ակնեակապ, որ արժէր, ասաց ինքն իսկ, 10,000 ֆր. հանդերձ բազում պատուասիրութեամբ, հրաւիրելով և ածելով զնա ի պալատ իւր անձամբ, ուր երկիցս զնայ Սարգիս վարդապետ ինքնին յայցելութիւն նմա, և ընդունելութիւն ոչ գտանէ ի նմանէ զանազան պատճառանաք։...

Եթէ հարցանիցէ որ ցնոսա, թէ զինչ արդիւնս ազգասի-

բութեան տեսին ինա, և կամ լուան զայն զնմանէ ուսուցք, վասն այնորիկ այսչափ պատուասիրեն զնա և պարգեւատրեն, չկարեն նոքա պատասխանել, վասն զի չունին ինչ ցուցանել. ապա յայտ առնեն նոքա թէ ամենայն գործ իւրեանց ըստ քմաց է, և ոչ ըստ արժանեաց։...

Աւելորդ համարիմք յիշատակել ասա զյուսադրական բանս խնամակալաց Ժողովոյն և զերկար և զանարդիւն խորհուրդս նորին, զի յայտնի են այնք յընթացից գործոյն. յիշատակեսցուք միայն զնամականին որ տուեալ լինի յայսմ ժամանակի, առ ի ցուցանել զճանաչումն մտաց և զդիւրութիւն սրտի գրողաց նորին, և ի գիտութիւն ընթերցողաց և ի դատաստան նոցին արդեաք։

Թուղթ բարեմաղթութեան Կարբիել վարդապետի առ Սարգիս վարդապետ ի Պոլիս, հանդերձ ազգարարութեամբ, որ ունի օրինակ զայս.

„ Գերապատիւ և Սիրելեալ Հայր.

„ Յաւարտ տարւոյս հնացելոյ և ի մուտս նորոյն մատչիմ
„ երկարիւս մաղթել նախ բազմախաղաղակ և բազմարդիւն
„ Հօրդ Սիրոյնոյ զերկարութիւն կենաց և զյաջողութիւն
„ ասառուծաէր և ազգաէր ընթացիցդ, որպէս զի տես-
„ ցիք զոնեա անոգան զարդասիս բազմաքիրան ասատպա-
„ նաց ձերոց յազատ Ազգիս մերոյ, և զմեր ճնգունս քաջալե-
„ բեսցիք հեռատես խորհրդովք և արիական խրախուսանօքն
„ ձերովք։

„ Ակնունիմ թէ ցարդ ընկալեալ լցէք զօրինակ կանգա-
„ կին։... Սակայն լցէ թէ յառաջ քան զհատարքումն մեծա-
„ գոյժար գրամոց, որոյ և լցէ յեղանակաւ հայթայթէր
„ Արքազան Կաթողիկոսն կամ Պատրիարքն գրամ բաւական
„ ի հատուցումն զարդոյ վարժարանին, որոյ և գտարէր
„ արդեաք վերջին և մօտագոյն վաստակն փակելոյ վարժարա-
„ նին մեծաւ խայտառակութեամբ Ազգիս, և մերոյն յուսա-

„ հասելոյ ի կենաց և յԱզգէն . . . Քանզի զայս ամենայն
„ վասնզ տագնապի տարակուսանաց ակնարկեալ տեսանեմ յա-
„ զիզորմ նամակականին եկեալ յերէկն ի Փարիզէ ։

„ Գիտեմ զի բազմարդիւն Հօրդ ցաւ է մեծապէս ընդ այս
„ վիճակ վարժարանին, և վասահ եմ զի արարեալ էք և
„ առնէք և արասջիք զարժանն և զկարելին. բայց և յինէն
„ կողմանէ ասիպիմ վերթացուցանել զՁեզ ի զարման աղե-
„ տիցն ։

„ Իսկ եթէ ոչ լցեն Տեառն կամք տալ վարժարանին այն-
„ միկ զյաջողութիւն՝ յետ մերոց անապատ և անխոնջ վաս-
„ տակաց, հարկ է ասել թէ չէ այն Ազգիս յօգուտ՝ որպէս
„ մեք մարդկօրէն կարծեմք . . .

„ Ողջ լինել ըղձանամ

„ Գերապատիւ Հօրդ Սիրելոյ

„ Թէոդոսիա. 30 գեկտ. 1858.

„ Հոգեկցորդ

ԳԱԲՐԻԷԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՅՎԱԶԵԱՆ. ”

„ Յ. Գ. լուայք անշուշտ զմահ Հ. Որսայէլի ի Փարիզ,
„ ի Մոդրատեան վարժարանին, ուստի այնքան նախատանաք
„ եհան նա զկենդանի նահատակդ ազգասիրութեան և ար-
„ դարութեան, և ինքն հանաւ անտի դի անկենդան ։ . . .

„ Քաղցրացին դատաստանք նորա առաջի ահեղ Աստենին
„ Աստուծոյ ։ ”

Զայսմանէ ծանուցանէ և Խորէն վարդապետ Գալֆայեան ի Փարիզէ այսպէս. „ Վերջապէս անկաւ ի ձեռս մեր Ներ-
„ քոյն Հ. Վեռնդի, և զարմացեալ զարշելիցաք ընդ կեղծա-
„ ւոր յանդգնութիւն նորա . . .

„ Արդարեւ անմարթ իսկ էր յուսալ մեզ այդչափ փոփո-

“ խամուսթեանն և այդչափ նուազասոռբեան երկրաքարշ։ . . .
“ Իսկ զոր ինչ ընդդէմ մեզ է ակնարկեալ՝ այն զծիծաղ
“ մեր և եթէ շարժեաց և ոչ այլ ինչ։ . . . Իսկ չուխապանց
“ և ցուրտ զոլութիւնքն որ զԹրեանցէն՝ ինքնին շատ իսկ
“ են ի դատապարտել զհեղինակն, որ կուրացաւ տեսանել
“ զկատարելոռբիւնս արեգակնափայլ դքանչելւոյն Թրենցի, և
“ ի մահուան և եթէ նորա բացան աչք իւր . . . շատ ուշ։ . . .
“ Այլ թողցուք զկոյրս կուրաց առաջնորդս։ ”

Ունիցի արդեօք իրաւունս և Գարրիէլ վարդապետ ի բանս իւր յոյս, թէ “ Իսկ եթէ ոչ իցեն Տեառն կամք տալ վար-
“ ժարանին այնմիկ զյաջողութիւն՝ յետ մերոյս անապատ և
“ անխոնջ վաստակոց, հարկ է ասել թէ չէ այն Ազգիս յօ-
“ գուտ՝ որպէս մեքս մարդկօրէն կարծեմք։ ” հայեցեալ ի գնացս նորա որ ընդ այն։ . . .
Թողումք մեք զայս ի վերծանողաց դատաստան։ . . .

Պատասխանի Սարգսի վարդապետի առեալ թղթոյ Գարրիէլ վարդապետի, օրինակ զայս.

“ Գերապատիւ Հօր և Սիրելւոյ Եղբօր խնդալ.

“ Զմխիթար և զքաջալերթ թուղթ Սիրելւոյդ, գրեալ յ30 դեկ-
“ տեմբերի անցելոյն, ընկալայ ի 12 փետրուարի տարւոյս, և
“ մխիթարեցայ և զոհացայ զՏեառնէ յոյժ, որ նախահոգակ
“ տեսչութեամբն իւրով հաստատեաց և պատրաստեաց զՁեզ
“ այդր ի մխիթարութիւն և ի քաջալերութիւն մեզ տառապե-
“ լոցս և վհատելոցս, և յանկալութիւն բարեաց հասարա-
“ կաց ազգիս որ այդր և յամենայն տեղիս տահեալ նշդեհու-
“ թեամբ։

“ Արդ զոր վիանգամ մաղթէք ինձ ի մուտս նորոգ տարւոյս, մաղթեմ և ես Ձեզ զնոյն և առաւելագոյնս ի լրումն
“ ըղձից իմոց և ի կատարումն ցանկութեանս, զոր չկարացի
“ ինքս ցարդ դժբաղդութեամբս, պակասելով այնմ օժան-

„ դակութեան, և զոր յուսամ դեռ լնուլ օգնականութեամբն
„ Աստուծոյ և օժանդակութեամբ Սրբազան Կաթողիկոսին,
„ որոյ չպակասին ջանք և աշխատութիւն յայն, ճանաչելով
„ զկարեւորութիւն գործոյս։

„ Զընդունելութենէ օրինակի կոնդակին յօրինելոյ և ար-
„ ւելոյ ի Զէնջ այսր ծանուցեալ եմ Ձեզ նախընթացիւս,
„ հանդերձ տեղեկութեամբ որ զհանգանակութենէ արծաթոյ
„ ի հանապազորդութիւն վարժարանիս զամս երիս, մինչեւ
„ հաւաքեցի դրամագլուխ ինչ յեկամուտս և ի մանչենաւոր
„ հատատութիւնս որին. ահա ի սոյն ջանս և յաշխատութեան
„ եմ այժմիկ, հաստատելով հետզհետէ զհաւաքեալ ար-
„ ծաթն հանգանակութեան ի ձեռս մերոյն ի Փարիզ, որով
„ և հանգուցեալ և կազդուրեալ է Հ. Ամբրոսեայ ի հոգոց
„ և ի տկարութենէ անտի իւրոյ, ընդ որ առաւել հոգ և ցաւ
„ էր ինձ սատ։

„ Խրատեալ և թելադրեալ մերոյն ի Փարիզ ի տաճիկ վար-
„ ժապետաց անդ տալ աղերսագիր մի սատ առ Սուլթան
„ Մէջիթ ձեռամբ իմով և Սրբազան Կաթողիկոսին, խնդրի-
„ լով ի նմանէ օգնութիւն ինչ վարժարանիս, և զայս աղեր-
„ սագիր յօրինեալ անդ լսատ պատշաճի ի բարբառ Գաղղիացի
„ գրեալ ճարտար գրչաւ առաքեցին ինձ այսր, հանդերձ
„ օրինակաւն, զոր ընթերցայ ես յականջս Սրբազանին, և
„ այլոց ոմանց ի մեերիմ բարեկամացս. թէպէտ և հաճե-
„ ցան նոքա ընդ այն գրութիւնն, այլ ոչ յուսացան ընդ
„ յաջողութիւն ինչ որ անտի, նախ՝ ընդ դժուարութիւն մա-
„ տուցանելոյ մեր զայն Սուլթանին. երկրորդ՝ ընդ դժուա-
„ րութիւն գտանելոյ զոք ի փաշայից որ նպաստաւոր լցէ
„ յառաջադիմութեան վարժարանիս, նախանձելով և չկամե-
„ լով նոցա ընդ այն. և երրորդ՝ տեսանելով զդրամական
„ կարօտութիւն տէրութեանս՝ չյուսան բնաւ արդիւնս ինչ
„ անտի, թողեալ զայլ անհաճոյ և զծանր հետեւանսն որ ան-
„ տի, զգլացումն ասեմ որ ամօթ մեծ լիցի մեզ առաջի այլոց,
„ կամ զշնչին ինչ տուշութիւն որ չլիցի մեզ ի մխիթարու-
„ թիւն, և կամ ծանրութիւն, պարտաւորելով զմեզ ընդու-

„ Նել ի վարժարանս զպատանէս ունեալս ի տաճկաց անտի
„ յաշակերտութիւն, որ ծանր լիցի մեզ յոյժ։ Զայսոսիկ
„ զժուարութիւնս որ ընդ յաջողութիւն ելիցն մտածեալ
„ Սրբազանին՝ ասաց ինձ գրել այդր առ Զեզ, հարցանելով
„ ի ձէնջ խորհուրդ, թէ մնրթ իցէ արդեաք և օգուտ ինչ
„ այսպիսի իմն աղերսագիր առ կայսրդ մատուցանել մեր
„ ի Փարիզէ, խնդրելով ի նմանէ օգնութիւն ինչ վարժարանիս
„ անդ, քանզի դաշնակից և բարեկամ են այժմ՝, ասէ, երկո-
„ քին կայսերք ընդ միմեանս, և զի աշակերտք վարժարանիս
„ մարդեալք ի զանազան դիտութիւնս և յարուեստս պիտանի
„ լիցին ազգայնոց իւրեանց որ ի պետութեանդ. և զի այսու-
„ հետև յորդորին ազգայինքս որ ի տէրութեանդ օժանդակել
„ համարձակ և առատ վարժարանիս. ահա զայս կարծիս իւր
„ կամի Սրբազան առաջարկել Զեզ և իմանալ զձերն երկուսդ
„ գրութեամբ. եթէ մարթ և յուսալի լցէ այս, խնդրէ նա
„ ի ձէնջ և զթելագրութիւն բանից աղերսագրին առ կայսրդ։
„ Թէպէտ ես ոչ յուսամ ինչ ասել յիշելով զասացեալն ձեր
„ երբեմն, թէ „ Ասացս պետութիւն չախորժէ բնաւ ընդ
„ „ դատարակել հպատականցն իւրոց ի Գաղղիա, և չկա-
„ „ ըէ իակ ախորժել, ցորչափ իւրն քաղաքականութիւն
„ „ հեռի է ի Գաղղիականէն։ „ Թէպէտ և ես զայս բանս
„ թղթոյ ձերոյ ընթերցեալ էի յականջս Սրբազանին, այլ
„ նա դարձեալ ակնարկի դատել անտի օժանդակութիւն
„ ինչ վարժարանիս։ . . . . . .
. . . . . .
„ Փոխադարձ ողջոյն սիրոյ և օրհնութիւն ի Քրիստոս մա-
„ ուցեալ Քոյդդ,

„ Մնամ միշտ

„ Գերապատիւ Հայրութեանդ

„ Ի Պոլիս. 7 փետր. 1859.

„ Հոգեկցորդ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՂՈՐԵԱՆ. „

Յաւուր ոծնի Սրբոյն Սարգսի զօրավարին աշակերտք Հայ-
կազեան վարժարանին գրեն թուղթս բարեմաղթութեան առ
Սարգիս վարդապետ Թէոդորեան ի Պոլիս գանուգան լեզուաւ,
յորոց զմին արժան համարիմ յիշատակել ի սմին, որ ունի
օրինակ զայս.

„ Արժանապատիւ Տէր.

„ Քանի որ Ձեր հայրենի գրկէն գրկուած մնացինք, թէ-
„ պէտ միշտ ամէն օր կ՚յիշեմք զՁեզ մեծ սիրով և կարօտանաք,
„ բայց այս օրերս որ սրբոյն Սարգսի ու սրբոյն Թէոդորոսի
„ Ձեր պաշտպան սրբոցն փառաւոր ոծներուն մէջն եմք,
„ մեր կարօտն ու փափաքը կաճի ու կառաւելու, և առաւել
„ եւս դառն կերպով մը կզգամք մեր որբութիւնը։ Վասն զի
„ այս գեղեցիկ օրերն էր որ կփութայինք որդիական սիրով,
„ մեր երախտագիտութիւնն յայտնել Ձեր սրբութեանն, և
„ երջանիկ կըլլայինք Ձեր հայրենի տուրբ օրհնութիւններն
„ ընդունելով ու սքանչելի հոգեբուխ խրատները լսելով։

„ Արշաւի ծանր է մեզ այս օրերս զմեզ զուրկ տեսանել այն
„ քաղցր մխիթարութիւնէն, բայց սակայն երբ կմտածեմք և
„ կտեսնեմք Ձեր սրբութեան մեր խեղճ Հայրենեաց համար
„ քաշած ինքնակամ նեղութիւնդ, որ յերիտասարդ քաջա-
„ ռոյգ տիոց մինչև ցալեզարդ պատկառելի ծերութեան
„ տանն ալ անխոնջ ջանիւք և քրտնաջան աշխատութեամբ
„ կշարունակէք, բոլոր Ազգայնոց հետ մեք եւս զմայլելով
„ կնայինք, և որչափ որ ալ նայինք, այնչափ աւելի կըզմայ-
„ լինք և սրտերնիս ուրախութեամբ և գարմանաք կլեցուի։

„ Արդէն Ձեր Սրբութեան անունը թշուառ Հայաստանի
„ գեղեցիկ պարծանքներէն մէկն եղեր է, Ձեզմով է որ կը-
„ փառաւորուի, և Ձեզ պարծանաք կցուցնէ իբրեւ ճշմարիտ
„ Հայրենասիրի օրինակ ամենայն ազգաց առջև։

„ Մենք ուրիշ բան չենք կրնար մաղթել Ձեր սրբութեանը,
„ բայց եթէ, Արժանապատիւ Տէր, այդչափ փառաք ալ մին-

„ չեւ ցվերջին կէտ հասուցանէք, և անշուշտ եմք որ Ձեր
„ անունը Ազգիս մէջ պիտի յաւիտեան մնայ փառաւք։

„ Մենք ալ պիտի ջանամք, Արժանապատիւ Տէր, որ Ձեր
„ այս պանծալի օրինակին հետեւիմք ըստ մեր կարողութեան,
„ ինչպէս որ դուք ալ Ձեր անուանակից Սրբոյն և քաջ զօ-
„ րավարաց սրբոյն Սարգսի և սրբոյն Թէոդորոսի հետեւեր
„ էք և անոնց երկնային քաջաքաջարութիւնը ի մարմնի
„ կցուցընէք, զօրութեամբ անընկճելի ոգւոյդ, վառեալ ընդ-
„ դէմ ոգիտութեան և ընդդէմ խաւարի՝ որ կապառնան
„ ընկճել և յաւեր ածել զմեր Հայրենիս։

„ Դուք այդ արիութիւնը ոչ միայն ընդհանուր վասն Ազ-
„ գիս էք գործածեր և դեռ կփայլեցնէք՝ հապա մանաւանդ
„ մասն մանկանց Ազգիս, որ Ձեր հայրենի սրտին կէս դարու
„ գորովանացը նպատակն եղեր է։

„ Ասոր համար կյուսամք որ այս օրուան օրս ալ մանա-
„ նաւոր կերպով մը զմեզ եւս շմոռցաք յիշել և օրհնել զմեզ՝
„ որ փառք կհամարիմք և պիտի համարիմք դաւանել միշտ
„ զմեզ

„ Ի Փարիզ. ի Հայկազեան վարժարանի

4 մարտ 1859.

„ Ձեր ամենախոնարհ և Երախտագէտ
„ Աշակերտներէն
„ Աշակերտք Հայկազեան վարժարանին
„ Առաջին, Երկրորդ
„ Եր
„ Երրորդ Դասուց. „

Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ թղթոյ աշակերտաց Հայկազեան վարժարանին ի Փարիզ, յորում ծանուցանէ զազգեցութիւն բանից թղթոյ նոցա որ գործէ, մխիթարէ զնա, և քաջալերէ զնոսա ի յառաջադիմութիւն անդ, այլոքն հանդերձ, օրինակ գայս.

„ Սիրեցեալք իմ ի Քրիստոս.

„ Զանազան լեզուաւ և ճարտար ձեռամբ գրեալ նամակա-
„ նին Ձեր, որ ի 4 ամսոյս, մխիթարեցին և խրախացուցին
„ զիս սատ ի պանդխտութեանս, և ի հոգս վարժարանիդ.
„ գոհանամ յոյժ զինամոց Բարձրելոյն որ պատրաստեաց
„ զձեզ ինձ ի մխիթարութիւն և ի խնդութիւն, և աղաչեմ
„ զնա պահել զձեզ միշտ ի նոյն ի փառս անուան իւրում և
„ ի պարծանս ազգի մերում, և չնորհ ունիմ ոչնչից անուա-
„ նակիցս սրբոց, որոց յիշատակութեամբ շարժեալ ձեր եկիք
„ ի գրութիւն առ իս երախտագէտ մտաք, և յորոց խնդրեմ
„ բարեխօս լինել միշտ վասն ձեր յերկինս։

„ Ահա այսչափ ազգեաց յիս գրութիւն Ձեր, և այսպիսի
„ են իրձք սրտի իմոյ առ Աստուած վասն Ձեր. ապա զօրա-
„ ցարուք սիրեցեալդ իմ ի Քրիստոս արդեամբք հաստատել
„ զերախտագիտութիւն ձեր առ իս, յառաջադիմելովք յա-
„ ռաքինութիւնս ըստ ցանկութեան և ակնկալութեանս
„ իմում և ծնողացդ, և յաւելով զմխիթարութիւն իմ և
„ զնոցայն միանգամայն։ Գիտացէք քաջ զի հաստատութիւն
„ վարժարանիդ և բարութիւն ազգիս որ այսր՝ ի կատարե-
„ լութենէ ձերմէ կախին, քանզի ամենեքեան բարեկամք և
„ թշնամիք վարժարանիս մեան տեսանել ի ձեզ զլաւութիւն
„ կամ զյաւելութիւն նորին, որով տայցեն զվճիռ իւրեանց,
„ զգովութեան կամ զպարսաւանաց. ապա դուք լինիք
„ պատճառ հաստատութեան կամ կործանման նորին, որով
„ և բարեաց, կամ և վնասուց ազգիս։ . . .

„ Վերջին վեցամսեայ վկայագիրն ոմանց ի ձէնջ այսր
„ տրամեցոյց զիս և զծնողս իւրեանց սատ, տեսանելով անդ

„ յայտնի զԹերութիւն նոցա յամենայնի . . . արդարեւ ցաւ է
„ ինձ ընդ այս մեծապէս. ոչաշեմ զնոսա ի հեռաւոր տարի,
„ խնայելով ի ցաւս իմ և ի վատակս եղբարց իմոց այգր
„ զգաստացին, և դարման տարցին Թերութեան իւրեանց,
„ որպէս զի վայելեցեն ընդ յառաջադէմ եղբարս իւրեանց,
„ զգովելի վկայութիւն ի վատակաւորացն և զհայրական
„ օրհնութիւն իմ, որով

„ Մնամ սիրելեացդ

„ Կ. Պոլիս. 23 մարտի 1859.

„ Ազօթարար ծառայ Աստուծոյ

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ,

„ Վերատեսուչ Հայկազեան վարժարանիւն. „

Աւելորդ և անարժան իսկ համարիմ յիշատակել ի սմին զհակառակութիւնն որ ի մէջ կաթողիկոսին, և ի մէջ Պատրիարքին, և այն այնչափ՝ մինչեւ գայթագղել ոմանց յիշխանաց, և հանել ի բերանոյ իւրեանց բանս նախատանաց, զորս լռել արժան է և ոչ բնաւ յիշատակել . . . այլ ցաւիլ միայն ընդ սեպհական և ողբալի կնիք բնաւորութեան առաջնորդաց ազգիս, և ընդ անհոգութիւն իշխանաց տրին, որք նախատել գիտեն միայն, և ոչ չարեացն տանել դարման. ո՞չ ապաքէն արդիւնք են այսոքիկ փառասիրութեան և անձնասիրութեան : . .

Ոչ աւելորդ համարիմք յիշատակել ի սմին և այլ քանի մի նամականի որ սատի և անտի ի գրութիւն և ի դատաստան վերծանողաց տրին, և որք ունին օրինակ զայս .

Թուղթ Գաբրիէլ վարդապետի առ Սարգիս վարդապետ ի Պոլիս, յորում զարմանայ ընդ երկար լռութիւն նորա , և

ցաւի ընդ լուր հիւանդութեան Ամբրոսեայ վարդապետի ի Փարիզ, և ասէ զկարծիս իւր որ զՀայկազեան վարժարանէն, օրինակ զայս.

„ Գերապատիւ և Բազմարգիւն Հայր Սիրելեալ

„ Երկարատեւ լռութիւն Հայրութեանդ, մանաւանդ ի կա-
„ բեւոր ժամանակիս, զարմացուցանէ և տագնապէ զիս,
„ մի՛ գուցէ տկարութեանդ ինչ մարմնոյ նեղիցիք։
„ Յուսամ թէ զգիրս իմ զամենայն ընկալեալ իցէք ի ձեռն
„ Պ. Պուլղուրեանին. ընդ վերջնոյն յղեալ էի խնամս ինչ
„ վասն Կանդակին. և յետ այնորիկ գրեցի այլ զիր ի գեկտ.
„ և ահա ասելի է 15 աւուրց հետէ ոչ ունիմ թուղթ, և
„ տագնապիմ յոյժ, այն զի և վերջինն ոչ Ամբրոսեայ վար-
„ դապետի գրեալ էր, այլ Խորենայ, որ ասէր թէ հարազատն
„ իւր առ հոգոցն և վշտաց վասն չքաւորութեան վարժարա-
„ նին խօթ է և ի մահիճս դնի։ Ես ի 5 ամսոյս հետագրով
„ ազդեցի երէց եղբօրն աճապարել եկանել ի բաց ի վարժա-
„ բանէ անտի, զէթ առ ժամանակ մի, և մեկուսացեալ
„ ուրեք՝ խնամ ունել անգին առողջութեան անձինն, և կրես-
„ բոյն կալ մնալ ի վարժարանին ցվերջ ամսոյս, ապասելով
„ վերջին և անդառնալի որոշման Սրբազանին և ազգային
„ ժողովոյն՝ զոր յոյժ իրաւամբ խնդրեալ են Հարքն երկո-
„ քին։

„ Աւելորդ իսկ է ինձ, որպէս և Քեզ, Գերապատիւ Հայր,
„ աւաղել ընդ վայր զայնքան աշխատութիւնս մեր և զմերոցն
„ ի վերայ Փարիզեան վարժարանին։

„ Տեսաւ ապաքէն զի ազգս մեր քաջ ի բաց հեռի է տակա-
„ էին ի կարող լինելոյ յօգուտ անձին վարել զմեծամեծ
„ գործս լուսաւորութեան, որպիսի են վարժարան և օրա-
„ գիր ի Փարիզ... այլ զինչ առնել իցէ, մեք զմեր պարտս
„ կատարեցաք. Տեառն կամք օրհնեալ եղիցին։ Լսեմ զի
„ ի Պոլիս դարձեալ խլրտումն ինչ լեալ է հասանելոյ յօգ-

„ Նուիրեն վարժարանիս, այլ ոչ յուսամ բնաւ թէ, ար-
„ դիւնք ինչ ակնկալութեան բարեաց երիւեցին յայդպի-
„ սի ուժգնեան խրատանց և յանպտուղ խոստմանս.
„ թեանց։

„ Ողջունիս մերոց առ հասարակ

„ Ողջ մնել ըղձանամ ի սրտէ

„ Գերապատիս Հայրութեանդ

„ Թէոդոսիա. 20 յունվար. 1 փետր. 1858.

„ Հոգեկցորդ

„ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ.՝՝

Թողումք և զայս բանս թղթոյ նոցա, թէ „ Աւելորդ իսկ է „ ինձ, որպէս և Ձեզ։ . . . Տեառն կամաք օրհնեալ եղիցին.՝՝ ի քննութիւն և ի դատաստան վերծանողաց սորին . . . թէ, ունէր նա իրաւունս ասել զայս բանս, հայեցեալ ի դնացս իւր ընդ այն։ . . .

Թուղթ Գ. վարդապետի առ Ամբրոսիոս վարդապետ ի Փարիզ, ըստ մասաց վերոյգրեալ նամակին, օրինակ զայս.

„ Անձկալիդ իմ եղբայր.

„ Ի զուր հալեցան աչք իմ յերեկն ակնկալութեամբ առ
„ ի քէն կամ ի Խորենայ նամականի. հարկ ուրեմն է կաս-
„ կածել՝ թէ չեւ եւս ապաքինեցեր ի խօթութենէդ որ ար-
„ կեալն էր զքեզ ի մահիճս . . . առմղ։ . . . Եթէ ընկալար
„ զհեռագիրն իմ որ ի 5 ամսոյս՝ անեացէր արդեաք խրատուն
„ իմում, և երբ մեկնեցար ի վարժարանէդ։ . . .

„ Ահա ժամագրեալն ի ձէնջ օր եկն եհաս. զոր արդեօք
„ պատասխանի ընկալարուք ի Պօլսոյ կամ զի՞նչ ինչ արա-
„ բէք։ — Ի ծերունւոյ Հօրէն եւս լռութիւն է յամսօրեայ
„ ժամանակէ հետէ. չգիտեմք զի՞նչ պատճառքն իցեն։ Յե-
„ բէկն դարձեալ գրեցի առ նա գիր, տեսցուք եթէ արասցէ՞
„ փութով պատասխանի։ Ասացի և նմա զկարծիս իմ թէ
„ ահա փորձս մեր դժխեմ եցոյց մեզ՝ զի վասն կարծեցեալ
„ յառաջադէմ ժողովրդեան Պօլսոյ կարի իմն վաղ է տակա-
„ էին ճանաչել և յարգել զօգուտն մեծամեծս որոց ակն-
„ կալլի էր ի Փարիզեան ազգային վարժարանէ այնպիսւոյ՝
„ որպիսի մեքս կամէաք հաստատել։ Իսկ թէ յայսմ հետէ
„ զի՞նչ պարտիցիմք առնել Տեառն կամաք՝ ընդ այն քաջ
„ խոհել արժան է միաբանութեամբ և հաստատութեամբ։...

„ Ողջ լինել մաղթեմ Հարազատացդ սիրելեաց

„ Թէոդոսիա. 2 փետր. 1859.

Անձկաւէտ եղբայր

„ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ. „

Զայս նամակ Գաբրիէլի վարդապետի յղէ Ամիրսիոս վարդապետ առ Արգիս վարդապետ ի Պոլիս յընթեռնուլ և յանկանչս Սրբազան Կաթողիկոսին, և նա առնէ զայն, և զոր լսէ ի նմանէ, գրէ առ նա օրինակ զայս.

„ Զնամակ Գաբրիէլ վարդապետի որ առ ձեզ ընթերցայ
„ յանկանչս Ս. Կաթողիկոսին, ընդ որ արար նա քննութիւն և
„ դատաստան, և այս իրաւամբք արդեաք, թէ չէր պարտ
„ նմա բաժանիլ ի մէնջ այսքիչառաջ քան զհաստատութիւն
„ վարժարանիդ, և թէ՝ պարտ էր նմա անցուցանել ասա
„ ի քաղաքիս գոնէ ամիս երկուս ի հոգալ զպարտուց և
„ և զկարեւորաց վարժարանիդ, և չթողուլ զամենայն հոգ և
„ զծանրութիւն ի վերայ ձեր այսր և այդր։...„

Թուղթ Ս. վարդապետի առ Գաբրիէլ վարդապետ, յորմէ շնորհակալ լինի զնմանէ յաղագս բարեմաղթութեան նորա ի ծանէ անուան իւրոյ, և ծանուցանէ զնոր տնօրէնութիւնս որ ի Պօլիս, վասն պահպանութեան Փարիզեան վարժարանին, օրինակ զայս ·

« Գերապատիւ Տեառն և Սիրելոյ Եղբօր խնդալ ·

« Զյանկարգի նամակսն Ձեր գրեալ ի 15 անցելոյն, ընկա-
« լայ ի 19 նորին, և միխիթարեցայ ի պանդխտութեանս, և
« գոհացայ զինամոց բարձրելոյն, որ հաստատեաց զՁեզ
« այդր մեզ ի միխիթարութիւն և ի խնդութիւն, որ ընդ բա-
« րիս հաստատեաց ապդիս կարօտելոյ ։

« Նախ շնորհ յոյժ ունիմ մաղթանաց Ձերոց ի Տեառնէ ընդ
« ողջութիւնս, և հայցուածոյդ, որ ի քաջամարտիկ անուա-
« նակցէս ընդ օժանդակութիւն տկարութեանս իմում. ապա
« տամ Ձեզ ի ամին ինչ ինչ կարևոր տեղեկութիւն որ զհան-
« դամանաց մերոց և այլոց ասա ։

« Արդ յետ այսչափ դանդաղելոյ զորոշումն խնդրոյ վար-
« ժարանիս զանազան պատճառանօք, և յետ միանգամ և
« երկիցս ժողովելոյ ուրեք երկոտասան անձանց յանդա-
« մոց գերագոյն ժողովոյ, որոշեցաւ և հաստատեցաւ այս-
« պէս ·

« Ա· Առնուլ ի ծնողաց մանկանց մնացելոց այժմ ի վար-
« ժարանս գրով խոստումն պահել զնոսա անդ այլ եւս զամս
« երկուս, զոր և ընկալայ հանդերձ աշխատութեամբ ։

« Բ. Յանձն առնուլ տասն երեւելի անձանց գերաշխատ-
« ութիւն հաւաքելոյ զտարեկան թոշակս աշակերտաց վար-
« ժարանիս և զհանգանակեալ արծաթն 150,000 դահեկանս
« յոր արդէն ստորագրեալ է 10,000 դահեկան, և անցուցա-
« նել անխափան ամսոյ ամսոյ 4,000 ֆրանք ի Փարիզ ի ծախս
« վարժարանին, ձեռամբ Պարոնաց Մկրտչի Մոմճեան, և
« Մկրտչի Ազանդոնեան, որք յոժարութեամբ յանձին կա-

„ լան, վատահացեալ յերաշխաւորութիւն տան անձանց
„ երեւելեաց ։

„ Գ. Յայս երկու ամս ժամանակի հոգալ զդրամագլխոյ
„ յեկամուտս վարժարանին գոնէ վասն ծախուց երեանիւ չափ
„ մանկանց, յոր և յուսացուցանէ Սրբազան Կաթողիկոսն
„ Ջանիւք իւրովք. միանգամայն և խորհել զբարձրագոյն
„ ուսմանց աշակերտաց վարժարանիս, յղելով զնոսա ի հա-
„ մալսարան, և ի զանազան ուսումնարանս Գաղղ. տէրու-
„ թեան, առաջնորդութեամբ և խնամօք մերովք ։ Զայսմանէ
„ տաց ձեզ տեղեկութիւն ապա ։

„ Մնամ

„ Գերապատիւ Հայրութեանդ

„ Կ. Պոլիս. 19 մարտ. 1859.

„ Հոգեկցորդ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՒՈՒԵԱՆ. „

Պատասխանի Գաբրիէլ վարդապետի տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի, օրինակ զայս.

„ Գերապատիւ Հայր յանկալի.

„ . . . . . Յերեսին զայսմանն հաստատեալս ի տան անձանց զլխաւորաց Գերազոյն ժողովոյն չտեսանեմ նոր ինչ,
„ և զճշմարիտն ասելով՝ չկարեմ վստահիլ ոչ յերաշխաւորութիւն տան անձանց երեւելեաց և ոչ ի խոստումն գտանելոյ զծախս 25 մանկանց ։

„ Զիմանամ թէ զինչ օգուտ իցէ յոտին պահելոյ զվարժարանդ այլ եւս ամս երկուս կամ երիս, եթէ հարկ թուիցի
„ յետ այնորիկ փակել զդա ։

„ Իսկ եթէ մեղանչեսուր ինչ առնել զայն կամիցի ժողո-
„ վուրդդ, ապաքէն հարկ էր այժմեն պատրաստել զդրամա-
„ զբլուխն մեծ, և յայս տակս առնել անյապաղ դրամաժողով
„ կոնդակաւք և հրամանագրովք, և ոչ եթէ ի կամս մատնաւոր-
„ բաց և ի պարագայս ապարդայ ժամանակի առնել ապա-
„ տան։

„ Իսկ կարծիքս այս են, Սիրեցեալ Հայր, եթէ Սրբազան
„ Կաթողիկոսն և Պատրիարքն հանդերձ Գերագոյն ժողովով
„ ոչ փութացին այժմէն տահմանել զկարեւոր և զգործու-
„ նեայ հնարս հաւաքման դրամագլխոյն մեծի որ դնիցի
„ ի դրամատան ուրեք ի Գաղղիա, և շահուք նորին դաս-
„ տիարակեցին ձրի և մշանջենաւորապէս մանկունք 25, ոչինչ
„ օգուտ լիցի յայդպիսի կարկատուն և բռնական հնարից։

„ Ողջ լինել մաղթեմ

„ Բազմարդիւն Հօրդ Սիրեցելոյ

„ Թէոդոսիա. 17 մարտ. 1859.

„ Հոգեկցորդ եղբայր

„ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ.”

Թէպէտ և ուղիղ են կարծիք Գաբրիէլ վարդապետի ի խընդիրս յայս վարժարանին, սակայն պարտ է ցնա հարցանել, թէ ընդէ՞ր նոքին կարծեաք չվարեցաւ ինքն զառաջինն, և ընդէ՞ր այնու խելամտութեամբ ոչ ջանաց փոյթ տանել այնմ յորժամ ի Պոլիս գնաց... Թողուամք ասել զկամաց և զցանկութենէ նորա որ ի բանս իւր յայս։...

Պատահանի Սարգսի վարդապետի առեալ թղթոյ Գաբրիէլի վարդապետի յորում ցաւի ընդ վրիպումն ակնկալութեան իւրոյ որ ի նմանէ. գանգատի ընդ վհատեցուցիչ բանս նորա,

և ցուցանէ զհակառակութիւն բանից և գործոց նորա, օրինակ զայս .

“ Գերապատիւ Հայր և Սիրելեալ Եղբայր .

“ Ցանկալի և զվհատեցուցիչ թուղթդ, որ ի 17 մարտի,
“ ընկալայ յ30 նորին ամսոյ և խնդացի և տրտմեցայ միան-
“ գամայն . խնդացի ընդ լուր առողջութեանդ և ընդ յաջո-
“ ղութիւն գործոցդ այդր, և տրտմեցայ ընդ վրիպումն
“ ակնկալութեանս ի ձէնջ այտի ։

“ — Ընդ ամին առաքեմ աւաւիկ և զպատճէն կոնդակի զոր
“ ի ձեւ շրջաբերականի գրեցաք արդէն ընդ ամենայն տեղիս
“ այսր վիճակի, զոր և խնդրեմ ցուցանել Սրբազանին ։ ,, գրե-
“ ցիք ինձ երբեմն ։

“ Զգտեալ իմ զայն յայնժամ ի թղթաբերն, ասաց ինձ
“ նա՝ թէ չկարացեալ Ձեր զայն հասուցանել շոգենաւին յղէիք
“ յաջորդաւն . և մինչդեռ մնայի ես անհամբերութեամբ,
“ որպէս և Սրբազանն գտանել զայն ընդ վերջին թղթոյդ,
“ ահա գոլ անդ տարակուսական ինչ յիշատակութիւն ընդ
“ այն այսպէս ։

“ — Վեհափառ Տէրն եթէ արդարեւ կամիցի ընդ հաստա-
“ տութիւն այնր վարժարանի, կարող է հանել կոնդակ
“ առ ամենայն Լուսաւորչական Հայս Տաճկաստանի, և
“ առնել դրամաժողով մեծ այնուհ յեղանակաւ զոր ի նա-
“ խընթացն իմ նշանակեցի, և զայս առնելով ոչ բնաւ ան-
“ հաճոյ կամ անախորժ ինչ գոցի գործել Ռուսաց պետու-
“ թեան ։ ,,

“ Եւ ահա վրիպումն ակնկալութեանս որ ի Ձէնջ այտի ։ . .
“ Իսկ զինչ ասացիս զվհատեցուցիչ բանից վերջին այսր
“ թղթոյդ, որ ունի այսպէս . “ — Եթէ մերազնեայքդ Տաճկաս-
“ տանի կամիցին արդարեւ ունել վարժարան ինչ ազգային
“ ի Փարիզ, ինքեանք պարտին հանգանակել զկարեւոր պէտս
“ հաստատութեան նորին և յարատեւութեան . մի՛ ակնկալցին

„ բնաւ ձեռնտուութեան ոչ միայն յօտարաց այլ և ոչ ի Հայ-
„ կազանց Ռուսաստանի, որք եթէ յօժարիցին եւս չկարեն
„ օժանդակել ինչ մեծ մատուցանել այնմ վարժարանի վասն
„ յայտնի պատճառաց։ „

„ Զկամս մերազնէից Տաճկաստանի և զհաստատութիւն
„ մտաց նոցին, ունելոց վարժարան ինչ ազգային ի Փարիզ,
„ զուք ինքնին ծանեայք մինչդեռ ատ և անդ, ի Պոլիս էիք.
„ ապա չմնայ ինձ ընդ այս առաւել ինչ ասել ձեզ։ Իսկ
„ թէ ձեռնտուութեան Հայկազանց Ռուսաստանի ոչ բնաւ
„ ակնուանել, և թէ չկարեն նոքա, եթէ յօժարիցին եւս, օժան-
„ դակութիւն ինչ մեծ վարժարանիս մատուցանել, զայս ա-
„ պաքէն ես ցարդ ոչ գիտէի, հաւատացեալ բանիւ և
„ գրով խոստման Աղայ Խաչատուր Լազարէֆի, որ առ
„ Սրբազան Կաթողիկոսն, և առ երկրին Պատրիարքն Պոլ-
„ սոյ և Երուսաղեմայ. այլ և վստահացեալ ի շրջաբերական
„ թուղթն Ս. Կաթողիկոսին, յօրինեալ ի Զէնջ իսկ, զոր
„ կամի նա հրատարակել, մեալով միայն վերջին խորհրդոյ
„ ձերոյ այսր։ . . .

„ Թողից յիշատակել զյուսադրական և զխրախուսական
„ բանս Տիխիսեցւոց, որք վստահացուցանեն զմեզ մեծապէս
„ ակնուանել ձեռնտուութեան մերազնէից անդ, յորոց զմիոյն
„ և եթ բանս յիշատակեցից ի սմին, բերեալ զայն ի թղթոյ
„ Հ. Ամբրոսիոսի առ իս.

„ — Յերեկեան թղթին հաւատի առնէր Էնֆիէճեան, զի
„ զիւրին յոյժ լիցի, ասէ, Սրբազանին միայն՝ ի Տիխիսեցւոց
„ հանդանակիլ վասն վարժարանիս ֆրանքս առաւել քան
„ զերեսուն հազար ի տարեաջն, և այլն և այլն. զի մեծ է, ասէ,
„ ակնկալութիւն ժողովրդեանն ի վարժարանէդ, և կամի ընդ
„ բարգաւաճութիւն հաստատութեան նորա։ „ Եւ թողից յի-
„ շատակել զյաջողութիւն գործոյ Տէր Վարդան քահանայի,
„ որ միջնորդութեամբ և շնորհիւ ձերով եղեւ։ . . .

„ Եւ արդ՝ զիաւրդ միաբանիցին ընդ միմեանս այսոքիկ զա-
„ ռան կարծիք . . . կամ որոց պարտիցիմ ես հաւանիլ, կար-
„ ծեաց ձերոց . . . հայեցեալ իբրեւ զիմ արդէն. և թողեալ

„ զամենայն ինչ վերնախնամ Տեսչութեան դաղարեցայց
„ յընդունայն աշխատութենէս . . .

„ Մնամ

„ Գերապատիւ Հայրութեանդ

„ Կ. Պոլիս. 16/4 ապրիլ 1859.

„ Հոգեկցորդ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՂՈՐԵԱՆ. "

Պատասխանի Գաբրիէլ վարդապետի տուեալ Թղթոյ Սարգսի վարդապետի, յորում առաւել եւս ցուցանէ զանմիտութիւն կարծեաց իւրոց և գործոյ ընդ միմեանս, և յայտնէ լռելեայն զԳաղանիան զոր կասկածէին ոմանք, օրինակ զայս.

„ Գերապատիւ և Բազմարդիւն Հայր ցանկալի.

„ Ընկալայ զանձկալին Ձեր նամակ որ ի 16 ամսոյս, և ոչ
„ սակաւ տրտմեցայ և ես ընդ ձերդ վայրապար ասեմ նախ
„ վասն այնորիկ՝ զի ի զուր կարծեալ էք ի բանից Թղթոյն
„ իմոյ, որպէս թէ ես պատրաստեալ իցեմ զօրինակ նորոյ
„ երիք կոնդակի ի դիմաց Սրբազանին, և զայն խորհեալ իցեմ
„ առաքել, ուր իմ բանք էին զհրամանագրոյն զոր ես ինքնին
„ հանի առ ամենայն ժողովուրդս վիճակիս, սակս հաւաքման
„ տրոց իպէտս նորոգութեան վանից Սեպհոյ, և զոր յետոյ
„ աւելորդ իմն վարկայ յղել՝ իբրեւ զյայտնի ինչ։

„ Վասն ձեռնտուութիւն ինչ գտանելոյ ի Հայկազանց
„ Ռուսաստանի ի հատատութիւն և ի նպաստ Փարիզեան
„ վարժարանին՝ իմ կարծիք այն են և արդ որ ինչ էին,
„ զինչ և գրիցին և ասիցեն Լազարեանք, Էնֆիէճեանք և նը-
„ մանեալք նոցին. զի համարիմ լաւ քան զնոսա գիտել
„ զմիտս և զոգի առագաստոյն պետութեան, եւս և զչափ
„ միջամտութեանց ոմանց ի միրազնեայցս որ ասա ի Ռու-
„ սիա։

„ Բայց հարկ է մեզ ապասել ցանկալի աւուրց հանդիպե-
„ լոյ տեսութեան իրերաց, որպէս զի քաջ խելամուտ լիցուք
„ բանից իրարաց զայսմանէ և զայլ բազում ինչ իրաց։...

„ Ողջ լինել ըղձանամ

„ Գերապատիւ Հայրութեանդ

„ Թէոդոսիա. 27 ապրիլ. 1859.

„ Անձնանուէր

ԳԱԲՐԻԷԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՅՎԱԶԵԱՆ.”

Ահա ի բանից պատասխանւոյ իւրոյ Գաբրիէլ վարդապետ ինքնին ցուցանէ զանմիաբանութիւն կարծեաց իւրոց ընդ միմեանս, և յայտնէ լուսեալն զպայմանս որ ընդ պետութեան Ռուսաց։ Սակայն ի վերայ այսր ամենայնի համբերէ Սարգիս վարդապետ ակնունելով տակաւին օժանդակութեան ի նըմանէ։

Տեսեալ Սարգսի վարդապետի զի ժողով խնամակալաց ոչ եկաց ի բանի խոսման իւրում, հոգալոյ զկարեւոր պէտս Հայկազեան վարժարանին, վասն այնորիկ հրաւիրէ զնա ի Պոլիս, բոզոքէ նա զրով առ Սրբազան Կաթողիկոսն, իբրեւ առ գլուխ ազգին Հայոց, և իբրեւ յարձանագրութիւն յապայն եկելոց, օրինակ զայս.

„ Վեհափառ և Սրբազան Տէր.

„ Ահա ամիս տասն են զի կամ եւ ասա ի Կոստանդնու-
„ պոլիս, հրաւիրեալ ի Խնամակալաց ժողովոյն, առ ի կար-
„ գի դնել զիրս Հայկազեան վարժարանին, այսինքն ի հոգալ
„ զկարեւոր պիտոյից նորին, և այս պայմանաւ, խոստանալով
„ նորա աւարտել զգործն ի մէջ երկուց ամսոց, և դարձուցա-
„ նել զիս անդրէն ի Փարիզ։

„ Այլ թէ զինչ յիրաց անտի եղաւ ցարդ ի կարգի, այս-
„ ինքն, թէ արշաւի ինչ հոգացաւ զկարեւոր պիտոյից վար-

„ ժարանին, ես այսչափ միայն գիտեմ, եթէ Սրբազան Հօրդ
„ հասարակաց չէր փոյթ կալեալ զհասատութենէ վարժարա-
„ նին բանիւք և արդեամբք, փակեալ էր այն այժմ անշուշտ,
„ ի մեռաս և ի նախատինս ազգիս Հայոց . . . և եթէ չփու-
„ թայ արդ Վեհափառ Տէրդ հոգ տանել և պարտուց նորին,
„ առաւել ևս լիցին մեռաս և նախատինք նմին : . . .

„ Յո՛ւշ լիցի Վեհիդ աղերսական միանգամայն և սպառ-
„ նական գիրն Պարոն Մկրտչէ Մանանեանի առ Ձեզ, գը-
„ բեալ ի Փարիզէ, և գովասանական և յուսադրական
„ պատասխանին Ձեր տուեալ թղթոյ նորա, որով հանդար-
„ տեալ նորա, և յուսացեալ մնայ գոռանել փութով զարծաթ
„ իւր ատի, զոր փոխ տուեալ է Հայկազեան վարժարա-
„ նին ի հինգ ամաց հետէ, հանդերձ փոքր վաշխիւ. յորժամ
„ լուիցէ նա զմեկնել Վեհիդ ատի, առանց հոգալոյ զհա-
„ տուցմանէ արծաթոյն իւրոյ, արասցէ նա զարժանն, պա-
„ հանջեսցէ նա զիրաւունս իւր ձեռամբ Գաղղիոյ Դեսպա-
„ նին, գոլով հպատակ տէրութեան նորին : Ահա մեռաս և
„ նախատինք ազգիս : . . .

„ Վասն որոյ աղաչեմ զՍրբութիւնդ, խորհելով զօգուտ
„ և պահելով զպատիւ ազգիս, խօսեցարուք Խնամակալաց
„ ժողովոյն պահանջել ի պարտապանաց վարժարանիս ըզ-
„ պարտս իւրեանց, զմնացեալ թոշակս եղելոց մանկանց
„ ի վարժարանէս, զոր զլանան ցարդ ծնողք նոցա հատու-
„ ցանել զանազան պատճառանաք : . . .

„ Իսկ թէ ո՞յք իցեն պարտապանք և քանի՞ ինչ պարտիք
„ նոցա, ահա նշանակեալ զայն առանձին ծրարեմ ի սմին :
„ Այսու յուսով

„ Մնամ

„ Վեհափառ Տէրութեանդ Ձերում

„ ի Կ. Պոլիս. 19 ապրիլ. 1859.

„ Ամենախոնարհ ծառայ

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՐԵԱՆ. „

Առեալ Սրբազան Կաթողիկոսին զվերոյիշեալ թուղթն Սարգսի վարդապետի՝ առնէ նմա բերանով պատասխանի, խոստանալով հոգալ զայնմանէ յառաջ քան զմեկնել իւր ի Պօլսոյ գնալ յԷջմիածին. թէպէտ և ոչինչ վճարէ։ . . .

Թուղթ Սարգսի վարդապետի առ Ամբրոսիոս և Խորէն վարդապետս ի Փարիզ, յորում ծանուցանէ զհանգամանս իրաց վարժարանին և զվիճակէ իւրմէ. նոյնպէս և զվերջին յոյս Սրբազան Կաթողիկոսին և զկամն նորա, հանգերձ յուսահատութեամբ ակնկալութեան որ ի Գաբրիէլ վարդապետէ, օրինակ զայս.

« Սիրեցեալք և Անձկալիք իմ ի Քրիստոս.

« Զցանկալի Ձեր նամակ որ ի 29 անցելոյն, ընկալայ « ի 10 ամսոյս և միխիթարեցայ ընդ լուր պատուական ողջու- « թեան Ձերոյ խնամօք Բարձրելոյն։

« Եկից արդ ի բանս որ զհանգամանաց վարժարանիդ և « և զվիճակէ իմմէ ասա, զորոց հարկ համարիմ տալ ձեզ « տեղեկութիւն։

« Հանգամանք վարժարանիդ նոյն է որպէս յառաջ ծանու- « ցի՝. մեայ հաստատել զայն յայսմ եօթնեկի, վաւերական- « նութեամբ Սրբազան Կաթողիկոսին և երաշխաւորութեամբ « երեւելեաց ոմանց ի Գերագոյն ժողովոյ, և յանձնառութեամբ « Պարոնաց Մկրտիչ Մամճեանի և Մկրտիչ Աղազանի հաստա- « տել ձեզ ամսոյ ամսոյ 4,000 ֆրանք, զամս երկու, մինչեւ « դարման տանել պակասութեանն, հոգալ և զհաստատու- « թենէ և զմշանջենաւորութենէ վարժարանիդ։

« Եթէ յապաղեցաւ ցարդ հաստատել ձեզ արծաթի վասն « ապրիլի անցելոյ ամսեան, գիտասջիք զի ոչնչնարին կրաւաս « է ի դրամափոխութեան, որպէս և նախընթացիւն ծանուցի. « ապա չէ պարտ ձեզ յուսահատիլ և դանդաղել, այլ պարտ- « ութիւն ակամբիկ մի համբերել։

« Իսկ զվիճակէ իմմէ ասա զամիս տասն ոչ ինչ ծանուցի

„ Զեզ ցարդ, խնայելով չյաւելուլ զհոգս ձեր. այլ այսչափ
„ միայն շատ համարիմ ասել առ տեղեաւս, թէ զամս չորեք-
„ տասան զոր անցուցի ի ծովային ճանապարհի և ի Հնդկաս-
„ տան, ոչ այնչափ ասրոյ հոգոց և վհատութեան, որչափ
„ սատ զամիսս տասն . . . եթէ չափազանց թուլցին ձեզ բանքս
„ ցուցից ես զայս հաւատեաք։

„ Յոյս մի միայն կայր ինձ ի միխիթարութիւն, և այն եւս
„ ի դերեւ ել յայսոսիկ աւուրս ըստ բաղդին իմոյ. այլ թէ
„ զինչ այն և ուրպէս, ահա յիշատակեցից զայն սատ համա-
„ ռօտիւ, և ցուցից հաւատեաք։

„ Արդ տեսեալ և փորձեալ իմ թէ չգոյր յոյս յաղգայնոցս
„ սատի ընդ հաստատութիւն վարժարանիդ, յորդորեցի ըզ-
„ Սրբազան Կաթողիկոսն շրջաբերական գիր մի հրատարա-
„ կել ընդ համօրէն ազգն մեր, յօժանդակութիւն հաստա-
„ տութեան վարժարանիդ. հաւանեցաւ նա ընդ այն, և սատց
„ ինձ պատրաստել իմ զայն խորհրդով և թելադրութեամբ
„ Գաբրիէլ վարդապետին մերոյ։

„ Գրեալ ծանուցի նմա զխորհուրդն իմ և զհաճութիւն
„ ընդ այն Սրբազան Կաթողիկոսին, և խնդրեցի ի նմանէ
„ յօրինել և առաքել ինձ զայն ի Պոլիս։ Հաճեցաւ և նա ընդ
„ այն և յօրինեալ առաքեաց ինձ զայն. միանգամայն և ազդ
„ արար հրատարակել զայն Սրբազանին յառաջ քան զան-
„ ցանել իւր ի Ռուսաստան, որպէս և այսր զնոյն ազդ
„ արարիք ըստ խրատու Աղայ Յովհաննէսի Մոսկուեցւոյ։

„ Եթէ յայսպիսի ազգարարութենէ կասկածեալ Սրբազա-
„ նին ընդ տհաճութիւն Ռուսաց տէրութեան կասեցաւ ի հրա-
„ տարակելոյ զայն, և եթէ առաւել եւս ազգոյ և արգասաւոր
„ առնելոյ զայն յապաղեաց զհրատարակումն նորին մինչեւ
„ ցարդ։

„ Նոյնպէս տեսեալ Սրբազանին և փորձեալ թէ ոչ գոյր
„ յոյս յաղգայնոցս սատի ընդ հաստատութիւն վարժարա-
„ նիդ, եղեալ է զայն յաղգայինս որ ի Ռուսաստան. փոխն այ-
„ նոքիկ կամի ածել զիս ընդ իւր անդ, քաջալերեալ ի բանից
„ Թղթոց Լազարեվի, և Յովհաննէսի, և այլոց ոմանց։

„ Լուարուք այժմ զկարծիս և զդատաստան Գաբրիէլ
„ վարդապետի մերոյ որ ընդ այս ակնկալութիւն մեր. յա-
„ ւելից ի սին զպատճէնս թղթոց նորին ձեզ ի դիտու-
„ թիւն . . .

„ Մնամ

„ Սիրելեացդ

„ Ի Կ. Պոլիս. 11 մայիս. 1859.

„ Հոգեկցորդ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ. „

Թուղթ Ամբրոսեայ վարդապետի առ Սարգիս վարդապետ յորում Նկարագրէ զցաւալից վիճակ իւր առ կարօտութեան արծաթոյ ի կարեւոր պէտս վարժարանին, և յայն առտիճան հասեալ՝ մինչեւ խորհի փակել զայն, օրինակ զայս.

„ Անձկալիդ մեր Հայր և Վարդապետ.

„ Թէպէտ և ի վերջնում թղթիդ չգրէք ինչ զանձնական
„ տկարութենէդ, սակայն լուեալ զայն ի նամակէ Պ. Նշանի
„ ցաւեաց մեզ յոյժ, և ի լրումն եղեւ այն վշտաց և աղետից
„ մերոց։ Հա՛յր, Հայր, խնայեցէք ա՛ղէ ի պատուական և
„ անգին վասն մեր կենաց Ձերոց՝ յոր դողամք։ Մինչ քանի՞
„ երաշխէպս յաւել ի սիրտ հայրական որդւոցս դառն և ցա-
„ ւագին բանք սիրայնոյ գլխոյդ։

„ — Զվիճակեն իմէ ասա ոչինչ ծանուցի Ձեզ ցարդ, խնա-
„ յելով չյաւելուլ զհոգս ձեր ի զուր, և ի ժամուս այսչափ
„ միայն ասացից, թէ զամս չորիքտասան զոր անցուցի ի Հընդ-
„ կասան՝ ոչ այնչափ հոգոց տարայ, որչափ ասա զամիս
„ տասն։ „

«— Յոյս մի միայն կայր ինձ առ ի մխիթարութիւն, այն
« եւս ի գերեւ եկ այժմիկ։ »

« Սոյնպիսի յուսարեկ և ցաւագին բանիւք ի են և գրեալն
« ձեր ի 17 ամսոյս։

« Եւ արդ հնար ինչ իցէ, Հայր, յայսպիսում ողորմ
« պայմանի յառաջ վարել զվարժարանդ. ահա ամիսք երկու
« են յորմէ հետէ և ոչ դանկ մի առաքի մեզ։ Ի՞նչ մարթիցուք
« զաւուրն պարէն հայթայթել, զվարձ տանս, ծառայից,
« վարժապետաց հոգալ, հանդերձ բիւր այլ մանր և ան-
« սովոր ծախիւք որոց քաջ տեղեակ էք և խելամուտ։

« Ինամ ունել առողջութեանս հրամայէք ինձ. Զի ի կո-
« րուսանելդ զայն, զամենայն այն ինչ կորուսանեմք. ասէք։
« Եւ կարի իսկ քաջ, զիտեմ և ես, սակայն զի՞ գործեցից
« Հայր, ուստի՞ իցէ ինձ գտանել այնչափ կար և զօրութիւն
« ի զիմի հարկանել այսչափ կուռ զմիմեամբ հասելոց վշտաց
« և տառապանաց, և զժոխըմբեր կարօտութեան արծաթոյ,
« և աննկուն կալ։ Ոչ եւս կարեմք, Հայր, տեւել տակալ
« անընդմիջելի տառապանացս, զի ահա մեռանիմք։ Լաւ է
« մեզ ի ծառայութիւն մտանել ի տունս Գաղղիացւոց, մա-
« ռանալ զփառս և զպատիւ մատենագրութեան մերոյ և
« զաստիճանի՝ քան զայս կեանս մեր։

« Եւ ոչ ընդ միտ անգամ կարեն ազգայինք ածել եթէ
« որպիսի բիւրապատիկ նեղութեամբք և անձկութեամբք և
« կորանոք յուսին կալեալ եմք զվարժարանդ և զփառս ազգին
« անաղօտ, և ոչ մի արծաթ ընդունելով ի Պօլսոյ ոչ վասն
« ապրիլի և ոչ վասն մայիսի։ Զամենայն յոյս մեր եղեալ
« էաք յառաջիկայ թղթաբերն, եհաս և այն ձեռնունայն և
« ի խորս անյուսութեան թաւալեցոյց զմեզ։ Ա՛ղէ խնայեցէք
« ի մեզ և տուք խորհուրդ փակելոյ զվարժարանդ և փութա-
« պէս որչափ հնար իցէ։ Ինոյն կարծիս է և Յակոբ Էֆէնտին։

« Եթէ ընդ հուպ, այսինքն յառաջ քան զվերջ յունիսի
« շահմանեցի այս ամենակարեւոր և մեծ խնդիր ազգային,
« զիտելով զիտացեն ամենեքեան զի յ30 յունիսի փակեա-
« ցուք մեք զվարժարանդ ըստ խորհրդոյ Յակոբ Էֆէնտիի,

„ և հեռագրով յայտ առնելով զոյն ծնողաց, խնդրեցուք
„ ի նոցանէ զծախս ճանապարհի որդւոցն։

„ Խօսեցարուք զոյժմանէ, ազաչեմ, ընդ Մոմհեան Տեառն,
„ առ որ այսօր գրեցի վերասին, ընթերչիք և զգրութիւնս
„ իմ առ նա։ Եւ քանզի 30 առ 100 կորուսանելոց եմք ասէք,
„ զոր ինչ պատրաստեալ է.ք վասն պարտուց տպագրութեանց
„ մերոց կարէ.ք յանձնել առ Մոմհեան Տէրն, ազաչելով
„ հաստատանել մեզ զոյն ընդ ինչանել գնոյ Ֆրանքաց։ Եմին
„ յանձն արարէ.ք, ազերսեմք, և զայլ ամենայն կարեւորս։

„ Որչափ և խնդամք ընդ երթ Ձեր ընդ Սրբազանին և ընդ
„ Եպիսկոպոսանալդ, նոյնչափ և գնեղութիւն և զվտանգ
„ ճանապարհի յուշ ածեալ զարհուրիմք։

„ Մեզ քան զամենայն ինչ ցանկալի էր ընդ հուպ ի գիրկս
„ մեր ունել զՀայրդ և զիսրախոյս որդւոցս տառապելոց և
„ լքելոց։...

„ Այսչափ ի ժամուս վշտացս և նեղութեան և մինչեւ յան-
„ գորր հանցէ զմեզ Տէր իւրովն ամենազօր աջով։

„ Ի Փարիզ. 27 մայիսի 1859.

„ Վշտալից որդի

„ ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. ԳԱԼՖԱՅԵԱՆ. „

Զճշմարտութիւն բանից թղթոյ և զուղղութիւն գնացից Ամբրոսեայ վարդապետի Գալֆայեան տեսցեն վերծանողք ապա ի դարձի Սարգսի վարդապետի ի Փարիզ յամին, 1860. և արասցեն յայնժամ զարդար դատաստան։...

Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ թղթոյ Ամբրոսեայ և Խորենայ վարդապետաց, յորում ծանուցանէ զցաւս իւր ընդ վիճակ նոցա, և յիշեցուցանէ լռելեայն զիւրն, միանգամայն և մեղադրէ զանելորձութիւն Ամբրոսեայ վարդապետի որ երթեմն ի Պոլիս, օրինակ զայս.

„ Սիրեցեալք և Անձկալիք իմ՝ ի Քրիստոս.

„ Զերկոսին ցանկալի և զցաւալից նամականին Ձեր, որ
„ ի 12 մայիսի, ընկալայ ի 21 սորին ամսոյս, հանդերձ գրով
„ Սիրելի Աննիկին, ձեռամբ Սուլթան Տիկնոջ, որ և պատմեաց
„ մեզ զցաւալից վիճակ ձեր այդր, թէպէտ և ոչ նոր ինչ և
„ անծանօթ, այլ նորոգութիւն և յաւելումն ցաւոցս։...

„ Ա՛հ, եթէ գիտէիք դուք և զվիճակն իմ ասա, ապաքէն
„ ոչ ծանուցանէիք ինձ զձերն այդր... այսչափ միայն
„ գիտաջիք, զի ահա աւուրք ասան են կամ ես ի մահիճս
„ հիւանդութեան, շարժեալ ի մաղձից, և այս պատճառեալ
„ ի գնացից խորհրդակցոյս և անզգայ ազգայնոցս ասի։...
„ Սակայն տարայ և տանիմ ես լռութեամբ՝ ի չյաւելուլ ձեզ
„ առաւել իմն հոգ, ցաւ և խապտռ լքումն սրտի և ձեռաց
„ ձերոց։...

„ Եթէ սակաւիկ մի ծանօթ և փորձ էիր դու բարուց բնա-
„ ւորութեան ազգայնոցս Պօլսոյ, առնէիր արդեօք զարժանն
„ մինչդեռ յեռանդեան էին նոքա, և դու իբրեւ զՅեսու
„ նաւեայ էիր ի միջի նոցա... և եթէ կացեալ էր ասա
„ համբերութեամբ Գաբրիէլ վարդապետ քանի մի եօթնեակ,
„ ի կարգի դնէր զիրս վարժարանիդ և չտագնապէիր դու
„ այժմիկ ի պարտառեարց այսր, և չտառապէի ես ի գրուն
„ անզգայից ասի։...

„ Մնամ

„ Սիրելացդ

„ Ի Պօլիս. 25 մայիս. 1859.

„ Հոգեկցորդ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՂՈՐԵԱՆ.”

Ի վերջին կարօտութեան հասեալ Հայկազեան վարժարանին

ի Փարիզ, ազգ առնէ Ամբրոսիոս վարդապետ Պատրիարքին ի Պոլիս, թէ փակեցի վարժարանն, եթէ չհատուցի արծաթ ի կարեւոր ծախս նորին։ Խնայեալ զայն Պատրիարքին, գրէ առմամբ մի առ Սարգիս վարդապետ որ ունի օրինակ զայս.

„ Գերապատիւ Սիրելեալ մեր ի Տէր.

„ Ի վաղուն որ է օր երեքշաբաթի հաճեալիք գալ ի Պատրի-
„ արքարան առ մեզ վասն ամենահարկաւոր գործոյ ունիմք
„ խօսակցիլ ընդ ձեր սիրելութեան։

„ Ողջ լերուք

„ 25 մայիս. 1859.

„ ԳԷՈՐԳ ՊԱՏՐԻԱՐՔ. „

(Առ Գերապատիւ Տ. Սարգիս վարդապետ Թէգորեան
ի Պէյօղլու.)

Ի վաղուէ անդր գնայ Սարգիս վարդապետ առ Սրբազան Պատրիարքն ի Պատրիարքարանի, ուր և զՊարոնայս Յակոբ Նորատունկեանն, Մկրտիչ Մոմճեան և Մկրտիչ Աղաբէն, որք ծանուցանեն նմա զայն, և հարցանեն ցնա թէ զի՞նչ պարտ էր առնել ընդ այն պատասխանի։

Ասէ ցնոսա Սարգիս վարդապետ, թէ պարտ էր կամ ըստ որոշման և ըստ խոստման յանձնարարական ժողովոյն ամսոյ ամսոյ 4,000 ֆրանք հատուցանել ի Փարիզ ի կարեւոր ծախս վարժարանին, և կամ հրաման տալ փակել զայն. բայց յայտցանէ չիք այլ հնար։

Ցետ երկար խորհելոյ և խօսելոյ որոշեն նոքա ի վախճանի առնել պատասխանի հեռագրով չփակել զվարժարանն, խոստանալով հատուցանել անդ արծաթ առաջին պահանջ.,

զոր և կատարեն զամիսս երկու հանդերձ բազում դժուարութեամբ։

Տեսեալ ոմանց յաւգասիրաց անտի, յորոց մին և թելադիր՝ լինի Պարոն Տիգրան Իւսուֆեան, յորդորեն զՍրբազան Կաթողիկոսն շրջաբերական թուղթ մի հրատարակել յազգի մերում ի Տաճկաստան, յօժանդակութիւն վարժարանին։

Ստիպի նա ի թախանձանաց նոցա առնել զայն ի վերջնում աւուր մեկնելոյ իւր ի Պոլսոյ, թէպէտ և ոչ արդիւնք ինչ անտի լինի, որպէս և յետոյ տեսանի։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Տեսաւորութիւն Կաթողիկոսին ընդ Կուսանացին Գոռքսն Ռուսաց. — Հրաժարական ողջոյն նորա առուեալ Սուրբն Մէջիրի. — Այցելութիւն Սարգսի վարդապետի ի դպրոցն Մայր եկեղեցւոյ. — Նոյնպէս վարժապետի նորին առ նա. — Հրաժարական բուղդ Սարգսի վարդապետի առ ընկերս իւր ի Փարիզ, և յանձնարարութիւն նորա. — Կարգադրութիւն դրամոց Սարգսի վարդապետի սրարելոյ ի Պոլիս. — Եղ Կաթողիկոսին ի չոգնուաւ. — Հանդիպեալ նորա ի Պարի Գարբիէլ վարդապետի, և ի Փորի Սարգիս եպիսկոպոսի Զաղայեանի. — Ճանապարհորդութիւն Կաթողիկոսին ընդ ցամաք, և ընդոնկելութիւն նորա զանանապարհայն. — Հասանել նորա ի Տիֆլիս, և ընդունելութիւն ի քաղաքացոցն և յազգայնոցն անդ. — Եղ նորա ի Տիֆլիս և հասանել յԵրեւան, և ընդունելութիւն ի քաղաքացոցն անտի. — Ժամանել նորա յԷջմիածին և ընդունելութիւն ի վանականից անտի.

Հասանէ ժամանակ եկանելոյ Կաթողիկոսին ի ճանապարհն դնալ յԷջմիածին, և նա գանդաղի, մինչով Գարսեան Դրքին Կուսանեղեայ եղբօր կոյսեր Ռուսաց, որ ունէր գալ ի Պոլիս, և զոր տեսանել կամէր Կաթողիկոսն, որպէս և տեսանէ։

Պատուէ զնա Դուքս, մինչով նմա չոգնաւ մի առանձին ածել զնա ի Փոթի։

Գնայ ապա Կաթողիկոս առ Սուրբն Մէջիրի առ ի տալ նմա զողջոյն հրաժարական. առնու ընդ իւր երկու եպիսկոպոս, և չորս վարդապետս, մինչով խրատաճչիւր նոցա ինչ ինչ տիրոջս. կամի առնուլ ընդ իւր և զՍարգիս վարդապետս տալով նմա տիրոջս աթոռակալի իւրոյ ի Պոլիս, զոր խորհի

կարդել անդ ապա. ոչ կամի ընդ այն Սարգիս վարդապետ և ոչ գնայ ընդ նմա, թէպէտ և յորդորեն զնա ոմանք գնալ, առ ի գտանել պատուանշան ինչ։

Սուլթան Մէջիթ սիրով ընդունի զԿաթողիկոսն և ձեռամբ իւրով տայ նմա զպատուանշան առաջին կարգի. ապա յետ աւուրց ինչ առաքի ի Դրանէն և այլոց պատուանշան երրորդ կարգի։

Աւուրքք ինչ յառաջ քան զմեկնել Սարգսի վարդապետի գնալ յԷջմիածին ընդ Կաթողիկոսին, հրաւիրէ զնա Պատուելի Յ. Ս. Մալէզեան այց առնել զպրոցին Մայր եկեղեցւոյ։

Գնացեալ նորա անդ և տեսեալ զյառաջադիմութիւն աշակերտաց նորին ուրախ լինի և քաջալերէ զնոսա հանդերձ օրհնութեամբ։ Յայնժամ երդէ Պատուելին Նուազ մի զոր ի դէպ համարիմք յիշատակել ի սմին, ոչ ի ցոյց ինչ պարծանաց Սարգսի վարդապետի, այլ ի ցոյց շնորհակալութեան մտաց երգողի նորին, և որ ունի օրինակ զայս.

ՆՈՒԱԳ

ԻՇՆՈՐՀԱԲԵՐ ԳԱԼՈՒՍՏ

ԳԵՐԱՊԱՏԻՒ ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԹԷՈԴՈՐԵԱՆ

ՑԱՑՑԵԼՈՒԹԻՒՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԻԳՈՒՄ ԳԱՓՈՒ

ԻԴԻՄԱՑ ԱՇԱԿԵՐՏԱՑ

Օն արիք մանկունք Վեհիս ընդ առաջ,
Մեզ նոր այցելու ցուցաւ Ի բարձանց.
Վաղընջուց նա մեզ կարկառեաց զիւր աջ,
Մարիք Ի համբոյր Բարերար ձեռաց։
Ընթանչելի Բարերարին
Վեհ Մուրատայ սուրբ Կրտակին,
Ընդա գիտեմք գոլ առաջին
Անանդապահ հաւատարիմ։
Մանկանց Բարերար
Իմաստից տատար
Բազմերախտ մեր Հայր
Կեցցէ բարեփառ,
Եւցէ մեր բարբառ
Երկնից Ի կամար։

Արամեան տոհմի մանկըտուոյս համայն
Սա եկաց միայն զօրավիգ պաշտպան.
Արդար իրաւանց մերոց սեպհական,
Սա ինքըն ցուցաւ հրզօր փաստաբան։
Քաջ շահատակ Ազգին առ սէր
Ի վտանգ ի վիշտ անձնանուէր
Զարմանալի Հայրենասէր։
Յիշատակ բարի
Ծերուենուոյս արի
Անջինջ գրոշմեցի
Յանցն իւր ի սրտի,
Մանկըտուոյս մէն մի
Կոթող կենդանի։

Սա ըզ մեր մղեաց ըզմարտ բազմամեայ
Դիմագրաւ ի վիշտ ի բանտ և ի մահ,
Զի ըզմեզ մուծցէ ի տրահ Արմենայ,
Ինք կաշկանդեցաւ յարգելանս կամայ։
Առնըս մեծի երկոց քրտանց
Անմահ վըկայ աշխարհ Հընդկաց,
Թէ ըռեացեն ըեզուաց հընչմունք,
Աղաղակեն բանտից որմունք։
Կայտիռք հըրճուանաց
Հընչիւնք նուագաց
Գանգըք արձանաց
Ի գով արդասեաց
Տեառնըս Վեհապանծ։

Յամի Տեառն 1859. մայիս 15.

Երգեայ

Յ. Ս. ՄԱԼԷՋԵԱՆ։

Որբեւ մերձենայ օր ելանելոյ ի ճանապարհ գնալ յԷջմիածին Սարգսի վարդապետի ընդ Կաթողիկոսին, գրէ զիր հրաժարական ողջունի առ Ամբրոսիոս և Խորէն վարդապետս ի Փարիզ, յորում առնէ կարեւոր ազգարարութիւն և յանձնարարութիւն, հանդերձ գիտելեաք, օրինակ զայս.

„ Սիրելեալք և Անձկալիք իմ ի Քրիստոս.

„ Դարձեալ նոր ճանապարհորդութիւն, դարձեալ ինձ նոր
„ հոգ և աշխատութիւն, թէպէտ և չունիմ ես այժմ զնոյն
„ կարողութիւն և ոչ զնոյն ակնկալութիւն զոր ունէի երբեմն.
„ ընդէր այսպիսի իցէ իմ ճակատագրութիւն, և այսչափ
„ միայն ինձ ժառանգութիւն. . . .

„ Անհաւասիկ յետ երկուց աւուրց ելից ինաւ գնալ ի Փօթի
„ և ոնտի ի Տիխիս և յԷջմիածին, և որ ինչ անդ և այլուր
„ անցանելոց է ընդ իս չգիտեմ, բայց վկայեն միտք և փորձս՝
„ թէ միան ինձ տակաւին հոգ և նեղութիւն, զոր յաժարու-
„ թեամբ յանձն առնում յօգուտ ազգիս, որում նուիրեցի
„ զանձն իմ ի յիսուն ամաց հետէ, և նուիրեցից զամենայն
„ աւուրս կենաց իմոց.

„ Այս յանձն արարեալ զիս խնամոց Տեառն և ազգիս
„ Սիրելեացդ գնամ ի լնուլ զվերջին պարտս իմ, և կամ կա-
„ տարել զընթացս իմ արդեօք . . . և ապա չմնայ ինձ, սի-
„ րելեացդ իմ ի Քրիստոս, այլ ինչ կարեւոր Զեզ գրել և
„ կամ պատուիրել, բայց եթէ զնոյն ազաչանս իմ վերստին
„ երկրորդել, այս է խնամ տանել երկուցուն հարազատացդ
„ պատուական առողջութեան ձերում, զի եթէ կորուսչիք
„ դուք զայն, կորուսեալ է վասն իմ տառապելոյս և կարօ-
„ տելոյ ազգիս ամենայն. . .

„ Մի՛ բնաւ հոգայք և մաշիք ընդ պակասութիւն պիտոյից
„ վարժարանիդ, և մի՛ կարճնուեալ վհատիք ի պաշտօն ձեր
„ այդր և յաշխատութիւն, այլ համբերութեամբ և արիու-
„ թեամբ տարջիք պակասութեան և նեղութեան. քանզի
„ յուսացեալ եմ ես յողորմութիւնն Աստուծոյ և ի յաժա-

“ բամբութիւն Արքաղան Կաթողիկոսին մերոյ յաջողեցի
“ մեզ ամենայն, ընդ անցանել մեր ի Տփխիս և յԷջմիածին,
“ ընդ ծանօթանալ ազգայնոցս անդ, և ընդ տարածել շրջա-
“ բերական կոնդակի յամենայն կողմանս. ապա քաջալերեցա-
“ ցուք ի պաշտօնդ յայդ և ի գրաւոր աշխատութիւնդ, զորմէ
“ առաւել վոյթ է ինձ և լիցի միշտ։

“ Աւելորդ համարիմ երկրորդել Ձեզ վասն փոխադրու-
“ թեան վարժարանիդ, փակման ասեմ, և վասն զգուշու-
“ թեան ձեռագիր և տպեալ մատենից, հանդերձից և կահուց
“ իմոց զորոց ծանուցի նախընթացիս։

“ Վասն ապրիլ ամսոյ ծախուց վարժարանիդ առաքեցաւ
“ ձեզ անցեալ պատեհաւ ձեռամբ Պարոն Մկրտիչ Մոմճեանի
“ 4,500 ֆրանք. ահա յղեցի ձեզ այսուհետև պատեհաւ 4,000 ֆր.
“ վասն մայիս ամսեան ծախուց վարժարանիդ, և այս օժան-
“ դակութեամբ և մանաւոր հանգանակութեամբ Աբրահամ
“ Աղայի Երամեան, որոյ իմացեալ զնեղութիւն ձեր այդր,
“ և զսաղմնապն իմ ընդ այն այսր՝ զթացաւ, օժանդակեաց
“ յիւրմէ և ի բարեկամաց իւրոց հանգանակութեամբ, և առ
“ որ արժան է զրել ձեր այսր զիր շնորհակալութեան և
“ գովութեան վասն գործոց բարեաց հասարակաց ազգիս։ . .

“ Նոյնպէս և առ Տիկին մայր նորա Եպրու Հանէմ, յա-
“ զագս հիւրասիրութեան և մայրօրինակ խնամոց նորա առ
“ իս, և օժանդակութեան վարժարանիդ, առաքելով ձեզ
“ աշակերտ մի ծախիւք իւրովք, (զորդի Տ. Գէորգ Երի-
“ ցու։)

“ Զգին Մասեաց Ազաւնոյ զ9,000 դահեկան զոր ընկալայ
“ ասա ի գործակալէն Պ. Աւետիք Էնֆիաճեանէ ի Տփխիս
“ անցուցի ի հաշիւ իմ, տեսանելով զկորուստն մեծ ի գրա-
“ մափոխութեան, և գրեցի առ Պ. Մ. Մանանեան հաստատա-
“ նել ձեզ այդր 1,500 ֆրանք։

“ Ի հանգանակութիւն գործոյ Լամարթինի թէպէտ և առ-
“ բարեցին ոմանք յազգայնոցս ասի, այլ չհաստատեցին ցարդ
“ զարժաթն, թերեւս հաստատեցին և յանձնեսցին զայն Պա-
“ րոն Նշանի. ես յոյս մեծ ունիմ հոգալ զայսմանէ, և զՀայ

„ ի Գաղղ բառարանէդ ի Տփխիս . . . զի որպէս վերագոյն
„ ասացի, առաւել փոյթ է ինձ զգրաւոր աշխատութենէ
„ ձերոյ. ապա զգուշացարուք աղաչեմ քաջողջութեան ձե-
„ բամ և զօրացարուք ի վաստակս ձեր ։

„ Ողջունեալ զամենայն բարեկամս մեր այդր իւրաքանչիւր
„ յանուանէ և մասնաւորաբար զՊարոն Մ. Մանանեան,

„ Մնամ միշտ

„ Սիրելեացդ

„ Ի Կ. Պոլիս. 26 մայիս. 1859.

„ Հոգեկցորդ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՂՈՐԵԱՆ. ”

Որպէս ի վերոյիշեալ թուղթն ասացաւ, թէ տեսանելով Սարգսի վարդապետի զկորուստն մեծ ի գրամախոհութեան՝ գրէ առ Պ. Մ. Մանանեան հաստատանել Ամիրոսեայ վարդապետի 1,500 ֆրանք ի հաշիւ իւր. և որպէս ի թուղթն Ամիրոսեայ վարդապետի թէ ։ „ Եւ քանզի 30 առ 100 կորուսանելոց եմք ասէք, զոր ինչ պատրաստեալ էք վասն
„ պարտուց տպագրութեանց մերոց կարէք յանձնել առ
„ Մոմճեանի Տէրն, աղաչելով հաստատանել մեզ զայն ընդ
„ ինչանել ֆրանքաց, նմին յանձն արարէք աղերսեմք և զայլ
„ ամենայն կարեւորս ։ ”

Ահա ըստ այսմ առնէ Սարգիս վարդապետ վստահ գոլով և իւր արդէն ի կարեկից բարեկամութիւն Պ. Մ. Մոմճեանի. քանզի յանձնէ նմա զ23,000 դահեկանս զընկալեալ պարտս ձէգայէրլեանի և զորոյ փոխարէն տուեալ էր յառաջ հրամանն Պ. Մանանեանի հաստատանել ի հաշիւ իւր. նոյպէս և զ9,000 դահեկանս որ ի գնոյ գրեանց վաճառելոյ ի Տփխիս, ընդ ամենայն 32,000 դահեկանս և զ60,000 դահեկանս, զոր մասանուոյ իւրոյ վաճառելոյ ձեռամբ նոցին Մոմճեանի. յա-

ելու յայնս և 8,000 դահեկանս, զոր ունէր ի յիշելեաց պա-
տարագուցի, և ընդ բովանդակն 100,000 դահեկանս։ Զայս
զումար գրամոյ յանձնէ Սարգիս վարդապետ ի ձեռս Պարոն
Մկրտիչ Մոմճեանի պայմանաւ, հատուցանել ամեան 1,000
դահեկան շահ, մինչեւ իջանիցի արժէք Ֆրանկքին ցՅ դահե-
կան. յայնժամ փոխեսցէ զայն ամենայն յոսկի գրամ Եւրո-
պիոյ և յանձնեսցէ Սարգսի վարդապետի ի զարձի նորա
յԷջմիածնէ ի Պոլիս։

Խոստանալով խոստանայ նմա Պ. Մ. Մոմճեան կատարել
զայն անխափան, ըստ վերոյիշեալ պայմանին, և վստահանա-
լով վստահանայ ի նա Սարգիս վարդապետ իբրեւ յայր հաւա-
տարիմ և իբրեւ ի մտերիմ և ի կարեւոր բարեկամ իւր ի Պոլիս
յազգի իւրում։ . . .

Տայ նա նմա մուրհակ պարտուց, որ ունի օրինակ զայս.

„ Մինակ 100,000 դահեկան հարիւր հազար դահե-
„ կանէ։

„ Վերոգրեալ մինակ հարիւր հազար դահեկան Օսմանեան
„ Թղթադրամ. Թէոդորեան Գերապատիւ Սարգիս վարդա-
„ պետէն ընդունելով պարտական լինելոյս. և իւրաքանչիւր
„ հարիւր դահեկանին ամիսը մէկ դահեկան շահումն հանդերձ
„ որ ժամանակ պահանջելու ելլայ, թէ ինքեան և թէ իւր
„ հրամանին, Աստուծով անպատճառ անբողջ հատուցա-
„ նելոյս համար զայս կնքեալ մուրհակս եւոս նմայ։

„ 1859 մայիսի 18.

„ ՄԿՐՏԻՉ ՆԻԿ. ՄՈՄՃԵԱՆ.

Վիմագրել տայ Սարգիս վարդապետ զկենդանագիր Սրբա-
դան Կաթողիկոսին ի Պոլիս, և զօրինակ մի անտի առաքէ առ
ընկերս իւր ի Փարիզ, առ ի վիմագրել անդ օրինակս բազում
և ի տարածել զայն ընդ ազգս ողջոյն։

Յետ սպասելոյ հրաւիրակացն ի Պոլիս զամիս երրեւ վեց, հազիւ որոշէ Կաթողիկոս զօրն եկանելոյ իւրոյ ի Ճանապարհ դնալ յԷջմիածին. քանզի համարի նա որպէս թէ ի մահ դնայր, վասն որոյ լսէ յանդիմանութիւն ի Պօղոս Պէյէ Տատեան, ասելով ցնա, թէ, «Աւր և լինիցիս մեռանելոց ես ի վախճանի. «գնա՛ անդ մեռիր. զինչ է երկիւղդ այդ։»

Ահա յ2 յունիսի 1859 ամի եկեալ Կաթողիկոսի ի շոգենաւ Ռուսաց՝ մեկնի ի Պոլսոյ, հանդերձ հրաւիրակօք և իւրայովք, երրեւ յիսուն անձամբ, որոց ասան պատանեակք զոր ածէ ընդ իւր ի Տփխիս դնել ի Ներսիսեան դպրոցն, և երեսուն բախտախնդիրք, որք հաճութեամբ նորին գնան յԷջմիածին երրեւ յուխտ, և որոց ամենեցուն ծախք ճանապարհի լինին ի գանձանակէ Էջմիածնի... թողումք ասել զ15,000 ֆրանքացն որ ի գին ապեալ ի Պոլիս անպիտան մատենից, զոր բարձեալ տանի ընդ իւր յԷջմիածին։... Ահա առաջին ցոյց ուսումնասիրութեան և տնտեսութեան նորընտիր Կաթողիկոսին։...

Զաւուրս երիս յաջողապէս նաւարկեալ ի Սեւ ծովու՝ հասանեն ի բերան Փօթիոյ, բայց առ սաստկութեան հակառակ հողմոյ չկարեն մտանել ի գետն Ռիոն և եկանել ի Փօթիվան այնորիկ զայն գիշերն անցուցանեն ի նաւահանգիստն Պաթիոյ, ուր հանդիպին Գաբրիէլ վարդապետի Այվազեան, որ այլ շոգենաւաւ և նոյն պատճառաւ անցուցանէ անդ, և որ գնայ առ Սրբազան Կաթողիկոս և առ Սարգիս վարդապետ յողջունել զնոսա յարգութեամբ և ուրախութեամբ, որպէս և նոքա ի տեսանել զնա։

Ի վաղիւ անդր, ի 6 յունիսի, մեկնեալ նոցա անտի մտանեն ի գետն Ռիոն փոքրիկ շոգենաւաւ և եկանեն ի Փօթի, ուր ապասէ Սարգիս եպիսկոպոս Զալալեան առաջնորդ Տփխիսի, ընդ առաջ եկեալ Կաթողիկոսին, և ուր անցուցանեն զայն օր։

Ի վաղիւ անդր մեկնին նոքա անտի փոքրիկ շոգենաւաւ և ժամն 12 նաւեալ ի գետն՝ եկանեն ի փոքրիկ ինչ գիւղ, ուր օթեւանին զայն գիշեր. ի վաղիւ անդր եկանեն անտի ի կառս,

յոր երկու, յոր չորս և յոր վեց և առաւել անձինք։ Կառք մի առանձին պատրաստեալ լինի անդ վասն Ս. Կաթողիկոսին, զոր հարցանեն թէ զո՞ յեպիսկոպոսաց անտի կամիր առնուլ ի կառս իւր. ասէ նա զՀ. Սարգիս վարդապետ Թէոդորեան, և ոչ զայլ ոք, և զոր առնու յայն զամենայն ճանապարհ մինչ ցՀՀմիածին, խօսելով ընդ նմա միշտ։

Ի վաղիւ անդր, 28 յուլիսի, հասանեն ի Փութայիս, ուր օթևանին աւուրս երկուս. և ուր գտանէ Կաթողիկոս ընդունելութիւն մեծ յազգայնոցս անտի։

Ելեալ նոցա անտի գնան ի Սուրամ, ուր օթևանին օր մի. ի վաղիւ անդր հասանեն ի Մցխէթան, ուր ընդ յառաջ գայ Ս. Կաթողիկոսին Մատթէոս եպիսկոպոս առաջնորդ Ատրպատականի, հանդերձ բազում յարգութեամբ և ակնածութեամբ։ . . .

Ի 14 յունիսի հասանեն ի Տփխիս, ուստի ընդ առաջ ելանեն Կաթողիկոսին հեծեալք և հետեւակք յազգայնոցս անտի բազում յոյժ, և իբրեւ մտանեն ի քաղաքն ընդ առաջ ելանէ նմա քաղաքապետն հանդերձ զօրօք, և առեալ զնա ի կառս իւր մուծանէ ի քաղաքն և ածէ զնա ի մայր Եկեղեցին, ուր խօսի Կաթողիկոս համառօտ ինչ քարոզ, և օրհնութիւն տայ ժողովրդեան։

Ինչեւ ելանի արքայն Կաթողիկոս յառաջնորդարանի անդ հանդերձ իւրայովքն, Եպիսկոպոսաւք և վարդապետաւք։ Աշխարհական կարծեցեալ ուխտաւորքն օթևանին ի պանդոկս քաղաքին. իսկ պատանեակք զնտեղին ի Ներսեսեան դպրոցն։

Գաբրիէլ և Սարգիս վարդապետք ինչեւանին առ Զօրավարի Լորիս Մելիքովի։

Ի վաղիւ անդր գնայ Ս. Կաթողիկոս յայց քաղաքապետին, և պատուոյի անդ առաջին ասուճանի պատուանշանաւք որք յԱղէքսանդր կայսերէ Ռուսաց. և ի դարձի նորա անտի յառաջնորդարանն՝ գնա անդ ամենայն աւագանի տէրութեան և իշխանք Հայոց առնել նմա ողջերութիւն յարգութեան, նոյնպէս և դասք եկեղեցականաց, և գլխաւորք վաճառականաց և արուեստաւորաց։

Ինդիր ինչ քաղաքավարութեան ծագի անդանօր, և ընդ երկու կողմանն կարծեաք անկանի այն. այս է, թէ արդեաք Կաթողիկոսին Հայոց պարտ էր նախ գնալ յայց Ռուսաց Արքեպիսկոպոսին որ անդ, թէ նմա պարտ էր գալ ամա յայց նախ. վասն որոյ և քննութիւն բազում ասոյ և անտի, և ձեայ ինդիրն անորոշ։

Յետ երկուց աւուրց անտի հրաւիրէ քաղաքապետն զԿաթողիկոս և զիւրսն ի ճաշ, որ մեծածախ լինի, և յոր բազում կոչնականք, ուադանին Ռուսաց տէրութեան և իշխանք Հայոց գտանին, բաց յԱրքեպիսկոպոսէն Ռուսաց, վասն վերոյիշեալ պատճառի։

Արդարեւ ընդունելութիւն մեծ լինի Կաթողիկոսին ի տէրութենէ Ռուսաց, և յազգայնոցս անտի, յորոց և ակնկալութիւն բազում բարեաց Հասարակաց դիւրին էր ունել կարօտելոց ազգիս, եթէ զիտէր նա օրպէս պարտ էր վարել ի պատեհութեանն յայն... այլ աւա՜ղ, զի կորուսանէ նա զայն։

Թէպէտ և Սարգիս վարդապետ յիշեցուցանէ նմա անդադար զխոտումն իւր որ վասն սժանդակութեան վարժարանին ի Փարիզ, և զնեղութիւն ընկերաց իւրոց անդ ընդ կարօտութիւն արծաթոյ, սակայն ի զուր. յանձնէ նա զայն անձին միոյ որ ոչ սիրելի լինի ազգայնոցս անդ, սակս մեղմեխ և նենգաւոր բարուց իւրոց, և որ թէպէտ խոստանայ կատարել զայն, այլ ոչինչ վճարէ անտի պատճառանօք. զոր և յիշատակեացուք ապա ըստ կարգի պատմութեանս։

Յելս յունիսի մեկնի Ս. Կաթողիկոսն ի Տփխիսէ, հանդերձ իւրայովքն և զուարս շորս ճանապարհորդեալ՝ հասանէ յԵրեւան քաղաք, ուր հրաւիրէ զնա քաղաքապետն իջեւանել ի տան իւրում, այլ նա ոչ կամի զայն, իջեւանի յառաջնորդարանի անդ։

Ազգ առնէ քաղաքապետն գալ յայցելութիւն Կաթողիկոսին, ծանուցանէ նմա զայն Մակար եպիսկոպոս, և նա ոչ կամի ընդ այն, բարկացեալ գոլով ի վերայ ամբոխին, յորոց ձայնէ չկարէ ենջել և հանդչել սակաւիկ մի ի խռնջութենէ հանապարհին։ Եռաբեալ Մակար եպիսկոպոսի չգիտէ զինչ

առնել պատասխանի ազգարարութեան քաղաքապետին. և խնդրէ ի Սարգիս վարդապետէ հաւանեցուցանել զԿաթողիկոսն ընդունել զնա. Ապա թէ ոչ՝ ամօթ մեծ լիցի ասէ, որպէս եղեւ ի Տփխիս։ . . .

Մտեալ Սարգսի վարդապետի առ Կաթողիկոս՝ հարցանէ ցնա նախ զպատճառս բարկութեան նորա. ապա ասէ ցնա, թէ քաղաքապետն առաքեալ է զոք խմանալ, թէ Ի՞րբ հաճեսցի Վեհափառ Տէրդ գալ իւր յայց յարգութեան ձերոյ։

Զինչեալ նորա յայնժամ ի բարկութենէ և ի չկամութենէ իւրմէ անտի, ասէ, Եկեսցէ՛։ . . . Գայ անդէն և անդ քաղաքապետն յայցելութիւն Կաթողիկոսին, միանգամայն և հրաւիրէ զնա ի ճաշ ի տան իւրում. և այնպէս վճարի այն առանց ամօթոյ։

Գնայ Կաթողիկոս ի ճաշ քաղաքապետին, հանդերձ իւրայովքն, եպիսկոպոսաք և վարդապետաք և քանի մի աշխարհականաք իբրեւ գրագիր և թարգման նորին։

Ի ճաշել անդ առնու քաղաքապետն գինի ի կենդանութիւն Սրբազան Կաթողիկոսին, և առնէ բարեմաղթութիւն նմին հանդերձ յորդորանաք. և այս լինին խմաստք բանից նորին, թէ բարոյական և ուսումնական կրթութիւն ազգին Հայոց կախի ի Ջանս Կաթողիկոսին, վասն որոյ պարտ է նմա խնամ տանել այնմ. իսկ պաշտպանութիւն նորին ի թշնամեաց իւրոց կախի ի Տէրութիւն Ռուսաց, յոր ոչ պակասիցի ինքն ըստ կարի իւրում։ . . . Զայս և առաւել քան զայն բանս խօսի նա յականջս բազմականաց անդ Ռուսերէն, և թարգմանել ոչ մի առ մի ի հայ բերանով գործակալին Էջմիածնի, ի խելամտութիւն Կաթողիկոսին։

Յերանել ի սեղանոյ անտի առեալ քաղաքապետին զԿաթողիկոսն տանի ցուցանէ նմա զսենեակն զոր պատրաստեալ էր վասն ննջելոյ նորա. այլ նա քաղաքավարութեամբ հրաժարի՝ ասելով թէ առաջնորդարանն բաւական էր նմա, և դեռեղեալ անդ արդէն։ «Արդէս հաճոյ իցէ ձեզ այնպէս «արարէք, ասէ ցնա քաղաքապետն, բայց ցանկամ, ասէ, «զի Սարգիս և Գաբրիէլ վարդապետք ի սենեկի յոյս ննջի-

«ցեն ցորչափ ի քաղաքին կայցեն։» Եւ այնպէս լինի, զաւուրս երիս անդ ննջեն և ընդ նմա ճաշեն հանդերձ կարեւոր խօսակցութեամբ։

Ղուկաս Արքեպիսկոպոս անդ յԵրեւան ընդ առաջ գայ Սրբազան Կաթողիկոսին, որպէս և Գէորգ եպիսկոպոս երկու աւուրքք յառաջ զճանապարհային ուրեք։

Զաւուրս երիս կացեալ Կաթողիկոսին յԵրեւան՝ մեկնի անտի յ7 յուլիսի, և ժամս երկու ճանապարհ արարեալ՝ ժամանէ յԷջմիածին զկնի միջօրէի, և ածի մեծաւ հանդիսիւ ի Շողակաթ Եկեղեցին, հանդերձ երգովք շարականաց, ուր խօսի նա համառօտ ինչ քարոզ և տայ օրհնութիւն հանդիսականաց։ Ելեալ յեկեղեցւոյ ածի ի Վեհարան, ի Կաթողիկոսաց բնակարան, ուր մատչին ի համբոյր աջոյ նորին համօրէն միաբանք Էջմիածնի։

Տան սենեակ բնակութեան հիւրոց գնացելոց անդ ընդ Կաթողիկոսին։

Սարգիս և Գաբրիէլ վարդապետաց տան սենեակ մի ի միասին բնակելոյ, ուր զցերեկ նստին ի տօթոյ և զգիշեր ի մժեխաց, և ոչ այլչափ միայն այլ և յառաջնեամ աւուր տանջի Սարգիս վարդապետ ի խայթոցէ կարճի, և խնդրէ ձէթ ի սպեղանի, և այն ի վանս ոչ գտանի, այլ պարտ էր խնդրել զայն ի Վաղարշապատ գեղջէն, որ մերձ է վանաց Էջմիածնի։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Նկարագրութիւն շինուածոյ Էջմիածնի, և կենաց և գործոց միաբանից նորին. — Ճանապարհն Մատթէոս Կաթողիկոսին և բնութիւն ընդ այն. — Սուգաղուածք և նկատուածք վանաց Էջմիածնի. — Պատրաստութիւն Օծման Կաթողիկոսին, և յապաղումն այնորիկ. — Խօրոհրդութիւն Կաթողիկոսին.

Ամենեքեան ի դէպ և կարեւոր իսկ համարիմք խօսել համառօտիւ զշինուածոյ Հողակաթ Եկեղեցւոյն, և զվանաց և զՄիաբանից Էջմիածնի, և զճանապարհն և զգործոց Կաթողիկոսին։

Շինուածն Հողակաթ Եկեղեցւոյ արտաքուստ հոյակապ է ըստ Արեւելեան և միջին դարու ոճոյ. իսկ ներքուստ խրթին և մթին, մանաւանդ խցանելով զքանի մի ի ստորին պատուհանաց նորին յերկիւղէ բարբարոսաց առ ի չմտանել անդ. թէպէտ և զամս իբրեւ երեսուն բառնալով երկիւղին այնորիկ, սակայն թողեալ լինի այն այնպէս. զայն տեսեալ կաթողիկոսին՝ հրաման տայ բանալ զայնոսիկ վաղվաղակի։

Վեհարան անուանեալ բնակութիւն անշուք և աղքատին և դրունք նորին անձուկ, յոր մտանել պարտ է զգլուխն խոնարհել, կահ նորին հին և ցնցոտի։

Բնակութիւն եպիսկոպոսաց առաւել անշուք և աղքատին և գծուծ յոյժ։

Իսկ բնակութիւն վարդապետաց և սարկաւագաց է իբրեւ զդոմն ոչխարաց, անձուկ դրամբ, և փոքրիկ պատուհանաւ, ոչ ի լուսամուտ, այլ յօդամուտ միայն, որ ոչ թոյլ տայ աչաց զդիր տեսանել. ապա չէ պարտ զանուանութիւն նոցա մեղադրել այլ զառաջնորդս նոցին առաղել։ . . .

Գրանոց Էջմիածնի է յողոմ վիճակի, ի խաւարչտին ինչ տեղւոջ, ունելով մի և եթ փոքրիկ պատուհան ի մուտս նորին և դրասեղան մի ծածկեալ մատնաչափ փոշուով, իսկ ի ներքս երկու և երեք անձուկ և մթին անցք և ի նոսին դրակալք և մատեանքն։ Թէպէտ և առ անծանօթութեան և անհոգութեան հարց հասարակաց կողոպտի այն երբէք երբէք ի մատնաւորաց և վաճառի օտարաց, սակայն տակաւին ճոխ է և բաւական ի հարակ մուտց. այլ աւաղ զի թողեալ կան մատեանքն ի մէջ փոշւոյ և թողեալ ի կեր ցեցոյ, հանդերձ անկարգութեամբ, խառն ի խուռն եղեալ գրչագիր և տպեալ մատեանքն ի միասին, մինչև չկարէ ոք գտանել զինդրեալն ի նոսին, որպէս և փորձիւ իմանան զայն Սարգիս և Գաբրիէլ վարդապետք. քանզի իբրեւ հասանեն նոքա յէջմիածին՝ ի վաղիւ անդր ի խնդիր լինին տեսանել զգրանոց նորին ի քննել ինչ ինչ գրչագիր մատեանս. յետ երից աւուրց հաղիւ կարեն գտանել զպաշտօնեայն գրանոցին պատրաստ ի ցուցանել նոցա զայն. և իբրեւ խնդրեն նոքա ի նմանէ զցանկ գրանոց, ասէ նա թէ ունէր զայն երբեմն բայց այժմ չէ ի միջի։ Խնդրեն նոքա ի նմանէ զգրչագիր պատմութիւն մի, չկարէ նա գտանել զայն։ Կամին նոքա ինքնին որոնել զայն, ասէ նա ցնոսա. «Զգուշացարուք, զի օձք թաքուցանին ի մատեանսն։» Որպէս պատահի երբեմն Եւրոպացւոյ միոյ. յորոնել նորա զմատեանսն՝ ելանէ օձ մի անտի, յորմէ զարհուրեալ նորա փախչի։ Լուեալ նոցա զայն և չկարացեալ եւս հանդուրժել ասթոյն՝ փութան ելանել անտի, և այլ ոչ եւս կամին գնալ անդ և խնդրել ինչ մատեան, յուսահատեալ յանկարութենէ իւրեանց.... Ահա վիճակ գրանոցի Էջմիածնի, և ծանօթութիւն և խնամ գրապետի նորին։...

Տեսեալ Սարգսի վարդապետի զողոմ վիճակ գրանոցին այնորիկ և մատենիցն որք ի նմին, ցաւի ընդ այն յոյժ յոյժ, և գնացեալ խօսի ընդ Սրբազան Կաթողիկոսին դարման տանել այնմ։

«Վեհափառ Տէր, մի ի կարեւոր և յառաջին գործս Ձեր «ասա՝ է չինել տալ վայելուչ գրանոց մի, և զմատեանսն

«. անդ կարգաւ ըստ իւրաքանչիւր տեսակի զետեղել, և ցանկ
«. մի նոցին յօրինել ի դիւրութիւն խնդրողաց նոցին։ »

Ասէ ցնա Ս. Կաթողիկոս. «Ոչ գոյ կարօտութիւն շինութեան
«. նորոգ ինչ գրանոցի սոսա, բաւական և շատ է եղեալն,
«. այլ միայն զգրչագիրսն ի տպելոցն զատել, յայնժամ դիւր
«. լիցի խնդրողաց գտանել ինչ անտի, և առանց իսկ ցան-
«. կի։ »

Ահա դարման ցաւոց որոյ Սարգսի վարդապետի այսպիսի հանաչումն Ս. Կաթողիկոսին... և ոչ ընդ այն հանաչումն նորա միայն, այլ և ընդ այլ ինչ հանաչումն նորին, որպէս տեսանի։

Յառաջնում աւուր ժամանելոյ Սարգսի վարդապետի յԷջմիածին տեսանէ ի սենեկի մահճաց Կաթողիկոսին բազում ծրարս թղթոց զիզեալք ի վերայ միմեանց, զետեղեալք անդ. հարցանէ ցԿաթողիկոս թէ զինչ գրուածք էին այնք. պատասխանէ նա, թէ գրուածք այնք էին հանգուցեալ Ներսէս Կաթողիկոսին։ Ասէ ցնա Սարգիս վարդապետ թէ պարտ էր բարւոք և զգուշութեամբ պահել զայնս. քանզի հարկաւ բազում ինչ կարեւոր գիտելոյ գտանիցին ի նոսին։ Լռէ Կաթողիկոս և շատէ ինչ բնաւ։ Ի վաղիւ անդր դնացեալ Սարգիս վարդապետ առ նա, և մտեալ ի սենեակ մահճաց նորա՝ չտեսանէ անդ և ոչ զծրար մի թղթոցն անտի. հարցանէ ցնա թէ ուր եղեալք էին այնչափ ծրարք թղթոցն այնոցիկ։...

Ասէ նա, թէ ի շտեմարանն. քանզի նեղի ինքն, ասէ, ի խռկեալ սենեկի նեղել։...

Ասէ ցնա Սարգիս վարդապետ. Գոնէ յառաջին ինչ սենեկի տայիք պահել զայնս, և ոչ ի շտեմարանն, ուր ապականեցին այնք անշուշտ։...

Ասէ ցնա Կաթողիկոս, աւելորդ և անպիտան ինչ են այնք, չարժէ հոգալ զայնցանէ։... Ահա հանաչումն նորին որ յայս եւս տեսանի, և որ ցաւոց է արժանի... և յիրաւի՝ քանզի ի գրուածն յայնոսիկ բազում ինչ գտանի կարեւոր և արժանի պատմութեան ազգիս, որ ի պատերազմին Ռուսաց ընդ Պարսից, և յոր Ներսէս Կաթողիկոս առաջնորդ էր զօրաց

Հայոց և խորհրդական զօրավարին Ռուսաց, Փասկովիչի. թող զայլ ընթացս կենաց և զվարշութիւն Կաթողիկոսութեան նորա։ . . .

Սեղանատունն վանաց Էջմիածնի է տեղի ինչ տխուր և զզուելի յոյժ. սեղանք նորին են ի հատս և յանհեթեթ քարանց, և յորոց վերայ դնին ճիւղք ուռենւոյ առ ի վանել զճանճս որով լի է սեղանատուն, հանդերձ աղբիւք։ . . . Կերակուրն անդ աղքատին և անհամ։ Թէպէտ և վասն Կաթողիկոսին կայ անդ սեղան, բայց ոչ ճաշէ նա անդ ընդ միաբանս, այլ առանձին ի Վեհարանի, և ի սենեկի իւրում։

Նոյնպէս և եպիսկոպոսք, որք ընդ առաւօտս առաքեն զփոքրաւորս իւրեանց առ ոտեան, առնուլ անտի զլաւագոյն մասն մսոյ ոչխարին, և եփել զայն ի բնակութեան իւրեանց, հանդերձ այլ մսեղինօք հաւուց և ձկանց. . . մեան Ջիլք և ոսկրատիք ոչխարին ի կերակուր Արեղայից և աշակերտաց, ճաշակողաց ի սեղանատանն։ . . .

Ահա վիճակ սեղանատանն Էջմիածնի և մատակարարութեանն որ անդ։ . . .

Զայսոսիկ անպատշաճութիւն, միանգամայն և զանանուղղութիւն տեսեալ անդ Սարգսի վարդապետի ասէ լու ի լու ամենեցուն, թէ Էջմիածին ոչ է վանք միաբանից, այլ իջևան կարաւանի, ուր ամենայն որ զկերակրոյ իւրոյ հոգայ առանձին։

Լուեալ զայս Ղուկաս եպիսկոպոսի, հարցանէ զՍարգիս վարդապետ թէ՝ ապա զիարդ պարտ էր լինել։ Ասէ ցնա Սարգիս վարդապետ թէ ըստ օրինակի վանաց որոյն Ղազարու որ ի Վենետիկ, ուր ամենայն ինչ հասարակաց է, ըստ վանական կանոնի, և ուր զոր ինչ Արքահայրն և եպիսկոպոսն ուտէ, զնոյն ուտէ և աշխարհիկ եղբայրն, և ընդ նմին ի նոյն սեղանանն։

Ասէ ցնա Ղուկաս եպիսկոպոս. Արեմն կաց դու առ և կարգաւորեայ զամենայն ինչ ըստ որում զիտես։

Ասէ ցնա Սարգիս վարդապետ. Յանձն առից զառաջարկդ

այսու պայմանաւ, եթէ զեկամուտս վանացդ ի ձեռս իմ յանձնեսջիք։

Ասէ Ղուկաս եպիսկոպոս. Զայդ ոչ կարեմք առնել, քանզի անմարթ է։

Ասէ Սարգիս վարդապետ. Ապա և ես ոչ կարեմ կալ սատ և առնել զոր ինչ գիտեմ։

Ասէ Ղուկաս եպիսկոպոս. Կաց ապա սատ զի արասցուք զքեզ եպիսկոպոս, և տացուք քեզ թեմ մի առաջնորդութեան։

Ասէ Սարգիս վարդապետ թէ չունի ինքն բնաւ ցանկութիւն եպիսկոպոսութեան և առաջնորդութեան թեմի ինչ։

Լուէ յայնժամ Ղուկաս եպիսկոպոս զարմացմամբ, կարծելով թէ փոքն եպիսկոպոսութեան գնացեալ էր նա անդ. զնոյն կարծեն և բազում ոմանք ի Պոլիս և ի Տփխիս, ասելով զայն ի Կաթողիկոսէն։

Դպրոցն որ յԷջմիածին, և յոր ժողովեալ կան սատ և անտի մանկունք իբր յիսուն, յողորմ վիճակի է ապաքէն. քանզի ոչ բարւոք կրթութիւն և ոչ կարեւոր գիտութիւն զոն անդ. ոմն ի վարդապետաց անտի կարգեալ է նոցա վարժապետ, որ ածէ զնոսա իբրեւ զոչխարս յեկեղեցին յաւուրն չորիցս անգամ, և դնէ առաջի նոցա նախ Սաղմոս, ժամագիրք և Շարական, ապա Նարեկ և Ֆերական յընթեռնուլ զայն. ձանձրացեալ նոցա անտի և նեղեալ ի տօթոյ՝ ննջեն սատ և անդ։

Կայցէ երբէք ի նոցանէ ակնկալութիւն մատենագրութեան. մեան նոքա անդ կարդի վարդապետութեան, և ապա ցանկան վիճակի եպիսկոպոսութեան և թեմի։ . . .

Լիցին նոքա ի շինութիւն ժողովրդեան։ . . .

Ահա վիճակ դպրոցին Էջմիածնի և արդասիք որ անտի։

Իսկ եկեղեցական երգն որ յԷջմիածին գեղջուկ է յոյժ և անախորժ ականջաց, մանաւանդ ի բերանս շինական դրոցացն։

Տեսեալ և լուեալ Սարգսի վարդապետի զայն ամենայն

թերութիւն ցաւի և ողբոյ զազգն իւր, յիշելով զմեծն Ներսէս, զսուրբն Սահակ և զՄեսրոպ, զՅովհաննէս Մանդակունին, զՏէր Կոմիտաս, զՅովհաննէս Խնտասաէր, որք եղեն երբեմն յԷջմիածին. և չկարելով հանդուրժել ցաւոց սրտի՝ խօսի խանդ համարձակ յանկանջս մեռելոց. «Գիտէի, ասէ, «զի կորուսեալ էր ասա հայկաբանութիւն, այլ ոչ կար«ծէի թէ միանգամայն և եկեղեցւոյ երգեցողութիւն. ա«սա պա պարտ է ինձ, ասէ, խօսել և յայտմ զճշմարտութիւն, «թէ երկոքին այսոքիկ անկորուստ պահին ի վանս սրբոյն «Ղազարու որ ի Վենետիկ. այլ աւա՜ղ, ասէ, զի այժմեան «առաջնորդ նորին անուղիղ վարչութեամբ իւրով ասելի «արար զայն ոգիս։»

Ընդ այս համարձակութիւն բանից Սարգսի վարդապետի երկուցեալ Գաբրիէլ վարդապետ շգուշացուցանէ զնա ի վրէժխնդրութենէ նոցին։ Ասէ ցնա Սարգիս վարդապետ. Զի՞նչ ակնկալութիւն ունի ինքն ի նոցանէ. ոչ եպիսկոպոսութեան ցանկայ, և ոչ առաջնորդութեան թեմի։ Ապա չկասի նա բնաւ ի խօսելոյ նոցա զճշմարտութիւն. որպէս և ի դէպս յայն, յորում ասէ Կաթողիկոսն առաջի բազմաց, թէ երբէք երբէք զարթուցեալ իւր ի գիշերի՝ յիշէ զիսօսեցեալսն Սարգսի վարդապետի և ծիծաղի ընդ այն։ Ասէ ցնա Սարգիս վարդապետ. «Երջանիկ է՛ք Վեհափառ Տէր, զի ծիծաղիք ընդ «այն և ոչ լայք։»...

Իմանայ նա թէ զի՞նչ կամի ասել։...

Թէպէտ և հանդուցեալ Ներսէս Կաթողիկոս ունկնդիր ոչ անառաւ մի միգաբերոյ մերձ վանաց Էջմիածնի, և յուղումն Նորին փորել ոչ ի մի բաւական ջրոց, այլ և չինել ոչ գործարանս երկուս մեսաքսի և շաքարի, և ծախէ յայն չորս միլիոն ֆրանք։

Ի կենդանութեան նորա բերեն այնք արդիւնս ինչ, բայց յետ մահու նորա, փլանին գործարանքն, և խոպանանայ անտառն ամբ անհոգութեան. լեռ ջրոցն միայն մնայ, և այն ի վնաս, զի ամի ամի հեղձանի ոք ի նոսին։...

Թող զդասակս անդէպս և զհօտս ոչխարաց բազում յոյժ զոր դնէ նա վասն վանաց, և թող զարմանան որք ի սեպհական արտօրէից և ի վիճակաց էջմիածնի . . .

Հարցանէ Սարգիս վարդապետ ցհամարակալն թէ քանի՛ լցեն տարեկան եկամուտքն վանաց։ Ասէ նա, թէ իրրեւ 400,000 ֆրանք, թող զյիշելիսն զոր տան ուխտաւորքն, և զյիշատակսն զոր թողուն բարեպաշտքն։ . . . Սակայն ի վերայ այսր ամենայնի աղքատին և թշուառ են կեանք միաբանից նորին, և անշուք Եղբակաթ Եկեղեցին։ . . .

Ա՛ւ ծախի այնչափ արծաթ։ Ի փորս և ի խորս պաշտօնէից նորին։ . . . Ողբալի վիճակ Հայոց ազգին։ . . .

Պատրաստէ նա և քարինս ի շինուած դպրոցի մեոյ անդ էջմիածին իբր հազար մանեկանց, զոր լուեալ Նիկողայոսի կայսեր ասէ զարմացմամբ, «Կայսերութիւն Ռուսաց չունի «համալսարան մի հազար մանեկանց, Կաթողիկոսն Հայոց կամի «ունել զայն։»» . . .

Արդարեւ չափազանց այն կամք նորին, չունելով Եւրոպական գաղափար ի մտին . . . և մանաւանդ զայն յէջմիածին, ուր սդն է վերատակար և չարն չար և աղտաղտին։ . . .

Թողումք ասել զուսումնարանէ նորին որ ի Տփխիս, և որ արդարեւ գործ արդասաւոր և յիշատակ անմահ հանդուցելոյն ի Քրիստոս։

Յառաջ քան զժամանել և յետ ժամանելոյ Կաթողիկոսին էջմիածին գնացեալ ժողովին անդ ազգայինքս ի կողմանց կողմանց ի տեսանել զօծումն նորընտիր Կաթողիկոսին իւրեանց և յընդունել զհայրական օրհնութիւն նորին։ Ամենք ի նոցանէ ծանօթանան Սարգսի վարդապետի, և յորոց ումն Ագուլեցի մահտեսի Պօղոս Զլոմիանեան Ազամալեանց անուն, լուեալ ի Սարգիս վարդապետէ զնպատակ և զվախճան աշխատութեան նորա ի Փարիզ, հաճի հաւանի նա յոյժ ընդ այն, և գնէ ի մտի օժանդակել նմա ըստ կարի իւրում և առաւել արդեօք. և այնպիսի մտօք մեկնի նա էջմիածնէ գնայ ի Տփխիս վասն գործառնութեան իւրոյ։

Թէպէտ և Սրբազան Կաթողիկոս քան զամենեսեան որք գըտնան ընդ նմա յէջմիածին՝ սակաւ նեղի ի տօթոյ անտի, սակս մաղասային խառնուածոյ իւրոյ, սակայն պատճառ զայն տըւեալ՝ յապաղէ զօծումն իւր և թողու զայն ի զով եղանակի, յամենան հոկտեմբերի. Թէպէտ և գնացողքն անդ ընդ նմա նեղին անհնարին ի սաստիկ տօթոյ, ոմանք ի նոցանէ ջերմամբ տապին և ոմանք պալարօք տանջին, և սպասեն օծման նորին զի մեկնեսցին անտի, այլ ի զուր, չլինի ինչ նմա փոյթ. և յապդել նմա զայն Սարգսի վարդապետի՝ ասէ նա. Թո՛ղ երթիցեն նոքա ի տեղիս իւրեանց. ընդէ՞ր սպասեն սոտ։ Եւ իրրեւ այլ ոմանց յեպիսկոպոսաց անտի ապդ առնեն նմա զայն, յայնժամ զինչանի նա յոչ կամաց, որոշէ զօրն օծման իւրոյ։

Խմացեալ զայն քաղաքապետին Երեւանայ՝ առաքէ աւուրք ինչ յառաջ երկերիւր զօրս յէջմիածին ի հանդէս օծման Կաթողիկոսին. այլ եկեալ նոցա անդ՝ գտանեն զԿաթողիկոսն ի մահիճս հիւանդութեան. քանզի երեք աւուրք յառաջ քան զորոշեալ օրն օծման, յառնուլ նորա թէյ՝ զմաղձն արտաքս փախէ, և անկանի ի մահիճս հիւանդութեան։

Զաւուրս երկուս կացեալ և կերակրեալ զօրացն անդ՝ դառնան յետս յԵրեւան քաղաք, միով պակաս յընկերաց իւրեանց, թաղելով զնա ի հող էջմիածնի. քանզի ի լուանալ նորա ի լիճ անդ՝ ջրահեղձ լինի ողորմելին, չգիտելով զխորութիւն լճին։...

Ահա արդիւնքն որ յորոշմանէ աւուր օծման Կաթողիկոսին։

Թէպէտ և յետ հինգ աւուրց անտի եկանէ նա ի մահճոյ հիւանդութեան իւրոյ, բայց ցուցանէ զինքն տկարացեալ յոյժ, վասն որոյ և որոշէ բացարձակ թողուլ զօծումն իւր յամենան հոկտեմբերի նորին ամի։

Հարցանէ նա զՍարգիս վարդապետ առաջի եպիսկոպոսաց, թէ յայնմ վիճակի կարիցէ՞ ինքն ընդունել զօծումն կաթողիկոսութեան։ Ասէ ցնա Սարգիս վարդապետ թէ «Ոչ, բայց «աւուրքն ինչ յառաջ քան զայս հիւանդութիւնդ կարէիք, «ասէ, ընդունել զօծումն՝ եթէ կամեցեալ էիք։»

Եւ ահա պատասխանի անուշտ։...

ԳԼՈՒԽ ԺԳ.

Թոռոր բարեմաղթական և անձկական Ամբրոսեայ և Խորենայ վարդապետաց առ Սարգիս վարդապետ յԵրզնկայեցի, և ոչ-ղերձ նոցա առ օծումն Կաթողիկոսին. — Գրած Գաբրիէլ վարդապետի ի Թէոդոսիա. — Գրած Սարգսի վարդապետի ի Տփխիս առժամանակեայ. — Ամենայնիւ Սարգսի վարդապետի վասնզի արդոց Հռիփսիմեանց և Գայիանեանց, և Սեւանայ կղզոյ. — Օրհնեալ Սարգսի վարդապետի յառաջնորդարանի ի Տփխիս, և այցելութիւն ազգայնոցս առ նա անդ. — Թոռոր Սարգսի վարդապետի առ Ս. Կաթողիկոս. — Գրած Սարգսի եպիսկոպոսի ի Տփխիս, և հիւրընկալութիւն Նորա առ Սարգիս վարդապետ և ընթերցումն Կոնդակի Կաթողիկոսին տոռնոյ Սարգսի վարդապետի. — Յայտարարութիւն հանգամանակութեան յօժանդակութիւն վարդապետացն ի Փարիզ.

Յայսմ ժամանակի ընդունէին Սարգիս և Գաբրիէլ վարդապետք նամականեր յընկերաց իւրեանց որք ի Փարիզ, հանդերձ մի օրինակ ուղերձիւ առ օծումն Արքազան Կաթողիկոսին.

Թուղթ Ամբրոսիոս և Խորէն վարդապետաց առ Սարգիս վարդապետ, յորում առնեն նմա բարեմաղթութիւն, և անձկան տեսութեան Նորա, այլոքն հանդերձ, որ ունի օրինակ զայս.

«Գերապատիւ և Սիրելեալ Հայր.

«Երկոցուն վերջին թղթոցդ չեմ եւս եռու պատասխանի, «այլ աղօթք մեր և խնդրուածք անմեկին էին ի սիրայնոյ «Գլխոյդ, և քաջալոյս եմք թէ անվտանգ և յանդորրու- «ժամանեցայք ցարդ ի Տփխիս և անտի յԷջմիածին։

«Ակն ունիմք զի որ զուխտ մանկութեան Ձերոյ ի գլուխ «տարեալ ած յարդիւնս, նոյն կատարեցէ անթերի և զհա- «մօրէն ամենայն ազգաշահ և ազգանուէր ուխտս ազգաէր «և հայրենաէր սրտի Ձերոյ ի ցնծութիւն որդեկացդ որ- «բացելոց ի գգուալիր ի խնամատ գթոյ գորովոյ կրկին Հարցդ «պատուականաց։

«Եթէ տացի մեզ լսել և խոյտալ հրճուանօք ընդ ատուա- «ծապարգեւ օծութիւն արժանընտիր Անձինդ։ — Եւ ո՞ լիցի «առ այն մեզ աւետարեր։ Դուք ինքնին դարձեալ Հայր, զի «բաց ի Ձէնջ ո՛ այլ ոք է մեր աւետարեր։...

«Խնթացաք ապաքէն զի գամ մի մեկնեալ հեռացեալ Հօրդ «ի Պօլսոյ ի գերեւ եկեալ յօդ ցնդեցին և Պօլսեցեացն խոս- «տարանութիւնք, և կարի խակ քաջ. ահա արծաթն Երա- «մեան չեմ եւս երեւեցաւ. Մոմճեան Տէրն, ազգաէրն և «հայրենաէրն անզուգական, գթացեալ ի տառապանս իմ «և յոգիս՝ հասոյց ինձ յիւրմէ քսակէ վասն մայիս ամսոյ «Ֆրանքս 3,500։

«Զօրագրէն մերմէ զՀրեշտակէն Հայոց գրեցի առ Գարրիէլ «վարդապետ մեր. ապաշնմք զՁեզ համբուրել զնա ընդ մեր «անձկարեաց համբուրիւք շրթանց։ Արդէ՛ս զի փառաւորեալ «և հոխացեալ ուսոյց զնա... և եւս ուսոյջիք Դուք զնա, «լուցուք և մեք և խնդացուք ուրախութիւն մեծ։

«Աներկրայ եմք ընդ հաճութիւն Ձեր ընդ քերթուածս և «ընդ փառաբարդ տպագրութիւն նորա։ Այլ թէ հաճէր «ընդ այն և վեհապետն մեր, և հայրապետի սիրով ընդու- «նէր զարդագիր նուէր փանեաքի որդւոցս հեռաւորաց։ — «Հանդերձ յետին շքաւորութեամբ զամենայն փոյթ և

„ զԼան իմէջ առեալ յայն հասաք կատարելութիւն, և առ
„ շուտափոյթ ժամանումն արկեղ՝ հարկադրեցաք և զծախս
„ ճանապարհին հատուցանել ասի ցՏրապիզոն։

„ Բազում բարեաց և նպաստից և օժանդակութեանց ակ-
„ նեմբք ի Զէնջ և ի գործունեայ փութոյ Զերմէ։ Ոչ ժա-
„ մանեցին տակաւին ի ձեռս մեր կենդանագիր Սրբազանին,
„ և ցաւ է մեզ յոյժ յոյժ ընդ յապաղումն նորին, զի ցարդ
„ յօրինեալ և աւարտեալ իսկ էաք զվիմագրութիւնն և ուղ-
„ ղոյ եւս արարեալ ի յագուրդ արժանաւոր ըղձից և հայց-
„ մանց հանուրց Հայկազանց։

„ Գուցէ ի Տփխիսեցի եղբարս մեր առաւելագունի արձա-
„ գանգաց հանդիպեացի մշտավառ և բազմարդիւն ազգասի-
„ րութիւն Զեր բոլորանուէր նահատակիդ Հայրենեաց։ . . .

„ Ողջ լերուք և մի՛ յապաղէք զմիթիթարարեր նամականին
„ Զեր

„ Ի վշտալից որդւոյդ

„ ԱՄԲՐՈՍԵԱՑ ԳԱԼՖԱՅԵԱՆ.

„ Փարիզ. 6 յուլիս. 1859. „

Ընթերցեալ Սարգսի վարդապետի զվերոյիշեալ թուղթն՝ յաւելուն ցաւք սրտի, հայեցեալ ի վիճակն ընկերաց իւրոց ի Փարիզ, և ի հանդամանս Կաթողիկոսին յԷջմիածին. . . թողեալ զցաւս մարմնոյն, լցեալ պալարօք ի տատակութենէ տօթոյն. . . և ընթերցեալ զուղերձն՝ թէպէտ և հաճի ընդ բանաստեղծութիւն հեղինակին, այլ ոչ ընդ արժանաւորութիւն անձինն, վրիպեալ յակնկալութենէն որ անտի. . . զօրինակն ուղերձին պահէ առ իւր Գաբրիէլ վարդապետ յանձնել զայն գործակալին, ընթեռնուլ յականջս հանդիսականաց յաւուր օծութեան Կաթողիկոսին։

Իրրեւ որոշէ Կաթողիկոսն թողուլ զօծումն իւր յամեան

հոկտեմբերի 1859 ամի, որոշեն յայնժամ ուխտաւորքն թողուլ զԷջմիածին և դառնալ ի տեղիս իւրեանց. զնոյն որոշէ և Գաբրիէլ վարդապետ Այվազեան՝, ունելով կարեւոր գործառնութիւն ի Թէոդոսիա, կարգաւորութիւն ի Խալիպեան Ուսումնարանի, յամենայն օգուտսի որ մերձ էր. ապա վերըստին դառնալ յԷջմիածին ի ժամանակի օծման Կաթողիկոսին, և ձեռնադրիլ ի նմանէ եպիսկոպոս. և ընդ այս որոշումն իւր կամի իմանալ զմիտս Կաթողիկոսին, զոր և իմանայ ձեռամբ Սարգսի վարդապետի։ Հաւանի իսկոյն Կաթողիկոս որոշման Գաբրիէլ վարդապետի, և տայ նմա կոնդակ մի ըստ ցանկութեան և ըստ թելադրութեան նորին, ծանուցանելով ի նմին զպատճառ դառնալոյ նորա առանց ձեռնադրութեան եպիսկոպոս, այլովքն հանդերձ։

Պատեհ առեալ զայն Սարգսի վարդապետի խնդրէ և վասն իւր հրաման ի Կաթողիկոսէն դառնալոյ ի Տիխիս, վասն առողջութեան իւրոյ, և վասն դառնալոյ յաղգայնոցս անտի օժանդակութիւն ինչ Փարիզեան վարժարանին, յիշեցուցանելով նմա զյանձնարարութիւն իւր որ ընդ այն առ Պարոն Հախվէրտեան ի Տիխիս, և զխոստումն նորա կատարել զայն, ջանալ հանդանակութեամբ յաղգայնոցս անտի օժանդակել Փարիզեան վարժարանին իբրեւ վեց հազար մանէթ անշուշտ. վասն այսր երկուց պատճառաց հաւանի Կաթողիկոս խնդրոյ Սարգսի վարդապետի դառնալ նորա ի Տիխիս, և տայ ի ձեռս նորա կոնդակ մի օժանդակութեան յաղգայնոցս անտի, որ ունի օրինակ զայս.

„ Մատթէոս ծառայ Քրիստոսի և անհասանելի կամաքն
„ Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս ամենայն
„ Հայոց, Ծայրագոյն Պատրիարք համայնական նախամեծար
„ Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ
„ Կաթուղիկէ Էջմիածնի. Աստուածպաշտութեամբ և ազգա-
„ սէրութեամբ բարեհաճակեալ Պատուելի Մխիթարութեան
„ Հայոց բնակելոյ ի Թիֆլիզ նուիրեմք զողջոյն Յիսուսաւանդ,
„ և մաղթեմք յԱստուծոյ հանդուցանել ի վերոյ հոգւոց և

“ մարմնոց ձերոց պրութիւն շնորհապարգեւ օրհնութեանց
“ իւրոց։

“ Զպատմութիւն վերադարձի երից վարդապետաց մերոց
“ ի ծոց հայրենի Առաքելական եկեղեցւոյ Հայաստանեայց՝
“ հաւատոյ եմք, թէ ախորժ հաճութեամբ ընթերցեալ իցէք
“ բազմիցս, և զնպատակն բանալոյ նոցա զազգային դպրոցն
“ ի Քաղաքամայրն Գաղղիոյ ի Փարիզ քաջ գիտէք. ուստի
“ մեզ համառօտիւ ծանուցանել Ազգասիրութեան ձե-
“ բուամ, թէ դպրոցն այն՝ զոր բացին նոքա անդ հաճութեամբ
“ Գերյարգոյ Ազգայնոց մերոց որք ի Պոլիս, չունելով այժմ
“ զմշանջենաւոր աղբիւր արդեանց՝ ոչ միայն կարօտի օրա-
“ կան ծախուց, այլ և անկեալ դնի ի ներքոյ պարտուց եղե-
“ լոց յառաջագոյն։ Վասն որոյ աւասիկ այսու մերով Հայ-
“ բապետական կոնդակաւս առաքեմք առ Ազգասիրութիւն
“ ձեր զգլխաւորն ի վերոյիշեալ վարդապետացն Հայոց զԳե-
“ բապատիւ Տ. Սարգիս վարդապետն Թէոդորեան, որպէս
“ զի անձամբ լուիջիք զհանգամանս ազգային դպրոցին բա-
“ ցելոյ ի Փարիզ, և զգիտաւորութիւն ազգայնոց մերոց որ
“ վասն դպրոցին, և ըստ այնմ, խորհրդակցութեամբ ընդ
“ միմեանս տնօրինեսջիք զարժանն, թէ արդեօք երաշխաւոր
“ լինի՞ ամենասիրելի ազգն Հայոց ապահովել զմիճակ Ազգա-
“ յին դպրոցին այնորիկ առանց պակասեցուցանելոյ նմա
“ զկարեւոր պէտսն։ Եթէ այսպէս, խնդրեմք յորդորել ըզ-
“ միմեանս, որպէս ոմանք ի ձէնջ գրով յորդորեցին զիս վասն
“ առատ ձեռնտուութեան յառաջադէմ զարգացման համազ-
“ գային մանկանց դաստիարակելոց ի նմին. և եթէ ոչ,
“ հայեցեալ ի զանազան հանգամանս որ ի ներքոյ և արտա-
“ քոյ, զոնէ տատարեսջիք վերոյիշեալ վարդապետացն հա-
“ տուցանելով զպարտս նոցա իբր 12,000 մանէթ զորս
“ արտաքսեալ են նոքա ի Փարիզ վասն տպագրութեան մատե-
“ նից և օրագրին, փորագրութեան տառից, և այլն, և այլն,
“ եւս և վասն ծախուց տպագրութեան զանազան դպրոցական
“ գրուածոց, զորս նոյն վարդապետք պատրաստեալ են և

„ հետզհետէ պատրաստեցին իւրոյս ընծայել յօգուտ ազգիս
„ առհասարակ, որում նուիրեալ են զանձինս իմանելութենէ
„ իւրեանց։

„ Ողջ լերուք ի Գլուխն ամենայնի ի Քրիստոս, և մեք
„ Ձեսմք միշտ աղօթարար վասն ձեր ամենեցուն մեծաց և
„ փոքունց։

„ ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

„ Տուեալ ի 1859 ի յուլիս 29
„ Ի Սուրբ Էջմիածին։

—

„ Համար 19. „

Ի վերջնում աւուր յուլիսի 1859 ամի, մեկնի Սարգիս վարդապետ Էջմիածնէ, տուեալ միաբանից նորին զհրաժարական ողջոյն ի միտս իւր յաւիտեան, թէպէտ և կարծեն նորա թէ դառնայր նա անդ վերստին ի ժամանակի օծման Կաթողիկոսին, և ձեռնադրիլ եպիսկոպոս, և զայն կարծիս ունին նորա ի բանից Կաթողիկոսին և յիւրոցն անտի։

Այլ առնէ Սարգիս վարդապետ զճանապարհայն վանաց Սրբոց Հռիփսիմեանց, և տեսանէ զտաճար նորին յողորմ վիճակի, խախտեալ ի գետնաշարժէ, և մնացեալ անհոգութեամբ ի ներքոյ անձրեւաց, և ընդ երկիւղիւ մօտալուտ կործանման, և զվանն գոմ անասնոց, հանդերձ աղտեղութեամբ. վարդապետ մի միայն իբրեւ առաջնորդ կացեալ անդ, և վարդապետութիւն նորա լինի բժշկութիւն խայթուածոց օձից և կարճաց, զոր առնէ նա դաղտնի իմն ազդեցութեամբ. առ որ ասէ Սարգիս վարդապետ. „ Ունիս դու ուրեմն զիշ-
„ խանութիւնն զտուեալն ի Փրկչէն, կոխել զօձս և զկա-
„ րիճս։ „

Եցէ թէ ունէր նա սակաւիկ մի հոգ ի պահել զվանն մաքուր յաղտից։...

Ինքն վիճակի գտանէ նա և զտաճարն և զվանն Սրբոց

Գայիանեանց, որ մերձ է Էջմիածնի, և ի ներքոյ աչաց միաբանից նորին։ . . .

Մեկնեալ նորա անտի գնայ Երեւան և Իջեւանի յառաջնորդարանի անդ օր մի, ուր ընդունի զնա քաղաքավարութեամբ առաջնորդ նորին Ստեփաննոս վարդապետ որ ապա և եպիսկոպոս, և որ ցուցանէ նմա զնորաշէն դպրոցն, պատրաստեալ վասն մանկանց թեմին իւրոյ. հանի Սարգիս վարդապետ ընդ այն և քաջալերէ զնա ի յառաջադիմութիւն նորին։

Մեկնեալ նորա Երեւանայ և ժամս ինչ ճանապարհորդեալ՝ հասանէ ի գիւղ ինչ, ուր ապասէ նմա սպասաւոր քաղաքապետին, հրաւիրելով զնա յամարանոց իւր, որ ի Ծաղկոց Զոր անուանեալ վայրի, առ ոտս Արագած լերին, անցուցանել անդ աւուրս ինչ։ Հրաժարի նա քաղաքավարութեամբ ի հրաւիրմանէ քաղաքապետին, նեղեալ յոյժ ի պալարաց՝ փութոյ ժամ մի յառաջ ի Տփխիս հասանել, և գարման վիրաց տանել. ճանապարհորդեալ նորա օր մի եւս՝ հասանէ ի Լիճն Սեւանայ, և ցանկայ այց առնել կղզւոյն որ ի նմին. գնայ անդ լատիւ ի քառորդ մի ժամու։ Ընդ առաջ ելանէ նմա առաջնորդն վանաց և շրջեցուցանէ զնա յամենայն տեղիս, որ ի վանս և յեկեղեցիս, և ցուցանէ նմա զհրաշագործ պատկեր Աստուածածնի, յորմէ զտանէ բժշկութիւն աչաց Մխիթար Աբրայն. ապա նախաճաշ տայ նմա կաթնեղէն և մսեղէն կերակուր։

Խնդրեալ քննէ Սարգիս վարդապետ զցանկ մատենից որք անդ. տակաւ ինչ գրչագիր տեսանէ ի նմին, և այն եւս ոչ նոր ինչ և անծանօթ. և չնորէ նմա ժամանակն ի քննել զայն. և ապա մեկնի անտի, ուղեւորելով ընդ նմա առաջնորդին մինչեւ ի ցամաքն լատիւ։

Անտի եւս զաւուրս երկուս ճանապարհ արարեալ նորա՝ ժամանէ ի Տփխիս, ի 5 օգոստոսի, և գնացեալ բնակի յառաջնորդարանի, ըստ հրաւիրանաց Սարգիս եպիսկոպոսի Զալալեան, առաջնորդի տեղւոյն, որ տակաւին յԷջմիածին մնայ։

Ընդ լսել Պարոն Ռոմանոս Նասիրեանի զժամանել Սարգսի վարդապետի ի Տփխիս՝ գնայ այց առնել նմա և հրաւիրէ

գնա գնալ բնակել ի տան իւրում. այլ նա հրաժարի անտի, ասելով թէ առաջնորդարանն է պատշաճ տեղի բնակութեան իւրոյ. ապա տեսեալ զկարօտութիւն կարեւոր պիտոյից նորին անդ՝ ընու զայն անթերի այրն ազգասէր և բարեպաշտ, հանդերձ յաճախ այցելութեամբ, և առաքմամբ ազնիւ պտղոց, չայի, շաքարի, և այլն, և այլն։

Այց առնեն նմա անդ և այլ ոմանք յազգայնոցս անտի, բաց ի Պարոն Հախվէրտեանէ, որում յանձնեալ էր Կաթողիկոսն, մինչդեռ ի Տփխիս էր, օժանդակել հանգանակութեամբ Փարիզեան վարժարանին, և նորա խոստացեալ կատարել զայն յօժարութեամբ և անխափան. և որում Սարգիս վարդապետ ինքն գնայ յայց ի տունն նորա. և որ խնդրէ ի նմանէ, նեռուն ընդ պակասութիւն պարտուց իւրոց, պատճառելով զանմիաբանութիւնն որ ընդ առաջնորդին իւրեանց, չկարէր գնալ յառաջնորդարանն. թէպէտև յայնմ ժամանակի առաջնորդն յէջմիածին էր. և ի յիշեցուցանել նմա զխոստումն իւր, զօժանդակութիւն հանգանակութեան Ջանիւք իւրովք, նա զվերատակար գիտաւորութիւն Ռուսաց Տէրութեան, այսինքն զկամն միաբանելոյ զերկու եկեղեցիս, զՌուսաց և զՀայոց ընդ միմեանս, ցուցանել արտիւ յայտնէ, և զայն հաւատեաք ցուցանէ, և ի նոյն կամս և զԳաբրիէլ վարդապետ Ալյվազեան ճանաչէ, տեսանելով զգրուած նորա ընդ խնդիրն այն առ վեհապրային Ռուսաց անդ. և ընդ այն զհալածիլ իւր ի տէրութենէ անտի յայտնապէս տեսանէ։

Ահա պատասխանի խոստման նորա, Ջանալ օժանդակութիւն ինչ առնել վարդապետաց հանգանակութեամբ, և այն ոչ պակաս քան զ5,000 մանէթ, 20,000 ֆրանք։... Այսպէս առաջի Սարգսի վարդապետի խօսի, իսկ առաջի այլոց ասէ, եթէ Սարգիս վարդապետ եպիսկոպոս ձեռնադրեալ գայր ի Տփխիս, զիւրին էր օժանդակութիւն ինչ հանգանակութեամբ գտանել... և ահա բնաւորութիւն Պ. Հախվէրտեանի, կարծեցեալ ազդաւորի ի Տփխիս։

Յետ երից աւուրց ժամանելոյ Սարգսի վարդապետի ի Տփխիս

գրէ թուղթ առ Ս. Կաթողիկոսն յԷջմիածին, ծանուցանելով զժամանել իւր և զհանգամանս որ ի Տփխիս, հանդերձ այլ տեղեկութեամբ և բարեմաղթութեամբ, օրինակ զայս.

« Վեհափառ և Սրբազան Տէր.

« Խնամօք Տեառն և ողորմութեամբ Սրբութեան Քերոյ ժամա-
« նեցի առ ի Տփխիս ողջ և անվտանգ ի 5 ամսոյս, յետ
« հինգօրեայ ճանապարհորդութեան այսր, թէպէտ և ոչ
« առանց նեղութեան, նեղեալ յոյժ ի պալարաց պատճառե-
« լոց ի ոչթոյ տեղւոյդ, և յանհանգիստ կրաւաց, որ ի խոր-
« տարուտ ճանապարհի տանջեաց զիս յոյժ.

« Ընդ որս ունիմ խնամոտ մտաց Տեառն Սարգսի Սրբազա-
« պոսի Զալալեան, տալով ինձ խնամակալ զՏէր Սահակ
« աւագ քահանայն, զայր տեղեակ ճանապարհին, հանդերձ
« յանձնարարութեամբ հոգալոյ և առ զկարեւոր պէտս իմ.

« Ընդ ժամանելս իմ ի քաղաքս եկին ինձ յայց ոմանք
« յաղգայնոցս առաւ, և տեսեալ զվէրս մարմնոյս ցաւեցան ընդ
« այն յոյժ, կոչեցեալ զոմն ի բժշկաց դարման տանել այնմ,
« մաքրողական դեղօք և բաղանեաք զոր առնեմ օրըստօրէ.

« Մնամ արդ Գալատեան այսր առաջնորդի տեղւոյս Տեառն
« Սարգիս Սրբազանապետի, և գլխաւորաց ոմանց յաղգայ-
« նոցս որք սակս գիւղացնացութեան ի բացեայ են առաւ,
« առ ի խոհել և ի հոգալ զկարեւորացն Հայկազեան վարժա-
« բանին ի Փարիզ, և զայլ բարեաց հասարակաց ազգիս,
« ըստ գիտաւորութեան կոնդակին տուելոյ ինձ ի Վեհէդ,
« զորոց յաջողութիւն կամացն Աստուծոյ և արժանահայց
« աղօթից Քերոց առնեմ ապաստան.

« Գաբրիէլ վարդապետ Այվազեան մեկնեալ էր առաւ
« ի 1 ամսոյս, հանդերձ տրտմութեամբ, սակս չկարելոյ
« տեսանել զիս առ և տեղեկանալ յինէն զվիճակէ Քերոյ
« այդր.

« Յուսամ զի հաստատեալ իցէ ցարդ յառողջութիւն Հայրդ

„ հաստատեալս ի մխիթարութիւն և ի խնդութիւն մեզ և ազ-
„ գիս առհասարակ ։

„ Զունելով այլ ինչ կարեւոր ի ժամուս ողջունեմ քաղուամ
„ սիրով և յարգանաք զհամօրէն սիրելիս մեր այդր իւրաքան-
„ չիւր յանուանէ, և

„ Մնամ միշտ

„ Վեհափառ Տէրութեանդ Ձերում

„ Ի Տփխիս. 8 օգոստ. 1859.

„ Ամենախոնարհ Ծառայ

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՂՈՐԵԱՆ. ”

Յետ քանի մի աւուրց ժամանելոյ Սարգսի վարդապետի ի Տփխիս ժամանէ անդ և Սարգիս եպիսկոպոս Ջալալեան առաջնորդ տեղւոյն՝ դարձեալ յէջմիածնէ ։

Յանձանձէ նա զՍարգիս վարդապետ հիւրընկալ ասպնջականութեամբ և խնամ տանի նպաստակի նորին, հրաւիրելով զերեւելիսն յազգայնոցս անտի յառաջնորդարանն, և ընթեռնլով յականջս նոցա զկոնդակ Կաթողիկոսին, և յորդորէ զնոսա օժանդակել հանգանակութեամբ Փարիզեան վարժարանին, և տպագրութեան մատենից վարդապետաց, և ապա առնէ յայտարարութիւն հանգանակութեան յօժանդակութիւն նոցա ։ Զգործառնութիւն և զելս նորին յիշատակեսցուք ապա ըստ կարգի պատմութեանս ։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Թողք խնդակցութեան և խնդրոյ հոգաբարձութեան Փարիզեան վարժարանին առ Սրբազան Կաթողիկոս Յէրմիածին. — Կոնդակ Կաթողիկոսին առ Սարգիս վարդապետ. — Պատասխանի Սարգսի վարդապետի առեալ Կոնդակի Կաթողիկոսին. — Պատասխանի Սարգսի վարդապետի առեալ թղթոյ Նշանի Փաշիայեան, և բնութիւն ընդ այն. — Օծումն Կաթողիկոսին. — Թողք շնորհաւորութեան Սարգսի վարդապետի առ Կաթողիկոսն. — Պատասխանի Կաթողիկոսին առեալ թղթոյ Սարգսի վարդապետի. — Տեղեկութիւն և բնութիւն ընդ այն.

Մինչդեռ Սարգիս վարդապետ ամենայն խնամով և Ջանիպատաղի զգործով ի Տփխիս, անդէն խնամակալքն ի Պոլիս յուսահատին յոտին պահել զՀայկազեան վարժարանն ի Փարիզ, վասն որոյ փութան գրել թուղթ մի ուրախութեան միանգամայն և տրտմութեան առ Կաթողիկոս Յէջմիածին, խնդրելով ի նմանէ օգնութիւն, օրինակ զայս.

„ Վեհափառ Տէր Տէր Սրբազանասուրբ Կաթողիկոս ամե-
„ նայն Հայոց.

„ Աւետիս անլռանգ ժամանման Վեհիդ այդր ի Տփխիս
„ եկեալ հասեալ այսր յաւուրս յայսոսիկ՝ եմոյծ զամենեսեան
„ յուրախութիւն մեծ. և արդ ակնկալեալ մնան ընդունել
„ ի մերձ աւուրս և զաւետիս օծման յիւղ անոյշ Աստուածա-
„ հեղ, որով ծայրակիր պատկեցին փափաք որտից ամենե-
„ ցուն. քանզի Եկեղեցին ընդ որում վայելչապէս պատկեաց
„ զընտրեալդ աջն Աստուածային, կարօտի յոյժ արթուն

„ Հոմուապետի ուրուք, որպէս է Ձերդ Սրբութիւն, զի զերծ
„ կացցէ մեացէ յաւիտեան յամենայն չարախորհուրդ թշնա-
„ մեաց որք ոչ պակասին նմա երբէք։

„ Այո՝ որդիք քոյ հարազատք տեսցեն զախոյեանդ ընդդէմ
„ նոցա քաջացեալ զինու Տեառն Աստուծոյ, փառաւորեսցեն
„ զանուն հօր իւրեանց և ինքեանք եւս փառաւորեսցին։

„ Ո՛ Հայր գթառատ, որ պատրաստ էք միշտ ձեռն կար-
„ կառել Ազգիս յամենայն դէպս գժուարինս, գիտասջիք զի
„ ամենայն ջանք մեր և աշխատութիւն մերձ են ի դերեւ ելանել,
„ փակեսցին առեմք ի մօտոյ դրունք Փարիզի Լուսաւորչեան
„ վարժարանին, զոր հաճեցայք արդէն ընդ պաշտպանու-
„ թեամբ Վեհիդ ընդունել, եթէ ոչ փութասջիք մեզ յօգնու-
„ թիւն ի նորոյ իբրեւ հզօրագոյն պաշտպան նմին վարժա-
„ բանի հաստատուն խոստմամբ հայթայթելոյ այսի գոնէ
„ հնգետասան աշակերտս լիաթոշակս. քանզի մեք առ
„ միայնակ անբաւական գտանիմք այսօր կանգուն պահել
„ զայն զաւուրս բազումս արդի տակաւաթիւ աշակերտօք. նա-
„ զի և պարտաւորեալք որք ի Փարիզ՝ ի նեղ արկանեն զմեզ
„ զտիւ և զգիշեր ի ձեռն Դեսպանատան տեղւոյս վճարել զպա-
„ հանջս իւրեանց, մինչդեռ պակասին դրամք և ոչ առին
„ բանք ի համոզել զնոսա։

„ Ակնկալեալ ի փութահաս և խնդաւէտ պատասխանի
„ Վեհիդ և Բարերարիդ, և այնու յուսով յուսացեալ միայն՝
„ մնաչիմք ի համբոյր Աստուածարեալ Աջոյդ, և.

„ Մնամք

„ Վեհափառութեան Ձերում

„ Ի Պօլիս. 18 յուլիս. 1859.

„ Ամենախոնարհ և ամենահնազանդ ծառայք

„ ՅԱԿՈԲ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ.
„ ԱԻԵՏԻՍ ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ.
„ ՄԿՐՏԻՉ ԱՂԱԴՈՆ.
„ ՄԿՐՏԻՉ ՄՈՄՃԵԱՆ. „

Առեալ Կաթողիկոսին զվերոյիշեալ թուղթն առաքէ զպատ-ճէն նորին առ Սարգիս վարդապետ ի Տփխիս, առ ի տալ նմին պատասխանի, հանդերձ կոնդակաւ իւրով որ ունի օրինակ զայս.

*“ Մատթէոս ծառայ Քրիստոսի և անհասանելի կամաց-
“ Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս ամենայն Հա-
“ յոց, ծայրագոյն Պատրիարք համադգական Նախամեծար
“ Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ
“ Կաթուղիկէ Էջմիածնի. Արժանապատիւ և ծերունազարդ
“ Սարգսի վարդապետի Թէոդորեան բազմախաստակ սիրելւոյ
“ մերոյ ի Տէր խնդալ.*

*“ Ընկալայ զգիր իմն յԱգնուական Հոգաբարձուաց Դպրո-
“ ցին Փարիզու բնակելոցն ի Կոստանդնուպօլիս, որք թա-
“ խանձանօք մեծաւ խնդրեն ի մէնջ հնգետասան մանկունս
“ լաթոշակս և այլն, և այլն, և ոչ գիտեն զնոսրքին և զարուս-
“ քին պարագայս, որոց վաղ ուրեմն վերահասու եղաք մեք
“ ընդ ձեզ և ընդ Գեր. Գաբրիէլ վարդապետի Ա.յվազեան
“ սիրելւոյն մերոյ, որք կաշկանդեցին զմեզ ձեռնամուխ լինել
“ յայսպիսի դէպս ազգօգուտս, և յուսակտուր արարին զմեզ
“ ի գործ դնել զայն, զոր յառաջագոյն խորհեալն էաք, մինչ
“ էաք ի Կոստանդնուպօլիս, և այժմ անբաւական գտանիմք
“ յառաջ տանել զխորհեալն մեր.*

*“ Ուստի զպատճէն նամակի նոցին առաքեալ՝ առ քեզ
“ պատուիրեմ, զի ընթերցեալ զնոյն՝ գրեսցես առ նոսա
“ զպատշաճ պատասխանին ըստ խոհականութեան ձերում,
“ յայտ առնելով նոցա և զանբաւականութիւն մեր այլովքն
“ հանդերձ, և ի դիմաց մերոց Աստուածային օրհնութեամբ
“ և սուրբ սիրով յարգեսցես զԱգնութիւն նոցին տալով
“ նոցա զողջոյն մեր Քրիստոսաւանդ. որոց ամենեցուն և*

„ Ձեզ իսկ ՚ի ամամ յամենայն ի կեանս իմ բարեմաղթու ա.
„ Տէր

„ ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ։

„ Տուեալ ի 1859 ի յուլիս 29
„ Ի Սուրբ Էջմիածին ։ ,,

Թէպէտ և առ բանս վերոյիշեալ Կոնդակի Կաթողիկոսին կարէր Սարգիս վարդապետ հարցանել թէ Երբ „ Վերահասու „ եղեւ նա ընդ նմա, և թէ ո՞յք կաշկանդեցին զնա ձեռնա- „ մուխ լինել յայսպիսի դէպս ազգօգուտս, և յուսակտուր „ արարին զինքն ի գործ դնել զայն, զոր յառաջագոյն խոր- „ հեալն էր, մինչ էր ի Կոստանդնուպօլիս, և այժմ անբա- „ ւական գտանի յառաջ տանել զխորհեալն իւր ։ ,, Եթէ ընդ Գաբրիէլ վարդապետի Այվազեան միայն վերահասու եղեալ էր ինքն և ի նմանէ կաշկանդեալ ձեռնամուխ լինել յայսպիսի դէպս . . . և յուսակտուր լինի ինքն ի գործ դնել զայն, զոր յառաջագոյն խորհեալն էր ի Պոլիս, ընդէ՞ր ի բան- նից թղթոց Խաչատուր Լազարէֆի, և Յոհաննեսանի ոչ յոր- դորեցաւ և յուսացաւ „ ձեռնամուխ լինել յայն, զոր յառա- „ ջագոյն խորհեալն էր ի Կոստանդնուպօլիս. ,, և ընդէ՞ր եւ ի ձեռս իւր զԿոնդակն, յորում յորդորէ զազգայինսն որք ի Տփխիս օժանդակել Փարիզեան վարժարանին ։ . . . Զիցէ՞ն այս ամենայն հակառակութիւն բանից և գործոց ։ . . . Սակայն չկամի նա զայսոսիկ յիշատակել ի ժամուն, թողեալ յայլում պատեհութեան. առնէ միայն զարժան պատասխանին, հայե- ցեալ ի բարս և ի գնայս Պօլսեցեաց, օրինակ զայս.

„ Վեհափառ և Սրբազան Տէր.

„ Զշնորհաբաշխ Կոնդակ Սրբութեան Ձերոյ, տուեալ „ յԶ օգոստոսի տարւոյս, ընկալայ ի 12 տրին հանդերձ ծրա-

“ բերումն ի նմին նամակաւ ազգայնոցս ոմանց որք ի Կոստանդ-
“ նուպոլիս ։

“ Ընթերցեալ իմ զայն՝ ոչ բնաւ զարմացայ, ճանաչելով
“ քաջ զբնաւորութիւն Պոլսեցեաց, և փորձ իսկ զորով գնա-
“ ցին նոցա ի հինգ ամաց հետէ. այլ ցաւեցայ և ցաւիմ
“ յոյժ ընդ միամտութիւն իմ, հաւատալով բանից խոստման
“ նոցա. և յիրաւի՝ քանզի ուր մնացին մեծամեծ խոստումն
“ և հաստատուն երդմնաւորութիւն արանցդ այդոցիկ, առ-
“ ի բաց պահել զՀայկազեան վարժարանն զամս երկու և
“ աւելի եւս. ահա հազիւ թէ ամիս մի և եթ անց ի բանից
“ անտի խոստման և երդմնաւորութեանն նոցա, փակել խոր-
“ հին նոքա զվարժարանն, յամօթ և ի նախատինս ազ-
“ գին ։

“ Արդ զինչ նպաստ օժանդակութեան մատուցին մեզ
“ ստորագրութիւնք հանգանակութեան 12,000 դահեկանաց.
“ ապաքէն ոչինչ. քանզի գրէ առ իս Ամբրոսիոս վարդապետ
“ Գալֆայեան, թէ վասն ծախուց յունիս և յուլիս ամսոց
“ անկեալ կայ վարժարանն ի ներքոյ պարտուց, և ինքն
“ ներեալ ի պարտատերից անտի՝ յոգիս կայ ապառաստն,
“ հարազատաւն հանդերձ ։ . . .

“ Վեհափառ Տէրութիւն Ձեր առաքեալ է ինձ առ զպատ-
“ ճէն նամակին որ ի Պոլսեցեաց անտի, և պատուիրեալ՝ զի
“ արարից նմին զպատշաճ պատասխանին, յայտ առնել նոցա
“ զանբաւականութիւն Ձեր ի լրումն խնդրոյ իւրեանց. արա-
“ րից ես զայն ըստ հրամանի Ձերում, բայց ոչ այժմ, այլ
“ ապա, յետ տեսանելոյ և առ զելս իրացն, պարտ է պա-
“ հել զնոսա յուսով ակնկալութեան որ առի, որպէս զի
“ պահեցեն նոքա զսակաւիկ զայն հոգ խնամոց իւրեանց առ
“ Հայկազեան վարժարանն, և խոպառ լքեալ չթողուցուն
“ զայն ։

“ Յուսամ զի վայելէ արդ Վեհափառ Տէրութիւնդ ի կա-
“ տարեալ առողջութեան և պարապեալ ի գործս կարեւոր
“ որ ի պայծառութիւն Հայաստանեայց Սուրբ եկեղեցւոյն,
“ և յոգուտ կրօնելոյ ազգիս ։

„ Վիճակն իմ ասա խնամօք Տեառն և աղօթիւք Սրբու-
„ թեան Ձերոյ բարւոք է, պատապարեալ յառաջնորդարան և
„ յանձանձեալ իբրեւ զեղբայր յառաջնորդէ նորին, հանդերձ
„ ջանիւք վասն յաջողութեան գործոյս, խելամուտ գոլով
„ քաջ կարեւորութեան սորին ։

„ Զունելով այլ ինչ կարեւոր ի ժամուս բաց ի սիրալիր և
„ ի յարգական ողջունէ առ համօրէն սիրելիս մեր այդր ի-
„ բաքանչիւր յանուանէ, և ի գաւանելոյ զանձն իմ

„ Վեհափառ. Տէրութեանդ Ձերում

„ Ի Տփխիս. 15 օգոստ. 1859.

„ Ամենախոնարհ ծառայ

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՐԴՈՐԵԱՆ. ”

Յետ միոյ աւուր տուելոյ վերոյիշեալ պատասխանւոյն, ընդունի Սարգիս վարդապետ թուղթ մի ի Պ. Ներսէս Քալֆայեան ի Պոլիս, յորում ծանուցանէ նա և դանդաղի ղչկամութենէ, ստորագրողացն հաստուցանել զխոստացեալ արծաթն յօժանդակութիւն Հայկազեան վարժարանին ի Փարիզ, և զնեղութենէ Ամբրոսիոս և Խորէն վարդապետաց անդ ։ Մատնուցանէ և զայս, թէ „ Հարիւր անձինք միտք ունի և կըջանան
„ ի գործ դնել, այսինքն, Գերապատիւ վարդապետները
„ աղաչելով Պոլիս բերել տալ, ուներ ճեմարան մը բանալով,
„ անոր կառավարութիւնը անոնց յանձնել ։ ”

Առնէ պատասխանի Սարգիս վարդապետ թղթոյ Պ. Ներսէսի Քալֆայեան, օրինակ զայս.

„ Սիրելի Պարոն Ներսէս.

„ Յետ ծանուցանելոյ Ձեզ այդր զողջամբ ժամանել մեր
„ այստ ի Տփխիս և զմեծահանդէս շքով ընդունելութիւն

“ Սրբազան Կաթողիկոսին մերոյ յազգայնոցս և ի տէրութենէ
“ ասի, կամք էին ինձ ծանուցանել Ձեզ ապա և զժամանել
“ մեր ի սուրբ Էջմիածին և զհանդէս ընդունելութեան Կա-
“ թողիկոսին անդ. այլ ընդունայն յապաղումն մեր ի Տփխիս,
“ և ծանրաքայլ ճանապարհորդութիւն անտի յԷջմիածին,
“ և մանաւանդ անորոշութիւն աւուր օծման Կաթողիկոսին
“ և տկարութիւն նորին յապաղեցին և զդրութիւն իմ առ
“ Ձեզ ցարդ։

“ Արդ՝ ժամանեցաք մեր յԷջմիածին յ7 յուլիսի անցելոյ,
“ մինչդեռ սպասէաք անհամբերութեամբ աւուր օծման Կա-
“ թողիկոսին, նեղեալ յոյժ ի սօթոյ անտի, յորմէ զրեթէ
“ ամենեքեանս հիւանդացաք, ոմանք ջերմամբ տանջեալ, և
“ այլք պալարօք չարչարեալ, յորոց և իմ վարակեալ երես-
“ նիւ չափ, որ ի բազուկս և ի սրունս, և որ ի վերայ թիկանց
“ և լանջաց՝ չարչարէին զիս զտիւ և զգիշեր. և այսպէս
“ կրեալ մեր ամենեցուն զաւուրս հնգետասան։ . . . .

. . . . . .

. . . . . .

. . . . . .

“ Եւ մինչդեռ ճեպի ես ասա լսել ի ձէնջ այսր և ի մերոցն
“ անտի զլուր ինչ մխիթար, ըստ բանից խոստման և երաշ-
“ խաւորութեան ազգայնոցս այսր, ահա լուայ լուր ցաւա-
“ լից, նախ ի մերոցն անտի, նեղեալ նոցա անդ ի պարտա-
“ տեարցն, պակասելով դոցա յղել նոցա արծաթ ի կարեւոր
“ պէտս վարժարանին, վասն ծախուց յունիս և յուլիս ամ-
“ սոց անցելոց, ընդ պարտեօք անկեալ կայ վարժարանն,
“ և մերքն նեղեալ ի պարտատեարցն անտի՝ յոգիս կան ա-
“ պաստան։

“ Եղկելի վիճակ նոցա։ . . .

“ Եւ մինչդեռ այսու ցաւալից լրով զգածեալ էի ես ասա
“ ի պանդխտութեանս, ահա լուայ և զայլ ցաւալից լուր
“ անտի ձեռամբ Կաթողիկոսին. քանզի գրեն ոմանք ի գլխաւոր
“ ազգայնոցս այսր, ի հոգաբարձուաց վարժարանին, նամակ
“ մի առ Սրբազան Կաթողիկոսն Էջմիածին, ծանուցանելով

„ նմա զմօտակայ փակիլն Հայկազեան վարժարանին, եթէ
„ ոչ հոգացի վասն նորին հնգետասան լիաթոշակ մանկունս
„ յազգայնոցս առի։ . . .

„ Առաքեաց ինձ Ս. Կաթողիկոս զպատճէն նամակի դոցա,
„ և պատուիրեաց առնել իմ այնմ պատասխանի, խելամուտ
„ առնել զդոսա հանգամանաց գործոյս առ։ Այն ինչ
„ խորհէի ես զայնմանէ ցաւագին սրտիւ, ահա եհաս և
„ զիր ձեր, որ յաւել ևս զցաւս սրտիս, հաստատելով ձեր
„ զայն։

„ Աւելորդ համարիմ ես արդ առնել պատասխանի նամակի
„ դոցա որ առ Ս. Կաթողիկոսն, խելամուտ լինելով դոցա
„ հարկաւ հանգամանաց գործոյս առ։ Բանից դրոյս որ առ
„ ձեզ այդր. բայց եթէ տալ դոցա ի սմին խրատ մի կարեւոր,
„ այս է, փոխանակ խնդրելոյ ի Կաթողիկոսէն հնգետասան
„ լիաթոշակ մանկունս, խնդրեցին ի նմանէ 30,000 ֆրանք
„ ի տարեւոր. քանզի առաւել դիւրին է նմա, ունելով կա-
„ րողութիւն ի ձեռին իւրում, քան հոգալ ասի թոշակաւոր
„ մանկոյն։ Դիւրին է նմա ասացի, քանզի գոն ի տէրութեանս
„ հինգ և վեց եկեղեցական թեմ, յորոց արդեանց կարող է
„ Կաթողիկոսն հանել 30,000 ֆրանք յօժանդակութիւն Փա-
„ րիզեան վարժարանին, և յղել անդ հնգետասան պատանիս
„ տանեւութ և քան ամեայ, ի կատարելութիւն ուսմանց
„ նոցա, և ընդ այս չիք ինչ ընդդիմութիւն և խափան ուս-
„ տիք, ըստ վկայելոյ օրէնագիտաց տեղւոյս, և պաշտօնէից
„ տէրութեանս, եթէ արդարեւ՝ որպէս և դոքա վկայեն,
„ հաճեցաւ Ս. Կաթողիկոսն արդէն ընդ պաշտպանութեամբ
„ իւրով ունել զվարժարանն Փարիզու, և իրրեւ զտուն էջ-
„ միածնի համարել զայն, և եթէ կամք ունին դոքա բաց
„ պահել անդ զվարժարանն զայն. իսկ եթէ ոչ՝ մի՛ ի զուր
„ չարչարեսցեն զմերսն անդ անուտի խոստմամբ և սին երաշ-
„ խաւորութեամբ, այլ կարճեսցեն զնեղութիւն մերոյն, հա-
„ տուցանելով զհին և զնոր պարտս վարժարանին և փակե-
„ լով զայն։ . . .

„ Իսկ ակնկալութիւն օժանդակութեան որ յազգայնոցս

„ ասոյ կարօտի ժամանակի և և համբերութեան, հանդերձ
„ այլ դիտաւորութեամբ և պայմանօք արդեօք : . .

„ Ընթերցիք աղաչեմ զթուղթս յականջս դոցա և խելա-
„ մուտ արասջիք զդոսա մտաց դրութեանս, դնելով վկայու-
„ թիւն առաջի հասարակաց ազգիս այդը : . .

„ — Հարիւրաւոր անձինք միտք ունին, ասէք, և կրջանան
„ ի գործ դնել, այսինքն, Գերապատիւ վարդապետները
„ աղաչելով Պոլիս բերել տալ, որ նոր ճեմարան մը բանալով,
„ անոր կառավարութիւնն անոնց յանձնել : „

„ Ասեմ ես առ այս. Մէջ ապաքէն հարիւրաւոր անձինքդ
„ այդոքիկ նոյնպէս Պոլսեցիք են. և գուցէ բազումք ի նո-
„ ցանէ անոի որք խոստացան հանդերձ երաշխաւորութեամբ,
„ և հանգանակեցին ստորագրութեամբ իւրեանց, զամս եր-
„ կու և աւելի բաց պահել զվարժարանն Փարիզու, այլ
„ հազիւ թէ ամիս մի եւեթ էանց անոի խորհեցան փակել
„ զայն, առ ի չհատուցանել զխոստացեալ արծաթն հանդա-
„ նակութեան : . .

Զմիանգամ փորձեալն վերստին փորձել անմտութիւն է :

„ Ապա չմնայ և ինձ ես հոգալ զխոստմանէ Աբրահամ
„ Աղայի Երամեան, հոգալով ձեր զայնմանէ այնչափ և
„ ի զուր : . .

„ Մնամ

„ Սիրելութեանդ

„ Ի Տփխիս. 18 օգոստ. 1859.

„ Աղօթարար

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ. „

Յայսմ ժամանակի ըստ յանկարծակի Սարգիս վարդապետ
ի Տփխիս զօծումն Արրարատեան Կաթողիկոսին յԷջմիածին, ի 15

օգուտ. ի տօնի Շողակաթի, առանց պատարագելոյ, մատուցանելով զայն փոխանակ նորա Մակար եպիսկոպոսի, և զայն առանձինն, չգտանելով յեկեղեցւոջ անդ և ոչ ոմանց ի ժողովրդոց որք մնային բազում փափաքանօք տեսանել զհանդէս օծմանն և ընդունել ինմանէ զօրհնութիւն. և պատճառ այնպիսի օծման նորին, ասի լինել խնդիրն Սարգսի եպիսկոպոսի Նտիրնէցւոյ, որ խնդրէ զայն, զի փութով դարձի ի Պոլիս... զինչ և իցէ պատճառն այնորիկ, սակայն ոչ բարւոք նշան թուի այն յաչս հաւատակաց, անխոհեմութեան և թեթեւութեան մոաց տալով զայն։...

Գրէ Սարգիս վարդապետ թուղթ շնորհաւորութեան առ Ս. Կաթողիկոս, օրինակ զայս.

„ Վեհափառ Տեառն Տեառն և Աստուածապատիւ Հայ-
„ բապետի մերոյ Գէորգեանն և խոնարհ
„ Աջահամբոյր։

„ Աւետարեր և ցանկալի լուր օծման Վեհափառ Տեառն
„ մերոյ ապաքէն զուարթացոյց զթախծեալ հոգիս, կազդու-
„ բեաց զտկարացեալ մարմինս. եթէ լուրս այս այսչափ ինչ
„ յիս ազդեաց, ապա քանի՛ քանի՛ զօրութիւն Սրբալոյս իւ-
„ զոյն ազդեալ իցէ ի հոգի և մարմին Հօրդ հաւատակաց,
„ ի լուսաւորել և ի զօրացուցանել զազգս Հայոց առհաս-
„ տակ։...

„ Այո՛ Վեհափառ Տէր, խնդութիւն իմ ընդ լրումն փա-
„ ռացդ և ակնկալութիւնս որ անտի մեծապէս են, որպէս և
„ տեսեալ էք արդէն ի նուագ դրուատից և առ Աստուած
„ մաղթանաց, որ ի գիմաց մեր չորից եղբարց, տպագրեալ
„ ի Փարիզ, և ընթերցեալ այդր յԷջմիածին, յաւուր հանդի-
„ սի օծման Ձերոյ... և եթէ զրկեցաք մեք ըստ բաղդի մե-
„ ղոյ ի վայելելոյ ընդ այդր եղելոց զհանդէս օծման Սրբու-
„ թեան Ձերոյ, սակայն ակնունիմք վայելել ընդ դոցա
„ զՀայրապետական առատ օրհնութիւնդ Ձեր։

„ Ահա այսու բարեյուսութեամբ ի հեռուստ ասոյ խոնարհ-
„ հեալ ի համբոյր աջոյդ սրբութեան,

„ Անամ միշտ

„ Վեհափառ Տէրութեան Ձերում

„ Ի Տփխիս. 22 օգոստ. 1859.

„ Ամենախոնարհ ծառայ

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ. „

Պատասխանի Ս. Կաթողիկոսին տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի օրինակ զայս.

„ Մատթէոս ծառայ Քրիստոսի և անհասանելի կամաքն
„ Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս ամենայն Հա-
„ յոց, Ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար
„ Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Կա-
„ թուղիկէ Էջմիածնի. Արժանապատիւ և բազմավաստակ
„ ծերունւոյդ Սարգսի վարդապետի Թէոդորեան ի Տէր խըն-
„ դալ։

„ Ընկալայ զմեծարելի նամակ սիրելւոյդ, և զոհ եղէ
„ զՁերմեռանդն բաղձանացդ զտանիլ ձեր ներկայ ի հանդէս
„ օծութեան մերոյ, որ բարւոք լինէր արդարև, և ես իսկ
„ անձկայի զտանել ձեր ներկայ յայնմ հոգեւոր հանդիսին.
„ այլ վերին Տեսչութեանն տալի է այս ամենայն, որ յաջո-
„ ղէ որպէս և կամի, ոչ ըստ մերում նախապատրաստու-
„ թեան, այլ ըստ իւրումն անճառ Տնօրէնութեան։

„ Արդ ընկալեալ զբարեմաղթութիւն շնորհաւորութեանդ
„ զոհունակութեամբ սրտի՝ յայտ առնեմք զայս, զի զոր
„ զրեալդ էք ի նամակիդ՝ զբանս զոլեռից և մաղթանաց
„ ի դիմաց շորից վարդապետացդ հեղինակութեամբ տպեալս

„ ի Փարիզ, ընթեռնուլ ի ժամ օծման մերոյ, այդպիսի ինչ
„ ոչ տեսեալ է մեր և ոչ իսկ ընթերցեալ ի ժամ օծմանս.
„ ուստի կարէք ստուգել յայնմանէ որ ասացեալ է ձեզ զայդ
„ իբրեւ ակամանատես կամ ականջալուր, որ գլխովին չէ ճըշ-
„ մարիտ։

„ Յայտ առնեմ և զայս, զի պատանի ոմն յաշակերտաց Ներ-
„ սիսեան ուսումնարանիդ աղերսագրով իւրով որ առ մեզ,
„ խնդրէ երթալ ի դպրոցն Փարիզու. զաղերսագիր նորին
„ ընդ Կոնդակիս առաքեցի առ ձեզ, զոր ընթերցեալ, եթէ
„ գտանէք այդր զԱղգասէր ոգի որ հատուցէ ի փառս Աս-
„ տուծոյ զտարեկան թոշակ նորին և զծախսն զամենայն,
„ առաքեցէք. ապա թէ ոչ, կոչեալ զպատանին առաջի ձեր,
„ և պատասխանի տացէք նմա զոր ինչ արժանն է ասել։

„ Էր Ողջ զօրացեալ ի Տէր։

„ Մնամ բարօրութեան ձերում

„ Աղօթարար առ Տէր

„ ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ.

„ Ի. Ս. Էջմիածին. 1859. օգոստ. 28.

—

„ Համար 103. „

Ի վերոյիշեալ կոնդակի Կաթողիկոսին երկու ինչ գոն, մին կարեւոր գիտելոյ, և միւսն արժանի քննելոյ. զյայտարարութենէ ուղերձին ասեմք, և զյայտարարութենէ պատանւոյն. վասն բանի ուղերձին ծանիցեն ընթերցողքն ի պատասխանին Սարգսի վարդապետի առ Կաթողիկոս. իսկ վասն բանի պատանւոյն՝ արժան համարիմք առնել ասա ինչ քննութիւն։

„ Զի պատանի ոմն, ասէ, յաշակերտաց Ներսիսեան ու-
„ սումնարանիդ աղերսագրով իւրով որ առ մեզ, խնդրէ,
„ երթալ ի դպրոցն Փարիզու... եթէ գտանէք այդր զԱղ-

„ զասէր ոք որ հատուցէ ի փառս Աստուծոյ զտարեկան
„ թոշակ նորին և զծախսն զամենայն, առաքեցէք։ „
Իսկ ի նախընթաց կոնդակի իւրում դրէ այսպէս. „Ընկալայ
„ զդիր իմն յԱզնուական Հոգաբարձուաց Դպրոցին Փարիզու
„ բնակելոցն ի Կոստանդնուպօլիս, որք թախանձանօք մեծաւ
„ խնդրեն ի մէնջ հնգետասան մանկունս լիաթոշակս, և այլն,
„ և այլն, և ոչ դիտեն զներքին և զարտաքին պարագայս,
„ որոց վաղ ուրեմն վերահասու եղաք մեք ընդ ձեզ և ընդ
„ Գեր. Գարրիէլ վարդապետի Այվազեան սիրելւոյն մերոյ,
„ որք կաշկանդեցին զմեզ ձեռնամուխ լինել յայսպիսի դէպս
„ ազգօգուտս, և յուսակտուր արարին զմեզ ի գործ դնել զայն,
„ զոր յառաջագոյն խորհեալն էաք, մինչ էաք ի Կոստանդ-
„ նուպօլիս, և այժմ անբաւական գտանիմք յառաջ տանել
„ զխորհեալն մեր։ „

Միաբանիցքն այս երկու կոնդակաց բանք ընդ միմեանս։... Ո՞չ ապաքէն հակառակութիւն բանից և գործոց տեսանի ի սոսին... ի միումն կաշկանդեն զնա ձեռնամուխ լինել յայսպիսի դէպս ազգօգուտս, և յուսակտուր առնեն զնա ի գործ դնել զայն։ Իսկ յերկրորդումն ձեռնամուխ լինի յայն, խընդրելով զազգասէր ոք որ հատուցէ զտարեկան թոշակ և զամենայն ծախս պատանւոյն որ խնդրէ երթալ ի դպրոցն Փարիզու։...

ԳԼՈՒԽ ԺԵ.

Թոռոր ցառակցոբքեան Գաբրիէլ վարդապետի առ Սարգիս վարդապետ ընդ ողորմ վիճակ Փարիզեան վարժարանին. — Պատասխանի Սարգսի վարդապետի տոռնեալ թղթոյ Գաբրիէլ վարդապետի. — Պատասխանի Սարգսի վարդապետի տոռնեալ կոնդակի Կարողիկոսին. — Թոռոր Սարգսի վարդապետի առ Ամբրոսիոս և. Խորենի վարդապետս. — Թոռոր ցառոց Ամբրոսեայ վարդապետի առ Սարգիս վարդապետ. — Պատասխանի Սարգսի վարդապետի առ Ամբրոսիոս վարդապետ. — Թոռոր Սարգսի վարդապետի առ Ս. Կարողիկոսն վասն անձկոռբեան Փարիզեան վարժարանին. — Պատասխանի Կարողիկոսին տոռնեալ թղթոյ Սարգսի վարդապետի և. բնենոռթիւն ընդ այն.

Թուղթ Գաբրիէլ վարդապետի առ Սարգիս վարդապետ, յորում ծանուցանէ զողորմ վիճակ փարիզեան վարժարանին, ընդ որ ցաւի բանիւք միայն, այլ սրտիւ ուրախ լինի ընդ փակիլ նորին, զի իւրն բաց մնացէ միայն, որպէս տեսանի ապա ի գործոց իւրոց, օրինակ զայս.

“ Գերապատիւ Հայր Սիրեցեալ.

“ Զբաղեալ ի տարեկան քննութիւն աշակերտաց ուսումնա-
“ բանիս և ի բազմապատիկ գործս կարեւորս, փութամ հա-
“ մառօտիւս զայս և եթ ծանուցանել ցաւով սրտի, զի ըստ
“ վերջին թղթոյ մերոցն զրելոյ ի Փարիզէ ի 6 ամսոյս, Պօղոս-
“ ցիքն չեն կացեալ և ի խոստմանն զոր արարեալ էին յաւուրս

„ մեկնելոյ Ձեր. Հայրութեանդ ի նոցանէ, որով հարկադրին
„ մերքն փակել զվարժարանն զայն։
„ Ցղեալ են առ իս և զթուղթս Մոմճեանին և Նշանի՝ որք
„ յուսահատականք են մանաւանդ քան թէ քաջալերականք։

„ Ողջ լինել մաղթեմ

„ Սիր. Հայրութեանդ

„ Ի Թէոդոսիա. 23 օգոստ. 1859.

„ Անձնանուէր

„ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՑՎԱԶԵԱՆ. „

Թուղթ Սարգսի վարդապետի առ Գաբրիէլ վարդապետ, յորում ծանուցանէ զվիճակ է իւրմէ ի Տփխիս, և զհանգամանաց իրաց վարժարանին ի Փարիզ, այլովքն հանդերձ, օրինակ զայս.

„ Գերապատիւ Հայր և սիրեցեալ եղբայր.

„ Յետ մեկնելոյ Ձեր յԷջմիածնէ, պանդխտութիւն իմ անդ
„ տեւեաց այլ եւս աւուրս հինգ, սակս տկարութեան Սրբա-
„ զանին, չկարելոյ նորա ատորագրել զկոնդակն այն յաճեա-
„ բարութեան. և յաւելան պակարք մարմնոյս, և այնչափ
„ զայրացան մինչեւ հատանել զքուն յաչացս, անցուցեալ
„ իմ այնպէս զաւուրսն զայնոսիկ՝ մինչեւ հապիւ կարացի
„ զերծանիլ ի բանտէ անտի յ30 յուլիսի, այլ ոչ ի վիրացս
„ ասի, որք առաւել եւս տանջեցին զիս ի թարանդաս անուա-
„ նեալ կառն, ցնցելով ասատիկ ի քարուտ ճանապարհին.
„ այլ շնորհ ունիմ Տեառն Սահակայ Սահարունւոյ աւագ
„ երիցու, որ ուղեկից և խնամակալ տուաւ ինձ, և այնպէս
„ ճանապարհ արարեալ իմ զաւուրս հինգ, և այլ արարեալ

„ Սեւանայ կղզւոյն՝ հասի ի Տփխիս ի 5 ամսոյս և ի Ջեվանեցայ
„ յառաջնորդարանի, ուր և բնակիմ այժմիկ, և ուր եկին
„ ինձ յայց ոմանք յազգայնոցս ասոի և միխիթարեցին զիս
„ յուսով խնդութեան : Թէպէտ և զինդրոյս եղեւ երբեմն
„ երբեմն խօսակցութիւն ընդ ոմանս, այլ չորոշեցաւ ինչ
„ ցարդ, գոլով և այլոց ոմանց ի գլխաւորացն արտաքոյ քա-
„ զաքիս. յորժամ ժողովեցին այսր, յուսամ զի որոշեցի
„ ինչ ի միխիթարութիւն մեզ արդեօք ։ . . .

„ Մնամ

„ Սիրելութեան Ձերում

„ Ի Տփխիս. 24 օգոստ. 1859.

„ Հոգեկցորդ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ. „

Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ կոնդակի Ս. Կաթողիկոսին, յորում արդարացուցանէ զինքն ի բան ուղերձին, և ծանուցանէ զյանձնարարութենէ նորին, օրինակ զայս.

„ Վեհափառ և Սրբազան Տէր.

„ Զչնորհալից կոնդակ սրբութեան Ձերոյ, զտուեալն ի 28
„ անցելոյն, ընկալայ յշ ամսոյս, և լցայ միխիթարութեամբ և
„ խնդութեամբ սրտի ։

„ Շնորհ յոյժ ունիմ այնմիկ որ միխիթարէ և ուրախ առնէ
„ զիս միշտ ։

„ Հարկ է ինձ արդ և ի դէպ իսկ վերատին առնել յիշա-
„ տակութիւն վասն խոնարհ ուղերձին, որ ի դիմաց մեր
„ շորից եղբարց մատուցելոյ Հօրդ հասարակաց ի հանդիպ

“ աւուր օծման, թէպէտ և վրիպեալ մեր յերգելոյ անտի
“ յանդիման Զերումդ Սրբութեան և սխալեալ իմ ի կարծիսն
“ զոր ունէի զայնմանէ, այսպէս.

“ Հասեալ այդր ուղերձին այնր ըստ ժամանակին, ի 25 յու-
“ լիսի անցելոյ, մինչ աւուրք յառաջ քան զառհմանեալ օր
“ օծման սրբութեան Զերոյ, և չյաջողեալ այնր սակս յանկարծ
“ տկարութեան Զերոյ, խորհեցաք մեք յայնժամ յանձնել
“ զայն այդր Պարոն Միրաքովի, Գործակալի, հրատարակել
“ զայն յաւուր հանդիսի օծման Վեհիդ յորում յաջողէր այն
“ ի Տեառնէ։ Զայս այսպէս կարծելով իմ յիշեցի ի թուղթս
“ շնորհաւորութեան որ ի 22 անցելոյն. բայց իբրեւ իմացայ
“ ի բանից Կոնդակի Սրբութեանդ թէ չէ Զեր տեսեալ զայն և
“ ընթերցեալ՝ համարեցայ յայնժամ թէ մոռացեալ իցէ
“ Գաբրիէլ վարդապետ յանձնել զայն Պ. Միրաքովի։

“ Մինչդեռ ցաւէի ես ընդ վրիպումն կարծեացս և ընդ
“ տարակոյս Զեր ի բանս իմ, ահա լուայ թէ հասեալ էր աստ
“ և այլ օրինակք յուղերձէ անտի ի հրատարակել աստ և անդ.
“ և ահա առաքեմ Վեհիդ ընդ սմին օրինակ մի անտի յուղղու-
“ թիւն սխալանացս և ի հաստատութիւն բանից ճշմարտու-
“ թեան, հանդերձ վերսին շնորհաւորութեամբ, և հայցմամբ
“ զՀայրապետական օրհնութիւնդ։

“ Զկարելով իմ գտանել աստ զայնպիսի ոք որ հաստուցանէր
“ զտարեկան թոշակն պատանեւոյն խնդրողին ի Զէնջ աղեր-
“ սանօք երթալ ի Փարիզ ի Հայկազեան վարժարանն, խելա-
“ մուտ արարի զնա զժուարութեան խնդրոյ իւրոյ, և խրատ
“ եռու նմա գնալ յերկիր իւր, և ուսուցանել մանկանցն
“ այնոցիկ այնչափ ինչ որչափ ուսեալ էր ինքն աստ, և այնպէս
“ կատարելագործէր զուսումն իւր, պարապելով յայն միշտ,
“ միանգամայն և շահէր անտի արծաթ ի կարեւոր պէտս ծա-
“ խուց իւրոց։ Ահա զայս և զայսպիսի ինչ խրատ արժանի
“ համարեցայ տալ պատանեւոյն և արձակել զնա, որ անտա-
“ ցեալ խրատուս ել ի ճանապարհ։

“ Այն ինչ կամէի ես յաւելուլ աստ և զաղաչանս իմ առ
“ Սրբութիւնդ Զեր, փութալ տալ այսր առ փոխարքայն

„ զաղդարարն որ ի Զէնջ գիր վասն բանի խնդրոյ մերոյ
„ յաղդայնոցս ասասի, ահա եհաս նոր ինձ ազդարարութիւն
„ ի Վեհէդ առ Սարգիս եպիսկոպոս և առաջնորդ տեղւոյս,
„ ծանուցանելով նմա թէ չէր կարեւոր գրել Ձեր ասա առ
„ փոխարքային վասն բանի խնդրոյ իմոյ, բաւական և շատ էր
„ կոնդակն յորդորանաց Ձերոց առ ազգայինս ասա. թէպէտ
„ և աւուրքք ինչ յառաջ ազդ արարեալ էիք նմա գրութեամբ
„ առենադպրիդ, թէ կարեւոր էր գիրն այն, և հաւանեալ
„ նորա՝ մնայր այնմ օրըստօրէ։ . . . Ապա յաջողութիւն դոր-
„ ծոյս կարօտի օգնականութեան Աստուծոյ և Ջանից Սարգսի
„ եպիսկոպոսի։

„ Զուներով այլ ինչ ի ժամուս կնքեմ զթուղթս, և

„ Մնամ միշտ

„ Վեհափառ Տէրութեանդ Ձերում

„ Ի Տփխիս. 9 սեպտ. 1859.

„ Ամենախոնարհ ծառայ

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՂՈՐԵԱՆ.„

Թուղթ Սարգսի վարդապետի առ Ամբրոսիոս և Խորէն վարդապետք ի Փարիզ, յորում ծանուցանէ նոցա զվիճակ իւր, և զհանգամանս գործոյն, հանդերձ ազդարարութեամբ օրինակ զայս.

„ Սիրելքդ և Անձկալիք իմ ի Քրիստոս.

. . . . . .

„ Ցիշեցի ես բազում անգամ զառաքելոն ձեր որ ի վերջին
„ թղթիդ առ իս ի Պոլիս, իբրեւ զգուշակութիւն ինչ, թէ
„ „ Արշաւի և խնդամք ընդ երթ ձեր ընդ Սրբազան Կաթողի-

“ “ կոսին և ընդ եպիսկոպոսանալդ, նոյնչափ և զնեղութիւն
“ “ և զվտանգ ճանապարհի յուշ ածեալ զարհուրիմք։ ”
“ Թէպէտ ես յայնժամ ոչ հաւանեցայ ասացելոյդ իբրեւ
“ դուշակութեան, թեթեւ ինչ համարելով զնեղութիւն և զվ-
“ տանգ ճանապարհին, և զայն ոչ առ ցանկութեան եպիս-
“ կոպոսանալոյ, որում ոչ երբէք ցանկացայ և ցանկամ
“ բնաւ, որպէս տեսաւ ցարդ և տեսցի ապա, այլ առ ի հա-
“ սանել նպատակիս, ի գտանել օժանդակութիւն ինչ վար-
“ ժարանիդ այդր, և եթէ ոչ այդմ, գոնէ աշխատասիրու-
“ թեան ձերում, զորմէ առաւել փոյթ է ինձ միշտ. այլ հա-
“ ւատացի ապա ասացելոյդ իբրեւ դուշակութեան, առնելով
“ զչափ վշտաց և նեղութեան, ոչ Ասիոյ ճանապարհի, այլ
“ բնակութեան Էջմիածնի, և այն ի սակաւ ժամանակի,
“ զաւուրս ինչ միայն. և հաստատութիւն բանից ճշմարտու-
“ թեան երաշխաւորեացէ ձեզ նոր ոմն Յուլեան, Ալեսիս
“ վարժապետ Պէրպէրեան, զորոյ զպատճէն գրութեան ծրա-
“ բեալ ի սմին առաքեմ ձեզ յընթերցումն. թողում յիշա-
“ տակել առ զզանազան հիւանդութիւն երթելոց ընդ մեզ
“ անդ, զիսն միայն յիշեցից։ Երեանիս չափ պաղարք յերիս
“ աւուրս երեւեցան ի մարմինս, որք և տանջեցին զիս զտիւ
“ և զգիշեր. յերկրորդում աւուր ժամանելոյ իմ անդ խայ-
“ թեցայ ի կարճէ, և ժամս հինգ տանջեցայ ի ցաւոց անտի,
“ չգտանելով անդ կաթիլ մի ձիթոյ ի դեղ ցաւոյս, մինչեւ
“ բերել տուաւ այն ի Վաղարշապատ անուանեալ դեղջէն։

. . . . . .

. . . . . .

. . . . . .

“ Ի 26 յուլիսի անցելոյն, յաւուր յորում որոշեալ էր լինել
“ օծումն Կաթողիկոսին, և ի շյաջողիլ այնր, եկ Գաբրիէլ վար-
“ դապետ, ի ճանապարհ դառնալ ի տեղի իւր. և յետ հինգ
“ աւուրց անտի, յ31 նորին ամսոյ, եկի և ես ի ճանապարհ
“ դնալ ի Տփխիս. քանզի կայր ինձ ըստ բաղձին իմոյ կրել
“ աւուրս ինչ աւելի, և ապա զերծանիլ ի բանտէ անտի.
“ և յետ հինգ աւուրց տարժանելի ճանապարհորդութեան,

«սակս վիրաւորեալ մարմնոյս, և սակս անհանգիստ ինչ
«կառաց որ ի խորտրոտ ճանապարհի ժամանելի սատ
«ի Տփխիս, ի 5 օգոստոսի անցելոյն, և ինչեմանեցայ յառաջ-
«նորդարանի ազգիս, ուր եկին և զան ինձ յայց ոմանք
«յազգայնոցս սատի, և մխիթարեն զիս յուսով խնդաւ-
«թեան։ . . .

«Խօսեցայ և խօսիմ ես ընդ սուտ հանապազ զհանգամանաց
«վարժարանիդ և զլիճակէ ձերմէ այդր, և խնդրեմ զձեռն-
«տուութիւն օժանդակութեան իւրեանց. թէպէտ և պիտանի
«և կարեւոր համարին զհաստատութիւն վարժարանիդ այդր,
«և արդահատին ձեզ շատ, սակայն չտեսանեմ ես ցարդ ար-
«դիւնս ինչ անտի, սակս զանազան կարծեաց և անուսի
«պատճառաց. թէպէտ և աւելի լուսաւորեալ և ճոխ քան
«զՊօլսեցի ազգային ցուցանեն զինքեանս, այլ զնոյն բնա-
«տրութիւն անմիաբանութեան ունին ամենեքեան։ Ողբալի
«հանգամանք ազգիս։ . . . Միայն խոյր ինչ գոյ ի մէջ սոցա
«և Նոցա. Նոքա զառաջինն մեծամեծս խոստանան ապա նը-
«ստութեամբ զլանան կատարել զայն, իսկ սոքա պատ-
«ճառս տան ժլատութեան իւրեանց, զանպիտանութիւն եկե-
«ղեցականաց . . . տալով զանձ բազում ի ձեռս Նոցա, և
«չտեսանելով երբէք արդիւնս ինչ անտի. և յիրաւի՝ քան-
«զի համեմատութեամբ եկամտիցն որք ամի ամի զան ի գիւղից
«և ի սուացուածոց Էջմիածնի, և ի թեմից նորին առաւել
«քան 500,000 Ֆրանք լինին, իսկ արդիւնքն որ անտի՝ ոչ-
«ինչ. Թողից ասել և զառանձին եկամտից իւրաքանչիւր
«առաջնորդի, և իւրաքանչիւր եկեղեցւոյ, և ուխտաւո-
«ղեաց, յորոց արդիւնք չնչին ինչ են, քանի մի առօրեայ
«դպրոցք փոքրիկ մանկանց առաջնորդեալք ի տգէտ վար-
«ժապետաց։

«Միայնակ յոյս սոցա դարման տանել վնասուց այսոցիկ՝
«էր ինքնընտիր Կաթողիկոսն, այլ զժբաղդութեամբ ազգիս՝
«սկսաւ յոյսն այն սասանիլ, վրիպելով յակնկալութենէ-
«անտի. . . զոր երկար լիցի սուտ ծանուցանել, շատ լիցի
«յիշատակել առ տեղեաւս զանազանեալ և զլուելոն օծումն

„ Նորա, առանց պատարագելոյ ընդունել զխորհուրդն այն,
„ մինչդեռ մնայր ազգն մեր յամենայն տեղիս հրատարակե-
„ լոյ օծման նորին, և հանդիսիւ մեծաւ կատարելոյ այնորիկ,
„ ի միխիթարութիւն և ի խնդութիւն ժողովրդեան . . . .

. . . . . .

„ Շատ լիցի առաքել ձեզ զպատճէն թղթոյ հոգաբարձուաց
„ վարժարանիդ, և պատասխանւոյ զոր կամեցաւ նա առնել
„ նոցա ձեռամբ իմով, յորմէ կարէք գուշակել զակնկալու-
„ թիւն բարեացն որք ի նմանէ . . . . . .

. . . . . .

. . . . . .

. . . . . .

. . . . . .

„ Թէպէտ և վասն և դեղեցիկ ուղերձ ձեր առ Սրբազան
„ Կաթողիկոս յԷջմիածին, և հասեալ անդ ըստ ժամանակին,
„ ի 25 յուլիսի անցելոյն, այլ չյաջողեցաւ ընթերցումն նորին
„ սակս չյաջողելոյ օծման Կաթողիկոսին ի 26 նորին ամսոյ,
„ ըստ որոշեալ աւուրն։

„ Իցէ՛ թէ ըստ բանիցն որ ի նմին և արժանիք նորին . . .
„ աւանդ վրիպանացս . . . . . .

. . . . . .

„ Փոխադարձ ողջունիս սիրոյ առ ամենայն բարեկամս մեր
„ այդր,

„ Մնամ

„ Սիրելութեան ձերում

„ Ի Տփխիս. 1 սեպտ. 1859.

„ Հոգեկցորդ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ. „

Թուղթ Ամբրոսեայ վարդապետի առ Սարգիս վարդապետ ի Տփխիս, յորում ծանուցանէ զցաւալից վիճակ իւր յերեսաց Նեղութեանն որ ի պարտատերից վարժարանին, և զմօտալուտ փակումն նորին, ի նախատինս ազգին, այլովքն հանդերձ, օրինակ զայս.

« Գերապատիւ Հայր մեր և վարդապետ.

« Յայժմ մխիթար և խրախուսիչ թղթովքդ փոքր մի ոգի « առեալ սիրտիս ապ տանել վշտաց աղետի, և արդ և ինոցունց « կամք թափուր և ունայն։

« Մեկնելով ի Պոլսոյ Սրբազանին և Քեր, և եւս խանդարեալ « և յանյուսութեան կործանեալ են իրք վարժարանիս. զվա- « ղուց խոստացեալ և ի բազում նուագս առեալ զ4,000 ֆ. « Երամեան չընկալաք տակաւին և ընկալցուք իսկ ոչ, որպէս « երեկեան ցաւագին և յուսահատական գրովն ծանուցանէ « Պ. Ենշան, և որ չար եւան է, աղաչէ հնարել ամիս ինչ « յոսին ունել զազգային վարժարան առանց ինչ ակնկալու- « թեան արծաթոյ ի Պոլսոյ։

« Եւ արդ՝ զի՞ գործեցից Հայր. միթէ չիցէ՞ ինձ լաւ մեռա- « նել քան զայս կեանս իմ, շուրջ պատեալ ի պարտատերից, « որք լուանօք ապառնան բանտել զիս յառակ նշաւակի աշ- « խարհի։ Ահա հասանեն աւուրք արձակման և զիարդ « հատուցից զվարձս վարժապետաց յամսոց հետէ անվճար « երկայնամտելոց։ Հարկ եղեւ ինձ ի հատուցումն հապար « ֆրանքի պատուիրանագրի Աբրամայ, ի գրաւի դնել զժա- « մացոյցս երեցուն եղբարց, զիմ, զԹորենայ, և Անիկի, « հանդերձ պրոշիւն պարգեւելոյ առ ի Հօրէդ, և արդ և ոչ « ժամացոյց մի գոյ մեր ի գիտել զժամն և զժամանակ վշտաց « մերոց և աղետից։ Թերեւս ոչ հաւատայցէք, տակայն վկա- « յեն մուրհակքն զոր և տեսջիք ըստ ժամանակին. զի յորմէ « հետէ մեկնեցայք և անոք անօգնական թողէք զեղկելիքս,

“ Ֆրանքս հնգետասան հազար հատուցեալ եմ միայն Արամայ.
“ Թող զորս առ կազմարարն, և այլն, որով մերկ և կողոպուտ
“ մնացի յամենայնէ . . . և անժամացոյց իսկ ։

“ Ա՛հ, Հայր, անչուշտ անհաւատալի թուիցին Ձեզ բանք իմ,
“ սակայն ճշմարիտ են և աղէկէզ սրտի և մտաց արտադրու-
“ թիւնք . . . այսչափ մանկտուով, վարժապետօք, սպասաւորօք,
“ սատկապահանջ պարտատերերք և տանուտէրք ։

“ Ի Պօլսոյ չիք յոյս դրամոյ, զրէ Նշան. և ուստի՞ իցէ մեզ.
“ ամենեքին ի Սրբազան Հօրէն ակնկալոյց սպասեն օգնու-
“ թեան և կենդանութեան. փութայցէ՞ նա արդեօք ի փառա-
“ ւոր և յաւերժական յիշատակաց արժանի գործն. եթէ կա-
“ մէր, որպիսի՞ նպաստս մեծամեծս ոչ կարէր առնել հաւա-
“ քելով ողորմութիւն և տուրս զուարթառատս ի խուռներնթաց
“ հանդիսադիր բազմութենէ եկեղոց յօծումն իւր տուրբ ։

“ Ա՛հ, Հայր, զո՞ր ինչ յաղետիցս պատմեցից Ձեզ, զի ան-
“ թիւք են. ահա մայր իմ խօթ անկեալ յանկողնի զրէ ինձ
“ զառն զանգատանօք, զի Տատեանք յերից ամաց հետէ
“ զլանալով՝ նմա զշահն՝ ընդ ծանր պարտեօք անկեալ կայ,
“ և ոչ ոք ի բժշկաց յանձն առնու զարմանել խնամել զնա
“ անարծաթ ։ . . . . . .

. . . . . .

“ Ոչ եւս զօրեմ յերկարել ի բանս իմ Հայր ։ Ցաւագին
“ ողջոյն ի Խորենայ և յԱննիկէ ։

“ Փարիզ. 6 յուլիս 1859.

“ Վշտալից որդիդ

“ ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. ԳԱԼՖԱՅԵԱՆ. ”

Ի բանից իսկ թղթոյ իւրոյ և ի բանից թղթոյ Խորենայ ապա յայտնապէս տեսանի, զի նեղի նա ի Փարիզ ոչ այնչափ ի պարտատերաց վարժարանին որչափ յառանձին պարտատերաց իւրոց, որպէս և արդեամբք ցուցանի ապա, և ստուգիւն նորա յանդիմանի ։ . . .

Առեալ Սարգսի վարդապետի զվերոյիշեալ թուղթն ընթեռնու զայն ցաւագին արտիւ և արտասուալից աչօք, և առնէ զհնարաւորն, որպէս տեսանի ի պատասխանի նորին, որ ունի օրինակ զայս.

Սիրեցեալք և Անձկալիք իմ ի Քրիստոս.

„ Զցաւալից նամակ Ձեր, զգրեալն ի 14 յուլիսի անցելոյն,
„ ընկալայ յՁ ամսոյս, հանդերձ կրկին թղթովքն որ ի Պա-
„ րոն Ներսէն առ Ձեզ, զորս և ընթերցայ ոչ սակաւ ցաւօք
„ արտի, և զայն ի ժամանակին, յորում ի միոյ կողմանէ սա-
„ կաւիկ մի յուսադրեալ և քաջալերեալ էի՝ ողորմութեամբն
„ Աստուծոյ, և Ջանիւք բարեկամաց մերոց ասա, զորոց անու-
„ ուանս յիշատակեցից ի սմին երախտագէտ մտօք։

„ Ա՛հ, չգիտեմ ես, թէ զիարդ կարացից ծանուցանել ձեզ
„ զրով զթշուառ վիճակ ազգին մերոյ, և որպէս խելամուտ
„ արարից զձեզ դերեւ եւանելոյ մեր ի մխիթարութենէ անտի։
„ Ինձնայք արդեօք առ ո՛հ ային բանքս, և զորմէ է գանգատս։
„ Ի նախընթացն իմ ակնարկեալ եմ լուելեան, այլ ի սմին
„ բաւական, չյուսալ ձեր ի նմանէ բնաւ ինչ։ . . . .

„ Ի բանից թղթոյ խնամակալաց վարժարանիդ առ Կաթո-
„ ղիկոս յԷջմիածին, և մանաւանդ ի գործոյ անտի նոցա,
„ չանցուցանելով ձեզ արծաթ ըստ խոստման իւրեանց, այլ
„ և ի յայտնի բանից թղթոյ Ներսէին, անհրաժեշտ երեւի մա-
„ տակոյ փակիլ վարժարանիդ, որ ի նախատինս Պօլսեցի
„ ազգայնոցս . . . և եթէ չէ այն մեզ ի պատիւ, հաւատալով
„ միամտութեամբ բանից խոստման նոցա, սակայն արդարա-
„ նամբ մեք առաջի ամենայն մարդկան, իսպառ համբերու-
„ թեամբ և անտանելի նեղութեամբ մերով. և արդարացու՛ք
„ յապայն արժանեօք մերովք։ . . .

„ Ապա Ջանայարու՛ք հաստատեալ տալ նոցա զպարտս
„ վարժարանիդ ձեռամբ Գաղղիացի պարտաւորին, որք

“ գիտեն և կարող են պահանջել յանիրաւաց զիրաւունս իւ-
“ բեանց. և դուք ամիսիսեալ այդր ի քաղաքիդ պարապեալիք
“ ի գործ մատենադրութեան ձերոյ, հանդերձ խնամակալու-
“ թեամբ քանի մի թոշակաւոր մանկանց բարեկամաց մերոց,
“ մինչեւ հոգացայց ես առ օգնականութեամբն Աստուծոյ և
“ ջանիւք ճշմարիտ բարեկամաց մերոց զկարեւոր պէտս հաս-
“ տատութեան և աշխատասիրութեան ձերոյ այդր, զոր և
“ ակայ այսօր ողորմութեամբն Աստուծոյ. քանզի առեալ
“ զցաւալից նամակ ձեր ընթերցայ զայն ցաւագին սրտիւ
“ յականջս Սարգիս եպիսկոպոսին միայնակ ճանաչողի ի մէջ
“ համօրէն առաջնորդաց յաղգի մերում յայսոսիկ կողմանս
“ զյարդ գիտութեան և պիտանութեան մերոյ այդր, վասն
“ որոյ և կարեկից բարեկամի մերոյ։

“ Ի նմին աւուր ընդ երեկս եկն առ մեզ Պարոն Ռոմանոս
“ Նատիրեան, երբեմն բժիշկ տէրութեանս, և այժմ վաճա-
“ ռական ի քաղաքիս, զոր և ճանաչէք իսկ, երթեւեկելով
“ նորա այդր բազում անգամ, և ականատես գոլով ազետից
“ մերոց որ ի 1855 ամի, այր ազգասէր յոյժ, և կարեկից և
“ կարեւոր բարեկամ մեր։ Ընթերցայ եանոյնպէս և յականջս
“ նորա զցաւալից թուղթ ձեր, արդահատեցաւ և ցաւեցաւ
“ նա այնչափ մինչեւ որոշեաց անդէն հասանել ձեզ յօգնու-
“ թիւն, առաքել պատուիրանագիր մի հինգ հազար ֆրան-
“ քաց ի վերայ գործակալի իւրոյ այդր, զոր ծրարեմ ի թըղ-
“ թիս, և զոր յանդիման արարեալ ձեր նմա ընկալիք զար-
“ ծաթն, բայց այսու պայմանաւ զիտասիք քաջ, իբրեւ
“ զման ինչ բարերարութեանցն ազգայնոցս առ ի կարեւոր
“ պէտս մեր առանձին, և յօժանդակութիւն ծախուց տը-
“ պագրեալ և տպելի մատենից մերոց, և ոչ բնաւ ի հա-
“ տուցումն պարտուց վարժարանիդ, զոր պարտին հա-
“ տուցանել Պօլսեցի ազգայինքս. զի վասն որոյ նոցա
“ արարեալ են պարտքն այնք, և առ նոսա մնան տակաւին
“ չհատուցեալ թոշակք իբրեւ 50,000 ֆրանք. ապա պարտ
“ է ձեզ ընդունել զարծաթս զայս, և ի կիր առնուլ ըստ վի-
“ ճակեալ պայմանին։

«Եւ ես այսու և այլ ինչ պայմանաւ որ ի պէտս բարեաց
«հասարակաց ազգիս, հոգացայց յազգայնոյս ասել արծաթ,
«որչափ ինչ յաջողեացէ ինձ Տէր, և մինչեւ յԵրբ, և ապա
«ելից ի ճանապարհ անցանել ի Թէոդոսիա, և անտի ի Պօ-
«լիս արդեօք, և անտի առ ձեզ այդր ի Փարիզ, եթէ տացէ
«ինձ Տէր կենդանութիւն։... Այսչափ ինչ ի ժամուս ի կա-
«բեւոր մխիթարութիւն սրտի ձերոյ շնո՛ւ լիցի։

«Առաքեցիս զցաւալիս նամակ ձեր զայս առ Սրբազան
«Կաթողիկոսն յԷջմիածին, յընթերցումն և ի տեղեկութիւն
«միճակի ձերոյ և հանգամանաց վարժարանիդ այդր, և տե-
«սից զազդեցութիւն սրտի նորա, և զարդիւնսն որ անտի,
«արգահատիցի՞ և նա, ցաւիցի՞ արդեօք իբրեւ զս, զոր
«վերագոյն յիշատակեցի. ոչ կարծեմ ես... ընթեռնլով իմ
«յանկնչս նորա և զայլ ամենայն ցաւալիս թուղթս ձեր առ
«իս ի Պոլիս, և խելամուտ առնելով զնա օգտին հասարակաց
«ազգիս որ ի վարժարանէդ, և զպատիւ իւր և զփառսն յա-
«ւիտենական որ այսր... միով բանիւ զոլով և նորա ի Պոլսե-
«ցի ազգայնոցս անտի, որք մեծամեծս խոստանան և ոչինչ
«կատարեն։...

«— Եթէ կամէր, ասէք, որպիսի՞ նպատաս մեծամեծս ոչ
«կարէր առնել հաւաքելով ողորմութիւն և տուրս զուար-
«թառատս ի խուռներնթաց հանդիսադիր բազմութենէ եկեղց
«յօժումն իւր տուրր։»

«Եւ ես ասեմ, թէ առաւել և դիւրաւ ես քան զկարծե-
«ցեալդ կարէր նա առնել, յորժամ եմուտ ի քաղաքս Տփխիս,
«և ոմանայիւ ընկալեալ եղեւ ի ժողովրդենէն։ Եթէ առա-
«ջարկեալ էր նա ինչ յայնժամ, ի քանի մի եւեթ երեւելի
«անձանց սասի, ապաքէն գտանէր ի միում աւուր 50,000 ֆր-
«ըստ վկայելոյ փորձ արանց. ապայն անեղծեալ եղեւ նա զայն-
«մանէ անհոգութեամբ իւրով, և կորոյս զպատուհութիւնն
«զայն, և զպատիւն միանգամայն։...

«Թողից ասել և զայլ պատճառս անեղծութեան նորա,
«որ զայն և զայլ պատուիր. քանզի դիզեալէր նա ի զանազան
«կարծեաց ոմանց, զորոց նպատակ ծանուցից ապա։...

„ Անքեմ զթուղթս վերսին աւաղելով զդերեւումն մեր
„ ի յուսոյ որ անտի, և զդժբաղդութիւն տառապելոյ ազգիս
„ որ յամենայն տեղիս։ . . .
„ Ողջունեալ զամենայն բարեկամս մեր այդր։

„ Մնամ

„ Անձկալեացդ

„ Ի Տփխիս. 11 սեպտ. 1859.

„ Հոգեկցորդ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՐԻՄԵԱՆ. "

Թուղթ Սարգսի վարդապետի առ Ս. Կաթողիկոս յէջմիածին, յորում յիշեցուցանէ նմա զնամակն Հոգաբարձուաց վարժարանին ի Փարիզ և զնպատակ և զաղդարարութիւն նոցա, և ծանուցանէ զմօտակայ փակիլ վարժարանին և զանձկութիւն Ամիրոսեայ վարդապետի զորոյ նամակն առաքէ նմա յընթեռնուլ, և խնդրէ ի նմանէ խորհուրդ ընդ այն, օրինակ զայս.

„ Վեհափառ և Սրբազան Տէր.

„ Աւուրքք ինչ յառաջ ասի առաքեաց առ իս Սրբութիւն
„ Ձեր զպատճէն նամակին Հոգաբարձուաց Հայկազեան վար-
„ ժարանին ի Փարիզ, որով ազդ առնէին նոքա անտի զմօտա-
„ կայ փակիլ դրան վարժարանին, սակս պակասութեան
„ արծաթոյ ի կարեւոր ծախս նորին, և պատուիրեաց ինձ
„ Վեհափառ Տէրութիւնդ առնել պատասխանի նամակի նո-
„ ցին ըստ պատշաճի. արարի ես զայն ըստ հրամանի Ձերոյ։
„ Յայտնիկ աւուրս ընկալայ ես ասա նամականի ի Փարիզէ,
„ և ի Ղօլայ, որովք ազդ առնեն զանհրաժեշտ փակիլ դրան
„ վարժարանին, սակս պակասութեան արծաթոյ, հանդերձ
„ ապառնալիօք բանի որ ի սակապահանջ պարտատերոց

„ անտի առ Ամբրոսիոս վարդապետ մեր անդ, զորոյ ոչ
„ զպատճէն նամակին, այլ զբուն բնագիր նորին առաքեմ
„ առ Վեհդ խոնարհութեամբ յընթերցումն և ի թելադրու-
„ թիւն ինձ, թէ զինչ պարտիմ ես առնել նմին պատասխանի։
„ Վասն որոյ աղաչեմ զՍրբութիւնդ ծանուցանել ինձ զայն
„ փութով, և

„ Մնամ միշտ

„ Վեհափառ Տէրութեանդ Ձերում

„ Ի Տփխիս. 12 սեպտ. 1859.

„ Ամենախոնարհ ծառայ

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՒՐԵԱՆ. „

Պատասխանի Ս. Կաթողիկոսին տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի և այն ի կոնդակ, որ ունի օրինակ զայս.

„ Մատթէոս ծառայ Քրիստոսի և անհատանելի կամաքն
„ Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս ամենայն Հա-
„ յոց, ծայրագոյն Պատրիարք համազգական Նախամեծար
„ Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր եկեղեցւոյ
„ Կաթուղիկէ Էջմիածնի. Բաղմաշխատ Սարգիս վարդապետի
„ թէոդորեան հարազատի Սրբոյ Առաքելական Եկեղեցւոյ
„ Հայոց յորդորեալ ջերմեռանդութեամբ սիրոյ մերոյ մատու-
„ ցանեմ ողջոյն Քրիստոսաւանդ հանդերձ խնդրուածովք
„ ամենազուարթ մարդասիրութեանց նորա առ Գերապատիւ
„ անձն Ձեր։

„ Գրութիւն Վերապատուելութեան Ձեր տուղեալն ի 12
„ այսր սեպտեմբերի եհաս առ մեզ ի 27 սոյն ամսոյս, այլ
„ յընթեռնուլ իմ զայն, վշտացաւ անձն իմ, նա մանաւանդ
„ զնամակն Ամբրոսիոս վարդապետի յանուն ձեր, յաղագս

“ շարաչար նեղասկրութեանց նորա ի պարտապահանջից
“ սակս արարեալ ծախուց ի կառավարութիւն Հայկազնեայ
“ վարժարանի Փարիզու, առաւել յայնմ վշտանամբ, զի
“ ի սկզբանէ առանց մեծահանճար տնօրէնութեան և նա-
“ խատեսութեան միեցան անխոհեմ բերմամբ, որք վեր-
“ ցանեն, ի ձեռնարկել ի գործս սակս ազգային լուսաւո-
“ րութեան, որոյ վասն հարկ ի վերայ կայր անխուսափելի
“ նախահոգ պատրաստութիւն յաղագս ի ձեռս բերելոյ ազ-
“ բիւր արդեանց դրամոյ կամ ի կարգաւորել սահմանա-
“ ւոր կամաւորական նուիրանաց և կամ յարդեանց յան-
“ շարժ եկեղեցական կալուածոց. այլ անկշռադատ ձեռնար-
“ կութեան զդառն պտուղ այնորիկ քաղել քաղեմք, որոմք
“ և վշտանամք աղետալի ցաւոք և այժմ ամօթապարտ առաջի
“ լուսաւորեալ ազգաց Եւրոպեան, ուստի ի դարման այսոցիկ
“ առաջադրեմ Ձեզ, հանճարաւոր խորհրդածութեամբ ընդ-
“ ամենակալ Առաջնորդին Վրաստանի Բարձր Սրբազան
“ Սարգսի Արքեպիսկոպոսի և ընդ ազգասէր իշխանաց տեղ-
“ ւոյդ, եթէ բարւոք դատեցի, կարգադրել վասն յորդորելոյ
“ օրհնեալ Ջերմեռանդ ժողովրդականաց Հայոց եղելոց այդր
“ ի Վրաստան, զի յօժարեցին կամաւոր նուիրանաց դրա-
“ մոց ի նպաստաւորութիւն յաղագս վերատառեալ հարկա-
“ ւորութեան ի լուսաւորութիւն Հայկազնեայս մանկանց
“ աշակերտելոց ի վարժարանին Փարիզու, և զկնի ժողովման
“ դրամոց առաքել փութով ի Փարիզ առ Ամբրոսիոս վարդա-
“ պետն, և զցուցակ որքանութեան ժողովեալ դրամոց առաջի
“ առնել մեզ ընդ յայտարարական գրութեան Ձերոյ։

“ Բայց որպէս ի գրութենէ Ամբրոսիոս վարդապետի ակն-
“ յանդիման տեսանի, թէ, եթէ ոչ փոյթ ընդ փոյթ և ոչ
“ անագան և յոյժ, վարժարանն այն ունի խափանիլ, և ըստ
“ կշռադատութեան մերում, շյուսամք այլ եւս թէ՝ հիմնա-
“ ւոր եղանակաւ շարունակեսցի կառավարութիւն այնր ա-
“ ռանց նախահոգ սահմանադրութեան կանոնաւոր եկամտից,
“ և առ ի ազատ կացուցանելոյ զԱմբրոսիոս վարդապետն
“ յապագայ ծանր դուշակեալ նեղասկրութեանց, զկնի վը-

“ ճարման պարտուց եկեցէ նա այսր առ մեզ Գ. եղբարբ
“ հանդերձ և մեք նախախնամութեամբն վերին տեսչութեան
“ տնօրինեացուք զարժանն վասն նորա այլոլքն հանդերձ և
“ Դուք զայսմանէ ծանուցէք վիճակաւորին նոր Նախիջեւա-
“ նի և Բնաբարբիոյ Գերապատիւ Գաբրիէլ վարդապետի
“ Այլապէսանց, եթէ բարւոք դատեցի նա ծանուցէ իդիմաց
“ իւրոց առ Ամբրոսիոս վարդապետն. ապա թէ ոչ՝ այս
“ գրութիւն անհիմն է և անհաստատուն և ընդ այսմ զվե-
“ րոյիշեալ նամակն Ամբրոսիոս վարդապետի զառաքեալն առ
“ մեզ վերադարձուցանեմք։

“ Աղէ լերուք և մեք եմք և մնամք վասն Ձեր օրհնութան

“ ՄԱՏԹԷՈՍ

“ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

“ Ի 18 սեպտ. 1859 ամի
“ Ի Սուրբ Էջմիածին։

—

“ Համար 158. ”

Ահա պատասխանին Սրբազան Կաթողիկոսին տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի և ահա խորհուրդ և առաջարկ նորա յօժանդակութիւն Փարիզեան վարժարանին։

Միաբանիցին այս բանք նորա ընդ բանիցն ոչք երբեմն ի Պոլիս։ . . .

ԳԼՈՒԽ ԺԶ.

*Պատասխանի Գաբրիել վարդապետի. — Նշանաւոր բանք
ի նմին, և բնութիւն ընդ այն. — Յայտարարութիւն հան-
գանակութեան յօժանդակութիւն վարդապետաց ի Փարիզ. —
Թուղթ Սարգսի վարդապետի առ Գաբրիել վարդապետ որ
զյայտարարութենէն հանգանակութեան. — Պատասխանի
Գաբրիել վարդապետի, և ցուցակցութիւն ընդ վիճակ Ամբրո-
սեայ վարդապետի. — Պատասխանի Սարգսի վարդապետի,
գանգատ և մեղադրութիւն. — Թուղթ Սարգիս վարդապետի
առ Ամբրոսիոս և Յովրէն վարդապետս որ զյղեալ արծաթոյ
յօժանդակութիւն նոցա, և գանգատ զգնացից Կաթողիկոսին
և Գաբրիել վարդապետի.*

*Պատասխանի Գաբրիէլ վարդապետի տուեալ թղթոյ Սարգ-
սի վարդապետի, յորում ծանուցանէ զհրաւէր իւր առ Յովրէն
վարդապետ և զմիշտ իւր ընդ լուր յանկարծ օծման Կաթողի-
կոսին, օրինակ զայս.*

“ Գերապատիւ և Սիրելեալ Հայր.

*“ Ընկալայ զշնորհեալդ ի 24 օգոստոսի, և խելամուտ եղէ
“ ամենայն գրելոցն ի նմին, յորս բաց յառողջութենէ պատ-
“ ուական անձինն ձերոյ չգտի ինչ միխիթարութեան արժա-
“ նաւոր։ Միայն խոստմունք Տփխիսեցեացն ազգասիրաց և
“ Սրբազան Առաջնորդի նոցա ափոփեն փոքր ի շատէ զիս,
“ որպէս և զՁեզ անշուշտ. տեսցուք ո՞րպէս յաջողեսցէ Տէր
“ և զխոստմանցն այնոցիկ զկատարումն։*

„ Ի Փարիզէ ոչ ունիմ զկիր յերից եօթնեկաց հետէ. բայց
„ յերէկն գրեցի դարձեալ զի գէթ Խորէն եկեսցէ այսր վասն
„ ամսօրեայ ժամանակի, և խորհեսցուք ի միասին, թէ զինչ
„ յօգտակարացն կարողացուք առնել ի լուսաւորութիւն
„ անօգնական ազգիս։

„ Օծումն Սրբազանին այնպիսի եղանակաւ ոչ այնչափ
„ զարմացոյց զմեզ, որչափ վշտացոյց. Տեառն կամք և յայսմ
„ օրհնեալ եղիցին։ Ահա սովին թղթատարաւ գրեցի և ես
„ առ նա զկիր շնորհաւորութեան, և առաքեցի զքերթուածն
„ զոր ընդ իս բերեալ էի, և ոչ յէջմիածին թողեալ։

„ Խալիպեան իշխանն եկն այսր, և մեծապէս փափաքէ զի
„ մերքն որ ի Փարիզ, յորժամ զերծցին ի հոգոց վարժարա-
„ նին այնորիկ՝ այսր եկեսցեն։

„ Ողջ լինել մաղթեմ

„ Գերապատիւ Հօրդ

„ Թէոդոսիա. 20 սեպտ. 1859.

„ Անձնանուէր

„ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ. „

Ահա կամք և ցանկութիւն Գաբրիէլ վարդապետի յայտնապէս տեսանի ի բանից թղթոյն նորին, ժողովել առ ինքն զԳալֆայեանս, զԱմբրոսիոս և զԽորէն, օգնական իւր ի Թէոդոսիա. ապա մեայ ժամ մի յառաջ փակելոյ դրանն Հայկազեան վարժարանին ի Փարիզ։...

Հզօրագոյն է անձնասիրութիւն քան զամենայն իրաւունս հասարակաց։

Որպէս վերագոյն յիշատակեցաք, թէ Սարգիս եպիսկոպոս Զալալեան հրաւիրէ յառաջնորդարանն զքանի մի ոմանս

ի գլխաւոր աղգայնոցս անտի և ծանուցանէ նոցա զկարօտութիւն օժանդակութեան վարժարանին ի Փարիզ և վարդապետացն անդ, և այլն, և այլն. զնոյն առնէ նա և տպա, իբրեւ ընդունի Սարգիս վարդապետ զվերոյիշեալ պատասխանին թղթոյ իւրոյ ի Ս. Կաթողիկոսէն, և զյանձնարարութիւնն որ առ նա, յորդորել զազգայինսն. և իբրեւ գտանին նոքա ամենեքեան ի Տփխիս, առնէ նա յայտարարութիւն մի և դնէ զայն ի ի ճակատ տետրակի հանդանակութեան, որ ունի օրինակ զայս.

Յայտարարութիւն.

„ Ըստ ցանկութեան սրտի և յանձնարարական կոնդակի
„ Տեառն Մատթէոսի Սրբազան Կաթողիկոսի, խնդրեմ ի բա-
„ րեպաշտ և յԱզգասէր Հայկազեան ժողովրդոց որ ի Տփխիս
„ քաղաքի, կամաւոր ինչ նուէր արծաթոյ յօժանդակութիւն
„ զրաւոր աշխատութեանց երից վարդապետաց, Սարգսի
„ Թէոդորեան, Ամիրասխոսի և Խորենայ Գալֆայեան, վերա-
„ դարձելոց ի ծոց Հայաստանեաց առաքելական Եկեղեցւոյ, վասն
„ ծախուց տպագրեալ և տպագրելի գանազան և կարեւոր
„ մատենից ի պէտս ուսման մանկանց դպրոցաց, և ի պաշտ-
„ պանութիւն ուղղափառ եկեղեցւոյս, և ի լուսաւորութիւն
„ ազգիս առհասարակ։

„ Ի Տփխիս. 25 սեպտ. 1859.

„ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐԳԻՍ ՋԱԼԱԼԵԱՆ. „

Յետ երից աւուր վերոյիշեալ յայտարարութեան գնայ Պարոն Պօղոս Զիլոֆխանեան Ազամալեանց առ Սարգիս վարդապետ Թէոդորեան, և յետ խօսակցութեան ընդ նմա զիրաց կարեւորաց որ զառաջադիմութենէ ազգիս ի գիտութիւն, և

իմանալոյ զյայտարարութենէն այնորիկ, թնդրէ ի նմանէ ըզ-
տեսրակն հանգանակութեան և առաքրէ անդ զանուն իւր
այսպէս. « Ներքին Ադուլեցի Պօղոս մահտեսի Ջիլոմխանեան
« Ազամալեանցն նուիրեցի մէկ հազար մանէթ արծաթ դրամ
« 1,000. ի 28 սեպտ. 1859 ամի ի Թիֆլիզ։ » Եւ խոստանայ
հատուցանել զայն յետ քանի մի աւուրց, զոր և հատուցանէ ըստ
խոստման իւրում։ Յայնժամ յանդիման առնէ զնա Սարգիս
վարդապետ Առաջնորդին Սարգսի Արքեպիսկոպոսին, որ
օրհնէ և գովէ զնա յոյժ. նոյնպէս և Պարոն Ռ. Նաստրեան
որ անդ դտանի ի ժամուն, և որ վկայէ թէ առաւել քան զկար
իւր օժանդակէր երիտասարդն այն ազգասէր, վասն որոյ և
արժանի օրհնութեան և գովութեան։

Եւ յորժամ մեկնի նա ի Տփխիսէ դառնալ յԱդուլիս, զնայ
Սարգիս վարդապետ յօթեւան նորա և յուղարկէ զնա ազո-
թիւք և օրհնութեամբ, հանդերձ յիշատակօք քանի մի մա-
տենիւք, ընդ որ յոյժ ուրախ լինի նա, և խոստանայ դնալ
յորդորել և զայլ ոմանս ի քաղաքակցաց իւրոց օժանդակել
նմա և ընկերաց նորա ի Փարիզ։

Զազգասիրութիւն և զբարերարութիւն երիտասարդին այ-
նորիկ ոչ մոռանայ Սարգիս վարդապետ և յիշէ զայն առաջի
բազմաց և բազում անգամ, և հատատէ ի մոլ յիշատակել
զայն ի պատմութեան իւրում, որպէս և տեսանի ի սմին.
թէպէտ և ի նուիրէ անտի նորին ինքն ոչինչ վայելէ, այլ
ընկերք իւր միայն, սակայն նա շնորհապարտ զինքն ճանաչէ
շնորհակալու մտօք, քանզի ի բանից իւրոց շարժեալ նորա
արար զայն նուէր։

Իսկ զինչ և քանի արդեօք պարտ էր Սարգսի վարդապե-
տի շնորհապարտ և շնորհակալու լինել ճշմարիտ ազգասիրի և
առատամիտ առն Պարոն Ռոմանոս Նաստրեանի, որ ինքնա-
յորդոր և առաջին լինի օժանդակ նմա, նախ քան զյայտա-
բարութիւն հանգանակութեան, առաքէ ի Փարիզ օժանդա-
կութիւն ընկերաց նորա 1,300 արծաթ մանէթ, հանդերձ
խնամեալ մտօք և արդեամբք առ նա միշտ անդ ի Տփխիս և
յամենայն տեղիս, մտքիթանօք և ազերամանօք ազատել զԱստուած

յամենայն կեանս իւր հատուցանել նմա տրխտուր, և աշխատասիրել իւրովանն գյիշատակ բարեաց նորա պահել յաւիտեան . . . .

Թուղթ Սարգսի վարդապետի առ Գաբրիէլ վարդապետ, յորում ծանուցանէ զհանգամանս գործոյ իւրոյ ի Տփխիս, թղթակցութեամբ ընդ Կաթողիկոսին, և յայտարարութեամբ առ ազգայինս անդ, օրինակ զայս.

„ Գերապատիւ Հայր և սիրելեալ եղբայր.

„ Որպէս ի նախընթացն իմ ծանուցի Ձեզ թէ զցաւալից
„ թուղթն որ ի մերոյն անտի առաքեցի առ Ս. Կաթողիկոսն
„ յէջմիածին յընթեռնուլ նորա զայն և տալ ինձ խորհուրդ թէ
„ զինչ պարտ էի եւ առնել այնմ յայն վիճակ նոցա ցաւալից.
„ ահա եւ ինձ նոյ զկարծեցեալ խոհական և կարեւոր խոր-
„ հուրդ իւր կոնդակաւ, զորոյ պատճէն առաքեմ ձեզ ընդ
„ սմին, ի կատարել զյանձնարարութիւն նորա . . .

„ Խնդիրն իմ ատ թէպէտ ծանուցեալ էր մասնաւորաց
„ ոմանց, այլ ոչ հասարակաց, ծանուցաւ և նոցա յանցեալ
„ եօթնեկի, հանդերձ յայտարարութեամբ ի դիմաց Առաջ-
„ նորդի թեմիս, և եղեալ այն ի ճակատ տետրակի միոյ
„ ի ատրագրել անդ նուիրատուաց. ապա հարկ է ինձ ան-
„ ցուցանել ատ զառաջիկայ ձմեռն.

„ Մնամ

„ Սիրելութեանդ

„ Ի Տփխիս. 29 սեպտ. 1859.

„ Հոգեկցորդ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՂՈՐԵԱՆ. „

Պատասխանի Գաբրիէլ վարդապետի տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի, յորում ծանուցանէ զցաւալից վիճակ Ամբրոսեայ վարդապետի և զհրաւէր իւր առ նա, օրինակ զայս.

“ Գերապատիւ Հայր ցանկալի.

“ Ընկալայ յեռանդն զշնորհեալդ ի 14 ամսոյս, և փոքր
“ ի շատէ մխիթարեցայ ի լուր քաջողջութեան ձերոյ և իրա-
“ ւացի յուսոյդ գտանելոյ այդր նպաստ բաւական ի հա-
“ տուցումն պարտուց վարժարանին։ Իցէ՞ թէ փութով
“ հաւաքէր գումարն և դուք այսր գայլք ձմերել։ — Ի Փա-
“ րիզէ յերեկն ընկալայ գիր գրեալ ի 11 ամսոյս, յորում
“ դարձեալ անհնարին դանգատանք իրաւացիք զչքաւորու-
“ թենէ արծաթոյ։

“ Այլ որ չարագոյնն է լսա իս և զժուարին յոյժ ի դար-
“ մանել՝ այն է, զի եղկելի երիտասարդն այն սկսեալ է
“ արիւն թքանել, որպէս և յայտ է ի վկայութենէ բժշկին
“ զոր յղեալ է առ իս։ Ես դարձեալ գրեմ առ նա զի թողցէ
“ լքցէ զամենայն և փութացի ի չու այսր կամ ի Պօլիս և
“ կամ այլուր ի մուտանալ փոքր մի զվիշտն. այլ չգիտեմ թէ
“ լուիցէ ինձ։ — Շնորհ ունիմ զի լուեալ են մեղադրանացն
“ զոր արարի վասն նորոյ օրագրին, և ոչ եւս խորհին հրա-
“ տարակել զայն։

“ Յաւալի և զարմանալի են յուրքն որք լին յԷջմիածնէ
“ հետ զհետէ. չգիտեմ յինչ երթեալ յանգեցի այս ողորմ
“ պայման մերոյ եկեղեցւոյս, եթէ չլինիցի կարգաւորութիւն
“ ինչ, և գործունեայ փոյթ ի դարման մերոցս ազգիս։ . . .

“ Եթէ գումարիցի եւս այդր արծաթ բաւական, ի հարկէ
“ տահմանեալքդ զայն ի հատուցումն պարտուց վարժարանին
“ և ի տպագրութիւն մատենից, և ոչ թէ ի յառաջ վարել
“ զվարժարանն. ապա թէ ոչ՝ հաւատոյ խնդիր է՝ զի և այդ
“ արծաթ ծախեցի յառօրեայ պէտս, և յետ այնորիկ վար-
“ ժարանն զարձեալ փակեցի և պարտքն ծանրացին։

“ Խնդրեմ ի Գեր. Հօրէդ ըստ այսմ տալ և ի ձէնջ կողմ-
“ մանէ տեղեկութիւն առ մերսն, և ապա պատուիրել եւս՝ թէ
“ կամիցիք, զի յառաջ քան զձմեռն վերադառնա ի բաց արձա-
“ կեսցեն զմանկտին և ոգի առցեն։

“ Ահա վստանգաւորն խօթութիւն։ Ամբոխայ վախճան
“ առնէ ինքնին ամենայնի։ . . .

“ Իցէ թէ անապարէր նա յօդափոխութիւն։

“ Ողջ լինել մաղթեմ

“ Գերապատիւ Հօրդ

“ Թէոդոսիա. 29 սեպտ. 1859.

“ Անձնանուէր եղբայր

“ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ. ”

Ահա ի բանից այսր թղթոյ յայտնապէս տեսանին կամք և ցանկութիւն Գաբրիէլ վարդապետի փակիլ ժամ մի յառաջ վարժարանին ի Փարիզ, և ժողովիլ փութով վարդապետացն անտի առ ինքն ի Թէոդոսիա։ Թէպէտ և ունէր Սարգիս վարդապետ առնել առ այս զարժան պատասխանին, ցուցանելով նմա զպատճառ պարտուց վարժարանին, նախ զտնտեսութիւն նորա ի Փարիզ, և ապա զանխուսափելութիւն նորա ի Պօլիս, այլ և զհակառակութիւն բանից և գործոց նորա յայն, լքուցանելով զյոյս ազգայնոցս ի Տփխիս ընդ հաստատութիւն վարժարանին ի Փարիզ, և չօժանդակելով նմին ինչ, և ոչ եղբարց իւրոց անդ, որոց մին իւվշտաց անտի իսօրացեալ արիւն թքեալ, ըստ ծանօթութեան և դրութեան իւրում . . . ոակայն համբերէ նա տակաւին, և թողու զայն յայլում պատեհի։

Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ թղթոյ Գաբրիէլ վարդապետի, յոր յիշատակէ զՀանս իւր որ ի դարման

չքաւորութեան արծաթոյ Հ. Ամբրոսեայ, ծանուցանէ զվիճակ իւր, և ազդ առնէ նմա զսխալանս նորա, յօժանդակութիւն վարժարանին, հայեցեալ ի գնացս Կաթողիկոսին, և տայ նմա ինչ ինչ տեղեկութիւն, օրինակ զայս.

« Գերապատիւ Հայր, և Սիրեցեալ Եղբայր.

« Ընկալայ երէկ զցանկալի գրեալդ, որ ի 29 անցելոյն, և « խնդացի ընդ լուր ողջութեան Ձերոյ, այլ տրտմեցայ ընդ « լուր խօթութեան Հ. Ամբրոսիոսի մերոյ.

« Ահ, չգիտեմ թէ զինչ այլ դարման կարեմ ես տանել « չքաւորութեան արծաթոյ որ ի պէտս նորա, և զինչ այլ « բանս միխիթարութեան և քաջալերութեան պարտիմ տալ « նմա ի գործ անդ, քան զառաքեալսն և զառեալսն որ ի 11 « անցելոյն և ի 5 ամսոյս, որովք յուսայի ես և յուսամ « տակաւին թէ միխիթարեալ և քաջալերեալ եցէ նա տակաւիկ « մի. ապա թէ ոչ՝ պարտ է ինձ չարչարիլ ամենայն ուրեք « և չգտանել ուստք ինչ միխիթարութիւն, որպէս և տեսանի « մինչեւ ցայսօր ժամանակի, և որպէս վկայի յարդեանց « անտի. այլ միայ ինձ միխիթարութիւն արտի՝ վկայութիւն « մատցս միայն, թէ կատարեցի ես զպարտսն իմ յամենայնի. « ապա թողում ես այսուհետեւ խնամոց Տեառն և այցելու- « թեան նորին զհոգս կարօտելոց ազգիս.

« Ընթերցեալ եցէք ցաբդ զերկոսին կոնդակս Ս. Կաթո- « ղիկոսին որք առ իս սուտ, և խնացեալ զմիտս բանից նորին, « որով ոչ միայն հատանէ նա խոպառ զսիկնկալութիւն իմ « յինքենէ, հայեցեալ յօժանդակութիւն վարժարանիս, այլ « և զպատճառն ձեռնթափ լինելոյ իւր անտի, երկիրդալի ազ- « դարարութեան ձերոյ տայ նա զայն, հայեցեալ ի դժկամա- « կութիւն տերութեանդ . . . և զայս կարծեցեալ արդարու- « ցուցումն անձին՝ այլոց եւս ասէ բանիւք և գրութեամբ, « որով և ոչ տակաւ վնաս ուրար նա յաջողութեան գործոյս « սուտ, բան վկայելոյ բազմաց, և եւ տեղի անարդ կարծեաց,

“ որպէս թէնախանձելով ձեր ընդ հաստատութիւն վարժարա-
“ նին Փարիզ՝ արարեալ էք նմա զայն երկիւղալի ազդարա-
“ բութիւն ։ . . . Թէպէտ և ցրեցի և ցրեմ ես միշտ ի մոռաց
“ նոցա զայս անարդ կարծիս իւրեանց, սակայն յամառեալ
“ են ոմանք յայն, դատելով զամենայն ինչ ըստ աշխարհի
“ սովորութեան ։

“ Երանի՛ թէ չազդէիք դուք ինչ բնաւ արդէն դեղեալ
“ մոռաց նորա, որ պատճառ ինչ խնդրէր ազատիլ ի հոգոց
“ անտի, որպէս և յայլ ամենայն կարեւոր հոգոց զանազան
“ պատճառանօք, թէպէտ և չազատի յիրաւիցի ուղղանաց
“ հաստատակաց ։ . . . Թողից յիշեցուցանել ձեզ զծանր ծանր
“ մեղադրանս նորա, որ ընդ կարծեցեալ անխոհեմ ձեռնարկ
“ մեր յայն ի ծառայութիւն ազգիս, մոռացեալ խոպառ
“ զերբեմն վկայութիւն իւր առաջի բազմաց և զբանս դոյնու-
“ թեան իւրոյ որ ընդ ազգասիրութիւն մեր յայն հանդերձ
“ տուժիւք և հալածանօք. և թողից յիշատակել ասա զամե-
“ նայն բանս խոստման նորա որ ընդ պաշտպանութիւն վար-
“ ժարանիս, այսչափ միայն յիշատակեցից անտի, զհրապա-
“ տակաւ խօսեցեալ նորա իբրեւ զպատուէր Հայրապետական
“ առ ազգս Հայոց որ ի Պոլիս, թէ

“ — Որ ոչ օժանդակեսցէ հանդանակութեամբ Փարիզեան
“ վարժարանին, ինքն ոչ ճանաչէ զնա որդի Լուսաւորչին,
“ քանզի վարժարանն այն, անպիտան տուն է Էջմիածնի,
“ և մատուռն որ ինքին յանուն սրբոյ Գրիգորի Լուսաւորչին
“ կոչեցի ։ ,, Եւ իբրեւ ոչ ըստ ակնկալութեան իւրում
“ օժանդակեցին նմին Պոլսեցիք, յայնժամ ասաց նա զու
“ ի լու ամենեցուն, թէ “ Զիք ի սոցանէ ակնկալութիւն ըստ
“ ցանկութեան իւրում, այլ յորժամ գնասցէ ինքն Էջմիա-
“ ծին յաթոռ իւր, օժանդակեսցէ անտի վարժարանին ի սեպ-
“ հական թոշակէ իւրմէ ։ ,, Եւ հաստատութիւն բանիս, ահա
“ քեզ վկայութիւն ի հակառակորդէն ձերմէ, որ ի Հիւսի-
“ սափայլ օրագրին, և որ ունի այսպէս.

“ — Զայներ կան, թէ ազգը Կոստանդնուպօլսի մէջ կամի
“ շուտով բարեւքել Փարիզու մեր ազգային դպրոցի վիճակը,

“ և թէ Վեհապատուելիագոյն Հայրապետ – Մեծ քահանայ
“ Մատթէոս , Պոլսոյ եպանելու ժամանակ , երդմամբ չափ
“ պատուէր է տուեալ ազգին՝ անօգական չթողուլ դպրոցը ,
“ մինչեւ ինքն կարողանայ օգնութիւն հասուցանել Էջմիած-
“ նից ։ Եւ ահա Փարիզի Հայկական դպրոցը կապվեցաւ Էջ-
“ միածնի աթոռի հետ ։ ”

“ Այո՝ յելանել Կաթողիկոսին ի Պոլսոյ դրեաց շրջաբերա-
“ կան կոնդակ մի առ համօրէն ազգն Հայոց որ ի Տաճկաստան
“ օժանդակել դպրոցիս որ ի Փարիզ ։

“ Իսկ օժանդակութիւնն զոր խնդրեմ ես յազգայնոցս
“ ասել , ոչ ի հասուցումն լիցի պարտուց վարժարանին
“ Փարիզու , չունելով իմ իրաւունս պահանջել կամ խնդրել
“ ի Տփխիսեցւոց զպարտս Պոլսեցւոց , զլացողաց զթոշակս
“ որդւոց իւրեանց , այլ օժանդակութիւն լիցի այս ծախուց
“ տպեալ և տպելի մատենից մերոց , և այլն և այլն . որպէս
“ և արարի համառօտ ինչ յայտարարութիւն ի դիմաց Սաաղ-
“ նարդի թեմիս այսր , և եղի ի ճակատ տետրակի կամաւոր
“ նուիրին , և այսպէս հաւաքեցաւ ցարդ 10,000 Ֆրանք , զորոյ
“ 5,000 անցուցի ի 11 անցելոյն ի Փարիզ ի ձեռս մերոցն ։
“ Յուսացուցանեն զիս բարեկամք մեր ասս հասանել գումարին
“ ց50,000 Ֆրանք , եթէ համբերեալ անցուցից ասս զառաջիկայ
“ ձմեռն ։ Թէպէտ զառաջինն եռս ես հաւանութիւն , յանձն
“ առեալ զամենայն նեղութիւնն որ ի պանդխտութեանս ,
“ բայց ապա յորժամ տեղեկացայ ի թղթոյդ զեղկելի վիճակ
“ եղբօր մերոյ Հ. Ամբրոսիոսի , որոշեցի դառնալ վաղթով
“ ի Փարիզ , առ ի դարման տանել անհնարին ցաւոցս ։ Արշաւի
“ ինչ արծաթ կարացից ի ձեռս բերել ի կամաւոր նուիրիցն
“ ասել մինչեւ ցեղս ամենայս այնուհետեւ եղից ի ճանապարհ
“ դառնալ անդ և հարկաւ . քանզի զինչ օգուտ իցէ մեծա-
“ գոյն գումար արծաթոյ անձին այնորիկ որ ի վտանգի մա-
“ հու կայ այժմիկ ։ . . .

“ Արդարեւ ցաւալի և ողբոց արժանի այժմեան վիճակ
“ Հայաստանեաց եկեղեցւոյ , ամէն պակասութեան իմաստուն
“ առաջնորդի և առաքինի վարդապետաց նորին . ահա վասն

“ այսորիկ ասացի ձեզ երբեմն յէջմիածին, տեսանելով զո-
“ ղորմելի վիճակնորին, թէ արդիւնք վաստակոց ձերոց այդր
“ պարտին լինել հասուցանել իմաստուն և առաքինի եկեղե-
“ ցականս, որոյք տարցի արդեօք դարման աղետից ազգիս .
“ ապա թէ ոչ՝ վճարեալ է վասն տրտա ամենայն, ըստ հոգւոյ
“ և ըստ մարմնոյ միանգամայն ։

“ Տկար և անփորձ գլուխն այն անդ զուրկ գոլով ի պիտանի
“ և յօգտակար անդամոց՝ մնան նմա անպիտան և վնասակար
“ անդամք, որք խաղալիկ և ատելի արարին և առնեն զնա
“ աշխարհի, և ողբոց մերոց արժանի ։ . . .

“ Ահա այսպիսի է այժմեան վիճակ նորա, և այսչափ
“ ակնկալութիւն մեր ի նմանէ ։ . . .

“ Թէպէտ և զկոնդակ նորին ցուցաք մեք ասա ամենեցուն,
“ այլ ոչ որք կամեցաւ ընթեռնուլ զայն, և ոմանք եւս ասա-
“ ցին, թէ չկայ մեզ պէտս այնմ, տամք մեք զնուէրս ի պա-
“ տիւ երևաց ձերոց ։

“ Մնամ

“ Սիրելութեան Ձերում

“ Ի Տփխիս. 22 Հոկտ. 1859.

“ Հոգեկցորդ եղբայր

“ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ. ”

Ի բանից այսր թղթոյ Սարգսի վարդապետի կարեն վերծանողք իմանալ զչափ կարեկցութեան զոր ունէր նա առ Ամբրոսիոս և Յովէն վարդապետս ։ Իցէ թէ ճանաչէին նոքա զայն, և ըստ այնմ վարէին ընդ նմա ։ . . .

ԳԼՈՒԽ ԺԷ.

Թ. Սարգսի եպիսկոպոսի Ջալալեան առ Աղա Յովհաննէս Ալուանեան, յօժանդակութիւն վարդապետաց ի Փարիզ, և պատասխանի նոցին, և ընդունելի ընդ այն. — Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ թղթոյ գործակալի վարժարանին. — Թ. Սարգսի վարդապետի առ Կարողիկոս, վասն օժանդակութեան վարժարանին. — Թ. Սարգսի վարդապետի առ Գաբրիէլ վարդապետ հանդերձ տեղեկութեամբ.

Սարգիս եպիսկոպոս Ջալալեան լսէ թէ մտերիմ բարեկամ իւր Աղա Յ. Ալուանեան որ ի Մոսկվա դնացեալ ի Փարիզ և տեսեալ զՀայկազեան վարժարան հաճի յոյժ ընդ այն, և գրէ թուղթ առ Ս. Կաթողիկոս ի Պոլիս խնամ տանել այնմ, Պատուհ դտեալ ասոր գրէ առ նա թուղթ խնդրելով և ի նը-մանէ օժանդակութիւն վարդապետաց ի Փարիզ, օրինակ զայս.

“ Բազմապայծառ Տեառն և բարեպաշտ և Աղգասէր
“ որդւոյ մերոյ Յովհաննու Ալուանեանի ողջոյն
“ Յիսուսանէ.

“ Վերնախնամ Տեսչութիւն արարեալ է միշտ ազգիս Հա-
“ յոց այցելութիւն, յարուցանելով նմա լուսաւորիչս հաւա-
“ տոյ, որպէս զառաքեալն Գրիգոր, և զորդիս և զթոռունս նորա,
“ և թարգմանիչս դպրութեան, որպէս զառաքեալն Մեսրովբ և
“ զաշակերտս նորա. Թէպէտ և երբեմն երբեմն բռնադատեալ

“ և տանջեալ յանհաւատից, այլ պահեաց և պահէ նա միշտ
“ զհաւատս իւր սուրբ, ամբիծ և անարատ։ Թէպէտ և
“ խրթնացեալ նորա երբեմն ի դպրութենէ իւրմէ, պակաս-
“ լով յերկրի իւրում վարժարանաց ի բռնութենէ այլազգեաց,
“ այլ նախահայեաց Տեսչութիւն հոգւոյ նմա զայն յօտար
“ երկրի, յԽոտլիա, ձեռամբ Սրբոյն Մխիթարայ և աշակերտաց նորա, և իրրեւ խորթացեալ նոցա յազգէս կամայ և ակամայ, ապա տկարութեան գլխոյ իւրեանց, Գ. Հիւրմիւզի, նախախնամութիւն յարար զարձեալ այցելութիւն ազգիս Հայոց, պահելով ի մէջ նոցին հարազատս ոմանս, անձինս չորս, զՍարգիս վարդապետ Թէոդորեան. զԳաբրիէլ վարդապետ Ա.յվազեան, զԱմբրոսիոս վարդապետ և զեղբայր նորա զԹորոս վարդապետ Գալֆայեան, և զետեղելով զնոսա ի Փարիզ ընդ պաշտպանութեամբ Ասիկանի ոմանց անդ զորս և անձամբ ճանաչէ Ազնուութիւնդ Ձեր, բաց ի միոյն, որ առաւ հիւր է առ մեզ, հանդերձ յանձնարարական Կոնդակաւ Վեհափառ Կաթողիկոսին մերոյ։

“ Ա.ւելորդ համարիմ յիշատակել սատ զգաստաս և զանցս հարուածանաց նոցա ի Պապէն Հռովմայ ձեռամբ Ա.ռաջնորդին իւրեանց, ընթեռնելով ձեր հարկաւ զտպագրեալ յայտարարութիւն անցից Սուրատեան վարժարանին, և լսելով ականջքդ ի բերանոյ իսկ հալածելոյն. նոյնպէս զնպատակ կամաց և զկարօտութիւն պիտոյից նոցին, այլ զնպատակ կամաց իմոց և զկարօտութիւն պիտոյից ազգին մերոյ առ հատորակ կարեւոր և հարկ համարիմ ծանուցանել Ձեզ և օժանդակութիւն այնմ խնդրել ի Ձէնջ։

“ Զայսոսիկ այսպէս համառօտիւ յիշատակեալ ի գիտութիւն լսելութիւն Ազնուութեանդ՝ եկից այժմ ի կարեւոր խնդիրս, հանդերձ հայցմամբ ի Ձէնջ բարւոք ուշադրութեան։

“ Արդ գիտացէք քաջ Ազնուութիւնդ, զի ըստ բազմամեայ ճանաչման իմում և փորձոյս, չի՛ք և չի՛ք բնաւ ուսանք ակնկալութիւն յառաջադիմելոյ ազգին մերոյ յուսումն և ի գիտութիւն, որով և յերջանկութիւն հոգւոյ և մարմնոյ,

“ բաց ի վերջին այս այցելութենէ Տեառն զոր վերագոյն
“ յիշատակեցի, ի վարդապետաց առեմ որ ի Թէոդոսիա,
“ և մանաւանդ որք ի Փարիզ, զոյ յոյս լուսաւորութեան ազգիս
“ Հայոց, լցուցանելով մեր զայժմեան կարօտութիւն նոցա,
“ և հոգալով զմշտնջենաւոր հաստատութենէ նոցին և յա-
“ ջորդաց իւրեանց անդ, յորոց ձեռաց ելանիցեն հետ զհետէ
“ կիրթք ի վարս և իմաստունք ի բանս և ի գիրս դաս դաս
“ վարժապետաց և վարդապետաց, և սիրեցին նոքա ընդ
“ ամենայն տեղիս ուր գտանիցին Հայք։

“ Ահա այս է նպատակն իմ, և վասն այսորիկ խնդրեմ
“ ի Զէնջ օգնութիւն, զոր և արդէն խոստացեալ էք դուք
“ վարդապետաց բերանով ձերով, ի Փարիզ, և գրովդ Վե-
“ հափառ. Կաթողիկոսին, յղեալ զայն ի Պոլիս, և որք ճնան
“ կատարման խոստման Ձերոյ առանց ինչ երկբայութեան.
“ և ահա ես ըստ յանձնարարութեան որ ի Սրբազան Կաթո-
“ ղիկոսէն և ըստ յորդորական Կոնդակի նորին առ ժողո-
“ վուրդ տեղւոյս Ջանամ իմովանն հաւաքել գումար ինչ
“ արծաթոյ ի հաստուցումն պարտուց վարդապետաց, զոր
“ արարեալ են ի Փարիզ ի տպագրութիւն զանազան մատե-
“ նից, և ի փոխադրութիւն նորանոր տառից և ձուլածոյ
“ նոցին։

“ Իսկ ազգասիրութիւնդ Ձեր եթէ ոչ կամի գումար ինչ
“ արծաթոյ, իբրև 30,000 մանէթի, նուիրել իսկոյն, կարէ
“ դնել զայն անդ յանուն իւր ի շահու, և հրամանն տալ
“ նոցա գտանել միայն զտարեկան շահ նորին, և այնու
“ տպագրել զզանազան և զկարեւոր մատեանս ի գիտութիւն
“ և ի լուսաւորութիւն ազգիս և մանաւորապէս զոր ի պէտս
“ մանկանց վարժարանաց և վարժապետաց նոցին, և ի շահէ
“ անտի ընուլ զկարեւոր պէտս իւրեանց անդ, և այս գոնէ
“ զամս հինգ. եթէ յայն միջոց ժամանակի տեսանէք զարդիւնս
“ նորին հանապազորդեսջիք զայն, իսկ եթէ ոչ՝ դադարե-
“ ցուսջիք զայն հրամանաւդ, մնալով Ձեր միշտ տէր արծա-
“ թոյդ և շահու նորին։ Եւ եթէ զայս խնդիր իմ կատարէք,
“ ապաքէն պատճառ լինիք դուք բազում բարեաց կարօտե-

“ լոց ազգիս առհասարակ, և անուն Ձեր մնացէ յազգի մե-
“ բում բազում գովութեամբ և օրհնութեամբ։

“ Հապա զօրացարուք տէրամբ և արարէք ինձ պատաս-
“ խանի հաւանութեամբ խնդրոյս, և ես այսու յուսով խրն-
“ դութեան

“ Մնամ

“ Բազմապայծառ Տէրութեանդ

“ Ի Տփխիս. 28 սեպտ. 1859.

“ Աղօթարար ծառայ Աստուծոյ

“ ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԱԼԱԼԵԱՆ.”

Յառաջ քան զհասանել վերոյիշեալ թղթոյ ի ձեռս նորա, առնէ նա պատասխանի նախընթաց թղթոյ սորա, յորում յիշատակէ զցաւալից վիճակ Փարիզեան վարժարանին, և յորմէ առաւել ևս պատեհ առեալ սորա՝ առնէ նմա պատասխանի, օրինակ զայս.

“ Բազմապայծառ Տեառն և Բարեպաշտ և Ազգասէր
“ որդւոյ մերոյ Յովհաննու Մնանեանի ողջոյն
“ Յիսուսաւանգ։

“ Զցանկալի պատասխանին Տէրութեանդ, տուեալ ի 21 ան-
“ ցելոյն, ընկալայ յշ ամսոյս, և խնդացի նախ ընդ լուր ող-
“ ջութեան Ձերոյ խնամօք Բարձրելոյն, և ապա ընդ խնաս-
“ տուն, բարեպաշտ և ազգասէր բանս նամակի Ձերոյ։

“ Ցնորհ յոյժ ունիմ Աստուծոյ որ պահէ միշտ յազգի մե-
“ բում այսպիսի անձն որպիսի էք դուք, ի պարծանս մարդկու-
“ թեան, քրիստոնէութեան և ազգիս միանգամայն, և աղա-
“ չեմ զՆա պահել զՁեզ միշտ ի նոյն։

“ Ընդ ցաւագին սրտիւ և խնամուն մտաք յիշատակութիւն
“ որ զհանդուցեալ ամուսնոյդ չունիմ առաւել ինչ ասել Ձեզ
“ ի միխիթարութիւն, հաստատելով Ձեր զայն ամենայն
“ խնամութեամբ և բարեպաշտութեամբ ձերով, այլ միայ
“ ինձ միայն մաղթել նմա ի Տեառնէ հանդիսաւոր յաւիտեան-
“ կան, և Ձեզ երկար և քաջառողջ կեանս, հանդերձ ամենայն
“ բարօրութեամբ։

“ Իսկ ընդ վերջին և ցաւալից բանս նամակիդ որ զՓարի-
“ զու վարժարանէն, ունիմ տալ Ձեզ տեղեկութիւն, հանդերձ
“ հաւատաւոր ի խելամտութիւն հանգամանաց նորին, և աղա-
“ չել զՁեզ զարման տանել այնմ ազգասիրութեամբ Ձե-
“ րով։

“ — Շատ և շատ ցաւումիմ, ասէք, Փարիզի վարժատան
“ ողորմելի դրութեանը. իմ յոյս, որպէս և բոլոր ազգին,
“ մեր ատուածընտիր Հայրապետի վերայ է, աչք ամենե-
“ ցուն ինա հային։ Ո Թէպէտ և ճշմարիտ են ասացեալքդ
“ և իրաւացի, բայց պարտ է յիշել և զայս, թէ բազում ան-
“ գամ ակնկալութիւն հատարակաց ի դերեւ ելանէ վասն
“ զանազան պատճառաց, ասկս անկարողութեան և անփոր-
“ ձութեան անձին այնորիկ յոր եղեալ են զյոյս իւրեանց. և
“ հատատութիւն բանիցս ճշմարտութեան, ահա բանք կոն-
“ դակաց Սրբազան Կաթողիկոսին, որ առ Սարգիս վարդա-
“ պետ Թէոդորեան ատ ի Տփխիս, զորոց պատճէնս առաքեմ
“ Ձեզ ընդ սմին յընթերցումն և ի խելամտութիւն, հանդերձ
“ ցաւոք սրտի, փրիսքով մեր ի յուսոյ անտի։ . . .

“ — Ատուծոյ ամենագութ խնամքն, ասէք, և նորին Վե-
“ հափառութեան խնամուն և ազգասէր կարգադրելովք, և
“ ոչ իսկ առանց Ձեր և Ձեզ զհանգուցեալիս արժանընտիր
“ հոգևորականաց գործակցութեամբ յոյս ունինք, որ և այդ
“ մասն ազգային բարգաւաքութեան չմնայ առանց հոգացո-
“ ղութեան։ ”

“ Այս՝ ամենագութ խնամքն Ատուծոյ և այցելութիւն
“ նորին եղեալ են միշտ առ. ազգն Հայոց, որպէս և յիշատա-
“ կեալ եմ կարգաւ ի նախընթաց թուղթն իմ որ առ Տէրտ-

„ թիւն Ձեր . . . սակայն դժբաղդութեամբ պակասեալ է
„ կարող և փոքր Առաջնորդ ի ճանաչել զայն և յօգուտ վարել
„ ժողովրդեան . . . Իսկ զգործակցութիւնս զոր յուսայք
„ ունել իմ անդ, ընդ այս ամ բնաւ տարակուսիք. քանզի
„ յօժար և պատրաստ եմ ես ամենայն ջանիւք և հնարիւք
„ հոգալ զայնմանէ, զյաջողութիւնէ ազգային այս մասն բաղ-
„ դաւորական. զհաստատութիւնէ ասեմ Փարիզու վարժա-
„ բանին, և հանդուսակից ինձ, զբարեպաշտ և զազգասէր
„ անձնդ միայն ճանաչեմ ի ժամանակիս ։

„ Ի մախճանի ասէք, թէ „ ժամանակը ցոյց կուտայ ազգային
„ օգտի ճանապարհը և հնարքնիրը, եթէ լինին այդ օգտի
„ ցանկացողք և խնամատարք ։ ”

„ Այո՝ յարժամ վարժարանն այն առցէ հաստատութիւն
„ ի Փարիզ, օգուտն ազգիս որ անտի ցուցցէ զճանապարհ և
„ զհնարս մշանջենաւորելոյ նորին անդ, եթէ ցանկացողք և
„ խնամատարք լիցին այնմ այժմիկ ։

„ Ահա վասն այսորիկ աղաչեցի և աղաչեմ զՁեզ իբրեւ
„ զքաջ ճանաչող ազգային օգտի, և իբրեւ զյոյժ ցանկացող
„ հաստատութեան և մշանջենաւորութեան վարժարանին
„ ի Փարիզ, լինել նորին խնամատար որով և վայելել անուն
„ յաւիտենական յերկրի և վարձ յերկինս ։

„ — Բայց այդ նիւթի վերայ յետոյ եւս. ” ասէք ։ Ապա
„ սպասեմ ես յոյժ փափաքանօք լսել ի Ձէնջ եւս զայս կա-
„ բեւոր խնդրոյ, և տեսանել զկատարումն սորին՝ միայնակ
„ մխիթարութիւն և ի խնդութիւն սրտիս, և

„ Մնամ միշտ

„ Բազմապայծառ Տէրութեանդ

„ Ի Տփխիս. 10 Հոկտ. 1859.

„ Աղօթարար ծառայ Աստուծոյ

„ ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՋԱԼԱԼԵԱՆ. ”

«Յ. Գ. Խորհրդաւոր է օրս յորում գրեմ զթուղթս առ
«Զեզ. քանզի ասն է այսօր սրբոց Թարգմանչաց, վարդապե-
«տաց մերոց, Մեսրոպայ, Եղիշէի, Մովսէսի, և այլոց որ
«ի կարգի, յորոց խնդրեցի ի ժամ անմահ պատարագի
«ի յիշատակել զնոսին, զի աղօթիւք և բարեխօսութեամբ
«իւրեանց առ Աստուած զօրացուցեն զիմաստութիւն, ըզ-
«բարեպաշտութիւն և զաղդասիրութիւն Ձեր առաւել քան
«զառաւել ի պարծանս Արամեան ազին և յօգուտ կարօտե-
«լոց նորին։»

Այս ամենայն բանաւոր և յորդորական բանից թղթոց Սարգսի Արքեպիսկոպոսի Զալալեան միանգամայն և կարեկից բանից թղթոյ իւրոյ յիշատակելոց անդ, առնէ իշխան Վենեան պատասխանի անագան, և այն յերկար և իմաստակական բանիւք, զոր և ինքն արդեօք չիմանայր, իմաստակի ուրումն թուի յօրինեալ. և զոր յիշատակել ասա բովանդակ ոչ արժան համարիմք, այլ այսչափ միայն, թէ, «Թող այլք նախ սկսա-
«նիցին, ապէ օգնել նմին, ապա ինքն հետեւեսցի նոցին։»
Ահա օգնութիւն, շատ և շատ ցաւոտիւ ի Փարիզեան վարժա-
տան ողորմելի դրուբեանը, ասողն։ Եւ ահա պատասխանի ազգասիրի և իմաստնոյ առն յաղգի մերում։...

Ընթերցեալ զայն Սարգսի Արքեպիսկոպոսի Զալալեան՝ կո-
րուանէ զվարկ իւր որ զնմանէ. այսպիսի լինի և օգնութիւնն
որ ի Կոմս Խաչատուր Լազարէվէ որ գոլէ յոյժ զՀայկազեան
վարժարան ի Փարիզ, և խոստանայ բանիւ և գրով օգնել նմին
ամենայն եղանակաւ։...

Մի յուսայք յիշխանս և մի յորդիս մարդկան։...

Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ թղթոյ գոր-
ծակալի Հայկազեան վարժարանի, յորում ցաւակից լիցի
դիպուածոյ նորին, և մեզադիր ազգայնոցս ընդ պակաու-
թիւն պարտուց իւրեանց, հանդերձ ազդարարութեամբ, օրի-
նակ զայս.

“ Ազնիւ և Սիրելի Պարոն Նշան Փալֆայեան.

“ Ցյանկալի թուղթդ, գրեալ ի 19 սեպտեմբերի անցելոյն,
“ ընկալայ ի 20 ամսոյս, և ցաւեցայ նախ ընդ ձախորդ դիպ-
“ ուածն, և ընդ որ անտի ցաւոց և նեղութեանց. պարտէ գոհա-
“ նալ զխնամոյն Աստուծոյ որ պահեաց զքեզ ի մեծագոյնմեա-
“ սուց, և ապա ընդ լաւ զժբաղդ վիճակի Հայկազեան վար-
“ ժարանին, զոր ի քէն լուայ։ — Ախտս, ասես, մեր այնչափ
“ կրած նեղութեանցը։ » Այլ ես վայ կարդամ պատուոյ
“ ազգայնոցս որք այդր ի Պօլիս, վասն պակասելոյ դոցա կա-
“ տարել զխոստումն իւրեանց, չպահելոյ բաց զդուռն ազգա-
“ յին վարժարանին զոնէ տարի մի եւս, մինչեւ տեսանել
“ զելս իրացն որ ասի։ . . . Մի՞չ ապաքէն արդարանալ ար-
“ դարեան Կարծիքն և ասացեալն ազգայնոցս ասա, թէ
“ Պարապ մարդիկ և անհաստատ մտօք են Պօլսեցիք։ . . .
“ Եւ մանաւանդ կարծիքն և ասացեալն քաղաքակից հակա-
“ ռակորդաց իւրեանց որք խօսէին յակառնչս բազմաց և
“ քարոզէին ի վերայ ասելոց, թէ Անկարելի է առնուլ
“ հաստատութիւն վարժարանին ի Փարիզ սակս անհաստա-
“ տութեան մնաց խոստացողաց ի պահել զայն, և սակս
“ զլացող կամաց ծնողաց ի հաստատելն զտարեկան թոշակ
“ որդւոց իւրեանց, որպէս և տեսաւ ցարդ։

“ Թողից ասել զնախատանաց որք յԵրուսաղեմոյ անտի և
“ զթշնամեաց եկեղեցւոյս, մանաւանդ ի պարտաւորաց
“ ի պահանջել զպարս վարժարանին և ի զլանալ պարտա-
“ տանաց հաստատելն զայն առանց խոստութեան, որպէս և
“ սկսեալ ասես։ . . .

“ Զանազին դոքա ապատել ինախատանաց անտի, հաստա-
“ ցանել զայն խաղաղութեամբ, գիտելով թէ պարտաւորքն
“ զԷուսաւորչական հայս որք ի Պօլիս ճանաչեն պարտապան,
“ և գիտելով թէ դոքա մինչդուրդութեամբ բարձրագոյն դրան
“ խնդրեալ են ի Գաղղիացւոց տէրութենէն զհաստատութիւն
“ դպրոցին ի Փարիզ և խոստացեալ են պահել զայն արծա-

„ թող իւրեանց, վասն այնորիկ առեալ են մեզ փոխ արծաթ,
„ յուսով գտանել զոյն անշուշտ. և հաստատութիւն բանից,
„ ահա հրովարտակ դրան առ Դեսպան իւր ի Փարիզ, և
„ թուղթ վկայութեան որ ի Վեհափառ Կաթողիկոսէն և
„ ի Սրբազան Պատրիարքէն Պոլսոյ առ պարտատերսն որ
„ ի Փարիզ, և այլն։ Ապա խելամուտ արասջիր զդուռս, որք
„ պարտին խելամուտ լինել այսմ ամենայնի. ես զվերջին
„ պարտս իմ հատուցի, հայեցեալ և ի յաւելից խնդիրս
„ յայս։ . . .

„ Աւելորդ և ի զուր համարիմ ես զգալուստն այդր ի Պոլիս
„ Ամիրոսխոս վարդապետին մերոյ. և յիրաւի՝ քանզի զինչ
„ վնասեցաւ գալստեամբ իմոյ այդր, խօսելով և ցուցանելով
„ զոյս բաղում անգամ զհաշիւ հին և նոր պարտուց վար-
„ ժարանին, և մաշելով զկեանս իմ այդր տարի մի, և
„ պարտաւորելով ի վախճանի յանձն առնուլ զաշխատութիւն
„ զժնդակ ճանապարհի, և զպանդխտութիւն յանտոմար երկրի,
„ և զայն ի յայսմ հատակի, առ ի զարման տանել արդեաք
„ ինաւուց հատարակաց, պատճառելոց յազգայնոցս այսր.
„ և եթէ ոչ՝ գոնէ ի հայթայթել զկարեւոր պարէն մեր,
„ որում ի խնդիր եմ այժմիկ, մինչեւ այց արասցէ Տէր կարօ-
„ տելոց ազգիս ձեռամբ բարերարաց որք ասի և անսի։

„ Մնամ

„ Անգնութեանդ

„ Ի Տփխիս. 23 Հոկտ. 1859.

Աղօթարար

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՂՈՐԵԱՆ. „

Լուեալ Սարգիս վարդապետի ի Տփխիս յեկեղց ոմանց յէջմիածնէ զմեղադրութիւն Սրբազան Կաթողիկոսին որ ընդ երկար լռութիւն իւր, գրէ առ նա գիր, յորում տայ զպատ-

ճառ. թուութեան իւրոյ, ծանուցանելով նմա զվիճակ իւր, և յիշեցուցանէ զերբեմն ճանաչումն, զկամս և զխոստումն նորա, հայեցեալ ի հաստատութիւն Հայկազեան վարժարանին ի Փարիզ, հանդերձ վկայութեամբք, և ցրէ զնոտի պատճառն ձեռնթափ լինելոյ նորա անտի, օրինակ զայս.

« Վեհափառ Տէր և Սրբազան Հայրապետ.

« Զարմանայցէ, մանաւանդ թէ մեղադրիցէ Վեհափառ
« Տէրութիւնդ Ձեր զքուութիւն նուաստութեանս իմոյ ցարդ,
« և իրաւամբք արդեօք, եթէ չէր իմ խոռվեալ և տագնա-
« պեալ յոյժ ընդ ցաւալից հանգամանս վարժարանին ի Փա-
« րիզ, և ընդ եղկելի վիճակ մերոցն անդ, որպէս և յուայք
« ի նամակէ նոցին, զոր առաքեցի Ձեզ այդր ի տեղեկութիւն
« իրացն և ի դարման ցաւոցն, և եթէ չէր իմ յուսահատեալ
« խապառ յանկնկալութենէ մխիթարութեան որ ի Ձէնջ այտի,
« որպէս յայտ է ի բանից վերջին կոնդակի Սրբութեան Ձերոյ
« առ իս, զոր ոչ երբէք յուայի ասել . . .

« Մինչդեռ այսպիսի լքեալ և ցաւոք օրտի Ջանայի ես իրրև
« մուրացիկ հայթայթել ինչ ասի և անտի ի հոգեպահ
« կերակուր մերոցն ի Փարիզ, և այն ինչ սկսեալ էր Ջանիւք
« և աշխատութեամբ Սրբազան Սարգիս Սրբեպիսկոպոսի
« Հաւաքել զայն, ահա ըստ բաղդին իմոյ և խափան այնմ
« այտի, հրամանն առնս գալոյ այդր անխափան . . . Ապա
« զի՞նչ մնայ ինձ այսուհետեւ, Վեհափառ Տէր. ոչ այլ ինչ,
« բայց եթէ խոնարհութեամբ յիշեցուցանել Սրբութեանդ
« զերբեմն ճանաչումն և զկամս Ձեր որ ընդ հաստատութիւն
« վարժարանին ի Փարիզ, և զնախանձայոյզ պաշտպանու-
« թիւն Ձեր այնմ, և այն այնչափ, մինչեւ չգանուցչեր Ձեր
« զոք յազգէս որդի սուրբ Լուսաւորչի, որ չօժանդակէր ինչ
« Փարիզեան վարժարանին, և ձանուցչեր զայն իբրեւ սեպհա-
« կան սուագուսած սուրբ Էջմիածնի, և զնաստուրն որ ի նմին

“ կոչեալ յանուն սուրբ Լուսաւորչին, այլովքն հանդերձ ։ ։.
“ Այլ և զբանս շրջաբերական Կոնդակի Ձերոյ հրատարակե-
“ լոյ ի Պոլիս յետ մեկնելոյ ձեր անտի ։

“ Ի հաստատութիւն այս բանիցս, ահա վկայութիւն ի Շիւ-
“ սիսափայլ անուանեալ օրագրէն, որ ունի այսպէս. “Զայ-
“ ներ կան, թէ ազգը Կոստանդնուպօլսի մէջ կամի շուտով
“ բարեաքել Փարիզու մեր ազգային դպրոցի վիճակը, և թէ
“ Վեհապատիւ նորընտիր Հայրապետս-Մեծքահանայ Մատ-
“ թէոսը, Պոլսից ելանելու ժամանակ, երդմամբ շատ պատ-
“ էր է տուել ազգին անօգնական չթողուլ դպրոցը, մինչեւ
“ ինքն Կարոզանայ օգնութիւն հատուցանել էջմիածնից ։ Եւ
“ ահա Փարիզի հայկական դպրոցը կապրէնցաւ էջմիածնեայն
“ աթոռի հետ ։ ”

“ Թողից յիշատակել ատ զզրով խոստումն Վեհիդ որ առ-
“ մերան ի Փարիզ, և զհաճութիւն հաւանութեան ձերոյ
“ ի պատասխանիս թղթոց Կոմս Խաչատուր Լազարէֆի և
“ Աղա Յովհաննու Ենանեանի, որովք յորդորէին զՍրբու-
“ թիւնդ խնամ տանել Հայկազեան վարժարանին ի Փարիզ ։

“ Ասիցէք արդեաք, թէ տեղեկութիւն զոր եռուն Ձեզ
“ ունիք ապա, հայեցեալ ի կամս Ռուսաց Տէրութեան կաշ-
“ կանդեաց զձեռս ձեր օժանդակել այնմ, որպէս և բերանով
“ և գրով ասացեալ էք այլոց ։ ։ ։

“ Հարցանեմ ես արդ խոնարհութեամբ, թէ նոքա որք
“ եռուն Ձեզ զայսպիսի տեղեկութիւն առաւել ծանօթք իցեն
“ կամաց Ռուսաց Տէրութեան քան զմերոյիշեալ անձինս.
“ թողից ասել զդիտաւորութենէ նոցին որք եռուն Ձեզ զայս-
“ պիսի տեղեկութիւն ։ ։ ։

“ Ի հաստատութիւն և այսմ բանիցս, ահա երաշխաւորես-
“ ցէ Ձեզ ի մասոյ Սրբազան Սարգիս Սրբեպիսկոպոս, որ
“ անձամբ գնաց առ վարիչ քաղաքիս և եհարց ցնա զկամս
“ տէրութեանս որ վասն բանի խնդրոյս, և նա ապահովէ
“ զսա առանց ինչ տարակուսանաց և դժուարութեանց ։ ։ ։

“ Ունիմ ես զայսմանէ և զայլ բազում ինչ յիշեցուցանել
“ Սրբութեան Ձերում, բայց գուցէ առաւելութիւն բանիցս

„ Ձանձրութիւն լիցի ներող լսելեացդ . . . թողում ես զայն
„ յայլում պատեհի, և Սրբազան Սարգիս Արքեպիսկոպոսի
„ ընուլ բերանով, յոգուտ կարօտելոյ ազգիս, և ի պարծանս
„ Վեհափառ Տէրութեանդ,

„ Որում մնամ միշտ

„ Ի Տփխիս. 31 Հոկտ. 1859.

„ Ամենախոնարհ ծառայ

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՄՐԻՈՒԵԱՆ. „

Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ թղթոյ Գաբրիէլ վարդապետի, յորում յայտնէ զանհամեմութիւն նորին որ ի բանս, և որ խափան լինի յաջողութեան գործոյ իւրոյ ի Տփխիս, և տայ ինչ ինչ կարեւոր և ցաւալից տեղեկութիւն, օրինակ զայս.

„ Գերապատիւ Հայր և սիրելի եղբայր.

„ Զցանկալի դրեալդ, որ ի 29 սեպտեմբերի անցելոյն,
„ ընկալայ քան ժամանակին. թէպէտ և չունիմ ընդ այն առ-
„ նել պատասխանի, հաստատելով զամենայն նախընթա-
„ ցեալս, այլ դրեմ զիմաստս՝ տալով Ձեզ տեղեկութիւն զհան-
„ գամանաց գործոյս, և ինչ ինչ լուր տեղւոյս, թէպէտ և ոչ
„ սխորժելի Ձեզ գիտեմ . . . . . .

. . . . . .

„ Գիտէք թէ զինչ պատճառս տան ասա ունիք չկամութեան
„ իւրեանց օժանդակել մեզ. որպէս թէ ցուցեալ էք դուք
„ ասա ի խօսս ձեր զանհնարութիւն հաստատութեան վար-
„ ժարանիս ի Փարիզ. թէպէտ և պատճառք ժլատութեան
„ են այս, և առիթ անարգ կարծեաց որ զձէնջ, այլ ոչ սակաւ

«Վասն եղեւ օժանդակութեանս, իբրեւ կիսով չափ և աւելի,
«ըստ վկայելոյ բարեկամացս, և յաւել ինձ ցաւք ի զուր։
«Տեսանէք եղբայր զրաժին ժառանգութեան իմոց յամենայն
«տեղիս. որպէս երթեմն ի Պոլիս նա և ասա այժմիկ . . . ըզ-
«պատճառս քանզմանն վարժարանիս զրաժանիլ Ձեր ի մէնջ
«ասէին և ասեն . . . ահա յաւելուած ցաւոցս։ . . . .

. . . . . .

. . . . . .

«Աւուրքք ինչ յառաջ եկն այսր Յէչմիածնէ Պարոն Յա-
«ռութիւն Շեխեանց Ղարաբաղցի, և ջանաց շատ հաւանե-
«նեցուցանել զիս յանձն առնուլ զԱռաջնորդութիւն Ղարա-
«բաղի, հանդերձ խորհրդով և հաճութեամբ Սրբազան Կա-
«թողիկոսին։

«Բացէ ի քաց հրաժարեցայ ես անտի, ասելով, թէ ես
«ոչ եպիսկոպոսութեան ցանկամ, և ոչ առաջնորդութեան
«թեկն ածել բաղձամ. եթէ կարացի ես ցարդ և կարեմ ես
«օգնել ինչ կարօտելոյ ազգիս այսու վիճակաւս, շատ համա-
«մարիմ ինձ զայն ի վախճարութիւն։ . . .

«Կարապետ Ամիրա Պալեան ի Պոլիս նուիրեալ է 18,000
«քսակի սուացուածք ի հաստատութիւն եկեղեցական դպրո-
«ցի միոյ, և առաքեալ է զվաւերականն առ Սրբազան Կա-
«թողիկոս Յէչմիածին ի հաստատել զայն Սիւնհոդոսիս
«իւրով, և երաշխաւոր կալ պահպանութեան նորին ձե-
«ռամբ փոխանորդին իւրոյ ի Պոլիս։ Կատարէ և յանձն
«առնու զայն Ս. Կաթողիկոսն հանդերձ Սիւնհոդիս։

«Գերագոյն ժողովն ազգիս ի Պոլիս առաջարկեալ է
«Ս. Կաթողիկոսին հաստատել տալ երիս գլխաւոր ազգային
«վարժարանս, զմին Յէչմիածին, զերկրորդն Յերուսաղէմ
«և զերրորդն ի Պոլիս, հանդերձ օժանդակութեամբ Երու-
«սաղեմի . . . ահա վասն այսորիկ կոչեցաւ Սարգիս եպիս-
«կոպոս Զալալեան Յէչմիածին ի խորհուրդ, քանզի կամի
«Կաթողիկոսն առաքել զսա ի Պոլիս փոխանորդ իւր անդ . . .
«և ահա քեզ լուր զկարծեցեալ լուսաւորութեան ազգիս, և
«բարեկարգութեան եկեղեցւոյս։

„ Մեծամեծ պատրաստութիւն կայ երկանց, այլ ոչ գոյ
„ դայեակ ի միջի։ . . .

„ Կամին մեծամեծ վարժարան հաստատել, այլ չունին և
„ ոչ մի վարժապետ բաւական ի դատարակել զմանկունս
„ անդ։ . . .

„ Ոչ միայն չծանեան նոքա զբաւականն, այլ և թողին
„ զնոսա ի վերջին կարօտութեան և յանհնարին նեղու-
„ թեան, զլանալով հատուցանել զտարեկան թոշակս մանկանց
„ իւրեանց։ . . .

„ Կարիցէ՞ք դուք միայն, և այլոք՝ դարման տանել ազգիս
„ անմտութեան։ . . .

„ Աւա՜ղ բաժանման. ո՞չ ապաքէն ամենայն միաբք և նա-
„ խատինք մեր անտի ծագեցան։

„ Ողջ լինել ըղձանամ

„ Սիրելութեանդ

„ Ի Տփխիս. 2 Նոյեմբ. 1859.

„ Հոգեկցորդ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ.“

Վերագոյն համառօտ յիշատակէ Սարգիս վարդապետ ըզ-հրաւէր իւր յառաջնորդութիւն թեմին Ղարաբաղի, արժան համարի նա յիշատակել զայս ատ ընդարձակ, ի գլխութիւն կարեւոր արդեօք։ Քանզի իբրեւ կարի շատ թախանձէ զնա Պ. Յ. Շեխեանց և այլ ոմանք ընդ նմա, յանձն առնուլ զառաջնորդութիւնն զայն, խորհի նա հնարիւք ինքն զերծանել անտի. յանձն առից, ասէ, զայն, բայց այսու պայմանաւ, եթէ եկամուտ թեմին Ղարաբաղի ոչ յԷջմիածին գնասցէ, այլ ի ձեռս իւր յանձնեսցի, և ինքն ըստ գիտութեան և հաւանութեան գլխաւորաց տեղւոյն մատակարարեսցէ զայն ի պէտս ուսման և կրթութեան մանկանց թեմին այնորիկ։

Խոստանան նոքա հոգալ զայնմանէ, այլ ոչ կարեն կատարել, չկամեցեալ ընդ այն Կաթողիկոսին և Սինոդի նորին, ասելով՝ թէ հաւանիցին այնմ՝ և այլ թեմք պահանջեսցեն զայն, և զինչ շահ մնասցէ այնուհետեւ չիմասցնի. և թէ շատ է, ասեն, առաջնորդին այնորիկ 2,000 մանէթ, յառանձին ծախս իւր ի տարեւոջն, ահմանեալ ի Սինոդէն անտի։

Ասէ ցնոսա յայնժամ Սարգիս վարդապետ թէ ինքն մինչեւ ցայսր հասակի, ոչ երբէք հոգացեալ է զառանձին ծախուց իւրոց, զի ուր և գտանիցի՝ չպակասիցի նմա այն, բաւականալով յամենայնի. այլ հոգ նորա եղեալ է միշտ զկարօտելոց աղգին իւրոյ յամենայն գործ պաշտաման իւրոյ. եթէ չկարիցէ յայնմ օգնել նոցա, չկամի ընդունել զառաջնորդութիւն ս՛ և ելցէ պաշտաման, և զոր անտի շահ և պատիւ առանձին . . . և այսպիսի հնարիւք, բանաւոր պատճառաւք, հրաժարի ի պաշտօնէ անտի առաջնորդութեան։ Ահա ընդարձակ յիշատակութիւն հրաւիրման Սարգսի վարդապետի որ ի վերոյիշեալ թուղթ նորա։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Աղերսագիր Տփխիսցի ազգայնոցս առ Ս. Կաթողիկոս յօժանդակութեան Փարիզեան վարժարանին. — Թուղթ յանձնարարականաց ելն առ Սարգիս եպիսկոպոս Զալալեան. — Պատասխանի Ս. Կաթողիկոսին տուեալ աղերսագրոյ նոցին. — Քնարերգութեան ընդ այն. — Ա՛յլ խորհուրդ և յառաջադրութեան Տփխիսացւոց յօժանդակութեան Փարիզեան վարժարանին.

Լուեալ ազգայնոցս ի Տփխիս զփակիլ Հայկազեան վարժարանին ի Փարիզ, ցաւին ընդ այն, և ոմանք ի գլխաւորաց անտի խօսին ընդ Սարգիս եպիսկոպոսի Զալալեան հնարս ինչ գտանել ի հաստատութիւն այնր։ Ասէ նա ցնոսա, թէ միայնակ հնարք զոր գիտէ ինքն, այս է, օժանդակութիւն նմին խնդրել ի վեց թեմից սրք ի տէրութեան Ռուսաց, հրամանաւ Ս. Կաթողիկոսին և Սիւնհոդոսի Էջմիածնի։ Յայնժամ խորհին և որոշեն նոքա տալ ազերսագիր մի առ Արքազան Կաթողիկոս Էջմիածին և խնդրել ի նմանէ զայն։

Յօրինել տան նոքա վարժապետի միոյ զազերսագիրն ըստ թելադրութեան իւրեանց, և չբաւականացեալ ընդ բացատրութիւն նորին՝ խնդրեն ի Սարգիս վարդապետէ յօրինել զայն ըստ կարգի, բացայտ բանիւք և որոշ իմաստիւք ըստ մտաց իւրեանց. յօրինէ նա զայն ի խնդրոյ և ըստ ցանկութեան նոցա, որ ունի օրինակ զայս.

Աղերսագիր.

«Վեհափառ Տեառն Տեառն և Սրբազան Կաթողիկոսին
«ամենայն Հայոց խորին խոնարհութեամբ համբոյր
«Ասուածարեալ Անձոյ։

«Ի բանից պատուական կոնդակի սրբութեան Ձերոյ,
«տուելոյ Սարգսի վարդապետի Թէոդորեան՝ ծանեաք զկամս
«Վեհիդ, հայեցեալ յօժանդակութիւն երից վարդապետաց
«մերոց վարչաց Հայկազեան վարժարանին ի Փարիզ, վասն
«ծախուց ապեալ և ապելի մատենից նոցա, որք ի պէտս
«մանկանց ազգիս Հայոց. զնոյն ծանեաք և ի բանից կոնդա-
«կիդ Վեհիդ առ Սրբազան Սարգիս Արքեպիսկոպոս և Առաջ-
«նորդ վիճակիս։

«Թէպէտ և յօժարութեամբ արարաք և առնեմք զկամս-
«ս որ նուէրս ի կատարել զկամս սրբութեան Ձերոյ, սակայն
«խորհեցաք մեք, և իրաւամբք՝ թէ այս առժամանակեայ
«օժանդակութիւն վարդապետացն այնոցիկ՝ քանի՞ մատե-
«նից ապագրութեան ծախուց բաւական իցէ, և թէ այսու՝
«ոչչափ օգուտ կարիցեն նոքա առնել ազգիս Հայոց առհա-
«սարակ. ապաքէն սակաւ ինչ միայն, մինչդեռ կարեն նոքա
«առաւել օգուտ առնել ազգիս, դասախօսակելով զմանկունս
«նորա ի բարի վարս, և ուսուցանելով նոցա զզանազան և
«զկարեւոր գիտութիւնս յայն երեւելի մայրաքաղաքի Գաղ-
«ղիացւոց, ի Փարիզ։

«Ապա համարձակիմք խոնարհութեամբ խնդրել ի սրբու-
«թենէդ, զի ըստ այնմ օժանդակել նոցա գտանել մշանջե-
«նաւոր աղբիւր ի մշանջենաւոր օժանդակութիւն աշխատու-
«թեան նոցա, և զայս յոյժ դիւրին գիտեմք Ձերումդ Մե-
«ծութեան, եթէ կամիցի, և հարկ իսկ է զի կամիցի, և
«կատարիցէ զայն առանց դանդաղելոյ, տեսանելով զկարո-
«ղութիւն ազգիս և զցանկութիւն նորա առ կարեւոր ուս-

„ մունս և գիտութիւնս, մանաւանդ նախախնամութեան
„ ինքնին հոգալով զկարեւոր միջոցն, պարգեւելով մեզ զերիս
„ զայսոսիկ զիտնական և ազգասէր անձինս, զորս գտանել
„ դարուց կարօտի, և զորս անտես առնել, զպարգեւ Աստուծոյ
„ չճանաչել զիտեմք։

„ Զհամարձակէաք մեք երբէք խնդրել զայն ի Մեծութենէ
„ Ձերմէ ճանաչելով արդէն զուարճութիւն Ձեր, և
„ իմանալով զյայտարարութիւնն զոր արարեալ էք ի Գալիս
„ ի մեկնել Ձեր անտի և զոր յիշատակէ Հիւսիսայլ անուա-
„ նեալ օրագիրն, տպեալ ի Մոսկվա 18 մայիս. 1859, եթէ
„ չգտանէին նախանձառ և անձնասէր ոմանք որք կաշկանդեն
„ զձեռս Ձեր անուտի երկիւղիւ, որպէս թէ չկամի Ռուսաց տէ-
„ րութիւն գնալ պատանեաց ազգին մերոյ ի Փարիզ ի կատա-
„ բելագործել զուարճութենանց։ Այո՝ անուտի է այդ երկիւղ
„ և հնարք նախանձու. քանզի գնացին և գնան օրըստօրէ
„ պատանիք և մանկունք ազգին մերոյ ի Փարիզ, որպէս և
„ յանցեալ եօթնեկի գնաց անդ ի կատարելագործել զու-
„ ուարճութիւն իւր որդին Դաւթի Խերոդիանանց, հանդերձ հինգա-
„ մեայ հրամանագրով անցեալ. ապա անուտի է երկիւղն որ
„ անուտի, և հնարք նախանձու։ Սակայն ի վերայ այսր ամե-
„ նայնի, եթէ տակաւին ակնածիցէ Վեհդ ի տէրութենէս,
„ մեք ամենեքեան երաշխաւոր եմք զրոմս ամենայն անախորժ
„ հեռեւանցն որք անուտի ծագիցին։

„ Գիտացէ Սրբութիւն Ձեր և զայս, ազգայինք մեր որք
„ ասա, ամօք ինչ յառաջ հոգիս ուրեմն և տակաւ ոմանք
„ երթեւեկէին ի Փարիզ, բայց այժմ յաճախ երթեւեկեն
„ անդ և բազում ոմանք, և տեսեալ նոցա զգեղեցկութիւն
„ և զպայծառութիւն քաղաքին Փարիզու, զզանազան զի-
„ տութիւնս և զհրաշալի արուեստս որ ի միջի նորին, զմայլին
„ յոյժ, և զտեալ անդ ազգային վարժարանն մի, հանդերձ
„ եկեղեցեաւ, ուր մատուցանի պատարագ յամենայն կիւրա-
„ կէի և յաւուրս երեւելի տօնից ըստ արարողութեան հայաս-
„ տանեաց Սուրբ Եկեղեցւոյ՝ ուրախանային և միխիթարէին
„ ի պանդխտութեան իւրեանց, այլ և ակնկալութիւն բազում

“ բարեաց ունէին անտի, ի ձեռն Ջանից և աշխատութեան
“ վարչաց նորին. բայց յայսոսիկ աւուրս իրրեւ լուան թէ
“ վարժարանն այն փակեցաւ սակս ժլատութեան ազգայնոցս
“ որք ի Պոլիս, չկարեմք պատմել զցաւս սրտի ազգայնոցս
“ սատ ընդ լուրն այն. մանաւանդ ի յիշել զերբեմն փառս
“ ազգին մերոյ առաջի օտար ազգաց անդ, և այժմ զնախա-
“ խառինս պարտին հարկաւ լսել ինոցանէ. արդարեւ ցաւոց
“ արժանի վիճակ ազգիս ... Ապա Ձեզ մեայ Վեհափառ
“ Տէր, դարման տանել այսր ցաւոց սրտի ...

“ Աւելորդ համարիմք ուսուցանել Ձեզ զհնարսն, քանզ
“ գիտելով զայն իմաստութեան Ձերոյ, այլ միայն յիշեցու-
“ ցանեմք Վեհիդ զյաւիտենական փառս և զանմահ յիշա-
“ տակն, զոր տանելոց է՛ք վասն հաստատութեան վարժարա-
“ նին որ ի Փարիզ, և արդեանցն որ անտի։ Ո՞չ ապաքէն
“ բարեբախտ և երջանիկ է՛ք Դուք, Վեհափառ Տէր, որ
“ կալայք զաթոռ Հայրապետութեան ի ժամանակի յորում
“ պատրաստեալ են Ձեզ այս փառք և այս յիշատակ։

“ Մնայ մեզ միայն, հանդերձ խոնարհ համարձակու-
“ թեամբ, յիշեցուցանել Սրբութեան Ձերում զաղրիւրն յոր-
“ մէ մարթ է գտանել զմշտնջենաւոր օժանդակութիւն վար-
“ ժարանին ի Փարիզ։

“ Արդ՝ վեց թեմք առաջնորդութեան են ազգիս որք ի տէ-
“ րութեան Ռուսաց. իբրաքանչիւր թեմն որ երկու, և որ մի
“ հազար մանէթ օժանդակելով Փարիզու վարժարանին,
“ լիցի այն իրրեւ ութ հազար մանէթ, իրրեւ տարեկան հնգե-
“ տասան պատանեաց, և այսու առնու հաստատութիւն
“ վարժարանն այն. ապա յաւելցին նմա անշուշտ և թոչա-
“ կաւոր աշարկերտք աստի և անտի, և ընկալցի նուէրս
“ ի կենդանի և ի հանդուցեալ բարերարաց, որով ճոխացեալ
“ և բարգաւաճեալ՝ լիցի յօգուտ և ի պարծանս ազգին
“ Հայոց։

“ Ահա այս է, Վեհափառ Տէր, խոնարհ խնդիր մեր ընդ
“ օժանդակութիւն Փարիզեան վարժարանին, և այսչափ ճա-
“ նաչումն մեր ընդ ազգիս նորին, ոչ ինչ ապրակուսելով

“ ընդ առաւել ճանաչումն Քեր, և այսպիսի ակնկալութեամբ
“ բարեաց զոր ունիմք անտի։

“ Յանկալով յոյժ կատարման խնդրոյս,

“ Մնամք միշտ

“ Վեհապատիւ Տէրութեանդ Քերում

“ Ամենախոնարհ ծառայք

“ Կնիքս Վասիլ Նիկողոս Արքեպսկոպոսաց
Երկայնաբազուկ.
Կնիքս Աղեքսանդր Նիկողոս Արքեպսկոպոսաց
Երկայնաբազուկ.
Կնիքս Ղահրամանի Արքեպսկոպոսաց
Երկայնաբազուկ.
Կնիքս Յովհաննէս Արքեպսկոպոսաց
Երկայնաբազուկ.
Կնիքս Միքայէլ Արքեպսկոպոսաց
Երկայնաբազուկ.
Կնիքս վասիլ Ռուսինոսեանի Արքեպսկոպոսաց
Երկայնաբազուկ.
Կնիքս Միքայէլ Անտոնեանի.
Կնիքս Գէորգ Անտոնեանի.
Պաշտօնական Բժշկապետ Յարութիւնի
Յովհաննիսեանի.
Բժիշկ Ռուսինոս Դատիրեանի.
Գրիգոր Այվազեանց.
Յարութիւնի Այվազեանց զօրավար.
Սողոմոնի Փէքիրատեանց.
Միքէլ Փէքիրեանց.
Յովհաննէս Ղայրնազեանի.
Աղեքսանդր Թոյիրեանի.
Միքայէլ Տէր Սուխիանեանի զօրավար.

Յովհաննէս Սվէչլիիկեանց.
Պաղտ Մանդիկեանց.
Դաւիթ Խերոդիկեանց.
Վարդան Արշակունի.
Աշեմիք Սվէչլիիկեանց.
Բագրատ Աղարդակեանց.
Նիկողոս Միքիրտչեանց.
Թորգոմ Գրիդանեանց.
Նազար Նազարբէկեանց.
Ստեփանոս Խատիսեանց.
Հեռոբ Հեռոբեանց.
Դաւիթ Տարիեանց.
Միքայէլ Գոռգեանց.
Խաչատուր Գոռգիեանց.
Լուկաս Փէրիխանեանց.
Սմբատ Մաշիկոնեանց.
Եղգոր Բորիսեանց.
Աշոտիք Լիֆիրեանց.
Հարութիւն Լիֆիրեանց.
Գարրիէլ Մելքոնեանց.
Վասիլ Արտազեանց. »

Ընդ ամենայն վաթսուն լինին ատրաղրողքն յաղերսագրի յայն, զերեսուն և ութ միայն յիշեցաք մեք ասա, և ի սոսին մեծագոյն մասն ազնուականք են և պաշտօնեայք, զօրավարք, բժիշկք, և այլն, և այլն, Ռուսաց տէրութեան, և տեղեակ օրինաց նորին... վասն այնորիկ երաշխաւոր լինին անախորժ հետեւանացն որք թէ ծագէին անտի. ապա չմնայր տեղի կասկածանաց Կաթողիկոսին ըստ ազգարարութեան ոմանց։

Զաւուրս հնգետասան ծախէ ազգաւէր այրն Պարոն Ռոմանոս Կատիրեան, հանդերձ բազում աշխատութեամբ խատրատրել տալ զաղերսագիրն զայն, ի խնդիր լինելով ասա և անդ ի գտանել զնոսա, և յընթեռնուլ զայն յանկանչս նոցա։

Այլ և ի գրել տալ գլխաւորաց ոմանց անտի թուղթ յանձնարարական առ Սարգիս եպիսկոպոս Զարեհան, որ յայնմ ժամանակի յԷջմիածին գտանի, միջնորդ լինել և համոզել զԿաթողիկոսն կատարել զխնդիր իւրեանց։

Գրէ և ինքն Նատիրեան առանձին և կրկին յանձնարարական թուղթս առ նա, որոց առաջին ունի օրինակ զայս.

„ Սրբազան Տէր.

„ Ազգն մեր սատ առհասարակ, և մանաւորաբար գլխա-
„ ւորք նորին ակնունելով բազում բարեաց ազգիս ի Հայկա-
„ զեան վարժարանէն որ ի Փարիզ, իրրև լուան զլուր փակելոյ
„ նորին յանկարծակի, շատ և շատ ցաւեցան ընդ այն. վասն
„ որոյ և գրեցին աղերսագիր մի առ Վեհափառ Կաթողիկոս
„ մեր այդր, խնդրելով ինամանէ զարման տանել այս վնասուց
„ ազգին և ցաւոց սրտի իւրեանց, և վասն որոյ զՍրբութիւն
„ Ձեր միջնորդ կալան առանձին գրով, զոր ընդունելոց էք
„ ընդ ամին։

„ Աւելորդ համարիմ առանձին նաև ազաչել զՁեզ վասն
„ այսր, ճանաչելով արդէն զՁանս Ձեր և զփոյթդ գայսմանէ.
„ միայն կարեւոր համարիմ ծանուցանել Ձեզ այսու զակնկա-
„ լութիւն և զվստահութիւն մատուցողաց աղերսագրոյն, որ
„ ընդ կատարումն այսր և առաջին խնդրոյ իւրեանց ի Վեհափառ
„ Կաթողիկոսէ. եթէ հատանիցին այսմ, ակն ունիցին ար-
„ դեօք ի նմանէ բազում և մեծամեծ բարեաց ազգիս, և
„ պատրաստ լիցին օժանդակել նմա ի գործս նորա ամենայն
„ յօժարութեամբ և կարողութեամբ իւրեանց. իսկ եթէ վրի-
„ պիցին նորա ի յուսոյ սատի վճարեալ լիցի ամենայն վասն
„ նորա։ . . .

„ Վասն որոյ ազաչեմ զՁեզ քաջիկ խնդամուտ առնել զնա
„ հեռեւանացն որք անտի, և թելադրել նմա զպատասխանին
„ զոր տարոյ է աղերսագրի նոցա. պարտ է գոլել նախ
„ զճանաչումն նոցա և զհոգն որ ընդ հատատութիւն վար-
„ ժարանին ի Փարիզ, և որ ըստ ցանկութեան իւրեանց իսկ

“ է. ապա շնորհակալ լինել նոցա հանդերձ օրհնութեամբ
“ ընդ կատարումն կամաց իւրոց, օժանդակելով վարդապետաց
“ մերոց կամաւոր նուիրաց, և յորդորել զնոսա հասուցանել
“ զայն այնչափ, որով կարասցեն նոքա ապրիլ ի Փարիզ, և
“ պարապիլ ի կարեւոր աշխատութիւն յօգուտ գպրոցի ման-
“ կանց ազգիս, մինչեւ ինքն հոգայցէ այսր զմշտնջենաւոր
“ հաստատութենէ վարժարանին անդ, ըստ խնամատուն խոր-
“ հրդոյ և առաջարկութեան նոցա. և այսպէս շահեցի նա
“ զսիրտս նոցա ի սկզբան, այնուհետեւ յաջողեցի նմա ամե-
“ նայն, ունելով զնոսա իւր օգնական։

“ Մաղթելով Ձեզ ի Տեառնէ քաջողջութիւն կենաց և յա-
“ ջողութիւն գործոցդ՝

“ Մնամ միշտ

“ Սրբութեան Ձերում

“ Ի Տփխիս. 21 Նոյեմբ. 1859.

“ Ամենախոնարհ ծառայ

“ ՌՈՄԱՆՈՍ ՆԱՏԻՐԵԱՆ. ”

Եւ երկրորդ յանձնարարական թուղթ նորա առ նա ունի օրինակ զայս.

“ Սրբազան Տէր.

“ Ցայսոսիկ առուրս ընկալայ նամակ մի յԱգիւլիսէ ի բարե-
“ կամէ իմմէ, յորում յիշէ նա խնդութեամբ իմն զկամաւոր
“ նուէրն զոր արար առա Պարոն Պօղոս, և պարծի նա, զի ի մէջ
“ Տփխիս քաղաքի յորում այնչափ հարուստ անձինք գտանին,
“ ոչ ոք առաւել առատաձեռն լինի ի նուէրն յայն կամաւոր
“ օգտակար քան զքաղաքակից իւր Զլոմիանեան և քան

“ զիս. վասն որոյ զոմէ զմեզ յոյժ, Ի բանից նորին կարէք գու-
“ շակել զերկու ինչ, զվարկ ժողովրդեան այնորիկ որ զվար-
“ դապետաց մերոց ի Փարիզ, և զյօժարութիւն նորա օժանդա-
“ կել նոցա. ապա ուրշափ կարեւոր և օգտակար է կոնդակն
“ օրհնութեան և շնորհակալութեան Վեհափառ Կաթողիկո-
“ սին առ Զլովխանեան, և ոչ առ նա միայն, այլ և առ
“ Մկրտիչ Տէր Մկրտչեան որ անդ յԱդուլիս և որ հարուստ
“ և ազգասէր է յոյժ, և ընդ որոյ առատ օժանդակու-
“ թիւն անտարակոյս եմ, և ընդ յորդորել նորին զայլ քա-
“ զաքակիցս իւր ի նուէրս յայս. վասն որոյ խնդրեմ ի Զէնջ
“ փոյթ ունել զգրութենէ Կոնդակաց օրհնութեան և յորդո-
“ րանաց առ նոսա ի Վեհափառ Կաթողիկոսէն, և ես այնչափ
“ վստահ եմ յայս, մինչեւ կարծել առաւել օժանդակութիւն
“ գտեալ յԱդիւլիսէ քան ի Տփխիսէ, հայեցեալ յամենայն
“ հանգամանս որք չեն անծանօթ ձեզ։

“ Եւ վասն այսորիկ բարւոք լիցի և ազդոյ՝ առաքել նոցա
“ անդ ընդ կոնդակացն և ժապաւինեալ և կնքով Սիւնհոդոսին
“ տեսրակ մի, նշանակելոյ ի նմին զնուէրսն, որպէս և փոյթ
“ կալեալ լիցէք գայսմանէ անշուշտ և վասն այլ թեմից ըստ
“ խորհրդոյ ձերոյ։

“ Յուսամ զի ընկալեալ լիցէ ցարդ Վեհափառ Կաթողիկոս
“ զաղերսագիրն հասարակաց ազգին աստ, որ սպասէ յուսով
“ մխիթար և ուրախարար պատասխանւոյ նորին, և ես

“ Մնամ միշտ

“ Սրբութեան Ձերում

“ Ի Տփխիս. 21 Նոյեմբ. 1859.

“ Ամենախոնարհ ծառայ

“ ՌՈՄԱՆՈՍ ՆԱՏԻՐԵԱՆ. ”

Զաղերսագիրն հասարակաց առ Կաթողիկոս, հանդերձ յանձնարական թղթովք առ Սարգիս եպիսկոպոս Զալալեան առաքէ Պ. Ռ. Նասիբեան յԷջմիածին մասնաւոր սուրհանդակաւ և ծախսաւք իւրովք, որպէս զի հաւատի լիցի ընդ հասանել այնոցիկ անդ ի ձեռն նոցին։

Մինչդեռ անհամբերութեամբ և ակնկալութեամբ մեան զլխաւորքն յազգայնոցս ի Տփխիս մխիթար պատասխանւոյ աղերսագրին իւրեանց որ ի Վեհափառ Կաթողիկոսէն, ահա հասանէ անդ Սարգիս եպիսկոպոս Զալալեան դարձ արարեալ յԷջմիածնէ ի Տփխիս։ Հարցանեն ցնա զլխաւորքն յազգայնոցս անդ զելից աղերսագրին իւրեանց, նա զանգիտութիւն իւր ցուցանէ ընդ այն, սակաւ ինչ աւելս կալով յԷջմիածին, և յանկարծ հիւանդացեալ անդ ասէ, զառնայ յԵրեւան քաղաք դարման առնել հիւանդութեան իւրում, թէպէտ և նոքա ոչ հաւատան անդիտութեան նորա, հաստատեալ յայն ապա հաւատեօք, բանիւք թղթոյ և գնացիւք Կաթողիկոսին, զոր յիշատակին ի սմին կարդաւ։

Յետ երից աւուրց անտի հասանէ և անակնկալ պատասխանին աղերսագրոյն, և այն ոչ առ գրողս նորին ուղղակի, որպէս պարտ և արժան էր, այլ անուղղակի առ Սարգիս եպիսկոպոս Զալալեան։ Թէպէտ և զայս պակասութիւն ոգիտութեան նորա տուեալ՝ չհամարին ինչ, բայց ընդ զլացողական և պատ ի պատ պատասխանի նորին գայթագղին և զայրանան յոյժ յոյժ, հասանելով բոլորովին զյոյս իւրեանց ի նմանէ բարեաց ազգին։ . . .

Եւ ահա պատճէն պատասխանւոյ Կաթողիկոսին տուեալ աղերսագրին ազգայնոցս ի Տփխիս.

“ Մատթէոս ծառայ Քրիստոսի և անհատանելի կամաքն
“ Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս ամենայն Հայոց,
“ Մայրաքաղաքն Պատրիարք համազգականն նախամեծար Աթոռոյ
“ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Կաթողիկէ
“ Էջմիածնի. վիճակաւոր Առաջնորդին Վրաստանի Բարձր
“ Սրբազան Սարգսի Արքեպիսկոպոսի ։

“ Ջնամակ միաբանական սիրոյ յԱռաջնաւոր իշխանաց և
“ երեւելեաց քաղաքիդ առ մեզ ի 19 ամսոյս, ընկալեալ
“ յօժարութեամբ սրտի, ուրախ եղաք հոգւով չափ ընդ գո-
“ վանի ազգասիրութիւն նոցին, ընդ փոյթ և ընդ եռանդն
“ վասն հաստատուն պահելոյ նոցա զՓարիզեան Ազգային
“ վարժարանն համազգային ձեռնտուութեամբ, սակս որոյ
“ խնդրեն և ի մէնջ զօգնականութիւն յարդեանց վեցից վի-
“ ճակաց ժողովրդեան Հայոց ի Ռուսաստան, առ որ յանձն
“ առնեմ ձերում բարձր Սրբազանութեանն յայտնել նոցին
“ Ազգասիրական բարեպաշտութեանցն զայս մեր հաճութիւն
“ ի պատասխանի նոցին գրութեանն ։

“ Մեք ի լինելն մեր ի Կոստանդնուպոլիս խորհուրդ բարի
“ տուաք յարդելի հոգաբարձուաց հաստատութեան վարժա-
“ բանին, նախ՝ ունել դրամագլուխ, երկրորդ՝ գնել ի մայրա-
“ քաղաքին Փարիզու սեփական դետին յորոյ վերայ կառուցի
“ վարժարանն. զի առանց այսոցիկ իսկական աղբերաց, դի-
“ տէաք մեք թէ անհնարին էր մշտնջենաւոր հաստատութիւն
“ այնորիկ, որպէս և այժմս ընթերցաք ի գրուածս նոցին թէ
“ փակեալ է վարժարանն այն ։

“ Ուստի՝ յառաջադրեմ նոցին Աստուածասիրութեանն,
“ և խնդրեմ զի ինքեանք եւս նոքին միաբանութեամբն իւ-
“ բեանց գրաւոր հաղորդակցութեամբ տեղեկացին ի Զօրեցի
“ Նախկին Հոգաբարձուացն որք ոչ սակաւ փոյթ ունէին
“ հաստատութեանն, (որոց զանուանս գիտէ Գերապա-
“ տիւ Սարգիս վարդապետն Թէոդորեան,) զամենայն հան-

«զամենայն վարժարանին, զբանաւոր առթից խափանման
«այնորիկ, եթէ եղեալ իցէ. և զայն, եթէ ոչ ոչ ունայնին
«այժմ երկոքին վարդապետքն, ըստ որում լուաք, եթէ
«վերադարձեալ են ի Պոլիս, և յայտնեացին նոցա զկամս
«միաբան գործակցութեան իւրեանց. զի այսպիսի համա-
«ձայն ձեռնտուութեամբ և հանգանակութեամբ տրոց մե-
«ծի և փոքու ընդհանուր միաբանութեան ազգի Հայոց՝
«երկաքանչիւր կողմանց՝ միայն համարիմ ես կալ հաստա-
«տուն Փարիզեան վարժարանին և պողարերել ազգին զօ-
«գուտ լուսաւորութեան և դաստիարակութեան մանկանց.
«զի զուգութիւն է մայր բարեաց, իսկ անզուգութիւն ծը-
«նող չարեաց, առանց որոյ ոչ հաւաատեն ինձ միտք իմ
«եթէ մի կամ երկու անձանց հանգանակութիւն տրոց
«կամ մանաւոր ազգիւր արդեանց կարիցեն հաստատուն
«պահել զազգային վարժարանն մշտնջենաւորապէս յայն-
«պիսում ազութեան իրաց և յայնպիսում հեռաւորութեան
«տեղւոյ։

«Յայս վիճակ հանգամանաց Ազգային վարժարանին Փա-
«րիզու և մեզ ոչ բարւոք թուի մանաւոր օգտիւ՝ ընդհա-
«նուր վնասուց Ազգիս լինել պատճառ, երբ ի վեց թեմս
«վիճակաց ազգի մերոյ Ռուսաստանեաց յառաջանան ի դաս-
«տիարակութիւն մանկանց Եկեղեցւոյ Հոգեւոր Սեմինա-
«րեայք արդեամբք նշանակելովք ի ձէնջ, և կառավարին
«Ազգիս մերոյ հոգեւոր Առեանք և վանք և Առաջնորդք։

«Կարեկից եմ ընդ նոսա միշտ վասն հաստատութեան
«Ազգային վարժարանին ի Փարիզ, եթէ Ազնուական իշխանքն
«Համազգային խորհրդով միաբանութեան և ընդհանուր
«հաւանութեամբ Երեւելեացն Պոլսոյ, և Գերապատիւ
«Գաբրիէլ վարդապետին Այվազեան կարասցին խորհել
«զօգուտն և ըստ վերոյգրելոցս ամենայնի գտանել զեղանակ
«հաստատութեան վարժարանին, և յայնժամ ոչ ունիմք
«մեք խնայել զգործակցութիւն մեր ընդ նոցին ազգօգուտ
«միաբանութեանն և մեծաջան վաստակոցն Հայր Սարգիս
«վարդապետի Թէոդորեան։

„ Վասն ամենայն Ազգիս Հայոց բարեբաւութեանցն և յա-
„ ռաջադիմութեան

„ Մնամք միշտ

„ Աղօթարար առ Տէր

„ ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

„ 30 Նոյեմբ. 1859 ամի.
„ Ի սուրբ Էջմիածին.

—

„ թ. 279. „

Յառաջնում հատուածի պատասխանւոյ Կաթողիկոսին տեսանին հաւատիքն չհաւատալոյ անգիտութեան Սարգսի եպիսկոպոսի Զալալեան զելից աղերսագրին. քանզի ըստ թելադրութեան Պարոն Նատիրեանի, որ ի յանձնարարական թուղթ իւր առ նա, լինի հատուածն այն բոլորովին. ապա ոչ անգէտ լինի նա այնմ, որպէս և ի խօսս իւր ապա ցուցանէ՝ թէ գիտէր նա զայն, և թելադիր լինի այնմ, . . .

Այլ թէ ընդէր այսպէս վարի նա ի խնդիրն այն, զոր ըստ խորհրդոյ իւրոյ արարին նոքա. վասն զի յեռամիտ խորհուրդ և ունկակից խորամանկութիւն, է սեպհական կնիք նորա, վկայեն Տիխիսեցիք, վասն որոյ և մերժեցին զնա ապա յառաջնորդութենէ անտի իւրեանց . . . .

Աւանդ վստահութեան Սարգսի վարդապետի որ ինա, մինչեւ ցեր մեկնելոյ իւր ի նմանէ . . .

Ցերկրորդ հատուածի պատասխանւոյն, թէպէտ և գոյ ճշմարտութիւն, բայց այլայլեալ այն. քանզի ասէր նա ի Կոստանդնուպոլիս, թէ ունի ինքն կամք և ցանկութիւն դեռին գնել ի Փարիզ և կառուցանել անդ զվարժարանն, իբրեւ ստացուածք սրբոյ Էջմիածնի, և զեկեղեցին որ ի նմին, կոչել յանուն Գրիգորի Լուսաւորչին, բայց փոխէ նա զքանս իւր

ի ամին, բան փոխոխութեան մուտց իւրոց, շարժելոց ի զանազան հողմոց։ . . .

Յերրորդ հատուածի պատասխանւոյն, փախուստ տայ նա ի պարտուց իւրոց, իբրեւ զանարի և զզէնընկէց զօրաւոր, որ խրատ տայ և խրախուսէ զզօրս իւր ի պաշտպանել հայրենեաց։

Իսկ ի չորրորդ հատուածի պատասխանւոյ իւրոյ, յայտ առնէ նա զճանաչումն մուտց իւրոց և զզգայութիւն արտի առ կարեկցութիւն այլոց, զոզորմելի դպրոցս մանկանց եկեղեցւոյն հոգեւոր սեւիլնարս ճանաչելով, և զհատատութիւն Ազգային վարժարանին ի Փարիզ, հակառակորդաց նորին յանձնելով հանդերձ գործակցութեամբ իւրով։ . . .

Ահա պատասխանին Մատթէոս Կաթողիկոսին տուեալ կոնդակաւ միաբանական սիրոյ նուանակին Առաջաւոր իշխանաց և երեսելոց Տփխիս քաղաքին։

Յուալից և ողբալից վիճակ Հայոց ազգին։ . . .

Թէպէտ և զառաջինն խորհին Տփխեցի ազգայինքս առնել նմա զարժան պատասխանին, յանդիմանել զնոսի պատճառս և զանիրաւութիւն նորա որ զդպրաց հատարակաց ազգիս, այլ Սարգիս վարդապետ կասեցուցանէ զնոսա ի խորհրդոյ անոր անօգուտ զայն համարելով, և խրատ կարեւոր տայ նոցա, զոր արժան էր առնել, բան ճանաչման մուտց իւրոց, և ի յանդիմանութիւն անծանօթութեան և չկամութեան նորին, և որ արդար վրէժխնդրութիւն ի նմանէ ընդ զլացումն խնդրոյ իւրեանց, այս է, նոքին իսկ առաջադրեալ աղերսագրին, վաթսուն անձինք, հանդանեկել ի մէջ իւրեանց իւրաքանչիւր որ 100 մանէթ ի տարւոջ որ գումարի 6,000 մանէթ, ի տարեկան թոշակ վասն երկուսասան պատանեկաց, ընտրելոց ի միջոյ 500 աշակերտաց Ներսիսեան ուսումնարանին ի Տփխիս, և առաքել զնոսա ի Փարիզ առ վարդապետս անդ ի վիճակ եկեղեցական. և եթէ չունիցի որ ի նոցանէ կոչումն առ այն վիճակ, լցի ի վիճակի վարժարանի վասն ուսումնարանին Տփխեաց. և այս ոյսակս զամն տան. եթէ տեսցին անոր արդիւնքին, հանապազորդեցի այն, ապա թէ ոչ՝ դարպա-

բնացի, կամ այլազգ տնօրինեացի այն ապա, ըստ պիտոյից և հանգամանաց ազգին։

Հաւանին նոքա ընդ այս խրատս նորա, և մինչդեռ զհետ լինին կատարումն տալ այնորիկ, ահա լսեն, թէ Ամբրոսիոս վարդապետ գնացեալ է ի Պոլիս և անտի անցեալ ի Թէոդոսիա առ Գաբրիէլ վարդապետ Այվազեան, և թէ որոշեալ է աշխատիլ ընդ նմա հանդերձ եղբարբ իւրով։ Վասն որոյ կային նոքա ի խորհրդոյ իւրեանց, ի հոգալոյ զհաստատութենէ վարժարանին ի Փարիզ, և ոչ այսչափ միայն, այլ և առաջադրութեամբ խոստացողքն զլանան հատուցանել զխոստացեալ օժանդակութիւն արծաթոյ, ասելով թէ վարդապետքն այնք որոշեալ են թողուլ զՓարիզ և գնալ ի Թէոդոսիա առ Գաբրիէլ վարդապետ Այվազեան. ապա չկարօտին նոքա այժմ օժանդակութեանս մերում, հանդերձ զանազան կարծեաք և խիստ դատաստանաք։ . . .

ԳԼՈՒԽ ԺԹ.

Թուղթ Գաբրիէլ վարդապետի առ Յարգիս վարդապետ վասն երթի Ամբրոսեայ վարդապետի ի Թէոդոսիա. — Թուղթ Ամբրոսեայ վարդապետի առ Յարգիս վարդապետ հանդերձ նշանաւոր բանիւք. — Պատասխանի ի՛ղդարդուրբեանն Յարգսի վարդապետի առ Գաբրիէլ վարդապետ հանդերձ գիտելեաք և ուսղբանօք. — Թուղթ ցաւալից շրոյ Խորենայ վարդապետի առ Յարգիս վարդապետ, հանդերձ նշանաւոր բանիւք, և քրիստոնէական շնդ այն. — Պատասխանի արդարացուցական անձին Գաբրիէլ վարդապետի առ Յարգիս վարդապետ, հանդերձ նշանաւոր բանիւք, և քրիստոնէական շնդ այն.

Թուղթ Գաբրիէլ վարդապետի առ Յարգիս վարդապետ, յորում ծանուցանէ նմա զլինելն Ամբրոսեայ վարդապետի ի Թէոդոսիա, և զխորհուրդ և զորոշումն իւրեանց անդ, և զառաջարկութիւն իւր, օրինակ զայս.

“ Գերապատիւ Հայր Սիրեցեալ.

“ Ամբրոսիոս վարդապետն մեր ասա է յերից աւուրց հետէ.
“ Զեզ թողում մակաբերել թէ որչափ խօսեցաք և խօսիմք
“ ընդ նմա զանցելոյն, զայժմուս, և զապագայից։ . . . Երա-
“ նէ թէ և Գեր. Հայրութիւնդ ասա դիպէր յաւելեալ
“ կարեւոր ժամանակի։

“ Որ զինչ և իցէ, որովհետև Փարիզեան վարժարանն փա-
“ կեցաւ, և զպարտս նորին կամայ և ակամայ հատուցէ
“ ազգ անուանեալն ժողովուրդ Կոստանդնուպօլսոյ, որ թե-
“ թեւամիտ խոստաբանութեամբքն այպանս և այսպիսիս
“ հասոյց մեզ և մերոցն ինչաս և վիշտ և խայտառակութիւն
“ իսկ, հաստատեցաք առ այժմ ի միջի երկոցունցս, (համա-
“ ըելով թէ հաճ և հաւան գտցի ընդ այս և Գեր. Հայրդ
“ մեր,) զի

“ Ա. Ինքն դարձցի յետ ութ կամ տասն աւուրց անդրէն
“ ի Փարիզ՝ դնել ի կարգի զմնացեալ գործս, աւարտել զըս-
“ կըսեալ տպագրութիւնս, և կատարել զյանձնարարութիւնս
“ իմ որ վասն ուսումնարանիս և տպարանի, և այլն։

“ Բ. Խորէն եկեսցէ այսր վաղագոյն որչափ իցէ հնար,
“ գործակից և օգնական լինել ինձ յամենայնի, ընդունելով
“ յինէն եւ ռոճիկ, և ըստ գրաւոր աշխատութեանցն վար-
“ ձատրութիւն ի դրամոցն զորս և Գեր. Հայրդ հաւաքէ ի կող-
“ մանէ յայդոսիկ։

“ Գ. Մի՛ եւս հաւատացուք բնաւ ամենեւին ի մեծաքա-
“ նութիւնս և ի խոստմունս Պօլսեցեաց, և մի՛ չուանաւ նո-
“ ցին ինչցուք այսուհետեւ ի ձրհոր։...

“ Դ. Աղաչեսցուք զԳեր. Հայրդ գալ և բնակակից և
“ խորհրդատու մեզ լինել ասա կամ ի Փարիզ. բայց և ի կամս
“ ազատութեան Ձերոյ թողցուք հարկաւ ընտրել զտեղի
“ բնակութեան Ձերոյ ասա կամ ի Փարիզ կամ ի Պօլիս։
“ Բայց զայս ամենայն կամիմք առ այժմ ի ծածուկ ունել
“ ի մեծէ և ի փոքրէ։

“ Ընկալայ զգրեալն ի Ձէնչ ի 17 հոկտեմբերի և խելամուտ
“ եղէ ամենայնի, եւս և յուսահատական բանից Կաթողիկո-
“ սին։ Այլ յոյս մեր յԱստուած է։

“ Ընկալայ և զցանկալին Ձեր նամակ որ ի 25 հոկտեմբերի,
“ և չյերկարեմ ի պատասխանին, զի անձուկ է ժամս, և

„ Հարկ է թողուլ տեղի գրութեան և Սիրելի Ամբրոսիոս
„ վարդապետի մերում ։

„ Ողջ լինել մաղթեմ ի Տեառնէ

„ Գերապատիւ Հայրութեանդ

„ Թէոդոսիա . 14 Նոյեմբ . 1859.

„ Անձնանուէր

„ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ . „

Թուղթ Ամբրոսեայ վարդապետի առ Սարգիս վարդապետ, յորում տայ տեղեկութիւն զանձնէ իւրմէ և զելից ուղեւորութեան իւրոյ ի Պոլիս, և զորոշմանէ վիճակի իւրոյ և եղբօրն Խորենայ, հանդերձ այլ ինչ ինչ տեղեկութեամբ և խնդրուածով արծաթոյ, օրինակ զայս .

„ Ամենապրեալի Հայր իմ և վարդապետ .

„ Մինչդեռ ցաւալից սրտիւ և մարմնով ձեռն ի գրիչ արկանէի տալ Ձեզ տեղեկութիւն զանձնէս և զելից ուղեւորութեան իմոյ ի Պոլիս, ահա եկն եհաս ցանկալին Ձեր որ յ12 հոկտեմբերի, և անչափ խնդութեամբ լցուցեալ՝ զօրութիւն նոր ազդեաց յիս , և զոգցես խրախուսեալ իսկ կենդանացոյց զհիւծեալն իմ և մաշեալ մարմին ի սէր որդեգրով Հօրդ և Գաբրիէլ վարդապետի հոգեկցորդ Եղբօր և սիրելւոյ , որ ի խոր խոցեալ ընդ մահաղեկոյցն իմ խօթութիւն , զամենայն փոյթ և զինամ ի մէջ առնուք ի դարման և ի փարատումն նորին ։ Քաջայոյս եմ թէ հայեցեալ ի ցաւս երկոցունդ և ի մշտամուն աղօթս Ձեր՝ ողորմելով ողորմեցի ինձ Տէր և դարձուցէ յիս զկորուսեալն իմ զառողջութիւն յօդուտ և ի պայծառութիւն Եկեղեցւոյ իւրոյ որոյ և ազգիս եղկելւոյ ։

„ Այն ունիմ յետ ութ աւուրց դառնալ ընդ ցամաք ի Փարիզ , և գտեալ զյղեալն Ձեր 5,000 ֆրանքսն՝ հատուցանել

“ անդէն պարտատերաց։ Եթէ նոյնչափ եւս հայթայթեալ
“ առաքեսջիք, մարթիմք ոչ միայն զերծանիլ յամենայն անձ-
“ նական պարտուց և ի հոգոց նոցին, այլ և աւարտել զտը-
“ պագրութիւն փառատիպ պատկերազարդ Տեղեմաքայ,
“ պարզաբանեալ Եղիշէի, և այլն։

“ Արդ կարող էք անդորր սրտիւ ձեռնել ի Տփխիս ի լրումն
“ աղգաւէր ըղձից Ձերոց, և զարնայնի փութալ ճեպել
“ ի գիրկս հայրական որդւոցդ, ի մեծ սիրումն և ի մխի-
“ թարութիւն վշտահար և լքեալ սրտից նոցա։

“ Մի մոռանայք, աղաչեմ, առաջի առնել զհաւատիս
“ շնորհապարտ գոհութեան մերոյ առ ամենապատիւ Առաջ-
“ նորդ տեղւոյդ, որպէս և առ չքնաղ ազգատէրն Նատիրեանց,
“ հանդերձ իւրովքն նմանեօք որ յաղագս մարդասիրական և
“ ազգասիրական զուարթառատ նուիրանաց իւրեանց, և
“ ի գութ խնամոցն որ առ Ձեզ և առ մեզ։

“ Որպէս լուայք ի թղթոյ հարազատիս, լաւ գրաւոր և
“ թախանձեցուցիչ հրաւիրանաց Ս. Պատրիարքի յաչս եղեալ
“ զմահ չոգայ ի Պոլիս յաւարտումն իրաց յոգնաթշուառ
“ Հայկազնեան ազգայնոյ վարժարանին։ Ի 17 անցելոյն ժա-
“ մանակի Տէրամբ անդր, և զաւուրս չորեքտասան խուսեցայ
“ զկարեւորաց ընդ գլխաւորս յազգայնոցս և ի ժողովս և
“ յառանձին վայրս, տալով նոցա զհաշիւ, հաշուամատեանք
“ և անդորրագիրք ի ձեռին, զելի և զմտի վարժարանին,
“ յորմէ անսի բացմանն, ցոր աղեւալի փակման։... Հանս-
“ գուսար պարտիքն ընդ հին և ընդ նոր, 83,000 ֆրանք.
“ պահանջք վարժարանին ի ծնողաց և յրևչաւէտ ժնողաց,
“ 57,000 ֆրանք։...

“ Քաջիկ խելամուտ է պատուական Հայրդ գանդաղու-
“ թեան Պօղոսեանց ի վճարումն որ և է գործոյ և որոշողու-
“ թեան։ Զայն տեսեալ և ի միտս առեալ զի եօթնեկաց կարօ-
“ որ հատուցումն պարտուցն, մանաւանդ զի ոչ որ համար-
“ ձակի պահանջել ի ծնողաց անսի զպարտս իւրեանց, անս-
“ գուտ և ինքնակար խակ վարկայ լրութեան ազգիս այլ եւս
“ մնալ անդէն, և զմնացուած նշխարեալ յաւագին կենաց

„ հաշել մաշել. նմին իրի պատճառ ի մէջ ածեալ զվանգս
„ Սեաւ Ծովու ի վաստակել օդոց, խնդրեցի հրաման
„ ի Ս. Պատրիարքէն փութալ գնալ ի Թէոդոսիա ի տես
„ Գաբրիէլ վարդապետին մերոյ, խառնակալով դառնալ
„ վերատին ի Պոլիս՝ ի խորհել և ի խօսել ընդ նմա զվերա-
„ տեսչութենէ ձեռնարանի և ժառանգաւորաց դպրոցի, զոր
„ ակնուն ընդ մեծամեծս թէ ընդունիցիմք։ . . . Կոյրն քա-
„ նիցս կորուանէ, Հայր, զդաւազանն. և թէ զեռն բերի-
„ ցէ միշտ կարմիր խնձոր։ . . .

„ Եւ ըստ խորհրդոյ Գաբրիէլ վարդապետի երթայց դէպ
„ ուղիղ ի Փարիզ, յոր մարմնոյս տկարութիւն յորդոր լինի
„ ինձ երկուցեալ ի վնասաբեր արդասեաց ցրտաշունչ ձմե-
„ ռայնոյն. թող զի և Խորէն և Անանիկ ժամ ի ժամէ մնան
„ ինձ անոք և անօգնական։

„ Առհասարակ բանք և կարծիք Պոլսեցեաց այնք են, թէ
„ վաղ որքան հնար է՝ հարկ անհրաժեշտ է ազգին հատու-
„ ցանել զպարտս ազգայնոյ վարժարանին, հատատելոյ
„ ինքով Պատրիարքին և Գերագոյն ժողովոյ. որպէս զի
„ զկնի տալոյ իմոյ զհաշիւ ելի և մնի առ Գերագոյն ժո-
„ ղովն, հաճեալ ընդ այն ազատ կացոյց զիս ի հնարից և
„ ի հոգոց հատուցման պարտուցն, չատ համարեալ զբիւրա-
„ պատիկ վիշտս տառապանաց որոց տարայ։

„ Այսչափ, Հայր, առ ժամն։

„ Գրկախառն համբուրիւ սիրոյ և կարօտանաց, և խնդրե-
„ լով ինձ յօժանդակութիւն և ի կատարեալ կազդուրումն
„ զաղօթս հայրենի,

„ Մնամ

„ Անձկալուոյ Հօրդ և վարդապետիդ

„ Թէոդոսիա. 14 Նոյեմբ. 1859.

„ Անձնանուէր

„ ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. ԳԱԼՅԱՆՑԵԱՆ։ „

Զքննութիւն բանից վերոյիշեալ նամակաց Գաբրիէլ և Ամբրոսիոս վարդապետաց թողումք մեք յայլում տեղւոջ, ըստ կարգի պատմութեանս, այլ այսչափ միայն քննեմք առ տեղեաւս թէ վախճան անցանելոյ Գաբրիէլ վարդապետի ընդ Պոլիս գնալ ի Թէոդոսիա էր խօսել ընդ խնամակալս Հայկազեան վարժարանին և հոգալ զպարտուց նորին. և յաղաչել և ի թախանձել խնամակալաց զնա կալ անդ ի Պոլիս աւուրս քանի մի եւս յաւարտել զայն, և նա խոստանայ նոցա վերատին դառնալ անդ յետ քանի ինչ աւուրց, և ի չկատարել զխոստումն իւր անտի պատճառանօք, պարտիքն այնք մնան առանց հատուցման, վասն այնորիկ և փակի վարժարանն ի միտս և ի նախատինս ազգին։ . . .

Նոյն լինի և վախճան գնալոյ Ամբրոսեայ վարդապետի ի Պոլիս, և այն հրաւիրանօք Պատրիարքին, և Գերագոյն ժողովոյ. և իբրեւ կամին նոքա քննել զտուեալ հաշիւ նորա և հոգալ զհատուցմանէ պարտուցն, երկնչի նա ի յապաղմանէ գործոյն այնորիկ, ըստ բանից իւրոց, և մանաւանդ ի մանրամասն քննութենէ տուեալ հաշուին, խուսէ անտի պատճառանօք, և խոստմամբ վերատին դառնալոյ անդ, այլ ոչ դառնայ ըստ օրինակի Գաբրիէլ վարդապետի և ըստ խորհրդոյ նորին։ Ապա երկոքեան նոքա են պատճառ մնալոյ առանց հատուցման պարտուց վարժարանին, և միտաւոյ պարտատերաց, և նախատանաց ազգին յաւիտեան. և ապա մի՛ պարծեցին նոքա թէ ազգասէր ոմանք են։ . . .

Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ թղթոյ Գաբրիէլ վարդապետի, յորում ծանուցանէ զհետեւանս անխոհեմ բանից և գրութեան նորա ի միտս յաջողութեան գործոյ իւրոյ որ անդ ի Տփխիս, զրանէ օժանդակութեան ասեմ, հանդերձ այլ ցաւալից լրաք, օրինակ զայս.

„ Գերապատիւ Հայր և Սիրելեալ Եղբայր.

„ Ցանկալի նամակ Ձեր, գրեալ ի Վ. անցելոյն, ընկալայ

«ցաւոք սրտի, թէ չէ պարտ ցուցանել Ձեզ կասկածանս ինչ
«յՇ ամենայն, և հանդերձեալ սակաւիկ մի ի հոգոց որ ընդ տա-
«բակուսական լուրս և ընդ զանազան կարծիս այլոց. քանզի
«աւուրքս ինչ յառաջ քան զգրութիւնդ լուայ ասա յայլոց
«զգաստենէ այդր Սմիրոսեայ վարդապետի մերոյ, հանդերձ
«զանազան կարծեաք, որոց ոչ կարէի հաւատալ, թէ յայն
«տակաւ միջոց ժամանակի վճարեալ նորա ի Պօլիս զգործն
«զայն մեծ՝ անցեալ ի՞ցէ այդր առ Ձեզ. թողից ասել զգա-
«նազան կարծեացն, զոր կամիք դուք այժմ ի ծածուկ ունել
«ի մեծէ և ի փոքրոյ, և զորմէ չունիմ ես ասել ինչ, թողով
«զամենայն վերին տնօրէնութեան։

«Իսկ զհանգամանաց գործոյս ասա ծանուցից Ձեզ յայլսում
«պատեհութեան և որոշ ինչ. միայն զվերաբերեալն ձեզ
«որ անտի ծանուցանեմ այժմիկ, հանդերձ զարմանալի
«լրմամբ . . .

«Սարգիս եպիսկոպոս Ջալալեան՝ որ հրաւիրեալ էր յԷչ-
«միածին վասն կարեւոր ինչ խորհրդոյ, դարձաւ անտի
«հիւանդագին մարմնով, և ոչ ուրախ հոգւով, հայեցեալ
«ի տիար զլուխն . . . և պատմեաց ինձ զլուեալն ի բերանոյ
«Սրբազան Կաթողիկոսին, թէ գրեալ ի՞ցէք դուք առ իշխանս
«ի Պօլիս, թէ անօգուտ է ազգին Փարիզու վարժարանն,
«պարտ է փակել զայն։

«Դժուարին էր արդեօք հաւատալ այնմ, եթէ այլ բանք
«նորին չհաստատէին զայն. քանզի յորժամ զլխաւորքն
«յազգայնոցս ասի գրեցին առ նա աղերսագիր մի, խնդրե-
«լով ի նմանէ օժանդակութիւն վարժարանիս, և ընկալան
«անտի բացասական պատասխանի, յորում բաց յայլ ամե-
«նայն կեղծ և սուտ բանից, կային և այս նշանաւոր բանք,
«թողուլ նորա զհաստատութիւն վարժարանիս իշխանաց
«Պօլսոյ և Ձեզ իսկ յանուանէ, որ և հաստատութիւն այնմ
«ասացելոյն, թէ գրեալ էիք դուք առ իշխանս Պօլսոյ և
«այլն և այլն։

«Ձեզ թողում գուշակել զհետեւանսն որք ասի կարծեաց
«հաստատակաց . . . վասն այնորիկ ծանուցի Ձեզ երբեմն

„ արդէն դեղեւեալ մուաց նորա , որ պատճառ ինձ խնդրէր
„ ձեռնթափ լինել յօժանդակութենէ վարժարանիս, որպէս
„ և եղեւ, և այն ի մէնջ իսկ։ . . . . . .

. . . . . .

. . . . . .

„ Մնամ

„ Գերապատիւ Հայրութեանդ

„ Ի Տփխիս . 14 դեկտ . 1859 .

„ Հոգեկցորդ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ . „

Թուղթ նորէն վարդապետի առ Սարգիս վարդապետ ի Տփխիս, յորում ծանուցանէ զանցս փակման վարժարանին ի Փարիզ, և կարօտութիւն իւր արծաթոյ, զչնորհակալութիւն իւր առ բարերարն, հանդերձ խորհրդածութեամբ, և տեղեկութեամբ, օրինակ զայս .

„ Գերապատիւ Հայր մեր և վարդապետ .

„ Ի պատասխանեալ անդ առաջնոյ նամակին Ձերոյ որ
„ ի Տփխեաց՝ ծանուցի Ձեզ զվերջին բաղմաղէտ անցս վար-
„ ժարանիս , զփակիլ սորա հրամանաւ Պատրիարքին Կոս-
„ տանդնուպօլսոյ , զցրուիլ աշակերտացն ի դպրոցս Գաղղի-
„ ացւոց և ի հայրենիս անդ իւրեանց, որպէս և զտագնապ
„ և զանհնարին վիշտ վտանգի մերում որ ի պարտաւորեալս ։
„ Եւ արդ ահա և ի ամին թղթի այսոր չիք ինձ խօսել ձեզ

«զայլ ինչ իրաց, բայց դարձեալ զահագին տառապանացն
«յոր տուայտիմ, լքեալ յամենեցուն, ի մեծի աղքատու-
«թեան։

«Արդարեւ սիրէին զՁեզ Երկինք, ո՛վ Գերապատիւ Հայր,
«որ ի գութ խանդաղատեալ ընդ ազգս ազգս չարակրու-
«թեանցն զոր կրեցէք ցարդ վասն սիրոյ Հայրենեաց՝ խնա-
«յեցին ձեզ գէթ մի՛ և այսմ անհնարին աղետից լինել ակա-
«նատես, և մի՛ ըմպել ընդ մեզ եղկելեացս զբաժակ զայս
«անտանելի դառնութեան, զպատրաստն մեզ և զխառնեալ
«յանքննելի դատաստանացն Աստուծոյ, ի վարձ ծառայու-
«թեանն զոր ի քառեակ ամաց հետէ անձնանուէր սիրով ըն-
«ծայեցաք Հայրենեաց։ . . .

«Ահա ի դրանց ի բաց եղեալ վարժարանին, վարժարանին
«ասեմ զորոյ զհիմունան եղաք և զոր արեամբ քան թէ
«քրտամբք ուռոգեցաք, չունիմ վայր ուր զգլուխ զիմ եղից,
«և ոչ իսկ մահիճք մի տուեալ լինի ինձ հանգստեան, և ոչ
«անկողին մի ասեմ զի արտասուօք իմովք ուռոգեալ զայն թա-
«ցից ընդ մարգարէին։ . . .

«Զի՞ք ձեռն որ կարկառիցի յիս զթութեամբ, և ոչ ոք է
«որ յաղէտս վաղահաս ձմերանս խորհիցի զթալով թէ եղ-
«կելի վարդապետն ոչ հաց ունի առ ուտեստ, ոչ վայր
«ի ջեռնուլ և ոչ հանդերձս կարեւորս ի պատապարիլ։ . . .

«Բայց օրհնեա՛լ լիցի ի Տեառնէ Աստուծոյ բարեպաշտն
«այր և աստուածասէր և ազգասէրն Տէր Ռոմանոս Զօղոս
«Նատիրեան, որ իբրու գուշակեալ ինն թէ յո՛ր ահագին
«նեղութիւն գոյր մեզ անկանել յերեսաց պարտատերաց
«մերոց՝ հաճեցաւ առաքել առ մեզ առատաձեռն զթութեամբ
«զ1,300 մանէթ։ Ահա շնորհիւ նորա եւեթ է զի ազատեցաք
«յերթալոյ ի բանտ և յառակ նշաւակի լինելոյ ի բոլանդակ
«մայրաքաղաքիս։ . . .

«Այո՛ օրհնեա՛լ լիցի նա և երիցս և օրհնեալ։

«Գրեալ էիք թէ, «Ի ձեր եւեթ առանձին պէտս առաքէ նա
«զարծաթն։» Եւ ահա և մեք յայն եւեթ ի վար արկեալ
«լսեա հրամանին, փակեցաք արծաթումն այնուիկ զբերան

“ մեծագունեցն ի պարտատերից մերոց ։ Քանզի որպէս և
“ զիտէք իսկ քաջ, ի պատճառս սատակագին տպագրութեանց
“ մերոց, Լամարթինեայ, Մասեաց Աղաւնւոյ, և այլն,
“ ի պատճառս ծախուց կաղմիցն, թղթոց, ճանապարհի,
“ կորստից և այլն և այլն, պարտք մեր եղեալ են և դիզա-
“ ցեալ ի վերս քան զգլուխս մեր, և չիք մեզ ուստեք յոյս կամ
“ օգնականութիւն, քանզի և չիք և գթութիւն ։

“ Ահա ի վերջ կոյս անցելումն ամի, Փարիզահայք ժողո-
“ վեալ հանդանակեցին ի միջի իւրեանց Ֆրանքս տասն հա-
“ զար, որպէս լուաք, և եառն ի ձեռս Պ. Ոսկանեանի առ-
“ ի հրատարակել զօրագիրն իւր զորմէ լուեալ էք ցարդ ան-
“ շուշտ և ընթերցեալ ։

“ Իսկ վասն մեր . . . այլ աղէտք մեր խրախացուցանել թուին
“ յաւէտ զբաղումս, քան թէ շարժել ի գթութիւն ։ Տեսցէ
“ Տէր և ողորմեսցի, և ողորմեսցի անշուշտ, զի վասն նորա
“ փառացն և սիրոյ մատնեցաք զանձինս յանձնառէր ծա-
“ ռայութիւն ազգի, որ այսօրինակ խստութեամբ և արհա-
“ մարհութեամբ վարեցաւ ընդ մեզ ։ . . .

“ Զոյգ ընդ հրամանի փակելոյ զվարժարանս՝ եկեալ էր
“ պատուէր առ հարազատն մեր ի Պատրիարքէն ելանել ան-
“ յապաղ գնալ ի Պոլիս և յարդարել անդ ընդ Գերագոյն
“ Ժողովոյ զիրս վարժարանին ։ Վասն որոյ և նա ոչինչ
“ կասեալ և դժուարին զայս հրաման հանել ի գլուխ, ել
“ դիմադրաւ վտանգաց կարէձմեռն ցրտայնոյն, բարձի թողի
“ արարեալ ատտանօր զամենայն իրս մեր սեփականս, և զայն
“ դարձեալ՝ յողորմ վիճակի և պայմանի անձնական առող-
“ ջութեանն ։

“ Գրեացեն ձեզ անշուշտ և ի Պոլսոյ, բայց և ես զելս իրացն
“ ոչ դանդաղեցից առ ձեզ հաղորդել ։

“ Զայժմուս մեծապէս եմ զբաղեալ յիրս վարժարանին և
“ տպարանի որ ի վերայ իմ ծանրանան միահամուռ, և առ-
“ անհնարին չբաւորութեանն չկարացեալ գէթ համակարգ
“ շրջել և գնալ առ և անդ, ծախեմ զուր տարապարտուց
“ ժամանակս իմ և զկեանս . . .

„ Մարթ է ձեզ խնամատարել զտադնապս իմ յերեսաց
„ տանուտեարն և պարտատերաց, որք վիշտս մեծ հասուցա-
„ նեն ինձ, և հարկ է դիմել ինձ վաղել ընթանալ հետիոտս
„ ասա և անդ, աղաչել զոմն, խոստանալ այլուամ, խորհուրդ-
„ դակցիլ ընդ միում, և այլն, և այլն, և ապա դառնալ
„ յերեկոյի ի տուն՝ լքեալ, խոնջ և վատակարեկ և յուսա-
„ բեկ և չարատանջ։ . . .

„ Այս այս են կեանք իմ ատանօր։ . . .

„ Աղաչեմ զձեզ մի՛ ի մոռացօնս թողուլ զեղկելիս, և զթալ
„ և ի գութ շարժել զբարեկամս մեր մեծարոյս։ Եւ աղօթս
„ վասն իմ արարէք, աղաչեմ, զի ազատեսցէ զիս Տէր ի ծան-
„ բատաղտուկ և ի բաղմավիշտ վիճակէ ասոր յոր ատակիմ
„ ունայն և անմխիթար։

„ Մատուցանել աղերսեմ զխոնարհ զիմ մեծարանս առ
„ Սրբազան Արհիեպիսկոպոսն Տ. Սարգիս Չալալեան և առ
„ ամենայն բարեկամս մեր և բարերարացս յակամէ յան-
„ ուանէ։

„ Ընդ այս ընկալարուք և զիմ գրկախառն և զանձկալից
„ համբոյր որդիական։

„ Ի Փարիզ. 15 Նոյեմբ. 1859.

„ ԽՈՐԷՆ Վ. ԳԱԼՖԱՅԵԱՆ. „

„ Յ. Գ. Ա. չքաւորութեանս չկարեմ առաջ զվարձ նամա-
„ կացս հատուցանել, վասն որոյ և ներումն հայցեմ ի սրբա-
„ զան Արքեպիսկոպոսէն։ „

Ի նամակս յայս բազում ինչ գոյ արժանի քննութեան, բայց թողումք զայն ապա. ինչ մի միայն քննեսցուք առ սեղեաս, և է այս։ Ի թուղթն Սարգսի վարդապետի առ Նոսա գրեալ կայր այսպէս. „Բայց այսու պայմանաւ զխոսաչիք „ քաջ, իբրեւ զմտան ինչ ի բարերարութեանցն ազգայնոցս

“ սատ ի կարեւոր պէտս մեր այդր առանձին, եւ՝ յօժանդա-
“ կութիւն ծախուց մատենից մերոց այդր և այլուր ։ ”

Իսկ ի նամակի յայս գրէ այսպէս “ Ի ձեր եւեթ առանձին
“ պէտս առաքէ նա զարծաթն ։ ” Յորս զանազան են յոյժ
“ խնամք բանից և նպատակ բարերարացն ։

Պատասխանի Գարրիէլ վարդապետի տուեալ թղթոյ Սարգ-
սի վարդապետի, յորում ծանուցանէ զմեկնիլ անտի Ամբրո-
սեայ վարդապետի և զորոշումն ընդ նմա, և զօժանդակութիւն
իւր առնա, և զպատճառ չդառնալոյ նորա ի Պոլիս ։ Մեղադրէ
զոմանս ի Տփխիսցի ազգայնոցս, որ ընդ քննութիւն գնացից
իւրոց, և արդարացուցանէ զինքն յայն. ծանուցանէ զպատ-
ճառ յապաղման իւրոյ գնալ յԷջմիածին ձեռնադրիլ եպիս-
կոպոս, և զկամս իւր. լքուցիչ համարի ինքեան զանաչառ
բանս Սարգսի վարդապետի, և քաղաքավարութեամբ իմն
օգնութիւն ի նմանէ խնդրէ քաջալերութեան, և յայտնապէս
ցուցանէ պէտս ունել ընկերաց նորա Գալֆայեան հարազա-
տաց, օրինակ զայս.

“ Գերապատիւ և Բազմարդիւն Հայր.

“ Առ յանկալի և միանգամայն ցաւալինամակ Հայրութեանդ
“ որ յշամայս, փութամ հատուցանել զհամառօտն պատաս-
“ խանի ։ Եւ նախ զայն ասացից, զի ի 25 ամսոյս մեկնեցաւ
“ Ամբրոսիոս վարդապետ մեր ընդ ցամաք՝ գնալ ի Փարիզ,
“ անցանելով ընդ Օտէսա ։

“ Ի սակաւ աւուրսն զոր եկաց նա սատ խօսեցաք լիով
“ զամենայնէ ։

“ Ինքն ոչ եւս թ քանէ արիւն, թէպէտ և նիհարացեալ
“ յոյժ յոյժ և վշտագնեալ ։

“ Բան եղաք ընդ նմա զի ընդ հասանելն ի Փարիզ առա-
“ քեսցէ այր զհարազատն իւր, օգնական լինել ինձ ի գործս
“ Ալեքսանդրեանին և տպարանի և Օրագրի, և ինքն մնասցէ
“ առ այժմ ի Փարիզ՝ աւարտել և դնել ի կարգի զիրս պար-

“ տուց և տպագրութեանց և այլն, և ապա եկեալ և ինքն
“ այսր առ մեզ։ Որքան ըղձալի էր մեզ տեսանել ասէն և
“ զանձկալի Հայրդ մեր, և խորհրդակիցս լինել իրերաց . . .
“ սակայն յուսամք զի ոչ անագանեսցէ և այն բարեբաղդու-
“ թիւն։

“ Զծախս ճանապարհի նորա ասի ցՓարիզ հատուցի ես,
“ նոյնպէս և զծախս Գաբատեան Խորենայ։

“ Գնեցի ինձանէ և զձեռագիր նորոյ համառօտ թուաբա-
“ նութեանն զի տպագրեցից։

“ Մինչեւ ցՓիշնեւ ունի իւր ուղեկից զայր հաւատարիմ
“ և զքաջածանօթ. անուն ցսահման Աւստրիոյ երիքօրեայ
“ եւեթ ճանապարհ է։

“ Զզուեալ է նա յոյժ յոյժ, և կարի իրաւամբ, ի խստա-
“ բանութեանց Պօլսեցւոցն, վասն որոյ և չէ բնաւ յանձին
“ կալեալ զառաջարկութիւն Պատրիարքին, զալ նմա և եղ-
“ բօրն ի Պօլիս, և անդ ունել զտեսչութիւն երկոցց վեծա-
“ վեծ վարժարանաց, և այլն։ . . .

“ Զարմանամ ես փոքր ինչ ընդ պատճառել Թիֆլիզեցեաց
“ ոմանց պատճառանս, ի մէջ բերելով զկարծիս իմ զան-
“ հատատութենէ վարժարանին մերոյ ի Փարիզ։

“ Ոչ ապաքէն տուրք նոցա լինելոց է վասն տպագրութեան
“ մատենից ուր ուրեք և իցէ. և ընդէր յուզիցեն դարձեալ
“ զխնդիր վարժարանին։ Թող զի եթէ իմ տարակուսանօք իցէ
“ խօսեցեալ երբէք զՓարիզեան վարժարանէն, ոչ ապաքէն և
“ զպատճառն ի վերայ բերեալ է, թէ առ ի չգոյէ արծաթոյ։
“ Թո՛ղ տացեն ինքեանք արծաթ թէ կամին և կարեն, և ես
“ առաջին երաշխաւոր կամ նոցա հատատութեան վարժա-
“ բանին, զոր դարձեալ մարթի բանալ ի մայրաքաղաքի անդ։

“ Թուի թէ և իմս ուղեւորութիւն յէջմիածին ոչ եղիցի
“ յառաջիկայ գարնանի, այլ յայլուսմ դիպողացն ժամա-
“ նակի արդեօք, և այն յայնժամ եւեթ, յորժամ Սրբազան
“ Կաթողիկոսն ասիպաս կոչեսցէ զիս առ իւր. քանզի առա-
“ ջեալ է ցոմանս յուխտաւորաց Կախէջեւանի, զի եթէ ոչ
“ անասցեմ ես հրամանի իւրոյ յամենայնի, (զոր և չիմանամ

“ բնաւ թէ ընդէր ի՞նչ ասացեալ,) ոչ ձեռնադրեացէ զիս
“ եպիսկոպոս։ Եթէ այլ ոք ոչ, սակայն Գեր. Հայրութիւնդ
“ քաջ գիտէ, զի ոչ եպիսկոպոսութեան ցանկացեալ է իմ
“ երբէք, և ոչ առաջնորդութեան։

“ Այսու ամենայնիւ բազում զգուշութեամբ պարտ է ինձ
“ վարել տակաւին ի պաշտամանս իմում։ . . .

“ Հարցանէ ցիս Հայրութիւնդ ասելով. “ Կարիցէ՞ք դուք
“ միայն և այսի՛ դարման տանել ազգիս անմտութեան։ ”
“ Որչափ լքուցիչ ի՞նչ է վասն իմ այս բան Գեր. Հօրդ, նախ
“ զայս ասացից, զի ահա յուսամ զի ի գալ այսր Հայրու-
“ թեանդ և միւս Եղբարց մերոց երկոցուն՝ ոչ եւս եղէց միայն,
“ և յայնժամ ասի եւս կարող լիցուք օգնականութեամբ
“ Տեառն դարման ինչ, զէթ ըստ մասնեայ՝ տանել ամենա-
“ բեան ազգիս։ Այլ թէ միայնակ մնայցեմ, հարկաւ տակաւ
“ յոյժ եղիցի դարման տարեալ յինէն, թէ և ի Փարիզ կայցեմ
“ կամ ի Լոնտոն կամ յԷջմիածին։

“ Ողջ լինել մաղթեմ

“ Գերապատիւ Հայրութեանդ

“ Թէոդոսիա. 29 Նոյեմբ. 1859.

“ Անձնանուէր

“ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ. ”

ԳԼՈՒԽ Ի.

Պատասխանի Սարգսի վարդապետի առեալ թղթոյ Ամբրոսեայ և Խորենայ վարդապետաց. — Վերատին առաքումն արծաթոյ ի Տփխիսէ ի Փարիզ յօժանդակութիւն վարդապետաց անդ. — Տեղեկութիւն զվիճակէ Սարգսի վարդապետի. — Հրաւէրութիւն ազգայնոցս ի Տփխիս ընդ որոշումն վարդապետաց ի Թէոդոսիա. — Գնալոյ զգնացից Գաբրիէլ վարդապետի. — Դերեւումն ակնկալութեան բարեաց ի Կաթողիկոսէն, հանդերձ գիտելեաք օրինակ զայս.

Պատասխանի Սարգսի վարդապետի առեալ թղթոյ Ամբրոսեայ և Խորենայ վարդապետաց, յորում ասայ տեղեկութիւն զվիճակէ իւրմէ, զվերատին առաքմանէ 5,000 ֆրանքաց. ծանուցանէ զհաճութիւն ազգայնոցս ի Տփխիս ընդ որոշումն վարդապետաց ի Թէոդոսիա, զքննութիւն նոցա որ ընդ գնացս Գաբրիէլ վարդապետի, զկամս օժանդակելոյ նորա ընկերաց իւրոց ի Փարիզ, զդերեւումն ակնկալութեան բարեաց ի Կաթողիկոսէն, հանդերձ գիտելեաք օրինակ զայս.

« Սիրելեալք և Անձկալիք իմ ի Քրիստոս.

« Յետ երկար ակնկալութեան և շատ մտայուզութեան ընկալայ ի և ամենայն զյանկալի նամակս Ձեր որ ի Թէոդոսիոյ « և որ ի Փարիզէ, զրեալք ի 14 և ի 15 անցելոյն։

« Արարից նախ զպատասխանի կարեւոր բանից թղթոյ ձե-

“ բոց միանգամայն. ապա տաց տեղեկութիւն զվիճակէ իմմէ
“ և զհանգամանաց գործոյս սոա, հանդերձ գիտելեաք։

“ — Ի պատասխանեալդ անդ, ասէք, առաջնոյ նամակի
“ ձերոյ որ ի Տփխիսայ ծանուցի ձեզ զվերջին բազմաղէտ անցս
“ վարժարանիս։ ,, Այլ ոչ յիշէք զթուականն թղթոց իմոց,
“ և ոչ զպատասխանեալն ձերոյ։ Առաջին նամակն իմ գբ-
“ բեալ է ի 1 սեպտեմբերի անցելոյ, զորոյ ոչ ընկալայ ցարդ
“ պատասխանի. երբ պատասխանեալ իցէք նմին, ոչ ասէք։

“ Ամենայն շնորհակալութեան, գովութեան և օրհնութեան
“ ձերոյ արժանի է բարեպաշտ և ազգասէր այրս այս Պարոն
“ Ռամանոս Նաստրեան. ապա անպակաս արասջիք զնայն։

“ — Արդարեւ սիրէին զՁեզ Երկինք, ասէք, խնայեցին
“ ձեզ դէթ մի՛ և այսմ անհնարին աղետից լինել ակամաստս,
“ և մի՛ ընկել ընդ մեզ եղկելեացս զբաժակ զայս անտանելի
“ զառնութեան։ ,,

“ Ասեմ ես առ այս, թէ այդոցիկ վշտաց և նեղութեանց
“ որոց տարայք զուք առանձին, ոչ անկցորդ եմ ես հոգւով
“ և մարմնով, միոմն անդադար զձենջ հոգալով, և միւսոմն
“ առաւել քան զձեզ տանելով վշտաց և նեղութեանց, և զայս
“ առանց ծանուցանելոյ ձեզ ցարդ, վասն չյաւելլոյ ձեզ առա-
“ ւել հոգ և ցաւ ի զուր. բայց արդ ի դէպ համարիմ ծանու-
“ ցեալ զայն համառօտիւ ի սմին։

“ Գիտէք թէ զինչ անկողին իմ ի ճանապարհորդութեանս.
“ չոր և աղտեղի տախտակ միայն առանց բարձի և վերմակի.
“ և յԷչմիածին և ի Տփխիս կարծր անկողին և աղտեղի վեր-
“ մակ առանց սավանի։ Ժամն սակաւ մնամ ես յանկողնի,
“ անհանգիստ գոլով յոյժ ինքին. ի տքնութեան անցուցանեմ
“ զմեծ մասն գիշերոյ։ Եւ գիտէք թէ քանի՛ կարեւոր է առող-
“ ջութեանս շրջիլ յաւուր գոնէ ժամս երկու, սակայն չկա-
“ րեմ ես առնել զայն սոա, սակս տարաշրջուս զգեաուս, զի
“ առանց վեղարի և լայն վերարկուի անմարթ է վարդապետի
“ շրջիլ իրրեւ ի գրասենս կամ վասն առողջութեան. վասն
“ այնորիկ փակեալ կամ ի սենեկիս և նեղիմ յոյժ ի մարմնոյս
“ մարմնոյս, քորելով զայն զգիշերն ողջոյն։ . . .

“ Ահա այսպիսի կեանս անցուցանեմ ես ասա զամիս վեց,
“ և չգիտեմ թէ քանի՛ եւս ունիմ անցուցանել սոյնպէս, և
“ թէ կարացից տակալ այսմ առանց հիւանդութեան, հայե-
“ ցեալ ի հասակս ծերութեան։ Եւ առ. ինչ այս ամենայն,
“ մանաւանդ մահացուցիչ մուրոդութիւն իմ ասա։ . . . Վասն
“ սիրոյ ազգին իմոյ։ Եւ անտի զինչ միխիթարութիւն։ . . .
“ Ակնկալութիւն վարձուց ի Տեառնէ միայն, որպէս և հա-
“ ստատեալս եմ հաստատութեամբ։ . . . Այսպա պահեալ են
“ ինձ Երկինք միշտ և յամենայն տեղիս միշտ և. նեղութիւն։
“ Փակիլ վարժարանիդ հաւանութեամբ Պօլսեցի ազգայնոցս
“ և հրամանաւ Պատրիարքի նորին, ի պարծանս մեզ է և
“ ի նախատինս նոցա յաւիտեան։ . . .

“ Իսկ երթ ձեր ի Պոլիս բարուք և ի դէպ հանդիպեալ է.
“ բարուք, սակս առողջութեանդ, առնելովդ ծովային ճա-
“ նապարհորդութիւն. և ի դէպ, վասն որոշելոյ զինդիր
“ պարտուց վարժարանիդ, և վասն տեսանելոյ զԳաբրիէլ
“ վարդապետ։ Միայն խորհուրդ և որոշումն ձեր որ ընդ
“ միճակ Խորենայ վարդապետի, մտերիմ բարեկամաց,
“ նախատես և ճշմարիտ ազգասիրաց ասա՝ ոչ հաճոյ թուե-
“ ցաւ, այլ ազդ ճանաչելով սոցա զօգուտն աշխատութեան
“ նորա անդ և այդր, խորհելով և գործելով վասն յաջողու-
“ թեան նորին, որպէս և տեսանէք յընթացս գրութեանս
“ որ զհանգամանաց գործոյս։ Այսպա կատարումն որոշման
“ ձերոյ ի կախ մնացէ առ ժամս, մինչեւ ծանուցից ձեզ զե-
“ լից խորհրդոյ և գործոյ սոցա ասա, և մինչեւ գարձայց
“ ես այդր։

“ Թէպէտ և Գաբրիէլ վարդապետ ունի կարօտութիւն
“ այդպիսի անձին, հայեցեալ ի ծանրութիւն գործոյ իւրոյ
“ և իրաւունս արդեաք, այլ ոչ անձնասիրութեան, խորհելով
“ զպատուոյ իւրմէ միայն, և մոռանալով խպատ զնախատինս
“ այլոց, որ ի ներքին և յարտաքին թշնամեացս։ . . . Թէպէտ
“ և գրեալ էր նա ինձ, ի ծածուկ պահել զայս որոշումն ի մեծ.
“ և ի փոքրոյ, բայց սոքա ասա զիսէին զայս յառաջ քան
“ զգրութիւն նորին, և ինձ ծանուցին։ . . .

„ Զվերատեսչութիւն ճեմարանին և ժառանգաւորաց դպրո-
„ ցին առաջարկեցին և ինձ անդ ի Պոլիս, Ս. Պատրիարք, և
„ Կարապետ Ամիրա Պալեան, և ես ասացի նոցա, թէ նախ
„ պարտ է հոգալ զվարժարանէս, ապա զայնմանէ, որք
„ ի հաստատութիւն յայն կախին։ . . . . . .

. . . . . .

. . . . . .

. . . . . .

. . . . . .

„ Ահա ծանուցի ձեզ զհանգամանաց գործոյս և զվիճակէ
„ իմմէ ասա։

„ Մնամ

„ Սիրելւոյդ

„ Ի Տփխիս. 20 դեկտ. 1859.

„ Հոգեկցորդ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ. „

Տեսեալ Սարգսի վարդապետի զանյաջողութիւն գործոյ իւրոյ ի Տփխիս պատճառաւ անխոհեմ գնացից Գաբրիէլի վարդապետի, և լուեալ զգանգատ և զքննութիւն ազգայնոցս անդ որ զնմանէ, առնէ պատասխանի վերոյիշեալ թղթոյ նորա անուշադիր և հաւատի բանիւք, և էնքէ զայն նշանաւոր բանիւք, օրինակ զայս.

„ Գերապատիւ Հայր և Սիրեցեալ Եղբայր.

„ Նախընթաց գրութեամբս, որ ի 14 անցելոյն, ծանուցի
„ Եղբայրութեանդ զկարևորսն, բաւական և շատ համարեալ
„ զայն Ձեզ ի գիտութիւն և ի հոգ, խնայելով յաւելուլ Ձեզ

“ զառաւել հոգ ի զուր . բայց զրուխնամբդ որ ի 29 անցելոյն ,
“ ստիպէք զիս յաւելուլ զայն , թէպէտ և առաւել ի զուր ,
“ չգտանելով ոչ հոգոցդ և ոչ ցաւոցս ինչ դարման ։

“ Ստիպիմ արդ յոչ կամացս և ցաւօք սրտի առնել բանից
“ թղթոյ ձերոյ մի առ մի պատասխանի ։

“ — Զգուեալ է նա , Ամբրոսիոս վարդապետ , ասէք , յոյժ
“ յոյժ , և կարի իրաւամբ ի խոտորանութեանց Պօլսեցեացն ,
“ վասն որոյ և չէ բնաւ յանձին կալեալ զառաջարկութիւն
“ Պատրիարքին , գնալ նմա և եղբօրն ի Պոլիս , և ընդունել
“ զտեսչութիւն երկուց մեծամեծ վարժարանաց ։ ”

“ Զգուեալ եմ և ես անտի և առաւել քան զնա , և այն
“ իրաւամբ և արդարութեամբ , բայց պարտ է ինձ ասս անա-
“ շառութեամբ քննել զպատճառսն պակասելոյ նոցա յայն ։

“ Ո՞չ ապաքէն նախ՝ անփորձութիւն նորա , որ առանց
“ յապահովելոյ զտարեկան թոշակ աշակերտելոյն ած զնոսա
“ ի Փարիզ , և անզգուշութիւն նորա յընտրութիւն մանկանց ,
“ ընդունելով զզեղծեալ բարուք երիտասարդս , որք եղծին
“ զհամբաւ վարժարանիս անկարգութեամբն իւրեանց ։ Թող
“ զանհոգութիւն նորա որ զպարտուց վարժարանիս ։

“ Երկրորդ՝ բաժանումն Ձեր ի մէջ անտի , որ գուշակ
“ իմն եղեւ անհաստատութեան վարժարանիս , և լքումն սրտի
“ Պօլսեցեաց ի լնուլ զխոտումն իւրեանց , ըստ վկայելոյ
“ բազմաց , և անհոգութիւն Ձեր ապա զպարտուց վարժա-
“ բանիս , զորմէ եւս լիցին բանք ուրոյն , ըստ կարգի ։

“ Զտեսչութիւն երկուց մեծամեծ վարժարանաց առաջար-
“ կեաց և ինձ ոչ միայն Պատրիարքն , այլ և Կարապետ
“ Ամիրա Պալեան , որոց եռուռ ես զարժան պատասխանին ,
“ հարցանելով ցնոսա , թէ ո՞յք էին այնց երկուց վարժարա-
“ նաց վարժապետք . ո՞չ ապաքէն պարտ է Ձեզ ասացի , նախ
“ զայնցանէ հոգալ , ապա զՏեսչէ նոցին . և ո՞չ ապաքէն
“ հոգ մեր և աշխատութիւն վասն այնորիկ են ասացի , պատ-
“ բաստել վարժապետս , ի հրահանգելոյց անտի վարժարանին
“ մերոյ ի Փարիզ ։ Ապա պարտ է ձեզ ասացի , օժանդակել
“ հաստատութեան նորին ։ Թէպէտ և եռուն ինձ իրաւունս ,

“ այլ օժանդակեցին նմին և ոչինչ, համոզեալ ի բանից հա-
“ կառակորդաց մերոց, որոց գլխաւորքն են ոռքա, և առա-
“ ջին է Յովհաննէս Պէյ Տատեան ծածուկ արբանեակ Մխի-
“ թարեանց, որ Ջանայր և Ջանայ միշտ փակել զվարժարան
“ մեր ի Փարիզ, և գյիշատակ մեր Ջնջել անտի, ի լրումն
“ ցանկութեան Մխիթարեանց, խրատ տալով մեզ իբրեւ կա-
“ րեկից բարեկամ, գալ և մեր երեցուն այդր առ ձեզ և
“ աշխատիլ ընդ ձեզ, և որ եհաս նպատակի իւրում . . .

“ Երկրորդն և երրորդն են *** երկոքին անդամք Գերագոյն
“ Ժողովոյ, հանդերձ քանի մի այլ Գաղղիացի հոգւով համա-
“ խոհիւք իւրեանց, որք քարոզեն միշտ թէ դատարակութիւն
“ մեր ի Փարիզ վանական է և անպիտան վասն ազգիս այժմեան
“ դարուս. պարտ է ասեն դատարակել զհայ մանկունս ի հա-
“ մալսարան Փարիզու ընդ Գաղղիացի մանկունս, իսկ մեք լիցուք
“ անդ իբրեւ հովիւ առաջնորդել նոցա անդ և մատակարար լի-
“ նել ի սան յոր բնակին նոքա, հոգալ զպէտս նոցա ըստ մարմ-
“ նոյ հանապազօր, և ըստ հոգւոյ յաւուրս կիւրակէի, միանգա-
“ մայն և խօսել ընդ նոսա հայերէն ի չմոռանալ նոցա զայն։

“ Եւ արդ՝ հարցանեմ Ձեզ, նախանձայոյզդ ազգայնու-
“ թեան, պարտ իցէ մեզ և արժան թողուլ զմանկունս մե-
“ ծագոյն մասին ազգիս ի մէջ մանկանց համալսարարանին
“ Փարիզու, և յուսալ թէ եկեալքն անտի պահիցեն երբէք
“ զազգայնութիւն իւրեանց, այլոքն հանդերձ . . . Ապա
“ ընդէր կամիք դուք զի անհետ լիցի վարժարան մեր ի Փարիզ,
“ կոչելովք անտի զերկոսին եղբարսն։ Թողից ասել զուրա-
“ խութենէ թշնամեացս, որ ընդ անչիշատակութիւն մեր ան-
“ տի, և զդատապարտանէ նոցա որ ընդ անմիտ կարծեցեալ
“ ձեռնարկ մեր անդ։

“ — Զարմանամ ես փոքր ինչ, ասէք, ընդ պատճառել
“ Թիֆլիզեաց ոմանց պատճառանս ի մէջ բերելով զկարծիս
“ իմ զանհատապատութենէ վարժարանին մերոյ ի Փարիզ։”

“ Թէպէտ և դատին ոմանք սատ որք պատճառեն զկար-
“ ծիս ձեր, առ ի զլանալ մեզ ինչ օգնութիւն, սակայն բա-
“ զում այնք են որք սաստիպ ճանաչեն զչկամութիւն ձեր ընդ

“ այն, լսելով զայն ի բերանոյ Կաթողիկոսին, զոր ոչ միայն
“ երկեցուցեալ էք դուք յօժանդակելոյ վարժարանիս, այլ
“ և ըստ բանից նորին իսկ գրեալ էք ի Պոլիս առ երեւելիս
“ ոմանս ի փակել զայն իբրեւ անօգուտ ազգիս. վասն որոյ և
“ մեղադրեն զձեզ։ . . .

“ — Մշ ապաքէն տուրք նոցա լինելոց են, ասէք, վասն
“ տպագրութեանց մատենից ուր ուրեք և իցէ. և ընդէր յու-
“ զիցեն դարձեալ զինդիր վարժարանին։ ”

“ Տուրք նոցա ըստ գիտութեանս իմում էին և են առ
“ ի պահել զմեզ ի Փարիզ, մինչեւ հոգասցի զհաստատութենէ
“ վարժարանիս անդ, յորմէ ակնկալութիւն բարեաց ազգիս
“ մեծապէս ունէին և ունին տակաւին. և հաստատութիւն
“ այսմ, ահա իբրեւ լուան սոքա զգալուստ Ամիրտոնեայ վար-
“ դապետի այդր, սկսան կծկել զձեռս իւրեանց ի տրոց անտի,
“ դուշակելով և լսելով եւս այսի զորոշումն ձեր, և յաւելուլ
“ զքննութիւն և զմեղադրութիւն զձէնջ։

“ Գիտասջիք և զայս, զի որչափ մեծ է վարկ նոցա զգիտու-
“ թենէ ձերմէ, այնչափ ոսկաւ է ակնկալութիւն բարեաց հա-
“ ստատակաց ազգիս յուսումնարանէդ և ի տպարանէդ այսի,
“ հայեցեալ ի միջոցն, և յաղաստութիւնս այդր ի Թէոդոսիա,
“ այլովքն հանդերձ։ . . .

“ — Թող զի եթէ իմ տարակուսանաք խօսեցեալ իցէ եր-
“ բէք զՓարիզեան վարժարանէն, ասէք, ոչ ապաքէն և
“ զպատճառն ի վերայ բերեալ է, թէ առ ի չգոյէ արժաթոյ։
“ Թող տացեն ինքեանք արծաթ թէ կամին և կարեն, և ես
“ առաջին երաշխաւոր կամ նոցա հաստատութեան վարժա-
“ բանին, զոր դարձեալ մարթ է բանալ անդ։ ”

“ Առ ի յարդարացուցանել զձեզ ընթերցայ ես յականջս
“ նոցա զայս հատուած թղթոյդ ընդ որ ասացին նոքա, թէ
“ “ Այո՝ այնչափ արժեն այս բանք նորա որչափ արժեն այն
“ բանք Կաթողիկոսին որք ի պատասխանին իւրում առ մեզ,
“ և որք յոյժ նման են միմեանց. կարծէք զի խորհրդակցեալ
“ են ընդ միմեանս, և որոց հաստատութիւն է, ասացին,
“ այնմ բանից զոր գրեալ է նա առ Երեւելիսն Պոլսոյ, թէ

„ անօգուտ է ազգիս վարժարանին Փարիզու, պարտ է փակել
„ զայն։ „

„ Ահա պատճէն պատասխանւոյ Կաթողիկոսին առ ազգա-
„ յինս ի Տփխիս.

„ — Կարեկից եմ ընդ նոսա միշտ վասն հաստատութեան
„ Ազգային վարժարանին ի Փարիզ. եթէ ազնուական իշխանքն
„ Համազգային միաբանութեան և ընդհանուր հաստատու-
„ թեան Երեւելեացն Պօղոսոյ, և Գերապատիւ Գաբրիէլ վար-
„ դապետի Այվազեան կարգացեալ խորհել զօգուտն և լաւ վե-
„ րաբերեալս ամենայնի գտանել զեղանակ հաստատութեան
„ վարժարանին, յայնժամ ոչ ուրիշք մեք խնայել զգործակ-
„ ցութիւն մեր ընդ նոցին ազգաւորս միաբանութեանն, և
„ մեծաջան վաստակոցն Հայր Սարգիս վարդապետի Թէոդո-
„ սեան։ „

„ Եւ ահա ի բանից ասի Կաթողիկոսին հաստատելով
„ հաստատեցան տոքա ի միտս իւրեանց թէ գրեալ էք դուք
„ առ Երեւելիսն ի Պոլիս առ ի փակել զվարժարան մեր
„ ի Փարիզ, և թէ զիա՛րդ միաբանի, ասեն, ընդ միմեանս
„ բանք և գործք Գաբրիէլ վարդապետի, որ ասէ. „Թող
„ տացեն ինքեանք արծաթ թէ կամին և կարեն, և ես առա-
„ ջին երաշխաւոր կամ նոցա հաստատութեան վարժարանին,
„ զոր դարձեալ մարթի բանալ ի մայրաքաղաքի անդ։ „

„ Ո՞չ տպաքէն, ասացին, կամեցաք մեք զհաստատութիւն
„ վարժարանին ի մայրաքաղաքի անդ, օգնելով վարդա-
„ պետաց ի նեղութեան իւրեանց. այլ նա կոչելով զնոսա
„ առ իւր ի Թէոդոսիա, կամի անհետ առնել զյիշատակ
„ վարժարանին այնորիկ, և կասեցուցանել զմեզ յօգնե-
„ լոյ նոցա։

„ Ի չնութենէ տացին ասի կարէք գուշակել զհանդամանս
„ գործոյս և զվիճակէ իմմէ ասա։ . . .

„ Զկարեմ ես այլ եւս արդարացուցանել զձեզ, ոչ ընդ
„ փակիլ վարժարանիս, ունելով տոցա հաւասարս ի ձեռին,
„ և ոչ ընդ անհոգութիւնդ զաղեսիոյ մերոցն ի Փարիզ, յասել

“ տոյա թէ վասն այնորիկ ոչ օգնեցիք նոցա, որպէս զի հար-
“ կաւորեալ թողցեն զՓարիզ առ ձեզ եկեցեն, հանդերձ
“ յիշատակութեամբ առաջին քննութեան և դատաստանի
“ իւրեանց որք զձէնջ. քանզի ասէին, թէ իբրեւ լուաք մեք
“ թէ եթող նա զվարժարան Փարիզու, գնաց կալաւ զԱ-
“ ռաջնորդութիւն Բեռարարիոյ, կորուսաք մեք յայնժամ
“ կիսով չափ զվարկ մեր զնեմանէ, և իբրեւ եցոյց նա առ
“ ի խօս իւր զդժուարութիւն հատատութեան ձեր ի Փա-
“ րիզ՝ գայթագղեցաք յոյժ, տալով զայն չափազանց անձ-
“ նասիրութեան նորա։ . . . Ապա արդարացին արդէօք,
“ ասէին, Ոսկանեան և Նալպատեան ի խիստ դատաստան
“ իւրեանց որ զձէնջ։ . . .

“ Զայս և առաւելքան զսոյն խօսէին տոքա զձէնջ։ . . .

“ Վասն այսորիկ աւաղեցի ես երբեմն զրաժանիլդ ի մէնջ
“ անտի, զոր և երկորդեմ այժմիկ. Աւաղ բաժանեմանս, ոչ
“ ապաքէն ամենայն վնասք մեր և նախատինք անտի ծագե-
“ ցան։

“ Ի զէպ և կարեւոր համարիմ ծանուցանել Ձեզ և զամ-
“ բաստանութիւն Նախիջեւանցւոց զՁէնջ, և զոր ամենեքեան
“ գիտեն առ, և բազումք իրաւունս տան նոցա, հայեցեալ
“ յօգուտ հասարակաց բարեաց։ Գանգատին նոքա զՁէնջ,
“ զի զիրաւունս և զվայելս քաղաքին իւրեանց 3,000 տանց,
“ սեպհականեալ էք դուք 200 տանց քաղաքիդ, հատատե-
“ լով այդր զաթոռ Առաջնորդութեանդ և զՅաքիրեան Ա-
“ ռաքելարանն. վասն զի ընտանիքդ այդր են, ասեն, և
“ կարօտին օգնութեան ձերոյ, և վասն այսորիկ զոհեալ էք
“ մանաւորաց զիրաւունս հասարակաց, և այսր անիրաւու-
“ թեան պատճառ զՅովհաննէս եղբայրդ ասեն, որ առ ի զեր-
“ ծանիլ ի ծանրութենէ ընտանեացդ ի վերայ ձեր արկանէ
“ զայն։ . . .

“ Թողից ծանուցանել զմանր մանր քննութիւն և զխիստ
“ դատաստան զոր առնեն առ զպատշաճողութենէ Առաջ-
“ նորդարանիդ, և զօգտակարութենէ ուսումնարանիդ զոր
“ յոյժ յոյժ աւաւել պատշաճ և օգտակար համարին ի Նա-

“ խիչեվան քան ի Թէոդոսիա, և մանաւորապար զԱռաջնոր-
“ դարանէդ, զոր ամիսոփեալ է ի սան ընտանեացդ, ուր
“ չէ վայել, մանաւանդ ձեզ որ ի վանս է՝ անեալ և վար-
“ ժեալ։

“ Յուշ լիցի ձեզ ճշմարիտ ասացեալն Փրկչին, թէ “Մար-
“ դարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի։” Եւ թէ “Ոչ է
“ մարգարէ անարդ, բայց եթէ ի գաւառի իւրում և յազգա-
“ տոհմի, և ի տան իւրում։”

“ Յաղագս անհոգութեան ձերոյ որ զպարտուց վարժարա-
“ նիս, հաստատեմ ասասնօր, հանդերձ յիշատակութեամբ
“ վերատակար հետեւանացն որք անտի։ . . .

“ Արդ՝ հարցանեմ ձեզ, ասիպեալ յայս բանից թղթոյդ,
“ թէ, “առ ի չգոյէ արծաթոյ տարակուսանաք խոսեցեալ
“ իցէք զՓարիզեան վարժարանէն. ” թէ հոգացիք դուք
“ զայնմանէ, մանաւանդ յորժամ ի Պոլիս գնացիք վասն
“ այնր։ Ոչ երբէք։ Զաւուրս տասն միայն կացիք դուք
“ ի Պոլիս առանց հոգալոյ զայնմանէ բնաւ. . . այլ պատ-
“ ուեալ և պարգեւեալ յազգայնոցս անտի՝ ճեպեցիք գը-
“ նացիք ի Թէոդոսիա առ միայնակ ցանկալիդ գերդաս-
“ տան։ . . .

“ Թէպէտ և խոստացայք դուք վասն բաղում թախանձա-
“ նաց խնամակալաց վարժարանիս վերատին դառնալ անդ
“ ի խաղել և ի հոգալ զկարեւորաց նորին, այլ ոչ պահեցիք
“ դուք զխոստումն ձեր մեռոյ պատճառանաք. . . և յորժամ
“ ի վերջին կարօտութեան արծաթոյ հասեալ եղկելի եղբարցս
“ ի Փարիզ, մինչեւ զժամացոյցս իւրեանց ի գրաւի դնել առ
“ ի զերծանիլ ի ապառնալեաց բանտին, որ վասն անձնակալն
“ պարտուց իւրեանց, որք և գրեալ ծանուցին ձեզ զաղեալի
“ վիճակ իւրեանց, կարեկցեալ հասիք յօգնութիւն նոցա
“ փոքրիկ ինչ գումար արծաթով։ Ոչ բնաւ։ . . . Այլ իմա-
“ ցեալ իմ զայն ի պանդխտութեանս և ի մուրացողութեանս
“ անդ, ծանուցի ցաւագին սրտիւ բարեպաշտի և ազգասիրի
“ առն Պարոն Ռոմանոսի Նասիրեան, որ արդահատեալ՝
“ հասոյց նոցա վաղվաղակի 1,300 մանէթ, որով հաստատեալ

“ զպարտս իւրեանց՝ զերծանին ի սպառնալեաց բանտին, որ-
“ պէս և վկայեալ խոստովանի Խորէն վարդապետ ի թուղթս
“ իւր որ առ բարեբարն և որ առ իս այսպէս.

“ — Ահա շնորհիւ Պարոն Ռոմանոս Նատիրեանի եւեթ է
“ զի ազատեցաք յերթալոյ ի բանտ, և յառակ նշաւակի լինե-
“ լոյ բովանդակ մայրաքաղաքիս։ . . . Այո՝ օրհնեա՛լ լիցի
“ նա և երիցս օրհնեալ։ ”

“ Եւ յորժամ ազատեցան նոքա ի պարտուց անտի կա-
“ տեկցութեամբ իմով և շնորհիւ Պարոն Նատիրեանի, յայն-
“ ժամ հրաւիրեցիք դուք զԱմբրոսիոս վարդապետ առ ձեզ
“ ի Թէոդոսիա, և թախանձանօք հաւանեցուցիք զնա գալ
“ ընդ հարազատին իւրոյ օգնական ձեզ այդր լինել՝ խոստա-
“ նալով նոցա լիուլի ռոճիկ, և հաստուցանելով առաստապէս
“ զծախս ճանապարհի նոցա։ . . .

“ Ի՞նչ ապաքէն արդարանան տքա աստ ի կարծիս իւրեանց
“ և ի դատաստանս, թէ կարող էիք դուք օգնել նոցա
“ ի Փարիզ արծաթով, ունելով զայն ի ձեռինդ բաւական,
“ և թէ՝ ոչ կամեցայք զայն, որպէս զի ի նեղ անկեալ նոցա
“ դիմեացեն առ ձեզ և ընդ ձեռամբդ լիցին նոքա։ . . . Եւ
“ ահա հասիք նպաստակի ձերում բարեբաղդութեամբդ, և
“ դժբաղդութեամբ այլոց։

“ Իսկ ես աստ և անդ սահեալ նժդեհութեամբ և մուրոզու-
“ թեամբ՝ չհասի զեւ նպաստակի իմում։

“ Եթէ գիտէիք դուք արդեօք թէ ի հաստատութենէ վար-
“ ժարանիս ի Փարիզ՝ առաւել օգուտ ազգիս և փառք ձեզ
“ լինէին, քան ի փակելոյ նորին և ի ժողովելոյ առ ձեզ զեղ-
“ բարդ, ոչ միայն չլինէիք դուք այնմ խափան, այլ և օժան-
“ դակէիք արծաթովդ նորին հաստատութեան։

“ Աւա՜ղ, զի ոչ ծանեայք դուք զայն. ծանիջիք ապա, այլ
“ անագան և անօգուտ։ . . .

“ Տեղի տամ ես լեզուագիտութեանդ, այլ ոչ նախահայեաց
“ տեսութեանդ։ . . .

“ — Հարցանէ ցիս Հայրութիւնդ, ասէք, թէ Կարիցէ՞ք
“ դուք միայն և այսր զարմանս տանել ազգիս անմուրծեան։

„ Արշաւի և լքուցիչ իցէ վասն իմ այս բան Գեր. Հօրդ, ասէք,
„ նախ զայն ասացից, զի ահա յուսամ, թէ ի գալ այսր
„ Հայրութեանդ և մեզ եղբարց մերոց երկոցուն, ոչ եւս
„ եղէց միայն, և յայնժամ ասասի եւս կարող լիցուք օգնա-
„ կանութեամբ Տեառն դարման ինչ դէթ ըստ մասնեաց տա-
„ նել անմտութեան ազգիս։ „

„ Սա այս լքուցիչ կարծեցեալ ձեզ բան իմ, հարցանեմ
„ ես դարձեալ և առաւել որոշ բանիւք, թէ կարիցէք դուք
„ հանդերձ երկոցուն եղբարբքդ զայն առնել այդր ի Փէոդո-
„ սիա, զոր կարէիք առնել անդ ի Փարիզ, հայեցեալ ի միջոցն,
„ ի պէտս ասեմ կարեւոր իրաց, ի վարժապետս ամենայն
„ ուսման և գիտութեան, ի մատեանս, ի գործիս, ի գործա-
„ բանս կենցաղօգուտ արուեստից, ի զանազան առարկայս,
„ որ ի լուսաւորութիւն մտաց և դաղափարաց աշակերտացդ,
„ և յաղաւութիւն տպագրութեանդ, և այլն, և այլն, և այլն։

„ Ասիցէք արդեօք, թէ զկարեւորսն չնորհեալ իցէ ձեզ
„ Ռուսաց Տէրութիւն։

„ Հարցանեմ ձեզ ընդ այս, թէ մինչեւ յե՞րբ հաստատուն
„ մնասցէ այդ առանձնաշնորհութիւնդ։ Ի կենդանութեանդ
„ արդեօք, և յետ այնորիկ, կարիցէ՞ք դուք երաշխաւոր
„ լինել այնմ։ . . .

„ Յո՛ւշ լիցի ձեզ առանձնաշնորհութիւնքն որք տուան
„ երբեմն Յովսէփ Կաթողիկոսի Արղութեանց։ . . .

„ Այք վայելեն այսոր զայնս։ . . .

„ Եթէ խորհուրդ և բանք հարազատիդ Պ. Յովհաննու յա-
„ պահովեն զձեզ յայն ամենայն, գիտասջիք, զի ազգն մեր
„ որ ի Ռուսաստան ճանաչէ զդա, երեւակայութեամբ միայն
„ լցեալ գլխով ոք և մեծատակար ազգայնութեանս։ . . .

„ Ապա զգուշացարուք ի խորհրդոյ և ի բանից դորա։ . . .

„ Եթէ սէր և գութ ընտանեացդ մատանալ եռուն ձեզ
„ զամենայն ակնկալութիւն բարեաց հասարակաց որ ի Փարի-
„ զեան վարժարանէս, մոռացա՞յք դուք խապտա զնախատինս
„ և զխիստ դատաստանս հակառակորդացս . . . և չազգեաց
„ ինչ բնաւ որոյ ձերում՝ կարն այն խրախութեան թշնա-

“ մեացդ ընդ վակիլ վարժարանիս, և ընդ աղետալի անցան
“ որք անցին անդ ընդ եղբարսդ։ . . .

“ Բնական է մարդոյս անձնասիրութիւն, բայց և սիրով
“ ընկերին հանդերձ։ . . .

“ Հարցանեմ ես ձեզ արդ՝ թէ յայդ ամենայն միխիթարու-
“ թիւնս ձեր, կայցե՞ն և ինձ ինչ . . . կամ հանձնա՞յն իցեն
“ մուց և նպաստակի իմում, վասն որոյ զամս քառասուն և
“ չորս վաստակեցայ, և յամենայնէ զրկեցայ, այլ և զհոգե-
“ պահ պարէնս անդամ զոհեցի . . . և յայսմ հատակի զվիշտս
“ ճանապարհի, զերկար պանդխտութիւն, և մանաւանդ ըզ-
“ մահացուցիչ վշտրողութիւն յանձին կալայ, և ոչ միայն չիք
“ յայսոսիկ ինչ միխիթարութիւն, այլ և յաւելումն նորոգ
“ ցաւոց արտի որ յամօթոյ ասի . . . զի մինչդեռ ի խնդիր
“ էի ես ասա օժանդակութեան եղբարցս, զուք այդր այլ
“ ինչ որոշեալ էք վասն նոցա, առանց ծանուցանելոյ ինձ
“ զայն յառաջագոյն։ . . .

“ Զիցէ՞ ինձ այդ յամօթ և ինախատինս առաջի ազգայնոցս
“ ասա, որք կարծէին ցարդ թէ առանց իմոյ խորհրդոյ և
“ կամացս չորոշեն ինչ իմ եղբարք . . . Ձայցէ՞ ինձ այսու-
“ հետեւ տեղի երաշխաւոր լինելոյ ի կողմանէ նոցա . . . և
“ վաստահացի՞ զք ի բանս իմ և ի խոստմունս։ . . .

“ Ահա յայս վիճակ հասուցիք զիս այժմ այդու որոշմամբ
“ ձերով . . . և ահա ծանուցի ձեզ և յիշատակեցի զամենայն
“ որոշ և անաչառ բանիւք և հաւատեաք. ընկալէք զայս
“ որպէս և ախորժէք, զի վասն իմ նոյն է, վճարեալ զոլով
“ ամենայն։ . . .

“ Ծանուցի ես զայս ամենայն և եղբարց իմոց զոք ի Փարիզ,
“ թողով կամաց նոցա որոշել զվիճակ իւրեանց ազատութեամբ
“ և քաջ կշռադատութեամբ ընտրել զմին յերկոցունց, կամ
“ ըստ ցանկութեան ձերում, և կամ ըստ ակնկալութեան
“ իմում, եթէ չիցեն և նոքա մուռացեալ խոպառ զնախա-
“ տինս հակառակորդաց իւրեանց, և զխրախութիւն թշնա-
“ մեաց որ ի վերջին յայն ազէտս իւրեանց, ի վակիլ վար-
“ ժարանին և ի ցրուիլ մանկանց նորին։ Թողից յիշել

„ զաղեռալի տեսարանն որ ի վաճառ կահուց նորին հրա-
„ պարակաւ . . .

„ Մնայ ինձ միայն առնել պատասխանի և քաղաքավար
„ բանից թղթոյդ, որք ունին այսպէս .

„ — Աղաչեացուք զԳեր. Հայրդ, ասէք, գալ և բնակա-
„ կից և խորհրդակից մեզ լինել ասա կամ ի Փարիզ, բայց
„ ի կամս ազատութեան Ձերոյ թողցուք հարկաւ զտեղի
„ բնակութեան Ձերոյ, կամ ասա կամ ի Փարիզ կամ ի Պօլիս։ „

„ Այսչափ է ի նախընթաց նամակիդ .

„ Իսկ ի վերջին նամակիդ ունին բանքն այսպէս .

„ — Որքան ըղձալի էր մեզ, ասէք, տեսանել ասէն և
„ զանձկալի Հայրդ մեր, և խորհրդակիցս լինել իրերաց .
„ սակայն յուսամք զի ոչ անազանեսցէ և այն բարերաղ-
„ դութիւն։ „

„ Զգիտեմ ես արդ՝ թէ ճնայցէ՞ այլ ինչ խորհրդակցելոյ
„ իմ ընդ ձեզ, յետ խորհելոյ և որոշելոյ Ձեր այդր զամե-
„ նայն։ Ապաքէն ոչինչ, որպէս և յայտ է ի բանից թըղ-
„ թոցդ . . . բաց յորոշելոյ բնակութեանս այդր կամ ի Կոս-
„ տանդնուպօլիս . զի զբնակութիւն իմ ի Փարիզ անհետ արա-
„ բեալ էք, կոչելով այդր և զԱմբրոսիոս վարդապետ։ Ապա
„ ճնայ ինձ ընտրել կամ այդր առ ձեզ բնակել, զոր ընդու-
„ նայն ծանրութիւն ընտանեացդ գիտեմ, կամ ի Պօլիս
„ ի խցի միոյմ եկեղեցւոյ փակել, զի ի տան աշխարհակա-
„ նի երկար ժամանակ բնակել՝ անպատշաճ և հակառակ է
„ կամացս . . .

„ Ահ սիրելեալդ իմ Եղբայր, յետ այսչափ ամաց կենակ-
„ ցութեանդ ընդ իս, դեռ ոչ ծանեար զիս . . . թէպէտ և
„ այր մի տառապեալ և նշաւակեալ եմ յաշխարհի, այլ
„ շնորհօք Տեառն բնութեան չեմ կորուսեալ զմարդկային
„ բնական և զանազիւտ զգայոդութիւնն . . .

„ Գիտասջի՛ք քաջ, զի եթէ վրիպեցայց ես և ասոյ ակնկա-
„ կալութենէս, հասանելոյ նպատակիս . . . և եթէ կարո-
„ ղացայ հոգեպահ պարենի, և յարկի բնակութեան, առա-
„ ել ընտրեմ ես լինել ի նեղքոյ շնորհաց օտարազգւոյ, և

„ և անցուցանել զմնացեալ աւուրս կենաց իմոց յանկեալնո-
„ ցի Նորին, քան բնակել ի յարկս անզգայ ազգայնոյ իմոյ,
„ և կերակրիլ ի սեղանոյ անտի, . . .

„ Ահա այս է իմ պատասխանին քաղաքավար բանից Թլղ-
„ թոցդ, և այս վերջին լիցի ընդ այս. . . .

„ Մաղթելով Ձեզ երկար կենդանութիւն և ամենայն դոր-
„ ծոցդ յաջողութիւն,

„ Մնամ

„ Գերապատիւ Հայրութեանդ

„ Ի Տփխիս. 11 յունվարի. 1860.

„ Ցաւագին սրտիւ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ. ”

„ Ց. Գ. Այն ինչ աւարտեալ զգիրս, ահա եհաս գրեալն
„ ձեր, որ ի 13 անցելոյն, հանդերձ ծրարելովքն ի նմին,
„ թղթովքն որ ի Պօլսոյ առին, և որ այսր առ Պ. Գրիգոր
„ Բերբերեանց։

„ Գրեալն իմ առ ձեզ ի 14 անցելոյն, յայտ է զի դեռ չէր
„ հասեալ ի ձեռս ձեր, յորժամ գրեցիք զթուղթդ, և յղեցիք
„ օրինակ մի վարդապետարանիդ առ Սրբազան Կաթողիկոսն
„ Յէջմիածին. քանզի եթէ առեալ էիք զթուղթս, կարծեմ
„ թէ ոչ յղէիք զայն առ նա, և մեայիք միայն պատասխան-
„ ոյ. և եթէ ունէիք դուք զայս ծանօթութիւնս, ապաքէն
„ յոյժ զգուշութեամբ նկարագրէիք յամենեքիդ զքաղաքա-
„ վարութիւն նորա որ ի Պոլիս, և զընդունելութիւնն որ
„ յազգայնոցս զճանապարհայն մինչեւ ցՅէջմիածին. . . .

„ Աւադ անծանօթութեանդ և անզգուշութեանդ, որով
„ նոքաք տեղի պատճառանաց նորա չօժանդակել վարժարա-
„ նիս ի Փարիզ, և մեղադրանաց և դատապարտանաց այլոց ոմք
„ զձէնջ. և յիրաւի՝ քանզի գոհութեամբ տեղեկութիւնդ որ

“ զնմանէ, շողոքորթութիւն և կեղծաւորութիւն համարեցաւ
“ ի տացանէ ասոի, ճանաչելով և ասելով զորպիսութիւն նորին.
“ և պախարակութեամբ յիշատակութիւնդ, որ զՓարիզեան
“ վարժարանին, հակառակութիւնդ ընդ այն առաւել ևս
“ հաստատեցաւ ի միտս սոցա, հանդերձ կարծեաք չափազանց
“ անձնասիրութեանդ։ . . .

“ Զգուշացարուք ազաչեմ ի բանս և ի գրուածս ձեր, զի
“ նպատակ էք նեռից բազմաց առանց վահանի, Կաթողիկոսին
“ ասեմ, և յարձակման նոցին առանց պատնշի, եղբարցդ
“ ասեմ Փարիզու՝ հանելով զնոսա անտի։ . . .

“ Մի կարծէք դուք, որպէս երբեմն ոմն ի վանացս, թէ
“ զակառակ իցեմ ևս ի սէր Փարիզու, զի կարճ են յոյժ
“ կեանք իմ, և նոյն է ամենայն տեղի վասն իմ . . . այլ նա-
“ խահայեաց տեսութեամբ և փորձառութեամբս, վասն բա-
“ բեաց հասարակաց ազգիս, և վասն պատուոյ ձերոյ և
“ և պաշտպանութեանդ որ անտի կամիմ զհաստատութիւն
“ նորին ի Փարիզ . . . . ապա մի՛ խոսիան և հակառակ լինիք
“ այնմ բանիւք և արդեամբք, որպէս եղէք ցարդ, այլ
“ օժանդակեցէք հաստատութեան նորին ջանիւք և արծաթով
“ որ չպակասի ձեզ այդր, եթէ կամիցիք, ըստ վկայելոյ
“ բազմաց։ . . .

“ Ահա ձեզ վերջին եղբայրական ազդարարութիւն իմ և
“ խնդիրս ի ձէնջ, և հաւատիք արդեաք առ յապայն։ ”

ԳԼՈՒԽ ԻԱ.

Թուղթ սեղանապետական Սարգսի վարդապետի առ Ամբրոսիոս վարդապետ ընդ որոշումն ի Թէոդոսիա. — Հրաժարումն Սարգսի վարդապետի յօգնելոյ Խորենայ վարդապետի. — Թուղթ Սարգսի վարդապետի առ Գաբրիէլ վարդապետ, յիշատակեալ զպակասորդիւն նախատնտեսական նորա, և. ազգարարութիւն. — Պատասխանի արդարացուցական և. բողոքական Գաբրիէլի վարդապետի. — Զարդասօսորդիւն զվարդապետութեանն հաւատոյ Գաբրիէլի վարդապետի. — Ակնկալութիւն նորա պաշտպանիլ ի Կաթողիկոսէն. — Պատասխանի զարմացական և. տխրութեան Գաբրիէլի վարդապետի ընդ խիստ բանս թղթոյ Սարգսի վարդապետի. — Զանք արդարացուցական անձին և. պարծանք Գաբրիէլի վարդապետի. — Ցաւալի պատասխանի Սարգսի վարդապետի ընդ անհաւանութիւն ձշմարտութեան. — Վերատին հաստատութիւն ձշմարտութեան, և. յանդիմանութիւն փոփոխութիւն բառից.

Պատասխանի Սարգսի վարդապետի առեալ թղթոց Ամբրոսիոս և Խորէն վարդապետաց, օրինակ զոյս.

“ Սիրեցեալք իմ Եղբարք.

“ Զցանկալին Ձեր թուղթ, գրեալ յՕդէսա ի 1 դեկտեմ-
“ բերի անցեալոյն, ընկալայ յՅ նորին ամսոյ, և մխիթարեցայ
“ ընդ լուր ողջութեանդ խնամք Տեառն, յորմէ և մաղթեցի
“ ձեզ հաստատութիւն քաջողջութեան և յաջողութիւն ճա-
“ նապարհիդ։ Յուսամ թէ ժամանեալ իցէք ցարդ ի Փարիզ,
“ և վայելեալ զսիրելիսդ։

“ Զունիմ ինչ ասել թղթոյդ պատասխանի, հատուցանելով

“զայն ի պատասխանիս թղթոցն Գաբրիէլի վարդապետի,
“զորոց զպատճէնս առաքեմ ձեզ յընթերցումն և ի գիտու-
“թիւն. միայն երբեւ հաստատութիւն բանիցս անդ՝ յաւելից
“ի սմին և զայսոսիկ.

“— Հայեցեալ, ասէք, ի մեծամեծ զրաղանս Գաբրիէլ վար-
“դապետի և յանօգնականութիւն իւր՝ խոստացայ ըստ թա-
“խանձանաց նորա յղել նմա ընդ հուպ զՎարէն յօժանդա-
“կութիւն, յուսալով թէ հաճեցի Հայրութիւնդ։”

“Ապաքէն արդարանայ աստանօր առածն այն, թէ Հե-
“ռացեալն յաչաց, մոռացեալ լինի ի մտաց։ Տեսեալ ձեր
“զմեծամեծ զրաղանս նորա՝ կարեկից եղէք նմա, և մոռա-
“ցայք խապառ զծանր աշխատութիւն և զնեղութիւն իմ ասա,
“զոր յանձին կալայ միայն, և յայտմ հաստակիս, վասն որոյ
“և առ ինչ նպաստակի։...

“— Յուսալով, ասէք, թէ հաճեցի Հայրութիւնդ։”

“Ա՛ռ քաղաքավարութեան է բանդ, և ոչ առ ակնածու-
“թեանդ, որոշելով ձեր զամենայն ոչ միայն զընդ յղելն հա-
“բազատիդ, այլ և զնուիրիլդ նմին ապա։...

“Զունիմ ես ասել ինչ ընդ այս որոշումն ձեր, լսելովդ
“զխոտումն լուսի ռոճկացն որք ի նմանէ, և տեսանելովդ
“զառատաձեռն և զկանխիկ հատուցումն ծախուց ճանա-
“պարհի ձերոյ, հարկաւ մոռացեալ լինի այլ ամենայն ան-
“ցեալն. առաջինն՝ անկրաւորութիւն նորա, որ ընդ վերջին
“կարօտութիւն ձեր ի Փարիզ, և կարեկցութիւն իմ որ ընդ
“աղեսալի վիճակ ձեր անդ, և խրախութիւն թշնամեացդ
“ընդ աղէտս ձեր, հանդերձ ամենայն ակնկալութեամբ բա-
“բեացն որ անտի։...

“Այլ զրաղդէն իմոյ գանգատիմ ես, զի յետ զոհելոյ իմ
“զամենայն, ոչ միայն չգտի ինչ միխիթարութիւն ուստեք,
“այլ և արհամարհութիւն և աւելի ամօթոյ ընդ այն ամենայն,
“որպէս և տեսանէք ի պատասխանիս որ առ Գաբրիէլ վար-
“դապետ։...

“Այսչափ ինչ շատ լիցի ի պատասխանի թղթոյդ։

“Իսկ թղթոյ քո, սիրելիս իմ Խորէն վարդապետ, զը-

“ բեալ յ9 դեկտեմբերի անցելոյն և ժամանելոյ այսր ի 25 նո-
“ բին ամսոյ, այս է իմ պատասխանին, թէ կարեկից եղէ
“ ես ցարդ ամենայն ցաւոց սրտիդ որ ընդ աղեսալի անցս
“ որք անցին այդր ընդ քեզ, և չանացայ ըստ կարի իմում
“ միխիթարել զքեզ բանիւք և արդեամբք, որպէս տեսանես
“ ի նախընթացն իմ, և ի թուղթն Պարոն Նատիրեանի առ
“ քեզ. և մինչդեռ չանայի ես անդուլ մուտանալ տալ քեզ
“ զցաւս սրտիդ խապառ, գտանել աղբիւր ինչ մշտնջենա-
“ ւոր միխիթարութեան մեզ ամենեցուն, ահա լուայ զի հա-
“ բազատն քո ի Թէոդոսիա այլ ինչ վիճակ քեզ որոշեալ
“ է անդ, առանց հարցանելոյ ինձ և մեալոյ յինէն խորհուրդ...

“ Արդ՝ եթէ հաճեալ հաւանեալ իցես դու ընդ այն վիճակ,
“ հարկաւ միխիթարեսցէ զքեզ յամենայնի Գաբրիէլ վարդա-
“ պետ ըստ բաւական կարողութեան իւրում, լցուցանելով
“ զպէտսդ ըստ ցանկութեան քում. ապա չմնայ քեզ յինէն
“ ինչ ակնկալութեան, բաց ի տկար աղօթիցս վասն երկար և
“ քաջառողջ կենդանութեանդ։

“ Յուսամ թէ արասցես ինձ զայս շնորհ. զամենայն գրուածս
“ իմ և զառանձին մատեանս, հանդերձ զգրոցաւս և զգեա-
“ տուքս ամփոփեալ փակեսցես յարկեղս, և յանձնեսցես
“ հարազատիդ, եթէ մեայցէ նա այդր մինչեւ ցդարձն իմ.
“ ապա թէ ոչ՝ յանձնեսցես զայն Պարոն Միքայէլ Մա-
“ նանեանի. զի եթէ տացէ ինձ Տէր կենդանութիւն և
“ յաջողեսցի գալ իմ այդր՝ գտից զոնէ զայն ողջ և անա-
“ բատ։ Ոչ կարծէի եթէ զայսմանէ և այսպէս պարտ էի զբ-
“ բել։...

“ Ով անհաստատութեան մտաց մարդկան։...

“ Մնամ Սիրելութեան Ձերում

“ Ի Տփխիս. 11 յունվարի. 1860.

“ Յաւագին սրտիւ եղբայր

“ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՊՈՐԵԱՆ.”

Պատասխանի Սարգսի վարդապետի առեալ թղթոյ Գաբրիէլի վարդապետի, յորում յիշեցուցանէ նմա զսխալանսն որ ի պակասութենէ նախահայեաց տեսութեան նորա, և զեղբայրական ազգակցութիւն և զսէր իւր առ նա, և ցաւի ընդ անճանաչողութիւն նորա, օրինակ դայս.

„ Գերապատիւ Հայր և Սիրեցեալ Եղբայր.

„ Զգրեալն Ձեր որ ի 10 ամսոյս, ընկալայ ի 27 տրին ամ-
„ սոյս, և ընթերցեալ զայն ուրախացայ, և միանգամայն
„ տրտմեցայ. ուրախացայ ընդ լուր ողջութեան Ձերոյ, և
„ ողջամբ հասանելոյ Ամբրոսեայ վարդապետի մերոյ ի Փարիզ,
„ և տրտմեցայ ընդ յիշատակութիւն կորուսեալ պատեհու-
„ թեան, ազատութեանս ասեմ ի վանաց Անիրաւէն, և
„ ի Հռովմայ Բռնաւորէն։ . . .

„ Ո՞չ ապաքէն քաջ և իմաստուն էր առաջին խորհուրդ մեր
„ և որոշումն, ազատ կալ մեզ ի լծոյ երկոցուն։ Ընդէր կամե-
„ ցայք մնանել ընդ լծով Երրորդին։ Կարծէիք դուք քաղցր
„ զլուծն Անմտին, և յուսայիք գտանել միխիթարութիւն ան-
„ տի, ճանաչումն և յարդ իմաստութեանդ ասեմ յԱնմտէն։
„ Սխալեցայք դուք ապաքէն։ . . .

„ Աւա՜ղ կորուսեալս պատեհութեան, և մանաւանդ ան-
„ հաստատութեան մտաց մարդկան. թողից ասել զլծոյ Զոր-
„ բորդին, ընդ որոյ արկին զՁեզ չարաշահութիւն և անձ-
„ նասիրութիւն։ . . . Ո՞չ ապաքէն յարդասեաց անտի տեսանիք
„ դուք ցաւօք սրտի զԱրէլ վարդապետն խորհրդական Կաթո-
„ զիկոսին, և եպիսկոպոս ձեռնադրեալ ի նմանէ յառաջ քան
„ զՁեզ, հանդերձ այլ եօթն նմանեօք նորին։ . . . և խռովեալ
„ տագնապիք ի չարախօսութեանց։ . . .

„ Աւա՜ղ բաժանմանս, ո՞չ ապաքէն ամենայն վնասք մեր և
„ նախատինք անտի ծագեցան։ . . .

„ Ցուշ լիցի Ձեզ դարձեալ երբեմն ասացեալս, թէ „ Կա-
„ ցիցէք դուք միայն և այսր դարման տանել ազգիս անմբ-
„ տութեան։ „

„ Զէր և չէ՛ բանս վայրապար ասացեալ, այլ փորձով իսկ
„ հաստատեալ . . .

„ Ընդ այս և ընդ այլ արգասիս, զոր հարկաւ և հետզհե-
„ տէ ունիք տեսանել . . . բաւական և շատ համարիմ զնա-
„ խընթաց թուղթն իմ առ Ձեզ, գրեալ ի 11 ամսոյս, զոր
„ և յուսամ ընկալեալ իցէք ցարդ անխափան, և ընթերցեալ
„ զայն առանց խռովութեան. զի ի կարեկից մտաց և յեղբայ-
„ րական ազդարարութենէ գրեալ է այն . . .

„ Ա՛հ, սիրեցեալդ իմ եղբայր, եթէ ճանաչէիք դուք որ-
„ դեաք, թէ քանի՛ տառեալ էին և են վարկ, յարգ և սէր իմ
„ առ Ձեզ քան զհարազատիդ, և ո՛րպիսի ցանկացող էի և եմ
„ ճշմարիտ և մշտնջենաւոր փառացդ, ապաքէն տառեալ ան-
„ այլք խորհրդոյ իմոյ քան խորհրդոյ նորին, յորմէ և այս
„ ամենայն ցաւալից արգասիք զոր և տեսանէք իսկ և տեսա-
„ նելոց էք . . . Աւաղ զի ոչ ծանեայք դուք զայն, թէպէտ
„ և ծանիցէք ապա, այլ անապան յոյժ . . . երանի՛ թէ և
„ անապան, թերեւս դարման տարցի թերութեան, և զտառչս
„ առցի շարութեան . . .

„ Ահա այսու յուսով ակնկալութեան

„ Մնամ միշտ

„ Գերապատիւ Հայրութեանդ

„ Ի Տփխիս. 31 յունվարի. 1860.

„ Ցաւագին սրտիւ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՂՈՐԵԱՆ. „

Պատասխանի Գարբիէլի վարդապետի տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի, յորում Ջանայ արդարացուցանել զինքն թէ չէ պատճառ խռովանմանն և վրդմանն Հայկազեան վարժարանին ի Փարիզ, և թէ կամի հերքել զայն հրատարա-

կաւ. ցաւի ընդ պատիւն անարժան ուրանց. ցուցանէ զչկամութիւն իւր գնալոյ յԷջմիածին. Ճայ գալատեան նորա ի Թէոդոսիա. գանգատի զշարախօսաց իւրոց, և Ճայ մխիթարութեանն որ ի Կաթողիկոսէն, վասն ինդրոյ Վարդապետարանի իւրոյ, օրինակ զայս.

" Գերապատիւ և Բազմարդիւն Հայր ցանկալի.

" Որ ուրեմն յ12 ամսոյս ընկալայ զշնորհեալն առ ի Զէնջ
" ի 1/4 դեկտեմբերի անցելոյ, և մխիթարեցայ ոչ սակաւ։
" Զթիւր և զծաղրելի կարծեացն, որպէս թէ լեալ իցեմ
" փակման Հայկազեան վարժարանին Փարիզու, ահա գրեմ
" զիր հանուցս առ խմբագրիչս Մասիս և Արշալոյս լրագրաց
" ի հերքումն զրպարտութեանն այնորիկ։

" Միայն զարմանամ փոքր մի ոչ և Դեր. Հայրութիւնդ
" հանարի իմն ի զրին, թէ իմ ցոչցեալ ճանա կասկածանս, և
" չիմանամ թէ ո՛րպէս կամ իւ. մանաւանդ զի քաջ գիտէք
" թէ ո՛ էր հեղինակ նախագծի Կոնդակին յօրինելոյ վասն
" Կաթողիկոսին, մինչդեռ տակաւին ի Պոլիս էր, և ո՛ զբ-
" ղող երկայնաձիգ թղթոյն որ առ Ազգային ժողովն և առ
" Պատրիարքն։ . . .

" Ա՛յլ ինչ էր խնդիրն զդրամաժողովոյ ի Ռուսիա, ըստ
" անճառնի ակնկալութեան ոմանց անքաղաքագէտ արանց։

" Լուայ և ես զաղեռալի հանրաւ պատուելոյն խորհրդա-
" կանութեամբ և գրագրութեամբ, վասն որոյ և եղեալ եմ
" ի մոռ չշարժիլ բնաւ ի տեղւոջէս և չգնալ երբէք յԷջմիա-
" ծին, ցորչափ թշնամին անձին իմոյ և ամենայն բարեաց
" ազգիս Սրբէն շարաշուք ի պատուի է անդանօր. քանզի
" գիտեմ զի գեղ մահու արբուացէ նա ինձ որպէս զիարդ և
" կարողացի։

" Տէր տեսցէ և ողորմեսցի ազգիս եղկելւոյ։

" Բայց դուք, Հայր ցանկալի, մի՛ դանդաղեսջիք ազատչեմ
" ծանուցանել ինձ՝ թէ ե՛րբ խորհիցիք զերծանիլ ի մարդածախ

“ կողմանցդ, և այսր առ իս գալ, և հանդչել ուր ուրեմն յա-
“ պերախտ աշխատութեանց։

“ Ընդ գրոյդ Զերուամ ընկալայ և զմեացեալ թարգմանու-
“ թիւն Վարդապետարանին, այլ չիւրեամ ի տպագրութիւն
“ նորին, քանզի և զառաջինն յղեալ եմ առ Կաթողիկոսն առ-
“ նուլ զհաւանութիւն նորա և այնպէս կրկին տպագրել զայն,
“ որովհետև Նապարեանց և Նալպատեանց և Էմին, որք
“ լուսերամիտք կամ անմիտք, գրգռեալք ի գաղտնիս ի Մխի-
“ թարեանց և յՈսկանեանէ, համբաւեալ են և համբաւեն՝ որ-
“ պէս թէ ի Վարդապետարանի իմում գտանիցի հոս Կաթո-
“ լիկութեան. և ոչ միայն համբաւեն, այլ և առ Տէրու-
“ թիւնն մատն լինին իրացն՝ անխիղճ և անմիտ զրպարտու-
“ թեամբք։ . . . Տեսցուք զո՛ր դատաստանն արասցէ
“ Կաթողիկոսն զՎարդապետարանէն, որ ամենայն անաչա-
“ ռութեամբ քննեալ ի Պատրիարքէն և ի Հոգեւորականն
“ Յովհաննէս Պօլսոյ, և այնպէս տպագրեալ էր. ասացէ՞ թէ
“ այլ է դաւանութիւն լուսաւորչական Հայոցս ի Տաճկա-
“ տան և այլ ի Ռուսաստան. կամ թէ զիւրդ կարասցէ ապա-
“ խարկել զիմս, առանց դատապարտելոյ զիւրն իսկ Հան-
“ դիսարան։

“ Ողջ լինել մաղթեմ

“ Գերապատիւ Հայրութեանդ

“ Թէոդոսիա. 24 յունվար. 1860.

“ Անձնանուէր եղբայր

“ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՑՎԱՉԵԱՆ.”

Պատասխանի Գաբրիէլ վարդապետի տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի, յորում ցուցանէ զզարմանս իւր և զտրտմութիւն ընդ անեակնկալ և խիստ գրութիւն նորա առ ինքն,

և Ջանայ արդարացուցանել զինքն պատճառանք և պարծանք ընդ գնացս իւր և եղբօր իւրոյ, օրինակ զայս.

“ Գերապատիւ և Բազմարդիւն Հայր.

“ Ընկալեալ ի 26 ամսոյս զիննիչեանն ձեր գրոշմեալ ի 29 դեկ-
“ տեմբերի անցելոյն, լցայ անհնարին զարմացմամբ և տրտ-
“ մութեամբ և հոգովք, որպէս գուշակեալ էիք. քանզի և
“ անակնկալ էին ինձ բոլորովին դառն և խոցոտիչ բանքն
“ գրեալք ի նմա, իբրեւ առ միւս ոմն Հիւրմիւզ, և այն յետ
“ այնքանեաց երկարաձիգ զրուցատրութեանց մերոց ընդ
“ միմեանս անպատրուակ սիրով և ընտանեբար ի տեսաւորիչն
“ մերում ընդ միմեանս ի ճանապարհին, և այդր, և յէջմիա-
“ ծին, յորոց այնպէս հաւանեալ և եղեալ էի ի մտի հաստա-
“ տութեամբ՝ թէ քաջ իմացայք Դուք զմիտս և զբուն կարծիս
“ իմ զՀայկազեան վարժարանէն, զՓարիզէ, զմերոցն,
“ զԿաթողիկոսէն զՊօլսեցեաց, զքաղաքավարութենէ Պե-
“ տութեան, զաշխատութեանց իմոց որ առ, զանկեալլի
“ արդասեաց սոցին, զասոյգ պատճառաց հաստատութեան
“ Առաջնորդարանի և ուսումնարանի առ և ոչ ի Նախի-
“ ջեւան, եւս և զառժամանակեայ բնակութենէս իմմէ
“ ի միում կողման ընդարձակ բնակարանի մերոցն, մինչեւ
“ կատուացի նոր Առաջնորդարան ի Սէմինարեայի, եւս և զան-
“ կեղծ և զխոհական Ջանից եղբօրն իմոյ յօգուտ ազգիս. և
“ այլն, և այլն.

“ Իսկ իննիչեանդ Ձեր այնպէս իմն ցուցանէ՝ որպէս թէ ոչ
“ իսկ բնաւ ամենեւին տեսեալ իցէ Ձեր գիս կամ խօսե-
“ ցեալ ընդ իս զայսպիսեաց, և թէ մի միայն շարժառիթ իմոցս
“ գործոց լեալ իցէ փափկասիրութիւն, չարիազանց և անկարգ
“ ուր շնորհեաց, և գլուխ ամենայնի, անձնասիրութիւն
“ շար՝ զուրկ ի սիրոյ ընկերին . . . որով կամիք ասել անե-
“ շուշտ՝ թէ մինչեւ ցայժմ խաբեալ էիք յինէն՝ յորժամ
“ կարծէիքն և վկայէիք թէ և ես գէթ մի եմ ի սակաւուց
“ ոմանց որք ի մանկութենէ նուիրեալ են զանձինս յօգուտ

“ և ի ծառայութիւն ընկերին անշահասէր և անփառասէր
“ գնացիւք, եթէ ոչ լաւ ձերում չափու, գոնեա լաւ իմում
“ կարողութեան՝ չինայելով բնաւ յանձն իմ և յաշխատու-
“ թիւնս ապգիս։ . . .

“ Բայց ներեցէք ինձ ասել, Գերապատիւ Հայր, զի յետ
“ երկիցս և երիցս վերծանելոյս ամենայն մտադրութեամբ
“ զայս թուղթ ձեր նշանաւոր, տեսանեմ աչօք բացօք զի ոչ
“ եթէ յայնժամ յինէն խաբեալ էիք, այլ այժմ խաբեալ են և
“ խաբեն զՁեզ յամենայնի և զամենայնէ՝ որ զՁեզդ մա-
“ ծեալ են արք չարախորհուրդք, սուտակապաք, և կեղ-
“ ծուպատիր բարեկամք, եթէ ոչ խորհրդակիցք, գոնէ
“ այլով ճանապարհաւ գործակիցք թշնամեացն մերոց, որպէս
“ և գուշակեմք հաւատեաւ, որչափ և զուրկ համարիցիմք
“ յաչս ձեր ի նախանձոյեաց տեսութենէ, որոց վասն էր և
“ հարցանելն իմ խորհրդարար յանցելում գրիս, թէ ե՛րբ ելա-
“ նիցէք ի մարգարեախ կողմանցդ։ . . .

“ Ասաի յայտմանէ ի միտ առնու հարկաւ Գեր. Հայրու-
“ թիւնդ, զի և վայրապար կորուստ համարիմ ժամանակի՝
“ աշխատ լինել ի հերքումն միոյ միոյ ի ստգտանաց և ի տղա-
“ յական կամ դիւական մեղադրանաց չարախօսացն իմոց,
“ որք մեծաւ մասամբ այնպէս քաշաժանօրք են ինձ, որպէս
“ և ոչ մի ի չեզուռացն որոց գիտակ համարի զիս Հայրութիւնդ
“ հենգնօրէն . . . մանաւանդ զի Գեր. Հայրութիւնդ հաճեալ
“ է ծանուցանել ինձ զչարախօսութիւնսն զայնոսիկ որ ոչ
“ եթէ եղբայրական կարեկցութեամբ, այլ յայտնապէս իրա-
“ ւացիս վարկանելով զնոսին, և զաղբիւրն եւս այնր ամե-
“ նայնի մատնանիշ ցուցանելով, այսինքն զանկարգ անձնա-
“ սիրութիւն իմ։ . . .

“ Զայս միայն փութամ ահա ծանուցանել սովիմբ, զի ընդ
“ առնուլս զթուղթ ձեր զայս, գրեցի առ Ամբրոսիոս վարդա-
“ պետ մի՛ յղել այսր զխորէն, եթէ չեւ իցէ յղեալ. ահա
“ վաղիւ և հեռագրով զնոյն ապդեմ նմա։ Իսկ եթէ արդէն
“ եղեալ իցէ յուղի և գայցէ այսր, վասահ լերուք զի (որպէս
“ գրեցի և առ Ամբրոսիոս վարդապետ,) ոչ կապայց զնա

„ առէն, այլ ի Փարիզ առ եղբայրն դարձուցից. քանզի
„ երկրքինեղբարդանիս հարազատք կարող են ոչ սակաւ օգնա-
„ կան լինել ինձ և անսի եւս, եթէ կամիցին։

„ Յառաջից և զայս ասել, ոչ ի չառաջադրութիւն անձինս՝
„ անկարգ անձնասիրութեամբ, այլ ի սէր ճշմարտութեան և
„ ի հանդուցանել փոքր մի զսիրտ Գեր. Հայրութեանդ արդ-
„ դեաք։ Ոչ յոյժ հոգամ ես զմեղադրութեանց կարծեցեալ
„ բարեկամացդ Տփխիսեցեաց (առաջին և գլխաւոր ընտրողաց
„ Ս. Կաթողիկոսին) ընդ այն՝ զի գոհութեամբ արարեալ է
„ իմ զնկարագրութիւն ուղեւորութեան նորա. զի համարիմ
„ թէ որպիսի կարծիս և ունիցի զք առանձնակի զիշխանաց
„ ժողովրդեան՝ պարտի ի հրապարակական գրուածս՝ յոր-
„ ժամ դէպն պահանջիցէ՝ պահել զպատիւ գլխոյ եկեղեցւոյս
„ մերոյ և Սիթռակալի Արբոյ Լուսաւորչին առաջի ազգիս և
„ օտարաց։ Իսկ շողոքորթելոյ զնա կամ զո՛ որ և իցէ ոչ ու-
„ նիմ սովորութիւն, այլ և ոչ պէտս ինչ, որպէս պարտի
„ քաջ գիտել և Գեր. Հայրութիւնդ, մանաւանդ զի և յԷջ-
„ միածին եւս ոչ ունիմ բնաւ միտս դնալոյ երբէք, ըստ
„ որում և յառաջագոյն գրեցի, թէպէտ և նա ի վերջնում
„ գրին առ իս այնպէս ինձ ակնարկէ թէ կամի տեսանելի
„ անդ ընդ իս՝ եթէ Տէր կամեցի ասէ, այլ և ոչ ցանկութիւն
„ կամ ակնկալութիւն է իմ խաչից և ապաստութեանց, ոչ
„ ինամանէ և ոչ յայլոց, որչափ և զակաւեալ թուիցիմ ոմանց
„ և Զեզ յանկարգ անձնասիրութեան։

„ Կնքեմ զթուղթս՝ աւադելով զանձն իմ զի հարկեցայ
„ այս առաջին անգամ այսպիսեաւ լքեալ և անսիրիթար սրտիս
„ գրել զիս

„ Գերապատիւ Հայրութեանդ

„ Վշտագնեալ եղբայր

„ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ.

„ Թէոդոսիա. 29 յունվարի. 1859. „

Պատասխանի Սարգսի վարդապետի, տուեալ թղթոյ Գաբրիէլի վարդապետի, յորում ցաւի ընդ անհաւանութիւն բանիցն ճշմարտութեան, և վերատին հաստատէ զայն հանդերձ նորոգ հաւաստեօք, այլ և յանդիմանէ զնա ընդ այլայլութիւն բառից թղթոյ իւրոյ առ նա, օրինակ զայս.

„ Գերապատիւ Հայր և Սիրելեալ Եղբայր.

„ Զերկոսին ցաւագին սրտիւ գրեալդ, որ ի 24 և ի 29 ան-
„ ցելոյն, ընկալայ ըստ ժամանակին, և ընթերցայ զայնս
„ առաւել եւս ցաւագին սրտիւ, իմանալով զոհաճութիւնդ
„ ընդ եղբայրական ազդարարութիւնս, և զանհաւանութիւնդ
„ բանիցս ճշմարտութեան. ապա և իրաւմբք առաւելութիւն
„ ցաւոց սրտիս, և ապա զինչ մնայ ինձ առնել այսուհետեւ.
„ կասեցայց ես արդեօք անտի ի պատեհութեան։... Ոչ բնաւ.
„ քանզի բաց անտի, ի ճշմարտախօսութենէն ասեմ, ոչ զոյ
„ ինձ այլ ուստեք վիխիթարութիւն սրտի... վասն որոյ յա-
„ ւելից ես զայն առաւել եւս, թէ և ոչ բովանդակ, զի կայ
„ և այնմ ժամանակ։...

„ — Միայն զարմանամ փոքր մի, ասէք, զի Գեր. Հայրու-
„ թիւնդ համարի իմն ի գրին, թէ իմ ցուցեալ իցէ նմա կա-
„ կածանս ինչ, և չիմանամ թէ ո՞րպէս և ի՞ւ. մանաւանդ զի
„ քաջ գիտէք թէ ո՛ էր հեղինակ նախագծի կոնդակին յորի-
„ նելոյ վասն Կաթողիկոսին, մինչդեռ տակաւին ի Պոլիս
„ էր։ ”

„ Զէր պարտ Ձեզ բնաւ զարմանալ ընդ համարիլս իմն
„ ի գրին, թէ ցուցեալ իցէք նմա կասկածանս. այլ պարտ
„ էիք զայրանալ, և հերքել հաւաստեօք զասացեալսն նորա,
„ եթէ արդարեւ չէր ձեր գրեալ առ երեւելին ի Պոլիս, թէ
„ անօգուտ է վարժարանն այն ի Փարիզ, պարտ է փակել
„ զայն, որով և հերքէիք արդեօք և զմիւս կասկածաւոր բանս
„ նորա, որ ի պատասխանին իւր առ ազգային ասա, թէ
„ „ Եթէ Ազգասէրքն իշխանքն Համազգային խորհրդով
„ „ միաբանութեան և ընդհանուր հաւանութեամբ Երեւե-
„ „ լեացն Պօլսոյ, և Գերապատիւ Գարբիէլ վարդապետի

“ “ Այվազեան կարեացեն խորհել զօգուտն, և ըստ վերոյ-
“ “ գրելոցս ամենայնի գտանել զեղանակ հաստատութեան
“ “ վարժարանին, և յայնժամ ոչ ունիմք մեք խնայել զգոր-
“ “ ծակցութիւն մեր ընդ նոցին ազգօգուտ միաբանութեանն,
“ “ և մեծաջան վաստակոցն Հայր Սարգսի վարդապետի
“ “ Թէոդորեան։ ”

“ Թողից յիշել զազգարարութիւնդ որ ընդ հրատարակումն
“ նախագիծ կոնդակի նորին ի ձէնջ յօրինելոյ, թէ պարտ էր
“ զայն ի Տաճկաստան հրատարակել, և մինչդեռ ինքն անդ
“ էր և ոչ ի Ռուսաստան։ Ահա յայսպիսի ազգարարութենէ
“ ձերոյ անտի սկսաւ նա կասկածիլ և կասեցաւ ի հրատարա-
“ կելոյն։

“ Իսկ զի՞նչ ասացից զբանիցդ որ ի Մասեաց Աղաւնին,
“ հրատարակեալ ի յունվարի տարւոյս, այսպէս.

“ — Եւ ո՞վ չգիտէր թէ Փարիզը անհամեմատ կերպով գե-
“ ղեցիկ է նա և շատ մայրաքաղաքներէ, ուր մեաց Թէո-
“ դոսիոյ պէս փոքրիկ քաղաքէ. սակայն մեր փնտռածը տե-
“ ղե՞ր են, թէ տեղերուն պտուղները. ինչ շահ մեզուին
“ ծաղկազարդ բուրաստանի մէջ թռչըտելէն, երբ որ ծա-
“ ղիկներէն մեզ ոչ մոմ հաւաքելոյ տեղը թոյլ հաւաքի մե-
“ ղուն։ ”

“ Ահա ի բանից ձերոյ ասոի հաստատելով հաստատեցան
“ ոմանք ի կարծիս իւրեանց, որ զհակառակութենէդ վար-
“ ժարանիս ի Փարիզ, և ոմանք տարակուսեալք ընդ ակնկա-
“ լութիւն բարեացն որ անտի՝ կասեցան յօժանդակելոյ մեզ
“ այնուհետեւ, և մինչեւ առաքրութեամբ խոստացողքն
“ անգամ զլացան հաստատել զխոստացեալ արծաթն,
“ ասելով թէ վասն հաստատութեան վարժարանին ի Փարիզ
“ խոստացաք մեք զայն, և արդ այսպիսի է վարժարանն և
“ փակեցաւ այն . . .

“ Թողից ասել և զդատաստանաց որ զՁէնջ բազմաց, թէ
“ այդու վարկիւդ որ զՓարիզէ, դուք ինքդ զձեզ կասկածա-
“ ւոր առնէք, հաւաքելովդ ի ծաղկանց անտի . . . Իսկ եթէ
“ զհակառակորդացդ կամիցիք ասել, Ոսկանեան միայն,

“ ասեն, ի Փարիզ հրահանգեալ է, Նազարեան, Նալբան-
“ տեան և Իմին ի Մոսկվայ են հրահանգեալք . . . ընդէր
“ և նոքա հակառակորդք ձեզ իցեն . . .,

“ Ահա այսպիսի արդիւնքն որ ի նախահայեաց տեսութենէ
“ ձերոյ . . .

“ Յետ այսպէս համբաւելոյ ձեր զՓարիզէ, ապաքէն չՄնայ
“ եղբարցդ անդ տեղի կալոյ. ապա ընդէ՞ր կասեցուցիք զնոսա
“ յայդր գալոյ . . .

“ Զիցե՞ն և այս արդիւնք նախահայեաց տեսութեան ձերոյ,
“ որով պարծիք . . .

“ Թէպէտ ես զառաջինն ծանուցի նոցա ազատութեամբ
“ ընտրել զվիճակ իւրեանց, անդ կալոյ, կամ այդր գալոյ,
“ բայց ապա իբրեւ լուայ թէ խորհին նոքա և հոգան առաւել
“ զապագայ կենաց իւրեանց քան զայլ ամենայն իրաց . . .
“ եռաւ նոցա իրաւունս յայն և գովեցի զնոսա, զի խնամա-
“ նագոյնք են քան զիս ի խորհուրդս և հոգս առանձին իւ-
“ րեանց . . .

“ Ի հնարեալ բառիցդ և այլայլեալ բանից այլոց հետեւ-
“ ցուցեալ ասէք.

“ — Որով կամիք ասել անշուշտ թէ մինչև ցայժմ խա-
“ բեալ էիք յինէն . ”

“ Ասեմ ես. այո՝ քանզի հաւատացեալ էի ցարդ բարեմիտ-
“ սութեամբս, թէ ուր և գտանիցիք դուք փոյթ և հոգ ու-
“ նէիք զհաստատութենէ վարժարանին մերոյ ի Փարիզ, և
“ զպատուոյ մեր հաստատակաց, մանաւանդ այդր ի բաւական
“ կարողութեանդ ձերում, որպէս և հաւատային բազումք
“ յազգայնոցս ասա ի Տփխիս և ի Պոլիս, և որպէս վկայեն կա-
“ րողութեանդ ամենեքեան . . .

“ Ապա փոխեալ զբանս ձեր՝ ասէք. ”Տեսանեմ ես աչք
“ բացաք, զի ոչ եթէ յայնժամ յինէն խաբեալ էիք, այլ
“ այժմ խաբեալ են և խաբեն զՁեզ յամենայնի և զամե-
“ նայնէ որք զձեզդ մատեալ են արք չարախորհուրդք, սու-
“ տակասպասք և կեղծաւորաբար բարեկամք, գործակից
“ թշնամեացս . ” Ասեմ ես. այո՝ քանզի դեռ ոչ էի խնացեալ

«և յայտնի տեսեալ զհակառակութիւնդ ընդ հաստատու-
«թիւն վարժարանիս, և զանհոգութիւնդ զնեղութենէ եղ-
«բարցդ և զնախատանաց մերոց առհասարակ, հանդերձ
«խոպոռ մոռացմամբ և արհամարհութեամբ ակնկալութեան
«բարեաց հասարակաց ասեալ։ . . .

«Ասեմ եւս, թէ լաւ համարիմ ես զխաբիլ քան զխաբել։»
«Լաւ է զրկիլ քան զզրկել։»

«— Ասաի յայտնեմ, ասէ՝ թ, ի միտ առնու Գեր. Հայրու-
«թիւնդ, զի վայրապար և կորուստ համարիմ ժամանակի
«աշխատ լինել ի հերքումն միոյ միոյ ի ստգոմանաց և ի ազայա-
«կան կամ զիւրական մեղադրանաց չարախօսացն իմոց, որք
«մեծաւ մասամբ այնպէս քաջաձանօք են ինձ, որպէս և ոչ
«մի ի լեզուաց, որոց զիտակ համարի զիս Հայրութիւնդ
«հենգնօրէն։»

«Այս՝ ի միտ առի և ծանեայ քաջ ի բանից և ի կարծեաց
«ձերոց զինէն զի չունիք դուք ժամանակ և ոչ կամն հերքե-
«լոյ զոնէ զվերոյիշեալ կասկածանսն որք զձէնջ՝ ի թեթեւա-
«ցուցանել զցաւս սրտի իմոյ սակաւիկ մի. սակայն ունիք
«դուք ժամանակ և կամն այլայլել և հնարել բաւս, և
«անիրաւ բանիւք յաւելուլ զցաւս սրտի իմոյ ի զանգիտաու-
«թեանս և ի նեղութեանս աւտ։ . . .

«Հարցանեմ ձեզ արդ՝ թէ ընդէ՞ր և ոչ միոյ ի հարցմանցս
«և ի զգացողութեանս որք յինէնջ ասեն իմ առ ձեզ արարէք
«ինչ պատասխանի . . . և թէ ոչ արարէք, վասն զի չունիք
«ինչ ասել ընդդէմ ճշմարտութեան . . . ապա ընդէ՞ր այլ-
«լայլեցէք զքանի մի ի բառից գրութեանս, որպէս զահ և
«զգոռ առ ընտանիսդ, ի չարիազանց և յանիկարգ տեր, և
«զայլոց ասացեալսն ի գիմաց իմոց առէք. և ոչ այսչափ
«միայն, այլ և նոր բառ հնարեցէք, որպէս փոսիկասիրու-
«թիւն։ Եթէ կարծէք դուք այսպիսի հնարիւք արդարա-
«ցուցանել զձեզ, սխալիք դուք մեծապէս. քանզի այդու
«իսկ դուք ձեզէն զչափ անձնասիրութեան ձերոյ ասհմանէք,
«մինչդեռ չանայք ազատ առնել զձեզ անտի բոլորովին . . .
«և այդպիսի հնարիւք արդարանալն՝ ոչ միայն անիրաւ գա-

“ տապարտութիւն է ընկերին, այլ և պատճառ յանկար-
“ ծամահ մեռանելոյ նորին, և յիրաւի՝ քանզի եթէ չէի
“ ես փորձ ի վիշտս որ յայսպիսի եղբարցս, կաթուածոյ
“ հանդիպէի անշուշտ, մանաւանդ յայսոսիկ աւուրս, յորս
“ զգածեալ եմ տկարութեամբ մարմնոյ, զառնալով երբէք
“ երբէք զլխոյս, և մարմնջմամբ մարմնոյս, և այս ի չորից
“ ամսոց հետէ, զոր և ցարդ չծանուցի ձեզ, խնայելով չյա-
“ ւելուլ ձեզ հոգս, և հաւատալով թէ ունէիք դուք հոգ
“ զինէն։

“ Աւա՜ղ հաւատալիութեանս։ . . .

“ Թողից ասել զհանգամանաց գործոյս, որոյ անյաջողու-
“ թեան, գիտէք թէ ո՛ է պատճառ։ . . .

“ Բայց վիճակ գուշակեալ ձեր զիս արդեօք, նախահայեաց
“ տեսուչքեանդ, գրեցիք առ իս գիր կարեկցութեան, այս-
“ պէս. “ Բայց դուք, Հայր ցանկալի, մի՛ դանդաղեսջիք
“ աղաչեմ ծանուցանել ինձ, թէ երբ խորհիցիք զկերծանիլ
“ ի մարդածախ կողմանցդ, և այսր առ իս գալ և հանդչել
“ ուր ուրումն յապերախտ աշխատութեանց։ ” Այլ յետ
“ չորից և ոչ աւելի աւուրց անտի, նոքին նախահայեաց տե-
“ սուչքեանդ հաճեցայք փոխել զկարեկցութիւնդ ի խստու-
“ թիւն, ասասէք խիստ բառիւք և անիրաւ բանիւք պատաս-
“ խանի գրութեանս իմում։ . . .

“ Ահա արդիւնք որ ի նախահայեաց տեսուչքենէդ, շատա-
“ ցից առաւել ինչ։ . . .

“ — Քանզի և անակնկալ էին ինձ, ասէք, բոլորովին
“ զառն և խոցոտիչ բանք գրեալք ինեմն իրրեւ առ միւս ոմն
“ Հիւրմիւզ։ ”

“ Այլ ինձ անհաւատալի էր ունել ի ձէնջ այսպիսի պատաս-
“ խանի բանից ճշմարտութեան և եղբայրական ազդարարու-
“ թեան, և իրրեւ զՀիւրմիւզ վճարել ընդ իմ յուսիսեան։

“ Աւա՜ղ ճշմարտախօսութեանս և մտերմութեանս միանգա-
“ մայն։ . . .

“ Սատանայ ի գէպ է և կարեւոր առնել զինութիւն ընդ
“ նմանութիւնդ Հիւրմիւզին։

«Արդ հարցանեմ ձեզ, թէ գրեալքն իմ առ Հիւրմիւզ
«իրաւո՞ւմքք էին թէ անիրաւ. եթէ իրաւամբք, ապա չկայ
«ձեզ օգուտ ինչ ի նմանութենէ նորին անտի. և եթէ անիրաւ,
«ապա զի՞նչ գովութեամբ յիշատակէիք միշտ զանաչառ
«գրութիւնս իմ առ նա։ . . .

«Գիտէք և ընթերցեալ իսկ էք զպատասխանիս նորին առ
«իս. ո՞րպէս իրաւունս տայր ինձ ի գրութիւնս որ առ ինքն,
«և մինչև ներու

անգամ խնդրել յինէն ընդ խիստ պա-
«տասխանին իւր անգամ մի եւեթ։ . . . Եթէ նա իբրեւ Ար-
«քեպիսկոպոս և Առաջնորդ իմ այնպէս վարէր ընդ իս միշտ
«որպէս գիտէք, իսկ դուք իբրեւ եղբայր և կրտսեր եղբայր,
«և դուք՞ իբրեւ պաշտպանեալ յինէն ամենայն զօրութեամբս,
«կարէի՞ք այսպիսի խիստ բառիւք և անիրաւ բանիւք առ-
«նել պատասխանի գրութեանս իմում, մանաւանդ յիմում
«այս թշուառ վիճակի, որում դուք էք պատճառ որպէս
«և ցուցի։ . . . Զի՞նչ, Առաջնորդութիւնդ տայ ձեզ և
«զայս իշխանութիւն։ . . . Եւ զի՞նչ, կամի՞ք դուք նմանիլ
«անհաւան Հիւրմիւզին որ կամէր հաւանիլ և իմ անիրաւ
«հրամանին։ . . .

«Եթէ զոհեցի ես զամենայն վասն ճշմարտութեան և ար-
«դարութեան, եղէց ձեզ հաճոյ միայն։ . . .

«Սխալք դուք յամենայնն։ . . .

«Կամէի ընթեռնուլ զգրեալն իմ և զպատասխանին ձեր յա-
«կանջս քանի մի բարեկամաց, և խնդրել ի նոցանէ ընդ
«այնս դատաւոր, բայց քանզի դուք զամենայն բարեկամս
«մեր ասա, չարախորհուրդ, սուտակապաս և թշնամիս ձեզ
«համարիք, վասն որոյ և արհամարհէք զդատաւոր նոցա,
«ապա թողի զայս յԱստուծոյ արդար դատաւոր։ . . .

«Եթէ այսպէս համարեցայք և համարիք դուք ի միտս ձեր
«և ի գրութիւնդ զամենեսեան որք շուրջ զիներ մնացեալ են,
«գիտասջիք զի ոչ գոյ ձեզ բարեկամ, ոչ ասա ի Տփխիս, ոչ
«ի Նախիջեւան և ոչ ի Պոլիս. ապա չգիտեմ թէ ո՞ւր և
«ո՞յք իցեն ձեզ բարեկամ, և զի՞նչ նպաստակ Առաջնորդու-
«թեանդ։ . . .

„ Գիտաջիք եւս, զի ոչ ոք է ձեզ անձնական թշնամի,
„ այլ ամենեքեան դատաւորք են քաղաքավարուոքեանդ . . . ապա
„ դադարեցէք ապաշեմ ի յանդուգն և յանիրաւ դատողու-
„ թեանդդ, համարելով ձեզ թշնամի զամենեսեան, և տալով
„ ինձ դատացեալսն այլոց, մանաւանդ դատելով զիս ի գլուխ
„ նոցին, որով և ցաւեցուցէք և վիրաւորեցէք զսիրտ իմ ան-
„ հնարին յայս դառն և յանմխիթար վիճակիս . . .

„ — Կնքեմ, ասէք, զթուղթս, աւաղելով զանձն իմ զի
„ հարկեցայ այս առաջին անգամ այսպիսեաւ լքեալ և անմը-
„ խիթար սրտիւ գրել զիս . . . ”

„ Այլ ես կնքեմ զթուղթս ողբալով զազգն իմ ողջոյն, զի
„ տեսի այսպիսի հոգւով զիւր խնամատարացն . . . Ես

„ Մնամ

„ Յաւագին և վերոյիշեալ սրտիս Ս-

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՒՈՒԵԱՆՑ.

„ Ի Տփխիս. 27 փետր. 1860. ”

ԳԼՈՒԽ ԻԲ.

Պատասխանի Ամիրոսեայ վարդապետի առեալ թղթոյ Սարգսի վարդապետի. — Հոգ գանձնական շահու Ամիրոսեայ և Խորենայ վարդապետաց. — Արդարացուցանի Գաբրիելի վարդապետի և նպաստն որ ի նմանէ ընկերաց իւրոց ի Փարիզ, Գալֆայեանց. — Պատասխանի Սարգսի վարդապետի առեալ թղթոյ Ամիրոսեայ վարդապետի հանդերձ բնութեամբ. — Յոռեգոյն հանգամանսն գործոյ Սարգսի վարդապետի և պատճառ այնորիկ. — Բողոք և մեղադրութիւն զգնացից Գաբրիելի վարդապետի. — Յանձնարարութիւն պահպանութեան ընչից Սարգսի վարդապետի.

Պատասխանի Ամիրոսեայ վարդապետի, առեալ թղթոյ Սարգսի վարդապետի, յորում ցաւի ընդ վիշտս նորա, զովէ զնա, շնորհակալ լինի բարերարաց, չհաւատայ խոստմանց այլոց, հոգայ միայն զանձնական շահուց, արդարացուցանէ զԳաբրիէլ վարդապետ, ծանուցանէ զնպաստն որ ի նմանէ, և ի տպագրեալ մատենից իւրոց, օրինակ զայս.

“ Գերապատիւ Հայր մեր և վարդապետ.

*“ Ցցանկալի գիր անձկալուոյ Հայրութեանդ որ ի 28 դեկ-
“ տեմբերի ընկալեալ՝ այն ինչ ժամանեալ իմ ի քաղաքս, և
“ մեծապէս ուրախացաք, քանզի վրիպեալք ի բազմայ հե-
“ տէ ի միտիթար բանից Ձերոց, ասանչէաք մասայդպ հոգովք
“ ընդ պատուական առաջնութիւնդ Ձեր։ Քանզի փոքր ի շատէ
“ գիտէաք և իմաստասիրէաք զպայման վիճակի Ձերոյ այդր,*

“ և զնեղութիւնս և զամենայն ազգ պակասութիւն ձեր ,
“ զչաւորութիւնս . և ահա արդ լիուլի ի միտ առնումք
“ զայդ ամենեսեան ի տխրագին գրութենէդ և վշտանամք և
“ եւս յոգի և ի սիրտ , զարմանալով միանգամայն ընդ ան-
“ վեհեր Ձերդ քաջութիւն ի դոյն յայդ ալեւոր հասակի ,
“ որ զհանգիստս պատուիրէն և վայելս քաղցր անդորրութեան ,
“ Բայց Ձեր վառեալ սիրտ հայրենեացն և ոչ անձինդ սիրով ,
“ զդիւր և զհանգիստս , որպէս ցարդն և զայժմս իսկ առ-
“ ան հարեալ՝ ոչնի վաստակի իբրեւ հայր որդեգրով
“ զհայրենեացն որդւոց պատրաստել բարօրութիւն ։

“ Փոքր մի յապաղեցաք , Հայր , զպատասխանին մեր՝ օր
“ աւուր սպասելով ժամանելոյ արծաթոյ հինգ հազար ֆը-
“ բանքաց զորոյ զառաքումն աւետէք մեզ յերկարաձիգ և
“ ցանկալի գրութեամբ Ձերով ։ Շնորհակալութիւն անչափ
“ Ձեզ , Հայր , և Նուիրատու ազգասիրացն , որոց պարագը-
“ լուխ ճանաչեմք և հռչակեմք զՏէր Ռոմանոս Նատիրեան
“ զպատուական բարեկամ մեր ։ Զսա անձկայրեաց սիրով
“ մեամբ ընդունել ընդ Ձեզ գարնայնի ։ Խորէն վարդապետ
“ շնորհ ունի նմին և յաղագս զեղեցիկ պատասխանեւոյն ։ Եր-
“ կրին հարազատք ողջունեն զնա բազում սիրով և օրհնու-
“ թեամբ ։

“ Ուրախ եղաք ոչ սակաւ լսելով զի և պատուական քաղա-
“ քացիքդ Տփխիսու ժրայեալ ձեռնտու ջանիցդ Ձերոց հան-
“ դիսանան ։ Տացէ նոցա Տէր յաջողել յոր լինիցին ձեռնտ-
“ մուխ և հայթաթեալ անձանց փառս և հայրենեաց երջան-
“ կութիւն ։

“ Մեզ աւետեաքդ այդոքիւք անկ է ուրախանալ արդարեւ ,
“ բայց և մի՛ յանշափս , վասն որոյ և չէ պարտ զի անդէն և
“ անդ կոյր և լիուլի հաւատս ընծայեացուք խոստարան-
“ թեանց , որոց դեռ եւս ոչ մի արդիւնք ի միջի ։

“ Փանզի շատ իսկ պատրեցաք ցարդ և զմիամտութեանցն
“ մերոց շատ իսկ լուծաք զպարտս և զտակոսս հաստուցաք ։

“ Գրէք վասն Խորենայ թէ չէ պարտ նմա երթալ ի Թէոդ-
“ դոսիա , սակայն արդէն զամենայն պատրաստութիւն հա-

„ Նապարհի տեսեալ խակ էր մեր և ի տակաւ առուրս հարկ էր
„ նմա ուղղոյ լինել ։ Բայց Ձեզ մի՛ ծանր թուեցի շուն նորա
„ զի ոչ երկարժամանակեայն լինչ իցէ , այլ մինչեւ այլ իմն
„ դարձ կարեւորագոյն և շահաւետ եկցէ նմա ընդ առաջ ։ . . .

„ Գիտէք ապաքէն զի չիք մեր ի ձեռին ոչ եկամուտ և ոչ
„ յոյս ժառանգութեան ուստեք , վասն որոյ և հարկ ի վերայ
„ կայ անձանց մերոց ցորչափ ժամանակս ի ձեռս է՝ հայթայ-
„ թել մեզ ոչ միայն զոգեպահիկն մեր , այլ և զաւուրց ծե-
„ բութեան . . . քանզի գիտէք զի „ Կարգաւորեալ սէրն
„ յանձնէ սկսանի ։ „ ասէ առակն . թէպէտ և ցարդ ոչ առաք
„ մեք զայն ի միտ ։ Ահա ծաղր կացաք աշխարհի մերովս
„ ազգասիրութեամբ , իբրեւ զի օգուտ և պտուղ և ոչ մի
„ քաղեցաք յայնչափ տառապանաց մերոց և աշխատութեանց
„ և զրկանաց ։ . . .

„ Իսկ զոր զԳերապատիւ երիցակցէն մերմէ բանք , ազա-
„ չեմ զՁեզ մի՛ դիւրաւ հաւատս ընծայել շարախօս նախան-
„ ձոտաց . . . օգնութիւն առաքեաց նա մեզ իբր 2,000 ֆր.
„ գնոց առ զմեծ թուաբանութիւնն իմ ընդ 4,000 ֆրանքաց,
„ զհամառօտ նորին ընդ 600 ֆրանքաց . հատոյց և առ ձեռն
„ 2,000 ֆրանքս ի գնոյ մեծի պատմութեանս Ատուածա-
„ շունչ գրոց . խոստացաւ գնել զամենայն գրուածս մեր հա-
„ տուցանելով իւրաքանչիւր 16 ինչեան ութածալ թերթի
„ 200 ֆրանք , հատոյց և զծախս ճանապարհին իմոյ ի Պօլսոյ
„ ի Թէոդոսիա , և անտի ի Փարիզ ։ . . .

„ Պատկերազարդ տպագրութիւն Տեղեմաքայ առաքեցի
„ յառաջիկայ եօթնեկին ։ Զարմանալի եղեւ տպագրութիւն
„ տրա և Գաղղիացւոց իսկ ։ Երկերիւր և աւելի պատկերք
„ են ի նմա ։ Տպագրեմք և Այրենարան պատկերազարդ գե-
„ ղեցիկ ։ . . . Ողջ լինել Ձեզ մաղթեմք , և

„ Մնամք անձկանօք զարտեանդ Ձերոյ

„ Փարիզ . 28 յունվարի 1860.

„ Անձաւէտ որդի

„ ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. ԳԱԼՖԱՅԵԱՆ . „

Թողու Սարգիս վարդապետ ի դէմս հարկանել Ամբրոսեայ վարդապետի զանկարգ սէր նորա զոր սկսանի նա յանձնել իւրմէ ի սկզբանէ անտի, ի գործակալութենէ Մուրատեան վարժարանին, յորում ժամանակի ընդ ուխտիւ աղքատութեան էր ինքն, և չունէր բնաւ ինչ պէտս և հոգ զծերութենէ իւրմէ, հոգալով Մխիթարեանց զայն ամենայնէ. սակայն

. . . . . .

. . . . . .

խոստովանի նա ինքն անպատկառաբար, և պարծանս անձին համարի զայն, առաջիւրոց, և յանուանէ՝ առաջի Մանանեանց, օգնելով կարօտ ընտանեաց իւրոց, թէպէտ և արծաթով աղքատաց ազգին, և ապա զօգուտն և զպտուղն զոր քաղի նա ի Հայկազեան վարժարանէն, յազգայնոցս ասեմ ի Պոլիս, յածել անտի մանկունս ի վարժարանն Փարիզու, գտանէ նա անտի 20,000 Ֆրանք, ըստ բանից բերանոյ իւրոյ։ Գտանէ նա դարձեալ 24,000 Ֆրանք ի Պ. Մկրտիչ Մամճեանէ ի պէտս կարօտութեան իւրոյ առանձին, որպէս ցուցանեն հաւատոքն որք կան ի միջի. թողումք յիշել զ31,000 Ֆրանքս, զոր պարտիք վարժարանին ցուցանէ նա ապա, և զայն յանուն կարծեցեալ պարտատերց յանդիման առնէ ազգայնոցս ի Պոլիս։ . . . Ապա չունէր նա բնաւ իրաւունս և երես պարզ ասելոյ զայս բանս, թէ «Ահա ծաղր կացաք աշխարհի «մերոյս ազգասիրութեամբ, իբրեւ զի օգուտ և պտուղ և ոչ «մի քաղեցաք յանչափ տառապանաց մերոց և աշխատու- «թեանց և զրկանաց։»

Առնէ միայն պատասխանի բանից ինչ թղթոյ նորա, յորում տայ նմա իրաւունս յընտրութիւն վիճակի իւրոյ, յիշեցուցանելով զառակն որ վասն սիրոյ անձին, և զառակն որ վասն տնտեսին, թէպէտ և ինքն զհակառակն ընտրեաց, չհոգալով զանձնէն բնաւ. ծանուցանէ զյուսեցոյն հանգամանս գործոյ իւրոյ անդ ի Տիխիս, և զպատճառն այնորիկ, և զբաժին իւր ի վաստակոց անտի. գանգատի զգնացից Գաբրիէլի վարդապետի. կրկին և կրկին խնդրէ ինամանէ ան-

կորուստ պահել զգրուածս իւր այլ առանձին ընչիւք հանդերձ, օրինակ զայս .

« Սիրելեալդ իմ Եղբայր .

« Զյանկալի նամակ Ձեր, գրեալ ի 28 յունվարի տարւոյս,
« ընկալայ ի 27 փետրուարի տորին, և մխիթարեցայ ընդ լուր
« ողջամբ ժամանելոյդ ի Փարիզ, և գոհութեան այժմեան
« վիճակիդ . վասն որոյ գոհանամ և ես զՏեառնէ ոչ եա ինձ
« զայս մխիթարութիւն ի պանդխտութեանս սատ .

« Ինձ ախընթայ նամակիս եռաւ Ձեզ իրաւունս յընտրութիւն
« վիճակի ձերոյ ի Թէոդոսիա, իսկ ի սմին գովեմ զՁեզ զի
« իմաստութեամբ վարիք միշտ, և իմաստնագոյն էք քան զիս.
« քանզի ըստ բնական օրինաց և ըստ առակին հասարակաց
« վարիք դուք, թէ Սէր յանձնէն և ողորմութիւն ի տանէն .
« Այլ ես զընդհակառակն վարեցայ ցարդ, զառանձինն և
« զապագայ կենացս ոչ ինչ փոյթ կալայ . . . թէպէտ և զայս
« չէ պարտ պահանջել յամենեցուն, զի ձանձրոյթն և զգայու-
« թիւն ամենեցուն ոչ են նոյն . . .

« Այսչափ ինչ շա՛տ լիցի ձեզ ի խելամտութիւն . . .

« Որպէս ի նախընթացն իմ ծանուցի Ձեզ զհանգամանս
« գործոյս սատ, նոյն և յառեգոյն են այժմ, քանզի ընդ
« իմանալ սոցա զորոշումն ձեր ի Թէոդոսիա՝ կատեցան
« ի խորհրդոյ իւրեանց, ի հոգալոյ զհաստատութենէ վար-
« ժարանիդ ի Փարիզ, և յժանդակելոյ ծախուց ապագ-
« րութեան մատենից մերոց . և ոչ այսչափ միայն, այլ և
« առաջարկութեամբ խոստացողքն անգամ զրոյան հատու-
« ցանել զխոստացեալ արծաթն, ասելով թէ վարդապետքն
« այնոքիկ որոշեալ են թողուլ զՓարիզ և գնալ ի Թէոդոսիա
« առ Գաբրիէլ վարդապետ, ապա չկարօտին նոքա այժմ
« ժանդակութեան մերում, հանդերձ զանազան կարծեաք և
« դատողութեամբ . . .

« Ահա արդիւնք առանձին որոշման ձերոյ և ցայս վայր
« աշխատութեանս իմոյ սատ . . . քանզի ցայս վայր՝ գուցեաք

“ խոստացեալ արծաթոյն, հասանէր 5,500 մանէթ, ակն
“ ունէի ես հասանել այնր մինչեւ 15,000 մանէթ. միայն
“ 2,260 մանէթ ի ձեռս բերաւ, և այն ամենայն ձեզ յղե-
“ ցաւ յօգնութիւն կարօտութեանդ. իսկ մնացեալն զպա-
“ ցաւ, վասն վերոյիշեալ պատճառաց, թող և զայլ մասնա-
“ ւոր պատճառս տուելոց ի մասնաւորաց, յորոց ճոխագոյն
“ անձանց, որոց առաջարկեալ մեր՝ ասացին թէ հաստատեալ
“ էին զայն արդէն, տուեալ էին իւրաքանչիւր 500 մանէթ
“ Գաբրիէլ վարդապետի, և համարեալ զայն իրրեւ մեզ
“ ամենեցուն։

“ Ահա քեզ այս տեղեկութիւն, միանգամայն և խոստմանս
“ կատարումն որ ի նախընթաց թուղթն իմ։

“ Թէպէտ և յայսմ ոչ գոյ ձեզ ինչ կորուստ, զտանելով
“ ձեր ատոն լիով, և ակնուանելով զտանել եւս անտի ի Գաբ-
“ բիէլ վարդապետէ առաւելութեամբ, բայց տեսցուք թէ զինչ
“ մեայ ինձ բաժին ատոն, յեօթնամսեայ հոգւով և ցաւօք
“ կենացս ի պանդխտութեան, և չգիտեմ թէ քանի ամիս
“ եւս այսպիսի կեանք պահեալ կան ինձ ատոն. և թէ զեր-
“ ծայց ես ատոն կենդանւոյն հայեցեալ ի մարմնոյս տկարու-
“ թիւն։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և մեայ ինձ ատոն, այլ
“ բաժին սեպհական ժառանգութեան, նախատինք և ամօթ
“ յազգայնոցս ատոն, ցուցանելով իմ նոցա հանդերձ պար-
“ ծանօք զմիաբանութիւն եղբարցս; զհաստատութիւն մտաց
“ մերոց ի խորհուրդս և ի գործս, զանչահատէր հոգւոյ աշ-
“ խատութիւն, և զնահատակութիւն ի պահպանութիւն
“ ազգայնութեան մերոյ հանդերձ ամենայն նեղութեամբ և
“ կարօտութեամբ։ . . .

“ Իսկ ի հոգեհարազատ եղբօրէ իմմէ անտի ի Գաբրիէլ
“ վարդապետէ տհաճութիւն ընդ եղբայրական ազգարարու-
“ թիւնս, և անհաւանութիւն բանից ճշմարտութեան, հան-
“ դերձ այլայլեալ և հնարեալ բառիւք, խիստ և անիրաւ
“ բանիւք պատասխանի գրութեանս իմոյ։ . . .

“ Ահա սեպհական բաժին ժառանգութեանս ցարդ յաշ-
“ խատութիւն իմ ատոն։ . . . Սակայն զոհ եմ ես և ուրախ

„ ընդ այս, զի անկարուստ գիտելով իմ զայս առ Աստուած,
„ և առ մարդիկ անմեղաց . . .

„ Եւ ահա հաստատութիւն ձանաչեսցեն իմոյ և զգայու-
„ թեանս . . .

„ Զպատճէն վերոյիշեալ նամակիս առ Գաբրիէլ վարդա-
„ պետ առաքեցի ձեզ կանխաւ . առաքեմ ձեզ այժմ զպատ-
„ ճէն պատասխանւոյ նորին առ իս, յընթերցումն և ի գիտու-
„ թիւն միայն, և ոչ ի դատաստան, քանզի ի շնորհս է՛ք
„ դուք նորին, և ակնկալութիւն մեծ ունիք ի նմանէ, վասն
„ որոյ և չկարէ՛ք առնել անաչառ դատաստան, և զի բազում
„ ինչ գոյ որ անծանօթ է՛ ձեզ, և զոր չկարեմ ծանուցանել
„ ի ժամուս . . .

„ Զունիմ այլ ինչ կարեւոր, բայց եթէ աղաչել զՁեզ
„ խնամ տանել պատուական առողջութեանդ, զի պիտանի է՛
„ այդ կարօտելոյ ազգիս, զի իմն մաշեալ և դրեթէ ի վախճան
„ հասեալ է՛. և միայն խնդրել ի ձէնջ անկորուստ պահել
„ զամենայն գրուածս իմ և զկարեւոր թուղթս, հանդերձ
„ ինձ վերադարձելոք, գրենով, զգեստուք, և կահիւք, և
„ առնել ըստ առաջին պատուիրանիս յորժամ մեկնեալ՝ք և
„ դուք այսր.

„ Վիմագրեալ պատկեր Կաթողիկոսին ուր ուրեմն եհաս
„ այսր ի ձեռս Աւետիս Էնֆիաճեանի, բայց ըստ բախտին
„ ձերոյ խնդրող նորին յոյժ սակաւ է՛ սատ. Ջանացայց օգնա-
„ կանութեամբ Պարոն Եսայիեանի ի ձեռս բերել անտի զոմն
„ զմասն ինչ ծախուցդ յայն.

„ Ողջունեալ զամենայն բարեկամս մեր այդր.

„ Մնամ

„ Սիրելութեան Ձերում

„ Ի Տփխիս. 10 մարտի. 1860.

„ Յաւագին սրտիւ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՐԵԱՆ. „

ԴԼՈԽԻԳ.

Կոնդակ հրաւիրեալն ի Կաթողիկոսէն առ Սարգիս վարդապետ ի խորհել և. ի հոգալ զվիճակն նորին. — Պատասխանի հրաժարականն Սարգսի վարդապետի ընդ այն, հանդերձ պատճառաւ. — Թուղթ հրաւիրեալն ի դիմաց Կաթողիկոսին առ Սարգիս վարդապետ ի հոգալ զվիճակն նորին. — Պատասխանի հրաժարականն Սարգսի վարդապետի ընդ հրաւէրն այն. — Հաւանութիւն պատասխանի Ամիրոսեայ վարդապետի առեալ թղթոյ Սարգսի վարդապետի. — Պատմութիւն կալոյ Ամիրոսեայ վարդապետի ի Փարիզ. — Հրաւէր Ամիրոսեայ վարդապետի ի Պոլիս, և հրաժեշտ նորա ասելոի. — Թուղթ Ամիրոսեայ վարդապետի, առ Սարգիս վարդապետ. — Հատուցմամբ ինչ Մեղու լրագրին ի յանդիմանութեան ապերախտ Մխիթարեանց. — Թղթակցութիւն Խորենի և Ամիրոսիոս վարդապետաց ընդ Սարգսի վարդապետի.

Կոնդակ Ս. Կաթողիկոսին առ Սարգիս վարդապետ, որով հրաւիրի նա գնալ յԷջմիածին առ ի խորհել և ի խօսել ընդ նմա զվիճակէ կենաց նորա, որ ունի օրինակ զայս.

« Մատթէոս ծառայ Քրիստոսի և անհատանելի կամաւն
« Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս ամենայն Հա-
« յոց, Մայրաքաղաքն Պարսից համազգական նախամեծար
« Ամենայն Արարատեան Առաքելական Մայր եկեղեցւոյ Կա-
« թուղիկէ Էջմիածնի.

« Գերապատիւ և Բազմարդիւն Սարգիս վարդապետի

„ Թէոդորեան սիրելւոյ մերոյ Քրիստական սուրբ ողջունիւ և
„ սիրով ծանուցանեմք, զի յօրէ անտի շնորհիւ Ամենազօրին
„ Աստուծոյ մնանելոյ մեր ի սուրբ Աթոռս Էջմիածնի՝ հոգ և
„ ազգի ազգի զբաղմունք Ազգական և եկեղեցական գոր-
„ ծառնութեանց պարապատեալ զմեօք՝ չտան երբէք գոնէ և
„ զան անձնական մերոց տկարութեանց գտանել զապահո-
„ վութիւն դիւրութեան, այլ առաւել քան զայնս, միշտանամք
„ ի հոգի ընդ այսքան ժամանակեայ ապարդիւն և անմխիթար
„ դեգերանս ձեր անդ ի Թիֆլիս քաղաքի. այլ ոչ եւս կամե-
„ լով մեր՝ զի դուք ընդ երկար միջոցաւ մնասջիք անդէն
„ անմխիթար, զան որոյ այսու մերով կոնդակաւ յառաջադ-
„ րեմք ձերուսմ Գերապատուութեան ընդ առանալ կոնդա-
„ կիս այսմիկ միութիւն ոչ անպան գալ ասա առ մեզ, որպէս
„ զի խորհրդածութեամբ մերով անօրինեացուք զան ձեր
„ զապահով միճակ կենցաղավարութեան, այլ մի՛ եւս մնալ
„ ձեզ անմխիթար և անզգոյշ։

„ Գրեցաք ընդ այսմ նա և առ Սարգիս Արքեպիսկոպոսն
„ առ բան արժանւոյն ճանապարհորդել զձեզ անդուստ ասա
„ առ մեզ։

„ Ողջ լե՛ր, զի և մեք եմք և մնամք զան ձեր միշտ բա-
„ բեացակամ և աղօթարար զան ձերոյ արդիւնարար և ապ-
„ գաշահ յաջողութեանց,

„ ՄԱՏԹԷՈՍ
„ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ.

„ Յամի փրկչական 1860
„ Ի 19 մարտի, ի սուրբ Էջմիածին։ „

Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ Կանոնակի Ս. Կաթողիկոսին, յորում հրաժարի խոնարհութեամբ ի հրաւիրմանէ նորին, տալով գրանուէր պատճառն, օրինակ գոյս.

«Վեհափառ և Սրբազան Տէր.

«Զպատուական և զօրհնեալս Կոնդակ Սրբութեան Ձերոյ, «զնորհեալն ի 19 մարտի անցելոյ, ընկալայ ի 26 նորին ամ-«ոյ, յաւուր խորհրդաւորի, ի յիշատակի յարութեան Ղա-«զարու։

«Իցէ՛ թէ և ըստ նմին կենդանութեան հանդիպէի, ոչ «ի չորեքօրեայ մեռելութենէ յառնելով, այլ ի բազմաժամա-«նակեայ մոռացութենէ յուշի գալով։ . . .

«Ենորհ յոյժ ունիմ խնամոտ մոռց Հօրդ Հայապակաց, «զի ոչ էք զիս մոռացեալ խապառ, թէպէտ և անագան և «անդարման արդեաք, յետ երկար և ցաւալից պանդըխ-«տութեան, և յետ փակելոյ Փարիզեան վարժարանին «ի Ֆլեաս և ի նախատինս Լուսաւորչականացն յաւխտեան։

«Հարցանեմ արդ խոնարհութեամբ, առ ինչ իցէ կոչն «իմ ի Վեհէդ։ «Որպէս զի խորհրդածութեամբ մերով տնօ-«րինեացուք, ասէք, վասն ձեր զապահով վիճակ կենցաղա-«վարութեան, այլ մի՛ եւս մնալ ձեզ անմխիթար և ան-«գործ։»

«Ապահով վիճակ կենցաղավարութեան իմոյ, կախի զհա-«ւանելոյ նպաստակիս, որ և ծանօթ իսկ է Վեհիդ, և որ ոչ «ի շահ և ի պատիւ անձինս առանձին, այլ յօգուտ և ի պար-«ծանս ազգիս։ Ապա չկարօտի այն խորհրդածութեամբ «տնօրինելոյ, այլ կարօտի օժանդակ կամաց Ձերոց յար-«դիւնս ածելոյ, որով և չմնայ ինձ այլ եւս անմխիթար և «անգործ կալ։

«Ահա յիշեցուցի Սրբութեան Ձերում զմիայնակ նպա-«տակն իմ, զմիջոցն հաւանելոյ այնմ, եթէ հաճեսջիք. ապա «թէ ոչ՝ յանձն արարեալ զայն խնամոց Տեառն՝ անցուցից «զմնացեալ աւուրս յառանձնութեան ուրեք. այն զի՝ և «չնեղեն ինձ ոչ հասակս և ոչ փորձառութիւնս այլ ինչ իմիք «ցանկալ երբէք։ . . .

«Եւ արդ՝ եթէ այլ ինչ խորհուրդ և կամք իցեն Վեհիդ,

„ վասն որոյ կոչէք զիս այդր, եթէ յապաղեացի ցանկալի
„ Գալուստս Ձեր այսր ի տեսութիւն փոխարքային, խնդրեմ
„ շնորհ ապարեալ ծանուսջիք ինձ զայն, որպէս զի ըստ այնմ
„ գիտացից առնել զոր ինչ պարտիմ առնել,

„ Մնալով միշտ

„ Վեհափառ Տէրութեանդ Ձերում

„ Ի Տփխիս. 2 ապրիլ. 1860.

„ Ամենախոնարհ ծառայ

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՄԻՐԵԱՆ. „

Պատասխանի ի դիմաց Ս. Կաթողիկոսին տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի, յորում ծանուցանէ զգժուարութիւն գալստեան իւրոյ ի տեսութիւն փոխարքային ի Տփխիս, և զպատճառս հրաւիրելոյ զնա յԷջմիածին, ի խորհել զմիջոցն հասանելոյ նպատակի նորին, օրինակ զայս.

„ Գերապատիւ Հայր.

„ Առ նամակ Ձեր գրեալ յշ ամսոյս առ նորին Վեհափա-
„ ռութիւն Սրբազան Կաթողիկոսն ամենայն Հայոց, ըստ
„ հրամանի նորին Սրբութեան պատասխանեմ, զի առաւել
„ առ սկզբութեան, չասեմ ի բազմագիմի գրութեանց որ
„ յամենուստ հասանեն առ նա և պարապեցուցանեն զուշ
„ մուտս նորա առնել զայլեւայլ պատասխանիս, կարգաւո-
„ րութիւնս և անօրէնութիւնս ըստ ծանր լծոյ պաշտաման
„ նորին և կոչման, ոչ կարէ գեռեւս հեռանալ ի տուրք
„ Աթոռոյս, է խստակցիլ և խորհրդակցիլ ընդ ձեզ երկարո-

„ բէն զամենայն հնարից և զկարեւոր միջոցաց հաստատելոյ
„ Ձեզ փափաքելի նպաստակի Ձերում ։
„ Ներելով շուտափոյթ գրութեանս ,

„ Մնամ

„ Ի 11 ապրիլի . 1860 ամի .

„ Ի սուրբ Էջմիածին .

„ Խ. Ծ. ԳՐԻԳՈՐ Վ. ԱՂԱԲԵՐԵԱՆ . „

Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ թղթոյ որ ի դիմաց Ս. Կաթողիկոսին , յորում հրաժարի զարձեալ ի հրաւիրմանէ նորին , տալով զպատճառն դարձեալ հանդերձ առաւելութեամբ , օրինակ զայս .

„ Յարգոյապատիւ Եղբայր .

„ Զյանկարի պատասխանիդ , տուեալ ի 11 ապրիլիս , ըստ
„ հրամանի Վեհափառ Տեառն մերոյ , ընկալայ ի 16 տրին
„ ամսոյս , և ծանեայ շնորհապարտ մնաք զհաճութիւն կամաց
„ նորին ընդ ժամանումն նպատակիս , վասն որոյ և հրաւէր
„ ի սուրբ Էջմիածին , ուր և գայի յօժարութեամբ սրտի , եթէ
„ ներէին ինձ հանգամանք կենացս ։

„ Նախ առաջին , տկարութիւն մարմնոյս , զի այնչափ
„ տկարացեալ եմ մինչեւ չկարեմ առնել երկար ճանապարհ ,
„ և տակաւ օդոյ տեղւոյդ , զորոյ առի զփորձն յանցեալ
„ ամի , և զցաւն որ անտի զգամ տակաւին ։ . . .

„ Երկրորդ՝ հարկաւորութիւն փութով դարձին իմոյ ի Փա-
„ բիզ , քանզի Ամբրոսիոս վարդապետ մեր միայն է , անդ և
„ հիւանդագին մարմնով , եթէ Տէր մի՝ արասցէ մահ ինչ
„ պատահիցի նմա , գրուածքն իմ՝ անկցին ի ձեռս այլոց , և
„ այն է երկրորդ հատոր պատմութեան Պարսկաստանի վար-

„ ժարանին, հանդերձ հաւատեաք պատմութեան Հայկազեան
„ վարժարանին ; զոր արժան և պարտ իսկ է տպագրել և
„ հրատարակել յազգի մերում իգիտութիւն ճշմարտութեան
„ և ի լրումն արգարութեան ։

„ Եւ երրորդ՝ չկամիմ ես կորուսանել զպատեհութիւն
„ ուղեկցութեանս ընդ կարեւոր և կարեկից բարեկամին իմոյ
„ Պարոն Նատիրեանի որ ունի գնալ ի Փարիզ յամենեան
„ մայիսի ։

„ Թողից ասել զոչ հարկաւորութենէ գալստեան իմոյ
„ այդր. և յիրաւի՝ քանզի զանենացն հնարից և զկարեւոր
„ միջոցաց հաստատելոյ նպատակիս խօսեցեալ և խորհրդակցեալ
„ ենք յերկար ընդ Վեհին մերոյ արդէն. և զի զաղբիւրն օժան-
„ դակութեան վարժարանիս ի Փարիզ ցուցեալ ենեմ գլխա-
„ ւոր ազգայինքս որք աստ գրութեամբ իւրեանց, հանդերձ
„ երաշխաւորութեամբ ընդ կարծեցեալ անսխորժ հետեւանսն
„ որք անտի ։ . . .

„ Ապա մնայ միայն Վեհին ի գործ դնել զայն գոր-
„ ծունեայ կամքն, և ոչ եւս անեալ կասկածաւոր բանից
„ ոմանց, և մեծոյ պատճառանաց նոցա տուելոց երբեմն աստ
„ և անդ ։

„ Բազում խոնարհութեամբ և յարգանաք համբոյր Աստ-
„ ուածարեալ Աչոյ Վեհափառ Տեառն մերոյ մատուցեալ՝

„ Մնամ

„ Ի Տփխիս. 20 ապրիլ. 1860.

„ Ցարգոյապատիւ Եղբայրութեանդ

„ Խ. Ծ. ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ. „

Պատասխանի Ամիրոսեայ վարդապետի տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի, յորում ծանուցանէ զընդունելութիւն արծաթոյն և զշնորհակալութիւն իւր ընդ այն, և զցաւս որոյ

իւրոյ ընդ սրտառուչ բանս թղթոյ նորա, որում և իրաւունս տայ, հանդերձ խոստմամբ չթողուլ զնա յայն ողորմ վիճակի հասանել . . . զմեկնիլ Խորենայ վարդապետի ի Թէոդոսիա, զմնալ իւր ի Փարիզ, զհրաւէր իւր ի Պօլիս վասն հոգալոյ ըզպարտուց վարժարանին, և զհրաժարիլ իւր անտի, և խնդրէ ինամանէ ընդ այն խորհուրդ, օրինակ զայս.

« Անձկալիդ իմ Հայր և վարդապետ.

« Այն ինչ ընկալեալ զհինգ հազար ֆրանքսն ի Պարոն
« Տրպէլտէ, և ծանուցանելով զայն ցանկայի, շնորհ յոյժ
« ունիմ խնամոտ մտաց որդեգրով Հօրդ սիրայնոյ, եհաս
« և դրոշմեալդ ի 29 դեկտեմբերի զիր ցանկալի, և որչափ
« առատաք քաջողջութեանդ խրախացոյց զմեզ՝ նոյնչափ և
« ցաւելեաքն վշտացոյց . . .

« Եւ զիարդ ոչ, Հայր. անցնիւր բանք Ձեր ցաւագինք՝
« քան զայրատուր սլաքս նետից խոցոտեցին կարեվէր զեղ-
« կելի և զվշտահար սիրտս որդեկացդ . . . և ուրախ ար-
« տասուաց ծորեցուցին յաչաց նոցա, մանաւանդ սրտառուչ
« և աղեկէզ բանքդ որով առաքոտալ կնքէիք զթուղթ ձեր
« որ առ Գաբրիէլ վարդապետ եղբայրն մեր. « Եթէ կարօ-
« « տացայց հոգեպահ պարենի և յարկի բնակութեան,
« « առաւել ընտրեմ ես լինել ինեարքոյ շնորհաց օտարազգւոյ
« « և անցուցանել զմնացեալ աւուրս կենաց իմոց յանկելա-
« « նոցի նորին, քան բնակել ի յարկս անզգայ ազգայնոյ
« « իմոյ և կերակրիլ ի սեղանոյ անտի. »

« Զինչ իրաւացի և արդարացի քան զայսոսիկ բանս,
« այլ զինչ և առաւել ցաւագին և խոցոտիչ հայրագորով
« խելացս . . .

« Ա՜հ. ո՛չ, Հայր, ո՛չ, ցորչափ կենդանի իցեն որդիքդ Ամբ-
« բոսիոս և * * * ոչ յայն ողորմ հասցես պայման . . .

« Ահա սիրելին քո և հլու որդեակդ Ամբրոսիոս մնայ քեզ
« ի Փարիզ, ժողովել զգաւել զՀայրդ անձկալի և փարելի, և
« կամակատար լինել նմին յամենայնի.

„ Խորէն գնալ գնաց ի Թէոդոսիա, այլ ոչ ի մշանջենաւորել
„ անդ. և ի պահանջել հարկին՝ փութայցէ ի Փարիզ . . .
„ Հանպա քաջալերեցարուք, Հայր, փարատեցէք ի մոաց
„ զվհատութեան խորհուրդն և փութացարուք ի գլուխս որդ-
„ ոցդ խորհել զարժանն ։

„ Որպէս ծանուցի Ձեզ, ըստ խորհրդոյ բժշկաց պարտիմ
„ ես զամս ոչ սակաւ կալ ի քաղաքիս, ի դարման առողջու-
„ թեանս քաքայելոյ յերեսաց անլուր աղէտից, զորս դիւրին
„ է Ձեզ իմաստասիրել ։

„ Ոչ սակաւ աղէտք են և արդ և հոգ մեծ, չհատուցանել
„ Պօլսեցւոց, և կամ անասելի անհոգութեան և դանդաղու-
„ թեան նոցա ի հատուցանել պարտուց ազգայնոյ վարժարա-
„ նին, զոր վճռով և հրամանաւ Գերագոյն ժողովոյ իւրեանց
„ փակեցին . . .

„ Ս. Պատրիարքն գրեալ գիր հրաւիրէ զիս վերատին ի Պօ-
„ լիս՝ յորդոր լինել ժողովոց և ազգին ի հատուցումն պարտուց։
„ Զոր նայն չզօրէ առնել իւրովք մեծազօր իշխանութեամբ,
„ ես ի՞նչ մարթացայց առնել ։ Տուք ինձ խորհուրդ զոյս-
„ մանէ ։ . . .

„ Ողջունիս կարօտանաց Խորենայ

„ Ողջ լինել Ձեզ ըղձանամ

„ Գեր. Վ. և Հօր սիրայնոյ

„ Փարիզ 13 փետր. 1860.

„ Անձնանուէր որդի

„ ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. ԳԱԼՖԱՅԵԱՆ. „

Թուղթ Ամբրոսեայ վարդապետի առ Սարգիս վարդապետ, յորում ծանուցանէ զհոգս իւր որ ընդ յապաղումն թղթոյ ի նմանէ, և յուսայ զգալուստ նորին ի Փարիզ յայն գարնան,

և մեայ այնմ ի զետեղել զբնակութիւն իւրեանց անդ, օրինակ զայս.

„ Ամենասիրելիդ մեր Հայր և վարդապետ.

„ Ահա ամիսք բազումք են զի չունիմք գիր առ ի Ձէնջ, „ սակայն ակն ունիմք թէ քաջառողջ լցէք։ Մի այդպէս „ յապաղէք աղաչեմ զնամականին ձեր, զի ի հոգս անհնա- „ բինս արկանեք զիս։

„ Ի զուր սպասեալ վերջին գրութեանս մերոյ՝ և թա- „ խանձեալ ի Գարբիէլ վարդապետէ մեկնեցաւ յերկին „ Խորէն։

„ Ակնունիմ, Հայր, զի բան խոսմանդ եկաւորեսջիք այսր „ ի գարնան։ Սիրայնոյ Հօրդ մեամ գալստեան ի զետեղումն „ բնակութեանս։ . . .

„ Ողջ լեր Անձկալիդ Հայր։

„ Փարիզ. 22 մարտ. 1860.

„ Անձնանուէր որդի

„ ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. ԳԱԼՖԱՅԵԱՆ. „

„ Յ. Գ. Յզեմ ձեզ զհատուածիկն Մեղուին Պօլսոյ ի պաշտ- „ պանութիւն պատուոյ ձերոյ։

(Մեղու. թիւ-87-1860 յունվար.)

Մեծ մռայլում մը.

„ Անցեալ 21 ին Մէջմուայլ Հաւատոյ լրագրոյն յաւել- „ ուածին մէջ Մուրատեան և Իսֆայլեան փարժարանին „ աշակերտաց խմած գիներեալը համրած ատենս, տեսանք,

“ որ Մուրատեան վարժարանի նախկին վերատեսուչ Թէո-
“ դորեան Սարգիս վարդապետին կենացը և գոնէ յիշատա-
“ կին համար դինի խմած չէ, այն անձին, որ իրենք ալ կը-
“ հաւատան թէ այն դպրոցին երկրորդ հիմնադիր մը կրնայ
“ սեպիլ ամենայն իրաւամբ։ Զենք կրնար և չենք ուզէր
“ հաւատալ թէ այն լուսաւորեալ երիտասարդները անոր
“ անունը բերանին առած չեն, վասն զի Հռոմայ եկեղեցին
“ թողած Էջմիածնայ եկեղեցին մոռած է, ուստի պատիւ չըներ
“ իրենց։ Բայց ինչպէս ալ ըսենք թէ մեծ մոռացում մը եղած
“ է. վասն զի . . . . . ։ ”

“ Եթէ դորա լռեցին, քարինքդ աղաղակեցին ի յանդի-
“ մանութիւն դպրաց և փարիսեցւոց։ ”

Վերոյիշեալ երկոքին թուղթք Ամբրոսեայ վարդապետի նշանաւորք են յոյժ յոյժ համեմատելով զոյն տպա ընդ բանից բերանոյ և ընդ գնացից նորա, որովք ծանիցի քաջ ոյժ բարուց նորա և յարդ . . . թէպէտ և անագան յոյժ և անդարման։ . . .

Թուղթ Խորէն վարդապետի առ Սարգիս վարդապետ ի Տփխիս, յորում ծանուցանէ նմա զել իւր ի Փարիզէ գնալ ի Թէոդոսիա յօգնականութիւն Գաբրիէլի վարդապետի ընտիր խնդրոյ և թարմանձանաց նորա, հանդերձ ազդարարութեամբ կամաց և վիճակի իւրոյ. օրինակ զայս.

“ Գերապատիւ և Սիրելեալ Հայր մեր և վարդապետ.

“ Վերջին զայս գրեմ առ Ձեզ թուղթ ի Փարիզէ, ի վերջ-
“ նում անգ ժամու։ Այսօր իսկ ելից յուղի գնալ ի Վենետս և
“ անտի անցանել ընդ Դանուպ ի Գալաց, և անտի յՕտէսա,
“ ուստի գնալ դէպ ուղիղ ի Թէոդոսիա։ Պատճառ ցարդ յա-
“ մենայս իմ ի Փարիզ այն իսկ եղեւ զի լիցի ինձ խնամեալ զորոշ
“ և զհատատուն կամն Տփխիսեցի եղբարց։

«Գեր. երիցակիցն մեր Գաբրիէլ վարդապետս մեացեալ է
«անոք և անօգնական. ապա հարկ ի վերայ կայ ինձ փութալ
«վերջին տալ անորոշ կացութեան իմոյ որ յերից ամաց հետէ
«և այսր ։ Փանզի Զեզ Գերապատիւ Հօրդ քաջ իսկ յայտնի
«է ապաքէն զի չիք ինձ հնար կեալ ի Փարիզ անգործ, մա-
«նաւանդ անդրամ ։ . . .

«Թող զի հարկ ի վերայ կայ ինձ և զապագայէս խորհել
«և կշռել խոհականութեամբ ։ . . .

«Ի վերայ այսր ամենայնի ոչ թէ այսու զայն կամիմ ասել
«թէ վախճան չուրս իմոյ իցէ մնալ ի Թէոդոսիա մինչ խապտա,
«այլ առ ժամանակեայ ինչ է, և առ ի չգոյէ լաւագունի ։
«Եթէ յաջողեսցէ Տէր և վերականգնեսցի վարժարանն Հայ-
«կազեան, օգաթեւ թռուցեալ հասից ես ի Փարիզ, ընդ այն
«անելիսիս լերուք և ապահով արարէք զսիրելի եղբարս
«մեր ի Տփխիս ։

«Յանձն արարեալ զիս յարժանընդունակ աղօթս և օրհնու-
«թիւնս Գերապատիւ և Վեհապրեալի Հօրդ՝

«Մնամ

«Փարիզ. 21 մարտ. 1860.

«Արժանապատուութեանդ ձերում

«ԽՈՐԷՆ

Պատասխանի Սարգսի վարդապետի առեալ թղթոյ Ամբրոսեայ և Խորենայ վարդապետաց, յորում շնորհակալ լինի կարեկից մոաց նոցա որ ընդ ցաւալից վիճակ իւր ի Տփխիս. ծանուցանէ նոցա զհրաւէրն որ ի Կաթողիկոսէն և զհրաժարիլ իւր անտի. դանգատի զգնացից Գաբրիէլի վարդապետի. յանդիմանէ զհակառակութիւն բանից Ամբրոսեայ վարդապետի և զանզգայութիւն նորա. մեղադրի, զնա ընդ անփութութիւնն որ զպարտուց փարժարանին, օրինակ պոյս.

“ Սիրեցեալդ իմ եղբայր ·

“ Ցերկոսին նամականին Ձեր , գրեալք ի 1 փետրուարի և
“ յԺ մարտի անցելոյ , ընկալայ ըստ ժամանակին, և ծանեայ
“ զկարեկիցս միտս ձեր որ ընդ ցաւալից հանգամանս իմ աստ
“ ի Տփխիս ։ Ցեղրհ ունիմ ողորմութեան Աստուծոյ որ պա-
“ հեաց ինձ եւս զայս մխիթարութիւն և ապաչեմ զնա զի
“ շնորհեացէ ձեզ կատարեալ առողջութիւն հանդերձ երկար
“ կենդանութեամբ և յաջողութեամբ գործոց ։

“ Ամենայն բանից թղթոց երկոցուն հարազատացդ ոչ ու-
“ նիմ առնել պատասխանի , հաստատանելով իմ զայն ի նա-
“ խընթացան իմ լիով . տաց միայն բանիցդ ինչ և ծանո-
“ թութիւն կարեւոր ։

“ Սրբազան Կաթողիկոսն միանգամ և երկիցս հրաւիրեաց
“ զիս յԷչմիածին առ ի խօսել և ի խորհրդակցել զապահով
“ կենցաղավարութենիս , ձեռնադրել զիս եպիսկոպոս և կար-
“ գել առաջնորդ թեմի միոյ , որպէս երբեմն Զաքարիայի ,
“ այլ ես բացէ ի բաց հրաժարեցայ անտի , օտար զայն
“ ցանկութեան և նպատակի իմում համարելով ։ . . . Դար-
“ ձեալ հրաւիրեաց նա զիս անդ առ ի խորհել երկար
“ զնպատակէ իմմէ , դարձեալ հրաժարեցայ ես անտի , հան-
“ դերձ բանաւոր պատճառաւք , ճանաչելով զմիտս նորա և փորձ
“ գոլով գործոց իւրոց ։ . . .

“ Գէր. Գաբրիէլ վարդապետ երիցակիցն ձեր ոչ տրար
“ պատասխանի վերջին երկուց թղթոց իմոց , զորոց պատճէնս
“ առաքեցի ձեզ ի գիտութիւն , և ընդ որ այնչափ ցաւեալ
“ էիք վասն իմ ։ . . . Կարճատես անձնասիրութիւն նորա ոչ
“ տայ տեղի բանից ճշմարտութեան ։ . . .

“ Լուեալ իցէք հարկաւ զտապնեպ նորա որ յերեւաց հա-
“ կառակորդաց իւրոց անտի , ի հրահանգելոցն որք ի Մոսկվայ ,
“ և ոչ ի Փարիզ , ուր կարծէ նա խառնեալ է թռչի ընդ ծաղ-
“ կռնեւ թռչաստանի . . . վասն որոյ չունայ փափել տալ

“ զվարժարանդ զի զերծուցէ զձեզ անտի, զի ձգեսցէ զձեզ
“ առ ինքն յօգնականութիւն աշխատութեան իւրոյ անդ.
“ ապա զիարդ ասէք դուք թէ “ Ըստ խորհրդոյ բժշկաց
“ պարտիմ ես զամս ոչ սակաւ կալ ի քաղաքիս առ ի դարման
“ առողջութեան քաքայելոյ յերեսաց անլուր աղետից, զոր
“ զիւրին է ձեզ իմաստասիրել։ ”

“ Ոչ կարեմ ես ապաքէն ի հակառակ միմեանց բանից ասոյ
“ իմաստասիրել ինչ . . . այն զի և հարազատդ Խորէն, գնալ
“ գնաց, ասէ՝ ի Թէոդոսիա, որուամ պարտ և հարկ էր
“ առ քեզ տկարացելոյդ կալ և օգնական աշխատութեանդ
“ լինել։ . . . Թողից ասել զդիտաւորութենէ իմմէ, զանկա-
“ թենէ ազգայնոցս ասա, զոր ծանուցի ձեզ։

“ Եթէ փառասիրութիւն և սէր ընտանեաց Գրաբրիէլ վար-
“ դապետ ետուն նմա մուտանալ խոպան զանէր հոգեհարազատ
“ եղբարց իւրոց, և ոչ ինչ համարել զվիշտս, զպատիս, և
“ զնախատինս նոցա որ ի թշնամեաց, պարտ և հարկ էր
“ արդեաք և ձեզ մուտանալ և ոչինչ համարել զայն։ . . . Միայն
“ զժամն աշխատուրենն Նորին հոգալ, և նմա միայն արդա-
“ հատել կարեւոր և հարկ համարեցայր։ . . .

“ Թողից ասել զտարապայման կամարարութենէ ձերոյ,
“ զոհելով հաճոյից և կամաց Նորա զամենայն, զպատիս
“ խոտանանդ առ Պատրիարքն Պօլսոյ վերատին զառնալոյդ
“ անդ, ի հոգալ և յաւարտել զինդիր պարտուց վարժարանիդ։
“ “ Վասն որոյ և ոչ սակաւ են, ասէ՝, և հոգ մեծ չհա-
“ տուցանել Պօլսեցւոց կամ անասելի անհոգութիւն և դան-
“ դաղութիւն նոցա ի հատուցումն պարտուց ազգայնոյ վար-
“ ժարանին։ ” Ապա առ ինչ արդեաք այդ տարապայման
“ կամարարութիւնդ, մինչեւ արհամարհել և ոչինչ համարել
“ զայն ամենայն, որպէս զի ըստ ցանկութեան և ըստ խրա-
“ տուն Նորին ժամ մի յառաջ ի Փարիզ հասանել, և անտի
“ զհարազատդ առ նա յղել ի ծառայութիւն, և կարեւորու-
“ թիւնն այնր այնչափ, մինչեւ չառնել Նորա ճանապարհ ընդ
“ Պօլիս և չտեսանել զմայր իւր, որ բազմամեայ կարօտանօք
“ մեայր որդւոյն տեսութեան . . . Թողից ասել զդիտաւ-

“ թենէ հաստուցման պարտուց վարժարանին, վարկ մեծ ու-
“ նելով ազգայնոցս անդ զհարազատէդ։

“ Լուայ ի թղթոյ նորին որ առ Էնֆիէճեան ասա ի Տփխիս,
“ թէ ունի գալ այսր ի մօտոյ։ Կարծի թէ գնայցէ յԷջմիածին
“ ձեռնադրիլ եպիսկոպոս թեմին իւրոյ Բեսարաբիոյ։ Բարեաւ
“ վայելեսցէ զայն յառաւել իմն միխիթարութիւն ընտանեաց
“ իւրոց միայն . . . և թէ հասեալ իցէ անդ ի Թէոդոսիա Խո-
“ րէն վարդապետի, և թէ յանձնեալ իցէ նմա զանազան
“ պաշտօնս յուսուցչարանի անդ. ապա ուր մեաց մեծարա-
“ նութիւն նորա որ ի թուղթն իւր առ իս. “ Զայս միայն փու-
“ թամ ահա ծանուցանել սովիմբ, զի ընդ առնուլ զթուղթ
“ ձեր զայս, գրեցի առ Ամբրոսիոս վարդապետ, մի՛ յղել այսր
“ զԽորէն. եթէ չեւ իցէ յուղի և գայցէ այսր, վատահ լերուք
“ զի ոչ կալայց զնա առանէն, այլ ի Փարիզ առ եղբայրն դար-
“ ձուցից։ ”

“ Ահա այր անհաստատ ի գրութեան իւրում, և հաստատ
“ միայն յանհաւանութիւն ճշմարտութեան և անխոհեմ ի գոր-
“ ծառնութիւն իւր, վասն որոյ և կորուսեալ զվարկ իւր առ
“ ազգային անդ։ . . . Թուի թէ և հարազատդ վարակեալ
“ իցէ ի նմանէ, չծանուցանելով ինձ ցարդ զհասանել իւր
“ անդ, զոր յայլուստ լուայ հանդերձ զարմացմամբ ընդ չի-
“ մանալս զայն ի նմանէ . . . և ահա յայս ստիման հաստատեաք
“ զիս առ քաղաքավարութեամբդ ձերով, և տակաւին ակն
“ ունիք բարեացն որք յազգայնոցս առի, և յուսացուցա-
“ նէք զիս մնասի յուսով միխիթարութեան։ . . .

“ Ա՛հ, սիրելեալդ իմ եղբայր, թէպէտ և ծերացեալ եմ
“ ես հասակաւ, այլ չեմ զառամեալ մտաւ. ծանեայ և հանա-
“ չեմ զամենեսեան, տարայ և տանիմ ես համբերութեամբ
“ ներգութեան։ . . .

“ Բազում ինչ ունիմ ասել, այլ չներեն ինձ հանգա-
“ մանքս։ . . .

“ Ամն յազգայնոցս առի և ի ծանօթից իմոց գնացեալ
“ յուխտ ի սուրբ Էջմիածին, և գարձ արարեալ այսր, պատ-
“ մեաց ինձ, թէ ի խստակցութեան ընդ Կաթողիկոսին՝ լինի

“ յիշատակութիւն զվիճակէ իմմէ ասա. ասէ Կաթողիկոս ,
“ թէ “ Սարգիս վարդապետ Թէոդորեան գանդատի զինէն
“ ի թուղթն իւր , թէ մոռացեալ իցեմ զնա. ոչ բնաւ , ասէ ,
“ այլ զոմն և զգիշեր խորհիմ հնարս ինչ գտանել յաջողու-
“ թեան նպաստակի իւրում . բայց զինչ կարեմ առնել , ասէ ,
“ զի պատճառ ամենայն անյաջողութեան Փարիզեան վարժա-
“ բանին բաժանիլն է անտի Գաբրիէլ վարդապետի Այվազեան.
“ պարտ է , ասէ , Հ. Թէոդորեանի զնմանէ գանդատել և ոչ
“ զինէն . զնա մեղադրել և ոչ զայլ ոք ։ ”

“ Ոչ ապաքէն արդարանալ արդարանամ ես ի բանս որ առ-
“ նա երբեմն, և երկրորդեալ զայն ապա բաղում անգամ, թէ
“ “ Աւա՜ղ բաժանմանս, ո՞չ ապաքէն ամենայն վնասք մեր և
“ նախատինք անտի ծագեցան ։ ” Ապա ի զուր Ղանայ նա
“ արդարացուցանել զինքն յայսմ ի Մասիս լրագրին, քանզի
“ արդիւնքն վկայեն ճշմարտութեան հանդերձ հաւատուք ։

“ Այսմ ճշմարտութեան ոչ միայն Կաթողիկոսն այլ և
“ ամենեքեան առհասարակ որ ի Պոլիս, և որ ի Տփխիս վկա-
“ յեալք վկայեն . և ի յիշեցուցանել իմ նմա զայս ճշմարտու-
“ թիւն՝ զայրացաւ նա և խռովեցաւ ընդ իս , որպէս և հար-
“ կաւ իմացեալ էք ։ . . .

“ Հանդերձեալ եմ երանել ի հանապարհ յերս ամսոյս ,
“ հանդերձ մտերիմ և կարեկից բարեկամաւս , Պարոն Ռոմա-
“ նոս Եպիսկոպոսիս . ապա դադարեցուցէք զդրութիւն ձեր
“ առ իս ասա յայսմ հետէ , և յղեցէք զայն ի Պոլիս , եթէ
“ ունիցիք կարեւոր ինչ ծանուցանել ինձ , քանզի ընդ Պոլիս
“ կամիմ անցանել այդր ։

“ Մնամ

“ Սիրելութեանդ

“ Ի Տփխիս . 13 մայիս . 1860 .

“ Հոգեկցորդ եղբայր

“ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ . ”

Թուղթ Խորենայ վարդապետի առ Սարգիս վարդապետ ի Տփխիս, յորում ծանուցանէ նմա զյաջող ճանապարհորդութիւն իւր և զժամանումն ի Թէոդոսիա, և զմխիթարութիւն իւր անդ, հանդերձ յիշատակութեամբ խոստման իւրոյ դառնալոյ վերստին ի Փարիզ, ըստ հնարեալ և թելադրեալ յայլմէ պայմանին և առաջարկութեան, օրինակ զայս.

„ Գերապատիւ և Հոգեշնորհ Հայր մեր և վարդապետ.

„ Առանց ապասելոյ ընդունել զպատասխանի վերջին թղթոյն
„ իմոյ, զոր գրեցի ձեզ ի Փարիզոյ, յաւուր եկանելոյ իմոյ
„ ի մեծէ և ի տիրայիշատակ մեզ քաղաքէ, ահա փութամ
„ այսօր ծանուցանել ձեզ որպէս զուղեւորութիւն, նոյնպէս և
„ զյաջող և զանվտանգ կատարած նորա Տէրամբ, յարժա-
„ նահայց աղօթից ձերոց անշուշտ օժանդակելոյ.

„ Անգատին յերկրորդմէ օրէ գալուստանս՝ սկիզբն առի
„ ես դասախօսութեանց և ուրախ յոյժ եղէ ի տեսանել
„ զբազմութիւն և զեռանդն և զարիկարդ ընթացս զաշա-
„ կերտացն. թուի ինձ մոռանալ իմն զյաւս ամենայն և
„ զվիշտս զոր կրեցաք ի Փարիզ, բայց մոռանալդ՝ առ խուն
„ մի է, զի է՛ է և ցաւոցն այնոցիկ փափաքելի մատն և պայ-
„ մանն, է՛ է և վշտացն այնոցիկ քաղցր միխիթարութիւն,
„ զիտել զի վասն Աստուծոյ փառաց և հայրենեաց են սի-
„ րոյ...

„ Հարկ ինչ իցէ կրկնել ձեզ, և առաւել ի Թէոդոսիոյ
„ զոր ինչ ի Փարիզէ ձեզն խոստանայի, թէ գալուստն իմ
„ այսր յայս վարժարան առժամանակեայ ինչ է, և թէ
„ պատրաստ եմ ես և յօժարամիտ դարձ ի Փարիզ առնել
„ վերադարձեալ, թէ որպէս խոստացեալն էր եղբարց Տփխիս-
„ ցեաց վերականգնել զՀայկազանն կամեցին վարժարան,
„ և զիս դարձեալ ի տեսչութեան անդ վարժարանին ինդրիս-

“ ցեն գոլ վասասակից։ Ա՛ղէ գուք զնիւթական պիտոյից հաս-
“ տատութեանն խորհեցարուք և հնարս հնարեցէք աղաչեմ,
“ այլն ամենայն դիւրին ինչ իցէ և յոյժ դիւրին։ Գուցե՞ն
“ արդեօք, ի Տփխիս կամ այլուր ազգասէրք, որ այնպէս
“ իմն համարիցին թէ ես նուազ քան զնոսա փափաքիցեմ
“ տեսանել վերականգնեալ զտունն զայն, զվարժարանն
“ ասեմ, ուր հեղի այնչափ քիրտն, և արտասո՛ւս այն-
“ չափ։

“ Ա՞չ ապաքէն ուխտիւք ուխտիցեմ, զի ուր զցաւոցն և
“ զհեծութեանց, անդ զէթ յաւուր միում և զմխիթարու-
“ թեան հեղից զաղո՛ւ արտասուս։ . . .

“ Զթղթոյս պատասխանի աղաչեմ զձեզ մի՛ յապաղել, զի
“ ի բազմաց ամսոց հետէ զիրկ եմ ի ցանկալի լոյ և աւետաց
“ փափաքելի առողջութեան Գեր. Հօրդ։

“ Ակնունիմ եթէ աջ Բ՛արձրելոյն հոսանի ձեզ լեալ և
“ պահպանիցէ որպէս ցարդն, և յայսմ հետէ, և զպանդխո-
“ տութեանն դիւրելով ձեզ զմիշտս և ամենեսեան։

“ Բայց ցանկալի էր ինձ յոյժ գիտել և զայն թէ ե՛րբ ար-
“ դեօք վախճան պանդխտութեանդ լինիցի. ե՛րբ իցէ զի ցան-
“ կալի տեսլեամբ անձկալուոյ Հօրդ մխիթարեալ բերկրեացին
“ մեր սիրտք, և գուք հանդչիցէք ի վշտագին կենաց այսր
“ օտարութեան։

“ Գիտէք ապաքէն զի ոչ միայն ասա ի Թէոդոսիա, այլ
“ և ի Պոլիս, և ի Փարիզ ամենեքին որ ճանաչեն զձեզ՝ մեան
“ անձկանօք դարձին ձերում անդրէն։ Անչուշտ լերուք զի
“ ամենայն ուրեք գոչիք ձեզ պատրաստ գտիրս և զդը-
“ բուն։

“ Բայց արդեօք մոռացա՞յք և զմեծն ձեր երկասիրութիւն
“ զորոյ փափաքելով փափաքին ամենեքին տեսանել և զերկ-
“ կրորդն հատոր, զպատմութեանդ ասեմ Մուրատեան վար-
“ ժարանի։ Ա՛ղէ մի՛ յապաղէք տալ զայն ի լոյս. գիտէք զի
“ որչափ փութով լիցի հրատարակումն նորա, այնչափ մեծ
“ լիցի և ազդեցութիւնն։ . . .

“ Զայն զայս խորհուրդ տայ և Գեր. մեր Գաբրիէլ վար-

“ գասկետ, որ և անձկանաք սիրոյ ողջոյն մատուցանել ձեզ
“ և յորդոր լինի փութալ ձեզ ի տպագրութիւնդ։

“ Մնամ

“ Անձկալուս Հօրդ և վարդապետի

“ Թէոդոսիա. 26 ապրիլ. 1860.

“ ԽՈՐԷՆ Վ. ԳԱԼՖԱՅԵԱՆ. ”

Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ թղթոյ Խորենայ վարդապետի, յորում յիշեցուցանէ նմա զպատճառ քանդման վարժարանին ի Փարիզ, և անյաջողութեան գործոյ իւրոյ ի Տիֆլիս. ծանուցանէ նմա զկարօտութիւն իւր, և զչնորհս բարերարաց իւրոց անդ, հանդերձ կարեւոր ազդարարութեամբ որ գտուպագրութենէ երկրորդ հատոր պատմութեան Վարդանեան վարժարանին, և այլն, օրինակ գայս.

“ Սիրելեալդ իմ եղբայր.

“ Ցցանկալին Ձեր նամակ, գրեալ ի 26 անցելոյն, ընկա-
“ լայ ի 16 ամսոյս, և ուրախացայ ընդ յուր ողջութեան
“ ձերոյ և անվտանգ ուղեւորութեանդ ի Թէոդոսիա, և մո-
“ ռացութեանդ ցաւոց և վշտաց կրելոցդ ի Փարիզ, տեսա-
“ նելով այդր զբազմութիւն աշակերտաց Խալիպեան Աւետա-
“ նարանին . . .

“ Հարկ ինչ լցէ և ինձ արդ՝ երկրորդել ձեզ վերատին
“ զպատճառ քանդման Հայկազեան վարժարանին, և խու-
“ փանման վերականգնելոյ նորին . . . հանդերձ զլացմամբ
“ օժանդակութեանն որ յաղգայնոցս ասի . . . հատուցա-
“ նելով իմ զայն արդէն ի նախընթացն իմ առ ձեզ ի Փա-
“ րիզ . . .

“ Եւ եղեւ արդեաք դարման ցաւոց սրտի՝ խօսելով զճշմար-

“ տութիւն։ . . . Ոչ ապաքէն առաւելով առաւելեան ցաւք
“ արտին հանդերձ վիրօք անհնարին։ Ապա դադարեցէք աղա-
“ չեմ ի թելադիր բանից և ի հնարիմաց պատճառաց . . .
“ վերականգնելոյ Փարիզեան վարժարանին և դառնալոյ ձեզ
“ վերատին, զլրումն խոսումն Տփխիսեցի եղբարցս դնելով
“ պայման։ . . .

“ Ահա ամիսս տասն է զի պանդխտիմ ես սատ ի Տփխիս
“ ամենայն ներդութեամբ, հայեցեալ ի հասակն իմ և ի հանգա-
“ մանս գործոյս։

“ Զառաջինն թէպէտ շարժեալ ազգայնոցս ի կարեկցու-
“ թիւն, օժանդակեցին մեզ 2,660 մանէթ, 10,000 ֆրանք,
“ զոր և առաքեցի ձեզ ի Փարիզ. բայց յորժամ լուան թէ
“ որոշեալ էք դուք թողուլ զՓարիզ գնալ ի Թէոդոսիա, ոչ
“ միայն կծկեցին զձեռս իւրեանց յօժանդակելոյ, այլ և
“ ստորագրութեամբ խոստացողքն անգամ զլացան հաստա-
“ տանել զխոստացեալ նուէրսն, որ հասանէր 93,000 մանէթ,
“ ասելով թէ Գաբրիէլ վարդապետի անկանի լնուլ զպէտս
“ ձեր, կոչելով զձեզ առ իւր ի Թէոդոսիա, և ունելով տա-
“ բեկան եկամուտ 25,000 մանէթ։ Թողից ասել զերկուց
“ ճոխագոյն արանց սատ, որք չկամեցան խոստանալ և տալ
“ ինչ, ասելով թէ տուեալ էին արդէն 1,000 մանէթ Գաբ-
“ րիէլի վարդապետի Այվազեան նոցին դիտաւորութեամբ։
“ Ահա պատուղ է այս որոշման ձերոյ, չասացից առաւել ինչ,
“ զի դժուարիք լսել զձայն ճշմարտութեան։ . . .

“ Ի մեկնիլ իմ սատի չունիմ ի ձեռին արծաթ ի կարեւոր
“ ծախս ճանապարհիս, վասն այսորիկ կարօտացայ ես գար-
“ ձեալ շնորհաց բարեացապարտ առն, Պարոն Թովմանոս
“ Նատիրեանի, կարեկից բարեկամի մերոյ և ճշմարիտ ազգա-
“ սիրի, որ ոչ միայն արգահատեալ հոգաց զծախուց ճա-
“ նապարհիս, այլ և յօժարութեամբ յանձն էառ ուղեկից
“ լինել ինձ մինչեւ ի Փարիզ, թէպէտ և երկնչի նա ի ծովէ,
“ սակայն յանձն է առ զայն վասն իմ։

“ Ոչ պակաս եղեն ինձ շնորհքն որ ի Արրազան Սարգիս
“ Արքեպիսկոպոսէ Զարալեան, հիւրընկալելով զիս զամիս

„ տան ամենայն յանձանձանօք, և շրջեցուցանելով տա և
„ անդ, ի Սանահին և ի Հաղբատ ծախիւք իւրովք և աշ-
„ խատութեամբ ճանապարհի, թէպէտ և երկոքին տոքա,
„ յանդուգն իմն դատողութեամբ, թշնամիք համարեցան
„ այսր։

„ Վաղիւ հանդերձեալ եմ ելանել ի ճանապարհ ի գնալ
„ ի Փոթի և անտի ի Պօլիս, ուր կացեալ աւուրս ինչ դարձայց
„ ի Փարիզ, եթէ Տէր յաջողեացէ։

„ Զերկրորդ հատոր պատմութեան Մուրատեան վարժա-
„ բանին տաց ի լոյս ըստ ժամանակին, հանդերձ նորանոր
„ յաւելուածովք, թէպէտ և ոչ ի մխիթարութիւն սրտիս, զի
„ զսիրելեացս լիցի անդ անաչառ քննութիւն։ . . .

„ Փոխադարձ ողջոյն մատուցեալ ողջունողացս այդր,

„ Մնամ Սիրելութեանդ

„ Ի Տփխիս. 21 մայիս. 1860.

„ Հոգեհարազատ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ.“

ԳԼՈՒԽ ԻԳ.

Ամբոխութիւն Սարգսի վարդապետի ի Սանահին և ի Հաղբատ. — Եկաւորութիւն տեղեացն այլոցիկ և վիճակ վանացն. — Վերատին և զոր շանք օժանդակութեան վարդապետացն ի Փարիզ. — Ամուսնք օժանդակողաց և զլացող յազգայնոցն ասեն. — Գիտելիք. — Եղ Սարգսի վարդապետի ի Տփխիս. — Ճանապարհորդութիւն նորա ի Վրաստան. — Հանդիպելն նորա ի Տրապիզոն. — Ամբոխութիւն նորա Ամասիոյ տեղւոյն, և բնդունելութիւն ասեն. — Ժամանելն Սարգսի վարդապետի ի Պոլիս. — Ամբոխութիւն նորա Պատրիարքին, և ազգայնոցն ասեն. — Գործառնութիւն Սարգսի վարդապետի ընդ Մկրտիչ Մոմճեանի. — Մեկնիլն Սարգսի վարդապետի ի Պոլսոյ. — Ժամանելն նորա ի Մարսիլիա և ասեն ի Փարիզ.

Թէպէտ և փառաբի Սարգիս վարդապետ շրջիլ զեղբարբք որք Արարատեան և ի Սիւնեաց գաւառս, սակայն կարեւոր դրաղումն նորա որ ի Տփխիս խաւսան լինի այնմ. միայն առաւրբք ինչ յառաջ քան զմեկնիլ նոր ի Տփխիսոյ գնայ նա այց առնել երկու հռչակաւոր վանաց և հոյակապ եկեղեցեացն որ ի Սանահին և ի Հաղբատ գիւղս. և այս գործեալ շնորհ յապնջակատնութենէ Ս. Սարգիս Արքեպիսկոպոսի Զալալեան, որ անձամբ և ծախիւք իւրովք տարեալ շրջեցուցանէ զնա ի տեղիսն յայնոսիկ։

Թէպէտ և քարուտ, խիստ և տարժանելի է ճանապարհն որ տանի անդ, սակայն արժանի են տեսութեան տեղիքն այնք. զի մեծագործութիւն և բարեպաշտութիւն ազգիս Հայոց անդաւնօր տեսանին, հանդերձ քաղցր յիշատակաւ

և դառն արտասուօք, տեսանելով անդ զհոյակապ յիշատակս, զհրաշակերտ տաճարս, և զմահարձանօք զերեզմանս բարեպաշտ թագաւորաց և թագուհեաց Բագրատունեաց, և առաւուածատէր իշխանաց և քաջ զօրավարաց Արշակունեաց, և զՀրիմս խնամտուն վարդապետաց, լնուն քաղցր յիշատակօք. և տեսանելով զաղաւաղեալ և զխրթնացեալ եկեղեցիս, և զամայացեալ և զքանդեալ վանս միաբանից անտի՝ ցնդին ի դառն արտասուս ։ . . .

Այսպիսի կրկնակի կրիւք անցուցանէ Սարգիս վարդապետ անդ ի Սանահին աւուրս քան հանդերձ բազում հիւրընկալութեամբ, ընծայիւք դառանց, սերից և կոգեաց, որք ի բարեպաշտ ժողովրդոց անտի, և որք ի պատիւ երեսաց Առաջնորդի իւրեանց Սարգսի Արքեպիսկոպոսի Զարպհան, յորոց մի և առաջին լինի բարեպաշտ Տիկին Գալէ անուն ի տոհմէն Արզութեանց, որ ըստ օրինակի Աննայի դստեր Փանուէլի, ոչ պակասի յաղօթից որ ի տաճարին աւուրբ Աստուածածնի, և որ արժանի է ասա յիշատակի ։

Արժանի է և կարեւոր իսկ յիշատակել ասա և զայս ինչ. Ի գնալ Սարգսի վարդապետի ի Սանահին և ի դառնալ նորա անտի անցանէ ընդ գիւղ Շուլաւէր անուն, որ ի ճանապարհի յայն, ուր օթևանի զաւուրս երկուս. ի մէջ գիւղին այնորիկ անցանէ գետ մի փոքրիկ, և յերկուց կողմանց նորին երեք հարիւր տուն քնակութեան ազգիս Հայոց, հանդերձ այգեստանեօք և պարտիզօք ազգի ազգի պտղոց. ի գեղ անդ ծնանի բարեկամն իւր բարեպաշտ և ազգատէր Պարոն Թոմանոս Նստրեան, և անդ հաստատէ նա ապա դպրոց մի հարիւր մանկանց յատուկ ծախիւք իւրովք։ Քնակիչք նորին անծանօթ էին յառաջ հայերէն դպրութեան, այժմ ծանօթ են այնմ ըստ բաւականին և ըստ մեծի մասին, մանկունք և երիտասարդք նոցին։ Տեսեալ զայն Սարգսի վարդապետի ուրախ լինի յոյժ և օրհնէ զբարերարն։

Դարձ արարեալ Սարգսի վարդապետի ի Սանահինէ ի Տփխիս, հանդերձի եկանել ի հանապարհ դառնալ ի Փարիզ, ընդ Պարոն Թոմանոս Նստրեանի և ծախիւք նորին . . . և

յառաջ քան զմեկնիլ իւր անտի, կամի վերատին փորձել զժլատութիւնսմանց, որք առարկրութեամբ խոստացեալ էին օժանդակել վարդապետացն ի Փարիզ և զլանան հատուցանել զայն. զրէ ի տետրի յայն հանգանակութեան այսպէս. «Խնդրեմ զի գրով ասիցէ թէ չկարեմ կամ չկամիմ հա-«տուցանել զխոստացեալս նուէրն.» և ես գրով ասացից, թէ «Ընդհակառակ եմ հատուցանողին, իսկ չհատուցանողին «կրկին ընդհակառակ եմ, վասն զի զիս ի վերջին պարտուցս.»

Եւ ապա վերատին յանդիմանն առնել զտետրն հանգանակութեան զլացողացն այնոցիկ, և իբրեւ գտանէ նոքա, առանց գրով ասելոյ զպատճառն, յայնժամ խնդրէ նա ի Սարգիս եպիսկոպոսէն յԱռաքելոյն նոցին, գրով իւրով նշանակել ի տետրակի յայն հանգանակութեան զանուանս հատուցանողացն և զլացողացն, ի հաստատութիւն յիշատակի սոցա. և են սոքա.

Ա. յն. Պօղոս մեհտեսի Զիլոֆեանեան Ազամալեանց նուիրեցի մէկ հազար մանէթ	1000
Ա. յն. Ռամանոս Նատրիեանց ընծայեցի հազար մանէթ արծաթ	1000
Ա. յն. Բաբսեղ Ղազարեան Արտաղեանց ընծայեցի հարիւր մանէթ	100
Ա. յն. Ալէքսէր Տէր Ղուկասեան ընծայեցի հինգ հարիւր մանէթ	500
Հատուցեալ .	2,600

Մ. Տոհմաւոր քաղաքացի Վարդան Արշակունի ընծայեցի հինգ հարիւր մանէթ	500
Մ. Տոհմաւոր քաղաքացի Նիկողայի Մէրիմանեանց ընծայեցի հինգ հարիւր մանէթ . . .	500
Մ. Ալեքսանդր Ղազարեան Թահիրեանց ընծայեցի չորս հարիւր մանէթ	400

Ամ. Քաղաքացի Թումաս Դրիանեանց ընծայեցի չորս հարիւր մանէթ 400
Ամ. Յովսէփ Յովհաննէսեան Էֆէնդեանց ընծայեցի երեք հարիւր մանէթ 300
Ամ. Քաղաքացի Գաբրիէլ Յովհաննէսեան Մէլքումեանց երկու հարիւր յիսուն մանէթ . . 350

Զլացեալ . 2,350

Ահա այս են անուանք Տփխխեցի Եղբարցս որք խոստման սորագրութեամբ ի տեսրակի հանգանակութեան օժանդակել կամեալ նուիրաք վարդապետացն ի Փարիզ, և այնչափ են նուէրքն զոր հաստատեն ունակ ի նոցանէ, յորոց վերոյ նշանակեալ են Ամ՛, և զոր ոչ հաստատեն ունակ ի նոցանէ, յորոց վերոյ նշանակեալ Ամ՛, ձեռամբ և վկայութեամբ Սարգսի եպիսկոպոսի Զալալեան Առաջնորդի նոցա . . .

Կարեւոր համարիմք յիշատակել աստ և զայս, թէ ի մէջ երից նուիրատուացն, երկուքն չէին Տփխխեցի. զի մին Ագուլեցի էր, և միւսն Շուլաւերցի, որք նուիրեցին 2,000 մանէթ. ապա մնան Տփխխեցւոց նուէրքն 600 մանէթ միայն։

Թողումք յիշատակել աստ և զայլ առանձին նուէրսն և զշնորհն Պարոն Նատիրեանի որք բազում յոյժ առաւելութեամբ լինին, և զոր յիշատակեացուք ապա շնորհապարտ մնաք։

Ի սոսն յունիսի 1860 ամի ահա հասանէ օր մեկնելոյ Սարգսի վարդապետի ի Տփխիսոյ, յետ կալոյ նորա անդ զամիսս սասն, և հիւրընկալելոյ ի Սարգիս եպիսկոպոսէ Զալալեան Առաջնորդէ տեղւոյն, և յանձանձելոյ ի Պարոն Ռոմանոս Նատիրեանէ, որ և յանձն առնու զհոգս ճանապարհի նորա, տարեալ հասուցանել զնա մինչեւ ի Փարիզ ծախուք իւրովք, և ընդ որ ճանապարհ հաճէր նա։ Ահա ճշմարիտ ազգասիրութիւն և կարեկից բարեկամութիւն բարեացապարտ առն մեծի։

Զաւուրս եօթն ճանապարհորդեալ նոցա ի միասին ընդ ցա-

մաք Վրաստանի հասանեն ի Փոթի, և մեկնեալ անտի շոգենաւաւ անցանեն ի Տրապիզոն քաղաք, և օր մի կացեալ անդ ի վարձել զայլ շոգենաւ գնալոյ ի Պոլիս։ Այլ եկանեն անդ Աբրահամ վարդապետի Առաջնորդի տեղւոյն, որ ընդունի զնոսա քաղաքավարութեամբ և յուզարկէ մինչեւ ի շոգենաւն, հանդերձ քանի մի ազգայնովք տեղւոյն։

Ի 17 նորին ամսոյ մեկնեալ նոցա ի Տրապիզոնէ և զաւուրս չորս յաջողակ հողմով նաւարկեալ ժամանեն ի Պոլիս և գնացեալ իջեւանին ի պանդոկի ինչ ի Բերա։

Ի վաղիւ անդր գնան նոքա յայց յարգանաց Սրբազան Պատրիարքին Սարգիս եպիսկոպոսի, որ ընդունի զնոսա բազում քաղաքավարութեամբ, և հրաւիրէ զՍարգիս վարդապետ բնակել անդ առ իւր, բայց հրաժարի նա անտի, ասելով թէ կարեւոր գործառնութիւն իւր ի Փարիզ չնելէ նմա։ Ընծայէ նոցա Ս. Պատրիարք մի մի օրինակ ի տպագրեալ Սահմանադրութենէն, և ասէ բազում ակնկալութիւն բարեաց ազգին ունի ինքն այսր։ . . .

Գնան նոքա յայցելութիւն յարգութեան և նախկին Ս. Պատրիարքին Գէորգ եպիսկոպոսի, որ ուրախութեամբ ընդունի զնոսա և ցանկայ վերատին տեսանել զՍարգիս վարդապետ։

Գնայ Սարգիս վարդապետ առանձին տեսանել զԳէորգ Պէյ Երամեան և զՏիկին նորա զբարերար իւր, որք ընդունին ուրախութեամբ, և փարեալքն կրկին և կրկին տեսութեան։

Հանդիպի նոցա յանկարծ Պօղոս Պէյ Տաւեան զճանապարհայն ի փողոցի Բերա, և հրաւիրէ զնոսա ի տուն իւր, ուր անցուցանեն զգիշեր մի, և ի վաղիւ անդ եկեալ անտի գնան խիստին յայցելութիւն Գէորգ Պէյի Երամեան, ընդ որում տեսանեն և խօսին երկար զգանազան իրաց ազգային. և եկեալ անտի գնան այց առնել Կարապետ Ամիրայի Պալեան, որ ընդունի զնոսա քաղաքավարութեամբ, և խօսի ընդ նոսա զազգային յառաջադիմութենէ, և զժառանգաւորաց գպրոցին իւրոյ, վասն որոյ և կամի զի Սարգիս վարդապետ ի գործն յայն աշխատիցի։

Հանդիպի նոցա և Պարոն Տիգրան Խասուֆեան որ հրաւիրէ

գնուստ ի տուն իւր ճաշել և անցուցանել անդ գիշեր մի։ Ընդունին նոքա զայն վասն ազգասիրութեան նորա։

Թէպէտ և կամի Սարգիս վարդապետ այց առնել ամենայն բարեկամաց և ծանօթից իւրոց անդ, այլ չներէ նմա ժամանակն. քանզի բարեկամ իւր և բարերարն Պարոն Ռոմանոս Նատիրեան փութայ ժամ մի յառաջ ի Մարսիլիա հասանել ուր յղեալ էր յառաջագոյն զվաճառ իւր։

Վասն այնորիկ ոչ ժամանէ այց առնել Ս. Յակոբոս նախկին Պատրիարքի, և Պօղոս Աղայի Նոյինեան, թէ և խառանայ որդւոյ նորա Գրիգոր Էֆէնտիի, որում հանդիպի զճանապարհայն ի Ներայ, և ոչ Պարոն Մկրտչի Մոմճեան ի տան նորա, այլ միայն ի սենեկի որ ի Նոր Խան, և այն եւս վասն կարեւոր գործոյ իւրոյ. զի յանձնեալ էր նմա իրրեւ առանց զոգեպահ արծաթ իւր զ100,000 դահեկանն, հանդերձ պայմանաւ, այսինքն յորժամ ինչանէր 1 ֆրանքն ի 5 դահեկան, յայնժամ պարտ էր նմա փոխել զդահեկանն յոսկեդրամս Գաղղիոյ, Նարոլէոն, և դարձուցանել առ նա ի դարձի իւրում յԷջմիածնէ, որպէս և վերագոյն յիշատակեցաք. և զի հաւատայր թէ արարեալ էր նորա զայն անշուշտ, դարձ առնէ ի Փարիզ ընդ Պօլիս, և ոչ ընդ Պետերբուրգ, ընդ որ դիւրին և օգտակար էր նմա։ . . .

Սակայն ըստ բաղդի նորա պակասի Պ. Մ. Մոմճեան ի պարտս իւր որբագան, պատճառելով զանյաջողութիւն գործառնութեան իւրոյ անդ ընդ այլազգիան։ . . .

Տաղնապի յայնժամ Սարգիս վարդապետ և չգիտէ թէ զինչ պարտ էր առնել. պահանջէ զարծաթ իւր ի նմանէ խառութեամբ, զոր ոչ կամի, զմտաւ ածեալ զմտերիմ բարեկամութիւնն որ ընդ նմա մինչեւ ցայնժամ, և զյիշատակ ազգասիրութեան նորա երբեմն։ . . . Ապա խնդրէ ի նմանէ զշահ արծաթոյն, որ լինի 12,000 դահեկան, և որ առնի յայնժամ 2,400 ֆրանք։ Թէպէտ և խառանայ նա զայն զառաջինն, բայց ապա 1,000 ֆրանք և եթ հատուցանէ, խոստանալով յղել նմա ի Փարիզ և այլ 1,000 ֆրանք զկնի ամսոյ մի։

Դարձեալ հաւատայ Սարգիս վարդապետ բանից խոստման Պ. Մ. Մոմճեանի, և դարձեալ ակնածէ բարեկամութեան նորա. և այնպէս ընդունայն լինի ընդ Պոլիս ճանապարհորդութիւն իւր, չգտանելով զաւանդեալ արծաթն. վասն որոյ և ցաւօք սրտի ելանէ նա ի Պոլսոյ։

Ահա հաստուցումն երկամեայ պանդխտութեան և վշտալի ճանապարհորդութեան Սարգսի վարդապետի, հրաւիրելոյ ի Գերագոյն ժողովոյ վասն երկու և եթ միայն ամիս ժամանակի, և այն, առ ի բարեկարգել զիրս Հայկազեան վարժարանին, և ի վայելել զտեսութիւն նորին։ Թող զցաւս սրտի նորա որ ընդ գանգատ ոմանց յաղգայնոցս անտի. քանզի լսէ նա անդ, թէ գանգատին ոմանք զմատակարարութենէ Հայկազեան վարժարանին ի Փարիզ, ասելով թէ զամս երկուս ծախեալ լցեն յայն 200,000 ֆրանք, և ապա փակի այն հանդերձ 60,000 ֆրանք պարտեօք ի տուգանս ազգին։... Զ60,000 ֆրանքն որք զլացեալ թոշակք էին մանկանց վարժարանին տուգանս համարին ազգին։... Եւ ահա վարձք չորեքամեայ վաստակաւորաց վարժարանին առհասարակ։...

Այսպիսի ցաւօք սրտի մեկնի Սարգիս վարդապետ ի Պոլսոյ ի 27 յունիսի, և ելեալ ի շոգենաւ ընդ Պ. Ռ. Նատիրեանի, և զաւուրս 6 նաւարկեալ հասանեն ի Մարսիլիայ յ3 յուլիսի, և ի 4 նորին ամսոյ ելեալ ի կառս երկաթուղւոյ և ժամս 9 հանապարհորդեալ հասանեն ի Լիոն քաղաք Գաղղիոյ։ Անդ կամի Պ. Նատիրեան կալ աւուրս քանի մի վասն գործառնութեան իւրոյ. Սարգիս վարդապետ ի չյաւելուլ ըզծախս բարերարին իւրոյ՝ չկամի կալ անդ ընդ նմա, այլ գնայ ուղղակի ի Փարիզ, ուր հասանէ ընդ երեկս ի 5 նորին ամսոյ, ի գտանել նախ զՄիքրոխոս վարդապետ որ բնակի ի տան Տիկնոջ Գարամաղեան, և ապա ի խնդիր լինել տեղւոյ բնակութեան իւրոյ ընդ նմա, և կամ առանձին։

ԳԼՈՒԽ ԻԵ.

Տեսութիւն Սարգսի վարդապետի քնի Ամիրոսեայ վարդապետի. — Իշխեմն Սարգսի վարդապետի ի տան Տիկնոջ Գաբրիելազի. — Ընդունելութիւն Սարգսի վարդապետի յԱմիրոսեայ վարդապետէ. — Գնացք և. բանք նորա քնի Սարգսի վարդապետի. — Կարծիք և. առաջարկութիւն Ամիրոսեայ վարդապետի առ Սարգիս վարդապետ վասն բնակութեան նոցա ի միասին ի Փարիզ. — Սեղանական խնջք Սարգսի վարդապետի և. կրտսեր նոցին. — Պատմութիւն Ամիրոսեայ վարդապետի և. բնութիւն նորա հանդերձ նշանակութեամբ. — Ամպատկառութիւն Ամիրոսեայ վարդապետի և. բնութիւն նորա. — Ներդամնութիւն Սարգսի վարդապետի և. կրտսեր քնոջ նորա.

Տեսեալ Ամիրոսեայ վարդապետի զՍարգիս վարդապետ՝ վեր ի վերոյ բանիւք խնդայ ընդ դարձ նորա ի Փարիզ, բայց արդեամբք տրամի, քանզի ոչ միայն չունէր նա եւս ինքնանէ ինչ ակնկալութիւն, այլ և համարէր զնա իւր իրրեւ ծանրութիւն, պահանջելով զհամար յղեալ արծաթոյն, և հարցանելով զսեպհական ընչից իւրոց յանձնելոց նմա, և կրտսերոց նոցա առ անհոգութեան նորա։ Եւ հաստատութիւն այսմ

հշմարտութեան, ահա տեսանի այն ի սմին հետզհետէ և ընդ հուպ. քանզի ինքին իսկ երեկոյին յոր հասանէ Սարգիս վարդապետ ի Փարիզ, պատմէ նմա Ամբրոսիոս վարդապետ զկարօտութիւն արծաթոյ և զմիշտ իւր զոր կրեալ էր երբեմն ի Հայկաղեան վարժարանն, և զի ի վաղիւ անդր ընդ առաւօտն առանց հարցանելոյ ցնա ինչ, ցուցանէ նա ինքնին Սարգսի վարդապետի զհաշիւ ծախուց իւրոց, որ ոչ միայն ի յղեալ արծաթոյ անտի, ի 10,000 Ֆրանքաց չէր մնացեալ ինչ, այլ և տակաւին ի ներքոյ պարտուց կայր ինքն, և վարանէր ընդ այն յոյժ։ Թող զ2,500 Ֆրանքս, զոր փոխ առեալ էր ի Սարգիս վարդապետէ և դեռ չէր հատուցեալ նմա. և թող զ2,500 Ֆրանքս, զոր կապարեալ տուաւ Սարգսի վարդապետի, զոր ունէր դրամեալ ի Պարոն Աբրամայ, և զորոյ մուրհակ պարտուց յանձնեալ էր Ամբրոսեայ վարդապետի, որպէս լինի ընդ ամենայն ի ձեռս նորա 15,000 Ֆրանք. և նա զայնչափ դրամաց արծաթոյ ծախեալ էր ի տպագրութիւն ի փորագրութիւն նորանոր տառից և ի ձուլումն նոցին, և ի տպագրութիւն մատենից իւրոց և եղբօր իւրոյ Խորենայ, և ի պատկերս նոցին։ Միայն ի տպագրութիւն Տէրմանքայ, որ յաշխարհիկ բարբառ, ծախեալ էր 12,000 Ֆրանք և առաւել, ըստ բանից իւրոց։ Թէպէտ և Տիկին Գարավաղեան հատուցանէ ի ծախս նորին 5,000 Ֆրանք եւեթ, տակայն ծախիւք նորա հրատարակէ զմատեանն և նմա ընծայէ զայն, առանց յիշատակելոյ ինչ զօժանդակութիւնն որ ի բարերարաց, ի Նատիրեանէ և ի Զիլոֆիանեանէ, յորոց գտեալ էր 10,000 Ֆրանք, Ջանիւք և ձեռամբ Սարգսի վարդապետի։ . . .

Ահա տպաշնորհ միանգամայն և անպատկառ բնաւորութիւն նորա յայտնապէս տեսանի։ . . .

Իսկ նորանոր ձուլեալ տառքն և կաղապարք նոցին ոչ գոն ի միջի, զի յղին այնք ի Թէոդոսիա առ Գաբրիէլ վարդապետ, վաճառեալ նմա զայն ասէ։ . . .

Ասէ ցնա Սարգիս վարդապետ. Ապա որպէս կարիցեն ինքեանք կալ ի Փարիզ՝ մինչև աւարտեսցին տպագրութիւնք մատենից իւրեանց, երկրորդ հատոր պատմութեան Մովսէսի վար-

ժարանին, և Հայ և Գազդ. բառարանին, զորոյ կէս ծախս տպագրութեան 5,000 ֆրանք ինքն էր հայթայթեալ ի Կոմս խաչատուր Լազարէֆէ, և խոստացեալ նմա տալ զայն վերթով։

Աստ ցնա Ամբրոսիոս վարդապետ, թէ պիտոյ էր ի վարձու կալնուլ բնակութիւն մի վասն երկոցունց, որով դիւրադնի լինի նոցա այն, իրրեւ 700 ֆրանք իւրաքանչիւր բաժին ի տարւոջն. իսկ զկերակրոյ և զգեստուց իւրաքանչիւր զք հոգայցէ առանձինն, ուր և կամիցի ճաշել, և զինչ հաճիցի զգենուլ։ Եւ ոյսպէս հաշիւ տրարեալ՝ հաստատանէ զարտեկան ծախսն Սարգսի վարդապետի մինչեւ 93,000 ֆրանք, իսկ զիւրն մինչեւ 94,000 ֆրանք. և ի ժամուն չունի ինքն, ասէ, այնչափ արծաթ ի ձեռին։ Թէպէտ և Գաբրիէլ վարդապետ խոստացեալ էր նմա տալ ի տարւոջ 8,000 ֆրանք, ի վարձ գրքուոր աշխատութեան իւրոյ, սակայն մինչեւ ցարդ, ասէ, ոչ կատարեաց զխոստումն իւր զայն, և ինքն չգիտէ թէ որովք կարիցէ կալ ի Փարիզ առանձին և ուտարել զտպագրութիւն մատենից իւրոց։

Իսկ վասն տպագրութեան երկրորդ հատոր պատմութեան Մուրատեան վարժարանին, ասէ, պարտ է քեզ պահանջել ի Գ. Աբամէն զկարգադրութեան տառիցդ, ձուլել տալ տառս վերտին, զոր թէպէտ պահանջեալ էր իւր ի նմանէ, ասէ, այլ զլացեալ է նա դարձուցանել զայն, և ինքն, ասէ, չէ կամեցեալ հակառակել ընդ անիրաւին, թողով զայն գալրտեան նորա ի Փարիզ և հոգալոյ զայնմանէ։ Ահա որք յիսկի ձեզ գիտելիք և ծանուցանելիք ասէ։

Յայս ամենայն բանից Ամբրոսիոյ վարդապետի քաջիկ խելամուտ լինի Սարգիս վարդապետ սեպհական բարուց նորա, այլ յոյժ անուգան և անդարման. պարտ էր լռել և թողուլ Աստուծոյ այցելութեան։ . . .

Հարցանէ ցնա ապա Սարգիս վարդապետ զսեպհական ընչից իւրոց յանձնելոց ի ձեռս նորա և ի ձեռս եղբօր նորա, Խորենայ, երկու ամաք յառաջ, յորժամ ըստ Թախանձանաց նոցա գնայ ի Պօլիս։

Ասէ ցնա Ամբրոսիոս վարդապետ, թէ զամենայն ինչ նորա յանձնեալ էր ինքն Պ. Մ. Մանանեանին, միայն քանի մի ինչ, ասէ, ի զգեստուց նորա անդ ի տան Տիկնոջ Գաբրիելի պահեալ կայ, և ի մատենից նորա խառնեալ են ընդ իւրսն, զոր պարտիսդ որոշեալ տայցէ նմա զայն տպա։

Ի գնացից Ամբրոսեայ վարդապետի, և յեղանակէ բանից նորա գուշակէ Սարգիս վարդապետ և զելից իրաց իւրոց, և ոչ սխալի ըստ բազդին իւրոյ։ . . .

Քանզի գնայ նա ի վաղիւ անդր առ Պարոն Միքայէլ Մանանեան, և յետ ողջունելոյ զմիմեանս հարցանէ զիրաց իւրոց յանձնելոց նմա։ Ասէ նա թէ յետ աւուրց և եօթնեկաց փակելոյ Հայկազեան վարժարանին՝ ածեն ի տան իւրում զդրասեղան մի խորտակեալ, բաց և դատարկ և առանց բանալեաց, և զսակաւ մի խռկեալ թղթովք, և զզգեստս մատրան, և զպատկեր նորին, որ առ բարձրութեան չկարէ պարունակիլ ի սենեկի անդ, վասն որոյ յետս դարձուցանէ զայն, և քանի մի հնոտի և պատառատուն զգեստք . . . զորս և ցուցանէ նմա մի առ մի, և մեղադրէ զնա ընդ վատահութիւն նորա որ ի նոսա։ . . .

Անդ էր տեսանել զխռովութիւն մտաց և զցաւս սրտի Սարգսի վարդապետի, ոչ ընդ ապականութիւն և կորուստ ընչից իւրոց, այլ ընդ անզգայութիւն և ապերախտութիւն կարծեցեալ սիրելեաց իւրոց, և մանաւանդ յորժամ լսէ միոյ միոյ ի նոցանէ զպատճառսն յարդարացուցանել զինքեանս, և ի մեղադրել զնա անիրաւութեամբն անամօթութեամբ։ Քանզի իրրեւ հարցանէ նա զԱմբրոսիոս վարդապետ թէ ո՞ւր իցեն ինչք իւր պահեալք ի խորշն դրասեղանոյ իւրոյ ընդ կրկին փականաւք, պատասխանէ նա թէ որովհետեւ զբանալի նորին եղբօր իւրում Խորենայ յանձնեալ զոլով, ինքն չկարէր խառնիլ յայն, զգուշանալ այնց։ Եւ իրրեւ յիշեցուցանէ նմա Սարգիս վարդապետ զցուցանել նոցա երկոցուն զինչս իւր որք անդ մի առ մի, և զյանձնել նոցա երկոցուն ըզգուշանալ յոյժ այնոցիկ, յայնժամ ասէ նա, թէ ինքն ի ժամանակի յայն փակելոյ վարժարանին ոչ լինի ի Փարիզ, այլ

ի Պոլիս, ըստ հրամանի կոչման Պատրիարքին, առ ի տալ զհաշիւ վարժարանին։ Սակայն չէր այն ճշմարիտ, քանզի հրաման փակելոյ վարժարանին և կոչելոյ զինքն ի Պոլիս միանգամայն լինին, և զի քան աւուրբք յառաջ քան զփակել վարժարանին՝ ազգ առնի նմա և եղբօր նորա ի Խնապանէն Տաճկաց հանել ի վարժարանէն զամենայն սեպհական ինչս իւրեանց, որպէս և հանեն նոքա, և տարեալ զետեղեն զայն ուր և կամին, և որպէս հաստատեն զայս բանք թղթոց իւրեանց և վկայութիւն այսոց, և գործք իսկ իւրեանց, որովք յանդիմանէ զնա Սարգիս վարդապետ բերանով, և զեղբայր նորա գրով ապա։ . . .

Իբրեւ յանդիմանի այս ստութիւն նորա, այլ ինն ստութեամբ ջանայ նա զինքն արդարացուցանել. քանզի ասէ՝ թէ ամսով միով յառաջ քան զփակիլ վարժարանին, չկարէր ինքն կալ ի նմին, այլ ասա և անդ շրջէր ի ծածուկ յերեսաց պարտատերաց, որք սպառնան նմա բանս։ Եւ իբրեւ այս ստութիւն նորա եւս արդեամբք գործոյն յանդիմանի, որ և ցուցցի ապա, ասէ նա յայնժամ անզգայութեամբ, առանց կարեկից ինչ լինելոյ բնաւ ընդ այն վնաս նորա։

Տեսեալ Սարգսի վարդապետի զայն գնացս նորա՝ առաւել ընդ այն ցաւի քան ընդ կորուստ ընչից իւրոց, և կամի ի խնդիր լինել տեղւոյ բնակութեան իւրոյ առանձին։

Խնացեալ Տիկնոջ Գարամանի զայն կամս նորա, թէպէտ և առ քարտուղարութեան և առ ակնածութեան արդեօք՝ հրաւիրէ զնա ի տան իւրում բնակել, այլ նա հրաժարի անտի՝ ասելով թէ չկամի ինքն նեղութիւն տալ բնտանեաց նորա, որոց հարկաւ բաւական էր բնակութիւնն այն։

Գնայ Սարգիս վարդապետ ծանուցանել զայն կամս իւր միայնակ բարեկամին իւրոյ ի Փարիզ, Պարոն Միքայէլի Մանանեան, և խնդրել ի նմանէ գտանել տեղի ինչ բնակութեան իւրոյ։

Ասէ ցնա Պարոն Մանանեան։ “Եւ արդէն հրաւիրեցի “զքեզ բնակել առ ընդ իս. ահա քեզ փոքրիկ սենեակ “մի և զահկին մի մեծ, ընդ որ հաճեսջիր բնակեսջիր։”

Թէպէտ և Սարգիս վարդապետ չկամի ծանրանալ բարեկամին իւրում, սակայն հայեցեալ ի ներկայ հանգամանս իւր՝ ընդունի զհրաւէր նորա ակամայ և շնորհապարտ մնաց, այլ և խորհրդով շնորհաւոյց լինել նմա ապա յորժամ գտանէր զարծաթ իւր որ առ այր . . .

Ինացեալ Ամիրռանայ վարդապետի զընդունելութիւն Սարգսի վարդապետի ի տուն Պարոն Մանանեանի՝ ուրախ լինի, զի զերծանի ինքն ի հոգոյ անտի, և զի իւր ձեայ տեղի ի տան Տիկնոջ Գարամադի . . . նոյնպէս և Տիկինն, հանդերձ քաղաքավար բանիւք . . .

Ի վերջնում երեկոյին, յորում ի վաղիւ անդր ունի Սարգիս վարդապետ գնալ բնակել ի տանն Պարոն Մանանեանի, ի խօսակցել նորա առանձին ընդ տիկնոջ Գարամադեանի, ասէ. « Առաւել ցաւալին այն է, զի յետ այնչափ վշտաց և « կրպտանաց, տակաւին եւս բամբասիմք յոմանց . զի զամս « երկու, ասեն, երկու հարիւր հազար ֆրանք ծախեն վար- « դապետք ի վարժարանին, և ապա վաղեն զայն 60,000 ֆր- « բանք պարտիւք ի տուգանս ազգին . . . զդրացեալ թո- « շակս մանկանց վարժարանին, տուգանս համարին ազ- « գին . »

Զայս բանս չգիտէ Սարգիս վարդապետ թէ ե՞րբ ի նմին երեկոյի և զիարդ պատմէ Տիկինն այն յանկնջս Ամիրռանայ վարդապետի, և թէ նա ընդէ՞ր զայրանայ ընդ այս խօսելոյն իւր . . . ի վաղիւ անդր տեսանէ նա զԱմիրռանս վարդապետս խաժուռ դիմօք . ի հարցանել ցնա ինչ, դժուարութեամբ խմն առնէ պատասխանի . չկարէ նա իմանալ զպատճառն մինչեւ ցժամ մեկնելոյ իւր անտի դնալ բնակել ի տան Պ. Մ. Մանանեանի . Ցայնժամ Ամիրռանս վարդապետ, յանդիման Տիկնոջ Գարամադի, իրրեւ վկայի համարձակութեան իւրոյ, ասէ ցՍարգիս վարդապետ . « Հայր, եթէ կամիս զոր հաւա- « տալ զանդատանաց ոմանց յազգայնոցս Պոլսոյ որք զմինչ « վասն ծախուց վարժարանին, բարեաւ լինի չտեսանել մեր « զմիմեանս աչուքեամբ . » Ահա հատատութիւն բնաւորութեան Ամիրռանայ վարդապետի Գալֆայեանն . . . և առաւել

եւս հաստատութիւն այսմ տեսցի արդ եւ յայլ բանից նորա, հանդերձ եւ այլ վկայիւ։

Զարմացեալ եւ ապշեալ Սարգսի վարդապետի ընդ անակնկալ կարծիս Ամբրոսեայ վարդապետի որ զվերոյիշեալ ցաւալից բանից իւրոց, եւ ընդ վերջին ապերախտութիւն նորա՝ ասէ. Եւ ոչ կարծէի բնաւ լսել ի քէն զայս, եւ զայս՝ յետ "այնչափ պաշտպանելոյս զքեզ, եւ յետ երկամեայ վշտաց եւ "տառապանաց կենացս վասն օգնելոյ քեզ ի կարօտու-"թեանդ։"

Յանդգնեալ եւ ժպրհեալ Ամբրոսեայ վարդապետի՝ ասէ. "Եւ ես ի պաշտպանել զքեզ ընդդէմ Գեր. Աբրային եղի "ի պաշտօնէս որ ի Մուրատեան վարժարանին, եւ զառայ "ի միաբանութենէն. եւ հաստատութիւն այսմ, ասէ, ահա "թուղթն Գեր. Եղուարդայ առ իս, յորում յորդորէր զիս "թողութիւն խնդրել յԱբրայէն վասն պաշտպանելոյս զքեզ, "եւ խոստանայր վերստին կարգել զիս ի պաշտօնն յայն, "եթէ առնէի զայն։ Իսկ զօգնելդ ինձ ի կարօտութեանս ոչ-"ինչ համարիմ ես, ասէ, զի նուէր էր այն Տիխիսեցի "յաղգայնոցս տուեալ մեզ՝ ինձ եւ եղբօր իմում, եւ ձեռամբ "քում յղեալ առ մեզ։"

Տեսեալ Սարգսի վարդապետի զյանդգնութիւն եւ զժպրհութիւն եւ զանդգամութիւն նորա ի ծայր հասեալ, յայնժամ յանդիմանէ եւ խայտառակէ զնա, յիշեցուցանելով նմա զանպատեհ գնացս նորա վասն այնորիկ այն ամենայն անցք որք անցին ընդ ինքն ի Մուրատեան վարժարանին եւ այլուր։ . . .

"Մոռացեա՞լ իցես զոր, ասէ, զպատճառ Գարեգինեան "Գեր. Աբրային ի Փարիզ, հանդերձ Հարրք Ռափայէլի եւ "եւ Պետրոսի։ Մ՞ի ապաքէն զմի ի նոցանէ ի տեղի քո կարգել "լսո ընտրութեանս իմում. եւ պատճառ այնմ՝ ո՞չ ապաքէն "անհաւատարմութիւն քո ի մատակարարութեան Մուրա-"տեան վարժարանին, զորոյ հաւատիքն ունէր նա ի ձեռին, "զձեռագիր հօրդ որ առ քեզ։ . . . . . .

. . . . . .

«Զթուղթ հօրդ ի ձեռս բերեալ էր ուրուն ի միաբանից
«որ ի Պօլիս և զպատճէն նորին առեալ և յղեալ էր առ
«Գեր. Աբրայն ի վանս, հանդերձ հաւատոյ տեղեկութեամբ
«որ զառատ ծախուց աղքատ տան հօրդ, ընդ որ գայթադ-
«ղեալ միաբանից անդ՝ գրեն առ Աբրայն ի վանս, հանել
«զքեզ ի պաշտօնէդ և դարձուցանել ի վանս։

«Թէպէտ և ես, ասէ, ոչ անկասկած էի ընդ անհաւա-
«տարմութիւնդ քո ի պաշտօնն յայն, սակայն առ ի պահել
«զպատիւ քո, միանգամայն և զհաղորդութիւն Մուրատեան
«վարժարանին, զոր վրդովեալ էիր դու, գրգռելով զաշա-
«կերտս նորին յապստամբութիւն և ի ցրուումն անտի, խնդրե-
«ցի ես ի Գեր. Աբրայէն համբերել և ամիս մինչ, մինչեւ
«ցաւարտումն ընթացից ուսման աշակերտաց վարժարանին
«և ելանելոյ նոցա անտի. այնուհետեւ հրաժարէաք մեք, ես
«և դու ի պաշտամանց մերոց անտի, թողլով զայն ի տնօրէ-
«նութիւն Գեր. Աբրային։ . . . Թէպէտ և նա զառաջինն
«զինչաւ խնդրոյ իմոյ, բայց ապա յամառեցաւ ի կամս իւր,
«ի գրգռելոյ և ի ստիպելոյ ոմանց, ի Հ. Ռափայելէ, և ի նուի-
«րակէ Պապին, վասն որոյ և այն ամենայն անցք որք անցին
«ընդ մեզ հետ զհետէ, և այնչափ գայթագղութիւն և վնաս
«ազգին եղէն։

«Մուացեալ իցես ես, ասէ, զմերժումդ յԱրքեպիսկո-
«պոսէն Փարիզու, և զվարել նորա զքեզ բռնի արտաքս
«ի սենեկէ իւրմէ իբրեւ զանհաւատարիմ ոք ի մատակարա-
«րութիւն վարժարանին, և զխրատ նորա տուեալ ինձ
«ի չպաշտպանել քեզ . . . և զվկայութիւն նորա թէ չունէր
«Աբրայն բնաւ զանգամս զինէն բաց ի պաշտպանելոյս քեզ։
«Թողից ասէ յիշել և զվկայութիւն բոլոր միաբանից որք
«վկայեն թէ ի զուր զոհ եղէ ես վասն քո։ . . . Ընդէ՞ր մո-
«ռացեալ իցես դու զայս ամենայն, միայն զգիր Գերա-
«պատիւ Եղուարդայ որ առ քեզ յիշես, և զոր չգիտեմ
«թէ երբ և յոր զինչ իցէ գրեալ, զի ոչ ցուցէր և ցուցա-
«նես դու ինձ զայն։»

Իբրև մերժէ Ամբրոսիոս վարդապետ զվերոյիշեալ հաւատոփան, ասելով թէ խորդախութեամբ չինեալ էր այն թուղթն ի նախանձորդաց իւրոց, ի միաբանիցն որք ի Պոլիս, յայնժամ Սարգիս վարդապետ և այլ հաւատեաք հաստատէ զայն, և յանդիմանէ զնա . . . . . .

. . . . . .

. . . . . .

Եւ իբրև չկարէ Ամբրոսիոս վարդապետն և զոյս հաւատոփս մերժել, յայնժամ պարծի նա անպատկառաբար. քանզի ասէ. «Պարծանս ինձ համարիմ ես զոչնելս ծնողաց իմոց «զիարդ և էր եղանակաւ։»

Ասէ ցնա Սարգիս վարդապետ. «Այդպիսի պարծանք «անառակի են և ոչ քրիստոնէի, և մանաւանդ կրօնաւորի, «որ զաղքատութիւն ուխտեալ է, և ի սեպհական ընչից «իւրոց անդամ հրաժարեալ։» Եւ ի յաւելուլ ասել, թէ զայս ամենայն յիշատակեցէ ի պատմութեան վարժարանին, ասէ Ամբրոսիոս վարդապետ արհամարհանաք իմն. «Յիշա- «տակեաջիր որչափ և կամիցիս, չէ ինձ փոյթ։»

Ասէ ցնա Սարգիս վարդապետ. «Գիտեմ ես քաջ՝ թէ չէ «քեզ փոյթ զայսմանէ. զի որ մի անդամ զխիղճ մոտաց և «զամօթ երեսաց կորուսեալ է, արհամարհէ նա և ոչինչ հա- «մարի զքնութիւն և զդատաստան աշխարհի։» Որպէս և հաստատեցաւ ապա։ . . .

Զայս բանս պարծանաց երկրորդէ Ամբրոսիոս վարդապետն և առաջի այլոց, Պարոն Մանասեանի, որոյ լուեալ զայն ի բերանոյ նորա՝ գայթագղի յոյժ, և ասէ թէ նա զանարժանս իւր պարծանս ինչ համարի, իսկ զդատաստան հաստատեալաց որ ընդ այն, անիծեալ լինի։ Ահա և այլ հաստատութիւն բնաւորութեան Ամբրոսեայ վարդապետի և այլ վկայիւ։ . . .

Տեսեալ Տիկնոջ Գ. սրամտի թէ բանն յայն վայր հասանէ, և այնմ պատճառ ինքն լինի, պատմելով յանկնջս Ամբրոսեայ, չգիտեմք ո՛րպէս զգանգատանս ազգայնոցս ոմանց ի Պոլիս որ զծախուց և զպարտուց Հայկազեան վարժարանին, և ցա-

սուցեալ Նորա ընդ այն անիրաւութեամբ ցուցանել զսեպհականն բարս իւր, և յանդիմանի արդարապէս ի Սարգսէ վարդապետէ, ասիպէ զԱմիրտոխու վարդապետս հաշտութիւն զձեռս Սարգսի վարդապետի և թողութիւն ի նմանէ խնդրել, զոր և առնէ նա, և Սարգիս վարդապետս թէպէտ և ներէ նմա, բայց ներողամիտ բնաւորութեան իւրում, սակայն ոչ լուէ նա զճշմարտութիւն ի պատմութեան իւրում, և զայս ոչ ի վրէժխնդրութիւն, քան լիցի. «Զի իմ է վրէժխնդրութիւն ասէ «Տէր ։ » որում և հաւանեալ՝ ներեաց և ներէ նմա. այլ՝ ի խրատս և ի զգուշութիւն այլոց, չունել երբէք սովորութիւն ինչ վիրաբերութեան յանձնասէր և յանկարելիից և յապերախտ անձանց, զոր ինքն ի փորձոյ գիտէ ի սկզբանէ առն մի մինչև ցայսօր ժամանակի, թէպէտ և վասն իւր այս խրատս անագան է յոյժ ։ . . .

Աւանդ մարդկային հանուցման և վրիպեալ սովորութեան նորին ։ . . .

Այդ՝ յետ հաստատելոյ Նորա զծախս Գեղեցիկագրքեան Ամիրտեայ վարդապետի 3,000 Ֆրանք, և յետ ապոյ նմա փոխ 2,500 Ֆրանք, և յանձնելոյ նմա 2,500 Ֆրանք պահանջ իւր որ ի Պարոն Ամրանոյ և զոր հաստատել նմա ապարդութեամբ մատենից Նորա և մատենից եղբօրն Խորենայ, և յետ ասանմանեայ պանդխտութեան իւրոյ ի Տփխիս և մահացուցիչ մուրոդութեամբ հայթայթելոյ 10,000 Ֆրանք և յղելոյ զայն ի Փարիզ յօգնութիւն կարօտութեան Նորա, և ի պէտս իւր ապա, և յետ խնամելոյ ի նմանէ թէ ի յղեալ արծաթոյն չէր ճանալ ինչ ի կարեւոր պէտս իւր, և յետ տեսանելոյ Նորա զկարուտս 4,500 Ֆրանք ամէից ընչից իւրոյ յանձնելոց նմա, որք ընդ ամենայն լինին 22,500 Ֆրանք, զոր ընծայեալ էր նմա, և կորուսեալ անհոգութեամբ Նորա. թող զ3,000 Ֆրանքս պահանջս Նորա որ ի ձէզայէրլեան Մկրտիչ Ամիրայէ, և թող զ1,500 Ֆրանքս որ ի գնոյ մատենից Նորա ճանցելոց ի Պոլիս, ընդ ամենայն 4,500 Ֆրանք. զորս թէպէտ ընդունի Սարգիս վարդապետ ի Պոլիս, հանդերձ բազում աշխատութեամբ, բայց ասկս բարձրութեան ամէն

ֆրանքի, և սակս չունելոյ Ամբրոսեայ վարդապետի կորուստ ինչ ի փոխանակութեան արծաթոյն, հատուցանել նմա Սարգիս վարդապետ ի հոգեպահիկ արծաթոյ իւրոյ, և զայն 4,500 ֆրանքս թողու նա առ Պարոն Մկրտիչ Մոմճեան ի Պոլիս, մինչեւ ցիջանել աժի ֆրանքի, բայց սակս անյաջողութեան գործոյ Մոմճեանի՝ չկարէ նա գտանել զայն անուտի, որովք լինին միահամուռ 27,000 ֆրանք, զորս զոհէ նա Ամբրոսեայ վարդապետի, և մանաւանդ յետ լսելոյ ի նմանէ զվերոյիշեալ անակնկալ և զանիրաւ բանս նորա, մատուցանէ նմա 400 ֆրանք, զզլացեալ զին մատնիչ նորա որ առ գրավաճառն ի Տփխիս, և զոր բազում ջանիւք հանէ անտի և բերեալ տայ նմա . . . թէպէտ և ընդ այս եւս չլսէ ի նմանէ շնորհակալութիւն ինչ բնաւ . . . .

Ահա հատատութիւն ներոլամիտ բնաւորութեան Սարգսի վարդապետի հանդերձ հաւատեօք, միանգամայն և հատատութիւն ապաշնորհ բարուց և ապիրատ վարուց Ամբրոսեայ վարդապետի այլոքն հանդերձ։

Վերադարձն առանց հաւատեաց ցուցաւ կորուստն ընչից Սարգսի վարդապետի. ցուցցի այն ատ հանդերձ հաւատեօք, և այն յերկուց զանազան գլխոց։

Նախ՝ ի կորստենէ 2,000 ֆրանքաց, զոր ծախէ Սարգիս վարդապետ ի փորագրութիւն նորոգ տառից ըստ ցանկութեան Գարբիէլի վարդապետի, և զորոց կաղապարն թողու նա անհոգութեամբ, առ Պարոն Արամայ, և իբրեւ մեկնի նա ի Փարիզէ գնայ ի Թէոդոսիա, առնու ի ձեռաց Պարոն Արամայ զիր, յորում խոստանի նա թէ առ իւր են կաղապարքն իբրեւ առանց և սեպհական տացուած Սարգսի վարդապետի, և խոստանայ դարձուցանել առ նա զայն, զկնի առնելոյ անտի զօրինակն, և այնր պատճառաւ մնան կաղապարքն առ նորա, մինչեւ գնայ Սարգիս վարդապետ ի Պոլիս և անտի յԷջմիածին։ Ի ժամանակի յայն անկանի խռովութիւն ի մէջ Ամբրոսեայ վարդապետի և ի մէջ Պարոն Արամայ, և ի պահանջել Ամբրոսեայ վարդապետի ի Պարոն Արամէ զկաղապարսն իբրեւ զատացուած Սարգսի

վարդապետի, զանազ նա դարձուցանել զայն, ասելով թէ բազում ՀԼեաս կրեալ իցէ ինքն ի նմանէ, վասն այնորիկ կալնու զայն։ . . .

Երբեւ դառնայ Սարգիս վարդապետ ի Փարիզ և պահանջէ զայն ի Պ. Արամայ, ասէ նա թէ զմի մասն, զհարս տառիցն դարձուցեալ էր արդէն առ Ամբրոսիոս վարդապետ, իսկ զմիւս մասն, զմարս տառիցն առ իւր է, և պատրաստ է դարձուցանել առ նա։ . . . Ամբրոսիոս վարդապետ ասէ թէ չէր դարձուցեալ նորա երբէք, և նա ասէ թէ դարձուցեալ է առ նա։

Թէպէտ և զմիւս մասն խոստանայ Պ. Արամ դարձուցանել առ Սարգիս վարդապետ, բայց ի մեկնիլ իւր ի Փարիզէ յղէ զայն յառաջագոյն ընդ ինչս իւր ի Մարսիլիա, ուստի դարձուցանել խոստանայ դարձեալ, և ոչ պահէ զխոստումն իւր. որով յայտ առնէ, թէ առ վրէժխնդրութեան որ յԱմբրոսիոս վարդապետէ, կալնու զանգիտան ստացուածն Սարգսի վարդապետի։ Ահա ի մեծ գլխոյ հաւատոյք ցուցումն կորստեան ընչից, 2,000 ֆրանք ածէից։

Երկրորդ գրուխ կորստեան 2,500 ֆրանք ընչից Սարգսի վարդապետի ցուցցի հաւատոյք ապա գրութեամբ առ Խորէն վարդապետ և խոստովանութեամբ նորին։

Ի 15 յուլիսի 1860 ամի գնայ բնակի Սարգիս վարդապետ ի տան մտերիմ բարեկամին իւրոյ Պ. Միքայէլ Մանանեանի ըստ հրաւիրանաց նորին։

Ի 19 նորին ամսոյ մեկնի Ամբրոսիոս վարդապետ ի Փարիզէ գնայ ի Պոլիս, ածելով զքոյր իւր անդ, յետ չորսամեայ ուսման նորին ի դպրոցի Գաղղիացի աղջկանց։

Յանձնէ Սարգիս վարդապետ ի ձեռս Ամբրոսեայ վարդապետի զցանկ կորուսեալ ընչից իւրոց, զի ցուցցէ նա զայն եղբօր իւրոյ Խորենայ վարդապետի, որ լինի յայնժամ ի Պոլիս, և և հարցանիցէ զայնցանէ թէ ուր իցեն։

Յանձնէ նա ի ձեռս նորա և նամակ մի առ Պարոն Մկրտիչ Մոմճեան, յորում ծանուցանէ նմա զկորուստ սեպհական

ընչից իւրոց, և զկարօտութիւն իւր արծաթոյ, և խնդրել ի նմանէ յղել իւր փութով գոնէ զշահ արծաթոյ իւրոյ, օրինակ զայս.

„ Մեծապատիւ Տեառն և կարեկից բարեկամի մերոյ
„ Աղայ Մկրտիչ Մոմճեանի ողջոյն բազում և
„ օրհնութիւն շատ ի Քրիստոս։

„ Խնամաք Բարձրելոյն և աղօթիւք Սրբոցեացս ճանապար-
„ հորդեալ ընդ ծով և ընդ ցամաք հասի առ ողջ և անվնաս
„ տանդ, և գտեալ զհոգեհարազատն իմ զԱմբրոսիոս վարդ-
„ ապետ ի քաջողջութեան մխիթարեցայ ոչ սակաւ, հանդերձ
„ յիշատակութեամբ ցաւոցն վշտաց անցելոց, այլ և ծանօթա-
„ թեամբ նորոգ և անակնկալ ցաւոց, ընդ կորուստն ահեմ
„ սեպհական ընչից, ընծայից եղելոց ինձ ի բարեկամաց իրրև
„ 2,500 Ֆրանք ոմէից, կորուսելոց և եղծելոց ի ժամանակի
„ վաճառման կահուց վարժարանին . . . Ահա ինձ վարձք
„ երկամեայ վաստակոցս ի Հայկազեան վարժարանին, և երկ-
„ կամեայ պանդխտութեան և տատապարանացս ի ճանապարհի
„ վասն հատատութեան նորին . . .

„ Ի ծանօթութենէ ասի կարէք դուշակել զհանգամանս
„ որոյ խնայ և զվիճակ կենացս. վասն որոյ աղաչեմ զկարե-
„ կիս բարեկամդ հոգալ ինձ զկարեւորն, հասուցանել ի ձեռս
„ իմ փութով գոնէ զտարեկան շահն արծաթոյս, սկսեալ
„ ի 18 մայիսէ 1859 ամէն մինչեւ ց18 մայիսի տարւոյս, որչափ
„ ինչ գումարիցի, հաշուելով անդ զմի հազար Ֆրանք զոր
„ հասուցիք ինձ այդր ի 27 անցելոյն, և զորոյ ընդունելու-
„ թիւնս այսու գրովս հաստատեմ ըստ օրինաց և սովորու-
„ թեան աշխարհի։

„ Յուսամ զի յաջողեսցի Ձեզ փութով անցուցանել այսր
„ ի ձեռս իմ զդրամագլուխն հանդերձ շահեկանութեամբ,
„ որով շնորհապարտ և աղօթող առնէք զիս յամենայն կեանս
„ իմ։

„ Բազում ողջոյն սիրոյ և օրհնութիւն ի Քրիստոս մատուցեալ համօրէն յարգոյ գերդաստանիդ ,

„ Մնամ միշտ

„ Մեծապատիւ Տէրութեանդ

„ Ի Փարիզ. 17 յուլիս. 1860.

„ Աղօթարար ծառայ

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՒԴՈՐԵԱՆ. „

ԳԼՈՒԽ ԻԶ.

Թոռդ Սարգսի վարդապետի առ Յակոբ Լիֆլեմի Կրճիկեան, և պատասխանի նորին առ նա. — Բնութիւնքի և գոչակոչութիւնքի զանազանց Հայկազեան վարժարանին ի Փարիզ. — Պատասխանի Սարգսի վարդապետի առաջին թղթոյ Ամիրտանայ վարդապետի ի Պոլիս. — Յանձնելոյ Պարոն Ղատրեանի ի Փարիզ և վերադարձոյ զՍարգիս վարդապետ. — Հանդիպելոյ Պարոն Ղատրեանի գանազանագրեալ Գաբրիելի վարդապետի և խօսակցութիւնքն նմա. — Թոռդ Գաբրիելի վարդապետի առ Սարգիս վարդապետ, և Պատասխանի սորա առ նա.

Զանազան և այլընդայլոյ եղանակս լսելով Սարգսի վարդապետի զանազան վանեցս վասն Հայկազեան վարժարանին, կամի առաջեալ զայն ի Յակոբ Լիֆլեմի Կրճիկեան, որոյ ձեռամբ վճարի զարծն այն, վասն որոյ գրէ առ նա թղթի խնդրելով ի նմանէ տեղեկութիւն զայնմանէ, որ ունի օրինակ զայս.

„ Սեծապատիւ Տէր.

„ Գիտէք զուք արդէն զվախճան զնալոյ իմոյ ի Պոլիս եր-
„ կու ամաց յառաջ, առ ի խօսել և ի հոգալ ընդ խնամակա-
„ կալաց ժողովոյն զպարտուց և հաստատութեանէ Հայկազեան
„ վարժարանին, և այս ըստ հրամանաց նորին ժողովոյ։

„ Գնացեալ իմ անդ և զամիս տասն բաղում անգամ
„ խօսեցաք ի միասին, ընդ խնամակալաց, և ընդ Սրբազան
„ Գէորգ Պատրիարքին. ի վախճանի որոշեցին և խոստացան
„ նոքա անցուցանել ամենեան ամենեան 4,000 ֆրանք ի Փարիզ
„ ի կարեւոր ծախս վարժարանին, և այս իբրեւ զամս երկու,

„ մինչեւ ցկատարումն ընթացից ուսման աշակերտաց նորին։
„ Ահա այսու որոշմամբ և խոստմամբ նոցա աւարտեալ իմ
„ զգործն ելի ի ճանապարհ գնալ յէջմիածին ընդ Արքազան
„ Մատթէոս Կաթողիկոսին։

„ Դարձեալ իմ անտի ի Տփխիս՝ լուայ անդ յանկարծակի
„ զփակիլ Հայկազեան վարժարանին, հաւանութեամբ Գերա-
„ գոյն ժողովոյն և հրամանաւ Օսմանեան Դեսպանին առ
„ ի Փարիզ։

„ Արդ՝ խնդրեմ ի Զէնջ, սիրելի Պարոն, տալիք ինձ զայս-
„ մանէ ստոյգ տեղեկութիւն, զի կարեւոր է ինձ յոյժ զիտել
„ հաւատեաւ, առ ի յիշատակել և զայս ի պատմութիւն
„ վարժարանիս։

„ Մնամ միշտ

„ Մեծապատիւ Տէրութեանդ

„ Փարիզ. 15 յուլիս. 1860.

„ Ազնիւարար ծառայ

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՐԻՐԵԱՆ. „

Պատասխանի Յակոբ Էֆէնտիի տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի, յորում տայ տեղեկութիւն զանցիցն Հայկազեան վարժարանին, թէ ուստի լինի հրաման ի փակել զայն, և թէ զինչ խորհուրդ տայ Ամբրոսեոյ վարդապետի, ի գանգատել նորա զկարօտութենէ իւրոյ. և թէ վաճառէ զկահ կարասիս վարժարանին և հատուցանէ զպարտս նորին, և թէ առաքէ զգիրս ընդունելութեան պատասխարցն առ Պատրիարք ի Պոլիս. օրինակ զայս.

„ Հայր Պատուական.

„ Հրամանքդ տեղեկութիւն կուզեք յինէն Փարիզի Հա-
„ կազեան վարժարանին գոցելումն վրայոք։ Տեղեկութիւնը

“ այս է. Արուաքին գործոց Պաշտօնեայ Ֆուատ Փաշայէն
“ պաշտօնական նամակ մը առի, որով ինձ կհրամայէր, որ
“ զվարժարանը գոցեմ, այսինքն ի Պոլիս դառնալ ուզող
“ աշակերտները ի Պոլիս դարձուցանեմ, իսկ մնալ ուզող
“ աշակերտները Գաղղիացոց վարժարաններուն մէջ դնել
“ տամ։

“ Գէորգ Պատրիարքն ալ գիր մը գրած էր ինձ ինոյն մի-
“ ջոցին, որով կխնդրէր որ Ֆուատ Փաշային հրամանն ան-
“ յապաղ կատարեմ։

“ Ամբրոսիոս վարդապետն ալ շատ նեղութեան մէջ էր այն
“ առիններս, վարժարանի ծախուց պէտք ըլլալիք տակը առ-
“ ձեռն պատրաստ չունենալուն համար։ Շատ անգամ գան-
“ գատ ըրած էր ինձ, ըսելով, թէ ոչ աշակերտաց ծնողքէն
“ ոտակ կայ, և ոչ իսկ վարժարանին հոգաբարձու կարգեալ
“ յարգելիներէն։ Վերոյիշեալ պաշտօնական նամակներուն
“ եկած օրերը կրկին եկաւ գանգատեցաւ դառնապէս, և
“ վարժարանին թշուառ վիճակը նկարագրեց ինձ։

“ Ահա՛ փաշային հրամանը, Պատրիարքին խնդիրը և վար-
“ ժարանին խեղճութիւնը ստիպեցին զիս, որ աշակերտները
“ դուրս հանեմ, և վարժարանին պարտքը հոգամ ըստ կա-
“ րելւոյն։ Վարդապետաց տեսչական ատացուածքը և եկե-
“ ղեցական զարդքը դուրս հանել տալէն ետեւ, մնացեալ
“ կամ կարօտքը Օսմանեան դեսպանատան Աֆոռէ՝ Մարթէ
“ Տիւկատ անուն անձին միջնորդութեամբ ծախել տուի հրա-
“ պարակաւ, այն ծախքածներէն ժողովված տակով վարժա-
“ բանին առնելիք ունեցողներուն բերանը գոցեցի, և անոնց
“ ձեռքէն առնելված քիբանս ըսած թուղթերը խլեցի հիմնակ-
“ ոտան Սարգիս Պատրիարքին։

“ Ես ալ ձեր հրամանաց պէս կցաւիմ այս եղածներուն
“ վրայ, և այդպէս չէի ուզեր գանուիլ տասնակ գործքերու
“ մէջ, բայց ինչպէս ըսի, տարեւոյ։

“ Եթէ աշակերտաց ծնողքը իրենց պարտքերնին վճարէին
“ անպակաս, կամ վարժարանին հոգաբարձու կարգեալ
“ Յարգելիքը տակ խրկած ըլլային ի ժամանակին, ոչ վար-

„ ժամանը կգոցվէր, ոչ աշակերտները կցրուէին, և ոչ իսկ
„ մինչև հիմա եղած գնացած ծախքը անօգուտ եղած կըլ-
„ լար։

„ Կարծեմ իմ այս պզտիկ նամակս բաւական տեղեկութիւն
„ կրնայ տալ, որ կիմնդրէիք ինձմէն։

„ Ողջ լեր

„ Հայր Գաւուսական

„ Ի ՍԷՐ ՅԱԿՈԲԻՍ ԿՈՉԻԿԵԱՆ

„ Փարիզ. 20 յուլիս. 1860.

„ (Առ Շնորհափայլ Սարգիս վարդապետ Թէոդորեան.)

Ի բանից ասի պատասխանոյ Յակոբ Եպիսկոպոսի ստուգութեամբ և հաւատաւոր տեղեկանայ Սարգիս վարդապետ զանցին անցելոց որ ընդ Հայկազեան վարժարանն ի Փարիզ, նոյնպէս և զյառաջագոյն հանելոյ անտի տեսչական ընչից վարդապետացն այնոցիկ։ Իսկ թէ ո՞ւր ածին այնք, և թէ ընդէ՞ր մնան այնոցիկ, ինչք Սարգսի վարդապետի, նախ այլուր ածի, ապա և այլ ուրեք, ի տուն Պարոն Մանուելեանի, զայսմանէ տեղեկանայ Սարգիս վարդապետ ի Տիկին Գարամանեանէ այսպէս.

Ի ժամանակի յայն փակելոյ Հայկազեան վարժարանին՝ երեւի յանկարծակի ի Փարիզ երէց եղբայր Գալֆայեան վարդապետաց, Յովսէփ Պէյ անուանեալ, և զնոյ բնակի ի վարժարանի անդ, հանդերձ կնաւ իւրով. Սմիրոսիս վարդապետ եղբայր նորա խառով զոլով ընդ նմա, ասէր բամբասելոյ զինքն առաջի օտարաց, չկամի բնակիլ ընդ նմա ի վարժարանի անդ, պատճառելով զնեղութիւնն որ յերեսաց պարտատարց վարժարանին, այլ բնակի ի տան տիկնոջ Գարամանեանի։

Պատեհ գտեալ զայն երէց եղբօր նորա՝ առաւել եւս բամ-

բասէ զնա և առելի ասնէ զնա կրտսեր եղբօր իւրոյ, Խորենայ վարդապետի, այլ և համարէ զնա ներոգ ինչ դպրոց հաստատել վասն Գաղղիացի մանկանց, վասն որոյ և տուն մի ի վարձու կալնու ի փողոցի Դժոխք անուանեալ, և հանդերձէ զայն կահիւք և կարասիւք, զոր ինչ ինչ ապառիկ գնեալ, և ինչ ինչ ի վարժարանէ անտի տարեալ, ի ձեռին և յիշխանութեան իւրում գոլով այնր . . . և յորս լինին սեպհական ինչք Սարգսի վարդապետի, թէպէտ և երկիցս գրէ նա ի Պօլսոյ, և ի Տիֆլիս առ երկուսին վարդապետս Գալֆայեան և պատուիրէ նոցա, զի ի պատեհի փակելոյ վարժարանին, զսեպհական ինչս իւր յանձնեսցին ի ձեռս Պարոն Մանասեանի։ Սակայն Ամիրոսիոս վարդապետ զսեպհական ինչս իւր և առելի արդեօք հանեալ անտի յառաջագոյն տանի պահէ ի տան Տիկնոջ Գարամիանի, ուր և բնակէր արդէն, թողով զսեպհական ինչս Սարգսի վարդապետի ի ձեռս և յիշխանութեան Խորենայ վարդապետի, և նորա թողով զայն և զայլ ամենայն ինչս ի ձեռս և յիշխանութեան երէց եղբօր իւրոյ, Յովսեփայ կարծեցեալ Պէյի և խնամակալի իւրոյ, մանաւանդ թէ ընտանի թշնամւոյ, զոր և Խորէն վարդապետ վկայէ ինքնին գրով ապա, և ընդ կորուստս ընչից Սարգսի վարդապետի ցաւի . . . այլ ամենազան և ունդարման։

Իբրև յապահովէ Ամիրոսիոս վարդապետ զինչս իւր՝ ապա մեկնի ի Փարիզէ գնայ ի Պօլիս, լուա հրամանի Պատրիարքին, առ ի տալ հանար մատակարարութեան Հայկազեան վարժարանին։

Ապա փակի վարժարանն, և մնացեալ կահ կարասիք նորին վաճառին զրեթէ ոչինչ գնով և ի ձեռս բերեալն անտի, իբրև 7,000 ֆրանք հատուցանի պարտատերացն ձեռամբ Յակոբ Էֆէնտիի. մնան եւս 60,000 ֆրանք պարտիք վարժարանին, միանգամայն և պահանջելիք նորին ի ծնողաց թոշակաւոր մանկանց, որք զլանան հատուցանել, վասն այնորիկ և փակի վարժարանն, և այնչափ վնաս և նախատինք լինին ազգին, լուա վկայելոյ իսկ Յակոբ Էֆէնտի։

Յայնմ ժամանակի մինչդեռ Ամիրոսիոս վարդապետ ի բա-

ցեայ լինի ի Փարիզ, յորմէ առ նա ի Խրիմէ ի Գարրիէլ վարդապետէ զուսմար ինչ արծաթոյ ի հատուցումն պարտուց իւրոց, զոր պարտի հատուցանել Պարոն Արամայ, վասն յանձնարարեալ նմա իրացն, և նա ճեայ դառնել զայն անտի։

Ընկալեալ Խորենայ վարդապետի զարծաթն զայն՝ չհատուցանէ Պարոն Արամայ, այլ պահէ առ իւր. խմացեալ զայն Խնամակալն նորա, Յովսէփ Պէյլ, առնու անտի 1,500 ֆրանք։ Եւեալ զայն Խորենայ վարդապետի անհնարին տագնապի, և ճանաչէ յայնժամ զի խնամակալն իւր ընտանի թշնամի լինի։ Գնայ նա առ Տիկին Գարամանեան և պատմէ նմա զայն յալով, և խնդրէ ի նմանէ թողութիւն ընդ չանալ իրատուն նորին, չհաւատալ անուանկին։

Ոչ շատանայ այնու Յովսէփ Պէյ, այլ յաւելու յայն և զայլ ինչ յանդգնագոյնն . . . քանզի յանդգնի նա բանալ զկնքեալ նամակն որ առ եղբայր իւր Ամբրոսիոս վարդապետ, և գտեալ ի նմին պատուիրանագիր մի ի Գարրիէլ վարդապետէ՝ ընդունելոյ ի նամակատանէն Փարիզու զգուսմար ինչ արծաթոյ, առնու նա զպատուիրանագիրն զայն գնայ յանդիման լինի պաշտօնէի նամակատան, և խնդրէ ի նմանէ զարծաթն։ Հարցանէ ցնա պաշտօնեայն զանուն նորա. ասէ նա թէ եղբայր է ինքն Ամբրոսեայ վարդապետի։ Զլանայ պաշտօնեայն յանձնել նմա զարծաթն, ասելով թէ պարտ էր Ամբրոսեայ վարդապետի անձամբ խնդրել զայն անտի. և այնպէս՝ թէ և չյաջողի նմա և շարութիւնն այն, սակայն պահէ նա առ իւր զպատուիրանագիրն, և ոչ յանձնէ զայն Ամբրոսեայ վարդապետի յորժամ դառնայ նա ի Փարիզ, և մինչև վերատին առնու նա դիր ի Գարրիէլ վարդապետէ, և իմանայ զայն անտի, և զոր ապատնելոք դատաստանի հանէ ի ձեռաց նորա, և ընդունի զարծաթն ի նամակատանէն։ . . .

Տեսեալ Խորենայ վարդապետի զայն ամենայն անզգամութիւն երէց եղբօր իւրոյ Յովսէփ Պէյլի, զղջացեալ հեռանայ ի նմանէ, և դարձեալ առ Ամբրոսիոս վարդապետ, խնդրէ ի նմանէ թողութիւն ընդ այն վիրաւորութիւն իւր որ ընդ անզգամին, և օգնութիւն հանելոյ ի ձեռաց նորա զինչս իւր,

զանգհական ինչս Սարգսի վարդապետի, զոր իւրացուցեալ էր և զանոյ տալ անդգամն, ասելով, թէ պատճառ լինի Խորէն վարդապետ պարտիւք ծախուց իւրոց, որք ի խրճ և ի կահ կարասիս տանն։ . . .

Գնացեալ Ամբրոսեայ վարդապետի առ անդգամն և սպառնացեալ նմա մատնել զնա դատաւորին, հազիւ և բռնութեամբ հանէ ի ձեռաց նորա զքանի մի խորտակեալ ինչս Սարգսի վարդապետի, յորոց մի լինի դրամեղանն, և այն բոց առանց բռնալեաց, և դատարկ ի պահեալ անդ իրաց, 2,000 ֆրանք ուժէից, և զայն այնպէս տարեալ յայնժամ յանձնեն Պարոն Մ. Մանանեանի։ . . .

Ահա զոյս ամենայն հաւատեալ տեղեկանայ Սարգիս վարդապետ ի Տիկին Գարամէզեանէ և յԱմբրոսիոս վարդապետէ։

Ի տեղեկութենէ ասոյ յայտնապէս տեսանի թէ Ամբրոսիոս վարդապետ ի Փարիզ լինի, յորժամ հանին սեպհական ինչք վարդապետաց որք ի Հայկազեան վարժարանին, որպէս և յաղդարարութենէ Յակոբ Էֆէնտիի առ նոսա, հնգետասան աւուրքք յառաջ քան զփակիլ վարժարանին, ի հանել անտի զսեպհական ինչս իւրեանց. և թէ ի վերջին աւուրս չբնակիլ Ամբրոսեայ վարդապետի ի վարժարանի անդ ոչ թէ յերեսաց խառութեան պարտատերաց վարժարանին լինի, այլ ի պատճառս խռովութեանն որ ընդ երէց եղբօր իւրոյ, և պարտատերաց իւրոց առանձինն. և հաստատութիւն այսմ, ահա բանք թղթոյ Խորենայ վարդապետի որ ունի այսպէս.

“ Բայց օրհնեալ լիցի ի Տեառնէ Աստուծոյ բարեպաշտն
“ այր և ստուգամտաբար և ազգասէրն Տէր Ռոմանոս Պօղոս
“ Նասիրեան, որ իրրու գուշակեալ ինձ թէ յոր ահագին
“ նեղութիւն գոյր մեզ անկանել յերեսաց պարտատերաց մե-
“ րոց, հանեցաւ ասաքել առ մեզ առատանեն զթութեամբ
“ զ1,300 մանէթ, 5,000 ֆրանք։

“ Ահա շնորհիւ նորա և եթէ է զի ազատեցաք յերթալոյ
“ ի բանտ և յառակ նշաւակի մեր ի բոլանդակ մայրաքա-
“ ղաքիս։ . . . Այո՝ օրհնեալ լիցի և երիցս օրհնեալ։

«Գրեալ էիք թէ ի ձեր եւեթ առանձին պէտս առաքէ նա
«զարծաթն, եւ ահա եւ մեք յայն եւեթ ի վար արկեալ ըստ
«հրամանին, փակեցաք արծաթովն այնուիկ զբերան մեծա-
«գունից ի պարտատէրց մերոց։ Քանզի որպէս եւ զիտէք
«իսկ քաջ՝ ի պատճառս սատակային տպարրութեանց մե-
«րոց, Լամարթինեայ, Մատեաց ազատնեայ, եւ այլն, ի պատ-
«ճառս ծախուց կալմիցն, թղթոց, ճանապարհի, կորստից,
«եւ այլն, եւ այլն, պարտք մեր եղեալ են եւ դիզացեալ ի վեր
«քան զգլուխս մեր, եւ չիք մեզ ուստեք յոյս կամ օգնակա-
«նութիւն, քանզի չիք զթութիւն։»

Կայցէ՞ արդեօք առաւել քան զայս յայտնի եւ հաստատ հաստատութիւն կարծեացս։ . . . Ապա ամենայն բանք եւ գրութիւն Ամբրոսեայ վարդապետի հայեցեալ ի նեղութիւն իւր որ ի Հայկազեան վարժարանի, եւ յարդարացուցեալն իւր որ ի պակասութիւն պարտուց իւրոց, թէ զինչ կշիռ եւ ազէք ունիցին, թողումք մեք զայս ընթերցողաց որոշն քննել եւ դատել։ . . .

Այլ այսչափ միայն ասացուք, եւ զայս եւս ստուգութեամբ եւ հաստատեաք, այս է, եթէ պարտ էր հաստատել բանից Ամբրոսեայ վարդապետի չունի նա բնաւ իրաւունս գանգատելոյ ընդ գրկումն վարձուց երկքսանեայ աշխատութեան իւրոյ ի Հայկազեան վարժարանի, զոսանելով նորա, ըստ բանից իւրոց, ի Պօլսեցի յազգայնոցս, ի 1856 ամի, իրրեւ իբրեւ ասեն յիշելիք եւ պարզեւք 20,000 ֆրանք։ . . . Թող զայն որ ապա ի Պարոն Մկրտիչ Մանճեանէ։ . . .

Իսկ Սարգիս վարդապետ զինչ վարձս երկքսանեայ աշխատութեան իւրոյ ի Հայկազեան վարժարանի, եւ երկքսանեայ ատենապանութեան իւրոյ վասն նորին հաստատութեան, եւ թէ քանի՞ արծաթ յիւրմէ իսկ զոհեաց եւ կորոյս վասն այնր, Ամբրոսիոս վարդապետ ինքն քաջ գիտէ, քան զամենեսեան։

Եւ եթէ տակաւին գանգատի Ամբրոսիոս վարդապետ ընդ այս աշխատութիւն իւր, չէ պարտ բնաւ զարմանալ, այլ պարտ է տալ զայն սեպհական բնաւորութեան նորա անոգութեան եւ ապաշնորհութեան։ . . .

Կարեկից բարեկամն և բարերարն Սարգսի վարդապետի Պարոն Ռոմանոս Նաստրեանց կացեալ առաւել ինչ ի Լիսն, վասն գործառնութեան իւրոյ՝ անցանէ անտի ի Փարիզ, և գնայ իսկոյն գտանէ զՍարգիս վարդապետ ի տան Պարոն Միքայէլ Մանանեանի. ուրախ լինի ընդ այն և գովէ յոյժ զՊարոն Մանանեան, յընդունել նորա զՍարգիս վարդապետ ի տան իւրում պատուախրութեամբ։

Զամիս երիս կացեալ Պարոն Նաստրեանի ի Փարիզ և առաքեալ զգործ իւր յաջողութեամբ, դառնայ ի Տփխիս։ Զճանապարհայն հանդիպի նա Գարրիէլ վարդապետի ի Նախիջեւան գաղթել, և ասայ նմա տեղեկութիւն զհանգամանաց Սարգսի վարդապետի որ ընդ նմա, և ընդ այն ուրախացեալ նորա՝ զրէ թուղթ առ Սարգիս վարդապետ, յորում ցուցանէ զրժշիրութիւն մտաց իւրոյ որ ընդ կարծիս նորա զինքնէ. ծանուցանէ նմա զգործ պաշտամանն իւրոյ ի Նախիջեւան, և զկամս իւր չգնալ երբէք յԷջմիածին, և չձեռնադրիլ եպիսկոպոս ի Մատթէոս Կաթողիկոսէն, օրինակ զայս.

„ Գերապատիւ և Սիրելեալ Հայր.

„ Հատուցակաց բարեկամն մեր Պարոն Նաստրեանց եկն
„ նոցա յանկարծ ի քաղաքս երկու աւուրք յառաջ, և
„ ի կարճատեւ ժամանակին, զոր եկաց առաջն՝ յանչափս
„ ուրախ արար զիս՝ ոչ միայն առեալք քաջողջութեան
„ Բարմարգիւն Հօրդ, այլ և հաւատի առնելովն թէ դուք չէք
„ զիս մոռացեալ, և ոչ այնպէս հաւատացեալ շոգմոգութեան
„ բանարկու արանց՝ որպէս կարծեալն էր ի բանից վերջնոցն
„ թղթոց ձերոց առ իս։

„ Ի 20 աւուրց հետէ գտանիմ ի քաղաքիս, ուր և բացի
„ գպրոցս վեց առ միով միով յեկեղեցեաց, և շահեցայ բան
„ կարի զմոլմուրդն զորոյ զմի մասն գրգռեալ էին ընդդէմ
„ ինձ ի հերուն հետէ Աբէլն շարագործ և Նարպատեանն
„ անզգամ։

„ Ակնունիմ Տէրամբ զի ի զարձին խնամ ի Փեթրպուրկէ

՝՝ յառաջիկայ գարնանիս, յաջողեցայց օգնականութեամբ
՝՝ շնորհի Տեառն իսպառ դադարեցուցանել զարտուղս անտե-
՝՝ զիս ծագեալս յողորմելի ոգիսութենէ և ի չարաւէր զբրդ-
՝՝ ռութենէ սակաւուց ոմանց։

՝՝ Իսկ յԷջմիածին գնալ գնացէ՛ որ կամիցի արեան արտա-
՝՝ սուս քամել ի վերայ ողբալի վիճակի նորին։ Այս ինչ հա-
՝՝ ւատի է զի ձեռն Մատթէոսի Վ. Կաթողիկոսի ոչ գիցի
՝՝ երբէք ի վերայ գլխոյ իմոյ (թէպէտ և ժողովուրդք վիճակիս
՝՝ առհասարակ, որպէս լսեմ, գրաւորական աղերսիւ պատ-
՝՝ րաստին ասիպել իմն զնա զի փութացի ձեռնադրել զիս,)
՝՝ փոխանակ զի չդիտաց նա յարդել նախ զձերդ առաքինու-
՝՝ թիւն և զչնաչխարհիկ վաստակս ի սէր ազգիս, և ապա
՝՝ զիմոյ մնացս ուղղութիւն յամենայնի։

՝՝ Յետ աւուրց հնգից դարձ առնեմ ի Թէոդոսիա, ուր
՝՝ սպասեցից անձնանոք Ձերումդ ցանկալի պատասխանւոյ։
՝՝ Առ այժմ ողջունիս մեծարանաց առ մտերիմ բարեկամն
՝՝ մեր Պարոն Միքայէլ Մանանեան։

՝՝ Ողջ լինել ըղձանամ

՝՝ Գերապատիւ Հայրութեանդ

՝՝ Նախիջեւան. 18 Հոկտ. 1860.

՝՝ Անձնանուէր

՝՝ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ. ՝՝

Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ թղթոյ Գաբրիէլի վարդապետի, յորում մեղադրէ զնա ընդ ձախողակի կարծիս նորա որ չիմքենէ, և անարգն և անօգուտ համարի զճանաչումն նորա որ ընդ այն կարծիս իւր, և հաւատի առնէ նմա զհաստատութիւն մտաց իւրոց, այլոմէն հանդերձ, օրինակ դայս.

„ Գերապատիւ Հայր և Սիրելեալ եղբայր.

„ Զանակնկալ նամակ Ձեր, գրեալ ի 18 անցելոյն, ընկա-
„ լայ ի 6 ամսոյս, և խնդացի ընդ լուր պատուական ողջու-
„ թեանդ և յաջողութեան գործոյդ։

„ Անակնկալ նամակ ասացի, համարելովդ զիս ցարդ մի-
„ ի հաւատացելոց բանից շոգմոգոչեան քանարկոս ապանց,
„ և վճարելով ընդ իս յաւիտեան։ . . .

„ Ենորհ յոյժ ունիմ կարելիոց բարեկամին իմում Պարոն
„ Նատիրեանի, որ հաւատի արարեալ է Ձեզ՝ թէ չեմ ես
„ ի կարծեցելոցդ անտի ապանց . . . թէպէտ և այս անագան
„ և ցաւոց արտիս ոչինչ դարման, վճարեալ վաւն իմ ամե-
„ նայն . . . բաց ի մխիթարութենէ որ յանխիղճ մոռացս, և
„ որ ի Տեառնէ միայն։ . . .

„ Հաւատի առնեմ Ձեզ և ես, թէ որպէս էի և եմ միշտ
„ ցանկացող և աղօթող վասն երկար և քաջառողջ կենդա-
„ նութեանդ և յաջողութեան ամենայն գործոցդ, հանդերձ
„ վայելչութեամբ բարեաց որ ի վիճակէդ, և մխիթարութեամբ
„ արտի որ ի սիրելեացդ այտի։ . . .

„ Ողջունեալն ի Զէնջ Պարոն Միքայէլ Մանանեան ողջունէ
„ զՁեզ յարգանաք, և իմ շնորհաւորեալ Ձեզ զսոսն անուա-
„ նակցիդ որոյ այսօր է յիշատակ,

„ Մնամ միշտ

„ Գերապատիւ Հայրութեանդ

„ Ի Փարիզ. 17 Նոյեմբ. 1860.

„ Աղօթարար եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՐԵԱՆ. „

ԳԼՈՒԽ ԻԷ.

Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ թղթոյ Խորենայ վարդապետի. Յանցանելոցին եւ յիշատակոցին նր. շանաւորն բանից եւ գործոյ. — Պատասխանի Խորենայ վարդապետի տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի. Խոստովանութեան ձշմարտութեան, խնդիր թողութեան, եւ խոստումն հաստատելոյ պարտուց, եւ երկիւղ ի քրիստոնէութիւն եւ ի դատաստանն հատուցակաց. — Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ թղթոյ Խորենայ վարդապետի. Մխիթարութեան ընդ ձշմարիտ խոստովանութեան, եւ ներումն մեղաց, եւ անմեղութեան անհաշտութեան. — Թուղթ Սարգսի վարդապետի առ Պարոն Մկրտիչ Մոնշնեան. տեղեկութեան զվիճակն, եւ ակնկալութեան արժանոյ. յիշատակութեան պայմանի, եւ պակասութեան խոստմանն եւ նոր առաջարկութեան. — Պատասխանի Պ. Մ. Մոնշնեանի տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի. խոստումն հատուցման պարտուց, յիշատակութեան սիրոյ բարեկամութեան, վարկման եւ շանից, եւ խոստովանութեան պարտուց.

Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ թղթոց Խորենայ վարդապետի, յորում ցուցանէ նմա զպատճառն ցայնմայր լռութեան իւրոյ, եւ յանդիմանէ զնա ընդ պակասութիւնն որ ի պարտս նորա, եւ ցաւի ընդ վատահութիւն իւր որ ի նա, օրինակ զայս.

“ Սիրեցեալդ իմ ի Քրիստոս.

“ Լուեալ իմ ի հարազատէդ զի գանգատիր դուք ընդ
“ լռութիւն իմ, շատով պատասխանի երից թղթոց ձերոց

“առ իս, թէպէտ և չունէի ես միթիթար ինչ գրել առ ձեզ
“պատասխանի, սակայն բռնադատեալ ի գանգատանացդ՝
“գրեցի առ ձեզ ի 12 սեպտ. անցելոյ և առաքեցի զայն այդր
“ի Թէոդոսիա, ոչինչ երկրայելով ընդ անխափան ժամանումն
“նորին ի ձեռս ձեր այդր. բայց լսեմ արդ զի գանգատիք
“դուք դարձեալ ընդ լռութիւն իմ, վասն որոյ առաքեմ ձեզ
“այժմ զպատճէն նորին, որ ունի օրինակ զայս.

“— Մինչդեռ Ձեայի ես սակաւիկ մի միթիթարիլ ի քէն
“ճշմարիտ խոստովանութեամբդ, թէ պակասեցար դու
“ի պարտս քո, ի պահպանութիւն սահմ ընչից իմոց զոր
“հաւատացի քեզ, և թէ խաբեցար դու յընտանի դաւաճա-
“նէն, հաւատալով նմա զայն, այլոքն հանդերձ . . . ահա
“տաւել ես ցաւեցայ ես յարդարացուցանելդ զքեզ մեռոի
“պատճառանօք, և ի մեղադրել զիս անիրաւութեամբ, չծա-
“նուցանելով իմ քեզ յառաջ, թէ ժաժկեալքն ի գրասենեղանին
“ժանիրագնոյ ինչք Լին, և կարեւոր հաւատիք . . .

“Ո՞չ ապաքէն յակամնչս ձեր, քո և Հարազատիդ, ընթերցայ
“զկտակն իմ, յորում թողեալ էի ձեզ զամենայն ինչս իմ,
“զոր լուեալ ձեր յարտասուս հարայք ի խնամոցս որ առ ձեզ,
“և ձեռամբ իսկ ձերով ծրարեալ կնքեցի զայն ի պատրուակի,
“հանդերձ կարեւոր հաւատոնօք, և պահեցի զայն ի գրասե-
“ղանիս ընդ կրկին փականօք և զրանալիս նոցին ի ձեռս քո
“յանձնեցի, և պատուիրելով պատուիրեցի քեզ պահել զայն
“զգուշութեամբ. և ո՞չ ապաքէն ցուցանելով ցուցի ձեզ մի
“առ մի զամենայն ինչս իմ զոր պահեցի անդ. ապա չկայր
“ձեզ բնաւ տեղի ասելոյ պարծանոք իմն, թէ ոչ երբէք ծնաւ
“ի սիրտս մեր հնտաքրքրութիւն գիտելոյ և քննելոյ զոր ինչ
“պահեալ կամ ծրարեալ էր ի նոսին, գիտելով ձեզ զայն
“արդէն . . .

“Տեսանե՛ս զանտեղի և զանիրաւ մեղադրութիւնդ որ զի-
“նէն . . . որպէս և Հարազատիդ, զոր իբրեւ հարցի թէ ըն-
“դէր ոչ զգուշացաւ պահպանութեան ընչից, թէպէտ և
“նա ոչ իբրեւ զքեզ զլացաւ, թէ անմանօր էր իւրն պահե-

“ չոցն ի գրասեղանին, այլ ասաց թէ վասն զի քեզ յանձնեցի
“ ես զտենեակն իմ և զամենայն ինչս իմ որ ի նմին. ապա
“ քեզ պարտ էր զգուշանալ պահպանութեան նոցին, և թէ
“ ոչն ածէր ինքն ի քէն խառնիլ յայն, քեզ միայն հաւա-
“ տալով զայն, Եւ իրրեւ յիշեցուցի նմա զկրկին գրով
“ պատուէրն իմ առ երկոքին հարազատդ, յանձնել զամենայն
“ ինչս իմ ի ձեռս Պարոն Միքայէլ Մանանեանի, ասաց նա՝
“ թէ ի ժամանակի փակելոյ վարժարանին և վաճառելոյ
“ իրաց նորին ոտիպի ինքն ի հրամանէ Պատրիարքին գնալ
“ ի Պոլիս, թողլով զամենայն ինչ ի խնամս քո բոլորովին։ Ահա
“ միսիթար ինձ պատասխանի տուեալ ինամանէ. թողից յիշել
“ ասա և զայլ միսիթար պատասխանի նորին, զոր ետ ինձ
“ նա և յայլ խնդիր բանի։ . . .

“ Յուցից քեզ և զնոտի պատճառանաց որովք արդարա-
“ յուցանես զքեզ ի պակասութիւն պարտուցդ։ Ասես դու
“ թէ՝ “ Ի վերջնում անդ թշուառական աւուր փակելոյ
“ վարժարանին և փոխադրութեան գոյիցս մերոց տագնապաւ,
“ և զձեր կամ կարասի ի ձեռն հաւատարիմ կարծեցեալ
“ արանց տուաք ժողովել և ծրարել, և առաքեցաք ի տուն
“ Պարոն Միքայէլ Մանանեանի։ Բայց թէ զինչ ինչ արդեօք
“ դոյն և առաքեցին, կամ թէ զինչ ինչ եկաս ի տուն
“ Մանանեանի՝ ես ոչ գիտեմ, զի խօթ և ի մեծի տագնապի
“ էի ես յաւուրն յայնոսիկ։ Թող զի և կարծէի իսկ ոչ՝ թէ
“ այնքան ծանրագնոյ իրք ծածկեալ դուցեն ի գրասեղանի
“ անդ ձերում, ապա թէ ոչ՝ անշուշտ զայլ առանձին խնամս
“ ոչ խնայէի անձամբ հակելով բան կարի։ ”

“ Այլ ես ասեմ և հաւատամ, թէ արդարեւ ի ձեռն
“ հաւատարիմ կարծեցեալ քեզ միայն արանց, դաւաճան
“ երէց եղբօրդ, ետուք ժողովել, և առաքեցէք ոչ ի տուն Պա-
“ տրոն Միքայէլ Մանանեանի, բան պատուիրանի իմում, այլ
“ ի տուն դաւաճանին, որ ի Դժոխք անուանեալ փողոցի . . .
“ ապա յետ աւուրց ինչ և յետ բազում հակառակութեան,
“ և բանութեամբ թափեալ զայն ի ձեռաց անատակին առա-
“ քեալ էք ի տուն Պարոն Մանանեանի, և թէ զինչ առա-

“ քեզ էք անդ յիշատակեցից զայն ապա։ Եւ թէ արդարեւ
“ խօթ էիր դու յաւուրսն յայնոսիկ, վարակեալ էիր ցաւօք
“ ընտանի դաւառանին . . . թէպէտ և ազդ լինի քեզ ի բա-
“ րեկամէդ զգուշանալ և ի բաց կալ յանզգամէն, այլ դու
“ չես անտացեալ նմա, մանաւանդ թէ և թշնամի իմն համա-
“ րեալ ես զնա. թէպէտ և ծանեար ապա զսխալանդ,
“ բայց յոյժ անագան, և ծանր ծախիւք այլոց, իմոյ ասեմ,
“ գողացեալ ընչիւք իմովք։ . . .

“ — Սակայն գիտէ արդէն Սրբութիւն ձեր, ասես, զի և
“ յիմէ արկեղէ որպիսի գումար արծաթոյ գողացաւ, և յոր-
“ պիսի անհնարին ազէտս տարակուսանաց անկոյ տառա-
“ պեալս յայնպիսաւմ տառապանաց ժամանակի։ ”

“ Այո՛ իմացայ ես և զայն գողութիւն անզգամին, այլ
“ գիտացէր և դու զի գումարն այնր արծաթոյ եւս ի քառակի
“ իմմէ էլ, յերկամեայ վաստակոցս, զոր անհնարին միշտք
“ ճանապարհի, և մահացուցիչ մուրողութեամբ, հանդերձ
“ ցաւօք և հեծութեամբ վաստակեցայ ես. քանզի յայն եր-
“ կամեայ ժամանակի և այնպիսի տաժանելի կենաց 10,000 ֆ.
“ ի ձեռս բերի, զոր և անդէն ի ձեռս ձեր անցուցի ի կարեւոր
“ ազէտս մեր հասարակաց. իրրեւ դարձայ ես ի Փարիզ և ոչ
“ մի ֆրանք յարծաթոյ անտի դոյ. ծախեալ էր այն ամենայն
“ ի ազէտս ձեր միայն . . . թող զ2,500 ֆրանքս զոր տուեալ
“ էի հարազատիդ փոխ, և զոր չգիտեմ թէ ե՞րբ ունի հատու-
“ ցանել. և թող զայլ կորուսան արծաթոյս, զոր վասն անկա-
“ րուստ պահելոյ զձերն ի դրամափոխութեան զոհեցի զիմս,
“ իրրեւ 5,000 ֆրանք, թողով զայն առ Պ. Մ. Մոմնեան . . .
“ և իրրեւ խնդրեցի ես զտանել զոնէ զինչս իմ առանձին,
“ զոր հաւատացեալ էի քեզ, զոր զգրաւեալն իմ բաց և
“ թափուր յամենայն ընչից 2,500 ֆր. ածէից, և ի կարեւոր
“ հաւատեաց, զոր պահեալ էին անդ ընդ կրկին փականաւք,
“ և ոչ բանալիք նոցին կային, նամականիս և գրուածս առ
“ և անդ գրուեալք, մատեանքս պակասեալք, յորս կորուսան
“ դարձեալ 1,000 ֆրանքի, թող զկորուսան զգեստուցս . . .

“ Ահա այսչափ և այնպիսի դոյ ես զինչս իմ, զհաւա-

“ տացեալս պահպանութեան քում . . . աւաղ վստահու-
“ թեանս իմում ։ . . .
“ Ասատնոր ի դէպ համարիմ յիշեցուցանել քեզ զերբեմն
“ գրեալդ առ իս ի Տփխիս և զպատասխանին իմ առ ձեզ
“ ի Փարիզ, որոց և այս են օրինակք .

“ — Արդարեւ սիրէին զՁեզ երկինք, ո՛վ Գերապատիւ Հայր,
“ որ ի գութ խանդաղատեալ ընդ ազգս ազգս չարակրու-
“ թեանցն զոր կրեցէք ցարդ վասն սիրոյ Հայրենեաց, խնա-
“ յեցին ձեզ դէթ մի՛ և այսմ անհնարին աղետից լինել
“ ակամատես, և մի՛ ըմպել ընդ մեզ եղկելեացս զբաժակս
“ զայս անտանելի դառնութեան ։ ”

“ Ահա գրեալդ առ իս ի Տփխիս ։

“ — Այդոցիկ վշտաց և նեղութեանց որոց տարայք դուք
“ առանձին և տանիք տակաւին ոչ անկցորդ եմ ես հոգւով
“ և մարմնով, միոգին անդադար զձեզ հոգալով, և միւսովն
“ առաւել քան զձեզ տանելով, և զայս առանց ծանուցանե-
“ լոյ ձեզ ցարդ, վասն չյաւելլոյ ձեզ առաւել հոգ ի զուր .
“ քայց արդ ի դէպ համարիմ զկրից մարմնոյս ծանուցանել
“ ձեզ ի սին համառօտիւ ։ . . . . . .
. . . . . .
“ Ապա պահեալ են և ինձ միշտ և յամենայն ուրեք վիշտք և
“ նեղութիւնք զանազան եղանակօք ։ ”

“ Եւ ահա պատասխանին իմ առ այն ի Փարիզ . տեսանե՛ս
“ թէ զի՞նչդ արդարանամ ես ի բանս իմ ։ . . .

“ Ապաքէն չէին ինձ կամք առնել ընդ այս յիշատակու-
“ թիւն, եթէ չէր քո բռնադատեալ զիս խօսել զճշմարտութիւն,
“ թէպէտ և գիտեմ զի չէ և այս ինձ ի մխիթարութիւն,
“ անհաւան գոլով այսմ անձնասիրութեան . . . բաւական
“ և շատ համարիմ ի մխիթարութիւն արտաս զմտացս գիտակ-
“ ցութիւն, հայեցեալ ի լրումն պարտուցս առ հոգեհարա-
“ զատ եղբարս իմ, յոր չպակասեցայ երբէք, և որում
“ վկայեն գործք իմ հաւատոյ. իսկ հաստատումն ընդ այն
“ ի Տեառնէ միայն ակնկալիմ, թողով մարդկան զանազան

„ քննութիւն և զուշիզ դատաստան յընթեռնուլ զպատմու-
„ թիւնս . . .

„ Մաղթելով քեզ ի Տեառնէ քաջողջութիւն և բարօրու-
„ թիւն կենաց,

„ Մնամ

„ Սիրելութեանդ

„ Ի Փարիզ. 12 սեպտ. 1860.

„ Հոգեհարազատ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՂՈՐԵԱՆ.

Առաքէ Սարգիս վարդապետ զվերոյիշեալ թուղթ իւր առ Խորէն վարդապետ ի Թէոդոսիա, բայց չգիտելով զդարձ նորա անդ ի Պօլսոյ՝ ուղղէ նա զայն առ Գաբրիէլ վարդապետ, և զայն բաց և խորհրդով, յընթեռնուլ և նորա զայն տեղեկանալ զվիճակէ իւրմէ, և լեցի արդեօք կարեկից այնմ . . . ոչ բնաւ. չիմանալոյն առնէ նա զայն . . .

Ահա սեպհական բնաւորութիւն և Գաբրիէլ վարդապետի Այվազեան . . .

Պատասխանի Խորենայ վարդապետի տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի, յորում խոստովանի զճշմարտութիւն զգաւակսին ի պարտս իւր, և ընդ այն խնդրէ թողութիւն, և խոստանայ հաստատել զվնասն, առ ի զերծանիլ ի քննութենէ և ի դատաստանէ աշխարհի, օրինակ զայս.

„ Գերապատիւ Հայր մեր և Անձկալի վարդապետ.

„ Որչափ մեծ եղեւ ցնծութիւն սրտիս յընդունել իմ անդ
„ զցանկալի գիր Սրբութեանդ, նոյնչափ և առաւել մեծ
„ եղեն ինձ ցաւք ի նոր ի նոր լուր վշտաց՝ որոց տարայք

“ Ի վերջնումդ նժդեհութեան . . . Ընդ այն մանաւանդ մոր-
“ մոքիմ Ի սրտի՝ զի և ես ինքն իմովսանն վշտացուցի զՍիրելիդ
“ Ի Հարս՝ միամտութեամբ պատրեալ չընտանի դաւաճանէն,
“ որպէս ասէք, և եղէ ակամայ պատճառ կորստեան արծա-
“ թոյ ձերում, ընդ որ խիղճ մեծ է ինձ, և չգիտեմ զիարդ
“ համարձակել խնդրել առ Ի ձէնջ զներողամիտն թողութիւն
“ հայրենի . . .

“ Բայց ցանկացեալ միանգամայն հաստուցումն ինչ իմով-
“ սանն առնել այնքանեաց վնասուց զոր կրեաց Գերապա-
“ պատուութիւնդ, աղաչեմ առաքել ինձ զցուցակ համօրէն
“ կորուսելոցն ձեր Իրաց, նշանակելով զգինս Իւրաքանչիւր,
“ զի և ես՝ ըստ աղքատին կարողութեանս՝ հաստուցից հետ-
“ ըզհետէ զոր ինչ անհոգութեամբս կամ մոռացութեամբ
“ թողի այլոց գողանալ ։

“ Այսու օրինակաւ գուցէ լիցի ինձ արդարանալ և առաջի
“ անաչառ դատաւորանի ապագայից զոր յիշեցուցանէք
“ Ի թղթիդ ։

“ Զի ահա ինքնայօժար փափաքեմ տուժել զգողն զայնո-
“ ցիկ յորոց և ես ինքն մերկացեալ եղէ ։ . . .

“ Ապա ուրեմն կրկին և կրկին աղերսելով զձերդ հայրենի
“ Ներողամտութիւն ընդ անցեալն, և ընդունել աղաչելով զոր
“ Ի փոխարէն առաջարկեմ սատ հնարս,

“ Մնամ

“ Գերապատիւ Սրբութեանդ

“ Թէոդոսիա . 30 Նոյեմբ. 1860.

“ Անձկալից որդի

“ ԽՄՐԷՆ . ”

Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ թղթոյ Խորենայ վարդապետի, յորում ցուցանէ զմխիթարութիւն իւր որ ընդ

ճշմարիտ խոստովանութիւն նորա, ներէ նմա ընդ միսս իւր, չպահանջելով ի նմանէ ինչ հատուցումն, այլ ոչ ներէ անհաւատարմութեան նորա, թողլով զայն անաչառ քննութեան և ի խրատ այլոց, օրինակ զայս.

« Յարգոյապատիւ Հայր և Միրեցեալ Եղբայր.

« Զցանկալի պատասխանին Ձեր, տուեալ յ30 Նոյեմբերի
« անցելոյն, ընկալայ ի 1 յունվարի տարւոյս, և մխիթարե-
« ցայ ընդ ճշմարիտ խոստովանութիւնդ, որ ընդ պակաս-
« թիւն պարտուցդ . . . Եթէ յառաջագոյն խոստովանեալ
« էիք զճշմարտութիւնն, ոչ տայիք ինձ ընդունայն աշխատու-
« թիւն, կրկին և կրկին գրելով առ ձեզ, և ոչ ցաւէիք դուք
« ընդ այնպիսի գրութիւնս իմ . . . թէպէտ և այն խրատ էր
« ձեզ և ոչ յանդիմանութիւն կամ պահանջումն ինչ ի ձէնջ,
« զի գիտացի և գիտեմ ես տանիլ միսաւոց և մեծամեծ
« միսաւոց, որպէս և գիտէք իսկ . . . և զի ցաւիլն իմ
« ոչ ընդ կորուստ գնոյ ընչից էր և է, այլ ընդ յիշատակ
« բարեկամացս . . . և մանաւանդ ընդ կորուստ կարեւոր
« հաւատոցս, զոր ի ձեռս բերել վերատին դժուարին է ինձ
« յոյժ, հայեցեալ յայժմեան վիճակն իմ յորում կամ
« այսօր . . .

« Այլ զինչ եղեւ եղեւ, շնո՛ւ է զի միսան իմ օգտակար ձեզ
« լիցի, և ինձ ա՛յլ ցաւս մի՛ յաւելցի, և ի խոստմանէ ձերոյ
« այսի, հատուցանելոյ զգին կորուսելոց ընչից ասեմ . . .
« թէպէտ և այսու ոչ արդարացիք առաջի անաչառ դատաս-
« տանի ապագայից . . . քանզի խնդիրն իմ ոչ զընչից է
« կամ զգնոյ նոցին, այլ զվատահութենէ իմոյ և զհաւա-
« տարմութենէ ձերոյ, ապա ուրեմն աւելորդ է խոստումնդ
« հատուցման ընչից, մանաւանդ թէ յաւելումն ցաւոցս։

« Այսչափ ինչ շնո՛ւ լիցի ասել և զցաւալեացս այսոցիկ.
« կնքեցից զթուղթս ըղձիւք ի մուտս Նորոգ տարւոյս, մաղ-
« թելով ձեզ ի Տեառնէ երկար և քաջառողջ կենդանութիւն

„ Հանդերձ յաջողութեամբ ամենայն գործոցդ որ ի փառս
„ Աստուծոյ և յօգուտ ազգին մերոյ ։

„ Մնամ

„ Սիրելութեանդ

„ Փարիզ. 13 յունվարի 1861.

„ Հոգեկցորդ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՊՈՐԵԱՆ. ”

Թուղթ Սարգսի վարդապետի առ Պարոն Մկրտիչ Մոմճեան, յորում ծանուցանէ նմա զվիճակ իւր, զանկարութիւն արծաթոյ իւրոյ ի նմանէ, յիշեցուցանէ նմա զպայման թողլոյ առ նորա զարծաթ իւր, զիտառուն և զպակասիլ նորա յայն, հանդերձ նոր առաջարկութեամբ և պահանջմամբ շահու նորին, և այլ կարեւոր տեղեկութեամբ, օրինակ զայս.

„ Մեծապատիւ Տեառն և կարեկից բարեկամի իմոյ
„ Աղայ Մկրտիչ Մոմճեանի ողջոյն բազում սի-
„ րոյ և օրհնութիւն ի Քրիստոս ։

„ Ի դարձին իմում այդր ի Տփխիսէ չունելով բաւական
„ ժամանակ խօսելոյ ընդ ձեզ երկար, ծանուցանելոյ ձեզ
„ զհանգամանս իմ, այլ այսչափ միայն ծանուցի թէ կարօտիմ
„ ես արծաթոյ, և խնդրեցի ի ձէնջ 2,000 ֆրանք զշահ ար-
„ ծաթոյս, իմանալով թէ չէր մարթ ձեզ յայնժամ հատուցա-
„ ցանել ինձ և զդրամագլուխն միանգամայն, սակս պակա-
„ սելոյ արծաթոյ ի պետութեանդ. ասացիք ինձ թէ չկարէիք
„ ի ժամուն տալ ինձ 2,000 ֆրանք, այլ 1,000 ֆրանք միայն,
„ զոր և եառաք, և խոստացայք յղել ինձ ի Փարիզ յետ քանի
„ մի աւուրց և այնչափ եւս ։

„ Երբեւ անցին աւուրք ինչ և չընկալայ ի ձէնջ զայն ըստ

“ խոստմանդ, գրեցի առ ձեզ թուղթ ի 18 յուլիսի անցելոյ,
“ և առաքեցի զայն ձեռամբ Ամբրոսիոս վարդապետի մերոյ,
“ ծանուցանելով ձեզ ի նմին զցաւալից հաղամանս իմ առ,
“ և զկարօտութիւնս արծաթոյ, ակնուելով գտանել դար-
“ մանս ցաւոցս ի կարեկից բարեկամէդ, այլ ըստ բաղդին իմոյ
“ վրիպեցայ յակնկալութենէս։

“ Գրեցի ապա առ Ամբրոսիոս վարդապետս մեր այդր իմա-
“ նալ և ծանուցանել ինձ զպատճառս լռութեանդ. ծանոյց
“ ինձ նա այսր, թէ անմարթ էր ձեզ ի ժամուն հատուցանել
“ ինձ զդրամադլուխն, այլ միայն զչահ նորին, և զայն
“ խոստացեալ էիք առաքել ինձ ձեռամբ նորին։

“ Մինչդեռ մնայի ես անհամբերութեամբ գալստեան նորա
“ և ընդունելութեան արծաթոյն ի ձէնջ, ահա եկն նա, և
“ երեր ինձ ոչ զխոստացեալդ արծաթն, այլ նոր և անակնկալ
“ լուր . . . որ և յաւել ինձ ցաւս սրտի ի ժամանակի կարօ-
“ տութեանս և նեղութեանս իմում, պատմելով ինձ զտուեալդ
“ պատճառ, որով պակասեցայք դուք ի կատարումն խոստ-
“ մանդ, այս է, սակս չընդունելոյ ձեր ցարդ զյանձնարա-
“ բեալս արծաթն որ առ այլոյ, և զգին մատանեայս ի զնողէ
“ նորին, և այլն և այլն։

“ Ընդ այս լուր զարմացայ և ցաւեցայ ես յոյժ յոյժ, յանձ-
“ նելով իմ ձեզ այդր 40,000 դահեկանի թղթադրամս և
“ 60,000 դահեկանս զգին մատանեայս, զոր վաճառեալ էիք
“ ումեք այդր, և զարծաթն որ անտի անցուցեալ էիք ի հաշիւ
“ ձեր, վասն որոյ ետուք ինձ մուրհակ պարտուցդ 100,000
“ դահեկանի, և խոստումն յորժամ ի Ջանէր ֆրանքն ցն դա-
“ հեկան՝ ունէիք փոխել զ100,000 դահեկանն, յոսկեդրամ
“ Եւրոպացւոց և յանձնել ինձ զայն ի դարձին իմում այդր.
“ այսպէս գիտէի ես զարծաթոյ իմոյ առ ձեզ, և այսպիսի
“ պայմանաւ, և վասն այսորիկ դարձ արարի ես ընդ այդր
“ և ոչ ընդ այլ ճանապարհ։

“ Բայց այժմ լսեմ թէ տակաւին ոչ էք ընկալեալ զյանձ-
“ նարեալս արծաթն իմ առ որ այլոյ, և թէ մատանին իմ
“ մնացեալ է ի վերայ ձեր, և թէ ոչ տան նմին այժմ այնչափ

“ զին, և այլն, և այլն. և ահա ընդ այս նոր և անակնկալ
“ լուրն զարմացայ, ցաւեցայ և ցաւիմ ես յոյժ յոյժ, չկա-
“ մելով բնաւ զի վերադիցին այլք վասն շահու իմոյ, մանաւանդ
“ կարեկից բարեկամք իմ և ճշմարիտ ազգասէրք, յորոց մի
“ զձեզ ճանաչեմ, թէ և ի վերջին կարօտութեան իցեմ, յոր
“ և եմ այժմ. չունելով արծաթ ի ձեռին հարկաւորեցայ
“ ընդունել զշնորհս կարեկից բարեկամին իմոյ Պ. Միքայէլ
“ Մանանեանի, բնակիչ և կերակրիչ ի տան նորա. թողից
“ ասել զկարօտութենէ կարեւոր զգեստուցս, և զայլ ինչ
“ կարեւորաց, որոց պէտս ունիմ և չունիմ արծաթ առ
“ ի հոգալ զայն։

“ Արդ՝ առ ի փարատել յինէն զայս ցաւս սրտի, և ի զար-
“ գարման տանել կարօտութեանս իմոմ ըստ կարի, խնդրեմ
“ ի ձէնջ դարձուցանել ինձ յետս զմատանին իմ ապահով
“ իմն միջոցաւ, եթէ արդարեւ ի վերայ ձեր մնացեալ է այն,
“ և տաջիք ինձ այլ մուրհակ 40,000 դահեկանի պարտուց,
“ եթէ չիցէ ձեզ մարթ ի ժամուս հատուցանել ինձ զայն,
“ և ես դարձուցից ձեզ յետս զմուրհակն 100,000 դահեկանաց
“ պարտուցդ։ Իսկ վասն շահու նորին ցարդ, հատուաջիք
“ որչափ արդար դատիջիք. թողում ես զայն կամաց ձերոց.
“ զի գիտացի և գիտեմ ես տանիլ վնասուց և վշտաց... ակ-
“ նեալով ի Տեառնէ մխիթարութեան, և խրատուցեալ ի դա-
“ տաստանէ մարդկան, յընթեռնուլ զայս։

“ Աղաչեմ՝ զձեզ կատարեցէք փութով զայս խնդիրս, զի
“ հանգեայց ես ի հոգոց սատի։

“ Ողջունեալ զհամօրէն ազնիւ գերդաստանդ,

“ Մնամ միշտ

“ Մեծապատիւ Տէրութեանդ

“ Ի Փարիզ. 1 Նոյեմբ. 1860.

“ Աղօթարար ծառայ

“ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՐԵԱՆ.”

Ց. Գ. . . . . .

. . . . . .

. . . . . .

Պատասխանի Պ. Մ. Մոմճեանի տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի, յորում խոստանայ դարձեալ հաստատել և զմիւս մասն շահու արծաթոյն, յիշեցուցանէ նմա զսէր, զհամարումն, զջանս և զփոյթն զոր ունէր երբեմն զնմանէ, հանդերձ նպաստիւք, և խոստովանի զպարտս իւր առանց պատճառաց և պայմանաց հաստատել, միայն ժամանակ խնդրէ, օրինակ գայս.

« Գերապատիւ Սրբազան Հայր իմ.

« Անցեալները Ձեր Սրբութեան նամակը ընդունելով բոլոր
« գրելոցդ տեղեկութիւն ունեցանք, և ամիսէ մը ի վեր է որ
« կը բաղձամ պատասխան գրելու, բայց լո՛կ պատասխան
« առանց փոքր ինչ նպաստից չըլլալու համար կը փութայի
« որ գոնէ հազար ֆրանք մը մէկ տեղ ուղարկելու. բայց
« որովհետեւ այսօր չի կրցի հասցուցանելու, վասն որոյ փու-
« թացայ այսօր երկտող գրութեամբս ծանուցանել Սրբու-
« թեանդ որ յառաջիկայ շոգենաւով ընդունելոց էք, կամ
« փոխանակագիր կամ Էմանէք. ուստի ներելով այս մասին
« մեր յապաղելոյն, կը մնայ ծանուցանել սրբութեանդ մեր
« տալիքի վերաբերեալ խնդրոյն.

« Յայտնի է Սրբութեանդ մեր նուաստութեան Ձեր վը-
« բայ ունեցած անկեղծ սիրոյ և համարման որ ատիճան
« լինելը և այս կրնաք հաւատել այնու, որ երկու տարի
« յառաջ երբ ես տակաւին ձեզի պարտական չէի, ոչ ապա-
« քէն ձեր ունեցած բոլոր հոգը և վիշտը ինձի համարելով
« որպիսի ջանիւ և փութով և նպաստիւք կը հոգայի և կը
« դարմանէի, և ճշմարտութեամբ սրտի կըսեմ որ ինձի մեծ
« մխիթարութիւն կըզգայի, և ամենեւին փոյթ չէի ընէր և
« աչքիս ըստակ չէր երեւար, միայն թէ ձեր Սրբութեան
« սքանչելի ջանքը և Ազգասէր եռանդը ըստ կարի մխիթա-

“ բելով, երախտապարտ չի մնանք։ Արդ՝ գիտեմ ստուգիւ
“ որ կը ճանաչէք և կը հաւատաք որ տակաւին նոյն Մկրտիչ
“ Մոմճեան ձեր անզուգական բարեկամն եմ, և ձեր այժմեան
“ նկարած վիշտը և տառապանքը տեսնելով և լսելով սաստիկ
“ կըվշտանամ. բայց դարման մատուցանելու համար ո՛չ թէ
“ կըժխտեմ, որովհետեւ հիմայ ընելիքս ոչ թէ ազգասիրական
“ պարտիք՝ այլ անձնական հատուցանելի պարտիք է, բայց
“ զանգաղելոյս պատճառը՝ ժամանակիս ողբմելի պարագայից
“ գէշութիւնն է, որ կըզլանայ ըստ արժանւոյն ձեր պիտոյքը
“ հոգալ։

“ Ուրիշ գրելիքներուս գալով առաջակայ շաբթու ընդարձակ կը գրեմ, այսօր միջոցը սուղ ըլլալուն երկար չի կրցի գրելու։

“ Մնամ

“ Արքեպիսկոպոս

“ Պոլիս. 1860. դեկտեմբեր. 19.

“ Խոնարհ ծառայ

“ ՄԿՐՏԻՉ ՆԻԿ. ՄՈՄՃԵԱՆ.

“ Լրութիւն գերդաստանիս անձկանաք հոմբոյը Սրբոյ
“ Աչոյդ մատուցանեն։ ”

ԳԼՈՒԽ ԻԸ.

Պատասխանի Գաբրիէլի վարդապետի առ Սարգիս վարդապետ. միխիթարոբիւն անուն, ցաւալից շոբ Էջմիածնի, շնորհաւորութիւն նոր տարւոյ, և. գովութիւն արժանեաց. — Պատասխանի Սարգսի վարդապետի առ Գաբրիէլ վարդապետ. խրախուսակցութիւն ընդ ընդունելութիւն և. աշխատութիւն նորա, յիշատակութիւն զցաւալից վիճակէ Էջմիածնի, ազգարարութիւն և. նախատեսութիւն, և. աշաղուռն պատճառքեան. — Թուղթ շնորհաւորութեան նոր տարւոյ. յիշատակութիւն վշոտաց. — Տեղեկութիւն զվիճակէ Գաբրիէլի վարդապետի և. ուսումնարանի նորա. — Պատասխանի Գաբրիէլի վարդապետի առ Սարգիս վարդապետ. խրախուսութիւն և. շնորհակալութիւն ընդ գրութիւն նորա, ցաւ և. բողոք ընդ այն վիճակ զաւանայն. — Պատասխանի Սարգսի վարդապետի առ Գաբրիէլ վարդապետ. անհաւանութիւն ձշմարտութեան, զոբ աշխատութիւն, պակասութիւն զգայութեան և. շնչեան յանցիդիմանութիւն. — Թուղթ շնորհաւորութեան Գաբրիէլի վարդապետի առ Սարգիս վարդապետ. ցաւալից շոբ Հայաստանի և. Էջմիածնի. շնորհակալութիւն պատասխանոյ. — Փնտրութիւն զգնացից Նալպանտեանի և. Գաբրիէլ վարդապետի. — Նարնակք հրաւիրանաց ի Պատրիարքէն և. ի Գէորգ Պէյէն առ Սարգիս վարդապետ. հրաժարական պատասխանի նորին. — Թուղթ Էպրոս Տիկնոջ Երամեան առ Սարգիս վարդապետ և. պատասխանին նորա առ նա. — Աղդարանաշ Սարգսի վարդապետի ընդ հրաժարել իւր.

Պատասխանի Գաբրիէլի վարդապետի առաջեալ թղթոյ Սարգսի վարդապետի, յորում ծանուցանէ զմխիթարութիւն իւր որ ընդ շնորհաւորութիւն նորա. տայ նմա զցաւա-

լից լուրս Էջմիածնի, և շնորհաւորէ նմա զնոր տարի, հանդերձ գովութեամբ, օրինակ զայս.

« Գերապատիւ Տէր և Հայր ցանկալի.

*« Քան զամենայն բարեմաղթութեանց զյիշատակս որ նո-
« րոգեցան յաւուր տարեկանի Սրբոց Հրեշտակապետաց՝
« քաղցրագոյն ինձ ընծայեցաւ նամակն պատուական տողեալ
« ի նմին աւուր ի բազմարդիւն Հօրէդ։ Եւ յիրաւի, քանզի
« թէպէտ և իմ եւս միակ միխիթարութիւն ի Տառնէ է, և
« յանարատութենէ մտացս խղճի, բայց սրտիս անդորրու-
« թեան և մեծապէս սատար լինի գիտելն եթէ Գեր. Հայրդ
« իմ Սիրելի ոչ միայն ի քաջողջութեան վայելէ, այլ և ընդ-
« վաստակս մեր յօգուտ ազգիս տառապելոյ խնդայ և սիրա-
« լի, և աղօթող և օրհնարան մեր է յարաժամ, թէ և ի հե-
« ռուստ։

« Նորալուրք Էջմիածնի ցաւալիք են որպէս միշտն, և օր
« քան զօր աւելի եւս ողբալիք, զորս և ոչ յագէր ի պատմելոյ
« Պարոն Միրաքով ի գալ իւրում այսր առ մեզ յանցելումն
« օգոստոսի։

« Յետ այնորիկ անօրէնն Նալպանտեան հասեալ անձամբ
« յԷջմիածին՝ եւս քան զեւս վառեալ բորբոքեալ է զԿաթո-
« ղիկոսն հակառակ ինձ և գործոցն իմոց. սակայն Պետու-
« թիւնն քաջահմուտ գոլով արդ բարուց և դիտմանց և ըն-
« թացից Կաթողիկոսին, ոչինչ ընդհատ յազգայնոցս առ-
« հասարակ որ աստ և ի Տփխիս և ի Պոլիս քաջալերէ զիս
« անխռով և անսրկիւղ յառաջ վարել զգործն յորս ձեռ-
« նարկեալ է իմ յօգուտ ազգի և եկեղեցւոյ մերոյ։

« Այլ ամենայն յաջողութիւն ի Տեառնէ է, և ի նա միայն
« յուսացեալ եմ ես։ . . .

« Ի ժամանել նամակիս ի ձեռս Գեր. Հօրդ՝ հասցէ անշուշտ
« և ամանորն 1861 տարւոյ, զոր այժմէն մաղթեմ Ձեզ զի-
« յաջողութեամբք ազգասիրական ըղձից Ձերոց, և միխիթա-

„ բուխեամբք որոց արժանի է՝ Ձերոյդ Բազմարդիւն վաս-
„ տակովք, և զոր Աստուած միայն և խիղճ Ձեր անարատ
„ կարող են լի բովանդակ մատակարարել։ Սովին պատեհաւ
„ եւս հայցեմ և ի Ձէնջ յաղօթս յանձախել վասն իմ, զի
„ երկայնամիտ համբերութեամբ և անխոնջ և անվհատելի
„ արիութեամբ վաստակեցից ցորչափ իցեմ կենդանի յօգուտ
„ ազգիս, և այնու եւս նպաստ եղէց փոքր ի շատէ միխիթա-
„ րութեան Ազգաւորի Հօրդ։

„ Աղջաւնիս Սիրելեաց առհասարակ ողջ լինել ըղձանամ
„ ի սրտէ

„ Գերապատիւ Հայրութեանդ

„ Թէոդոսիա. 12 դեկտեմբեր. 1860.

„ Հոգեկցորդ

„ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ.„

Պատատանի Սարգսի վարդապետի տուեալ թղթոյ Գաբրիէլի վարդապետի, յորում ծանուցանէ զմխիթարութիւն և զինդութիւն իւր ընդ լուր արժանաւոր ընդունելութեանն նորա յազգայնոցս Նախիջեւանի, և ընդ դոմելի ուխտաւորութիւն նորա որ ի քաղաքի անդ. յիշեցուցանէ նմա զաղքատի վիճակ Էջմիածնի որ ի թուղթն իւր առ նա յատաջագոյն, զոր և երկրորդէ վերատին, հանդերձ կարեւոր ազդարարութեամբ և նախատեսութեամբ, և ասպէ զչնաչել նորա զայն, օրինակ զայս.

„ Գերապատիւ Հայր և Սիրելեալ եղբայր.

„ Զանկալի պատասխանին Ձեր, տուեալ ի 12 դեկտեմբե-
„ ի ունկնդրեցի, ընկալայ ի 1 յունվարի, և միխիթարեցայ լու-
„ հանդամանաց ժամանակին, և լուս ազիւան վիճակին...

“ և առաւելապէս մխիթարեցայ և խնդացի ընդ յուր արժա-
“ նաւոր ընդունելութեան Ձերոյ յաղգայնոցս որք ի Նախի-
“ ջեւան, և ընդ գովելի աշխատութիւնդ որ ի քաղաքի անդ։
“ Արդարաւուր արասցէ Տէր զայն ի փառս անուան իւրում և
“ յօգուտ կարօտելոյ ազգիս։

“ Զցաւալից և զողբալի վիճակ Էջմիածնի ծանուցեալ եմ
“ Ձեզ յառաջագոյն ի թուղթն իմ առ Ձեզ ի Տփխիսէ, յորոյ
“ զմին յիշատակեցից առ, զգրեալն յ31 յունվարի 1860
“ ամի, և անտի հատուածս ինչ բանից միայն, որք ունին
“ օրինակ զայս.

“ — Եւ որոմեցայ ընդ յիշատակութիւն կորուսեալս պա-
“ տահութեան, ազատութեանս ասեմ ի Վանայս Անիրաւեն,
“ և ի Շուամնայ Բռնաւորեն։ ոչ այլոմբն հանդերձ։ . . .

“ — Աւա՛ղ կորուսեալս պատահութեան, և մինաւանդ
“ անհատատութեան մտաց մարդկան . . . Թողից ասել զիծոյ
“ չորրորդին, ընդ որով արկին զՁեզ շարաշահութիւն և անձ-
“ նասիրութիւն անշուշտ։ . . . Ո՞չ ապաքէն յարգասեաց անտի
“ տեսանէք դուք ցաւօք սրտի զԱրէլ վարդապետ խորհրդա-
“ կան Կաթողիկոսին, և եպիսկոպոս ձեռնադրեալ ի նմանէ;
“ յառաջքան զձեզ, հանդերձ այլ եօթն նմանեօք նորին, և
“ խոտեալ տագնապիք դուք ի շարախօսութեանց Նալպան-
“ տեանի և համախոհից նորին թշնամեացդ։

“ Աւա՛ղ բաժանման, ո՞չ ապաքէն ամենայն միտքդ մեր և
“ նախատինք անտի ծագեցան։ ”

“ Յո՛ւշ լիցի ձեզ դարձեալ երբեմն ասացեալս՝

“ — Թէ կարիցէ՞ք դուք միայն և այսր դարման տանել
“ ազգիս անմտութեան։ ”

“ Զէ՛ր և չէ՛ բան այս վայրապար ասացեալ, այլ ի փորձոյ
“ էր գիտեալ, և է իսկ այժմ հաստատեալ։ . . .

“ Ա՛հ սիրելեալդ իմ Եղբայր, եթէ ճանաչէիք դուք ար-
“ դեաք, թէ քանի՛ առաւել էին և ե՞ն վարկ, յարգ և սէր
“ իմ առ ձեզ քան զհարազատիդ, և որպիսի ցանկացող էի

„ և եմ հշմարիտ և միանձնեանաւոր փառացդ, ապաքէն առաւել
„ անապիսի խորհրդոյ իմոյ քան խորհրդոյ նորին, յորմէ և
„ այս ամենայն ցաւալից արգասիք զոր և տեսանէք իսկ։ . . .

„ Աւաղ զի ոչ ծանեաք զուք զայն, թէպէտ և ծանիցէք
„ ապա, այլ անագան . . . երանի թէ և անագան, թերեւս
„ դարման տարցի այնմ և զառաջս առցի չարութեան։ „

„ Ահա ձեզ յիշատակութիւն զցաւալից և զողբալի վիճակէ
„ էջմիածնի, զոր ամաւ միով յառաջ արարի. թէպէտ և
„ յիշատակութիւն է և ցաւոց սրտիս, և ձեզ անհաճոյ ար-
„ դեաք լսել զայս վերատին, այլ գիտացէք Եղբայրութիւնդ,
„ զի զոր ինչ վիանգամ գրեցի, ոչ կարծեաք և վայրապար
„ գրեցի, այլ գիտութեամբ և հաւատեաք, վասն որոյ և
„ ընդ այն ոչ երբէք զղջացայ և զղջանամ բնաւ, թէպէտ և
„ անհաճոյ թուիցին ձեզ բանքս, թէպէտ և հեռացին յինէն
„ բոլոր եղբարքս իբրեւ ի խիստ գրողէ, և իբրեւ ի ցամաք ինչ
„ աղբերէ։ . . .

„ Այսչափ ինչ շատ լիցի զցաւելիսն յիշատակել. կնքեցից
„ զթուղթս փոխադարձ ըղձիւք, մաղթելով ի Տեառնէ ի մեծս
„ Ներոգ տարւոյս երկար և քաջառողջ կենդանութիւն սի-
„ բելւոյդ։

„ Մնամ միշտ

„ Գերապատիւ Հայրութեանդ

„ Ի Փարիզ. 13 յունվարի 1861.

„ Հոգեկցորդ եղբայր

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՒՈՒՐԵԱՆ. „

Յառաջ քան զընդունել Գարրիէլի վարդապետի զվերոյիշեալ պատասխանին գրէ նա և այլ թուղթ մի առ Սարգիս վարդապետ, յորում չնորհաւորէ նմա վերատին զնոր տարին,

յուշ առնելով նմա զաւուրս և զտարիս վշտաց և վխիթարութեան զոր անցուցեալ էին ի միասին, այլովքն հանդերձ, օրինակ զոյս.

“ Գերապատիւ և Բազմարդիւն Հայր ցանկալի.

“ Թէպէտ և չեմ եւս ընկալեալ զպատասխանի վերջնոյ նա-
“ մակիս, սակայն ի գալ հասանել նորոյ տարեալն փութամ
“ յուշ առնել Հօրդ ցանկալւոյ զաւուրս և զտարիս վշտաց և
“ վխիթարութեան զոր անցուցաք ընդ միմեանս յարկաւ և միո-
“ բնակ ըղձիւք և ճգտմամբք և զգուծմամբք։

“ Քաղցր է ինձ հաւատալ զի իղձք և զգուծմունք և ճգտունք
“ խակ հատարակաց Եղբարցս շրջեցեան նոյնք են և զարդիս,
“ և եղիցին մինչև ցվախճան. բայց ոչ սակաւ տրտմութեան
“ է ինձ առիթ խորհելն զի ոչ և մարմնով ի միում պանդխտիմ
“ օթեւանի։ Այլ Տեառն կամք և կարգադրութիւն օրհնեալ
“ եղիցին. թերեւս նա ինքն յաջողեսցէ մեզ դարձեալ այնմ
“ հանդիպել բարօրութեան, ոչ ի հանդերձեալսն միայն, այլ
“ և ի կենցաղեսս։

“ Եւ այժմ այս միայն է ինձ ցանկալի զի ամէն ամէն
“ առնուցում զյուր քաջողջութեան Անձինդ պատուականի,
“ և թէ միսիթարիք և խնդայք ընդ վաստակս իմ յօգուտ
“ ազգիս, թէպէտ և բազմապատիկ տառապանաք և զրպար-
“ տութեամբք հանդերձ։

“ Աղօթք և օրհնութիւն Հօրդ սիրելւոյ կազդուրեցուցին
“ անչուշտ զտկարութիւն իմ, և զօրացուցին զիս ի կատա-
“ բումն պարտուցս մեծամեծաց և ծանուցն նա և յառաջիկայ
“ տարւոջս, յորում կամիմ անընդհատ առնել առ Քեզ
“ զթել նամակագրութեանցս իմոց, և որպէս մինչև ցարդն,
“ յայսմ հետէ եւս կցորդ և հաղորդ զՔեզ գտանել ամե-
“ նայնի յոր ձեռնարկեսցս է, ի վերայ հմնեն ոկզբանց ճշմա-
“ րիտն առաւեծապրութեան և ազգասիրութեան, զորոց
“ և զգործադրութեանն ճշգրիտ օրինակ ի Քեզ տեսեալ եմ

„ ի վաղուց հետէ, և ի ձէնջ ի նոյն յորդորեալ և խրախու-
„ սեալ։

„ Յետ ասուցց ինչ յղեցից առ Գեր. Հայրութիւնդ զպատ-
„ ճէն վերջնոյ նշանաւոր Կոնդակի Կաթողիկոսին առ իս, և
„ զիմոյ առ նա պատասխանեցս։

„ Թերեւս Դուք զզուեալ իցէք, և իրաւամբ, յոգոմելի
„ ընթացից գործոց ազգիս, որոց տարեւոր ժամանակք
„ ակամաւեւ և ակամէաբար եղերուք, սակայն անմոռաց
„ յուշի ունելով զարիական ոգիդ, և զանխոնջ և զհեռա-
„ տես մտադրութիւնդ, ի ճանաչել ի մօտոյ զկրաւոր պէտս
„ ազգիս, և ի վաստակել ըստ կարի և առաւել ևս զկար
„ ի գործման նոցին, ակն ունիմ թէ ցանդ ախորժելի լիցին
„ Ձեզ զրոյցքն որ հային յայժմու և յապագայ հանդամանս
„ Հայաստանեայց եկեղեցւոյ և ազգի։

„ Ի նոյոյ տարւոյս սկիզբն արացուք հրատարակելոյ
„ զօրագիրն մեր երկիցս յամեան, և առ Գեր. Հայրութիւնդ
„ եւս յղեսցուք կարգաւ հետզհետէ մէն մի օրինակս, ցան-
„ կալով զի հաճոյ զոցի յաչս ձեր։

„ Տպարանն մեր, թէպէտ և աղքատ տակաւին ի կարեւոր
„ զարդուց և ի բազմատեսակ տուից, վաստակէ անդուլ և
„ անպարապ, ուստի և Ամիրտեայ վարդապետի ոչ սակաւ
„ հատուցանէ աշխատութիւն։

„ Յաւուցմեարանին են աշակերտք 130, յորոց 12 եկին հա-
„ սին ի սկզբան ամսոյս ի կողմանց Հայաստանի, այսինքն,
„ յԱգուլեայ, ի Նուխւոյ, ի Գանձակայ, յԵրեւանէ և ի Տրի-
„ խեայ, զրեթէ ամենեքեան լիութիւնք։

„ Ոչ լինել ըղձանամ յամայր ամօք բարեկենդանութեան, և

„ Մնամ

„ Գերապատիւ Հայրութեանդ

„ Թէոդոսիա. 31 դեկտ. 1860.

„ Անձկաբէտ և անձնանուէր

„ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ.“

Պատասխանի Գաբրիէլի վարդապետի տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի, յորում ցուցանէ նախ զխրախուսութիւն և զշնորհակալութիւն իւր ընդ գրութիւն նորա հանդերձ քաղաքաքաւար բանիւք, ապա ցաւի ընդ յիշատակութիւն ստղտանաց իւրոց և բողոքէ ընդ այն, օրինակ զայս.

“ Բազմարդիւն և Գերապատիւ Հայր սիրելեալ.

“ Խրախ եղէ մեծապէս ընդունելութեամբ ցանկալի թղթոյ
“ Հայրութեանդ Պատուականի գրեցելոյ յ13 ամսոյս, և
“ շնորհ յոյժ ունիմ յաղագս սիրալիր բարեմաղթութեանցն
“ որ ի նմա.

“ Իսկ թէ զնոյն մխիթարութիւն առաւելաւն հանդերձ ընդ-
“ ձեռեալն Բազմարդիւն և շնաշխարհիկ Հայրութեանդ և
“ իմն Նամականի՝ զարդիւնս և զարդասխ աղգասիրական
“ խորհրդոցդ և ըղձից բովանդակելով հեռագիրս, որպէս
“ ակն ունիմ օգնականութեամբ շնորհացն Աստուծոյ.

“ Ընթերցայ վերատին և զբովանդակութիւն կարծեաց
“ Հայրութեանդ, զոր ի հերուն գրեալ էիք, և զորոց պա-
“ տասխանին շատ իսկ համարիմ տուեալ յայնժամ, ոչ
“ ի տհաճութիւն և ի դժկամակութիւն արդարասէր սրտիդ,
“ այլ ի փարատումն տարտղարտ և անիրաւ կասկածանացն
“ և կարծեաց թելադրելոց Ձեզ ի շոգմոդ և ի տուտակասպաս
“ արանց որ զմաձեալ էին զՁեօք ի Տիխիս, և որպիսիք թե-
“ բեւս ոչ պակասիցեն և ի Փարիզ, արք անարժանք մտադ-
“ բութեան և ընտանութեան.

“ Զարդիս զայս միայն ասացից, Գեր. Հայր. ոչ թէ զիմ ինչ
“ կարծիս պնդելով դարձեալ ասեմ, այլ զի զհայրագորով
“ սիրտ ձեր սիրեցից, և զվայրապար գայթագղութիւնդ որ
“ ընդ գնացս իմ բժշկեցից. զի նախ՝ բացէ ի բաց մերժէ և
“ հերքէ խիղճն իմ և զործ առաջի Աստուծոյ և մարդկան
“ զնախատինս չարաչահոչական և անձնասիրական, զքուս
“ տուտանայի և զքուահարելոյ սմանց նեմանեաց Ոչ Նի և Չի

“ չիներլս զանշահասէր և զանձնուրաց գնացիւք և բարուք
“ իմովք ։

“ Երկրորդ՝ անտանելի է խղճին իմում և իրացն ճշմարտու-
“ թեան հաւանիլ՝ որպէս թէ ես, և միայն ես լեալ իցեմ
“ պատճառ մոռանելոյ մերոյ ընդ լծով Երրորդին, որպէս ասէք։

“ Երրորդ՝ անհնարին է ինձ հաւանիլ՝ թէ ես և միայն ես
“ լեալ իցեմ պատճառք բաժանմանս, զոր առաջէ Հայրու-
“ թիւնդ, և զոր ապաքէն ի մեր ձեռս էր և է տակաւին՝ առա-
“ ջելի առնել և կամ բարեբաստիկ ։

“ Չորրորդ՝ ցանկամ զի հանիցէք մերժիցէք ի մտաց ձերոց
“ զայս ինչ, որպէս թէ իմ կարծեալ կամ ասացեալ իցէ
“ երբէք ուրեք՝ թէ ես միայն և ասոյ կարող եմ զարման
“ տանել ազգիս անմոռութեան ։ Ասել ասացեալ եմ թէ հարկ
“ է ինձ խոնարհանելոյ յայս կամ յայն գործ, կամ թէ
“ ես նոքա խորհրդովքն շարժեալ իցեմ և շարժիցիմ յամե-
“ նայնի, որպէս բարբանջեցին և բարբանջեն տակաւին թշնա-
“ միքն արդարութեան, Ն. և Ա. և Զ. և նմանիք նոցա, որք
“ չարամիտք կամ միամիտք, և կամ լաւ ևս ասել, անմիտք ։

“ Զայսոսիկ հնգեսին գլուխս բանից պատրաստ եմ երբ և
“ իցէ ընդարձակագոյն բանիւք պարզել և դնել առաջի ամե-
“ նայն ճշմարտասիրաց հանդերձ կարեւոր հաւատեօք ։

“ Ա. այժմ զայս ինչ եւեթ հաւատուաւ գիտասջիք, Գե-
“ րապատիւ Հայր, զի ես այնչափ հեռի եմ ի չարաշահոցեանն
“ և յանձնասիրոցեանն, շնորհիւն Աստուծոյ, զի լաւ համարիմ
“ այսքան տառապանօք հանդերձ գէթ փոքր ի շատէ օգուտ

“ գործել կարօտելոյ ազգիս , որքան կար զօրութեան իմոյ
“ և հանդամանք տեղւոյս և ժամանակիս ներիցեն , քան թէ
“ անգործ դադարել և հանդչել այդր կամ առա , պարապե-
“ լով ի վաստակս և ի գրօտանս հաճոյական առն վաստակելոյ
“ և յամենայն կողմանց ապերախտութեան հանդիպելոյ ։

“ Իսկ ընդ ցաւալի վիճակ Էջմիածնի թէպէտ և ողբալ ողբամք
“ և մեք և դուք և ամենայն ազգասէրք առհասարակ , բայց
“ չէք ինձ վնաս անտի , և ոչ գործոց իմոց և ձեռնարկու-
“ թեանց ։

“ Ահա Նարպանտեանն խոյտառակեցաւ, Ոսկանեանն պա-
“ պանձեցաւ, Ջ. խոտոռմանեցաւ զպարտութիւն, Մ. տաղ-
“ նապի , և Կ. այլ ընդ այլոյ իրս գրէ և խօսի ։ . . . Թերեւս
“ այլք զնոցա տեղի փոխանակեսցեն , նոյնպէս ի նախանձուէ
“ և ի չարաղրգիռ կրից զրդեալք , բայց անշուշտ եմ զի և
“ նոքա ոչ կարասցեն առնանել ինչ գործոցն բարեաց զոր
“ առնեմք Աստուծով անշահասէր և անձնուրաց անխոնջ
“ վաստակովք ։

Եթէ Աստուած ի մեր կոյս իցէ , ո՞վ իցէ մեզ հակառակ ։

“ Եթէ Գեր Հայրութիւնդ ոչ երթէք զղջանալ կամիցի ընդ
“ իւրն կարծիս , բարեաւ յոյժ առնէ , բայց կամիմ զի կարծիքն
“ այն արդարեւ իւրք իցեն և ոչ ի չարասէր և ի պարտաւադէտ
“ առխայն մերոց ի փոխ առեալք, որպիսիք են նշանակեալքդ
“ ի պատուական նամակիդ այժմ և ի հերուն ։

“ Եւ յիրաւի՝ ո՞ւմ առաւել , յեւ Աստուծոյ , քաջածանօթ
“ պարտին լինել բարք իմ և վարք , և իղձք , և խմբագրք ,
“ զոնեա ընդհանրապէս , եթէ ոչ Հօրդ սիրելւոյ , թէպէտ և
“ ոչ անմատն իցեմ և ի մեծամեծ թերութեանց ։ Ո՞րր լեալ
“ իցեմ ես հեռամուտ շահու անձին՝ մինչդեռ ի վանս էի և
“ ի Փարիզ , կամ ե՞րբ անձնասիրութեամբ մոլեալ՝ զէթ այն-
“ չափ , զի մի՛ անձնանուէր և անձնուրաց գնացիւք , մանա-
“ ւանդ թէ բազում անգամ և կոչրօրեն, վաստակիցիմ ան-
“ խոնջ յօգուտ և յօգնութիւն այլոց ։ . . . Եւ եթէ այս
“ այսպէս , մի՛թէ ա՞յնքան յիմար իցեմ զի այժմ զանկատիցիմ

„ զհետ շահու և զիւրութեան և պատուոյ անձինս, այժմ,
„ մինչեւ աչք ամենեցուն և բերանք թշնամեաց բացեալ են
„ ի վերայ իմ, և պատրաստք են չարաշահութեան և անձնա-
„ սէր փառամոլութեան գրել զամենայն զոր ինչ առնեմն և
„ ասացից։ Այսու ամենայնիւ, թող այլքն ասացեն զոր ինչ
„ և կամիցին, ընդ այն չէ ինձ փոյթ։ բայց կամիմ զի սիրա-
„ Հօրդ Սիրելւոյ մի՛ վայրապար ճնացէ ի պղտորութեանն զոր
„ ազդեալ է ինա թշնամին արդարութեան և արքանեակք
„ նորա։

„ Յոյս մի մեծ ունիմ, զի Ելբ և իցէ շնորհեացէ ինձ
„ Աստուած զպատեհ աւուրն ցանկալւոյ յորում տեսից դա-
„ ձեալ զԳեր. Հայրդ և բերան ի բերան խօսելով, ոչ միայն
„ փարատեցից ի մտաց ձերոց զկասկածանս ամենայն, այլ և
„ պատճառք եղէց խռովանն միութարութեան և սիրոյ մեծաց
„ Հայրապետիս։

„ Զաղօթս Ձեր եւեթ հայցեմ առ Ժամս, զի մի՛ յապա-
„ ղեսցէ Տէր զայն օր ցանկալի, և ես աղօթեմ վասն քաջող-
„ ջութեան Անձինդ պատուականի և յաջողութեան ազգաւէր
„ և ասաուածասէր ըղձիցդ, և

„ Մնամ

„ Գերապատիւ և Բազմարգիւն սիրելւոյ Հօրդ

„ Թէոդոսիա. 9 փետրվար. 1861.

„ Անձնանուէր և նուաստ եղբայր

„ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ.”

Ընկալեալ Սարգսի վարդապետի զպատասխանի թղթոյ իւրոյ օր առ Գաբրիէլ վարդապետ, և տեսեալ զանհաւանութիւն նորա բանից ճշմարտութեան, ընդունայն աշխատութիւն համարի այնուհետեւ խելամուտ առնել զնա այնմ՝ պակասելով նմա զգայութիւն հատարակաց. այլ թողու զնա ի յամա-

ռութեան իւրում, հանդերձ լռելեան յանդիմանութեամբ, օրինակ զայս.

“ Գերապատիւ Տէր և սիրելեալ եղբայր.

“ Ցանկալի և զբաղդական պատահանին Ձեր, առեալ
“ յՅ փետրուարի ընկալայ ի 25 տրին ամսոյս, և խնդացի
“ ընդ ողջութիւն սիրելւոյդ խնամաք Բարձրելոյն, զոր և
“ աղաչեմ պահել զՁեզ միշտ ի նոյն.

“ Ընդ երկար քննութիւն և խիստ բաղդ ձեր որ զկիրեմն
“ գրութենէս, համառօտ և այնչափ միայն առնեմ պատա-
“ հանի, թէ որ միանգամ արհամարհէ իսպառ զկարծիս և
“ զդատաստան հասարակաց որ զգնացից իւրոց, կամ չունի
“ նա զգայութիւն հասարակաց, և կամ յոյժ բարեմիտ գո-
“ լով՝ համարի զինքն բոլորովին ազատ ի կրից և ի թերութե-
“ նէ մարդկան. . . . Զայս վերջինն ընծայեմ քեզ, Սիրելեալդ
“ իմ Եղբայր, ճանաչելով քաջ զքարս և զվարս քո. . .
“ թէպէտ և դու զիս մի ի հակառակորդացդ համարիս ըն-
“ լեան. . . .

“ Իսկ առ այս նշանակեալ բանս ձեր, թէ քան թէ անգործ
“ դադարել և հանգչել այդր, կամ առ, պարապելով ի վաս-
“ տակս և ի զբաղանս հաճոյականս առն վաստակելոյ և յանկ-
“ նայն կողմանց ապերախտութեան հանդիպելոյ, ասեմ ես,
“ թէ հաճոյական զբաղանք իմ առ ի Փարիզ զամս եօթն և
“ տասն երեւեցին ընդ հուպ յերկրորդ հատոր պատմութեան
“ Մուրատեան վարժարանի, զոր ընթերցեալ հասարակաց՝
“ արասցեն զուղիղ դատաստանն. . .

“ Ի վախճանի ասեմ քեզ, Սիրելեալդ իմ Եղբայր, եթէ
“ արդարեւ ծանեար և ճանաչես զիս ճշմարիտ ազգասէր,
“ պարտիս հաւատալ՝ թէ աղօթեցի և աղօթեմ միշտ վասն
“ երկար և քաջառողջ կենդանութեանդ և յաջողութեան
“ ամենայն գործոցդ, հանդերձ կարծեցեալս բնորդեանդ.
“ քանզի ծանեայ և ճանաչեմ քաջ զգաստութիւնդ և
“ զարժանիս քո որ վասն կարօտելոյ ազգիս. վասն որոյ և

“ պարտական իսկ եմ աղօթել ի վերայ քո, և վասն յաջո-
“ ղութեան ամենայն գործոցդ. ապա ուրեմն մի՛ ծանր թուես-
“ ցին քեզ անաչառ բանք դրութեանս իմոյ, որ ի կարեկից
“ մտաց և ի ցաւագին սրտէ էին, և յառաւել իմն զգուշու-
“ թիւն քեզ ի մէջ յաշակերտս և նախանձոտ ոգիտաց և
“ խնամակաց . . . .

“ Այսպէս շատ հաճարեալ յուզղութիւն մտաց իմոց և ի հան-
“ դարութիւն սրտի ձերոյ,

“ Մնամ միշտ

“ Գերապատիւ Տէրութեանդ

“ Ի Փարիզ. 26 փետր. 1861.

“ Հոգեկցորդ եղբայր

“ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՂՈՐԵԱՆ. ”

Առեալ Գարրիէլի վարդապետի զվերոյիշեալ պատասխանին Թղթոյ իւրոյ, հանդարտի ի տարապարտ հոգոյ մտաց իւրոց, և ցուցանէ զայն ի վերջին նամակի իւրում որ առ Սարգիս վարդապետ, յորում շնորհաւորէ նմա զՁատիկ, և տայ ինչ ինչ լուր ցաւալի զհայաստան աշխարհին, օրինակ զայս.

“ Գերապատիւ և Բազմարդիւն Հայր սիրելեալ.

“ Թէպէտ և ի Ձեր կողմանդ ի վաղուց հետէ կատարեցաւ
“ Զատիկ սրբոյ Յարութեան Տեառն, սակայն առ մեզ քանզի
“ տակաւին անագանէ և մերձ է, պարտ անձին վարկանիմ
“ շնորհաւորել զայն Հօրդ սիրելւոյ, մաղթելով Ձեզ ի Տեառնէ
“ զյանկարին Ձեզ և մեզ առհասարակ զյարութիւն տառա-
“ պելոյ ազգիս իմահահանդոյն թմբրութենէ ոգիութեան
“ և անկրթութեան.

“ Ի Հայաստան աշխարհին կողմանց ոչինչ ունիմ զրոյց
“ մխիթարութեան, այլ զնարին հակառակն։

“ Ներսիսեան վարժարանն Տփխեաց գրեա թէ փակեալ է.
“ ժողովուրդն անհնարին զայրացեալ է ընդդէմ որոց պատ-
“ ճառք մեծաց ազգաւոց հանեալին, (հոգարարձուքն)։

“ Վ. Կաթողիկոսն առաքեաց զԳրիգոր վարդապետն
“ Աղափիրեանց իշխանութեամբ ինքնագլուխ վանահայրու-
“ թեան ի Նախիջեւան. այլ քանզի այդ կարգադրութիւն
“ հակառակ եղանէ օրինաց Պետութեան, Մինիսթրն չեռ
“ հրաման կատարումն առնելոյ կարգադրութեան Կաթողի-
“ կոսին։

“ Բազում ինչ գրէ առ իս Պարոն Միրաքով յէջմիածնէ,
“ զորս չկարեմ առ ժամս ընդ գրով արկանել. և յայս գրանն
“ հանգուցանէ, թէ ի հասանել զարնայնոյս պարզեցին
“ բազում խնդիրք։ — Մերս ջանք և աշխատութիւն այս
“ միայն է, զի վասակքն յորս ձեռնարկեալ եմք մի՛ անպը-
“ տուղք եղիցին վասն մանկանց ազգիս՝ ազօթիւք արժա-
“ նաւորաց։

“ Ներհ ունիմ խնամոտ մտաց Հօրդ ցանկալւոյ, որով հան-
“ գարութեան սրտիս հոգ կալեալ՝ քաջալերէք զիս ի վաս-
“ տակս իմ գրովդ պատուականաւ որ ի 26 փետրուարի։

“ Ողջ լինել ըղձանամ ի սրտէ

“ Գերապատիւ Հայրութեանդ

“ Թէոդոսիա. 27 ապրիլ. 1861.

“ Անձնանուէր

“ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՑՎԱՑԵԱՆ. “

Յետ այս քաղաքավար թղթոյ, և այսչափ միայն բաւական համարեալ պատասխանոյ՝ յաչ Գաբրիել վարդապետ այնու. հետեւ գրել այլ թուղթ առ Սարգիս վարդապետ ի Փարիզ։

Քանզի յայսմ ժամանակի հասանէ ի ձեռս Նորա երկու տողք անուանեալ տեսրակն Նալպանտեանի, յորում տեսանէ յանկարծ զընդարձակ և զհաւատեաք պատասխանին ամենայն բանից վերոյիշեալ թղթոյ իւրոյ գրեցելոյ յԺ փետրվարի 1861 ամի, զոր տեսեալ էր արդէն Սարգիս վարդապետ, և որով կարէր յանդիմանել զնա արժանապէս ընդ պանծացեալ ուղղութիւն վարուց իւրոց . . . այլ խնայէ նմա, անտես արարեալ զնենգութիւն Նորա առ ինքն առանձինն, հայեցեալ միայն յարդիւնս վաստակոց Նորա որ վասն հասարակաց ազգին իւրոյ։

Սակայն արդարութիւն Աստուծոյ՝ թէ կանուխ և եթէ անագան յայտնէ զնենգութիւն մարդոյ և հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործոց իւրոց, որպէս և յայսմ տեսանի։ . . .

Թէպէտ և Գաբրիէլ վարդապետ Չանայ արդարացուցանել զինքն յայն, ի Մասեաց աղաւնւոյ, զպատճառս անպատեհ գնացից իւրոց յայլ ոք հանել, և թելադրութեան Նորին տալ, այլ ի գնութենէ և ի դատաստանէ հասարակաց ոչ ազատի նա, որպէս և լսի ամենայն ուստեք։ Ահա պատճառ լռելոյ Նորա այնուհետեւ գրել թուղթ առ Սարգիս վարդապետ ի Փարիզ։

Յայսմ ժամանակի ընդունի Սարգիս վարդապետ նամակներ ի Ս. Պատրիարքէն և ի Գէորգ Պէյէ Երամեան, որք հրաւիրեն զնա լինել ուղղիչ ժառանգաւորաց Դպրոցին ի Պոլիս, օրինակ զայս.

“ Գերապատիւ սիրեցեալ մեր ի Քրիստոս.

“ Զսկզբնաւորութիւն Ազգային ժառանգաւորաց Ուսում-
“ նարանի ի Մայրաքաղաքս ի բերկրութիւն սրտի Զերումդ
“ Սիրելութեան ազգ տարարեալ՝ յայտնեմք առանձին ոչն այս
“ գրութեամբս մերով, թէ ցանկալի է մեզ Ներկայութիւն
“ Զեր առատ, որպէս և ի գրութենէ Վ. սեմարիայլ Գէորգ Պէյի
“ Երամեան տեղեկանայք, և եթէ բարեհաճեսջիք զայս մեր

„ հրաւէր ընդունել, ի հոգեզուարճ բերկրութիւն համակի
„ սիրտս մեր։

„ Մնամ Գերապատուութեան Ձերում անդորրութեան
„ ցանկացող ի սրտէ

„ Պատրիարք Կ. Պոլսոյ

„ ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

„ Պատրիարքարան Հայոց
„ ի Կոստանդնուպոլիս
„ 25 յունվար. 1861. „

Թուղթ ազդարարութեան և հրաւիրման Գէորգ Պէյի Երամեան առ Սարգիս վարդապետ, օրինակ զայս.

„ Գերապատիւ Հայր սուրբ.

„ Ժառանգաւորաց դպրոց մը հաստատելու կարեւորու-
„ թեանը վրայ բոլոր Ազգերնիս առանց բացառութեան հա-
„ մոզուած ըլլալով, քանի մը ժամանակէ ի վեր է առաւելա-
„ գոյն փութով մը խօսք ու խորհուրդներ եղան ժամ մը
„ յառաջ և հիմայ նոյն ի գործ դնելու։

„ Արդ ուրախութեամբ կը ծանուցանեմ Ձեր Գերապատ-
„ ութեանդ, թէ Սրբազան Պատրիարք Հայրենիս յաջողեցաւ
„ այս ազգօգուտ հիմնարկութեան պատրաստութիւնները
„ ընել և անոր հաստատութեան և տեւողութեան պայմանները
„ երաշխաւորել, որոնցմով, և Ազգին Բաղձանքը ու եռանդը
„ տեսանելով քաջայոյս կրնանք ըլլալ թէ այս ձեռնարկու-
„ թիւնը պիտի յաջողի։

„ Եւ որովհետեւ այս ժառանգաւորաց դպրոցին ներքին
„ կարգադրութեան համար վերին կառավարիչ մը ընտրելու
„ եղած խորհրդին մէջ, միաբերան և պարզապէս Ձեր Գե-
„ րապատութեան խօսք և առաջարկութիւնը եղաւ, որոնք

„ յայտարար նշան մը է թէ ամէնքը Ձեր արդիւնքը և վաղեմի
„ փորձառութիւնը ու ընդունակութիւնը ըստ արժանւոյն
„ կը ճանչնան, և սոր համար ալ Սրբազան Պատրիարք
„ Հայրենիս առանձին հրաւիրանաց նամակ մը Ձեր Գերա-
„ պատուութեանդ պիտի գրէ, աղուոր առիթ և պարտք մը
„ ինձ կը համարիմ նոյնը ներկայիս հաստատելու, ու Ձեր
„ անկուն և անձնուրաց անխոնջ ազգասիրութեանը քաջա-
„ ծանօթ համոզուած ըլլալով այս բոլոր Աղգերնուս օգտա-
„ էր եղած առաջարկութիւնը չժխտելուդ տոյգ ըլլալուս,
„ ծանուցանել այժմէն այլ մեծ ուրախութիւնը որոնք Ձեր
„ Գերապատուութիւնը միւսանգամ տեսանելէն և վայելե-
„ լէն պիտի զգանք։

„ Ընդունեցէք Գերապատիւ Հայր սուրբ այսու բաղձան-
„ քս նա և բարեկամական բարեւ և սուրբ Աջոյդ համբոյրը,
„ որով եմ,

„ Ամենախոնարհ ծառայ

„ ԳԷՈՐԳ ԵՐԱՄԵԱՆ.

„ Կ. Պոլիս. 25 յունվար 1861. „

Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ նամակի Ս. Պատրիարքին, յորում ցուցանէ զխնդութիւն իւր ընդ յառաջադիմութիւն ազգին, շնորհակալ լինի նմա վասն հրաւիրելոյ զինքն անդ ի պաշտօնն յայն, Տեսչի դպրոցին, և հրաժարի ի ժամուն վասն կարեւոր գործոյ իւրոյ ի Փարիզ, օրինակ զայս.

„ Արհիապատիւ Տեառն Տեառն և Սրբազան Պատրի-
„ արքին մերոյ Սիրելի ողջոյն և խոնարհ համ-
„ բոյր Աստուածարեալ Աջոյն։

„ Ցանկալի և զշնորհալից նամակ Սրբութեան Ձերոյ,
„ գրեալ ի 25 անցելոյն, ընկալայ ի 4 ամսոյս, և ընթերցեալ

“ զայն՝ լցայ բազում մխիթարութեամբ և խնդութեամբ սրտի,
“ լսելով անտի զմխիթարական և զուրախարար լուրն. և
“ յիրաւի՝ քանզի զինչ առաւել մխիթարութիւն և խնդու-
“ թիւն սրտի իմոյ կայցէ յաշխարհի քան զլուր յառաջադի-
“ մութեան և բարգաւաճութեան պատուական և սիրելի
“ ազգին իմոյ, որում նուիրեցի զանձն իմ անդատին ի ման-
“ կութենէ իմմէ։

“ Ենոհ յոյժ ունիմ Աստուծոյ որ մխիթարէ և ուրախ առնէ
“ զիս ի ծերութեանս և ի պանդխտութեանս իմում, և ազա-
“ չեմ զնա պահել ինձ միշտ զնոյն ի փառս անուան իւրում։

“ Ենորհ ունիմ և բարեբէր կամաց Հօրդ հասարակաց, որ
“ հրաւիրէ զիս կցորդ լինել աշխատութեան իւրոյ, և մաս-
“ նակից վարձուցն որ ի Տեառնէ, և որում միայն մնամ ես
“ անշուշտ։

“ Պատրաստ եմ գալ այդր աշխատիլ յայդուոջ Տեառն,
“ բատ շափու երեկոյացեալ աւուրն, յորժամ աւարտեցից զտը-
“ պադրութիւն պատմութեան Մուրատեան վարժարանին, յոր
“ և պարապիմ այժմ անդուլ, և զոր յիշատակեալ եմ ար-
“ դէն ի նախընթացն իմ առ Վեհդ։

“ Ապա չմնայ ի ժամուս այլ ինչ կարեւոր ծանուցանել
“ Սրբութեան Ձերում բաց յերկրորդելոյ զանպատում բերկ-
“ կրութիւն սրտիս որ ընդ լուր ի գործ դնելոյ Ազգային
“ Ժառանգաւորաց ուսումնարանին ի Մայրաքաղաքիդ, և ընդ
“ հովանեաւ պաշտպանութեան Ձերոյ, և զորոյ արդիւնս
“ ցակամալով ցանկամ տեսանել ի պայծառութիւն Հայաս-
“ տանեաց տուրբ եկեղեցւոյ, և բաց յառ Աստուած մաղթե-
“ լոյ վասն երկար և քաջառողջ կենաց Վեհիդ և յաջողու-
“ թեան ամենայն գործոց ձերոց, և որով

“ Մնամ միշտ

“ Արհիապատիւ Տէրութեանդ Ձերում

“ Ի Փարիզ. 10 փետր. 1861.

“ Ի. Ծ. ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՄԻՐԵԱՆՑ.”

Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ թղթոյ Գէորգ Պէյի Երամեան, յորում ցուցանէ զինդութիւն իւր որ ընդ լուր յաջողութեան հիմնարկելոյ ժառանգաւորաց դպրոցն ի Պոլիս. չնորհակալ լինի ճանաչման հասարակաց որ զարդեանց իւրոց և վարկման նոցին որ զինքենէ, նոյնպէս և զհրաւիրանաց նոցին, կարդել զինքն վերատեսուչ դպրոցին, և ցաւի ընդ անկարութիւն իւր ի ժամուն գնալոյ անդ վասն պարապելոյ ի տպագրութիւն պատմութեան Մ. վարժարանին, օրինակ գայս.

« Մեծապատիւ Տեառն և Վեհամիտայլ Գէորգ Պէյի
« Երամեան ողջոյն բազում սիրոյ և օրհնութիւն
« ի Քրիստոս.

« Զցանկալի և զպատուական նամակ Տէրութեանդ, գրեալ
« ի 25 անցեալ ամսեան, ընկալայ ի 4 ամսոյս, և միխիթարե-
« ցայ և խնդացի յոյժ յոյժ, լսելով զյաջողութիւն հիմնար-
« կութեան ժառանգաւորաց դպրոցի միոյ ի Մայրաքաղաքիդ,
« համոզմամբ բոլոր Ազգիս, և Ջանիւք արքազան Պատրիարքին
« մերոյ.

« Կեցցէ յիշատակ նորա յաւիտեան . . .

« Շատ չնորհակալ եմ ճանաչման հասարակաց որ զար-
« դեանց իմոց և վարկման նոցա զինէն, նոյնպէս և հրա-
« հիրանաց Արքազան Պատրիարքին, որոց ամենեցուն կամք
« են և հաճութիւն լինել իմ վերատեսուչ ներքին կարգաւո-
« րութեան ժառանգաւորաց դպրոցին. այլ ցաւիմ յոյժ
« չկարելով ի ժամուս կատարել զհաճութիւն կամաց նոցա,
« գալ այդր փութով, որպէս և չկարեմ վայելել զքաղցր
« ընկերութիւն Ձեր, պարապելով իմ այժմ ի տպագրու-
« թիւն Մուրատեան և Հայկազեան վարժարանաց, զոր
« ծանուցի և Արքազան Պատրիարքին։ Ապա հաւատի

„ լերուք և Դուք Միրելի Պէյ, թէ վասն այսորիկ և ցաւոք
„ սրտի ժխտեմ զօգտակար առաջարկոցիսն Ազգիս, և

„ Մնամ միշտ

„ Մեծապատիւ Տէրութեան Ձերում

„ Ի Փարիզ. 10 փետր. 1861.

„ Աղօթարար ծառայ

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՒԴՈՐԵԱՆ. ”

Ի նմին ժամանակի գրէ թուղթ առ Սարգիս վարդապետ և Եպրա Տէրէն Երամեան, զհրաւիրմանէ նոցին ի Պօլիս վասն վարատեսչութեան ժառանգաւորաց դպրոցին օրինակ զայս.

„ Գերապատիւ Հայր սուրբ.

„ Սիրոյ նամակդ առի շատ ուրախացայ հայր իմ, սիրէմ
„ զքեզ էիր, ամայ հախ չունիս. ինչու որ կուզէի անանկ դիր
„ մը գրեմ որ հէմ ես ուրախանամ, հէմ հրամանքդ. հիմայ
„ այն առիթը ունեցայ. հոս տեղ ժառանգաւորաց դպրոց պի-
„ տի հաստատուի, մեր Սրբազան Պատրիարքը հրամանքդ
„ ալիտի ուզէ որ դպրոցը կառավարելու պաշտօնը հրամանքիդ
„ տան. Սրբազան Պատրիարքը, մեր Պէյը, Խալֆա Կարապետ
„ Ամիրան մէյտեղ առանկ խորհուրդ ըրին. Այս Բոստոյով
„ ալիտի գրեն հրամանքիդ, հիմա կրնաս հասկընալ իմին
„ ուրախութիւնս ինչ կլլայ, ու ինչ կիմանամ սրտիս մէջ
„ սիրական հայր իմ.

„ Ողջ լերուք

„ Պօլիս. 25 յունվար. 1861.

„ ԵՊՐԱՅԻՄ Գ. ”

Պատասխանի Սարգսի վարդապետի առեալ թղթոյ Եպրու Տիկնոջ, յորում ցուցանէ զգժուարութիւն պատասխանի տալոյ նմա զայս անգամ, և խնդրէ ի նմանէ արդարացուցանել զինքն նաեւ առաջի այլոց օրինակ զայս.

„ Ազնուամեծար և բարեպաշտ Եպրու Տիկնոջ Երա-
„ ժեան ողջոյն բազում սիրոյ և օրհնութիւն
„ ի Քրիստոս։

„ Որչափ որ դիւրին էր ինձ ուրիշ անգամ Ձեզի թուղթ
„ գրել, այնչափ դժուարին է այս անգամ, և պատճառն,
„ վասն զի գիտեմ որ անհաճոյ պիտի ըլլայ Ձեզի այս ան-
„ գամի պատասխանին իմ. բայց ճանաչելով իմ նա և զան-
„ շահասէր բնաւորութիւն Ձեր, կը յուսամ որ կարդարա-
„ ցուցանէք զիս անհաճոյ առած պատասխանուս համար, և
„ ոչ այսչափ միայն, այլ և առաջի այլոց կարդարացուցանէք
„ զիս, վասն ժխտելոյ իմ պաշտաւորութիւն նոցա։ Իսկ
„ զպատճառս ժխտելուս՝ կիմանաք հարկաւ ի պատասխանէս
„ որ առ Վ. սեմափայլ Պէյն, և որ արդէն գիտէք . . . ապա
„ չմնայ ինձ Ձեզ գրել, բայց եթէ աղաչել զՁեզ, չսպասել
„ այսպէսի առթի միայն ինձ գիր գրել, զոր անպակաս առ-
„ նել վերատին կաղաչեմ զՁեզ, և

„ Մնամ միշտ

„ Ազնուամեծար Տիկնութեան Ձերում

„ Ի Փարիզ. 10 փետր. 1861.

„ Աղօթարար ծառայ

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՐԻԱՆ.

Յետ քանի մի ամսոց վերոյիշեալ թղթոց գնայ ի Փարիզ ումն ի Պօլսոյ և ի ծանօթից Գէորգ Պէյի, որ և պատմէ զասացեալն նորա, թէ Սարգիս վարդապետ խորագիտութեամբ հրաժարի ի հրաւիրանաց անտի իւրեանց, գուշակելով զհանգամանս ազգին, և ճանաչելով զինաւորութիւն նորին։ . . . Այս վկայութիւն Գէորգ Պէյի սակաւ ինչ մխիթարութիւն լինի Սարգսի վարդապետի ի պանդխտութեան իւրում, չհաւատալով վերատին խոսումն անհաստատ մտաց արանց։ . . .

ԳԼՈՒԽ ԻԹ.

Թղթակցութիւն Սարգսի վարդապետի ընդ Պարոն Մ. Մոմճեանի վասն բանի արծաթոյ իւրոյ. — Թղթակցութիւն Սարգսի վարդապետի ընդ Եպիսկոպոս տիկնոջ Երուսաղեմի վասն պահանջելոյ իւրոյ որ ի Պ. Մ. Մոմճեանէ. — Կարեկցութիւն Պօղոս Պէյի Տատեանի, և. Կարապետ Աղայի Երուսաղեմի առ Սարգիս վարդապետ վասն արծաթոյ նորա որ առ Մկրտիչ Մոմճեան. — Թուղթ Սարգսի վարդապետի առ Գէորգ Պէյ վասն պահանջելոյ իւրոյ որ ի Մ. Մոմճեանէ. — Պատասխանի Գէորգ Պէյի առ Սարգիս վարդապետ որ ընդ վիճակ Մ. Մոմճեանի. — Թուղթ Սարգսի վարդապետի առ Գէորգ Պէյ և. առ Տիկին նորա վասն բանի պահանջելոյ որ ի Մոմճեանէ, և. շուրջ նոցա ընդ այն.

Թուղթ Սարգսի վարդապետի առ Պ. Մ. Մոմճեան, յորում զանդատի ընդ պակասութիւն խոստման նորին, երկրորդէ նմա զկարօտութիւն իւր արծաթոյ, և ապա առնէ զառաքումն փոխադրոյ միոյ ի վերայ նորա, և ապաչէ զնա ընդունել զայն, օրինակ զայս.

“ Մեծապատիւ Տեառն և Սիրելի Բարեկամի իմոյ Պարոն
“ Մ. Մոմճեանի ողջոյն բազում՝ սիրոյ և օրհնութիւն
“ ի Քրիստոս։

“ Ահա ամիսս երեք են յորմէ հետէ ծանուցիք ինձ ցանկալի
“ պատասխանեալդ, թէ յառաջակայ շոգենաւով հազար ֆրանք
“ ընդունելոց է. սակայն մինչեւ ցարդ ես ոչ ընկալայ զխոս-
“ տացեալդ հազար ֆրանքն։ . . .

“ Աւելորդ համարիմ երկրորդել Ձեզ զերկամեայ ընդունայն
“ աշխատութիւնս որ այդր, և ի Տփխիս, և զվնասն զոր կրեցի
“ ես ասա ի Փարիզ ի բացակայութեան իմում, և ի փակիլ
“ Հայկազեան վարժարանին, (վասն որոյ և Հարկաւորիմ
“ ընդունել զշնորհս բարեկամին իմոյ ասա, Պ. Մ. Մանանեանի,
“ բնակելով ի տան նորա,) և զկարօտութիւնս որ յայլ կա-
“ բեւոր պէտս իմ. այլ զկարեւորագոյնն կամիմ ասա ծա-
“ նուցանել ձեզ, և աղաչել զձեզ դարման տանել այնմ և
“ փութով,

“ Արդ զիտասջիք զի վախճան դարձին իմոյ ասա ի Փարիզ
“ ոչ այլ ինչ է, բայց եթէ ի լոյս ընծայել զերկրորդ հատոր
“ պատմութեան Մ. վարժարանին, զոր խոստացեալ եմ
“ յառաջին հատորոյ նոցին, և զոր անհրաժեշտ պարտս հա-
“ մարիմ կատարել, և փութով կատարել, հայեցեալ ի հան-
“ գամանս իմ, և ահա տկար ես զայն, և վասն այնորիկ
“ պիտոյ է արծաթ ի ծախս տպագրութեան, իբրեւ 8,000 Ֆր.
“ զորոյ մի մասն պարտիմ կանխիկ հատուցանել տպագրողի
“ նորին։ Եւ զիտասջիք եւս, զի չունիմ ես այլ արծաթ ի ձե-
“ ռին, բաց յարծաթոյ որ առ Ձեզ է. վասն որոյ հարկա-
“ ւորեցայ ես յղել փոխանակագիր մի 3,000 Ֆրանքի ի վերայ
“ Ձեր, մի ամիս ժամանակաւ, զկնի տեսութեան, հատու-
“ ցանելի. և վասն որոյ աղաչեմ զձեզ ընդունել զայն անխա-
“ փան, և հատուցանել զարծաթն ըստ պայմանեալ ժամա-
“ նակին՝ պահելով զպատիւ մեր և Ձեր առհատուրակ։ Այսու
“ Բարեյուսութեամբ

Մնամ

Մեծապատիւ Տէրութեանդ

Ի Փարիզ. 1 մարտի. 1861.

“ Աղօթարար ծառայ

“ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՄԻՐԵԱՆ.”

Պատասխանի Պ. Մ. Մոմճեանի տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի, յորում յիշեցուցանէ նմա զճշմարիտ բարեկամութիւն իւր, և զօգնութիւնն զոր ապարեալ էր վարժարանին. ծանուցանէ զնեղին վիճակ իւր ի ժամուն. ապահովէ զնա կրկին և կրկին ընդ հատուցումն պարտուց իւրոց, և խնդրէ ինամանէ ամիսս ինչ ժամանակ. ի վախճանի խնդրէ թողութիւն վասն յետս դարձուցանելոյ զփոխանակագիր նորա, օրինակ զայս.

« Գերապատիւ և Սրբազան Հայր իմ.

« Մարտ 1 թուով սրբութեանդ օրհնաձիր նամակը ընկա-
« ւայ, որով ձեր անհրաժեշտ հարկէն ստիպեալ 3,000 ֆր-
« մէկ փոխանակագիր մեր վրայ ուղղելիս կընշանակէք։

« Արդարեւ սիրելի Հայր իմ ճշմարիտ գիտէք և սրտի մտօք
« կը վկայէք, որ ձեր ճշմարիտ բարեկամ Մկրտիչ Մոմճեան
« որ ստանձնեմ ձեր սրբութեան անհրաժեշտ հարկ և պիտոյք-
« ներուն նպաստելու բաղձացող, և ձեր անտգիտ պատուոյն
« ճրագը անշէջ պահելու փափաքող ենք, և այս հատատե-
« լու փաստ հարկ չըլլալով երեք տարի միջոցէ ի վեր բաւական
« տեսած ալ էք։

« Կընեղէք Սրբազան Հայր իմ, որ նախ ձեր սրբութեանը
« մէկ գաղանիք և կամ լաւ եւս ասել մէկ յայտնի տեղեկու-
« թիւն ծանուցանեմ, բայց ծանուցանելուս մի՛ կարծէք թէ
« ձեր Սրբութեան մէկ բառակ վնաս և կամ ա՛ և իցէ մէկ
« նենգապատիր պատրուակու խօսք նետելու համար կըլլամ,
« այլ անկասկած և ապահով եղիք որ միայն քիչ մը միջոց
« ժամանակ թոյլատուութիւն ըլլալու համար է։

« Յայտնի է Սրբութեանդ երկու երեք տարիէ ի վեր տէ-
« րութեան մէկ քանի գաւառներու տատանումներուն և
« մոքերուն վարչութեանը՝ ահագին մեծ գումարներու ար-
« ժէքով վարձեցինք, և թէ և բոլորովին շահ ճիւաղը մեր
« հաշիւին չըլլալով մեր յաճախորդ ծախերուն հաշուին ալ

“ էր նէ, ահա վերասերու ենթակայ եղանք, և այսպէս ըլլալով
“ թէ և վերաններուն մեծագոյն մասս մը արքունի գանձուն
“ վճարեցինք ալ նէ, բայց և այնպէս տակաւ շատ մեծ գու-
“ մար պարտական մնացած ենք, և զէշ այն է որ նոյն
“ մեր առնելիքէն ամենեին մեկնէն ըստակ առնելու և
“ մէկ կողմէն վճարելու ակնկալութիւն չունենալով, հշմա-
“ րիտ կեամ աղէկ վիճակի մէջ չենք. միայն այսքան մը
“ ծանուցանել հարկ է որ տէրութեան գանձուն պաշտօ-
“ նեաներն ժամանակին գէշութեանը և հասարակաց չքա-
“ ւորութեանը, և զլխաւորաբար բուն իսկ գանձարանին
“ անտուկին բոլորովին դատարկութեանը քաջ վերահասու
“ ըլլալով, զմեզ և մեզի պէսորին պարտականներուն, ամե-
“ նեին բռնութիւն և խստութիւն չեն բաներ. այլ
“ բաւական թոյլտուութիւն և միջոց կը շնորհեն և կը զի-
“ ջանին։

“ Այս տեղեկութիւնը գրելու պատճառաւ, չի կարծէք
“ թէ նուաստութեանս ձեզի ունեցած պարտքը չի կրնալ
“ տալու և կամ այլ ո՛ և իցէ կասկած տալու համար է, այլ
“ իմ պարտքս հարկաւոր և անպատճառ վճարելու պարտք
“ է, և Աստուծով դեռ պարտքերը վճարելու չափ նախախնա-
“ մութիւնը՝ քիչ մը ստացուած պահպանած է իւր հոգեանաւոր
“ Աջովը։ Ուստի ապահով եղէք որքան Հայր որ նուաստս
“ երեսէն Ամենեին և Ամենեին մարդու մը վնաս եղած
“ չէ. ապա ո՞ւր կը մնայ որ ձեզ նման պատուական և Սիրելի
“ Հօրս։ Կարէք մոռցել և մակարերել, որ նուաստս երկու
“ երեք տարի յառաջ երբ պարտիք ալ չունէի Սրբութեանդ,
“ ինչ ոգով և ինչ անձկանօք մինչև քսան հազար ֆրանք
“ իմ կողմէս միայն ձեր Սրբութեան և Սրբատուն գործակ-
“ ցածդ պիտոյիցը և տուապանացը նպաստած եմ՝, և փո-
“ խարէնը ամենեին ոչ յուսքէ ընդունելու ակնկալութեամբ,
“ այլ միայն ձեր Ազգասէր և աննկուն ճգանց և ջանից սիրոյն
“ համար զոհած եմ։ Ուրեմն հիմայ որ իմ հարկաւոր պարտ-
“ ուցս վճարմանը համար խնդիր կըլլայ, կըկարծէք որ չի
“ պիտի ջանամ ո՛ և իցէ կերպիւ նոյն ալ վճարելու ջանացող

„ ելալ. այլ միայն այս է խնդիրս որ ինձի քիչ մը ժամանակ
„ շնորհէք, որովհետեւ այս օրերս ցաւովք սրտի կրսեմ,
„ տեղւոյս ընդհանուր հասարակաց մէջ տիրած անակնկալ և
„ անհնարին չքաւորութիւնը, վերջին ատենին զմեզ կը շուա-
„ րէ, որովհետեւ ոչ առնելիքներէս կրնամք ըստակ փրրուց-
„ նելու, և ոչ մէկ տեղացոյ մը փոխառութիւն ընելու։ Կրկին կը-
„ սեմ, գոնէ չորս հինգ ամիս միջոց շնորհելու բարեհաճեցէք։

„ Մնամ

„ Սրբութեանդ

„ Պօլիս. 1/13. մարտ. 1861.

„ Խոնարհ ծառայ

„ ՄԿՐՏԻՉ ՆԻԿ. ՄՈՄՃԵԱՆ. „

„ Յ. Գ. Վրանիս քաշված երեք հազար ֆրանք փոխառակա-
„ կագիրը գիտնալու է՛ք որ մեծ ցաւով սրտի եէտ դարձուցի,
„ որովհետեւ անկեղծութեամբ կրսեմ, անակնկալ անձկու-
„ թեամբ պաշարված ըլլալովնիս, վախցայ թէ գուցէ պայմա-
„ նաժամին չեմ կրնար վճարեր։ „

Փոխառակ 3,000 ֆրանք գտանելոյ, 80 ֆրանք տուգանս կրէ Սարգիս վարդապետ վասն ծախուց բողոքման յետս դարձուցանելոյ զփոխառակագիրն, ըստ օրինաց սեղանաւորաց։

Պատասխանի Սարգսի վարդապետի, տուեալ թղթոյ Պարոն Մ. Մոմճեանի, յորում ծանուցանէ զառաւել ծանրութիւն զոր կրէ ի նմանէ, զլանալով զխնդիր իւր. երկրորդէ զկարօտութիւն իւր, և վերատին թախանձէ զնա չզլանալ զխնդիր իւր, օրինակ զայս.

„ Մեծապատիւ Տէր և Սիրելի և կարեկից բարեկամ.

„ Մինչդեռ ձեզի ես յուսով վստահութեանն որ ի Ձէնջ,
„ թեթեւութեան ասեմ ներդութեանս, ահա առաւել ես

„ Ծանրացուցիք ինձ զայն, հանդերձ նախատանօք որք յայլոց
„ առն և այդր, զլանալով ձեր զկարեւոր և զերաւացի խնդիրս,
„ թէ և յոչ կամացդ։ . . .

„ Այո՛ սիրելի Պարոն, գիտեմ և ես զի պակասի այժմ
„ արծաթ ի քաղաքիդ, վասն այնորիկ պակասեցայք դուք
„ ցարդ ընուլ զպարտս ձեր, այլ գիտասջիք և դուք զի
„ ի վերջին կարօտութեան եմ ես այժմիկ, անկեալ ընդ պար-
„ տիւք կարեւոր պիտոյից, և ընդ ծախիւք տպագրելի
„ պատմութեանս, զոր պարտիմ հատուցանել անհրաժեշտ
„ ըստ պայմանեալ ժամանակին, վասն այսորիկ հարկաւորե-
„ ցայ և հարկաւորիմ արդ դարձեալ խնդրել ի ձէնջ հայ-
„ թայթել ասսի և անսի 3,000 ֆրանք և հատուցանել զայն
„ ի ձեռս իմ ասս անխափան մինչեւ ցերս գալոյ ամսեան.
„ քանզի դիւրին է ձեզ այս, ունելով ձեր այդր բարեկամս և
„ վարկ, կարծիս ասեմ հարստութեանդ . . .

„ Իսկ ես ասս ոչ վարկ հարստութեան ունիմ և ոչ բարե-
„ կամս, բաց ի Պ. Մ. Մանանեանէ, յորոյ տանն բնակիմ, և
„ այս ի հարկէ և առժամանակեայ. քանզի չկամիմ և չունիմ
„ ես իրաւունս ծանրանալոյ նմա խոսքս, ունելով իմ այնչափ
„ արծաթ որչափ բաւական է ի կարեւոր պէտս իմ, և
„ ի նշխարեալ աւուրս կենաց իմոց։ . . . Վասն որոյ աղաչեմ
„ զքեզ թախանձանօք չղլանալ ինձ զայս խնդիրս, չունելով
„ իմ զայլ զք բաց ի քէն գտանել կարօտութեան և
„ նեղութեանս իմոեմ ասս . . .

„ Այսու բարեւս ակնկալութեամբ՝

„ Մնամ

„ Մեծապատիւ Տէրութեանդ

„ Ի Փարիզ. 29 մարտի. 1861.

„ Աղօթարար ծառայ

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՊՈՐԵԱՆՑ.

Զլանայ դարձեալ Պ. Մոմճեան կատարել զխնդիր Սարգսի վարդապետի և ոչ յղէ նմա հազար ֆրանք, այլ և ոչ առնէ պատասխանի թղթոյ նորին անգամ։ Անցանեն անտի ոչ միայն չորս և հինգ ամիս մինչև, ըստ խնդրոյ իւրոյ, այլ և ամիս ութ, յղէ նմա ոչինչ, հանդերձ խոպառ լռութեամբ։ . . .

Յուսահատեալ Սարգսի վարդապետի գրէ առ նա թուղթ մի համառօտ, օրինակ զայս.

„ Ազգասէր և կարեկից բարեկամ.

„ Կարօտութիւն արծաթոյ որ ի կարեւոր պէտս իմ, և „ համբերութիւնս իսվերջին ծայր հասեալ են, եթէ ոչ փութ„ թամբ դարման տանել այսմ, բռնադատիմ ես զվերջին „ փորձել փորձ . . . որ ոչ ի պատիւ ձեզ, և ոչ ի մխիթա„ րութիւն ինձ վասի։ . . .

„ Մնամ

„ Բարեկամութեանդ

„ Ի Փարիզ. 25 Հոկտ. 1861.

„ Աղօթարար ծառայ

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ. „

Իբրև տեսանէ Սարգիս վարդապետ թէ Պարոն Մոմճեան և ոչ այս վերջին թղթոյ իւրոյ առնէ պատասխանի, յայնժամ խորհի ի ձեռն բարեկամաց իւրոց ստիպել զնա ի հատուցումն արծաթոյ իւրոյ. զի միջնորդ կալաւ զԵպրու Տիկին Երամեան, առ որ գրէ թուղթ և աղաչէ զնա, զի ձեռամբ Գէորգ Գէյի ստիպել զՄոմճեան ի հատուցանել զայն. օրինակ զայս.

“ Ազնուամեծար և Բարեպաշտ Եպրու Տիկնոջ Երա-
“ մեան Բաղում ողջոյն և օրհնութիւն
“ ի Քրիստոս ։

“ Ձեր ցանկալի և մխիթար երկու տող գիրը կարդացի
“ Խորէն վարդապետի թղթի մէջ ։ Թէպէտ և չէի կարծէր
“ և չեմ կարող կարծեր թէ Ազնուագոյթ և Բարեպաշտ
“ Տիկինդ զիս կը մոռանայ երբէք , բայց ուշ ուշ և այսպէս
“ գրելդ, և մանաւանդ իմ գրիս չպատասխանելդ զիս կըտրտ-
“ մեցուցանեն շատ ։ Խնդրեցի , աղաչեցի Ձեր Ազնուութիւնդ
“ անպակաս առնել Ձեր ցանկալի գրութիւնը . ինչու համար
“ կխնայէք ինձ այս մխիթարութիւնը ։ ։ ։

“ Ի 8 յուլիսի տարւոյս գրեցի ես գիր մը առ Ազնուութիւնդ
“ և յղարկեցի ձեռամբ Պ. Զունթի, հանդերձ բերանով տեղե-
“ կութեամբ իմ այժմեան վիճակիս , չստացայ անոր պատաս-
“ խանին . չեմ կարծեր թէ յանձնած չըլլայ նա ձեզ իմ գիրս ,
“ և ոչ Պ. Զունթէն ստացայ պատասխանի յանձնարարու-
“ թեանս, որ խոստացաւ նա կատարել , և ինձ ծանուցանել ,
“ այսինքն , իմ առնելիքիս համար որ ի Պ. Մկրտիչ Մոմճեանէ,
“ և որուն համար կը նեղիմ ես հիմայ ։

“ Երկու և կէս տարի է որ իւր քովն է իմ ըստակն , անոր
“ շահը մինչեւ հիմայ 30,000 դահեկան կըլլայ , 5,000 դահե-
“ կան միայն հատուցեր է ինձ ։ Թէպէտ և շատ անգամ
“ խոստացաւ նա գրով թէ շուտով կը յղարկէ ինձ ըստակ ,
“ բայց չպահեց նա իր խոստումն մինչ հիմայ , և զիս կարօ-
“ տութեան և նեղութեան մէջ ձգեց ։ Թէպէտ և Պ. Միքայէլ
“ Մանանեանի տան կրնակիմ , բայց այլ մանաւոր և հար-
“ կաւոր ծախքեր ունիմ , զգեստի և գիրք տպելու համար ,
“ որ պարտքով կընեմ , և որ պէտք է ըստ ժամանակին
“ հատուցանեմ , ապա թէ ոչ՝ պատիւս կը կորսնցնեմ , և
“ այս՝ այդ մարդուն պատճառաւ , որ ազգասէր և բարեկամ
“ մեզ կհամարուէր , և որոյ վերայ մենք ամէնքս վստահ էինք ։

„ Կը տեսնենք հիմա Ազնուագուն Տիկին, հատուցումն յիսուն
„ տարուան աշխատութեանս մեր ազգին համար։ . . .
„ Երկու փոստայով յառաջ գրեցի ես իրեն թէ կարօտու-
„ թիւնս ըստակի և համբերութիւնս ի վերջին ծայր հասած
„ են, եթէ չփութաս դու շուտով ճար մը ընել, կը բռնագատիմ
„ ես վերջին փորձ փորձել, որ ոչ ձեզի պատիւ և ոչ ինձ
„ մխիթարութիւն կըլլայ։ . . .
„ Այս գրիս պատասխանի չստացայ ես մինչեւ հիմայ, և
„ չեմ յուսար ստանալ ապա։ . . .
„ Յառաջ քան զվերջին փորձն փորձել, այսինքն ուրիշ
„ ճանապարհաւ պահանջել իմ ըստակը, կուզեմ շնորհ մը
„ խնդրել վեհափայլ Գէորգ Պէյէն, միջնորդութեամբ
„ Ազնուագուն Տիկնոջդ խօսել և տիպել Պ. Մ. Մոմճեանը
„ որ հատուցանէ իւր պարտքն, իմ առնելիքս իրմէ. եթէ այս
„ շնորհն ինձ կընէ վեհափայլ Պէյն՝ կհամարիմ ես թէ իրմէ
„ իրրեւ պարգեւ այն առնելիքս, և շնորհապարտ կըլլամ իրեն
„ յաւիտեան։ . . .
„ Ահա նոր աշխատութիւն, Ազնուագուն Տիկին, որ կը
„ տամ Ձեզի, վստահանալով իմայրօրինակ խնամ և գութ
„ որ ունէիք և ունիք առ իս միշտ։
„ Փոխադարձ սիրոյ և օրհնութեան ողջունիս առ վեհա-
„ փայլ Պէյ ամուսդ և առ համօրէն սիրելի զաւակներդ,

„ Մնամ միշտ

„ Ազնուամեծար Տիկնոջդ

„ Ի Փարիզ. 15 Նոյեմբ. 1861.

„ Ազօթարար ծառայ

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ. „

Պատասխանի Եպրու Տիկնոջ տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի գրութեամբ Խորէն վարդապետի, և երկրորդ գրու-

թեամբ ձեռին իւրոյ, յորում ծանուցանէ թէ չէ երբէք մուացեալ զնա, և յայտ առնէ թէ վասն խնդրոյ նորա հոգ մեծ է սրտի իւրոյ, և թէ Գէորգ Պէյ Ջանայ հնարս ինչ զտանել ընդ այն, և անհոգ առնէ զնա զայնմանէ, օրինակ զայս.

„ Գերապատիւ և Սիրելեալ Հայր մեր և քարոզապետ.

„ Բարեպաշտուհին Տիկինն Երամեան ընկալեալ զթուղթ
„ Ձեր ուրախ եղեւ յոյժ յոյժ, իրրեւ այն թէ զձեզ ինքն ըն-
„ դունէր դարձեալ . . . և թէպէտ առանձինն և երկար բա-
„ նիւք կամի կշռել մի առ մի բանիցդ պատասխանի, բայց
„ և ինձ յանձն առնէ գրել ձեզ և ծանուցանել զի ինքն
„ անմուաց ունելով զձերդ խնդրուած, առաքեալ է զՊարոն
„ Զունդ անկապաղ առ Մկրտիչ Աղա Մոմճեան և աղերսանաց
„ բանիւք ոտիպեալ է զնա ի հաստուցումն որ առ ձերդ պարտ-
„ ուց, և նորա առաջի արարեալ զիւրոյ արդի պայմանի
„ դժուարութիւնն, հաւակ ուրեմն խոստացեալ է անուտ
„ բանիւք զի յետ ամսոքեայ աւուրց հատուցէ զահեկանս
„ քսան և հինգ հազար, 25,000 այսինքն զչահ դրամագլխոյն,
„ զոր իսկոյն յընդունել անդ՝ առաքեցէ Պ. Զունդ առ Ձեզ.

„ Մնամ միշտ

„ Ձերումդ Գերապատիւ Սրբութեան

„ Կ. Պոլիս. 4 դեկտ. 1861.

„ Անձնանուէր

„ ԽՈՐԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ. „

„ Յ. Գ. Գերապատիւ Հայր սուրբ գիտնաս որ գործիդ
„ հանար սիրաս կհատնի, Պէյն ալ կչանայ ճար մը ընելու,
„ հոգ մի ըներ. սիրով ձեզքերդ կպատգնեմ.

„ Փարիզէն ինչ ես տեսեր, ձգէ՛ հոս գարձիր։ . . .

„ ԵՊՐՈՒ ԵՐԱՄԵԱՆ. „

Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ երկտող գրութեան Եպրու Տիկնոջ, յորում ցուցանէ զմխիթարութիւն և զուրախութիւն իւր ընդ գրութիւն նորա, և ընդ անմոռաց յիշատակութիւնն, և ծանուցանէ նմա զպատճառ մեկնոյ իւր ի Փարիզ, օրինակ զայս.

„ Ազնուամեծար և բարեպաշտ Եպրու Տիկնոջ Երա-
„ մեան ողջոյն սիրոյ և օրհնութիւն ի Քրիստոս։

„ Այս առաւօտ նամակ մը ընկալայ ի Թորէն վարդապետէն
„ միրոյ Գալֆայեան, որոյ մէջ տեսի Ձեր ցանկալի գրուա-
„ ծը, թէ և երկու տող միայն, սակայն տաճն և երկու անձ-
„ գամ կարդացի ես զայն, և միխիթարեցայ և ուրախացայ
„ ոչ սակաւ, ոչ ընդ ակնկալութիւն խոստման Պ. Մկրտիչ
„ Մոմճեանի, զոր շատ անդամ լսեցի, և ոչ արդիւնս ինչ
„ տեսի. այլ ընդ անմոռաց յիշատակութիւնն և հոգը որ
„ ունիք զուք ինձի համար։ Բաւական և շատ է ինձ այս,
„ Ազնուագոյն և Բարեպաշտ Տիկին։ Կարօտութիւն և յի-
„ ուսթիւն սրտաթոյ կանցնին էրթան, բայց յիշատակու-
„ թիւն սիրոյ և կարեկցութիւն մտաց մարդոյ կմնան միայն
„ ի միխիթարութիւն և ի խնդութիւն սրտի կարօտելոյն։ . . .

„ — Փարիզէն ինչ ես տեսեր, կսէք, ձգէ՛ հոս գարձիր։ „
„ Այդ կարեկից և մտերիմ բանից ձերոց, Ազնուագոյն
„ Բարեպաշտ Տիկին, այն ժամանակ կտամ պատասխանի,
„ երբ որ սկսած գործոս տպագրութիւնը կը լմընայ. բայց
„ ի ժամուս չունիմ այլ ինչ կարեւոր, բաց ի սիրոյ և յար-
„ գանաց ողջունէ առ Վսեմափայլ Գէորգ Պէյ ամուսին,
„ հանդերձ մոգթանաք ի մեռս նորոգ տարեոյն վասն յաջո-
„ ղութեան ամենայն գործոց իւրոց որք յօգուտ ազգին և

“ ի պարծանս տոհմին իւրոյ, և օրհնութիւն առ հանօրէն
“ սիրելի Տունդ իւրաքանչիւր յանուանէ, և

“ Մնամ միշտ

“ Ազնուամեծար Տիկնութեանդ

“ Ի Փարիզ. 13 դեկտ. 1861.

“ Ազօթարար ծառայ

“ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՐԻՈՐԵԱՆ. ”

Թուղթ Սարգսի վարդապետի առ Եպրու Տիկին Երամեան, յորում նախ շնորհաւորէ նմա զտուրբ Զատիկն. ապա ծանուցանէ զնեղին վիճակ իւր, զկարօտութիւն արծաթոյ, որ ի պատճառս զլացութեան Մոմճեանի, չհատուցանելով զարծաթ իւր. և խնդրէ ի նմանէ զի Գէորգ Պէյ անձամբ խօսիցի ընդ Մոմճեանի և իմասցի զկամս նորա. օրինակ զայս.

“ Ազնուամեծար և Բարեպաշտ Եպրու Տիկնոջ
“ Երամեան ողջոյն սիրոյ և օրհնութիւն
“ ի Քրիստոս,

“ Որչափ որ քաղցր է ինձ գրել թուղթ շնորհաւորութեան
“ առ Ազնուութիւն Ձեր, այնչափ դառն է ինձ աւելացնել
“ անոր ետ ուրիշ բան, մանաւանդ այնպիսի բան որոյ համար
“ ազնուադուն սիրտ Ձեր կհատնի, ինչպէս որ գրերէիք ինձ
“ երբեմն. սակայն, ըստ բաղձին իմոյ, կբռնադատէ զիս
“ հարկն այսօր ընդդէմ կամացս վարել, և յուսալ ի կարեկից
“ բարեկամութիւնդ ներողութեան հանդիպել.

“ Կշնորհաւորեմ նախ Բարեպաշտ Տիկնոջդ զՅարութիւն
“ Քրիստոսի Տեառն մերոյ, մաղթելով ձեզ երկար և քաջա-
“ ռողջ կենդանութիւն հանդերձ ամենայն բարօրութեամբ,

„ նոյն և համօրէն սիրելեացդ, մասնաւորապէս վսեմափայլ
„ Գէորգ Պէյի ամուսնոյդ։
„ Եւ ապա կծանուցանեմ Ձեզ զվիճակն իմ, յորում կամ
„ ես այժմիկ։ Պարոն Մկրտիչ Մոմճեան որ խոստացեր էր
„ Ձեզ, ինոյեմբերի անցած տարուան, յետ մէկ ամսէն հա-
„ տուցանել ինձ 25,000 դահեկան անխափան, սակայն մին-
„ չեւ հիմայ ոչինչ հատոյց ինձ նա, և զիս ի վերջին կարօտու-
„ թեան և ի ներքոյ պարտքի ձգեց անգթութեամբ իւրով։ . . .
„ Եկած ամիս երեք տարի կըլլայ որ իմ ըստակը իրեն
„ ձեռքն է, որոյ շահն է 36,000 դահեկան, 5,000 դահեկան
„ միայն անկից հատուցեր է ինձ նա, կմնայ հատուցանելի
„ 31,000 դահեկան։
„ Հիմայ ես ատոր համար մէկ և վերջին շնորհ մը կխնդրեմ
„ Վսեմափայլ Գէորգ Պէյէն որ անձամբ խօսի ընդ Պարոն
„ Մկրտիչ Մոմճեանին, և իմանայ զկամս նորա, թէ մինչեւ
„ եկած ամիս, մայիսի, կամի նա հատուցանել ինձ անխա-
„ փան այս 31,000 դահեկան շահն ըստակին իմոյ, թէ ոչ.
„ և այս շնորհը ծանուցանել ինձ փութով կաղաչեմ, որպէս
„ զի գիտնամ, թէ ինչ ունիմ ես առնել . . . վասն զի ի վեր-
„ ջին կարօտութեան եմ։ . . .
„ Ներումն անախորժ մասին գրոյս խնդրելով,

„ Մնամ միշտ

„ Աղնուամեծար Տիկնութեանդ

„ Ի Փարիզ. 10 ապրիլ. 1862.

„ Աղօթարար ծառայ

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՒԴՈՐԵԱՆ.“

Թուղթ Սարգսի վարդապետի առ Եպրու Տիկին Երամեան, յորում գանգատի ընդ լռութիւն նորա, չպատասխանելով թղթոյ իւրոյ, օրինակ զայս.

“ Ազնուամեծար և բարեպաշտ Եպրու Տիկնոջ Երամեան
“ ողջոյն սիրոյ և օրհնութիւն ի Քրիստոս ։

“ Հինգ ամիս է որ գրեցի ես հարկաւոր թուղթ մը առ Ազ-
“ նուութիւն Ձեր, և աղաչեցի որ շուտով տայիք ինձ պա-
“ տասխանի, մինչև հիմայ չեղէ արժանի . . . միայն իմացայ
“ ի թղթէն Ամերոսեայ վարդապետի, որոյ ըսեր էք, որ գրեմ
“ ես քաղցրութեամբ առ Պ. Մ. Մոմճեան, զի կարող է նա
“ հաստատանել զգարուս իւր ։

“ Շատ շնորհակալ եմ այս ազգասիրութեան Ձերոյ և
“ տեղեկութեան ։ . . .

“ Թէպէտ և գիտէի ես, Ազնիւ Տիկին, որ անհաճոյ էր
“ Վեսմարիայէ Գէորգ Պէյի խօսել ընդ Պ. Մ. Մոմճեանի
“ իմ բանիս համար, այլ չունելով իմ այդ տեղ ուրիշ անձն
“ կարելիոյ ինձ՝ համարձակեցայ ես խնդրել ի նմանէ զայն
“ շնորհն. բայց չգիտէի ես թէ ծանր էր Ձեզ երկու տող գրով
“ ծանուցանել ինձ զդժուարութիւն յանձնարարութեան
“ իմոյ ։ . . .

“ Արդ համարձակութեանս և անզգուշութեանս իմոյ խնդրեմ
“ ի Ձէնջ թողութիւն ։ . . .

“ Շատ բան ունիմ գրելու Ձեր Ազնուութեան, բայց գի-
“ տեմ որ պիտի չտայք պատասխանի գրոյս, ինձ ի միխիթա-
“ բութիւն, անոր համար զանց կառնեմ ։

“ Բազում սիրոյ ողջոյն և օրհնութիւն ի Քրիստոս մատու-
“ ցեալ համօրէն սիրելեացդ՝

“ Մնամ միշտ

“ Ազնուամեծար Տիկնութեանդ

Ի Փարիզ . 5 սեպտ . 1862 .

“ Ազօթարար ծառայ

“ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՊՈՒՐԵԱՆ . ”

Թուղթ Սարգսի վարդապետի առ Պ. Մ. Մոմճեան, յորում գանգատի ընդ յապաղումն խոստման նորա, ծանուցանէ նմա զվերջին կարօտութիւն իւր և զպարտաւորութիւնն, ապաչէ զնա ազատել զինքն անտի ժամ մի յառաջ և զիարդ և ինչ եղանակաւ, օրինակ զայս.

„ Մեծապատիւ Տէր և կարեկից բարեկամ.

„ Ահա ամք երեք են զի յուսով և խոստմամբ պահէք զիս
„ դուք, և ես համբերութեամբ մեծաւ և բազում նեղութեամբ
„ ձեռամ ասա, զոր մի առ մի յիշեցուցանել ձեզ ուրիշդ
„ հանարիմ, զիտելով ձեր իսկ զայն . . . և ահա պատեհու-
„ թիւնն որում ձեայիք դուք, կարգաւորութեան առեմ
„ դրամական իրաց այդր. ապա ձեայ ձեզ արդ կատարել
„ զխոստումն ձեր, հատուցանել ինձ զարծաթս հանդերձ շա-
„ հիւն, և ազատիլ իմ ի նեղութենէս ասաի, որ ի վերջին
„ ծայրն հասեալ է. քանզի ընդ պարտուք 15,000 Ֆրանքաց
„ անկեալ կամ այսօր, և չունիմ այլ ուստեք օգնութիւն
„ հատուցանելոյ զայն, բայց յարծաթոյս որ առ Ձեզ կայ,
„ և ոչ ոք տայր ինձ ասա փոխ արծաթ, եթէ չունէի ես
„ զմուրհակդ ի ձեռինս իբրև գրաւական և ժամանակ նորին
„ անպայման . . .

„ Ապա ապաչեմ զՁեզ, կարեկից բարեկամ, ազատեցէք
„ զիս ժամ մի յառաջ ի պարտուցս ասաի, հատուցանելովդ
„ զարծաթս փութով, և զիարդ և ինչ եղանակաւ, ասէիք
„ ասեմ Ֆրանքաց, առ ի պահել զպատիւ մեր հասարակաց։
„ Այսու բարեյոյս ակնկալութեամբ և ողջունիս սիրոյ և
„ օրհնութեան ի Քրիստոս առ համօրէն ազնիւ Գերդաստանդ,

„ Մնամ Մեծապատիւ Տէրութեանդ

„ Ի Փարիզ. 5 սեպտ. 1862.

„ Աղօթարար ծառայ

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ. „

Պատասխանեի Պարոն Մկրտիչ Մոմճեանի առեալ թղթոյ Սարգսի վարդապետի, յորում թէպէտ և կարեկից ցուցանէ զինքն կարօտութեան և նեղութեան նորա, թէպէտ և խոստանի կրկին և կրկին զանպայման պարտս իւր զոր պարտի հատուցանել նմա, այլ գարձեալ անտի յուսով պահել զնա, օրինակ զայս.

„ Գերապատիւ արքեպիսկոպոսն Հայր իմ.

„ Նամակ Սրբութեանդ թուագրեալ ի 5 սեպտեմբերի „ հասեալ առ մեր Նուստութիւն, արդարեւ բազում կա„ րեկիր վշտաց ապար զմեզ հաղորդ, և գիտելով չափ թէ „ Դուք՝ ոչ այնչափ անկարելիր և անզուգ նեղասէր զիս „ ընդ ստատպանս Վերանագարդ Սիրելոյ Հօրդ, բայց և „ այնպէս խոստովանել արժան է՛, զի ի բազում ժամանակէ „ հետէ զլացեալ զոտք ի խոստմանս մերում, որով բազում „ անձկութեանց ձերոց եղուն առիթ.

„ Արդ այժմիկ հարկ ի վերայ կայ մեզ խուսել ի սպառ ի սպառ „ և յընդվայր խոստմանց, և զարժանին և զյանկարելին „ առնուլ ի մէջ բան, զի երկու ուստք հանդարտեցին սիրտք „ և հոգիք, և մի՛ ընդ վայր ակնկալութեամբ խօսիլ եւ ստա„ էլ բարդեցին հոգս և վիշտս.

„ Յօրէ անտի՝ յորմէ հետէ ի ծանօթութիւն եկի Սրբատուն „ Հարցդ և կամ Սրբութեան ձեր ի մայրաքաղաքի առ կա„ յսք յոճախակի այցելութիւն և խնդրուած ընդ հանին „ աղգայինս մեր, կարծեմ թէ ի մասին անկեղծ և անխարդախ „ սիրոյ և բոլորանուէր կցորդութեան զնուաստութիւն մեր „ գոնք այր լսատ արտի ձերոյ, և յաժարակամ առ ամենայն „ ազգուտ գիտուն արուամ վաստակեցիր անխոնջ ճգամբ, „ և զայս ասել այնչափ վատահ եմ, մինչև չկարօտիլ վկա„ յութեան ուրուք, երբ Սրբութիւն ձեր անձամբ անձին „ ի փարձ մատեալք ընդ իս, մինչև ի ժամուն՝ յորում ամենե„ քեան լքեալ մերժեալ բնաւ զազգային վարժարանն, և

“ ցիրուցան մանկտին, և որ ի նմա վաստակաւորացն Արքա-
“ սընելոց ահագին անձկութիւն և տառապանք և մեծագէղ
“ դումար պարտուց. ոչ ապաքէն ձերոյդ համոզիչ յորդո-
“ բանօք խրախուսեցաք տակաւին, մի՛ բնաւ լքանիլ ի ձեռ-
“ նարկեալս նպաստից և ի սպասահարկութենէ, և ի վերայ
“ մեծագումար ֆրանքացն զոր մինչեւ ցնոյն կէտ վեհանձնա-
“ բար տուեալ էք, յաւելուլ տակաւին ի քանի մի նուազան
“ երկոտասան հազար եւս ֆրանքաց, որք բոլորեցան ընդ
“ ամենայն ի քսան և հինգ հազար ֆրանք. և ապա բազում
“ աշխատութեամբ հազիւ կարացեալ հաւաքել ասի և ան-
“ ոի կիսով չափ, տակաւին աւելի քան զկէսն, իբրեւ տասն
“ և չորս հազար ֆրանքս մնայ առ իս անվճար, որք ըստ
“ այնր ժամանակի արժէից, բոլորին ընդ ամենայն իբրեւ
“ ինեւն և հինգ հազար Օսմանեան դահեկան։

“ Եւ արդեօք յո՞յր պէտս ծախեցան և սպառեցան այսքան
“ դրամք, զայս արժան է ի քննին առնուլ. մի՛ արդեօք ի մեա-
“ ցորդ պարտուց թագաւորաց աշակերտաց և ի պատահական
“ ծախուց նոցին զանվճար մնացելոցն կարծիցեմք. և ոչ բնաւ,
“ քանզի յետ աւուրց անձամբ ի Պոլիս եկեալ Ամենապատիւ
“ Ամբրոսիոս վարդապետ և մատակարար պարոն Նշան, և
“ հաշիւ և տոմար և պարտիք և պահանջ բովանդակն ի մէջ
“ ածեալ և մանր զննեալ, և ահա մեծ դումար դրամաց
“ սպառեալ և վճարեալ էին ի նախկին և ի հին պարոնն
“ վարժարանին, որ յերից ամաց հետէ և անդր զիրեալ էին.
“ և արդեօք պարտք գրեացի նուաստս յիմ քսակաց վճարել
“ զայնոսիկ և յերից ամաց հետէ լուել ամենեին և շարա-
“ հանջել յուսիցէ։

“ Դուք՝ ո՛ Արքասուն Հայր ցանզ ընդ իս էիք, և խնդամուտ
“ իսկ եղերուք, թէ զիա՞րդ խրատանչիւր յօթնեակս ի պա-
“ տասխանի առանին գրեցելոցն ի Փարիզէ ֆրանքաւ և եթ
“ պատասխանէաք։ “ Ահա դառն վիճակ պաշարեալ է զմեզ,
“ և չկարեմք խուսել ի պարտատերացն, առաքեսջիր զոմն
“ երկու հազար ֆրանք։ ” — “ Ահա նքթեմք ի տոմոց, առա-
“ քեսջիր զեթ հազար ֆրանք։ ” — “ Ահա պարտապետք

«գրաւել ունին զկարասիս վարժարանին, և ի բանս վարել
«զվերատեսուչն գուցէ և զմանկտին, առաքեսջիր շորս հազար
«ֆրանք։ »» Այսոսիկ բանք են նամակաց նոցին, և մեք
«մտադիր ըմբռնեցաք ի բանս նոցին և ի խրախոյս և ի յու-
«սադրութիւն Սրբասուն Հօրդ, և ոչ դադարեցաք երբէք
«ի նպատակելոյ, մինչև դուն ուրեմն ընդ միտս եկեալ ծա-
«նեալք ստուգութեամբ, եթէ ընդ վայր թափեցաք ճիգն, զի
«զպարտս և զծախս նախնի և հին մեացորդացն մարեցաք։

«Արդ՝ ի յուշ ածելով զայսոսիկ առ Սրբութիւն Ձեր, ոչ
«եթէ վասն խուսելոյ ի պարտաւորութեանց անտի իմոց
«գրեմ, զոր մուրհակաւ պարտաւորեցայ հատուցանել
«Սրբութեանդ, այլ զի հմուտ լինիջիք եթէ ես որ առանց
«ակնկալութեան իմիք իմովանն զայս օրինակ փութացայ
«ի կարիս վարժարանիդ, և նոքաւ ի պէտս Սրբասուն Հարցդ,
«այժմիկ եթէ գոյին յիս կարողութիւնք տակաւին գոյից,
«մինթէ զլանայի երբէք ի հատուցանելոյ զյատուկ մուրհակաւ
«իմով զպարտին իմ, մինչդեռ այնօրինակ անենկուն ճգամբ
«օգնէի առատութեամբ ի կարիս Ձեր. ուստի յայտ է զի
«վասն բազում և տարապայման վնասուց և տուժից որ
«յերկուց տմաց հետէ ծանրացան յաւելան ի վերայ իմ,
«չսան թոյլ վճարել զպարտաւորութիւնս իմ։ . . .

«Գուցէ այժմիկ ի պատասխան նամակի ձերոյ՝ զայս ինչ
«գրեմ հատատութեամբ. ահագին գումար պարտուց որ առ
«արքունի գանձուն, և առ վճարումն նորին մեծագումար
«պահանջմունք իմ մուրհակաւ հանդերձ առ այս և առ այն
«անձինս որք բնիկ յանձարդ էին ինձ և առ որս հատատ-

“ տեսալ էաք դաշինս տուրեւառից, զմուրհակսն և զանձինսն
“ առ այժմ ներկայացուցի առ պաշտօնեայս արքունի զան-
“ ձուն, որք գուն գործեն վճարել նոքաւ զպարտս իմ և
“ ազատել։ Իսկ որ արտաքոյ զանձուն պարտիք և պահանջք
“ մեր ճգնիմք ամենայն փութով մի առ մի մաքրել և ազա-
“ տել. բայց յայտնի է զի այս փոքր մի միջոցի և ժամանա-
“ կաց կարօտի, վասն որոյ և առ ձեզ տակաւին չեմք կարող
“ փոքրս ինչ մատուցանել նպաստ. ուստի զայս ինչ կարո-
“ ղացայ ի ժամուս ածել միջոց և խորհուրդ.

“ Յայտ եղեւ ի բոլանդակ վերոյասացեալ գրուածոցս, զի
“ բոլանդակ որ վասն վարժարանին պահանջմունք իմ, ոչ
“ է վարժարանին, այլ ի վերայ Ամբրոսեայ վարդապետի Հօր
“ մերոյ կայ. և այս այնքան հաւատի և անտարակոյս է,
“ որչափ տեսաք հաւատեաւ, զի ի հաշիւ վարժարանին մեծ
“ գումար գրամոցն ուղղեալ առ Ամբրոսիոս վարդապետ,
“ մեծաւ մասամբ չէին նշանակեալ. ուստի առ այժմ փոքր
“ ի շատէ նպաստեցէ որբութեանդ Ամենապատիւ Ամբրոսիոս
“ վարդապետ Սիրելի մեր. և այն ոչ յիւր քսակէ, այլ յատ-
“ կապէս վասն հաշուին մերոյ, և այնպէս լիցի ձեզ փոքր մի
“ ոգի առնուլ, և մեզ նաւ տացի դիւր, մինչեւ կարող եղէց
“ մերթ ընդ մերթ և ի մեր կողմանէ առաքել առ Որբութիւն
“ ձեր զմնան մասն գրամոց, և ընդ այս մի՛ դժուարեսցի
“ երբէք Դեր. Ամբրոսիոս վարդապետ Սիրելի Հայր մեր, զի
“ պահանջմունք իմ ոչ պատկանի Ազգին այլ առ Նա, և զի
“ Նորին խնդրանաք առաքէք այնքան գումար Ֆրանգաց. և
“ տակաւին զմեծ գումար առաքելոցս՝ ուստի և անտի մա-
“ բացաք, և հազիւ մարթացաք զքսան և հինգ հազար Ֆր.
“ պահանջմունս իմ իջուցանել ի տասն և չորս հազար Ֆր.
“ բանք։ Այս առաջին անգամ բազում ցաւովք սրտի զրեցի
“ և յիշեցի. և եթէ էր յիս կարողութիւն տակաւին, և դուք
“ իսկ սրտի մտաք վկայէք, զի առ սէր մտերիմ բարեկամու-
“ թեան խնդ և ոչ ընդ միտ երբէք ածէի զայսոսիկ. բայց
“ քանզի յայս կէտս առաջոյ և տուգանաց և վնասու մատ-
“ նեալ եմ, պարտաւոր համարիմ զանձն իմ զոնէ այսքան մի

„ նշանակել և դիւր առնել փոքր մի ծանր ամօթոյս զոր պար-
„ տաւորեցայ գրել այսօրինակ առ Սրբութիւն ձեր ։

„ Մնամ

„ Սրբութեանդ

„ Պոլիս . 13 սեպտեմբեր . 1861 .

„ Մտերիմ բարեկամ

„ ՄԿՐՏԻՉ ՆԻԿ. ՄՈՄՃԵԱՆ . „

Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ թղթոյ Մոմ-
ճեանի , յորում յանդիմանել զնա ընդ պակասութիւն խոստման
և պարտուց իւրոց , յիշեցուցանել նմա զպայմանն յանձնելոյ
ի ձեռս Նորա զարծաթ իւր , և ապառնայ նմա վաճառել
զմեւրհակ պարտուց Նորա ի գտանել զիրաւունս իւր , օրի-
նակ զայս .

„ Մեծապատիւ Տէր և կարեւոր բարեկամ .

„ Ցեռս երկար համբերութեանս և վերջին կարօտութեանս
„ արծաթոյ , և մինչդեռ ճնայի ես մեծաւ յուսով ընդունել
„ ի կարեւոր բարեկամէդ միսիթար ինչ պատասխանի աղեր-
„ տական գրութեանս , ահա ընկալայ անմխիթար պատաս-
„ խանի ։

„ Աւելորդ և ի զուր համարիմ առնել պատասխանի սին
„ և աննշան բանից թղթոյդ , լսելով զայն բազում անգամ ,
„ այլ կարեւոր և նշանաւոր բանից միայն , զորս և յառաջ
„ բերեալ ի սին՝ արարից անեաչառ և զարժան պատաս-
„ խանեին ։

“ — Յայտ եղեւ, ասէք, ի բովանդակ վերոյասացեալ
“ գրուածոցս, զի բովանդակ որ վասն վարժարանին պա-
“ հանջմունք իմ, ոչ է վարժարանին, այլ ի վերայ Ամբրո-
“ սիոսի վարդապետի Հօր մերոյ կայ. և այս այնքան հաւասարի
“ և անտարակոյս է, որչափ տեսաք հաւատեաւ, զի ի հաշիւ
“ վարժարանին մեծ գումար դրամոցն ուղղեալ առ Ամբրո-
“ սիոս վարդապետ մեծաւ մասամբ չէին նշանակեալ. ուստի
“ առ այժմ փոքր ի շատէ նպաստեսցէ Սրբութեանդ Ամենա-
“ պատիւ Ամբրոսիոս վարդապետ սիրելի մեր, և զայն ոչ
“ յիւր քսակէ, այլ յայտնապէս վասն հաշուին մերոյ, և
“ այնպէս լիցի ձեզ փոքր մի ոգի առնուլ, և մեզ եւս տացի
“ դիւր, մինչեւ կարօղ եղէց մերթ ընդ մերթ և ի մեր կողմա-
“ նէ առաքել առ Սրբութիւն ձեր զմասն մասն դրամոց. և
“ ընդ այս մի՛ դժուարեսցի երբէք Դեր. Ամբրոսիոս վարդա-
“ պետ սիրելի Հայր մեր, զի պահանջմունք իմ ոչ պատուական
“ Ազգին, այլ առ նա. և զի նորին խնդրանօք առաքէաք այնքան
“ գումար ֆրանքաց, և տակաւին զմեծ գումար առաքելոցս՝
“ ստոյ և անտի մուրացաք, և հազիւ մարթացաք զքսան և
“ հինգ հազար ֆրանք պահանջմունս իմ ի՛ջուցանել ի տասն
“ և չորս հազար ֆրանք։ Այս առաջին անգամ բազում ցա-
“ ւովք արտի գրեցի. և եթէ էր յիս կարողութիւն տակաւին,
“ և ոչ ընդ միտս երբէք ածէի զայսոսիկ. բայց քանզի յայս
“ կէտ տուժից և տուգանաց և վնասու մատնեալ եմ, պար-
“ տաւոր ճանաչեմ զանձն իմ զոնէ այսքան մի նշանակել,
“ և զիւր առնել փոքր մի ծանր ամենայն զոր պարտաւորեցայ
“ գրել այսօրինակ առ Սրբութիւն ձեր։ ”

“ Ահա այսոքիկ են կարեւոր և նշանաւոր բանք թղթոյդ
“ զոր պարտաւորեցայք, ասէք, գրել առ իս, և ահա տային
“ պարտիմ և եւս առնել ի սմին զանազան և զարժան պա-
“ խանին։

“ Վասն որոյ ասեմ նախ՝ թէ ոչ գիտէի ես ցարդ թէ, ու-
“ նէիք զուք այնքան պահանջմունք ի վերայ Ամբրոսիոսի
“ վարդապետի Հօր ձերոյ, և թէ չեմ ես բնաւ հաղորդ և

“ երաշխաւոր այդ մանաւոր առաչութեան ձերոյ ։ Երկրորդ՝
“ թէ ընդէր լռեցէք դուք և ոչ յայտնեցէք խնամակալաց ,
“ թէ ի հայիւ վարժարանին մեծ գոռնար դրամոցն ողողեալ առ
“ Ամբրոսիոս վարդապետ մեծաւոր մեսարան չէին ներանակեալ ,
“ յորժամ Ամբրոսիոս վարդապետն ի հրամանէ խնամակալաց
“ յանդիման եղեալ այդր , և ետ զհայիւ երկոց և մոլոց վար-
“ ժարանին , հանդերձ հաւատեօք և արդարացաւ , ըստ
“ բանից գրութեան իւրոյ առ իս ի Տփխիս , այն զի զայնքան
“ գոռնար ֆրանգաց նորին խնդրանօք առաքեալ էիք ի հատուց-
“ ցուցանի պարտուց վարժարանին , ըստ բանից գրութեան նորա ,
“ զոր յիշէք ի թուղթն ձեր , և որք ունին օրինակ զայս .

“ — Ահա զառն վիճակ պաշարեալ է զմեզ , և ոչ կարեմք
“ խուսել ի պարտատերաց , առաքեսջիք , զոնէ հազար ֆր-
“ բանք ։ ” — “ Ահա պարտապանք դրաւել ունին զկարասիս
“ վարժարանին , և ի բանս վարել զվերատեսուչն , զուցէ և
“ զմանկտին . առաքեսջիր չորս հազար ֆրանք ։ ” — “ Այսո-
“ քիկ բանք են , ասէք , նամակաց նոցին , (Ամբրոսիոս և
“ Խորէն վարդապետաց ,) և մեք մուսդիւր ըմբռնեցաք ի բանս
“ նոցին , և ի խրախոյս և ի յուսադրութիւն Սրբազան Հօրդ ,
“ և ոչ դադարեցաք երբէք ի նպաստելոյ , մինչև զուն ու-
“ բեմն ընդ միտս եկեալ ծանեաք ստուգութեամբ եթէ ընդ
“ վայր թուլեցաք հիգն , զի զպարտս և զծախս նախնի և հին
“ մեացորդացն մաքրեցաք ։ ”

“ Ոչ ապաքէն լռելով ձեր և չյայտնելով զճշմարտութիւն
“ ընդդէմ արդարութեան գործեցէք . թողով առաւելաւ
“ պարտուց վարժարանին , մնասեցէք պարտատերաց նորին ,
“ մանաւանդ Պարոն Միքայէլի Մանանեան , որոյ պահանջեալ
“ զհաւատն պարտս վարժարանին , պատասխանեն Իրախ-
“ տագէտ և երկիւղած խնամակալքն վարժարանին , թէ ես
“ իցեմ երաշխաւոր պահանջման նորին ։ Ահա անիրաւութիւն
“ որ ի լռելոյդ զճշմարտութիւն . . .

“ Երրորդ՝ թէ ընդէր ոչ ասացէք զուք զայդ բերանով
“ Ամբրոսեայ վարդապետի Հօր ձերոյ , մինչդեռ այդր առ-

„ ձեզ էր նա, և խօսէր ի դիմաց իմոց զպահանջմանէս առ
„ ի ձէնջ, և ոչ պատուիրեցիք նմա հատուցանել ինձ դուռնար
„ ինչ արծաթոյ ի հաշիւ պահանջման ձերոյ առ ի նմանէ։ . . .

„ Բայց գիտաջիք, զի յընթեռնուլս զթուղթդ յակամնջս
„ նորա, Ամբրոսիոսի վարդապետի Հօր ձերոյ, մերժեաց նա
„ զխնդիրդ բացէ ի բաց, և ժխտեաց բոլորովին այդչափ
„ պարգևացդ առ ինքն. և այս եւս արդիւնք ի լռելոյդ
„ զճմարտութիւն։ . . .

„ Ապա ձեզ մնայ, առաւաւիտ և արդարաբէր Պարոն,
„ ապացուցանել զայն հաւատեօք, ի հաստատութիւն բա-
„ նիցդ ճշմարտութեան, և ի լրումն արդարութեան, որ
„ ի խնդիրն պահանջման հաւատի պարտեաց վարժարանին,
„ ծանուցանել ինձ գրովդ, թէ ո՞րչափ դուռնար արծաթոյ
„ անցուցեալ իցէք ի ձեռս Ամբրոսեայ վարդապետի, ի խնդրոյ
„ նորին, և չերեսի այն ի հաշիւ վարժարանին, որով գարման
„ տարցի արդեօք անիրաւութեան։ . . .

„ Գալով այժմ ի կարեւոր խնդիրս, այս է, ի հաւատի
„ և յարդար պահանջումն իմ առ ի ձէնջ, պարտ է դարձեալ
„ ի սկզբանէ անտի առնել զայսմանէ յիշատակութիւն, թէ-
„ պէտ և երկնումն լիցի բանիցս, և անախորժ լսելեացդ, այլ
„ բռնադատէ զիս վերջին գրութիւնդ առնել զայս։

„ Յորժամ դէպ եղեւ, յամին 1859, գնալ ինձ յէջմիածին,
„ ընդ Մատթէոս Կաթողիկոսին, յանձնեցի նա ի ձեռս ձեր
„ այդր թղթադրաւն 100,000 դահեկանի, իբրեւ ի ձեռս հա-
„ տատիմ առն, կարեւոր և կարեկից բարեկամի իմոյ,
„ հանդերձ պայմանաւ, այս է, զահել զայն ի ձեռին ձերում
„ օրինաւոր շահու, մինչեւ ցիջանել ամէն ի Ֆրանքին ի 5 դա-
„ հեկան, յայնժամ փոխել զթղթադրաւն յոսկեդրամ Գաղ-
„ զիոյ և յանձնել ինձ զայն ի դարձին իմում այդր։ Հաւա-
„ նեցայք դուք ընդ այն, և խոստացայք կատարել զպայմանն,
„ և եառք ինձ մուրհակ պարտուցդ։ Թէպէտ և իջանէ
„ ամէն Ֆրանքին ի 5 դահեկան, այլ ոչ կատարէք դուք
„ զխոստումն ձեր այն, պակասելով ի հաւատարմութիւնդ և
„ ի կարեկից բարեկամութիւնդ միանգամայն։ Ի դարձին

“ իմում այդր, յամին 1860, յընդունել զարծաթն իմ ի ձէնջ,
“ զոսկեդրամն, և իմացեալ զանյաջողութիւն գործառնու-
“ թեանդ՝ կարեկից եղէ ձեզ համբերելով և խնդրելով ի ձէնջ
“ զշահ դրամոյս միայն, 2,000 ֆրանք. հատուցիք ինձ զկէսն,
“ 1,000 ֆրանք, և խոստացայք յղել ինձ զմիւս կէսն ի Փարիզ
“ զկնի քանի մի աւուրց հասանելոյ իմ անդ։ Հաւատացի ես
“ խոստմանդ և մեկնեցայ այսր. անցին անտի մինչև ցարդ
“ ամք երեք, և ընկալայ ի ձէնջ ոչինչ։ . . .

“ Թէպէտ և գրեցի ես առ ձեզ երկիցս և երիցս, ուղղակի
“ և անուղղակի, միջնորդութեամբ այլոց, ծանուցանելով
“ զկարօտութիւնս, թէպէտ և խոստացայք միանգամ և
“ երկիցս առաքել ինձ գումար ինչ արծաթոյ առաջիկայ
“ շոգենաւով, այլ չտեսի ես զայն երբէք։

“ Թողից յիշել զնախատինս և զմիւս 80 ֆրանքի զոր
“ ետուք ինձ կրել, դարձուցանելովդ յետս զփոխանակագիրն
“ իմ։ Ահա մխիթարութիւն որ ի կարեւոր բարեկամէդ։ . . .

“ Ի վախճանի՝ իբրեւ լրումն վերջին մխիթարութեան,
“ որում միայի ի կարեկից բարեկամէդ, ահա վերջին անմխի-
“ թար և լքուցիչ պատասխանիդ, զոր վերագոյն յիշատա-
“ կեցի. ապա չմնայ ինձ ընդ այս բանս թողթոյ ձերոյ առա-
“ ւել և այլ ինչ առնել պատասխանի, բայց եթէ զայժմեան
“ վիճակն իմ և զվերջին որոշումն կամացս ձեզ ծանուցանել,
“ և թողուլ զայն յընտրութիւն կամացդ, իբրու առն երկիւ-
“ ղածի և պատուաւորի, այս է.

“ Յետ դարձին իմոյ ի Փարիզ մինչեւ ցարդ՝ ծախքն իմ
“ ի կարեւոր պէտս հասանեն 35,000 ֆրանք, և զայս փոխ
“ առեալ եմ ատի և անտի, յուսալ ընդունելոյ ի ձէնջ
“ զշահ դրամոյս, և վստահութեամբ փոխատուայ տեսանելով
“ ի ձեռին զօրինաւոր մուրհակ պարտուցդ։

“ Խպահանջել երբեմն երբեմն պարտականաց յինէն զպարտս
“ իմ, աղաչեցի զնոսա համբերել ես, յուսալով միշտ ի խոս-
“ տումն ձեր։ Արդ ի հասանել ձեր բոլորովին զյոյսն իմ
“ այսու զրութեամբդ, զի՞նչ միայ ինձ այսուհետեւ, կամ
“ կորուանել խապտս զպատիւն իմ, զվայն միացեալ մխի-

«Թարութիւնս յամենայն վաստակն իմ, և կամ անցուցանել
«զմերհակ պարտուցդ ի ձեռս պարտատերացս, պահանջել
«ի ձէնջ զիրաւունս իմ, և զիւրեանցն զոր պահանջեն յի-
«նէն։ . . . Տեսանէք կարեւոր և կարեկից բարեկամ, ուր
«տարեալ հասուցանէ զիս անկարեկից սիրտ ձեր։ . . .

«Թէպէտ և պատճառ այսմ զանյաջողութիւն գործառնու-
«թեանդ և զանկարողութիւնդ ի ժամուս ասէք, այլ ես
«զուշակեմ զայլ ինչ պատճառ այսմ, մանաւանդ թէ յայտ-
«նապէս տեսանեմ, զի յուսացեալ էք զուք արդարացու-
«ցանել զձեզ վերոյիշեալ պատճառաւք, առատձեռն պար-
«գեւօքդ առ Ամբրոսիոս վարդապետ, և կորստեամբ զումար
«ինչ արծաթոյ ի պաշտօնդ անդ խնամակալութեան վարժ-
«բանին, վասն այսոցիկ զանայք զուք հասուցանել զիրա-
«ւունս իմ։ Այո՝ այսոքիկ են կարեւոր և կարեկից բարեկամ,
«որով համարիք արդարացուցանել զձեզ յանկարեկցութիւնդ,
«և մխիթարել զիս անուոի յուսով ի կարօտութեանս, որպէս
«և յայտ է ի վերջին բանից թղթոյդ որ ունի այսպէս.

«— Բայց քանզի յայս կէտ ուժից և տուգանաց և
«վնասու մատնեալ եմ, պարտաւոր ճանաչեմ զանձն իմ
«զոնէ այսքան մի նշանակել, և զիւր առնել փոքր մի տմ-
«թոյս, զոր պարտաւորեցայ գրել այսորինակ առ Սրբու-
«թիւն ձեր։»

«Թէպէտ և վերադոյն ասէք. «Արդ՝ ի յուշ ածելով զայ-
«սոսիկ առ Սրբութիւն ձեր, ոչ եթէ վասն խուսելոյ ի պար-
«տաւորութեանց անտի խնդրեմ, զորս մերհակաւ պար-
«տաւորեցայ հասուցանել սրբութեանդ.» սակայն ար-
«դեամբք խուսեցայք անտի զանազան պատճառանաք։ . . .

«Թողից ասել զբերանացի ասացեալդ պատճառն, և ազ-
«դեալդ ինձ ձեռամբ Ամբրոսեայ վարդապետի թէ «Պար-
«տիւք ասոի և անտի սնուցանէք զառնդ յերից ամաց
«հետէ։»

«Եւ առ այս ասեմ ես, եթէ կարող էք զուք պարտիւք
«սնուցանել զզերդասանդ մեծ, անկարող իցէք հոգալ

“ զկարեւոր պէտս անձին մեոյ կարօտելոյ, առաքել նմա
“ ամեոյ ամեոյ 200 ֆրանք միայն, և այն իրրեւ իրաւունք, և
“ ոչ իրրեւ շնորհ, և չթողուլ զնա ի վերջին կարօտութեան
“ և ի վտանգ անպատուութեան։ . . . Ապա յայտ է թէ
“ չունիք դուք կարեկից միտս և կամս բնաւ հաստատելոյ
“ զիրաւունս նորա։ . . .

“ Յիշիցէք արդեաք զնշանաւոր բանս, մանաւանդ թէ
“ զախուր գուշակութիւնն բարեմիտ Տիկնոջդ, ի յանձնել
“ իմ ձեզ զդրամաթուղթն ի տան ձերում, ասաց ինձ նա
“ չվստահիլ իմ ի ձեզ. թէպէտ և զաւէշտարար էր ասացեալն
“ նորա, սակայն տեսանեմ ես այժմ, զի կամիք դուք ասու-
“ դիւ կատարել զայն։ . . . Աւաղ վատահութեան։ . . .

“ Այլ ես յուսացեալ եմ յողորմութիւն Աստուծոյ և
“ յարդարութիւնն որին, որ զիտէ հաստատելոյ իւրաքանչիւր
“ ըստ գործոց, և ի քննութիւն և ի դատաստան վերծանողաց
“ պատմութեան վարժարանին։ . . .

“ Ահա ծանուցի ձեզ զայժմեան վիճակն իմ և զվերջին
“ որոշումն կամացս, հանդերձ յաւաք սրտիս, և ահա թո-
“ ղում զայս ամենայն յընտրութիւն կամացդ, կամ առա-
“ քել ինձ 5,000 ֆրանք պարտս իմ, և կամ բռնադատել
“ զիս անցուցանել ի ձեռս պարտատերացս զմերկակ պար-
“ տուցդ։

“ Մնամ

“ Մեծապատիւ Տէրութեանդ

“ Ի Փարիզ. 16 Հոկտ. 1862.

“ Աղօթարար ծառայ

“ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՐԵԱՆ. ”

Պատասխանի Պարոն Մկրտիչ Մոմճեանի տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի, յորում Չանց արդարացուցանել զինքն

ի գնայս իւր, և թեթևացուցանել զպարտս իւր հնարիւք, և չարդարացուցանել բնաւ զԱմբրոսիոս վարդապետ ի մատակարարութեան և ի տուեալ հաշիւ իւր, օրինակ զայս.

« Գերապատիւ Սարգիս վարդապետ Թէոդորեան
« Սրբազան Հայր իմ.

« Ընդարձակ նամակ Սրբութեանդ թուագրեալ ի 16 հոկ-
« տեմբերի ի պատասխանի նախընթաց գրութեան ժամանեաց
« առ մեզ ի 28 հոկտեմբերի, և ի չորից եօթնեկաց հետէ
« քանիցս անգամ զձեզս ի գրիչ եղեալ և յեռս կապեցայ,
« զի մի վերատին հոգս ի վերայ վշտաց ձերոց յաւելից։ Բայց
« և անպատասխանի թողուլ չէր օրէն, վասն որոյ փութամ
« փոքր ինչ տալ տեղեկութիւն և պատասխանի, ոչ վասն
« իրաւացի բանիցդ զորս բաւական զլեռվք գրաւեն տո-
« ղեալքդ, այլ վասն քանի մի խնդրոց յորս թուի թէ վրի-
« պեցուցեալ են յոյժ զողջմտութիւն ձեր ի ճշմարտու-
« թենէ։

« Եւ այսոքիկ են խնդիրք. Նախ՝ թէ ընդէր լռեցաք յերից
« ամաց հետէ վասն մեծադումար պահանջման, երբ ամենա-
« պատիւ Ամբրոսիոս վարդապետ Հայր ինքնին ի Զօլիս այ-
« ցելութեամբն ներկայացոյց խնամակալաց զհաշիւ վարժա-
« բանին, յորում շերեւին ասէք մեծ գումար ֆրանքաց
« առաքելոց յիմէ կողմանէ ի Փարիզ։ (Գուցէ այսպէս
« հաւատարմացուցեալ են զձեզ։)

« Եւ թէ՝ Ամենապատիւ Ամբրոսիոս վարդապետ չդտաւ
« երբէք պարտաւոր ի հաշիւ ելից և մտից վարժարանին,
« այլ ճիշտ և անթերի համեմատեալ են և պահանջք և
« պարտիք, որպէս գրեալ է նա ինքն առ Սրբութիւն ձեր
« ի Տփխիս։ Եւ թէ՝ բազում հաւատեաք արդարացեալ է
« ի կշիռս հաշուի իւրոյ։

« Երկրորդ՝ ըստ ճիշդ քննութեան քանի մի պարագայից
« ի սկզբանէ ասեալ մինչեւ ցայսօր, վերաբերելոց ի կերպա-
« բանս զործառնութեանց և նպատակաց և գրուածոց խմբոց,

“ և խոստմունց որ առ ձեզ, յայտնի զարմանալ են ի նոսա,
“ զնդիսն արդարութեան ասողքիւնք, զնդիսն ճշմարտութեան
“ անիրաւողքիւնք, զնդիսն հաւատարմութեան վերակացուս, և
“ սիրտ զնուռ անկարելիից. կարք անհասատաս և խարէական,
“ և հաւակ ուրեմն՝ անոտի քաջաղանք խոռանոց ի պարտաւո-
“ ղութենանց իմոց։

“ Երկրորդ չգիտել ասէք մինչեւ ցարդ, թէ այնքան զուսմար
“ պահանջման կալեալ իցէ մեր ի հաշիւ Ամբրոսեայ Հօր, և
“ թէ իցեն եւս, մինթէ երաշխաւոր կացեալ իցէք պարտեարց
“ նորին։ Եւ թէ՝ վասն էր պարտաւոր դատիցի նա նպաս-
“ տել ի ժամուս յահագին անձկութեան ձերում յորում
“ տառապիք, երբ չիք նմա բնաւ մատն և յարաբերութիւն
“ վասն պարտեաց իմոց առ Սրբութիւն ձեր։

“ Եւ ի վախճանի՝ կապ բարեկամութեան և սիրոյ և համար-
“ մանս իմոյ մինչեւ ցարդ որ առ ձեզ, սուտ՝ խաբէական՝ և
“ ի ցոյցս միայն լեալ իցեն, և վրիպեալ բնաւ ի ճշմարիտ
“ բարեկամութենէ։

“ Նախ՝ վասն երից ամաց հետէ լռութեանս զայս առնեմ
“ պատասխանի, թէ ոչ երբէք բնաւ ի սկզբանէ անտի մինչեւ
“ ցայսօր թադուցեալ եմ յուսմբէ զգուսմար պահանջանացս,
“ մանաւանդ թէ Դուք ինքնին ի կրկին անգամ այցելու-
“ թեան ձերում ի Պոլիս, լիովին խնդրամուտ եղէք մեծագու-
“ մար պահանջանացս, և յուսադրէիք իսկ զիս, թէ զուցէ
“ ի Տփխիսէ և յայլ ուրեք կուսէ հաւաքածոյ նպաստիւք
“ ինչ զարման մատուցին այնոցիկ։

“ Բայց յայլ ինչ զիտեն նպաստակ բանիցդ. քանզի ար-
“ դարեւ լռեալ և ոչ երբէք ածեալ եմ ի յիշատակ մինչեւ
“ ցարդ ի գրուածս իմ որ առ ձեզ, յորժամ վասն վճարման
“ պարտեաց և անձկութեանց իմոց տայի տեղեկութիւն.
“ բայց յանցելումն երբ ասատիկ ամբոխումն արտի տադնա-
“ պեցին զիս, ինոյն կարգ և վասն մեծ գուսմար պահանջից
“ իմոց ծանուցի, բայց ոչ թէ այնու պահանջանաքս զպարտս
“ մեր փրկանաւորել, այլ ցուցանել հաւատոնաւ, թէ յորժամ
“ գոյր յիս կարողութիւն գոյից, վասն նպաստելոյ և եթ

„ այնքան առատութեամբ շռայլէ, արդ կարծել օրէն իցէ
„ թէ խուսեցիս երբէք զորս մուրհակաւ պարտաւորեալս եմ,
„ Անհայս յիշատակ վշտացոյց զսիրտս ձեր, և հետեւարար
„ կարծիս ի մտի հատատեցիք, եթէ այս ցոյց՝ սկիզբն է
„ երկանց, և գուցէ այսու յիշատակաւ և պատճառանօք
„ անիրաւել կամիմ սատացուածոց ձերոց, և հետեւարար
„ լուծանին երկրորդ խնդիրքն, մնել մեզ Անհաւատարիմ,
„ Անիրաւ, Անկարեկից, Սուտ բարեկամ, Խաբեբայ, և Անյոյս։
„ Եւ յուսացիս արդեօք լսել ի պատուական Հօրէդ դառն
„ կշտամբանք այսպիսիք առ նուաստութիւն իմ, որ վատահու-
„ հութեամբ ասեմ, թէ և ոչ ընդ միտ ածեալ իցեմ և ոչ
„ տրքու իւիք ածել ինաս կամ տուդանս Սրբասուն Հօրդ.
„ հարկ է ուրեմն ճանաչել եթէ և ոչ մի ինչ պատճառ առիթ
„ եառն ինձ յապաղել ի վճարելոյ զպարտիս իմ, և ճառել
„ յընդվայր (որպէս ասէք) ի նախընթաց նամակիդ, սին, և
„ անտի, և անհեթեթ պատճառաբանութեանց բանք։ . . .

„ Մնամ

„ Ամենապատիւ Սրբութեանդ

„ Պոլիս. 6 դեկտ. 1862.

„ Խոնարհ ծառայ

„ ՄԿՐՏԻՉ ՆԻԿ. ՄՈՄՃԵԱՆ.”

Պատասխանի Սարգսի վարդապետի առեալ թղթոյ Պարոն Մկրտիչ Մոմճեանի, յորում ցուցանէ զցաւս սրտի իւրոյ որ ընդ վատահութիւն ի նա. յիշեցուցանէ նմա զգումար դրամոյ իւրոյ առ նա, և զպայմանն, որով բացէ ի բաց մերժէ և չճանաչէ բնաւ զնորոգ հնարեալ հաշիւ նորա, և ազդ առնէ նմա վերստին պահանջել զիրաւունս իւր, այլ ճանապարհաւ, օրինակ զոյս.

„ Մեծապատիւ Տէր և կարեւոր բարեկամ.

„ Ջերկայն բանիւք և զուղղ խմաստիւք պատասխանին ձեր՝
„ առեալ թղթոյ իմոյ, ընկալայ յշ ամսոյս, և ցաւեցայ
„ դարձեալ և առաւել յոյժ ընդ վատահութիւն իմ որ ի ձեզ։
„ Աւելորդ համարիմ երկրորդել ձեզ վերատին, թէ քանի՛
„ զուսար գրամոյ, և ո՛րպիսի պայմանաւ յանձնեցի ես զայն
„ ի ձեռս ձերոյդր ի Պօլիս յամին 1859, յամսեան մայիսի 18.
„ այլ ապդ առնեմ միայն ակնարկել ձեր վերատին ի թուղթն
„ իմ՝ գրեալ առ ձեզ ի 1 նոյեմբերի 1860. և ի 13 մարտի 1861։
„ Ապա անծանօթ է ինձ և անընդունելի յիշատակեալդ հա-
„ շիւն... այլ ծանօթ է ինձ և միայն ընդունելի վաւերական
„ մուրհակ պարտուցդ որ ի ձեռս իմ այսօր, և որով դուք
„ ինքնին խոստմանիք և խոստանայք հատուցանել ինձ կամ
„ հրամանի իմոյ զպարտս ձեր անպատճառ և անխոսրան, և
„ հաստատէք զա՛ս ի պատասխանիս ձեր առեալք թղթոց
„ իմոց։ . . .

„ Ապդ արարի ձեզ միանգամ և երկիցս գրովս որ ի 25 հոկ-
„ տեմբերի 1861. և ի 16 հոկտեմբերի 1862, թէ հարկաւորիմ
„ և բռնադատիմ ես զվերջինն ի գործ դնել, զմուրհակ պար-
„ տուցդ անցուցանել յանուն պարտատերոյս և ի պահան-
„ ջուն նորին և ապդ առնեմ ձեզ արդ այսու գրովս և երրորդ
„ անգամ՝ առնել զայս անհրաժեշտ, եթէ մինչև ցՅ15 գալոյ
„ ամսոյն չտուաքնջիք ինձ 5,000 Ֆրանք, զչորեքամեայ շահ
„ գրամոյս։ . . .

„ Մնամ ցաւագին սրտիւ

„ Մեծապատիւ Տէրութեանդ

„ Ի Փարիզ. 15 յունվար. 1863.

„ Ազօթարար ծառայ

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՐԻԱՆԵԱՆ. „

«Յ. Գ. Զնամակ ձեր որ առ Ամիրոսիոս վարդապետ
«Գալֆայեան յանձնեցի նմա ձեռամբ իմով. ընթերցեալ նորա
«զայն՝ զայրացաւ յոյժ, և ասաց թէ ունի առնել թղթոյդ
«զարժան պատասխանին, զոր և արար արդեօք, և զոր
«ծրարեալ ի սմին առաքեմ ձեզ պատեհաւս։»

Պատասխանին Ամիրոսեայ վարդապետի տուեալ թղթոյ Պ. Մոմճեանի խիստ և խորամանգ լինի. զի նմանեցուցանէ զնա սնանկացեալ հրէի, որ զհին տեսրս հաշուից իւրոց որոնէ... և զի զընկերս իւր եւս պարտական կացուցանէ պարտուց հայկազեան վարժարանին։

Զայս պատասխանի Պարոն Մոմճեան թղթոյ Ամիրոսեայ վարդապետի. այլ իպատասխանին իւր որ առ թուղթն Սարգսի վարդապետի յայտնէ զվէրս սրտի իւրոյ որ ընդ ապերախտութիւն Ամիրոսեայ վարդապետի, և ապառնայ նմա պահանջել ի նմանէ խստութեամբ զարծաթ իւր, միանգամայն և հեռեւեցուցանէ ի խորամանգ պատասխանւոյ նորա զերաշխաւորութիւն և Սարգսի վարդապետի պարտուց Հայկազեան վարժարանին։

Ամսոյի հանգամանաց և զդածմամբ առնէ նա պատասխանի թղթոյ Սարգսի վարդապետի օրինակ զայս.

«Գերապատիւ սրբազան Հայր.

«Յունվար 3-15 գրութիւնդ ընդունեցի, յորում տեսա-
«նելով որ բարեկամութեան կամ կարեկցութեան կցորդու-
«թիւն խղելով բոլորովին սկսած է. փաստարանի օրինաց մեր
«նուաստութեան վրայ խստութիւն ապառնալ, և մեք մինչեւ
«ցարդ պարզ սրտէ բղխած ճշմարտութեամբ գրեցինք և
«ծանուցինք Սրբութեանդ թէ՝ ո՛ բարեկամ, մենք հասարակաց
«առաքինութեանց ենք գործակից և խորհրդակից եղող անձինքներէն
«չենք, ահագին և անդարմանելի կերպով վնասուած ենք, և

“ իսաստիկ անձկութենէ բռնադատեալ՝ պարտաւորեցանք ասել
“ ի յիշատակ՝ մեր երեք չորս տարի յառաջ վարժարանի
“ անուամբ խրկած մեծ գումար ֆրանքները, և կամ ինչպէս
“ գեղեցիկ խորհրդածեր է այս անգամ երախտագէտ Ամիրա-
“ սիոս վարդապետ Հայրը իւր շնորհաւոր գրոյն մէջ թէ,
“ “ Հրէայն երբ սնանկանայ հին տեարակները կը խառնէ։ ”
“ Ահա այսպէս մենք ալ կարծելով թէ այն հաշիւներէն կա-
“ բելի է արդեօք բաւական գումար մը ֆրանքներս և ձեռք
“ բերել . . . բայց մեր այս ամէն գրածները սնոտի և անտե-
“ ղի խօսքեր ըլլալուն՝ այս անգամ մեր վերջին խօսքը և
“ կամքերնիս կուզէք իմանալ, որ ըստ այնմ ձեր պահանջ-
“ մունքը տնօրինէք։ Ասոր մենք ալ ամենևին ալ ուրիշ
“ խօսք չընելով՝ մեր վերջին որոշմունքը գրով կուտանք
“ այսպէս . . . . . .

. . . . . .

. . . . . .

. . . . . .

Վերոյիշեալ յիշատակէ Պարոն Մոմճեան զերբեմն հնարեալ հաշիւ իւր, զոր անծանօթ և անընդունելի մերժեալ էր արդէն Սարգիս վարդապետ գրով իւրով որ առ նա, և յաւելու նա յայն զխորամանդ պատասխանին Ամիրսիսի վարդապետի որ ունի այսպէս.

“ Արդեօք վարժարանին նախնի մեծագումար պարտքի
“ վճարմանը մի թէ ես մինակ կը պարտաւորիմ, որ վերա-
“ տեսչաց ամէնէն կը բռնեն էի։ ”

Յայսմիսի պատասխանեաց նորին հնարս գտեալ Մոմճեանի ասէ այսպէս.

“ Որով կը հետեի թէ հաւատարապէս ամէքնիդ ալ կը
“ պարտաւորիք. ուստի այս ձեր պարտաւորութենէն իմ յո-
“ ժար կամս 5,083 ֆրանք ալ ձեր սիրելութեանը ապաս-
“ կացուցանելով և յիշեալ 11,083 ֆրանքէն վար գնալով,
“ մնացեալ 6,000 ֆրանք ի՛ր որ զիւրութիւն ունենաք ինձի
“ կուղարկէք, և մենք ալ նոյն մասանին անմիջապէս ձեր

„ հրաման ըրած տեղը կը յանձնեմք, և մեր այս իրաքերուն
„ վերջ տալով յարաբերութիւններս բոլորովին կը կտրվի, և
„ դոնէ մենք ալ ի խարդախելոյ և ի նենգելոյ կշռանքներէն
„ ազատ կը մնանք։

„ Մնամ

„ Սրբութեանդ

„ Պոլիս. 24–5 փետրվար. 1863.

„ Խոնարհ ծառայ

„ ՄԿՐՏԻՉ ՆԻԿ ՄՈՄՃԵԱՆ.”

Ահա հակառակութիւն բանից և անիրաւութիւն գործոց Մկրտիչ Մոմճեանի միանգամայն տեսանին յայս թուղթ իւր. քանզի ոչ միայն զ28,000 ֆրանք պարտս իւր, զոր յերկուառաջին թուղթս իւր և յանդիման վկայից խոստովանի և խոստանայ հատուցանել, զմնայ նա զայն ապա ի վերջին յայս թուղթ իւր, այլ և պարտապան իւր զԱրգիս վարդապետ կացուցանէ 6,000 ֆրանքի, փոխանակ 14,500 ֆրանք պահանջման իւրոյ, և այն յԱմիրոսիս վարդապետէ միայն, ըստ բանից գրութեան իւրոյ, յէջ 423։

Ո՞չ ապաքէն ճշմարտէ նա այսու գաւնչտարար ասացեալն կնոջ իւրոյ, թէ „Մի՛ տար նմա զդրամդ, զի ուտէ նա զայն։” Եւ ո՞չ ապաքէն արդարանայ Սարգիս վարդապետ իրանս գրութեան իւրոյ, անհաւատարիմ, և անկարելիոյ զբ զնս կոչելով, և Ամիրոսիս վարդապետ մեանկացեալ հրէի նմա նենգուցանէ զնա . . . ապա ընդէ՞ր դանգատի նա ընդ ասացեալն նոցա, արդեամբք ցուցանելով իւր զայն։

Թէպէտ և կարէր Սարգիս վարդապետ զհակառակութիւն բանից նորա մի առ մի ցուցանել և զանիրաւութիւն գործոցն յայտ յանդիման նշաւակել, այլ տեսեալ յայտնապէս զի

կորուսեալ էր նա զխիղճ մտաց և զամօթ երեսաց, լռէ, դադարի այնուհետեւ ի գրելոյ առ նա, մնալով կամ զդատութեան նորա, և կամ արդարութեան տանելոյն, եթէ գուցեն կամ չգուցեն ինչք նորին, զոնէ յիշատակեսցին ի պատմութեան Հայկազեան վարժարանին արդիւնք կարծեցեալ բարերարին, և այս շատ վայելելոյն զանձն ազգին իւրոյ ի մանկութենէ, և զրկելոյն յամենայն մխիթարութենէ, ապաշնորհաց և անիրաւաց հանդիպելով . . .

Մինչդեռ յայսմ ակնկալութեան և խորհրդի լինի Սարգիս վարդապետ, իմանայ զայն Պօղոս Պէյ Տատեան, և կարեկցեալ նմա՝ կամի դարման տանել այնմ ։ Գրէ նա առ Պարոն Պօղոս Աշնանեան ի Պոլիս, զի խօսիցի ընդ Պարոն Մոմճեանի և տեսցէ զնա հաստատանել զպարտս իւր առ Սարգիս վարդապետ ։ Թէպէտ և խոստանայ նա կատարել զայն, սակայն ոչինչ վճարէ ։

Իմանայ զայն ապա և Կարապետ Աղայ Երամեան, որ յայնմ ժամանակի ի Փարիզ լինի, և որ խոստանայ Սարգսի վարդապետի հոգալ զայնմանէ ի դարձին իւրում ի Պոլիս, առնելով ի նմանէ զօրինակ մուրհակի պարտուց Մոմճեանի. Թէպէտ և նա եւս ոչինչ վճարէ, և ոչ իսկ գրեալ ծանուցանէ նմա ինչ ։

Յայսմ միջոցի դէպ լինի Սարգսի վարդապետի գրել թուղթ առ Գէորգ Պէյ Երամեան, յորում յիշեցուցանէ նմա դարձեալ զխնդիր իւր, հայեցեալ ի պահանջումն որ ի Մոմճեանէ, օրինակ զայս .

« Այսու պատճիւ կը համարձակիմ վերստին յիշեցուցա-
« նել Աղնուութեանդ ձերում զխնդիրն իմ, նայելով ի պա-
« հանջումս որ ի Պարոն Մկրտիչ Մոմճեանէ ։ Թէպէտ և
« անախորժ գիտեմ զայս խնդիրս ներող և բաղմապրաղ լե-
« լեաց ձերոց, բայց վերջին կարօտութիւնս կը բռնադատէ
« զիս վերստին յիշեցուցանել ազնուութեանդ, և աղաչել
« զՁեզ դարման տանել այսմ, խօսել ընդ Մոմճեանի հաստա-
« տանել զպարտս իւր որչափ կարելի է . . .

„ Մեծապատիւ հարազատն Ձեր, Կարապետ Աղայն, երբ
„ որ հոս էր իմացուս այս պահանջումն իմ ի Մոմճեանէ, ուզեց
„ ինձմէ տեսանալ զմուրհակ պարտուց նորին. և երբ որ տեսաւ
„ և գտաւ այն օրինաւոր, ուզեց ամենայն օրինակն, որ և տուի
„ նմա, հանդերձ կարեւոր տեղեկութեամբ. խոստացաւ ինձ
„ նա յայնժամ, որ միջնորդութեամբ և ջանիւ իւրով տարա-
„ տել զայն, և ծանուցանել ինձ յետ ամսոյ միոյ հասանելոյ
„ իւր ի Պոլիս. ահա իրրեւ չորս ամիս են որ հասեր է նա
„ ի Պոլիս, և ոչ ծանոյց ինձ բնաւ երկտող գրութեամբ,
„ որպէս զի գիտայի թէ զինչ ունիմ առնել։

„ Բազում ողջոյն սիրոյ և օրհնութեան ի Փրիտոս մա-
„ տուցեալ Բարեպաշտ Տիկնոջդ Եպրու Հանիմի և համօրէն
„ Սիրելի զաւակացդ,

„ Մնամ միշտ

„ Մեծապատիւ Տէրութեանդ

„ Ի Փարիզ. 17 յուլիս. 1863.

„ Աղօթարար ծառայ

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ. „

Առնէ պատասխանի Գէորգ Պէյ բանից խնդրոյ Սարգսի վարդապետի օրինակ զայս.

„ Գերապատիւ Հայր սուրբ.

. . . . . .

. . . . . .

. . . . . .

„ Գանք նամակներուդ երկրորդ մասին, այսինքն Մոմճեան
„ Մկրտիչ Աղային ուղեցած առնելիքներուդ վրայ։ Իրաւ Գե-
„ րապատիւ Հայր, այս գործը որչափ որ ձեզի մատանչու-

“ թիւն և նեղութիւն պատճառած է, պէտք էք դիտնալ,
“ և հաւատալ որ մեզի և յետ ձեր շատ բարեկամներուն ալ
“ մեծ հոգ եղած է որ արտանց կը ցաւին ձեր նեղութիւնը
“ մէկ կողմանէ գիտնալով, և միւս կողմանէ Մկրտիչ աղայի
“ վիճակը և վճարելու անկարողութիւնը ճանչնալով։ Կըսէք
“ թէ մեր Կարապետ Պէյին ալ, Էշիրք ըրած էք և ինքը ձեզի
“ խոստացած է այս գործը լմընցնելու։ Այո՝ ինքը կանչած
“ և մարդ դրած է, բայց վերջապէս անոր նեղութիւնը, և
“ նոյն իսկ տան ծախք հանել չկրնալը աղէկ հասկընալով
“ յուսահատած մէկ դին կեցած է։

“ Այդ մարդը շատ դէշ կերպով ընկաւ ապրուեցաւ. իրաւ
“ տէրութեան գանձը ունեցած մեծ գումար պարտքին դիմաց
“ կրկնապատիկ առնելիքները դիմաւորեր ցուցեր է. բայց
“ այն առնելիքներն ալ անյոյս են, որով միշտ պարտական
“ պիտի մնայ գանձուն, և ձեռքը ուրիշ առ ձեռն պարտատ
“ ըստակ կամ եկամուտ մը չունենալուն, դուրսի պարտա-
“ տէրները գոհացնելու ամենեին կարողութիւն չունի։

“ Ես զինքը պատուաւոր մարդ գիտեմ, և այնպէս համոզ-
“ ուած եմ, որ եթէ կարող ըլլար իր գործքերը ժողվել
“ կարգի մը դնել, առ ձեզ ունեցած պարտքը երբէք չպիտի
“ ուրանայ և չմերժող մը չէ, բայց բանը իր գործքերը կար-
“ գի դնել կարողանալն է, և Աստուած տայ որ կարող
“ ըլլար և յաջողէր։ Բայց մինչև որ առիկայ չընէ, չեմ
“ յուսար որ կարող ըլլաք բան մը առնուլ։

“ Եպրու հանըմ բարեւ կընէ և Գերապատուութեանդ
“ ձեռքը կը պագնէ. իրեն ձեզի չգրելու պատճառը այդ
“ գործքին համար է, որովհետեւ չիտէ ինչ գրէ և շատ ալ
“ կցաւի ձեր նեղութիւնն իմանալով, որուն դարման մը չի
“ կրնար ընել, գործը կարգադրելն ոչ իրեն, և ոչ մեր և
“ ոչ մէկումը ձեռքէն կախումն չունենալուն։ Գերապա-
“ տիւ Հայր, մինչև հիմայ համբերեցիք, ձեր բոլոր կեանքն
“ ալ համբերութեան դժուարակիր և շարունակեալ շղթայ
“ մը եղած է, համբերեցէք այլ եւս. Աստուած, ոմ գիտէ,
“ յաջող կատարած մը այս գործս ալ չեղիր։

„ Գերապատուութեանդ ձեռքը համբուրելով,

„ Մնամ վիշտ

„ Կ. Պոլիս. 23 սեպտ. 1863.

„ Ն. Ծ. ԳԷՈՐԳ ԵՐԱՄԵԱՆ. „

Ահա զարման կարօտութեան Սարգսի վարդապետի և միխիթարութիւն սրտի նորա որ ի մտերիմ և ի կարեկից բարեկամաց իւրոց ի Պոլիս։ . . .

Առնէ պատասխանի Սարգիս վարդապետ թղթոյ Գէորգ Պէյի, օրինակ զայս.

„ Մեծապատիւ Տէր և վսեմափայլ Պէյ.

„ Ձեր ցանկալի նամակ ընկալայ և միխիթարեցայ, միան-
„ գամայն և ցաւեցայ. միխիթարեցայ, զի կը ճանչնաք դուք,
„ ինչպէս և կը վկայէք, թէ իմ բոլոր կեանքը, համբերութեան
„ դժուարակիր և շարունակեալ շղթայ մը եղած է . . . և ցաւ-
„ ցայ, զի ձեզ և իմ շատ բարեկամներուն աչ մեծ հոգ է եղած
„ սրտի, իմ ներողութիւնը մեկ կողմանէ գիտնալով և միւս կող-
„ մանէ Մկրտիչ աղայի վիճակն և վճարելու անկարելութիւն
„ ճանչնալով . . .

„ Այս հատարակաց ցաւոց դարման մը ընել, ես մէկ ճար
„ մը գիտեմ, այս է, զի Պարոն Մոմճեան դարձնէ առ իս
„ մատնին իմ, որ յանձնած էի իրեն վաճառել, և որ այնպէս
„ էի համարեալ, բան բանից իւրոց, թէ վաճառեալ էր այն
„ 60,000 դահեկանով, և տարած ի հաշիւ պարտուց իւրոց
„ առ իս. բայց ինքը հիմայ կը ծանուցանէ ինձ՝ թէ մատնին
„ իմ դեռ անվաճառ կայ առ իր . . . Իսկ մնացած 40,000 դա-
„ հեկանը, որ թղթադրամ յանձնած էի իրեն, հաստատէ
„ ինձ երբ Աստուած իրեն կը յաջողէ.

„ Ահա մէկ ճարն, զարմանն մը հաստատակաց ցաւոց, և այս
„ միջնորդութեամբ Ձեր զիտեմ Վ. սեմափայլ Պէյ, չունելով
„ իմ այդր այլ ոք կարեկից բարեկամ իրրեւ զՁեզ. և եթէ
„ այս աշխատութիւն յանձն կառնէք Վ. ուք, որպէս ասացի
„ երբեմն, նոյնպէս և այժմ ասեմ, թէ մանաւոր շնորհ մը
„ կը ճանչնամ Ձեզանէ ինձ եղած երախտագէտ մտաց։
„ Ողջունեալ զհամբրէն Ազնիւ Գերդաստանդ՝

„ Մնամ միշտ

„ Մեծապատիւ Տէրութեանդ

„ Ի Փարիզ. 29 հոկտ. 1863.

„ Աղօթարար Ծառայ

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ. „

Զգուանէ պատասխանի Սարգիս վարդապետ վերոյիշեալ թղթոյ իւրոյ, և զադարի այնուհետեւ ի խնդրելոյ ասոի անոի օգնութիւն գտանելոյ զիրաւունս իւր, հաւանեալ ասացելոյն, թէ „ Մի յուսայք յիշխանս և մի յորդիս մարդկան։ „

Թէպէտ և տեսեալ ոմանց զնեղին վիճակ նորա, ասեն ցնա պահանջել իսոի զիրաւունս իւր ի Մկրտիչ Մոմճեանէ, սակայն համբերէ նա տոկաւին, մեալով զգաստութեան նորա, խրատեալ արդեաք յեկեցականաց անոի . . . Թէպէտ և հակառակացն հանդիպի. զի ոմն ի քահանայից անոի ասացեալ էցէ հրապարակաւ, թէ զինչ պէտս ունի արծաթոյ Սարգիս վարդապետ, թող վայելեսցէ զայն Մկրտիչ Մոմճեան։ Եթէ հրապարակաւ ասացեալ էցէ նա զայն, հարկաւ և առանձինն, որով խիղճ նորա հանդարտեալ՝ զլանայ հատուցանել զպարտս իւր որ առ Սարգիս վարդապետ, և մնայ մահուան նորա, ծեր զոլով նորա քան զինքն. ոչ յիշէ զճշմարիտ ասացեալն, թէ „ Ապրի զրկեալն, չապրի զրկօղն։ „

Արդարեւ ցաւի Սարգիս վարդապետ ընդ մահ նորա, քան ընդ կորուստ արծաթոյ խրոյ, և առաւել ցաւի ընդ վիճակ Պօլսեցի ազգայնոցս, ունելով նոցա այնպիսի քահանայ։ . . .

Զինչ վայելեաց Մկրտիչ Մոմճեան . . . զանուն զլացող պարտականի միայն։ . . .

Անտանօր ի գէպ է և արժան իսկ առնել քննութիւն և դատաստան զգնացից Պօլսեցի ազգայնոցս որ ընդ Սարգսի վարդապետի։

Զարդիւնս վաստակոց սորա, որ ի Մուրատեան և ի Հայկազեան վարժարանաց, վայելեն մանկունք նոցա, և ի նոցանէ անխրատ սա . . . 100,000 դահեկան զլանայ հատուցանել սմա Մկրտիչ Մոմճեան . . . 125,000 դահեկան, զպարտս վարժարանին արկանեն ի վերայ սորա։ . . . Ահա գնացք Պօլսեցի ազգայնոցս որ ընդ Սարգսի վարդապետի . . . թէպէտ և ոմանք ի նոցանէ արդահատեն սմա, բայց բանիւք միայն և ոչ արդեամբք։ Թողուամք առել զգնացից ապաշնորհայ ոմանց, երախտաւորելոցն ի սմանէ։ . . .

ԳԼՈՒԽ Լ.

Թոռդ խնդակցութեան և շնորհաւորութեան Սարգսի վարդապետի առ Սրբազան Պօղոս Պատրիարքն, հանդերձ կարեւոր տեղեկութեամբ. — Պատասխանի Ս. Պօղոս Պատրիարքի առ Սարգիս վարդապետ հանդերձ յանձնարարութեամբ. — Պատասխանի Սարգսի վարդապետի առ Ս. Պօղոս Պատրիարք, հանդերձ խորհրդով և խնդրով. — Պատասխանի Ս. Պօղոս Պատրիարքին առ Սարգիս վարդապետ և. քլնորհի ընդ այն. — Թոռդ Գաբրիէլ վարդապետի Ս. յվազեան առ Սարգիս վարդապետ. — Պատասխանի սորա առ նա, հանդերձ քլնորհեամբ.

Թոռդի խնդակցութեան և շնորհաւորութեան Սարգսի վարդապետի առ Սրբազան Պօղոս Պատրիարքն ի Կոստանդնուպոլիս, հանդերձ կարեւոր տեղեկութեամբ, օրինակ զայս.

“ Սիրելապատիւ Սրբազան Տէր.

“ Ընդ արժանաւոր ընտրութիւն Սրբութեան Ձերոյ յաթոռ
“ Պատրիարքական խնդամ յոյժ, յուսալով զբաղում բարիս
“ սիրելոյ ազգիս առաջնորդութեամբ Ձերով և օգնականու-
“ թեամբն Աստուծոյ, և շնորհաւորեմ Վեհիդ զնոր տարին,
“ մաղթելով Ձեզ ի Տեառնէ երկար և քաջառողջ կենդանու-
“ թիւն, հանդերձ յաջողութեամբ ամենայն գործոցդ, որ
“ ի փառս անուան իւրում և յօգուտ ազգի մերում։

“ Ահա ընդ այս է խնդութիւն իմ, Սրբազան Տէր, և այս-
“ պիսի են իղձք աղօթից իմոց առ Աստուած. լուիցէ՞ նա
“ այսոցիկ, և մխիթարեցէ՞ զիս ի ծերութեան իմում . . .

„ կարօտի այս օժանդակութեան արժանընկալ աղօթից
„ Սրբութեան Ձերոյ, զոր ընդ Հայրական առատ օրհնու-
„ թեանդ հայցեալ և ի համբոյր ասառուածարեալ Աջոյդ խո-
„ նարհեալ՝

„ Մնամ

„ Ամենապատիւ Տէրութեանդ

„ Ի Փարիզ. 25 դեկտեմբեր. 1863.

„ Խոնարհ ծառայ և որդի

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՄՈՒՐԵԱՆ.”

„ Կարեւոր և հարկ համարիմ ասել Վեհիդ տեղեկութիւն
„ որ զկրօնական ճանաչմանէ և զվախճանէ հանգուցեալ
„ Պօղոս Պէյի Տառեան։

„ Սա այս հանգուցեալ ի մի բերեալ զամենայն ազգս
„ ի Քրիստոս անխտրաբար, զնայր յեկեղեցիս Գաղղիացւոց
„ և Ռուսաց որք ի Փարիզ, աղօթել և տեսանել պատարագ,
„ և կամէր եւս հաղորդ լինել անդ սուրբ խորհրդոյն, եթէ
„ չզլանային նմա զայն խորելով։

„ Իբրեւ անկաւ նա ի մահիճս վերջին հիւանդութիւն իւրոյ,
„ խնդրեաց յինէն խոստովանիլ և խոստովանեցաւ. իսկ
„ ի խնդրել նորա յինէն ընդունել զսուրբ հաղորդութիւն,
„ և ի չկարել իմ մատակարարել նմա զայն, ասկս չունելոյ
„ մեր սաս ազգային եկեղեցի, կամեցաւ նա ընդունել զայն,
„ ի Գաղղիացի, կամ ի Ռուս քահանայէ որ ի քաղաքիս.
„ ընտանիք նորա որք սաս կոչել եռուն ձեռամբ Յակոբ
„ Էֆէնտիի Կրճիկեան զոմն ի Մխիթարեան Հարց որ ի Մա-
„ տաեան վարժարանի, մատակարարել նմա զսուրբ հա-
„ ղորդութիւն. որոյ եկեալ և խնայեալ թէ խոստովանեալ
„ էր նա և ընկալեալ յինէն զարձակումն՝ առանց ինչ խորհ-
„ լոյ մատակարարեաց նմա զսուրբ հաղորդութիւն, զոր

„ ընկալաւ նա բազում ներմեռանդութեամբ, և ասաց ահա
„ հանդեաւ սիրտ իւր բոլորովին, մխիթար և գոհ է ինքն
„ յոյժ յոյժ ։

„ Յետ երից աւուրց անտի հանդեաւ նա ի Քրիստոս ուշիւ
„ մտաց և աղօթիւ առ Աստուած, մինչև ցվերջին շունչ
„ կենաց, որոց վկայեմ իրրեւ ականատես և ականջալուր,
„ կալով միշտ առ նմին, և տալով դարձակումն վերջին, և
„ յետ առանդման հոգւոյն կատարելով զպաշտօնն ։

„ Ի վաղիւ անդր զմարմին նորա զմեռեալ և փակեալ ի կրկին
„ արկեղս տարեալ եդին ի մատնաւոր ինչ դամբարան որ
„ ի հատարակաց գերեզման, և անդ առժամայն, մինչեւ ցա-
„ ռաքել զայն ի Պոլիս և թաղել ի գերեզմանի հարց իւրոց,
„ զոր և առաքեցին ապա ։

„ Ի Կատարել իմ զպաշտօն յուղարկաւորութեան ննջեցե-
„ լոյն՝ էին ընդ իս և երկու ի Մխիթարեան վարդապետաց,
„ Հ. Պետրոս Մինասեան, և Հ. Գրիգորիս Մերճանեան ։

„ Ընտանիք հանգուցեալն եռուն մատուցանել պատարագ
„ յեկեղեցւոյ Մուրատեան վարժարանի, և յեկեղեցւոյ Ռու-
„ սաց, հանդերձ պաշտօնիւ ։

„ Ահա այսպիսի էր կրօնական ճանաչումն հանգուցեալ
„ Պօղոս Պէյի Տատեան, և այսպիսի եղեւ նորին վախճան ։

„ Զայսոսիկ տեղեկութիւնս կարեւոր և հարկ համարեցայ
„ տալ Վ. Եհիդ, քանզի լսեմք ասա զի համբաւեալ իցէ այդր,
„ թէ Պօղոս Պէյ Տատեան իրրեւ կաթոլիկ վախճանեալ է,
„ որ է սուտ բոլորովին և հնարք անջատելոցն յազգէս, ոմանց
„ առ ի պարծիլ առաջի Պապին, և ոմանց առ ի ոգաստիլ
„ յամբաստանութենէ իւրեանց ոտխին . . .

„ Ի Փարիզ. 25 դեկտ. 1863.

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ. „

Պատասխանի Ս. Պօղոս Պատրիարքին տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի, հանդերձ կարեւոր դիտաւորութեամբ, օրինակ գայս.

“ Գերապատիւ Սիրելի .

“ Զգերապատիւ Սրբութեան Ձերոյ պատուական նամակ
“ շնորհաւորութեան ընդ տեղեկագրոյ մահուանն բարեյիշա-
“ տակ Պօղոս Պէյի Տատեան ընկալեալ՝ շնորհ ունիմք նախ
“ զի բարեյաջաբեալ էիք պատուել զմեզ շնորհաւորելով
“ զպաշտօն Պատրիարքութեան, զոր յանձն առաք ակամայ
“ կամօք ի սէր սիրելի ազգիս ։ Իսկ առաւել եւս շնորհ ունիմք
“ ընդ տեղեկութիւն Ձեր զհանգամանաց մահուան հանգու-
“ ցեալ Պէյին, որ կարի պիտանի էր և մեզ յայնպիսի պահու,
“ յորում բանակցէաք ընդ Արքեպիսկոպոսին Հռոմէադաւան
“ Հայոց ։

“ Այս զէպք անակնալ իրաւամբ գրաւեալ ընդ մեր և
“ զուշադրութիւն կրօնական ժողովոյ Պատրիարքարանիս , և
“ երկուցեալ ի նմանօրինակ դիպաց՝ յառուկ պարտք համա-
“ րեցաք փութալ գրել և ծանուցանել առ Ձերդ Սրբութիւն,
“ զի քանի դուք պաշտօնեայ միայն գտանիք այսօր Լուսա-
“ ւորչական Եկեղեցւոյս ի քաղաքիդ յայդմիկ՝ պարտ է Ձեզ
“ անհրաժարելի այսուհետեւ հոգալ յամենայն ժամանակի
“ զհոգեւոր պիտոյս և զմխիթարութիւն մերոյ ազգային ժո-
“ ղովրդեան, և երբեմն զուերր պատարագ մատուցեալ մատա-
“ կարարել զհաղորդութիւն սուրբ Խրմեանդն փոփաքո-
“ ղաց ։

“ Գիտէք, զի ոչ սակաւ են յազգայնոց մերոց յաճախելով
“ յայդ վայր համբաւեալ , և հետզհետէ եւս յաւելուն , որպէս
“ և յայս նուագ խառնեաց ի թիւ նոցա Մեծազօր Տէրու-
“ թիւնն Օսմանեան զայլ եւս անձինս յազգային մանկանց
“ մերոց առ ի ուսուցանել նոցա զիրաւապիտութիւն, և այլն ։
“ Այսոքիկ ամենայն պէտս ունին եկեղեցական պաշտօնէի
“ ի պէտս հոգեւոր մխիթարութեան , և չէ ոք առ այժմ
“ յարմարագոյն քան զՁեզ ի ընել զպէտս նոցա ։ Իսկ եթէ
“ պակասի ինչ , որ ի կատարումն խորհրդոյ սրբոյ պատա-
“ րագի արդեւս զնէ Ձեզ՝ շատակեաց Տանս յառաջ ծա-

„ Նուցանել մեզ եթէ զինչ ինչ են պակասքն այնոքիկ ,
„ վէճքն եթէ եկեղեցական ինչ անօթ կամ գիրք կամ
„ զգեստ կամ Մխեռն վասն որոյ պատարագի , եւ այլն ,
„ որպէս զի պատրաստեալ ընուսա առաքեսցուք , ըստ որում
„ որպէս յիշեցաքն պարտ է Ձեզ կատարել երբեմն զխոր-
„ հուրդ որոյ պատարագի առ ի աղաւ լինել Ձեր և մեր
„ ի տարնապաց խղճի ։

„ Ոչ աւելորդ համարիմք հարցանել զԳերապատուութիւն
„ Ձեր թէ ո՞ւր մնացեալ են՝ սպասք եկեղեցւոյ և որոյ պա-
„ տարագի զկնի փակելոյ մատրան Արեւելեան վարժարանի ։

„ Անկն ունելով պատասխանւոյ նամակիս՝

„ Մնամք

„ Գերապատիւ որդեութեան ձերում

„ Միշտ բարեացակամ

„ Պատրիարք Կ. Պոլսոյ

„ ՊՕՂՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

„ 29 յունվար . 1864 .
„ Ի Պատրիարքարանի Հայոց
„ Ի Կ. Պոլիս . ”

(Առ Գերապատիւ Տ. Սարգիս վարդապետ Թէոդորեան
Շնորհազարդ Սիրելին յարգանաք .

Ի Բարիզ .)

Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ թղթոյ Ս. Պօ-
ղոս Պատրիարքին ի Կ. Պոլիս , հանդերձ կարեւոր խորհրդով և
խնդրով , և ցուցակաւ սպասուց մատրան , օրինակ զոյս .

“ Ամենապատիւ Սրբազան Տէր.

“ Զմխիթար և զքաջալեր նամակ Սրբութեան Ձերոյ, գրեալ
“ ի 29 յունվարի տուրոյս, ընկալայ յշ մարտի սորին, և
“ մխիթարեցայ և քաջալերեցայ ոչ սակաւ։

“ Շնորհ յոյժ ունիմ խնամոցն Աստուծոյ, որով պահին
“ ինձ մխիթարութիւն և քաջալերութիւն, ի պանդխտութեանս
“ և ի տկարութեանս իմում ասա։

“ Փոյթ և հոգ Սրբութեան Ձերոյ զհոգեւոր պիտոյից և
“ մխիթարութեան հաւատարչական ազգայնոցս յանծախելոց և
“ հեռագնեայ յաւելլոց ի վայրս յայս հայրաւեալ, ի Փարիզ,
“ կարի յոյժ խնամատութեամբ և պատուիք իսկ են Հոմուապետի
“ նոցին որ այդր ի Պոլիս . . . այլ թէ զիարդ և որո՛վ կարիցէ
“ նա լնուլ զայն պարտս իւր, ծանուցից ես խոնարհու-
“ թեամբ։

“ Պարտ է նմա ունել ի Փարիզ երկու հատակաւոր անձինս
“ ի վարդապետաց իւրոց, և մատուռ մի անդ, որոց կարեւոր
“ ծախքն ի տարւոջ լիցին 10,000 ֆրանք անշուշտ. թէպէտ և
“ դժուարին և ծանր գիտեմ զայս, հայեցեալ ի հանգամանս
“ նորա այժմ . . . սակայն դիւրին և թեթեւ համարիմ զայս՝
“ հայեցեալ յօգուտ և ի պատիւ ազգիս յապայ եթէ խնա-
“ մածութիւն յանծախելոցն ի Փարիզ յանձն լիցի վարդապետաց
“ նորին անդ։ Այսչափ ինչ ծանօթութիւն շատ է խելամտու-
“ թեան Ձերում։

“ Իսկ թէ զինչ և ո՞ւր ճեռնեալ են ապատք եկեղեցւոյ և
“ որոյ պատարագի զկնի փակելոյ Հայկազեան վարժարանին՝
“ զորոց հարցանէ և կամի գիտել Սրբութիւն Ձեր և իրաւամբք,
“ ահա զցանկ նոցին եղեալ ի վերջ գրոյս առաքեմ Ձեզ
“ ի գիտութիւն և ի տեսութիւն արդեաք։

“ Որպէսզի զոմ շնորհս համարձակութեան ծանուցանել
“ ինչ, համարձակիմ ծանուցանել և այլ ինչ, վասն որոյ
“ խնդիր և քննութիւն է այդր այժմիկ.

“ Յամին 1856, հաստատեցաք մեք առ ի Փարիզ զպրոց
“ մի, անուանեալ Հայկազեան վարժարան, վարեալ մեր
“ զայն տարի մի փոխ առեալ արծաթով, յուսով զտանելոյ
“ զայն ի ծնողաց թոշակաւոր աշակերտացս, և ի բարերար
“ ազգայնոց այսր, ըստ բաղձալի բաղձանաց և խոստման հան-
“ գուցեալ Պօղոս Պէյի Տատեան, որ ի ժամանակի անդ առ
“ էր, և որ օժանդակեաց վարժարանիս 5,000 ֆրանք, և
“ խոստացաւ օժանդակել նմին հանգանակութեամբ 50,000 ֆ.
“ թէպէտ և 16,000 ֆրանք միայն անտի ի ձեռս մեր հասին,
“ մինչդեռ պարտք վարժարանին ց46,000 ֆրանք հասանէին.
“ ապա մեայնին պարտք նոցին 25,000 ֆրանք, զոր յանձն
“ առեալ հանգուցեալ Պետրոս Աղայ Խարտանեան, իբրև
“ խնամակալ վարժարանիս, հաւաքել և յղել առ մեզ
“ ապա, թէպէտ և պակասի նա յայն, սակս տարաձայ-
“ նութեան որ ի մէջ նորա և այլոց ոմանց յազգայնոց այ-
“ սր . . .

“ Յամին 1857, հանգուցեալ Յակոբոս Պատրիարք և ազ-
“ գային ժողովն յանձն առեալ զկարեւոր ծախսն որք
“ ի պահպանութիւն Հայկազեան վարժարանին ի Փարիզ,
“ որպէս տեսանի ի հրատարակեալ Խորհրդոցն արտաքին իրաց
“ Օսմանեան տէրութեան ի Պոլիս առ Գեսպան նորին ի Փա-
“ րիզ, հանդերձ յանձնառութեամբ հատուցանելոյ և զհին
“ պարտս վարժարանին ։

“ Վատահայեալ յայն Պարոն Մխքայէլ Մանուկեան՝ յա-
“ հիսուս տալ փոխ արծաթ վարժարանիս մինչեւ ց38,000 ֆր-
“ ռանք, որում հատուցանէ ազգային ժողովն 15,000 ֆրանք,
“ մեայ հատուցանելի նմա 23,000 ֆրանք, հանդերձ վաշ-
“ խիւն ։

“ Ի յապաղել Ազգային ժողովոյ հատուցանել զվերոյիշեալ
“ 23,000 ֆրանք պարտս իւր, գրէ Պարոն Մ. Մանուկեան
“ առ Սրբազան Գէորգ Պատրիարքն ի Կոստանդնուպոլիս,
“ խնդրելով յազգային ժողովոյ զմնացեալ արծաթն իւր ։
“ Ապէ նմա պատասխանի Պատրիարքն, խնդրելով ի նմա-
“ նէ համբերել սակաւիկ մի եւս, մինչեւ ի կարգի դնցին

„ Եթէ վարժարանին Փարիզու, յոր և պարտապի, ասէ, Ազգային ժողովն։

„ Երբեմն յապաղի եւս հատուցումն, արծաթոյ, զրէ Պարոն „ Մ. Մանուկեան և առ Մասթէաս վեհափառ Կաթողիկոս, „ մինչդեռ ի Պօլիս էր նա, խնդրելով ի նմանէ հատուցա„ նել տալ ազգին զպարտս իւր այն։ Ասէնէ նմա պատաս„ խանի Կաթողիկոս ըստ բանից Պատրիարքին, հանգերձ „ օրհնութեամբ։

„ Եւ երբեմն զանազան ոմանք ի ծնողաց թոշակաւոր աշակերտաց հատուցանել զթոշակս որդւոց իւրեանց, և ի շկարել „ խնամակալաց վարժարանին պահանջել զայն ի նոցանէ առ „ երկիւղն չարութեան որ անտի, հարկաւորին նոքա խնդրել „ ի Պատրիարքէն և յԱզգային ժողովոյ փակել տալ զվար„ ժարանն որ ի Փարիզ, հրամարտակաւ Օսմանեան տէրու„ թեան, իշխանութեամբն որով հաստատեալ էին զայն անդ։ „ Ապաքէ հրամարտակ Օսմանեան Տէրութեան առ Դեսպան „ նորին ի Փարիզ, հանդերձ գրով Պատրիարքին առ Յակոբ „ Էֆէնտի Կրճիկեան ի փակել զՀայկազեան վարժարան, „ ի վաճառել զկահս նորին, և հատուցանել արծաթով նո„ ցին զտարեղական պարտս վարժարանին։ Կատարին նոքա „ զայն, Դեսպան և Յակոբ Էֆէնտին, որ և հատուցանէ „ ձեռամբ իւրով զտարեղական պարտս վարժարանին, և „ ընկալեալ զմնացեալս ընդունելութեան ի պարտատերացն „ առաքէ առ Պատրիարքն ի Պօլիս։

„ Արդ՝ ի վերոյիշեալ կրկին հրամարտակաց Օսմանեան տէ„ րութեանն առ Դեսպան նորին ի Փարիզ, ոչ ապաքէն տեսանին „ երաշխաւորութիւն Պատրիարքին և Ազգային ժողովոյ, և „ իրաւունք պահանջման Պարոն Մանուկեանի ի նոցանէ զար„ ժամի իւր, զ23,000 Ֆրանք յորոց պահանջեաց և պահանջի „ նա ձեռամբ Դպրոցաց տէրութեան, որում հպատակ է։

„ Զինչ արարին և առնեն զոքա պատասխանի պահանջման „ և արդար պահանջման նորա։ „ Պարոն Մ. Մանուկեան „ տուեալ է զվախ արծաթն զայն Սարգսի և Սմբատեայ „ վարդապետաց, ի նոցանէ պահանջեցէ զայն։ „

“ Արժան և արդար իցէ այս պատասխանին արարեալ
“ յԱզգային ժողովոյն . . .

“ Զամս երիս բազում նեղութեամբ հաստատէ Սարգիս
“ վարդապետ զՀայկազեան վարժարանն, և ընդ պարտիւք
“ 60,000 ֆրանքաց անկանի, ըստ որոշման և վճռոյ Ազգային
“ ժողովոյ . . . դիտելով նորա և հաւատի գոլով, թէ յայն
“ 60,000 ֆրանք պարտս վարժարանին 58,000 ֆրանք են ոչ
“ հատուցեալ թոշակք աշակերտաց նորին, զոր զլացան և
“ զլանան հատուցանել ծնողք նոցին, և զոր պահանջել
“ ինոցանէ երկեան և երկնչին խնամակալք վարժարանին,
“ զի մի՛ չարիք իւրեանց անտի հատուցին . . . և զայս
“ ականջօքս լուայ այդր ի բերանոյ միոյ ի խնամակալաց վար-
“ ժարանին . . .

“ Պարոն Մ. Մանանեան ի պահել զպատիւ ազգին իւրոյ
“ ոչ պահանջեաց ցարդ խստութեամբ զիրաւունս իւր . եթէ
“ Ազգային ժողովն ոչ ծանեաւ զայն, և կարծիցէ թէ չկարէ
“ նա խստութեամբ պահանջել զարծաթ իւր, սխալի մեծա-
“ պէս . և յիրաւի՝ քանզի ունի նա հաւատս ի ձեռին իւրում
“ զերկոսին հրովարտակս Օսմանեան տէրութեան որ առ
“ Դեսպանն նորին ի Փարիզ, ի միումն և ի միւսումն՝ նոքա իբրեւ
“ տէր վարժարանին և երաշխաւոր պարտեաց նորին հրաման
“ տան փակել զվարժարանն, վաճառել զկահս նորա, և
“ հատուցանել զստիպողական պարտս վարժարանին, և ու-
“ նել ի ձեռս իւրեանց զմնարհակս ընդունելութեան որք
“ ի պարտատերացն անտի . . .

“ Ահա հաւատքն որովք կարէ Մ. Մանանեան պահանջել
“ խստութեամբ զարծաթ իւր այսր .

“ Ապա ճեպ Հօրդ հասարակաց դարման տանել այս չա-
“ բեաց, խելամուտ առնել զազգային ժողովն անհրաժեշտ
“ պարտուց իւրոց, ըստ վերոյիշեալ հաւատեաց և ատա-
“ բել նմա ի պահանջել զոչ հատուցեալ թոշակն ի ծնողաց
“ աշակերտաց, ըստ տուեալ հաշուի գործակալաց վարժա-
“ բանին, Ամբրոսեայ վարդապետի և Պարոն Նշանի Փալ-
“ ֆայեան .

„ Եւ ահա այս է զոր համարձակեցայ ծանուցանել Սըր-
„ բութեան ձերում, և ակն ունել յաջող ելից նորին ողոր-
„ մութեամբն Աստուծոյ և սատարութեամբ Ձերով, ի հատու-
„ ցումն իրաւանց մասնաւորաց, և ի լրումն պարտուց Հօրդ
„ հասարակաց, որով և խաղաղութիւն ի մէջ որդւոցդ հո-
„ գեւորաց, և որով

„ Մնամ միշտ

„ Ամենապատիւ Տէրութեան Ձերում

„ Ի Փարիզ. 25 մարտի 1863.

„ Խոնարհ ծառայ և որդի

„ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ. ,,

„ Ակն ունիմ արժանի լինել մխիթար և քաջալեր պատա-
„ խանաց առ ի Ձէնջ, ուղղելոյ առ իս ի . . . . .

„ Յանկ սպասուց մատրան Հայկազեան վարժարանին որ
„ ի Փարիզ . . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .

„ Այս ամենայն առ իս կայ և տնօրէնութեան Ձերում
„ պատրաստ միշտ. Թողից նշանակել զոսկեզօծ Սկին և
„ զմաղզման ոչք չեն ի միջի, այլ թէ ուր իցեն . . . ես ոչ
„ գիտեմ. քանզի ի ժամանակի անդ փակելոյ վարժարա-
„ նին և վաճառելոյ կահուց նորին, ես ի Տփխիս էի, և
„ ի դէպս յայն կորուստնին սեպհական ինչք իմ, իբրեւ
„ 3,000 ֆրանքի, և զպատկեր խորանին, զոր վաճառէ
„ ապա Ամիրոսիոս վարդապետ, և զգին նորին, չգիտեմ որ-
„ չափ ինչ, սեփականէ նա. ,,

Պատասխանի Ս. Գօղոս Պատրիարքին առեալ թղթոյ Սարգսի վարդապետի, որ ունի օրինակ զայս.

„ Գերապատիւ Սիրելի.

„ Ազգային կրօնական և Քաղաքական ժողովները միաբան
„ հաւանութեամբ որոշեցին որ թղթատար Արժանապատիւ
„ Հիւանդապետն Տէր Յովհաննէս Քահանայն հա-
„ տատուն կերպով մնալով Գաղղիոյ Փարիզ Մայրաքաղաքին
„ մէջ քահանայագործէ և մերազնեայ բարեպաշտ ժողովը-
„ դոց հոգեւոր պիտոյքը հոգայ։

„ Ազգային ժողովոյս այս որոշումն Ձեր Սրբութեան յայտ-
„ նելով կխնդրեմք որ բարեհաճիք յանձնել անոր այն ամէն
„ եկեղեցական անօթները և զգեստները, որոնք արդէն
„ կգտնուին այդ տեղ։ Կխնդրեմք միանգամայն որ հայրա-
„ բար ամէն պաշտպանութիւն տիրով մատուցանէք Ձեր տա-
„ վորիցը համեմատ ի նպաստ յիշեալ Պատուարժան քահա-
„ նային, որ ընտանեօք կուգայ բնակիլ ի Փարիզ և իր հոգեւոր
„ պաշտօնը վարել։

„ Ողջ լերուք ի սէր մեր։

„ Պատրիարք Կ. Պօլսոյ

„ ՊՕՂՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

„ 6 Հոկտ. 1864.

„ Ի Պատրիարքարանի

„ Հայոց

„ Ի Կ. Պօլիս։

(Ա. Գերապատիւ Սարգիս վարդապետ Թէոդորեան

ի Փարիզ.)

Անտ պատասխանին Սրբազան Պօղոս Պատրիարքին տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի կարեւոր խորհրդոյ և խնդրոյ նորին, և այն յետ եօթն ամսոյ ։

Կայցէ այսուհետեւ ակնկալութիւն վիճաբանութեան նեւիրելոյն զանձն ազգին իւրոյ, ի Կրօնական և ի Քաղաքական ժողովոյ Պօղոսեցի ազգայնոցս . . . գաղարի նա խոպոռ խօսել եւս յակամէն մեռելոյ, պարտզի ի պատմութիւն կենաց իւրոյ, ի գիտութիւն և ի խրատ յետնոց ։

Յանձնէ նա Սրժանապատիւ Տեառն Յովհաննու Հիւնքեարպէյէնեան քահանայի զամենայն եկեղեցական անօթս և զգեստս մատրան Հայկազեան վարժարանին, և չիատնի բնաւ ի գործ նոր մատրան, խրատեալ բուսական ի գործոյ հնոյն. վերասալ և ամօթ կրեալ տեսչի սուրբ ազգաց ։ . . .

Թուղթ Գաբրիէլ վարդապետի Ոսկեանեան առ Սարգիս վարդապետ Թէոդորեան, յորում ծանուցանէ զբերկրութիւն որոշ իւրոյ ընդ յուր քաջողջութեան նորա, հանդերձ մաղթանօք վիճաբանութեան ի Տեառնէ ապա. և զկիրս իւր յիրեանց Կամբոզիկոսին և խուժանի նախանձորդաց և հակառակորդաց իւրոց. և զանպատեհ գնացս Խորենայ վարդապետի Գալֆայեան, և զարտաքսել նորա յաւանութենէ իւրմէ, և զպարտութիւն ի կարեւոր գործս, հանդերձ հարածանօք և չքաւորութեամբ, և համարի զայս ամենայն կիրս իւր իբր պատիժ ապրանացանն եռանդեանն իւրոյ. և զանկեալութիւն իւր տեսանել զնա ի Թէոդոսիա ։

Բաղձորդիւն Տէր իմ և Հայր ցանկալի.

„ Ի թղթոյ Պետրոսի Հէքիմեանց զոր գրէաս իս ի Մոսքուա-
„ յէ ի 2ի հոկտեմբերի, ընկալայ յերէկն մեծաւ բերկրու-
„ թեամբ զլուր քաջողջութեան ձերոյ, և փառս տաս Աս-
„ տուծոյ՝ որ յերկարէ զմեզ պատուական կենացդ ձերոց
„ անշուշտ վասն այնորիկ՝ զի փոխատուն այնքանեանց և անչափ
„ վշտակրութեանց լսէցէք արդեաք և տեսանիցէք ուր ուրեմն

“ և միթիթարեսցեն ինչ՝ իբրեւ առհաւատչեայս անսպառ
“ սիրոյ Թանցն ամբարելոց վասն ձեր յերանելւոյն օթեւանս
“ արդարոց ի փոխարէն սատուածահաճոյ վաստակոց ձե-
“ ռոց։

“ Յուսամ, Գերապատիւ Հայր, զի Հէքիմեանց պատմեաց
“ ձեզ լիով, որպէս պատուիրեալ էինք, զհանգամանս իրաց
“ կողմանցս այսոցիկ, ընդ որս և զիմս բազմավատանգ կիրս՝
“ ոչ միայն յերեսաց Կաթողիկոսին և յոգնութիւն խուժանի
“ նախանձոտաց և հակառակորդաց, այլ և ուստի թերեւս
“ ոչ էր ինձ կարծելի, այսինքն ի Խորենայ Գալֆայեան,
“ որում զվարդապետ անուն դանդաղի տալ բերան իմ. քան-
“ զի շար քան զաշակերտ խաւերուխ և չան զծառայ ապերախտ
“ վարեցաւ նա ընդ իս ի վերջնումս յայսմ տարւոջ։

“ Արդէն առելի էր նա սատանայ մեծաց և փոքունց,
“ ի պատճառս անսանելի զեվզեկոբեանցն իւրոց, յորս յա-
“ ւելեալ ի վերջին ժամանակս և զապերասան գնացս և
“ զպչրանս անվայելս եւ աշխարհական երիտասարդի, թող
“ թէ եկեղեցականի, նոցա ի վերայ իւր զբերան ամենայն
“ ժողովրդոց կողմանցս, այնպէս զի ի զարձին իմում ի Փե-
“ թերբուրկէ ասիրեցոյ ուղղոյ առնել զնա սատ շատ
“ տաղնապաւ, զի մի սպառսպուռ քանդմամբ եղծնիցի
“ ամենայն յոր վատակեալն էի ի վերոյ ասացս հետէ։

“ Ոչ է հարկ ասել՝ թէ ժողովրդեամբ մեկնեցաւ նա
“ սատի, մանաւանդ յետ լսելոյ յինէն զարարածելի կայծա-
“ կունս կշտամբանաց, զորս թափեցի ի գլուխ անխիղճ անըզ-
“ գամին. և սակայն ընդ մեկնել նորա ի քաղաքէ սատ
“ եղեւ խաղաղութիւն մեծ. ուրախ եղեն ամենեքեան ի Հայոց
“ և ի Ռուսաց մինչեւ ի Թաֆարս և ի Հրեայս, և Ալսումեա-
“ բանն ամենայն բարեկարգութեամբ յառաջէ արդ ոգորմու-
“ թեամբն Աստուծոյ։

“ Տպարան մեր փոխադրեցաւ արդ յԱլսումեարանն նորա-
“ կառոյց, և տպագրին ինձա ոչ միայն Աղաւնին և օրացոյցն,
“ այլ և պէտպէս գաղտնարակք, յորմէ կարէք գուշակել
“ թէ ուրշափ և որպիսի ունիցիմ զբաղումն և աշխատութիւն

„ ի միայնութեան ատ իմում՝ հանդերձ հալածանօք և նե-
„ դութեամբ և չքաւորութեամբ եւս արծաթոյ ։ Թուի իմն
„ այսպէս սահմանեալ ինձ յԱստուծոյ , զուցէ ի պատիժ
„ տարապայման եռանդեանս՝ զոր յախուռն յաճախեմ ինձ
„ հոգս և աշխատութիւնս , զի յոգնատաժան զժուարու-
„ թեամբք յառաջեացեն և պողարեր լիցին վաստակք իմ ։
„ Տեառն կամք եղիցին օրհնեալ , և աղօթք արժանաւորաց
„ հասցեն իմում տկարութեան յօդնականութիւն ։

„ Հէգ իմեանն յուսադիր իմն լինի ինձ՝ թէ զուցէ չնոր-
„ հեսցի մեզ տեսանել ատանօր զՀայրդ ցանկալի , ի հարկէ
„ յաւուրս գարնայնոյն , զէթ առ սակաւ ժամանակ մի ։ Տացէ
„ Տէր զի մի՛ խափան ինչ կատարման այսմ ցանկալի տեսու-
„ թեան մերում պատահեսցէ ուստեք ։

„ Փութամ կնքել առ այժմ զթուղթս՝ խոստանալով գրել
„ դարձեալ յետ սակաւ աւուրց , յորժամ առաքեցից առ ձեզ
„ օրինակ մի ինքատիպ օրացուցէ առաջիկայ տարւոյն . իսկ
„ զԱղաւնիսն մինչև ցարդ տպագրեալս ընկալջիք ընդ Կոս-
„ նուպոլիս ։

„ Զողջոյն մեծարանաց իմոց խնդրեմ մատուցանել բարե-
„ կամին մերում Պ. Միքայէլի Մանանեանց , և յանձն լինելով
„ յարժանահայց աղօթս Հայրութեանդ ,

„ Մնամ

„ Գերյարգոյ Տեառնդ

„ Թէոդոսիա . 26 Նոյեմբ . 1864 .

„ Խոնարհ ծառայ

„ ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՑՎԱՋԵԱՆ . „

Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ թղթոյ Գաբրիէլ վարդապետի , յորում մինչ բռնադատեալ յարդարու-

թենէն՝ գրէ զճշմարտութիւն, թէպէտ և ընդդէմ քաղաքական գրութեան նորին, յիշելով զվնասն և զչարիսն որ ի բաժանմանէ և յանհոգութենէ նորին ամենի, և նորոգելով ցաւոց ծրոմի իւրոյ որ ընդ այն, և որովք առնէ պատասխանի, օրինակ զայս։

Գերագոյնս Տէր և Սրբեցեալ Եղբայր։

«Զյանեկալի և զցաւալից նոմանակ Ձեր, գրեալ ի 26 Նոյեմ-
«բերի անցելոյն, ընկալայ ի 13 դեկտեմբերիս, խնդացի,
«միանգամայն և ցաւեցայ. խնդացի ընդ լաւ ողջութեանդ
«խնամքն Տեառն, զոր և ողջամիտ պահել զՁեզ միշտ ի նոյն,
«և ցաւեցայ, յիշելով զցաւս իմ հին, որք նորոգեցան յիս
«վերստին։

«Մանուցիք ինձ երբեմն բերանով Հէքիմեանին զրաղմունքն
«ուանդ ձեր դիրս յերեսաց Կաթողիկոսին և յոգնութիւս խու-
«ժանի նոխանձողդաց և հակառակորդաց, և զանազանեհ
«զնացս Խորենայ Գալֆայեանի որ ընդ ձեզ և զարժանն
«ընդ նմա։

«Մանուցանէք ինձ այժմ գրովդ թէ ուրշոմ և որպիսի
«դրաղումն և աշխատութիւն ունիք այդր ի վիայնութեան
«ձերում, հանդերձ հաւատամոք և նեղութեամբ և չքաւ-
«լութեամբ եւս արծաթոյ, և զայս ամենայն կարծէք սահ-
«մանեալ ձեզ յԱստուծոյ, զուցէ ի պատիժ տարապայ-
«ման եռանդեանդ որով յախուռն յանձնեցէք ձեզ հոգս
«և աշխատութիւնս, և որով յուսայք պտղաբեր լեցին վաս-
«տակք ձեր։

«Այլ ոչ կարծէք զուք պատճառ այսոցիկ չարեաց դրա-
«ժանումն ձեր ի մէնջ, զանհոգութիւնդ զպարտուց Հայկա-
«զեան վարժարանին և զհատատութենէ նորին, և զվնաս-
«ուց և զնախատանաց որք անտի, և զոր աւաղեալ ի թուղթս
«իմ առ ձեզ։ . . . Եւ ոչ զանազանք զուք զգնացեալս Սմբատ-
«սեանց Գալֆայեանի սիրելի աշակերտիդ . . . զիցէ՞ սա պատ-
«ճառ զեղծման քարոզս Խորենայ եղբօր իւրոյ եղկելոյ . . .

„ և ամենայն չարեաց հասելոց ի ձեր և ի մեր վերայ, սկսեալ
„ ի վանաց, ըստ վկայելոյ այլ աշակերտացդ, և աւարտեալ
„ ի Մ. և ի Հ. վարժարանս, ըստ վկայելոյ բազմաց . . . և
„ դուք սիրեցեք միշտ զանարժանն, և պաշտպանեցեք անպիտ-
„ տանին, հանդերձ օժանդակութեամբ արծաթոյ ի լրումն
„ խեղճութեան և անտարակուսութեան իւրոյ . . .

„ Զիցե՞ն այսոքիկ արդարք անճանաչողութեան և կոչմա-
„ ւոր բարուց . . . և չիցե՞ն այսոքիկ պատճառք վնասուց և
„ կարօտութեան իմոյ այսր, և նեղութեան և անմխիթարու-
„ թեան ձերոյ այդր այսօր, այլուքն հանդերձ . . .

„ Ասա՛ղ խնամոցդ և պաշտպանութեանդ ապերախտից և
„ անզգամաց . . .

„ Ոչ էին ինձ կամք երկրորդել զդատաւորացն կրկին, եթէ
„ չնորոգէին յիս այնք վերատին, և եթէ չրանդատէր զիս
„ արդարութիւն խօսել զճշմարտութիւն . . .

„ Այսչափ ինչ շատ հանդարեալ ի խնամութիւն եղբայրա-
„ կան ազգարարութեանս՝ եկից արդ ի պատասխանին և այլ
„ բանից նամակիդ, որ ունի այսպէս.

„ — Հէքիմեանն յուսադիր իմն լինի ինձ, ասէք, թէ գու-
„ ցէ չնորհեսցի մեզ տեսանել առաւաւոտ զՀայրդ ցանկալի,
„ ի հարկէ յուսուրս գարնայնոյ, զէթ առ սակաւ մի ժա-
„ մանակ։ »

„ Ու այս ասեմ, թէ Հէքիմեանն յուսացուցեալ է զձեզ,
„ ըստ կարծեաց և ակնկալութեան իւրում, հայելով ի գբ-
„ նացս Կաթողիկոսին և ի հանգամանս ազգիս որ ի տէրու-
„ թեանդ, ի կարծեցեալ նորոգ ընտրութիւն Կաթողիկոսին
„ ասեմ։ . . . Փութաւորութիւնն իմ՝ և հատակս ունիցին անտի
„ ակնկալութիւն միխիթարութեան։ . . . Ոչ բնաւ։ Ապա
„ մնայ ինձ միայնակ միխիթարութիւն ի պատմութենէ անցից
„ կենաց իմոց, զոր յանդիման կացուցանեմ հատարակաց, և
„ ի դատաստանէ նոցին որ ընդ այն . . . և ապա չմնայ ինձ
„ այլ ինչ կարեւոր ծանուցանել, բայց եթէ չնորհաւորել
„ Ձեզ զոսն ծնանիլն փրկչին մերոյ Քրիստոսի, և զմուտս
„ նորոգ տարւոյն, մաղթելով ձեզ ի Տեառնէ երկար և քա-

“ Ջառողջ կենդանութիւն, հանդերձ յաջողութեամբ ամե-
“ նայն գործոցդ որ ի փառս Աստուծոյ և յօգուտ կարօտե-
“ լոյ ազգիս, և

“ Մնալով միշտ

“ Գերապատիւ Տէրութեանդ

“ Ի Փարիզ. 24 դեկտ. 1864.

“ Խոնարհ եղբայր

“ ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈՂՈՐԵԱՆ. ”

Այսմ թղթոյ չառնէ պատասխանի Գաբրիէլ վարդապետ. զի չկարէ գրով ուրանալ զճշմարտութիւն, խոստովանի նա զայն լուութեամբ իւրով . . .

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՆ

Ի խելացնորութիւն ճշմարտութեան և արդարութեան և
Ի խրատ զգուշութեան ազգիս Թորգոմեան.

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Որ միանգամ հաւանեալ է ճշմարտութեան և արդարութեան՝ ճանաչէ զպարտս իւր, և լցեալ զայն՝ ընդունի զիրաւունս իւր. վայելէ ի խաղաղութեան և յերանութեան։ Իսկ անհաւան այնց՝ չճանաչէ զպարտս իւր, և պակասեալ յայն՝ զրկի յիրաւանց իւրոց. կեայ ի խռովութեան և յեղկութեան։

Ապացոյց նախադրութեանս՝ ահա ունիք յազգէս Թորգոմեան, զորոց հանգամանս կենաց յանդիման կացուցուք ի սմին հանդերձ հաւատոքք։

Ազգս Թորգոմեան կորուսեալ զբնիկ տէրութիւն իւր, և պանդխտեալ յօտար տէրութեանս, կորոյս և զեկեղեցական բնաւորութիւն իւր։

Խառնակեցան ընդ հեթանոս և ուսան զբարս նոցա։

Բայց զախտս, զմոլութիւն նոցա միայն ուսաւ սա, և ոչ զառաքինութիւնսն. վասն այսորիկ ի խռովութեան և յեղկութեան կեայ այժմիկ։

Ուսաւ սա զԿՐՕՆԱՄՈԼՈՒԹԻՒՆ, և զԹԵՐԱՀԱՒԱՏՈՒԹԻՒՆ նոցա. զի ունիք զՀայութիւնն հերետիկոսութիւն համարեալ՝ ուրանան զայն, և խորշին յազգայնոց իւրեանց, և ունիք զԿաթոլիկութիւնն ուրացումն հաւատոյ համարեալ՝

հալածեն զեղբարս իւրեանց. այլք ի թերահաւատութիւն հաւատալոյ՝ արհամարհեն զամենայն։

Ասաւ սա զՁԵՂԽՈՒԹԻՒՆ նոցա, և զհետեւեալսն նմին, զանկարգութիւն, և զանպատկառութիւն. զի ոմանք շահեալ արծաթ, կամ ժառանգեալ զայն, զեղխին անպատկառաբար, և յառել ցնոսա, թէ ամօթալի են այն գնոցք նոցա, ասեն նոքա, զի՞նչ է ամօթն այնմ, որ արծաթ ունի։

Որոց Աստուած որովայնն իւրեանց է, և փառք ամօթն իւրեանց։

Ասաւ սա զԱՄԲԱՐՏԱՒԱՆՈՒԹԻՒՆ նոցա, զախտն տրուանելին. զի ոմանք հասեալք յիշխանութիւն, և ի վիճակ ինչ պաշտաման տէրութեան, արհամարհեն զազգայինս իւրեանց, և ոչ ի տուրեւառիկ վաճառս անգամ բերին ընդ նոսա. յարգեն զօտարազգիս, և ի նոցանէ զնեն ինչս որ ի պէտս տէրութեան. թէպէտ և ինչք օտարազգեաց նուաստս և թանկ իցեն քան զինչս ազգայնոց իւրեանց, սակայն նախապատեն նոքա զայն, և տան պատճառս այնմ, զերծ զնել զինքեանս ի կատաղածոնաց տէրութեան, որ զկողմնաւոր բարուց իւրեանց։ Սնոտի է այն պատճառ նոցա. զի բուն պատճառն է, չկամիլ զմեծութիւն ազգայնոց իւրեանց, որպէս զի կարօտ և խոնարհ լիցին նոքա ինքեանց։

Արգասիք սխտիս այսորիկ՝ նախանձ և տենչութիւն ազգայնոց բերեալք ընդ նոսա, զի նախանձին ընդ իշխանութիւն և ընդ մեծութիւն նոցա, և տեն զնոսա, և յանկանիլ նոցա յիշխանութենէ և ի մեծութենէ անոր իւրեանց, ոչ միայն չցաւին ազգայինք ընդ այն, այլ և ուրախանան և ամենեքեան լինին ի վերայ անկման նոցա, ասելով. Ահա գոսին ամբարտաւանք և անձնասէրք զարժան իւրեանց։

Ախան նախանձս թէպէտ և գոյանի յամենայն ազգս մարդկան, բայց ապաւել յազգս Քարգամեան, զի չկարէ որ տեսանել զընկեր իւր յիշխանութեան և ի մեծութեան և չկամիլ զարդեանց վաստակս և զգովութենէ ընկերի իւրոյ։

Ուստ սա ՊՆՈՒԱՍՏՈՒԹԻՒՆ նոցա. զի ոմանք ի բանա-կանութեանն ընդ անասունս դասակարգին, ի կերպարանս արջոյ և կապկի կերպարանին, առ ի զբաղուցանել զիշխանս երկրին, և ի հաճոյ լինել նոցին ;

Մարդ ի պատկեր աստուծոյ արարաւ, և ի պատուի էր ոչ իմացաւ, հաւասարեաց անասունց անբանից և նմանեաց նոցա :

Ուստ սա զԱՆԱՁԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ նոցա, զամենայն ազգահաւթիւն ասեմ : « Անազգատականութիւն է շարութիւն « ոնձին, զոր որում շահի ընդացեալ լինին յամենայն կոզ- « մանէ, և է յաստուած նմա յոյժ փայթ ունել ընդիցն, և « ոչինչ նախատինս հատուցել յայնոցիկ, որ շահաւ ասեմ « իցեն : » (Արիստոտէլ. Առաք :)

Ուստ սա զՆԵՆԳՈՒԹԻՒՆ նոցա. զի ոմանք սա ի շահեկ արծաթ՝ նենգութեամբ գնան, ոչ միայն ընդ ազգայինսն, այլ և ընդ հարազատ եղբարս իւրեանց, և զայս թեպատրութեամբ ծնողացն : Շահեսչիք ասեն արծաթ հնարիւք նա և ի հարազատացդ : . . . Վասն այսորիկ անվստահութիւն ի հարազատ եղբարս և տկարութիւն նոցա :

Ուստ սա զՍՆԱՓԱՌՈՒԹԻՒՆ նոցա. զի ոմանք ի խնդիր լինին Դուքս, և Իշխան անուան, առանց ինչ արդեանց և արժանաւորութեան, և ասեն արծաթով կամ նենգութեամբ պատուանշանս, և եղեալ զայն ի վերայ լանջաց իւրեանց, շրջին ի հրապարակս. և ոմանք յառաջագոյն պանդխտութեամբ ի մայրաքաղաքս օտարազգեաց, քամահեն զյեղոյ պանդխտաւորսն անդ յազգայնոց իւրեանց, և առ նոքաք պերճանան, դրսեցի, գեղջուկ, կոչելով զնոսա, վասն որոյ և ատելութիւն ի մէջ ի նոցա :

Ահա զայսոսիկ սիրս, մոլութիւնս, օտարազգեաց ուստ միայն ազգս Թարգմանեան, և ոչ զատարինութիւնս նոցա. վասն այսորիկ ի խառնութեան և յիրկութեան կեաց այժմիկ :

ԳԱՐՄԱՆ ՉԱՐԵԱՑ ԱԶԳԻՍ ԹՈՐԳՈՄԱՆԱՆ.

Որպէս յոգւոյ և ի մարմնոյ բաղկանայ մարդ, նոյնպէս ի հոգեւոր և ի մարմնաւոր առաջնորդաց վարի նա. և որպէս ի միաբանութենէ հոգւոյ և մարմնոյ ընդ միմեանս է բարեաք կենդանութիւն նորա, նոյնպէս ի միաբանութենէ հոգեւոր և մարմնաւոր առաջնորդաց ընդ միմեանս է խաղաղութիւն և երանութիւն առաջնորդելոց նոցին, որպէս տեսանի ի վէպս ամենայն ազգաց և կրօնից։

Թէպէտ և բռնութիւն մարմնաւոր իշխանութեան է որ վարէ զմարդիկ, սակայն ազդեցութիւն հոգեւոր իշխանութեան որ ի միտս նոցա՝ առաւել է քան զայն. վասն այսորիկ ի հնումն և ի նորումս իշխանք ազգաց ազգաց զերկոսին իշխանութիւն ունէին և ունին միանգամայն։

Զայս այսպէս հաւատարիմ արարեալ՝ եկեցուք ի ինդիրս դարմանոյ չարեաց։

Թէպէտ և ազգս հայոց չունի աշխարհական իշխանութիւն ուրեք, սակայն ունի հոգեւոր իշխանութիւն յամենայն ուրեք, որպէս յԷջմիածին, յԵրուսաղէմ, ի Սիս, յԱղթամար, և ի Կոստանդնուպօլիս, և յայլ տեղիս տեղիս. ապա կարէ սա այնու իշխանութեամբ զերծանիլ ի խռովութենէ և յեղկութենէ, և վայելել ի խաղաղութեան և յերանութեան, եթէ հոգեւոր առաջնորդք իւր, յիշատակեալս տեղեաց, ունիցին զհոգին, զբարս, և զվարս Թարգմանչաց Սահակայ, Մեսրոպայ, և Մխիթարայ աբբայի, այսինքն, առաքինութեան, ընկերութեան և ուսումնասէր իցեն, եթէ ըստ օրինակի նոցա՝ առաքինի վարուք և ուղիղ գնացիւք վարիցին . . . և եթէ ըստ օրինակի նոցա՝ յամենայն կողմանց աշակերտս Յոգովեացն, և կրթեսցեն զնոսա, նախ յաստուածսիրութիւն, և յընկերասիրութիւն, ապա յուսումն և ի գիտութիւն, և առա-

քեացեն զնոսա ի քարոզութիւն ժողովրդեան, և ի դատախարակութիւն մանկանց նորին, ուր և գտանիցին։

Գիտեմք, զի այս բանք մեր անախորժ և ծանր թուեսցին առաջնորդաց ազգիս, այլ չէ մեզ փոյթ, որ հաւանեալս եմք ճշմարտութեան և արդարութեան, և հալածեալ վասն այսորիկ։ . . .

Գիտեմք եւս, զի ընդ այսոսիկ բերեալ օրինակս մեր, ծիծաղեսցին լուսաւորեալքն, և ասիցեն, թէ զեռ վանական գաղափարքն իցեմք մեք յայսմ գործս . . . այլ ցաւիմք մեք ընդ սխալ կարծիս նոցա, զի կարծեն նոքա, թէ զերծանիլ ազգիս Հայոց ի խառնութենէ և յեղկութենէ, և վայելել ի խաղաղութեան և յերանութեան, պիտոյ է սոա ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՆ մի, և կարգադրութիւն յընդհանուր և ի մասնաւոր ժողովոյ Լուսաւորչեանց. և թէ եկեղեցականաց դատախարակութիւն վասն աշխարհական մանկանց ազգիս, անպիտան է. պիտոյ է նոցա սոսին, աշխարհականաց դատախարակութիւն, և այն ի Գաղղիա, և յԱնգղիա։ . . .

Որոց այս է մեր պատասխանին, թէ ահա սահմանադրութիւն ձեր յօրինեցաւ յօթն ամաց հետէ, և հաստատեցաւ այն ապա ի Բարձրագոյն Դրանէն . . . և ահա կարգադրութիւն յընդհանուր և ի մասնաւոր ժողովոց ձերոց բազում անգամ. զինչ շահ օգտութեան անտի եղեւ ազգիս մինչեւ ցայսօր ժամանակի . . . առաւել եւս վնաս նեմին, յանմիաբանութենէն ժողովականաց. . . և զինչ պիտանութիւն ի դատախարակութենէ աշխարհականաց անտի . . . պարապորդութիւն երիտասարդաց ազգիս միայն։ . . .

Ասիցեն նոքա. թէ թարգմանիչքն Սահակ, և Մեսրոպ, և Մխիթար սրբոյն, այնպիսի վարուք և գնացիւք իւրեանց, և քարոզութեամբ աշակերտացն, ոչինչ օգուտ արարին ազգիս Հայոց։

Ասեմք մեք, թէ պատճառք անշահութեան արդեանց վասատակոց մեծին Սահակայ, և Մեսրոպայ, են նախ անիմաստասէր բազք թագաւորաց ազգիս, և անհաւանութիւն ճշմարտութեան և արդարութեան նախարարաց նորին, չճանաչելով

նոցա զպարտս և զիրաւունս իւրեանց, և չանտարով խրատու մեծին Սահակայ։ Երկրորդ՝ անպատեհ վարք և անուղիղ գնացք յաջորդաց նորին, Սուրմակայ, Բրիքշոյի, և Եմուէլի Ասորւոյ, որպէս տեսանի ի պատմութեան Մովսէսի Խորենացւոյ։

Իսկ պատճառք անշահութեան արդեանց վասնակոց Մխիթարայ Աբրայի, են նախ հակառակախրութիւն և անարգ նախանձ հոգեւոր առաջնորդաց ազգիս, և ոգիտութիւն և երկպառակութիւն ժողովրդեան նոցին, հալածելով զնա ի քարոզել զճշմարտութիւն և զարդարութիւն, և ի դարման տանել չարեաց ազգիս, հաստատութեամբ ատուածատէր, ընկերատէր, և ուսումնատէր միաբանութեամբ միոյ։ Երկրորդ՝ անպատեհ վարք և անուղիղ գնացք յաջորդաց նորին, Սարգիսանոս Մելգոնեան, և Գէորգ Հիւրմիւզ Աբրայից, որոց մին զմիաբանութիւն նորա յերկուս ճեղքեաց, և տիարացոյց յոյժ, և միւսն եղծեաց և անպիտան կացոյց զայն խոպան . . . և որոց պատմութիւն վարուց և գնացից ի դէպ է ասա յանդիման կացուցանել, ի բոխանդակութիւն պատմութեանս, միանգամայն և ի ցուցանել զպատճառս և զաղբիւրս զեղծմանց միաբանութեան, որպէս զի ներկայ Մխիթարեան հարք փութացին դարման տանել չարեացն, և յառաջին փառս իւր դարձուցանել զաղաւաղեալ տուն Մխիթարայ։ Բայց քանզի չէ մարթ խօսել զյաջորդաց առանց խօսելոյ յառաջագոյն զնախահօրէն, վասն որոյ պարտ համարիմք նախակարգել զպատմութիւն վարուց և կենաց մեծին Մխիթարայ, և ապա յաւելուլ զայլոցն ևս, հանդերձ ցուցակիւ քննութեամբ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՎԱՐՈՒՑ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ԱԲԲԱՅԻՑ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՎԱՐՈՒՑ

ՄԽԻԹԱՐԱՑ ԱԲԲԱՅԻ

ԾՆՈՒՆԴ ԵՒ ԱՆՈՒՆԴ ՄԽԻԹԱՐԱՑ

Ծնաւ Մխիթար յաշխարհին փոքուն Հայոց ի Սեբաստիա քաղաքի, յամին 1676 ի բարեպաշտ ծնողաց. անուն հօր նորա Պետրոս, և մօրն Շահրիստան։ Յաւազանին սրբոյ վերատին ծննդեանն՝ կոչեցաւ Մանուկ, յանուն հաւուն իւրոյ. այլ ի զարդանալ հասակին և ի կրօնաւորիլ իւրում, փոխեցաւն արարեալ ըստ սովորութեան ընկալաւ զանուն նախահաւուն իւրոյ, Մխիթար։

Ի հնգամեայ հասակի անդ՝ յանձնեցաւ ի դաստիարակութիւն ընդ ձեռամբ պատուական քահանայի մի, ուսանել զընթերցումն և զգիր, յորում երևեցոյց վաղվաղակի զմտաւորժ յաջողութիւնն ի վեր քան զչափ հասակին, զի ի սակաւ ժամանակս ուսաւ անսայթաք վերծանել զգիրս, և գրաշմել զնշանագիրս։

Բայց սաւաել սիրտն երևէր ի նմա զոյգ ընդ ուսումնասիրութեանն և հոգեւորացն յօժարութիւն. զի ըղձալի էր նմա կոնդակ յաստուածային պաշտաման, զոր մտադիր կատարէին բարեպաշտ ծնողք նորա, ստէպ ստէպ տանելով յեկեղեցին։ Երկոքեանքն այսու, ուսումնասիրութեամբն և

հոգեսիրութեամբն՝ զսա ի յաշխարհէ հրաժարմանն զհին արկանէր ի հոգի նորս աստուածային յառաջատեսութիւնն, մինչեւ անդէն ի մատաղ հասակին՝ երեւեցուցանէր զնշանս կոչմանն ի կեանս միանձնութեան։

Ժամանեալ նորա ի տասներորդ ամ հասակին՝ ոչ եւս պարտ վարկան ծնողքն առաքել զնա առ քահանայն ուսուցիչ. զի ուսեալ էր մանուկն զամենայն, զոր քահանայն կարէր ուսուցանել նմա. իսկ յառաւելագոյն ուսմունս տարոյ զնա, ոչ տեղի դպրութեան կայր ի քաղաքին, և ոչ վարժիչ բաւական. այլ խորհեցան առաքել զմանուկն առ երկու կրօնաւորեալ քորս որբաւուն, ուր թէպէտ զրոց վարժումն ոչ էր ակնկալելի, բայց զարգացումն վարուց աստուածպաշտութեան յուսալի էր անշուշտ։ Իսկ արդիւնք իրացն ցուցին յայտնապէս զծածկեալ խորհուրդս տեսչութեան Աստուծոյ, թէ հանդերձեալ էր մանուկն Մխիթար հաստատել յանձին իւրում զհին երկոցունց եւս ուսմանց, գրաւորականին և հոգեւորականին։

Ի ժամանել ի հնգետասան ամ հասակի, ստիպէր զմայրն ընծայել զինքն ի վանս սուրբ Նշանու. ընկալեալ զհաւանութիւն նորա՝ յանդիման եղեւ առաջի եպիսկոպոսին, առաջնորդի սուրբ Նշանու, հայցելով ընդունել զինքն ի վանս։

Ընկալաւ զնա եպիսկոպոսն, և զգեցոյց նմա զաբիթն կրօնաւորութեան, և ձեռնադրեաց զնա սարկաւագ, յամին 1691, ի հնգետասան ամի հասակի իւրոյ, և կոչեցաւ Մխիթար, առ ի լինելոյ մխիթար բազմաց երկնակրօն վարուք և լուսաւոր վարդապետութեամբ։

Յետ այնորիկ առանձնացեալ Մխիթարայ Սարկաւագին ի վանս՝ առաւելոյր ի փոյթ առաքինական վարուց և յաւուրն զրոց։ Այս էր նորա գործ ի վանս անդ ընդ ամ մի ոգջոյն։ Բայց հոգեսէր պատանին այսու ոչ շատանայր, զի քաջ խեստուտ էր մեծի կարօտութեանն, զոր ունէր առ կրթութիւն հոգեւոր կենաց, և առ ուսումն արտաքին գիտութեանց։ Եւ զի անդ և ոչ զմին կարէր գտանել, ոչ առաջնորդ ինքեան

ի հոգեւորական հրահանգս, և ոչ իսկ գիրս ինչ ուսմանց ունէր, յորոց կարիցէ ուսանել։ Յայն ասկս առաւել էր յարաժամ, և ցանկայր հանդիպել ումեք ի գիտնականս վարդապետաց, և աշակերտիլ նմա։

Եւ եղեւ յետ ամի միոյ մտանելոյ Մխիթարայ ի վանս, եկն ի Սեբաստիա Միքայէլ անուն Արքեպիսկոպոս, նուիրակ առաքեալ յԷջմիածնէ, մեծանուն ոչ միայն ի վարժս գիտութեանց, այլ նա և ի խստակրօն ճգնողական վարս։ Զայն լուեալ Մխիթարայ՝ ի փափաք վառեցաւ աշակերտիլ նմա, ակնուելով ոչ միայն զգիտութիւն ուսանել ի նմանէ, այլ և զհանդամանս հոգեւոր վարուց կրթութեան։ Այլ յերկոցունց միանգամայն վրիպեալ գոյաւ։

Արդ՝ այսպիսի գեղեցիկ յուսով մատուցեալ Մխիթարայ առ Միքայէլ եպիսկոպոսն, յայտ արար նմա զյօժարութիւն իւր մտանելոյ յաշակերտութիւն առ նմա։ Իսկ նա խնդամիտաբար ընկալաւ զնա, խոստանալով տանել ընդ իւր յԷջմիածին, իբրեւ ի վարժարան հոգեւոր վարուց կրթութեան, և յուսումնարան ատուածային և արտաքին գիտութեանց. անդ ասէր գոցես զամենայն ըստ ցանկութեան սրտի քո։ Եւ ընդ ամիսս երկուս յորս եկաց ի Սեբաստիա, առ ինքն յանկուցանելոյ զսիրտ պատանւոյն, համբոյր և սիրելի բանիւք զնայր ընդ նմա, և ինչ ինչ ի թղթոց Կաթուղիկոսաց մեկնէր նմա ըստ կարի իւրում։

Այլ իբրեւ եկին անտի յամսեանն գեկտեմբերի՝ երթալ ի քաղաքն Կարնոյ, այնուհետեւ առաջին քաղցրութիւն վարդապետին իջմերային ինն խառութիւն փոխեցաւ առ Մխիթար։

Հասեալ նոցա ի Կարին՝ կացին անդ զաւուրս ինչ. ուր տեսեալ Մխիթարայ առ դրան եկեղեցւոյն ի վաճառելի գրեանս զփոքրիկ գիրքն, Խոկումն քրիստոնէական, վառեցաւ ի սէր հոգեշահ բանից նորա, և գնեալ զայն՝ անյապաղ փափաքմամբ ընթեռնոյր, և քաղցրանայր հոգւով ի շահ անձին, և ի մխիթարութիւն տառապանացն, զոր կրէր յայնմ դառն աշակերտութեան։ Բայց ոչ յերկար վայելեաց յայն մխի-

թարութիւն. քանզի տեսեալ վարդապետին զգիրսն ի ձեռին Մխիթարայ, ՀԵռեալ բարկութեամբ վազեաց և եհան ի ձեռաց նորա, ասելով. Այդպիսի գիրք, անկ է վարդապետաց, և ոչ քեզ։ Եւ ապա ասէ ցնա. Դու պարտիս զԱստուծոյ միայն ընթեռնուլ։ Քանզի տեղեկացեալ գիտէր զգերապանց ուշիմութիւն պատանւոյն, և կասկածէր իսկ յետ տակաւ ժամանակի տատկելոյ նա և քան զվարդապետն, որ հակառակ էր մտաց նորա։ Վասն զի յայտնապէս յերեսս իսկ ասէր զՄխիթար, թէ ծառայեցեալս ինձ զամս երկուսսան, և ապա ուստից քեզ զար ինչ պիտոյ է, և վարդապետ տարեալ տաձակեցից։

Անդ ի կարին՝ եկն ի խուց անդր յողջոյն Մխայէլ վարդապետի մի ոմն ի կրօնաւորաց Ցիսուսեան կարգին, և չգտեալ զնա անդ, եհարց զՄխիթար վասն նորա։ Իսկ նա մեծարանաք ընկալեալ զկրօնաւորն՝ ասաց նմա, մնալ առ վայր մի զտելասան նորա։ Եւ տեսեալ զնա ի տարազ հայ քահանայի, իսկ բարբառ նորա օտարազգի, սկսաւ հարց փորձ առնել նմա, թէ ո՞վ ի՞ց է և ուստի։ Եւ պատասխանի կրօնաւորն. Ես քահանայ եմ Ֆրանկաց։ Ասէ Մխիթար. Ո՞րպիսի ազգ է Ֆրանկ. զիարդ է քրիստոնէութիւն նոցա. ունի՞ն աւետարան, և զայլ սուրբ գիրս։ Ասէ նա. Այո՝ ունին որպէս և Հայք։ Եւ յաւել Մխիթար հարցանել և զայլ ինչ. նա պատմեաց նմա զամենայն։

Արդ՝ եկեալ նոցա ի Կարնոյ՝ երրեք հասին յԷջմիածին, Կաթողիկոսն, տէր Եսայիա, և այլ եպիսկոպոսք և վարդապետք բազում պատուոյիրութեամբ ընկալան զՄխիթար եպիսկոպոսն. զի էր մի յերեսելեաց անտի։ Իսկ պատանին Մխիթար կայր առ նմա, և ծառայէր ամենայն զգաստութեամբ, զամենայն ինչ ըստ հաճոյից նորա կատարել։ Սակայն ի վերայ այսր ամենայնի խառնութիւն վարդապետին ոչ մեղմանայր, առ ամենայն չնչին և դուզնաքեայ սկսանայ դիպուած, ի սրտմտութիւն բրդեալ՝ զառն նախատանաք և խաղոյն բանիւք խոշտանգէր զնա, մինչ ցու հարուածոց զուարդանին ընդ աւուրս ինչ վշտացնէր զնա։ Ի վերայ այս-

պիսի հանապարհով տառապանաց, յաւելաւ նմա անդ և անտանելի ցաւ աչաց առ երկար ոքնութեանց։

Բարեխնամ յոտաջատեսութիւնն Աստուծոյ անտեսէր, ընդ փարձ այնպիսի աշակերտութեան մատնել Մխիթարայ, որպէս զի ունձամբ տեղեկացեալ գիտասցէ, թէ զիարդ արժան է վարել ճշմարիտ վարդապետի առ իւր աշակերտս, ոչ տիրարար իրրեւ առ ծառայ արծաթագին, այլ իբրեւ հայր խնամատար որդի, որպէս և ի հատանել ժամանակին՝ արդեամբք հաստատմացոյց զհայրախնամ առաջնորդութիւնն։ Վասն զի ինքեան մանկանց և ի պատանեկաց, որք յաշակերտութիւն նորա գային, ոչ երբէք ծառայեցոյց ի ստրուտութիւն անձին իւրոյ, կամ յարտաքին գործս ծառայականս, այլ միայն զկիրթն վարդապետութեան առատաձայնն գիտութեանց փութայր ջամբել նոցա, քաջ գիտելով, թէ ծառայական խառութեամբ վարժեալքն ոչ երբէք ազատական բարս ստանան, և ոչ մերկանան զբնաձին թանձր խոշորութիւնս, այլ քերշաւ վարդապետական բանից, գան ի յարդարուն ստաքինի ազնուականութիւն։

Արդ՝ այս անցք որք անցանէին ընդ նա, թէպէտ և մեծ մեծ վիշտք էին, բայց թեթեւ ինչ թուէին նմա, համեմատութեամբ վշտաց, որով զցայգ և զցերեկ առատապէր ի սրտի, տեսեալ զի անդէն հոգեւոր վարուց դատարակ անձին իւրում ոչ ոք երեւէր, որում ցանկայր, և առաւել քան զուսումն գիտութեանց կարեւոր ինքեան զայն վարկանէր։

Նորին ազգաւ քաջ խորհեալ՝ հաստատեաց ի մտի եկանել անտի, երթալ յանապատն Սեւանայ, յուսալով գտանել անդ տեղի հոգեւոր կրթութեան, որպէս և համբաւ ճգնողական կենաց բնակչացն հնչէր։ Եւ զայն շատ համարէր անձին։ Իսկ զուսումն գիտութեանց ի կամս Աստուծոյ առնէր ապատան։

Եւ մինչ նա յայսմ խորհրդի էր, ահա եկն ի Սեբաստիոյ ոմն ի ծանօթից իւրոց, որոյ կատարեալ անդ զուխտ իւր, կամէր երթալ յանապատն Սեւանայ։ Զայն խնայեալ Մխիթարայ՝ ուրախ եղեւ յոյժ, և ժամագիր եղեւ ուղեկցել նմա։

Բայց վարանէր ի միտս, թէ զիարդ մարթասցի ճողոպրել զանձն ի ձեռաց Միքայէլ եպիսկոպոսին. զի յայտնապէս առնուլ զնորա հաւանութիւնն, անյուսալի էր, իսկ գաղտագնաց փախչիլ՝ վտանգ էր խնդրակս զկնի իւր արձակելոյ ըմբռնելոյ, և դանիւք պատժելոյ։ Ապա զայս հնարս եդիս. գիտէր զի Թէոդորոս եպիսկոպոսն մատակարար Էջմիածնի, էր բարեգեաց, համբոյր և գթասէր, յայտնեաց նմա ծածկարար զյօժարութիւն սրտի իւրոյ առ ճգնողական կեանս, յորմ սակս և զկամս երթալոյ յանապատն Սեւանայ։ Եւ ապաչեաց զնա լինել ինքեան օգնական երանելոյ անտի առանց կրելոյ զչար ինչ ի ձեռաց վարդապետին իւրոյ։ Իսկ նորա գթացեալ ի պատանին՝ քաջալերեաց զնա չերկնչել բնաւ, խոստանալով լինել նմա պաշտպան, միանգամայն և զհնարս ելից ասացեալ նմա։ Այնպէս ապրեալ Մխիթար, ելեալ ի վանաց անտի, և գտեալ զուղեկից իւր, ելին երկոքին ի ճանապարհ գնալ ի Սեւան կղզին։

Իսկ Միքայէլ եպիսկոպոսն ելեալ յեկեղեցւոյ՝ խնդրէր զՄխիթար. և իբրեւ ասացաւ նմա, թէ կանուխ ելեալ գնաց, վաղվաղակի խնդրակս արձակեաց զկնի նորա, բայց նոցա անգիտացեալ թէ ընդ ո՞ր գիմաց, ընդ այլ ճանապարհ յածեալ՝ և չգտեալ՝ դարձան յետս։

Եւ այնպէս խնամօք Տեառն ազատեցաւ Մխիթար ի ձեռաց վարդապետին իւրոյ։

Եւ կալեալ նորա զճանապարհ հետի ընդ ուղեկցի իւրում չոգան յանապատն Սեւանայ, որ է կղզի ի մէջ ծովակի, և մենաստան ինքն Հայոց ճգնաւորաց, որոց տեսեալ զիսհաւկան քաղաքավարութիւն ատուածատէր պատանւոյն Մխիթարայ, յորդորէին զնա մնալ անդ առ իւրեանս։ Բայց նա ընդ այնչափ առեալս՝ յորս եկաց անդ, ոչ եռեա զհոգեւոր վարուց կրթութիւնս, և ոչ լուաւ խրատս հոգեւորդս մարգիչս ի ներքին առաքինութիւնս։ Այլ Տեառնէր միայն զարտաքին ճգնութիւնս պատոց պնդութեան, խարազնադիցութեան, ծնրադրութեան և աղաղակութեան, որք արդարեւ կարեւոր են և զովեալ և ի կիր արկեալ իսրբոց, բայց չեն բա-

ական առաջնորդելոյ ի կատարելութիւն աւետարանական առաքինութեանց։ Դմին իրի տեսեալ Մխիթարայ, զի և անդ ոչ եգիտ՝ որում անձուկ կարօտանօք փափաքէր, և զոր այնչափ տաժանմամբ և վշտակրութեամբ խնդրէր, հոգայր և տառապէր ի սրտի, և արտասուալից հեծութեամբ ի ցաւադնեալ սրտէ ազաղակէր առ Աստուած. « Զինչ լինիցի « ինձ Տէր իմ, և կամ ես զի՞ արարից, զի և սատ ոչ « հանդիպեցայ, որում փափաքի անձն իմ. արդ ո՞ւր դիմե- « ցից, և կամ յո՞ ապաւինեցայց ցուցանել ինձ ճանապարհ « բարի, բաց ի քէն Տէր իմ բարի՛բար, որ լոյս ես խաւարելոց « և առաջնորդ կենաց։ »

Եւ յաւուրս միում մեռեալ առանձինն յիկեղեցին, և անկեալ առաջի պատկերի Աստուածամօրն, կայր յաղօթս ցաւագին անձամբ, և տառուչ պաղատանօք աղաչէր զմայրն ողորմութեան այցելու լինել ինքեան։ Ապա զկնի այսպիսի պաղատանաց, անկաւ թմբրութիւն ի վերայ նորա։ Եւ ահա երևեցաւ նմա օրհնաբանեալ կոյս Մարիամ աստուածածինն յայսմանի և պայծառ տեսլեամբ, զի կայր դէմ յանդիման։ Եւ ամենաօրհնեալ կոյսն Մխիթարեալ զնա և քաջալերեալ՝ ասէ. « Զինչ « կամիս, և զի՞նչ խնդրես, խնդրեա՛ և տացի քեզ։ »

Յայնժամ լուսով շնորհաց լուսաւորեալ պատանեւոյն՝ զայն եւեթ խնդրեաց որ քան զամենայն խնդրելիս լուսազոյն էր։ ասելով. « Ես ոչ գիտեմ Տի՛րուհի, թէ զի՞նչ իցէ ինձ կա- « րեւոր և օգտակար, զի խնդրեցից. զայն կամիմ, զոր « ինչ դու կամիս, և զայն խնդրեմ, զոր դու գիտես թէ « ինձ պիտոյ է։ »

Ասէ ցնա տիրամայրն. Բարի՛ է, կատարեցից քեզ զխնդրելեաւդ զայդ։ Եւ սթափեալ պատանեւոյն՝ եգիտ զանձն քաջալերեալ և լի մխիթարութեամբ. և այնուհետեւ բնաւ ոչ ջնջեցաւ ի մտաց նորա սքանչելի տեսիլ կերպարանացն. զայն ունէր ցանգ առաջի մտացն յամենայն աղօթս իւր, և այն եղեւ մխիթարութիւն նմա յամենայն վիշտս և ի տառապանս, զոր կրեաց յամենայն կեանս իւր։

Յետ այնորիկ խորհեցաւ Մխիթար դառնալ ի հայրենիս

իւր, վասն որոյ ելեալ ի Սեւանայ կղզւոյն ընդ ուղեկցի իւրովք, եկին յԵրեւան, ուր գտեալ զկարաւան ուղեւորաց, որք հանդերձեալ էին երթալ ի Կարին՝ յաւելան ի նոսա, և հասեալ ի վանս Բասենոյ՝ անդ երեկոթս տարին ուղեւորքն։ Իսկ Մխիթար մտեալ յեկեղեցի վանացն՝ տեսեալ անդ զպատկեր տիրամօրն յար և նման ամենայնիւ կերպարանացն, որով երեւեցաւ նմա, ընդ որ հիացեալ և նորոգ ցնծութեամբ տուլցեալ՝ եդ ծունր առաջի պատկերին, և չերմագին արտիւ եկաց յաղօթս։ Այսպէս մտաւաւ առ Մելքիսէթ եպիսկոպոսն, որ էր առաջնորդ վանացն, ի յարգութիւն։ Ծանեաւ վարդապետն եպիսկոպոսն ի դիմաց կերպարանացն, և ի հանճարեղ բանից, զոր ասէր նորա զմեծութիւն և զզգօնութիւն, կապեցաւ սիրտ նորա ընդ պատանին, և սկսաւ յորդորել զնա բազում հեշտալիր և հաճոյալի բանիւք մնալ անդ ի վանս իւր, և լինել ուսուցիչ մանկանց թեմի իւրոյ։

Տեսեալ Մխիթարայ զանկեղծ բարեմտութիւն եպիսկոպոսին, միանգամայն ի սիրոյ պատկերի տիրամօրն յորդորեալ՝ յանձն էառ մնալ անդ առ ժամանակ մի։

Ինքին ժամանակի առաջնորդ Կարնոյ եպիսկոպոս անն Սեւերոք անուն, լուեալ վասն Մխիթարայ՝ եթէ անդ է, առաքեաց կոչեաց զնա առ ինքն, և բազում սիրալիր հեշտ և կամակ բանիւք, և մեծամեծ խոստմամբք հնարէր ձգել զնա յիւր աշակերտութիւն։ Այլ հանճարեղ պատանին, որ արդէն առեալ էր զիարձ բազմաց վարդապետաց, և յաճախ զայնպիսի մեծի խոստմունս լուեալ՝ ոչ ինչ բնաւ հաւանեցաւ ընդ բան նորա։ Եւ Մելքիսէթ եպիսկոպոս վանացն բազում խնդութեամբ ընկալեալ զնա, յանձն արար նմա զհոգ եկեղեցւոյն, և զդաստիարակութիւն մանկանց, զոր նա յորդորեալ խնամով կատարէր անթերի, և ի յաւելեալ ժամանակս կրթական ջանիւ զինէր զանձն յընթերցմունս գրոց։

Իսկ Սեւերք եպիսկոպոսն ամենայն յաճախ յորդորեալ էր խոտորութիւն մեծ ի մէջ ժողովրդեան, պատճառանօք ինչպոյ ինչ հաւատոյ, զոր և օր քան զօր սատակացուցանէր։ Զի զորոց իրազեկ լինէր զերկոսին բնութիւնս ի Քրիստոս խոստ-

վանիլ, և զԼէոն և զժողովն Քաղկեդոնի սուրբս և ուղղադաւանս ընդունիլ և պատուել, զնոսա հալածէր իբրեւ հերձեալս յուղղափառ հաւատոյ։ Յայսմանէ բազումք ի խառնաղանճից անուանք և տղէտք զրոց ճշմարտութեան՝ պատճառս առեալ՝ զաղմուկն բորբոքէին, որով բոլոր հայազգի ժողովուրդ քաղաքին հեծէր ի ծուփս անհնարին խռովութեան։ Զայն լուեալ Մխիթարայ ի վանս, և խմացեալ զպատճառն՝ զարմանայր ի միտս իւր, եթէ զիարդ հալածեն զայնոսիկ, որ զերկու բնութիւնս ի Քրիստոս խոստովանին, որովհետեւ և ինքեանք իսկ հալածիչք, զՔրիստոս ասուած և մարդ գաւանին։ Քանզի ինքն ի սկզբանէ ուսեալ էր զայս ճշմարտութիւն ի վարդապետութենէ որոց հարց ազգիս, և ի նմին կոյր հաստատեալ։

Յայսմանէ շարժեալ նորա այնուհետեւ առաւելապէս փոյթ կալաւ լսել եւս խելամուտ լինել այնց խնդրոց, զորոց լինէր հոկտառակութիւն, և ամենայն ջանիւ ջ՝ետս էր գիտել, թէ զինչ գրեանք կայցեն յազգի մերում, որք յաղագս այնպիսի իրաց որոշապար խօսիցին։ Եւ լուեալ ի քահանայէ միոյ, թէ ի մեծ ճառընտիրն, որ էր անդ յեկեղեցւոջ վանացն գտանի ճառ յաղագս Լէոնի, և ժողովոյն Քաղկեդոնի, նոյն ժամայն ընթացաւ յեկեղեցի անդր, գտանել զայն ճառ, զոր և գտաւ, և սկսաւ այնուհետեւ անձանձրոյթ ջանիւք ընթեռնուլ զայն ճառ, և զայլ եւս ճառս բազումս ի մատենի անդ, յորոց ծաղկաքաղ արարեալ՝ մթերէր բանս յոլովս ի հաստատութիւն ողջամիտ վարդապետութեանց։ Եւ յայնմ հետէ սկսաւ համարձակ քարոզել և ուսուցանել որոց և զիպէր, քահանայից և աշխարհականաց, հաստատելով զամենայն ճշմարտութիւնս զրոց վկայութեամբք։

Եկաց Մխիթար սարկաւագն ի վանս Բասենոյ տարի մի և ամիս հինգ, ամենայորդոր փութով կատարելով զգործս պաշտաման իւրոյ, բանիւք և օրինակաւ հաճարեղ և համեստ գնացից իւրոց, զամենեսեան ի բարի և յաստուածահաճոյ կեանս խրախուսէր։

Յետ այնորիկ խորհեցաւ Մխիթար երանել ի վանաց անտի և

երթալ ի Սեբաստիա քաղաք ծննդեան իւրոյ՝ յորդորեալ ի զանազան պատճառաց։

Մեկնեալ նորա ի վանաց Բասենոյ և եկեալ ի Կարին գտանել զկարաւան ուղեւորաց ի Սեբաստիա, կալաւ ինչեւանս ի տան առն միոյ, որում անուն էր Պօղոս, որ երթեալ էր երրեմն ի Հռոմ յուխտ, և տեսեալ էր անդ զբարեկարգութիւն և զպայծառութիւն եկեղեցական կարգաց, զրաղմութիւն վարդապետաց, զյոգնաթիւ վանորայս, և զյաճախութիւն զրաւանց։ Զայս ամենայն, ընդ որս և զմեծագանձ հոգեւոր և մարմնաւոր ճոխութիւնս Հռոմայ պատմեաց նմա, զոր լուեալ Մխիթարայ, արծարծէր վառէր ոգի նորա, ի յաճողել պատեհութեան անցանել յարեւմուտս։

Յամին 1693 եհաս Մխիթար ի Սեբաստիա, և գնացեալ եկաց ի վանս սուրբ Նշանու, հանապազորդեալ ի մտադիր ընթերցումն սուրբ գրոց, և այլ վարդապետական մատենից և ճառից որք անդ գտանէին։

Ինքին ամի առաւութիւն արեան ինչեալ յաչս նորա, զերկոսին միանգամայն վտանգեաց հանդերձ անբմբռնելի ցաւով, մինչեւ երկոքին աչք նորա խոպոռ խաւարեցան։ Բայց նա յայսմ ամենայնի՝ զանձն իւր բոլորանուէր պատարագ առուածոյին կամաց ընծայեալ՝ սքանչելի համբերութեամբ տանէր զժնդակ ցաւոցն, յարաժամ զոհանալով զտեառնէ, միանգամայն և անեղկմիտ հաւատով ի բարերար յամենախնամ կամս Քրիստոսի ապաւինեալ՝ հայցէր ի նմանէ միջնորդութեամբ ամենօրհնեալ կուսին Մարիամու, զի թէ մարդասէր կամաց իւրոց հաճոյ իցէ, շնորհեսցէ նմա զայնչափ տեսութիւն, զի կարիցէ առանց ձեռնկալի շրջիլ և երթալ յեկեղեցին։

Արդ՝ եկաց Մխիթար ապրկաւագն յայնմ զժնդակ աշուցաւութեան զրկեալ բնաւին ի տեսութենէ լուսոյ զայն ձմեռն ողջոյն, հանդերձ անընդհատ ցաւով, սակայն ի հոգեւոր կրթութենէ ոչ լուէր։ Քանզի ընդ ժամս ինչ յաղօթս պարապէր, և ժամս ինչ ի հոգեկեցոյց վարդապետութիւնս առ այնոսիկ որք յայց եկանէին նմա անցուցանէր։ Երբեմն եւս զերդս

գովեստից առաուածամօրն ուսանաւոր չափով յօրինէր, և տայր գրել.

«Մինչ կոյրն էի ուխտեցի,
Զի ի Կուսէդ լոյս տացի։»

Այսպիսի առաքինի հոգեջան վաստակօք հանդերձ համբերատար ժուժկութեամբ դառնագին ցաւոց անցոյց զվեցամեայ ժամանակ այնր ձմերայնոյ։

Ապա իբրեւ հասին աւուրք դարնայնոյ, դեղով ինչ դեղարարի ուրումն, և խնամօք տեառն մաքրեցաւ յաչաց նորա յորդութիւն արեան, ընդ նմին և ցաւն փարատեցաւ. բայց սեւագոյն ջուրն աչոյ ական մնաց դեռ եւս. վասն որոյ թէպէտ աչոյ ակամբ ոչ տեսանէր, բայց ձախուն սկսաւ նշմարել, որով կարէր անձեւնկալ շրջիլ, և որով ապա հանարձակ տեսանէր և ընթեռնոյր. բայց աչոյ ակն դեռեւս խաւարագոյժ էր, զի սեաւ ջուրն կայր մեայր ի նմա, առ որոյ փարատումն, կարեւոր է ասացին ոմանք, խարան բանալ ի վերայ արտեւանաց այնր ական, զոր և արար, բայց այն ոչ միայն չօգնեաց ինչ, այլ և վնասեաց։

Ապա այնուհետեւ ի բաց թողեալ զամենայն մարդկային դարման դեղոց, յանձն արար զիրան հաճոյից կամաց տեառն, և այնպէս զկնի ժամանակաց ինչ առանց դեղոց ինքնին անհետացեալ սեաւ ջրոյն ողջացաւ բոլորովին։

Եւ յայնմ հետէ առաքելաշնորհ պատանին իբր ի կապանաց արձակեալ, զբարեխառնձ եռանդն ծաւալելոյ զուղիղ հաւատոյ ուսմունս, զոր իբր երկու ամօք յառաջ սկսեալն էր ի վանս Բասենոյ, սկսաւ և անդ ի Սեբաստիա երեւեցուցանել, ուսուցանելով եկեղեցականաց ի վարդապետական գրոց։ Քանզի ցայն վայր ոչ ոք յազգէս մերմէ յայտնի քարոզէր զայն ի Սեբաստիա, և որք գիտակք էին յստակութեամբ ուղղադաւան մատանցն՝ սակաւք էին, և առանձին ունէին զայն, անկարօղք գոլով գրոց վկայութեամբք հաւատարմացուցանել այլոց։ Ասի նա ինքն Մխիթար եղեւ առաջին և յայտա-

պատում քարոզ ճշմարիտ ուսմանցն՝ նախ ի Սեբաստիա, և ապա յայլ բազում տեղիս ինքնին, և ի ձեռն այնոցիկ, որոց ուսոյց։ Յայս նուազագ եկաց Մխիթար սարկաւագն ի Սեբաստիա, ամիսս չորեքտասան, և ինքն էր յայնժամ իններեւտասան ամաց։

Յետ այսորիկ իբրեւ տեսանէր Մխիթար զի տեսութիւն աչացն խնամաք տեսան օր ըստ օրէ զօրանայր, կամ եղեւ նմա զխորհուրդն երթալոյ ի Հռոմ արդիւնացուցանել։ Եւ մինչդեռ յայսմ խորհրդի էր, եկն եհաս ի Սեբաստիա վարդապետն մին Յովհան անուն Եւդոկացի, այր հեզահամբոյր և բարեմիտ, և երեկոթս կալաւ ի վանս սուրբ Նշանու, ուր էր և Մխիթար, զէմ եղեալ նորա երթալ յԵրուսաղէմ յուսումն գիտութեանց։ Եւ յաւուրսն, յորս եկաց անդ, ընդելացեալ Մխիթարայ սարկաւագին, և ծանուցեալ զերկիւղածութիւն նորա և զգրոց հմտութիւն՝ որոյ մտաք յարեցաւ ի նա, վասն որոյ յորդորէր զնա և ապաչէր երթալ ընդ նմա յԵրուսաղէմ, օժանդակ լինել ինքեան անդ յուսումն գիտութեանց։ Իսկ Մխիթարայ թէպէտ և չէին կամք երթալ յԵրուսաղէմ, այլ ի Հռոմ, բայց տեսեալ զանկեղծ պարզմտութիւն նորա, յանձն առ ուղեկից լինել նմա մինչեւ ի Բերիա, եղեալ ի մտի հաւանեցուցանել նմա զճանապարհայն, զի ուղեկից լինիցին երթալ ի Հռոմ, և անդ ուսանել։

Ապա եղեալ նոցա ի ճանապարհ ընդ կարաւանին Բերիոյ, ի լինել խօսեց յաղագս հակառակութեան ոմանց ի բանս ինչ հաւատոյ, Մխիթար սարկաւագն առաջի դնէր նմա զճշմարիտ վարդապետութիւնն յայսմանէ վկայութեամբք գրոց, ցուցանելով՝ թէ որք միանգամ հակառակ խորհին դաւանութեան Հռոմէական եկեղեցւոյ, այնպիսիք խոտորին և յաւանդութենէ առոյգ վարդապետաց Հայոց, և զիւրեանց խակ ասացեալն ոչ խմանան։ Յետ բազմօրեայ զգուշաւոր տեղեկութեան խնդրանաց եղեւ նոցա Յովհան վարդապետն ճշմարտութեան ասացելոյն ի Մխիթարայ, և գիտացեալ զկամս նորա՝ թէ ի Հռոմ հանդերձեալ է գնալ, կամակից եղեւ նմա յամենայնի։

Եւ հասեալ նոցա ի Բերիա, գտին անդ Լատին քահանայս ի զանազան կարգաց կրօնաւորաց, որոց ընդելացեալ Մխիթարայ սարկաւագին՝ սակայ երթայր առ նոսա։ Էր ի նոսա մի ոմն երիտասարդ՝ Անտոն անուանեալ՝ ի կարգէ Յիսուսեանց, այր երկիւղած, խոհեմամիտ՝ լի ամենայն հրահանգիւ գիտութեանց՝ առաքեալ ի Հնդիկս ի քարոզութիւն։ Առ նա առաւելապէս յառաջեալէր Մխիթար ընդ ամիսս երիս՝ յորս եկաց ի Բերիս։ զի նա քան զայլս տեղեկագոյն էր առաքելական բարքառոյ։ Եւ բազում բանս ի խնդրոց աստուածաբանութեան հետախոյզ քննութեամբ հարցանէր նմա, և ամենայն ասացելոյ ինքեան արագ և անվթար խելամուտ լինէր, մինչև զարմանալ հօրն Անտոնի ընդ յաջողութիւն մտաց նորա։ Մխանգամայն ուշ եդեալ յեղկիւղածութիւն նորա՝ և յեռանդն ոգւոյն, և ի մեծաջան փոյթ նորա զարդանալոյ ի գիտութիւնս՝ որ առ փրկութիւն հոգւոյ առաջնորդեն, սիրէր զնա, և ունէր իբրեւ զմի յընտիր և ի նշանաւոր արանց, որպէս ինքնին յայտ առնէ ի վկայական գիրսն՝ զոր ետ Մխիթարայ։

Այս զինքն առաւել ինչ ժամ գիսող գտեալ Մխիթարայ յայտնեաց նմա զմիտս իւր, անցանելոյ յարեւմուտս վասն ուսման գիտութեանց։ Այլ զու սեա ինձ ասասնար զարթնաւիս խորհրդականութիւն հօրն Անտոնի. զի ոչ բարեաք թուեցաւ նմա այն. և ոչ խակ ընաւ հաճեցաւ։ Վասն որոյ ջանայր և հնարէր ամենայն իւրք դարձուցանել զնա ի խորհրդոյ անտի։ «Տեսո խակ է քեզ ասէր և բաւական այդչափ «գիտութիւնդ զոր ունիս. զոմին հիմամբ կարես ըստ բաւա- «կանին զարդանալ, առանց յարեւմուտս երթալոյ, և առ «այնչափ կատարելութիւն գիտութեանց ժամանել, որչափ «ինչ ցանկաս ասանալ յարեւմուտս։ Թող զի երթալով քո «անդ, հարկ լինի քեզ յօտար ազգս և ի լեզուս ընկղմիլ, և «զկեանս քո յայլ տարաբ վարելոյ փոխել, որով փոխանակ «յաւ ևս օգուտ գործելոյ ազգիդ, ըստ որում ունիս, «խորտ խոտանեցիս ասեսի։ Յայր սակս յաւ է քեզ կամ «Ձեալ ի մէջ ազգայնոցդ, և զոր սկսեալն ես տեսանն առաջ-

«Նորդութեամբ, զնոյն նորին գործակցութեամբ փոյթ կալ-
«ցիս տանել ի գլուխ։»

Բայց նա ի բազում ժամանակաց, և երկար մտախոհութեամբ ունելով զիտրհուրդն զայն հատատեալ ի մտի, ոչինչ համարձակ ի հաւանումն բանից նորա, այլ զհետ ոնգէր առնել ի նմանէ զվկայական և զյանձնարարական գիրս երթալոյ ի Հռոմ։ Հուսկ ուրեմն զկնի բազում խրատուց՝ տեսեալ զնա հօր Անատոլի անդրդուելի ի խորհրդոյն, եւ նմա զերկու գիրս, մի՝ առանձինն և կնքեալ առ առաջնորդ կրօնի իւրեանց, միւս եւս իբրեւ հատարակ վկայական անկնիք առ այլս ամենեսեան։

Եկաց Մխիթար սարկաւագն ի Բերիա զամիս երիս, ապա եկ անտի ընդ Յովհան վարդապետի, և եկին յԱղեքսանդրիա ի նաւահանգիստս Բերիոյ, ուր գտեալ նաւ մի Գաղղիացի մոին ի նա։ Եւ այն ինչ միտք էին եկանել ի ճանապարհ, ահա եկն եհաս անդր Կաթողիկոսն Սլոյ Գրիգոր անուն՝ պիծակ յարջարչեալ՝ ընդ այլում եպիսկոպոսի, զէմ՝ եղեալ անցանել ի Հռոմ. մոին և նոքա ի նոյն նաւ։ Իբրեւ եհաս նաւն ի Կիպրոս, բանադատեցաւ զաւուրս ինչ տակաւին անդէն։ Եւ ի յամել նաւուն՝ ուղեւորք եկեալ ի նաւէ անտի՝ ինչեւան կալան ի ծովեզերեայ տանն։ Անդ խորհէր Կաթողիկոսն յինքն ձգել զՅովհան վարդապետ և զՄխիթար սարկաւագ, զՅովհան ձեռնադրելով եպիսկոպոս, իսկ զՄխիթար քահանայ։ Այլ իբրեւ յայտնեաց նոցա զայս կամս իւր, Մխիթար բացէ ի բաց հրաժարեցաւ. իսկ Յովհան վարդապետ զինչ կամաց նորա։

Մինչդեռ նաւուն եկանելոյ ակնուանէին, եհաս ի վերայ Մխիթարայ անդ զժնդակ, որ զոր ամենայն ըմբռնեալ տանջէր զնա յաւուրսն մինչեւ ցընդերեկս։

Իբրեւ եհաս ժամանակ եկանելոյ նաւուն, ամենայն ուղեւորք մոին անդր, ընդ որս կամէր և Մխիթար մոանել, այլ տեսեալ նաւապետին զնա յայնպիսի ծանր հիւանդութեան, ոչ կամէր ընդունել զնա ի նաւն։ Բայց ապա յաղերս մատուցեալ Կաթողիկոսի և Յովհաննու առ նաւապետն, ուրու-

բեմն հաւանեցուցին զնա ընդունել և զՄխիթար ինաւանդր։

Եւ այն ինչ ելեալ ինաւահանգստէ անտի յառաջ խաղային յաջողակ հողմով, Աստուած որ զամենայն ըստ կանխադէտ անտեսութեան իւրոյ տնօրինէ, շրջեաց զմիտս Մխիթարայ չերթալ ընդ նոսա։ Սկսաւ նա խորհել ի միտս իւր զանբերելի վիշտն՝ զոր հանդերձեալ էր կրել յայնմ հիւանդութեան իւրում յանհրահանգ բարուց ուղեկցացն, զորոյ զփորձն արդէն առեալ էր բազում անգամ։ Եւ մինչ նա յայսպիսի յուզմունս խորհրդոց յածեցուցեալ զմիտս իւր՝ վարանէր, ահա յանկարծ նոր տեսարան կռուոյ բացաւ ընդ Կաթողիկոսն և ընդ եպիսկոպոս իւր, սակս տնտի պատճառաց ի գայթաղղութիւն նաւորդաց առհասարակ։ Զայն տեսանելով Մխիթարայ զամենայն վարանս իւր՝ յերթալ կամ չերթալ՝ ի բաց թօթափէր. և նոյն ժամայն հաստատէր զմիտս իւր ելանել ի նաւէ անտի, փոխեալ այնուհետև և զմիտս երթալոյ ի Հռոմ, և միանգամայն ընտրելով մնալ յօտարութեան վայրի անդ հիւանդագին, անտէրունչ և անօգնական ի մարդկանէ, ի խնամս եւեթ աստուծայն զթութեան ապաւինեալ, քան այնպիսեաց ուղեկից լինել։ Եւ խնամքն աստուծոյ գտաւ յայնժամ ի նաւի անդ ոմն ի վաճառականաց, որ ի քաղաք անդր ունէր գառնալ նաւակաւ իւրով։ Ասաի մատուցեալ Մխիթար առ նաւապետն՝ խնդրեաց արձակել զինքն ընդ վաճառականին ելանել ի ցամաք, զոր յօժարութեամբ արար նա։

Ելեալ Մխիթարայ ի քաղաքն՝ զայն գիշեր ագաւ յառաջին օթևանն իւր, իսկ ի վաղիւ անդր տեսեալ՝ զի ոչ ոք գտանի անդ իւր օգնական այցելու, կալաւ ի վարձու գրատուն, և գնաց ի Սաղամինա, և անդ ի խուցս եկեղեցւոյն Հայոց կալաւ ինչեւանս։ Եւ ի կալ անդ աւուրս երիս անայցելու և անդարման, հիւանդութիւն նորա օր քան զօր աստուկանայր. զոր տեսեալ ժողովրդեան՝ առեալ եղին զնա ի վերայ գրատուն և տարեալ ընկեցին զնա ի վանս ճգնաւորաց Հայոց, ասելով թէ կրօնաւոր սարկաւագ է սա, ապա կրօնաւորք դարման տալցեն սմա։

Եւ քանզի յառաջագոյն, յորժամ ի պատճառս ձեռնադրութեան Յովհան եպիսկոպոսին գնաց Մխիթար սարկաւագն ի վանս յայն, արիզայք տեղւոյն լուան ի նմանէ բան հաստատութեան վասն ուղղափառ հաւատոյ, զոր առաքելաշնորհ պատանին ոչ արժան համարէր թաքուցանել, այլ որոց և պատահէր համարգի եղբարց, անխարդախ սիրով առաջի դնէր, զի մի՛ ապիտարար հակառակեալ՝ կարծիցեն ճշմարտութեան լինել Լատագով։ Բայց նոքա անընտել զրոց հմտութեան և գլխովին անճաշակ, փոխանակ շահելոյ՝ զանհնարին տեղութիւն և թշնամութիւն կալան ընդդէմ Մխիթարայ։ Ելին իրի յորժամ ժողովուրդք գաղթին բերեալ ընկեցին ի վանան, տքա սկսին զնա ի խարխալեալ խուց մի անպատշաճապար յարտաքին օդոց։ Եւ չէղեւ ուստ փոյթ զէթ կարկերա մի քրձոյ տալ նմա ներքոյ սկսանել, կամ ծածկոյթ մի հնոտի։ Իսկ նա զասուեղէն վերարկուն զոր ունէր՝ առեալ զանձամբ՝ զկէսն ի ներքոյ, և զկէսն ի վերայ ունելով, այնպէս անկեալ գնէր անտկրունչ լքեալ յամենեցունց։ Ոչ կերակուր, և ոչ խակ զէթ ջուր ցուրտ ի ժամուս սաստիկ տապոյ ջերմանն նորա՝ զոյր ոք որ մատուցանէր նմա ի զովայուն, այլ ինքնին բռնադատէր երթեալ ի խոհանոցն և խնդրել։ Եւ նա այսմ ամենայնի սքանչելի համբերութեամբ տարեալ՝ անխռով և անշփոթ մտաք զոհանայր յարտաժամ զտեսանէ, նորին հայրական խնամոցն յանձն արարեալ զկեանս իւր, որ է տէր կենաց և մահու։

Այլ որ զառնապոյն եւս է, զի երթայր ինքնին ի խոհանոցն տակաւ ինչ կերակուր խնդրել։ Իսկ խոհակերն յայնմ դառնադէտ կարիս նորա՝ փոխանակ ախտակցութեան՝ կշտամբէր զնա։ Ընդէր ասէ, դու ի ժամ ճաշուն, յորժամ հատարակաց կերակուրն բաշխի՝ ոչ ժամանես ուտել ընդ նոսա։ Այս ինչ բաղում այսպիսի բանից յանդիմանութեան՝ տոյր նմա փոքր ինչ ձիթապտուղ աղի և խակակութ, և հաց գարեխառն. իսկ նա առ հարկի առաջիկայ մահարեր ոսկոյն՝ առեալ ուտէր զայն։ Այս էր նորա սովորական կերակուր երկամեայ ժամանակս, ցորչափ եկաց յայն վանս։ Ի վերայ այսորիկ

յաւելուին հանապազորդ կշտամբանք և յոյլոց ճղնաւորաց, ասկս չերթալոյ նորա յեկեղեցին ընդ նոսա ի ժամու հասարակաց աղօթից, ոչ ինչ միտ եդեալ տկարութեան նորա։ Այլ նա յայս ամենայն վշտացին անցս՝ զմիտս և զսիրտս իւր յարաժամ առ աստուած ունելով ուղղեալ՝ խնդամիտ տանէր ամենայնի։

Ընդ այն աւուրս խնամօք տեառն եհաս անդր եպիսկոպոս ումն անցաւոր։ Սա ի կողկողացին աղերսանաց Մխիթարայ՝ գթացեալ արար նմա ինքնին փոքր մի խիւս եփեալ լոկ ջրով արկեալ ի նմա և ասկաւ ինչ կոգի։ Զայն իբրեւ եկեր, այնչափ համեղ թուեցաւ նմա, մինչ չյիշէր թէ երբէք ի կեանս իւր այնպիսի համոյ առեալ էցէ զճաշակ, որով և առ ժամայն ոգի առեալ՝ փոքր ինչ զօրացաւ։ Ապա կամեցեալ հեռանալ ի վանաց անտի, և տխուր իւրում դարման տանիլ, աղաչեաց զեպիսկոպոսն, և զայլս յուխտաւորաց տանիլ զինքն ի քաղաքն. որք և տարեալ եդին ի խուց մի եկեղեցւոյն։

Մինչ տակաւին Մխիթար հիւանդացին անկեալ դնէր ի խցի անդ եկեղեցւոյն, եհաս ոմն ոչիրոց Հայրապետաց Եփեսոսի ժողովոյն, յորում աւուր երդի Մով հրաշալի շարակոն, յոր յայն աւուր յարեցին և զերիս յեռոց յաւելեալ տունս հայհոյութեանց և նզովից ընդդէմ Լէոնի Հռովմայ Հայրապետին, և ժողովոյն Քաղկեդոնի։ Եւ զի իրազեկ էին նոքա, թէ ոչ յոյն միտս էր Մխիթար, եկին բազմութիւն միահամուռ կուտեցան առ մահճաւք նորա, և տխրէին տագնապէին զնա՝ ասել զայն երիս տունս նզովից, և նզովել զԼէոն։ Իսկ նա ետ նոցա պատասխանի. «Դուք ինքնին գի-
«տէք, զի ես զաւրքն Լէոն ընդունիմ և պատուեմ. ընդէր
«ապա զուր տարապարտուց յորդորեալ է՛ք ի վերայ իմ, և
«խոշտանգէ՛ք զիս. ո՞չ շատ են տառապանք իմ, որով տկա-
«ի դրունս մահու մերձեալ տեսանէ՛ք զիս։» Եւ տկար հեշտ
և համբոյր բանիւք յորդոր լինել նոցա, և խրատել ի բաց
թողուլ զչար հրապոյրս, և ունայլ ճշմարտութեան։ Այլ
նոքա ոչինչ միտ եդեալ բանից նորա, դարձեալ ինոյն բռնադատէին զնա մեծամեծ ապառնալեաք դուն գործելով որպէս

և իցէ՝ ի հաւանութիւն կամաց իւրեանց խոնարհեցուցանել։

Յայնժամ պատանին առաքելաշնորհ զօրացեալ շնորհօք սուրբ Հոգւոյն, լի՛ բարեխանձ եռանդեամբ ճշմարտութեան, եւ պատասխանի համարձակաձայն՝ ասելով. «Դուք «այժմ յարուցեալ էք ի վերայ իմ, չանն ի մոխ եղեալ ի ձեր «խառնուածն ձգել զիս։ Այլ գիտացէք եւ ի միտ առէք առու«զութեամբ, զի ես ի սպառնալեաց ձերոց ոչինչ երկնչիմ, «և զոր ունիմ ասել՝ լուարուք. Եղովեալ լիցի Դէոսկորոս՝ «զոր դուք այսօր իրրեւ զսուրբ պատուեցիք։ Արդ, զոր ինչ «կամիք, արարէք, զի ես պատրաստ եմ կրել զամենայն յա«ժարութեամբ վասն այսր ճշմարտութեանն։» Յայն իրրեւ լուան նոքա՝ չեւան ի սրտմտութիւն բարկութեան, այլ ձեռն մխել ի նա ոչ խշխեցին, զի մի՛ գուցէ մեռցի, զոլով յայնպիսի յետին տկարութեան, և ինքեանք յառնելի գտուսորին մահու պարտական դատեցին։ Վասն որոյ առ զոխացումն սրտմտութեան իւրեանց՝ բիւր թշնամանս ձգեալ ի նա, թողին և գնացին։

Յետ այսորիկ տեսեալ Մխիթարայ, զի օր ըստ օրէ հիւծեալ մաշի ի հիւանդութենէ անտի, չունելով բնաւ ուտելիք օգնութիւն, հաստատեաց զմիտս դառնալ ի հայրենի քաղաք իւր, զի ի տուն ծնողաց իւրոց մարթացի դարման գտանել։ Այլ եւ զոր անտի՝ գժուարին էր, մի՝ ի պատճառս աղքատութեան իւրոյ, չունելով ինչ առ ի զհարկ երկրին վճարել, և առանց դրոյ վճարման հարկին՝ չտային թոյլ ուղիք երանել ի կղզւոյ անտի։ Երկրորդ՝ զի ըստ օրինաց երկրին՝ հարկ էր զմի ոք ի բնակչաց տեղւոյն ունել իւր երաշխաւոր, թէ չէ փախուստկան, կամ արտաքսմանեալ անդ յաքսորս։ Իսկ այսպիսի երաշխաւոր չէր մարթ նմա գտանել զոք ի Հայոց անտի բնակչաց։

Յայսպիսի հոգս վարանեալ Մխիթարայ, էառ զցուպ ի ձեռին, և ել ի հրապարակ անդր շրջել փոքր մի։ Իրրեւ տեսին զնա ապաստաւորք հարկահանին, կարան վասն հարկին և ածին առ տէր իւրեանց, ուր երեւեցան խնամք տեսուն։ Քանզի տեսեալ զնա այլազգի հարկահանին՝ այնչափ ծնգեալ և ծիւ-

բեալ՝ իմարդկային ընդարոյս զթոյն կարեկցեալ՝ Աւուղ ասէ, զի՞ եղեւ քեզ, զի այդչափ հիւծեալ նուաղեալ ես։ Իսկ նա պատասխան տուն, թէ զիարդ ի հանապարհորդել իւրում՝ եղեւ անդ հիւանդանալ և մնալ անօգնական յամենայն մարդկանէ, և թէ չունի ինչ ի վճարումն որքունի հարկին։ Յայնժամ հարկահանն զթացեալ ի նա՝ ասաց տանել զնա ի մի ի տներեկաց իւրոց և տալ նմա խնամի, զի ապրեսցի մի ոգի առնուցու և զօրացի։ Եւ առաքեալ կոչեաց զգլխաւորն ի Հայոց բնակչաց տեղւոյն, և առեալ ինքնանէ զսակ հարկին, ետ զգիր վճարման ի ձեռս Մխիթարայ, և արձակեաց զնա։

Յետ այնորիկ ետ Մխիթար գրել վասն իւր զիր ազերսանաց վասն ընդունելոյ զհրամանն եկանելոյ ի կղզւոյ անտի, զոր ինքնին մատոյց առ եպարքոս կղզւոյն։ Իսկ նա ակամա հարց փորձ առնել, թէ ուստի իցէ, և զինչ գործ նորա։ Եւ նորա յայտնեալ զհայրենիս իւր, պատմեաց և զանցս հանապարհորդութեան իւրոյ, թէ այժմ կամի զառնալ ի հայրենիս իւր, և թէ չէ փախստական, կամ տարագրեալ ուստեք։

Յայնժամ ասացաւ նմա թէպէտ և հաւատաւոր այնպէս իցեն իրքն, սակայն տակաւին հարկ է զմի որ ի բնակչացս ունել քեզ երաշխաւոր, և ապա ասցի քեզ զիր հրամանի եկանելոյ ասի։ Իսկ նա չունելով զոք անդ ծանօթ, և ոչ իսկ յոյս զառնելոյ զայնպիսի որ, որ զոյս բարութիւն կամիցի առնել նմա, կայր զարշարեալ յանհնարին վարանս տարակուսի, ի նախախնամութիւնն և ի թ ասասածային արդի մոռք ապաւինեալ։ Եւ ահա մի ոմն յարդէ յուսաց անծանօթ նմա, որ խնամօք տեսան անդ զասա, յառաջ մատուցեալ ասէ, թէ լինիմ երաշխաւոր վասն զորա, որպէս և վճարեցան իրքն, և տուաւ նմա հրամանագիրն։

Առեալ Մխիթարայ զգիրն՝ շրջաւ ի Տուզլայն, ուր գտեալ նաւ մի պատրաստական՝ եմուտ ի նա։ Եւ հասեալ ի Սկիւեկիա՝ էլ անդ ի ցամաք. իսկ անտի այնպէս հիւանդացին յաղի անկեալ հետի ի գեղջէ ի գեղ երթիկօքն առնելով, բազում նեղութեամբ զկարեւոր ոգեպահ պարէն ասոյ անտի մուրացարար գտանէր։ Եւ զճանապարհայն ի պատասխել մինչ ի կոշ-

կաց նորա ի հնութենէ, ընկէց իրաց և զմիւսն, քանզի անպիտան էր, և այնուհետեւ մերկ ոտիւք երթայր ընդ քարուտ ճանապարհն, ուստի զայն դժուարսկոխ ճանապարհ հետի վճարեաց մինչեւ ի Բերիա։

Ի հասանել Մխիթարայ ի Բերիա յայս երկրորդ անգամ ոչ գտաւ անդ հայր Անտոն, բայց այլ ոմանք ի նորին կարգէ կային անդ, առ որս առէալ երթայր։ Յարգոլէին և նոքա զՄխիթար գտանել ի հայրենիս իւր, զերեսս հօրն Անտոնի երկրորդելով նմա, կալ մնալ յոգւոյ իւրում յուսալիգոյն օգուտ բազմից. զուցէ վասն այսորիկ ասէին ոչ յաջողեցաքեզ անցանել յարեւմուտս։ Զայս բան բանս բանալ Մխիթարայ ի նոցանէ՝ և փութանակի ի Բերիոյ, և չոգաւ յԱնթէպ, ուր գտեալ զերեսս ուղեւորաց, որք երթային ի Սերաստիա։

Ոչ ասկաս վիշտ և յոյս ճանապարհէ կրեալ Մխիթարայ՝ հասանէ ի Սերաստիա ի քաղաք ծննդեան իւրոյ՝ յամին 1695։ Եւ այնուհետեւ ունելով նորա զպատշաճաւոր սպասաւորութիւն, և առողջարար կերակուրս, փորձեցան ի նմանէ հիւանդութիւնք։ Ի կատարածէ իրացս յայսոսիկ ամենայն իրաք, եթէ ոչ էին կամք աստուծոյ՝ յայնմ ժամանակի գնալ Մխիթարայ ի Հռոմ, վասն որոյ ընդ առաջ արկանէր նմա զամենայն զխոչ և զխութ՝ պէտսէս ցաւաք և ձախորդութեամբք և հալածանաքք, որովք սոխակաց զնա մնալ առ ժամն ի մէջ ազգայնոց իւրոց, և սկիզբն առնել այլով ճանապարհաւ բարեջաւոր գիտաւորութեան գործոյն՝ առաւել քան զոր խնդրէր, յոր կարգեալ էր զնա աստուած։

Երբեւ ամենայն իրաք ապաքինեալ առողջացաւ Մխիթար ասկաւագն ի դժուարակիր խօթութենանց՝ ոչ եւս յանձն առ մնալ ի տան ծնողաց իւրոց, այլ գնացեալ եկաց ի վանս աւրբ Նշանու։ Եւ անդ յամենայն ապաքինի քաջութիւնս առեալ զանձն, անխոնջ ջանիւ զինէր զինքն ի խոկմունս աստուածային խորհրդոց, և ի հոգեւորական հրահանգս անձին և այլոց որք երթային առ նա։

Յայնմ ձմերայնի եհաս ի վերայ Մխիթարայ հոգ սաստիկ,

մինչեւ արիւն թքանել երբեմն։ Իսկ մարանք վանացն, ընդ որս և բազումք յերեւելեաց քաղաքին ասիպէին զնա ընդունել զկարգ քահանայութեան։ Քանզի ցանկային վուքթով քահանայանալ նմա, և ապա զվարդապետականն ընկալեալ զդպրապան, մնալ ի քաղաքի անդ, և լինել նոցա քարոզիչ, ամենեքեանք բազմապատիկ հոգեւորական բարեաց առաստանելոյ ի քաղաքի անդ յընտիր և ի գերաշխարհիկ վարուց նորա, և ի շնորհազարդ ասուածաբանոյց բանից վարդապետութեան նորա։ Իսկ նա հրաժեշտ տայր, զդժնդակ ախտակրութիւն իւր պատճառելով, վանգամայն և գրարձրութիւն քահանայական կարգի, և զանարժանութիւն անձին առ այն գործ՝ զնէր նոցա առաջի։ Նոքա առ ժամն լռեցին, այլ ի հասանել առուց գարնանոյ, և ի փարատիլ ի նմանէ ախտն, գարձեալ սկսան ասիպել զնա, մինչեւ չկարացեալ այլ եւս դիմադարձ լինել, հաւսկ ուրեմն խոնարհեցաւ ի կամն նոցա։ Քան ասաց էր նա՝ յարժամ ձեռնադրեցաւ քահանայ, յամին 1696։ Եւ այնուհետեւ կոչեցաւ Արեղայ, բան սովորութեան։

Յետ այնորիկ ասաւելեալ Մխիթարայ Արեղայի ի Ղանս առաքելական վասակոյ, եռայր հոգով, և փութայր ողջամիտ վարդապետութեամբ բուսուցանել զմերձաւորս իւր, և ձգել զնոսա ի փարս ճշմարիտ ասուածպաշտութեան, և բնաբարձ առնել օգնականութեամբ Տեառն զոգի հակառակորդութեան զօրացեալ առ ոգէսս ազգիս մերոյ։ Արդ՝ մինչ նա յայս ասուածահաճոյ գործ ոգւով շարժեր էր, սրկ Աստուած ի սիրտ նորա դիտարհուրդ կարեւոր, և սկսաւ մտախոհ լինել ի միտս իւր, և ասել. «Եւ անձամբ և «եթէ զայսպիսի գործ մեծ ի գլուխս առնել չեմ բաւական, «այլ պիտոյ է զամենս յայնցանէ, զորս շնորհեալ է ինձ Աստուած՝ ի ձեռն քարոզութեան իմոյ՝ առնուլ ընդ իս, և «նոքաք հանդերձ զրանն ճշմարտութեան ծառայել։» Զայս զմտաւ ածեալ՝ սկսաւ այնուհետեւ փութոյ պնդութեամբ խօսել և խնդրմամբ առնել զճշմարտութիւնն, որոց երթային առ նա ի վանս անդր սուրբ Նշանու։ Եւ զրազումս օրինա-

կաւ նախանձելի վարուց իւրոց ձգէր ի մտադիր ունկնդրութիւն բանիցն, մինչեւ ամանք յոլովցան ի նա՝ զհետ երթալ վարուց նորա, որպէս նորահաս պատանի մի Յովհաննէս անուն, և այլ ոմն Յովսէփ կոչեցեալ։

Զայնու ժամանակաւ լու եղեւ Մխիթարայ հանքաւ խնամութեան և զոմիցի վարուց Խաչատրոյ վարդապետի Կորնեցւոյ, որ բազմամեայ աշակերտութեամբ ուսեալ և վարժեալ էր ի գպրատան Հռոմայ, և յաթոռոյ անտի էր առաքեալ ի քարոզութիւն, որ և ի ժամանակին յայնմիկ ի Կոստանդնուպօլիս լինէր։ Խորհեցաւ երթալ դառնել զնա անդ, և նորին օժանդակութեամբ՝ զխորհուրդն զոր արկ Աստուած ի սիրտ նորա, հանելոյ բազում քարոզիչս մտամտութս, քաջալերանս և հոգեշահս ի լուսաւորութիւն ազգիս ի գործ դնել։

Այսպէս խորհեցաւ նա. քանզի խոնարհ մտաց է յամենայնի ի շարոյ ունել զանձն, որով ի բերել յաժարութեան ամ գործս մեծամեծս, և մանաւանդ յաստուածայինս, ոչ ի բաւականութիւն անձին վաստակոյ, անընտրողաբար ձեռնամուխ լինել, այլ քան զինքն կարողագոյն և պատեհագոյն զայլս ունելով՝ զնոցայն ձեռնառուութիւն խնդրել։ Այս խոնարհ մտածութիւն զանձնէ, ոչ ատ եւեթ, այլ յամենայն գործս վարչութեան նորա բացուցեալ ընդ բոլանդակ կեանս նորա, քանզի հաստատեալ սերտեալ էր հոգի նորա ի կենագործող խոնարհութեան անգատին ի մանկութենէ իւրմէ։

Հասեալ Մխիթարայ ի Կոստանդնուպօլիս յամին 1697, եգիտ անդ զԽաչատուր վարդապետն, առ որ ասէպ երթեալ արար ընդ նմա սէր և բարեկամութիւն մեծ։ Այսպէս յուսոյ մեամբ գտեալ ժամ բարեպատեհ, յայտնեաց նմա զխորհուրդ զոպատեան իւրոյ. զոր իբրեւ ի միտս էառ նա, և ծանեաւ զկամս նորա, բացէ ի բաց հրաժարեցաւ վիսարունիլ ընդ նմա յայն գործ։ Եւ թէպէտ բազմաք յորդորս լինէր նմա Մխիթար, զամենայն հանգամանս իրացն ըստ կարգի առաջի դնելով նմա, ընդ նմին զդուխ առաջնորդութեան գործոյն զնա կոչ-

գելով, իսկ ես ասէր՝ գործակից և սպասաւոր եղէց ընդ ձեռամբ քով, փոյթ կալեալ յուսով խնամոց տեառն՝ զամենայն պիտառոցեալ պէտս տնտեսարար հոգալ և խնամել։ Սակայն և այնպէս նա ոչ ինչ խախք զինչաւ ի բանս նորա, ընդ այլոց ընդդիմութեանց, և զչքաւորութիւնն առաւելապէս պատճառելով։ Զի ասէր, առ ձեռնարկելոյ յայդ գործ, կարեւոր է այժմէն իսկ ունել առ ձեռն պատրաստ իբր հարիւր քսակ դահեկան, ապա թէ ոչ՝ չէ՛ և չէ՛ մարթ գործոյդ ի գլուխ ելանել։ Այլ այս դիմադրութիւն նորա տնօրինեալ լինէր ի տեսչութենէ վերնոյն, որ ոչ զնա, այլ զՄխիթար առհմանեալ էր պաշտօնեայ և գործադիր ի կատարումն դրժուորածեան գործոյս առ ի յիւրմէ անապատ բարերարութենէ պատրաստելոյ ազգիս մերոյ մարդասիրապէս։

Եկաց Մխիթար ի Կոստանդնուպոլիս ամիս հինգ, և բան ասուածապարգեւ եռանդեան, որով վառեալ էր օգնել վերձաւորաց, ձգելով զնոսա ի սէր Աստուծոյ ընդ ամենայն տեղիս ուր և զէպ լինէր՝ խօսէր անխափան զբանն Աստուծոյ։ Յորմէ յոգունք լուսաւորեալք՝ ի բաց գնէին զհակառակութիւն, կապեալք՝ միսրանակոն սիրով ընդ Շռոմկլայեան դաւանօղս, շատք ևս զլոյծ զաշխարհական կեանս փոխէին ի հոգեւոր և ի պարկեշտագոյնս։ Եւ բազումք առ լիագոյն շահելոյ ի հոգերուղիս բանից վարդապետութեան նորա, ասէր հրաւիրէին զնա ի տուն խրատոց։

Երբեմն այսպէս ասրանցաւ գոմերի հանքաւ նորա առ քահանայս և առ գլխաւորս ազգին, հրաւիրեցին զնա յաբոզել յեկեղեցի սրբոյ Կարապետին։ Եւ նորա փոնս կալեալ ի խուցս նորին եկեղեցւոյ, զամենայն օր յաղոթս անդ ի բուրխաւանքեանց ժողովրդեան։ Սքանչանային ամենեքեան ընդ ասասուածխնամս բանս նորա, որ վայելչապէս կարգաւորեալ, և վկայութեամբ ասասուածաշունչ գրոց, և հարց սրբոց հաստատեալ, իբր ազգիւր անապատ բղխէր ի բերանոյ նորա ի զովացումն պատրեալ հոգւոց։ Սաստկագոյր զզարմանս նոցա, նորին թերակատար հասակ, զի դեռ ևս քառն և մի ամաց էր նա յայնժամ։ Եւ ևս՝ զի նա զգաւազանապատուզ ոչ

առնոյր ։ որ նոր ինն թուէր յաչս ժողովրդեան ։ Վասն որոյ ոչ միայն յեկեղեցին , այլ և ի խուց նորա ընթանային բազումք , որոց առաւելապէս առեալ էր զճաշակ լուսաւոր վարդապետութեան նորա , յորոց մի էր և երիտասարդ ոմն Յոհան անուն , որ յետոյ Հայր Մանուէլ կոչեցաւ ։ Սա շարժեալ ի հոգեկեցոյց բանից Մխիթարայ՝ եթող զիսանցեալն իւր հարանցու , միանգամայն և յամենայնէ հրաժարեալ՝ ետ զանձն յաշակերտութիւն Մխիթարայ , և եղեւ երկրորդ յաշակերտս նորա ։

Յետ այսորիկ տեսեալ Մխիթարայ , զի ի հնգամեայ աւուրս , յորս բազում անգամ խօսեցաւ ընդ Խաչատուր վարդապետին չեղեւ զամենեցուցանել զնա , շրջեցաց զմիտս իւր զառնալ յարեւելս , և երթալ ի կողմանս Կարնոյ յՄխիթեայց գուսան , որ միրձ է ի սահմանս Վրաց աշխարհի , անդ իբր ի պատեհագոյն տեղւոջ , գործակցութեամբ քահանայի մերոյ իւրումն բարեկամի , ժողովել աշակերտս , և ուսուցանել ի պէտս ազգաքարոզութեան ։ Եւ առեալ ողջոյն հրաժարական բարեկամաց , և յանձն արարեալ զանձն հանդերձ իւրայնոցքն ի խնամս ազգաքարոզութեան Փրկչին և մեր նորա ամենօրհնեալ Կուսին , եմուտ ինքեան մի որ երթայր ի Տրապիզան , հանդերձ երկու աշակերտաւքն , յամին 1697 ։

Այլ իբրեւ մեկնեցան ի նաւահանգստէ անտի վարանեալ իբր ութ հարիւր , ահա շարժումն մեծ յարեաւ ի ծովու , մինչեւ ի բռնութենէ հողմոց և ի բազխմանէ ամենի ալեաց լինել նաւուն ի վտանգի , միանգամայն ժանտախտ մահաբեր անկեալ ի մէջ նաւորդաց , զբազումս ի նոցանէ կոտորէր ։ Վասն որոյ և այն ինչ եղեւ նոցա խնամաք տեսան անկանիլ ի նաւահանգիստն Արակլեայ , ել Մխիթար իւրովքն հանդերձ ի նաւէ անտի , և յետ աւուրց գտեալ նաւակ մի՝ եմուտ ի նա , զմտաւ ածեալ՝ թէ այնպիսի նաւակք առ ափամբք քերելով , ի յառնել խռովութեան ծովու , զիւրին է նոցա անապարել զիմել յամին կոյս ։ Բայց իբրեւ տակաւին մի հեռացան ի ցամաքէն , ահա յեզակարծիւ տիրեալ օդոց ,

պատեցան երկինք թղթայորդ որոտալից ամպովք, և հողմն զայրացեալ, և յախշտակեալ զնաւակն՝ վարէր բռնութեամբ, մինչեւ չզօրել այնուհետեւ նաւատեաց ուղղել զնա։ Ընդ նմին և խաւար գիշերոյ ի վերայ հասեալ՝ ոչ կարէին գիտել թէ յո՞ր կողմն գնային, և ահեղ փայլատակունք յանախէին, յորմէ նաւավարք և նաւորդք առհասարակ յերկիւղ մահու ընթանալք՝ ի վարանս անհնարին տագնապէին։ Մի միայն քաջայոյս արիասիրտն Մխիթար ոչինչ լքումն կամ վհատութիւն կրէր, այլ զմիտն և զզգայութիւնս իւր միշտ կազմ և անխռով ունելով, քաջալերէր զիւրսն, ղկեանս և զհոգիս հաճոյից կամաց Աստուծոյ նուիրել, և ի բարի բար խնամն նորա և ի հզօր օգնականութիւն Տիրամօրն ապաւինեալ բարեյոյս լինել։

Այն ինչ յայսպիսի վտանգս տառապէին նաւավարք, ահա ի խնամոց մարգասիրին Աստուծոյ մեղմացեալ թուլանայր բռնութիւն հողմոյն, և միանգամայն ի ցամաքէն գլոյս ցուցանէին ի վեր խտութիւն նոցա ամբարձեալ։ Զայն տեսեալ նաւավարաց՝ ոգի առին, և նոյնժամայն առխեթեալ յաւիրն կոյս զնաւակն՝ եկին ամենեքեան ողջամբ և անվնաս ի ցամաք. և բերանալի օրհնութեամբ գոհութիւն մատուցին Տեառն Աստուծոյ, որ փրկեաց զնոսա ի վտանգէ մահու։ Զառաջնում այսր ալէկոծութեան՝ գեղեցիկ նկարագրեաց նա ինքն Մխիթար յերգն, որոյ սկիզբն է, «Վիրաւորեցայ «մեղաք։»

Կացեալ Մխիթարայ ընդ երկուց աշակերտաց անդ զաւուրս երկուս, արդելեալք յերեսաց հողմոյն, ապա ի խաղաղել ծովուն՝ նաւեցին անտի եկին ի Մինոպ, ուր չգտեալ նաւ պատրաստական գնալ ի Տրապիզոն, այն զի՝ և ապառնալիք ծովուն դեռ եւս կային ի վերայ, փոխեաց զմիտս իւր երթալոյ ի Կարին ընդ Պոնտոս, նմին իրի գնացեալ յԱմասիա, անտի ճանապարհ արար ընդ ցամաք ի Մարզուան, ուր եհաս յամին 1698։

Լուեալ Մարզուանցւոց զառաջին քարոզ նորա ախորժական ունկնդրութեամբ, վաւեցան ի փափաք հոգեյորդոր

բանից նորա. վասն որոյ քահանայք և ժողովուրդք միաբան բռնադատեցին զնա մնալ անդ առ ժամանակ մի։ Իսկ նա զիջեալ յաղաչանս նոցա՝ եկաց անդր զձմեռն զայն ողջոյն։ Անտի չոքաւ յԱմասիա քաղաքել, և յերկուց քաղաքացս պրպուռն ած յուղղութիւն վարուց, և ի հաւանութիւն հշմարիտ ուսմանց, զօրաւոր բանիւք և օրինակաւ անսոգիւտ վարուց իւրոց։ Այնչ ընդհատ ի Մարդուանցւոց և տոքա կապեցան յանձուկ սէր Մխիթարայ, և կամէին անմեկնելի ունել զնա առ իւրեանս։ Այլ նա ի հասանել գարնայնոյ՝ որպէս և լոյէ՝ թէպէտ և բազում զժուարութեամբ հրաժարեալ՝ չոքաւ յԵդեսիա, և անտի իւրովքն հանդերձ գնաց ի Կարին։

Եւ անդ ի Կարին մինչդեռ փութայր Մխիթար անցանել յԱխթեաց գաւառ, առ դէմ եդեալ քահանայն, լուաւ զնմա նէ՝ թէ խառարեալ է նա յառաջին բարեկրօն գնացից, յայն տակս ոչ եւս կամեցաւ երթալ առ նա, այլ լուեալ զողջմբութիւն և զբարեզգեաց վարս առաջնորդի Կարմիր վանաց, ընտրեաց երթալ առ նա, զի թերեւս նորին ձեռնտուութեամբ մարթասցի ի գործ դնել առ ի վերուստ ազդեալ խորհուրդ իւր։ Եւ զի մի՛ այլ ընդ այլոց կարծեաց պատճառս տայցէ առաջնորդին երկու աշակերտաք գնալով անդր, յառաջագոյն խրատեալ զՅովհան Պօղոսեցին՝ արձակեաց զնա ի վանս Մուսուրկու երթալ, և կալ անդ իբրեւ զմի ի միաբանից անտի, մինչեւ կոչեացէ զնա վերստին։ Իսկ ինքն առեալ զՅովհաննէս Սեբաստացին՝ չոքաւ ի Կարմիր վանս, և առաջնորդ նորա, որ էր յայնժամ եպիսկոպոս ոմն Մարգար անուն, որ և ունէր ընդ իւր և զերիս արենջայս, և հնգետասան մանկունս յուսումն դպրութեան ի պէտս քահանայութեան, ընկալաւ զՄխիթար բազում մարդասիրութեամբ։ Տեսեալ ապա զիմաստութիւն և զառաքինութիւն վարս նորա, նմա յանձն արար զդատաւորութիւն մանկանց։ Այր անդ Մխիթար իբրեւ զմի ի միաբանից անտի, և յորդորամիտ փութով կատարէր անթերի զպաշտօն դատաւորութեան, միանգամայն և ի գրաւորական մատաւարժութիւնս անձանձրոյթ վատակէր։

Հանդերձ այսու ամենայնիւ, ուսուցանէր անխափան և խրատն աշակերտի, և արեզայից վանացն զգիրս մեծին Ալպերտի։ Ոնէր եւս առաջի նոցա զցուցակ առաուածաշունչ գրոց, և մեկնէր զայն, համեմատեալ զԽորհրդական խմառան ընդ նկարագրականին, որով և խելամուտ արար զարեզայս ամենայն ճշմարտութեանց, յորոց վերայ զոյր հակառակութիւն յազգի մերում։ Զի այս էր նորա կէտ յառաջադիր յամենայն վառակս իւր. և որք անսային նմա, մարզէր զնոսա ի վարս առաքինութեան, ուսուցանելով նոցա զհանգամանս հոգեւոր առաուածապաշտ կենաց։

Դէպ եղեւ երբեմն ի խօսել Մխիթարայ ընդ արեզայս ի վերայ մասին իրիք հաւատոյ, առաջի Գրիգոր անուն եպիսկոպոսի մոյ, որ էր ինքեւր ի վանան, այր հակառակասէր, և ի զրոց հրահանգութենէ անբաժ, ընդդէմ դարձաւ նա ասացելոյն Մխիթարայ, յորմէ բորբոքեցաւ վիճաբանութիւն ի մէջ երկոցուն։ Ապա տեսեալ Մխիթարայ, զի նա ոչինչ անսայր ճշմարիտ պատճառաց իւրոց, զոր թերեւս և ոչ իսկ իմանայր նա, ձեռն էարկ ի վկայութիւնս զրոց ազգիս Հայոց, որով իսպառ ընկերանեաց զնա։ Իսկ նա առաջի արեզայից խայտառակեալ՝ առ զայրոյթ սրտին ձգեալ զձեռն յերեսս՝ եղեգամբք մատցի ցեռեաց զծնօտս նորա ցհատումն արեան։ Սակայն Մխիթար անխռով մտաք տարեալ այսպիսի գործոց նորա, ոչ միայն չյանդիմանեաց զնա, այլ և ոչ նշան ինչ բնաւ խռժռութեան երեւեցոյց։

Իսկ եպիսկոպոսն՝ որ չկամէր յաղթիլ ի պատճառացն՝ յաղթեցաւ ի ներքոյամիտ համբերութենէն Մխիթարայ, և հարեալ ի խղճէ մտաց, և տրտնջացեալ՝ աշակերտեցաւ ի կողմն ճշմարտութեան, եղեալ բարեկամ վարանութեան մինչեւ ցվախճան։ Որոյ զկնի ժամանակաց եկեալ յերեւմուտս, ի նշանակ իւրոյ երախտագիտութեանն՝ առաքեաց պարգեւս վանայս զպատկեր մեծադիր արքոյ Լուսաւորչին մերոյ, զիւրոյ երեսաց զտիպ նմանութեան ձեւացեալ ի գէմս Լուսաւորչին, որ մինչեւ ցայսօր կայ յեկեղեցւոջ արքոյն Ղազարու։

Յետ այնորիկ տեսեալ ամենեցուն զընտիր զառաքինազարդ վարս նորա, և զբազում հմտութիւն զրոց, յորոց լինէին նմա ընդունիլ զդաւազան վարդապետական։ Ինքն թէպէտ լինէր նմա և Մարգար եպիսկոպոսն, յօժարամիտ ցուցանելով զանձն յայն պատիւ հանել զնա ըստ իւրոց արժանեաց։ Յոյր սակս և նա ստիպեալ ինոցայն յորդորանաց՝ յանձն էառ, ոչ առ մնոյն պատուախրութեան, յորմէ հեռի էր հոգի նորա, այլ՝ առ ի բազմաշատակ մշակութեամբ սերմանելոյ զբանն աստուծոյ ի սիրտս հաւատացելոց, յոր ի մանկութենէ անձնատուր էր քրանչելի աշխատութեամբ։ Այլ ընկալաւ նա զդաւազան վարդապետութեան յամին 1699, ի քսան և երեք ամի կենաց իւրոց։ Եւ յայնմ հետէ Մարգար եպիսկոպոսն սկսաւ առաքել զնա ի քարոզութիւն յամենայն տեղիս թեմի իւրոյ, զոր պարտեալ նորա յոգնաբերելն հոգեւորական արդասեաց՝ դառնայր անդրէն ի վանս։ Վասն էր ընդ իւր գործակից զՅովհաննէս աշակերտ իւր, զոր ընդ այն ժամանակս եւ Մարգար եպիսկոպոսին ձեռնադրել քահանայ։

Յայնժամ Մխիթար վարդապետն հատեալ ի նմանէ, որպէս յառաջագոյն ի Խաչատուր վարդապետէ, զյոյս իւր խոստս, և միայն յամենազօր օգնականութիւն աստուածային նոխխնամութեան, և յամենօրհնեալ աստուածամօրն պաշտպանութիւն ապաւինեալ՝ հաստատուց զմիտս իւր՝ անդրէն ի Կոստանդնուպօլիս դարձ առնել իւրովքն հանդերձ, և անդ ժողովեալ աշակերտս յանքոյթ կողման ուրեք յառանձին տան մեծի քաղաքին, տալ ի տպագրութիւն նպաստաւոր բա-

բերաբաց գիրս հոգեշահս, և զխորհուրդ իւր օգնականութեամբ Տեառն յառաջ վարել։ Կոչեաց ապա զՅոհան աշակերտս իւր ի Մոնտուրկու վանից, և առաքեաց զնա յառաջագոյն ի Կոստանդնուպոլիս։ Իսկ ի միջոց ամենայն մանկանց՝ որք կային յուսումն անդ ի Կարմիր վանս, զմի միոյն ընտրեաց յիւր աշակերտութիւն Եղեկիա անուն, որ յետոյ կոչեցաւ Հ. Գաբրիել։ Որպէս և զայլ ումն պատանի հոգեւոր, Ղազար անուն, որ ինքնայորդոր յարեցաւ ի նա։

Ելեալ ապա Մխիթարայ վարդապետի ի Կարմիր վանից՝ եկն ի Կարին, և անդ ի Լեւոն կալեալ ի սենեակս եկեղեցւոյն՝ քարոզէր զբանն Աստուծոյ զօր ամենայն ի լուր ժողովրդեան։ Որոց առեալ զճաշակ հոգեկեցոյց քարոզութեան նորա՝ անդադար խնդրուածովք աղաչէին զնա մնալ առ նոսա. և զի գիտէին՝ եթէ չիք և չիք հնար հաւանեցուցանել զնա յանձն առնուլ զառաջնորդութիւն քաղաքի իւրեանց, յանկային զէթ իբր լոկ քարոզիչ ցանգ առ իւրեանս ունել զնա։

Այլ իբրեւ այսմ եւս չեղեն գամագիւռ, ազաչէին զոնէ զձմեռն զայն մնալ առ նոսա, զոր և յանձն էառ ի լրումն փափաքանաց նոցա։ Ի վարդել իւրում անպատրաստակ էր նա, և ազատագէմ զճշմարտութիւն ուղղափառ հաւատոյ մատանցն առաջի դնէր, և զհակառակ մոլորութիւնսն յայտ յանդիման նշուակեալ կշտամբէր. և ի շնորհելոյ Տեառն՝ քահանայք և ժողովուրդք մտադիր ախորժանաք լսէին զքարոզս նորա։ Որով ոչամիտք ի նոյն ուղղադատան ուսմունս հաստատէին, և ի բարեպաշտութիւն յաւելուին, պարզամիտք՝ որք չունէին հակառակութիւն ինչ ի սրտի, անդիմադարձ անսային ճշմարտութեան. իսկ հակառակասէրք, ի հեզութիւն քաղցրութեան ամոքէին։

Յայսմ ամենայնի ոչ սակաւ զօրավիգն և սատար լինէր նմա տարբինավայլ, անսխտակիր և անսասանուած կեանքն նորա, որով իբրեւ զհրեշտակ յերկնից երեւեալ տեսանէին զնա. զի սիրտ նորա՝ որպէս յայլ ամենայն երկրաքարշ ցանկութեանց, նոյնպէս և յարծաթասիրութենէ հեռի էր

ամենեւին, մինչ եւ ոչ իսկ զսովորական գաւազանապտուղ անդամ առնուլ, եւ ոչ զայլ տուրս դրամոց բարեպաշտից, յորժամ ոչ էր ասիպեալ ի ծանր կարօտութենէ։ Փանդի բերէր ժողովուրդն ի սենեակ նորա զօրբատօրեայ կերակուր այնչափ առատութեամբ՝ մինչեւ բաւական լինել տասն աղքատս կերակրել ի յաւելուածոյն. զի չունէր սովորութիւն պահել ինչ վասն վաղուի, քանզի զոլով յաննիւթ նախախնամութիւնն աստուծոյ։

Այսպէսի գովելի համբաւ Մխիթարայ վարդապետի, եւ անձուկ սէր եւ մեծարանք ժողովրդեան առ նա՝ որքիսի թշնամի արձանացոյց ինքեան զառաջնորդ քաղաքին, որ էր այր հակառակաբար աղքատ ի գրոց հմտութենէ։ Սա զատճառս առեալ իւրումն տարապարտ յաչաղանաց՝ զյայտնաբարբառ քարոզութիւն Մխիթարայ զերկուց բնութեանց Քրիստոսի, եւ զգլխաւորութենէ հռոմէական դահին, որպէս ընդդէմ նորա, եւ խորհէր ի ձեռն դատաւորի հալածել զնա ի քաղաքէ անտի, այլ երկնչէր ի ժողովրդենէ, զի ամենեքին սրտի մտօք յարեալ էին ի նա։ Այսպա կամեցեալ ապառնալեօք ահացուցանել, յաւուր միում կոչեալ զնա զառաջեւ, ի բարկութեամբ ասէ ցնա. «Զիարդ իշխես դու այդչափ յան-
«դուգն համարձակութեամբ քարոզել զհաւատոց՝ հակառակ
«մերումս վարդապետութեան։ Մի՞ չգիտես, զի կամ ես
«ձեռամբ դատաւորին ի տանջանս և ի մահ մատնել զքեզ։»

Եւ պատասխանի Մխիթար աներկիւղարար՝ և ասէ.
«Ես պարտաւոր եմ յանձն առնուլ զամենայն վասն ճշմար-
«տութեան. արա՛ զոր ինչ հաճոյ է քեզ, ես յոչինչ իրաց
«երկնչիմ.»

Ընդ այս պատասխանի՝ ելս առաւել սրտմտեալ նորա, ասէ. «Եթէ ոչ առնուցուս յանձն զոր ունիմ առնել քեզ,
«միթէ կարող ի՞նչ իցես դու առնել ինչ ընդդէմ ինձ, կամ
«կալ հակառակ։» Զայս ասաց թերեւս փորձելով զնա, թէ գուցէ ի ձեռն ժողովրդեան, ապառնացի նեմա. այլ նա զի՞նչ։
«Գոհանամ ասէ զԱստուծոյ իմոյ, զի ոչ կարեմ չար ինչ
«առնել մեծութեանդ, և ոչ բնաւ ուրեք ի մարդկանէ. և այս

«Շնորհ մեծ է ինձ, զի մի կարասից առնել ուսիք շար, թէ-
«պէտ և կամիցիմ։»

Զայս իբրեւ լուաւ խառվասէրն, հատուաւ բան ի բերանոյ նորա. իսկ Մխիթար տուեալ նմա ողջոյն յարգութեամբ, եւ յերեսաց նորա։ Եւ ոչինչ թուլացաւ ի քարոզելոյ զճշմարտութիւնն՝ որպէս յառաջն ամենայն համարձակութեամբ մինչեւ ցօր եկից իւրոց ի քաղաքէ անտի, ուր եկաց զձմեռն զայն և զպարուն ողջոյն։ Եւ եղեւ ի հատանել ամարայնոյ՝ թէպէտ և աղաչէին զնա ժողովուրդք մնալ այլ եւս առ նոսա, քայց նա զառաւել օգուտ ընդհանուր ազգիս խորհելով՝ եկ անտի աշակերտաւքն հանդերձ, և եկն ի Տրապիզոն, և անտի մեռեալ ինաւ՝ ետաս ի Կոստանդնուպօլիս յամին 1700։

Անհաւասիկ որ ինչ բանք էին առանձինն զվարուց կենաց Մխիթարայ վարդապետի ցայս վայր ցուցեալ եղեւ։ Այսուհետեւ հանդերձեալ եմք առաջի առնել զանպարտելի ոգւոյ նորա զարիութիւն առ անվհէր յանձնառութիւն ամենայն դժուարութիւնս տաժանական վաստակոց ի հիմնարկութիւն և ի յառաջատութիւն միաբանութեան ի փառս Աստուծոյ և յօգուտ և ի պայծառութիւն ազգիս։ Յոր ըստ կանխատես տեսութեան վերին խնամոց նա միայն և ոչ այլ ոք ընդ նմա կարելեալ էր։ Յայն տակս ընդունայն եղեն նորայն բազմամիւռ ճանապարհորդութիւնք, և այնչափ յոգնութք, և խոնարհ աղաչանք այսմ և այնմ, լինել ձեռնտու և գլուխ և առաջնորդ գործոյն մեծի, որպէս ցայս վայր տեսաք։

ԱՐԻՈՒԹԻՆ ՈԳՒՈՑ ԵՒ ԱՐԴԻՆՔՍ ՎԱՍՏԱԿՈՑ ՄԽԻԹԱՐԱՑ ԱՓԱՅԻ

Յարժամ Մխիթար վարդապետն եհաս ի Կոստանդնուպոլիս երկրորդ անգամ, էր ամոց իրրեւ քսան և հնգից, ոչ եւս լոկ քահանայ որպէս յառաջնումն, այլ վարդապետ. վասն որոյ և ժողովուրդն՝ որոց յառաջագոյն առեալ էր զճաշակ վարդապետութեան նորա, ընկալան զնա բազում խնդութեամբ, իրրեւ զմի ի մեծաց հոգեհանճար վարդապետաց։ Իսկ նորա օթեւանս կալեալ ի բնակարանս եկեղեցւոյ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, ստէպ ստէպ քարոզէր ի նմին եկեղեցւոջ, ուր խառնելութեաց զիմէին յունկնդրութիւն քարոզութեան նորա։ Թէպէտ նա անաչառ խրատէր զամենեսին առհասարակ և յոյժ յանդիմանն կշտամբէր զմեղս և զանարգս, ոչ միայն ի մարդկային վարս, այլ և ի մասանս հաւատոյ, ասկայն և այնպէս սիրելի և յարգելի էր նա յաչս ամենեցուն իրրեւ զմի յառաքելական արանց։

Յաւուրսն յայնմիկ ազգ եղեւ Մխիթարոյ վարդապետի, թէ ազգաւոր խառնութեան յազգի ի մէջ ժողովրդեանն, և թէ խարհուրդ հաստատեալ նոցա ընդ երեսս՝ կամին ի վաղիւ անդր երանել յառեան Աստուածին և ամրատան լինել զմիութեանն ընդ հռովմէական եկեղեցւոյ, թէ ապատամբք են նոքա ի սէրութենէն։ Զմտաւ ածեալ Մխիթարայ զբազմապատիկ վնասս այնր խորհրդոյ, և վշտացեալ ի սրտի, ընդ առաւօտն էլ յառեան եկեղեցւոյ, և սկսեալ գքարոզն ի վերայ միութեանական սիրոյ և խաղաղութեան, ի նմին աւուրսդ բովանդակ՝ աստուածանական բանիւքն ցուցանելով զխաղաղութիւնն լինել կնիք քրիստոնէութեան, և ոչ զիսռութիւնն։ Անդ զոսան բազումք յայնցանէ, որք ի խորհրդին էին, բայց ոչ զինչսն ի հանդարտութիւն, այլ յարձակիլ եկեղեցոյն՝ խումբ կարգեալ ի գաւթի անդ՝ զիմէին զնալ առ զառաւորն։

Զայն լուեալ Մխիթարայ՝ սճապարեալ էառ ի սեղանոյ անտի զխաչն սէրունական, և ընթացեալ զկնի ժողովոյն՝ ձայն եւ ասէ. «Զինչ կամիք առնել Եղբարք. եթէ զվիճ-«բանեսան ընդ Հռովմայ եկեղեցւոյն մատնել խորհիք, «մատնեցէք ապա և զիս, զի և ես ի նոցանէ եմ, զնոցայն «խորհիմ և ուսուցանեմ։» Իսկ նոքա պատասխանի արա-բեալ ասեն. «Մեք ընդ քեզ ոչինչ ունիմք, այլ ընդ անարգօղս «մեր, որք զքահանայս մեր կոչեն խոխոմս, և բիւր թշնա-«մանաք ընեն զմեզ, զի՞ կայ քո ընդ նոսա։»

«Պատասխանի ետ Մխիթար. «Խորհուրդ ձեր ոչ առ «անարգօղսն վասն ձդի, այլ առ ամենեսին առհասարակ, «յորոց ոչ բնաւ մեկնել կամիմ, և զոր ինչ նոցա կամիք «առնել, յօժար եմ ես ինքն կրել յաստաղ քան զնոսա։ «Ահաւասիկ խաչն սէրունական ի ձեռին խնամ, այսու «երթամ յանդիման զատաւորին, և անդ խոստովանիմ «զամենայն ճշմարտութիւն, ոչինչ երկուցեալ ի տանջանաց «և ի մահուանէ։ Ապա եթէ խնայել յիս կամիցիք, բաւարուք «զոր ասեմս. Մի՛ վասն այսոքիկ իրաց յատեան քաղաքա-«կան անկանիք, այլ առ Պատրիարքն, հոգեւոր առաջնորդ «ազգիս դիմեցէ՛ք. նա քննեալ զյանցաւորսն և զանպարտսն՝ «զատ արասցէ, և զատաստանի նորա անասցեալ՝ խաղա-«զութիւն արարէ՛ք ընդ միմեանս։»

Այս բարեխոսանձ և աւետարանական արիութիւն Մխի-թարայ, միանգամայն և քաջանուն ընդունելութիւն նորա յաչս ժողովրդեանն՝ խաղաղացոյց զիսուսիսաքն, և ըստ խրա-տու նորա առ Պատրիարքն հանին զքանն, որոյ իրաւունս արարեալ ի մէջ նոցա՝ էարկ զհաշտութիւն։

Յետ այսորիկ տեսեալ Մխիթարայ վարդապետի, զի խնա-մաք Տեառն բազմանան անձինք հոգեւոր, ինքնանուէր մա-տուցեալք զհետ երթալ նորայն կենաց և վարուց, ժողովեաց զնոսա առ ինքն, և յայտնեաց զխորհուրդ իւր, որ յաղագս միաբան ընկերութեան, պատուիրեալ՝ մի ոմանք յոստրաց յայտնել բնաւ։ Եւ զի մի բազմութիւն երեւեցցի առ նոսա ի քաղաքի անդ, զամենս որոց ընկալեալ էր զդաւանսն վար-

գապետութեան, որպէս զՀ. Յովհաննէս վարդապետ Սեբաստացի, զՀ. Եղիա վարդապետ Կոստանդնուպօլսեցի, և զՀայր Գէորգ վարդապետ Անթափցի, առաքեաց յարեւելս յայլեւայլ գաւառս ի քարոզութիւն։ Իսկ զայլս՝ որք չէին քահանայ, կարգեաց բնակիլ իւրաքանչիւր՝ ի տունս ծնողաց իւրեանց, պատուիրելով ասէր զալ առ ինքն ի սենեակս եկեղեցւոյն, զի տակաւին անդ էր բնակութիւն նորա, պարապեալ ի քարոզութիւն հոգեւոր արդասեաց ժողովրդեան։ Որպէս և վարդապետք ի նմանէ առաքեալք՝ ուր և հասանէին արդիւնաբար գործէին ի վարս ճշմարիտ ասատուածպաշտութեան։

Ինքին ամի ձեռն էարկ ի տպագրութիւն գրոց։ Զառաջինն եւ տպագրել զգիրան Թովմայի Գեմրացւոյ, ի կրթութիւն հոգեւոր վարուց աշակերտաց իւրոց։ Այս զգիրս մատակարարեան աղօթից։

Երրեւ կատարեաց զտպագրութիւն գրոցս, կամեցեալ յանքոյթ ինչ տեղի հաւաքել զիւրան ի ներքոյ հնազանդութեան մեծաւորի, և կրօնաւորական կարգօք մարզել զնոսա ի վարս ասատուածպաշտութեան, և ի կարեւոր ուսմունս առաքելական պաշտաման, զիմեաց նախ՝ օրտաւուչ պղատանօք առ Աստուած, հայցելով միջնորդութեամբ ամենօրհնեալ տիրամօրն զյաջողութիւն խորհրդոյ նորա ի փառս ասատուածութեան իւրոյ։ Եւ ապա գտեալ տուն մի մեծ ի Ռերա, բաղմասենեակ՝ նմանեալ մենաստանի, կալաւ զայն ի վարձու, յամին 1701, յամսեանն ապրիլի։ Ուր պատրաստեալ զգործս գրատպարանութեան և զայլ կարեւոր կահս, անդ ժողովեաց զմիաբանեսն ընդ իւր, ուսուցանել զնոսա և կրթել։ Եւ ինքն էր ընդ նոսա հանապազ ի տան անդ, միայն ի կիւրակէս երթեալ քարոզէր։

Ամենեքին կային անդ ընդ Մխիթարայ զտիւն ողջոյն, միտ եդեալ յուսումն գրոց, միանգամայն և զգործս գրատպարանութեան ունելով զառաջեաւ, և ի գալ ուրուք յօտարաց՝ թողեալ զուսումն՝ սկսանէին ծալել զթուղթս, և պատրաստել ի կազմութիւն, մինչեւ մեկնէր անտի այրն, և ապա

անդրէն զդիրս ուսմանն առնուին ի ձեռս։ Զի այս էր նոցա տիրապէս զօրն մինչեւ ցերեկոյ. իսկ ընդ երեկս արձակէր երթալ ի տուն իւրեանց։ Անպատում էր նոցայն ուրախութիւն այսպիսի ըղձալի միաբանական բնակութեամբ իրրեւ ի մինուոյն տանի, ընդ հովանեաւ ամենազգաստ հոգեշնչեալ առաջնորդի, պարապել անդրադարձ ի հրահանգս հոգեւոր և սաստուածահաճոյ կենաց և ի կարեւոր ուսմունս գիտութեանց։ Բայց այս ուրախարար երջանկութիւն նոցա ոչ յերկարեաց, քանզի ի թոյլ տալոյ անքննին խորհրդոց վերին տեսչութեան, ապրելով բարեացառեաց բանարկուին, լուցաւ հրդեհ դժնդակ ազգային խռովութեանց։

Եփրեմ եպիսկոպոս առաջնորդ Ադրիանուպօլսոյ, այր հաւատակաւոր, վարեալ ի յոգւոյ դահապիրութեան՝ հետամուտ էր յաւիշտակել զոմն ոստ պատրիարքութեան Կոստանդնուպօլսոյ։ Վասն որոյ հաճեալ զգենոլեան Հոգարարացւոց ի սատար իւրոց խորհրդոյ՝ ընկալաւ ընդ ձեռն նորա արքունի հրովարտակ ընդհանուր ընդդէմ ամենայն միաբանելոց ընդ Լատին, իրրեւ ապստամբաց յՕսմանեան տէրութենէն։ Զայս խորհեցաւ խորամանկ մոգք, որպէս զի և զՄելքիսէթ պատրիարքն ի դուռս ամբաստանելոց խառնեալ՝ ընկեցէ յաթոռոյ, և ինքն կալցի զտեղի նորա։ Զայս հանրական հրովարտակ ընկալեալ նորա՝ վազվազակի բազմութեամբ խառնաղանձ ամբոխից եկեալ յատեան Եպարքոսին՝ ընկալաւ ի նմանէ զայլ մասնաւոր հրովարտակ վասն երից քահանայից Ադրիանուպօլսոյ, և վասն Մելքիսէթ պատրիարքին, որպէս և վասն չորից վարդապետաց, յորոց մի էր և Մխիթար վարդապետ։ Զքահանայս նոյնհետայն ի ձեռս սպասաւորաց առնէր մատնեալ՝ առաքեաց կապանօք ի Կոստանդնուպօլիս, դնել զնոսա ի ծառայութիւն թիւոյ. ապա զՄելքիսէթ պատրիարքն, որ ի նմին ժամանակի անդ Ադրիանուպօլիս էր, ընկեցեալ յաթոռոյ, և ինքն կալցի զտեղի նորա։ Զայս հանրական հրովարտակ ընկալեալ նորա՝ վազվազակի բազմութեամբ խառնաղանձ ամբոխից եկեալ յատեան Եպարքոսին՝ ընկալաւ ի նմանէ զայլ մասնաւոր հրովարտակ վասն երից քահանայից Ադրիանուպօլսոյ, և վասն Մելքիսէթ պատրիարքին, որպէս և վասն չորից վարդապետաց, յորոց մի էր և Մխիթար վարդապետ։ Զքահանայս նոյնհետայն ի ձեռս սպասաւորաց առնէր մատնեալ՝ առաքեաց կապանօք ի Կոստանդնուպօլիս, դնել զնոսա ի ծառայութիւն թիւոյ. ապա զՄելքիսէթ պատրիարքն, որ ի նմին ժամանակի անդ Ադրիանուպօլիս էր, ընկեցեալ յաթոռոյ, և ինքն կալցի զտեղի նորա։ Բայց զնոյն առնել և չորից վարդապետաց ոչ յաջողեցաւ նմա. քանզի նոքա լինելով յայնժամ ի Կոստանդնուպօլիս, մինչչեւ էր հասեալ անդր

հրդեհն Եփրեմայ՝ վաղագոյն առեալ զլուր հրովարտակին աճապարեալ թաքեան։

Իսկ Մխիթար վարդապետն իբրեւ առուգութեամբ Կրաշեկ եղեւ անցեալն, և ապառնալեացն որք ի վերոյ կային, հրաման եառ վաղվաղակի իւրոցն ժողովել զկարասխա տան, և գնել ի պահեստ առ դրայիս, և զդուռն տան փակեալ՝ գնալ յիւրաքանչիւր տեղիս իւրեանց։ Իսկ ինքն ի Հալաթիա՝ չոգաւ ի վանս Յիսուսեանց. այլ նոցա երկուցեալ՝ չառին զանձն տալ նմա տեղի ի վանս իւրեանց, մնաւանդ զի՝ ասէին, առ մեզ կալով՝ չեռ անեկիւան ի հակառակորդաց. զի կարեն նոքա բռնի փոխել առ և անել զքեզ։ Այս խորհուրդ եառն նմա փութով ապրեցուցանել զանձն ի Բերա ի վանս Քարուչինաց, ընդ հովանաւորութեամբ Գաղղիացւոց դեսպանին, որ ոչ որ կարէ բռնի մտանել։ Ընդ այս խորհուրդ հաւանեալ նորա, թէպէտ և ոչ էր անկասկած յանկանելոյ ի ձեռս թշնամեաց՝ սակայն ի Տէր ապաւինեալ՝ ուղղեցաւ ընդ այն։

Այսր երեւեցան ի վերոյ նորա աքանչելի խնամք աստուածային, քանզի իբրեւ եկ անտի ի ճանապարհ, ահա ի նմին պահու հասին ի թիկանց նորա ապաստարք դատաւորին Հալաթիոյ, հայազգեաց ծպտեալք, ունելով ընդ ինքեանս զոմն ի Հայոց առաջնորդ մատնող, և երթային զկնի նորա փոքր ինչ բացագոյն ինեմեն։ Բայց կալաւ Աստուած զաչս մատնչին առ ի չճանաչել զնա, թէպէտ նա զիւր սովորական հանդերձս ունէր զգեցեալ։ Եւ այսպէս գնացեալ եհաս Մխիթար յապարանս դեսպանին Գաղղիացւոյ։ Իսկ նորա յառաջեալ՝ վերեցան ի տուն նորա. և չգտեալ անդ զնա, և ոչ զայլ որ, գարձան ունայն։ Զայս ամենայն մի սմա ի բարեկամաց Մխիթարայ՝ որ ի բացուստ զկնի ըմբռնողաց երթայր, եկեալ ապա պատմեաց նմա և այլոց բազմաց։

Եւ մինչդեռ կայր նա անդ ի վանս Մխիթար վարդապետ թէպէտ խոժոռեալ էր ի քարոզելոյ հրապարակաւ յեկեղեցեաչ, այլ սնեալ նորա եղեւ իբրեւ վարդապետարան. զի բազումք ընթանային անդր, և բռնալ զհոգեկցելոյ բանս

խրատուց նորա՝ դառնային անտի միթարեալ և զուարթացեալ հոգւով, և ամենք եւս ցանկային աշակերտիլ նմա։ Իսկ նա ընդ որս հաճէր, պատուէր տայր աղօթս առնել առ Տէր, պարգեւել նմա տեղի յարմար առ ի ժողովել զնոսա անդ։ Իսկ զօրըստօրեայ կերակուր նորա՝ ամենք ի բարեկամացն անխափան առաքէին նմա, միանգամայն և տուրք ողորմութեանց միրթ ընդ միրթ հասանէին ի ձեռս նորա։

Լուեալ ապա Մխիթարայ, եթէ հրդեհ խառնութեանցն օր քան զօր սիւռ ճարակի ընդ ամենայն գաւառս Օսմանեան տէրութեան, գրեաց առ իւրեան, զորս առաքեալ էր ի քարոզութիւն և կոչեաց զնոսա ի Կոստանդնուպօլիս. զի խորհէր յայլ կողմն աշխարհի փոխադրել զմիաբանութիւնն, ուր մարթասցի անվտանգ ի հակառակորդաց հաստատել զմիաբանութիւն։ Վասն այսորիկ աղօթահայց պաղատանօք խնդրէր յարաժամ ի Տեառնէ, և յամենօրհնեալ Կուսէն այցելու լինել ինքեան, որպէս զիարդ հաճոյ եղիցի ամենաւորի կամաց նորա, զամենայն պիտառութեանց իւրոց զհոգողութիւն ի նա ապաստան արարեալ։

Ընդ այն աւուրս լուաւ Մխիթար վարդապետ ի վաճառականացն, եթէ երկիրն Պեղապանիոյ, Մսուա, որ ընդ ամբրութեամբն էր Վենետկեաց, արգաւանդ է և բազմաբերդուն, ամենայն կարեւոր պիտոյիւք ի դարման կենաց։ Ի համբաւոյ սոսի յորդորեալ նորա, ի նմին ամի, 1701, յամենանն սեպտեմբերի, ժողովեաց զիւրեան ամենայն ի սենեակ իւր ի վանս Փոխուշինաց, առ ի միաբան խորհրդով ընտրել զտեղի ի կողմն ինչ աշխարհի, որ յանկարծոյն թուիցի վասն միաբանութեան։ Եւ կացեալ յաղօթս Ջերմագին նոքաք հանդերձ, խօսեցաւ ընդ նոսա և ասէ.

„Դուք ինքնին գիտէք, զի ոչ ըստ օրինակի վարդապետ-
„ացն ազգիս ժողովեցի ես զձեզ առ իս, առ ի շրջեցուցա-
„նելոյ ընդ իս առ ժամանակ մի, և զկնի ուսուցանելոյ ձեզ
„զմեկնութիւն ինչ գրոց, ապա ապա զգաւազան վարդապետ-
„ական, և այնպէս արձակել զձեզ այր իւրաքանչիւր ըստ
„հաճոյս անձին շրջիլ ի քարոզութիւն։ Այլ ընտրեցի զձեզ,

«զի բան կանոնաց սրբոց հարց, և յաւէտ սրբոյ հօրն Անտո-
«նի սրբայի՝ զհետ երթեալ աւետարանական խրատուց՝ մար-
«թասցուք կատուցանել զմխարանութիւն մշտաւոր, որոյ
«առաջադիր նպատակ լինիցի ուսումն ամենայն կարեւոր
«դիտութեանց, և վախճան՝ ի թիկունս հասանել հոգեւոր
«կարողութեան ազգիս մերոյ, ի փրկութիւն հոգւոց,
«ի փառս և ի պատիւ անուան տեառն և փրկչին բոլորեցուն։
«Այլ որպէս փորձքն ցուցին՝ անհնար է մեզ հասատել
«ի քաղաքիս, կամ յայլ մերձակայ կողմանս զմխարանու-
«թիւն, և հանդարտական կենաց հպատակ կալ հոգեւոր և
«գրաւոր հրահանգաց։ Վասն որոյ հարկաւոր է մեզ խոր-
«հրդով ընտրել, եթէ յոր կողմն աշխարհի, և յինչ տեղի
«ի դէպ լցէ գլխել։»

Երբեւ ի միտ առին ամենեքին զառաջարկութիւն խորհրդոյն, անցնիւր բան ծանօթութեանց, զոր ունէր բան տեղեաց, յառաջ բերէր զոր պատեհագոյն թուէր նմա։ Այս զկնի բազմայոյզ խորհրդակցութեանց, հաստատեաց Մխիթար վարդապետն փոխադրել ի տեղի մի, որ ընդ տէրութեամբ քրիստոնէից, և ընտրեցին միաբան խորհրդով զՎանա, վասն զի բերդին լինելոյ անդէն ամենայն հարկաւոր պիտոյից կենաց։ Եւ այնպէս ապա ի վճարիլ խորհրդոյն՝ ամենեքին առհասարակ ձեռն եդեալ առաջի պատկերի Աստուածածնայն, Ջերմեռանդն սիրով և անբիկեան յուսով նուիրեցին զանձինս յորդեգրութիւն նորա, զայս օրինակ նուիրական բանիւ.

«Ամէնօրհնեալ սուրբ կոյս աստուածածին Մարիամ,
«ահաւասիկ մեք անարժան ծառայք քո, նուիրեմք զանձինս
«մեր քեզ յորդեգիրս, և անդրդուելի յուսով ապաւինեալ
«ի մայրական առատաձեռ գթութիւն քո, ակն ունիմք մինչեւ
«ի գրեթ տարեայ՝ եղանել յերկրէ սատի, և պատապարել
«զանձինս ի պատրաստեալ տեղին մեզ ի բնակութիւն առ
«ի քէն։ Եւ խոստանամք քեզ, ամի ամի ի սմին աւուր
«պատուել զյիշատակ այսմ մեծի քումդ բարերարութեան,
«մեծահանդէս տօնախմբելով զոր հրաշալի ծննդեան յ»
«հանդերձ ուխտիւք, և յամենայն եկեղեցիս միաբանու-

«Թեան մերոյ կանդնել խորան ի պատիւ ծննդեան Տիրա-
«մորդ, և ի փառս որդւոյդ միածնի, որ է օրհնեալ յաւի-
«տեանս, ամէն։»

Եւ յարուցեալ յաղօթից լի ուրուածային վիճիթարու-թեամբ, երբ ի մի մարմին և ի հոգի վիրացան տէրամբ ընդ վիմեանս և ընդ առաջնորդի իւրեանց, և քաջագործ պնդե-ցին զմէջս առ միաշունչ համախառնակ ծառայութիւն Փրկչին, և մօր նորա։ Եւ յայնմ հետէ ի շնորհաց սուրբ Կուսին սկսան բել զմակագիր իբր սեպհական կնիք այսպիսի.

Որդեգիր Կուսին, վարդապետ ապաշխարութեան.

նշանակեալ ի քառեակ գիրսդ, Ա. Կ. Վ. Ա. զոր յայտ առ-նեն զսեպհական վանքան միաբանութեանն միջնորդութեամբ բարեբանեալ Կուսին Մարիամու կուսոյ։ Այս հաստա-տութիւն խորհրդոյ անցանելոյ միաբանութեանն յարեւմուտս, և նուիրումն յորդեգրութիւն ամենասուրբ Կուսին՝ եղեալ յա-մին 1701, յութերորդ աւուր սեպտեմբերի, ի տանի շնորհա-զարդ ծննդեան Աստուածամօրն։ Իսկ միաբանեալքն էին յայնժամ տասնեքին սոքա.

ՄԽԻԹԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ գլուխ և առաջնորդ.
Հ. ԵՂԻԱ Վ. ՊՕԼՍԵՑԻ.
Հ. ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ՍԵԲԱՍՏԱՑԻ.
Հ. ԳԷՈՐԳ Վ. ԱՆԹԱՊՑԻ.
Հ. ՄԱՆՈՒԷԼ Վ. ՊՕԼՍԵՑԻ.
ԵՂԲԱՅՐ ՂԱԶԱՐ ԱԿՆԵՑԻ.
ԵՂԲԱՅՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԵԲԱՍՏԱՑԻ.
ԵՂԲԱՅՐ ԱԶԱՐԻԱ ՊՕԼՍԵՑԻ.
ԵՂԲԱՅՐ ԳԱԲՐԻԷԼ ԿԱՐՆԵՑԻ.
ԵՂԲԱՅՐ ՄԻՔԱՅԷԼ ՍԵԲԱՍՏԱՑԻ.

Յետ այսորիկ առաքեաց Մխիթար վարդապետ ի Մօտ զՀ. Գէորգ վարդապետ առեալ նմա ընկեր զՅարութիւն պատանին, զնեալ զհանգամանս երկրին և օգոյն։ Իբրեւ հա-սին նոքա ի Նէապօլիս՝ կացեալ ոմն ամիս երիս, և տեղե-կացեալ ամենայնի՝ գրեցին առ Մխիթար վարդապետ, եթէ

երկիրն արգաւանդ է, և ամենայն պէտք ի դարման մարդկան առատ և դիւրագին, այլ օդ և ջուր չեն այնչափ բարի։ Այս բար ոչ սակաւ տխրեցոյց զմիտրանեարն, երկնչելով ի սոսկ հիւանդութեանց։ Իսկ քաջահաւատ հայր և առաջնորդ նոցա Մխիթար՝ քաջալերեալ զնոսա յուսով խնամոցն աստուծոյ, ընդունաց ի սրտից նոցա զամենայն կասկած, և գրեաց առ Հ. Գէորգն մեծ անդանօր ի քաղաքի յայն։ Եւ ինքն փութացաւ հանդերձել զիւրան և առաքել յառաջագոյն նախ զՀ. Յովհաննէս վարդապետ, ապա զՀ. Եղիա վարդապետ, ընդ նմա և զայլ շարս անձինս, ընդ որս էր և Յովհան եպիսկոպոս։ Սա յարեցաւ ի նոսա, ոչ իբրեւ զմի ի միաբանից, այլ իսկ բնակութեամբ, առ ի ձեռնադրել զաշակերտեարսն քահանայ։ Զկնի նոցա իբրեւ այն ինչ հանդերձեալ էր և ինքն ընդ ճանապարհս, բազում խոչք և անյաջողութիւնք եղեն նմա ընդ առաջ, որպէս պատմեացուք առաւեր։

Քանզի ընկեցեալ յաթոռոյ Եփրեմ պատրիարքն, եդաւ ի տեղի նորա Սեմաքն եպիսկոպոս։ Որոյ իրաւունք լեալ վասն երից քահանայից Աղրանապօշոյ և վասն Մխիթարայ վարդապետի լինել նոցա ապաստանեալս ի վանս Քափուչինաց ընդ հովանեաւ Գաղղիացւոց դեսպանին, Ճանահնար լինէր ի ձեռս բերել զնոսա մանաւանդ զՄխիթար վարդապետ։ Եմին իրի ի վերին երեսս երևեցուցեալ զանձն համամիտ ընդ հասկէական եկեղեցւոյ, սկսաւ սէր մեծ և ընտանութիւն բազում առնել ընդ հօր Յակինթոսի, որ էր վանահայր Քափուչինաց։ Սրտաբեմն և նորին կրօնաւորաց սեղան մեծամեծ, բազմեցուցեալ զնա ի վեր քան զիւր տեղի, և պէտքս բանիւք հաւատացոյց բարեմիտ վանահօրն, եթէ ինքն պատրաստ է և ինքնայօժար առնել զմիտրանութիւն ընդ հասկէական եկեղեցւոյ, ըստ դաշինն զոր եղեալ է որոյ Լուսաւորչին մերոյ, և հնազանդիլ Պապին։ Եւ առ այն ամենայն իրաք արժանահաւատ առնելոյ զբան իւր՝ զրով եւս հաստատէր խառնելով ի գիրս իւր, զնդրեա և զհայհոյութիւնս ընդդէմ Լէոնի և ժողովոյն Քաղկեդոնի խոպան ջնջել ի միջոյ, զիսա-

վութիւնն հարածանաց յարուցեալ ի վերայ ուղղափառաց՝ խաղաղել, ընդունել զուղղափառ դաւանութիւն Հռովմայ եկեղեցւոյն, և համախառմբ ընդ ժողովրդեան իւրոյ վիսրանիլ ընդ նմա։

Իսկ ի վանահօրէն պահանջէր մեծ գումար դրամոց առ ի գլուխ հանելոյ զիրս միաբանութեանն։ Եւ եւս՝ խնդրէր զՄխիթար վարդապետ և զերիս քահանայս Ադրանապօլսոյ, խառանելով ի պաշտօն երեւելի բարձրացուցանել զնոսա, և ուսուցիչ ուղղափառ վարդապետութեան կարգել, որով և ցանկացեալ խաղաղութիւնն և միաբանութիւնն անվրէպ կատարեցի։ Եւ զայն իւրով մատանեաւ ինքեալ եւ ցվանահայրն։ Ընդ այս ամենայն այնչափ հաւանեալ և հաստատեալ էր հայրն Յակինթոս, և կրօնակից եղբարք նորա, մինչ թէ լսէին յոմանց զհակառակն ասել զպատրիարքէն, կամ կասկած ինչ այնպիսի դնել ի մտի վասն նորա, զայրացեալ սատէին նոցա լռել, և մի տարապարտ զրպարտել զայրն ողջամիտ. զի ասէին՝ Աւետիք կատարեալ ուղղափառ է։ Բայց նա զայս ամենայն առնէր, զի թերեւս գամագիւտ լիցի այսպիսի դաւողական հնարիմացութեամբ ի ձեռս բերել ընդ Մխիթար վարդապետ, յոր ունէր զաչս արձակեալ։ Իսկ Մխիթար թէպէտ իրագէտ էր երթեւեկի վանահօրն առ պատրիարքն, և յաճախելոյ զրոց նոցա առ միմեանս, ի պատճառս ասապատիր միաբանութեանն, զոր գիտէր լինել առ երեսս, բայց ոչ գիտէր զիտաւորն վանահօր վասն առաքելոյ զնոսա առ պատրիարքն։ Յայն ասկս ոչինչ փոյթ լինէր նմա կանխաւ խոյս տալ ի վանաց ինքն, այլ միայն ի պատրաստութիւն պիտոյից հանապարհի միտ եդեալ՝ միայր յաջող ելից։

Արդ՝ մինչ յայսպիսի խորհուրդս պատրաստութեան ուղղոյ զմիտն յաճեցուցանէր, եկն վանահայրն ինդալից, և աւետիս տուեալ նմա և քահանայից, ասէ. «Ահա կատարեցաւ ցաւ խաղաղութիւնն ցանկացեալ, յոյր ասկս ընդ այսչափ ժամանակս քրտնաջան վաստակ եղեալք։» Եւ ցուցեալ նոցա զյեսկար դաշանց հաստատեալ ձեռագրով և կնքով

պատրիարքին, ասէ. «Արդ կարեւոր է ձեզ վասն հաստատ
«բակաց օգտի՝ երթալ առ պատրիարքն վաղվաղակի, որ-
«պէս հաւատաւոր ի միջի մերում, զի նա ըստ իւրումն
«խոտման կացուցէ զձեզ ի վերայ մեծամեծ գործոց՝ վե-
«նել ինքեան ձեռնառ և գործակից ի յաջողումն միաբա-
«նութեան։ Բայց նախ՝ պարտ և պատշաճ է ասէ, ձեզ
«երթալ յաղջոյն դեպանին, շնորհս մատուցանել նմա,
«վասն ընդ այսչափ ժամանակս ընդ հովանեաւ խնամոց իւ-
«րոց պահելոց զձեզ։» Մինչդեռ նա զայս խօսէր, թարգ-
մանն որ անդ կայր, մատոյց Մխիթարայ գիր ազգանի գրեալ
ի պատրիարքէն, զայս օրինակ.

«Ի բազում ժամանակաց ճանաչեալ իմ զքեզ սիրելի
«արդեակ իմ, կամէի առ իս ունել, և ի գերագոյն պատուոյ
«փառս բարձրացուցանել, այլ դու մինչեւ ցայսօր ոչ
«եկիր առ իս։ Եթէ ի սկզբանէ իսկ եկեալ էիր առ իս,
«ունէի արդեաք զքեզ յաջ բազուկ իմ, և պատուէի զքեզ
«ընդ գերապատիւ վարդապետսն՝ որք ընդ իսն են, և քեզ
«ուստեք ինեաս ինչ ոչ լինէր. սակայն դու ոչ եկիր առ իս.
«բայց զայս քեզ ինչ ոչ համարիմ, եթէ այժմ եկեսցես։
«Եւ արդ՝ փութա՛ գալ առ իս, և ես արդ իսկ զքեզ ի գե-
«բագոյն պատիւ բարձրացուցից, և ի վերայ մեծամեծ գոր-
«ծոց պատրիարքութեան իմոյ կացուցից։ Ողջ լեր։»

Երբեւ ընթերցաւ Մխիթար վարդապետ զայն թուղթ պատ-
րիարքին, և լուաւ զրանս վանահօրն, ետ պատասխանի.
«Յաղջոյն դեպանին երթամ մատդիւր ի շնորհակալութիւն
«երախտեաց պաշտպանութեանն, այլ առ պատրիարքն եր-
«թալ չառնեմ բնաւ յանձն։» Ընդ այս պատասխանին
նորա զարմացաւ վանահայրն. զի չէր ինչ զանխուլ ի նմանէ
փոյթեւանդն նախանձ Մխիթարայ առ այն ցանկալի միա-
բանութիւն, յոր սակս արդէն իսկ ոգւով շատ աշխատէր. և
ահա արդ երբեւ առ ձեռն ունելով զբաղձալին իւր տակաւին
խորշի երթալ։ Վասն որոյ բանիւք բազմաք յորդորէր զնա.
այլ երբեւ եռեռս եթէ նա ոչինչ իւիք զիջանի երթալ առ
պատրիարքն, ասէ. «Եթէ զայդ ոչ առնես, ապա և առա

«առ մեզ մնալ ոչ կարես. զի բան եղեալ է իմ ընդ նմա «անդադար առաքել զքեզ առ նա։» Ասէ Մխիթար. «Պատրաստ եմ երանելի աստի, բայց հայցեմ շնորհել ինձ «այլ եւս ժամս ինչ, առ ի զիշերային մեկնիլ, զի մի՛ ոք «տեսցէ զիս, կամ զիտասցէ թէ յո՛ երթամ։» Ապա առեալ նորա զքահանայս գնաց առ դեսպանն, և տուեալ նմա զպարտուպատշաճ յարգութիւն զհանութեամբ, և անտի զիշերային գաղտարար, և չքաւ թաքեաւ ի տան առն Գաղղիացւոյ զինէվառուի։

Իսկ պարզամիտ քահանայքն, թէպէտ ընդ յեռկար դաշինն էին ի միտս կուսակցոտ, սակայն վատահացեալ ի բանս վանահօրն՝ գնային միամտութեամբ առ Աւետիքն։ Եւ նա զառաջինն վեր ի վերոյ պատուեալ զնոսա առ երեսս, յետ առուրց կալաւ և մատնեաց զնոսա ի ծառայութիւն թիւր։ Իսկ Մխիթար կացեալ զաւուրս ինչ ի տան Գաղղիացւոյն իւրով վարձու՝ շոգաւ ապա անտի ի տուն ուրումն հաւատարիմ բարեկամի յազգէս մերմէ. և նա չունելով ի տան իւրում տեղի անքոյթ յերթեւեկաց, եղ զնոս և զոմանս յաշակերտաց նորա յառաստաղ անդր տանն, ուր կացին զաւուրս հնգետասան, անձայն և անշշունչ բաղում նեղութեամբ։ Ապա յետ աւուրց ինչ զտեալ նորա նաւ մի՝ որ երթայր ի Զմիւռնեայ առապարեաց եմուտ ի նա, ի տարագ վաճառականի ծպտեալ՝ ընդ երից աշակերտաց իւրոց։

Իրրեւ եղանէր Մխիթար վարդապետ ի Պօլսոյ ունէր ի ձեռին շարեալ հարիւր դահեկան եւեթ, և ինքն վիշտասան անձամբք դէմ եղեալ երթայր յաշխարհս օտար, ի մէջ անծանօթ և այլալեզու ազգաց վանս շինել, և միաբանութիւն կառուցանել, որ թերեւս անձեռնարկելի իմն էր ի մարդկային հնարից։ Սակայն նա անդադրդրդ յուսով ապաւինեալ ի խընամս Փրկչին, և ի հզօր պաշտպանութիւն ամենասուրբ Կուսին, անվեհեր անցանէր ընդ ծովն Մառմառայ։ Եւ հասեալ նորա ողջամբ ի Զմիւռնեայ հանդերձ երկու աշակերտօքն, կալաւ ինչեւան ի հասարակաց պանդոկի, ըստ օրինակի օտարական վաճառականաց, անծանօթ յամենեցունց՝ բայց ոմանց

հուսատարիմ բարեկամաց յայտնեաց զանձն ի ծածուկ, որ երթային գային առ նա իբր առ նարեկ վանականն։

Յետ առուրց ինչ՝ մինչ մնայր Մխիթար նաւուս, ահա յանկարծս եկն առ նա շտապաւ ոմն ի բարեկամաց նորա, և ասէ. «Փութա՛ խոյս տալ ասի, և թաքչիլ ուրեք, զի այսօր «յառնի դատաւորի քաղաքիս ընթերցան զհրամարտակ «արքունի, թէ մի ոմն ֆրանկացեալ վարդապետ վախուս «ցեալ է այդր ի Պոլսոյ, խնդրեսցի, գայցի, ըմբռնեսցի։» Զոր լուեալ Մխիթարայ անշուշտ վասն իւր համարեցաւ, վասն որոյ նոյնհետայն առնապարեալ խոյս եառ ի վանս Յիսուսեանց։ Եւ կացեալ անդ ի թաքստի, մինչեւ գտաւ նաւ մի որ երթայր ոչ ի Մօռա, այլ ի Վենետիկ, տակայն առ վանդին որ ի վերայ կայր, ընտրեաց մատանել ի նա, զի թէ՞ ոչ ի Մօռա, գէթ ի Զանթա լիցի նմա անկանել։ Ասեն յամին 1702, յամսեանն հոկտեմբերի բազում զգուշութեամբ և երկիւղիւ առ ի չճանաչելոյ յումեքէ, եմուտ ի նաւ խրատքն հանդերձ։ Այլ երբեւ եկին անտի՝ գիպան ահեղ քամի ալեկոծութեան, զոր քաջ նկարագրեաց նա ինքն Մխիթար՝ յերգն որ ակսանի. «Ընտրեալ ի միջ հողեղինաց։» Յօրինեալ ի նաւի անդ ի գովեստ փառաց Տիրամօրն, որոյ մայրական գթութեան խնամաք ազատեալ անվնաս, ի միջ ելթն և տասն աւուրց հասին ի Զանթա։ Անդ եկեալ ի ցամաք, զի ուրախութեամբ գոհացան զանազաւոր բարերարութեանց Փրկչին, որ զկիրծոյց զնոսա ի ձեռաց թշնամեաց։

Տեսեալ ապա Մխիթարայ զբարեխառնութիւն օդոյ երկրին, զառատ պտղաբերութիւն նորա, և զդիւրագին վաճառ ամենայն կարեւոր պիտոյից կենաց, հաճեցաւ յոյժ ընդ երկիրն, և խորհէր անդ հաստատել զմիաբանութիւնն, վասն որոյ գրեաց վաղվաղակի առ իւրան ի Նէապոլիս, որ անդ հաւաքեալ մնային գաղտեան նորա, ծանուցանելով նոցա զարդարաւորութիւն Զանթայի, միանգամայն և ի նոցանէ խնդրելով ուղեկութիւն վասն Մօռայի, զի յերկուց ուղեաց ամենի, որ զառաջադոյն թուէին, անդ հաստատեցին զբնակութիւն իւրեանց։

Արդ՝ ընկալեալ նոցա զգիր Մխիթարայ՝ լցան անպայման խնդութեամբ, և փութացեալ առաքեցին առ նա զմի ոմն յինքեանց երթալ և պատմել նմա զամենայն հանգամանս երկրին։ Եւ զայն եւս՝ թէ զիարդ յօժարամիտ են իշխանք երկրին տալ նոցա գեօղս և ազատակս յեկամուտ ի գործման կենաց, զոր պարգեւէին ամենեցուն, որք յօտար աշխարհէ երթային անդր բնակութեամբ։ Զայն լուեալ Մխիթարայ, հաստատեաց զմիտս անցանել ի Մօռա, և զկնի երից ամաց եմուտ ի նաւ հանդերձ ընդ իւր եղելովքն, և էանց ի Նէապօլիս Մօռայի, յամին 1703, յամսեանն փետրվարի։ Որ ողջամբ գտեալ զիւրան, խնդութիւն մեծ եղեւ ամենեցուն, միաբան օրհնելով և փառաւորելով զԱստուած։ Ամենեքեան նոքա թուով վեշտասան, բայց երկոտասանքն միայն էին ի թուոյ միաբանութեան, իսկ այլք բնակակից քեռք, և բնակէին ի տան միում կալեալ ի վարձու։

Յետ այնորիկ տեսեալ Մխիթարայ զանձն և զհօտ իւր փոքրիկ թափեալ ի ձեռաց արանց ՀԼատակարաց՝ ձեռնկալութեամբ ամենօրհնեալ Կուսին և ածեալ ի մակաղատեղ անդր աներեւկան, իսկ և իսկ փոյթ յանձին կալաւ հաստատել ի կարգս բարեաց զանձինս միաբանութեանն, և զամենայն զառանին պիտառոցեալ պէտս հոգալ և յարդարել։ Ապա խորհուրդ արարեալ ընդ առաջակայից իւրոց վասն տեղւոյ շինելոյ զմենաստան, միաբան ընտրեցին զՄեթոն դղեակ, վասն որոյ գիր աղերսանաց մատուցին առ քննիչ իշխանս, որք ի Նէապոլիս լինէին։ Եւ ի յաջողելոյ Տեառն, լսելի եղեն իշխանաց աղաչանք նոցա, յօժարակամ շնորհելով նոցա տեղի ի Մեթոն վասն շինելոյ անդ եկեղեցի և մենաստան։ Ընդ նմին և գեօղ մի, և զմասն ինչ այլ գեղջի միոյ ի պարէնս։ Բայց այսպիսի պայմանաւ, զի եթէ մինչեւ յերիս ամս ոչ սկսանիցին զշինուածս ինչ կանգել, զրկեսցին ի տեղւոյն և ի կալուածոց անտի։ Եւ ըստ պայմանադրութեանս այսմիկ՝ գրեալ զմուրհակ արքունի հաստատութեամբ, ետուն ի ձեռս Մխիթարայ վարդապետի հանդերձ ընդ նմա եղելովք։ Ետուն նոցա միւս եւս գիր առ գաւառապետն, պատուիրելով

նմա տալ Նոցա ի Մեթոն բերդաքաղաքի անդ զմի յարքունի տանց իրնակութիւն, մինչեւ ցերիս ամս, յորս փոյթ ունիցին ձեռնարկել ի շինուածս։ Զայն երկու հրամարտակ առեալ Նոցա բաղում շնորհակալութեամբ՝ դարձան խնդութեամբ առ իւրեանցն, և պատմեցին Նոցա զշնորհսն, զոր ի խնամոց Տեառն գտին առաջի իշխանացն։

Ապա ելեալ Մխիթարայ հանդերձ միաբանիւք ի Նէապոլսոյ՝ եկն ի Մեթոն, ուր ըստ գրոյն, զոր ունէին յիշխանաց անտի, եւ Նոցա քաղաքապետն յարքունի տանց անտի՝ տուն մի մեծ բաղմասենեակ՝ բաւական ի բնակութիւն Նոցա. զոր ի նմանութիւն մենաստանի ձեւացուցեալ, անդ հաւաքեալ պատապարեցան։ Եւ այնուհետեւ առաջնորդն արթուն պընդեաց զանձն ամենայն առաքինի քաջողջութեամբ կարգել կանոնաւորել զհօտ իւր բարեկրօն կարգօք։ Վասն զի բազմաձեայ տեղեկութեամբ գիտելով զբնաւորութիւն և զմեծ կարողութիւն ազգին, միանգամայն հայեցեալ ի ծանրութիւն գժուարակիր գործոյն՝ զոր նպատակ ունէր առաջի, յայտնապէս տեսանէր՝ զի անհնար է զկատարումն առնուլ գիտաւորութեան իւրոյ, թէ ոչ նախ միաբանեալքն քաջ մարզեսցին ի բարեկարգութիւն վարուց, յարիւթիւն վաստակոց, և ի զանազան տեսակս դպրութեանց։ Առանց միաբանական յօդի և հպատակութեան՝ չէ՛ մարթ բժշկել զարատս անմիաբանեալ բարուց, և առանց առաքինի և բարեհամբոյր կրթականութեան՝ ոչ յաջողէ ընկերացն շինութիւն. և ուր չիք ուսումնասիրութիւն, անդ ոչ ազիտաց յուսալի է լուսաւորութիւն, և ոչ վաստակոց յանձնառութիւն գրով և բանիւ։ Եւ միով բանիւ ասել, առ այնպիսի գործ տաժանակիր, կարեւոր է ճշմարիտ նախանձաւորութիւն բարւոյն վասն անձանց, և վասն այլոց. նախ ինքեանց լինել բարեկիրթս և զիտնաւորս, զի կարիցեն ապա և զայլս նոյնպիսիս առնել անձանձրոյթ աշխատութեամբ։

Արդ՝ զայս ամենայն գիտելով խոհական առաջնորդն, և ոչ շատ համարեալ զոր անձամբ տայր օրինակ յամենայն բարեվարութիւնս, սկսաւ առաջնորդական մտամբն ի գլ-

լուխ տանել զիսորհեալն. իբր ոչ եթէ զնոր և զանընտել կարգս ինչ սահմանել կամելով, այլ ըստ միաբանական կենաց զարբոյ Հօրն Անառնի աբբայի զաւանդեալ կրօնս՝ որ յաղագի անդ ծանուցեալ էր և ընկալեալ, ինդագոյն եւս յարմարելով ըստ երից ուխտից, յաւելեալ և զչորրորդն յաղագս առաքելական քարոզութեանց, որովք իբրեւ կամաւոր և ախորժակն կապանօք կապեալ միաբանութիւն անխռովարար և կարգաւորապէս յառաջ տանել զիւրն առաջարկութիւն։ Ի սոյն զկարեւորն սահմանեալ կարգէր զորոշմունս անձանց, և գործառնութեան նոցա, զերիցագոյնն և զվիճակաւորն, և զմանկագոյնս՝ յիւրաքանչիւր յարմարեալ կարգս և ի գործս որոշելով. իսկ զանյարմարսն զլխովին՝ ի բաց առաքելով։ Զոմանս կարգէր ի պաշտօն արտաքին գործառնութեանց, չափ և սահման դնէր զգեստուց, և բնակարանաց, և կերակրոց, հաւարակաց և առանձին ուղղիչ, ուսմանց և հանգստեան քնոյ կամ զբօսանաց, և այլոց առանձին կարգաց։ Ընդ այսպիսի ամենազգաստ կարգաւորութեամբ Մխիթարայ՝ անդիմադարձ հպատակութիւն միաբանելոցն և զգաւշաւոր պահպանութիւն նոցա յամենայնի՝ սքանչելի կարգս բարեաց երեւեցուցանէր յաչս ամենեցուն, զօրինակ նախանձելի սիրելեալ ի քաղաքին և ի շրջակայ սահմանս նորա, ի յորդոր ամենայն քաջալերութեան։

Արդ՝ այն ինչ բազմաստուակ Հայրն այսպիսի սիրալի հոգաղութեամբ յառաջագէմ զհօտ իւր շնորհօք Տեառն զարբզացուցանէր յամենայն կարգս ուղղութեան, վիշտք մեծամեծք հասին ի վերայ ի պատճառս հիւանդութեան բազմաց ի միաբանից։ Զի անընտել գոլով նոցա օդոյ երկրին՝ անկան ի մահիւն, որով և բնակարան նոցա փոխեցաւ յանկելանոյ հիւանդաց. զի և որք յոտին կային, ի բազում ալքնութեանց և յաշխատութեանց ապատաւորելոց նոցա, ոչինչ ընդհատ ի խոթացելոց անտի՝ նուաղեալ և տկարացեալ էին։ Եւ այսու ծախք միաբանութեանն բազմանային ի պէտս դեղոց և բժշկի, և յայլ կողմանէ դառն աղքատութիւն կայր ի վերայ։ Զի յայնմ ամի երեք հարիւր եւեթ գահեկան

մարթացան ի ձեռս բերել ի կալուածոց իւրեանց. այլ այն զինչ էր առ հնգետասան անձինս, թէ՛ զ դժախան որ վասն հիւանդաց։ Սակայն և այնպէս մեծայոյս Հայրն ոչինչ լքումն կամ վհատութիւն կրէր. այլ զամենայն ապաւինութիւն իւր ի միմիայն խնամն Աստուծոյ ունելով հաստատինգ խարսխեալ՝ զգործ պաշտաման իւրոյ վարէր անդորր և անխռով սրտիւ, մինչև ողորմութեամբ ամենագութ Փրկչին ամենեքեան ընկալան զկատարեալ առողջութիւն։ Եւ այսու թէպէտ բան մասին թեթևացան վիշտք նորա, բայց ապա բան անօրինելոյ վերին տեսչութեան, ինքն անկաւ յախտ մահաբեր հրատապ ջերմութեան։ Սակայն նա յոյնմ մեծի վտանգի կենաց՝ կայր զուարթ և անդորրամիտ, հաճոյից կամաց Տեառն զանձն և զիւրան նուիրեալ։ Բայց միարանքն առհասարակ յերկիւղ և ի ծանրաթախիծ տրտմութիւն պաշարեալ, արտասուալից պաղատանօք առ ամենագութ Մայրն ողորմութեան դիմէին յաղաւթս, զզօրաւոր բարեխօսութիւն նորա ի մէջ առեալ առ որդին իւր միածին, որում հնարաւոր է ամենայն։ Եւ զկնի աւուրց ընկալեալ նոցա յախորժաբուր տեառնէ զցանկալի ողջութիւն Հօր իւրեանց, ցնծալից օրհնութեամբ փառս և գոհութիւնս վերառաքէին Փրկչին բոլորեցուանց, և մաք նոցա օրհնաբանեալ Կուսին Մարիամու։

Ապա տեսեալ Հօրն հաստատակաց, զի նորակերտ միարանութիւնն իւր ողորմութեամբ Տեառն օր ՃԱՆ զօր յառաջադէմ լինի բազմութեամբ անձանց, և կրօնաւորական կանոնաւոր կարգաց, իրաւունս այնուհետեւ հանրեցաւ զտարազ առաջադրութեան իւրոյ՝ որոյ առաքելական աթոռոյ հաստատմութեամբ առաջի առնել, որպէս զի ամենայն ինչ հաստատուն կացցէ, միանգամայն և առաքելական վաստակ միարանութեանն արդիւնաբար լինիցին շնորհաձիր օրհնութեամբ արքայ հայրապետին, որ ի նմին ժամանակի էր Տ. Կղիմէս ԺԱ. Նորին ազգաւ յամին 1705՝ խորհրդով իւրոց առաջակայից, ընտրեալ զերկուս յիւրոց անտի, զՀայր Եղիա վարդապետ, և զՀայր Յովհաննէս վարդապետ, առաքեաց ընդ նոսա ի Հռոմ հանդերձ կարճառօտ տեղեկագրութեամբք,

զոր նա ինքն ի վարուց և ի բանից սրբոյ Հօրն Անտոնի ապրեալի հաւաքեալ գրեաց իբր կանոն միաբանութեան իւրոյ։

Իբրեւ հասին նոքա ի Հռոմ՝ մատուցին նախ զգիրսն առ ժողովն տարածման հաւատոյ։ Եւ ապա ի դէպ ժամու առաջի արարին սրբոյ Հայրապետին զհայցուածս միաբանութեան։ Իսկ նորա՝ ըստ ասասուածխնամս լուսաւոր մտաց իւրոց վաղվաղակի խելամուտ եղեալ հոգեկեցոյց փրկարար վախճանի միաբանութեանն, նախընծայ Հայրական քաղցրութեամբ ընկալաւ զնոսա, և բազում ցնծութեամբ խոստացաւ զինեղիր միաբանութեանն կատարել։ Իսկ զիրս միաբանութեանն յանձն արար ի քննութիւն ժողովոյ Կարդինալաց։

Անցանէին ի վերայ ամիսք վեց, յորս բազում տարաբերութեամբ ի մեծաց լինէին ի մէջ ժողովոյն և Մխիթարայ վարդապետի։ Ի պատճառս այլեւայլ տարակուսութեանց՝ զոր ի համառօտ տահմանագրութենէ անտի նորա հանէին. միանգամայն և յանդուգն չարախօսութենէ թշնամեաց ոմանց, որք զմիտս ժողովոյն ի անուտի կասկածանս յածեցուցանէին, որպէս ունիմք պատմել առուրեւ։

Տեսեալ հարցն զի քննութիւնն երկարի, աւելորդ համարեցան այնուհետեւ երկուցուն միանգամայն անդ մնալ։ Վասն որոյ Հայր Եղիա վարդապետն հրաման առեալ ի ժողովոյն՝ դարձաւ ի Մեթոն։ Եւ պատմեալ զամենայն զոր տարարին անդ, և մանաւանդ զյօժարամիտ հաճութիւն Հայրապետին ի կատարումն խնդրուածոց միաբանութեանն, առլցան խնդութեամբ։ Ապա իբրեւ զիտաց Մխիթար վարդապետն, եթէ Հայր Յովհաննէս տակաւին յամել ունի ի Հռոմ, զրեաց նմա միտ դնել ուսման Լատին և Իտալական լեզուաց, որք կարի կարեւոր էին միաբանութեան իւրում։ Եւ ինքն՝ որ ցայն վայր վեր ի վերոյ ծանօթացեալ էր լեզուացս այսոցիկ, այնուհետեւ յաւել ի Լանս, մինչեւ ըստ բաւականին վարժեալ՝ սկսաւ և զիրս ի նոցանէ յեղուլ ի մերս բարբառ։

Յայսմ ժամանակի լրանային երեք ամք պայմանեալ ժամանագրութեան իշխանացն Մօտայի։ Յոյր տակս և անհրաժեշտ հարկ ի վերայ կայր Մխիթարայ վարդապետին անյա-

պաղ ձեռնամուխ լինել ի շինութիւն վենատանի։ Իսկ ինքն ծանր աղքատութեամբ պաշարեալ՝ չունէր ի ձեռին ասելի ինչ, քան որչափ բաւական լինէր առ օրըստօրեայ կարեւոր ոգեպահ ճիշդ պարէն վիճականից, և ոչ իսկ յոյս՝ ձեռնարկութիւն ուստեք գտանելոյ ի ժամուն։ Վասն որոյ տխրեցաւ առնուլ վոխ ի վաճառականէ միոյ հինգ հարիւր դահեկան, որ հանդերձեալէր երթալ յԵդոկիա։ Եւ նմա զմուրհակ պարտուցն տանիլ առ Հայր Մանուէլն, որ ինքին ժամանակի յԵդոկիա լինէր. որում պատուէր եւ, զի յողորմութեանց ոնոի պատարագաց, զոր ի քաղաքի անդ ունիք ի բարեպաշտից հանգանակեալ էին ի վէճ իւրեանց, հատցեալ էին վասն միաբանութեան իւրոյ, վճարեցէք առնն։ Եւ ինքն նոքին դրամաք վաղվաղակի ձեռն էարկ պատրաստել զնութիւն. և ապա ակնկալութեամբ փութով ժամանելոյ ի ձեռս իւր յաւելեալ դրամացն Եդոկիոյ, որ էր իբր հազար մի, կոչեաց զորմնադիրս և զհիւսուն, և տակ արկեալ ընդ նոսա՝ եւ արկանել զհին մենատանին, յամին 1706, յամսեանն մարտի, ի դղեակ անդր Մեթոնի։

Եւ այն ինչ շինուածն օր ըստ օրէ բարձրանայր, և շքաւորութիւն գոյից ծանրանայր ի վերայ Մխիթարայ, լուր եհաս առ նա, եթէ զրամքն իբր զերկեամ մի յաւուրս հատուցեալ Եդոկիա յողորմութեանց պատարագաց՝ կորեան խոպան։ Ֆանդի ունիք ի թշնամեաց միաբանութեանն, ընդ որս և մի ումն հեատեալ յիւրոցն, լուեալ զանձկութիւն զաւն աղքատութեան՝ զոր կրէին միաբանքն ի Մեթոն, և զիտելով եւս նոցա զպարմանադրութիւն իշխանացն Մօռայի ընդ Մխիթարայ, ոգեւոր չափ ջան ի մոր եդին խափանել զնախագրեալ դրամս, որպէս զի նոքա ի գերեւ եկեալ ի նպատակէ անտի, և չկարելով բան ժամադրութեանն ի շինուածս ձեռնարկել, զրկեացին յամենայնէ՝ որ ինչ շնորհեալ էր նոցա յիշխանաց երկրին, ընդ նոսին և ինքեանք ի բաց վարեալ յերկրէ անտի, ցիր և ցան լեցի միաբանութիւն։

Եւ զի զրամքն էին յԵդոկիա առ առն միում Պորս անուն, որ էր այր երկիւղած, և միաբանութեան հարազատ բարեկամ,

և ինքնայորդոր գործակալ, ընդ սա մախտցեալ թշնամեաց՝ ջանահնար լինէին և զնա իբրեւ վառնիչ դրամոցն անարգ և անուանարկ երեւեցուցանել։ Վասն որոյ ասիպէին ճեպէին դրարերարան ի բաց պահանջել վաղվաղակի ինամանէ զդրամս, զի մի՛ ասեն սա նմա կորիցեն։ Ասասի համօրէն դրամատեարք, միանգամայն կուտեալ ի վերայ նորա, անցնիւր պահանջէր զողորմութիւն իւր՝ նուիրեալ միաբանութեանն։ Յայսմ վայրի չէ մարթ բանիւ վճարել զտագնապ Թորոսին. քանզի նա սա ի շահեցուցանել զդրամս յօգուտ միաբանութեան, զնեալ էր նոքա զկսաւ, տուեալ էր ներկարարաց. այլ ի ասիպելոյ հակառակորդաց, բռնադատեցաւ այնպէս անկատար զիւրազնի վճռաւել քան զարժանն, և հատուցանել նոցա։

Յայնմ զառնադին ժամանակի՝ եհաս անդր և վճռաւաւկանն, յորմէ հինգհարիւր զահեկանն առեալ էր ի Մեթն Մխիթար վարդապետն. և ցուցեալ Թորոսին և Հայր Մանուէլին զմուրհակ պարտուց, խնդրէր զդրամն ի նոցանէ։ Ներեալ էր սա ի Մխիթարայ և գիրս ողջունի առ զանազան անձինս Եւրոպացւոց, յորս գրէր թէ զիարդ ազորմութեամբ Տեառն օր քան զօր յառաջագէմ լինի միաբանութիւնն. որով թէպէտ ստութիւն համբաւոյ հակառակորդաց խայտառակէր, սակայն և այնպէս չուտուն նոքա թոյլ, զի զէթ այն պարտք միաբանութեանն ի դրամոց անտի վճարեսցին։ Յայր սակս հայր Մանուէլն ի հնարհս հայթայթանաց մտեալ՝ զկէս պարտուցն հարիւր մարթացս վճարել. իսկ մնացեալն ծանր տոկոսաւք դարձաւ ի վերայ միաբանութեան, որ յետ երից ամաց՝ ի սակս բազմապատկելոյ վաշխից՝ կրկնապատիկ հատուցան պարտուսեան։

Անհաս են ի մտաց գործք սքանչելի նախախնամութեանն Աստուծոյ, զոր երևեցոյց ի վերայ միաբանութեան՝ ի սերզրանէ անտի հիմնարկութեան նորա։ Քանզի վարիչք Բարերարն զՄխիթարն ի գործս ազանոնս զժուարահաս, և միանգամայն ի մեծի ժամանակի թոյլ տայր, զի խոչընդոտք լեռնացեալք, և արգելք՝ մարդկապէս խորհելով՝ անխանելիք, դիմադրաւ լինիցին նմա։ Բայց զոյգ ընդ այսպիսի յուսակտուր ընդդիմակաց,

աներեւոյթ ձեռնկալութեամբ պնդէր բարեխնամն ի յոյս նորա յիւր ամենազօր օգնականութիւնն. և անձայն քաջալերութեամբ խրախուսէր զնա անկասկած յառաջ վարել զգործն։ Զոր ապա նա ինքն ի վերջ քան զրնական յոյս մարդոյ գլխաւորեալ վճարէր մարդասիրապէս ի փառս իւր։ Քանզի շարժէր զնա ի շինուած ձեռնարկել, և միանգամայն պատրաստեալ ժամանակութեան դրամոց՝ զոր միայր նա ընդ հուպ ի ձեռս բերել, թոյլ տայր ի ձեռն թշնամեաց ի կորուստ գնալ, և այնպէս մնալ մերկ և կողոպուտ յամենայն նպատից մարդկան։ Բայց այսու ամենայնիւ վստահացեալ Մխիթարայ ի յոյս աննիւթ նախախնամութեան նորա՝ ոչինչ վհատեցաւ, և ոչ իսկ կասեցաւ ի գործոյն, այլ զոր ինչ յայնմ անձկութեան ժամանակի կարող էր առնել, հոգացաւ ի գլուխ առնել ըստ կարի։

Քանզի վաճառեաց զրերս գիւղից, կամ՝ լաւ եւս ասել՝ զերեսս երկրին զերկուց ամաց միանգամայն, որ էր կարգեալ ի պէտս օրըստօրեայ պարենի միաբանութեանն։ Եւ զի այն չէղեւ բաւական առ կատարումն շինուածոյն, սարկեցաւ նա առնուլ այլ եւս դրամս ի փոխ ծանրագոյն տոկոսաւք. և այնպէս ծանրացեալ պարտեաւք՝ կատարեաց զշինուած միոյ կողմանն մենաստանին ի նմին ամի, որ էր երկայն զիրկս քառասնեւհինգ, ունելով սենեակս եօթնեւտասն։ Եւ ապա հանեալ զմիաբանութիւնն ի տունէ անտի՝ բնակեցոյց ի նոր բաշէն մենարանի անդ՝ անպատում խնդութեամբ գոհացեալ զինամոց Փրկչին։

Արդ՝ ի կատարել Մխիթարայ օգնականութեամբ Տեառն զշինուածն զայն, թէպէտ յապահովացաւ ի հոգոց զրկելոյ ի ձրիական պարգեւաց իշխանաց, բայց անձկութիւն յետին աղքատութեան այնպէս բռնացաւ ի վերայ նորա, մինչեւ չզօրել զառօրեայ անձուկ պէտս միաբանութեանն դատանել։ Վասն որոյ յանհնարս մնալով՝ ձեռն էարկ ի զգեստս և յայլ ապրանս եկեղեցւոյ որ իւրաքանչիւր նաւագ պիտոյից՝ գրաւական դնելով ինչ ինչ յայնցանէ, առնոյր ասէր անտի ի փոխ գրամս հանդերձ տոկոսաւք։ Որով ի վերայ առաջնոց պարտ-

տեաց՝ օր ըստ օրէ նոր պարտք յաւելեալ բարդէին։ Սակայն նա՝ որ ոչ միայն զնեղքին կատարութեան և զաւուրն, այլ և զմարմնաւոր պիտոյից պատրաստութիւն զհոգողութիւնն բովանդակ յանձն իւր բարձեալ կրէր, յամենախնամ Տէրն անդրդուելի յուսով ապաւինեալ՝ ոչ ինչ թուլանայր զառ յԱստուծոյ հաւատացեալ նմա զհօր՝ յանձանձել ամենայն զուարթութեամբ ոգւոյ, անխորտակելի արիութեամբ յաւաչադէմ զարգացուցանել ի կրթութիւն կրօնաւորական կենաց, և յուսմունս գիտութեանց։ Ընդ սոսին և զօրքատօրեայ ոգեպահ ոճիկ, զհաց ասեմ, և տեսակ մի եփեալ կերակրոյ յարմտեաց անխափան մատակարարել. այլ միս, կամ այլ ինչ կերակուր ի մսոյ՝ հազիւ երբէք, նոյնպէս և հանդերձք նոցա աղքատինք, բայց մաքուր։

Ապա իբրեւ յայն յետին չքաւորութիւն հասանէր, մինչեւ չունել ուտելք և հաց անգամ պատրաստել իւրոցն, դիմեաց առ իշխան երկրին կոչեցեալ Անճէլօ Էմա, մի յերեւելի և ի բարեպաշտ Սեպհաց Վէնէտկոյ. որոյ ի միտ առեալ զկարիս միաբանութեանն, հրամայեաց տալ յարքունուստ ցորեան և պաքսիմատս ըստ բաւականին ի պաքսիմատից անտի, որք էին ի պէտս զինուորաց, զոր բազում խնդութեամբ ընկալեալ նորա զոհացաւ զՏեառնէ։

Յայսպիսի գառն նեղութեանց ժամանակի չեղեւ երբէք լսել յուսքէ ի միաբանից տրտունջ կամ քրթմնջիւն, և կամ տխրութիւն ի դէմս ուրուք տեսանել. այլ ամենեքեան լցեալ աստուածային ուրախութեամբ՝ զուարթամիտ և անշփոթ ի կրթութիւն հոգեւորական կենաց, և յուսմունս գիտութեանց, և յայլ ամենայն գործս, որ ինչ միանգամ յանձն լինէր նոցա՝ ամենայորդոր փութով մատդիր լինէին, ընդ անխոնջ աւաչնորդութեամբ Հօրն իւրեանց։ Որ յայնպիսի անձկութեան աւուրս ընդ ներքին և արտաքին բազմազբաղ տնտեսութեան միաբանութեանն՝ վարէր և զպաշտօն գաստատաց վարժապետի, ինքնին ուսուցանելով նոցա, զորս յերկուս գաւառս որոշեալ էր, առաջնոյն աւանդէր զճարտասանութիւն, իսկ երկրորդին զքերականութիւն։ Եւ զայն այնպիսի անշփոթ և

և անգրաղ խորհրդով, որպէս թէ զայն եւեթ գործ ունէր իւր առաջի, անխափան յառաջագէմ գործադրելով զնոսա, քայլ յամենայնի և միշտ նախամեծար ունէր զկրթութիւնն ատուռաց պաշտութեան։

Այս ծանր անձկութիւն չքաւորութեան ձգեցաւ իրր ընդ ամենայնի։ Յետ այնորիկ ընդ երկնաձիր հոգեւոր օրհնութեանց, սկսան ի խնամոց ամենազութ Արարչին, և ցողք մարմնական արդոց ողորմութեան ասոյ անոյ ցողել ի վերայ նորատունկ միաբանութեանն։ Քանզի զինի աւուրց ինչ դարձի Մխիթարայ վարդապետի ի Նէապօլսոյ, նա ինքն Լսմ իշխանն տեղեակ մեծի կարօտութեան միաբանութեանն, առաքեաց նմա 150 դահեկան։

Յետ այսորիկ խորհէր Մխիթար վարդապետն ի շինուած եկեղեցւոյ ձեռնարկել. քանզի ըստ նախադրեալ դաշնադրութեան իշխանաց՝ պարտ էր ի կատարել մենաստանին ըստ երեւելի մասին, սկիզբն առնել եկեղեցւոյ շինութեան, այլ ծանրութիւն պարտուց կայր դեռ եւս ի վերայ միաբանութեան՝ որպէս յառաջն. սակայն տեսեալ նորա, զի խնամօք Տեառն տուրք ողորմութեան առ փոքր փոքր ցողել սկսան, զօրացաւ յանձն։

Քանզի իշխանն Սերասիանոս Մաշէնիկեան տպարապետ և հրամանատար ամենայն կղզեաց և նաւուց Վենետիկեան տէրութեան, ծանօթ Մխիթարայ և բարեկամ միաբանութեան, առաքեաց նմա 200 դահեկան, նոյնպէս և Լսմ իշխանն հրամանեաւ զկիր և զքար ի պէտս եկեղեցւոյ յարդունուստ մատակարարել։ Եւ յեկամտից գիւղից ժողովեցան ինքն տուի 600 դահեկան։ Արդ զոյս ամենայն ունելով նորա առ ժամն ի ձեռին, վաղվաղակի ձեռն ի գործ արար պատրաստել զնիւթն շինուածոյն։

Յետ այսորիկ ի բարերար խնամոց Մարգարիտն՝ շարժեալ բազմաց ասուածասէր անձանց ի կարեկցութիւն միաբանութեան, յանձնէին ի կողմանց տուրք ողորմութեանց, մինչեւ բաւական լինել ոչ միայն զեկեղեցին բոլանդակեալ շինութեամբ հանել ի գլուխ, և զծանրացեալ պարտս հատուցանել

այլ և գնել երկուս տուն։ Ինքոց և սեղանատուն վայելուչ, և ի գեղս նոր բազմացուցանել զայգիս և զձիթենիս. թող զայլ շինութիւնս՝ զորս նոր առնել անհարմար, որով ամ ըստ ամէ բազմանային եկամուտք միաբանութեանն։

Զայսու ժամանակաւ քննութիւն իրաց միաբանութեանն վճարեալ էր ի Հռովմ, սակայն վերջին հաւանութիւնն տակաւին յապաղէր ի պատճառս պէսպէս նանրական գրպարտութեանց, զոր ունէք յիղելոցն ինքին ժամանակի ի Հռովմ անխիղճ ասայօղէին ի վերայ Մխիթարայ և միաբանութեան բանիւ և գրով, Չան ի մտի եդեալ մարդկօրէն խորհրդով՝ թէ հնար ինչ լցէ, անարգ՝ անպիտան և մերժելի ցուցանել զմիաբանութիւնն առաջի նոցա, Կարտինալաց ժողովոյն։ Մերթ ամբաստան ինէին զՄխիթարայ վարդապետէ, եթէ յանդգնեալ ասէ զանձնէ՝ ունել իշխանութիւն ազատ ի գահէն Հռովմայ. և թէ՝ ինքն և նորին աշակերտք առանց գպրութեան են, զուրկ յամենայն կարեւոր գիտութեանց, ուստի և առ ոչինչ պաշտօն հոգեւոր մշակութեան բաւական։ Զայսոսիկ և զայլ սոցին ասկի տարապարտ բանս գրէին առ ժողովն Կարտինալաց։

Իսկ Անդրեղոս Գաուլին արքեպիսկոպոս Կորնթոսի, յորոյ իթեմի էր և Մեթոն, ակնառուն Մխիթարայ վարդապետի, և սեղանակ ամենայնիւ հաստատէին զոսկի հանգամանաց միաբանութեանն, զրէր ասէպ ի Հռովմ մեծամեծ և պանծալի գովեստ վասն միաբանից։ Որպէս և ի նոմին ժամանակի՝ յորում քննութիւնն լինէր, առաւելապէս ապացուցիչ հանդերձ բազում գովաբանութեամբ զմիաբանութիւնն՝ գրառեալ թղթոց ժողովոյն, յոյս յանդիման նշանակեալ խոյսառակէր զգրպարտութիւնս թշնամեաց։ Զան որոյ և ժողովն հաստատ եղեալ ամենայնիւ թէ յօտար ազգեն ամենայն բանք սիրաւորութեանցն, մերժեաց զնոսա յերեսաց իւրոց։

Իսկ իբրեւ բանք եղեն՝ ունել զմի ի կանոնաց ծանուցելոց յընդհանրական եկեղեցւոջ, Մխիթար վարդապետ ընտրեաց խորհրդով երիցագոյն վարդապետաց իւրոց զկանոն արքոյն

Բենեդիկտոսի՝ իբրեւ արդէն ծանուցեալ յազգին Հայոց, և մասամբ ինչ թարգմանեալ եւս ի նախնեաց մերոց. մինաւանդ զի իւրում յառաջագիր նպատակին կարի դիպաւոր տեսանէր զայն. զի առանձէ փոյթ տանիլ և պարապիլ ի գտառիարտակութիւն մանկանց և պատանեաց, զոր և ինքն փութաջան կամօք հաստատեալ էր առնել։ Զ. ամն այսորիկ և միաբանութիւնն Արքայական անուամբ պատուեցաւ ի Գահէն Հռովմայ, և Մխիթար վարդապետն այնուհետեւ կոչեցաւ Արքահայր։

Արդ՝ ի հաստատել այսր ամենայնի ի ժողովոյն՝ հաւանեալ և Հայրապետին Կղեմայ ԺԱ. պատգամաւ կենդանի բարբառոյ, եռուն զամենայն ի ձեռս Յովհաննու վարդապետին. որոյ առանց այլ յապաղելոյ դարձ արարեալ՝ եհաս ողջամբ ի Մեթոն, յամին 1712, յանպայման ուրախութիւն ամենեցուն։ Ապա Մխիթար Արքահայր անցեալ փութանակի ի Նէապոլիս առ արքեպիսկոպոսն Կորնթոսի՝ կատարեաց զոր ինչ կամք էին ժողովոյն, և զարժանաւոր շնորհս մատուցեալ արքեպիսկոպոսին վասն այնչափ երախտեաց նորա, յամենայնի և միշտ սրտի մեջք պատապարան կալով միաբանութեան ընդդէմ ամբաստանողաց, դարձաւ անդրէն ի Մեթոն ի վանս իւր. և յետ կատարելոյ զամենայն կանոնական կարգաւորութիւնան, զրեաց գիր զուարթագին շնորհակալութեան առ Հայրապետն Կղեմէս՝ յաղագս հայրախնամ հովանաւորութեան նորա, և պարգեւացն՝ որ ի նմանէ։

Յաւելեալ այնուհետեւ Մխիթարայ յառաջին իւր ջանս վասակոց, զոր գործէր ընդարձակեալ սրտիւ, և անձանձրոյթ եռանդեամբ մարդել զաշակերտեալսն, և առնել զնոսա, ոչ միայն սրս բարեկիրթս՝ օտարացեալս յաշխարհաղրսս վարուց, այլ և ներհուն և խոհական վարդապետս, յարմարաւոր պաշտօնեայս աւետարանին՝ ի լուսաւորել զբմբռնեալսն ի խաւար կրկնակի տգիտութեան։ Եմին իրի տեսեալ նորա, զի որք միանգամ յաշակերտաց իւրոց աւարտեալ էին զուսումն փիլիսոփայութեան, չունին ի ձեռին՝ և ոչ իսկ յազգի մերում գոյր գտանել հեղինակ կատարեալ աստուածաբանութեան, խորհեցաւ յեղուլ ի Լատինէ ի մերս բարբառ գրոմանգակու-

թիւն աստուածպաշտութեան որոյն Թովմայի Ագուինեցւոյն, զնա ընտրելով ի միջոյ ամենայն աստուածպաշտից առաջնորդ և հեղինակ աստուածպաշտական ուսմանց դպրատան միաբանութեան իւրոյ, զոր և Թարգմանեաց աջակցութեամբ Յովհաննու վարդապետի, որ վարժեալ էր ի Լատին բարբառ։

Մինչդեռ միաբանութիւնն ի բարեբար ինամոց Տեառն յայսպիսի յաջողութիւնս վայելէր, և օր քան զօր ծաղկեալ բարգաւաճէր ի կրօնաւորական առաքինական վաստակս, և յանընդհատ հրահանգս գիտութեանց կարեւորաց առ յառաջադիմ վախճան նորա, ահա յեղուկարծիւ յանակնկալ ժամու դիր գուժաբեր հասանէր ի Պօլսոյ առ Աբրահայրն, եթէ ոմանք յուղղափառ կարգաւորաց՝ միտրանեալ զուր տարարարտուց ի թշնամութիւն ընդդէմ միաբանութեանն՝ և տուն ի տանէ շրջելով՝ զանբերելի չարիս ընուն զնմանէ յաւկանջս աշխարհականաց։ Եւ այնու ոչ շատացեալ, ելին առաջի Լատին եպիսկոպոսին, և պէտպէս սուտ ամբաստանութիւնս մատուցին նմա վասն միաբանութեանն, և յանուանէ վասն Հայր Եղիա վարդապետին, որ ի նմին ժամանակի անդ ի Պոլիս լինէր, եթէ բանս ինչ ընդդէմ ուղղափառ հաւատոյ խօսեալ ի՛ցէ։ և թէ՝ ի վարդապետութեան ներողութեանց չի՛ցէ ողջամիտ։ Իսկ եպիսկոպոսն առանց հարցանելոյ զամբաստանեալն, և առանց օրինաւոր քննութեամբ հաստատելոյ յայլոց ստուգութեան իրացն, վաղվաղակի գրով հաստատեցանէր զամբաստանութիւնն ի Հռովմ իբրեւ հաւատոյ։

Այս ամենայն յիրաւի տխրեցուցին զԱբրահայրն, տեսեալ՝ զի մինչ նորատունկ միաբանութիւն իւր հազիւ սկիզբն առնէր ծանօթանալ ժողովրդեան, և զարգասիս բարեաց երեւեցուցանել, հոյլք թշնամեաց ինքնագրդիռ ի վերոյ յարձակեալ՝ անդէն ի ծնին փութան հեղձուցանել զնա։ Սակայն յուսով աստուածային խնամոց երկայնամտեալ՝ ոչ խառնէր սրտիւ իւր ընդ նոր ինչ և անտեղեակ գործոց նախանձու ի սկզբանէ սերմանելոյ ի բանտարկուէն ի սիրտս մարդկան։ Բայց իբրեւ էառ ի Հռովմայ զգիր ժողովոյն, յորում պատուիրէր նմա յետս կոչել զՀայր Եղիա

վարդապետն՝ յաղագս նախագրեալ ամբաստանութեանն, ի սիրտ և ի հոգի խոցեցաւ ընդ ծանր զրպարտութիւն արդարոյն, որ աջ բազուկ էր նորա, և երկրորդ սիւն հաստատութեան միաբանութեանն։

Ոչ կամեցաւ առ ժամն զթշնամեացն յօդեալ շարախօսութիւնս իրաւացի բանիւք ուեղծանել, և արդարացուցանել զանմեղն, այլ լսատպարտամարտն իւրում հնազանդութեանն՝ զրեաց վաղվաղակի առ Հ. Եղիա վարդապետն, դարձ առնել փութանակի ի վանս. զոր և արար նա անդիմադարձ բաղութեամբ, թէպէտ և տեսանէր՝ մեծ անարգանս անձինն կրել, յետ քրոնաչան վաստակոց առաքելական մշակութեան՝ իբրեւ փոխան վարձուց՝ տարագիր եղանել անտի։ Ի հասանել Հայր Եղիայի վարդապետի ի վանս, յայնժամ ապա զրեաց Աբրահայրն առ ժողովն, ծանուցանելով զդարձ նորա ըստ հրամանի նոցա. միանգամայն և բաղում յայտնի անդիմադարձ ապացուցիւք առեալ եցոյց զամենայն բանս ամբաստանութեանց՝ որ զնմանէ։ Զոր և նա ինքն արքեպիսկոպոսն Կորնթոսի հզօր զրուածովք որ առ ժողովն՝ հաստատեաց, ակնարեալ եղեալ նոցա առաջի, եթէ լոկ զրպարտութիւնք են, ծնունդ նախանձու, որ ի մարդկային տկարութեան զօրանայ միշտ. յոր յաւել և զովութիւնս մեծամեծս զմիաբանութենէն։

Արդ՝ մինչդեռ միաբանութիւնն ի մարդասէր խնամոց Բարերարին՝ թեթեւացեալ ի տառապանաց աղքատութեան, և հանգուցեալ առ սուղ ինչ ի տարապարտ թշնամեաց՝ կայր յանդորրու, ունելով մինաւոր վայելուչ, և եկեղեցի գեղեցիկ, բազմաքիչ տառապանօք այն ինչ աւարտեալ. ընդ նմին և հաստատեալ բաւական ի պատշաճ պարէն միաբանութեան յերկուց գեօղից՝ յոգնակատակ երկամբք, և բազում ծախիւք մշակելոց ի հարցն, յաւելմամբ այգեաց և ձիթենեաց. զի միայն Հայր Ղազար գործակալն ետ տնկել երկու հազար ձիթենիս, որք նորոգ սկսեալ էին պտղաբերել։ Արդ՝ յայսմ բարութեան տակամ, մինչ հազիւ սկսեալ էր միաբանութիւնն բարեհամբաւեալ և պատուեալ ի համայն շրջակայ ազգաց, ահա յեզակարծումն ժամու չքինչ Լուսահաւոր մարտի Հապարացւոց

ընդդէմ Վենետկեցւոց առ ի թափել ի նոցանէ զՄօռա՝ համբաւի հարկանէր։ Զայն իբրեւ առուգութեամբ ծանեաւ Աբրահայրն յիշխանէ անտի երկրին, խռովեցաւ յանձն իւր՝ գիտելով զյոգնաթիւ բազմութիւն զօրաց Հաղարացւոց, որոց զդէմ ունել սակաւաթիւ բանակաց Վենետկեցւոց՝ դժուարին էր։ Վասն որոյ հոգայր և խորհէր, թէ զիարդ կամ ո՞ր մարթացի զվշտահար փոքրիկ հօտ իւր յաղմկէ անտի ապրեցուցանել։ Ապա ի խորհուրդ կոչեալ զառաջակայս իւր՝ միաբան հաստատեցին եկանել ի Մեթոնայ, և անցանել ի Վենետիկ յանմատոյց մայրաքաղաք։

Այլ քանզի ոմանք յաշակերտաց անտի իւրոց աւարտեալք զուսումն չեւ էին քահանայացեալ, փութացաւ նա ձեռնադրել զինն ի նոցանէ, որոց հասակ արդէն լրացեալ էր. և խնդրեաց զիր հրամանի յիշխանապետէն վասն իւր մեռեալն ընկերաց եկանել ի Մեթոնայ, և փոխադրիլ ի Վենետիկ։ Քանզի ամենեցուն միանգամայն եկանելոյ անտի ոչ տային հրաման, զի մի՛ առանց քահանայից մնասցէ բերդաքաղաքն. ընդ նմին ծանր էր և միաբանութեան այնպէս ճեպով գլխովին ամայի անտէրունչ թողուլ լքանել զեկեցին հանդերձ մենաստանաւն և ամենայն կալուածովք։ Մանաւանդ զի և պատերազմն չեւ էր սկսեալ, և մարթ էր թերեւս իրացն այլ ընդ այլոյ դառնալ, մինչեւ չլինել հարկ խոյս տալոյ։ Սակայն Աբրահայրն՝ որ ըստ իւրումն սովորական ամենազգաստ արթնութեան յառաջատես լինէր յամենայնի, փոյթ կալաւ յառաջագոյն գէթ կիսով չափ զանձինս միաբանութեան աներկեւան առնել, և յետ այնորիկ հնարս խորհիլ և յաղագս մնացելոց։ Ապա խորհուրդ արարեալ՝ որոշեաց բազում ցաւալ սրտի, թողուլ անդ ի պահպանութիւն վանաց զչորս քահանայս և զերիս եղբարս, որք ինքնայօժար նուիրեցին զանձինս առ աչս՝ կամակար յանձն առեալ զառաջիկայ վասանդ վասն սրբոյ հնազանդութեան, և վասն ընկերացն յապահովութեան։

Յետ այնորիկ ժողովեալ զամենայն միաբանս, խօսեցաւ առ նոսա բանս բազումս, հայրախնամ աղէ խորով գթութեամբ

յորդորեալ զՄեսրոպեալս կալ մեալ հնազանդութեամբ, եղբայրութեամբ, և անխառով խաղաղութեամբ ընդ միմեանս։

Եւ ապա առեալ զամենեսին՝ եմուտ յեկեղեցին. և ծունր եդեալ յաղօթս ընդ երկար յորդահոս արտասուօք, յանձն արար զանձն և զհօտ իւր փոքրիկ ի խնամս ամենագութ Փրկչին Յիսուսի, և ի հզօր պաշտպանութիւն Մօր նորա սուրբ Աստուածածնին, և ի բարեխօսութիւն սրբոյ Հօրն Անտոնի. և զորովալից խանդաղատանօք տուեալ մեսրոպ ընդ հրաժարական ողջունի՝ և զօրհնութիւն հայրական, մեկնեցաւ ի նոցանէ դառն արտասուօք, և եմուտ ի նաւ հանդերձ մեսրոպեանքն, և կարեւոր պաշարօք և կարասեօք, ունելով ի ձեռին դրամս ոչինչ աւելի քան զերկերիւր և յիսուն դահեկան և եթ։ Ելք նորա ի Մեթոնայ եղեւ յամին 1715, յամսեանն մարտի. կացեալ ի Մեթոն ընդ ամս երկոտասան. իսկ ամք միաբանութեան էին ԺԶ։

Այս երկրորդ չոր Աբրահօրն կարի դառնագոյն եղեւ նմա քան զառաջինն, և քան զմեկնիլ իւր ի հայրենի աշխարհէ իւրմէ, որպէս և ինքն խոստովան լինէր, թէ ի մանկութենէ իմմէ ոչ երբէք եղեւ նմա մեկնիլ ուստեք նոյնօրինակ ցաւալից արտասուօք, որպէս յորժամ հրաժարեցաւ յեկեղեցւոյ և ի վանաց իւրոց։ Քանզի այն ինչ հայրեւ սկսեալ էր խաղաղական հանգստեամբ վայելել զարդիւնս երկոտասանամեայ դառնաւիշտ տառապանաց, ահա յանկնին խորհրդոց տեսչութենէ Վերնոյն՝ յանկարծակի իմն ստիպեցաւ դարձեալ յառաջին թշուառութիւն անդր աղքատութեան անկանիլ հանդերձ վտարանդութեամբ զրկեալ յամենայնէ. և այնպէս թափուր և կաղապուտ և իբր մերկ՝ երթալ միտաւոր անձամբ յերկիր օտար, ուր ոչ տեղի բնակութեան, և ոչ պատրաստութիւն ի դարման կարեւոր պիտոյից կենաց՝ յառաջագոյն հոգացեալ ունէր։ Սակայն նա որպէս յամենայն անցս կենաց իւրոց՝ նոյնպէս և այժմ անդրդուելի յուսով ապաւինեալ ի խնամս Տեառն, և ի զօրաւոր պաշտպանութիւն Տիրամօր Կուսին, երթայր աներկեւան. վարեալ յաստուա-

ծային գաղտնի նախախնամութենէ, որ առ մեծագոյն բարիս առաջնորդէր նմա, զոր նա յայնժամ ոչ իմանայր, բայց յետոյ եռեռս և գոհացաւ. որ և աշխարհատես երեւեցաւ, և երեւի մինչեւ ցայսօր։

Յայսմ նաւարդութեան առանձին իմն խնամք Տեառն ցուցան ի վերայ նոցա. քանզի նաւն յոր մտին՝ էր իբր հարիւրեմեան հնացեալ և փտեալ. զոր ի սկզբան անդ ոչ Աբրահայրն, և ոչ այլ ոք յիւրոց գիտաց, բայց աստուածային ողորմութեամբ՝ ընդ բովանդակ ժամանակ ճանապարհորդութեան նոցա, ոչ երբէք գիպաւ հոգմ ստուգաշունչ, կամ փոթորիկ։ Ապա թէ ոչ՝ բնապէս անհնար էր խարխալեալ նաւուն այնմիկ զայնչափ ճանապարհ անվտանգ հատանել, որպէս յայտ եղեւ յետոյ. զի կամեցեալ նաւապետին միւսանգամ ճանապարհ առնել նովին նաւու, յաւուցին բաղխմանէ հոգմոյ՝ ապառապուռ քաքայեալ խորտակեցաւ։ Այլ ընդ բոլոր ընթացս ճանապարհի նոցա՝ միշտ քաղցր և յաջողակ հոգմ շնչէր, մինչեւ օգնականութեամբ պահապանողական աջոյ Բարձրելոյն՝ հասին անվտանգ ի Վենետիկ, ի սկիզբն ապրիլի, յամին 1715։ Եւ եկեալ ի քաղաք անդր՝ պատապարեցան ի վայելչագիր և ի պատշաճաւոր տան միում յարակից եկեղեցւոյ սրբոյն Մարտինոսի, կալեալ ի վարձու եօթանասուն և երկու գահեկանի ամ յամէ։

Յետ այնորիկ հարկ եղեւ ոչ սակաւ ծախս առնել վասն հանդերձից, միանգամայն և վասն կարեւոր կահուց և կարասեաց տան, որով սակաւ դրամք՝ որք մնացեալ էին ի ձեռին՝ ապառեցան, և անկաւ ընդ պարտեաց հարիւր և յիսուն տուգարից։ Ապա միջնորդութեամբ մեծամեծ Սեպհաց, բաշխեաց գիւրան ի հինգ եկեղեցիս քաղաքին պատարագել. իսկ ինքն Աբրահայրն պատարագէր զարհանապազ յեկեղեցւոջ անդր սրբոյն Մարտինոսի, և տրօք ողորմութեան պատարագացն հոգայր զօրաւորեալ պէտս իւրոցն։ Եւ այնպէս ի սեղանոյ Տեառն ընկալեալ զրաւականութիւն անձուկ պէտոյից, ուրախութեամբ զոհանային զնմանէ, և անխափան նահատակէին մուսդիր Չանիւ յուսումն գիտութեանց, և ի մշտաջան կրթութ-

թիւն սատուածահաճոյ կենաց, և մնային անձկանաք խել զելս պատերազմին Մօտայի։

Եւ ահա ինքեան ամի յամենեանն սեպտեմբերի հասին ի Մենթոնայ երկուք ի հարցն, Հայր Մանուէլն, և Հայր Թովմա, զերծուցեալ ընդ ինքեանս այլ եւս ինչ ինչ ի կարասեաց մենաստանին։ Իսկ Հայր Ղազար, և Հայր Յակոբ մնացին անդ, ընդ որս և եղբայր Մարկոս, և եղբայր Մկրտիչ։ Ապա զկնի բազում աւուրց եհան և յուր առնան Մենթոնայ, և որք անդ գտան՝ ոմանք ի սուր անկան, և այլք գերի վարեցան. հնչեաց համբաւ թէ երկու քահանայքն արտաքսեալ կուսակցեան յեկեղեցւոջ մենաստանին։ Այս գոյժ մահաբեր եղից անպատմելի ազով և տրտմութեամբ զանձինս միսիթարութեան, եւս առաւել զԱբրահամայն, մինչև յաստուածենէ սրտցաւութեան յախտ հիւանդութեան անկանիլ։

Ապա զկնի աւուրց բազմաց՝ ուր ուրեմն հաւատի տեղեկութեամբ գիտացին, թէ ողորմութեամբ Տեառն կենդանի են ամենեքին թողեալքն անտանտր. որոյ և ոգի առեալ՝ գոհացան զանապատ խնամոց Մարդասիրին, որ պահեալ էր զնոսա ի մատաղաւ վտանգաց։ Քանզի ի խուժել ի ներքս ի դղեակ անդր զօրացն Հապարացւոց, շրջեցին միսիթարքն ի միասին թաքեան յաստատաղ անդր սեղանատան վանացն, կալ անդ՝ մինչև սրտմտութիւն զօրաց զիջանիցի. և ապա մեղմով իմն ի յոյտ եկանիցեն, յանձն առեալք ի գերութիւն անկանիլ՝ և ոչ ի սուր։ Եւ լինի այնպէս. զի գտեալ զնոսա անդ՝ և խնայեալ թէ հայրազգի են նոքա, զերկուսն՝ այսինքն զՀայր Ղազար, և զՀայր Յակոբ տարեալ ի բանակն՝ վաճառեցին Հայոց 350 դահեկանի։ Իսկ որք գնեցին, տարեալ զնոսա ի Պոլիս՝ ընկալան վաճառ նոցա ի վարդապետ ընկերաց նոցա 450 դահեկան. և յետ ժամանակաց հասին նոքա ողջամբ ի Վենետիկ։

Այնպէս եղբայր Մկրտիչն ածեալ զերշոյն յԱզրիանուպոլիս, միջնորդութեամբ արանց բարեպաշտից ազատեցաւ փրկանաք, որպէս և եղբայր Մարկոս յետ առաւ անդ ձգելոյ ի գերշայն՝ հասեալ ի Պոլիս, փրկեցաւ ձեռամբ Հայր Գէորգ

վարդապետին։ Յառաջին խնամոց Բարերարին պարգևեցաւ անվնաս ազատութիւն նոցա ամենեցուն. վասն զի ոմանք յանկարկիւղ արանց ի Պոլիս եկեալ էին յուսկն եպարքոսին՝ հետախոյզ լինել ի Մեթոն Հայ քահանայից, և ի ձեռս բերել, որ ի մտանել անդր՝ հարցփորձ արար, այլ ոչ եգիտ։

Արդ՝ այնպէս անցեալ միաբանութեանն ընդ այսչափ չարաշչուկ մահառիթ վտանգս կրտաւեան, ի բարերար գթութեանցն խնամոց Փրկչին, և հզօր պաշտպանութեամբ օրհնաբանեալ Մօր նորա, ոչ ոք ի միաբանից կորեաւ։ Այլ ամենեքին ի թեւս աքանչելահրաշ նախախնամութեան Վերնոյն բարձեալ՝ բերան ողջանդամ ի Վենետիկ մայրաքաղաք, ուր համագումար միաբանական փառաւորութեամբ գոհացան ըզՏեառնէ։

Յետ այսր ամենայնի գիր առաքեաց Աբրահայրն ի Հռոմ առ Ժողովն, ծանուցանելով զամենայն նախագրեալ դառնութիւնս անցս, որք անցին ընդ միաբանութիւնն, ընդ նմին և զառաջիկայ տառապանս՝ յոր գտանէին յայնժամ, ի տուն օտարի պատսպարեալ հանդերձ դառն աղքատութեամբ։ Որում պատասխանի արար Ժողովն մեծաւ սրտցաւութեամբ կարեկցեալ միաբանութեան։ Եւ յետ այնորիկ գրեաց և այլ բազում անգամ բազում հոգւոյ բանիւք մխիթարութեան՝ քաջալերեալ սրտապընդելով հայրական գթովք զԱբրահայրն, չվհատիլ, չեռանիլ, այլ յուսով ամենազօր խնամոց Վերին Տեսչութեան պնդել զանձն իւր, և անխոնջ ջանիւ զհետ լինել առ իսառանալ ի Վենետիկ մենաւոր իրնակութիւն միաբանութեան։ Զնոյն գրէր և առ Պատրիարք Վենետկոյ, յանձն արարեալ զմիաբանութիւնն նորին խնամոց, լինել միշտ օգնական և ձեռնտու նմա առ այն, և առ այլ ամենայն կարիս նորա, որպէս զի ընդ հովանեաւ Տէրութեան Վենետկոյ՝ մարթասցի միաբանութիւնն խաղաղական կենաւք յառաջադէմ զարգանալ ի փառս Աստուծոյ և ի պարծանս Եկեղեցւոյ։

Յետ այսորիկ իբրեւ հասաւ ամենայն յոյս ակնկալութեան Աբրահօրն ի վանաց Մեթոնայ, ժողովեալ զմիաբանսն՝ խոր-

հուրգ կալաւ ընդ նոսա ստանալ վանս ի քաղաքի անդ։ Վասն որոյ սկսաւ այնուհետեւ յաճախել յայրքունիս Մերակուսին, ունելով ի ձեռին զվկայական գիրս յիշխանացն Մօտայի, որք ցուցանէին զարդիւնս և զիրաւունս միաբանութեան ընդունելի լինելոյ ի քաղաքի անդ։ Սակայն և այնպէս դժուարանայր ելք խնդրոյն։ Քանզի օրէնս ունէր Մերակոյսն, մի՛ եւս յաւելուլ ի Վէնէտիկ քաղաքի նոր կարգ կրօնի. բայց և զինդիր Աբրահօրն բացէ ի բաց մերժել ոչ կամէր Տէրութիւնն։ Վասն որոյ այսպիսի առաջարկութիւն արար միաբանութեանն.

„ Եթէ հաճիք սակ՝ արտաքոյ քաղաքիս ի ցամաքակողմանս
„ Տէրութեան մերոյ ունել վանս ի մշտնջենաւոր բնակութիւն
„ ձեզ և յաջորդաց ձերոց, տամք հրաման ստանալ ուր և
„ կամք իցեն ձեզ. իսկ եթէ ի քաղաքիս կամիցիք բնակիլ,
„ շնորհեմք միայն առ կենդանութեամբ ձերով առանց յա-
„ ջորդութեան, որպէս զի ի պակասիլ ձեր ամենեցուն, մե-
„ նարանն զարձցի անդրէն առ Տէրութիւնն։ „

Այս առաջարկութիւն ծանր և անօգուտ երեւեցաւ յաչս Աբրահօրն, վասն այնորիկ և ոչ զմի յերկուց անտի էառ յանձն։ Սակայն ի յոյս խնամոց Փրկչին, և ի բարեխօսութիւն մեծի պաշտպանի միաբանութեան Մօրն ողորմութեան ապաւինեալ՝ ոչ թուլացաւ ի պնդելոյ զհետ խնդրոյն, ակն ունելով՝ զի թէ ոչ ի քաղաքամիջի, գէթ ի շրջակայ կղզեաց անտի զմին ի ձեռս բերիցէ։ Յոյր սակս երեալ ի զննին կղզեացն, ընտրեաց զկղզին անուանեալ արբոյն Ղազարու, զի չափաւոր էր մեծութեամբ, և զատարկ ի բնակչաց։ Ունէր եկեղեցի, յանուն արբոյն Ղազարու բարեկամին Քրիստոսի, և բնակարանս ինչ հին և խաթարեալս, և պարտէզ մեծ։ Այնուհետեւ աշխատեցաւ զայն կղզի ստանալ, երթեւեկս առնելով առ դրուն մեծամեծաց, և յայրքունի ապարանս։ Մինչեւ ուր ուրեմն զիջեալ Մերակուսին յաղաչանս Աբրահօրն, յանձն արար երկուց իրաւագէտ սատուածաբանից խրոց քննել զիրան, զոր թէ գոցեն չլինել ընդդէմ եկեղեցական սահմանադրութեան քաղաքի խրոնանց, և ոչ խափանումն օգտից այլոց բազմութեան վանօրէից, ծանուցին ինքեան։ Իսկ նոքա

բազմօրեայ քննութեամբ հետազօտելով զահմանագրութիւնս միաբանութեան և զամենայն հանգամանս ապրելոյ նորա՝ եռուն պատասխանի թէ ոչինչ ընդդիմութիւն գտանեն յայսմ, որով և բարձան ամենայն խոչընդոտք։

Եւ այն ինչ յուսով մեծաւ մնայր Աբրահայրն ընդ հուպ ժառանգել զկղզին, որոյ վասն ամ մի ոգջոյն տառապեցաւ՝ ահա այլ իմն նոր տագնապ եհաս ի վերայ նորա։ Քանզի բանարկուն բարեատեաց, որ ի սկզբանէ անտի հիմնարկութեան միաբանութեանն, չարայաչող մխիթարք զկործանումն նորա մեքենայէր, գարձեալ գրգռեալ յարոյց ի Պօլիս զոմանս ի քահանայից բարենախանձ կարծեաք ի թշնամութիւն միաբանութեանն։ Որք և զՀատին եպիսկոպոսն՝ որ պարզամիտ ոմն էր, և բնաբոյս բարուց ազգի մերոյ անտեղեակ և անընտել յինքեանս ձգեալ, եռուն նեռ ի դիմաց իւրոց գրել, ոչ միայն յարեւելս ի զանազան քաղաքս առ միրաղնեայ ուղղափառ ժողովուրդս, այլ և ի Հռոմ առ ժողովել տարածման հաւատոյ՝ պէտքս զրպարտութիւնս զքարոզչաց միաբանութեանն, իբր այն՝ թէ այնչափ անուս և ոգէտ են նոքա, զի և առաջին սկզբանց քրիստոնէական վարդապետութեան չեն տեղեակ, և վարդապետս կոչեն զանձինս իւրեանց։ Եւ եւս՝ թէ Հ. Գէորգ վարդապետն՝ ոչ ընդունի և ոչ յարգէ զպատկերս սրբոց, և հպերէ զՀարդարեան, և զայլ սրբոցն իրս։ Զայսոսիկ և զայլ սոցին սոսկի բանս, որք ինքնին յանդիմանեն զարտութիւն իւրեանց, ստէպ գրէին թշնամիքն ի Հռոմ, յանտանելի ձանձրոյթ ժողովոյն։ Որոյ կամեցեալ տեղեակ լինել ամենայնի ճշմարտութեամբ, և զի չէր մարթ երթեւեկութեամբ թղթոց մերկանալ զամենայն քննելիս, ապէ արար Աբրահօր զկամս իւր, թէ ցանկայ անձամբ յանդիմանի լինելոյ նորա ի Հռոմ։

Այսպիսի հրաւէր ծանր էր Աբրահօրն յայնմ ժամանակի, յորում ինքն կայր ի հոգս և ի տառապանս վասն տանջելոյ ի Վենետիկ զանազի բնակութեան, և անդր պատապարելոյ զմիաբանութիւնն։ Սակայն ըստ ամենապատրաստ հնազանդութեան իւրում խոնարհեալ յանձնարկութիւն ժողովոյն՝

յանձն էառ գնալ ի Հռոմ անպատճառ, յանձն արարեալ զարգարութիւն իւր, և զառաջիկայ կարեւոր գործառնութիւնս ի յոյս խնամոց արդարադատ Դատաւորին։ Յայսմ վշտագին ժամանակի արար նա զերգն պաղատանաց առ տէրբ Հայր անուն. «Զքեզ տէրբ Հայր Անտոնիէ։ Որ ի վախճան իւրաքանչիւր տան յաւելու.

«Օգնեա՛ մեզ տէր Անտոնիէ,
Օրհնեա՛ զմեզ տէրբ Անտոնիէ,
Պահեա՛ զմեզ տէրբ Անտոնիէ,
Ի թշնամեաց պատերազմէ։»

Քանզի արդարեւ յամենայն դժուարութեանս անցս և ի գործս իւր զէն զօրութեան նորա ոչ այլ ինչ էր, բայց միայն կենդանի հաւատով ապաւինութիւն ի խնամս Փրկչին, ի պաշտպանութիւն Աստուածածնամօր Կուսին, և ի բարեխօսութիւն արդոյ Հօրն Անտոնի։ Միանգամայն և զգուշութիւն մեծ՝ զոր ինքն առնէր, և իւրոցն անդադար պատուիրէր, շատ իւիք իրօք պատճառս թշնամութեան ունէր։ Եւ օգնականութեամբ Տեառն միշտ յաղթող էլանէր ընդդէմ չարին յամենայն պատերազմունս։ Որպէս և այս անգամ, խնամօք Տեառն պանծագոյն եւս հանդիսացաւ երկնակրօն առաքինութիւն նորա։

Քանզի մինչ թշնամիքն յետ լարելոյ զորագայթս իւրեանց, խնճոյս ցնծութեան կազմէին ի Պոլիս, իբրեւ թէ այն ինչ ի վերջ հասեալ լցէ Արքայեան միաբանութիւնն, ահա ի նմին ժամանակի էլանէր հրամարակ ի Ծերակոյտ ժողովոյն Վենետկոյ, որով շնորհէր զցանկացեալ կղզին արդոյն Ղապարու ի մշտաջնջեալ բնակութիւն միաբանութեանն, յամին 1717, յամսեանն սեպտեմբերի, ի բարեպատեհ աւուր ութերորդի, յորում տօնախմբէ տէրբ Եկեղեցին զշնորհաբաշխ ծնունդ Աստուածածնին Կուսի, պաշտպանի միաբանութեանն։ Որ բարեպատեհ ասեմ, քանզի որպէս ի նմին աւուր հիմն արեալ միաբանութեանն ընդ խնամարկութեամբ նորին օրհնաբանեալ Տիրամօրն, և զարձեալ ի նմին աւուր հանօրէն միաբանք ի լրանալ տարւոյն զտան հաւաքեալ համախմբեալ ի դը-

զեռկն Մեթոնայ, զերծեալք և յապահովեալք ի գարանակոլ թշնամեաց։ Նոյնպէս ի նմին հրաշափառ աւուր մեծին հարքն ի մշանջենաւոր բնակութիւն կղզւոյն։ Որով և լցաւ խոստումն Տիրամօր սուրբ Աբրահայրն, թէ կատարեցից զխնդրուածս քո։ Յայնժամ ապա Աբրահայրն և համարէն միտրանք սկսան ի նմին աւուր իսկ և իսկ ընդ մտանելն ի կղզին՝ ոսնամամբել բերկրալի ցնծութեամբ զծնունդ մեծի Օգոստոսիրուհւոյն։

Իբրեւ մեծին Հարքն ի ժառանգութիւն կղզւոյն, վաղվաղակի ձեռն էարկ Մխիթար Աբրահայրն՝ ըստ ներելոյ անձկութեան առաջիկայ ժամանակին, խրամակարկառ առնել պնդացեալ և զիրթարուեալ բնակարանս կղզւոյն, ի պատշաճ բնակութիւն միաբանից։ Եւ անդ զեռեղեալ զնոսա, միանգամայն և զամենայն արտաքին և զստանին իրս յարդարեալ և անօրինեալ՝ յամին որ զկնի, այսինքն, 1718, յամենան մայիսի, ել ի հանապարհ երթալ ի Հռոմ, առեալ ընդ իւր զՀ. Յովհաննէս և զՀ. Գէորգ վարդապետս, ի պատասխանել և արդարացուցանել զմխիթարութիւնն ի տարապարտ սիրատանութեանց ոնոյ եղելոց զնմանէ, և առաձինն զՀ. Գէորգ վարդապետէ։ Եւ յամենան յունիսի հասեալ ի Հռոմ, զկնի աւուրց ինչ եմուտ ընդ դեսպանին Վենետկոյ ի յարգութիւն Հայրապետին, Կղէմէս ԺԱ., որ վից ամաց յառաջ եւս զհաւանութիւն իւր ի նորոգումն և ի հաստատութիւն միաբանութեանն։ Եւ Հայրապետն Հայրական զթասիրութեամբ ընկալեալ զԱբրահայրն, բանիւք բազմօք հարցփարձ արար կարեկցարար յաղագս ազգային անցից որք անցին ընդ միաբանութիւնն ի պատճառս պատերազմին Մօռայի։ միանգամայն և ուրախակցեալ ընդ նմա սակս առանալոյ վանս ի Վենետիկ, եհարց ապա զպատճառ գալստեան նորա ի Հռոմ, խոստանալով յամենայնի խնամարկել նմա, և զհայցուածս նորա կատարել։ Այլ նա առժամայն ինչ ոչ խօսեցաւ վասն իրաց իւրոց, բայց միայն բազում խնդրութեամբ շնորհս մատուցեալ յաղագս հայրապետութեանն՝ և միսիթարեալ յերեսաց նորա։

Ապա զկնի աւուրց՝ երկրորդ անգամ մտեալ առ Աբրահամն ընդ Սակրիբանդի Կարտինալին, խնամակալաւորի ազգին Հայոց

և միաբանութեանն, յայտ արար զպատճառս գալստեան իւրոյ, հանուրցուս իմն առաջի դնելով Սրբութեան նորա զգործս Լատին եպիսկոպոսին Պօլսոյ, որոյ ունկն մատուցեալ թշնամեաց միաբանութեանն, բազմադիմի բարուս շարախօսութեանց դրեաց առ ժողովն։ Զայն լուեալ Սրբազանին՝ զժդմնեցաւ յանձն ընդ անխորհուրդ գործս եպիսկոպոսին, և քաջալերեալ զնա մի՛ ինչ հոգալ, զի ես ասէ տաց հրաման զիւանդապրի ժողովոյն զամենայն զիրս ամբաստանութեանց զձէնջ՝ առանդել ի ձեռս քո, որոց պատասխանի արարեալ և տպագրեալ զայն, բաշխեցես Կարդինալաց, զի գիտակ լինիցին ամենայնի։ Մատուցես ասաց՝ և ինձ օրինակ մի, և ես յանձնեցից նոցա զդուշութեամբ քննել զիրաւունս ձեր ի ժողովի իւրեանց, և զամենայն մեքենայեալ դուք զրպարտութիւնս ի բաց ջնջել ի ձէնջ։

Ի վաղիւ անդր՝ առեալ Աբրահամ ի զիւանդապրէն զամենայն զիրս ամբաստանութեանց ձեռնամուխ եղեւ մի առ մի պատասխանի առնել։ Մինչ յայն գործ վատակէր Աբրահամայրն, բազում անգամ դէպ լինէր ի խօսել իւրում ընդ Սակրիբանդի Կարդինալին, բանս ի մէջ առնուլ յաղագս անհնթեթ զրպարտութեանց։ Առ որ ասէր Կարդինալն. «Այդ «ամենայն ոչ յստակաց, այլ յաղգէ քումմէ եղեն. բան «բանի գրոյն՝ Ազգ քո և քահանայապետք մատնեցին «զքեզ. և այն՝ ինքեան իսկ ուղղափառ քահանայից. վասն «այնորիկ տեղի գային, թէ ոչ իբր ամենայն իրաւք արժա«նահաւատք, զէթ իբր կասկածելիք. նմին իրի հարկ եղեւ «ընդ քննութեամբ արկանել զնոսա։ » Զայս ասէր Կարդինալն։

Այլ զինչ զարմանք զայսպիսիս յօդել նոցա և գրել ի հեռաւոր, ուր և ի ժամանակին, մինչ Աբրահամայրն ի Հռոմ լինէր, ունէաք ի Հայ քահանայից անդ եղելոց, գաղտագիր զիր ամբաստանութեան մատուցին զնմանէ առ Հայրապետն, իբր թէ նա նոր ժամակարգութիւն սահմանեալ ի՛չէ վասն իւրոյ միաբանութեան. զոր ի յիշել Հայրապետին միանգամ առ Աբրահամայրն, նա անդէն վաղվաղակի կարգն և պատեհ

սպասախանեաւ ցրեաց զանոտի ամբաստանութիւնն, որով և նանրացան դաղանի մեքենայք մատնողաց։

Ապա զկնի բազմօրեայ տքնութեանց կատարեաց Աբրահայրն զգիրս Ջատագովութեան, եդեալ ինեմն նախ՝ զամբաստանութիւնս հակառակորդաց. ապա մի առ մի ի քննութիւն առեալ զայնոսիկ, եւ առընթեր խրատանչիւրոց զատութիւն նոցա։ Յոր յաւելեալ և վկայական գիրս բազմաց երեւելի անձանց Հայոց և Լատինացւոց, եկեղեցականաց և աշխարհականաց, երաց զպատրուակ կեղծեալ բարեպաշտնախանձայուզութեան ամբաստանողաց, որով յայտ յանդիման մերկացաւ ոգի թշնամութեան նոցա։ Զոր տուեալ եկեղեցական վտատարանի յոճատենական յերիւրել ի բարբառ իտալական, և ապա ի տիպ արձանագրեալ՝ բաշխեաց մի մի Կարդինալաց։ Եւ զմի օրինակ մատոյց Հայրապետին ինքնին միայն մնալ առ նա, զոր նոյնժամայն առ փոքր մի ընթերցեալ նորա, հանեցաւ ընդ գրեալսն։ Եւ նա պատուէր Բաւլուչի Կարդինալին, զի և ինքն գայցի ի ժողովի անդ, որ հանդերձեալ էր լինել յաղագս երաց միաբանութեանն, և բազում բանս բարիս խօսեցեալ առ նա վասն միաբանութեանն, մեծաւ ջերմութեամբ յանձն արարն նմա թեամբով ուշ ունել երոցութեանց Աբրահօրն, զի արտաքինացի արդարութիւնն։

Իսկ ի գումարիլ ժողովոյն ըստ ստհմանեալ ժամանակին, կայր Աբրահայրն ընդ երկուս Հայց իւրոց յարտաքին սրահ անդր խորհրդարանին. ընդ որ յանցանել Կարդինալաց, խոնարհեալ ըստ սովորութեան՝ յանձն առնէր զիրս իւր։ Ապա իբրեւ ժամք շրջք ի վերայ անցանէին՝ վճարեալ նոցա զդատաստանն, ամենեքին յելանել արտաքս յատնէ անտի, աւետիս ուրախութեան տային նոցա՝ ասելով. Ուրախ լերուք, զի առէք զպատակ յաղթութեան։ Եւ նոյն ժամայն ազդ արարին Հայրապետին, եթէ արդարացան մինձունքն, և նանրացան ամենայն ամբաստանութիւնք թշնամեաց. ընդ որ ուրախ եղեւ նա։

Ապա զկնի սուրբ ինչ՝ ընկալաւ Աբրահայրն զգիր վճռոյ ժողովոյն, որոյ մակագիր այս է. Վճիռ ընդհանուր Սրբա-

զսև ժողովոյն յաղագս տարաժամեալ հուշատոյ. առեալ յաւուր 26 սեպտ. 1718։ Որով արդար և անարատ հանդիսացուցանէ զմխարանութիւնն, և յանուանէ՝ զՀայր Գէորգ վարապետն յամենայն տրատոյ ատյօգեալ ամբաստանութեանց։ Եւ տայ իշխանութիւն Աբրահօրն և նորին յաջորդաց ըստ իւրաքանչիւր ժամանակի՝ առաքել ի միանձանց իւրոց քարոզիչս ՅԱսիա, ըստ չորրորդ ուխտի իւրեանց, պայման եղեալ՝ զի առաքելիքն քննեսցին նախ յերկուց օտար առաջնորդաբան վարդապետաց առաջի առաքելական նուիրակին, որպէս սովորութիւն է քննել և զայլ առաքելական քարոզիչս։ Զայս հաստատեալ բանի Աբրահայրն ինքնին առաջադրեաց Կարդինալաց յաւելուլ ի վճռի անդ, առ որոակուր առնելոյ զամենայն բաղդատս թշնամեաց, զոր վեր ի վայր զայս յաւէտ զրպարտանէին զանձանց միաբանութեանն՝ եթէ ոչէր ոք են նոքա։ Եւ այսպէս թշնամութիւն հակառակորդաց՝ որով կարծէին նոքա սատանեցուցանել զմխարանութիւնն, առաւել հաստատեալ ամրացոյց զնոսա։ Զի որով զուն գործէին նսեմացուցանել, ունաւանդ թէ սպառապուռ եղծանել զարդիւնս վաստակոց միաբանութեան առաջի Հռովմէական սրբոյ Աթոռոյն, նոքին պանծացան եւս հանդիսացուցին, մինչև իրաւունս հաստատել սրբոյ Աթոռոյն շնորհել նմա զիշխանութիւն առաքելական քարոզիչս առաքելոյ։

Մինչ անդ էր, ոմանք ի Կարդինալաց, որոց ծանուցեալ էր նորայն ոգւոյն զօրութիւն, արժանաւոր գահակալութեան սրբոյ Աթոռոյն ասէին զնա։ Զոր սին յերևելի առաջնորդաց վանացն սրբոյն Հերոնիմոսի ի բերանոյ իսկ նոցա լուեալ պատմէր բազմաց։

Յետ այնորիկ ի վճռելի ամենայնի խնամաք Տեառն յաջողութեամբ՝ հանդերձեցաւ Աբրահայրն երանելի ի Հռովմայ. քանզի փութայր դարձ առնել ի վանս։ Այսն որոյ առեալ գիրսն մատեաւ ի համբոյր ոտից սուրբ Հայրապետին, այս վերջերորդ անգամ. և մեծաւ խոնարհութեամբ շնորհս մատուցեալ նմա՝ յաղագս հայրական քաղցրագութ խնամակալութեան, զոր միշտ և յամենայնի եցոյց ի վերայ իւր, և

ի վերայ միաբանութեան իւրոյ, ինդրեաց զօրհնութիւն նորա սուրբ՝ յառաջնորդութիւն առաջիկայ ճանապարհորդութեան իւրում։ Իսկ սուրբ Հայրապետին զթասիրութեամբ ողջունելով զնոսա, և բազում քաջալեր բանիւք մխիթարեալ՝ շնորհեաց Աբրահօրն ներողութիւնս հազար թուով՝ տալ քարոզչաց իւրոց յառաքելն զնոսա ի քարոզութիւն, բաշխել հաւատացելոց։ Եւ երկոտասան ձուլածու խաչս՝ հանդերձ լիակատար ներողութեամբ վասն հոգեխարաց։ Եւ ի վերայ այսոցիկ, հրամայեաց տալ նմա և նշխարս սրբոց, և մասն ինչ ի կենաց Փայտէն։ Եւ ինքն ձեռամբ իւրով շնորհեաց Աբրահօրն, և ընդ նմա եղելոց երկուց Հարց՝ մի մի արծաթի միտալս լիակատար ներողութեամբ։ Եւ այնպէս լի հոգեւորական պարգևաւք, և առատապէզ օրհնութեամբ, և փառաւորեալ անուամբ եղեալ ի Հռովմայ յամենայն դիկտ. հասին ողջամբ ի Վենետիկ՝ յուրախութիւն և ի ցնծութիւն համօրէն միաբանութեան։

Որքեւ եհաս Աբրահայրն ի վանս, զիւր սովորական գառուածաքիր զփոյթեռանդն ջանս անդրէն ի մէջ առեալ առ ի լաւէ ի լաւագոյնն զսա։ ՅԱստուծոյ հաւատացեալ հօրն փոքրիկ զարգացուցանելոյ, անընդհատ և անխոնջ աստուածային գրոց լուսաւոր վարդապետութեամբ ընդ կենաւորեր շաւիղ փրկական Խաչին առաջնորդէր նոցա ի կատարելութիւն առաքինական առաքինութեանց։ Եւ զի առաւել արդիւնարերք մինչին բանք վարդապետութեան իւրոյ, մատչէր բազում անգամ և ի գործ, պատճառս տալով նոցա ի խոնարհութիւն, ի համբերութիւն վշոց, ի հնազանդութիւն, ի մեռացումն ախտից, և ի զգալուն եւս անվնաս յոժարութեանց։ Հակէր արթնութեամբ ի վերայ մեր մեր ինչացանէ. և զիտէր և զնոսէր զամենայն զնոցս և զշարժմունս նոցա, թէ յարմէ՛ զչոց շարժին. և յինչ վախճան ունին ուղղեալ զգործս իւրեանց. և բան անցնելոյ կարօտութեանց զհոգեկիցս ոչ զարմանն մատուցանէր։ Եւ յառաջատեսս խորհրդով կամեցեալ ունել զառաջս ամենայն կատարեալ անկարգութեանց, հատանէր ի վերայ նոցա, ժամու և տարաժամու,

ի սենեկի և արտաքս, և զամենայն թեթեւ յանցմունս զվանական կանոնաք, և զսիրով ընկերին, ոչ թողոյր անպատիժ ըստ արժանեաց յանցուածոյն, զիտելով՝ զի ի զանցառութենէ փոքունց, առ փոքր փոքր ի մեծամեծս լինի անկումն։ Եւ այնպէս զառաքելոյ զպատուէր, որ առ առաջնորդս հոգւոց ի գործ արկեալ՝ խրատէր, սատէր յանդիմանէր, մխիթարէր և արգահատէր՝ յամենայնի յայտնիկ մի միայն առաջադիր նպատակ ունելով զուղղութիւն և զբարութիւն խրատչիւրոց։

Սովորութիւն էր նորա՝ զբեթէ յամենայն իրաց գիպելոց պատճառս առնուլ բանս կենաց խօսելոյ, առ յորդորամիտս զիւրան առնել ի կրթութիւն առաքելութեան, և անընդհատ զարծարծ սիրոյն Աստուծոյ ի սիրտս նոցա բորբոքել։ Եւ երբեմն յեղակարծս ի վերայ հասանէր, յորժամ երկու կամ երեք ժողովեալ էին ի խօսս, սեռանել թէ զինչ խօսիցին. եթէ զրոյցք նոցա էին զբարեաց և զպատշաճաւորաց, նա յաւելոյր ի նոյն զեռ լաւագոյնս։ Իսկ եթէ զընդունայն իրաց էին, կարճէր վաղվաղակի՝ ի շահաւէտն և յոգուտսն դարձուցանելով, զի մի սնոտի իրօք զբաղեցուցեալ զմիտս, ի կարեւորացն պակասացին։ Եւ միանգամայն ասել՝ անընդհատ և անապատ էր նորայն խնամք, փոյթ և վաստակ առհասարակ ի վերայ ամենեցուն, ոչ միայն քահանայից, այլ և ի վերայ նորընծայից և մանկագունից. որոց թէպէտ կարգեալ էր հոգեւոր դաստիարակս, սակայն և զնոցայն գործ ըստ առաւել մասին ինքն անձամբ վճարէր, ասէպ այս առնելով նոցա, և զսիրտս և զմտաւորս նոցա քննելով։ Յայն եւեթ աշխատէր անդուլ, բանիւ, և առաւել օրանշելի հոգեկիր վարուց իւրոց օրինակաւ, զի իւրքն մերկացեալ ի սիրոյ ամենայն ըղձալեաց կենցաղականացս, և մէն միայն ի Քրիստոս Յիսուս անքակ միաւորութեամբ սիրոյ յօդեալ՝ զուարթամիտ ամենայն նեղութեանց վասն սիրոյ նորա, լինիցին մեռեալ յաշխարհի, և կենդանիք ի Քրիստոս, հրեշտակային երկնակենցաղ կեանս վարելով ի յերկրի։

Ահա այս էր նորայն ասասուածուսոյց մեռեալութեանն տա-

բազ. զի զփոքր ինչ առաքինութիւն, կամ գործ աստուածա-
հաճոյ՝ զեր ի վերոյ դասէր քան զամենայն մեծագործութիւնս
աշխարհի, և շնորհաք Տեառն ամենայն վաստակք նորա ի վե-
րոյ իւրոցն ընդունայն ոչ լինէին։ Քանզի նոքա կենդանի
հաւատով զՔրիստոս ի մեծաւորն իւրեանց տեսանէին. վասն
որոյ իբրեւ ինքեանց աստուածային բերանոյ ընկալեալ սրտի
մտաք զամենայն հրահանգս և զխրատս՝ զօրէն արդաւանդ
երկրի, բիւրաբեղուն արդասիս աւետարանական կատարե-
լութեանց պտղաբեր լինէին յանձինս իւրեանց։ Երկիւղածք
էին, խոնարհք, հլու հպատակք յամենայնի միամտութեամբ,
անմեղք և աղքատութեան սիրողք, զուարթամիտ կրելով
զանձկութիւն շքաւորութեան։ Եղբայրասէրք, ի կարիս
միմեանց փութաջանք, համաշունչք և միակամք, կարեկիցք
իրերաց։ Անկեղծք էին, բարեբարոյք, պարկեշտք, զգաստք
և զգուշաւորք ի բանս և ի գործս։ Յաշխարհական տեսարա-
նաց հեռի էին նոքա. ոչ երբէք տեսաւ ոք ի նոցանէ ի հրա-
պարակս իջանին քաղաքական խաղուց, որ կարի յաճախ էր
ի Վենետիկ քաղաքի, և հանապազորդ։ Եւ ոչ ի փողոցս
դատարկաշրջիկ առանց կարեւոր գործոց, կամ յընդունայ-
նաբանութիւն ընդ աշխարհիկս յամել։ Զայսպիսի համեստ
զգուշաւոր և առաքինազարդ գնացս հարցն նկատեալ ժողո-
վրդեան, զարմանային, գովէին, և բարեհամբաւէին զնոսա
եկեղեցականք և աշխարհականք՝ ճշմարիտ կրօնաւորս կոչե-
լով զնոսա։

Ընդ այլ աւետարանական կատարելութիւնս՝ ոքանչելի էր
փոյթ մեծի Աբրային նա և ի բարերարութեանն առ թշնա-
միս։ Քանզի նա զփրկչականն անյիշաչարութեան զերկրպա-
գելի օրինակ ունելով ի հոգի իւր տպայեալ, ի նոյն և
զիւրսն կրթել գուն գործէր։ Յարաժամ խրատելով յաղթել
չարեաց՝ ոչ չարեօք, այլ բարեաւ, խոնարհութեամբ, հեզու-
թեամբ, քաղցրութեամբ, և մանաւանդ բարերարութեամբ։
Որպէս արար ինքն զամենայն կենանս իւր. զի ի բազում
զրպարտս հակառակութիւնս այլոց, եթէ հարկ իրացն պա-
հանջէր՝ վրէժխնդրութիւն իւր էր միայն ցուցանել զանմեղու-

թիւն իւր, առանց խայտառակելոյ զհակառակորդսն, զոր և կարող էր առնել, եթէ կամէր։ Իսկ ուր հարկ ոչ լինէր ջատագովութեան, լռութեամբ անցուցանէր, և արդեամբք բարիս հատուցանէր։ Որով զեռանդն յաշխարհաց իւրոց ցաւուցանէր, և զբազումս յանողոքելի և յանհաշտ թշնամեաց զդատացուցեալ, ածէր ի զեղջ և յապաշաւ ի տարապարտ թշնամութենէ անտի։

Որպէս ի բազմաց՝ զմիոյ եւեթ պատմեցուք. որոյ անհաշտ թշնամութիւն կրելով ի սրտի ընդ միաբանութիւնն, բազում հակառակութիւնս արարեալ էր ընդդէմ Աբրահամայ, ընդդէմ հարց միաբանութեանն յարեւելս։ Սա եկեալ ի Վէնէտիկ՝ եդաւ ըստ սովորութեան քաղաքին՝ ի քառասնօրեայ արգելանաց տեղին զգուշութեան, որ մօտ է վանաց միաբանութեան։ Իբրեւ ազդ եղեւ գալուստ նորա Աբրահամայ, վազվազակի առաքեաց նմա մահիճս հանդերձ ամենայն կազմուածովք, և զայլ կարեւոր կարասիս։ Եւ ընդ քառասուն աւուրս բազում անգամ յղէր նմա և կերակուրս և միրգս. այլ և անձամբ գնայր նմա յայցելութիւն միանգամ և երկիցս։ Զայս ամենայն տեսեալ առն՝ հիանայր, և ասէր ի միտս իւր. «Ապաքէն գիտակ են «զոքա թէ քանի՛ չարիս արարեալ է իմ դոցա. զիւրդ ապա «այսչափ գութ և խնամարկութիւն ցուցանեն առ իս։ Աբ- «դարեւ ապա են ճշմարիտ աշակերտք Աւետարանին Քրիս- «տոսի, որք առաքելականներք, մարդիկ անոխակալք, որք «բարիս ընդ չարեաց փոխարինեն։» Եւ այնուհետեւ ապաշաւեալ յանպատճառ թշնամութենէ անտի՝ զարձաւ ի բարեկամութիւն, և եղեւ մի ի նախանձաւոր Ջատագովաց միաբանութեանն։

Զէ մարթ բանիւ կամ գրով արտայայտել զմեծ փոյթ՝ և զգորով սիրոյ, որով վառեալ էր Մխիթար Աբրահայրն ի բարութիւն ազգին՝ անխնայաբար տալով զանձն յաշխատանս։ Որպէս ինքնին վկայէ յաւարտ յիշատակարանի աստուածաշունչ գրոց, առ ի նմանէ յոգնաշխատ երկամբքն ապագրելոյ. «Եւ ես, ասէ, ջանալով հետեւիլ հետոց առաքելոյն, որքան «կարեմ, և որչափ կենդանի եմ, ջանամ աշխատիլ վասն

«հոգեւորի օգտի և շահաւէտութեան ազգին իմոյ. թէ և
«երբեմն վասն ճշմարտութեան հաւատոյ իցեմ յոմանց ի՛նա-
«ցանէ խոտեցեալ, և կամ միշտ խոտիցիմ։ Վասն որոյ
«ո՛յք և իցեն որք զինէն խորհին, և կամ ընդ ընկերս իւրեանց
«խօսին, զայս եւեթ ծանիցեն։ Զի թէպէտ սիրեմ զազգն
«իմ, և զաշխատիլն վասն օգտի նորա, բայց այնու սիրան
«իմ ի յուղղութեան դաւանութենէ հաւատոյ սրբոյ եկեղեցւոյն
«Հռովմայ ոչ երբէք մեղկանայ։ Եւ հակադարձաբար՝ թէ-
«պէտ ըստ ամենայնի ստորարկեալ եմ և ստորարկանեմ
«զիս միշտ ի նեղքոյ հնազանդութեան գահին Հռովմայ, ըստ
«որում և Հայրն մեր սուրբն Գրիգորիոս Լուսաւորիչն ինձ
«օրինակ կայ, բայց այնու սէրն իմ և Ջան աշխատանաց
«առ օգուտն ազգին իմոյ (թէ և զիս վասն այսպիսւոյ հնա-
«զանդութեան քամահիցէ,) ոչ երբէք թուլանայ։» Զհետ
երթեալ՝ որպէս ասէ՝ սիրելի օրինակի ստուգածային ա-
ռաքելոյ, որ սակս հաճոյանալոյ ազգին իւրոյ՝ ոչ դադարէր
ի քարոզելոյ զՔրիստոս. և ոչ՝ քարոզելովն անտես առնէր
զազգ իւր, թէպէտ բիւր չարիս կրէր ի նոցանէ. բայց
և այնպէս յարաժամ ազէկիզէր ընդ կուրութիւն նոցա,
մինչեւ ցանկալ նզով լինել ի Քրիստոսէ վասն եղբարց և
ազգականացն։

Զնոյն ազէկաւոր սրտցաւութիւն կրէր յարաժամ և Մխի-
թար Աբրահայրն ընդ ողբալի թշուառութիւն ազգին առ
իւրովք ժամանակաք, զոր քաջ գիտեն տեղեակքն պատմու-
թեան այնր գարու. և յիրաւի համարին զայն, ժամանակ
երկաթի վասն ազգիս. զի տգիտութեան առագաստ պատեալ
պաշարեալ կայր, սակս նուազելոյ ի նոսա յերկուց կողմանց՝
հոգեկիր, առաքինասէր, և խնամտուն հովուաց, և յանախե-
լոյ անկիրթ, անհրահանգ, անուսումն մանկանց, որք հազիւ
քանի մի բանս հատակատոր խառնաշփոթ ուսեալ, իսկ
ի հոգեւորական կրթութենէ խոտոր վերջացեալ, վաղվաղակի
զվարդապետի և զառաքելական քարոզչի թեկն ածէին։ Եւ
այնպէս առ թանձր տգիտութեան իւրեանց՝ այնպէս ինքնա-
հնար և օտար ուսմամբք խանգարեցին զազգն, բազմադիմի

ողճատանս և զեղծմունս մուծեալ ի վարդապետութիւնս հաւատոյ, և ի վարս և ի բարս մերազնէից։ Զայսպիսի արտասուաց արժանի աղէտս ազգին ոչ ժուժելով տանիլ Մխիթարայ Արբայի, գուն գործէր վերին օգնականութեամբ դարման մատուցանել՝ որչափ ինչ ձեռնհաս էր։ Վասն որոյ զամենայն ճիգն անձին ի կիր արկեալ, փութայր հանել ընտիր քարոզիչս, առաքելանման խաչագրեացս, բազմամեան հրահանգութեամբ կրթեալս և վարժեալս ինամանէ ի վարս առաքինութեան, և յաստուածային՝ որպէս և յայլ ամենայն գիտութեանց կարեւորաց հմտութիւնս, և սիրել զնոսա ի գաւառս գաւառս Հայաստան աշխարհի, որպէս ի կողմանս արեւմտեայց՝ ուր ուրեք գտանէին յազգէս մերմէ։ Եւ ողորմութեամբ Տեառն վաստակք նորա ոչ եղանէին ի դերեւ՝ անբեր և անարդիւն։ Քանզի նոքա ապառաջինեալ գինու կամակար անձնանուէր հնազանդութեան, և զանազան զգուշացուցիչ կարեւոր պատուիրանաք Արբահօրն, ընթանային առաքելաբար անքաւակ, անմախաղ, և անցուպ՝ ընդ ո՛ր կոյս հրաման առաքչին ուղղէր զնոսա. որ և զչափ ժամանակի քարոզութեան սահմանադրէր նոցա։ Եւ Աստուած՝ որ մեծն է ողորմութեամբ, մեծամեծ և աքանչելի ուղղութիւն գործէր ի ձեռն նոցա յազգի մերում, որպէս և տեսանի ի վկայական գիրս մերոց և օտարոց։

Սակայն անշինջանելի եռանդն ազգասիրութեան Արբահօրն այսու ոչ շատանայր. քանզի տեսանէր զազգն ի սիւռս տրածեալ, և քարոզիչք առ համեմատութեամբ ընդարձակութեան ազգին սակաւ քան թէ բաւական, որոց չէր հնար ընդ ամենայն տեղիս հասանել։ Միանգամայն և բազում անգամ ի բազում տեղիս՝ ի տագրելոյ սատանայի, որ խեւայր մոխանոք ընդ այնպիսի ցանկալի ուղղութիւնս ազգին, որով մեծապայծառ փառաւորէր անունն Աստուծոյ, ընդառաջ լինէին մեծամեծ և դժնդակ խռչք և արգելք ոտից առաքելաշնորհ քարոզչաց՝ առ ի չգործել ժամանելոյ՝ ուր գէմ եղեալ էր նոցա, և ուր առաւելագոյն կարօտութիւնն ստիպէր։ Եւ ոչ այսմիայն, այլ և իսպառ հատանելոյ յամենայն տեղեաց զսա առեալս.

բանչացն բարութեան, և խափանելոյ յազգէս զառ ի նոցանէ առատացեալ հոգեւորական արդասիս բարեաց, ոչ գոգաբերէր բանաբերուն չարասէր, և ի տեղեացն իսկ՝ ուր հասանէին, հալածականս զնոսա առնել ի ձեռն արբանեկաց իւրոց, է՝ զի սպառնալիւք տանջանաց և մահու, և է՝ զի նախանձու սուտ եղբարց։ Որով թէ քանի վիշտս, տառապանս, զրպարտութիւնս, այլ և բանս և կապանս իսկ կրեալ են Հարքն, ահա գրեալ կայ ի ժամանակագրութեան միտքանութեանն։ Այլ հոգեհանճար Աբրահայրն ի դարմանս այսմ մեծի վշտաւոր, և ի ցրել զչարիմաց խորհուրդ ստատանոյի, զոչ իմն հնարս խորհեցաւ. փոյթ կալաւ յոդնաջան երկամիտք, և ծանր ծանր ծախսս զոսպագրութիւն հաստատել ի միտքանութեան իւրում, որով պէտպէս գիրս հոգեշահս ի լոյս էած. որք ընդ ամենայն տեղիս անարգել հասանելով՝ ընտրեն անթերի, մանաւանդ թէ յաւելուածով, զպակասութիւն աւետարանական քարոզչաց։ Զի ուր չէր նոցա հնար մուտ գտանել, գրեանք նորա աներկիւղ և անխափան հասանէին։ Եւ առ յորդորմիտս առնելոյ զազգն ի մտադիր ընթերցասիրութիւն, հոգացաւ և զգրոց բարբառս զխանգարեալն և զնեղծեալն, և գրեր թէ զթաղեալն ի վեր հանել, և նոր նորոգել՝ ըստ մարթելոյ այնր առաջիկայ ժամանակին, զկարեւոր գործս առ այն հնարելով, զքերականութիւն ասեմ, և զբառարան։

Եւ թէպէտ ի քերականութեան, որպէս և յընթացս այլոց իւրոց գրուածոց, երեւի յիրս յիրս ինչ շնչեալ ի շաւղէ նախնեաց ընիկ հայկաբանութեան, յոր ի մանկութենէ սնեալ և վարժեալ էր յարաժամ ի գիրս նոցա թարթափելով, այլ պարագայք ժամանակին ի նոյն բռնադատեցին զնա։ Քանզի կարծեցեալ իմաստուն՝ ուսեալք վեր ի վերոյ զԼատինացւոցն քերականութիւն, զոյն կարծեցին անվթար կանոն ամենայն ազգաց և լեզուաց. ուստի զամենայն գրուածս՝ զոր արտաքոյ այնց կանոնաց ուսանէին, ընդդահկէին իբրեւ թիւրեալս յուղղութենէ. և անտի է, զի պատուական մատեանք նախնեաց մերոց ընդ այն ժամանակս ի հող և ի փոշի ընկեցիկք՝ հեծէին իբր անպիտանք։ Եմին իբրեւ Աբրահամն ունչս առնէին։

բերանալիր տոգէտ համբաւելով զնա, և զնորայն։ Ոչ էր նոցա ծանուցեալ բնաձիր յաջողակ ուշիմութիւն նորա, և մեծաջան անընդհատ մտավարժութիւնն՝ հանդերձ ջերմ աղօթիւք, որով ընկալեալ զվերնապարգեւ օգնականութիւնն, զտաւ ոչ միայն բաւական, այլ և զերազանց յամենայնի։ Ապա կամեցեալ նորա և զայս ազգիւր ամբաստանութեան խնուլ, արար զքերականութիւն բաղում խոհականութեամբ յարմարեալ կամաց նոցա, որով և լուեցոյց զնոսա. բայց միանգամայն յորդորեաց նոսին շաւիղ արահետ ժամանելոյ ի հարազատ հայկաբանութիւն։ Քանզի այնչափ էր նորա զգուշութիւն և արթնութիւն առ ի շտալ խիք պատճառս հակառակորդաց՝ յորոց միջի կայր պաշարեալ, մինչև բաղում անգամ զբաղում պատշաճաւորք մանաւանդ թէ երբեմն և զկարեւորք զանց առնել, որ և բազմաց իւրոց իսկ աշակերտաց՝ որք ոչ գիտէին զնեղքին պատճառն, աւելորդ ինն զգուշութիւն թուէր։ Բայց որք խելամուտ էին պարագայից ժամանակին, և տեղեակ հանգամանաց ազգին, գործ մեծի իմաստութեան համարէին. որպէս յետոյ և ելք իրացն յայտ յանդիման ստուգէին։ Ահա յայսպիսի խոհեմական զգուշաւորութենէ սովորեցաւ առնել և զայս, զառաքելոյ զկենաբեր խրատս յանձին բերեալ, երբեմն և ի պատշաճաւորաց հրաժարել, յորմէ մարթ իցէ եղբօր գթել կամ տկարանալ։

Բայց հանդերձ այսու ամենայնիւ, ոչ շատացաւ նորա մշտավաս տենչից բերումն ի բարութիւն ազգին. քանզի կամեցեալ և ըստ քաղաքական մասին ուղղել և յարդարել զազգն մեր՝ յանօար իվայելուչ և ի զգօնաւոր կեանս, զկնի հոգեկեցոյց զբաւոր երկասիրութեանց իւրոց, որ էր առաջին և նախադիտեալ ճան իւրոց վաստակոց, ըստ որում հոգի առաւել է քան զմարմին, ձեռն էարկ ընծայել ազգին և ուսումնական գիրս պիտանիս և կենցաղօգուտս արտաքին գիտութեանց կարեւորաց մարդկութեան, իբր զի ըստ տեսչութեանն բանի՝ զոյն արժան է առնել, բայց և զայս չթողուլ՝ տակաւ մեծի կարօտութեան ազգին, զորոյ զկատարումն առ ժամն չունէր ազգն այլուստ ակն ունել։ Թուղ զի ար-

տաքին գիտութիւնք՝ եթէ ողջախոհ մտօք ի կիր արկանիցին, մեծապէս առաջնորդեն առ հոգեւորականն և յաստուածային։

Արդ՝ յայս ամենայն հայեցեալ Աբրահօրն արթնամիտ խորհրդականութեամբ սկիզբն արար և արտաքին կարեւոր հրահանգից գիրս ի լոյս հանել, զյառաջադիմութիւնն և զկատարումն ի յաջորդս իւր ապատան արարեալ։ Զոր նմին, իրի և մեք չան ի մտի եդեալ՝ զուն գործեմք ըստ կարի ի ձեռն բարերար խնամոց Վերին տեսչութեան օր քան զօր ծաղկեցուցանել, ոչ ուրոյն զմին կամ զմիւսն, այլ զերկոսին միանգամայն. բայց միշտ նախապատիւ ունելով զհոգեւորականն։ Եւ այնպէս երկոքումբք իրր երկու թեւօք առաջնորդել մերազնեայց ի վախճան երջանկութեան։ Եւ արդիւնք այսպիսի վաստակոց՝ բացափայլ երեւին, որոց խնամօք ուշ դնիցեն արդի հանդամանաց ազգին, առ համեմատութեամբ հանգամանացն անցելոց դարուց։

Իսկ գրեանք՝ զորս նա ինքն հոգացաւ ի լոյս ընծայել տպագրութեամբ և աշխատասիրութեամբ, այսոքիկ են. Թովմայ Գնունեաց. Կիրոբիոսի աղօթից. Առաքելոցաց, և Մոլոքեանց. Այպերտ. Փերակաւորի. Ասորաժաղովոյ. Մեկնութիւն Մատթէոսի Աշտարակցւոյ. Բառգիրք, և այլք։ Բաց ի տպագրելոցն՝ եթող և զայլ գրուածս, զհոգեւորական մատուցութիւնս, զկանոնս վանականս, այլ և զհամառօտ բացատրութիւն դժուարին բանից բովանդակ Ասորաժաղովն զրոց։ Անձանձրոյթ երկայնութիւն նորա թողեալ էր արդարեւ զայլ եւս բազմահատոր մատեանս, ոչ ինչ հայեցեալ յանբաւ զրաղանս առաջնորդութեանն ինքնին և յարտաքինս։ բայց ինքնին բերանով ասէր աշակերտաց իւրոց, թէ փոյթ մեծ է ինձ երեւեցուցանել և բազմացուցանել զմատեանս կենդանիս՝ զարս ուսումնական, որք բանիւ և գրով կարողք լինիցին երկայնել առաւել եւս քան զիս։ Յայս ուշ եդեալ նորա, անխոնջ երկայնմտութեամբ պարապէր ինքնին դատ ասել Փիլիսոփայութեան և Աստուածաբանութեան։

Մեծ էր յոյս, և անդրդուելի ապաւինութիւն Մխիթարայ

Աբրայի ի նախախնամութիւն աստուածային, զոր միշտ և յամենայնի ունելով առաջի աչաց հոգւոյն տեսութեան, ի համայն գործս ի մեծամեծս և ի մանունս, յորս հարկն բնադատէր զնա ձեռն արկանել վասն փոխացն Աստուծոյ, ի նմանէ մեայր ներկեալն յուսով, զկարեւոր պէտս ի կատարումն գործոյն ընդունել։ Եւ ընդունէր աստուգապէս, որով և անվրէպ զգործն հանէր ի գլուխ, որպէս տեսաք ցայսմ վայր, և սատ ակն յայտնի ունիմք տեսանել։ Քանզի հարկ աննահանջելի սոխպէր զնա ձեռնարկել ի շինութիւն նոր մենաստանի անդատին ի հիմանց. զի անեակք՝ որք յառաջին ամն ի հնացեալ և ի խարխալեալ շինուած անդր վեր ի վերոյ ձեւացուցեալ շինեցան, չէին բաւական ի պատապարութիւն անձանց միաբանութեան, որք լսատ օրէ խնամաքն Տեառն բազմանային. թոյզ զի առ կարի հնութեանն, կարօտ էին անդադար նորոգութեան։ Իսկ ինքն կայր պաշարեալ անձուկ աղքատութեամբ. և գործն զոր խոհէր՝ մեծ և բազմագումար զրամոց կարօտ։

Այլ զի գործ Տեառն էր, առ պաշտօն նորա, և առ հոգւոց բաղմաց փրկութիւն կարգեալ, նմին իրի անեղծիւ փոխութեամբ զյոյս սրտին ի նորայն բարերար խնամս հաստատեալ՝ մեկնաւ ի գործ, յօրինեալ իւրով հանճարեղ ճարտարութեամբ զնախագաղափար կառուցանելի մենաստանին։ Ապա ի յաջողելոյ Տեառն ի պատեհ ժամու սկիզբն արար մեր մասին, կամ թեւոյ մենաստանին, և այնպէս լսատ ունուսելոյ նմա ի տեսչութենէ Վերնոյն զբաւականութիւն, յառաջացուցեալ զկնի ամոյ՝ օգնականութեամբ նորա բովանդակեալ կատարեաց ի գլուխ զմենաստանն բոլոր մասամբք, հանապազօրեայ քրտնջան վերակացութեամբ իւրով ի վերայ գործակարաց, զի մի ի նախագիծ օրինակէն իւրք շեղեալ վրիպեցին։ Եւ միանգամայն ի նմին ժամանակի ի գրաւոր երկասիրութիւն նահատակէր՝ յօրինելով զլուսաւոր մեկնութիւն աւետարանին որ լսատ Մատթէոսի. թոյզ զնելոքին և զարտաքին ունեւորութիւն միաբանութեան։ Քանզի ընդարձակութիւն սրտի նորա, և մտաց և խորհրդոց անչափութ

հանդարտութիւն, ամենայնի այսոցիկ բաւական առնէր զնա։

Ապա ի կատարել շինուածոյ մենաստանին յանվին 1740, համբրէն մատամբք հաւատաւոր և վայելուչ, այնուհետեւ բազումք ի մեծամեծաց քաղաքին Վենետկոյ, որպէս և եկք օտարք, ընդ որս և ճարտարապետք ոմանք եկեալ ի զննին, և հաճեալ հաւանեալ ընդ գեղեցկայարմար համեմատութիւն, և ընդ զուարթարար պայծառութիւն նորա, գովէին զհանճար և զճարտարութիւն Աբրահօրն, մինչեւ եղեւ ոմանց մեծարուանձանց ասիպել զնա՝ կանգնել ուրեք յերեւելի տեղւոջ մենաստանին իւր արձան առ ի յիշատակ։ Այլ այս, որպէս և այլ ամենայն այսպիսի գովութիւնք, իբր ծաղր իմն և ողբական բժժանք համարեալ էին յաչս նորա։ Սովոր էր ասել. «Ոչ զք տիրապէս գովելի է յայնմ, որ ինչ արտաքոյ «է իւրոյ վիճակի և պատշաճման. օրինակ իմն՝ կրօնաւոր «չէ գովելի, իբր զի գաղ չափաբան է, կամ Փիլիսոփայ, «և կամ հմուտ արհեստագործ. այլ զի խոնարհ է և հնա- «զանդ, մեռեալ աշխարհի, և կենդանի ի Քրիստոս։ Նմա- «նապէս և ինձ՝ ասէր, չէ՛ գովութիւն լինել իմաստուն «ճարտարապետ, այլ խոնարհ և առաքինի. զի այս է «սեպհական գործ իմոյ վիճակի, և ոչ ճարտարապետութիւնն. «վասն որոյ անմտութիւն մեծ է ընդ այսպիսի անդէպ գո- «վութիւնս ինդալ կամ մեծամտել։ Այս՝ խնդամ ասէր՝ «զոհութեամբ զբարերար խնամոց Տեառն ընդ վայելչապէս «կատարումն մեծարանիս, ոչ զի բարեհաճակի, այլ զի «բաղմաց ծառայից Աստուծոյ ընդ յարկաւ շինուածոցս «պատապարեալ՝ յոտնախնային ինոցանէ փառք և գովու- «թիւնք Աստուծոյ։ Որ եթէ նորին Տեառն օրհնութեամբ «յաջողեցի, յայնմամ արժանապէս ցնծացայց, զի վաս- «տակք իմ ընդունայն ինչ ոչ եղեն. զի իմ վախճան ոչ է «հոգմտաւոր մարդկային համբաւ, այլ միայն փառք Տեառն «իմոյ։»

Եւ յիրաւի, զի նա ոչ երբէք եղեւ ձեռնամուխ յիրս ինչ, որ չէր կարելոյ ի պաշտօն ծառայութեան Աստուածեան.

զի ոչ եթէ զանձին մեծագործութիւն խնդրէր երևեցուցանել աշխարհի ի մարդկային փառաց սակս, յորմէ անչափ հեռի էր խոնարհ հոգի նորա, այլ միայն զփառս միոյն Աստուծոյ, որում զամենայն յաջողուածս գործոց անկեղծ մտաք խոստովանէր։ Ցոյր սակս և ընդ մենաստանս այս, որ համբուն է գործ նորին զժուարաքիրան վաստակոց ի սկզբանէ ցկատարած, չեթող բնաւ ուրեք այլ ինչ յիշատակարան զանձնէ, բայց միայն զայս կարճառօտ և անպահոյճ բան քանդակեալ ի վերայ բարաւորի գրան սեղանատան ի Հայ և ի Լատին բարբառ.

ՍՆՆԱՍՏԱՆՍ ԱՑՍ ԸՍՏ ԲՈԼՈՐՈՒՆ ՇԻՆԵԱԼ ԵՂԵՒ Ի ՓԱՌՍ ՓՐԿՉԻՆ.
ՑԱՐՄԱՑՈՒԹԵԱՆ ՍԵՐԱՍՏԱՑԻՈՑ ՄԻԹԱՐԱՑ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ.

Ուր պայծառ և լուսափայլ է գերազանց ոգւոյ նորա խոնարհութիւն. քանզի առ ի չտալ իւիք իրօք պարծանս անձին, ոչ ինչ մասն և բաժին ի շինուածոց անտի ընծայէ ինքեան, որպէս թէ բնաւ իսկ չէր գործակից լեալ։ Այլ միայն զժամանակն յայտ առնէ. և զայն առ հարկի, յաղագս առ յապա զգուշութեան, զի մի յետ ժամանակաց յօտարաց կարծեցի կառուցեալ։ Զայս ամենայն և ինքն յայտ արար բաղում անգամ՝ ոչ յայս գործ եւեթ, այլ և յայլ զանազան մեծագործութիւնս. մինչ ոմանք ի միաբանից, որք գիտակ էին չքաւորութեան միաբանութեանն, զարմացմամբ հարցանէին նմա, թէ զիարդ, և ուստի մարթացաւ զայն ամենայն ի գլուխ հանել։ Իսկ նա՝ «Մի՛ ինչ ընդ այս զարմանայք, ասէր, «որպէս թէ անձին ճարտարութեամբ արարեալ իցէ իմ զայդ. «ոչ ես արարի, այլ Աստուած ի ձեռն միամիտ հնազանդու- «թեան ձերոյ։ Վասն որոյ եթէ կայցեն իմ արդիւնք ինչ «ի տոսա, ձերն առաւելապատիկ է։» Այսպէս ասէր. քանզի խոնարհ հոգւոյ է զայլոցն մեծացուցանել արդիւնս, թէպէտ և սակաւ իցեն, քան թէ զիւրն, և միահաղորդ առնել փառացն և գովութեանն՝ որ անտի ծագիցի։ Այլ այսպիսի համեստ և պատկառ խորհուրդ սակաւուց է։

Այս չքնաղ խոնարհութիւն ոգւոյ նորա փայլէ և յամենայն

գրաւոր աշխատասիրութիւնս իւր. յորս մի միայն գփառս Աստուծոյ, և զօգուտ հոգւոց ունէր յառաջադիր նպատակ։ Որպէս ինքնին խոստմանի յաւարտ յիշատակարանի Աստուածաշնչին, յոր ասէ. «Քանզի զոչինչ փոխարէն սիրոյ և «և աշխատանաց իմոց պահանջեմ յազգէն իմմէ, և յիւրա- «քանչիւր ընթերցողացդ զայս մատեան, այլ բաղձամ և «ըղձակերտեմ զայս միայն, զի դուք օգտիցիք։» Նմին իրի յոճ մեկն և պարզ անսեթեւեթի, և առանց մանուածոյ բանից աւանդէ զառատարուղի քաղցրախօս վարդապետութիւն իւր, հեշտընկալ ամենեցուն։ Ոչ ինչ անարիութեան ատուեր երեւեցուցեալ ուրեք, կամ զայլ ինչ մարդկային ախտաւորութիւն ի քամահել և յեպերել զոք. ուր և յանդիմանել զմոլար վարդապետութիւնս ոմանց, զանուանս նոցա ընդ լռութեամբ ծածկէ։ Իսկ ինքն ոչ միայն համբերութեամբ, այլ և սրտալիր ուրախութեամբ տարեալ կսկծալին երգիծանութեանց վասն բանի ճշմարտութեան՝ ոչինչ բնաւ հետս վրէժխնդրութեան եթող ուրեք յամենայն գրուածս իւր։ Եւ ոչ այս միայն, այլ և զԱբրայական անուն՝ տուեալ նմա ի Գահէն Հռովմայ, որ թէպէտ ի հնումն սովորական անուն էր վանահարց, այլ զի ի վերջին դարս իրր պատուանուն իմն հանդիսացաւ յեկեղեցւոջ, նմին իրի ոչ ուրեք ի կիր էարկ զայն երբէք պարզապէս զայն անձին, այլ միշտ յարադրութեամբ՝ կոչեցեալ Աբրահարդ. իրր անարժան վարկուցեալ զանձն այնպիսի յարգոյ անուան։

Արդ՝ որպէս փառք կենցաղականք ատելի էին նմա, նոյնպէս և առաւել ատելի և խորշելի էր նմա ընչաքաղց ագահութիւնն, զոր կոչէր ախտ հոգեկորոյս, մանաւանդ եկեղեցականաց, և եղծումն կարգաց, և ամենայն բարեկարգութեանց կրօնից։ Վասն որոյ ասէր բազում անգամ. «Զի՛ք և չի՛ք «ինչ առաջի իմ առաւել ատելի, քան ինչս հաւաքել առանց «ասիպող կարօտութեան։» Յորմէ ինքն անդատին ի սկզբանէ յետ հրաժարելոյ ի տանէ ծնողաց իւրոց միշտ անձնապահ եղեւ։

Զամենայն ժամանակս՝ յորս Հռիփսիմեցաւ ի քարոզել զբանն

Աստուծոյ, մինչ չեւ էր ասացեալ աշակերտս, ոչ երբէք ընկալաւ ողորմութիւն յումեքէ, յորմամ չունէր պէտս վասն կարեւոր հանդերձից, կամ առօրեայ կերակրոյ, բանիւ առաքելոյն պատասխանի առնելով մատուցանողաց. «Ունիմ «կերակուր և հանդերձ, և այն առ ժամս շատ է ինձ. իսկ «վասն վաղուին՝ հոգացի նա, որ և զանբան թռչունս երկ«նից ոչ ի քաց թողու ի բարերար խնամոց իւրոց։» Ապա իբրեւ բան առհմանելոյ տեսչութեան Վերնոյն՝ սկսան ոմանք յարիլ ի նա, սկսաւ այնուհետեւ և ինքն զյաժարակամ նուէրս բարերարաց ընդունիլ, որչափ բաւական էր առ ժամայն ընուլ զառաջիկայ կարեւոր կարօտութիւն իւրոցն, այլ ոչ ուշարձակութեամբ իմիթերել ինչս յաղագս հանդերձեալ դիւրոյից։

Պէտ եղեւ երբեմն զրուցատրել ընդ նմա առն միոյմ երեւելի Խաւարցւոյ. որոյ տեսեալ զաղքատին չափաւորութիւն վանացն՝ ասէ ցԱբրահամն. Եթէ ոք յաժարեցի ընծայել ՅԵՂ 30,000 դահեկանս ընդունիցի՞ս արդեաք։ Պատասխանի առնէ Աբրահամն. Ոչ Տէր։ Իսկ նա անդրէն ասէ. Ապա եթէ 5,000 տացէ՞։ Պատասխանէ. Զայդ ընդունէի։ Եւ իբրեւ հարցաւ տալ զպատճառսն՝ Ասէ. Վասն զի այժմ պէտս ունիմ 5,000 դահեկանաց։

Ընդ այն ժամանակս պատանի մի ընչաւէտ խնդրէր աշակերտիլ նմա. որոյմ արար պատասխանի բանիւ Փրկչին. Եթէ կամիս ասէ աշակերտիլ ինձ, երթ բաշխեա զինչս քո աղքատաց, և ապա եկեալ՝ ընկալայց զքեզ։ Այս բան անակնկալ՝ ընդոստոյց զպատանին, զիտելով՝ զի կարօտ է նա, սակայն և այնպէս չուներ ինչ փոյթ վասն զրամոց։ Վասն որոյ ասէ. Հայր թէ կամիս, կալցուք զոյն վասն մերոց ապրանքից։ Ասէ ցնա Մխիթար. Որդեակ, Եւ յԱստուած յուսացեալ եմ, որ կարող է իւրով անենեալ ողորմութեամբ պահել զքեզ։ Ասէ պատանին. Ապա պահեսցուք զայն գոնէ վասն ժամանակի նուազութեան, և այլոց ձախող կենցաղաւորեալս արկածից։ Ա՛ռ որ ետ պատասխանի Մխիթար. Եթէ վասն Աստուծոյ կալցուք ի բանս և ի կապանս մատնեսցին

զմեզ, կամ այլ ինչ ներհական արկածք ինարայն անքննին խորհրդոց կամաց հասանիցեն մեզ, նա ինքն թէ կամիցի, կարող է յամենայնէ ազատել զմեզ առանց արծաթոյ։ Եւ այնպէս տեսեալ Մխիթարայ, զի սիրտ նորա կարեալ էր ընդ ինչս իւր, արձակեաց զնա ի բաց։

Քանզի ոչ խնդրէր գրամս, վասն որոյ և ոչ յաղագս գրամոց անխտիր ընդունէր զամենայն մատուցեալսն. այլ անձինս երկիւղածս տիրանուէրս, յորս երկնածիր լուսով մատչն տեսութեան նշմարէր զանկեղծ ցանկութիւն երթալ զկնի Փրկչին ընդ խաչակիր ճանապարհ կամակար աղքատութեամբ։ Զի նախանձախնդիր էր յոյժ՝ մերկանալ իւրոց աշակերտաց յամենայն ըղձից նիւթական երկրաւոր իրաց, և զՔրիստոս միայն ունել ի սրտի բնակեալ և հանգուցեալ, և նորին առաստապարգեւ շնորհաք հարստանալ։ Իսկ զմարմնոյ կարեւոր պէտս զամենայն ի հասարակութենէ ակնունել, որպէս վայել է վասն Քրիստոսի աղքատացելոց։ Զնոյն բարենախանձ փոյթ ունէր և յաղագս միաբանութեանն, ոչ ընչից յաճախութեամբ հարստանալ, այլ գործովք ատուածպաշտութեան և համօրէն կարգաց բարեզարդութեամբ։

Իսկ վասն մարմնաւոր պիտոյից՝ հոգացաւ ունել զբուսականն բան կրօնաւորական ժուժկալութեան. բայց և զայն՝ ոչ իսկ ի Քրիստոս ազատմութեանց բարեպաշտից, այլ և իւրեանց անընդհատ վաստակաք, յօրինմամբ և ապագրութեամբ գրոց պիտանեաց։ Յայտ նախ ինքն Աբրահամն անպարտելի արիութեամբ ապաքինացաւ՝ իբր զօրագլուխ յաւաջընթաց քրիստոսազօր զինուորաց իւրոց, և զնոյն ասանդեաց օրինակաւ և պատուիրանաւ իւրոց յաջորդաց՝ կրկին բարեաց յարգիւնարութիւն, և ի լուսաւորութիւն ազգին, որ էր նորա նախադիտեալ վարձան. և ապա ինքեան մարմնաւոր կարեաց միաբանութեան՝ գրամբք երեսաց, բան տիրական հրամանի հայթայթել զաստուածական պէտս կենաց։

Բայց և զայսմանէ՝ տակաւ էր նորա փոյթ, ունելով զամենայն յոյս իւր ի նախախնամութիւնն ատուածային հաստատեալ, որպէս ինքնին յայտ արար բազում անգամ ի բազում

դիպուածս բանիւ և արդեամբք, յորոց զմի եւեթ ի դէպ համարիմք կարգել ասասնոր։

Մի ոմն ի մերազնեայ երեւելի վարդապետաց եկեալ ի Վենետիկ, զկնի բազում մտերիմ և ընտանի սիրելութեան, և արժանաւոր մեծարանաց և բարութեանց՝ զոր ետուցեալ նմա Աբրահամայն, նա ի դարձ փոխարինի՝ ձեռամբ միոյ ուրուք ի տպագրողաց քաղաքին հնարիւք իմն որսացաւ յԱբրահամէն զմայր գրոց, և ձուլեալ նովաւ դիր՝ սկսաւ տպագրել զդիրս ինչ առ ի յիւրմէ թարգմանեալ։ Ընդ նոսին կամէր գաղտ յԱբրահամէն տպագրել և զՍաղմոսարանն, զորոյ զկանոնս, զգուբգայս, և զամենայն ծաղիկս, որպէս և զպատկերս՝ պատրաստեալ էր յար և նման սաղմոսարանին, զոր ի նմին ամի տպագրեալ էր Աբրահամայն։ Այլ ի սոգտանել զնա ոմանց աշխարհականաց, սակս անզէպ գործոյն, նա առ ի սրբել յանձնէ զրամքասանս, զրեաց առ Աբրահամայն յոճ լակոնական սակաւ բառիւք. «Հայր Աբրայ, եթէ հաճոյ է «քեզ՝ տպագրեցիր զՍաղմոսարան. ապա թէ ոչ՝ եղիցին «կամք քո։» Ընդհանուր է բանն, զի թէ միոյն զինչանիցի, համարձակ յարեսցէ զկնի և զայս, և ունիցի ասել, թէ Նորա հաճութեամբ առնեմ, զոր առնեմս։ Իսկ Աբրահամայն արա նմա պատասխանի զայս օրինակ բանիւ. «Եթէ զայդ «կամիցիս առնել՝ դու գիտես, որով թէպէտ վնասս մեզ «խափանելով զմերս, որ վնաս թեթեւ ինչ է յաչս իմ, բայց «մեծագոյն եղիցի քո վնաս, ոչ միայն ի ծախս, այլ և յանուն «քո, ի լեզու բազմաց անկանելով. ապա արա՛ զոր կամիս։» Իսկ նա զայս պատասխանի շատ համարեալ, սկսաւ տպել զսաղմոսարանն։

Այս բան իբրեւ լուաւ եղեւ ի վանս, բազմաց ի միաբանից ծանրաբարեալ ընդ այնչափ վնաս հասարակութեանն, աղաչէին զԱբրահամայն հրամանաւ տէրութեանն ընդդիմանել զնա ի գործոյ անտի, զոր կարող էր նա միով բանիւ առնել։ Այլ տե՛ս թէ նա զինչ ասէ.

«Քանզի մի լիցի ինձ՝ քակել զբարեկամութիւն իմ, որ ընդ «նմա, յաղագս եղծանելի չնչին շահուց։ Զեմ արքացեալ

«ընդ բարիս զոր արարի նմա մինչեւ ցայսօր, այլ յաւէտ
«ուրախ եմ։ Եւ նա և յետ այսորիկ որչափ ինչ ձեռնհաս
«իցեմ բարերարել նմա, արարից անխափան անկեղծ մտօք,
«որպէս թէ չէր ինչ նորա բնաւ մեղուցեալ մեզ։ Զի սէր և
«բարերարութիւն այսպիսեաց, Տեառն պատուիրանք են։
«Եւ յինչ միտս էի ի սկզբան անդ՝ յորժամ ձեռն արկի
«ի տպագրութիւն, ի նոյն միտս կամ մնամ անպրդուելի
«մինչեւ ցայսօր։ Զի ազգն իմ օգտեցի և լուսաւորեցի
«բազմութեամբ հոգեշահ գրոց, և ոչ զի ես շահեցայց,
«բայց միայն զի զծախսն զոր արարի, մարթացայց ի ձեռս
«բերել, որ նորա տպագրութեամբն յուսամ ի Տէր, թէ ոչ
«խափանեցի։ Իսկ զյաւելեալն, համարիմ ձրիաւոր պար-
«գեւ Աստուծոյ, յորմէ թէ զրկեցայց ի պատճառս նորա,
«երեւելի գումար գրամոց կորուսանելով, տակաւին սէր իմ
«առ նա ոչ երբէք նուազեցի։ Շատ է ինձ, զի այսպէս և
«այնպէս հոգեւոր գրեանք սիրեալ ծառային յազգս իմ,
«որով նոքա շահին հոգեւորապէս, թէ և ես ճեռանցայց
«ըստ մարմնաւորին։ Զէ ինչ զանխուսալ ի ձէնջ, թէ մինչեւ
«ցայժմ ուրչափ ինչ կորեաւ մեզ ի գնոյ գրեանց. զոր թէ
«ճշդիւ հաշուեսցուք, առաւել է կորուսան քան զշահն։
«Սակայն և այնպէս ի բարերար խնամոց Տեառն՝ ունիմք
«գրաւականն ի կարեւոր պիտոյից։ Ապա վայրապար է տակա-
«այսպիսի անցաւոր ճեռուց տրտմիլ և հոգալ. այլ աներ-
«միտ հաւատով և յուսով ի նախախնամութիւնն Աստուծոյ
«ապաւինիլ, և նա կերակրէ զմեզ և պահէ։»

Եւ այսու խաղաղացոյց զնոսա։

Բազում էր գութ և գորով սրտի նորա ի վերայ աղքատաց. սիրէր զնոսա, և երանէր զվիճակ նոցա. բազում անգամ վկայէր ասելով. «Աստուծոյ ասեմ, նախանձելի է ինձ «կեանք աղքատաց. եթէ էի սոսկական ոմն, մուսիւրագոյն «ընտրէի զկեանս մուրոյ աղքատի, քան զայլ վիճակ մարդ-«կան, որք ի բազմադիմի աշխարհապրօս երկրաւոր զբաղմունս «հեծեն յարաժամ, յորմէ ազատ է աղքատն, որ մուրոյ-

«Թեամբ զառօրեայ պարէն կենաց զտեալ՝ ուստ հանդրս-
«տեամբ, և զոհանայ զառաջէն ամենայն բարեաց։»

Ոչ երբէք լինէր նմա ունայն արձակել զաղքատսն. նմին իրի յամենայն նուագս մինչ եւանէր ի քաղաք, առաջին փոյթ նորա էր պատրաստել և առնուլ ընդ իւր դրամս ի պէտս աղքատաց։ Զնոյն առնէր և մինչ երթայր ի գեղն. ուր թէպէտ բազում էին աղքատք և բազումք ինոցանէ ձանձրացուցիչք, սակայն նա ոչ երբէք եցոյց նեղիլ և վշտանալ ի հանապազօրեայ թախանձեցուցիչ համարձակութենէ նոցա. այն զի ի դառնալ իւրում անտի՝ ստէպ յիշէր զնոսա սրտցաւութեամբ իմն. «Զինչ արդեօք առնեն՝ ասէր, աղքատք իմ «ի գեղջ առանց տրոց ողորմութեան. ուստի՞ կարիցեն լնուլ «զկարիս իւրեանց։»

Նոյնպէս և յաղագս աղքատաց, որք նաւակաւք շրջին ի կղզիս վասն ողորմութեան, պատուէր տուեալ էր գանձապանի վանացն, շարձակել զոք ունայնաձեռն, և չյամենցուցանել զնոսա առ դրան, այլ փութով և զուարթութեամբ տալ զոր ինչ արժան է, և այնպէս արձակել ի խաղաղութիւն. զի զտուրս զուարթառատս սիրէ Աստուած։

Յայսցանէ, որպէս և յայլ անհամար տոցին նմա գործոց սիրոյ նորա, յորոց սակաւք գրեցան, և յորմէգոյնք անգիր թողան, պայծառապէս արտաքսէին նորին վերնապարգեւ գերազանց սէր առ ընկերն, և յաւէտ իմն առ աղքատս՝ հոգւով և մարմնով։ Յորմէ և աղէխորով կարեկցութիւն ընդ տառապեալս նոցա, որով փութայր հանապազ բարերարել նոցա, զհոգեւորապէս կարօտեալս լուսաւորելով, և ի հանապարհ ճշմարիտ ասուածպաշտութեան հանելով. իսկ զմարմնով աղքատս մարմնաւոր պիտոյից մատակարարութեամբ հանգուցանելով լաւ կարի, մինչեւանդ թէ առաւել քան զկար։ Զի ոչ երբէք եղեւ միտքանութեանն ունել առաւել ինչ, քան զրաւականն առ կարեւոր պէտս իւր. նա՝ զի բազում անգամ և այն պակասէր. սակայն և այնպէս զուարթ սրտի նորա ոչ ներէր ճշդել աղքատաց։ Քանզի ապէս կարեաց նոցա ճմլեցուցանէր զսիրտ նորա բազում անգամ մերձ յարտասուել,

ուսի և յոգւոց եկեալ ի ցաւագնեալ սրտէ, ասէր որոց առ նոսանն էին.

« Զո՛ր պատասխանի ունիցիմք տալ մեք Աստուծոյ, յաղագս « այսչափ ողորմութեանց իւրոց զոր արար մեզ, պարգեւելով « զհանապազորդեան զարման կենաց մերոց, յոր վայելեմք « անաչխատ։ Եւ ազագաւ նոքա այնչափ վշտաք ուտիցեն « զհաց իւրեանց, և մեք ոչ նոյնպէս. մի թէ նոքա՞ եւեթ մե- « զապարտք իցեն, և մեք անմեղք։ Ստուգութեամբ ասեմ, « զի խնդրեսցի ի մէնջ համար վասն այսոցիկ յաւուր դա- « տաստանի, եթէ սրտի մտաք ոչ ծառայեցուք Աստուծոյ, « սիրելով զնա յամենայն զօրութենէ մերմէ, և պահելով « զպատուիրանս նորա։ »

Զայս յաճախ կրկնէր ի խրատս, զոհանալ զՏեառնէ յամենայն ժամ վասն այր, և այլոց անբաւ բարութեանց նորա, յորս ի մարդասէր խնամոց նորա վայելեմք, և բռնադատել զանձինս ի փոյթ հաւատարիմ ծառայութեան նորա։

Արդ՝ այսպիսի աստուածամերձ երկնակենցաղ կրօնից սրբութեամբ, և յոգնաչան գրաւոր և գործնական վարուքք, հանդերձ պէտպէս պանծալի մեծագործութեամբ ի փառս Փրկչին բոլորեցուն, և առ հոգւոց բազմաց փրկութիւն, լցեալ կատարեալ բովանդակութեամբ զբոլոր կարգս առաքելական գործոց, ժամանեալ յամն 1746, յեօթանասուն և մի ամի բազմավաստակ կենաց իւրոց, յանքննին խորհրդոց անուսութեան բարձրելոյն, հարաւ ի նա հիւանդութիւն գալկան հանդերձ դժնդակ ախտիւ Թանչից՝ յամենանն մայիսի, որ օր քան զօր բռնացեալ անբմբելի ցաւոք, ի գրուն մահու մերձեցոյց զնա. զի զաւուրս քառասուն զայլ ինչ չէր կարող ճաշակել, քան թէ լոկ սակաւ մի արգանակ մսոյ։ Այս այն ախտ է, որ եհաս նմա ի Կիպրոս, յորմէ թէպէտ ապաքինեցաւ յայնժամ առանձին խնամօք Տեառն, սակայն երեւի թէ սերմն իմն դժնդակ ախտին մնաց ի նմա, որ ապա յաւամ ժամանակի բուսեալ ընձիւղեցաւ։

Ընդ այն վտանգաւոր հիւանդութիւն նորա՝ միաբանքն առհասարակ ի տրտմութիւն մեծ պաշարեալ, անդուլ անդադար

արուեստաթոյր խնդրուածով առ ամենահնար բժշկապետն Յիսուս պարտէին յաղագս առողջութեան և ցանկալի կենաց նորա պահպանութեան։ Այս ի կատարիլ առուրց քառասնից՝ ի բարեբար խնամոց Տեառն մեղմացեալ մահառիթ ախտին, թէպէտ յարեաւ ի մահճաց, այլ դի չէր իսպառ փարատեալ, մերթ ընդ մերթ անդրէն դառնայր տանջել զնա։ Այս դարձադարձ կրկնութիւն ընդ ամիս ինչ երկարեաց։

Իսկ ինքն յայնպիսի երկարատեւ տառապանս՝ ի խիթս անբերելիս դառն և դժնդակ թանչից, որք իբր սլաքք սայրատուրք հարկանէին զնեղբին մատուցս նորա, սքանչելի համբերութեամբ յարաժամ չերմ արտիւ գոհանայր զՏեառնէ, ի հաճոյս նորայն կամաց նուիրեալ զանձն, և այն էր նորա մի միայն սիրտուն ի ցաւս։ Եւ երբեմն՝ մինչ առ սուղ ինչ զիջանէին ցաւքն, և կարէր ունկն դնել, տայր ընթեռնուլ զգիրս Թովմայի Գեմբացւոյ, մանաւանդ զԺԷ գլուխ Գ. գրոց, ուր կան այս բանք.

„Տէր . . . միայն թէ կամք իմ ուղիղ և հաստատուն առ
„քեզ կացցեն, արա՛ ընդ իս, որ ինչ հաճոյ է քեզ։ . . . Եթէ
„հաճիս միխիթարել զիս, եղիցիս օրհնեալ. և եթէ կա-
„միս լինել ինձ ի նեղութեան, նոյնպէս յամենայնի եղիցիս
„օրհնեալ։ „

Այսպիսի տառուածահաճոյ անձնանուէր մտաւոր խոկմամբ, հանդերձ ըղձիւք արտի քաղցրացուցանէր զդառնութիւն ցաւոց։ Յետոյ առ ժամանակ մի փարատեալ ի նմանէ դժուարակիր ախտին, թէպէտ հաշեալ և նուազեալ էր յոյժ ի զօրութենէ, սակայն և այնպէս բուռն արարեալ անձին, ոչ կասէր ի յանձանձելոյ զմիաբանութիւնն, զմեցուածս ինչ ի չինուածոց լրացուցանելով, և զայլ ներքին և զարտաքին իրս բարեկարգելով իբր ընդ ամն երիս։ Բայց և ընդ այն ժամանակս չէր գլխովին զերծ յախտէն. քանզի տակաւին երբեմն երբեմն ի վերայ հասանէր, այլ դեղօք և զանազան հնարիւք ճարտար բժշկի վանացն փարատէր։

Սակայն ի վերջոյ վերստին կալաւ զնա տատկապէս գաւլուէն դժնդակ, որ և պատճառաւոր ի նմա զպնդութիւն լերդի,

զհաղ սատրիկ, և զբարախուսմն թոքոց անդադարելի, որով և զտուա անդարմանելի ի հնարից բուժմահմուտ ճարտարութեան բժշկաց։ Ընդ որ միաբանութիւնն համոյն ի սուգ անմխիթար, և ի մորմոք արտի անփայտատելի համակեալ՝ չունէին զայլ ինչ առնել, բայց միայն անձանձրոյթ աղօթիւք, և անդրաւ խնդրուածովք առ բարեխնամն ամենայնի Աստուած բողոքել։

Իսկ ինքն Աբրահամն ի նուազութենէ ոգւոյն և ի յետին տկարութենէ անձին իմացեալ զմօտալուտ վախճան ատոր կենաց իւրոց, փոյթ առնէր այնուհետեւ զմերձաւոր պատրաստութիւն հոգւոյն առնել։ Վասն որոյ զոլով ի մահիճս անկեալ՝ կոչեաց առանձինն զհայր Մատթէոս վարդապետն զատենադպիր իւր, և ետ նմա գրել զհոգեւոր կտակ զպատրաստական յինքենէ յառաջագոյն. միանգամայն և զպատուէրս՝ զոր տալ կամէր հոգեւոր որդւոց իւրոց՝ վասն մարմնոյ իւրոյ զկնի մահուան, և վասն առժամանակեայ փոխանորդին, և ընտրութեան Աբրայի։ Յոր յաւել և խրատս յորդորականս և զգուշացուցիչս, կալ ընդ միմեանս միաբանական սիրով և խոնարհութեամբ, և հնազանդութեամբ առ երիցագոյնս։ Եւ զգուշանալ, զի մի՛ իւիք իրօք ծագեսցի ինոսա խառնութիւն ի կառավարութեան փոխանորդին, կամ յընտրութեան Աբրայի։

Զայսոսիկ և զայլ բազում պատուէրս տուեալ նմա ի գիր արձանացուցանել, պատուիրեաց չյայտնել ումիք երբէք. և ինքն առեալ զգիրն՝ եդ ընդ սնարիւք։

Արդ՝ զոլով նորա ի մահճի անհնարին ցաւօք, յաւուր Աւագ ուրբաթու, ի կատարել միաբանից յառաջնում պահու գիշերոյն զհանդէս թաղման Տեառն, բարձեալ տանելով զամենասուրբ Խորհուրդն, և ի հասանել Յաւետիսն յայն կողմն ատորին սրահի վանաց՝ ուր մերձ էր սենեակ նորա, ազդ արարին նմա՝ թէ ահա Քրիստոս Փրկչին մերձենայ ի սենեակ քո։ Եւ ինքին ժամու կալաւ զնա հաղ սատրիկ և բարախուսմն արտի անհնարին, մինչեւ հաղիւ զերծանիլ նմա ի խեղդամահ լինելոյ։ Ապա աղաղակեաց և ասէ. «Ով քաղցր բարերար և մարգասէր

«Տէր, նայեսց ի տառապեալ և ի վշտագնեալ անձն իմ և
«ողորմեա՛ ինձ։ »Եւ յասել նորա զայս, նոյն ժամայն
դադարեցան խլիթք նորա ցաւագինք, և ինքն յերեսս անկեալ
ի վերայ բարձին, երկիր եպագ Փրկչին, և սկսաւ ասել այս-
պէս.

«Թագաւոր փառաց Յիսուս Քրիստոս, որդի և բան Հօր,
«որ ի սերկեան աւուրս յաւանդել զհոգի քո ի ձեռս Հօր,
«հանդերձ յամենայն վշտաց և ի տառապանաց, զոր ի ման-
«կութենէ կրեցեր վասն իմ։ Աղաչեմ զքեզ, զի թէ
«հաճոյ է քումդ մեծվայելչութեան, թո՛յլ տուր ինձ առան-
«ձին զհոգի իմ ի ձեռս քոյ, զի և ես հանդերձեալց ընդ քեզ
«յանապատեալի վշտաց և ցաւոց անձին իմոյ. ապա թէ ոչ
«արբից զբաժակս զայս. զի եղիցին կամք քո։ Եւ հայցեմ
«տենչմամբ սրտի զօրհնութիւն քո տուր. օրհնեա՛ ազաչեմ
«զիս զառաւելեալս, և տուր ինձ համբերել ցաւոց իմոց։
«Օրհնեա՛ և զմիսրանութիւն մեր զայս, և պահեա՛ զսա
«ի սէր և ի շնորհս քո։ Տո՛ւր սմա զխաղաղութիւն քո, և
«կառավարեա՛ զսա ըստ բարերար կամաց քոց, զի ես Ծա-
«ռայ քո ոչ եւս եմ կարող կառավարել։ Տո՛ւր բարերարաց
«սորա տրխառնեալ փոխարինի զկեանսն յաւիտենից, և հակա-
«ռակորդաց զդարձ և զզեղջ և զապաշաւ։ Ալ քո ամենազօր
«լեցի հանապազ հովանի ի վերայ սորա. դարմանն տար, զոր
«դու ինքնին հաստատեցեր. և ամենօրհնեալ մայր քո, զոր
«խնամակալեմին շնորհեցեր, լեցի միշտ օգնական և պաշտ-
«պան սմա։ Պահեա՛ զորս են ի սմա՝ ի դարանակալու-
«թեանց և ի պատրանաց բանսարկուին. զի որք միանգամ
«ուխտ եղին ընդ քեզ կալ ի Լարդի սորա, հաստատուն
«կացեալ՝ կատարեցեն զկեանս իւրեանց ի շնորհս քո, և
«այնպէս յաղթանակ ճգնութեան իւրեանց ընկալցին առ
«ի քէն զվառս արքայութեան յանապատ և յանվախճան
«յաւիտեան։»

Եւ սատեալ զամէնն, սկսաւ քաղցր ի քուն լինել։

Ի 6 ապրիլի, մեղմացան ցաւքն, և ինքն փոքր մի ոգի
էառ։ Բայց ի վաղիւ անդր անդրէն սաստկացան, վասն որոյ

խնդրեաց վերատին և ընկալաւ զամենասուրբ հաղորդութիւնն իբր վերջին թոշակ՝ խոստովանութեամբ և Ջերմեռանդն փա-փաքանօք, զոր ոչ յայլ մի նուազ եւեթ, այլ բազում անգամ ուրարեալ էր ի սմին հիւանդութեան իւրում։ Եւ թէպէտ սաստիկ էին ցաւք նորա, և գրէ թէ անընդհատաք, սակայն միշտ կազմ և զգաստ ունէր զմիտն, և ասէպ ն։ էիրէր զանձն հոգոյից կամաց Տեառն զոյսօրինակ ըղձից հայցմամբ.

„ Տեսցէ տէր և այցելու լինի շնորհել ինձ տոկալ և համբե-„ բել ցաւոց իմոց։ Խրատեսցէ զիս արդարն ողորմութեամբ, „ և զայցելութիւն իւր մի ի բոցեաց արասցէ յինէն։ „ Բազում են ցաւք իմ, և վիշտքն բազմագիմք. բայց յուշ „ ածեալ՝ եթէ ի քաղցր և ի բարիւրար խնամոց Տեառն ան-„ բիւրեալ զան ի վերայ իմ, ուրախութեամբ օրհնեմ զնա։ „ Գիտեմ, զի յօգուտ հոգւոյ իմոյ առաքեաց զայսոսիկ ի վե-„ րայ իմ, ուրախութեամբ օրհնեմ զնա, եղիցին կամքն նորա „ օրհնեալ։ ,, Յայսպիսի հոգենորոգ խոկմունս կայր յարա-ժամ ի դառն հիւանդութեան իւրում, որով զցաւոցն սաստ-կութիւն ցածուցանէր, և զհուր սիրոյն Աստուծոյ բորբոքէր ի սրտի։

Զկնի երկուց աւուրց դարձեալ մեղ հայտն առեալ մի ցաւք նորա։ Յայնժամ խոստովանահայր նորա՝ որ միշտ առ նմա կայր, զննեալ զզարկ բազկի նորա, սկսաւ քաջալերել զնա ասելով. „ Մի երկնչիր Գերապատիւ տէր, զի այժմ կաս ի բա-„ ռադոյն վիճակ։ ,, — „ Բա՛ւ լիցի ինձ երկնչել ի մահուանէ, „ ասէ Սրբահայրն, զի եթէ կամք իսկն Տեառն, այժմէն „ խակ մեռայց մտադիր յօժարութեամբ։ Քանզի և ի ման-„ կութենէ իմմէ ապատեալ մեայի աւուրն երանելոյ ի ցաւալից „ կենցաղոյս, և ա՜ռ արում ցանկալի, տեսանեմ առ զուրս „ հառեալ։ Յանկամ մեռանիլ, զի տեսից զտէրն փառաց։ „ զփրկիչն իմ Յիսուս ի փառս իւր, և զդշխոյն երանելեաց „ զամենօրհնեալ Կոյսն Մարիամ զլուսաւորն անձին իմոյ, և „ զհնամակալ վարանութեան՝ բազմեալ յաթոռ անճառ „ փառաց։ Իցէ թէ ողորմութեամբ Տեառն արժանի եղէց „ վաղվաղակի երանել ի հովտէս, և փոխել յանանց և յան-

“ պատում ի կեանսն, և անդ տեսանել զերեսս ամենասուրբ
“ Երրորդութեան, օրհնել և փառաբանել ընդ հրեշտակսն
“ դասուց, և վայելել յանճառ յանապատ ուրախութիւնսն
“ յերկինս։ Եւ այժմէն իսկ ողջոյն հրաժարական տամ
“ ի սրտէ համայն զդողեաց, և ոչինչ յանցաւորաց կամիմ
“ խորհիլ, որք խափանեն զիս ի խոկմանէ երկնայնոց։ Իսկ
“ դուք ի տեսանել զիս ծանրացեալ և ի վախճան մերձեալ,
“ մի՛ ինչ խօսիք ընդ իս, և մի՛ շփոթիք զիս, զի չնորհօք
“ Տեառն՝ ունիմ ես ինձ նիւթ խոկման բաւական. և մի՛ ես
“ արտասուիք դուք վասն իմ։ Այլ յետ հրաժարելոյ իմոյ
“ յաշխարհէ, դիջիք զառապեալ զցաւս կոչեցեալ մարմին
“ իմ՝ ի տապանի՝ զոր յառաջագոյն պատրաստեցի վասն իմ.
“ զիք խիստսն և զկապն ներողութեան, և զմիտսն՝ զոր
“ չնորհեաց ինձ տէրն Հայրապետն Հռոմոյ։ Իսկ զպատ-
“ կերն Տիրամօրն՝ զոր եռոտ նկարել ծաղկեայ պատմուճան
“ նոր, լաւ օրինակին երեւելոյ ինձ ի տեսլեան, մի՛ զբ տես-
“ հականեցէք անձին, այլ լիցի հասարակաց։ ” Եւ այսպէս
յետ անօրինելոյ զայս ամենայն, լռեաց ապա ի խօսելոյ։

Եւ յիննեներին ամսոյ տպրիլի, տեսեալ բժշկին զնա ի յետին
վտանգ կենաց հասեալ՝ ազգ արար պաշտել նմա զխորհուրդ
վերջին օծման, զոր իրրեւ զդացուցին նմա, ուրախ եղեւ, և
ասաց. “ Մեծ է ինձ օրս այս քան զօր ծննդեան իմոյ. արդ՝
“ բերջի՛ք, զի ընկալայց զսուրբ օծումն վերջին։ ” Զոր իրրեւ
ընկալաւ նա կենդանի հաւատով, և ջերմեռանդն փրկով,
դարձեալ սակաւ ինչ մեղմացան ցաւք նորա։ Իսկ ընդ երեկո
կոչեաց առ ինքն զամենեսին՝ տալ նոցա ընդ հրաժարական
ողջունի և զօրհնութիւն իւր հայրական. այլ յառաջ զծերն
առանձին. և խօսեցաւ առ նոսա սակաւ բան հոգեւոր խրա-
տուս, և ապա հանեալ զգրաւածն, զոր յառաջագոյն առեալ
էր գրել, ետ նոցա, և միանգամայն յանձն արար նոցա, զոր
ինչ յետ վախճանելոյն պարտ էր նոցա առնել զպաշտ-
թեամբ, զի մի՛ շփոթութեամբ խառնեցին։ Եւ առեալ
զօրհնութիւն իւր նոցա, հայցելով ազօթս ի նոցանէ՝ արձա-
կեաց զնոսա։ Իսկ նոքա հանդերձեալ զաչ նորա մեկնեցան

մի ցաւօք հանդերձ զառն արտասուօք։ Կոչեաց ապա և զմեծ-
ցեալ միաբանեն առ հասարակ. և օրհնեալ զնոսա՝ պատուե-
ցեաց և նոցա կալ առ միմեանս միաբան սիրով, խոնարհու-
թեամբ և հլու հպատակութեամբ. և ապա խնդրեալ աղօթս
արձակեաց և զնոսա։

Իսկ ի 25 նորին ապրիլ ամսոյ, խնդրեաց դարձեալ զսուրբ
խորհուրդն հաղորդութեան, զոր Ջերմ սիրով ընկալեալ, առ
ապա ի ձեռս զԿաչն նեղոսութեան, զոր համբուրէր խանդա-
կոթ սիրով, և յանձն արարեալ զհոգի իւր ի ձեռս Փրկչին՝
ասէր. «Ով փրկիչ իմ Յիսուս, ի ձեռս քո աւանդեմ զհոգի
«իմ. ողորմեա՛ ինձ Տէր, և թող զամենայն յանցանս իմ.
«մաքրեա՛ զհոգի իմ յամենայն արատոյ մեղաց պատուական
«արեամբդ քով սրբով, զի քո եմ Տէր ողորմեա՛։» Յետոյ
առեալ զծաղկենկար պատկեր Տիրամօրն, և համբուրեալ
ասէր. «Օգնեա՛ ինձ, Տիրամայր, ի ժամուս՝ յորում կամ
«ի վտանգի, տագնապեալ յանհնարին ցաւոց մարմնոյս։ Եւ
«որպէս ցարդ եղեր իմ օգնական յամենայն վիշաս և ի տա-
«ռապանս իմ, և լուսաւորեցեր զիս, նոյնպէս և այժմ մի
«թողուր զիս, Տիրուհի, այլ լեր միջնորդ և բարեխօս վասն
«իմ առ Որդիդ քո միածին, զի փրկեցայց յորդոյթից
«թշնամւոյն։» Եւ զոյս ասացեալ՝ եդ զպատկերն, և զսուրբ
Խաչն ի վերայ լանջաց իւրոց, զոսս և փոփոխ համբուրեալ
ասէր. «Յիսուս, Մարիամ, զսիրտս և զՀոգիս ձեզ տամ։»
Եւ երբեմն յոժամ երկար ելն կայր, յորդոր լինէին նմա,
կրկնել ասէպ զխոստովանութիւն հաւատոյ, և զներդործու-
թիւն յուսոյ, զոր նա յոժարութեամբ առնէր։

Ի 26 ապրիլի եւս առաւել բռնացան ցաւք նորա, մինչեւ
խապառ հատանել յուսոյ բժշկին, որ և ասաց, թէ յայսմ
գիշերի փոխի նա առ Աստուած. նմին իրի և միաբանքն
սկսան կատարել ի վերայ նորայ զաղօթս հոգեւարութեան,
բազում Ջերմեռանդութեամբ։ Եւ յայնմ պահու խնդրեաց
նոսին. այլ իբրեւ ոչ զօրեաց ժուժել, դարձեալ ընկողմեաց
ցաւ ասելով. «Ընդ երեկոյս հանգիցեն լալք, առաւօտուց
«եղիցի ուրախութիւն։» Յառաւօտուն իբրեւ մերձ երեւէր

աւանդել զհոգին, խոստովանահայրն ձայն ետ նմա ասել, Ցիսուս, Մարիամ. և տեսեալ զի զդաց սակաւիկ մի, ասաց տալ նշան վասն ընդունելոյ զվերջին արձակումն. և ի տալ նորա, կարդաց ի վերայ նորա զվերջին արձակումն։ Եւ ապա զիսաչն ներողութեան և զպատկեր Տիրամօրն մերձեցուցց ի շրթունս նորա, զոր նա համբուրեաց։ Եւ այն ինչ մերձ էր յաւանդել, առաքեցաւ մի ի քահանայից մատուցանել պատարագ վասն խաղաղական աւանդման հոգւոյն ի Տէր։ Եւ խոստովանահայր նորա յղեալ կոչեաց զծերն՝ առաջիկայ լինել յաւանդումն բազմավաստակ Հօր իւրեանց, որ յաւարտել ամենասուրբ պատարագին՝ առաջի աչաց նոցա ննջեաց զքուն արդարոց՝ աւանդեալ զմաքրափայլ հոգին ի ձեռս Արարչին իւրոյ, յամին 1749. ի 27 ամսոյն ապրիլի, ի հասակի եօթանասուն և չորս ամաց։ Եւ առ ժամայն սկսան պատարագք մատչել վասն հոգւոյ նորա։

Արդ՝ ո՞վ բաւական է վճարել բանիւ զանհնարին յաւ և զանմխիթար տրտմութիւն միաբանից, որք առհասարակ ի սուգ և ի գորով հարեալ՝ լային վշտահար հեծութեամբ, ոչ միայն յաղագս այնպէս վաղ ընդ փոյթ գրկելոյ յամենափափաքելի հօրէն իւրեանց, այլ և սակս մեծի կարօտութեան միաբանութեանն, որ զոլով նորոգ կազմեալ, և դեռ եւս սակաւութիւ, պէտս ունէր յոյժ այլ եւս նորայն բազմարդիւն կենաց։

Ապա յերեկոյանալ աւուր երկրորդի, վճարեալ և զմեացորդս կարգի թաղման, բազում մոմեղինաք լուցելովք, և բուրմամբք խնկոց, և նուիրական սաղմոսերգութեամբ՝ հանդերձ ողբաձայն երգովք և արտասուաք հանդուցին զպարկեշտն զայն մարմին, որ ըստ ասացելումն՝ նախ քան զմահն ի մեռելութիւն էր կրթեալ, ի դաս անդր եկեղեցւոյ վանացն, յիւրումն տապանի, զոր ամաք յաւաջ պատրաստեալն էր։ Առաջիկայ դասն անդ ի թաղումն նորա երկու եպիսկոպոսունք յազգէս, Մինաս արքեպիսկոպոս Զմիւռնիոյ, և Սարգիս արքեպիսկոպոս Կեսարիոյ, ընդ նոսա և այլք բազումք, քահանայք և ժողովուրդք յազգէս, որք կային ընդ այն ժամանակս ի Վենետիկ. թուղ զբազմութիւն Խոտայացւոց, եթէ յեկեղե-

ցական և եթէ յաշխարհական կարգաց։ Եւ ամենեքին կարեկցեալ արտասուակցորդ լինէին հարցն, և ցաւակցաբար մխիթարէին զնոսա։ Յետ այնորիկ ընդ աւուրս ուշ կատարեցին զայգողս ի վերայ տապանի նորա, և պատուական Հայր Մատթէոս վարդապետ առնոյգպիր իւր պատուեաց զնա զամբանական ճառիւ յուիերորդ աւուր՝ առաջի համախուռմբ միաբանից առհասարակ։

Ահա այնպէս Հայր հարանցն, և արթուն հովիւ հօտին փոքու, ոկար վշտակիր մարմնովն՝ զանմարմնոցն բերեալ յինքեան զվարս, և զհանդէս առաքինութեանն սրբափայլ կրօնիւք լցեալ, և զօրինակ պատկերի երկնաւոր հօտապետին յանձին ապացուցեալ՝ փոխեցաւ յաշխարհն կենդանեաց առ տենչալին իւր Քրիստոս ոյսն բոլորեցուն, կալեալ զաթոռ առաջնորդութեանն զամս քառասուն և ինն։

Ապա յուշ ածեալ միաբանութեան, զսակ պարտուց բառ ուժանեացն պայմանի, հատուցանել բազմերախտ Հօր իւրում, կառոյց նորակերտ տապան շէն վիմաւաշ ի բեմի եկեղեցւոյն՝ առ ոտս աւագ սեղանոյ սրբութեան, որ զկնի ամի միոյ անցանելոյ՝ փոխադրեցաւ մարմին նորա, որ գտաւ անեղծ և անապական։ Կատարիչ տապանին յերկնագոյն դերազանց մարմարիոն քարէ, հանդերձ խորհրդաւոր տապանագրաւոր։

ՏԱՊԱՆ ՄԽԻԹԱՐԱՑ ԲԱԲՈՒՆԱՊԵՏԻ

1749. ԱՊՐ. 27.

Քնար քերուբ հոգեառուիդ
Ներկուռ մատնն ատուածանմիդ
Ազգեալ Սերբատ մարդէն խառիդ
Բակերտ Արքայ բուսաչուիդ
Քառակ մարմնոյ կայատառ ուղիդ
Անճառ անհաս խորոյ բուիդ
Ղամբարք շնորհաց գիրշաուուիդ
Յայտիշ լուսոյ շլայց շաւիդ
Բախճան գիտնաց խնատատ անենին
Ազգաս ուսաս ինքնին անենին
Խմբից ուսոյց բիւրուց տանին
Օճան ոգւոց մրատաց շրանին
Սրերս գրեաց յախտէ ոչինչ
Ազգանազեան տոնվս տատրինչ
Սայթաք չարին գառաց կլանին
Տարաւ անբաւ իրրեւ գերինչ
Որով հատուցաց կարգ հոմաշուինչ
Իւրեալ տէրտէր իրր տակեփուինչ
Ակուսի կացոյց դպրաց մրմուինչ
Ծաղիկ վարուց քարոզ անշուինչ
Արիւայն մարգէ մարցն ի քուինչ
Ցղկեալ դարատատ անկեաց ի յուինչ
Իւրայօրէն նախ վանքս ջուինչ
Նիւթեաց նարօտ կարգիս ի փուինչ
Շագաղ հոմուիս ախտից ցլրօն
Ախտս հնչէր մեղկից կլրօն
Գուհար մտաց խոնարհ սիգնօն
Խիժեալ ոգւոց գեր լիրանօն
Ոզոք յախտին գաղթէր պաշտօն
Ցասպիան Հայոց արժանն ի տօն
Նուազ տակի ընծայ ի ձօն

Ահա պատմութիւն կենաց և վարուց Մխիթարայ Աբբայի, ծաղկաբոյր արարեալ ի պատմութենէ կենաց և վարուց Նորա, յօրինեալ ի Սահմանս Ագոնց Աբբայէ, և ահա զայսոսիկ տեղեկացեալ հեղինակիս՝ մտանէ յուխտս կրօնի Նորա։

Յաւելցուք մեք ի սմա և այլ ինչ ինչ պատմութիւն կենաց և վարուց Նորա, յառաւել ինն գիտութիւն ընթերցողաց, լուեալ զայն ի բերանոյ ձեռաւուն աշակերտի Մխիթարայ, ի Հ. Վրթանէս վարդապետի Սեբէրեան, և յայլ ծերագոյն Հայոց վանքի մեր Սեբաստիոն վարանութեան։

Պատմէր մեզ երբեմն ի վանս Հ. Վրթանէս վարդապետս, թէ սնօրինեալ էր նմա Մխիթար Աբբայն ոչ գնալ ընդ առաւօտս յեկեղեցին ի ժամս հաստատակաց աղօթից, այլ աղօթել առանձին, և պարապիլ ի բաղդատութիւն Աստուածաշունչ գրոց ընդ Լատին թարգմանութեան, և յօրինել բառարան մի Լատինէ ի Հայ. և թէ՝ տեսեալ Նորա զթարգմանութիւն իւր, ուրախ լինի յոյժ, որով յայտ առնէ զվարկն որ զհայկաբանութենէն, թէպէտ և թաքուցանէր զայն առ ակնածութեան որ ի տպիտաց, որք իբրև զմտան հաւատոյ համարէին զլատինաբանութիւնն, որպէս տեսանի ի քերականութեան և ի հայերէն բառարանի իւրում, բերեալ անդ օրինակս ի գրոց Նոխանեաց Հայոց, և որպէս տեսանի ի վարդապետութեան աշակերտաց Նորա, ուսուցանելով ժողովրդեան աղօթել ըստ գրոց ժամակարգութեան հայաստանեաց եկեղեցւոյ, վասն որոյ և սիրատանութիւն զնոցանէ առ Պապն ի Հռոմ։ Ապա տարապարտ է բաղխատլինել նմա, Գէորգ Հիւրմիւզ Աբբայ ի, ասելով թէ փոխեաց նա զկեղեն և զծէսն ազգին իւրոյ։

Պատմէին մեզ ծերունի հարքն ի վանս, թէ հայրական խնամք և գութ Մխիթարայ Աբբայի այնչափ էին, մինչև չմնալ ոմանք յաշակերտաց Նորա հոգալ զկարեւոր պիտոյից իւրոց ի վանս։ Թէպէտ և կարգեալ էր նա անդ տեսուչ հոգալ զկերակրոյ հաստատակաց, այլ զնայր նա միշտ ի խոհանոցս տեսանել թէ զինչ պատրաստեալ կայր ի ճաշ հաստատակաց։ Յաւուր միում տեսեալ Նորա անդ ձկունս մանուռն և անպիտան պատրաստեալ կայր ի ճաշ, ասմանէ նա զայն ի լիճ և

բերել տայ ի քաղաքէն այլ ձկունս պատուական։ Նոյնպէս և զհանգերձից նոցա հոգայր նա խնամով, զի մի՛ պակասիցի ինչ ումեք ի նոցանէ և տրտունջ լիցի զիմեքէ։

Պատմէին նոքա եւս, թէ ումն իմաստուն եպիսկոպոսաց ազգիս, պանդխտելոյ ի Վենետիկ, և ունելոյ համարումն մեծ զառաքինութենէ Գրիգորն Հռոմայ, կամի գնալ ի Հռոմ տեսանել զնոսա։ Խորհէ զնա Մխիթար արքայն ի գնալոյ անդ, զի մի՛ տեսեալ զանպատեհ գնացս ոմանց ի գրիգն անտի, գայթագղեցի միտքն այն։ Քանզի իմաստուն էր սա, գիտէր զանազանել ի միմեանց զդաւանութիւն ուղիղ հաւատոյ, և զանուղիղ գնացս պաշտօնէից ոմանց անտի, հաւանեալ բանից Քրիստոսի, թէ «Ցաթոռն Մովսէսի նստան Դպիրք և Փարիսեցիք. զոր ինչ ասացեն ձեզ արարէք, բայց ըստ գործոց նոցա մի՛ առնէք։»

Հոգեհարազատ որդի էր Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, որ ըստ հաւատոցն Քրիստոսի աշակերտ էր հայրապետաց Յունաց և Լատինաց, և հետեւող էր Սրբոյն Ներսէսի Շնորհալւոյ, որ զՀայրապետն Հռոմայ սուրբ և առաջին ամենայն եպիսկոպոսաց ճանաչէր, բայց ի նմանէ կախումն ոչ ունէր։ Այսպէս տարապարտ է ըստգիւտ լինել նմա թէ հաւատափոխ եղեւ նա, հպատակելով Պապին Հռոմայ։ Քանզի եթէ չէր երկուցեալ փառատէր Մարգար եպիսկոպոսին ի հակառակորդաց ճշմարտութեան, հաստատէր Մխիթար զմիաբանութիւն իւր ի Հայաստան, ի Կարմիր վանս. և զի եթէ չէր հալածեալ սա ի խռովատէր Սեւերիք Պատրիարքէն, պահէր զմիաբանութիւն իւր ի Պոլիս, և ոչ փախստական գնայր ի Մօռայ և ի Վենետիկ, և չլինէր հպատակ Պապին Հռոմայ. այլ իբրեւ զսուրբ Ներսէս Լամբրոնացին կացեալ ի Կիլիկեայ՝ դաւանէր զհաւատն ընդհանրական և առաքելական եկեղեցւոյ, և մնայր հպատակ Կաթողիկոսին Հայոց։

Այսպէս հաւանեալ Մխիթարայ արքայի ճշմարտութեան և արդարութեան՝ ծանեալ զպարտս իւր, և լցեալ զոյժ՝ ընկալաւ զիրաւունս իւր, վայելեաց ի խաղաղութեան և յերանութեան։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ,

ՎԱՐՈՒՑ

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՄԵԼԳՈՄԵԱՑՆ ԱՌԱՔԵԼՈՅ

ԾՆՈՒՆԴ ԵՒ ՈՆՈՒՆԴ ՄԵԼԳՈՄԵԱՆԻ

Ստեփաննոս Մելգոմեան ծնաւ ի Կոստանդնուպօլիս և սընաւ ի Վենետիկ ի վանս Արբոյն Ղազարու։ Զամս ինչ ուշակերտեալ Մխիթարայ աբբայի՝ եմուտ յուխտն, և յաջորդ եալ նմին։

Թէպէտ և գտանէր յայնժամ ի միաբանութեան առաւել արժանաւոր անձինք քան զնա, բայց նմա եղանէր վիճակն այն, ստկանշանաւոր կարծեցեալ քանից Մխիթարայ աբբայի, որ ի ժամանակի հիւանդութեան իւրոյ առաքէ զնա ի Պոլիս, և այն ինչ մեկնեալ նորա ի Վենետկոյ՝ ստատկանայ հիւանդութիւն իւր, և խնայեալ զօրհաս մահուն իւրոյ, դարձուցանէ զնա անտի։ Յայսմանէ կարծեն միաբանքն թէ արժանաւոր յաջորդ իւր զնա ճանաչէր, և այնու կարծեաք ընտրեն զնա Աբբայ միաբանութեան։ Թէպէտ և սխալին նոքա ի կարծիս իւրեանց, և ցաւին ընդ այն, բայց յոյժ անոգան և անդարման։

Յաջորդէ Ստեփաննոս Մելգոմեան զաթոռ աբբայութեան ի ժամանակի՝ յորում ամենայն ինչ միաբանութեան կարգաւորեալ էր ի Մխիթարայ աբբայէն, չինուած մենաստանին

բարոյին անարատել, և ուսումնասէր անձինք ի նմանէ սրատրատանել, հանդերձ կարեւոր պիտոյիւք. մեծագոյն միոյն յաջողի նորին նմանող լինել նախարդին իւրոյ, հաւանիլ ճշմարտութեան և արդարութեան, ճանաչել զպարտս իւր և վերուստ պարգեւս, առ ի վայելել ի խոգարութեան և յիրատեսութեան, բառարերով զազգն։

Աւուրք բախտին վերանութեան, և ազգիս վանդումին. զի արեւելեան յոյս ամենայն, ասէր կնոջ բարոյ, և մեռելոյ վարոյ իւրոց, վասն այսորիկ խառնութեան և հզկութեան վերանութեան և վերս ազգութարդանին։

Քանզի լինի արուեստ վերանից զԱրքայն, զի զանոյ նա նոցա զկարեւոր պէտս կենաց, և զճարակ մուտ։ Զի զաւանի յայնժամ ի վանս աշխատաւոր եղբայր մի Գաղաս անուն, որ կնոջ բնաւորութեամբ իւրով նմանի արքային, և որում յանձնէ նա զպաշտօն հանդերձապահութեան։ Տայ նա վերանից ոմանց, երկայնահասակ անձանց, ոսկորին և վերամակ կարճ. և ի դանդաղել նոցա, ասէ, կնկել զաստ իւրեանց. ապա նա նոցա, սաստիկ անձանց, շապիկ և բաճկոն նեղ, և ի դանդաղել նոցա, ասէ, այնպէս վայել կրօնաւորաց։

Յեղանակի ձմերան նեղին վերանքն ի ցրտոյ, զի ոչ զոյր հրամանն ունել կրակ ի խուցս իւրեանց։

Պակասն ասաստութիւն ծերոյ և խնամածութիւն հիւանդաց, զի ոչ գոյին անդ ծերանց և հիւանդանց։ Պատճառ այսոցիկ կրաւութեանց զգալութիւն արծաթոյ ասէր Աբրայն։

Ասուցանէր անձինքն ի վերանութեան ցանկան գրաւոր աշխատութեան, և ստանել այնմ կրաւորն վերանին վարձատրութեան ասար լեզուաց և զանազան գիրութեանց, և ոչ կարեն անել զայն. զի Աբրայն նոցա անձնաւոր էր ասանց, և խնայող ի ծախսն։

Յայն վիճակ սոգաղութեան և ցանկութեան վերանից՝ հասանէ ցանկարծ զաւուր ինչ արծաթոյ ի Հոգկաց, իրրեւ նոցա ի բարերարաց։ Տեսանէ զոյն վերանից՝ ուրախանան, հանդերձով զոյն յուսալի կրաւութեան և ցանկու-

թեան իւրեանց. թէպէտև առիթ խռովութեան և բաժանման նոցա լինի այն։

Որոնին յայնժամ միաբանքն առհասարակ և որոշեն հասարակաց հաւանութեամբ խնամք առնել նախ ծերոց և հիւանդաց, առանձինն բնակարան մի շինել, ի սաժողութիւն հանդստեան ծերոց, և յապաքինութիւն ցաւոց հիւանդաց։ Երկրորդ՝ զպրոց մի հասարակաց հաստատել ի դասախօսութիւն մանկանց ազգին Հայոց, և ընդունել ի նոցանէ ի կրօն միաբանութեան զնոսա միայն, որք կոչումն ունէին. իսկ զմնացեալսն դարձուցանել ի հայրենիս իւրեանց, ի լուսաւորութիւն ազգին։

Զայն խորհուրդ և որոշումն իւրեանց առաջի առնեն նորա Աբրային, և խնդրեն ինքանէ կատարումն տալ ոյնմ, կարեւոր յոյժ համարելով զայն միաբանութեան, և ազգին միանգամայն։

Բայէ ի բաց մերժէ Աբրայն զայն առաջարկութիւն նոցա, ասելով թէ չէր անկ միաբանից խորհել և որոշել ինչ, այլ Աբրային միայն անկանի այն։ Թէպէտ և աղաչեն և աղերսեն նորա զԱբրայն զինչանել առաջարկութեան իւրեանց, սակայն նա ոչ զինչանի այնմ, ի նոյն միտս յանառնալ մեծ խոսս։

Երբեւ յուսահատին միաբանքն զզինչումն Աբրային յառաջարկութիւն իւրեանց, յայնժամ զանկումն նորին յաթոռոյ մատրին, և առնեն զայն այսպէս. Հանեալ նոա յարքայական ոնեկէն, դնեն ի խուց մի հասարակաց, և հրամարեն առ վարժարանայս և առ. նորընծայս ի սեղանատան վանաց, ծանուցմամբ մեոյ ի ծերագունից անտի, Հ. Գաբրիա վարդապետի, թէ իշխանութիւն Աբրային դադարեալ էր այնուհետև։

Թէպէտ և իրաւամբք այն դնացք միաբանից, հայեցեալ ի գնացս Աբրային, այլ ոչ վաւեր եղանակաւ, հայեցեալ յօրէնս աշխարհական և եկեղեցական իշխանութեան, յորս իրաւունք իշխանաց և առաջնորդաց միայն պահանջին ի հպատակաց, կոյր հնազանդութիւն, և ոչ պարտիք նոցա առ ան-

սա, ուղիղ վարչութիւն, և յորս պակասեալ միտքանէից տգիտութեամբ կամ գիտութեամբ, ոչ միայն կորուսանեն զիրաւունս իւրեանց, այլ և դատապարտին ըստ սովորութեան։

Քանզի բողոքէ Աբրայն առ Պատրիարքն Վէնէտկոյ, թէ միտքանք իւր ապատամբեալ՝ արկեալ են զինքն յիշխանութենէ անտի իւրոյ, վասն որոյ խնդրէ ի նմանէ օգնութիւն։

Գնայ Պատրիարքն ի վանս և դատապարտէ զմիտքանսն, իբրեւ զյանցաւորս, զի ընդդէմ օրինաց տէրութեան և կանոնաց եկեղեցւոյ արարեալ էին նոքա զայն, և հրամայէ նոցա ի ծունկս անկեալ խնդրել թողութիւն յԱբրայէն իւրեանց։ Հնազանդին միտքանքն յոչ կամաց, առանց խօսելոյ ինչ, անծանօթ գոլով Իտալացւոց լեզուին, բաց յերկուց ոմանց անտի, ի Հ. Ամառաւծատուր Բարիկէ, և ի Հ. Մինասէ Արթմեցւոյ, զոր միայն խօսին, բայց լսելի ոչ լինին, վասն որոյ ոչ կամին հնազանդիլ հրամանի Պատրիարքին, ոչ համարեալ զնոսա գլուխ ապատամբաց՝ աքսորել ասյ ի Թրեան քաղաք։

Կարծէ Աբրայն, թէ այնպիսի գնայիւք իւրովք, դադարեցոյց զմիտքանսն ի մոաց անտի իւրեանց. այլ սխալի նա ի կարծիս իւր մեծապէս. քանզի զայրացեալ նոցա ընդ բռնաւոր գնացս նորա, առաւել եւս հաստատին ի միտս իւրեանց, և ոչ դադարին ի որոնչելոյ զնմանէ։

Լուեալ զայն Հ. Կարապետ վարդապետի, ձեռաւուն աշակերտի Մխիթարայ Աբբայի, որ կայր յայնժամ յՈռնկարիա, գնայ վաղվաղակի ի Վէնէտիկ, և խնացեալ զսկզբնապատճառն խռովութեան, զկծծութիւն Աբրային, Ջանայ բառնալ զայն ի միջոյ։ Առնու ի ձեռաց եղբօր Պօղոսի զպաշտօն հանգերձապետութեան, և տայ միտքանից ազատելիս լայն յոյժ առաւել քան զչափն. սակայն այնու միայն չդադարի տրբառնչ միտքանից։

Խնացեալ զայն Աբրային՝ այլ իմն բռնաւոր գնայիւք վարի ընդ նոսա. առաքէ զոմանս ի նոցանէ ի Պօլիս, հեռագրանքով գնասա ի վանայն։ Գնացեալ նոցա ընդ Թրեան քաղաք՝ հանդիպին անդ աքսորեալ ընկերաց իւրեանց, Հայր Բարիկի

և Մինասայ, որոց ընկալեալ էր անդ պատգարութիւն ի տէրութենէն Ասորւոյ՝ բնակէին յանբնակ ինչ վանս Փաֆուչին կրօնաւորաց, և կէին ըստ օրինակի նոցա, մուրողութեամբ։ Համոզէ և հաւանեցուցանէ զնոսա Հ. Բարիկ ճարտարութեամբ իւրով, և երեւակայեալ ակնկալութեամբ բարեաց հասարակաց ազգիս, միաբանութիւն մի հաստատել անդ, ըստ օրինակի Մխիթարայ Աբբայի, և ըստ դիտաւորութեան իւրեանց, հաստատել անդ ազգային դպրոց մի հասարակաց։ Համոզին հաւանին նոքա ամենեքեան, յորոց մի ինքն Հ. Անտոն վարդապետ ձեռասուն աշակերտ Մխիթարայ Աբբայի, և ընտրեն Աբբայ իւրեանց զնա ինքն զՀ. Բարիկ, և այնպէս մնան ոմանք անդ ի Թրեատ քաղաք, և ոմանք գնան անտի ի Պոլիս։ Որ հրաժարակեն զվճարիլ Ղէնէտկոյ միաբանութեան, և զհաստատիլ Թրեատին։ Հաւատան որք ի Պոլիս Մխիթարեանք բանից նոցա, և ճանաչեն զՀայր Բարիկ Աբբայ իւրեանց ի Թրեատ քաղաք Ասորւոյ տէրութեան։

Կացուցանէ Բարիկ Աբբայն զՀ. Անանիա ճանապարհն որ ի Պոլիս գործակալ Թրեատի միաբանութեան, և յանձնէ նմա ժողովել արծաթ ասոր անտի հանդերձ վաշխու, ի հաստատութիւն ազգային դպրոցին։ Սկսանի Հ. Անանիա ի Պոլիս ժողովել արծաթ հանդերձ վաշխու, և առաքէ զերկուս ոմանս ի Հնդիկս, հաւաքել նպաստիւք արծաթ յազգայնոցս անտի ի հաստատութիւն ազգային դպրոցին։ Առաքեալքն ի Հնդիկս էին Հ. Նիկողայոս Բուզայեան, և Հ. Պօղոս Միհիթեան, զորոց յիշատակեալ եմք ի պատմութեան Մ. վարժարանին, յէջ 19 Ա. հատորոյ։

Առաքէ Հ Անանիա զմի մասն ժողովեալ արծաթոյ ի Թրեատ առ Բարիկ Աբբայն, ի գնել ստացուածս, և եկամտիւք նորին հոգալ զծախս դպրոցին, և զմիւս մասն յանձնէ ի ձեռս քեռասն իւրոյ ի Պոլիս, յարգել զայն լոմպարտութեամբ։

Գնէ Բարիկ Աբբայն ստացուածս ի Թրեատ յանուն միաբանութեան իւրոյ, և հաստատէ անդ ազգային դպրոց մի,

յոր ընդունի թագաւորութիւն և ձրի մանկունս, ակն ունելով նպատակս ի բարերար ազգայնոցս որք ի Հնդիկս։

Նպատակ ազգային դպրոցին ի բարերարացն որք ի Հնդիկս տակաւ լինին, և այն պայմանաւ և ժամանակաւ, եթէ բան ցանկութեան Աղա Եղիազարի Ռաֆայելի, Թրեատի միաբանութիւն թարգմանէր զՊատմութիւն Հռոմայեցւոց, և զՀնախօսութիւն, զգործս Ռոլլէնի Գաղղիացւոյ ի Հայ լեզու, և տպագրել և վաճառել զայն։ Թէպէտ և խոստանայ Թրեատի միաբանութիւն առնել զայն, այլ չկատարէ զխոստումն իւր. վասն որոյ և չկամի Եղուարդ Ռաֆայէլ նպատակ դպրոցին այնորիկ։

Ի չգտանել Թրեատի միաբանութեան նպատակ ինչ յայլ ուստեք վասն զդպրոցն, քանզի եկամուտք որ ի տատցուածոցն, հազիւ բաւէին վասն առանձին ծախուց իւրեանց։ Տեսեալ զայն պարտաւորացն որ ի Պոլիս, սկսանին պահանջել ի Հ. Անանիայէ զվաշխիւ տուեալ արծաթ իւրեանց։ Տագնապեալ նորա անտի՝ չգիտէ զինչ առնել. զի զմի մասն արծաթոյն սեպհականեալ էր Թրեատի միաբանութիւն, և զմիւս մասն կիրեալ էր քեռաւն իւր, և անանկացեալ։ Խորհի նա հնարս ինչ գտանել, առ ի զերծանել զանձն ի ձեռաց պարտատերց անտի։ Գնայ ի Թրեատ առ միաբանութիւն խելամուտ առնել զնա անյաջող եղից իրացն, ապա համոզել և հաւանեցուցանել միանալ գործեալ ընդ Վենետկոյ միաբանութիւն, գործուցանելով յանուն նորին զատացուածս իւր որ ի Թրեատ, և հատուցանելով նորա զպարտս իւր որ ի Պոլիս։ Համոզի հաւանի Թրեատի միաբանութիւն առաջարկութեան Հ. Անանիայի, և պայմանաց նորին։ Անցանէ նա անտի ի Վենետիկ առ Մխիթարեան միաբանութիւն, և առաջի առնէ նմա զխնդիրն Թրեատի միաբանութեան, հանդերձ ակնկալութեամբ բաղում բարեաց որ ի միութենէ անտի։

Ասէ Մելգոնեան Աբրայն, թէ պարտ էր Թրեատի միաբանութեան նախ հատուցանել զպարտս իւր որ ի Պոլիս, ապա խնդրել զմիութիւն երկու միաբանութեանն։ Զայս ասէ և ի տոյն կամս յամառեալ մնայ։

Յուսահատեալ զայն Հ. Անանիայի՝ գտանոյ ի Պօլիս, և հարստութեամբ իւրով լուցուցանէ զպարտատերսն ի կենդանութեան իւրում։

Յետ մահուան նորա ոչ եւս լուին պարտատերքն։ Կացուցանին գործակալ ի կողմանէ իւրեանց զոմն ի քահանայից անտի, և առաքեն զնա ի Թրեատ պահանջել ի միաբանից անտի զարծաթ իւրեանց։ Գնայ գործակալն ի Թրեատ և նոքա ունեն զամս ինչ, և ասկայն չկարէ ի ձեռս բերել ինչ, քանզի զլանայ միաբանութիւն ճանաչել զինքն պարտական պարտուցն այնոցիկ, ասելով մերթ թէ չէ առեալ ինքն այնչափ արծաթ ձեռամբ Հ. Անանիայի, և մերթ թէ ի նմանէ պարտ էին պահանջել մինչ կենդանի էր նա։ Թէպէտ և ի զատաման կոչէ նա զմիաբանութիւն, այլ ոչինչ շահի անտի զի չկարէ դատաւորն որոշել ինչ, պաշտպանելով միաբանութեան Աւարից տէրութիւն. և այնպէս ապառի յայնժամ միաբանութիւն ի ձեռաց պարտատերց իւրոց։ Բայց ի ժամանակի Գաղղիացւոց տէրութեան ի Թրեատ, Գաղղիացի ոմն ի Պօլիս առանց ի պարտատերցն անտի առեալ ինչ արծաթով զմերձակն պարտուց միաբանութեան, և գնայ ի Թրեատ պահանջել զայն ի նմանէ դատաստանաւ։

Պարտաւորի միաբանութիւն յօրինաց անտի հատուցանել զպարտս իւր. և ի շունել նորա արծաթի հատուցանել ընդ այն, զրաւէ պահանջօղն զամենայն կալուածս միաբանութեան և վաճառէ զայն հրապարակաւ։ Ասի՝ թէ գտանէ նա ի կալուածոց անտի իւրեւ երկու միլիոն ֆրանք. քանզի ի ժամանակի անդ՝ բազմամարդ դրամ քաղաքին բարձր լինի գին կալուածոցն։ Ահա արդիւնք կծծութեան և յամառութեան Մելքոնեան Աբրայի. զի եթէ հաւանեալ էր հատուցանել զպարտս Թրեատի միաբանութեան, վայելէր Վենետկոյ միաբանութիւն զայնչափ արծաթն, հանդերձ միութեամբ երկու միաբանութեան, և շինութեամբ ժողովրդեան, որ շահեկանագոյն էր քան զամենայն ինչ։

Կոզապտեալ Թրեատի միաբանութեան յամենայն ստացուածոց անտի, և կարօտեալ աւուրն պարենի, դիմէ առ կայսրն

Աւարիոյ խնդրել ի նմանէ պատապարութիւն, և պարէն կենաց։

Պատապարէ զնա կայսրն Աւարիոյ, տալով նմա բնակութիւն յարուարձանի անդ Վենետկի զանբնակ վանք մի Փափուչին կրօնաւորաց, և պարէն կենաց՝ զառանձնաշնորհութիւն տպագրութեան Խորհրդատետրի ի Լատին լեզու ի կիրառութիւն գղեցն որ ի տէրութեան իւրում։ Կեաց միաբանութիւն ի սկզբան անդ մուրողութեամբ։

Զամս երեսուն և հինգ կալոյ այս միաբանութեան ի Փրեսատ քաղաքի, կայ միշտ ի գործառնութեան, փոփոխէ նա զԱբբայն իւր, մերթ զՀ. Բարիկ և մերթ զՀ. Անտոն ընտրէ. բռնայ նա ազգային դպրոց մի, և փակէ զայն. թարգմանէ և տպէ զՀռովմայեցւոց պատմութիւն, զգործն Ռոլլէնի, բայց թերթ մի միայն, և կասի անտի, տակս անկարողութեան և կարօտութեան իւրոյ։ Թարգմանէ Հ. Մինաս Արթինեցին զպատմութիւն Ամերիկոյ, զգործն Ռոբէրթսոնի Անգղիացւոյ, յԻտալացի լեզուէ, ի կարծեցեալ իւր Հայ լեզու, և արհամարհի այն, տակս անպիտան թարգմանութեան։

Ընդ այսոսիկ գործառնութիւն և անգործութիւն Փրեսատի միաբանութեան, նախանձընդդէմ լինի Վենետկոյ միաբանութիւն. քանզի ի ժամանակի անդ ի լոյս ընծային անտի այսքիկ մատեանք. Քերականութիւն. Ճարտարութիւն. Թուաբանութիւն. Երկրաչափութիւն. Հայոց Պատմութիւն. թարգմանութիւն Հռովմայեցւոց Պատմութեան, գործոյ Ռոլլինի։

Արդարանայ ասասնոր ասացեալն թէ «Յամենայն չարեաց «բարի ինչ եկանէ։»

Երանի թէ այնու նախանձու լինէր նա միշտ, կատարէր զպատրաստս իւր։

Միաբանութիւն Փրեսատի ունի անդ և այլ ինչ գործառնութիւն մի. Աբբայն նորա Բարիկ ճարտարութեամբ իւրով եպիսկոպոսանայ։ Քանզի ի 1800 ամի, յորժամ Հռովմ ընդ տէրութեամբ Գաղղիացւոց էր, ընտրութիւնն Պիոս Է. Պապին ի տէրութեան Աւարիոյ, ի Վենետիկ լինի։ Բարիկ Աբբայն պատնէշ առեալ զայն զնայ անդ, իբրեւ ի տես ընտրութեան

Պապին, ի ձեռն բարեկամաց իւրոց ընդունի շնորհ ի Պապէն, զաստիճան եպիսկոպոսութեան։

Երանի թէ միաբանութիւն Վենետկոյ նախանձընդդէմ այնմ ոչ լինէր, պահեալ էր զպատուէր հիմնադրին իւրոյ, չունել եպիսկոպոս Արբայ։

Իբրեւ փոխադրի Թրեատի միաբանութիւն ի Վիեննայ, և պատապարի յԱւստրիոյ կայսերէն, որ ըստ օրէ յառաջադէմ լինի. քանզի Արբայն նորա Գերապայծառ Բարիկ ծանօթանայ իշխանաց, արքեպիսկոպոսի Վիեննայի, և Նուիրակի Պապին ունի, և ցուցանէ նոցա զինքն օրինաւոր յաջորդ Մխիթարայ Արբային, հետեւելով շաւղաց նորին, իսկ զՄելգոնեան Արբայն ապօրինաւոր յաջորդ Մխիթարայ ասելոյ, չեղելով ի շաւղաց նորին։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և կասկածաւոր ի հաւատս Հռոմէական եկեղեցւոյ, զնա և զմիաբանս նորա ասէ։ Զայսոսիկ և գրով տայ ի Հռոմ, և կասկածելի առնէ զմիաբանութիւն Վենետկոյ, և ընդ խիստ քննութեամբ և զատաստանաւ արկանէ զնա, և զայսոսիկ յեղյեղէ միշտ յսկանչս միաբանից իւրոց, հանդերձ արհամարհանօք զգրուածոց նոցա, պակասելով յայնս հայկաբանութեան, ըստ ճանաչման և գիտութեան իւրում։ . . .

Այսոքիւք կրիւք վարակեալ ոչա՝ ասեն զՎենետկոյ միաբանս, և չհետեւին նոցա ի գրուածս իւրեանց, այլ նոր իմն լեզու հնարին, զոր ոսկեղեն գաբուռ կոչեն, որով թարգմանեն և յօրինեն ինչ ինչ մատեանս, և որով պարծին ի գիտութիւն իւրեանց։

Ի միաբանս Գեր. Բարիկի գտանի ոմն նման նմա բնաւորութեամբ, և առաւել քան զնա խորամանդութեամբ, Հ. Արխատակէս Ագարեան, որ նախ ի Հռոմ ի դպրոց Մաւրոցին գտանիցի, ապա ի ցրուել աշակերտաց դպրոցին այնորիկ, ասկս ուրեքոյ Գաղղիացւոց Հասարակապետութեան ի Հռոմ, գնայ նա ի Վենետիկ ի վանս Մխիթարեան մտանել ի կրօն նորին. և ի չընդունել զնա Մելգոնեան Արբային, անցանէ անտի ի Թրեատ, և մտանէ ի Կրօն Բարիկ Արբային։

Ա.Ջ բարուկ լինէր նա Գեր. Բարիկին ի Վիեննայ, և օժան դակ վրէժխնդրութեան նորա ի միաբանից Վենետկոյ, այլ և պատճառ ցաւագին արտաքս մահու նորին իսկ Գեր. Բարիկի, յա. ջողելով զաթոռ Արքայութեան ի կենդանութեան նորա, դառամեալ հրատարակելով զնա։ Ընդ այն զնացս Ազարեանի հակառակին ունէր ի միաբանից անտի, և բաժանին ի միաբանութենէն։

Երբեմն յաջորդէ նա զաթոռ Արքային ի Վիեննայ, և ձեռնադրի եպիսկոպս, սկսանի ժողովել արծաթ ճարտարութեամբ իւրով, կեղծաւորեալ բարեպաշտութեամբ. ապագրէ ի տպարանի վանաց իւրոց, բարոյական գրեանս ի լեզու Գերմանացի, առ ի զառաջս ասնուոյ չարեաց, ապականութեան բարուց տարածելոյ ի Գերմանիա, և անձամբ չրջեալ ի քաղաք քաղաք՝ բաժանորդ գտանէ գրեանցն այնոցիկ, և շահի արծաթ, որով չինէ տուն մի մեծ ի բնակութիւն միաբանից իւրոց։

Յաջորդէ նա և զհակառակութիւն նախորդին իւրոյ, որ ընդ միաբանութեան Վենետկոյ. խորհուրդ տայ Յովհաննու Մուրատ, զվարժարանն Հօր իւրոյ որ ի Պատաւիոն, և ընդ մատակարարութեամբ Վենետկոյ միաբանութեան, արկանել զայն ընդ տեսչութեամբ Աւստրիոյ տէրութեան. և խնդրէ ի Մեթերնիխէ, երբեմն ի կողմանէ Յովհաննու Մուրատի կատարել զայն։ Պահանջէ Աւստրիոյ տէրութիւն ի միաբանութենէ, Վենետկոյ հաշիւ մատակարարութեան Մուրատեան վարժարանին։ Զարշարի Վենետկոյ միաբանութիւն զոմն եօթն հանդերձ ծանր ծանր ծախիւք ապատել զինքն ի պահանջմանէ անտի, և երբեմն տեսանէ թէ չկարէ ապատել, փոխադրէ զՄ. վարժարանն ի Փարիզ։ Ընդ այն խորհուրդ և միջնորդութիւն Գեր. Ազարեանի վարձատրէ զնա Յովհաննէս Մուրատ, հաստատելով զծախս տպագրութեան Տիեզերական Պատմութեան Պատմչի։

Ի ժամանակի վիճոյ և հակառակութեան Գեր. Շատուն ընդ Վենետկոյ միաբանութեան յաւելոյ ի Հռոմի, պատուհաս առեալ զայն վրէժխնդրութեան իւրում Գեր. Ազարեան, գնայ անդ ի Հռոմի առ ի չնչել տալ Պապին զամբաստանու-

թիւն ապատամբութեան նախորդին իւրոյ, և ի հաստատել զահմանադրութիւն միաբանութեան իւրոյ, որով և զօրինեալ յաջորդութիւն իւր և զանպհական ժառանգութիւնն, զանուանակրութիւն Մխիթարեան։ Խնդրեալ Պապին Թ. Պիոսի զհաստատութիւն երկու միաբանութեան ընդ միմեանս կամի զապարեցուցանել զայն, միացուցանել զնոսա։ Հաւանի այնմ Գեր. Հիւրմիւզ, այլ ոչ հաւանի Գեր. Աղարեան, ասելով Պապին՝ թէ առանձնաւորութիւնն օգտակարագոյն է եկեղեցւոյն Հռոմայ։ . . .

Միաբանք Վենետկոյ պարծին թէ հարուստ աշակերտք են Մխիթարայ Արբայի, և հետևողք վարդապետութեան նորին. Միաբանք Վիեննայի պարծին թէ առանդաստահ աշակերտք են Մխիթարայ Արբայի, և հետևողք շաւղաց նորին։ Սակայն երկոքեան եւս են իրրեւ զԴպիրս և զՓարիսեցիս, որք պարծէին թէ որդիք Աբրահամու էին, և զգործս նորա ոչ ունէին։

Մեկնի Գեր. Աղարեան ի Հռոմայ, դառնայ ի Վիեննայ հրաւանդապին մարմնով, վարակեալ սխալս քաղցկեղի, և պահեալ զնոյն հակառակութիւն ընդ Վենետկոյ միաբանութեան մինչեւ ցմահ, և առանդէ զայն միաբանութեան իւրոյ, իբր զառանդ արբազան. և այնպէս սուտն չար լինի տանն Մխիթարայ բուսեալն ի Թրեան և ի Վիեննայ, և խանգարիչ լեալ ի Հայկայ . . .

Ոչ ապաքէն արդիւնք են այսոքիկ բարուց և վարուց Մելդոնեան Արբային։ . . .

Դարձուք ի բանս որ զայլ գնացից նորին, հայեցեալ ի մատակարարութիւն և ի կարգաւորութիւն միաբանութեան Վենետկոյ։

Դնէ նա ի չահս զարծաթն զայն զեկեալն ի Հնդկաց առ Յովհաննէս Ազայի Սեղբոսեան բնակելոյ ի Վենետիկ իբրեւ վաճառականն, առ կարծեցեալ բարեկամի միաբանութեան իւրոյ։ Պանէ նա զարծաթն զայն զամս ինչ, և չահի այնու բաւական։ Բայց իբրեւ յերկիւղ կոչծանեման լինի հաստատակապետութիւն Վենետկոյ, և կարասեան հաստատակաց արբ-

ծաթոյ որ ի դրամանոցն տէրութեան, կամի նա հանել ոնտի զարծաթ իւր, վաճառել այլոյ զմուրհակն. և ի չյաջողել այնմ, առ պակասութեան գնողի յայնպիսի ժամանակի, վաճառէ զայն միաբանութեան, հնարիմաց լինի խորամանկութեամբ։ Ասէ նա Մելգոնեան Աբրային՝ թէ չկամի ինքն այնուհետեւ պահել առ իւր զարծաթն միաբանութեան, այլ կամի գնել ի դրամանոցն տէրութեան։ Խնայեալ զայն ոմանց ի միաբանից ոնտի՝ չհաճին ընդ այն։ Սպառնայ նա քանդել զվանս նոցա, եթէ ընդդիմացին կամաց իւրոց։ Երկնչի Մելգոնեան ի սպառնալեաց ոնտի, զիջանի կամաց նորա։ Յետ տակաւ ժամանակի կրծանի հասարակապետութիւն, վասն որոյ և կորնչի արծաթն հասարակաց, որ ի դրամանոց տէրութեան Վենետկոյ։ Եւ յետ հինգ ամաց ոնտի, ի փոխանորդել անդ Աւստրիոյ տէրութեան, բաղքեն առ նա, որք ունէին արծաթ ի դրամանոցն Վենետկոյ տէրութեան։ Հաստատեալ նոցա Աւստրիոյ տէրութիւն զշահ արծաթոյն 2 առ 100. և զայն իբր շնորհ ինչ առնէ նոցա, թէպէտ և ոչամ շնորհի անման լինի միաբանութիւն, երկուցեալ Աբրայի նորին բաղքել ընդ հասարակաց առ Աւստրիոյ տէրութիւն, և գտանել ոնտի զշնորհն զայն։

Բայց յետ վերատին տիրելոյ անդ Գաղղիացւոց տէրութեան, ի 1805 ամի, և ի ժամանակի Աբրայութեան Սոնիմանոս Ագոնցի, միջնորդութեամբ բարեկամաց գտանէ և միաբանութիւն զշնորհն զայն, թէ և չգտանի անուն իւր ի թիւս բաղքողաց։

Ահա արդիւնք կծծութեան, և վատութեան Մելգոնեան Աբրային։

Յետ յերկուս բաժանելոյ միթիթարեան Միաբանութեան, կարեւոր համարի Մելգոնեան Աբրայն սահմանադրութիւն մի որոշել միաբանութեան, և ըստ բնաւորութեան իւրում ընտրէ նա զսահմանադրութիւն Յիսուսեան կրօնին, յոր անթերի է կոյր հնազանդութեան հպատակաց, և զոր առաքէ ի Հռոմէ ձեռամբ երկուց ի միաբանից իւրոց, առ ի հաստատել զայն Պապին։ Թէպէտ և զամիսս բազում դեկերին նոքա անդ,

և շատ ջանան ի հատատել տալ զայն, այլ ոչ յաջողի այն, ի բարեբախտութիւն միաբանութեան։

Ահա բարք և վարք, և արդիւնք վաստակոց Մելգոնեան Արբային. զուգակշիռ էին բարուց և վարուց, և արդեանց վաստակոց Մխիթարայ Արբայի, և արժանաժառանգ էին նա նախորդին իւրոյ։... Ոչ բնաւ։ Եւ ահա պատճառք անշահութեան արդեանց վաստակոց Մխիթարայ Արբայի։

Մխիթար Սեբաստացին զամս յիսուն յառաջնորդութեան իւրում, ազքատութեամբ հանդերձ երկու հոյակապ վանս շինեաց, աշակերտս բազում յառաքինութիւնս և ի գիտութիւնս կրթեաց, զանազան մատեանս յօրինեաց և տպագրեաց, և եթող ապա բաւական արծաթ ի կալուսաբ պէտս կենաց միաբանութեան իւրոյ. վասն զի հաւանեալ ճշմարտութեան և արդարութեան՝ ծանեալ զպարտս իւր, և լցեալ զայն անթերի, ընկալաւ զիրաւունս իւր լիուլի, վայելեաց ի խաղաղութեան և յերանութեան։

Ստեփաննոս Մելգոն Կոստանդնուպօլսեցին զամս յիսուն յառաջնորդութեան իւրում, ոչ շինեալ ինչ արար. թէպէտ և ունէր արծաթ ի ձեռին, և կայր պէտս շինուածոց, ոչ աշակերտս յառաքինութիւնս և ի գիտութիւնս կրթեաց, և ոչ տետրակ մի յօրինեաց. այլ զմիաբանութիւնն յերկուս հեղքեաց, և զարծաթ նորին կորոյս կծծութեամբ և վատութեամբ իւրով. վասն զի անհաւանեալ ճշմարտութեան և արդարութեան՝ ոչ ծանեալ զպարտս իւր, և եղից զայն, վրիպեցաւ յիրաւանց իւրոց, եկեաց ի խռովութեան և յեղկութեան։

Ահա վասն այսորիկ բարդատանէ զնա հեղինակս, և ցաւի ընդ բաժանումն Մխիթարեան միաբանութեան։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Վ. ԱԲԱՂԵՑ

ՍՏԵՓԱՆՈՍ ԱԳՈՆՑ ԱԲԲԱՅԻ

ԾՆՆԵԱՆԸ ԵՒ ՕՆՈՒՆԸ ՍՏԵՓԱՆՈՍ ԱԳՈՆՑԻ.

Ծնաւ Սուխիսոնոս Ագոնց ի ՃՈՒՐՃՈՎ քաղաքի Գրանիլվանիոյ, յամին 1740, և անուանեցաւ ի սուրբ մկրտութեան Ամիրայ։ Հայր նորա կոչէր Գրիգոր Գիւլէր, ի տոհմէ Ագոնց. և մայրն՝ Ազատ անուն Խնկանուշանց։

Ազգատոհմն Ագոնց մի էր ի ցեղից անտի գաղթելոց յԱյրարատեան աշխարհէ, ի դդրգել Անի քաղաքին ասասանութեամբ և ուերութեամբ յամին 1330. որոց տարագէպ գնացեալ անկան ի Փերսն, ի Խրիմ, մինչեւ հասեալ ամրացան ի Գրանիլվանիա Ալենկարիոյ, յամին 1654։

Ի տասնամեայ տիս մանկութեան նոցա ծնողքն ի գպրոցս ուսանոց, յորս զարգացաւ ի հրահանգս արարչին վարուց, և վարժեցաւ ի Լատին բարբառ, և ըստ օրինաց բարեկարգ վարժարանաց քաղցրացաւ ի ճաշակս գանազան գպրութեանց։ Եւ զի մանուկ մտախոհ էր, ոչ ընդվայրինչ գեղերէր յաշակերտութիւն ուսանոց, այլ սրչափ յառաջ խուզայր ինքեան, և միտ ուսումն այլուսմ մեծապուռնի և և կարեւորականի հիմն արկանէր, նոյնչափ լիսոգոյնս խնդամիտէր յանձին նրաւմ, թէ կատարեալ իմաստութիւն, յերկուս

յոյսով ապրիմք, յեռանդուն ասուածպաշտութիւն, և ի ժիրաժիր ուսումնասիրութիւն։ Յայս պնդեալ վիճակաւ, ընդ իւր տարաւ զայն մինչև ցկատարած բազմարդիւն կենացն. և մեք յամենայն բաս նորա զայս սքանչելի ճշմարտութիւն առէպ ի նմանէ, ընդելուզմանելի դոլ զգիտութիւն ընդ բարեպաշտութեան։

Յաճել տիոցն ցեօթն և տասն ամ, յորում վառի, յեռանդն հարկանի բնութիւնս, և այր անդր շարժէ, ուղղապէ, մինչև զփափաքելին գտանիցէ, ոկրանելին խորհուրդք ելանել ընդ միտս նորա. այն՝ թէ զոր վիճակ, և զոր տարազ կենաց ընտրեսցէ անձին իւրում. զի հայրենի ազնուատոհմութիւնն զուգաւոր տեսանէր իւրում արիութեանն, զգեղերկն եւեթ յուսմունս, զիպոդագոյն քաջութեան մատցն. անդուստ դարձեալ և զեկեղեցականաց պարտալեն յաստուած, սիրելի և ըղձալի փափաքանացն։ Ի մէն մի ի տցանէ տարուբերէր զնա բնութեանն ազդեցութիւն։ Սակայն զի յամենայն իրաց մարդկան տեսուչ՝ յաւէժ Աստուած է, անօրինեաց նմա զիրան սքանչելի օրինակաւ։

Դէպ լինէր նմա երթեւեկել ի Վաչպալով քաղաք առ ազգականս իւր, և յայնմ քաղաքի ծանօթացեալ ընդ ձեռաւոր աշակերտի Մխիթարայ Աբրահօր ընդ Կարապետի վարդապետի հոգելից առն, որ էր առաքելական քարոզիչ։ Լուաւ երբեմն յեկեղեցւոջ զնորայ հոգւոյ բեռնատացութիւնն յաղագս վանեցի աշխարհի, և անդարձութեան խաչակիր կենաց։ Յայնմ հետէ սիրտ նորա վառեցաւ՝ գործով ի գլուխ հանել զբանսն ի վարդապետէն, զհետեւութիւն համապարհին հոգեւոր կենաց, և մտանել ի կարգ Մխիթարեան աշակերտացն։ Մտադիրագոյնս քննեալ զիրան յանձին իւրում, ապա մտեալ առ վարդապետն, ծանոյց խոնարհութեամբ զոր ինչ երկնէր ի մտի, ազաչեաց հրաման ընդունել ի հօրէն իւրմէ վասն իրացն կատարման։ Հայր նորա ի լսել զայն՝ պատճառանս պատճառէր, օր ի յօր երկարէր՝ յոյսն ապատասխանի տալ վասն իրացն. քանզի յանդրանկութիւն հայեցեալ, ի յուսաջադիմութիւնսն, լաւ աշխարհի խորհէր յոր-

գաբէր զնա ի տանուտէրութիւն տան իւրոյ, ոչ գիտելով յո՛ր տանուտէրութիւն հանդերձեալ էր Աստուծոյ վերամբառնալ զնա։

Յետ բուռն և սաստիկ գօտէմարտութեան՝ տարաւ զմրցունակն. զի հաւանեցուցեալ զծնողսն, և առեալ իւր զօրաւիգն զՀայրենի օրհնութիւնն՝ փութացաւ ի ճանապարհն։ Եւ զի յաւուրսն յայնոսիկ ի Վենետիկ դառնալ դէմ եղեալ էր և Հ. Կարապետի, ուղեկցութեամբ նորա եհաս ի վանս սրբոյն Ղազարու, յամին 1757. ուր զուարթացաւ սիրտ նորա ընդ տեսիլ մենարանին, և յետ միոյ ամսոյ անցանելոյ, ի 24 օգոստոսի, ընկալաւ ի ձեռաց Մելգոնեան Աբրահօր զաբեղն վիճարանիցն, և մտեալ ի կարգ նորընծայութեան՝ անուն նոր կոչեցաւ նմա Ստեփաննոս։

Յետ մարզելոյ զանձն ի պէսպէս կրթանս, մատոյց զինքն բոլորանուէր պատարագ Աստուծոյ, հանդիսապէս յանձին կալեալ զուխտս կրօնաւորական, յամին 1758. ի հոկտեմբերի 28։

Խակ եթէ ոք զհանդէս ուսումնասիրութեան նորա գիտել կամիցի՝ անհաւասիկ բազմամատեան վաստակք նորա վկայեն իրացդ։ Արդէս վերագոյն ասացաւ, խելամտեալ նորա՝ թէ որչափ ոք յաւելուցու ի գիտութեան՝ այնչափ պարտ և արժան է նմա աճեցուցանել զաստուածասիրութեանն ջանս. զի յորժամ միտք զուարթանան գիտութեամբ՝ անդրագոյն ձգին ի խորս աստուածգիտութեան, և առաւելագոյն փութով յօժարէ սիրել զաստուած. այնր ազագաւ ըստ առաջնորդել կարգի ճեմարանի մերոյ, ի գլուխ հանեալ զՀայերէն լեզուիս հմտութիւն լիուլի և զյառաջմեջ զակսեալն լատիներէն, յաւել ի նմին գիտալերէնն։ Յետոյ միտ եդեալ ի բարձրագոյնսն, ուստ դրանասիրականն և զգեղեցիկ ուսմունս, յորս զուարճացաւ իբրեւ յիրս զուգաւորս ազնուական բնութեան իւրում. զիմաստասիրականն եգիտ արժանի զգօն մտացն. և զաստուածաբանականն իբրեւ պատրաստութիւն քահանայական աստիճանին, յոր կարգեալ էր կոչումն իւր և վիճակ։ Յետ ի գլուխ հանելոյ զուսմանց իւրոց զհրահանգսն, այնուհետեւ

անդադար զամս յիսուն և աւելի՝ ոչ պակասեաց ի ձեռանէ նորա առաջնորդական իշխանութիւն առաւելեալ հետզհետէ, և ոչ դադարեաց բարի առնել վարանութեան իբրեւ մի ազգին։

Ի լրանալ ուսմանցն՝ ձեռնադրեալ քահանայ յամին 1763, ի Ղազարայ եպիսկոպոսէ, և կատարեալ զհանդէս ասաուծաբանական մարզութեանցն, ամբարձաւ ի պատիւ վարդապետութեան, որպէս վայել իսկ էր կատարեալ իմաստութեան նորա։

ԱՐԻՈՒԹԻՆ ՈՎԻՈՑ ԵՒ ԱՐԴԻՆԵՐ ՎԱՍՏԱԿՈՑ ՍՏԵՓԱՆՈՍ ՈՒԱՐԵՑ.

Զոր իրրեւ պատշաճեցոյց անձին Սուքիասեանս վարդապետս և զուարճացոյց զամենեսին, այնուհետեւ խորհուրդ և ընտրութիւն երիցագունից մակացու լեալ իմաստութեան և հաւատարմութեան նորա, եռուն նմա առանդ զյոյս բոլանդակ վերանութեանն, որոյ ամենեքեան բազմարդիւն է, և կորուստն ընդարման, ամենեին նմա յանձն արարին զվերակացութիւն մանկանց յօժարելոց մատանել ի Մխիթարեան աշակերտութիւն, ի նա տանձնեալ զհոգեւորաց և զաշխարհականին ծանրաբեռնութիւնն։

Եալեալս նա յորդիսն յանձնեալս նմա, և զմարդարէին երկրորդեաց. «Ո՞ ինձ ծնաւ զսոսա, զի ես մինակեալ էի և անզաւակ։» Այլ և առ նոսին ի վերայ բերեալ՝ թէ «Որքա՞ն որդիք իմ են, զորս ես ինձ սատուած, ոչ ակնարկեաց և ի պարս իւր, և զերկուս զայսոսիկ կիսադրեաց անձին իւրում ի գլուխ հանել անվրէպ. առաջին՝ հրահանգել զնոսա ի պարս կրօնաւորութեան յոր կոչեցանն, առնել զնոսա նմանօրէս իւր. երկրորդ մարդել զնոսա յաւանեան բազմազարդս, յորս տարփացեալ էր հանճար նորա և միտք լայնախարհուրդ։ Յառաջնումն՝ արձանացոյց զինքն առաջի իւրոց սիրելի որդւոցն օրինակ շինութեան, և զվարս իւր անարատս, մատոյց նոցա օրէնս և կանոնս նմանութեան, առաւել քան զբանից ազդեցութիւն։ Միօրինակ խնամք կալաւ ի վերայ ամենեցուն՝ Չան ի գործ արկեալ՝ ոչ միայն տպաւորել ի միտս նոցա՝ թէ

հրաժարեալ են յաշխարհէ և յամենայն պերճութենից նորա, այլ և զայն՝ թէ կայ մեզ նոցա վասն աշխարհի աշխատել, վասն ազգին իւրեանց քրիստոն և առաւելեալս յանձն առնուլ և այն առանց փոխարինի, մանաւանդ թէ հոգածանաք հանդերձ։ Զայն ասկս փութացաւ խելամտել զնոսա՝ թէ զինչ է կենցաղս, և վասնակաւորացն ինքնակրկին զինչ խորհուրդս պարտ իցէ յանձին առնել։ Զոյն կէս Նպատակի եղեալ էր իւր մեծին Մխիթարայ, և ի նոյն նմանապէս ակնարկէր զգօնութիւն Ստեփաննոսի վարդապետի Ագոնց։

Յերկրորդումն պնդեաց զանձն՝ ձեռնարկել անվեհեր յամենայն ուսմունս օգտակարս. վասն որոյ սկսեալ ի մանունցն մինչև ի բարձրագոյնսն նորանար զարդս ուսումնասիրութեանց ամենայն զդպրատուն իւր, և զաշակերտսն ճոխացոյց հանճարով և իմաստութեամբ։

Յիշատակարանք և ուսանողութիւնք Ճեմարանիս յայտնութեամբ ունին, թէ ի ձեռն նորա սկիզբն կալան բազմազիմ պիտանի դպրութիւնք ի շտեմարանին, ի քերթողականին, ի բանասիրականին, ի մեծանուն մատենագրաց սեղանութիւնս, յազգասիրական արուեստից վարժս, և որ այլ ևս բան նոցուն տարազս. զի յոր ինչ և ձեռն արկանէր, և յոր ուսումն վարէր զաշակերտսն, չվրիպէր ի յուսոյն։ Յաւել ի սոսին և զհայրենի հայկազանութեանն պերճութիւն. զի յամենայն դիրս նախնի մատենագրաց մերոց խնամով յաճեալ, և զանձեալ ի յիշողականին զընտիր ընտիր նոցայն բազմարութիւնս, հատարակաց եղ զքաղցրութիւն հայրենի բարբառոյ մերոյ. զոր վասն բաւ ևս յղկելոյ, և հանապարհ կազմելոյ ամենեցուն ի մատենագրութիւն հայերէն, զոր զանձրնուռոյեալ ի հարբուտութենէ, ձեռն արկ յօրինել և տպագրել զդիրս հարատարութեան յամին 1775, բաւ կանոնաց քոչ վարժապետացն Կիկերանի, և Կուինտիլիանոսի։ Եւ զի տեսանէր զազգն մեր ի բազում դպրութեանց թերի և կարօտ, հոգացաւ յուսալ ի նմին բազում ինչ պիտանի ի յօրինուած տաղաչափութեանց և ազգի ազգի քերթուածոց, որպէս զի տակաւուրք բազում գործ վճարեցեալ։

Զուարճացան ամենայն ընթերցասէրք ազգիս մերոյ ընդ այն գիրս նորս. զի յետ ապատելոյ Հայրենի բարեգործութեանցն առաջնոց՝ մինչեւ ցայն վայր ոչ երեւեցաւ մատեան այնպիսի, վասն որոյ իբրեւ ծարաւիք դիմեցին ի գիրս նորս, մեծապէս զմայլեցան ընդ շահն որ ի նմանէ, և յայնմ հետէ զհամբաւի հարաւ քաջութիւն ոնուան նորս ընդ ոլորտս Հայաստանեայց։

Եւ զի ոչ էր արժան մնալ նմա ընդ գրուանս և ի թագատի, այլ մինչ ի հրապարակի լուսափայլել, յետ կատարելոյ զգործ վերակացութեանն ընտրեցաւ յամին 1785, Աթոռակալ և գործակից Արքայական իշխանութեան յամենայն արարս միաբանութեանն, որ ի ներքս և որ արտաքս։

Ոչ սխալեցին յընտրութեանն, զի յարդարեալ գոին զնա ամենայն առաքինութեամբք պատկանաւորք ի գործս օժանդակութեան առաջնորդին. վասն զի ընդ ամս հինգ յորս կալաւ զայն գործ, փայլեցոյց զխոհականութիւն իւր, զխոնարհութիւն և զքաղցրութիւն ընդ վանականս և ընդ օտարս։ Յայն ամենայն գրաղանան յորոց պակասեցոյց և ոչ մի՛ յաւելան նմա ընդ երկար ժամանակք զգրովք դեգերելոյ, զորոց զճաշակս բնաւ ոչ հեռի առնէր յիւրմէ. վասն զի ժրութիւն և արիութիւն ոչ երբէք կասին յօգտակարաց, թէպէտ և ծանր ծանր արարք յորդեալ զեղուցուն զնոքօք. և այն եւս քաջայայտութեամբ ծանուցեալ է՝ թէ քաջ մատենագիրք որչափ ի մեծամեծ արարս արտաքին աշխատեցին՝ այնչափ զեր ի վերոյ գտան և գրաւորական արդիւնք նոցա. քանզի ներհուն հմտութիւն յիրս իրս աշխարհի, և խորհրդոցն շուրջ յածել զրաղում իրօք, լուսաւոր երեւեցուցանել զմարդապետութիւն բանիցն, և ի տեղեկութիւնս փորձ։ Զեռն արկ օժանդակութեամբ աշակերտացն իւրոց յօրինել կազմել ընդհանուր աշխարհագրութիւն, և զհամօրէն տիեզերաց զհանգամանսն բովանդակել ի նոսին պարզ բանիւք և զիւրմանց կարդաւ, Ջանացեալ ծանօթ կացուցանել զազգ իւր համառարած գնացս, զինչ ազգք կացին ի ներքոյ երկնից, և քանի՛ նահանգք թագաւորութեանց, զինչ լեզու

նոցա և դպրութիւն, զինչ օրէնք, և կրօն և արարք, և վաճառք, այլովքն հանդերձ։

Ի մշակել նորա զՀայերէն դպրութիւն վասն ազգին իւրոյ և Հայրենեացն՝ մատեան և օտարականք ուսանել ի նմանէ Հայերէն։ Սիմոն Լուսոյ ոմն քահանայ Գաղղիացի, հրամարտակաւ Լուիզի ԺԶ. թագաւորի Գաղղիացւոց եկեալ ի Վենետիկ ուսանել ի վանս մեր Հայերէն դպրութիւն, յանձն եղեալ Ստեփաննոսի վարդապետի ուսուցանել նմա զքարոզութեանն, որ զամս երիս տքնեցաւ յայն գործ՝ ցանգ ընդ նմա կալով ի թարգմանել նորա ի Հայոց ի Լատին զՀայերէն մեծ բառարանն. թող և զայլ Չանս վարդապետիս ի վերայ Գաղղիացւոյն, որով կարեաց զնա ընդ ինքն, և իբրեւ զեղբայր իւր և զաշակերտ պարաւանդեաց զսիրտ նորա՝ Հրաշալի տարբերութիւնք խմաստութեան և վարուց իւրոց։ Այնպէս՝ զի փոխարէն գեղեցիկ երախտեացն՝ ի զառնալ նորա ի Փարիզ հետամուտ եղեալ կանգնել անդ արքունի ծախիւք վանս և բնակութիւն վասն Մխիթարեան վարդապետաց, և զնոյն ինքն զՍտեփաննոս վարդապետ կարգել ի գլուխն Գաղղիական պետութեանն վարժապետ լեզուի Հայոց։ Զայս անշուշտ ի գլուխ տարեալ էր նորա՝ եթէ աշխարհն Գաղղիացւոց ոչ այլափոխէր յայնժամ, և քաղաքական յուզմամբք ոչ տապալէր ամենայն բարեձեւութիւն տեղւոյն ի ժամանակին յայնմիկ։

Գոյր հատանէր տպա զէպ ժամանակ՝ զի անձամբ երեւեցեալ տեղեաց տեղեաց, և ընդհանուր ծաւալեալ զհոս անոյշ գիտութեան իւրոյ. զի պէտք տեղանատարելոյ զաստուածային բանն զկոչմամբք Դրանիլիանեաց առ մերոյդեանս ժողովուրդն՝ հարկաւորէին զԱրքահայրն Մելգոնեան յղել անդ զՍտեփաննոս վարդապետ, յամին 1790։ Եղ ի մոլ վարդապետն՝ բառ պարտուց հնազանդութեան և առաքելական մշակութեանն զոր ուխտիւք հաստատեալք յանձին կալեալ էր՝ հաստատել Հայրենի երկրի ծննդեանն իւրոյ լի և զեղուն ընդ դաստիարակութեան զոր ի մանկութենէ ընկալաւ։ Յաղագս որոյ ապատագինեցաւ հաւատով ի ապաստարութիւն Վահանայնին,

կազմ և պատրաստ, ցոլել զանձրևս վարդապետութեանն ընդ բուխանդակ նահանգն, անխտիր ի սիրտս արդաւանդս և ցամաքուտս։ Զի թէպէտ հանապազորեայ բնակութիւն նորա ի Պուշպալով էր, այլ ուր պէտքն պահանջէին՝ ընթանայր և յայլ մօտաւոր քաղաքս և ի գիւղս, գիտելով թէ յայն իսկ առաքեցաւ. ոչ պիտութիւն եղանակայն խարեաց, ոչ ի ճանապարհայն դժուարութենէ զանգիտեաց, առ ամենայն մարդ ընթացաւ, և զամենայն մարդ վիճիթարեաց։

Տեսեալ նորա թէ յամենայն կողմանց դուռն բաց է նմա յԱստուծոյ Աստուծոյ, խորհուրդ քարիւք հաստատեաց ի միտս իւր, զայն ամենայն եռանդն ժողովրդեանն շրջել յօգուտ նոցա և ի բարին, և պատճառս տալ առաւել ևս յարդարելոյ առ Աստուած պաշտօնասիրութեանն։ Յաղագս որոյ հոգացեալ նախ յառժամանակեայ նորոգութիւն բնակութեան իւրոցն, յետ այնորիկ ձեռն արկ յօժարական տրամք ջերմեռանդն ժողովրդեանն ի շինուած նորոյ եկեղեցւոյ, զի գառաջին խաթարեալն և զիրթին չակեալ՝ ի հիմանց բարձրակերտեաց տաճար օրհնութեան Աստուծոյ, ուղղեալ ինքն անձամբ երիս, առ նմին և զանգակատուն, առ հասարակ վայելուչ և գեղեցիկ ճարտարապետութեամբ։

Յայսմ ամենայնի որչափ փառաւորէր անուն նորա, և պատկառելի երևէր առաջի զանազան ազգաց բնակչաց կողմանցն այնոցիկ, ինքն առաւել ևս ցածնայր յինքն ի խոնարհութեան իւրում, յայն միայն դէտ ակն կալեալ՝ զի փառքն յԱստուած գրեսցին, և օգուտն ի ժողովուրդ անդր դարձցի, պահեալ ինքեան զանազանչ խոնարհութիւն։ Վասն զի առ այնքան մեծամեծ արարովք իւրովք հոգացաւ ծածուկ պահել յամենեցուն զանուն իւր և զյիշատակ։

Երբեմն այսպէս արդիւնք և խոնարհութիւն լծեալ երթային առաջի նորա, համբաւ մեհուան Մելգոնեան Աբրահոր եհտա անդ, և առ ինքն Սանփոնոս վարդապետ Ագոնց կոչեցաւ ի Վենետիկ յօրինաւոր ժողով ընտրութեան յաջորդին, հանդերձ այլովք երիցագունիւք որ ի կողմանս կողմանս աշխարհի։

Ելեալ ի ճանապարհէ՝ հասանէր ի դէմ եղեալ տեղին, որում մեայր ժողովն գումարեալ յընտրութիւն օրինաւոր գլխոյ միաբանութեանն։ Վասակոյն Նորա առաւելութիւն, համբաւոյն վասն բարձրաքարոզ, առաքինութեանցն անուշահոտութիւն, քաջութիւն ի գործ աւանդական, տեղեկութիւն յամենայն անցս միաբանութեանն, պերճ գիտութիւնն, որքայսպանծ բնաւորութիւնն, հասակ և գիտակ մարմնոյ բարձր և վայելուչ, ճմլէր զսիրտս ամենեցուն, զԱրքայութեան զնկարագիրսն ի նմա տեսանելով։ Եւ ահա միձակ և ընտրութիւն զնա վերակոչէր ի բարձրագոյն աթոռն յամին 1800, ինոյեմբ. 9. և ամենեքին ցնծան ընդ առաջ Նորա ի գահ անդր մատուցանել։ Նա ինքն միայն խռովէր ընդ այն, զոյն հասանէր յերեսայն, և ահ պատէր զնոսա, որոտանէր ապաշէր՝ թոյլ առնել անձին ի ծանր գործոյ անսի, զանրաւակութիւնն առաջի մատուցանելով։

Յայտնի կացոյց նմա ժողովն թէ վայրապար է զդէմ ունել աստուածեղէն ընտրութեանն՝ որ զտկարս ընտրէ և զօրացուցանէ քան զհզօրս. «Յուշ լիցի քեզ ասեն, և զոր ասաց «արքազան Պապն Պիոս՝ յընտրիլ իւրում ի Պետրոսեան աթոռ «ի ամին տարւոջ ի քաղաքիս յայսմիկ. Աստուած զիս զյետ«նեալս ընտրեաց ասէ, զի ցուցցէ՝ թէ յոյսդիտում ժամա«նակի ոչ մարդ է զեկավար եկեղեցւոյ իւրոյ, այլ Աստուած «ինքնին։ Եւ զու ի նոյն միտս յանձն առ զընտրութիւնդ «ի գլուխ միաբանութեանս։» Յաղթեցաւ զիշաւ. զայր միանգամ նկուն եղեւ, զի միշտ յաղթանակեցէ. խոնարհեցոյց զգլուխ իւր՝ նուիրեալ Աստուծոյ բոլանդակ զանձն իւր։

Յայնմ հետէ ակնարկեալ ի պարտս իւր, և յընդարձակութիւն գործոյն, խելամտեալ բնաւորք զպծնութեանսն՝ թէ, զգուշութիւն կանոնաց միաբանութեանն ամենայնի անհրաժարելի է, զի ի նոսին հիմնացեալ է շինուածն ողջ, և նոսին բարգաւաճէ կրօնաւոր և օգտակար յանձնառութիւնն օդնելոյ հայրենի ազգին հոգեւոր մշակութեամբ, և ուսումնական հրահանգաւք։

Եսեա դարձեալ և զոյն՝ թէ մարդկային տկարութիւն բազում ուրեք մեղմութիւն խնդրէ ի քաղցր օրինաց պահպանութեան, վասն իրաւացի պատճառաց, իբր զի կանոնք վասն մարդոյ եղեն, և ոչ մարդ վասն կանոնաց։ Յայսպէս այսցիկ առաջին գլուխ եղեւ նորա ըստ պատշաճի առաջնորդական պարտուցն՝ արիութիւն սքանչելի, առ ի խնամել և ի գնել զառ ի նա հաւատացեալսն. զի աչք նորա և հայեցուածն յայնմապէս քարոզէր զայդ ի նմա։ Բացարձակ կարաւ ընդ հեռաւորս զտեսութիւն մտացն, և բազում ապագայից եղեւ նախահայեաց, որով մարթացաւ զբազմաց անպատշաճութեանց զառաջս առնուլ, և գործել ուղղութիւն բազում։

Երկրորդ՝ փութացաւ անխտիր տարածանել զգութ խնամոց իւրոց առ ամենեսին, գիտելով թէ ամենեցուն նոցա հայր է. և զի բարեգործով հայր ոչ ունիք պակաս առնել զինուանն, ոչ պակասեցոյց և առ զգթասիրութիւնն և զհոգ։ Գիտելով թէ, ամենեցուն հոմիւ է՝ բան օրինակի քաջընթաց հովուի տկարացաւ ընդ տկարացեալն, տրտմեցաւ ընդ տրտմեալն, չվրիպեցոյց և ոչ զմին յաչացն, զի զամենեսին առաւարեցուսցէ ի պարարտարօտ ճարակ վարդապետութեան իւրոյ. յայսպէս որոյ զամենայն խշխեցեալսն անձուկ կապանօք սիրոյ կապեաց ընդ անձին իւրում։

Երրորդ՝ որպէս ինքն էր՝ Քանզաւ նմանապէս յարդարել կազմել զմիարանութիւնն. որպէս ինքն լուսաբոյլ ունէր զճանապարհս իւր առ Աստուած, որպէս ինքն նախանձաւոր էր յառաջադիմութեան ոգին իւրոյ յամենայն հրահանգս բարեաց՝ ի նոսին վառեաց զամենեսին։ Այս ճշմարիտ է, և ամենայն մարդ խելամուտ է ի սրտին իւրում, թէ ուր գլուխն քաջառողջ է՝ զուարթ են և ամենայն անդամքն. զի ի գլխոյ և յուղղոյ ազդի նոցա շարժումն կենդանական։ Ուր առաջորդն ժիր է՝ ժրագոյն են ընդ նմա և ամենայն առաջնորդեալք։ Այս ոչ ենեցաւ Սահմանեալ Աբրահամայր Աստոց, և որպէս հաւանեալս նմաք՝ ոչինչ վրիպեաց յամենակալութենէն. քանզի երբ լիք եթող զկնանն, ընդ կենդանի առաւուծ առնութեանն զոր ընկալեալ ի նախորդաց իւրոց արձանացոյց անեղծու-

թեամբ, այնպէս շտեմարանեալ ունէր զմեր ճեմարանն զանազանութեամբ դպրութեանցն և լեզուախօսութեամբք, մինչև փոքու այր մեծարանի զմեծաց համաթարանաց բերել զնմանութիւն. նա և առաւելագունին ակն եղեալ էր հաստատուն կարգաւորութեամբ, եթէ յեղաշրջութիւնք ժամանակաց ներէին իրագործ։

Զուարճացեալ Մխիթարեանն ընդ շահան կթեալս ինանէ, միտքերան ամենեքին խորհուրդ բարեաց կալան յանձինս՝ վիճակեցուցանել զԱբրահայրն ի պատիւ Արքեպիսկոպոսութեան, առ իպէս ձեռնադրութեան աշակերտելոցն։ Իբրեւ մատուցաւ հայցուածն յառեան Պետրոսեան գահուն՝ Պիոս Զ, անմահութեան արժանացեալ Հայրապետն, ծանուցեալ ընդհանրաւ և զվաստակ Աբրահօրն՝ կամակար շնորհեաց նմա զարքեպիսկոպոսութեան իշխանութիւնն յանուն և ի պատիւ նահանգին Սիւնեաց, և օծաւ յԱնդոնէլիս կարդինալէ անդ ի Հռովմ յամին 1801, ի յունիսի 3։ Դարձ արարեալ ի Հռովմէական հրապարակէն դայր հասանէր ի Վենետիկ՝ իբրեւ երկրորդ Մովսէս ի սինեական ատուածխօսութենէն՝ փառաւորեալ աթոռովն, և թագիւն, և իշխանութեամբն, առաջին ի Մխիթարեան տոհմէ արքեպիսկոպոս, և առաջին ինքին տոհմէ ի Հանանայութիւն օծանել զաշակերտեալսն։

Ոչ տարագէպ արտուղեաց բանս՝ յիշել զՄովսէսի նմանութիւնն, զի որպէս նա ատուած Փարաւոնի, և հեգ էր քան զամենայն մարդիկ, նոյնպէս և ա յամենայն վիճակէ մարդկան պատուեալ, և բնաւ չմոռացաւ զհեզութիւնն. զի ազնուականաց պատկառելի էր առ վեհ և վեհ բարուցն. տակաւանաց երկրպագելի՝ իբրեւ այր Աստուծոյ։ Կրօնաւորք իւրաքանչիւր զհիմնադիր կարգաց իւրեանց ի սա կենդանագրէին, և այնպէս զարժանին նուիրէին պատիւ։ Քահանայք իբրեւ յիւրեանց առաջնորդէ ակնածէին։ Օտարք և հեռաւորք զթուղթ և զօրհնութիւն սորա ընդունէին իբրեւ կենսաւէտ շնորհաբաշխութիւն։

Զայս ամենայն նախանշանակեալ մեծարանս Բարունապետն մեր իբրեւ այն թէ իմացաւ և ոչ. զի առ պերճութիւնս աշ-

խարհի անզգայ են հոգիք որբոց։ Հաստատեալ նորա յաւետ տարանապատում հրամանն՝ թէ պարտ է առել զանձն առ յաւիտենից բարութեանցն հանդիպելոյ՝ չէր այլ ոք նմա խիստ թշնամի իրրեւ զանձն իւր. ոչ թողոյր առաւելութիւն տալ նմա առ այլսովք. ոչ ներէր խոսիլ զնմա՝ ոչ ի կերակուրս, ոչ ի ուսոս, ոչ ի վանական կարգաց կատարմունս, որպէս թէ մոռանայր զառաջնորդութեանն պատիւ, զձգնողական վարուցն ժուժկալութիւն միշտ առաջի աչացն ունելով։ Դժուարաւ և առ հարկի զգենոյր զեպիսկոպոսութեան պատոյն պատմուճանն յաւուրս երեւելի ոմանց, կամ յայցելութեան առ մեծամեծս, զի միաբանիցն հասարակաց տարազ առաւել սիրելի էր նմա։

Իսկ զկամաւոր ճնշել նորա և մոռացանել զանձն, զժուարին է, փոքու բանիւք համառօտել։ Բազում ակնատեսք վկայեն՝ զի տեսանէին զնա յոլով անգամ ծածուկ ի սենեկին գետնամած տարածեալ առաջի փրկչական պատկերի՝ ողբովք և արտասուաք աղաչել զերեսս Արարչին, զթովք ակնարկել յինքն և ի միաբանութիւնն։ Քանզի յայսմ ամենայնի զՊօղոսին առաջի եդեալ ունէր զբանն, մոռանալով զառ ի յետոյն՝ յառաջադէմն նկրտէր ի կէտ կոչմանն Քրիստոսի, և զայդ իրրեւ կանոն անձին իւրում միշտ առաջի աչացն ունէր. քանզի զառաւ ի հոգեւորական գիրս նորա զոյս առաւ առաւ ընթեռնոյր՝ պատուս մի թղթոյ, գրեալ ի նմա այսպէս. «Զգոյշ լիցիս ամենեքեան առ ի շկորուսանել ի ծերութեան՝ «զոր ստացան ի մանկութեան. մինչեւ լցէ նաւս հասեալ «ի նաւահանգիստ, ոչ ոք վտահացի ի կեանս իւր. միշտ «զուն գործեացէ լաւ նեաս ծառայել Աստուծոյ։ »» Այլ ի կարեւորսն ճեպեցուցանելով զընթերցողն, առաջի արասցուք նոցա զչորեսին զայսոսիկ. զարիութիւնն ի վիշտս. զանձիշտ չարութիւնն. զիւանձարն, և զքաշութիւն հուշատոցն։

Որչափ ոք ի ղեկավարութեանն արիաւն է՝ նոյնչափ և ի յարուցմունս հակառակացն անխառով. վասն զի կանուխ տեսանէ զվնասն, և ի հնարսն ուճապարէ. յաղագս այսորիկ յայնպիսում ժամանակի յառաջնորդական պատիւն ամբարձ

Աստուծոյ նախախնամութիւնն զԱռնիւանոս Ագանց՝ զի ան-դրդուելի քաջութեամբն զամենայն ներհականսն փշրեցէ։ Այլափոխեցան առ նովաւ ամենայն քաղաքական կարգք. նա և համօրէն Եւրոպէ դղրդեցաւ ի կայից. բաղմագիմի կարգք կրօնաւորաց հաստատելք ամրացեալք ի դարուց հետէ, ծաղկեալք և բազմացեալք ի մէջ ազգի իւրեանց՝ խախտեցան, բան թոյլ տալոյ անքնին դատաստանացն Աստուծոյ։ Յայս ամենայն յուզմունս՝ զգօնութիւն տրա աջակցութեամբ իւրոց խորհրդակցացն գիտաց ոչ միայն անդրդուելի պահել զիւր միաբանութիւնն, այլ և յաւելուլ ի հաստատիմն ամրութիւն նորա։ Անմարթ է գրով յայտնաբանել, որ՛վ օրինակաւ զերծ կացոյց զհօտ իւր փոքրիկ ի կոհակաց ալեաց կուտակելոց ի վիճակ Վէնէտկեան յամի 1806, յերեսաց Գաղղիացւոց զօրացելոց անդ՝ մինչեւ անձամբ անվեհեր յանդիման լինել զօրավարի նոցա, և պատկառելի և ակնածելի ձեւով և բանիւ ելի աղագս դառնել, և անմերձենալի պահել զիւրեան յամենայն հարստահարութենէ։ Սոյնպէս և յամին 1810, յորժամ սաստիկ հրամանաւ Նաբոլէօնի ինքնակալի բարձեալ ջնջեցան ամենայն վանորայք և կրօնաւորանք, և հարց փորձ ելմի ի հեռաւոր մատուցանէին առ մեզ, սա ինքն միջնորդ կալեալ զկուսակալս Խաալիոյ, աղաչեաց զերեսս ինքնակալին, և հրովարտակ ընկալաւ ինամանէ՝ յաւերժ հաստատուն մնալ իւրում հօտին։

Իմէջ մատուցանել արժան է և գանձիշաչարութիւնն և զխաղաղասիրութիւն։ Յորժամ բանարկութիւն թշնամւոյն ազգի մարդկան դղրդեցոյց զազգ մեր ի խնդիրս խիթալիս, և իրրու զամս հինգ այէկոծեալ տատանեցոյց՝ քակտելով և զողջամիտս ի միմեանց, սա յԱստուծոյ խնդրեաց աղօթիւք, առ մարդիկ գրեաց և յորդորեաց՝ միշտ զիսաղաղութիւն խնդրել։ Զանձին և զիւրոցն անարդանս ոչինչ համարեցաւ, այլ հանապազ այս էր մտածութիւն նորա, զի՛՛՛

հրամայէր՝ օր լոյս օրէ միաբանական աղօթիւք խնդրել յԱստուծոյ զիաղաղութիւն աշխարհի, և զառելութեան քակտումն ի սրտից մարդկան։ Զուան երկինք արժանահայց խնդրուածոց նորա, և պարգևեցին նմա տեսանել և ընդունել ի ծերութեանն ընդ սրտոյ աղօթից և զհաստատակաց խնդակցութիւն. ընդ որ ցնծութեամբ զոհանայր զԱստուծոյ։

Տակաւին այսոքիկ նիւթ են. զի յայս ամենայն անցս տեսանել և լուանալ զառանձին նպերանս և զլուսաւոր ոմանց ոմանց ընդդէմ զեկաւորութեան իւրոյ, կամաւ անդիտացաւ, ներքնայ ի կամակար սրտէ, և յիշատակեաց բնաւ ոչ։ Զի զայն ամենայն ոչ միայն ի տնտես համարէր, և տղայական մտաց զայրոյթ, այլ և անարժան վարկանէր իւրում մեծութեանն և բազմադէմ զրաղանացն՝ յանարգն և յանպիտանս ժամավաճառ լինել։ Նա միշտ զՍողոմոնին կրկնէր առ իւրն, քաղցելոյ թշնամւոյն հաց տալ, զցրտացեալն ջերմացուցանել, զոխերին իւրեւ մտերիմ գգուել, կատարելով զքրիստոնէական պարտուց պատշաճն, և զմեծախորհուրդ իմաստնոյ, բան արժանի ազնուական բնութեանն։

Հանճար մարդոյ առաւել էան յարարս առանձնական՝ մեծապանծ երեւի յարտաքինս, յորս գիտացեալ ոք զգժուարինս և դներհակսն առհասարակ յիւր օգուտն շրջել։ Յաւուրս իշխանութեան տեառն Սոսիփաննոսի Ագոնց երիցս փոխեցաւ տէրութիւն Վէնէտկեան ազգին. երբ յաթոռն ամբարձաւ՝ Աստարիացիք տիրէին քաղաքին, յետ վեց ամաց անկաւ ընդ Գաղղիական իշխանութեամբ. որք կալեալ դամս ութ՝ անդրէն դարձուցին յԱստարիացիս։ Յայս երրակի այլաձեւել քաղաքական իշխանութեանց, գիտաց Սոսիփաննոս Ագոնց զամենայն ղկուսակալս և զոստիկանս կապել ընդ իւր սերտ բարեկամութեամբ, և միջնորդ ունել զնոսա առ թագաւորս իւրեանց վասն իրաց միաբանութեանն։ Վասն զի բաց ի վայելչութենէն և յազնուական քաղաքավարութենէն՝ քաջ խելամտէր զնոսա նպաստակի իւրոյ միաբանութեանն. այն է՝ վասն հասարակաց վաստակել, յաղգայնոյ օգուտն տքնել, յայս արարեալ աշխարհի՝ թէ ոչ անգործ և պարապուդ է այս ընկերութիւն,

այլ միշտ յաշակերտութիւն գրոց պարապեալ ։ Եւ այս ոչ
բանիւք միայն, այլ և արդեամբք. զի նախ ինքն նահատա-
կեալ ի վաստակս գրաւորս, զառաջինն ընդարձակեաց փոքր
մի զտպագրաւորունն, որպէս զի գիւրագոյն յաջողեսցէ գործ
տպագրութեանցն ։ Յարդարեալ յօրինեաց վայելուչ շարա-
դրութեամբ զվարս մեծին Մխիթարայ Աբրահօր, զոր ցանգ
առաջի աչացն ունէր լրբեալ մատեան օրինաց, և նախատիպ
առաջնորդական իշխանութեան իւրոյ, և ի տիպ արձանա-
յուցեալ զայն՝ ապա ձեռն արկ ի տեսութիւն գրոց սրբոց ։
Այդ օրինակ նորա խրախուսեաց և զբաղումս ի վարդապետաց
միաբանութեանն ի փոյթ մատենագրութեան, ջանացեալ նո-
րանոր գրոց յօրինմամբ ճոխացուցանել զազգ մեր ։

Ձեռն արկ յետ այնորիկ վայելչազարդել և զոգջոյն մենա-
բանն, վասն պանծալի երեւեցուցանելոյ զնա առաջի օտարաց,
և բնակչացն ի նմա՝ հեշտին և զուարճալի. քանզի և այս
մեծի զգօնութեան գործ է, միշտ ի կարեւորացն հանդերձանս
պատկառ կալ ։ Մեծացոյց զկղզի վանացն՝ առաւել քան
որչափ էր յառաջն, յորում կանգնեցաւ ի հիմանց մեծաշէն
տպագրատուն, և բնակարանք վասն վանականաց ։ Յաւելաւ
ի դրատունն նոր սենեակ բազմայարդար ի պահարան հայերէն
գրչագիր մատեանց, նորանշան իրաց, և գործեաց ։

Խոստացաք յիշատակել զքաջութիւն հաւատացն. արդէն
հաստատեն զգոյն ամենայն գրուածք նորա, յորս յայտ յան-
դիման ուսանի նախանձն զոր ունէր ի փառս ամենայարգի
սուրբ եկեղեցւոյ ։

Յայս վայր հանիւսեալ զբնթացս և զհանգամանս կենաց
մեծի Աբրահօր Վարդապետի Ադոնց ասել սեռութեամբն եմ,
մուրիմք այժմ աւանդել զկատարած կենացն, յորում թողեալ
զկենցաղս՝ ի յաւիտենից վայելսն փութացաւ։ Յառաջութեանն
յաջողակ էր, ոչ թանձրամարմին, և ոչ նիհար, այլ բարեյօր
և աշխոյժ ։ Իրրու եօթն ամաց յառաջ քան զվախճանն
հարաւ ի նա պատոյտ գլխոյ, յորմէ տագնապեալ մերթ ընդ
մերթ անկանէր ի մահիճս. զոր բժշկացն քննութիւն հա-
մարեցաւ յառաջ գալ ի սաստիկ տխուր և ցաւագին մտա-

ծութեանց, և իրաւացի էին կարծիքն։ Սակայն ոչինչ վհատեալ երկմտեաց յառաջնորդական խնամոցն, զի միշտ արիութեամբ և արթնութեամբ ջանայր ի հոգս միաբանութեանն, և ի բազմաշփոթ գործոց կարգաւորութիւնս որք զայնու ժամանակաւն նմա ընդ առաջ եղեն։ Դիմագրաւ լեալ օրինակ զայս ամենայն աշխատութեանց և վշտաց իբրու զամս հինգ, ի թուականալ գործոց ծանուցեալ՝ այնուհետեւ թուլացաւ և ինքն ի քաջողջութենէն. որպէս այն թէ՝ միայն վասն արարոց մեծաց ծնեալ էր յաշխարհ. զի ի ծանրանալ ծերութեանն՝ նկուն եղեւ ընդ զանազան ախտիւք որք անանջրպետ են ի հասակէ անտի վասնակելոյ, թէպէտ զգայութիւնք ի գլուխն, թաքոցն և ստամոքսայն սիրութիւն մինչեւ ցվախճան սիրապինդ կացին մնացին. զի ուր պէտքն խնդրէին՝ հոգաբարձոյնս երեւեցուցանէր տակաւին զուժգնութիւն պերճախօսութեանն։

Յայն վերջին յերկուս ամն երկիցս ընկճեցաւ սասակապէս ի բուռն ցաւոց, և ահաբեկ արար զմիաբանութիւնն, թէ մի գուցէ կապտիցին յայնպիսւոյ անկշիռ առաջնորդէ. այլ Աստուած զեռ եւս ոչ ներէր մահուն մերձել ի նա։ Յայդմ ժամանակի յորում անձնանհաւատէր իմիք, և զամենայն արարսն հաւատացեալ էր յաթոռակալն իւր և յերիցագոյնս, թէպէտ ի նմանէ ծածկէր և ոչինչ, և մի բան նորա զեկավարէր զբնաւն, յայդմ ժամանակի առեմ այս էր հանապազորդեան բարբառ բերանոյ նորա, բուծանել ի մարմնոյ և մտանել առ Աստուած, միշտ գրեթէ զՍիմէոնին երկրորդելով. «Արդ «արձակեա՛ Տէր զծառայս քո ի խաղաղութիւն, զի տեսին «աչք իմ զփրկութիւն քո։»

Թէպէտ ամենեցուն մահ առաջի կայ, այլ բնութիւնս յիշատակէն անդամ մահու ապրեալ գոզայ. զի քակտումն ապարատաղաւարի դժուարընդելի ցաւ է հոգւոյն և մարմնոյ. իսկ որ պնդագոյնս փարեալքս բուծանել ի մարմնոյս՝ յայտ արար թէ հաստատուն յուսով ակն եդեալ է յաւիտենականացն, և իբրեւ ուղեւոր փութայ ի հայրենիսն հասանել, և ընդ Քրիստոսի լինել։ Յաւելոյր յայդ ցանկութիւնդ՝ զանդադար աղօթս,

և խնդրուածս, և օրհնութիւնս ի վերայ միաբանութեանն, և զմի մի իւրաքանչիւր խրատէր և յորդորէր՝ սիրով խաղաղութեամբ կալ ընդ միմեանս, և ճգնել ի հաստատութիւն այսր միաբանութեան։ Յետ 1823 տարւոյն տիրեցին նմա ցաւքն ի ձմերնային եղանակին, և բժշկացն ճարտարութիւն յետս կասեցաւ. յաղագս որոյ պաշտեցան նմա խորհուրդք և ոպասաւորութիւնքն վերջինք, և ինքն պատրաստեցաւ փոխել առ Արարիչն իւր. բայց տակաւին ճեպոր միաբանիցն ինգալ առ ժամանակ մի յառկայծեալ նշոյլ նորա։

Ի հասանել ամանոր տօնին 1824, յորում պարտ առեալ համօրէն միաբանիցն՝ աւետէին նմա զտարեմուտն, նա անոյշ բանիւք շնորհ կալաւ ասելոյն, զիոխարէնն մաղթեաց յԱստուծոյ, և դարձուցեալ զբանն յանձն իւր՝ իբրեւ թէ յետին ժամ կենացն իցէ՝ ողջոյնս զոր ինչ թերութիւն իւրաքանչիւր ի նմա տեսեալ իցէ, խնդրեաց՝ յանձն առնել զնա ի խնամս երկնաւոր Հօրն, և ինքն հայրարուխ արտասուօքն օրհնեաց զմեզ և արձակեաց։ Ի 23 այնր յունվար ամսոյ զարթեան ցաւքն. յորմէ քացէ ի քաց հրաժարեցին բժիշկք. յայնմ հետէ այս վերջին անգամ մատուցաւ նմա յետին թաշակն անմահութեան, և սուրբ օծութիւնն վերջին։ Ցամ ի ժամէ յաւելաւ հիւանդութիւնն, և ի քան և ինն նոքին ամսոյ յոգւոց պարզել սկսաւ, յորում լուծաւ տասնամեայ միաւորութիւն հոգւոյն և մարմնոյն, և ոչք անխոցիլ հաշտութեամբ կնքին ընդ սոն բազումս, այժմ ի հրամանացն Աստուծոյ մարմինն դարձաւ ի հող, և աշխատեալ հոգին հանգեաւ յօթեւանս անմահից, ի հաստակի ութսուն և չորից ամաց, կալեալ զաթոռ ստաջնորդութեանն զամս քսան և չորս։ Տխուր սգաւորութիւն պատեաց զհամօրէն միաբանութեամբն՝ երբ խելամտեցին թէ հանգեաւ Հայրն հաստատակաց։ Յաւուրն երկրորդի սկսեալ ի կարգաւորութիւնս հանգստեան պաշտամանց՝ աչք յարտասուս, և սիրտք վհատեալ՝ եռուն զնա ի հանգիստ ի գիրս Աբրայիցն, յաստենի ակնոցեալն, ամփոփեալ ի փայտակերտ տապանի։

Երբեւ յոլովք տարեկան փախճանելոյն՝ հասեալ ի փան

սիրեցեալ որդի նորա ըստ հոգւոյ՝ Աղեքսանդր Դաֆայէլ, հրաման առեալ ի յաջորդէ նորա ի Գեր. Սուքիաս Սամալէ, եւ յօրինել վիմափոր շիրիմ ուրոյն յաւանդատան, և անդ փոխադրեցաւ մարմին նորա։

Ահա ծնունդ և անունդ, բարք և վարք, արիութիւն հոգւոյ և արդիւնք վաստակոց առեւանոսի Աղոնց Աբրայի, Մխիթարեան միաբանութեանն, ծաղկաքաղ արարեալ ինկարագիր վարուց նորին, յօրինեալ միոյ ի հարց անտի։

Յաւելցուք և մեք ի սմա ինչ ինչ կարեւոր՝ յառաւել ի մեծ գիտութիւն ընթերցողաց, իբրեւ ակռանատես և ականջատուր վկայ, և կցորդ գործոց նորին, և են այսոքիկ.

Ի ժամանակի երիտասարդութեան և վարժապետութեան սորա վասն նորընծայից վանացն, յառնէ խռովութիւնն այն, և զառաջինն մի և սա լինի յընդդիմակցաց անտի Մելգոնեան Աբրային. ապա տեսեալ զանկարգութիւն ելից իրացն խառնարհի նմին։

Յետ յաջորդելոյ սորա զաթոռ Աբրայութեան՝ որոշեն միաբանքն առաքել զսա ի Հռոմ ձեռնադրիլ եպիսկոպոս միաբանութեան. թէպէտ և ընդդէմ էր այն պատուիրանին Մխիթարայ Աբրային, ասկայն նախանձաւորութիւնն որ ընդդէմ Թրեատի միաբանից, տնօրինել տայ զպատուիրանն զայն։ Քանզի ըստ օրինաց Հռոմայ գահին և հրամանի նորին՝ պարտ էր միաբանից Վենետկոյ ձեռնադրիլ քահանայ ի հայրապետէ եպիսկոպոսէ, որպէս և ձեռնադրին նոքա ի Յունիան, ի Մինաս, ի Ղազար, և ի Յարութիւն եպիսկոպոսաց, եկեղեցի ի Հայաստանէ և բնակելոց ի Մեթոն, ի Վենետիկ և ի Թրեատ. ապա վախճանեալ գոլով նոցա, և չգտանելով յԻտալիա այլ Հայ եպիսկոպոս, պարտ էր միաբանից Վենետկոյ հրաւիրել զԲարիկ եպիսկոպոսն, և ձեռնադրիլ ինքեանք։ Ահա պատճառն տնօրինելոյ զպատուէր Մխիթարայ, և ունելոյ առնելոյ զծանրութիւն և զվնասն որ ունի, զգոռոզութիւն ապագայ Աբրայից, և զթշնամութիւն հակառակորդին իւրեանց Բարիկ եպիսկոպոսին և յաջորդի նորին, Աղաբեանի. զի կիրք նախանձու ակարացուցանէ զտեսութիւն մտաց մարդկան։

Թէպէտ և Պապն Հռովմայ գժուարանայ անօրինել զհրամանն այն, գտանելով անդ և այլ հակառակորդ Վենետկոյ միաբանութեան, Անդօնելի Կարտինալ, նախագահ Մաւրոցին, առ ի դադարեցուցանել զհակառակութիւն նորին, ճարտարութեամբ իմն հնարս գտանէ Հ. Ստեփան Ալիկեան, որ ընդ Ագոնց Արբային դնայ անդ։ Իբրեւ հրաման լինի ի պապէն ձեռնադրիլ Արբային եպիսկոպոս, յերկուց եպիսկոպոսաց անտի, ընտրէ սա զմին զԿարտինալ Անդօնէլին, որոյ տեսեալ զայն քաղաքավարութիւն նորա՝ դադարեցուցանէ զհակառակութիւն իւր ընդ միաբանութեան։

Որդիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյն են քան զորդիս լուսոյ։

Զայսոսիկ ականջք մերովք լուաք ի բերանոյ ծերագունից ոմանց ի վանս։

Ի ժամանակի Արբայութեան սորա սկսաւ կենցաղօղուս գործ ի միաբանութեան, Աշխարհագրութիւն, Բառգիրք իտալերէն, դաղղիարէն, Քերականութիւն դաղղիական, Նաւարկութիւն, Դարապատում, Եղանակ Բուզանդեան, այլովքն հանդերձ։

Ի ժամանակի Արբայութեան սորա հաստատեցաւ ի Պոլիս լուսաւորչեան անուանեալ դպրոցն ազգիս առհասարակ։

Ի ժամանակի Արբայութեան սորա եղեւ ազգային միութիւնն ի Պոլիս, թէպէտ և դժբախտութեամբ ոչ յաջողեցաւ, սակս խորամանկ և կրօնամոլ բարուց ոմանց ի միոյ կողմանէ, և սակս ոգէտ և վէս բարուց ի միւս կողմանէ, վասն այնորիկ զոհ եղեն ոմանք յազգէս, և հատան ի միաբանութենէն մխիթարեանց հինգ անձինք, առ երկիւղի Հռովմայ Պապին։ Թէպէտ և Գաբրիէլ վարդապետ Ալեոտիքեան կամեցաւ արդարացուցանել զնոսա առաջի դահին Հռովմայ, այլ կարի իմն երկիւղածութիւն սորա կասեցոյց զնա ի կամաց անտի։

Ի ժամանակի արբայութեան սորա խորհեցան և ջանացին թշնամիք միաբանութեան, աշակերտք Մաւրոցին Հռովմայ, բանդել զվանս Մխիթարայ, և ի տեղի նորին կարեակ ցանել.

այլ սա խրատու. Պաքէօլօ Խուրայի եպիսկոպոսին և համբերութեամբ իւրով յաղթեաց թշնամեաց վիրաւորութեան։

Ի ժամանակի Աբրայութեան սորա գնայ Աղիքսանդր Ռաֆայէլ ի Վենետիկ և տայ տպագրել զՀռովմայեցւոց պատմութիւն և զՆախատութիւն, զգործս Ռոլլէնի, առ ի կատարել զկամս հանգուցեալ հօր իւրոյ Եդուարդ Ռաֆայէլի, և ի հատուցանել զդպրոց նորա ի Վենետիկ, հանդերձ տպագրութեամբ և այլ զանազան մատենից յօգուտ ազգին, և բարերարութեամբ ի պայծառութիւն վանաց։

Եւ ի ժամանակի Աբրայութեան սորա, Սամուէլ Մուրատն ի Մատրաս Հնդկաց թողու հրիտակ մեծ, երկու միլիոն ֆրանքաց, վասն կատուցման դպրոցին որք և աղքատ մանկանց ազգին, միջնորդութեամբ միանձանց Հայոց որք ի Վենետիկ։

Զայսոսիկ աշխք իսկ մերովք տեսաք ի Պոլիս և ի Վենետիկ։

Ի ճանաչողութիւն և յընտրութիւն անձանց ի գործ հատուցակութեան, ճարտարագէտ և անխաբ էր. ճանաչէր սա գյարմարութիւն և գբաւականութիւն իւրաքանչիւր անձանց ի միաբանութեան, որոց յանձնէր զգործն հատուցակաց։

Յերանելի Հ. Սարգսի ի վարժարանէն, հանդերձ իններիբին ընկերօք իւրովք, և յանցանել ամաց ինչ միայն, յանձնէ սա նոսա պաշտօնս երկուս միանգամայն, զհանդերձապետութեանն, և զդրքապետութեանն. զորս պաշտէ նա զամս հինգ ամենայն զգուշութեամբ, և զոհութեամբ հատուցակաց։

Ի խնդրել ժառանգաց կուսակատարաց հանգուցեալ Սամուէլ Մուրատի իսմանել առաքել զոք յիւրոց անտի ի Մատրաս, առ ի խորհել ընդ նոսա, և ի գործ դնել զկամս հօր իւրեանց, զկատուցումն դպրոցին աղքատ մանկանց ազգին, զՀ. Սարգիս միայն ճանաչէ սա յարմար և բաւական ի գործն յայն, և բան խնդրոյ նորին և ընտրութեան տայ նոսա ընկեր զՀայր Սուքիաս Սամուէլեան։ Ի չյաջողել իրացն զայն նուազ, և ի խնդրել վերստին Յովհաննու Մուրատի անձամբ և գրով ի սմանէ զՀ. Սարգիսն յանուանէ, գնալ ընդ նոսա ի Մատրաս, յաւարտել զգործն, ընդունի սա զինդիր նորա, նախ քերա-

նով, ապա գրով, և վերջին սաղմոսագրութեամբ ձեռին իւրոյ, և օրհնութեամբ ի մահճաց վերջին հիւանդութեան իւրոյ, որով գնայ Հ. Սարգիս ի Մասրաս և կատարէ զգործն փառաւոր և շահեկանութեամբ։

Թէպէտ և յիշատակեալ եմք յընթացս Ա. հատոր պատմութեանս, սակայն ոչ անդէպ և աւելորդ համարիմք յիշատակել և ի սմին վերատին, թէ ի ձեռանէ սորա ընկալաւ Հ. Սարգիս զսքանչելի կրօնաւորութեան, թէ ի սմանէ ձեռնադրեցաւ նա քահանայ, և էտ զգաւազան վարդապետութեան. և թէ ի վերջին հիւանդութեան սորա զերիս զիշերս հակէ նա միայն առ մահճաւք սմին, և տայ զվերջին արձակումն. և թէ ապա՝ առ տգնութեան և տրտմութեան հիւանդանայ նա, անկեալ ի մահիճս աւուրս ինչ։

Ահա քաղցր և զառն յիշատակութիւն։

Այսպէս կալաւ սա զաթոռ աստուածորդութեան զամս քսան և չորս։ Ըստ օրինակի Մխիթարայ Արբայի հաւանեալ ճշմարտութեան և արդարութեան, ծանեալ զպարտս իւր, և լցեալ զայն՝ ընկալաւ զիրաւունս իւր, վայելեալ ի խաղաղութեան և յերանութեան, վասն որոյ և իրաւամբք կոչեցաւ սա արժանաժառանգ յաջորդ Մխիթարայ Արբայի։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՎԱՐՈՒՑ

ՀՈՒՓՈՒԱՍ ՍԱՄԱԼԵԱՆ ԱՐԲԱՆԻ

ԾՆՈՒՆԴ ԵՒ ԱՆՈՒՆԴ ՍՈՒՓՈՒԱՍ ՍԱՄԱԼԵԱՆԻ.

Ծնաւ Սուրբոյս Սամալեան ի Կոստանդնուպօլիս, յամին 1780. և անաւ ի Վենետիկ, ի վանս Մխիթարեանց, ուր զամս ինչ հրահանգեալ՝ եմուտ յուխտս կրօնի Մխիթարայ. և ձեռնադրեցաւ քահանայ ի Սուրբն Ստեփաննոս Ագոնց Արքայէ և Եպիսկոպոսէ, որոյ երախայրիք ձեռնադրութեան վին և նա եղեւ։

Առաքեցաւ նա ի Պոլիս քարոզիչ, ուր զամս ինչ կացեալ դարձաւ ի վանս, և անդ կարգեցաւ վերակացու նորընծայից։ Ամիսս ինչ ի պաշտօնն յայն կացեալ՝ տուաւ ընկեր Հ. Սարգսի, ի գործակցութիւն որ ի Մադրաս, վասն հրիտակի Մուրատեան դպրոցին, ուր զամս երկու աշխատեալ և ոչինչ շահեալ՝ դարձաւ ի Վենետիկ ի վանս Մխիթարեանց։

Յաջորդեաց նա զաթոռ Արքայութեան զկնի Ստեփաննոսի Ագոնցի, և ձեռնադրեցաւ եպիսկոպոս ի Հռոմ, ուր վարակեցաւ շնչարգել սիրտ, պատահեալ յերկիրս խռովութեան ծագելոյ անդ յայնմ ժամանակի, և այնու սիրտս եկեաց զամս քսան, և վախճանեցաւ անտի։ Ահա պրդիւնք որ ի նոսին. ձաւորութենէ ընդդէմ Թրքատի միաբանութեան, ունել և

Վենետկոյ միաբանութեան իւր եպիսկոպոս, թէպէտ և ընդդէմ պատուիրանի Մխիթարայ Աբրայի։ . . .

Անոյն և ճշտակար փառք։ . . .

ԲԱՐԵՒ ՎԱՐՔԷ ՅՈՒՇԻՒՆ ՅՈՒՐԱՅ ԱԲՐԱՅԻ.

Հեզաբարոյ էր նա, և ազատամիտ յարգահրաւիրեալ. քաղցրութեամբ վարէր ընդ միաբանս իւր, և ճանաչէր զարժանիսն իւրաքանչիւր նոցա։

Թէպէտ և չէր նա այնչափ գիտուն, որչափ էին ունակք ի միաբանութեան, այլ ուսումնասէր էր քան զբազումս ի նոցանէ։

Յանկալի էր նմա ի տիպ արձանացուցանել զբովանդակ մատեանս նախնեաց Հայոց, և ապա տպագրել տալ զունանս անտի։

Ի ժամանակի Աբրայութեան նորա ի լոյս ընծայեցան պէտպէս և գեղեցիկ մատեանք յօրինեալք և թարգմանեալք ի Լատին, յԽորասանի և ի Պարզիոյի լեզուէ, որպէս, Յաղագս Բարոյական Աստուծոյ. Ոգեշունչ Աւետարանաց. Աբիսաժ Տէրեանցոյ. Հնախօսութիւն Հայաստանեանց. Նոր Բառգիրք հայկազեան լեզուի. Բազմավէպ Օրագիր, եւայլն, եւայլն։

Ի ժամանակի արքայութեան նորա աւարտեաց Հ. Սարգիս ի Մուրատ իրատարակութեամբ ընդ ժառանգս և կամակատարս հանգուցեալ բարերարին, Սամուէլ Մուրատի, զքան հրատակին ազգատոց ազգին, և յաղթեաց ի գատաստանի, հանդերձ փառաւ և շահեկանութեամբ։

Ի ժամանակի արքայութեան նորա յաղթեաց Հ. Սարգիս ի գատաստանի անիրաւ պահանջման Պօղոս Լազարեանցի ի Վենետիկ քաղաքի, որ պահանջէր 100,000 Ֆրանք։

Ի ժամանակի արքայութեան նորա յաղթեաց միաբանութիւն անիրաւ պահանջման Աւետրոյ սէրութեան, որ պահանջէր հաշիւ մատակարարութեան Մուրատեանն վարժարանին, փոխադրելով զայն ի Պատուխոնէ ի Փարիզ։

Ի ժամանակի արքայութեան նորա Գրիգոր ԺԶ Պապն Հռովմայ նախապատուէ զմիաբանութիւն, առաքելով նմա զմարմարեայ արձան իւր, իբրեւ զանմոռաց յիշատակ դնել զայն ի գրանոցի վանացս, որպէս և դնի անդ։ Թէպէտ և յետ քանի մի աւուրց անտի վախճանի Սուքիաս Սոմալեան, և միաբանք նորա ի վատութիւն հատանին. քանզի նոյն Պապն շարժեալ ի Մեթերնիկէ Աւստրիոյ առաքէ հրաման առ միաբանութիւն ի Վենետիկ փոխադրել վերատին զՄուրատեան վարժարանն ի Պատուիոն, և միաբանութիւն կամի կատարել զանիրաւ հրաման նորա, եթէ չէր խափանեալ զայն Հայր Սարգիս։

Ի ժամանակի արքայութեան նորա եղև ուսանել նորընծայից զԽարալացի, և զԳաղղիացի լեզուն վարժապետաք, և հատատել խնամակալաց ժողով վասն Մ. և Ռ. վարժարանաց, զի փոյթ մեծ ունէր նա զյառաջադիմութենէ նոցին, մինչեւ ի մահիճս հիւանդութեան իւրոյ խորհէր զայնմանէ, և ասէր այլոց բազում անգամ. „Ես ի մահիճս հիւանդութեանս „խորհիմ միշտ զյառաջադիմութենէ վարժարանաց, իսկ „դուք յառողջութեանն ոչինչ խորհիք զայնմանէ։"

Ահա այսպիսի բարուք և վարուք էր Սուքիաս Սոմալեան Արքայն, և այսպիսի ցանկութեամբ և խորհրդով էր յամենայն կեանս իւր. վասն զի հաւանեալ ճշմարտութեան և արդարութեան՝ ծանեաւ զպարտս իւր, և լցեալ զայն ըստ կարի իւրում, ընկալաւ զիրաւունս իւր, վայելեաց ի խաղաղութեան և յերանութեան։

Զամս քան կալաւ նա զաթոռ առաջնորդութեան, և վախճանեցաւ ի 1846 ամի, ի 66 ամաց հասակի։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՎԱՐՈՒՑ

ԳԷՈՐԳ ՀԻՒՍԻՒԶ ԱԲԲԱՅԻ

ԾՆՈՒՆԴ ՍԻ ԱՆՈՒՆԴ ԳԷՈՐԳ ՀԻՒՍԻՒԶԻ.

Գէորգ Հիւսիւզ ծնաւ ի Կոստանդնուպոլիս, և սնաւ ի Վէնէտիկ ի վանս Մխիթարեան, ուր զամս ինչ հրահանգեալ՝ եմուտ յուխտ կրօնի նորին։ Ձեռնադրեցաւ սա քահանայ ի Սուրբն Ղազար Ս. Գրիգոր Աբրայէ, և առաքեցաւ ի Պոլիս ի վարժարանէ անտի, սակս վարդապետութեան իւրոյ։

Ի վախճանել Սուքիաս Սամսոլ Աբրայի, և յընտրութիւն յաջորդի նորին կոչեցաւ և սա ի Վէնէտիկ ընդ այլ միաբանս որ ի Պոլսոյ, և որ յայլ քաղաքաց, և ընտրեցաւ Աբրայ, յամին 1846, յ2 յուլիսի։

Թէպէտ և գտանէին յայնժամ ի միաբանութեան այլ արժանաւոր անձինք քան զնա այնմ ատենի, այլ նմա անկաւ այն, պատճառաւ կանոնի սահմանադրութեան, չընտրել զոք Աբրայ, որ ունի քան զվաթսուն, և պակաս քան զերեսուն ամս հասակի ունիցի։ Թէպէտ և յառաջ քան զընտրութիւն նոր Աբրայի, ոմանք ի ծեր և ի փորձ անձանց անտի կամեցան առնել ինչ ինչ փոփոխութիւն ի սահմանադրութեան, և մանաւորապէս զմշոնջենաւորութիւն աբրայութեան, զոր ի փորձոյ վնասակար տեսեալ՝ կամէին ժամանակաւոր առնել.

թէպէտ և ընդ այս կամ նոցա հաւանեցան ամենեքեան, բայց սա կասեցոյց զնոսա ի գործադրութենէ անտի, ասելով՝ թէ կարօտի գործն այն երկար ժամանակի. և թէ՝ կոչնցեալքն ի Վենետիկ չկարէին յերկար յամել անդ, պարտ էին փութով դառնալ ի տեղիս իւրեանց. լիցի ասէ այն յետ ընտրութեան նոր աբբայի։ Զայս խորհրդանկութեամբ ասաց, զի չկամէր ընդ ժամանակաւոր աբբայութիւն, եթէ իւր անկանէր այն. և հաստատութիւն, ահա լռութիւն իւր ընդ այն յետ ընտրութեան իւրոյ։

ԲԱՐԵՆ ՎԱՐԺԱՊԵՏԻ ՀԻՒՐՄԻՒՋ ԱՐՈՒԱՑԻ.

Կողմնաւոր բարք սորա տեսանի ի սկզբանէ անտի աբբայութեան իւրոյ, կամելով տեսուչ կարգել Մ. վարժապետին ղդասակից իւր, զՀ. Ռափայէլ Թրենց, և կարգեաց զնա այնմ, հանդերձ խռովութեամբ, և անիրաւութեամբ։ . . . Սոյնպիսի բարուք վարեցաւ սա և ընդ Հ. Սամուէլի, հանելով զնա ի պաշտօնէ տեսչութեան Ռ. վարժապետին, և լինելով պատճառ մահուան նորին։ (ՅԷՀ 309 Բ. հատ։)

Յայսպիսի բարուց իւրոց, զինչ մխիթարութիւն եղեւ ամենայն։ Ո՞չ ապաքէն ցաւ սրտի ընդ Հրգողական հիւանդութիւն և տարաժամ մահ դասակցին իւրոյ, և խիղճ մտաց ընդ անիրաւութիւն այլոյ։ . . .

Կասկածոտ բարուց սորա, վկայէ հարազատ իւր, Գերասիմ Եղուարդ. «Անհնարին կասկածոտ է նա, ասէ, զի «դնէ ինչ ի մտի, և այնչափ մեծացուցանէ զայն, մինչեւ «տանջէ զինքն և զայլս առհասարակ. և զայս ախտ ի մանկու. «թենէ ունէր։»

Անուղղայ վարք սորա տեսանի ի պաշտօն մատակարարութեան Ռ. և Մ. վարժապետաց, յիրաւունս ժառանգութեան աղքատաց համօրէն ազգիս, ըստ դիտաւորութեան բարեբարեաց, ամփոփելով սորա զայն ի վայելս մատնեալսց, և ազգատեաց ոմանց, ընդ որ խոզոքէ Հ. Սարգիս բազում

անգամ և լսելի ոչ լինի. որպէս տեսանի յընթացս Բ. և Գ. հատորոյ։

Տեսանի այն ի վայրապար ծախս արծաթոյ ազգաւոյ ազգին Հայոց. զի զամս երեսուն և հինգ, երիք միլիոն ֆրանք եկամուտք Մ. վարժարանին ծախին, և երիք ուսեալ աշակերտք դեռ անտի ոչ ելին։ . . .

Թէպէտ և ցաւի ընդ այն յոյժ Հ. Կարգիս, և դառնէ դարման ցաւոց, այլ սա ոչ կամի կոչմնաւոր և կասկածոտ բարուք իւրովք։

Թէպէտ և բողոքէ ընդ այն սա ժառանգն և կասկածարն բարերարին, այլ անփութութիւն նորա զարբազան պարտուց իւրոց, և կրօնամոլութիւնն խափանեն զնա կատարել զպարտս իւր, որպէս և տեսանի ի վերջ Գ. հատորոյ։

Թէպէտ և բողոքէ ընդ այն սա ազգն Հայոց, որ և աղքատանկանց, այլ անհաւանութիւն հշմարտութեան և արդարութեան և անճանաչողութիւն նորա պարտուց և իրաւանց իւրոց խլացուցին զականջս, և կծկեցին զձեռս իւր. . . որպէս և տեսանի յէջս 6—16. Դ. հատորոյս։

Թողումք ասել զբարերարութենէ Եդուարդ Խաֆայէլի, որ ոչ մեծ ինչ էր ի սկզբան, 24,000 ֆրանք միայն, և զոր արարն նա լսելով յոմանց զգիտաւորութիւն Թրեսոյ Մխիթարեան միաբանութեան, զուսաւորութիւն ազգին իւրոյ, և վրիպելով յանկալութենէ անտի ցաւեցաւ յոյժ։

Ասացուք զբարերարութենէ Սամուէլ Մրկրտիչ Մուրատի, զոր կամեցաւ նա առնել ձեռամբ Վենետկոյ Մխիթարեան միաբանութեան, զոր աշաք իսկ իւրովք էր տեսեալ և ականջաք իւրովք լուեալ զգիտաւորութիւն նորին, զուսաւորութիւն ազգին. վասն որոյ վարկ մեծ կալաւ զնմանէ, և եթող հրիտակ մեծ, երկու միլիոն ֆրանք, ի կատուցումն դպրոցի որ և աղքատ մանկանց ազգին Հայոց առհասարակ, առանց խտրութեան . . . այլ վրիպեցաւ և սա յանկալութենէ անտի իւրոյ. վասն զի զնոյն հոգին Մխիթարայ չունէր յաջորդ նորա, Գէորգ Հիւրմիւզ։ . . .

Եթէ սա կենդանութեամբ Մխիթարայ էր բարերարս այս

Սամուէլ Մորսայ, զինչ ինչ լուսաւորութիւն ազգին Հայոց ոչ ակնուներ նա անտի . . . օժանդակութեամբ այնչափ արծաթով իւրով . վկայեն գործք Մխիթարայ ի Մօռայ, և ի Վենետիկ, հանդերձ կարօտանօք և հալածանօք . . .

Ո՞չ ապաքէն օժանդակութեամբ այսչափ գումար արծաթոյ, և ազատութեամբ այս գարուս, ունէր նա յամենայն տեղիս, ուր և գտանէր ազգս Հայոց, դպրոց և վարժապետս ի միաբանից իւրոց. և ո՞չ ապաքէն թարգմանել և յօրինել տայր նա միաբանից իւրոց գրեան իմաստութեան, և կենցաղօգուտ գիտութեան, որով լուսաւորեալ և օգտեալ ազգս Թորգոմեան զերծանէր ի խաւարութենէ և յեղկութենէ, և վայելէր ի խաղաղութեան և յերանութեան, և որով պատուասիրեալ և օրհնեալ լինէր յամենեցուն Մխիթարեան միաբանութիւն ։ Ամէն բախտին ազգիս Թորգոմեան, և Մխիթարեան միաբանութեան . . .

Թողումք ասել զանպատեհ և զապերախտ դնացիս տարա որ ընդ հանգուցեալ Աբրահամ Աղանուրի, բարեկամի և բարերարի միաբանութեան . վասն այնորիկ դայթաղղութիւն և ատելութիւն տանն նորա ընդ սմա և ընդ միաբանութեանն առհասարակ . . . Զայսմանէ խոստացեալ եմք սմա և բերանով, հանդերձ հաւատոքաք, և յիշատակեալ հարիւրանցի ի Բ. հատոր պատմ. յէջ 437, ի ծանօթ ։

Կարիցէ միաբանութիւն այնուհետեւ ակնուներ և այլ որ բարեկամի և բարերարի, ունելով այսպիսի դնացիւք Աբրայ ։

Մխիթար Աբրայն զվերատակար թշնամին միաբանութեան իւրոյ, բարեկամ առնէր ուղիղ վարուք իւրով . իսկ սա, զօգտակար բարեկամն թշնամի առնէ միաբանութեան իւրոյ անուղիղ վարուք իւրովք . . .

Արժանաժառանգ յաջորդ եղէ սա Մխիթարայ Աբրայի, թէ Սահմանոս Մելգոնեանի, և առաւել քան զնա վերատակարի . . . ի գործոց իւրոց ճանաչի . . .

Ողբալի վիճակ միաբանութեան . . .

Ընդ ժամանակս աբբայութեան Սահմանոս Աղանցի բարգաւառէր միաբանութիւն պատիւ և ազատակար գրութեամբ ,

վան որոյ և սիրելի էր ազգին Հայոց առհասարակ, վայելելով զպատուոյ աշխատութեան նորա։

Ընդ ժամանակս Աբրոյութեան Սուքիաս Սոմալի, ազգս Հայոց առհասարակ բազում բարեաց ակնուն էր ի Մ. և Ռ. վարժարանաց, վասն որոյ և աղօթս առնէր վասն յաջողութեան գործոց միաբանութեան։

Ընդ ժամանակս աբրոյութեան Գէորգ Հիւրմիւզի՝ գեղծանի միաբանութիւն, անպատեհ և մեծամեծ գրութեամբ իւրով, վասն որոյ և ատելի լինի ազգին, տեսանելով զդրպարտութեան յայտարարութիւն առ Պապն Հռովմայ, հատանելով զակնկալութիւն իւր ի բարեաց Մ. և Ռ. վարժարանաց, անէծս կարգայ միաբանութեան։

Ընդ ժամանակս աբրոյութեան Սուքիաս Սոմալի՝ բուժանէր ի վանս կաթնատու կով մի, վասն կաթնախառն արճոյ, խաւսի, զոր առնուին միաբանքն։

Ընդ ժամանակս աբրոյութեան Գէորգ Հիւրմիւզի՝ բուժանին ի վանս քան և չորս կաթնատու կովք, վասն շահու որ ի կաթանց անտի վաճառելոց ի քաղաքի, ձեռամբ աշխարհական եղբօր միոյ, ծաղր կացելոյ ի ժողովրդոյ անտի։ . . .

Զի՞նչ առաւելութիւն տային քան վանահարց Հայաստանի։

Մշ ապաքէն ի դէպ գոյ սա ասացեալն մարգարէին, թէ «Մարդ ի պատուի էր և ոչ իմացաւ, հաւասարեցաւ անասնոց և նմանեցաւ նոցա։» Եւ վանականացն՝ ասացեալն առաքելոյն, թէ «Եղերուք կարօտ կաթին, և ոչ հաստատուն կերակրոյ։»

Եթէ միաբանութիւն մի որ ի հարիւր և յիսուն ամաց հետէ յԵրուսաղէմ անանի, զեռ կարօտ է կաթին, և ոչ հաստատուն կերակրոյ, խնամութեան և հանճարոյ, զի՞նչ կարէ ակնուն էլ ազգս Հայոց ի միաբանութենէ որ յԱտրա անանի։ . . . Աւաղ անիմաստաբար բարուց ազգիս Թորգոմեան որ յամենայն տեղիս։ . . .

Ընդ ժամանակս աբրոյութեան Սուքիաս Սոմալի, խիստ քննիչ և գաւառաւոր էր սա գրչութեան միաբանից, գրելով ի Պոլսոյ առ Աբրայն ի Վենետիկ և մեզագրելով զնա ընդ

անհոգութիւնն որ զայնմանէ, և պատուիրէր չտպագրել ինչ ի Վենետիկ յառաջ քան զքննել իւր զայն ի Պոլիս։ Զայսմանէ յիշատակեալ եմք յընթացս Գ. հատորոյ։

Ընդ ժամանակս արքայութեան Գէորգ Հիւրմիւզի, օրէնս հաստատեաց սա, քննիչս կարգեաց գրոցն, զի մի հակառակ ինչ սկզբունք և անպատեհ բանք ապրդիցին ի գիրսն, և յաւելցին հոգք և ցաւք միաբանութեան։ . . . Եւ սա ինքն եղծեաց զհաստատեալն յիւրմէ օրէնս, տպագրելով զԸնդդիմախօսութիւնն, զպատասխանին որ առ Զարանաւելին, ուստի յաւելան հոգք և ցաւք միաբանութեան, հանդերձ վնասուք և նախատանօք։

Թողումք ասել զթարգմանութեանց գրոց Հռոմերէն, Վիրգիլեայ, և Միլտոնէի, յորոց ոչ մի օգուտ ազգին լինի, զժուարիմաց գոլով նոքին, ըստ վկայելոյ բազմաց անտի, և զորս ոչ ընդ քննութեամբ էարկ սա, երկնչելով ի խառնուտ բարուց թարգմանչի նոցին, ըստ վկայելոյ ուրուքն յիւրոցն անտի. և թողումք ասել զանշահութենէ աշխատութեան թարգմանչին, զի ազգն Հայոց պէտս ունի կենցաղօգուտ գիտութեան, և ոչ անշահ բանաստեղծութեան։

Աւա՛ղ կարողութեան, և փութանամեայ սնանդեան նորա յԵւրոպայ։ . . . Եւ թողումք ասել զաչառութենէ և զշողոքորթութենէ որ ի յառաջաբանի տառուածաբանութեան յօրինեալ ի Գեր. Եղուարդայ, և նուիրեալ Գեորգայծառ Հաստատնի։ . . .

Միաբանիցի այն գրչութիւն նորա ընդ գրչութեանն որ յԸնդդիմախօսութեան, յօրինեալ ի Հ. Արսէն վարդապետէ Բագրատունւոյ, և ի Գեր. Գէորգ Հիւրմիւզէ։ . . . Միայնակ պարծանք միաբանութեան էին հայկարանութիւն և անաչառութիւն, եղծան և կորեան այնք անհոգութեամբ և նուաստութեամբ նորա։

Գնայ սա տարաժամ ի Հռոմ ի խնդակցութիւն Պապին դարձելոյ ի փախստականէն, և ի ժամանակի յորում ամբաստանութիւնք թշնամեաց միաբանութեան հասեալ էին անդ և կրկին հրամանակօք քարտուղարի Ծառայոցին ծանուցեալ

էին անա ի Վենետիկ. մասն այսորիկ չհանդիպի առ բարուք ընդունելութեան Պապին, և որհամարհի ի քարտուղարէ Ծառայոցին, իբրեւ ընդհանրական Արքայ և Արքեպիսկոպոս . . . և այնպէս կորակոր և ամօթով դառնայ ի Վենետիկ։

Մինթար Արքայն ամբառնալ երբեմն ի թշնամեաց իւրոց, և կոչեցեալ ի Հռովմ առնել պատասխանի ամբաստանութեանց։ Գնայ նա անդ և ունայնացուցանէ զամբաստանութիւնս զանձնէն և զմիաբանութիւնէն, պատասխրեալ լինի ի Պապէն, և արժանի գահին Հռովմայ համարի ի Կարդինալաց, իբրեւ սակ Արքայ, և այնպէս բարձրագլուխ և հոգեւոր պարգեւօք դառնայ ի Վենետիկ։

Ասա՞ իցեն այս փառք և պատիւ, և այսպիսի համարումն զնամանէ։ . . . Ո՞չ ապաքէն յուղիղ բարուց և յառաքինի վարուց նորին։ . . .

Ընդդէմ խորհրդոյ Հ. Սարգսի ի խնդիր լինի Գեր. Հիւրմիզ Աղամալեան ժառանգութեանն որ ի Հնդիկս, առաքելով անդ երկու անձինս ի միաբանից իւրոց զՀ. Եսայի, և զՀ. Օգանեսիս, իբրեւ գործակալ, ի ձեռս բերել զկարծեցեալ մասն ժառանգութեան Հ. Սուքիասայ Աղամալեան, զոր ոչ միայն չկարէ գտանել, այլ և կորուսանէ ընդ այն արծաթ, և զանձն մի, զՀ. Եսայի. զի ընկեր նորա Հ. Օգանեսիս, այր անձրեւդիւր, զամիս ինչ կացեալ՝ թողու զնա միայն, ինքն գնայ ի Գոյիս առ ընտանիս իւր։ Կացեալ անդ Հ. Եսայեայ զամս չորս, և տեսեալ զանցաւորութիւն գործոյն, ասայ զինքն գինեայ ի տրամութենէ, և զրուի ի կենաց ասել, բան պատուիրոյ ակնառեսի մոյ։

Ասա՞ իցեն այս չարիք։ Ո՞չ ապաքէն ի չանազգութենէ տրին։

Ընդդէմ գրով ազգատրութեան Հ. Սարգսի ի Փարիզ, հրատարակել ասայ առ զԸնդդիմախօսութիւնսն որ առ Զարանմանեանսն Հաւատն, և ասելի լինի ազգին, և ոչ սիրելի Պապին. և ոչ այսչափ միայն, այլ և զերի Հաւատնին, և կորուսանէ զարդիւնսկան անձին միաբանութեան։ . . .

Զինչ էին յանցանք Հ. Գաբրիէլի Ակիզեան, զի հատանի նա ի միաբանութենէն։ Ո՞չ ապաքէն յայտարարութիւն նորա

որ ի լրագրի, թէ Ընդդիմախօսութիւն այն որ առ Զարանա-տեանեան, չէր գործ բոլոր վիրաբանից, այլ միոյ միայն անտի։

Զինչ էին յանցանք Հ. Սարգսի Թէոդորեան, զի բռնաբնեամբ զինու արտաքսի նա ի Մ. վարժարանէն։ Ա՞չ ապաքէն ընդդիմութիւն նորա որ ընդդ կամս Գեր. Հիւրմիւզի, փոխադրելոյ զՄ. վարժարանն ի Հռոմ, զոհել զոյն Պապին առ ի հաճոյ լինել նմին։ Եւ ոչ ապաքէն այս ամենայն գրեալ են հանդերձ հաւատիւք ի Բ. և Գ. հատորս։

Մխիթար Աբրայն՝ զամենայն գործս վիրաբանութեան իւրոյ, խորհրդով և հաւանութեամբ առաջակայից իւրոց առնէր, որպէս տեսանի ի պատմութեան վարուց նորա։ Իսկ Գէորգ Հիւրմիւզ Աբրայն՝ զամենայն գործս վիրաբանութեան, առանց խորհրդոյ և հաւանութեան առաջակայից իւրոց առնէ, որպէս վկայէ ամն ի վիրաբանից սորա։

Ընդ ժամանակս արքայութեան Մխիթարայ, վիրաբանք նորա գնացեալ ի բարգաւթիւն և դարձեալ անտի՝ բերէին զարդիւնս վաստակոց իւրեանց և յանձնէին զայն Աբրային։ Զնոյն առնէին և վիրաբանքն որք ընդ ժամանակս արքայութեան Սահակեանս ազգոցի։ Ընդ ժամանակս արքայութեան Գէորգ Հիւրմիւզի, ոչ միայն վիրաբանքն չբերին զարդիւնս վաստակոց իւրեանց ի վանս, այլ և ի վանաց իւրեանց ծածուկ յապրուստս կենաց իւրեանց ի Պոլիս, և պատճառն, զոր զի Հատարակութեան հոգին ապառնալ է ի սոսին, և անձնասիրութեան սաստկեալ յոյժ։...

Ոմն ի վիրաբանից սորա, արդիւնական անձն համարեալ ի սմանէ, կոչի ի Պօղոյ ի Վէնետիկ, և կարգի ի պաշտօն կրկին, գործակցութեան կարուածոց Մ. վարժարանին, և աթոռակցութեան Աբրային։ Զանձրացեալ նորա ի վանական կենաց և ի գնացից սորա, դառնայ վերստին ի Պոլիս առ ընտանիս իւր ի 75 ամաց հասակի իւրոյ։... Ահա արդիւնական անձն համարեալ ի սմանէ, չկամի կալ առ սմին։...

Ի 1865 ամի գնայ Գեր. Հիւրմիւզ ի Փարիզ առ ի կարգել նոր տեսուչ Մ. վարժարանին. կամի առ հաշտել ընդ Սարգսի վարդապետի, զինի տասն ամաց արտաքսելոյ զնա ի վարժա-

բանէ անտի. կամի խնդրել ինձանէ մատաղումն անցեալն անցելոց, և զարմանն տանել չարեացն արդեաք։ . . . Խորհուրդ հարցանէ ընդ այն յիւրոցն անտի, որոց գլուխ Հ. Օգոստինոս լինի։ . . . Ոչ պատիւ համարին նոքա միաբանութեան, զի Արքայն նորա խոնարհիցի հպատակին, թէ և իրաւունս ունենիցի հպատակն. և այնպէս ոչ յաջողի խորհուրդն այն, քան բանից ոմանց անտի։

Պատիւ ոչ համարին նոքա միաբանութեան զի արքայն նորա հաւանեալ ճշմարտութեան և արդարութեան՝ ծանիցէ զպարտս իւր, և լցեալ զայն՝ վայելիցէ ի խաղաղութեան և յերանութեան։ Խնամատուն խորհրդականք, հանդերձ խորհրդականաց Ռոբոամայ։ . . .

Պարծի սա առաջի բարեկամին Սարդոյ մարդապետի, իբրեւ հեծուկս նմին, ընդ պատուանշանն որ ի Գաղղիացւոց կայսերէն, և իբրեւ ընդ արժանիս իւր. այլ թէ զինչ են արժանիք իւր, լռէ և չասէ զայն բնաւ։ . . . Ոչ ապաքէն կարծեցեալ արժանիք իւր, է հատատութիւն Մ. վարժարանին ի Փարիզ։ Բայց պարտ է հարցանել ցնա, թէ որո՞յ ոգւով չափ աշխատութեամբ զամս չորեքտասան ի Հնդիկս, հատատեցաւ վարժարանն այն ի Փարիզ։ . . . Ոչ ապաքէն այնր, զոր սա ինքն բանութեամբ զինու արտաքսեաց ի վարժարանէ անտի. . . . ի լրումն ցանկութեան կողմնաւոր բարուց իւրոց, և ի կատարումն միտակար կամացն. . . . և ո՞չ ապաքէն ի դէպ է արդ և արժան իսկ հարցանել ցՄիւնեաց Արքեպիսկոպոսն, որպէս հարցաւ երբեմն ցՄիւնեաց իշխանն, թէ «Յորմէ՞ գտեալ է՛ք «զայդ ամենայն պատուական պատիւդ, վասն որո՞յ արդար «վաստակոց։»

Եթէ Միւնեաց Արքեպիսկոպոսն չիցէ արժանի պատժոյ, քան օրինակի Միւնեաց իշխանին, որ ի Պարսիցւոց արքայէն, իցէ՞ արժանի պատուոյ որ ի Գաղղիացւոց կայսերէն. . . . և չիցէ՞ պատուանշանն այն նոխատինք ամս քան պարծանք, հայեցեալ յանուղիղ մատակարարութիւն Մ. վարժարանին, և յապերախտութիւն սա հատատող նորին։ . . .

Յետ այսպիսի բանութեամբ արտաքսելոյ զնա ի Մ. վար-

ժարանէն, ընթեռնու սա՝ յանկանչս աշակերտաց նորին զվարս արքոյն Պօղիկարպոսի, զոր յօրինեալ էր իւր սանուսոր շափով, և այնչափ մեծամոի ընդ այն՝ մինչեւ կործանի յանիւոոյ իւրմէ, յարուսանել զայն շարժմամբ ոտից և ձեռաց, վասն որոյ և ծաղր լինի աշակերտաց, ըստ պատմելոյ նոցին։

Սա այս ի դէպ է յիշատակել սատ զմասն ինչ որ ի պատմութենէ վարուց Մխիթարայ Արբայի, և որ ունի այսպէս։

„ Ի կատարել շինուածոյ մենաստանին համօրէն մասամբ հա-
„ մեմատ և վայելուչ, այնուհետեւ բազումք ի մեծամեծաց
„ քաղաքին Վենետկոյ, ընդ որս և հարտարապետք ունէք
„ եկեալ ի զննին, և հաճեալ հաւանեալ ընդ գեղեցկայարմար
„ համեմատութիւն, զոմէին զհանճար և հարտարութիւն
„ Մխիթարայ Արբայի, մինչեւ եղեւ ունոց մեծարու անձանց
„ տրպել զնա կանգնել ուրեք յերեւելի տեղւոջ մենաստանի
„ իւր արձան սա ի յիշատակ։

„ Սա այս, որպէս և այլ ամենայն այսպիսի գովութիւնք,
„ իրր ծաղր իմն և տղայական բժանք համարեալ էին յաչս
„ նորա, ասէր սա։

„ — Ոչ զք տիրապէս գովելի է յայնմ, որ արտաքոյ է իւրոյ
„ վիճակի և պաշտաման։ Օրինակ իմն, կրօնաւոր չէ գովե-
„ լոյ, իրր զի քաջ շափարան է, կամ փիլիսոփայ, և կամ
„ հմուտ արհեստագործ, այլ զի խոնարհ է և հնազանդ, մե-
„ ռեալ աշխարհի, և կենդանի ի Քրիստոս։ Նմանապէս և
„ մեզ՝ ասէր, չէ գովութիւն լինել իմաստուն հարտարապետ.
„ այլ խոնարհ և առաքինի, զի այս է սեպհական գործ իմոյ
„ վիճակի, և ոչ հարտարապետութիւնն։ Վասն որոյ անմբ-
„ տութիւն մեծ է ընդ այսպիսի անդէպ գովութիւնս խնդալ
„ կամ մեծամտիլ։ — „

„ Զայս ամենայն և ինքն յայտ արար բազում անգամ, ոչ
„ յայս գործ եւեթ, այլ և յայլ զանազան մեծագործութիւնս,
„ մինչեւ ունէք ի միաբանից, որք գիտակ էին չքաւորութեան
„ միաբանութեանն, զարմացմամբ հարցանէին նմա, թէ զիս-
„ արդ և ասասի մարթացու զայն ամենայն ի գլուխս հանել։
„ Խակ նա։ — „ Մի՛ ինչ ընդ այս զարմանայք, ասէր, որպէս

“թէ անձին հարստութեամբ արարեալ էցէ իմ զայդ. ոչ
“ես արարի, այլ Աստուած իձեռն միամիտ հնազանդութեան
“ձերոյ։ Վասն որոյ եթէ կայցեն իմ արդիւնք ինչ ի սոսա,
“ձերն առաւելապատիկ է։”

“Այսպէս ասէր, քանզի խոնարհ հոգւոյ է զայլոց մեծա-
“ցուցանել արդիւնս, թէպէտ և սակաւ իցեն, քան թէ զիւրն,
“և միահաղորդ առնել փառացն և գովութեանն որ անտի
“ծագիցի։ Այլ այսպիսի հաւնատ և պատկառ խորհուրդ
“սակաւուց է։” Տե՛ս ի 549—550 էջս տրին։

Հոգի տրա ի բանս և ի գործս, նմանն էցէ հոգւոյ Մխիթա-
բայ Աբրայի . . . և կարիցէ՞ ոք երբէք ասել, թէ յաջորդ էցէ
սա նորին։ . . .

Ոմն ի Սիրելի դասակցաց տրա առացեալ է բարեկամին
Սարգսի վարդապետի, իբրեւ նախատինք նմին, թէ չէ պարտ
միաբանութեան ընդունել այսուհետեւ ի կրօն իւր զդրանցիս,
զի անպիտան և վնասակար անձինք են նորա. այլ զՊօղոսեցիս
միայն։

Ի դէպ և պարտ իսկ համարիմք քննել զասացեալն նորա,
թէ իրաւամբք էցէ այն։ Արդ՝ հարցանեմք ցնա նախ՝ թէ ո՞ էր
որ զմիաբանութիւնն այն հատատեաց։ . . .

Ո՞չ ապաքէն դրանցին, Մխիթար վարդապետ Սեբաստացին։
Եւ թէ ո՞ էր որ զմիաբանութիւն նորա յերկուս հեղբեաց,
և միասեաց ազգին։ . . .

Ո՞չ ապաքեն Պօղոսեցին, Ստեփաննոս Մելգոնեան։ . . .

Երկրորդ՝ թէ ո՞յք էին ի միաբանիցն, որք պիտանի եղեն
ազգին, և շահաբեր միաբանութեան։ . . .

Ո՞չ ապաքէն դրանցիքն, Մխիթար արբայն Սեբաստացին,
որ զհայերէն բառգիրքն յօրինեաց։

Հ. Սուքիաս վարդապետ Աղամալեան Զուզայեցին, որ
զթուաբանութիւն յօրինեաց։

Հ. Ստեփաննոս վարդապետ Ագոնց Ճուրճաքեցին, որ զճար-
տասանութիւն և զաշխարհագրութիւն յօրինեաց։

Հ. Սահակ վարդապետ Բերբացին, որ զերկրաչափութիւն
յօրինեաց։

Հ. Մկրտիչ վարդապետ Աւդէրեան, Գաղատացին, որ զնոր բառգիրքն Հայկազեան լեզուին յօրինեաց, և զայլ պիտանի գրեանս թարգմանեաց։

Հ. Մանուէլ վարդապետ Զախչախեան Տրապիզոնցին, որ պիտալիէն բառգիրք յօրինեաց։

Հ. Յակոբ վարդապետ Խորիչրցին, որ զՏեսարան բնութեան յօրինեաց։

Հ. Յարութիւն վարդապետ Աւդէրեան Գաղատացին, որ զԳաղղ. և զԱնգղ. բառարանն յօրինեաց։

Հ. Ղուկաս վարդապետ Օղլուխեան Տրապիզոնցին, որ զՆաւղութիւն յօրինեաց։

Հ. Գաբրիէլ վարդապետ Այվազեան Խրիմցին, որ զպատմութիւնս Ռուսաց և Տաճկաց յօրինեաց։

Ահա սոքա ամենեքեան գրեցիք էին որք զայսոսիկ գրեանս յօրինեցին, և պիտանի եղեն ազգին, և շահաբեր միաբանութեան, հանդերձ յարգանօք և սիրով ազգին առ միաբանութիւն։

Իսկ ի Պօլսեցի միաբանից անտի մատենագիրք են սոքա։

Հ. Վրթանէս վարդապետ Ասկէրեան Պօլսեցին, որ զբարոյական Թեատրոն, և զՊատմութիւն Հռոմայեաց թարգմանեաց, և զԹումայ Գեմիրացին, և զայլ ինչ ինչ պիտանի գրեանս։

Հ. Միքայէլ վարդապետ Զամչեան Պօլսեցին, որ զՀայ քերականութիւն, և զպատմութիւն Հայոց յօրինեաց։

Հ. Գաբրիէլ վարդապետ Աւետիքեան Պօլսեցին, որ զԲաղաբին Աստուծոյ թարգմանեաց։

Հ. Ղուկաս վարդապետ Ինճիճեան Պօլսեցին, որ զՇնութիւն Հայաստանեաց Հաւաքեաց։

Հ. Արսէն վարդապետ Բագրատունի Պօլսեցին, որ զՀայ և զԳաղղ. քերականութիւնս յօրինեաց։

Հ. Եդուարդ վարդապետ Հիւրմիւզեան Պօլսեցին, որ ըստ Շնախօսութիւն Ռոլլինի, զճանապարհորդութիւն անարարեայ, և զարկած Տելեմաքայ թարգմանեաց։

Եւ ահա սոքա են Պօլսեցիք, որք զայսոսիկ գրեանս յօրի-

նեցին և պիտանի եղեն ազգին, և շահարեր միաբանութեան, հանդերձ յարգանաւք և սիրով ազգին առ միաբանութիւն։

Բայց արժան է և զայլ ինչ քննել. զի ընդ ժամանակս արքայութեան Մխիթարայ, թիւ դրեցի և Պօղոսեցի միաբանից հաւասար էր. իսկ ընդ ժամանակս արքայութեան Մելքոնեանի, թիւ դրեցի միաբանից պակասի, և հասանէ այն մինչև ցմի առ տասն, սակայն ի վերայ այսր ամենայնի՝ թիւ մատենագիր դրեցի միաբանից կրկին է քան զՊօղոսեցի միաբանից, որպէս և վերագոյն տեսանի։ Ասի յայսմանէ կարելիք հաւաստեալ ասել, թէ պահեալ էր հաւասարութիւն թուոց նոցին, առաւել դրեցի քան Պօղոսեցի մատենագիրք լինէին ի միաբանութեան։ Թարգմանք ասել զօգտակարութենէ գրեան դրեցի միաբանից որք միշտ օգուտ արարին միաբանութեան, և գիւտակարութենէ գրեան այժմեան Պօղոսեցի միաբանից որք կարուսին իսպառ զյարգանս և զհէր ազգին առ միաբանութիւն։

Զայս այսպէս հաւաստեալ՝ հարցանելիք ցնա դարձեալ՝ թէ ո՞ի միաբանիցն յանձն էառ զվշտալի հանապարհորդութիւն, և զչորեքտասանամեայ ոգեալ չարչարութիւն ի ձեռս բերել զիրաւունս որ և ազգաս մանկանց ազգիս, և օգուտ առնել Մխիթարեան միաբանութեան։ . . .

Մ՝ չ ապաքէն դրեցին, Հ. Սարգիս վարդապետ Բազիշեցին։

Իսկ Պօղոսեցիքն զարդիւնս վաստակոց նորա ապաշնորհութեամբ վայելեցին։

Եւ թէ ո՞յք էին բարերարքն երկուց վարժարանաց ազգաս մանկանց ազգին։ . . .

Մ՝ չ ապաքէն դրեցիքն, Եդուարդ Ռաֆայէլ Զուազյեցին, և Սամուէլ Մուրատ Եւդոկացին։

Իսկ Պօղոսեցիքն զբարերարութիւն նոցա ոչ ուզիղ մատակարարեցին։ . . .

Ապա անհրաժեշտութեամբ է ասացեալն զատակցի տրին։ . . .

Թարգմանք ասել զվերատակարութենէ նորին որ ի Լ.ոնդոն։

Ընդ ժամանակս արքայութեան Սահմանեան Ազգեցի, և Սուլթան Մահմէտի միտքանքն առհասարակ, Տերք և երիտա-

սարդք, առանց հրաման խնդրելոյ յԱրքայէն, և ծանուցանելոյ նմա զգործ իւրեանց, ոչ գնային ի քաղաք։

Ընդ ժամանակս արքայութեանն Գէորգ Հիւրմիւզի, գնան միարանքն ի քաղաք, առանց հրաման խնդրելոյ յԱրքայէն, և ծանուցանելոյ նմա զգործ իւրեանց։ Յաւուր միում գնացեալ սորա ի քաղաք և տեսեալ ի նաւակի անդ զոմն յերիտասարդ միաբանից իւրոց, հարցանէ ցնա, թէ առ ինչ գնայր նա ի քաղաք։ Պատասխանէ նա այսպէս. «Շարկաւ ունիմ՝ «ինչ զի գնամ անդ։» . . . Լուեալ սորա ի նմանէ զայսպիսի պատասխանի՝ լռէ և չասէ ինչ նմա բնաւ, կորուանելով զիրաւունս իւր, պակասելով ի պարտս իւր, որ յառաջ է քան զիրաւունսն, ըստ օրինաց բնութեան, և ըստ պատուիրանաց Քրիստոսի։

Եւ այսպէս վրիպեալ սորա ի խաղաղութենէ և յերանութենէ՝ կեաց արդ ի խռովութեան և յեղկութեան, որպէս վկայեն և իւրքն ամենեքեան, և ցաւին ընդ վիճակ միարանութեան, և իրաւամբք՝ զի հասեալ է այն յանկումն։

Զամն քան ունի սա զառաջնորդութիւն Մխիթարեան միարանութեան, և չունի արարեալ ինչ մի գովութեան, այլ ամենայն ինչ դարձութեան . . . որպէս և տեսանի ի Բ. և ի Գ. հատորս Պատմութեան Մ. վարժարանին, և ի Պատմութեան վարուց իւրոց որ ի սմին, հանդերձ հաւատուածք։

Ահա զայս ամենայն տեսեալ Սարգսի վարդապետի՝ բաժանի կամաւ ի միաբանութենէն, յուսահատեալ իսպառ յանկելութենէ բարեաց ազգին որ անտի, ունելով նորա զայսպիսի առաջնորդ։

Եւ ահա պատմութիւնք վարուց Մխիթարայ Արքայի և յաջորդաց նորին, հանդերձ հաւատուածք և զուգակշիռ քննութեամբ, յօրինակ հոգեւոր առաջնորդաց, թէ ո՞րպէս պարտին վարել յառաջնորդութեան իւրեանց. և ի խնամատարութիւն ժողովրդեան, թէ յո՞րպիսի հիմանդրաց առեալ են հաստատութիւն և շինութիւն կրօնաւորական միաբանութիւնք, և թէ յո՞րպիսի յաջորդաց նոցին զեղծեալ և քայքայեալ են նոքին։ . . .

Ապա մնայ մեզ արդ՝ իրրեւ առն նուիրելոյ զանձն ազգին իւրոյ զամս վաթսուն, և փոքր եղելոյ զամս քառասուն, երկրորդել վերատին զդարման չարեաց ազգխաթորգմեան, և կնքել զպատմութիւնս վարժարանաց, և կենաց հեղինակի նոցին։

Որպէս յառաջն ասացաք, նոյնպէս և արդ ասեմք դարձեալ, թէ զերծանիլ ազգիս Թորգոմեան ի խռովութենէ և յեղկութենէ, յորում կեայ այժմիկ, և վայելել ի խաղաղութեան և յերանութեան, զոր յուսայ ապա, կոխեալ կայ վիայն ի ձեռս հոգեւոր առաջնորդաց իւրոց, յիշատակեալս տեղեացն, և մանաւանդ Երուսաղեմի, հայեցեալ ի Ջերմեռանդութիւն ազգիս, և յազգեցութիւն արքական տեղւոյն, այրմէքն հանդերձ։ . . . Եթէ ունիցին նոքա զհոգին, զբարս, և զվարս Թորգոմանչաց Սահակայ, և Մեսրոպայ, և Մխիթարայ արքայի, այսինքն, աստուածասէր, ընկերասէր, և ուսումնասէր իցեն, եթէ ըստ օրինակի նոցա առաքինի վարուք և ուղիղ գնացիւք վարիցին . . . և եթէ ըստ օրինակի նոցա, յամենայն կողմանց աշակերտս ժողովեացէն, և կրթեսցեն զնոսա, նախ, յաստուածասիրութիւն, և յընկերասիրութիւն, ապա յուսումն և ի գիտութիւն, և առաքեսցեն զնոսա ի քարոզութիւն ժողովրդեան, և ի դատարակութիւն մանկանց նորին, ուր և գտանիցին։

Եւ ապա չմնայ մեզ ի սմին այլ ինչ ասել, բայց եթէ ազերս առ աստուած մատուցանել վասն ազգիս Թորգոմեան, և խղճք առնել վասն մխիթարեան միաբանութեան։

Աստուած ճշմարտութեան և արդարութեան, ուստ ազգիս Թորգոմեան հաւանիլ այս աստուածային քոյ առաջարկութեանց, զի ծանիցէ զարարս իւր, և յցեալ զայն ընկալցի զիրաւունս իւր, վայելեսցէ ի խաղաղութեան և յերանութեան, և օրհնեսցէ զանուն քո սուրբ յաւիտեան։

Որպէս ասաց երբեմն Սոկրատէս առ աթենացիս, ըստ Օրինաց Զգաստի թէ՝ «Ես ով Աթենացիք, համբուրեցայ սիրեմ զձեզ, բայց հաւանիմ Աստուծոյ մանաւանդ, քան զեթէ ձեզ։» Վասն այսորիկ ի մահ դատեցաւ ի նոցանէ։

Նոյնպէս և ես արդ ասեմ առ Մխիթարեանս, բան գիտակցութեան մտացս, թէ Ես ոչ Հարք Մխիթարեանք, կարեկցելով սիրեմ զձեզ, բայց հաւանիմ ճշմարտութեան և արդարութեան մանաւանդ՝ քան եթէ ձեզ, վասն այսպիսի արտաքսեցայ բռնութեամբ զինու ի վարժարանէս, և բաժանեցայ կամաւ ի ձէնջ։

Իցէ՛ թէ հաւանիք և դուք ճշմարտութեան և արդարութեան, թէ և անագան . . . ճանաչիք զպարտս ձեր, և լցեալ զայն՝ ընդունիք զիրաւունս ձեր, վայելիք ի խաղաղութեան և յերանութեան։ . . .

Իցէ՛ թէ տեսանիցի ես զօրս զայս՝ թէ և ի վերջին աւուրս կենացս, և մեռանիցի միխիթար սրտիւ, յուսով ապագայ բարեաց ազգիս և երանութեան Մխիթարեան ուխտին։

Իգձ այսոքիկ կարօտին շնորհաց և ողորմութեան Աստուծոյ, յոր ապաւինեալ՝ ինամ կատարման ասացին, և որով Մխիթարեալ՝ ասացից հանգոյն Սիմէոնի ծերոյն, թէ Արդ արձակեա՛ զիս Տէր ի խաղաղութիւն զի տեսին աչք իմ զփրկութիւն ազգիս Թորգոմեան։

Ահա բովանդակութիւն պատմութեան Մ. և Հ. վարժարանաց, և գիտաւորութիւն կամաց և որպիսութիւն մտաց հեղինակի նոցին, և ահա լրումն վերջին պարտուց իւրոց . . . գասեցին վերծանողք որպէս և կամիցին. չէ ինչ փոյթ նմա, զի ուզիղ գասաւոր զԱստուած միայն գիտէ նա, և յիրաւունս նորին եւեթ յուսայ։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ԿԵՂԱՑ ԵՒ Վ.ԱՐՈՒՑ ՀԵՂԻՆԱԿԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄՈՒՐԱՏԵԱՆ, ԵՒ ՀԱՅԿԱԶԵԱՆ
Վ.ԱՐԹԱՐԱՆԱՑ ԵՒ ԱՆՑԻՆ ՈՐՔ ԱՆՑԻՆ ԸՆԴ ԱԱ, ԵՒ ԿՐԻՑ ՋՈՐ
ԿՐԵԱՑ ՋԱՄՍ Վ.ԱԹՍՈՒՆ.

Համբաւ հայերէն դպրութեան աշակերտաց Մխիթարայ Աբրայի հասեալ յունկն սորա ի Հայաստան, շարժի ի սէր դրագիտութեան, և եկեալ ի հայրենեաց իւրոց՝ գնայ ի Վ.ենետիկ, ի վանս սրբոյն Ղ.ազարու, աշակերտիլ նոցա։

Տեղեկացեալ սորա անդ զվարդապետութիւն հաւատոյ Մխիթարայ Աբրայի, գտանէ զայն ըստ վարդապետութեան Հարց Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ, և զդիտաւորութիւն կամաց նորին, յուսաւորութիւն ազգին Հայոց առհաւատիկ, մտանէ յուխտ կրօնի նորա, և մնայ յայն ժամս յիւսուն։

Լուեալ սորա անդ ի ծերոց անտի զպատճառս բաժանման Թրեատի միաբանութեան, զկծծութիւն բարուց և զյամառութիւն մտաց Ստեփանոս Մելգոնեան սրբոյն, ըստգտանէ զնա ի միտս իւր, և ցաւի յոյժ ընդ բաժանումն այն։

Տեսեալ սորա անդ զուսումնասէր բարս և զառաքինի վարս Ստեփաննոս Ագոնց Աբրայի, և զդիտաւորութիւն կամաց նորա, զուսաւորութիւն ազգին իւրոյ, յանձն առնու զաշխատութիւն երկայն և վշտալի ճանապարհի և զհոգ ծանր իրի, երկիցս ի Հնդիկս գնայ, ի խնդիր ժառանգութեան ազգքառաց ազգին Հայոց, զամիս ութեւտասն յալիս Ալկիանու ծովեալ, և զամս չորեքտասան ազգով շատ աշխատութեամբ ի ձեռս բերէ զժառանգութիւնն այն, և տարեալ առանդէ զայն ի ձեռս միաբանութեան, ի կառուցումն դպրոցի որ և ազգքառ մանկանց Հայոց, ըստ զիտաւորութեան հանգուցեալ բարերարին, Սամուէլ Մուրատ։

Տեսեալ սորա անդ զանկողմնաւոր բարս, և զճանաչող միտս,

Սուքիաս Սոմալ արքայի, և զուղիղ գնացս նորա ի մատակարարութիւն ժառանգութեան, աղքատաց ազգին Հայոց առհասարակ, յանձն առնու զհոգ վերատեսչութեան Որոֆայէլեան վարժարանին ի Վենետիկ զամս երկու։ Զնոյն ապա և Մուրատեան վարժարանին ի Պատուիրն զամս տասն, հանդերձ բազում նեղութեամբ, որ ի պահանջմանէ Պօղոս Լազարովիչի, վասն որոյ զամս երկք ի վէճ դատաստանի չարչարի . . . և որ ի պահանջմանէ Աւտարիոյ Տէրութեան, վասն որոյ զամիսս եօթն ի Վիեննայ առ դրուն կայսեր և իշխանաց դեղերի, և զամիսս ութ և տասն ի Փարիզ օթեւանի, առ ի խնդրել ի տէրութենէ անտի հրաման փոխադրելոյ անդ զՄ. վարժարանն, և ի գտանել այնմ յարմար և պատշաճ տեղի, զոր և գտանէ հանդերձ շահեկանութեամբ. զի գնէ և հանդերձէ զայն հինգ հարիւր հազար ֆրանքով, և այն արժէ այսօր կրկին գնով։

Զայս ամենայն կիրս տուրս, ոչ միայն չծանեաւ յաջորդ նորին ապա, այլ և արտաքսեաց զսա ի վարժարանէ անտի բռնութեամբ զինու և անզթութեամբ սրտի իւրոյ։ « . . . Եկաց « այլ թագաւոր, որ ոչ ճանաչէր զՅովսէփ։ » (Ելք. Ա. 8.)

Տեսեալ սորա անդ ապա զկոչմեաւոր բարս և զանճանաչող միտս Գէորգ Հիւրմիւզ արքայի, և զանուղիղ գնացս նորա ի մատակարարութիւն ժառանգութեան աղքատաց ազգին Հայոց առհասարակ, բաղձէ ընդ այն բազում անգամ. և ի զեղծանիլ նորա ի սկզբունս կրօնի իւրոյ, զրպարտելով զազգն Հայոց և զեկեղեցին նորա, յանդիմանէ զնա խիստ բանիւք բերանոյ և գրութեամբ. և ի կամել նորա փոխադրել զՄ. վարժարանն ի Հռոմ, զոհել զայն Պապին, առ ի հաճոյ լինել նմին, և ի վրէժ խնդրել յասոխ իւրմէ, Գերապայծառ Հաւունէ, ընդդիմանայ առ այնմ ամենայն զօրութեամբ իւրով և հնարիւք։ Դժուարեալ նորա ընդ այն, արտաքէ զսա բռնութեամբ զինու ի Մ. վարժարանէն։ Տեսեալ սորա զանիրաւութիւն նորա ի ծայր հասեալ՝ բաժանի կամաւ ի միաբանութենէն, յուսահատեալ խոպառ յանկեալութենէ բարեաց ազգին իւրոյ որ անտի։

Ահա հատուցումն քառամեայ վաստակոց սորա ի հաստատութիւն Մ. վարժարանին, և երկերիւր հազար ֆրանքի նպաստաւորութիւն Մխիթարեան միաբանութեան. չմոռց սմա այլ ինչ յամենայն վաստակոց իւրոց անտի, բայց միայն ախտն լերդացաւի, պատահելոյ ի Հնդկաստան ի տօթագին վայրի, յորմէ տանջի երբեմն ի Պատաւիոն, և ի Փարիզ, անկեալ ի մահիճս ծանր հիւանդութեան զամիս շորս, և յորմէ տանջի արդ ի ծերութեան հասակի, թէպէտև թեթեւ, այլ յաճախ յաճախ։

Տեսեալ սորա հուսկ յետոյ ի Փարիզ զապաշնորհ վարս, և զապիրատ գործս ընկերաց իւրոց, Այվազեան, և Պալֆայեան վարդապետաց, և զյետին անիրաւութիւն ունելոց ի Պօլսեցի ազգայնոցս, դադարի այնուհետեւ ի հասարակաց գործոց, պարապի ի շարադրութիւն և ի տպագրութիւն պատմութեան Մ. և Հ. վարժարանաց, միանգամայն և կենաց իւրոց, ի գիտութիւն և ի խրատ այլոց։

Զրկեալ սորա ի սեփական և յոգեպահ արծաթոյ իւրոյ, կարօտի շնորհաց կարելեաց բարեկամաց իւրոյ, Պարոնաց Միքայէլի Մանանեան, և Ռոմանոսի Նատիրեան, որոց շնորհքն արդէս ի միտս, նոյնպէս և ի գործ իւր յայս, կացցեն կացցեն անմոռաց։

Եւ ահա վիճակ կենաց նուիրելոյն զանձն ազգին իւրոյ զամս վաթսուն, հանդերձ վաթսուն հազար ֆրանքով, զրաւելով Պօլսեցի ազգայնոցս։ . . .

Մնայ սմա միայնակ միխիթարութիւն, լրումն պարտուց իւրոց. «Մեծ ինչ միխիթարութիւն մնայ թշուառին, զի լցեալ «է նա զպարտս իւր։» (Պիտա։)

Յետ այս ամենայն անցից որք անցին ընդ սա, և կրից զոր կրեաց զամս վաթսուն, կնքէ զպատմութիւնս աղերսիւք առ Աստուած վասն ազգիս Թորգոմեան, և ըղձիւք վասն Մխիթարեան միաբանութեան, և յուսայ յիրաւունս Աստուծոյ միոյն։

ՎԱԽՃԱՆ ՉՈՐՍՈՐԴԻ ԵՒ ՎԵՐՋՆՈՅ ՀԱՏՈՐՈՅՍ

ՅԱՆԿ

ԳԼԽՈՑ ՀԱՏՈՐՈՅՍ

ՅԱՌԱՋԱԲԱՆ . . . . . .

ԳԼՈՒԽ Ա.

Միաբանութիւն երից վարդապետաց ի հիւսիսակողմեան Հայկազեան վարժարանին ի Փարիզ. — Հաղորդութիւնք ի վերայ երից վարդապետաց. — Հարցումն Օրբելեպիսկոպոսի Փարիզու ի Պօղոս Պէյէ զդաւանութենէ Հայաստանեաց եկեղեցւոյ. — Բնութիւն ընդ հարցումն այն ի Հռովմայ, և խիստ հաստատութիւնք ի վերայ երից վարդապետաց. — Խորհուրդ և ձեռնարկ իսպահանիշումն իրաւանց ազգին Հայոց.— Թուղթ ազգային ժողովոյն գայսմանէ առ Ս. վարդապետ. — Թուղթ Պարոն Մէլիքի իբր գործակալի վասն բանի դատհանելոյ առ Յակոբ Էֆենտի Կրէթի 1

ԳԼՈՒԽ Բ.

Կարօտութիւն ի ներքոյ և վիշտ արտաքոյ վարդապետաց Հայ. կազեան վարժարանին. — Երբ Ներսէսեայ վարդապետի ի Պոլիս ի խնդիր օժանդակութեան և դատապարտութեան. — Թուղթ հայրապետական վարդապետաց առ Պատրիարգ Կոստանդնուպօլսոյ. — Պատասխանի Պատրիարգին առ վարդապետս հանդերձ վկայագրով. — Թուղթ հայրապետական վարդապետաց առ Կարուղիկոս Էջմիածնի. — Ողբութիւնք և զոհութիւնք կարուղիկոսին ընդ այն, և կարգք. — Թուղթք խնդակցութեան և առնտեաց Ներսէսեայ վարդապետի առ Սարգիս վարդապետ. — Պատճառ փոփոխութեան վիճակի երից վարդապետաց Հայկազեան վարժարանին և դատապարտանի նոցա առ Պարսատրիարք 17

ԳԼՈՒԽ Գ.

Անցգուտ երթ Ամբրոսեայ վարդապետի ի Պոլիս, և դարձ նորա ի Փարիզ հանդերձ քառասուն մանկանքը. — Անկարգութիւն աշակերտաց վարժարանին և վնասն որ ասնի. — Կարօտութիւն արծաթոյ ի ծախս վարժարանին և զլացուցեալ բոլոր աշակերտաց նորին. — Լքուցեալ սրտի և փոփոխութիւն մտաց Գաբրիէլի վարդապետի. — Խնդիր նորա ի Ռուսաց տերութենէն, և հանդիպիլ այնմ. — Պատրաստութիւն մեկնելոյ նորա ի Փարիզէ, և քննութիւն ընդ այն 32

ԳԼՈՒԽ Դ.

Թղթակցութիւն Մարգսի և Գաբրիէլի վարդապետաց ընդ միմեանս, և քննութիւն ընդ այն. — Թուղթք Դեսպանին Գաղղիացւոց ի Պոլիս առ Դեսպան Տաճկաց ի Փարիզ, վասն բանի խնդրոյ ազգային վարժարանի ի Փարիզ և Տեսչի և ուսուցչի նորին. 38

ԳԼՈՒԽ Ե.

Բաժանումն և Հ. Յովհաննայ Գալֆայեանի ի Մխիթարեան միաբանութենէն վանականոյ, և երթ նորա ի Փարիզ առ երդբայր իւր Ամբրոսիոս և առ Մարգիս վարդապետս. — Հպատակութիւն և Հ. Յովհաննայ Պատրիարքին Պոլսոյ, և ընդունելութիւն նորա անտի. — Խնդակցութիւն Ազգայնոցս ընդ դարձ Հ. Յովհաննայ, և քննութիւն ընդ այն. — Փաստաբանութեան և գովութեան նամակաւոր յազգայնոցս ուսանց առ Մարգիս վարդապետ և քննութիւն ընդ այն. 50

ԳԼՈՒԽ Զ.

Երթ Գաբրիէլ վարդապետի ի Փետրուարի առ Կայսրն Ռուսաց, և պատուհասիութիւն նորա անտի, հանդերձ Ամբասնորդա-

կան իշխանութեանէ . — Գործ նորա ի Թէոդոսիա . — Կարծիք և կանկած ազգայնոց անտի ընդ պատիւ և ընդ իշխանութիւն նորին . — Թղթակցութիւն Սարգսի վարդապետի ընդ նմա՝ և քննութիւն ընդ այն . — Հիմնարկութիւն Խաչիպեան Հռոմկլայեցոյ . — Լքումն սրտի Պօղոսեցի ազգայնոց ընդ հաստատութիւն Հայկազեան վարժարանին որ ի Փարիզ 59

ԳԼՈՒԽ Է.

Ողջոյն և հրաւէր ի Պօղոս Պէյէ Տատեան առ Սարգիս վարդապետ և պատասխանի նորա . — Նշանաւոր թուղթք վարդապետաց Գաբրիէլի և Սարգսի վասն բանի հաստատութեան Հայկազեան վարժարանին . — Թուղթ երանելագիտութեան աշակերտի մին առ Սարգիս վարդապետ . — Թուղթ խնդրակցութեան Մատթէոս Պատրիարքի առ Սարգիս վարդապետ և առ ընկերս նորա . — Նշանաւոր բանք թղթոյ Յովհաննու Պէյի Տատեան առ Սարգիս վարդապետ և առ ընկերս նորա . — Այցելութիւն Խաչատուր Կոմսի Լազարեան ի Հայկազեան վարժարան և բանք և թուղթք նորա . — Խնդիր Աղա Մկրտիչ Ճէզայրլեանի յԱմբրոսիոս վարդապետէ . 71

ԳԼՈՒԽ Ը.

Թուղթ հրաւիրական Խնամակալաց ժողովոյն առ Սարգիս վարդապետ ի Փարիզ . — Թուղթ Պարոն Մկրտիչ Մունճեանի առ Սարգիս վարդապետ վասն բանի հրաւիրական . — Թուղթ Սարգսի վարդապետի առ Գաբրիէլ վարդապետ վասն բանի հրաւիրական իւրոյ ի Պօլիս . — Կարեւոր գործ Սարգսի վարդապետի ի Փարիզ , և երթ նորա ի Պօլիս . — Ճանապարհորդութիւն և ժամանումն Սարգսի վարդապետի ի Պօլիս , և այցելութիւն նորա առ ազգայինս . — Լքուցիչ բանք Պօղոս և Յովհաննէս Պէյից Տատեան առ Սարգիս վարդապետ . — Խրախուսական բանք Մատթէոս Կարողիկոսին առ Սարգիս վարդապետ . — Բարեբարութիւն Եպրոս Տիկնոջ Երանեան առ Սարգիս վարդապետ 88

ԳԼՈՒԽ Թ.

Կարգ և ջանք Ս. Մատթէոս Կաթողիկոսին ընդ հաստատուն-թիւն վարժարանին ի Փարիզ. — Թուղթ կաթոլիկոսական Գաբրիէլ վարդապետի առ Սարգիս վարդապետ և. ընտրութիւն ընդ այն. — Թուղթ Սարգսի վարդապետի առ Գաբրիէլ վարդապետ զհանգամանաց գործոյ իւրոյ և. զանկեալոութեան ասեսի. — Ողորմագին յաշակերտաց Սահարիոյ առ Սարգիս Վ. — Թղթակցութիւն Սարգսի վարդապետի ընդ Գաբրիէլի վարդապետի զհանգամանաց վարժարանին ի Փարիզ, և. ընտրութեան ընդ այն. — Թուղթ բողոքական Ամերիկայ վարդապետի առ Սարգիս վարդապետ ի Պոլիս. — Թուղթ ցաւակցութեան Ս. Կաթողիկոսին առ Սարգիս վարդապետ զմահուանէ վարժարանին ի Փարիզ. — Փոյթ Ս. Կաթողիկոսին յօժանդակութեան, և զնացք ոմանց յազգայնոցս ընդ այն. — Թուղթ Ամերիկայ վարդապետի առ Սարգիս վարդապետ վասն սպարտուց Մկրտիչ Ճէզայէրլեան Ամերայի. — Պատասխանի Սարգսի վարդապետի. — Գնացք Ճէզայէրլեան Ամերայի ընդ Սարգսի վարդապետի 98

ԳԼՈՒԽ Ժ.

Հրաւիրակք յԷջմիածնէ և ի տէրութենէ Ռուսաց առ Կաթողիկոս հաստատելոյ ի Պոլիս. — Ծախք և. ընծայք վասն հրաւիրակացն այնոցիկ, և. ընտրութեան ընդ այն. — Թուղթ բարեմաղթութեան և կաթեկցութեան Գաբրիէլ վարդապետի առ Սարգիս վարդապետ և. ընտրութեան ընդ այն. — Լուր տխուր մահուան Հ. Ռափայէլի Թրենց. — Ներբող և. ընտրութեան ընդ այն. — Պատասխանի Սարգսի վարդապետի առեալ թղթոյ Գաբրիէլ վարդապետի. — Թուղթ բարեմաղթութեան աշակերտաց Հ. վարժարանին առ Ս. վարդապետ և. պատասխանին. — Հակառակութեան որ ի մէջ Կաթողիկոսին և. ի մէջ Պատրիարքին, և. գայթագղութեան ժողովրդեան. — Եղանուռոր նամակ Գաբրիէլ վարդապետի առ Ամերիկոսեան վարդապետ և. ընտրութեան ընդ այն 132

ԳԼՈՒԽ ԺԱ.

Տեսաւորութիւն Կաթողիկոսին ընդ Կոստանդին Դուքսն Ռուսաց. — Հրաժարական ողջոյն նորա առեալ Սուրբան Մէջիրի. — Այցելութիւն Սարգսի վարդապետի իդպրոցն Մայր եկեղեցոյ. — Նուագ վարժապետի նորին առ նա. — Հրաժարական որդոյ Սարգսի վարդապետի առ ընկերս իւր ի Փարիզ, և յանձնարարութիւն նորա. — Կարգաւորութիւն դրաւնոյ Սարգսի վարդապետի սրբարելոյ ի Պոլիս. — Եղ Կաթողիկոսին ի շոգենաւ. — Հանդիպել նորա ի Պարի Գարբիել վարդապետի, և ի Փոքի Սարգիս եպիսկոպոսի Զաքալեան. — Ճանապարհորդութիւն Կաթողիկոսին ընդ ցամաք, և ընդոունելութիւն նորա զանազան. — Հասանել նորա ի Տփխիս, և ընդունելութիւն ի քաղաքապետն և յազգայնոցն ամենի. — Եղ նորա ի Տփխիս և հասանել յԵրեւան, և ընդունելութիւն ի քաղաքապետն ամենի. — Ժամանել նորա յԷջմիածին և ընդունելութիւն ի միաբանից ամենի 162

ԳԼՈՒԽ ԺԲ.

Նկարագրութիւն շինուածոյ Էջմիածնի, և կենաց և գործոց միաբանից նորին. — Ճանաչումն Մատթէոս Կաթողիկոսին և բնութիւն ընդ այն. — Ստացուածք և եկամուտք վանաց Էջմիածնի. — Պատրաստութիւն օծման Կաթողիկոսին, և յապաղումն այնորիկ. — Խօսքութիւն Կաթողիկոսին . 175

ԳԼՈՒԽ ԺԳ.

Թուղթ բարեւաղթութեան և անձկութեան Աւետրոսեայ և Խորենեայ վարդապետաց առ Սարգիս վարդապետ Էջմիածին, և ուղերձ նոցա առ օծումն Կաթողիկոսին. — Դարձ Գաբրիէլ վարդապետի ի Թէոդոսիա. — Դարձ Սարգսի վարդապետի ի Տփխիս առժամանակեայ. — Այցելութիւն Սարգսի վարդապետի վանաց սրբոց Հռիփսիմեանց և Գայիանեանց, և Մեռանոյ կզզոյ. — Օրհնան Սարգսի վարդապետի յառաջ-

Նորդարանի ի Տփխիս, և այցելութիւն ազգայնոց առ նա անդ. — Թուղթ Սարգսի վարդապետի առ Ս. Կարողիկոս. — Դարձ Սարգսի եպիսկոպոսի ի Տփխիս, և հիւրընկալութիւն Նորա առ Սարգիս վարդապետ և ընթերցումն Կոնդակի Կարողիկոսին տուեալոյ Սարգսի վարդապետի. — Յայտարարութիւն հանգանակութեան յօժանդակութիւն վարդապետացն ի Փարիզ 183

ԳԼՈՒԽ ԺԴ.

Թուղթ խնդակցութեան և խնդրոյ հոգարարձուաց Փարիզեան վարժարանին առ Սրբազան Կարողիկոս Յէրուսաղէմ. — Կոնդակ Կարողիկոսին առ Սարգիս վարդապետ. — Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ Կոնդակի Կարողիկոսին. — Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ Կոնդակի Կարողիկոսին. — Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ թղթոյ Նշանի Փաշիայեան, և ընդունութիւն ընդ այն. — Օժանդակ Կարողիկոսին. — Թուղթ շնորհաւորութեան Սարգսի վարդապետի առ Կարողիկոսն. — Պատասխանի Կարողիկոսին տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի. — Տեղեկութիւն և ընդունութիւն ընդ այն 193

ԳԼՈՒԽ ԺԵ.

Թուղթ ցաւակցութեան Գաբրիէլ վարդապետի առ Սարգիս վարդապետ ընդ ողորմ վիճակ Փարիզեան վարժարանին. — Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ թղթոյ Գաբրիէլ վարդապետի. — Պատասխանի Սարգսի վարդապետի տուեալ Կոնդակի Կարողիկոսին. — Թուղթ Սարգսի վարդապետի առ Ամիրոսիոս և Յոռիսն վարդապետս. — Թուղթ ցաւոց Ամիրոսեայ վարդապետի առ Սարգիս վարդապետ. — Պատասխանի Սարգսի վարդապետի առ Ամիրոսիոս վարդապետ. — Թուղթ Սարգսի վարդապետի առ Ս. Կարողիկոսն վասն անձկութեան Փարիզեան վարժարանին. — Պատասխանի Կարողիկոսին տուեալ թղթոյ Սարգսի վարդապետի և ընդունութիւն ընդ այն 206

ԳԼՈՒԽ ԺԶ.

Պատասխանի Գաբրիել վարդապետի. — Եչաւուշոր բանք ի նմին, և բնութիւն ընդ այն. — Յայտարարութիւն հանգանակութեան յօժանդակութիւն վարդապետաց ի Փարիզ. — Թուղթ Սարգսի վարդապետի առ Գաբրիել վարդապետ որ զյայտարարութենէն հանգանակութեան. — Պատասխանի Գաբրիել վարդապետի, և ցաւակցութիւն ընդ վիճակ Ալիքրուսեայ վարդապետի. — Պատասխանի Սարգսի վարդապետի, գանգատ և մեղադրութիւն. — Թուղթ Սարգսի վարդապետի առ Ալիքրուսիոս և Խորէն վարդապետս որ զյղեալ արծաթոյ յօժանդակութիւն նոցա, և գանգատ զգնացից Կարողիկոսին և Գաբրիել վարդապետի 223

ԳԼՈՒԽ ԺԷ.

Թուղթք Սարգսի եպիսկոպոսի Ջալալեան առ Աղա Յովհաննէս Ոսականեան, յօժանդակութիւն վարդապետաց ի Փարիզ, և պատասխանիին նոցին, և գնութիւն ընդ այն. — Պատասխանի Սարգսի վարդապետի առեալ թղթոյ գործակալի վարժարանին. — Թուղթ Սարգսի վարդապետի առ Կարողիկոս, վասն օժանդակութեան վարժարանին. — Թուղթ մեղադրութեան Սարգսի վարդապետի առ Գաբրիել վարդապետ հանդերձ տեղեկութեամբ 234

ԳԼՈՒԽ ԺԸ.

Աղերսագիր Տփխիսցի ազգայնոցս առ Ս. Կարողիկոս յօժանդակութիւն Փարիզեան վարժարանին. — Թուղթ յանձնարարութեան ընդ այն առ Սարգիս եպիսկոպոս Ջալալեան. — Պատասխանի Ս. Կարողիկոսին առեալ աղերսագրոյ նոցին. — Գնութիւն ընդ այն. — Այլ խորհուրդ և յառաջադրութիւն Տփխիսացւոց յօժանդակութիւն Փարիզեան վարժարանին 249

ԳԼՈՒԽ ԺԹ.

Թուղթ Գաբրիէլ վարդապետի առ Սարգիս վարդապետ վանքերի Ամիրոսեայ վարդապետի ի Թէոդոսիա. — Թուղթ Ամիրոսեայ վարդապետի առ Սարգիս վարդապետ հանդերձ նշանաւոր բանիւք. — Պատասխանի մեղադրութեան Սարգսի վարդապետի առ Գաբրիէլ վարդապետ հանդերձ գիտելեաւք և վաղրանաւք. — Թուղթ ցաւալից շրոյ Խորենայ վարդապետի առ Սարգիս վարդապետ, հանդերձ նշանաւոր բանիւք, և բլինորիւն ընդ այն. — Պատասխանի արդարացուցանող անձին Գաբրիէլ վարդապետի առ Սարգիս վարդապետ, հանդերձ նշանաւոր բանիւք, և բլինորիւն ընդ այն 264

ԳԼՈՒԽ Ի.

Պատասխանի Սարգսի վարդապետի առեալ թղթոյ Ամիրոսեայ և Խորենայ վարդապետաց. — Վերատին առաքումն արծաթոյ ի Տիխիսէ ի Փարիզ յօժանդակութիւն վարդապետաց անդ. — Տեղեկութիւն զվիճակէ Սարգսի վարդապետի. — Տիսաւորութիւն ազգայնոցս ի Տիխիս ընդ որոշումն վարդապետաց որք ի Թէոդոսիա. — Բնենութիւն զգնացից Գաբրիէլ վարդապետի. — Դերեւոումն ակնկալութեան բարեաց ի Եպրոդիկոսէն. — Գիտելիք. — Թուղթ մեղադրութեան Սարգսի վարդապետի առ Գաբրիէլ վարդապետ. — Բնենութիւն զգնացից նորա. — Անաչառ և նշանաւոր բանք . . . 278

ԳԼՈՒԽ ԻԱ.

Թուղթ մեղադրութեան Սարգսի վարդապետի առ Ամիրոսիս վարդապետ ընդ որոշումն ի Թէոդոսիա. — Հրաժարումն Սարգսի վարդապետի յօգնելոյ Խորենայ վարդապետի. — Թուղթ Սարգսի վարդապետի առ Գաբրիէլ վարդապետ, յիշատակեալ զպրակատութիւն Խախատեանցութեան նորա, և ազդարարութիւն. — Պատասխանի արդարացուցանող և բողոքեալի

Գաբրիէլի վարդապետի. — Զարդասուորութիւն զվարդապետութենէն հաւատոյ Գաբրիէլի վարդապետի. — Ընկերակցութիւն Նոր Կաթողիկոսէն. — Պատասխանի զարմացեալն և տրտմութեան Գաբրիէլի վարդապետի շնորհ խնամ բանս թղթոյ Սարգսի վարդապետի. — Զանազ արդարացուցեալն անձին և պարծանք Գաբրիէլի վարդապետի. — Յաւելի պատասխանի Սարգսի վարդապետի շնորհ անհաւանութեան ձշմարտութեան. — Վերատին հաստատութիւն ձշմարտութեան, և յանդիմանութիւն շնորհ փոխիսութեան բառից 294

ԳԼՈՒԽ ԻԲ.

Պատասխանի Աւետեանց վարդապետի առեալ թղթոյ Սարգսի վարդապետի. — Հոգ զանձնական շահու Աւետեանց և խորհեալ վարդապետաց. — Արդարացուցցուն Գաբրիէլի վարդապետի և նպատակ որ ի նմանէ շնորհեցաց իւրոց ի Փարիզ, Գաղիացեաց. — Պատասխանի Սարգսի վարդապետի առեալ թղթոյ Աւետիսոյ վարդապետի հանդերձ բնութեամբ. — Յուսկզոյն հանգամանք գործոյ Սարգսի վարդապետի և պատճառ այնորիկ. — Բողոք և վերադրութիւն զգնացից Գաբրիէլի վարդապետի. — Յանձնարարութիւն պահպանութեան շնչից Սարգսի վարդապետի . . . 311

ԳԼՈՒԽ ԻԳ.

Կոնդակ հրաւիրեալ ի Կաթողիկոսէն առ Սարգիս վարդապետ ի խորհել և ի հոգալ զվիճակն նորին. — Պատասխանի հրաժարական Սարգսի վարդապետի շնորհ այն, հանդերձ պատճառաւ. — Թուղթ հրաւիրեալ ի դիւանց Կաթողիկոսին առ Սարգիս վարդապետ ի հոգալ զվիճակն նորին. — Պատասխանի հրաժարական Սարգսի վարդապետի շնորհ հրաւէրն այն. — Նշանաւոր պատասխանի Աւետեանց վարդապետի առեալ թղթոյ Սարգսի վարդապետի. — Պատճառ կալոյ Աւետեանց վարդապետի ի Փարիզ. — Հրաւէր Աւետեանց վարդապետի ի Պոլիս, և հրաժեշտ նորա ասեսի. — Թուղթ

Ամբրոսեայ վարդապետի, առ Սարգիս վարդապետ. — Հատուածիկ ինչ Մեղու շրագրին ի յանդիմանութիւն ապերախտ Մխիթարեանց. — Թղթակցութիւն Խորէն և. Ամբրոսիոս վարդապետաց ընդ Սարգսի վարդապետի 318

ԳԼՈՒԽ ԻԴ.

Այցելութիւն Սարգսի վարդապետի ի Սանահին և. ի Հաղբատ. — Նկարագրութիւն տեղեացն այնոցիկ և վիճակ վանացն. — Վերատին և. զոր շանչ օժանդակութեան վարդապետացն ի Փարիզ.—Անուանք օժա՛ղակողաց և. զլացողաց յազգայնոցն անտի. — Գիտելիք. — Եղ Սարգսի վարդապետի ի Տփխիսէ. — Ճանապարհորդութիւն նորա ի Վրաստան. — Հանդիպելն նորա ի Տրապիզոն. — Այցելութիւն նորա Ասաշնորդի տեղւոյն, և ընդունելութիւն անտի. — Ժամանե՛լ Սարգսի վարդապետի ի Պոլիս. — Այցելութիւն նորա Պատրիարքին, և ազգայնոցս անդ. — Գործառնութիւն Սարգսի վարդապետի ընդ Մկրտիչ Մոնձեանի. — Մեկնիլ Սարգսի վարդապետի ի Պոլսոյ. — Ժամանելն նորա ի Մարսիլիա և. անտի ի Փարիզ 338

ԳԼՈՒԽ ԻԵ.

Տեսութիւն Սարգսի վարդապետի ընդ Ամբրոսեայ վարդապետի. — Իշխանն Սարգսի վարդապետի ի տան Տիկնոջ Գարամզի. — Ընդունելութիւն Սարգսի վարդապետի յԱմբրոսեայ վարդապետէ. — Գնացք և բանք նորա ընդ Սարգսի վարդապետի. — Կարծիք և առաջարկութիւն Ամբրոսեայ վարդապետի առ Սարգիս վարդապետ վասն բնակութեան նորա ի միասին ի Փարիզ. — Անհնարութիւն Սարգսի վարդապետի և կորուստ նոցին. — Պատճառանք Ամբրոսեայ վարդապետի արդարացուցանելոյ զինքն ընդ կորուստ նոցին, և անկարելութիւն նորա. — Բաղաքավարութիւն Տիկնոջ Գարամզի. — Խնդիր բնակութեան Սարգսի վարդապետի ի Փարիզ. — Աղաչակութիւն Պ. Մանուկեանի առ Սարգիս վարդապետ. — Բնութիւն և յիշատակութիւն գրութեանց

ընդ այն . — Խառնութիւն Աւետարանաց վարդապետի և արքեպիսկոպոսութիւն նորա . — Յանդիմանութիւն Սարգսի վարդապետի առ Աւետիս վարդապետ հանդերձ նշանակութեամբ — Անարատութիւն Աւետարանաց վարդապետի և բնաւորութիւն նորա . — Ներողամտութիւն Սարգսի վարդապետի և կորուստ ընչից նորա 345

ԳԼՈՒԽ ԻԶ.

Թուղթ Սարգսի վարդապետի առ Յակոբ Էֆենտի Կրաֆիկեանի, և պատասխանի նորին առ նա . — Բնութիւն և գոչչակութիւն զանցից Հայկազեան վարժարանին ի Փարիզ . — Պատասխանի Սարգսի վարդապետի առաջեալ թղթոյ Աւետարանաց վարդապետի ի Պոլիս . — Ժառանգել Պարոն Նատիրեանի ի Փարիզ և միխիթարել զՍարգիս վարդապետ . — Հանդիպել Պարոն Նատիրեանի գձանապարհայն Գաբրիէլի վարդապետի և խօսակցութիւն ընդ նմա . — Թուղթ Գաբրիէլի վարդապետի առ Սարգիս վարդապետ, և Պատասխանի սորա առ նա . 359

ԳԼՈՒԽ ԻԷ.

Պատասխանի Սարգսի վարդապետի առաջեալ թղթոյ Խորենայ վարդապետի յանդիմանութիւն նմա և յիշատակութիւն նրշանաւոր բանից և գործոյ . — Պատասխանի Խորենայ վարդապետի առաջեալ թղթոյ Սարգսի վարդապետի . — Խոստովանութիւն ձշմարտութեան , խնդիր թողութեան , և խոստովանիլն հատուցման պարտուց , և երկիւղ ի բնութենէն և ի դատաստանէն հատարակաց . — Պատասխանի Սարգսի վարդապետի առաջեալ թղթոյ Խորենայ վարդապետի . միխիթարութիւն ընդ ձշմարիտ խոստովանութիւն , և ներումն վնասուց , և անձնիշխանութիւն . — Թուղթ Սարգսի վարդապետի առ Պարոն Մկրտիչ Մունեան . տեղեկութիւն զվիճակ , և ակնկալութիւն արժանոյ . յիշատակութիւն պայմանի , և պակասութիւն խոստմանն և նոր առաջարկութիւն . — Պատասխանի Պ. Մ. Մունեանի առաջեալ թղթոյ Սարգսի վարդապետի . խոստովանութիւն հատուցման պարտուց , յիշատա-

կոչբիւն սիրոյ բարեկարգութեան, վարկեան և շանից, և խոստովանութիւն պարտուոց 370

ԳԼՈՒԽ ԻԸ.

Պատուհասին Գաբրիէլի վարդապետի առ Սարգիս վարդապետ. միխիթարութիւն անտի, ցաւալից շոր Էջմիածնի, շնորհաւորութիւն նոր տարոյ, և գովութիւն արժանեաց. — *Պատուհասին Սարգսի վարդապետի առ Գաբրիէլ վարդապետ. խլիդակցութիւն ընդ ընդունելոյ և աշխատութիւն նորա, յիշատակութիւն զցաւալից վիճակէ Էջմիածնի, ազգարարութիւն և նախատեսութիւն, և ուղղութիւն պատեհութեան.* — *Ցողոր շնորհաւորութեան նոր տարոյ. յիշատակութիւն վշտաց.* — *Տեղեկութիւն զվիճակէ Գաբրիէլի վարդապետի և ուղղութեանն նորա.* — *Պատուհասին Գաբրիէլի վարդապետի առ Սարգիս վարդապետ. խրախուսութիւն և շնորհակալութիւն ընդ գրութիւն նորա, ցաւ և ցողոր ընդ այն վիճակ. գանգայն.* — *Պատուհասին Սարգսի վարդապետի առ Գաբրիէլ վարդապետ. անհաւանութիւն ձշմարտութեան, զոր աշխատութիւն, պակասութիւն զգայութեան և շեղեալն յանդիսութիւնն.* — *Ցողոր շնորհաւորութեան Գաբրիէլի վարդապետի առ Սարգիս վարդապետ. ցաւալից շոր Հայաստանի և Էջմիածնի. յուսութիւն պատասխանոյ.* — *Գնութիւն զգնացից Ղազարեանեանի և Գաբրիէլ վարդապետի.* — *Ղամանիք հրաւիրեալաց ի Պատրիարքն և ի Գիւրգ Պէյն առ Սարգիս վարդապետ. հրաժարական պատասխանի նորին.* — *Ցողոր Էջմրոյ Տիկնոջ Երամեան առ Սարգիս վարդապետ և պատասխանի նորա առ նա.* — *Սրբազան Սարգսի վարդապետի ընդ հրաժարել իւր* 383

ԳԼՈՒԽ ԻԹ.

Ցողակցութիւն Սարգսի վարդապետի ընդ Պաղոն Մ. Մոնեանի փառն բանի արժանոյ իւրոյ. — *Ցողակցութիւն Սարգսի վարդապետի ընդ Երրորդ տիկնոջ Երամեան փառն պատուոյ իւրոյ որ ի Պ. Մ. Մոնեանէ.* — *Կարեկցութիւն Պօղոս Պէյի*

Տառեան, և. Կարապետ Աղայի Երուանեան առ Սարգիս վարդապետ վասն արծաթոյ նորա որ առ Մկրտիչ Մոնձեան. — Թուղթ Սարգսի վարդապետի առ Գէորգ Պէյ վասն պահանջելոյ իւրոյ որ ի Մ. Մոնձեանէ. — Պատասխանի Գէորգ Պէյի առ Սարգսի վարդապետ որ ընդ վիճակ Մ. Մոնձեանի. — Թուղթք Սարգսի վարդապետի առ Գէորգ Պէյ և. առ Տիկին նորա վասն բանի պահանջելոյն որ ի Մոնձեանէ, և. շուրթիւն նոցա ընդ այն 405

ԳԼՈՒԽ Լ.

Թուղթ խնդակցութեան և շնորհաւորութեան Սարգսի վարդապետի առ Սրբազան Պօղոս Պատրիարքն, հանդերձ կարեւոր տեղեկութեամբ. — Պատասխանի Պ. Պօղոս Պատրիարքի առ Սարգիս վարդապետ հանդերձ յանձնարարութեամբ. — Պատասխանի Սարգսի վարդապետի առ Ս. Պօղոս Պատրիարք, հանդերձ խորհրդով և խնդրով. — Պատասխանի Ս. Պօղոս Պատրիարքին առ Սարգիս վարդապետ և. քննութիւն ընդ այն. — Թուղթ Գաբրիէլ վարդապետի Անյվազեան առ Սարգիս վարդապետ. — Պատասխանի սորա առ նա, հանդերձ քննութեամբ. 444

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՆ 416
ՎԱՐՔ ՄԽԻԹԱՐԱՅ ԱԲԲԱՅԻ 469
ՎԱՐՔ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՄԵԼԳՈՄԵԱՆ ԱԲԲԱՅԻ . . 569
ՎԱՐՔ ՍՏԵՓԱՆՆՈՍ ԱԳՈՆՑ ԱԲԲԱՅԻ 582
ՎԱՐՔ ՍԱՒՔԻԱՍ ՍԱՄԱԼԵԱՆ ԱԲԲԱՅԻ 603
ՎԱՐՔ ԳԷՈՐԳ ՀԻԽՄԻՔՋ ԱԲԲԱՅԻ 606
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ 622

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՎԵՐԻՊԱԿԱՑ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Էջ	Տող	Սխալ	Ուղիղ
29	21	վերատուեալ	վերապատուեալ
46	4	յԱստիկանէն	յԱստիկանէն
80	22	ուրուն	ուրեն
146	18	պատառանոք	պատճառանոք
171	31	գնա	գնայ
176		սխալ է թիւ էջին, 476 է տպեալ	
241	25	պարտատանաց	պարտապանաց
242	16	եկրի	երկրի
246	3	իմոց	իմոյ
446	5	աղօթիւ	աղօթիւք
507	9	բեալ	կրեալ
532	1	վա	վասն
565	13	սոյան	յոյան
585	10	Ադոնց	Ադոնցի

Paris. — Imp. Wiesener et Cie, rue Delaborde, 12.

«Ազգային գրադարան»
NL0246452